Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՍԵՐՈ
ԽԱՆԶԱԴՅԱՆ

Սիրքար Սարդարապատ



ՀԱՅ ՊԱՏՄԱԿԵՊ

ԵՐԵՎԱՆ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» 1988

ԳՄԴ 84 Հ7-4
Խ 240

Խանզադյան Ս. Ն.

Խ 240 *Մխիթար Սպարապետ։ Պատմավեպ /Սերո Խանզադյան.—Եր.։ Սովետ. գրող, 1988.—760 էջ.—(Հայ պատմավեպ)։*

Պատմավեպը ներկայացնում է Արևելյան Հայաստանի՝ Սյունիքի, Արցախի ու Երևանի ժողովրդական զանգվածների հերոսական պայքարը օսմանյան նվաճողների դեմ, որն սկսեց Դավիթ-Բեկը և քաջությամբ շարունակեց գլխավորել Մխիթար սպարապետը։ Դեպքերը կատարվում են 1723—1730 թվականներին։ Վեպում տրված է անդրկովկասյան ժողովուրդների համատեղ պայքարը օսմանյան բռնակալության դեմ, ինչպես և այդ ժողովուրդների բարեկամությունը ռուս մեծ ժողովրդի հետ։

Խ $\frac{4708020201}{705\ (01)\ 88}$ ԳՄԴ 84 Հ7-4

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1988

Փ Շ Ր Վ Ա Ծ Շ Ղ Թ Ա Ն Ե Ր

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՔԱՐԱՎԱՆԸ...

Մի նեղ արահետ էր ոլորվում Քաշաթաղքի մթին անտառների միջով։

Դա հայոց երկու հինավուրց լեռնաշխարհները՝ Արցախն ու Սյունիքը միացնող ամենակարճ ճանապարհն էր։ Այդ արահետով Արցախից Սյունիք էր շտապում վաճառականների մի փոքրիկ քարավան։

Թեև արևն արդեն իր գլուխը պոկել էր Քիրս լեռան ձյունեղեն բարձերից, բայց անտառում դեռ չէր ցրվել վաղորդյան մշուշը։

Խոր աշուն էր։

Տերևաթափ էին ոչ միայն հաճարենիներն ու բոխիները, այլև՝ ժայռերի մեջ արմատներ խրած կաղնիները։ Անտառը լուռ էր։ Լուռ էր քարավանը պահպանող զորախումբը։ Չէին խոսում նաև նրան առաջնորդող Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիս հազարապետը։ Թե՛ նրանք, և թե՛ նրանց սակավաթիվ զինվորները ծպտված նեղվում էին վաճառականի զգեստների մեջ։

Հազարապետ Տեր-Ավետիսը միջահասակ էր՝ ալեխառը մազմորուքով։ Նրա արծաթապատ գոտու արանքում երևում էր հոլանդական ատրճանակի կոթը։ Հասարակ կապայի օձիքը բաց էր՝ վրան թեզաչափ լանջախաչ։ Մխիթար սպարապետը բարձրահասակ էր, ձիգ կեցվածքով, որոնող ու անհանգիստ աչքերով։ Նա այնպես էր նստել երկնագույն ձիուն, որ ասես բուսած լիներ թամբից։ Նա ծանր ու խոհուն հայացք ուներ, բարձրադիր հոնքեր ու թուխ դեմք, որի վրա դրոշմված էր անջնջելի մտահոգություն։ Գոտու արանքը խրած զույգ ատրճանակներից բացի, նա արծաթե պատյանով մի կարճ թուր էր կրում նաև։

Երեք օր առաջ, գիշերով, նրանք դուրս էին եկել Արցախի Գանձասար վանքից, ջահի աղոտ լույսի տակ համբուրել Աղվանից Եսայի Հասան Ջալալյան ծերունի կաթողիկոսի աջն ու բռնել տունդարձի ճանապարհը։ Նրանք կտրել, անցել էին Արցախի կիրճերը, մարդակուլ գե-

տերն ու հասել մի ժամանակ հայաբնակ, այժմ բնակչությունից-իսպառ դատարկված Սյունյաց Քաշաթաղ գավառը։

Երկար լռությունից հետո առաջինը խոսեց Տեր-Ավետիսը։

— Ի՞նչ ես կարծում, Մխիթա՛ր, ինչո՞ւ չհայտնվեց ռուսաց թագավորի պատվիրակը,— կամաց, որ ետևի եկողները չլսեն՝ հարցրեց նա։

— Ո՞վ գիտե,— ուսերը ձգեց սպարապետը։— Պետերբուրխն աշխարհի մի ծայրին է, մենք՝ մյուս։ Ճանապարհներին մարդ են կուլ տալիս։ Հիմա շուն ու գել մեր ու թագավորի ջիլերն են կրծոտում։ Տեսնես պատվիրակի գլխին ի՞նչ հող մաղվեց։

— Աստված մի՛ արասցե։ Հազիվ ենք մեր տնից վանել ահը պարսից, բացվել է հայոց երկինքն, ու լույսի մի շող է մոտենում մեզ։ Եթե մարեց՝ կմնանք անմխիթար։

— Մխիթարվիր քո բազուկով,— մռայլ հարեց սպարապետը։

— Այդպես է,— տնքաց Տեր-Ավետիսը և, զգալով, որ սպարապետը հակված չէ զրույցի՝ լռեց։

Քարավանը հաճախ անցնում է վաղուց ավերված գյուղերի մոտով։ Այդ պահերին Մխիթարի դեմքն ավելի էր մթագնում։ Նրան հայտնի էր, որ այս մոռացված արահետի տեղը մի ժամանակ եղել է մի ոտնակոխ ու բազմամարդ ճանապարհ։ Այդ ճանապարհը թնդացել է ձիերի սմբակների դափրից, ուղտերի զանգակների ղողանջից։ Այժմ վայրենի էր Քաշաթաղ գավառը։ Դար ու կես առաջ օսմանյան բարբարոսներն ավերել էին նրա բանուկ շեներն ու ամրոցները։ Միայն, իբր անցյալի մեծ շենության տխուր վկաներ, դեռ մնում էին մամռոտած վանքեր, տրդատակերտ կամուրջների կոտրած կամարներ, արտաշեսյան իշխանատների փլատակներ... Այս վայրերով անցնող յուրաքանչյուր հայի սիրտ արտասվում էր վաղեմի շեն գավառը վայրենացած, անբնակ տեսնելով։

Շուտով երևացին Սյունիքի ձյունաբարդ լեռները՝ սպիտակաթաղ Կապուտջիղը, գոռոզ Արամազդը, Գազբոյլը, երկինք կոթողացած Խուստուպն ու մենակ, մռայլ, ասես խոով, Իշխան Մեծը։

Քարավանը զվարթացավ։ Բոլորի ուրախությանն անմաս մնաց միայն սպարապետը։ Որքան մոտենում էին հայրենի Հաբանդ գավառին, այնքան մռայլվում էր, սիրտը մղկտում էր վաղուց ստացած, բայց երբեք չփակվող մի վերքից։

Մթնեց։ Թեև հոգնած ձիերն ու բեռնակիր ջորիները հազիվ էին փոխում իրենց ոտքերը, բայց Մխիթար սպարապետը գիշերային դադարի հրաման չտվեց, շտապում էր օր առաջ հասնել Հալիձոր՝ Դավիթ-Բեկին։

Քսանհինգ օր առաջ Գանձասարի Եսայի Հասան Ջալալյան կաթողիկոսի ճեպընթաց սուրհանդակը եկել էր Հալիձոր։ «Ռուսաց Պետրոս

ողորմած թագավորը պատվիրակ է հղել մեզ,— հայտնել էր նա Արցախի և Սյունիքի միացյալ զինվորության գահերեց զորավար Դավիթ-Բեկին։— Պատվիրակն արքայական թղթով հասել է Բաքու և շուտով կլինի Գանձասարում։ Ուղարկիր քո երևելիներին, որ հասու լինեն մեզ առաքած արքայական հրովարտակին»։

Այս լուրն անասելի ոգևորություն էր առաջացրել Հայոց ժողովի ավագանու մեջ։ Նրանց հետ գաղտնի խորհրդակցելուց հետո Դավիթ-Բեկն Արցախ էր ճանապարհել իր երկու զինակիցներին՝ հրամայելով արքայական պատվիրակին ծպտված բերել Հալիձոր։

Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսը ծպտված մնացել էին կաթողիկոսի մոտ՝ պատվիրակի ժամանելուն սպասելով։ Նրանք պատրաստ էին թեկուզ ամբողջ ձմեռն սպասել թագավորի մարդուն, բայց Դավիթ-Բեկը հետ էր կանչել. «Բարկուշատի Բաթալի Սուլթան և Սև լեռների Թահմազ Ղուլի Նադիր[1] խաները պատրաստվում են ասպատակել մեր Արաքսամերձ գավառները,— հաղորդել էր Բեկը,— կրունկներիդ աղ արեք ու վերադարձեք տուն»։

Եվ ահա հայոց զորքերի սպարապետն ու նրա օգնական Տեր-Ավետիս հազարապետը մաշում էին ձիերի թամբերը՝ ժամ առաջ Հալիձոր հասնելու համար։ Նրանք իրենց հետ ջորիների վրա տանում էին Արցախում պատրաստած մի քանի հարյուր հրացան։

Շուտով, աշնանային աստղաճրագ գիշերվա մեջ, ուրվագծվեց Խնձորեսկի բերդը։

— Մտնենք Խնձորեսկ, Մխիթա՛ր,— առաջարկեց Տեր-Ավետիսը,— մելիք Բարխուդարը լավ գինի ունի, ծարավներս մի փոքր կկոտրենք։ Ի՞նչ կասես։

— Գլխին տվա՛ծ,— քրթմնջաց Մխիթարը։— Մոտենում ենք Պղնձաքարի անտառներին, կգիշերենք այնտեղ։

Տեր-Ավետիսը չառարկեց, բայց նրա համար հանելուկ մնաց, թե ինչու է սպարապետը խուսափում մելիք Բարխուդարի տնից։ Ինչպե՞ս կարող էր նա գուշակել, որ այդ պահին Մխիթարի միտքը Խնձորեսկ բերդումն էր, որի մեջ էր գտնվում իր ուրախությունը։ Մի տարի էր, ինչ նա չէր տեսել այն արարածին, որի պատկերն ամենուր իր մտքի մեջ էր, ձայնն՝ իր ականջում... Սակայն նա կարողանում էր զսպել իր կարոտն ու խուսափել հանդիպելուց նրան, ում համար պատրաստ էր

---

[1] Սա այն Նադիր խանն էր, որ օգնեց պարսից շահ Թահմազին նստել հոր գահին, իրեն անվանակոչեց Թահմազ ղուլի (Թահմազի ծառա, ստրուկ) և, ի վերջո, 1736 թ. զավթեց պարսից գահը։

ռալ մուրտերում շահած իր փառքն ու կյանքը։ Դա դեռ բոլորը չէր. սպարապետը չանում էր ամեն կերպ մոռանալ իր սիրեցյալին, չհիշել նրան։ Նա զգուշանում էր հանդիպել մելիք Բարդուխարի դուստր Գոհարին։ Այդ հանդիպումը նորից կբորբոքեր սիրո հին կրակը և գուցե լափեր, կործաներ այն գործը, որին նվիրվել էր նա, որի համար երդվել էր ժողովրդի առջև։ Իրեն տանջելով՝ նա չէր ուզում տառապանքի գիրկը նետել նաև իրեն այնքա՜ն նվիրված, իր գործին այնքա՜ն աջակից, իր օրինական ամուսնուն՝ Արցախի Հասան Ջալալյան տոհմի դուստր Սաթենիկին՝ իր երկու զավակների մորը...

Այս անգամ էլ դա էր պատճառը, որ նա չմտավ Խնձորեսկ։

***

Գիշերը կիսվել էր, երբ քարավանը հասավ Պղնձաքարի անտառներին։ Հոգնած զինվորներն ուրախացան, որ վերջապես գաղար կառնեն։ Բայց Մխիթարը կանգ չառավ։

— Մի փոքր էլ համբերեցեք,— ասաց զինվորներին,— շուտով կհասնենք Պղնձաքարի ժայռերին, կհանգստանանք այնտեղ։

— Ներող եղիր, տե՛ր իմ,— անհամարձակ նկատեց նրա համհարզը՝ Փոքր Գորգի անունով մի գրեթե պատանի տասնապետ։— Չմոտենանք Պղնձաքարին։ Այնտեղ բուն դրած փախստականները մեզ չեն ընդունի։

— Կարծո՞ւմ ես,— դառը ժպտաց Մխիթարը։

— Նրանց ժայռերին ոչ ոք մոտենալ չի համարձակվում։ Ավելի լավ է գիշերենք անտառում։

— Ես ուզում եմ բարեկամանալ այդ փախստականներին, հյուր լինել նրանց,— անզիջում մնաց Մխիթարը։— Առաջնորդիր մեզ։

Փոքր Գորգին ահով նայեց մթության մեջ հազիվ նշմարվող, երկրնքի խորքերը մխրճված ժայռերին ու անծպտուն առաջ ընկավ։ Ընթացքը դարձավ դժվարին։ Ձիերը թողին ձորում և զգուշությամբ սկսեցին բարձրանալ լեռան թեք, անտառապատ լանջով։ Ծառերի ճյուղերը ճանկռոտում էին նրանց դեմքերը, խլում գլխարկները։ Ոտքերի տակից պոկված քարերը դղրդոցով գլորվում էին ձորը։ Լսվում էր ջրվեժի շառաչ։ Շուտով վերելքը բոլորովին անհնարին դարձավ։ Փոքր Գորգին նորից խորհուրդ տվեց սպարապետին՝ ետ դառնալ ու գիշերել անտառում։ Նույնը խնդրեցին նաև զինվորները։ Բայց սպարապետը ձեռքը թափ տալով հրամայեց.

— Ձայն տվեք այդ քարաքնակներին, թող գան ու մեզ տանեն իրենց բները։

Փոքր Գորգին ձեռքերը խողովակ արեց, դրեց բերանին։

— Էհե՛յ, բարի մարդիկ, օգնեցե՛ք...

Նրա ձայնը հազարապատկվեց ժայռերի խոռոչներում, անդունդի մեջ։ Եվ դեռ չէր մարել, երբ երեք ուրվական բուսան խավարում։ Նրանցից մեկը բարձր ձայնով հարցրեց.

— Է՛յ, հայո՛ց սպարապետ, ի՞նչն է քեզ բերել մեր քերծերը։

— Ուզում եմ հյուր լինել ձեզ,— պատասխանեց Մխիթարը։

Մեկը կայծքարով կայծ հանեց. վառեց ձեռքին պահած ջահն ու համարձակ հայացքով չափեց սպարապետին։

— Եթե սրտումդ քեն չկա, համեցի՛ր։ Իսկ եթե չար է միտքդ, ապա չնեղանաս...

Նա և նրա նման մյուս երկու ածդահաները զինված էին գլուխները գամած մահակներով, նիզակներով ու թրերով։ Նրանց հագին այծի մորթուց կարած բաճկոններ էին, մազից գործած խոնջանավոր վարտիքներ։ Կոպիտ տղամարդիկ էին. աչքերի սպիտակուցները փայլատակում էին ջահի կարմրադեղին լույսից։ Բայց Մխիթարը նրանց աչքերում ինչ-որ շոյող բան նկատեց ու հասկացավ, որ դրանք իրեն թշնամաբար չեն դիմավորի իրենց ժայռափոր որջերում։

Բարձրացան վեր։ Ջահը լուսավորում էր մամռապատ քարերը, ընկուզենիների ճերմակ բները, որոնց արմատները ոլորվել էին ժայռերի մեջ։ Մի կաղնի իր բարձր փչակում հողմահարված մի խաչքար էր պահում։

— Ծառերի արմատներից բռնիր, տե՛ր Մխիթար, թե չէ կգլորվես ձորն, ու հայոց զորքը կմնա առանց հմուտ սպարապետի,— նկատեց ուղեկիցներից մեկը։

— Իսկ դուք ինչպե՞ս ճանաչեցիք ինձ,— անհնարին վերելքից հևալով՝ հետաքրքրվեց սպարապետը։— Չէ՞ որ ես ծպտված եմ։

— Քեզ էլ ճանաչեցինք, Տեր-Ավետիսին էլ,— պատասխանեցին նրանք։— Չճանաչեինք, չէինք թողնի ոտք դնեք այս անտառը։ Մենք դեռ հեռվից էինք հետևում ձեզ։

Հասան երեք կողմից ցից ժայռերով փակված, հազիվ մի կալի մեծությամբ տափարակ։ Ներքևում ամեհի անդունդն էր։ Ժայռերի ծերպերից կախված էին խնկաբույր ցրթնիներ։ Մխիթարը խոր շունչ քաշեց, սրբեց ճակատի քրտինքը։

— Արծվի բներում եք թառել,— ասաց ուղեկիցներին։

— Արծվի բները մեր այրերից ցած են, տե՛ր սպարապետ,— ուղղեց ջահակիրը։

— Եվ ինչպե՞ս եք ապրում այստեղ։

— Ոչ ուրախ կյանքով։

Մտան ժայռերի մեջ փորված մի նեղ անցք։ Փտած խոտի ու դարմանի հոտ զգացին։ Անցքից դուրս գալով դեմ առան մի լերկ ժայռի։ Նրա լանջին կանգնած էին երեք պատանի, որոնք ջահերով լուսավորում էին եկողների ճանապարհը։ Մեկը վերևից կանչեց Մխիթարին ուղեկցող ջահակիր երիտասարդին։

— Պարանը գցեցի, բոնի՛ր, Թովմա՜...

Ջահերի լուսավորության տակ Մխիթարը տեսավ այն սոսկալի վիհը, որի վրա կախվելով՝ մարդիկ պարանի օգնությամբ բարձրանում էին վեր։

— Աչքերդ կշաղվեն, շատ մի նայիր ներքև,— խորհուրդ տվեց մեկը։

Մխիթարը շուռ եկավ։ Թովմայի մոտ կանգնած էր ձիգ մեջքով, նույնպես մազազգեստ մի ծերունի։ Լայն, կիսաբաց կրծքին խճճվել էր ճերմակ մորուքը։ Մխիթարը ձեռքը մեկնեց նրան. «Երևի սա է սրանց նահապետը»,— մտածեց ու սրտում մի ուրախ բան զգաց։ Կարծես հանդիպում էր վաղուց կորած հորը։

— Բարին տեսանք,— ասաց սրտից։

— Բարին հյուրի հետ, համեցի՛ր,— նրա ձեռքը սեղմեց ծերունին։

Նորից բարձրացան ու հասան ժայռի մեջ փորված մի ցածրիկ դռան։ Սրա շեմակալին կախված էին հովազի ժանիքներ, բորենու կարկաժ, եղնիկի կոտոշներ։ Մխիթարը մտավ բաց դռնով ու իրեն գտավ մի ընդարձակ քարանձավում։ Որմնախորշերում վառվում էին ձեթի ճրագներ։

— Իմ տունը քեզ օթևան, իմ զավակները՝ քեզ ծառա,— զրնգուն ձայնով ասաց ծերունին։— Ներող եղիր, մեր քարատակը վայել չէ քեզ նման հյուրին, բայց սա էլ հազիվ ենք պահում չարից ու աղետից։

— Եվ օրնյա՛լ լիցի տունն այսմիկ,— բացականչեց Տեր-Ավետիսը։— Կարգս վկա, մի ամբողջ տերության զորք չի կարող մտնել այս ամրոցը։

— Իմ տանը միայն բարի հյուրեր են լինում,— նկատեց ծերունին։— Շատերն են զորքով եկել մեզ վրա, բայց դարձել են ի փախս։

Սև թաղիքներ փռեցին հատակին։ Հյուրերն ու ծերունին նստեցին։ Շուտով ընդարձակ քարանձավը լցվեց մարդկանցով։ Մորուքավոր, այծե բաճկոններով, կլոր գլխարկներով այդ մարդիկ կիսավայրենիների էին նմանում։ Բոլորն էլ նետ ու աղեղ ունեին։ Շատերը բոբիկ էին, ոմանք գրեթե մերկ։ Մեծահասակները տեղ բռնեցին հյուրերի դիմաց,

երիտասարդները մնացին ոտքի վրա։ Մխիթարը հիացմունքով էր նայում նրանց։ Բոլորն էլ կտրիճ տեսք ունեին։ Երկու մանկամարդ կին փայտե կոնքեր ու կավե ջրածիկներ բերին։ Նրանք մազեղեն հագուստներով էին, որոնց մեջ ավելի շուտ տղամարդու էին նման։ Կոնքերը դրին հյուրերի առջև, ջուր լցրին նրանց ձեռքերին ու տանու գործած կտավե սրբիչներ մեկնեցին նրանց։ Ապա մի-մի կորեկահաց դրին հյուրերի ծնկներին։ Մի փոքրիկ աղջիկ վառած մոմ տնկեց սպարապետի առջև։ Նա սև ու երկար ծամեր ուներ, որոնք թափվում էին թիկունքն ի վար։

— Անունդ ի՞նչ է,— հարցրեց սպարապետը։

— Ծամամ,— համարձակ պատասխանեց աղջիկը՝ ածխի պես սև աչքերը Մխիթարին հառելով։

— Լավ անուն է,— ժպտաց Մխիթարը։— Քանի՞ տարեկան ես։

— Տասնմեկ։

— Օհո՜... դաշույն էլ ունի,— նկատեց Տեր-Ավետիսը,— երևի կատուներին վախեցնելու համար է։

— Չի՞ լինի կովենք,—նեղացավ աղջիկը։—Կողդ էնպե՛ս ծակեմ որ...

Հյուրերը ծիծաղեցին։ Մխիթարը թաքուն մի ոսկի դրեց աղջկա բռան մեջ ու ականջին բան ասաց։ Աղջիկը վազեց դեպի կից քարանձավը և դեռ շեմքին չհասած՝ կանչեց.

— Նանի՜, իշխան քեռին ինձ ոսկի տվեց, որ սուրմաներ առնեք իմ հարսանիքին։

Փայտե սինիների մեջ խաշած ավելուկ ու բակլա բերին։ Ուրիշ ուտելիք չկար։ Մխիթարը հառաչանքը կուլ տվեց, բայց հյուրընկալներին չվիրավորելու համար մի բուռ բակլա վերցրեց։ Տեր-Ավետիսը օրհնեց սեղանը։

— Երևում է, որ դժվար եք ապրուստ ճարում,— զգույշ նկատեց Մխիթարը։

— Եղածը քեզնից չենք թաքցնում, աստված կպատժի,— ասաց ծերունին։— Ի՞նչ ապրուստ ես ուզում այս ծերպերի մեջ։

— Հապա ինչո՞ւ եք ձորերն ու դաշտերը թողել, մտել այս քարերը,— հանդիմանեց Տեր-Ավետիսը։

— Հարցրու մելիք Բարխուդարից,— մռայլ պատասխանեց ծերունին։— Ապրում էինք մեր պապերի օջախ Խնձորեսկ գյուղում։ Հողին կպած, հողի հետ կանաչող ու չորացող մարդիկ էինք։ Տերունական հարկ-հասույթը տալիս էինք տեղը-տեղին։ Տալիս էինք մելիքականը, կոռ ու բեկար էինք գնում։ Մելիքի տասանորդը տալիս էինք, վրան էլ

---

[1] Գրամով վճարվող հարկեր։

նաղդն ու ջինը[1]։ Գլխահարկ էինք տալիս, բահրա էինք տալիս։ Ոչխարից տալիս էինք. հավից, կովից, էծից տալիս էինք։ Քանի՞ մեկն ասեմ։ Ջաններս դուրս էր գալիս, բայց տալիս էինք, ապրում տակը մնացած պաճ ու կուտով...

— Բա ժամի տուրքերն ինչո՞ւ չես ասում, Թուրի՜նջ ապեր,— ծերունուն ընդհատեց մի կիսամերկ գյուղացի։— Բա հայրապետական հա՞սքը, առաջնորդակա՞նը, քահանայակա՞նը, բա մեռոնի տո՞ւրքը, ասա է՞... Ումի՞ց ես թաքուն պահում։ Բա սրբադրա՞մը, «լիաբուռն» պտղին։ Տո՜ւր, է՜... Երեխա մկրտելուց տուր, հարսանիքին՝ տուր, կալօրհնեքին՝ տուր, տնօրհնեքին՝ տուր։ Տո՜ւր, է՜, տո՜ւր... Տո՜ւր, թե չէ կաշիդ կքերթեն, երեխադ ձեռքիցդ կառնեն...

— Ո՞ւր ես, է՜, Մեխլո՜ւ վարդապետ[1],— հանկարծ մութ անկյունից մռնչաց մեկը։— Հողով տեղով լույս դառնաս։ Լա՜վ էիր գայլերի բերանը պատռում. ախորժակներին քացախ անում։

Սկսեցին խոսել միանգամից, բոլբոլված։ Գոռում էին, աչքները փայլատակում, մերկ ձեռքերը թափահարում։ Ներունի Թուրինջը սաստեց նրանց։

— Բղավոցներդ կտրեցե՜ք, անտա՜շ հայվաններ։— Նա հևաց, բռունցքը թափահարեց յուրայինների վրա ու, կառչելով Մխիթարի ձեռքին՝ շարունակեց առանց ձայնը մեղմելու։— Դու սրանց վրա մի՜ հերստվի, տե՜ր Մխիթա։ Այրված-փոթոթված մարդիկ են։ Մելիք Բարխուդարը մեզ չրթեց գյուղից։ Նա իր կոռեճությամբ անօրեն ղզլբաշից էլ գաժան է։ Օձի բարք ունի այդ անկշառում վիշապը։ Անճար եղանք, արյուն արինք ու փախանք ծերպերը։ Ամեն տարի Բարխուդարը զորք է բերում, որ մեզ այստեղից էլ խրկի, խոտորի՜, մորթի՜... Բայց կեռիքները փտած են։

— Հի՜, հի՜,— քրքջացին մի երկուսը։— Էնպես ենք թափում նրա ատամները, որ մածուն էլ չի կարողանում ծամել։

— Երեք հարյուր ծուխ ենք,— շարունակեց Թուրինջը մի փոքր հանդարտ։— Ապրում ենք մելիքի հետ շնակովով, մի բուռ բակլայով, կորեկհացով, ճարն ի՞նչ։ Հող չունենք, հո՞ղ...

— Մարդ այստեղ Քրիստոսի անունն էլ կմոռանա,— ավելացրին մյուսները։

— Մոռացել ենք, պրծել...

[1] 17-րդ դարի գյուղացիական շարժումների առաջնորդ։ Մեծ հռչակ է վայելել Արևելյան Հայաստանում։

— Մեր մանուկներին չենք կարողանում մկրտել։ Քահանա չունենք։ Ուրիշ տեղերից էլ չեն գալիս։ Մելիքից վախենում են։

— Մեր տղաներին աղջիկ չեն տալիս շեներից։ Մելիքի ահը մեծ է։ Հակառակի նման էլ մեր կնանիքը օխտը տղա են բերում, մի աղջիկ։ Ի՞նչ անենք, հը՞։

Մխիթարը ձեռքը բարձրացրեց։ Լռեցին իսկույն։ Լսվում էր կրծքերի հևոց։

— Այնպիսի բաներ եք ասում, որ ականջներիս չեմ հավատում,— խոսեց Մխիթարը։— Իսկ ինչո՞ւ տեղյակ չեք պահել Դավիթ-Բեկին։

— Բա չե՞նք պահել,— ընդհատեց Թուրինջը,— հարյուր անգամ մարդ ենք ուղարկել, բայց Բեկին մոտ չեն թողել։ Ատծուն փա՜ռք, մեզնից հեռացել է ահը պարսից. տերություն ենք, բայց մեր նախագահ իշխանությունը մեզ հայրություն չի անում։ Անտեր, վայրենի մարդիկ ենք։— Ներունին ձայնը բարձրացրեց, խոսեց ջղաձիգ։— Աստված ինքն է քեզ գցել մեր տունը, Մխիթա՜ր։ Թե կարողանում ես, մելիք Բարխուդարի ճանկից մեզ ազատի, թե չէ՝ մի օր վեր կկենանք ու կհեռանանք հայոց հողից։

Կրկին գլուխ պայթեցնող աղմուկ բարձրացավ։ Մեկը մյուսին ընդհատելով, հրելով, խփելով գղնձաքարցիները պատմեցին, թե ինչ տառապանքներ են կրում մելիք Բարխուդարի ձեռքից։ Բազմացավ, բարդացավ ու դիզվեցավ Մխիթարի սրտի ցավը։ Մելիք Բարխուդարի անօրինությունների մասին առաջին անգամը չէր լսում։ Գիտեր, որ այդ մելիքը անխիղճ կոտանքի է ենթարկում նույնիսկ զատամ ծերունիներին։ Դավիթ-Բեկին ևս հայտնի էր այդ գոռոզ, յոթանասուն գյուղի տեր մելիքի արարքները։ Բայց համբերում, կուլ էր տալիս։ Չէր կարող պատժել նրան։ Իր զորքը կառնի ու հեռանալով՝ ինքնագլուխ կգառնա։ Բարխուդարը մեկն է այն հզոր մելիքներից, որ հայոց անկախությունը վերականգնել է կամենում, չխնայելով իր ուժն ու զորքը։ Մխիթարը քանիցս Դավիթ-Բեկին խնդրել է՝ պատժել Բարխուդարին, բայց Բեկը մերժել է՝ նորաստեղծ պետության մեջ պառակտում չգցելու համար։ «Այժմ մենք բարեկամներ ու կամակիցներ պիտի հավաքենք Աբիսողոմի նման,— ասել է Բեկը։— Զգուշացի՜ր ներքին պառակտումից»։

Մխիթարը գլուխը բարձրացրեց, կամեցավ ասել, որ ինքն ավելի է ատում Բարխուդարին, բայց բարվոք համարեց չգրգռել աղքատ, գաղազած ռամիկներին։

— Դուք ձեր գլուխներից հանեցեք մեր աշխարհից հեռանալու միտքը,— սաստ ասաց նա։— Ես խոստանում եմ ամեն ինչ անել, որպեսզի

մելիք Բարխուդարն այլևս չնեղի ձեզ։ Ախր դուք ինչի՞ չեք օգնում մեզ՝ մեր հայրենիքի թշնամիների դեմ մղած կռիվներում։

— Բոլորս զո՞հ հայոց հողին,— որոտաց ծերունի Թուրինջը։— Մեզնից էլի մի երեք հարյուր գիժ կարող են զինվոր լինել քո զորքում, բայց ո՞վ է բանի տեղ դնում մեզ։ Լսի՛ր, Մխիթա՛ր, դու, որ ամենայն իմաստությամբ կատարյալ ես, լսի՛ր։ Պարտակա՞ն մնաս աստծո արդար դատաստանին, եթե մեր ցավերին հասու չլինես, աղբյուրաբար չոռոգես մեր չորացած կյանքը։

— Կմտնենք ձեր բանակը,— ասացին այս ու այն կողմից։— Իսկ հետո հող կտա՞ք։ Բա մենք մի շան թաղնելատեղի չափ հող էլ չունենա՞նք, որ գլուխներս պահենք։

— Ես ձեզ հող կտամ,— բոլորի համար անսպասելի հայտարարեց Մխիթարը։— Կտամ հենց այսօր, վաղը,— նրա ձայնը հրամայական էր։— Պարսիկներից հետ խլած հողերից կտամ։ Միայն թե հերիք է դուք հեռու քաշված արջի կյանք վարեք։

— Դու մեզ տերություն արա, տե՛ր սպարապետ, այն ժամանակ մենք ցույց կտանք, թե ինչ տեսակ հայի զարմ ենք,— պատասխանեցին իսկույն

Ընկրկեցին։ Լռեցին՝ կայծակի երևալուն սպասողների պես։ Մխիթարը վեր կացավ անխոս... Քնել էր կամենում։

***

Արթնացավ այրի լերկ ճեղքից ներս խուժած արևի ջերմությունից։ Տեր-Ավետիսը չկար։ Արագ դուրս եկավ։ Դռան մոտ կանգնած էր Թովման։

— Բարի լույս,— անփույթ ողջունեց երիտասարդը։

— Հազա՞ր բարի, Թովմա՛, դու որի՞ տղան ես,— հետաքրքրվեց Մխիթարը։

— Ես Թուրինջի տղան եմ։

— Քանի՞ եղբայր եք։

— Յոթ և մի քույր։ Ես եղբայրներիցս փոքրն եմ։

— Ինչո՞վ ես պարապում։

— Որս եմ անում։ Իմ եղբայրները բոլորն էլ որսկան են։

Դուրս եկան նեղ, ժայռահատակ բակը, որ հենց անդունդի եզրին էր։ Մխիթարը սաստիկ զարմացավ, երբ այնտեղ տեսավ իր ու Տեր-Ավետիսի ձիերը։ Թովման բացատրեց, որ իրենց բնակավայրը մի գաղտնի անցք ունի, որի միջով ամրոց են բերում իրենց կովերն ու ոչխարները։

Այդ անցքով գիշերը ձորից բերել են Մխիթարի քարավանը։ Այդտեղից լավ երևում էր Պղնձաքարի բնակատեղին։ Ամենուրեք ժայռեր էին՝ տձև, արտառոց, ահարկու։ Վերևում անտառ կար, ցածում՝ ևս։ Մեծ քարանձավի առջև ահագին բազմություն էր հավաքվել՝ տղամարդ, կին։ Լսվում էր ծծկեր երեխաների ճիչերը։ Ժայռի լանջից կախված էր մի զանգ՝ երկար թոկով։ Ներքևում դրված էր նուրբ քանդակներով մի խաչքար, մոտը՝ փայտե խոր տաշտ։

Տեր-Ավետիսը կանանց գրկից վերցնում էր ճչացող մանուկներին ու կոխելով տաշտի ջրի մեջ՝ մկրտում։ Նա հագել էր քահանայական հնամաշ սքեմը, որ ման էր ածում խուրջինում։ Եզրերը սևացած արծաթե լանջախաչը թաթախում էր մանուկների մեզից պղտորված կնքաջրի մեջ ու դեմ անում մկտրված մանկան մորը՝ համբուրելու։ Տեր-Ավետիսը մոռացել էր վրայից հանել թուրը, որի ծայրն ընկնում էր կնքաջրի մեջ։

— Դե՛, դե, խելո՛ք կաց,— սաստում էր նա մոտ մեկ տարեկան մի տղայի, որ ամուր կառչել էր նրա մորուքից ու ճչում էր։— Խելո՛ք կաց, թե չէ քեզ զինվոր կտանեմ։

— Մատա՛ղ Դավիթ-Բեկին,— բարձր ասաց ծերունի Թուրինջը։— Թող զինվոր լինի աշխարհին Հայոց։

— Ամե՛ն,— կրկնեցին մյուսները։

Կնունքը վերջացավ, Մխիթարն իր զինվորներին հրամայեց բեռները բերել։ Ապա կանչեցին բոլոր տղամարդկանց։ Շուտով խաչքարի շուրջը հավաքվեցին գյուղի տղամարդիկ՝ ալեհեր ու երիտասարդ, նույնիսկ պատանիներ, ցնցոտիներով ծերուններ։ Եկան պատրաստակամ՝ մահակներ ու նիզակներ ձեռքներին։ Երեխաները քարադոդոշների նման կպան ժայռերին։ Պապանձվեցին։ Կռահեցին, որ հիմա մի մեծ բան է կատարվելու։ Մխիթարը կանգնեց խաչքարի մոտ՝ մի կողմին խիստ ու խոժոռ Տեր-Ավետիսը, մյուս կողմին՝ զարմացած Թուրինջը։ Սպարապետի ակնարկով Փոքր Գորգին դաշույնով քանդեց մաֆռաշների կապերն ու, մի հրացան հանելով՝ տվեց նրան։ Մխիթարը դարձավ պղնձաքարցիներին.

— Հերիք է փախած մնաք աշխարհից, լսո՞ւմ եք։ Այս զենքով դուք պիտի սատկացնեք Հայոց աշխարհի թշնամիներին։ Գովելի մարդիկ եք, ո՞չ ձեր հավատն եք մոռացել, ո՞չ էլ ձեր հայ լինելը։ Վստահ եմ, որ հավատարիմ կլինեք Դավիթ-Բեկին։ Դե՞։

Ռամիկները չհասկացան, թե ինչ է ուզում Մխիթարը։ Ագահ նայում էին հրացաններին։ Թուրինջը կոկորդը քերեց.

— Դե, ի՞նչ եք մոլոր տնկվել,— ասաց խզված,— մոտեցեք տեր սպարապետին, վերցրեք նրա տված նվերը, զինվոր գրվեցեք։

Մեկը մոտեցավ Մխիթարին։ Բոկոտն էր, այծենի բաճկոնը հազիվ էր հասնում մինչև ծնկները։

— Տ՛ուր, զինվոր եմ,— ասաց պահանջկոտ, սպառնալի։— Տ՛ուր, պարսիկ լինի, թուրք, մելիք Բարխուդարը, թե մեկ ուրիշը...— Ոտքերը գրերին ու գոչեց։— Խաչն ու զենքը մեզ զորավիգ, թող ապրի հողը հայոց։

— Ամե՛ն,— հաբյուրապատկեցին մյուսները։

Փոքր Գորգին մի կտոր թղթի վրա գրեց զենք ստացողների անունները։ Մխիթարը հրացաններ բաժանեց շատերին։ Պղնձաքարցիները երգում էին, որ հավատարիմ կմնան Բեկին։ Զպպացնելով համբուրում էին խաչքարը։

Թովման անհանգիստ կրծոտում էր բեղերի ծայրերը։ Սպարապետն ինչո՞ւ իրեն հրացան չի տալիս։ Չէ՞ որ ինքն արդեն քսանհինգ տարեկան է, ու իրենց քարանձավի մուտքից կախված երեք հովազի ժանիքներից մեկն իր սպանածինն է։ Նեղացավ սպարապետից։ Տարօրինակ մարդ է։ Առավոտյան այնպե՞ս քաղցր էր իր հետ, հիմա ի՞նչ եղավ նրան։ Այդ մտքերի մեջ էր նա, երբ մեկը հրեց ուսը.

— Առաջ գնա, է՛, տեր սպարապետն է կանչում։

Թվաց, թե կատակ են անում։ Ոտքերը շաղվելով գնաց, կանգնեց սպարապետի առջև ու քրտնեց։ Դեմը առավոտվա բարի ու մտերիմ հյուրը չէր։ Սպարապետի դեմքին դաժանություն էր, հայացքը՝ շփոթեցնող։

— Իմացիր, եթե ձեռքդ դողաց մաքառում կամ կրունկ ցույց տվիր, ապա կմորթվես առաջին զինվորի ձեռքով։— Ասաց սպարապետը՝ սուր նայելով նրան։— Դու աքջի միս ուտող որսկան չես այլևս, այլ Դավիթ-Բեկի զորքի տասնապետ Թովման։ Լսո՞ւմ ես։

Թովման միայն աչքերը ճպճպացրեց։ Գլուխն ինչո՞ւ է պտտվում։ Սիրտն էլ այնպես է խփում, կարծես բոլորը լսում են նրա զարկերը։ «Տասնապե՞տ»։ Ճի՞շտ լսեց, թե՞... Աչքերը փակվեցին։ Երեսին խփած արևի՞ց էր, թե Մխիթարի ծանր, ծակող հայացքից։ Երբ աչքերը բաց արեց, Մխիթարը ներողամիտ ժպտում էր։ Որքա՞ն շուտ է փոխվում այս մարդու դեմքը։ Մերթ այնպես խստաբարո է, որ ահից նույնիսկ քիչ է մնում շոքես, մերթ էլ այնպես բարի է, որ կարծես քեռիդ է՝ գրպաններում չամիչ։ Բայց Մխիթարի ժպիտի մեջ մի անորսալի բան կար։ Ուրիշ տեսակ էր նրա հայացքը։ Այդպես հովազն է բարձունքից նայում ներքև՝ անմեղ ջուր խմող կխտարի ձագին, պատրաստվում թռիչքի...

— Այսօր տասնապետ ես, Թովմա՛, վաղը կարող եմ հարյուրապետ դարձնել քեզ կամ, աստված չանի, կախեմ մի փտած ծառից։ Հիշիր...— Սպարապետը հանեց գոտու արանքի երկու ատրճանակներից մեկը, որ իրեն էին նվիրել ագուլիսեցի վաճառականները, ու խոթեց Թովմայի ձեռքը։ Թովման հափշտակեց նրա աջն ու տարավ դեպի շրթունքները։ Բայց ծանր էր սպարապետի ձեռքը, չկարողացավ հասցնել համբույրի։ Սպարապետը նրան հրեց դեպի խաչքարը։

— Գնա, համբուրիր խաչքարը,— ապա դարձավ պղնձաքարցիներին։— Թովման ձեր զորապետն է։ Այս առաջին շնորհը ձեզ։ Ապա իմ կամքով Պղնձաքարի բնակիչներդ այսօրվանից դուրս եք մելիք Բարխուդարի իշխանությունից։ Իմացե՛ք։ Հրամանի գիրը կստանաք շուտով։ Պղնձաքարի շուրջը գտնվող պարսիկներից ետ խլած անտառները, ձորերը, աղբյուրներն ու գետերը, վարելահողերն ու արոտները, քարայրներն ու սարերը անկապտելի սեփականություն եմ տալիս ձեր համայնքին։ Ապա իրավունք եմ տալիս այստեղ բնակվել նաև բոլոր նրանց, ովքեր կգան ու կցանկանան ապրել ձեզ հետ։ Ընդունեցեք եղբայրաբար, աճեցեք ու բազմացեք։ Ապա ես հարմար գտա ձեզանից Թուրինջ անունով ծերունուն տանուտեր կարգել ձեր գլխին։ Շնորհավո՞ր լինի։

Մխիթարի ասածները հավանեցին բոլորը։ Մի այնպիսի աղմուկ բարձրացրին, որ ժայռերի ծերպերում թառած արծիվները պոկվեցին բներից, շները կատաղորեն հաչեցին

— Օրհնվի՞ եկած ճանապարհդ, սպարապե՛տ Մխիթար...— գոռում էին ամենքը։

Նոր նշանակված տանուտերը շփոթվեց, շիկնեց, բայց կարողացավ համբուրել սպարապետի ձեռքը, երդվեց, որ միշտ հավատարիմ կլինի Հայոց ժողովին։

— Դե, մնացեք բարյա՛վ,— ձեռքը թափահարեց սպարապետն ու գնաց դեպի ձին։ Թովման վազեց նրա ձիու սանձը բռնելու։ Դուրս եկան գաղտնի անցքով։ Սպարապետին ուղեկցում էին Թովման, տանուտեր Թուրինջը և էլի մի քանի պղնձաքարցի։

— Մելիք Բարխուդարը կփրփրի, հա՛,— քրքջաց Տեր-Ավետիսը, երբ իջել էին ձորը։— Ոսկրոտ պատառ դեմ արինք բկին։

— Եթե կուլ էլ տա, չի մարսի,— պատասխանեց սպարապետը։— Այսօր մենք մի լավ դաշնակից շահեցինք։ Պղնձաքարը թոկ է այդ դաժան մելիքի վզին։

— Բայց ես համոզված եմ, որ Խնձորեսկի տերը մեր ուխտին սրտով է միացած։

— Աստվա՛ծ տա,— նկատեց Մխիթարն ու խթանեց ձիուն։

Իջան Վարարակնի հովիտը։ Խաղաղ ծխում էին բարձրադիր շեները։ Հեռվում, ժայռերի նախիրի մեջ, նշմարվեցին Զագեձոր ամրոցի աշտարակները։ Սպարապետը տխուր նայեց նրանց։ Դա իր ամրոցն էր։ Այնտեղ էին կինն ու զավակները։ Բայց հիմա չի կարող մտնել Զագեձոր։ Հալիձորն իրեն է սպասում։

Մյուս օրվա երեկոյան հասան Տաթև։ Զգնաց Հովակիմ եպիսկոպոսի հրավերին՝ ընթրիքի. փաթաթվեց այծենակաճի մեջ, մեկնվեց զինվորների մոտ ու աչքերը փակեց։ Արթնացավ, երբ ձիերը դեռ չէին հասցրել ուտել տոպրակների գարին։ Բոլորին ոտքի հանեց ու սլացավ դեպի Հալիձոր։

Դավիթ-Բեկն արդեն հավաքել էր Հալիձորի Երկրի ապավեն գունդը, Մեղրու, Վարանդայի, Սիսականի ու Դիզակի գնդերը։ Նա ոտքի վրա լսեց սպարապետի ու Տեր-Ավետիսի հաղորդածները, ապա նրանց սրընթաց արշավանքով ուղարկեց դեպի Արաքսի ձորը՝ այնտեղից սպասվող պարսից խաների արշավանքին դիմադիր։

Սև ամպեր էին կուտակվում լեռնաշխարհի վրա։

ԱՄՐՈՑԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Զագեձորը նիրհում էր միջօրեի թմրությամբ։ Բարձր ժայռակղզու վրա թառած լինելով՝ նա անառիկ էր։ Միայն ժայռեղեն մի բնական բարակ կամրջակ էր նրան կապում դրսի աշխարհին։

Ամրոցից ցած Վարարակնի նեղ ու գալար հովիտն էր, վերը սրբազան կաստ սարը՝ անտառներով ու անանցանելի սուրաններով ծրարված։ Սարերի վրա արդեն ձյուն էր։ Խաշնատերերը քաշվել էին շեները, և միայն հատուկենտ գոմեշներ ու մատակներ էին արածում հովտի ճահճուտներում։

Ամրոցի միակ քարե պատշգամբում, որ կախված էր անդունդի վրա, կանգնած էր Մխիթար սպարապետի կինը՝ տիկին Սաթենիկը։ Նա բարձրահասակ էր, բարձրահոն, խիստ, բայց համակրելի դեմքով։ Նրա սև գիսակները պսակաձև հյուսված էին գլխին, որոնց մեջ արդեն հատուկենտ ճերմակ թելեր էին երևում։ Մի վեհ տխրություն ու մշտական մի մտախոհություն էր դրոշմված այդ տակավին երիտասարդ տիկնոջ մոմագույն դեմքին։ Միածանագույն շալը սահել էր նրա ուսերից, ընկել պատշգամբի բազրիքին։ Երկնագույն մետաքսե երեքփեղ կապան հասնում էր մինչև տիկնոջ ագուլիսյան զմրուխտե մաշիկները, որոնց կեռիքները ընդելուզված էին քանդակազարդ արծաթով։ Նրա գոտու ոսկյա ճարմանդին դաջված էր Հասան Ջալալյան տոհմի զինանիշը՝ իրար գրկած երկու առյուծ։

Տիկինն ակնդետ էր ամրոց բերող միակ ճանապարհին, որ ծագում էր Առանց խորունկ կիրճից ու, անցնելով գետի վրա աղեղված կամուրջը՝ բարձրանում ամրոց։

Արդեն երրորդ շաբաթն էր, ինչ ամուսնուց անլուր էր տիկինը։ «Ի՞նչ եղավ, ինչո՞ւ սուրհանդակ չի առաքում Մխիթարը,— մտքում հարցուփորձում էր նա,— գուցե դժբախտությո՞ւն է պատահել»։ Տիկինը սոսկաց սեփական մտքից։ «Պապանձվեմ։ Այս ի՞նչ եմ մտածում։ Մեզ համար հազիվ է բացվել գթածին աստծու ողորմության դուռը»։— Բայց և այնպես այդ մտքից նրա մեջ մի նոր կասկած ծագեց։ «Չլինի՞ Մխիթարն իր սուրհանդակն առաքել է նախ Խնձորեսկ՝ Գոհարի մոտ»։ Այս մտքից նա սաստիկ ընկճվեց, շրթունքները դողացին, մի փշրվող հառաչանք ժայթքեց կրծքից։

Նրան հայտնի էր իր ամուսնու և Խնձորեսկի մելիք Բարխուդարի դստեր՝ Գոհարի վաղեմի սիրո բանը։ Ամեն անգամ, երբ տիկինը հիշում էր մելիքի աղջկան, բարկության մի անզուսպ ալիք էր ոլորվում նրա սրտում, և նա պատրաստ էր անփարատելի անեծքով հիշել ամուսնուն։ Բայց միշտ էլ ուժ էր գտնում խեղդել ներքին ցասումը։ «Աստվա՜ծ, դու պահապան Մխիթարիս՝ հայոց երկնակամարի աստղին նորոգ»։ Դրանով նա փակում էր իր բարկությունը և, ամուսնուն չվշտացնելու համար, նրանից գաղտնի պահում իր տառապանքը, այն, որ ինքը տեղյակ է նրա թաքուն սիրուն։

Արցախի Հասան Ջալալյան մեծ տոհմից էր տիկինը։ Մորը վաղուց էր կորցրել, իսկ իշխան հայրն սպանվել էր պարսիկների դեմ մղած մի ճակատամարտում։ Ութ տարեկան Սաթենիկին որդեգրել էր նրա մեծ հորեղբայրը՝ Գանձասարի Եսայի Հասան Ջալալյան կաթողիկոսն ու տարել վանք։ Այդտեղ Սաթենիկը կրթություն էր ստացել։ Կաթողիկոս ու պատմիչ հորեղբայրը նրան ուսուցել էր հայոց գրաբարը, հին հունարեն ու պարսկերեն։ Եվ ապա, երբ Սաթենիկը ամուսնացել ու հարս էր եկել Սյունիք, հորեղբայրը խորհուրդ էր տվել գրել Դավիթ-Բեկի պատերազմների պատմությունը։

Սաթենիկը պատմիչ էր։

Տասնհինգ տարի առաջ Դավիթ-Բեկն իր սիրեցյալ Մխիթարին ամուսնացրեց Սաթենիկի հետ, կամենալով իր դիրքերն ամրապնդել Հասան Ջալալյան հզոր իշխանական տոհմի անունով ու Եսայի եռանդուն կաթողիկոսի աջակցությամբ։ Անտարակույս, ո՛չ կաթողիկոսը, ո՛չ էլ Հասան Ջալալյան իշխանները իրենց ազդակցությունն կնության չէին

տա ազնվական ծագում չունեցող, այն ժամանակ դեռ հարյուրապետ Մխիթարին, եթե չլիներ Դավիթ-Բեկի միջնորդությունն ու պահանջը։ Արցախի տերերը գիտեին, որ Դավիթ-Բեկը խորին սեր ունի դեպի Մխիթարը, իսկ սա իր քաջությամբ ու զորական շնորհքով փայլում էր հայ զորապետների մեջ։

Հարսնացուին Դավիթ-Բեկը տեսել էր կաթողիկոսի մոտ ու հավանել։ Իսկ ապագա ամուսիններն իրար տեսել էին միայն հարսանիքի օրը։

Այդ օրից շատ տարիներ էին անցել։ Սաթենիկն անդարձ սիրել էր Մխիթարին։

Թեև առաջին անգամը չէր, որ Մխիթարը մեկնել էր պատերազմի, ու միշտ էլ տիկինը լիահավատ էր սպասել պատերազմի ելքին ու ամուսնու դարձին, բայց այս անգամ նրա սիրտը մի տխուր բան էր գուշակում։ Թվում էր՝ սև համբավ պիտի առնի։

Այդ օրն էլ երեկվա, մյուս օրվա պես նա իր երկու զավակներին՝ տասնչորս տարեկան Ահարոնին ու մեկ տարեկան Դավթին թողել էր աղախնի խնամքին, դուրս եկել պատշգամբ և տագնապով նայում էր ամրոց բերող ճանապարհին։ Սակայն ճանապարհին ձիավոր չէր երևվում։ Տանջալի սպասումի մեջ էին նաև Զագեձորը, նրա տակ, ժայռերի արանքները մխրճված Գորիս ավանը։ Այնտեղ երբեմն մի կին էր երևվում ժայռի պոնկին ու ձեռքը ճակատին՝ երկար նայում ճանապարհին։ Բոլորն սպասում էին պատերազմ մեկնած իրենց սիրելիներին։

Դառն մտքերի մեջ ամփոփված տիկինը չնկատեց, թե ինչպես պատշգամբ մտավ Տեր-Ավետիս հաղարապետի կինը՝ կարճահասակ, լիքլցված Վարդ-խաթունը։ Իր ուսին զգալով նրա ձեռքը, տիկինը շուռ եկավ ու վախեցած նայեց նրան։ Չլինի՞ որևէ ծանր լուր գիտի նա։ Բայց խաթունի վառ-կարմիր դեմքին տագնապի ու անհանգստության նշույլ անգամ չկար. նրա աչքերը շողարձակում էին այն անփույթ հանդգնությամբ, որով նշանավոր էին նրա հերանք՝ Կապան գավառի տերեր Մելիք-Փարսադանյանները։

— Էլի՞ աչք ես մաշում ճանապարհին,— հարցրեց խաթունը՝ հանդիմանությամբ։

Տիկինը դժգոհ նայեց նրան։

— Զարմանում եմ անհոգությանդ, Վա՛րդ։ Մեր ամուսիններն ու բանակը մեկնել են պատերազմի, նրանցից լուր չունենք, իսկ դո՞ւ...

— Սև հագնե՞մ, ի՞նչ է,— ծիծաղեց Վարդ-խաթունը։— Տղամարդը ծնվել է պատերազմի համար, նրա գլուխը պետք է այնտեղ ընկնի։ Ջուններնա՞մ ինկա ծոցում մեռնող ամուսին։

— Մեղա՛ քեզ,— ահով շշնջաց Սաթենիկն ու աչքերը փակեց։— Հերիք է, որքան կռիվ ու արյուն տեսանք... Ես սարսափում եմ։ Սուրհանդակ չեկավ։ Բարի բան չեմ գուշակում... Լեզուս պապանձվի։

— Սուրհանդակը, հրե՛ն, գալիս է,— անփույթ հարեց Վարդ-խաթունը։

— Ո՞ւր է,— տիկինը ձեռքը տարավ սրտին։

Նա չկարողացավ իսկույն նկատել ճանապարհի ոլորքներով սուրացող ձիավորին, որի ընթացքից ելած փոշին ծվատվում էր հովտով անցնող քամուց։ Բայց երբ նկատեց նրան, չոքեց պատշգամբի սալաքարերին ու, ձեռքերը երկինք մեկնելով՝ շշնջաց.

— Տե՛ր, դու ցանկալին բերես...

— Ամե՛ն,— Վարդ-խաթունը նրան բարձրացրեց։— Գնանք, հրաման տուր ամրոցի դռները բանան։

— Ի՞նչ ես գուշակում,— վեր կենալով հարցրեց տիկինը։

— Ամեն ինչ։ Մեր օրում քի՞չ լավ ու վատ բան ենք տեսել։

Գրեթե վազելով հասան քարե սանդուղքներին ու արագ իջան ամրոցի հրապարակը։ Նրանց ընդառաջ եկավ ամրոցապահ ծերունին։

— Ամրոցի դռները բաց, Բանդո՛ւր Զաքարիա, սուրհանդակ է ժամանում,— կարգադրեց տիկինը։

Ամրոցում թողած ծեր ու կիսահաշմ զինվորները հապճեպ շարվեցին հրապարակում։ Տիկինների ձիերը բերին։ Վարդ-խաթունը դեն հրեց ծառային ու, թեև թանձրամարմին էր, ճարպիկ թռավ ձիու մեջքին։ Սաթենիկին օգնեցին, որ հեծնի ձին։

Վարդ-խաթունը ձին բորբոքեց ու արշավով գնաց դեպի ամրոցի դուռը։ Ձիերի սմբակների հարվածից սալահատակը կայծ տվեց։ Սաթենիկը հազիվ էր հասնում Վարդ-խաթունին։ Թեև ինքն էլ ձի վարելուն վարժ էր, բայց սուրհանդակի երևալը շփոթեցրել էր նրան։ Նույնիսկ չէր նկատում իր կողքին, ոսկեգույն նժույգի վրա վեհվեհող որդուն՝ Ահարոնին։

Սուրհանդակն անցավ կեռ կամուրջը, կորավ ժայռերի խառնիխուռն նախիրի մեջ ու մի պահ հետո երևաց դիք ճանապարհին։ Նա անդադար մտրակում էր երիվարին, ձեռքերը թափահարում, ինչ-որ բղավում... Վերջապես բոլորը լսեցին նրա կանչը.

— Հաղթանա՛կ... Մխիթար սպարապետը ջարդուփշուր արեց պարսից խաներին։ Գալիս է...

Ամրոցը դղրդաց ուրախության աղաղակներից։ Տիկին Սաթենիկը բռնեց թամբի կեղն ու արտասվեց։

***

Բաթալի Սուլթան և Թահմազ Ղուլի Նադիր խանների բանակները ջարդելուց հետո Մխիթար սպարապետը մնաց Արաքսի կիրճում՝ Դավիթ-Բեկի հրամանին սպասելով։

Նա գազազած էր։

Թեև Արաքսի եզերին սևին էին տալիս պարսիկների հազարավոր դիակներ, բայց դա նրան չէր գոհացնում։ Ավերվել էր Հարսենյաց մեծ ավանը, թշնամին վառել էր այնտեղ եղած մետաքսի հարուստ գործատները, շերամանոցները, բամբակի բարդանները, հացը։ Մխիթարն իր բանակով տակավին դեռ ճանապարհին էր եղել, երբ խաները գիշերով խփել էին Հարսենյաց ավանին։ Ահագին ավար վերցնելով, նրանք բնակչությանը գերել էին ու ավարի հետ անցկացրել Արաքսը, ապա շարժվել դեպի Զավնդուր գավառի խորքերը։ Բայց պարսից բանակն իր պոչը հազիվ էր կտրել գետափից, երբ վրա էր հասել Մխիթարն ու սկսել ճակատամարտը...

Կոտորածը եղել էր սաստիկ։ Պարսից զորքը խուճապով հետ էր շրջվել։ Թահմազ Ղուլի Նադիր խանը ճողոպրել էր դեպի Պարսից կողմերը, իսկ Բաթալի Սուլթանը, գլուխը հազիվ փրկելով՝ անհետացել էր Բարկուշատի տափաստանում։

Թշնամու հետքն արդեն սառել էր. բայց տակավին մխում էր Հարսենյաց ավանը։ Հայ զինվորները հավաքում էին յուրայինների դիակները ու թաղում եղբայրական գերեզմաններում։

Սակայն միայն ավեր Հարսենյացը չէր ցավ պատճառում սպարապետին։ Պարսիկները գերի էին տարել նաև մեծ պատկերահան Նաղաշ Հակոբին, որ Մխիթարի մտերիմն էր ու սիրելին։ Այդ ծանր կորուստը ցնցել էր սպարապետին։

— Ճողոպրեցի՞ն մոխրակեր Նադիրն ու Բաթալի շունը, ճողոպրեցի՞ն...— գոչում էր նա՝ ինքնամոռաց։ Նրա մոտ էին Տեր-Ավետիսը, մելիք Բարխուդարը, Վարանդայի մելիք Բաղրը, Բայանդուր իշխանը, Դիզակի տեր մելիք Եգանը և էլի մի քանի զորապետներ։ Ոչ ոք չէր փորձում հանգստացնել սպարապետին։ Գիտեին, որ ապարդյուն ջանքեր պիտի լինեն։ Բայց և այնպես մելիք Բարխուդարն ասաց.

— Հարսենյացը էժան չնստեց խաներին...

— Մխիթարա՛նք չէ...— փրփրեց սպարարետը,— Հարսենյաց ավանը ես չեմ փոխի ողջ Սպահանի հետ։ Եթե ճանապարհին կուչեկուչ չանեինք, շուտ կհասնեինք։ Հա՛, հա՛, մեղքը մերն է...

Եղավ մի պահ, որ նա վճռեց անցնել Արաքսն ու հետամուտ լինելով փախստական Թահմազ Ղուլի Նադիր խանին՝ հասնել, շանսատականել նրան, փրկել գերիներին, Նաղաշ Հակոբին, ավերել Պարսից գավառները, սակայն արյունակիցներին կորցրած զինվորի վրեժխնդրությունը տեղի տվեց զորավարի արթուն դատողությանը, և չդիմեց այդ քայլին։ Չպետք է վտանգել բանակը, նոր կռիվ բորբոքել պարսիկների հետ։

Նա մտավ իր վրանը, վարագույրն իջեցրեց, որ ոչ ոք չգա հետևից։ Համհարզ Փոքր Գորգուն հրամայեց գինի տալ։ Գինով լի փարչը գլխին քաշեց, խմեց անհագուրդ։ Ապա զենքերը վրայից պոկեց ու ինքն իրեն հաշիվ տվեց կատարվածի համար։ Սիրտը եռաց հրճվանքից։ Պարսիկ խաներն այնպիսի ջարդ կերան, որ այլևս կմոռանան Հայոց աշխարհի ճանապարհը։ Աշխատեց չվերհիշել Նաղաշ Հակոբին, սարսափեց հեկեկալուց ու նորից հրամայեց գինի տալ։

Մտքերն իրար առաջ կտրելով արշավում էին նրա գլխով։ Խաներն ինքնագլո՞ւխ էին արդյոք հարձակվել Հայաստանի վրա, թե՞ շահ Թահմազի հրամանն էր դա։ Չգիտեր։

Հիշեց ճակատամարտի խառնարանը։ Մինչև կեսօր գերազանցությունը պարսիկների կողմն էր, նրանք նույնիսկ ճեղքեցին իր աջ թևը, փախուստի մատնեցին իր անձնագ Ելիկում հարյուրապետին։ Բայց Հալիձորի Երկրի ապավեն գնդի այրուձին դուրս նետվեց թաքստոցից ու պարսիկներին սեղմեց ժայռերին... Հիշեց, թե ինչպես զինվորները բերին փախստական Ելիկումին։ Գազազած էին, ցանկանում էին տեղն ու տեղը ծվատել անարի հարյուրապետին, որը զզվանք առաջացնող, խղճալի տեսք ուներ արդեն։

Մխիթարը գինու փարչը նետեց ու դուրս թռավ վրանից։ Հրամայեց զորահավաքի փող փչել։ Երբ զորքը կանգնել էր կիսաշրջան, բերին Ելիկումին։ Նրա վրայից պոկել էին հարյուրապետական զգեստները։ Նա հազիվ էր ոտքի մնում, ծնոտը չէր փակվում, փսլինքը ծորում էր ուղտի ծլոլի պես։ Կանչեցին դահճին։ Սա եկավ իր գործի հմուտ շարժուձևով։

— Թշնամու առջևից փախչողը կընկնի եղբոր սրից,— որոտաց սպարապետը զզվանքով, չնայեց կնոջ հորեղբորորդուն, ձեռքով նշան արեց դահճին։

Հարյուրապետի կտրված գլուխը կախվեց դահճի ձեռքից, ու միայն բերանը երկու անգամ բացուփակ արեց։ Դիակն ու գլուխը ծածկեցին աղբյուսի աղտեղությամբ։ Մխիթարը վերադարձավ իր վրանը։ «Հիմա ի՞նչ պատասխան պիտի տամ կնոջս,— մտածեց դժգոհ,— էլի արցունքներով զահլես կտանի»։

Գիշերը Դավիթ-Բեկից սուրհանդակ եկավ։ «Անհապաղ քաշվեցեք ձեր ամրոցները, Պարսիկներից այլևս վտանգ չկա»,— գրել էր Բեկը։

Զավնդուրի մելիք Նուբարն ու Մեղրու Կոստանդին զորապետը հրաժեշտ տվին սպարապետին և մեկնեցին իրենց գավառները, Բայանդուր իշխանը չվեց դեպի Հալիձոր, իսկ Մխիթարը, մելիքներ Բարխուդարի, Բաղրի, Դիզակի տիրոջ՝ մելիք Եգանի հետ, շտապեց դեպի Զագեձոր։ Գնում էին լեռնային արահետներով։ Ջորիների և ուղտերի վրա տանում էին ավարն ու մարտում ընկած զինվորների զգեստները։

***

Ագամամութից սկսած ղոզանջում էին շենների եկեղեցիների զանգերը։ Նեղ հովտում հավաքվել էին հաղարավոր մարդիկ։ Ելել էր նույնիսկ Սիծեռնավանքի ծերունի Ավշար երեց Տեր-Գասպար վարդապետը։ Տիկին Սաթենիկը Վարդ-խաթունի, մելիքների ու զորապետների կանանց հետ մրսում էր վանքի բակում։ Պատերի տակ խռնվել էին ճակատները կարմիր ներկած մատաղացու ոչխարներ։

Զմեռնամուտի դալուկ արևն իր գլուխը հազիվ էր հանել ժայռի երախից, երբ ճանապարհի վրա փոշու ամպ բարձրացավ, ու երևաց բազմագույն դրոշների փողփողէջ անտառը։ Հովիտը դղրդաց ռազմական շեփորների ու թմբուկների որոտից։

Հովտում նեղված ժողովուրդը ալիք տվեց, հռնչեց զորքին ընդառաջ։ Տղամարդ, կին, պատանի, հարս, աղջիկ խռնված, իրար հրելով, ընկնելով-ելնելով վազեցին դեպի ճանապարհը։ Գուսանները պարկերից հանեցին սազերը։ Հոգևորական դասն առաջ գնաց Ավշար երեց Տեր-Գասպար վարդապետին ու սկսեցին խոպոտ, մրսած ձայներով սաղմոս կարդալ։

Իսկ զորքը գալիս էր քաշաթուխպի պես ծանր։ Առջևից ծունկ-ծնկի գալիս էին Մխիթար սպարապետն ու հաղարապետ Տեր-Ավետիսը։ Հետո երևում էր մելիք Բարխուդարի բուրգ գլխարկը՝ երկու որդիների հետ, կողքին կարճահասակ, շորուցամաք մելիք Եգանը, ժպտադեմ Բաղրը։ Բոլորի գլխարկներին վառվում էր կարմիր մահուդի մի նեղ ծվեն՝ ինչպես կրակը ատրուշանում։ Դրոշակները բռնել էին բարձր, քամու դեմ։ Սպարապետի եռանկյունի, եռագույն դրոշը բոլորից բարձր էր, երբեմն երևում էին նրա վրայի պատկերները՝ հաց, գութան, թոր և առյուծի գլուխ։

Զորապետներից հետո գալիս էր զորքը՝ ավարով բեռնված ուղտեր

ու ջորիներ քշելով։ Գալիս էր դանդաղ, հոգնած, բայց հաստատուն և ուրախ։

— Եկա՜ն,— զանգված առ զանգված տատանվում էր ժողովուրդը։ Գնում էր թափվել, ասես խլանելու զորքերին։ Մեկն իր մորթե գլխակը նետեց օդ. դա օրինակ եղավ։ Օդում գլխարկների ամպ եռաց։

Բանդուր-Զաքարիան, Թուրինջը ու գավառի գյուղերի տանուտերերը ամբոխը ճեղքելով հասան սպարապետին, նրան պոկեցին ձիուց ու թրոցրին օդի մեջ։ Մյուս զորապետներին ու մելիքներին ևս թոցրին։ Ժողովուրդը խլրտում էր։

— Ապրի՜ հայոց զորքը։

Տիկին Սաթենիկը երեսն անվերջ խաչակնքում էր։ Վարդ-խաթունը օծանելիքներ բուրելով՝ գալիս էր գժված նժույգի վրա։ Նրանց շրջապատած մելիքների ու զորապետների կանայք ահուդողով էին նայում գնդերին՝ իրենց ամուսինների դրոշները որոնելով։ Այդ սևահոն, կարոտած գեղեցկուհիներից ո՞րը պետք է սգո սև հագնի այսօր, գլխին մոխիր ցանի, ծամերը կտրի, մնա այրի ու հավիտյան կպշի տան պատերին։ Տիկինների մոտ ձիերի վրա թրթռում էին պատանի Ահարոնն ու իր տարեկից Գիգանը՝ Տեր-Ավետիսի որդին։ Մայրերը սաստում էին նրանց, և նրանք հառաչանքով էին նայում զորքին. առաջ գնալ չէին կարող։ Ժողովուրդը ոռնատակ կտար։

— Հիմի իմ երեցը վառվում է իմ կարոտից,— տիկին Սաթենիկի ականջին փսփսաց Վարդ-խաթունը։

— Ամոթ է,— շշնջով նկատեց Սաթենիկը։— Տեսնես զոհերը շա՞տ են։— Նրա ձայնը դողաց։ Հայացքով որոնում էր սիրելիներին։

Հոսանքի բերանն ընկած զորավարները հասան վանքի առջև եղած բլրին։ Ժողովուրդը շրջապատեց բլուրը։ Քահանաների դասն առաջ եկավ՝ գլուխ ունենալով Ավշար երեց Տեր-Գասպարին։

— Հաղթական տոնդաթի մաղթանք սկսիր, հա՛յր սուրբ, խլացե՞լ ես,— նրա վրա գոռաց Տեր-Ավետիսը։

Վարդապետն աչքերը ճպճպացրեց, բերանը բացուխուփ արեց, բան չհասկացավ։ Տեր-Ավետիսը ձեռքը թափ տվեց, կրծքից պոկեց լանջախաչն ու նրանով կնքելով ժողովրդին՝ սկսեց մաղթանքը։ Դա էր միակ միջոցը՝ ժողովրդին հանգստացնելու։ Ժողովուրդը շոքեց աղոթքի։ Հայր սուրբը ուշքի եկավ ու կոնչաց խոպոտ ձայնով.

— Բարի վերադա՜րձ զորքին ու զորապետներին հայոց...

Մաղթանքից հետո, իրար հրմշտելով, երկյուղով առաջացան գյուղերի տանուտերերը՝ ձեռքներին զինով լի գավեր։ Մխիթարը գինու հա-

մից դեմքը կնճռեց։ Ապա բարձրացավ բլրի գագաթն, ու նրա ձայնը սփռվեց հովտով մեկ։

— Մեր թուրն այս անգամ էլ զորավոր գտնվեց մեր թշնամու գըլխին, եղբայրնե՛ր...— նրա ձայնը խլացավ ժողովրդի աղաղակից։

— Աստվա՛ծ օգնական...

— Օգ-նա՛-կա՛ն... Բազուկդ անհաղթ, Մխիթա՛ր...

— Այլևս ոչ մի պարսիկ չի համարձակվի ոտք դնել հայոց հողին,— կոկորդ էր պատռում Մխիթարը։

— Փա՛ռք, փա՛ռք...

Ժողովուրդն աչքերով լափում էր իր երիտասարդ զորավարին, որ ասես սյուն էր՝ բլրին տնկված։ Հոր թիկունքում կանգնած Թովման բերանբաց նայում էր սպարապետին ու քիչ էր մնում վազեր, ընկներ նրա ոտքերը։ Չէ՞ որ ինքն էլ է իր գյուղացիների հետ հիմա զինվոր։ Բայց ափսոս, որ չի մասնակցել Արաքսի ճակատամարտին։

Ավշար երեց Տեր-Գասպարը ձեռքերը տարածեց։

— Տե՛ր մեր, լուսավորիր նահատակների հոգիները, որ ընկան Արաքսի ափին՝ մեր սուրբ հողի ու քո սուրբ հավատի համար։ Ճանապարհ բարի, Քրիստո՛ս... Առաջնորդիր հոգվոց նահատակաց երկրե ի երկինս...

Աղմուկը միանգամից կտրվեց։ Լսվում էր միայն եկեղեցիների զանգերի ղողանջը երկարածոր, խորհրդավոր։ Դրոշակները խոնարհեցրին։ Բոլորն սպասեցին, թե ո՞վ պիտի հայտնի զոհվածների անունները։ Մխիթարը նայում էր ուղիղ իր դիմացը։ Ծերունիների խմբի մոտ կանայք էին՝ արխալուղների օձիքներին ու թևերին արծաթե սուրմաներ, ճակատներին հին դրամներ։ Նրանց առջև կանգնած էր մի պնդակազմ, բարձրահասակ կին՝ խստահայաց ու անհանգիստ։ Նրա ուշք ու միտքը զորքի կողմն էր։ Վշտով, տագնապով ու շարացած նայում, որոնում էր մեկին։ Մխիթարը սարսուռ զգաց նրա տեսքից։ «Աստված չանի, որ այդ կնոջ զինվորը սպանված լինի»,— մտածեց նա։

Տեր-Ավետիսը առաջ մղեց ատենադպիր Մաղաքիային։ Սա մի ոլորուն թուղթ բաց արեց ու կոկորդը մաքրելով՝ կարդաց.

— Շինուհայր գեղջեն զոհվել է Մելքոնի որդի Ասատուրը...

— Հոգին լո՛ւյս,— հառաչեցին առաջին շարքերում։ Հետևի կողմից հրահրեցին միմյանց, բարձրացան առաջները կանգնածների մեջքերը, պապանձվեցին՝ լսելու զարհուրելին։

— Խոնածախից՝ ջրաղացպան Առաքելը... Գորիսից՝ այրի Զարմանդի որդին...— Ատենադպիր Մաղաքիայի ձայնը խլացավ կանացի ճչոցից։ Մխիթարը տեսավ, թե ինչպես վայր ընկավ այն բարձրահասակ

կինը, որ կանգնած էր կանանց առջև։ Կանայք բարձրացրին նրան, տրորեցին քունքերը, որ ուշքի գա։ Փոքր Գորգին արմունկներով հրահրեց մարդկանց, մոտեցավ այդ կնոջը.

— Քաջաբար ընկավ Գեղամը, մա՛յր...— գոչեց նա։

Զարմանդը փաթաթվեց Փոքր Գորգուն, ապա իսկույն նրան դեն հրեց ու երեսը ծվատեց։ Արյունը գնդիկ-գնդիկ ծորաց նրա դեմքից։ Բայց Զարմանդը կանգնեց հաստատուն, վշտից արձանացած։ Ատենադպիր Մաղաքիան էլի անուններ կարդաց։ Մխիթարը տեսավ, թե ինչպես ծերունիներից մեկն օրորվեց, կողքին կանգնածը ցանկացավ բռնել նրան, բայց նա ձեռքը խլեց։

— Կդիմանա՛մ...— գոչեց նա,— էլի մատաղ տվինք հայոց հողին։

— Հոգին արքայությո՛ւն,— ամեն անուն լսելուց՝ մաղթում էին այս ու այն կողմից։ Փոքր Գորգին մխիթարանքի խոսքեր չէր գտնում մորն ասելու։

Մխիթարը լացը զսպեց ճիգով։ Որդեկորույս ծերունու ասածները ուժ տվին։ Զարմանդը լաց չէր լինում այլևս, կանգնել էր լեռնալանջի հազարամյա խաչքարի պես։

Հայր սուրբը մեռելոց կատարեց։ Հեծկլտոցները կտրվեցին, և ծանր լռություն իջավ հովտում։ Զարմանդը պոկվեց տեղից, եկավ կանգնեց Մխիթարի առաջ՝ ցասկոտ, շարացած, բայց վեհ։

— Տեր մեր Մխիթա՛ր,— խոսեց սրտակեղեք,— ես այրի եմ։ Երկու զավակ ունեի քո զորքում՝ Փոքր Գորգին ու Գեղամը... Գեղամս ընկավ... Տո՛ւր իմ լացատեղը, տո՛ւր...

— Մերն էլ,— գոռացին շատերը։

Մխիթարը փշաքաղվեց, բռնեց այրի Զարմանդի ձեռքը, որ Մխիթարի, բայց սա ետ խլեց։ Փոքր Գորգին եղբոր արյունոտ շորերը մեկնեց մորը։ Ապա սառավ, մնաց։ Մայրը որդու զգեստները սեղմեց կրծքին ու շուռ եկավ դեպի ամբոխը։

— Լաց լինենք, հը՞...— ծղրտաց լցված։— Չէ՞, հերիք է լացը... Հերի՞ք է։ Լացող աշխարհին խղճացող չկա... Մեկս գնաց, մյուսս քեզ հետ է, Մխիթա՛ր... Հիմա ընկածի գինը տուր, գի՛նը... Արյան գինը...

— Գի՛նը,— կրկնեց ժողովուրդը։

Տեր-Ավետիսի նշանով առաջ եկան մի խումբ զինվորներ՝ ձեռքներին պարսկական դրոշներ։ Սրանց վրա ասեղնագործած էին ամեհի առյուծներ՝ արևները մեջքներին, թաթերին՝ թրեր։ Դրոշակները նետեցին Զարմանդի ոտքերի տակ։ Զարմանդը նայեց շաղափող մետաքսին ու ոտը դրեց առյուծներին։

— Քի՛չ է,— ծղրտաց նա։

Զինվորները քարշ տվին կաշվե երկու մեծ պարկ ու նրանց պարունակությունը թափեցին Զարմանդի ոտքերի տակ։ Ժողովուրդը հանկարծ պապանձվեց, ու հառաչանքի պես մի բան թռավ նրա գանգվածից։ Մոտ կանգնած ծերունիներից մի քանիսը զարհուրած հետ-հետ գնացին։ Զարմանդի ոտքերի տակ շաղ եկան կտրած գլուխներ՝ թաղքած մազերով, չոր արյունով, այլանդակ։ Դրանք երկու պարսից բեկերի ու մի քանի տասնյակ յուզբաշիների[1] գլուխներ էին, որ հայերը կտրել էին Արաքսի ճակատամարտում։ Զարմանդը մի վայրկյան սոսկումով նայեց կտրված գլուխներին, ապա ոտքերը գոփեց չարացած.

— Թշնամի՛ չգայիք մեր տան վրա...— նրա ծգրտոցը թռավ մարդկանց գլխի վրայով։— Ինչո՞ւ եկաք։ Մենք թշնամի չենք գնում ուրիշի տան վրա...

Նա շուտ եկավ ու գնաց դեպի խրար կպած կանայք։ Տիկին Սաթենիկը արտասվում էր։ Նրան ցնցել էին Զարմանդի ճիչը, նրա որդու արյունոտ զգեստները, կտրված գլուխները։

— Սանր է այս ամենը,— հառաչեց նա,— գոնե շուտ վերջանար։

Ահարոնը ձիուց իջավ ու, լսելով մորը, մարդկանց խիտ շարքերը ճեղքելով՝ գնաց դեպի հայրը։ Մի քանի քայլ էր մնացել, որ հասնի նրան, երբ հանդիպեց հոր ասասող հայացքին։ «Չհամարձակվես մոտենալ»,— հրամայում էր հայրը աչք-ունքով։ Ահարոնը մեխվեց տեղը, գլուխը կախեց, վերավորվեց մինչև սրտի խորքը։ Ինքն այնպե՞ս է կարոտել հորը, իսկ նա՞... Փշրված սրտով հետ դարձավ։

Հանդեսը վերջացավ։ Ժողովուրդը ցրվեց։ Տիկինները վախվխելով մոտեցան ամուսիններին։ Սպարապետը հայացքը փախցրեց կնոջից։ Սաթենիկ տիկնոջ սիրտն ասես դանակ խրեցին, բայց ցավը տարավ լուռ ու մի կերպ ասաց.

— Մարդկանց հրավիրիր կերուխումի, Մխիթա՛ր։

Սպարապետը մելիքներին ու զորապետներին հրավիրեց ամրոց՝ իր տանը խրախճանքի։ Հեծավ ձին, սպասեց, որ կինը մոտենա։ Կողք-կողքի քշեցին մինչև գետը։ Կամուրջն անցան արագ ու, երբ մի փոքր առաջ ընկան մյուսներից, հարցրեց.

— Ինչպե՞ս ես, տիկի՛ն։

— Ապրո՛ւմ ենք...

— Ահարոնին տեսա, երես ես տվել, խուժում էր մուրացկանի պես։ Ոչ կարգ գիտի, ոչ հարգանք...

— Մխիթա՛ր...

[1] Հարյուրապետ (Թուրքերեն)։

Բայց տիկնոջ խոսքը մնաց բերանում։ Ամուսինն այնպես շուտ եկավ թամբին ու այնպես նայեց նրան, որ ամենաարի սիրտն անգամ ահ կընկներ։ Արցունքներն իրենք իրենց հոսեցին տիկնոջ աչքերից։ Սպարապետը չարությամբ շպրտեց.

— Իմ տան շեմքն է՞լ արցունքի միջով պիտի անցնեմ։ Առանց այն էլ վիշտս անչափելի է։ Նաղաշ Հակոբը... Քո Եղիկումը...

— Ի՞նչ,— Սաթենիկի արցունքները չորացան։— Նրանք է՞լ...

— Երանի՜ թե։ Նաղաշ Հակոբը գերի է, իսկ Եղիկումիդ գլխատել տվի ինքս...

Սաթենիկը բռունցքները սեղմեց աչքերին։ Կճչար, եթե ամուսինը քրտնած ձեռքով չբռներ նրա բերանը։

— Անարի եղավ, խայտառակեց տոհմդ,— զուսպ կատաղությամբ շպրտեց Մխիթարը։— Ստիպված էի։ Լացդ չլսեմ։ Դավաճանի վրա լաց լինողը ընկերակից է նրան։

Սաթենիկը հազիվ էր իրեն պահում ձիու թամբին։ Անկարող էր դիմանալ ծանր հարվածին։ Հասան Ջաղալյան տոհմի անունն արատավորվեց, որ մաքուր էր՝ Բագրատունիների ժամանակից ակսած։

Մտան ամրոց։ Մխիթարը իջավ ձիուց և ասաց, որ իջնի նաև ուժասպառ կինը։

* * *

Ամրոցի ընդարձակ սրահում խնջույք տվին հաղթանակի պատվին։ Սանր վիշտը խեղդելով, տիկին Սաթենիկը հյուրերին հրավիրեց սեղանների մոտ։ Նստոտեցին ավագության կարգով՝ սպարապետը, նրա մի կողքին Տեր-Ավետիսը, մյուսին՝ մելիք Բաբխուդարը, ապա մելիք Բաղրը, Եգանը։ Մնացած մելիքները, զորապետներն ու հարյուրապետները նստեցին խառը, միջընդմեջ։ Խնձորեսկցի միականի թափառական գուսան Հեթումն ուրիշ երկու գուսանի հետ տեղավորվեց դռներին մոտիկ որմնախորշում։ Կանթեղներին յուղ ավելացրին։ Սպարապետի խնդրանքով Ավշար երեց Տեր-Գասպարը սեղանն օրհնեց.

— «Ճաշակեսցուք խաղաղությամբ զոր պատրաստյալ է ի տեառնե և օրհնյալ եղիցի անունն նորա»։ Ամե՛ն...— Ապա գավաթը մոտեցրեց շրթունքներին ու խմեց։

Խմեցին մյուսները ևս։ Մի կես ժամ հետո շատերն արդեն գինով էին։ Զորապետներն անվերջ բարձրացնում էին գավաթները և գոչում.

— Քո արևշատությա՛ն, տե՛ր սպարապետ...

Մելիք Բարխուդարն ուրախ էր։ Առաջին անգամ սպարապետն իրեն նստեցրել էլ հենց իր կողքին, սիրալիր էր հետը։ Մխիթարը դինի էր լցնում նրա գավաթը, պատառներ դեմ անում քթին։

— Է՛, է՛հ,— գլուխը թափահարում էր Տեր-Ավետիսը,— մարդ տաշտով պիտի գինի խմի, տաշտո՜վ, թե չէ գավաթն ի՞նչ է...

— Տաշտով գինի տվեք հազարապետին,— գոչեց Մխիթարը։

Տեր-Ավետիսը մատռվակի ձեռքից վերցրեց գինու կուլան ու քաշեց գլխին։ Վարդապետը չոված աչքերով նայեց նրան։ Տեր-Ավետիսը դա նկատեց, դատարկ կուլան հետ քաշեց, մսի մի մեծ պատառ գցեց բերանը ու մի լիքը կուլա էլ վերցնելով՝ մեկնեց վարդապետին։

— Խմիր, հա՛յր սուրբ, գինին ծերոց գավազան է։ Խմիր հայոց զորքի արևշատության։ Խմի՛ր, թե չէ մորուքդ գինու մեջ մի շաբաթ թրջոց կդնեմ։

Մելիքները հռհռացին։ Տեր-Գասպարն սկսեց պաշտպանվել Ավետիսից, բայց սա բռնեց նրա ձեռքերը, իսկ մելիք Բաղրը գինի լցրեց վարդապետի բերանը։ Ծերունին խեղդվելով խմեց։ Միահամուռ քրքջացին։ Տեր-Ավետիսը գոռաց գուսանների վրա, հրամայեց «Գժապար» նվագել։ Թռավ տեղից, բեղերը ոլորեց, գոտին պրկեց, ձեռքը գցեց մելիք Բարխուդարի ուսին ու քարշ տալով՝ տարավ պարի։

Հարբած վարդապետը քրքջում էր զորապետների խելագար պարի վրա։ Շուտով նա վայր ընկավ։ Նրան դուրս տարան։

Գինին հուրհրատում էր Մխիթարի գավաթում։ Գինի՞ է, թե արյուն։ Ա՜խ, ինչպե՜ս ձեռքից թոցրեց պարսիկ խաներին։ Կատաղեց ինքն իր դեմ, ամիթ էր նրանց շանսատակ անելու։ Ախր ո՞ւմ վրա էին հույսները դրել այդ խաները, որ խուժել էին Հայաստան։ Շահ Թահմազի՞... Հազիվ տասը հազար բաշիբոզուկ ունի Թահմազը։ Հոր գահը խլել են ավազանները, հարեմի բոլոր կանանց բռնաբարել, գանձերը հափշտակել։ Հրե՜ն, Թահմազի հայրը Սպահանում Միր Մահմուդ ավազանի կոշիկներն է մաքրում։ Ինքը՝ Թահմազը մի կերպ փախցրել է գլուխը, ճողոպրել Թավրիզ։ Ռուսները տիրություն են անում Բաքվում, Ռեշտում, Գիլանում։ Պարսից տերության ողնաշարը փշրվել է... Իսկ խաները հասցրին ավերել Հարսենյաց շեն ավանը, Նաղաշ Հակոբին ետիր տարան...

— Հանգարտվիր, Մխիթա՛ր,— ականջին փսփսաց մեկը։ Շուտ եկավ, կինն էր՝ վեհ, վշտով։

— Անկարգ բա՞ն արի,— հարցրեց Մխիթարը դժգոհ։

— Լսելի էիր խորհում, պահը չէ,— վախաշշուկ զգուշացրեց կինը։— Ցամաք աչքով նայիր մարդկանց։

Մխիթարը հափշտակված նայեց կնոջը։ Արքայական վեհություն ուներ կինը։ Նա մղվեց համբուրել նրան, բայց միայն ամուր սեղմեց ճերմակ, փոքրիկ ձեռքը։ Սաթենիկը ձեռքը խլեց։ Մխիթարը գավաթը դատարկեց։

«Իմ ցողը թե քեզնից կտրեմ,
Քո ծաղկունքն ինչո՞վ դալարի»։

Երգում էր գուսան Հեթումը։ Ինչո՞ւ է երգում։ Այնտեղ ավեր է Հարսենյացը... Նաղա՜շը... Հա՜ Նաղաշին, կփրկեմ մեր մտքի ճրագին։ Կփրկե՜մ... Մխիթարը ձեռքը տարավ դեպի մազերը, բայց Սաթենիկը կասեցրեց նրա շարժումը։ «Ուշքի եկ,— շշնջաց քնքուշ,— զորավար ես»։ Մխիթարը ոտքի ելավ։

— Է՜յ, գավաթնե՜րը...— խոր շունչ քաշեց, կուրծքն ուռցրեց։— Խմենք հաղթության կենացը։ Հա՜, հա՜։ Այլևս ոչ մի պարսիկ չի համարձակվի մոտենալ մեր տանը։ Հա՜, խմենք հաղթության, Դավիթ-Բեկի արևշատության, զորքի ու ձեր արևշատության, եղբայրնե՜ր, սիրելինե՜րս...

Գավաթները պարպեցին։ Մելիքներն ու զորապետները սկսեցին համբուրվել, երգել, ոգևորությունից խմել չափից ավելի։

— Մենք Նախիջևանից էլ կխուզենք պարսիկի պոչը,— բղավում էր մելիք Եգանը։— Երևանից էլ, Շիրակից էլ։ Հա՜, հա՜... Ա՜րևս վկա։

— Շուտով ռուսաց Պետրոս թագավորի դաշինքը կունենանք,— գոչում էր մելիք Բարխուդարը։— Պրծա՜նք, պրծա՜նք պարսիկից։ Խմե՜լ եմ ուզում, տե՜ր սպարապետ, պարել եմ ուզում, թող երգեն...

Մխիթարի գլուխն արդեն մշուշվում էր։ Այս ո՞վ է գինու բոցերի միջից ժպտում իրեն։ Հա՜... Նա է, դա նրա մանրիկ ժպիտն է, նրա աչքերն են՝ սև, շողարձակ։ Դա նրա կարմիր կոկոն բերանն է... Ա՜խ, սատանա՜ն տանի, մոռանալ չի՛ լինում։ Իսկ ինչպե՜ս կուզենար մոռանալ... Մոռանա՞ր, թե՞ հիմա, հենց հիմա նրա հետ լիներ, ընկներ նրա գիրկը, համբուրեր նրա կաթնաճերմակ պարանոցը։

Իսկ գուսանները երգում էին.

«Լուսնի նման պայծառ երես բոլորած,
Նս մնացի կարոտ՝ համբույրիդ համար...»։

— Կարո՜տ, կարո՜տ...— ձեռքը սեղանին զարկեց Մխիթարը։ Արծաթե պնակները զնգացին։ Մի կուլա ընկավ փորի վրա ու կլկլաց՝ բերանից գինի ժայթքելով։ Գուսանները վախեցան, բայց կիսատ երգը նորից սփռվեց դահլիճում։ Տիկին Սաթենիկը հոգոց հանեց։ Մխիթարը մի ձեռք

զգաց ուսին։ Գլուխը բարձրացրեց. Ահարոնն էր։ Ջահի լույսի տակ նա երկար տնտղեց որդուն, որքա՜ն էր մտերիմ նաղաշին։ Թռավ, գրկեց Ահարոնին, ասես մի մեծ վտանգ էր սպառնում նրան։

— Դո՜ւ...— խեղդված ձայնով հևաց նա...— Դո՜ւ, որդի՜ս, ի՜մը, ի՜մը... Չէ՛, դու չես տեսնի այն ճանապարհը, ինչ շատերին վիճակվեց։ Չե՛մ թողնի, չէ՛, Ահարո՜նս...

Լուսացավ, գլուխները թրջեցին սառը ջրով, պուլիկներով ուրցահանեմ թան խմեցին՝ գինովությունից ազատվելու համար։ Մխիթարը հյուրերին տարավ մի ուրիշ սրահ։ Ուռած աչքերով, հոգնած, մշուշված գլուխներով մելիքներն ու զորապետները սթափվեցին զարմանքից։

Այդ սրահը կահավորված էր հարստության գինն իմացողի ձեռքով։ Մելիք Բարխուդարին թվաց, թե ինքն ընկել է արքայական պալատ։ Մխիթարը գրկեց նրա ուսը, նստեցրեց գորգերով ու նստաբարձերով ծածկված թախտին։ Մյուսներին չհրավիրեց նստել, դրանից Բարխուդարը փքվեց, հպարտ նայեց որդիներին։ Իր դիմացը նկատեց իրեն։ Ահից ու զարմանքից քիչ մնաց ցատկեր... Հազիվ հասկացավ, որ իրեն տեսնում է վիթխարի հայելու մեջ։ Նախանձի օձը խլրտաց սրտում։ Դիմացը վենետիկյան հայելի էր, իսկ իր տանը մի հին, մշուշված զահրումար ուներ միայն, որի մեջ նայելուց մարդ զզվում էր ինքն իրենից։

Բանդուր-Զաքարիան ծառաների շալակները տված բերեց պարսիկներից խլած հրազենն ու դրեց Մխիթարի ոտքերի տակ։ Բոլորը շունչները պահեցին։

— Դահ եմ քեզանից, եղբա՜ր իմ մելիք Բարխուդար, գոհ եմ որդիներիցդ՝ Պակի զորապետից, Միհրան հարյուրապետից։ Քո գունդը քաջաբար կռվեց Արաքսի կիրճում։ Ստացիր, ուրեմն, տասը ատրճանակ ու հարյուր հրացան։ Դրսում քեզ են սպասում նաև ինը նժույգ՝ իրենց թամք ու սարքով. արաբականի ու արցախականի խառնուրդ են։ Բարի՜ վայելում։

— Շե՜ն մնաս, տե՜ր սպարապետ,— այդքան առատ նվերներից շփոթվեց մելիքը, նրա հպարտությանը չափ չկար։ Չէ՞ որ սպարապետն առաջին նվերն իրեն է հանձնում։ Բայց դա դեռ բոլորը չէր։ Մխիթարը մի փունջ մարգարիտներ թափեց մելիքի բուռը։

— Այս էլ իմ տիկնոջից նվեր՝ քո դուստր Գոհարին,— ասաց՝ հազիվ կարողանալով զսպել ձայնի դողը։ Նվիրում էր ինքը։ Տիկինն անուեղյակ էր։ Բայց հասավ նպատակին։ Ագահ մելիք Բարխուդարի աչքերն այնպես շլացան, որ ասես հիմա կկուրանան թանկագին քարերի փայլից։ Նա նույնիսկ չկարողացավ ձայն հանել։ Ձեռքերը դողացին և, որպեսզի գանձը չթափի, արագ լցրեց գրպանը։

Մխիթարը բոլորին նվերներ հանձնեց։ Բայց ոչ ոք այնքան չստացավ, որքան Բարխուդարը, թեև բոլորն էլ քաջաբար էին կռվել Արաքսի ափին։ Միայն Տեր-Ավետիսին էր հայտնի, թե որն է Մխիթարի այդքան առատաձեռնության նպատակը՝ դեպի ատելի Բարխուդարը։

Երբ արդեն նվերները բաժանել էր, Մխիթարը կանչեց տանուտեր Թուրինջին ու Թովմա տասնապետին։ Սրանք եկան անհամարձակ, վարանոտ։ Մելիք Բարխուդարը ճանաչեց Թուրինջին, ու արյունը խաղաց քունքերում։

— Ահա մի նոր մելիք ևս,— բարձրաձայն ասաց Մխիթարը,— մելիք Թուրինջը Պղնձաքարի տերն է, իսկ նրա որդին՝ Թովմա տասնապետը, Պղնձաքարի զորական ջոկատի զորապետը։ Սիրեցեք և հարգեցեք միմյանց։

Մելիք Բարխուդարը կապտեց, կամեցավ սրամերկ ծառս լինել իր թշնամու, փախստական ռամիկ Թուրինջի դեմ, բայց որդիները ժամանակին հասկացրին նրան, որ սսկվի։ Այնուամենայնիվ, նա հարցրեց.

— Հայտնի՞ է Դավիթ-Բեկին, տե՜ր սպարապետ, որ մի նոր մելիք էլ է ավելանում մեր աշխարհում։

— Հայտնի է. Բեկն իր սեփական կնիքով է վավերացրել հրովարտակը, ահա նա։— Մխիթարը հրովարտակի թուղթը մեկնեց Թուրինջին։— Վայելի՜ր, տեր Թուրինջ։ Շնորհավո՜ր։

— Մելիքներին շահերն էին հրովարտակ տալիս,— դուրս թռավ մելիք Բարխուդարի բերանից։

— Թող իմ եղբայր մելիք Բարխուդարը չմոռանա, որ մեր երկիրն այժմ իր տերն ունի և ոչ մի շահ չի ճանաչում,— սասանող ձայնով ասաց Մխիթարը։— Լսո՞ւմ եք, մելիքնե՛ր ու զորապետներ։ Պղնձաքարում նոր մելիքություն է հաստատվում. նրա մելիքը Թուրինջն է։ Հավա՞ն եք։

Ո՞վ կհամարձակվեր առարկել։ Գլխից ո՞վ էր ձեռք քաշել։ Առաջինը Բարխուդարի որդիները գոռացին. «Հավա՜ն ենք»,— և մոտեցան ու շնորհավորեցին իրենց երբեմնի հպատակին։

— Համբուրվեցե՛ք հետը,— պահանջեց սպարապետը։

Մելիք Բարխուդարն ավելի շուտ հավատափոխ կդառնար, քան կաներ այդ ստորացուցիչ բանը։ Բայց դաժան էր սպարապետի հայացքը։ Օ՜... այդ հայացքից մարդ քիչ է մնում ոչնչանա։ Անճար էր. գրկախառնվեց նորընծա մելիք Թուրինջի հետ։ Բայց ի՞նքը մոտեցավ նրան, թե՞ Միհրան որդին նրան հրեց դեպի քրտնած, շփոթված Թուրինջը։ Չիմացավ։

Շուտով, կարծես եղած անախորժությունը մոռացած, սպարապետը դուրս եկավ մելիք Բարխուդարին ճանապարհելու։

Զորապետները համբուրվեցին և ուղևորվեցին դեպի իրենց գավառները։

***

Ուշ էր արդեն։ Սաթենիկ տիկինը փակվեց իր գրատուն-սենյակում և աղախնին հրամայեց ոչ ոքի թույլ չտալ ներս։

— Եթե Մխիթարը հարցնի, ասա՝ տկար է։— Պատվիրեց նա։

Բայց Մխիթարը չհարցրեց նրան։ Հարբած գինուց, վշտից, նա հաղիվ իրեն գցեց իր սենյակը և առանց հանվելու մեկնվելով թախտին՝ իսկույն քնեց...

Այնինչ Սաթենիկ տիկինը ծնոտով հենվել էր իր թերատ պատմության մատյանին ու հեկեկում էր կիսաձայն։

Ծանր էր նրա համար հորեղբորորդու անարգ մահը և Նաղաշ Հակոբի գերությունը։ Երկուսին էլ նա սիրել էր հավասար։ Ելիկումի հետանց էր կացրել որբի իր մանկությունը, իսկ Նաղաշը եղակի պատկերահան էր, նաև բանաստեղծ հոր՝ Նաղաշ Հովնաթանի շնորհներով պերճացած։ Այժմ մի օրում նա կորցրեց երկուսին։ Մեկը գնաց՝ աղտոտելով իր հազարամյա տոհմի մաքուր անունը, մյուսը՝ ո՞վ գիտե, մինչև ո՞ր բարշ տալու գերության շղթաները...

Բայց մի՞թե միայն դրանց է կորցրել տիկինը։ Կորա՞ծ չէ, արդյոք, իր համար իր օրինական ամուսինը. նրա հազվադեպ շոյանքի մեջ պարտք կատարել է տեսնում միայն։ Իր ամուսինն է, բայց իրեն չի պատկանում...

Կամենում էր այդ ամենը գրի առնել իր պատմության մեջ. ամբողջ ձայնով գոռալ անողոք ճակատագրի դեմ, ամուսնուն ուղղած պարսավանքի այրող խոսքեր թողնել պատմության համար, բայց ձեռքը չէր գնում։

Հեկեկոցը կտրելով՝ տիկինն սկսեց թերթել, մեջընդմեջ ընթերցել իր շարադրածը։ Ընդամենը երեք տարվա դեպքերի պատմություն էր դա, որ կատարվեց Արևելյան Հայաստանում, որին ականատես ու մասնակից էր ինքը ևս։

Օր-օրի գրված էջերը մի ստվար մատյան էին դարձել։ Դրանց միջից հառնում էին արյունոտ ու հուսաշող դեպքեր, սիրելիների ու մտերիմների պատկերներ։

Ահա առաջին էջերը։

...Դավիթ-Բեկն իր սակավաթիվ հավատարիմներով ապստամբության դրոշ բարձրացրեց պարսից տիրապետության դեմ։ Դա 1722 թվականի գարնանն էր։ Հայոց նորաստեղծ բանակի մի բուռ քաջեր Սիսականի Ծռաբլուր սարահարթում առաջին անգամ բախվեցին պարսից զորքերի հետ ու, ջախջախելով նրանց՝ դուրս մղեցին Սյունիքի սահմաններից։

Առաջին խոշոր հաղթությունից հետո Դավիթ-Բեկն իջավ Շինուհայր բերդը. մեծ ջանքերի շնորհիվ կարողացավ իր բանակին միացնել շրջակա հայ մելիքների զորաջոկատները։ Ապա նրան միացավ Արցախի հայ զինվորությունը՝ անվեհեր Հովհաննես-Ավան իշխանի հրամանատարությամբ, և Դավիթ-Բեկին հաջողվեց Տաթևից ու Որոտնա բերդից դուրս քշել պարսից զորքերն ու Տաթևի դավաճան մելիք Դավթի ուժերը։

Այդ օրերին արդեն Բեկի անունը թնդում էր ամբողջ լեռնաշխարհում, և նրա դրոշի տակ համախմբվել էին մեկ տասնյակ հազար հայեր։ Ապստամբության առաջին տարում Դավիթ-Բեկը Կապան գավառում կառուցեց Հալիձորի բերդը և, հազարավոր ընտանիքներ տեղավորելով այնտեղ՝ ամրացրեց, դարձրեց իր իշխանության մայրաքաղաքը։

Տիկինը թերթում էր մատյանը և մեկ առ մեկ ասես տեսնում այն բոլոր գործերը, որ կատարեց հայ ժողովուրդը, որին իր սպարապետ ամուսնու հետ մասնակցում էր նաև ինքը։

Ահա հայոց զորքը պարսից խաներից ազատագրում է Զանգեզուրը, Դիզակը, Քաշաթաղը, ահա առնում են Կապանը, Շոշը, Մեղրին, Թշնամուց մաքրում արևերես Գողթանը, երկարատև ճակատամարտերից հետո գրավում Զևու բերդը։

Ինչպիսի՜ ոգևորություն, քաջության ինչպիսի՜ օրինակներ էր տալիս ժողովուրդը։ Եվ կին պատմիչին տկար էին թվում իր այն խոսքերը, որոնցով նա պատմել էր ժողովրդական միակամ ու միասիրտ ապստամբական կռիվները, սակավներն այն փառահեղ գործերից, որ կատարեցին հանուն հայրենիքի ազատագրման։

Ահա առաջին համաժողովը, ուր հայ զորապետներն ու մելիքները պատասխան նամակ գրեցին վրաց Վախթանգ վեցերորդ թագավորին՝ պարսից դեմ դաշն կռելու համար։ Ահա Վախթանգի սրտահաճ նամակը, որ ինքը լիովին բերել է իր պատմության մեջ։

Ահա և իր որդու՝ փոքրիկ Դավթի ծնունդը։ Դա մի տարի առաջ էր. այն օրը, երբ հայոց զորքերը Հայաստանից Մուղանի անկենդան տափաստանը քշեցին պարսից Բաթալի-Սուլթան խանին ու դուրս եկան Հայոց աշխարհի արևելյան սահմանը։ Այդտեղ ծնվեց Դավիթը։ Մխիթարը բարձրացնելով ճչացող մանկանը՝ պարզեց Դավիթ-Բեկին ու ասաց.

«Այսօր դու ավարտեցիր Հայոց նորաստեղծ իշխանության վերականգնումը մեր լեռնաշխարհում։ Դու հայոց երկնակամարի պայծառ աստղն ես, տե՛ր Դավիթ-Բեկ. և իմ այս նորածին որդին թող կրի քո սիրելի անունը...»։

Այդ օրը ցնծություն էր Սյունիքում ու Արցախում. տապալվել էր պարսից բռնադատող բազուկը։ Հայոց աշխարհի մի փոքր մասում վերականգնվել էր հայկազյան իշխանությունը, և երկիրն ուներ իր հայրենական տերը։

Այդ օրն ստեղծվեց նորոգ իշխանության գերագույն մարմինը՝ Հայոց ժողովը։ Ընտրվեց ավագանի՝ գահերեց զորավար Դավիթ-Բեկին գլուխ դնելով։

Ինչպիսի՜ ուրախությամբ էր այդ օրերին լցված իր՝ Սաթենիկ տիկնոջ սիրտը։ Մի նոր դարագլուխ էր բացվում հայ ժողովրդի համար։

Բայց այդ ուրախությունը երկար չմնաց Սաթենիկ տիկնոջ հետ։ Բոլորովին պատահաբար իմացավ, որ իր ամուսինը, որին ինքը սիրում էր իր հոգու ամբողջ զորությամբ, իրեն չի պատկանում։ Իմացավ, որ Մխիթարն անդառնալի սիրով շղթայված է Խնձորեսկի մելիք Բարխուդարի դուստր Գոհարին։

Փշրվեց մի շքեղ աստղ, կործանվեց մի երկնային պալատ։

Մնացին որդիները, մատյանը և այն սև բախտը, որ վիճակվել էր նրան...

Սաթենիկը մատյանը փակեց. ծառս եղավ, կամեցավ վազել ամուսնու սենյակն ու գոռալ. «Ինչո՞ւ փշրեցիր սիրտս, հոգեսպան...»։ Բայց ոտքերը չշարժվեցին։ «Ո՞ւմ վրա եմ գնում, հայոց զորքերի աննկուն սպարապետի՞։ Ո՛չ։ Երբե՞ք։ Թող նա ապրի՛, լինի՝ Հայոց աշխարհի համար, թող ապրի բոլորի համար՝ իմը չլինելով հանդերձ»։

Նա նորից հեկեկաց։ Երկար մնաց այդպես, ապա բաց արեց կիսատ էջը և գրեց իր մարգարտաշար ձեռագրով.

«Եվ ես՝ հորինողս վեպիս մեղուցյալ Սաթենիկս, այսօր կրկին ցնծության մեջ տեսա հայաբուն աշխարհը մեր։ Նրա վրա նորից սավառնում էր մեր արծիվն ազատության, որ շղթայված էր դարեր...

Եվ աղոթաձայն կապում եմ իմ պատմության առաջին խուրձը մինչև այստեղ։ Աստվածաբաշխ խաղաղ օրեր բաժին ընկան մեզ։ Եվ իմ կենաց կցորդ Մխիթար սպարապետը հայոց, հրամանիվ մեծն Դավիթ-Բեկի, պատերազմում վանեց, ջնջեց, ջարդեց հափշտակիչ խաներին պարսից Թահմազ Ղուլի Նադիր և Բաթալի Սուլթան հորջորջյալ և վտանգը իսպառ վերացրեց մեր աշխարհի սահմաններից։

Գրում եմ մատյանս՝ աչքիս լույսը թափելով մեր եռամեծար պատմիչների մարգարտաշար հորինվածքների վրա՝ լուսապսակ օրինակ ունենալու համար։ Ոչ ոտք առ ոտք, կամ քայլ առ քայլ գնալով եմ շրջում պատմագիրների ծաղկավետ դաշտում, այլ ոստոստմամբ թռչում եմ ասպարեզից-ասպարեզ՝ անհուն ժամանակների մեջ։ Եվ հանդիպելով անթիվ ժամանակագիրների, հազիվ կարողացա սովորել հազարից մեկը և բյուրից երկուսն այն իմաստասիրություններից, որ հանդիպեց, և նրանց օրինակով իմ տեսածը և ականջով լսածը շարադրեցի մինչև այստեղ...»։

Երբ նա գլուխը բարձրացրեց սեղանից, լույսը բացվում էր։

* * *

Ձյան խոշոր փաթիլները հուշիկ նստում էին մերկ ծառերին, թախկած մարգագետիններին, արահետի քարերին։ Երկինքն ասես չոքել էր լեռների վրա։ Ձյունացեխը ճլթում էր ձիերի սմբակների տակ։ Արահետն ընկած էր ժայռերի ու բլուրների արանքում, մենավոր խաչքարերի ու ձյունե մշուշի մեջ պպզած մատուռների տակ։

Մելիք Բարխուդարի հոգին փոթորկված էր։ Սառը ձյունն ասես իջնում էր հենց սրտին։ Թեև նա լիաբուռն պատիվ ու պարգև ստացավ հայոց զորքերի սպարապետից, բայց սրտի մաղձը չհալվեց։

«Ինչո՞ւ բուսցրեց ճրը[1] մելիք Թուրինջին,— ինքն իրեն ուտում էր Բարխուդարը։— Մելիք դարձրեց իմ մտրակի տակից դուրս պրծած ռամկին։ Ուրեմն ես բարձակի՞ց պիտի լինեմ այդ քոսոտին»։ Մելիքն այնպես խթանեց ձիուն, որ սա ծառս եղավ քարերի վրայով ու այլևս դժվար էր զսպել։ Նրան կրնկակոխ հետևող Միհրանն ու Պակի զորապետը սիրա չէին անում խոսեցնել իրենց հորը։ Գիտեին, որ երբ հայրը մենակ է իր մտքերի հետ, ոչ ոքի չի լսում, չի ճանաչում։

Ձյունը գալիս էր անդադար, նստում ձիերի բաշերին, մարդկանց գլխարկներին, հալվում, ծորում ծոծրակները։ Զորքը լուռ հետևում էր իր մելիքին։

Ճամփաբաժնում մելիքը մի վայրկյան ձին պահեց։ Նայեց Պղնձաքարի լեռների կողմը։ Հենց հիմա ճամփան չծռի՞ ու գնա այդ Թուրինջ ռամիկի որջի վրա, բոլորին կոտորի։ «Կկոտորես, հա՞...— դառնորեն մտածեց նա,— հիմա ի՞նչ կարող ես անել ճրը Թուրինջին, զորք ունի, Դավիթ-Բեկի հրովարտակն ունի, սպարապետը թիկունքին է։ Ա՜խ, ա՜խ...»։

---

[1] Ապօրինի, անտոհմ։

Հանկարծ նրա ձին խրտնեց։ Մելիքը զոռով զսպեց նժույգը, սթափվեց մտքերից, թուրը ակամա մերկացրեց։ Թիկնապահ զինվորներն առաջ անցան։

— Ի՞նչ մարդիկ եք, ո՞ւր եք գնում։

Մի տղամարդ, մի կին ու չորս մանր երեխաներ էին շոքել ձյան մեջ՝ ահից սառած, մրսած։ Տղամարդը մի խղճուկ կապոց ուներ շալակին։

— Ո՞ւմ շունն եք,— մոնչաց մելիքը։

Տղամարդը գլուխը կպցրեց գետնին։ Կինը հեծկլտաց։ Մանուկները ահից գունդուկծիկ դարձան։

— Ասում եմ, ո՞ւմ շունն եք,— այս անգամ արդեն որոտաց մելիքը։ Ապա կռացավ ձյան մեջ շոքած մարդու կողմն ու մեջքն իսկույն ուղղեց։— Հա՛, հա՛...— դիվաքրքիջ արեց նա,— այդ դո՞ւ ես, Աղաս ռամիկ։ Դո՛ւ ես, ճանաչեցի։ Բարև-բարիրիկուն էլ չես ասում քո տիրոջը... Ճանաչեցի՛, հի՛, հի՛։ Իմ Տեղ գյուղի ոչլոտներից ես, գիտե՛մ...

Գյուղացին լաց եղավ. նրա կինը գրկեց մելիքի ձիու ծնկները։

— Մե՛ղք արի մեզ, տե՛ր մելիք, ոտքիդ ցե՛խը դառնամ...

— Ո՞ւր եք գնում,— փնչացրեց մելիքը։

— Հաց չունենք,— հեկեկաց կինը։— Աստծո ստեղծած երեխեքս կոտորվում են սովից, տե՛ր մելիք։ Գնում ենք մուրալու...

— Գնում եք Պղնձաքար. այդպե՞ս չէ։ Գնում եք նոր թխած ճրո մելիք Թուրինջի հողը՞, հը՞,— մելիքը փրփրեց։— Կապոտել զատ-զատ, շուտ։

Թշվառ կինը գութ աղերսեց։ Մանուկները կական բարձրացրին։ Բայց մելիքը դիվաքրքիջ էր արձակում միայն։ Զինվորները մանուկներին ու նրանց ծնողներին կապոտեցին թոկերով։ Մելիքի հրամանով Աղաս ռամիկին գցեցին զենք տանող ջորիներից մեկի վրա։ Մանուկներին ու կնոջը պառկեցրին ճանապարհի մեջտեղը։

Մելիքը ձին քշեց նրանց վրայով...

Նրան հետևեց գունդը...

Ջորու վրա գցած ռամիկն ուշաթափվել էր։

— Այսպես սմբակահար կանեմ, ով կհամարձակվի հեռանալ իմ գյուղերից,— գոռում էր մելիք Բարխուդարը։— Ճրո մելիքի հո՞ղն են գնում, հի՛, հի՛... Դե գնացե՛ք։ Մելիք Բարխուդարին ջուրը տարե՞լ է, ի՞նչ է։ Ճրո՞ մելիք... ռամի՛կ սպարապետ... հի՛, հի՛... Ես քեզ էլ մի օր այսպես սմբակահար կանեմ, դեռ կա՛ց...

Խավարը լցվել էր ձորերը։ Շուտով, ասես գետնի տակից, մի շուն կլանչեց։ Նախ հոտ եկավ։ Զիները վրնջացին՝ ախորի մոտիկությունն զգալով։ Մտնում էին խնձորեսկ։

«Տեսնես Մխիթարն ի՞նչ փրփուրով բերան կբանա, երբ լսի, որ ես սմբակահար արի մի երկու քոստի,— մտքում հարցրեց Բարխուդարն, ու արյունը նորից խաղաց նրա գլխում։— Թող լսի, թող գազազի, թող անի, ինչ ձեռքովը գալիս է։ Հա՛, հա՛, թող անտոհմ, ռամիկ Մխիթարն իմանա, որ ես իրենից եմ վրեժ հանում, իրենի՛ց... Որ իր երեխաներին սմբակահար արի։ Թե չէ ոտքը շատ է երկարում սոված զկրտացողի զավակը։ Ապա թողնեմ, որ բոլոր ռամիկները փախչե՞ն ինձնից, հզորանա՞ ճրո մելիք Թուրինջը։ Թուրի՛նջը, հը՛մ...»։

Հասան ամրոց։ Ներքևից ձայն տվին։ Աշտարակի վրա ջահակիրներ երևացին։ Երկաթե ծանր դուռը հետ գնաց։ Մելիքը մտավ ամրոց, ոտքը դրեց կռացած ծառայի մեջքին ու իջավ ձիուց։ Թեև ընթրիքի ժամն էր, բայց ամրոցն ասես անկենդան էր։ Մելիքը վազեց քարե սանդուղքների աստիճաններով։ Որդիները հազիվ էին հասնում նրան։

— Զգվեցե՛ք,— իրեն հետևող ծառաների ու թիկնապահների վրա գոռաց մելիքը և, ոտքով հրելով բազմաթիվ դռներ, անցավ մոմի աղոտ լույսով պարուրված մի նեղ միջանցք, ուսով հրեց կաղնե քանդակազարդ մի դուռ ու մտավ գորգերով պատած իր ննջարանը։ Միայն մի նեղ ու բարձր պատուհան ունեցող այդ սենյակը լուսավորված էր տասնյակ մոմերով, որոնք ճպուռների նման ճրթճրթում էին պղնձե մոմակալներում։

— Լույս տվեք,— գոչեց մելիքը։ Նրա ձայնից սենյակի որմերը զնգացին։

Որմնախորշից դուրս եկավ փոքրամարմին մի ծերուկ ու կաղին տվեց դեպի միջանցք։ Նա հետ եկավ՝ ձեռքին մասրենու թուփ հիշեցնող ճյուղավոր մոմակալ՝ բազմաթիվ վառ մոմերով։

— Էլի՛ լույս,— ոտքը գետին խփեց մելիքը։— Էշե՛ր, շնե՛ր, ձրի լափողներ, չե՞ք տեսնում, որ շուրջս խավար է, խավա՛ր... Ամեն ինչ, ամեն տեղ խավար...

Սենեկապետը նորից գլորվեց դեպի ելքը։ Մելիքի որդիները ձեռքները ծալած կանգնել էին դռների մոտ։ Մելիքը ուսերից պոկեց այծենակաճն ու շպրտեց մի անկյուն։ Հետո հանեց զենքերը։ Թուրն ու ատրճանակը դրեց մահճի մոտ։

Սենյակի կամարակապ կրականոցում ճարճատում էին բոխու չոր փայտեր։ Մոմերի լուսերը բեկբեկվում էին պատերից կախած գազանների մորթիների, հնադարյան վահանների, սաղավարտների ու զրահների վրա։ Բազմաստեղն մի աշտանակ էր դրված վագրի մորթով ծածկ-

ված թախտի մոտ։ Մելիքը հանեց պատմությանը, արձակեց մետաքսե կապայի կոճակները և թիկնեց գորգի նստարարձերին։

Սենեկապետը նոր մոմեր բերեց. սենյակում այնպիսի լույս էր, որ աչք էր ծակում։ Մելիքի նշանով նստեց միայն ավագ որդին՝ Միհրանը։ Պակին մնաց ոտքի վրա։ Մելիքը գլուխն առավ ափերի մեջ, կորավ ինքն իր խոհերում, ասես մոտը մարդ չկար։ Որդիները շնչում էին անաղմուկ, չէին շարժվում։ Սպասում էին, որ հոր կատաղությունն իջնի։

Հանկարծ Բարխուդարը վեր թռավ, փչեց, հանգցրեց մի տաբը մոմ։

— Տեսնո՞ւմ եք,— առանց որդիներին դառնալու՝ գոչեց նա։— Այսպես ես կփչեմ, կհանգցնեմ իմ թշնամիներին։ Հա՛, հա... Կհանգցնե՛մ։ Ինչպես թե՝ իմ քթի տակ նոր մելիքություն ստեղծի ռամիկի զավակը։ Հը՞։ Ի՞նչ եք լալկվել, խոսեցեք է՞... Ձեր ժառանգությունն են ուզում խլել, ձե՞ր...

Նա կապտեց, կատաղեց։ Էլի մի երեք մոմ հանգցրեց, ապա դարձավ արդեն ոտքի կանգնած Միհրանին.

— Առավոտը ողջ ավանը կհավաքես ամրոցի հրապարակ, դատաստան պիտի տեսնել փախստական ռամիկի հետ։ Մարդակա՛լ պիտի անեմ, մարդակա՛լ... Իմացե՛ք։ Ուժը աստծուց արդար է, աստծուց զորավոր։

Ընթրիք բերին։ Բարխուդարն սկսեց ուտել եռանդով։ Ուտում էին ու գավաթով գինի խմում։ Կենաց չէին ասում, գավաթները չէին խփում միմյանց։ Միհրանը շարժուձևով, ուտելով, կերպարանքով ու նույնիսկ ձայնով հորն էր նման։ Կարճահասակ, պնդակազմ ու կոպիտ՝ ինչպես անտառի արջը։ Հայրը աչքի տակով նայում էր նրան ու հրճվում հոգու խորքում։ Պակին էլ էր հորը նման, բայց նուրբ էր ու փափկասիրտ։ Նրա աչքերը տամկանում էին, երբ հայրը դաժանորեն պատժում էր զանցառուներին։ Բարխուդարը մելիքության գործը երբեք նրան չի վստահի։ «Մելիքությունս պիտի Միհրանը շարունակի,— մտածում էր նա։— Իսկ այս փափկասիրտը մելիքացու չէ»։

Ընթրիքը կարճ տևեց։ Կերան, լցվեցին։ Բարխուդարը թիկնեց բարձին, եղունգով հանեց ատամների արանքում մնացած միսն ու գլուխը խոնարհեց. քունը տանում էր։ Ոտքերը կախեց թախտից։ Պակին հանեց նրա կոշիկները։

Ջավակները գլուխ տվին նրան ու, բարի գիշեր մաղթելով՝ դուրս եկան։ Մելիքը պառկեց։ Սենեկապետը մոմերը հանգցրեց ու նստեց մելիքի մահճի առջև, գետնին փռած փսիաթին։ Ամբողջ գիշեր նա այդպես նստած էր մնալու իր տիրոջ մոտ։

***

Բացվեց ձմեռային ցրտաշունչ առավոտը։

Մշուշը ցրվել էր։ Նեղ ձորի բարդ-բարդ ժայռերը ծխում էին։ Արթնանում էր նրանց մեջ ամփոփված խնձորեսկը։ Մի դուռ ճռռաց։ Մի տեղ բառաչեց նոր ծնած կովը։ Մի շինական դուրս եկավ ժայռափոր տնից, պորտը քորեց ու պարանի օգնությամբ բարձրացավ վերև՝ խոտանոց։ Աքաղաղների կանչերը բազմացան։ Մոխիրների վրա թազնած շները ձգվեցին, սկսեցին հաչել ծուլորեն։ Ասես ուզում էին ստուգել, թե ո՞ր շանն է այդ գիշեր գողացել գայլը։

Ժայռերի տակով փախչող, նեղությունից խեղդվող, ծուռումուռ զուկակների վրա զինվորներ երևացին։ Դժվարությամբ էին ելնում արահետի սառած թեքությամբ, սահում էին, կպչում քարերին՝ ձորը չընկնելու համար։

— Է՛յ, լսո՞ւմ եք,— գոռում էին նրանք,— բոլորդ հավաքվեցեք ամրոց, մեծ ու փոքր։ Լսո՞ւմ եք, հրամանը մելիքական է։

Նրանք երկար նիզակներով հրում, բաց էին անում ժայռակոփ անձավների դռները, ջարդում համարձակ շների գլուխները։

Գոմերից ու տներից դուրս արին մրսող, քնատ մարդկանց, կանանց։ Ավանի վրա սոսկում պատեց։ Խլրտացին ժայռերի մեջ ողջ-ողջ կորած թաղերը։ Լուսադեմի ցուրտը խեղդում էր կիսամերկ ռամիկներին, սարսռեցնում տաք քուրսիների տակից ու մոխիրների միջից հանած ոտքերը։

Շուտով ամրոցի հրապարակում ասեղ գցելու տեղ չկար։ Եկել էին բոլոր յոթ թաղերի քահանաները, տանուտերերը, շինականները, ռամիկները։ Մեծ ու փոքր խռնվել էին ձյան մեջ, պապանձվել։ Քահանաները տաք էին, իսկ ռամիկները սրթսրթում էին, կպչում միմյանց։

— Էլի պատերա՞զմ է,— ահաշշուկ հարցնում էին իրար։

— Քրիստոսն է երևացել Դիզակի ձորերում։ Քարոզում է,— հեգնեց միականի գուսան Հեթումը։

— Չէ մի, ի՞նչ...— առարկեց մեկը։

— Ասում եմ՝ հասկացիր,— սաստեց գուսանը,— Աղավնո գետի ափին երկգլխանի մի մարդ է երևացել։ Բեկառ գնացած իմ փեսան է տեսել իր աչքով։ Երկու գլուխ ունի, ասում է։ Մեկը՝ մեծ, մյուսը՝ փոքր։ Փոքրը ծիծաղում է, մեծը՝ լալիս, ասում է։ Էլի ասում է, թե աշխարհի վերջը եկել է...

— Չես տեսնո՞ւմ, թե ինչ ծանրաձմեռ է, բա աշխարհի վերջը չէ, ի՞նչ է,— հաստատեց մեկը։

— Երկու գլխանին քանի՞ ձեռք ուներ։

— Երեք։

— Վատ է։ Զորսը խեր է, երեքը՝ շատ։ Պապս պատմում էր, թե Շահ Աբբասի օրոք էլ երեք ձեռքանի ու երկգլխանի մարդ էր երևացել Ջուղայի կողմերին։

— Ո՛վ սուրբ Միծեռնավանք, դու մեզ փրկես ապականությունից ու կործանումից։

— Մատաղ քիչ ենք անում, քի՛չ. աստծու արդար անունը մոռացել ենք,— չպպացնում էր երկճյուղ մորուքով փտած մի երեց։

Ամբոխը սոսկումի մեջ էր։

— Ասում են, թե մարդ են մորթելու։

— Երկգլխանո՞ւն։

— Տե՛ր աստված, աշխարհի վերջն է։

Եկան Միհրանն ու Պակին՝ թիկնապահ զինվորներով։ Նրանց բեբաններից ժայթքող գոլորշին այնպես առատ էր, որ կարծես փորներում կրակ կար։ Խմած էին։ Միհրան հարյուրապետը գոռաց ամբոցապահի վրա։ Սա վազեց դեպի զնդան։ Ամբոխը հետ-հետ գնաց՝ մի բավական ազատ տարածություն թողնելով մեջտեղը։ Եկավ կարմիր հագած դահիճը։ «Վա՛խ, վա՛խ...»,— օրորվեց ամբոխն ու շունչը պահեց։

— Առավոտյան Զագեձորից գալիս ճանապարհին ջնջված երեխաների ու կնկա դիակներ տեսա,— պատմում էր միականի գուսանը։— Ասում են՝ երկգլխանին գիշերով ման է գալիս ու ճանապարհին պատահած մարդկանց ջնջում յոթ փթանոց երկաթե մուրճով։

— Տե՛ր, արթնացրո՛ւ գութդ,— աղերսեց մի կորաքամակ գեղջուկ։

Բերին կիսամերկ ռամիկ Աղասուն՝ քնձռնած, երեսն արյունլվա։ Սա սրթսրթում էր ու անվերջ խաչ հանում։ Ամբոխը լարվեց։ Երկգլխանի՞ն է, ի՞նչ է։ Հապա ո՞ւր է մյուս գլուխը։

— Այս մարդը ուրացող է,— գոռաց Միհրանը,— սա համարձակվել է փախչել մեր մելիքության սահմաններից։ Գնում էր կրոնը փոխելու, Քրիստոսի խաչն անարգելու և միանալու Պղնձաքարի անօրեն կռապաշտներին։ Հավատն է ուրացել, Քրիստոսի՞ զավակներ հավա՞տը...

— Անե՛ծք,— գոռացին քահանաները։

Պատշգամբում երևաց մելիք Բարխուդարը՝ ծանրագին մուշտակով, սրածայր գլխարկով։ Բոլորը հանեցին գդակներն ու խոր գլուխ տվին։

— Ով համարձակվի փախստական դառնալ, ուրանալ իր տիրոջն ու աստծուն, մահվան կարժանանա,— գոռում է Միհրան հարյուրապետը։

Մելիքը շուռ եկավ, մտավ մելիքարան։ Նրան ընդառաջ եկավ կինը։ Սա գունատ էր, տանջված։

— Ի սե՛ր Քրիստոսի, մի՛ արա. խնայիր աստծու արարածին,— լալագին աղերսեց նա ու ձեռքերը կարկառեց ամուսնուն։— Արյուն մի՛ թափի, ջրօրհնեքի օրերն են մոտենում, մե՛ղք է...

— Ապստա՞մբ ես։ Մենաստա՞ն ես ուզում գնալ,— փրփրեց մելիքն ու չարությունից պատռեց կնոջ բեհեզյա շապկի օձիքը։— Խրատողի՞ս տեսեք։ Դո՛ւրս...— Նա ձայնը գցեց գլուխը, գոռաց, հայհոյեց կնոջն ու դուրս հրեց մելիքարանից։

Նեղ միջանցքում մեկը գրկեց կիսաուշաթափ տիկնոջը։

— Դու մի խառնվիր նրա գործերին, մա՛յր,— ասաց ցասկոտ,— նա ինձ էլ, քեզ էլ մի օր մահվան դուռը կհասցնի։

Դա մելիքի միակ դուստր Գոհարն էր։

Մելիքն արագ իջավ բակ, անցավ եկեղեցու մոտով, ցատկեց աղբյուրի առուն ու, մուշտակի փեշերը ձյուներին քսելով՝ տնկվեց դահճի առջև շոքած Աղասու գլխին։

— Փախչո՞ւմ էիր, հա՛...— թքեց նրա երեսին։— Քո տիրոջից, քեզ կերակրողից ու պահողից էի՞ր փախչում, հա՛... Հիմի կտեսնես փախչելը։— Նա շուռ եկավ դեպի դահիճը։— Շամփուրը...

Դահիճը շիկացած շամփուր բերեց։

— Խարանիր ճակատը,— հրամայեց մելիքը։— Ռունգները պատռիր, ականջները կտրիր, շո՛ւտ։

Ամբոխը չէր շնչում։ Ասես ոտքի վրա մեռած զանգված էր։

Գոհարն ու նրա մայրը կանգնել էին պատուհանի առջև ու ծածուկ նայում էին բակին։ Խանձվող մսի հոտից Գոհարը փակեց պատուհանի բաց փեղկը։

— Տե՛ր աստված, այս ինչե՛ր են կատարվում...— կտրտվեց նա ու մորը տարավ, պառկեցրեց մահճի մեջ։

Իսկ բակում տարածվում էր այրվող մարդկային մսի հոտը։ Դատապարտվածին ողջակեզ անելուց հետո ամբոխին քշեցին։

— Տեսա՞ք երկգլխանուն, տեսա՞ք,— զառիթափով գրեթե գլորվելով՝ հարցնում էր գուսան Հեթումը։— Երեք ձեռք ուներ, երե՛ք... Ես տեսա, ե՛ս... Հա՛... հա՛։ Երկգլխանուն տեսա։ Կանգնած էր դահճի մոտ, մուշտակով էր։ Եվ ինչո՞ւ դահիճը հենց նրա գլուխը չկտրեց։ Դուք չտեսա՞ք, հը՞։

Նրա հետ գնացողները փախան։ Վիթխարի ավանը սսկվեց, կուչ եկավ։ Ասես հազար դույլանոց ամաններով ջուր էին թափել բոլորի վրա։

Զարհուրելի օր էր։

ՀԻՆ ՎԵՐՔԸ

Ամրոցում վաղուց մարել էին բոլոր լույսերն ու ձայները։

Միայն վառ էր ամրոցապահ Բանդուր-Զաքարիայի սենյակի ճրագը։ Այդ սենյակը գտնվում էր մայր դարպասի մոտ՝ մեծ աշտարակին կից։ Այնտեղ մեն-մենակ նստած էր Մխիթար սպարապետը։

Բուխարու մեջ եռում էր կրակը։ Սպարապետը երբեմն կրակին շոր փայտ էր ավելացնում ու անքնությունից կարմրած աչքերը հառում թրթթրուն բոցերին։

Աշտարակի անցքերում շշուկով քամու ձայնն անգամ սթափեցնում էր նրան. գլուխը բարձրացնելով՝ նա անհամբեր նայում էր դռանը... Բայց ժամերն անցնում էին, կրակին գցած փայտերը մոխրանում, սակայն չէր երևում սպասածը։ Նա արդեն հույսը կորցրել էր, երբ վերջապես ներս մտավ ձյունաթաթախ մի մարդ. երկար, սև մորուք ուներ նա, կլոր գլխարկ ու կարճ կապա։ Այդպես նա նման էր թափառական փերեզակի։

— Բարի՞ է,— սրտատրոփ հարցրեց սպարապետը։

— Բարի է, տե՛ր իմ։ Եղավ այն՝ ինչ հրամայեցիր,— պատասխանեց մարդը, պոկեց կեղծ մորուքը, հանեց վերնազգեստը, և նրանց միջից դուրս եկավ Փոքր Գորգին։

— Քիչ մնաց ճանաչեին,— պատմեց նա։— Ասեղ ու մաստակ էի ծախում։ Մելիքի զինվորներից մեկը աչքը գցել էր վրաս, կոծոծ դառած պոկ չէր գալիս անիծվածը։ Ստիպված եղա կակազ ձևանալ։ Այնպես էի կակազում, որ կնանիքը մեղք էին գալիս։

— Նրան տեսա՞ր,— շտապեց Մխիթարը։

— Սեփական աչքովս, իր սենյակում։ Աղախինը տարավ։ Հենց որ ինձ տեսավ, հարցրեց. «Ինչպե՞ս է Մխիթարս»։ Խոնարհագին բարևում է,— պատասխանեցի։ Նա լաց եղավ։ Հետո ինձ նստեցրեց ու սկսեց երկար հարցուփորձը։ Հարցնում էր, թե դու հաճա՞խ ես հիշում իրեն, արդյոք, ի՞նչ ես ուտում, ո՞րտեղ ես քնում, ի՞նչ մտադրություններ ունես ու էլի ուրիշ բաներ։ Ես պատասխանում էի, նա էլի էր հարցնում։ Չէր կշտանում։ Հառաչում էր, մատները կոտրատում, տանջվում... (Սպարապետը խոր հոգոց հանեց)։ Ասում էր՝ էլի խնամախոսներ են եկել ուզելու։ Մերժել է, ետ տվել։ Վրաց կողմերից էլ են եկել, էլի մերժել է։

— Հայրը չի՞ ստիպում։

— Հորը շան տեղ չի դնում։ Իսկ հայրը սիրում է նրան։ Աղջկա համար խելքը թոցնում է այդ քարասիրտ մարդը։ Զարմանալի՞ է։

Սպարապետն ընկավ տանջող մտքերի մեջ։ Փոքր Գորգին նրա աչքում արցունք նկատեց։ Գիտեր, որ Գոհարի անունը լսելիս իրեն կորցնում էր այդ սրտապինդ, նույնիսկ դաժան մարդն ու դառնում քնքուշ, պատանու պես հուզվող։ Նրա միտքը շեղելու համար Փոքր Գորգին ասաց.

— Մեր ամրոցից վերադառնալիս մելիք Բարխուդարը սմբակահար է արել մի խեղճ կնոջ ու նրա չորս մանուկներին։ Սպանված կնոջ մարդուն տարել է Խնձորեսկ, այրել ժողովրդի առաջ։

— Պատճա՞ռը,— ցասումով հարցրեց Մխիթարը։

— Այդ աղքատ ռամիկը հեռացել էր մելիքին պատկանող Տեղ գյուղից։ Ուզեցել է գնալ մելիք Թուրինջի մոտ։

— Հասկացա։ Ինձանից է վրեժ հանում գազանը։— Լռեց երկար։ Ապա շեշտ նայեց Գորգուն։— Ուրիշ ասելիք ունե՞ս։

— Ունեմ,— հայացքը խոնարհեց Գորգին։— Գոհարն ուզում է քեզ տեսնել...

Մխիթարն ուրիշ հարց չտվեց։ Մի՞թե ինքը չի ուզում տեսնել նրան։ Ուզելն ի՞նչ... Ամբողջ էությամբ նա ձգտում էր դեպի Գոհարը։ Նրա գլխում հազար ու մի ծրագրեր առաջացան։ Ջծպտվե՞լ ու գնալ, մտնել Խնձորեսկ, տեսնել նրան։ Ապա վճռեց մի պատրվակով Գոհարին դուրս բերել Խնձորեսկից ու հեռանալ, կորչել նրա հետ։ Բայց այդ ծրագրերը փշրվում էին, երբ հիշում էր իր պարտքը՝ կնոջը, Դավիթ-Բեկին։ Մի մեծ ահ, ներքին մի զգոն ձայն արգելում էր նրան մոտենալ Գոհարին։

Ինչպե՞ս կարող էր նա թողնել այն փոքրիկ լեռնաշխարհը, որի ազատության համար արյուն թափեց, որի անունը Հայաստան է՝ մոր կաթի պես քաղցր ու անկրկնելի հարազատ։ Ինչպե՞ս թողնի Դավիթ-Բեկին, զորքը, ժողովրդին, որ ահա մի փոքր ազատ շունչ է քաշում իր երկրում, իր տանը, իր նորաստեղծ իշխանության հետ։

Հին պատմություն ունի Մխիթարի ու Գոհարի սերը։ Նա ծնվել էր, երբ Մխիթարը դեռ տասնինը տարեկան էր, իսկ Գոհարը տակավին դեռաբույս աղջիկ։ Բուռն է եղել այդ սերը, սակայն...

Սակայն ո՛չ Մխիթարի, ո՛չ էլ Գոհարի մեղքով կատարվեց անսպասելին։ Դավիթ-Բեկը Մխիթարին ամուսնացրեց Սաթենիկի հետ։ Գոհարը մազերը փետեց, շաբաթներով փակվեց իր սենյակում, անիծեց Մխիթարին, փորձեց ատելությամբ լցվել դեպի նա, մոռանալ եղածը, բայց չկարողացավ սրտից պոկել նրան... Այլևս իր բախտի ատողը խավարած համարելով՝ Գոհարն իրեն նվիրեց խենթ ձիարշավների ու որսորդության։ Նրա պահանջով հայրը Վայոց ձորից բերել տվեց մի ուսումնական,

արդեն զառամած կույս մայրապետ՝ աղջկան գրագիտություն սովորեցնելու համար։

Գոհարը կանոնավոր ուսում ստացավ և, այնուհետև, ձիարշավներից ու որսորդությունից զատ, նա պարապում էր նաև հին մատյանների ընթերցանությամբ, որոնք նրա համար ծանրագին գումարներով գնում էր գստերն անչափ սիրող մելիքը։

Շատերն էին խնդրել Գոհարի ձեռքը։ Նրա հետ ամուսնանալ էին ցանկացել Կապանի մելիք Փարսադանի միակ ժառանգ Բալի զորապետը, Գեղարքունյաց գավառի մելիք Շահնազարյան մելիք Արամը, Բրոնակոթի Շաֆռազի մեծ որդին և էլի ուրիշ երևելիներ, բայց Գոհարը չէր ցանկացել նույնիսկ լսել նրանց անունները։ Նա ուխտել էր մինչև իր կյանքի վերջը մնալ իր հոր տանը, սիրել միայն Մխիթարին, նրան նվիրել իր ամբողջ սերը, ապրել՝ թեկուզ հեռվից-հեռու տեսնելու բավականությամբ։

...Այս ամենը մտաբերելով՝ սպարապետի խիղճը տանջում էր։ Թեև դժբախտ էր համարում ինքն իրեն, բայց մխիթարվում էր այն մեծ գործով, որին զինվորագրված էր։ Զորքի ու կռիվների մեջ մոռանում էր սեփական վիշտը։ Իսկ ինչո՞վ մխիթարվեր Գոհարը՝ բուռն սիրող այդ աղջիկը, որի հպարտությունը փշրվեց քարին զարնված բյուրեղաթասի պես։

* * *

Լուսանում էր, երբ Մխիթարը վերադարձավ իր հարկաբաժինը։ Քայլեց դեպի կնոջ գրատուն-սենյակը և կանգ առավ դռների մոտ։ Ականջ դրեց։ Դռան ճեղքից լույս էր երևում։ Սաթենիկը պարապում էր ներսում։ Առավել լուսաբացին էր պարապում նա, երբ ամրոցում կատարյալ լռություն էր, և երեխաները դեռ քնած էին։ Ներս չմտնե՞լ, արդյոք, բոլոր ձևականությունները դեն շպրտելով՝ կնոջը չասե՞լ, որ ինքն անլուծելի տառապանքների մեջ է, որ ոչ մի ջանքով չի կարողանում իր սրտից ու մտքից հանել Գոհարին։ Ինչպե՞ս կընդունի այդ լուրը Սաթենիկը։ Իրեն դո՞ւրս կվռնդի տնից, թե թույն ընդունելով՝ վերջ կտա իր կյանքին։ Այս մտքից Մխիթարը զարհուրեց։ Երկու դեպքում էլ չի փարատվի նրա տառապանքը։ Ինքն ո՞ւր գնա, ումի՞ց հեռանա. իրեն այնքա՞ն աջակից Սաթենիկի՞ց, որն իր համար անդավաճան նեցուկ է, մի տեսակ մայրական քնքշություններով օժտված։ Ինչպե՞ս հեռանա երեխաներից՝ փոքրիկ Դավթից, որի մի ժպիտը չի փոխի աշխարհի բոլոր վայելքների հետ։ Ինչպե՞ս հեռանա Ահարոնից։ Օ՜, ո՜չ, նա չի կարող թողնել իր զավակներին, իր տունը, իր Սաթենիկին։ Իսկ Սաթենիկի չլինելը կրկնակի դժբախտություն կլիներ։ Զավակները կմնան որբ, որբ կմնա ինքը ևս։ Ավելի լավ է լռել։ Ոչինչ չասել կնոջը, ոչինչ։ Թող չիմանա ծանրն ու ահավորը, թող ապրի իր մատյանների ու զավակների հետ, իրենով հպարտ։ Իսկ ինքը կաշխատի մոռանալ Գոհարին, մոռանալ ընդմիշտ, անդարձ...

Նա զգույշ հեռացավ դռների մոտից. մի քանի բոպե աննպատակ թափառեց դատարկ միջանցքում, ապա երեք անգամ ծափ տվեց։ Երևաց տիկնոջ աղախինը՝ լվացվելու պարագաներ ձեռքին։ Սպարապետը մերկացավ մինչև գոտին ու լվացվեց մեծ բավականությամբ։ Անքնությունը փախավ. թարմացած դուրս եկավ պատշգամբ։

Սարերի ձյունները փայլատակում էին ծագող արևից։ Զորերում թանձրացել էին ժայռերի ստվերները։ Գորիս ավանն արթնացել էր։ Ծուխը, լիզելով լերկ ժայռերը՝ բարձրանում էր դեպի ամրոցի պատերը...

«Ինչո՞ւ է համառում, մերժում իր ձեռքը խնդրողներին։ Ի՞նչ հույսեր ունի։ Ինչո՞ւ չի մոռանում եղածը,— Գոհարի մասին մտածում էր Մխիթարը։— Մի՞թե հավիտյան պիտի նստի տանն ու տառապանք պատճառի իրեն ու ինձ։ Ամուսնանար կվերջանար ամեն ինչ»։

Նա պաղություն զգաց մարմնում, շուռ եկավ հեռանալու, բայց մնաց անշարժ։ Մեջքը դռան պատի քանդակներին հենած կանգնած էր Սաթենիկը։ Մխիթարը ցնցվեց...

— Սաթենի՛կ։

Սաթենիկը նայում էր հեռաստաններին։ Վեհ էր։ Շրթունքները սեղմած, մի հոնքը կեռ։ Անշնչելի մի վիշտ կար նրա գունատ դեմքին։ Աչքերը տամուկ էին, տագնապալի։

— Ցուրտ է, Մխիթա՜ր, գնա՜նք,— շշնջաց նա։— Երկար ժամանակ է, որ կանգնած ես այստեղ...

— Դու էլ ինձ հե՞տ։

— Ես հավիտյան քեզ հետ եմ։

Անհույս բողոք ու ծանր հանդիմանություն կար նրա ձայնի մեջ։ Այդ զգաց Մխիթարն, ու նրա սիրտը կասկած մտավ։ Չլինի՞ մաքուր ու միայն բարության ընդունակ այս կնոջը հայտնի է իր ու Գոհարի սերը... Օ՜... դա ծանր կլիներ։ Նրա ուսերը չէին դիմանա խորտակիչ վշտին։

— Տխուր ես, Սաթենի՛կ, գուցե հի՞վանդ ես,— հարցրեց նա։

— Ո՜չ, բնավ, Մխիթա՜ր,— պատասխանեց Սաթենիկը ու նույնիսկ ժպտաց։— Ես զարմանում եմ, թե ինչու ես դու ինձնից թաքուն պահում քո մեծ վիշտը։

Տիկինը թուլացիկ, բայց քննախույզ նայեց ամուսնուն։ Մխիթարը

աչքերը խոնարհեց։ «Գիտի»,— զարհուրեց նա։ Ինչ պատասխան տա իր սիրեցյալ զավակների մորը, իր հավատարիմ կնոջը, որ իր հետ քաշում է դառնությունների լուծը, հանապազ թև ու թիկունք է իրեն։ Տեսնելով, որ ամուսինը բան չի գտնում պատասխանելու, Սաթենիկն ասաց.

— Թաքցնում ես ինձնից քո ձեռքով գլխատված Ելիկումի և գերի Նաղաշ Հակոբի պատճառած ցավը։ Խիղճդ խայթում է, անշուշտ։

Փրկեց։ Դիտմամբ չասաց այն, ինչ ուզում էր։ Ինչո՞ւ մի նոր տառապանքի մեջ գցել ամուսնուն։ Թող չիմանա, որ ինքը տեղյակ է նրա վշտին, նրա սիրուն... Մխիթարը խոր հոգոց հանեց։ «Գոհարի մասին բան չգիտի»,— մտածեց թեթևացած, ապա բռնեց կնոջ թևը։

— Գնա՛նք, գնանք, Սաթենի՛կ, իրոք որ այստեղ ցուրտ է...

Նրանք մտան տիկնոջ աշխատասենյակը։ Մխիթարը թղթի, տմկած մագաղաթի ու թանաքի հոտ զգաց։ Փոքրիկ սեղանին դեռևս մարմրում էր սպառված մի մոմ... Կիսաբաց ձեռագրի վրա հանգչում էր անթառամի մի խունացած փունջ։ Սեղանի մի անկյունում կուչ էր եկել ջրի փոքրիկ սրվակը՝ մոտը չինական գավ։ Մխիթարը հառաչանքը կով տվեց։ Կինը ճգնավորի կյանք է վարում։ Նա խոնարհվեց ձեռագրի վրա։ Հազիվ ճանաչեց կնոջ համաչափ, մանր գիրը։ Տառերը գրված էին զարմանալի խնամքով։ Թերթի լուսանցքում նկարված էր մի հազրեվարդ, մի հասկ ու աղոթքի չոքած մի կին։ Մխիթարը կարդաց.

«...Այլև իմ սիրեցյալ ամուսինը, որ ինձ համար ամենաթանկն է աստծուց հետո, ազատեց բազում կանայք՝ իրենց մանուկներով հանդերձ, որ արտասրահառաչ ձայնով գերի էին տարվում օտար աշխարհներ։ Թող եկող սերունդներն աղոթեն նրա համար, որ բաժին էր ամենքին ու չէ միայն իմը»։

Մխիթարը գլուխը բարձրացրեց, նայեց կնոջը։ Թվաց, թե կանգնած է սրբապատկերի առջև։ Կնոջ տխրամած աչքերում երևում էին նրա հոգու մաքրությունն ու գեղեցկությունը։ Մխիթարը բռնեց կնոջ ուսերն ու նրան համբուրեց ջերմությամբ։

— Եկող սերունդները նախ քեզ համար պիտի աղոթեն, Սաթենի՛կ,— շշնջաց նա երկյուղածությամբ։ Ու նորից իրեն մեղապարտ զգաց նրա առջև։

Չէր կարողանում երկար մնալ տանը, անվերջ տեսնել կնոջ լուռ տառապանքը, այն հայացքները, որոնք կարծես ասում էին. «Ես քեզ սիրում եմ, բայց գիտեմ, որ դու իմը չես»։

Վճռեց հեռանալ Զագեձորից։ Երբ հեռու էր լինում, մոռանում էր թե՛ կնոջը և թե՛ Գոհարին։ Վիշտը խեղդում էր գյուղական օդաների ծխի ու գինու մշուշի մեջ։

Զյունն արդեն կլանել էր լեռնաշխարհը, ճանապարհները կապել-կշկոել։ Զորագնդերը մրափում էին գյուղերում, սահմանագլխային ամրոցներում։ Մելիքներն ու զորապետները ձանձրույթից ոչխար էին լափում ու գինի խմում շաբաթներով։ Բնականից անհանգիստ, աղմուկ սիրող Մխիթարը չէր կարող պարապ նստել տանը, ամեն օր տեսնել կնոջ սառն ու հանդիմանող դեմքը, աղախինների ու ծառաների շողոքորթությունները, ամրոցապետ ծերունու քրթմնջոցը...

Հետը զինվորների մի փոքր ջոկատ վերցնելով՝ Մխիթարը նախ այցի գնաց մելիք Թուրինջին։ Համբուրվեց նրա հետ, սաստիկ շփոթեցնելով խեղճին. եղավ գաղթականների տներում, փող բաժանեց՝ գարնան ցանքի սերմացու գնելու համար։ Մեծ ախորժակով կերավ պղնձաքարջի պառավների եփած խաշիլը, որի համը դեռ մանկությունից մնացել էր բերանում։

Գանձակից Պղնձաքար կանչեց իրեն վաղուց ծանոթ մի թափառական դերվիշի և, նրան մեծ գումար տալով, ճանապարհեց Թավրիզ՝ Նաղաշ Հակոբին որոնելու, գուցեև գերությունից ազատելու հույսով։

Ձանձրանալով Պղնձաքարում, նա Թովմային վերցրեց հետը, կրարեց անցավ Եռաբլուրի բարձր սարահարթի ձյունները և անսպասելի երևաց Սիսականի մելիք Շաֆռազի ամարաթում։ Շաֆռազը ձմեռային քուն մտած արջի պես ձանձրանում էր ձյան բլուրներով խեղդված իր Բռնակոթ ավանում, ու մտքով անգամ չէր անցնում, թե որևէ մեկը սիրտ կանի այդ ծանրաձմեռ եղանակին մոտենալ իր գավառի սահմաններին։ Երեք օր կերուխում արին։ Մխիթարի պատվին Շաֆռազը ամուսնացրեց իր տասնևհինգ տարեկան տղային։ Սա լաց եղավ, երբ սպարապետը նրա ուսին կապեց պսակի կանաչ-կարմիրը։

Սիսականից սպարապետն իջավ Ծղուկ գավառը, ժողովրդի առջև մերձիմահ ծեծել տվեց Լորաձորի անխիղճ տանուտերին ու Որոտանի կիրճով իջավ Բարկուշատի կողմերը։

Զագեձոր վերադարձավ մի ամիս հետո։ Թեև հոգսերից թեթևացել էր, բայց հոգնել էր անվերջ կերուխումից։ Մի ամբողջ օր ու գիշեր քնից մեռելի պես։

***

Գարունը մոտենում էր։

Ամպերը դառնում էին մութ, ծանր։ Արևի երեսը չէր երևում։

Փետրվարին երկինքը որոտաց։ Ամպերը շարժվեցին։ Կայծակը կտրեց լեռան ուսն ու գնաց, փշրեց Կապույտջիղի սառցե վահանը։ Դա

գարնան առաջին որոտմունքն էր։ Ամպերը եռացին, տարածվեցին՝ անձրևաբարդ, ահռելի։ Ջրեղեն ծանր զանգվածը փլվեց միանգամից...

Գալիս էր հազար յոթ հարյուր քսանչորս թվականի գարունը։

Դա առաջին գարունն էր, որ Արցախի ու Սյունիքի հայերը դիմավորում էին իրենք իրենց, անկախ, պարսից ծանր լուծը թոթափած։ Այլևս ոչ մի պարսիկ չկար նրանց լեռնաշխարհում։ Երկրի գերագույն իշխանությունը գտնվում էր գահերեց զորավար Դավիթ-Բեկի ձեռքին։ Նախկինում տասնյակ մեծ ու փոքր պարսիկ խաների ու բեկերի և մի քանի հայ մելիքների տիրապետության տակ գտնվող, մանր-մունր գավառներով մասնատված լեռնաշխարհն այժմ գտնվում էր մի ուժեղ, ռազմական իշխանության ձեռքում ու կազմել էր մի բավական ընդարձակ երկիր՝ Վայոց ձորի բերանից մինչև Քոի վրա իջնող լեռները, Արաքսի կիրճից մինչև Սևանա ծովակի ափերը։

Այդ գարնանը հայոց գահերեց զորավար Դավիթ-Բեկի հրամանով մելիքները պարսիկներից ետ խլած հողերը պետք է բաժանեին ժողովրդին, վերացնեին պարսիկների սահմանած հարկերն ու օրենքները։

Մխիթարը ճեպագնաց սուրհանդակներ ուղարկեց իրեն ենթակա գավառները՝ մելիքներին ու տանուտերերին շտապ հրավիրելով Զագեձոր։ Նա կանչեց նաև Ծիծեռնավանքի Ավշար երեց Տեր-Գասպարին, Խնձորեսկի ու Բռնակոթի վաճառականներին։

Առաջինը Զագեձոր հասավ Սիսականի տեր մելիք Շաֆռազը։ Բարձրահասակ, արդեն ծերացող Շաֆռազը սև որձաձիեր հեծած շքախմբով էր։ Նրանց բրգաձև գլխարկներին եղյամ էր նստել. թրջվել էին բաշլուղների կնգուղներն ու երկարափեշ այծենակաճերը։ Հեռավոր ճանապարհորդությունից հոգնած Շաֆռազն իջավ ձիուց ու գրկախառնվեց իրեն դիմավորելու եկած Տեր-Ավետիսի հետ։

— Բարի՞ է,— հարցրեց անվստահ։

— Բարի է, եղբա՛յր, էլ ի՞նչ պիտի լինի,— պատասխանեց Տեր-Ավետիսը։

— Դե՛, փա՛ռք աստծուն։— Երեսին խաչ հանեց մելիքը։

Անձրևը դադարել էր։ Բացվել էր լեռնաշխարհի ծիծաղկոտ երկինքը՝ լվացված ու մաքրված։

Լեռներից բերող ճանապարհները լեփ-լեցուն էին։ Հասարակ ժողովուրդը շտապում էր դեպի Գորիս ավան, որ հենց Զագեձոր ամրոցի տակ էր՝ ժայռերով կտրտված ձորերում։

Երկու օրում բոլոր մելիքներն ու տանուտերերը հավաքվեցին Զագեձոր։

Առավոտյան իր զեն ու զարդերի մեջ փայլելով՝ տնից դուրս եկավ

Մխիթարը, թեթևակի ողջունեց մելիքներին, հեծավ ձին ու բոլորին հրամայեց գնալ ավան։

Ավանում մի շան թաղնելու տեղ չկար։ Մոտիկ գյուղերից եկածները նախօրոք խոնվել էին մայր եկեղեցու առջև։ Մյուսները, հեղհեղուկ մի զանգված կազմած, լցվել էին ավանի ծուռումուռ փողոցները, կուտակվել կտուրներին, բանջարանոցներում, բարձրացել ծառերը, եկեղեցու կտուրը։ Ոմանք թառել էին խոտի ու աթարի կիսատ դեզերի վրա, իսկ ավելի խիզախները մագլցել էին տարաձև ժայռերը, ծվարել նրանց ծերպերում։ Այնքան մարդ էր հավաքվել ավանում, որ պապանձվել էին նույնիսկ ամենակատաղի գամփռները։ Դուքանները փակ էին, արհեստավորները դադարեցրել էին աշխատանքը։

Բոլորն սպասում էին մի արտակարգ նորության, որի մասին թեև լսել էին, բայց և՛ հավատում էին, և՛ ոչ։ Խոսում էին, վիճում։ Գզիրները մտրակներով դաղում էին հրապարակի կենտրոնը խուժել կամեցող կիսամերկ մուրացկանների կծիկը։ Զինվորներն ամուր շղթա էին կազմել նեղ հրապարակի շուրջը, որպեսզի ժողովուրդը չծածկի հրապարակը, եկեղեցու դռան աջ կողմին գտնվող սնկաձև ատյան քարը։ Այդ քարի մոտ էին սովորաբար հավաքվում գյուղի տանուտերերն ու մեծամեծները՝ դատ կատարելու կամ բանակին զորք տալու համար։ Ատյան քարի վրա փորագրված էին զանազան մեծության խաչեր, անվերծանելի գրեր։ Խոր հնությունից սկսած, Զագեձորի նախարարներն ու իշխանները այդ քարի վրա էին փռել արքայական հրամաններն ու կարդացել ժողովրդին։

Աղմուկը սաստկանում էր։ Ամեն րոպե նորանոր խմբեր էին գալիս՝ ձիավոր ու հետևակ։ Գալիս էին, խառնվում մարդկային ծովին, կորչում նրա մեջ։ Եղեկեցուն մոտ գտնվող տան բակից մի կին անհույս ծղրտում էր.

— Տունս փուլ կգա, անիրավնե՛ր... Մի շնթռեք կտուրին, իջե՛ք, քոլի արջեր։ Իջե՛ք, շուտ, գերանները չեն դիմանա...

— Ի՞նչ ես ռեխդ ցրիվ տալիս, է՛յ,— վերևից սաստեց միականի գուսան Հեթումը, մազածածկ կուրծքը բաց։— Տուն էլ ասո՞ւմ ես, խոզի բուն է, էլի՞... Թող փուլ գա։ Որ ես չունեմ, չեմ ապրո՞ւմ։

— Մոխրեմ քոռ գլուխդ,— թևերին արավ հանդուգն կինը։— Կտուրից իջե՛ք, թե չէ որ բերանս բաց արի, ձեր մեռելներին շները քարշ կտան...

Մոտիկները հռհռացին։ Կինն էլի բորբոքվեց, գոռգոռաց, բայց նրան այլևս լսող չկար։

Նեղ փողոցում երևաց մելիք Բարխուդարը՝ ոսկեթել ծիրանիով,

զարդերով ծանրաբեռնված, ուռած։ Նա գալիս էր իր որդիների, իր բազմաթիվ գյուղերի տանուտերերի ու քահանաների հետ։ Որպես ամենահին մելիքական տոհմի ժառանգ, նրան պատիվ էին արել՝ առաջինը մոտենալ ատյան քարին ու գլուխ խոնարհել նրան։ Նրա դրոշը՝ վրան խաչ, թուր և արծիվ, շողաց բոցի պես։

— Եկա՜ն,— գոռացին ամբոխի առաջին շարքերից, և այդ կանչը ալիք-ալիք գնաց, սփռվեց ավանի վրա։

— Առաջինը ո՞վ եկավ, ո՞վ,— հարցնում էին ետևի շարքերից։

— Մելիք Բարխուդարն, էլ ո՞վ...

— Փորի՜ն նայեք, փորի՜ն, ասես փչաց-տոզացրած կուպրուն լինի։

— Հի՛, հի՛, հի՛... Ո՞նց էլ չի ճղվում։

— Վրայի շորերը հազար թումանի գին ունեն։

Բարխուդարը ձին պահեց եկեղեցու պատի տակ. շար նայեց հոհոացող ամբոխին ու ոտքը հանեց ասպանդակից։ Մառան օգնեց, որ տերն իջնի ձիուց։ Փքված հնդկահավի նման Բարխուդարը մոտեցավ ատյան քարին, կանգնեց մելիքների համար նշանակված տեղը։ Մի աչքը լաթով կապած գուսանը վիզը ձգեց ու անհաճո երգեց.

«Եկա՜վ, եկա՜վ Բարխուդարը,
Ա՜խ վա՜տ մելիք, վա՜խ, դա՜տ մելիք...»։

— Կռավոցդ կտրի՜ր,— բամփեց նրա բարձրահասակ, բոկոտն հարևանը։

Փողոցում նոր խումբ երևաց. Դիզակի մելիք Եգանն էր՝ պարզ հագուստով, բայց լավ զինված։ Թեև նա հեռվից էր եկել, բայց նրան ուղեկցողների թիվը կրկնակի քիչ էր, քան Բարխուդարինը, նրա դրոշն էլ հասարակ էր։ Նա սրածայր գլխարկը հանեց ու բարձրացնելով՝ ողջունեց.

— Բարին քե՛զ, ժողովո՛ւրդ հայոց...

— Գլուխդ ո՛ղջ լինի, տե՛ր Եգան,— արձագանքեց ամբոխը։

— Ձիուդ պոչը երկա՜ր։

— Պոչը՞, թե թուրը,— ծղրտաց գուսանը։

— Հա՛, հա՛, հա՛...

Մելիք Եգանը սև դրամ շաղ տվեց իրար հեծած, իրար հրմշտող մուրացկանների առջև։ Սրանց կծիկը քանդվեց, սկսեցին գզգզել, կծոտել իրար, խլխլել գետնին թափված դրամները։ Եգանը երիտասարդի առույգությամբ ձիուց իջավ և ծանր, արժանավայել քայլերով մոտեցավ Խնձորեսկի տիրոջը։ Երկու մելիքները ողջագուրվեցին։

— Արծաթի հանք ունե՞ս, որ տկլորներին փող տվիր անխնա,— կամաց հանդիմանեց մելիք Բարխուդարը։— Շներին երես ես տալիս։

— Հիմա Հայոց աշխարհի փրկիչներն այդ տկլորներն են, տե՛ր Բարխուդար, համոզված եմ, որ չես մոռացել Դավիթ-Բեկի պատվիրանները։

— Տկլորներին շատ է երես տալիս, մի օր էլ կնստեն գլխներիս։

— Զգո՜ւյշ եղիր, տե՛ր Բարխուդար,— խորհուրդ տվեց խոհեմ Եգանը։— Ժամանակներն այլ են։

Լռեցին։ Սեղմվեցին իրար։ Բարխուդարը աչքի պոչով շար նայում էր ռամիկների, տկլոր մուրացկանների, շինականների զանգվածին, որից սևացել էին կտուրները։ Սիրտը խառնում էր, բայց և այնպես ահը մեծ էր։ Լռում էր՝ ատամները սեղմած, լսում միականու երգը.

«Ա՜խ, վատ մելիք, վա՜խ, դատ մելիք...»։

— Պղնձաքարի մելիքն է գալիս, տե՛ր Բարխուդար, տեսնո՞ւմ ես,— կարծես հենց չարությունից վառվող մելիքին գրգռելու համար խոսեց Եգանը։

— Գրողի ծո՛ցը,— ֆշշացրեց Բարխուդարը։— Ճրռ մելիքի հետ պիտի ծունկ-ծնկի նստենք, բախտներս կարմի՜ր...

— Երևանի կողմից եկած հարյուր ընտանիք Մխիթարը տվել է մելիք Թուրինջին։ Հիմա Թուրինջի հետ դժվար է չափվել. գաղթականների յուրաքանչյուր տանը տասը տղամարդ կա։

— Դժոխքի խորքն ընկնեն,— լափլփեց Բարխուդարը։ Սիրտը չարությունից արյունոտվեց։— Կտա, բա ի՞նչ կանի,— մղկտաց ինքն իրեն,— Մխիթարը ռամիկ չի՞, ռամիկի որդի չի՞. հիշում եմ՝ հորը կապոտեցին ծառից, շան թակ տվին։ Ինքը հոր հետ փախավ, կորավ։ Ո՞րտերից կրկին լույս ընկավ։ Բեկը ի՞նչ է գտել այդ ռամիկի զավակի մեջ, որ պաշտում, կրծքին է պահում նրան։ Ռամիկի աշխարհ դարձավ։

— Կամա՛ց, ականջը կընկնի,— հորն զգուշացրեց Միհրանը։

— Թող իրա ականջն ընկնի, իրա՜...— չզիջեց Բարխուդարը։— Վախենո՞ւմ եմ, ի՞նչ է։ Հիմի պարսիկներից սրով թափած հողերը կբաժանի տկլորներին, կտա այդ ճրռ մելիք Թուրինջին։

— Իսկ դու մի մոռանա Մխիթարի գործը։ Նա չէր Գաղանգայլի ճակատամարտի հաղթողը,— այս անգամ շշուկով միջամտեց մյուս որդին։— Նա չէ՞ր, որ Կալեր գյուղի տակ կտրտեց, աղեց Բաթալի Սուլթան ու Ասլամազ Ղուլի խաների բանակները։ Նա չջարդե՞ց Թահմազ Ղուլի Նադիր խանին։ Հը՞, մոռացե՞լ ես, հա՛յր։

— Հիշո՞ւմ եմ,— շպրտեց Բարխուդարը։

— Սպարապետը բարեբախտ ու հմուտ զորավար է, զորապետները սիրում են նրան, թաքուն չէ, ժողովուրդն էլ։ Իսկ որ նա ազնվական արյուն չունի, դա ո՞վ է հիշում։

— Ե՛ս։

— Լավ կլինի մոռանաս։

Բարխուդարը այլևս ձայն չհանեց։ Ի՞նչ ասեր, գոռա՞ր սպարապետի դեմ։ Խելառ հո չի՞։ Բավական է, որ Մխիթարը մի հոնքը շարժի, ու այս սև ամբոխը կհոշոտի իրեն, կգզի, ինչպես սոված գայլերն են գզում ոչխարին։

Մելիք Թուրինջի երևալը ծիծաղեցրեց շատերին։ Սա վատ էր նստել ձիուն։ Չգիտեր որ կողմը նայեր, քրտնել էր, մելիքական զգեստը ճրնձիուն։ Երբ մտավ հրապարակ ու տեսավ մելիքներին՝ շփոթված գլուխ տվեց նախ նրանց, ապա ժողովրդին։

Նրա հետ էր որդին՝ քաջուղեղ Թովմա հարյուրապետը, գոտու արանքում Մխիթարի ընծայած ատրճանակը։ Եկել էր նաև Տաթևում քահանա ծծված նրա կաղ հորեղբայրը՝ շփոթված ու զարմացած։ Խեղճը տառապում էր ձիու վրա։ Առաջին անգամն էր ձի նստում, մարդամեջ դուրս գալիս։

Մելիք Թուրինջյանները կանգնեցին տոհմիկ մելիքներից մի փոքր հեռու՝ մոլոր ու խորթ։ Թովման ասես ամաչում էր ձեռքին բռնած իրենց դրոշակից, որը կապույտ մետաքսի մի լայն շերտ էր՝ վրան անվարժ ձեռքով մի հորթ ու մի արծիվ ասեղնագործած։

Բարխուդարը աչքի պոչով նայեց ճրռ մելիքին, նրանց դրոշակին, կաղ քահանային ու ատամները կրճատացրեց։ Կամեցավ մի բան ասել եգանին, բայց միայն չարացած թքեց իր ոտքերի տակ։

Հանկարծ ամբոխը դղրդոցով գոչեց.

— Մխիթա՞րը...

Գլխարկները երկինք նետեցին։ Յուրաքանչյուրն աշխատում էր իր հարևանից բարձր բղավել։

— Փա՞ռք, փա՞ռք...

Մխիթարը հրապարակ մտավ սրընթաց։ Նրա ետևից, մի տասը քայլի վրա գալիս էր Տեր-Ավետիսը։ Փոքր Գորգին բերում էր սպարապետական դրոշը։ Ժողովուրդը ոգևորությունից գժվեց։ Զորավարները հետիոտն դարձան, մոտեցան ատյան քարին։

* * *

Զորի կողմից մի խումբ մարդիկ մտան ավան։ Նրանք պատառոտուն հագուստներով էին, ձեռքներին՝ գլուխները երկաթած մահակներ։ Տեսնելով ավանում լիք-լցված ժողովրդին՝ զարմացան։

— Պահո՞... ո՞նց պիտի տեսնենք Մխիթարին,— տնքաց մեկը։

— Կտեսնենք, Եսայի՛, դու ուժեղ բազուկներ ունես, ճեղքիր ամբոխը, իսկ մենք քո ետևից։

Նրանք մտան ծուռ զուկակը, որպեսզի խռնված ամբոխը պատռեն ու առաջ գնան։ Դեմառդեմ հանդիպեցին մի բարձրահասակ հովվի։ Սա մի ճերմակ գառ ուներ ուսերին։ Եսային գոչեց.

— Բարով, է՛, Առաքե՛լ հովիվ, էդ ո՞ւր ես զոռում, երբ բոլորը ձեր ավանն են շտապում։

Հովիվը տնկվեց, նայեց իր առջև կանգնած մարդուն ու միամիտ ժպտաց։

— Էդ դո՞ւ ես, Եսայի՛,— ասաց բարալիկ ձայնով։— Հարցնում ես, թե ո՞ւր եմ գնում։ Ջհանդա՞մը... Գնում եմ Պորտաքարի ուխտը... էնտեղ արդեն, ասում են, ձնծաղիկը դուրս է եկել. ժամանակն է։ Գնում եմ էս գառը Պորտաքարին մատաղ անեմ, որ աստծու աչքը վրաս ընկնի ու ինձ մի երեխա տա։

Մոտիկ կանգնածները հռհռացին։

— Ա՛յ թե կտա, հա՞...— ծաղրեց թաղիքե գլխարկով մի ռամիկ։— Ա՛յ խեղճ, որ Պորտաքարը զորություն ունենար, մեր գյուղի երեցին երեխա կտար, էլի՞։ Քսան տարի խաչերի ու մատուռների դռները մաշեց իր դոխլիկ իրիցկնկա հետ, բան դուրս չեկավ, կնիկը չպտղավորվեց։ Հիմի դու ես։ Սարում քոլում քիչ մնա, տնաշե՞ն... Կնկանդ պինդ խտտի... գլխի՞ ես... էլի դրանից մի բան դուրս կգա, թե չէ՞...

Հռհռացին բարձրաձայն, խայթող։ Եսային բռնեց հովվին, ետ հրեց։

— Օգնիր ճեղքենք, ճամփա բանանք, որ հասնենք ատյան քարին։ Այնտեղ հիմի մեծ բաներ կլսես։ Գնա՛նք, իսկ Պորտաքարը չի փախչի։

Հովիվն առաջ ընկավ։ Մյուսները հետևեցին նրան՝ իրենց բազուկներով ճամփա բանալով ամբոխի մեջ։ Քրտնելով, զգեստների ծվենները ցրիվ տալով ու գլխարկները կորցնելով, նրանք հասան հրապարակ։ Եսային չռած աչքերով, զարմացած-հմայված նայեց սպարապետին։ Առաջին անգամ չէր տեսնում նրան, բայց այս անգամ նրա աչքին Մխիթարն ուրիշ հմայք ուներ։ Էյնաքզանցք պատմուճանն իջնում էր նրա բարձր ուսերից։ Մահուդե կապայի փեշերը հասնում էին մինչև երկարաճիտ կոշիկների կեսը։ Սպարապետի դեմքին կար այն անհանգստու-

թյունը, որ մարդ ունենում է որևէ կարևոր գործ ձեռնարկելու սկզբին։

— Հիմա սպարապետը մի բարի բան կասի,— տեղը պնդացնելով ասաց Եսային։

Կողքին կանգնած մի շինական քմծիծաղեց։ Եսային խղճահարություն պատճառեց նրան։ Նա բոբիկ էր, կրունկները սև. քրքրված, անթյուն պատճառեց նրան։ Նա բոբիկ էր, կրունկները սև. քրքրված, գույն ու անթև կապան հագիվ էր ծածկում մեջքն ու փորը։ Ծնկներին հասնող վարտիքի վրա հազար կարկատան կար։ Նրա ոչ մի սպիտակ մազ չունեցող գլուխը բաց էր, մազերը՝ թաղիք։

— Իշխանավորից ի՞նչ լավ բան ես ուզում, ռամի՛կ եղբայր,— նրան մի լավ նայելուց հետո հարցրեց շինականը։— Կարծում ես մի սոմար[1] հո՞ղ է տալու ինձ, որ տանս եղած յոթ ուտող բերանը ծեփեմ։

— Կտա՛,— համոզված պատասխանեց Եսային։— Մխիթարը ռամիկի որդի է, ինքն էլ ռամիկ, հո մելիք չի՞, որ չտա։

— Բա մելիքները մեռա՞ծ են,— մեջ ընկավ գուսան Հեթումը։— Մելիքները չեն թողնի, որ Մխիթարն իր եղբայրներին օգնի։

— Գոնե հարկերը թեթևացնեն,— տնքաց գառն ուսին հովիվը։

— Գլխահարկը կվերացնեն,— համոզված ասաց Եսային։— էլ մեր գլխին շա՞հ կա, որ գլխահարկ տանք։ Գլխահարկը պրծա՞վ...

— Է՛, հե՛,— գլուխը տարուբերեց կոտող բեղերով մեկը։— Որ մելիքներին մնաց՝ մեզ կլափեն, իսկ դուք ասում եք հող կտան...

— Ջե՞ն տա, Սեմեո՛ն,— բորբոքվեց, դողաց Եսային։— Հապա թող փորձեն չտալ, հենց այսօր, այստեղ՝ մահակներով քո մելիքների գլուխները կջնջխենք։ Հա՛, է՛, հա՛... Բա ո՞նց։ Մենք պարսիկից մեր պապերի հողը խլենք, որ մեզ չտա՞ն։ Կջնջե՛մ... Հիմա ուրիշ օրեր են, ուրի՛շ...

Ոմանք կասկածանքով նայեցին Եսային։ «Խելագա՞ր է, ի՞նչ է»։ Բայց նրա հետ եկածները՝ Սեմեոնը, Մատուրը, Առաքելն ու մյուսները քաղցրությամբ էին նայում իրենց ընկերոջը, երևում էր, որ նա հարգանք է վայելում ռամիկների մեջ։

Մխիթարը ձեռքը բարձրացրեց։ Ձայները կտրվեցին։ Եսային վիզը ձգեց, սևացած թաթերը դրեց իր առջև կանգնած կարճահասակ Մատուրի ուսերին ու բերանը բաց նայեց սպարապետին։

— Ժողովուրդ սիրելի՛,— բարձր սկսեց Մխիթարը։— Աստծու ամենակարող զթությամբ ու ձեր բազկով և արյունով դուք այժմ ու հավիտյան ազատ եք պարսից իշխանությունից։

— Ապրի՛ աշխարհն ազատ...— դղրդաց ձորը. ձայները միացան, դարձան որոտ՝ ցնծագին, բայց և սպառնալի։

[1] Մոտ կես օրավար հող։

Մելիք Բարխուդարը թեքվեց Եգանի կողմը։

— Ականջներդ չեն պատռվո՞ւմ այս վայրենի ձայներից։

— Պատռվել պրծել են։ Հիմի դու ականջդ բաց պահիր, բերանդ՝ փակ,— խորհուրդ տվեց Եգանը։

Մխիթարը խոսում էր տաքացած, եռանդուն։ Նա թվեց այն հաղթանակները, որ տարել էին պարսից շահի ու խաների դեմ։ Ապա Տեր-Ավետիսից վերցրեց մի ոլորուն թուղթ, կարմիր թելից կախված կնիքը կպցրեց ճակատին, համբուրեց և բաց անելով՝ կարդաց.

— Այսօրվանից վերացվում է մեր իշխանության տակ գտնվող ժողովրդից գանձվող գլխահարկը...

— Մատա՛ղ...— դղրդաց վիթխարի ձորը։ Երկար ժամանակ ամբոխը չէր լռում, բայց երբ Մխիթարը ձեռքը նորից բարձրացրեց՝ դղրդոցը կտրվեց միանգամից։

— Պարսիկներից խլած մեր հողը՝ արտերը, այգիները, արոտները, ջրերը բաժանում ենք անհող ռամիկներին ու շինականներին։ Մի ռամիկի ծխին տրվում է երկու սոմարի վարելահող, արոտատեղ, խոտհարք, նմանապես և ջրից ձրի օգտվելու իրավունք...

Այս անգամ արդեն ժողովրդի ոգևորությունը պատռեց ամեն սահման։ Գլխարկների ամպը նորից բարձրացավ։ Բղավում էին՝ բերանները ճեղքելով, կոկորդները պատռելով։ Գոռում էին, ծառս-ծառս լինում, գրկում միմյանց, համբուրվում։ Թվում էր, թե բոլորը խելքները կորցրել են։ Միայն մելիքներն էին լուռ, հանդիսավոր։ Թեև ցույց չէին տալիս, որ երկնչում են, բայց պապանձվել էին ահից։

Եսային արմունկներով հրմշտեց իր հարևաններին ու, մոտենալով Առաքելին՝ ձեռքը մեկնեց նրա ուսի գառանը։

— Տո՛ւր, Առաքե՛լ եղբայր, հոգի՛դ սիրեմ, գառը տուր.— խընդրեց նա։

Շշկլված հովիվը չհասկացավ, թե ինչ է ուզում իր վաղեմի ծանոթը։ Եսային նրա ուսից պոկեց գառը ու գիրկն առած՝ վազեց դեպի ատյան քարը։ Նույնիսկ զինվորները չհասցրին արգելել նրան։ Նա չոքեց ատյան քարի առաջ, հենց մելիքների դիմաց ու մնաց՝ ականջը ձայնի։

— Այսօրվանից վերացվում է ռամիկների ու շինականների մարմնական պատիժը,— գոռում էր Մխիթարը։— Այն իշխանավորը, որ կհանդգնի մտրակի մի հարված հասցնել իր ռամիկին կամ շինականին, փոխարենը տասը կստանա։

— Բերանդ օրհնվի՛, Մխիթա՛ր,— եռաց, խշշաց ամբոխը ու դարձյալ բազմագույն, բազմաձև գլխարկները պարեցին օդում։

Մելիք Բարխուդարի դեմքը դարձել էր ևս ածուխ։ Քունքերն այրվում էին կատաղությունից։ Ոսկրոտ մատներով տրորում էր գոտու արծաթե ծայրը։

— Խո՞լ ես, Միհրա՛ն, կորչո՞ւմ ենք,— ատամները կրճտացրեց նա։— Հիմա մենք շուն ենք, կատու ենք, աղբ ենք։ Հիմի տերը ռամիկն է։ Լսո՞ւմ ես։

Որդին ամուր քաշեց նրա թևը, որ լռի։ Եսային ճերմակ գառը գցեց սպարապետի ոտքերի տակ ու մորթեց։

— Մատաղն ընդունելի՞...— ոգևորվեց ժողովուրդը։

Եսային բռնեց Մխիթարի ձեռքը, համբուրեց ոլորուն թուղթն ու մերկ թևերը տարածելով՝ դարձավ ժողովրդին.

— Մենք էլ մատաղ հայոց հողին, մատա՛ղ...— Ու վազեց իր տեղը։

Մխիթարը առիթից օգտվելով, Տեր-Ավետիսին ասաց.

— Մելիք Բարխուդարին նայիր, կարծես կացնի կոթ է կուլ տվել։

— Թող տապակվի,— շշրտեց Տեր-Ավետիսը։— Դու քո գործը տես։

— Վերացվում է կոռն ու բեկարը,— շարունակեց սպարապետը։— Յուրաքանչյուր ծուխ մելիքին կտա միայն տասանորդ։

Դրա թողած տպավորությունը շշմեցուցիչ էր։ Բայց Մխիթարը էլի շարունակեց.

— Իրավունք է տրվում մեր իշխանության տակ ապրող շինականներին ու ռամիկներին վաճառել իրենց հողն ու տունը և մի մելիքությունից անարգել անցնել մյուսի սահմանը՝ ըստ իրենց կամքի ու ցանկության։

— Ելուզա՛կ...— ատամների արանքից շշրտեց մելիք Բարխուդարը, և ձեռքը ակամա գնաց դեպի թուրը, բայց ուշքի եկավ իսկույն։

Սպարապետը դարձավ ժողովրդին.

— Հոտն առանց հովվի գայլի բաժին կդառնա ու կմատնվի կորստյան, ասել են սուրբ հայրերը։ Ուստի հրամայում ենք՝ հպատակվել ձեր տերերին։ Մելիքական կալվածքների կամ ունեցվածքի վրա ձեռք բարձրացնողը կդատապարտվի մահվան։ Բոլորդ պարտավոր եք տունը մի զինվոր տալ մելիքի զորքին՝ մշտական ծառայության համար։

Մելիքների շարքում ուրախ շշուկ անցավ։ Իսկ երբ սպարապետը հայտնեց, որ պարսիկներից խլած ջրաղացները, ձիթհանները, անտառները, ինչպես և դուքաններն ու շուկաները որդոց-որդի սեփականություն են տրվում մելիքներին, և ուրիշները դրանցից օգտվելու դեպքում պարտավոր են հարկ վճարել, մելիքները թեթևացած հոգոց հանեցին։ Բարխուդարի աչքերը շողացին։ Պակի զորապետը հորն ասաց.

— Հիմա տեսա՞ր, որ մենք զրկված չենք,— ու գոչեց.— Ապրի՞ Մխիթարը։

Մխիթարը ձայնը բարձրացրեց։

— Մելիքների զորագնդի հարյուրապետներն ու տասնապետները նշանակում եմ միայն ես։

«Խորամա՛նկ,— մտածեց Բարխուդարը։— Մի ձեռքով տալիս է, մյուսով՝ առնում։— Զորքիս մեջ իր ականջներն է ուզում ունենալ»։

— Զորքը հպատակվում է մելիքին անծպտուն,— խստությամբ ավելացրեց սպարապետը։— Մելիքությունը որդոց-որդի է ու կպաշտպանվի Հայոց ժողովի օրենքներով ու զորքով։

— Փա՜ռք,— այս անգամ գոռացին մելիքները։

— Մատա՛ղ,— բղավեց Բարխուդարը։

Գյուղերից մարդիկ առանձնացրին՝ պարսիկներից ետ խլած հողերը ծխերի վրա բաժանելու համար։ Վիճեցին, աղմկեցին ու սկսեցին ցրվել։ Եսային գնաց յուրայինների հետ։ Սակայն հրապարակից դեռ դուրս չէր եկել, երբ Փոքր Գորգին հասավ նրան։

— Սպարապետը կանչում է, է՛յ,— ասաց չարացած։

— Հետը գավաթ բռնող շունի՞, ի՞նչ է,— ծաղրեց Եսային։

— Թուրն է ուզում փորձել շլինքիդ,— քրքջաց Փոքր Գորգին։— Գնա՛նք, այսօր սպարապետի քեֆը տեղն է, տեսնես ի՞նչ պատվի կարժանանաս։

— Եթե գլուխս էլ պահեմ՝ հերիք է, բայց գնանք,— Եսային ուսի մորթած գառը հանձնեց ընկերներին ու գնաց, հանդուգն կանգնեց Մխիթարի առաջ։

— Անունդ ի՞նչ է,— հարցրեց սպարապետը։

— Անուն ունե՞մ, որ...— պատասխանեց գրգռված Եսային։— Եսայի էի, բայց այն օրից, ինչ տուն-տեղ կորցրի՝ դարձա բնից քշած շուն, կորցրի անունս։ Իմ ընկերներն են միայն իմանում, որ իմ անունը Եսայի է։ Մյուսները «գող», «շուն», «գել», սատանան գիտի, թե էլ ինչպես են անվանում ինձ...

— Ո՞ր գյուղից ես։

— Անտուն մարդուն էլ կհարցնե՞ն, թե որ գյուղից ես։ Այսօր այստեղ եմ, եկա՝ լսեմ, թե ինչ բարի բան պիտի ասես, վաղը կսլանամ Նախիջևան, մյուս օրը՝ Երևան, էն մյուս օրն էլ ինքը՝ սատանն կիմանա, թե որտեղ կլինեմ։ Պորտս Ճակատեն գյուղում են կտրել, պապերիս գերեզմաններն էլ այնտեղ են։

— Քանի՞ տարեկան ես։

— Հազա՜ր, հա՛, հա՜... Ի՜նչ հազար, երկու, երեք հազար ասեմ։ Այնքան տարեկան եմ, որքան մեր էս հողը, կամ ու կլինեմ...

— Կուզե՞ս մասնակից լինել այսօրվա իմ սեղանին, հետս թաս բռնել։

— Մերկ եմ ու ոջլոտ, տե՛ր սպարապետ։ Կզզվես ինձանից։

Սպարապետը Փոքր Գորգուն հրամայեց Եսայուն տանել ամրոց, հագուստներ տալ ու բերել իր մոտ։ Ապա, երբ նժույգի վրա էր, կանչեց տիրական.

— Է՛յ, Եսայի ես, թե ինչ շարք, այսօրվանից դու տասնապետ ես։ Հասկացա՞ր, որ սրտումդ արիություն լինի, հարյուրապետ էլ կդարձնեմ։ Ճակատենում ազգ-հարազատ ունե՞ս։

— Մի որդի ունեմ։ Փոքր էր, ծախեցի գյուղատիրոջը։ Չգիտեմ՝ կա՞, թե գլուխը կերել են,— պատասխանեց՝ լսածին չհավատացող Եսային։

Սպարապետը գոտուց պոկեց թուրն ու մեկնեց նրան։

— Վերցրո՛։ Սրանով պաշտպանիր այն հողը, որ վաղը կստանաս։ Հավաքիր քեզ նմաններին։ Շա՞տ են։

— Շա՜տ...— խուզարկու հայացքով նայելով թանկագին թրին՝ պատասխանեց Եսային։— Որ հավաքեմ, մի երեք հարյուր հոգի կլինեն։ Մատուրը, Առաքելը, Սեմեոնը, շատերը։ Հավաքե՞մ։

— Հա՛,— պատասխանեց Մխիթարը։— Հիմա գնա, բոլորին հավաքիր մի տեղ, թող սպասեն։— Նա թամքից կռացավ, շրթունքները մոտեցրեց Եսայու մազմզոտ ականջին։— Ասա, ես եմ խնդրել, որ սպասեն։ Հետո կգաս ինձ մոտ։ Բոլորին զենք կտամ, զգեստ ու ոոճիկ էլ, տունուտեղի տեր կանեմ։ Ախր, սատանա՜ն ձեզ տանի, չէ՞ որ դուք իմ եղբայրներն եք։ Դե, գնա՝ կամքս հասցրու նրանց, թե չէ՝ կցրվեն...

***

Սպարապետը ձին թոցրեց, հասավ մելիքներին։

— Երկիրը շենանում է, տե՛ր Բարխուդար,— ուրախ բացականչեց նա՝ ձին հավասարեցնելով Խնձորեսկի տիրոջը։

— Հա՛, հա՛,— նրա ուրախ տրամադրությունը հափշտակեց Բարխուդարը.— շենանում ենք, փա՜ռք արարչին։

Ծունկ-ծնկի, ուրախ գնացին դեպի ամրոց։ Մխիթարը լավ էր հասկանում, որ Բարխուդարի ուրախությունը շինծու է, երեսանց. գիտեր, որ նրա սրտում օձ կա։ Բայց ցույց չէր տալիս, թե տեսնում է դա։ Երբ մոտեցան ամրոցի դարպասներին, Բարխուդարն ասաց.

— Համարձակվում եմ քեզ մի խորհուրդ տալ, տե՛ր սպարապետ։

Դու ռամիկին շատ երես մի տուր, եթե ուզում ես, որ մեր տերության հիմունքները հաստատ մնան։

— Տերությունը հաստատ է մնում ժողովրդով,— հանգիստ պատասխանեց սպարապետը։

— Այդպես է,— իսկույն համաձայնեց Բարխուդարը։— Բայց ես քեզնից մի տասը շապիկ ավելի հագած, թագավորների ու իշխանների արարքներին ծանոթ քավթառ եմ։ Նրանք աքցանի բերանում են պահում ժողովրդին։ Այնպես են անում, որ այդ սև հեղեղը հաց ճանկելուց բացի, ուրիշ հոգս չունենա։ Մի՛ մոռանա այդ բանը։ Այդպես է ամեն տերության մեջ։ Այդ սոված արարածներին պետք է շշմեցրած պահել։ Քաղցր խոսքեր ասա նրան, բայց նշտարը սուր պահիր ձեռքիդ, որ ծակես։ Շշմած ու կուշտ ռամիկը ապստամբ է. կարող է ոտնատակ տալ արքայական գահերն անգամ։

— Արդար ես, տե՛ր Բարխուդար, միակամ եմ քեզ,— կռացավ, կամաց, ասաց սպարապետը։— Մի՞թե այդպես չարի ես։ Այսօրվա շնորհները, որ տվինք տկլորներին, զիզի-բիզի բաներ էին։ Մարմնական պատիժը վերացվում է, ասացի, բայց հետո էլ սպառնացի գլխատել նրան, ով իր տիրոջ մի հավին խեթ նայի։ Քի՞չ է։ Պարսիկից ետ խլած հողը տվի տկլորներին, ձերին չկպա, ձեզ անտառ տվի, ջրաղաց, ձիթհան։

— Քիչ չէ, մելիքները գոհ են,— ստիպված ասաց Բարխուդարը։

— Հիմա պետք է շոյել, խաբել ժողովրդին, տե՛ր Բարխուդար,— շարունակեց սպարապետը։— Ձեռքներս դեռ քարի տակ է։ Նոր ենք երկրի տեր դառել, ընտանի իշխանություն ստեղծել։ Թող փոքր-ինչ ամրանանք, լայնանանք. թող ռուսը գա, գնանք մեր Նախիջևանն ու Երևանն էլ ազատենք պարսիկից, Արարատյան դաշտում էլ ոտք դնենք, Շիրակում էլ, այն ժամանակ դու արքայական հարստության ու փառքի տեր կլինես, իսկ ռամիկի լեզուն կպոկենք։

Մխիթարը զարմանում էր ինքն իր ասածների վրա։ Ինչպե՞ս են լեզվին գալիս այդ ոչ իր, կեղծ խոսքերը, որ շռայլում էր իր թշնամուն։

Մտան ամրոց ու խմբով դիմեցին Մխիթարի տունը։

Կերուխումն սկսվեց բուռն։ Ուտում էին ագահ, խմում յոթ օրվա ծարավների պես։ Մելիք Բարխուդարը մեծ որդու՝ Միհրան հարյուրապետի հետ հարբեց շուտով։ Սկսեցին երգել, բռունցքները խփել սեղանին։ Մելիք Եգանը ծիծաղում էր ու անվերջ խմում սպարապետի ու նրա «փիլիսոփա» տիկնոջ արևշատության։

Քիչ էր խմում միայն Եսային։ Նա արդեն հասցրել էր կատարել սպարապետի պատվերը՝ ընկերներին հավաքել, թողել էր Մատուրի հին ծանոթ Զարմանդի տանն ու եկել ամրոց։ Փոքր Գորգին նրան զուգել էր

տասնապետի համազգեստով, մազերը խուզել էր տվել, ուղարկել բաղնիք։ Հիմա Եսային ինքն իրեն չէր ճանաչում։ Այնպե՞ս թեթև էր ու այնպե՞ս ազատ, ասես աշխարհի տերը լիներ։ Անսպասելի բախտից քիչ էր մնում պայթեր։

Հարբած Բարխուդարն ընկավ հատակին։ Մխիթարը աչքով արեց Եսայուն։ Երկուսով բռնեցին մելիքի ոտուձեռքից, տարան սրահին կից մի փոքրիկ սենյակ, գցեցին արջի մորթու վրա։

— Պատվերս կատարեցի՞ր, հարցրեց սպարապետը՝ լուրջ ու խոժոռ։

— Երկու հարյուր հիսուն ռամիկ զինվոր գրվեցին, կազմ ու պատրաստ սպասում են հրամանիդ, տե՛ր սպարապետ,— պատասխանեց Եսային։— Դեռ էլի կլինեն, շատերին կհավաքեմ։

— Ապրե՛ս,— ընդհատեց Մխիթարը։— Բոլորին զենք կտամ, վարձ ու հող։ Ով կին չունի՝ կպսակեմ։

— Կյանքդ երկար։

Նայեցին իրար ու ծիծաղեցին սրտանց։ Մխիթարը ոտքը դրեց մեռելի պես ընկած մելիքի կրծքին։

— Մուրթին դուր չեկավ այսօրվա մեր արածը, օ՛ձ է։

Եսային պատյանից կիսով չափ հանեց թուրը։

— Հը՞,— հարցրեց խորհրդավոր։

Սպարապետը բռնեց նրա թևն ու դուրս տարավ։

— Պետք չէ յուրայինի արյուն հեղել,— ասաց շշուկով։— Ձեռքներս դեռ քարի տակ են։ Հիմա միաբանություն է հարկավոր, Եսայի՛։ Նոր ենք երկրի տեր դառել։ Ստամբուլի սուլթանը հանգիստ չի նայում մեր ազատ լեռնապատառին։ Իսկ մելիք Բարխուդարը մեր ուխտին միաբան է, իմացի՛ր։

Ասաց ու ամաչեց։ Հենց այդ օրը, ամրոց գալիս մի՞թե նույնը չասաց նաև մելիք Բարխուդարին։ Ասաց. Երկուսին էլ խաբեց, ուրիշ ելք չկար։ Երկուսն էլ ուժեղ էին, արյան ծարավ։ Մեկը՝ դարավոր իշխողը, մյուսը՝ դարվոր ստրուկը։ Թեև խղճի խայթ զգաց Մխիթարը, բայց և այնպես գոհ էր, որ երկուսին էլ զսպեց։ Այդ բանը շատ էր հարկավոր իրեն, շա՛տ...

Եսային մտքում երդվեց հավիտյան հավատարիմ լինել Մխիթարին։ Թվաց, թե ինքն այնպիսի ուժ ունի, որ հիմա բոլոր մելիքներին կարող է ջարդել։ Հիշեց ընկերներին, որ հիմա սպասում են Զարմանդի տանը։ Նրանց հետ թիկունք կկանգնի Մխիթարին, չի թողնի, որ նրա մի մազին դիպչեն։

Էլի խմեցին, կերան։ Օրը մթնում էր։

***

Զագեձորի ամրոցից Եսային դուրս եկավ մի ոսկեգույն նժույգի վրա։ Նոր զգեստներով էր, կուշտ ու կուռ. ձին վետվետում էր, զենքերը զրնգում էին հրճվագին։ Թամբին կապած կաշվե խուրջինում մի քսակ լիքը արծաթ էր տանում իր մարդկանց։ Հպարտ էր, որ ահա զենք ու ձի ունի, սպարապետի հետ գավաթ բռնեց, և հիմա գնում է՝ իր ընկերներից մի զորագունդ կազմելու. իսկ վաղը, մյուս օրը սեփական հող կունենա։

Ատյան քարի մոտով անցնելիս, գլխարկը հանեց։ Ինչքա՜ն բան է փոխվել այդ օրն իր կյանքում։ Կարծես գլխովը դար է անցել։

Այրի Զարմանդի տան առջև ահագին մարդ էր խռնված։ Ձիավորին տեսնելով՝ նրանք ձայնները կտրեցին։ Ճանաչեցին։ Սա ձին պահեց։

— Հը՞, ինչո՞ւ պապանձվեցիք, ես ոչ վանքի վերակացու եմ, ոչ էլ պարսիկ հարկահան։ Ճանաչեցի՞ք, ի՞նչ է։

Կիսամերկ ու անոթի ընկերները շրջապատեցին նրան, ձիուց իջեցրին, ձին տարան ծածկի տակ։

— Ա՜յ, այսպես եղավ, եղբայրնե՛ր,— ասաց Եսային բարձրաձայն։— Առավոտյան ես անտեր-անտիրական թափառական էի, իսկ հիմա հայոց զորքի տասնապետ եմ։ Եթե աստված հաջողի, հարյուրապետ էլ կդառնամ, սիրելինե՛րս։ Իսկ դուք այսուհետև ոջլի ձեռքից խանձվող թշվառներ չեք։ Հիմա դուք շինական եք՝ հող ու ջրով։ Ով կամենա՝ կպսակենք, թեկուզ, մելիքի դստեր հետ, հա՜, հա՜։ Բա ո՞նց։ Հիմի մենք Մխիթար սպարապետի զինվորն ենք։ Ջրի հագուստ ու զենք կստանանք, նմանապես և ռոճիկ։ Հենց հիմա ես ձեզ արծաթ կբաժանեմ, սպարապետը տվեց։

— Արևդ շա՜տ, Եսայի՛, այդ, ախր, ո՞նց եղավ,— խենթացավ Ծատուրը։

— Եղածը՝ եղավ։ Զարմանդի որդու արևն էլ շատ, Փոքր Գորգուն եմ ասում, բարեխոսեց սպարապետի առաջ։

Բոլորը մտան Զարմանդի տունը։ Դա ժայռապատ քարանձավ էր։ Հենց շեմից ոչխարի կտոտի հոտ զգացին։ Կավե ճրագի լույսը հազիվ էր ցրում խավարը։ Մուտքի մոտ շնթռկած միականի գուսան Հեթումը մեղմ հնչեցնում էր իր նվագարանը։

— Էս ինչի՞ եք թթվել,— ուրախ գոչեց Եսային։— Հո տանը մնացած աղջիկներ չե՞ք։ Ուրախացե՛ք։

— Հեշտ է ասել,— ավելի բարձր կանչեց Սեմեոնը,— քո փորում հարսանիք է, մերումն սկի նշանդրեք էլ չի։ Ինչո՞վ ուրախանանք։

— Ձենդ տաք տեղից է դուրս գալիս,— ավելացրեց այրի Զարմանդը։

— Էն էլ ի՞նչ տաք... Գնա որդուդ հարցրու։

— Նա էլ քո կտորը։

— Հերիք է երեսծեծանք տաս, ա՛յ քույր, գնա գինի բեր,— հաշտացաց Եսային։— Ախր չգիտես, թե ինչեր եղան, է՛... Որդուդ հարցրու։— Նա մոտեցավ Զարմանդի տասներեք-տասնչորս տարեկան աղջկան ու, մի բուռ արծաթ լցնելով նրա գոգը՝ ասաց։— Գնա գինի բեր, էս գայլերի փորները լցնենք, աղջի՛կ ջան, արևի՛դ մատաղ, թե չէ սրանք հոգիս կհանեն։

Երեք հոգի գնացին աղջկա հետ։ Գտան Ազա գյուղացի գինեվաճառ Գիշուն, տարան շուկա, կրպակը բաց անել տվին ու գինի առան։ Լիքը գորակները բերին դրին Եսայու առջև։ Սա փորձեց գինին, հավանեց, նայեց յուրայիններին։

— Իսկ ոչխար պիտի մորթե՞նք, թե՞ ոչ։

— Արծաթը կիմանա, ունե՞ս,— հարցրեց Ծատուրը։

— Ունեմ, բա ո՞նց,— Եսային խուրջինից մի քսակ հանեց ու զընգացրեց գլխից վեր։— Ահա, ինքը՝ սպարապետը տվեց։ Ռոճիկ է։ Ախր մենք հիմա նրա զինվորներն ենք, հասկացեք։ Ամեն ամիս ռոճիկ կստանանք։ Վազեք մի երկու ոչխար բերեք, շո՛ւտ։

Սեմեոնը թիաձև ափը մեկնեց նրան։ Եսային արծաթ լցրեց նրա բուռը։ Սեմեոնը մի քանի հոգու հետ թռավ դուրս՝ ոչխար գնելու։ Եսային արծաթը բաժանեց ընկերներին։

— Էս արծաթը, իսկ զգեստներ ու զենք կստանաք երկու օր հետո։ Հող էլ կստանաք. ինքը Մխիթարն ասաց, հո լսեցի՞ք։

— Մխիթարը կտա, իսկ մելիքները կխլեն,— մեջ մտավ ցանցառ մորուքով, վազվզող աչքերով Ծատուրը։ Նա վանքապատկան գյուղացի էր եղել։ Վանականները նրան սաստիկ խոշտանգել էին տարիներ առաջ, երբ նա խիստ գրգռված կրկնել էր Մեխլու վարդապետի ասածները. «Եթե մեկն իր կյանքում մի բարձր հոգևորական սպանի, ապա կքավի իր բոլոր մեղքերը»։ Մահից ազատվել էր փախուստ տալով։ Տասնհինգ տարի է, ինչ փախստական է. Եսային վճռել էր նրան էլ զինվոր վերցնել։ Ծատուրը քաջ էր, նաև սուր խելքի տեր։

— Դու ինձ ինչի՞ տեղ ես դրել, Ծատո՛ւր եղբայր,— մեղմ ասաց Եսային։— Մխիթարն ասածի տերն է։ Ո՞ր մելիքը սիրտ կանի Դավիթ-Բեկի հրամանը զանց անել։ Քո մելիքների վզակոթերին պինդ է տվել Բեկը, իմացի՛ր։ Նրանց աբլորների քամակն էն տեսակ ձեթ կքսենք, որ էլ կյանքներում ծուղրուղու չկանչեն։ Թող Դավիթ-Բեկի արևը երկարի, Մխիթարինն էլ։

— Երկար թևեր ունեցող աբլորին խուզում են, Եսայի՛։

— Եթե թողնենք,— համառեց Եսային։

— Դու ի՞նչ ես, ո՞ր...— չզիջեց Ծատուրը։— Հրեն օսմանլուն մեզ վրա մոմոում է՝ միս տեսած շան պես։ Սուլթանը կուլ կտա՞, որ հայն իր երկիրը, իր իշխանությունն ունենա։ Կռիվ կլինի, էլի շինականի ոսկորներով կծածկվի մեր հողը։

Բոլորը մոայլվեցին։ Դավաթները պարպեցին լուռ։ Զարմանդը շարացած կանգնեց Ծատուրի գլխավերևը։

— Ի՞նչ ես կռավում, ագռա՛վ։ Լեզուդ կծիր։ «Կռի՛վ կլինի»։ Թող լինի։ Հետո ի՞նչ։ Առանց կռվի ո՞վ քո հողն ու ջուրը կթողնի քեզ. ով կթողնի, որ դու սոված չմնաս։ Ուրիշը քեզ վրա՞ է գալիս, դու էլ նրա վրա գնա։ Հասկացա՞ր։ Էլ առաջվա պես չպիտի լինի։ Եթե մեկն ինձ ասեղով ծակի, ես նրա սիրտը մախաթ կխրեմ, հա՛... Ես էլ եմ զինվոր գրվում, Եսայի՛ եղբայր, բա մինուճարիս մենակ թողնե՞մ։ Չէ՛։ Գրվում եմ, պրծավ-գնաց։ Իսկ հիմա կտրեցեք կռավոցներդ, վայվույի ժամանա՞կ գտան։ Խմեցեք, ուրախացեք, տնաշենե՛ր...

Նա բռնեց գլուխը կախած գուսանի ուսերն ու թափահարեց։

— Սազդ լարիր, է՛, մեռելատուն չես եկել։ Քեֆ արեք, է՛յ։

Տգամարգիկ ուսները շտկեցին։ Ծատուրը մեղմ ժպտաց։ Գոհ էր։ Իր ուզածի պես եղավ, կրքեր բորբոքեց։ Հեթումը սազը զնգացրեց։

«Թե շաբաթ-շաբաթ քեզ մի պաչիկ տամ,
Քեզ մի պաչիկ տամ,
Դու էլ առ, թե կարաս։

Թե ամսե-ամիս կոճակս արձակեմ,
Կոճակս արձակեմ,
Ոտս մուտ, թե կարաս։

Թե տարեց-տարի քեզ կտրիճ որդի,
Քեզ կտրիճ որդի
Կտամ, թե կարաս...»։

— Ա՛յ, հա՛յ... օխա՛յ...— գոչեցին այս ու այն կողմից։ Արյունը եռաց երակներում։ Խորովածն ու գինին բացեց լեզուները, բեղերը սղալեցին, հռհռացին՝ իրար մերկ ուսի խփելով։

Գուսանը երգը փոխեց։ Սազի ձայնը լալագին դարձավ, ու գինին ասես սառավ երակներում։ Տխուր մի երգ ծորաց, որ բոլորին հայտնի էր օրորոցից։ Նորից զգացին իրենց թափառական վիճակի ծանրությու-

նը։ Հին ու սուրբ երգ էր՝ ինչպես մենավոր խաչքար։ Հիշեցին Մեխլու վարդապետին, որի հիշատակին էր երգը։

«Կռիվ եղավ Քաշաթաղի լեռներում,
Ռամկի արյամբ ծաղիկները սևացան...»։

Եսային չհամբերեց, ձեռքի ոսկորը խփեց գուսանին։

— Բավակա՛ն է, քո՛ռ բու, բավական է կռավես, երգն էլ արյունոտես, երգը՛... Պարի եղանակ նվագիր, շո՛ւտ։

Սազը ուրախ հնչեց։ Եսային վեր կացավ, թուրն ու գոտին ուղղեց, բռնեց մոր մոտ կանգնած աղջկա ձեռքն ու քաշեց պարի։ Պարեցին ծափերի տակ, արյունոտ երգը մոռացան։ Գինին էր մոռանալ տալիս։ Եսային համբուրեց աղջկա ճակատը, բռան մեջ արծաթ դրեց։

— Պսակվելու աղջիկ ես, Մարո՛,— ասաց հուզված։— Քու տիրոջ աչքը ուրիշի վրա չի լինի, բերած երեխեդ էլ կուշտ կլինի, հա՛... Հարսանիքիդ քավորը ես կլինեմ։

— Աստված ուզի, Եսայի՛,— կանչեց Ծատուրը։

— Խլո՛ւմ են...— հանկարծ գոռաց մինչ այդ լուռ Սեմեոնը, որի մերկությունը հազիվ էր ծածկվել այծի մորթով.— խլում են ամեն բան, ամեն ի՛նչ։— Նա պատռեց այծենու օձիքն ու բոլորին ցույց տվեց հին վերքի սպին։— Ուզունբեդնի ճակատամարտում եմ ստացել, պառավները մի կերպ բուժեցին։ Պարսիկի թրի տեղն է։ Եղբայրս սպանվեց, ես մնացի։ Բա այս վերքը երկու սոմարատեղ հող չարժի՞, որ ասում էիք՝ չեն տա, հը՞...— Նա խփեց գլխին, լաց եղավ, հետո փռվեց մերկ գետնին ու խոմփացրեց։ Հարբել էր։

Գուսանը մի նոր երգ սկսեց։

Առավոտյան Եսային իր ռամիկներին տարավ Ջագեձոր։ Երեք օր մնացին այնտեղ։ Բոլոր երկու հարյուր հիսուն անտուններին զգեստ ու զենք տվին։

Մի շաբաթ հետո Մխիթար սպարապետը Եսայու զորագնդի ուղեկցությամբ մեկնեց գավառները։ Գնում էր ստուգելու, թե տանուտերերն ու մելիքներն ինչպես են հողը բաժանում ռամիկներին, կատարում Դավիթ-Բեկի ու իր հրամանը։ Ջարացած էր, դաժան։ Հենց առաջին գյուղում մի տանուտերի կախեց այն պատճառով, որ սա փորձել էր մի այրի հարսի մոլորեցնել, հետը կենակցել, նոր միայն հող տալ։ Հարսը մերժել էր՝ հրաժարվելով այնքան սպասած հողապատառից։

Տանուտերի կախելու լուրը թռավ ամեն տեղ։

Իսկ գարունն արդեն հաստատուն քայլերով փռվում էր լեռնաշխարհում։

ՔԱՎՈՒԹՅԱՆ ՆՈՒՅԱԶԸ

Ոչ մի տարի գարունն այնքան շռայլ չէր եղել, ինչպես 1724 թվականին։ Լեռնաշխարհը կանաչեց միանգամից։ Հովիտները դարձան զմրուխտ, անտառները զանգրացան։ Կանաչեցին նույնիսկ ժայռերն ու տների տափակ կտուրները, հնադարյան վանքերի պատերը։ Համաստիլ կանաչ էր՝ ուրախություն ու զարթոնք բերող գարուն։

Հենց որ ձյունները հեռացան դեպի լեռնագագաթները, Մխիթար սպարապետը նորից սկսեց շրջագայել գավառները՝ անձամբ հետևելու հողաբաժանման գործին, ստուգելու գյուղական ռազմաշրջանների վիճակը։ Անսպասելի երևում էր ամենահեռավոր շեներում անգամ։ Մելիքներն ու տանուտերերը հանկարծակիի էին գալիս, հապշտապ դիմավորելով նրան՝ բացատրում, թե ինչ են արել իրենք։ Ամեն տեղ ուրախություն էր։ Հող ստացած շինականներն ու ռամիկները լիաբերան օրհնում էին Դավիթ-Բեկին, Մխիթարին հյուր էին տանում՝ ոտքերի տակ գառ ու հորթ մատաղելու։

Տունդարձի ճանապարհին սպարապետը մտավ Պղնձաքար։ Մարդ ուղարկեց մելիք Բարխուդարի ետևից։ Երբ սա եկավ, ինքն անձամբ որոշեց երկու մելիքների հողերի սահմանը՝ ցցաքարերով նշելով այն։ Երբեմնի պարսից խաներին պատկանող հողերն իր ձեռքով բաժանում էր պղնձաքարցի անհող ռամիկներին, գաղթականներին։

Երբ արդեն ամեն ինչ կատարել վերջացրել էր, երկու մելիքներին պատվիրեց հաշտ ու խաղաղ հարևան լինել։

— Եղեք բարի դրացիներ, ձեր սրտից հանեցեք քենն ու ոխը,— ասաց նա,— իմացեք, խստագույնս կպատժվի նա, ով հարևանի մի ծառին անգամ դիպչի։

Մելիքները խոստացան կատարել նրա կամքը։ Բայց սպարապետն զգաց, որ Բարխուդարը դժգոհ մնաց այն սահմաններից, որ նշանակեց ինքը։

Մելիքության սահմանները նշանակելուց հետո սպարապետը բազմության ներկայությամբ դաշտում ստուգեց Պղնձաքարի զորական ջոկատը, Թովմա տասնապետին հարյուրապետ կարգելով՝ նրան և նրա գունդն իր հետ վերցրեց ու վերադարձավ Ջագեձոր։

Գնաց նաև մելիք Բարխուդարը։ Հենց որ սա բաժանվեց սպարապետից՝ դիվահարությունը բռնեց։ Նա իրեն ստորացված ու թալանված էր համարում։ «Սրտին է սեղմում ճրա մելիքին,— մտքում խոսում էր նա,—

կարծես իր հոր հողերն էր, որ առատ-առատ բաշխեց Թուրինջին։ Հարսի թշով փեսին պատիվ է անում...»։

Գնալով Բարխուդարի կատաղությունը սաստկանում էր։ Սպարապետը պարսիկներից ետ խլած ամենալավ հողերը տվեց պղնձաքարցիներին. երկու գետ ու կաղնու մի մեծ անտառ էլ տվեց նրանց, որոնց վրա աչք ուներ ինքը և համոզված էր, որ դրանք իրեն բաժին կընկնեն։ Չլինեին այդ գաղթականները, այդ ամենն իրեն կտրվեր։ Բարխուդարի աչքերը մթնում էին, բանականությունը կորցնում էր, երբ հիշում էր Պղնձաքարը։ Այնտեղ արդեն վեց հարյուր հիսուն ծուխ կար։ Բայց դա դեռ բոլորը չէր։ Մի երեք հարյուր ծուխ էլ հավաքվել էին Միկենտ գյուղի ավերակներում։ Մխիթարը Թուրինջի տնօրինությանն էր հանձնել նաև մի ժամանակ պարսից արքաներին պատկանող Վերին Շեն, Սյունդառ, Վանքի տափ ու Բռունք գյուղերը։

«Վիզս կտրել է կամենում,— դառնաղի մտածում էր Բարխուդարը, լավ հասկանալով, թե Թուրինջին հզորացնելով՝ ինչի է ձգտում Մխիթարը։— Մի օր էլ ազգատոհմս կկտրի և տեր կկանգնի իմ ամրոցին ու գյուղերին,— շարունակում էր մտածել նա՝ զգալով, թե ինչպես է իր մեջ ժամ առ ժամ մեծանում դեպի Մխիթարն ունեցած ատելությունը։— Հանդուրժե՞մ պիտի, որ աչքերս բաց ինձ խորտակեն»։

— Այդ ճրի շնաոհմակը հետը տարա՞վ,— երկար լռությունից հետո հարցրեց նա Միհրանին։

— Տարավ, այո՛,— պատասխանեց որդին։

— Ինչո՞ւ տարավ։

— Աստված գիտի, հա՛յր,— ուսերը ձգեց որդին։

— Պղնձաքարում զորք չթողե՞ց։

— Ո՛չ։

Այլևս հարց չտվեց, բայց հենց որ հասան Խնձորեսկ, հրամայեց գունդը պատրաստել արշավի։

— Երկրի երեսից պիտի ջնջեմ Պղնձաքարի ճրո մելիքությունը,— կատաղած հայտնեց որդիներին։— Պիտի ջնջեմ, բոլորին կոտորեմ... Առիթն է։ Պղնձաքարում զորք չկա, պետք է մոխիր անել այդ ավազակաբունը։ Գնա՛նք, կամ հիմա, կամ՝ երբեք։

Որդիները ահուդողի մեջ ընկան։ Միհրան հարյուրապետը համակամ էր հորը, իսկ Պակին արյունալի հետևանք էր տեսնում հոր արարքի մեջ։

— Պառակտում ես սերմանում հայոց տան մեջ, հա՛յր,— զգույշ նկատեց նա,— ուշքի եկ ու հեռու կաց նման մտքից։

— Կտրի՛ր,— դիվոտվեց Բարխուդարը։— Եթե ուզում եք, որ որդոորդի շարունակեք իմ մելիքությունը, իմ տոհմը, ապա պիտի ոչնչանա Պղնձաքարը։ Վերջացա՛վ... Կամ մենք, կամ՝ նա, ուրիշ դուռ չկա։

Գիշերով դուրս եկան ամրոցից։ Լուր տարածեցին, թե գնում են գարնանային վարժանքի։ Նույն օրվա երեկոյան հասան Պղնձաքարի մատույցներին ու հետիոտն դառնալով՝ մթության հետ դարանակալ մոտեցան նրան...

***

Լուսաբացին Զագեձորի դետք զինվորները ճանապարհին մի սև կետ նկատեցին. սկզբում կարծեցին, թե գազաններից հալածված անտեր ձի է դա, բայց հետո նկատեցին, որ դեպի ամրոց սուրող ձիու մեջքին կպած է մի փոքրիկ արարած։ Շուտով տարօրինակ ձիավորը հասավ ամրոցի դռանն ու ծղրտաց.

— Դուռը բաց արեք, հե՛յ...

Զինվորները զարմացան։ Ձիավորը տակավին մանուկ աղջիկ էր։ Նա ձեռքերը սպառնագին թափահարում էր ու պահանջում, որ դուռն իսկույն բաց անեն։

— Իսկ դու ո՞վ ես,— հարցրին վերևից։

— Ես Պղնձաքարից եմ գալիս,— զայրացած պատասխանեց աղջիկը։— Ես Թովմա հարյուրապետի քույրն եմ։ Լսո՞ւմ եք, դուռը բաց արեք, սև լուր եմ բերել...

Ամրոցի դուռը բաց արին։ Աղջիկը ներս ընկավ ու ճչաց ահաբեկ.

— Օգնեցե՛ք, հե՛յ... Թովմա եղբա՛յր, հասի՛ր... Մերոնց կոտորում են...

Իրարանցում ընկավ. ամրոցի շները հաչեցին տագնապով։ Զինվորներն ու բնակիչները քնաթաթախ նետվեցին դուրս։ Վազելով եկավ Թովման ու, անթամբ ձիու վրա տեսնելով տասնմեկամյա քրոջը՝ գունատվեց։ Զգալով, որ տանը մի ծանր բան է պատահել՝ նա աղջկան պոկեց ձիուց ու թափահարեց։

— Ի՞նչ է պատահել, Ծամա՛մ։

— Մելիք Բարխուդարը մեծ զորքով հարձակվել է մեզ վրա,— փղձկալով աղաղակեց աղջիկն ու թուլացավ եղբոր գրկում։— Հավաթառին հարձակվեցին։ Ապերն իմացավ, անցքերը փակեցին։ Հիմա կռվում են։ Ես այնտեղ էի, որ Վաչագան հորեղբայրն ու Իսակ ապան սպանվեցին։ Գաղթականներից էլ չորս հոգի մեռան։ Դե, հասիր, է՞, Թովմա՛... օգնեցե՛ք։

Թովման իր օգնական տասնապետին հրամայեց զորքը հանել, իսկ ինքը վազեց սպարապետին զեկուցելու։ Նրա վզովը փաթաթված Ծամամը արագ պատմում էր.

— Մեծ տատն ինձ թոկով կախեց քերծից։ Իշա ձորը, այնտեղ, ուր Սրապ քեռու ձիերն են։ Քեռին ինձ դրեց ձիու վրա ու ցույց տվեց Զագեձորի ճանապարհը։ Աչքերը վատ են տեսնում, ոտքն ուռել է, ինքը չկարողացավ գալ... Սկի ճանապարհին չեմ ուշացել, Թովմա՛, էն խաչը...

Քարե սանդուղքների գլխին նրանց առաջ դուրս եկան Մխիթարն ու տիկին Սաթենիկը։

— Ի՞նչ տագնապ է,— հարցրեց տիկինը։

Թովման Ծամամին ցած դրեց։

— Մելիք Բարխուդարը հարձակվել է մեր գյուղի վրա, տե՛ր սպարապետ,— հևաց նա,— կոտորում է մերոնց, հրաման տուր զորքս տանեմ օգնության։

— Ի՞նչ, ի՞նչ,— կապտեց սպարապետը։— Լուրն ստո՞ւյգ է։

Ծամամը պատմեց այն, ինչ արդեն պատմել էր եղբորը և նորից հեկեկաց դառնաղի։ Տիկին Սաթենիկը գրկեց նրան։

— Մի՛ վախենա, աղջի՛կս...

Սպարապետը ոտքը խփեց գետնին։

— Խռովությո՞ւն է գցում մելիք Բարխուդարը, ապստա՞մբ է։ Կուլ չի տա, գլուխը կկորցնի։ Ես նրա որջը կվարեմ. որձակոտոր կանեմ տոհմը։ Ժամանակն է, հերի՞ք է սպասեցի, ներեցի։

Նա հրամայեց կանչել Տեր-Ավետիսին։ Սա եկավ զինված, կատաղի։ Իմացել էր եղելությունը։ Հեգնորեն ժպտաց, ռունգները լայնացան՝ ախոյան տեսնող ցուլի պես։ Սպարապետը նրան հրամայեց Եսայու աշխարհազորային գնդի ու Թովմայի ջոկատի հետ շտապ գնալ մելիք Թուրինջին օգնության։

— Եղիր անխնա,— փրփրեց նա։— Ոչ մի զիջում։ Կոտորիր։ Իսկ դավաճանին կապոտած բեր ոտքս։ Շտապի՛ր...— Ապա իր հարյուրապետներին հրամայեց ոտքի հանել Զագեձորի գունդը՝ Խնձորեսկի վրա արշավելու համար։

Տիկին Սաթենիկը սփրթնեց։ Սկսվում էր այն, ինչից ամենից առավել էր վախենում՝ եղբայրասպան պատերազմը։ Պետք է կանխել, կանխել այդ աշխարհաքանդիչ կռիվը։ Սակայն ինչպե՞ս, ինչո՞վ։ Մի՞թե Մխիթարը ունկն կդնի իրեն։ Երբե՛ք։ Գիտեր, որ ամուսինը առիթ էր որոնում Բարխուդարին պատժելու, և առիթը եկել էր։ Բայց տիկինը հասկանում էր, նաև, որ դա ոչնչով չի օգնի իրենց գործին, որ դա մի

նոր աղետի դուռ բաց կանի Հայոց աշխարհի համար։ Նա տակավին դողդողացող Ծամամին տարավ որդիների սենյակը, թողեց նրանց մոտ ու մտավ իր գրատունը։ Պետք է կատարվածի մասին անհապաղ հայտնել Դավիթ-Բեկին։ Դա էր միակ ելքը։ Միայն Բեկը կարող էր զսպել ամուսնու բարկությունը, կանխել եղբայրասպան պատերազմը։ Թանաքը թափելով, նա շտապ երկտող գրեց Բեկին ու կանչեց իրեն հավատարիմ մի ծառայի։

— Զի հեծիր, իսկույն թռիր Հալիձոր։ Այս նամակը հասցրու Դավիթ-Բեկին։ Շո՛ւտ...

Այն պահին, երբ Տեր-Ավետիսը Թովմայի ու Եսայու գնդերը ճեպով տանում էր դեպի Պղնձաքար, ամրոցի դարպասներից դուրս սլացավ Սաթենիկի սուրհանդակն ու սուրաց դեպի Կապան։ Ընդհանուր իրարանցման մեջ ոչ ոք ուշադրություն չդարձրեց նրա վրա։

Քիչ հետո ամրոցից դուրս եկավ նաև սպարապետը։ Զորքի գլուխն անցած նա մեկնեց Խնձորեսկ՝ Բարխուդարի ամրոցը հիմնահատակ ավերելու անդարձ որոշումով։

***

Հենց որ Ծամամն իրեն գտավ օտար տան, համառ հետաքրքրությամբ իրեն նայող, իրենից մեծ Ահարոնի ու փոքրիկ Դավթի հետ, այդ պահին միայն կարծես ըմբռնեց, թե ինչ ծանր բան է կատարվում հիմա իրենց գյուղի հետ, և հանկարծ իրեն որբ ու անտեր զգալով՝ անզուսպ հեկեկաց... Նրա ձայնին եկավ տիկին Սաթենիկը։ Սաստիկ հուզված էր, գունատ։ Մի մեծ տագնապ կար նրա աչքերում։ Սենյակ մտավ շաղված, ճոճվող քայլերով։

— Տե՛ր աստված, մարդիկ կորցրել են խելքները, այս ի՞նչ է կատարվում... Թշնամու աչքը՝ լույս...

— Ի՞նչ է եղել, մայրի՛կ,— հարցրեց Ահարոնը լուրջ ու խոժոռ։

Մայրը սթափվեց որդու հարցից, զարմացած նայեց երեխաներին, ասես նոր միայն տեսավ Ծամամին, ու աչքերը լցվեցին։ Մի ավելի ծանր բան գուշակելով՝ Ծամամը նետվեց նրա գիրկը, երեսը թաքցրեց նրա կապայի ծալքերում ու հեկեկաց.

— Մելիքը մերոնց բոլորին կկոտորի՞...— աղաղակեց նա։

— Չէ՛, չէ՛,— ինքն էլ սարսափելով՝ շտապեց ասել տիկինը.— Ոչինչ էլ չի՛ լինի, աղջի՛կս. հո մելիքը պարսիկ չէ՞, որ... Բան չկա, ամեն ինչ լավ կլինի։

— Վա՛յ նանի՛, վա՛յ...— ավելի բարձր լացեց Ծամամը։

Տիկինը նրան նստեցրեց իր ծնկներին, համոզեց, որ լացը դադարեցնի։ Այդ ամենն անում էր մեծ ճիգով։ Իր լացն էլ հազիվ էր զսպում։ Վերջապես Ծամամը հանգստացավ։

— Մերոնց ոչինչ չի՞ պատահի, չէ՞, մորաքույր,— հարցրեց նա՝ համբուրելով իրեն գրկած Սաթենիկի ձեռքը։

— Ոչինչ, աղջի՛կս, մի՛ տրտմի։ Ամեն ինչ լավ կլինի։

Ծամամը մեղմ ժպտաց։ Դա ցնցեց Սաթենիկին։ Անմեղ երեխան ժպտում է, իսկ ո՞վ գիտի, գուցե հենց այս պահին անգութ մելիք Բարխուդարը մորթում է նրա մորը, եղբորը, հարազատներին։ Ի՜նչ դաժան է մարդու ճակատագիրը։ «Տե՜ր աստված, դու խափանես արյունը...»։

Ամբողջ օրը պղնձաքարցիները դիմադրեցին մելիք Բարխուդարի զորքին։ Ժամանակին փակելով իրենց ժայռերի անցքերը, նրանք՝ մեծ ու փոքր, կուտակվել էին դյուրամատչելի տեղերում և թշնամուն դիմադրում էին անձնազոհ։ Նրանք գրոհողներին հարվածում էին քարերի տարափով, փայտի կտորներով, վառված լաթեր ու աթար էին նետում պաշարողների վրա։ Ոմանք հրացան էին արձակում, մյուսները եռացրած ջուր թափում վերևից։

Մելիք Բարխուդարի կատաղությանը սահման չկար։ Հանկարծակի գրոհի հնարավորությունը կորցնելով՝ նա հույս ուներ, որ դյուրությամբ կընկճի զորք չունեցող պղնձաքարցիներին ու կխուժի նրանց բնակատեղին։ Սակայն մեծ եղավ նրա զարմանքը, երբ հենց գրոհի առաջին պահից անկոտրում դիմադրության հանդիպեց։

Անչափ գազազել էր. թրի կոթով հարվածում էր իր զինվորներին՝ ստիպում մագլցել ժայռերը, խուժել առաջ։ Քարագնաց զինվորները կատարում էին նրա հրամանը, բայց ժայռերից թափվում էին պղնձաքարցիների հարվածներից։

Մայրամուտին մելիքին լուր տվին, թե մի մեծ զորաբանակ է մոտենում Պղնձաքարին։ Բարխուդարը թռավ ձիու թամբին, բարձրացավ քարափի գլուխն ու նայեց ձորին։ Այո, Զագեձորի կողմից մի մեծ զորաբանակ էր գալիս շտապ։ Մելիքը ճանաչեց Տեր-Ավետիսի ու Թովմայի դրոշները։ Սպարապետինը չկար։ Սիրտը կասկած մտավ։ «Սպարապետն, անշուշտ, գնացել է Խնձորեսկի վրա»,— մտածեց չարությամբ և կատաղությունից լեզուն կծեց։ Կռահեց, թե ինչ կարող է լինել։ Տեր-Ավետիսը կանցնի իր թիկունքը, օղակի մեջ կառնի իրեն ու կսատկացնեն շան նման։ Մխիթարը կմտնի Խնձորեսկ, կավերի, կթալանի իր ամրոցը։ Մի՞թե ամեն ինչի վերջն է։ Գոնե այս վայրենի պղնձաքարցիներին ոչընչացրած լիներ, հետո թող կատարվեր այն, ինչ վերուստ էր սահմանված։

Այս մտքերի մեջ էր նա, երբ մոտեցավ Պակին։

— Մխիթարը գնում է Խնձորեսկի վրա, հա՛յր,— տագնապով հայտնեց նա,— մեր տանը ոչ ոքի ողջ չի թողնի։

— Ի՞նչ ես կռավում, ո՞վ ասաց,— չհավատաց, ավելի շուտ՝ չուզեց հավատալ Բարխուդարը։

— Գնացել է, թե չէ կգար մեզ վրա...

— Ի՞նչ ես ուզում հրամայել,— անզորությունից գոռաց հայրը։

— Դառնանք տուն։ Տեր-Ավետիսն ու պղնձաքարցիները մեզ կոչընչացնեն այստեղ, Մխիթարը կավերի մեր տունը։ Ամրոցում կարող ենք դիմանալ, մինչև մի ճար անենք։

— Ո՞վ հասցրեց իմաց տալ սատանային, ո՞վ։ Շնե՛ր, գայլե՛ր,— գետինը դոփելով բղավում էր Բարխուդարը։

Երկար ժամանակ նա չէր կարողանում որևէ վճիռ կայացնել։ Այնինչ Տեր-Ավետիսի զորաբանակը մոտենում էր, իսկ պղնձաքարցիները, որ նկատել էին օգնության եկող զորքը՝ գազազել էին տասնապատիկ ու խփում էին վայրենի գոռում-գոչյունով։

— Նահա՛նջ,— վերջապես հրամայեց Բարխուդարը։

Իսկույն իջան անտառ։ Հապշտապ հավաքվեցին ու ետ դարձան դեպի Խնձորեսկ։ Գնում էին խուճապահար արագությամբ։ Բարխուդարի սարսափը սաստիկ էր։ Ուր որ է Տեր-Ավետիսը կհասնի իր ետևից։ Ստիպված պիտի լինի մարտի բռնվել, իսկ Մխիթարը, գուցե, հիմա արդեն մոտենում է Խնձորեսկին... Առաջին անգամ նա զգաց, որ ինքն անխոհեմություն է արել։ Բայց չէր կամենում ներել Մխիթար սպարապետին։ «Թշնամի կմնամ հավիտյան։ Կգնամ, կնստեմ իմ ամրոցում ու կմնամ թեկուզ հինգ տարի։ Երբեք ծունկի չեմ գա սպարապետի առջև։ Կմեռնեմ, բայց այդ չեմ անի։ Թող ինքը՝ Դավիթ-Բեկն էլ գա, միևնույն է, երբեք չեմ հաշտվի Մխիթարի հետ»։

Ձին հևում էր արտակարգ արագ վազքից։ Զորքը պապանձվել էր։ Որդիները հորից մերթ առաջ էին անցնում, մերթ ետ մնում։ Լուսադեմին նշմարեցին Խնձորեսկի ամրոցի աշտարակները։ Բարխուդարը մըտրակեց ուժասպառ ձիուն։

Հենց որ մտան ամրոց ու փակեցին երկաթե ծանր դռները, հեռվում, լուսաբացի մշուշի մեջ, երևաց Մխիթար սպարապետի գունդը։ Բարխուդարը թեթևացած հոգոց հանեց։ Ժամանակին խույս տվեց ծուղակից։ Իսկ հիմա թող Մխիթարը շնթռկի իր ամրոցի պարիսպների տակ, որքան սիրտն ուզում է...

***

Լույսն արդեն բացվել էր, երբ Մխիթար սպարապետի գունդը հասավ Խնձորեսկ ամրոցին։ Աշտարակների մեջ ու պարիսպների վրա հավաքված տեսնելով մելիքական զորքը՝ Մխիթարը հասկացավ, որ Բարխուդարն ամոթահար փախել է Պղնձաքարի դռներից։ «Թունդ տաքդեղ են քթին դեմ արել ռամիկները, պարզ է»,— գոհունակ մտածեց նա։ Բանագնաց ուղարկեց առաջ՝ Բարխուդարից պահանջելով անմիջապես բաց անել ամրոցի դռներն ու անձնատուր լինել։

Պարսպի վրա երևաց Բարխուդարը։ Ունկն դրեց բանագնացին և, հետին ջորեպանի պես հայհոյելով՝ գոչեց.

— Գնա քո ռամիկ տիրոջն ասա, որ իզուր է կատաղում։ Ես ամեն քոսոտ շան առջև դուռ չեմ բաց անի, տղամարդ է, թող կռվով առնի ուզածը։

— Կառնե՛մ,— գոչեց սպարապետը, երբ լսեց բանբերի բերած պատասխանը։— Պնչներիցը կհանեմ, կառնե՛մ։

Սակայն անմատչելի էր Խնձորեսկի ամրոցը։ Երեք կողմից անդնդախոր ձորերով շրջապատված լինելով, միայն հյուսիսային կողմից մուտք ուներ նա։ Սակայն այդ կողմից ամրոցը պաշտպանված էր հաստաբետոն պարսպով և երեք մարտական աշտարակով։ Ամուր ու ծանր էին նաև ամրոցի երկաթե դարպասները։ Մխիթարը վճռեց թնդանոթներով ջարդել դուռը, խորտակել պարիսպը։

Մելիք Եգանին հրամայեց գնալ Այլախի սահմանապահ ամրոցից թնդանոթներ բերելու։ Ապա հրամայեց իր վրանը խփել հենց ամրոցի դիմաց եղած փոքր, անտառապատ բլրի վրա։

Երեկոյան բանակ հասավ նաև Տեր-Ավետիսը։

— Ինչո՞ւ ժամանակին չհասար, չշրջապատեցիր ապստամբին,— չպատասխանելով նրա ողջույնին՝ հարցրեց սպարապետը։

— Ճողոպրեց աղվեսը,— հևաց Տեր-Ավետիսը։— Հենց որ նկատեց իմ զորքը՝ պաշարումը թողեց ու շտապ հեռացավ։

Բայց Տեր-Աերտիսը չուզեց ասել ճշմարիտը։ Իհարկե, ինքը կարող էր հետապնդել, հասնել մելիքին, բռնել նրա պոչը, ստիպել ընդունել մարտը։ Բայց դիտմամբ չէր արել։ Չէր կամեցել բորբոքել կռիվը, թափել յուրայինների արյունը։ Նա հավատում էր, որ վեճը խաղաղությամբ կավարտվի, ու երկու կողմերն էլ հաշտվելով՝ վերջ կտան տնավեր խռովությանը։

Առավոտյան, զորապետների խորհրդից հետո, Տեր-Ավետիսը Մխիթարին ասաց.

— Լավ մտածիր արարքդ, Մխիթա՛ր, արի հաշտությամբ բանակցենք Բարխուդարի հետ։ Գուցե խաղաղությամբ հանգեցնենք մեր տան ներսում ծագած կրակը։ Ուրիշ միջոց գտիր, ուրի՛շ...

— Ես ուրիշ միջոց չգիտեմ,— մռայլ պատասխանեց սպարապետը։— Խռովարարը պետք է շարաշար պատժվի։

— Այս ամրոցը փշրվող ընկույզ չէ։

— Թնդանոթներով կմաշեմ,— գոչեց սպարապետը, ապա ծառս լինելով՝ ավելացրեց։— Չես ուզո՞ւմ պատժել նենգ դևին, կարող ես հեռանալ, ես ինքս մենակ կանեմ ուզածս։

— Ես իմ խոսքն ասացի, զորավա՛ր,— չնեղացավ Տեր-Ավետիսը,— թող քո կամքը լինի։

Երկու օր հետո մելիք Եգանը երկու թնդանոթ բերեց Այլախից։ Մխիթարը հրամայեց թնդանոթներն ուղղել ամրոցին ու պատրաստվել գրոհի։ Բայց դեռ գրոհի չէին շարժվել, երբ բանակատեղ հասավ Դավիթ-Բեկի սուրհանդակն ու ծրար հանձնեց Մխիթարին։ Սպարապետը ջոջափեց Բեկի կնիքը, մռայլվեց, կռահեց, թե ինչ հրամայած կլինի գահերեց զորավարը։ Բայց և այնպես ծրարի կնիքը համբուրեց ու բաց արավ։

«Հրամայում եմ՝ հեռու մնալ մելիք Բարխուդարին սաստիկ պատժելու ազգակործան մտքից,— գրում էր Բեկը։— Արգելում եմ արյուն թափել։ Բանը վերջացրու խաղաղությամբ։ Աչալուրջ եղիր, Մխիթա՛ր. ընտանեկան խռովություն բորբոքելու ժամանակը չէ։ Հաշտեցրու մելիք Բարխուդարին ու Թուրինջին»։

Կարծես սպարապետի թևերը ջարդվեցին։ Ո՞վ հասցրեց Բեկին հայտնել իր մտադրությունը, ո՞վ։ Եվ ինչո՞ւ է Բեկը խնայում խռովարարին, այն մարդուն, որ Պղնձաքարի տակ անմեղ արյուն թափեց, հիմա էլ ապստամբվել է ու փակվել իր ամրոցում, չի ենթարկվում, դարպասը բաց չի անում իր առջև։ Ոչ մեկին չհայտնելով Բեկի նամակի բովանդակությունը՝ նա հեծավ իր երկնագույն նժույգը, հրամայեց սպիտակ դրոշ պարզել ու այդպես մոտենալ ամրոցի դարպասներին։ Ամրոցի պարիսպների վրա երևացին Բարխուդարի զորապետները։ Տեսնելով խաղաղ մուտքի սպիտակ դրոշը՝ նրանք մի պահ շվարեցին ու զարմացած նայեցին ցած։

Մխիթարը մելիք Եգանին ուղարկեց բանախոսության։

— Այդ վայրենիներին ասա, որ հյուր ենք գալիս խաղաղությամբ, թող դռները բաց անեն։ Հակառակ դեպքում, մեղքն իրենց շլինքին։

Մելիք Եգանը գնաց։ Պարիսպներից նրան քարկոծեցին, թրիք նետեցին գլխին։ Մեկը նույնիսկ վարտիքը իջեցրեց ու բաց հետույքը գեմ արեց Դիզակի տիրոջ կողմը։ Անզուսպ հռհռոցի տակ անպատիվ խոս-

քեր շպրտեցին Եգանի ու Մխիթարի հասցեին։ Եգանը վերադարձավ գրգռված, կատաղած, բայց և երկյուղը սրտում։

— Չլսեցին, չուզեցին էլ լսել,— վիրավորված, ընկճված հայտնեց նա Մխիթարին։— Հաշմեցին շան պես, զորավա՛ր, անպատվեցին։

Սպարապետը հրամայեց թնդանոթներից կրակ բաց անել ամրոցի վրա։ Զորերը դղրդացին։ Ամրոցի ներսում ինչ-որ շենք փլվեց։ Փոշու ամպ ելավ երկինք։

— Դարպասին խփեցեք,— հրամայեց Մխիթարը։— Դարմա՞ն են ուտում թնդանոթաձիգները։ Պարիսպը քանդեցեք ու խուժեցեք ներս։

Սկսեցին խփել պարիսպներին։ Վերևից կրակեցին։ Մխիթարը հեծավ ձին ու, մոլուցքի մեջ ամեն վտանգ մոռացած՝ նետվեց դեպի պարիսպները։ Փոքր Գորգին, Եսային ու Սեմեոնը նրանից առաջ ընկան՝ իրենց մարմնով սպարապետին պաշտպանելու մտադրությամբ։ Զագեձորի գունդը մոլեգնեց՝ տեսնելով զորավարի արարքը։ Բոլորը նետվեցին գրոհի։ Գյուղից ելարաններ բերին՝ պարիսպները մագլցելու համար։

— Զրահ հագիր, տե՛ր սպարապետ,— գոռաց Փոքր Գորգին։— Դավաճանները կկրակեն քեզ վրա։

— Եթե ուզում են սպանել հայոց սպարապետին, թող կրակեն,— շարախինդ ասաց սպարապետը։

Մոտեցան դարպասին։ Պարսպի զինվորները զարմացած նայեցին ձիու վրա եռացող սպարապետին ու մնացին շիվար։ Մխիթարը ներքնից թուրը թափ տվեց նրանց կողմը։

— Պարսից խա՞ն է գալիս, որ դարպասը փակել եք, շո՛ւն-շանորդիներ։ Հենց հիմա բաց արեք, թե չէ բոլորիդ մորթին տիկ կհանեմ։ Ջերբակալ արեք Բարխուդարին։

— Հիմա՛, հիմա՛, տե՛ր սպարապետ,— պարսպի վրայից գոչեց մեկը,— ժամանակ տուր հորս համոզեմ։

Սպարապետը ճանաչեց նրան։ Դա Բարխուդարի կրտսերն էր՝ Պակի զորապետը։ Պակին յուրայիններին հրամայեց չկրակել ու արագ իջավ պարսպից։

* * *

Պակին հորը գտավ դիտանոցի տակ, փոքրիկ խցիկում։ Հայրը զրահավորվում էր՝ պարիսպների գլուխը բարձրանալու համար։ Պակիին տեսնելով գոչեց.

— Վախեցա՞ր, թողի՞ր դիրքդ, հը՞։

— Հա՛յր, պատերազմի տեղի մի՛ տուր։ Ինքը սպարապետն է իր

ոտքով ժամանել մեր տուն։ Նա հիմա դարպասի առջև սպասում է, որ դռները բաց անենք։

— Եվ դու շանսատակ չարի՞ր նրան,— կապտեց Բարխուդարը։

— Ես չեմ ուզում հավիտենական անեծքով ծածկվի մեր տոհմի անունը։

— Դո՛ւ, դո՛ւ...— կատաղեց Բարխուդարը։— Հեռացի՛ր, կորիր, ես հիմա ինքս իմ ձեռքով կտեսնեմ նրա դատաստանը։

Նա հանեց ատրճանակն ու թուրը և դուրս թռավ խցիկից։ Վազելով հասավ աշտարակ տանող սանդուղքին, ոտքը դրեց առաջին աստիճանին, բայց հանկարծ դիմացը մի սարսափելի բան տեսնողի պես՝ ետ-ետ գնաց։ Նրա վրա ուղղված էր ատրճանակի սառը փողը։

— Կկրակեմ, եթե չհրամայես այս վայրկյանին բաց անել ամրոցի դուռը ու պատշաճին չընդունես հայոց զորքերի սպարապետին։

Գոհարն էր։ Անզիջում սպառնալիք կար նրա ձայնի մեջ։ Հայրը ցնցվեց։ Ոչ ոք այնքան ազդեցություն չուներ այդ վայրենաբարո մարդու վրա, որքան իր միակ աղջիկը։ Բարխուդարը ետ-ետ գնաց ու մեջքով հենվեց պատին։

— Սեփական զավակներս են ապստամբում իմ դեմ,— հևաց նա։— Արյունս է դավաճանում, արյո՛ւնս... Ռամիկի որդին գալիս է ինձ սպանելու, իսկ զավակներս լքում են ինձ...

— Իրավունք ունի պատժել քեզ,— ցասումով շպրտեց Գոհարը։— Դու խռովություն ես սերմանում հայոց տան մեջ, երբ միաբանությունն ու սերը միայն կարող են փրկել մեր տառապյալ հայրենիքը։ Մխիթարը դաժան չի լինի քեզ հետ, եթե դու մեղա գաս նրա առջև։ Ես խոստանում եմ հաշտություն ու խաղաղություն ստեղծել ձեր միջև։— Գոհարը հոր ձեռքից խլեց նրա ատրճանակն ու ցասումով շարունակեց։— Եթե քո զինվորները կրակեն սպարապետի վրա, ապա ես կսպանեմ քեզ ու ցած կնետվեմ ամրոցի պարիսպներից։

Նա շուռ եկավ քիչ հեռվում կանգնած եղբոր կողմը։— Ի՞նչ ես շշմել, Պակի՛, գնա, բաց արա դարպասն ու պատշաճին ընդունիր մեր տիրոջը։

Բարխուդարը աչքերը փակեց. ուշքը գնում էր, թվում էր, թե հիմա կխելագարվի։ Ոտքերը ճոճվում էին։ Պակին նետվեց դեպի դարպասը։ Ինչ-որ տեղից հայտնված Միհրանը սրամերկ վազեց դեպի եղբայրը՝ արգելելու, որ նա բաց անի դարպասը, բայց Բարխուդարը ձեռքերը թափահարեց։

— Բացե՛ք դարպասը, բացե՛ք, թող գա՝ ավերի, մորթի, կոտորի...

Միհրանը նետվեց դեպի հայրը։

— Խելագարվե՞լ է,— նրա սփրթնած, այլայլված դեմքին նայելով, ահով հարցրեց քրոջը։

— Ընդհակառակն,— հանդարտ պատասխանեց քույրը։— Խելքի է եկել, փրկում է մեր տունն ու իր պատիվը։

— Ի՞նչ, դո՞ւ էլ...— գազազեց Միհրան հարյուրապետը։

Բայց այդ պահին ամրոցի դարպասները բացվեցին, ու սպարապետի գունդը խուժեց ներս։ Միհրանը կարկամեց։ Գնդի առջևից գալիս էր Մխիթարը։ Բարխուդարն ու Միհրանը նայեցին ետ՝ փախուստի ճանապարհ որոնելով, բայց Գոհարը բռնեց նրանց ձեռքերն ու ինքը մեջտեղը՝ խրոխտ քայլերով դիմեց դեպի Մխիթարը։

— Բարի գալուստ, տե՛ր սպարապետ,— հանդարտ ողջունեց նա։

Մխիթարը թռուցիկ նայեց նրան։ Սրտում այրուցք զգաց։ Սարսափեց մելիքի աղջկա կշտամբող, բայց և սիրող ու նվիրված հայացքից։ Շրթունքները կրծոտեց։ Զսպեց իրեն, որ չգոչի. «Գոհա՞ր, թանկագի՞նս...»։ Զորավար էր, հարկավոր էր սրտում խեղդել վաղեմինը, թանկագինն ու նվիրականը։

— Ապստա՞մբ ես Հայոց ժողովի դեմ,— որոտաց նա՝ ձին խոյացնելով դեպի Բարխուդարը։

Բարխուդարը պոկվեց աղջկա ձեռքից ու, գետնատարած փռվելով Մխիթարի ոտքերի տակ՝ գոչեց.

— Մեղա՞, տե՛ր, մոլորվեցի... Թողություն շռայլիր քո ծառային։

Մխիթարը ձեռքը տարավ դեպի ատրճանակը, բայց այդ պահին նրա հայացքը մեխվեց Գոհարի ահավոր, սիրող ու հրամայող աչքերին։ «Մի՛ արա»,— հայացքով պահանջում էր աղջիկը։ Սպարապետն իջավ ձիուց, սեղմեց Գոհարի ձեռքը, ապա շուռ եկավ դեպի գետնատարած Բարխուդարը.

— Բարձրացի՛ր, տե՛ր Բարխուդար, ինձ հաճելի չէ Սյունիքի ամենաչքնաղ օրիորդի հորը տեսնել գետնին փռված։

Բարխուդարը բարձրացավ և բռնեց սպարապետի փեշը։

— Ներիր ինձ, տե՛ր սպարապետ,— ասաց, շրթունքները մոտեցրեց բռնած փեշին, սակայն Մխիթարը փեշը խլեց։

— Ես մտադրվել էի քեզ կախել քո ամրոցի պարսպից, տե՛ր Բարխուդար, բայց քո դստեր պատվին՝ կյանքդ քեզ եմ նվիրում։— Նա բռնեց Գոհարի ձեռքն ու գնաց դեպի մելիքարան։

Բարխուդարը գլխիկոր հետևեց նրանց։ Շուտով եկան նաև նրա որդիները։

Սպարապետի զորքը մտավ ամրոց։ Մնաց մարտական վիճակում, ձիերի սանձերը բռնած։ Տեր-Ավետիս հազարապետը հարյուրապետնե-

ին հրամայեց հաց չընդունել խնձորեսկցիներից, չգնալ նրանց հրավերին, բայց և թշնամանքով չնայել նրանց։

— Երևի այսօր Մխիթարը կկախի Բարխուդարին,— կռահեց Եսային։

— Դրանից ի՞նչ օգուտ,— տրտնջաց Սեմեոնը։— Նրան կախի՝ Միհրանին մելիք կկարգի, շունը՝ շնից, երկուսը մի տնից։— Նա մի պատառ կորեկահաց հանեց ուսապարկից ու սկսեց կրծել։— Մխիթարը խելք կանի, եթե ների Բարխուդարին ու նրան հաշտեցնի մելիք Թուրինջի հետ։ Թե չէ, էլի մեր արյունը կթափվի։ Իսկ Բարխուդարը մեր սահմանի այն միակ ուժն է, որ զսպած է պահում Բաթալի Սուլթան խանին։

Այդ պահին ճիշտ և ճիշտ նույն կերպ էր մտածում սպարապետը։ Մելիքարանի բարձր գահավորակին բազմած՝ նա խոժոռ նայում էր իր առջև գլխաբաց կանգնած Բարխուդարին։ Պակի զորապետն ու Միհրան հարյուրապետը գլուխները կախել, քարացել էին։ Մելիքի մյուս հարյուրապետները լուռ էին։ Տեր-Ավետիսն ու մելիք Եգանը կանգնել էին սպարապետի երկու կողքին։

— Ո՞վ ձեզնից առաջինը մտածեց հարձակվել Պղնձաքարի վրա,— երկար լռությունից հետո հարցրեց Մխիթարը՝ խիստ, հրամայող ձայնով։

— Ոչ ոք՝ ինձնից բացի, տե՛ր սպարապետ,— գլուխ տվեց Բարխուդարը։— Պատժիր ինձ, միայն արդար։ Ես Հայոց ժողովի դեմ չէր, որ զենք հանեցի։ Ես վիրավորված եմ, որ իմ հողերի մեջ մի նոր մելիքություն ծլեցրիր դու։ Ես չեմ կարող հանդուրժել, որ մտրակիս տակից փախած իմ ռամիկը ծունկ-ծնկի նստի ինձ հետ։

— Իսկ դու գիտե՞ր, որ Թուրինջը մելիք է կարգվել իմ կամքով, Դավիթ-Բեկի գիտությամբ,— հարցրեց սպարապետը։

— Գիտեի։

— Ուրեմն ինչո՞ւ ոտքի կոխան արիր քո տերերի հրամանը։

— Ես տիրասեր եմ, բայց չեմ կարող համբերել կոծոծը՝ ճրա մելիքությունը,— չզիջեց Բարխուդարը։— Պոկիր նրան, ուրիշ տեղ տար, տե՛ր սպարապետ. կամ ինձ հեռացրու իմ պապերի հազար տարվա տնից։ Միջոց գտիր, տե՛ր ես։ Ես չե՛մ կարող, չէ՞... Հարյուր դերվիշ մի կարպետի վրա տեղ կգտնենք, ես ու Թուրինջը մի գավառում՝ ոչ։

Բարխուդարը անզուսպ հեկեկաց։ Նրա որդիներն աղերսում էին, որ Մխիթարը ների իրենց մոլորված հորը։ Հոնքը ճակատին կեռած Մխիթարը անողոք հայացքով էր նայում Բարխուդարին։ Թվում էր, թե հիմա կնետվի նրա վրա ու կծվատի։ Ոչ ոք սիրտ չէր անում շարժվել, նույնիսկ ազատ շնչել։

— Տարե՛ք,— վերջապես ձեռքը մելիքին ուղղելով՝ հրամայեց սպարապետը։— Բանտ, զնդան, նրան է՛լ, Միհրան հարյուրապետին էլ։

Մելիքին ու Միհրանին շղթայեցին ու քարշ տալով տարան։ Ներս ընկան Գոհարն ու մելիքի կինը։

— Բարեկամ եղիր, Մխիթա՛ր,— ձեռքերը տարածելով՝ աղերսեցին նրանք։

— Ես իմ թշնամու որջի մեջ եմ,— մռնչաց Մխիթարն ու ոտքի ելավ։— Բարեկամությունը հայտնի է լինում ոչ թե խոսքերից, այլ գործով։— Նա քայլեց դեպի դուռը։ Բայց դռների մոտ շուռ եկավ ու դաժանորեն դիմեց կանանց։— Իսկ ինչո՞ւ չէիք զսպում, երբ գայլը գնում էր մանուկներ խժռելու։ Ինչո՞ւ։ Եթե կամենում եք՝ ներկա եղեք, թե ինչպես է պատժվում դավաճանը։

Մելիքի կինն ուշաթափ ընկավ։ Պակին նետվեց Մխիթարի ետևից։

* * *

Ամրոցի հրապարակում քառանկյունի շարվել էր հայոց զորքը։ Գյուղերից եկած մարդիկ թառել էին պարիսպների վրա։ Սպարապետի հրամանով մելիք Բարխուդարին քարշ տվին հրապարակի մեջտեղը։ Թովման բերեց այն անմեղների արյունոտ զգեստները, որոնք զոհվել էին Պղնձաքարում՝ Բարխուդարի հարձակման ժամանակ։

— Նայեցեք այս արյունոտ զգեստներին,— հրապարակով մեկ գոչեց Մխիթարը։— Սրանց տերերը հայեր էին՝ անմեղ, արդար մարդիկ, որ ընկան մելիք Բարխուդարի ձեռքով։ Նրանք խուսափելով փախել էին թուրք փաշաների յաթաղաններից, բայց ընկան դավաճան արյունակցի ձեռքով։ Իր ազգակիցներին կոտորող ուրացողը արժանի է կախվելու, քառատվելու, վառվելու...

Ժողովուրդն ու զորքը պապանձվել էին։ Եկավ ամբողջովին կարմիր հագած դահիճը։ Մելիքի տան բարձր պատշգամբում երևաց Գոհարը։ Բուլեն սպարապետից բացի ոչ ոք չնկատեց նրան։ Բոլորը սկսվել էին՝ արյան հոտ առնելով։ Գոհարն այնպիսի դիրքով էր կանգնել, որով սպարապետին հասկացնել էր տալիս, թե եթե նա սպանի իր հորը, ապա ինքն իրեն կնետի պատշգամբից. Մխիթարը սրտում ցավ զգաց, գլուխը շուռ տվեց, նայեց զորքին.

— Բայց, որովհետև մելիք Բարխուդարը զգացել է իր արարքի ծանրությունը և զղջացել՝ երդվելով հավատարիմ մնալ իր եղբայրների ուխտին, մենք փոխում ենք նրա մահապատիժը...

Լարումից թուլացած ու գիտակցությունը գրեթե կորցրած Բարխուդարը նորից հեկեկաց։ Գոհարը հեռացավ պատշգամբից։ Դահիճը մոտեցավ մելիքին, նրա վրայից պոկեց զգեստներն ու կրծքի վրա պառկեցնելով՝ նայեց Մխիթարին։ Սա ձեռքով նշան արեց՝ ծեծն սկսել։ Հաղարճի ճիպոտի հիսուն հարվածը մելիքը տարավ անմռունչ, ձեռքերը բռունցք արած, լեզուն՝ ատամների տակ։ Երբ դահիճը բարձրացրեց նրան, նա մի քանի քայլ արեց դեպի սպարապետն ու ընկավ ուշաթափ։

Դահիճը պառկեցրեց ձեռքերը կապոտած Միհրանին։ Սա մի տասը հարվածից հետո սկսեց բառաչել, գութ աղերսել։ Ուշաթափ եղավ հորից շուտ։ Հայրը նրա գոռոցից ցնցվեց, գիտակցության եկավ ու գոչեց.

— Տղամարդ կա՛ց, Միհրան, դիմացի՛ր,— ասաց ու նորից ուշաթափվեց։

Սպարապետը գնաց։ Բարխուդարի ծառաները իրենց տիրոջն ու նրա որդուն փաթաթեցին այծենակաճերի մեջ ու տարան տուն։ Սպարապետն իր գնդի բուժակին ուղարկեց պատժվածների վերքերը դարմանելու։ Ապա հրամայեց ծանրագին նվերներ պատրաստել մելիք Բարխուդարի կնոջ ու դստեր համար։

Առավոտյան, երբ Պակի զորապետը եկել էր սպարապետին «բարի լույս» մաղթելու, սա հարցրեց.

— Ինչպե՞ս է իմ սիրեցյալ եղբայր Բարխուդարի ու արժանապատիվ Միհրան հարյուրապետի առողջությունը։

— Երկուսն էլ ապաքինվում են, տե՛ր սպարապետ,— պատասխանեց Պակին։— Դիշերը հայրս խիստ ցավեր զգաց, իսկ առավոտյան մի ամբողջ հավ կերավ։

Սպարապետը բարձրաձայն ծիծաղեց։

— Նախանձելի՜ ախորժակ...— նորից մթագնեց, ծանր նայեց Պակի զորապետին։— Զմոռանաք երեկվա տխուր դեպքը, երբե՛ք չմոռանաք։ Դաս լինի ձեզ։ Ով մոռանում է ճիպոտների հարվածները, նա իր գլուխը հոժարակամ դնում է սրի տակ։

Մխիթարը գոհ էր, որ առանց արյուն թափելու մտավ Բարխուդարի ամրոցը։ Կատարեց Դավիթ-Բեկի հրամանը և միաժամանակ իրենն արավ՝ ամրոցն առավ, պատժեց ապստամբին։ Բայց նրան անհայտ մնաց, թե ինչպես էր անկոտրում ու համառ Բարխուդարը համաձայնել իր առջև բաց անել ամրոցի դարպասները։ Սրտա՞նց էր զղջացել, թե՞ մի ուրիշ պատճառ կար... Չէր կարողանում որոշել։

Հարյուրապետներին հրամայեց զորքը պատրաստ պահել ամեն անակնկալի։ Կարգադրեց իր վրանը խփել մելիքի տան առջև՝ թթենիների արանքում և ձեռք չտալ մելիքի ունեցվածքին։ Երբ վրանը պատրաստ էր, մտավ ներս, առանց զենքերը հանելու պառկեց գորգերին՝

օրվա ծանր դեպքերից մի փոքր թեթևանալու համար։ Ականջի մեջ զրնգում էր Մհերանի բղավոցը։ Աչքից չէր հեռանում Գոհարը։ Բարկության ու մեծ վշտի մեջ էլ վեհ ու սքանչելի էր նա։ Եվ ինչպե՞ս է կարողանում նվաճել այդ քնքուշ արարածը... Ինչո՞ւ չի ամուսնանում։ Մի՞թե այդքան զորավոր է նրա սերը... Տե՜ր աստված, իսկ մի՞թե ինքը պակաս է սիրում նրան։

***

Մի ամբողջ շաբաթ էր, ինչ Մխիթարն ապրում էր իր զորքի մեջ՝ վրանում։ Ուտում էր զինվորի համեստ սեղանից, քնում՝ չհանվելով։

Ամրոցի տերերը սգի մեջ էին։ Հայ մարդու համար սպանիչ խայտառակություն էր, երբ հյուրը մնում է տան շեմին, ներս չի մտնում, չի կտրում տանտիրոջ հացը։ Մխիթարը վճռել էր չմտնել մելիք Բարխուդարի տունը։

Կիրակնօրյա առավոտյան ժամերգությունից հետո, արդեն բավականին ապաքինված Բարխուդարը աղաչեց Գոհարին՝ գնալ, համոզել սպարապետին ու նրան տուն բերել։ Թեև Գոհարը մտքում ուրախացավ, որ ինքը մեն-մենակ պիտի հանդիպի իր սիրեցյալ տղամարդուն, այն էլ հոր պահանջով, բայց և այնպես խորապես վիրավորված էր սպարապետի արարքից։ Նա պատշաճ չէր գտնում այն, որ սպարապետը ժողովրդի ու զորքի առջև ծեծել տվեց իր հորը, մի մարդու, որն իր կյանքն անց է կացրել ձիու թամբին, որի մատները կոշտուկներով էին պատված՝ անվերջ թրի կոթ բռնելուց և ուժը երկրի թշնամիների դեմ սպառելուց։ Նա վիրավորված էր իր տոհմի արժանապատվությունը ոտնահարելու, իրենց տան պատիվը գցելու համար։ Մխիթարի փոխարեն թեկուզ մի աշխարհակալ արքա լիներ, նա երբեք դուրս չէր գա իր սենյակներից ու խնդրանքով չէր գնա նրա ոտքը։ Բայց մի կողմից խեղճացած ու ծեծված հոր թախանձանքը, մյուս կողմից՝ սիրեցյալին նորից տեսնելու կարոտը ստիպեցին նրան գնալ, քաղցրացնել դաժան սպարապետի սիրտը, նրան հաշտեցնել հոր հետ, որպեսզի մի ավելի մեծ ու ավելի ստորացնող անպատվություն չբերի իրենց տան գլխին։

Հոր խոսքին հպատակ՝ Գոհարը հագավ իր այն զգեստները, որոնց մեջ նա վերջին անգամ հանդիպել էր Մխիթարին, ու դուրս եկավ իր հարկաբաժնից։

Գարնանային արևը հրճվանքով էր լցրել բակը։ Զագեձորի զինվորներից ոմանք մաքրում էին ձիերը, ուրիշները կրակ էին արել՝ կերակուր եփելու համար։ Միշտ մաքուր բակը ապականված էր բանակի աղտեղությամբ, օդը ծանր էր ու սուր։ Գոհարն անցավ զինվորների մոտով՝ իր վրա զգալով հարյուրավոր հիացած հայացքներ։ Մխիթարի վրանի մոտ Թովմա հարյուրապետն ընդառաջ եկավ նրան ու, խոնարհ բարև բռնելով՝ հարցրեց.

— Ի՞նչ է կամենում պատվելի Գոհարը։

Գոհարը հպարտ, նույնիսկ ընդգծված դժգոհությամբ նայեց բարձրահասակ ու գեղեցիկ Թովմային, որին առաջին անգամն էր տեսնում։

— Իսկ դու ո՞վ ես,— հարցրեց խիստ։

— Օրվա հերթապահը,— գլուխ տվեց հարյուրապետը։

— Այն դեպքում ինձ տար քո սպարապետի մոտ։

Թովման նորից գլուխ տվեց։ Գոհարը նկատեց, որ նա այդ անում է անվարժ, անճաշակ։ Սաստիկ ցանկություն ունեցավ քրքջալ, բայց զսպեց իրեն ու կողքանց նայեց իր ուղեկցին։ Թովման թուրը բռնած հարգալից առաջնորդում էր նրան, քայլում շփոթված։ Առաջին անգամն էր մի այդպիսի ազնվազարմ աղջկա հետ քայլում։ Բայց Գոհարի հայացքից չվրիպեց Թովմայի ծաղկուն հասակը։ Գեղեցիկ էին նրա կարճ խուզած բեղերը, ճակատը, փայլում էր ոչ սակավ խելքից ու հոգու մեջ եղած բարությունից։

— Ո՞ր մելիքի զավակն ես,— նորից հարցրեց Գոհարը։

— Մելիք Թուրինջի,— կարծես ամաչելով՝ պատասխանեց Թովման։— Իմ անունը Թովմա է, ես հարյուրապետ եմ։

— Արդե՞ն,— դեմքը խոժոռեց աղջիկը,— այդ ե՞րբ հասցրեց մելիք Թուրինջը հարյուրապետ զավակ աճեցնել...

Թովման խիստ կարմրեց։ Հասկացավ նրա կշտամբանքի իմաստը։ Վիրավորվեց, բայց դարձյալ մեծահոգությամբ պատասխանեց.

— Ինքս էլ գիտեմ, որ արժանի չեմ դրան, բայց մեր սպարապետի կամքն էր այդ։ Եթե քեզ ու քո հորը հաճելի չէ դա, ապա կհրաժարվեմ ու կդառնամ սովորական զինվոր։

— Շուտ վիրավորվեցիր,— զզջալով ասածների համար՝ շտապեց սխալն ուղղել Գոհարը։

— Ահա սպարապետի վրանը, նա մենակ է, համեցի՛ր,— չպատասխանելով նրան, մի քիչ դառնացած ասաց Թովման ու թեթև գլուխ տալով՝ ձեռքը մեկնեց, որպեսզի բաց անի սպարապետի վրանի դուռը։

Բայց հենց այդ պահին վրանից դուրս եկավ Մխիթարը։ Գոհարին ու Թովմային կողք-կողքի գտնելով՝ նա աննկատելի ցնցվեց ու այնպես նայեց նրանց, կարծես առաջին անգամն էր տեսնում թե՛ մեկին և թե՛ մյուսին։ Նրա արյունը խաղաց քունքերում, աչքերը տագնապալից փայլատակեցին։ Երբեք այդպիսի իրար սազող զույգ չէր տեսել։ Թովման

առողջ, կորովի ու առնական, Գոհարը՝ բարեհամբույր, նուրբ ու նազասեր, բայց և իշխանավայել հպարտ։

— Մելիք Բարխուդարի դուստրը քեզ էր որոնում, տե՛ր սպարապետ։ Առաջնորդեցի,— գլուխ տվեց Թովման ու արագ հեռացավ...

Մխիթարը ետ տարավ վրանի դռան վարագույրը ու ձեռքի շարժումով Գոհարին հրավիրեց ներս։ Ինքը մտավ նրա ետևից, կանգնեց վրանի գորգերին ու հայացքը գետնին՝ հարցրեց.

— Ինչո՞վ եմ ես արժանացել քո շնորհին։

— Եկել եմ ասելու, որ դու անպատվում ես իմ տոհմն ու ինձ,— հևաց Գոհարը։ Նրա նուրբ ռունգները լայնացան, կուրծքը վերուվար արեց։

— Ինչո՞վ,— հոնքերը կիտեց Մխիթարը։

— Որ դերվիշի պես նստել ես մեր դռանն ու ներս չես մտնում՝ մեր հացը կտրելու,— նույն վիրավորված ձայնով պատասխանեց Գոհարը։— Քեզ քաջ հայտնի պիտի լինի, թե ինչ է նշանակում հյուր գալ հայ մարդուն ու արհամարհել նրա հացն ու ջուրը։

— Ես այստեղ հյուր չեմ, այլ պատժող, բռնադատող, նվաճող,— տաքացավ Մխիթարը՝ առանց տակավին նայելու սիրելիի դեմքին։

— Նվաճո՞ղ...— կրկնեց Գոհարը։— Իրավունք ունես պարծենալու, քանի որ մինչև հորս ամրոցը նվաճելը, դու մի ավելի անառիկ ամրոց ես նվաճել...

Մխիթարը ցնցվեց։ Նայեց նրան ու, նրա աչքերում արցունքներ տեսնելով՝ սիրտը տակնուվրա եղավ։

— Գոհա՞ր...— գորովալից, ներողություն հայցող ձայնով շշնջաց նա ու հառաչեց։— Իմ նվաճած բոլոր բերդերից ու ամրոցներից ամենաթանկը քո սիրտն է, որ ավա՞ղ...

— Որի դռները ինքս բաց արի քո առջև, ինչպես բաց արի հորս ամրոցի դարպասը,— շտապեց Գոհարը։— Բայց ես քաղցր խոսքեր լսելու համար չեմ եկել քո դուռը։ Ես եկել եմ դառը խոսքեր ասելու քեզ, Մխիթա՛ր։ Դու անպատվեցիր իմ հորը՝ ծեծել տվիր նրան...

— Եթե նա քո հայրը չլիներ, կկախեի անտարակույս։

— Հնարավո՞ր է,— ցավով ասաց Գոհարը։— Բայց լսի՛ր, այլևս չեմ կարող հանդուրժել մի նոր անպատվություն։ Զգուշացի՛ր... Հավիտյան մի փակիր այն ամրոցի դռները, որ դու ամենաթանկն ես համարում քեզ համար։ Եթե մերժես իմ խնդիրը, ապա ոչ մի կամուրջ չի մնա իմ ու քո միջև...

Մխիթարի ճակատը վերից վար ակոսող երակը լարվեց, ձախ այտը ջղաձգորեն խաղաց... Նա վճռել էր մեկ օր էլ մնալ Բարխուդարի ամ-

բոցում և առանց նրա հետ սեղան նստելու, առանց հրաժեշտի հեռանալ՝ անպատվելով նրան։ Իսկ այժմ Գոհարը բոլորովին հակառակն է պահանջում։

— Դու պիտի հաշտվես հորս հետ և վերջնական,— պահանջեց աղջիկը։

— Դժվարինս կամեցար,— մռայլ ասաց սպարապետը։

— Կամ հաշտություն, կամ...— Գոհարի աչքերը լցվեցին բարկությամբ։

— Համբերի՛ր,— ձեռքերը թափահարեց Մխիթարը։ Նրա գլխում մի դաժան միտք ծագեց, որից ասես մի թանկագին բան փշրվեց սրտում... Նա նայեց Գոհարին, նայեց կարոտով, ափսոսանքով, այնպես, ինչպես նայում են ամենաթանկագին հարազատին հավիտյան կորցնողները։

— Բարի՛։ Կհաշտվեմ հորդ հետ,— վերջապես ասաց նա։

— Դա արդեն քո մեծահոգության ապացույցը կլինի,— թեթևացած հոգոց հանեց Գոհարը։

— Միայն մի պայմանով, որ հավիտյան վերջ տրվի ձեր ու Պղնձաքարի մելիքի միջև եղած թշնամանքին։

— Դա ազգօգուտ գործ է։

— Բայց այդ հաշտությունը ծանր գնով կլինի, Գոհա՛ր,— Մխիթարը դողաց ամբողջովին։

— Թող լինի։

— Դա զոհ է պահանջում։

— Լավ գործն առանց զոհի չի լինում։

Մխիթարը բռնեց Գոհարի երկու ձեռքն ու շնչահեղձ լինելով ասաց.

— Խոստացիր, որ այդ զոհողության մեծ բաժինը ինքդ կվերցնես քեզ վրա։

— Երկար տարիներ շարունակ ես ինձ զոհ եմ համարում,— աչքերը փակելով՝ շշնջաց Գոհարը։

— Բայց այս մեկն ավելի ծանր պետք է լինի, ահավո՞ր...— հևիհև ասաց Մխիթարը։ Գոհարն աչքերը լայն բաց արեց ու, չհասկանալով նրա միտքը՝ շշնջաց.

— Արա՝ ինչ կամենում ես։

— Գնա՛նք, գնա՛նք, թե չէ, թե չէ՛... Գնա՛նք։ Գնա հորդ հայտնիր, որ իմ սրտից խսպառ վերացված է դեպի նա ունեցած քենը, և ես գալիս եմ նրա տունը՝ ինչպես բարեկամ, հարազատ, սրտացավ։ Գնա՛, գնա ասա, իսկ ես կգամ աղուհացի, զոհի՛...

Մելիք Բարխուդարի տունը լցվեց ուրախությամբ։

Վերքերից դեռ լիովին չապաքինված, Բարխուդարը հրամայեց ոչ-

իարներ մորթել, գինու կարասներ բաց անել։ Ապա որդիներին ու կանանց պատվիրեց հագնել շքեղ, զարդարվել ու պատրաստ լինել սպարապետին տրվելիք ճաշկերույթին մասնակցելու։

— Գլուխ մի՛ կախիր,— հանդիմանեց նա Միհրան հարյուրապետին։— Պետք է խաղաղությամբ հեռացնել ամբարիշտին, թե չէ գլխնեբիս մի նոր փորձանք կբերի։

Բարխուդարն անվերջ վազվզում էր տան մեջ, երբեմն ձեռքով շոշափելով դեռ ցավող վերքերը։ Նա հայհոյում էր ծառաներին, խոհարարներին, շտապեցնում բոլորին, հսկում, որ ճաշը արքայավայել լինի։ Մաքրեցին, իստակեցին ճաշի մեծ սրահը, գորգեր փռեցին հատակին, կերոնների ու ջահերի փոշին սրբեցին։ Երբ ամեն ինչ արդեն կարգավորել էին, Բարխուդարը՝ կնոջ, դստեր, հարսների և տանու երեցի հետ մտավ սրահ։ Կանգնեցին դռների մոտ ու սպասեցին թանկագին հյուրին։

Միհրանն ու Պակին գնացել էին սպարապետի ետևից։ Ուշանում էին։ Բարխուդարին թվում էր, թե սպարապետը չի գա՝ մի նոր անպատվություն դնելով իր վրա։ Բայց ահա փողի ձայն լսվեց։ Բարխուդարը նետվեց միջանցքը՝ հյուրին դիմավորելու։ Սրահում քար լռություն իջավ։ Գոհարից բացի, մյուս կանայք ահից գունատվեցին, չիմացան որտեղ թաքցնեն գոհարազարդ մատանիներով ծանրացած ձեռքները։ Առաջին անգամն էր, որ մելիքը կանանց մասնակից էր անում իր սեղանին։ Չէին ուզում գալ, բայց ո՞վ կհամարձակվեր առարկել մելիքին։ Այժմ սպասում էին ահով ու թաքուն հետաքրքրությամբ։

Առաջինը սրահ մտավ սպարապետը։ Շեմն անցավ լայն, հաստատուն քայլերով, գլխաբաց, գլուխը բարձր, զինված։ Հետո մտան Տեր-Ավետիսը, Խնձորեսկի մելիքությանը հարևան Դիզակի տեր մելիք Եգանը, Եսային, Թովման ու զորքի մյուս հարյուրապետները։

Կանանց աչքերը հառվեցին Մխիթարի վրա։ Միայն Գոհարը չնայեց նրան։ Կանգնել էր հպարտ՝ հայացքը մի կողմ. այնպես խոր էր շնչում, որ կրծքի զարդերը խշշում էին։ Մտածում էր. «Ի՞նչ մեծ զոհողություն է պահանջում ինձնից Մխիթարը։ Մի՞թե քիչ է այն, որ ես նրա սիրուն փակվել եմ այս մռայլ ամրոցում և մերժում եմ իմ ձեռքը խընդրողներին։ Ուրիշ ի՞նչ զոհողություն է ուզում նա»։

Կանանցից մեկը ակամա «ա՜խ» արեց, սակայն, բարեբախտաբար, դա լսեց միայն սկեսուրը և կսմթեց նրա ձեռքը։ Մեղք չուներ խեղճը, այնպիսի՜ գեղեցկություն ու վեհություն ուներ սպարապետը, որ միշտ չորս պատերի մեջ փակված, գրեթե հարեմական կյանք վարող այդ կնոջը թվաց, թե հեքիաթի թագավոր մտավ սրահ։ Իսկ երբ Մխիթարը մոտեցավ նրա ձեռքը սեղմելու, քիչ մնաց ուշաթափվեր։ Մխիթարը սեղմեց միայն կանանց ձեռքերը, իսկ Գոհարին խոր գլուխ տվեց։

— Իմ եղբայրներ Պակին ու Միհրանն աշխարհի ամենաբախտավոր տղամարդիկ են,— ասաց Մխիթարը կանանց,— որովհետև ձեզ նման կիներ ունեն։ Եթե ես զայրացած չգայի ձեր ամրոցը, բոլորիդ համար Մոսուլի գոհարեղեն կբերեի։

— Քո ոտքը մեր տանը մեզ համար աստվածային շնորհ է, տե՛ր սպարապետ,— շտապեց խոսել մելիքի կինը։— Մենք գոհ ենք հայոց սպարապետից. նրա խրատը օգտակար է հոգուն ու մարմնին, ինչպես բարի, բայց խստապահանջ հոր խոսքն՝ իր զավակներին։

Նստեցին՝ կանայք մի կողմ, տղամարդիկ՝ մյուս։ Մխիթարին նրստեցրին սեղանի գլխին։ Սա Բարխուդարին հրավիրեց նստել իր աջ կողմը, իսկ ձախ կողմում նստեցրեց Թովմա հարյուրապետին. դա զարմանք պատճառեց բոլորին։ Նրա բազկակիցը միշտ Տեր-Ավետիսն էր. Մելիք Եգանը տարակուսած նայեց Տեր-Ավետիսին, սակայն սա աչքով արեց նրան։ Այսինքն թե՝ «բան կա, համբերիր»։

Սպասավորները պատգարակի վրա մի տուճ բերին ու մոտեցրին սպարապետին։ Սա կոթավոր փարչը կոխեց տուճի մեջ, լցրեց գինով։ Բարխուդարը փարչը վերցրեց նրանից և խմեց միջի պարունակության կեսը։ Կերուխումն սկսվեց։ Ուտում էին լուռ։

Սպարապետն աչքի պոչով նայում էր իր դիմացը, մի քիչ աջ նրստած Գոհարին, ու սիրտն արյունոտվում էր։ Գեղեցկուհին մռայլ էր, տխուր, կարծես գուշակել էր այն անսպասելի ծանր բանը, որ պիտի այդ օրը հասներ իրեն։ Սպարապետը խոսում էր միայն Թովմա հարյուրապետի հետ, երբեմն նրա ականջին այնպիսի բան շշնջում, որ երկուսն էլ միահամուռ քրքջում էին։ Այնպես արեց սպարապետը, որ բոլորի ուրադրությունը դարձրեց հարյուրապետի վրա։ Ինչո՞ւ է այսօր սպարապետն այդպես մտերիմ իր հարյուրապետի հետ,— մտածում էին շատերը։ Երկու անգամ Գոհարը նայեց Թովմային ու երկու անգամ էլ ցընցվեց։ Թովման զարմանալի նման էր սպարապետին։ Կարծես եղբայրներ լինեին՝ մեծ ու փոքր։ «Չի հանդարտվել դեռ, վրեժ է հանում ինձնից»,— ծանրորեն մտածում էր Բարխուդարը՝ տեսնելով, թե ինչպիսի սիրալիրությամբ է երկրի երկրորդ մարդը խոսում մի հասարակ հարյուրապետի հետ։

Ուշիմ Պակի զորապետը հետևում էր սպարապետի ու Թովմայի խոսակցությանը, ցնծում հոգու մեջ։ Հոր ապստամբությունը փշրվեց։ Դա լավ է, սպարապետը որքան մելիքներին հնազանդ ու կրնկի տակ ճզմված պահի, այնքան երկրի գործերը բարեհաջող կընթանան։ Դա Պակիի

համոզմունքն էր։ Ամեն գիշեր քնելուց առաջ նա երազում էր վերականգնված տեսնել հայոց թագավորությունը, և զարմանում էր, թե ինչո՞ւ մելիքներն ու իշխանները թագավոր չեն հռչակում Դավիթ-Բեկին կամ թեկուզ Մխիթար սպարապետին։

Ճաշը վերջացավ։ Կանայք, որ անհամբեր սպասում էին դրան, վեր կացան։ Քրտնել էին։ Հեշտ չէր սպարապետի ու մելիքների հետ սեղանակից լինել, մի բան, որ երբեք չէր լինում իրենց տանը։ Բարխուդարը Մխիթարից վախենալով էր ճաշին մասնակից արել նաև կանանց։ Նա գիտեր, որ սպարապետը չարանում է, երբ հայ իշխանները՝ պարսիկներից մնացած սովորությամբ, իրենց ճաշկերույթներին մասնակից չէին անում նաև կանանց։

Երբ կանայք գնացին, Մխիթարը կշտացած, ձեռքերը ծնկներին դրած մելիքներին խնդրեց սպասել մի պահ, պահեց նաև Միհրանին ու Թովմային, մյուսներին արձակեց։ Բարխուդարը չէր հասկանում, թե էլ ի՞նչ է կամենում Մխիթարը և ինչու մելիքների հետ պահեց նաև ճրո մելիք Թուրինջի որդուն։

Մխիթարը ձեռքերը ծալեց թիկունքին ու սկսեց անհամբեր քայլել սրահում։ Բոլորը նկատում էին, որ նա դառն մտքերի մեջ է։ Միայն երբեմն Մխիթարը շեշտակի նայում էր պատի տակ լուռ կանգնած ու իր խոսքին մնացող մելիքներին. ասես ինչ-որ մեծ վիշտ ուներ, որ կամենում էր հայտնել նրանց, բայց և զսպում էր։ Վերջապես նա ծանրորեն իջավ գորգի նստաբարձին, ոտքը ոտքով գցեց ու իր շփոթեցնող հայացքը մեխեց մելիք Բարխուդարի աչքերին։

— Դու արժանի էիր քառատվելու, մե՛լիք Բարխուդար,— հատ-հատ բառերով խոսեց նա։— Ով իր եղբոր վրա զենք է բարձրացնում, նա չպիտի վայելի արևի լույսը։ Այդպես չեն արել մեր շատ նախնիները, և դրա համար կործանվել է մեր երկիրը։ Այսուհետև այդպես պետք է լինի։ Բայց որովհետև ես բարձր եմ գնահատում քո ծառայությունները, ապա հավիտյան ներեցի քեզ։ Միայն այսուհետև զգուշացիր իմ բարկությունից և կատարիր իմ կամքը։

Նա լռեց, մթագնեց հոգում ծնված դառն մտքերից և մի քիչ մեղմ, բայց և այնպես տիրական ձայնով շարունակեց.

— Այսօր պետք է քո ու մելիք Թուրինջի տների միջև հավիտենական անքակտ բարեկամություն ստեղծվի, տե՛ր Բարխուդար։ Այդ բարեկամության համար այսօր պետք է մենք Թովմա հարյուրապետին փեսայացնենք քեզ։

Բարխուդարի աչքերն այնպես կլորացան, որ կարծես ուր որ է դուրս կթռչեն թավ հոնքերի տակ մթնած ակնախոռոչներից։ Սրահը պտտվեց գլխին. ամեն ինչ ծածկվեց թանձր խավարով, և միայն մի փոքրիկ լուսավոր շրջանակի մեջ երևում էին Մխիթար սպարապետի ահազդու աչքերը։ Նա ցանկացավ ճչալ, աղաղակել, օգնության կանչել, բայց մտքի հեռավոր ծայրում ծառս եղավ զգոնությունը, և նա հասկացավ, որ Մխիթարին հակառակելը իսպառ կործանում էր նշանակում։ Չէ՞ որ իր ամբոցն այժմ լիքն է սպարապետի զորքով, իսկ ինքը մի խղճուկ բանտարկյալ է նրա ձեռքում, ուստի նա խոնարհ գլուխ տվեց ու ասաց.

— Իմ աղջիկը չէ, տե՛ր սպարապետ, իմ կյանքն ու պատիվը քոնն են, արա՝ ինչպես քո լուսավոր միտքն է թելադրում։ Միայն հարկավոր է իմանալ նաև դստերս կամքը։ Նա իմ միակ աղջիկն է։

Վերջին բառերն արտասանելիս՝ նրա ձայնը դողաց։ Մխիթարը հայացքը գցեց Միհրան բեկի վրա։ Սա հասկացավ. սպարապետն իր կարծիքն էլ է ուզում իմանալ։ Չէ՞ որ ինքը Գոհարի մեծ եղբայրն է և քիչ իրավունք չունի քրոջ վրա։

— Իմ հոր խոսքը թանկ է իմ պատվից,— ասաց նա, նույնպես խոնարհվելով։

Մխիթարը չնայեց Թովմա հարյուրապետին։ Լավ արեց, թե չէ հարյուրապետը պատրաստ էր նետվելու նրա ոտքերն ու կոշիկները համբուրելու։ Խեղճ տղան, որ բոլորովին չէր սպասում նման մի հանկարծակի և մեծ բախտի, սկզբում սփրթնեց, հետո կարմրեց մինչև ականջների ծայրերը ու մնաց քարացած։

— Թույլ տուր, տե՛ր սպարապետ, գոնե խոսեմ զավակիս հետ,— խնդրեց Բարխուդարը։

— Ավելի լավ է նրան կանչենք այստեղ։ Նա երեխա չէ և այնպիսի կամք ունի, որ միանգամայն ազատ կարող է տնօրինել իր սեփական բախտը։

Դրանով Մխիթարը կանխեց հնարավոր մերժումը։ Գոհարին պետք է կանգնեցնել կատարված փաստի առաջ։

Գոհարին կանչեցին։

Սա սրահի շեմն անցավ բարկացած, նայեց գլուխը կախ, ընկճված ու խեղճացած հորը, ապա՝ սպարապետին, ու հասկացավ, որ եկել է զոհողության պահը, որ այդ օրն իրենից պահանջում էր Մխիթարը։ Նա հասցրել էր փոխել զգեստները։ Այժմ կարճ կապա էր հագել՝ երկնագույն թավշից։ Կապայի լայն բացված կրծքակալի եզրերը նախշված էին ոսկեթել ժապավեններով, երկար թևքերը վերջանում էին եռանկյունի ծոպերով, որոնք նույնպես երիզված էին ոսկե բարակ խողովակներով։ Մեջքի գոտին ամբողջովին ոսկուց էր։ Գլխի թագի վրա շողում էր բարձր ու մի քիչ ետ թեքած ակնազարդ ճարմանդը։ Կապայի տակից

հագել էր բաց մանուշակագույն շրջազգեստ, որի փեշերն իջնում էին կապույտ, արծաթապատ մաշիկների վրա։ Նրա ականջներից կախած էին խաղողի ողկույզ հիշեցնող գինդեր՝ շողուն ու հմայիչ։ Թիկունքն ի վար վիժում էր հնդկական թափանցիկ շղարշը։

Մխիթարը հազիվ կարողացավ զսպել իրեն, որ չգոռա, չաղաղակի, թե իրենն է այդ գեղեցկուհին, այդ հպարտ, բայց և դժբախտ աղջիկը։ Թովմա հարյուրապետը միայն մի անգամ նայեց իր հարսնացուին, ու թվաց, թե կանգնած է հենց արևի մոտ և ուր որ է մոխիր կդառնա։

— Մո՛տ արի, աղջի՛կս,— դողդոջուն ձայնով կանչեց Բարխուդարը, և արցունքի մի քանի կաթիլներ ընկան նրա մորուքի մեջ։

Գոհարն առաջ եկավ։ Մելիքը չկարողացավ շարունակել ասելիքը։ Կոկորդը խզվել էր, ձայնն այնպես կտրվեց, որ ասես երբեք չէր վերականգնվելու։ Գոհարը խղճաց հորը։ Հասկացավ, որ սպարապետը նեղն է լծել նրան, սակայն դարձյալ չկռահեց, թե ինչ զոհողություն է պահանջվում իրենից։ Այնինչ լռությունը ծանր էր ու տևական։

Հոգեկան մի մեծ ալեկոծություն էր ապրում նաև Մխիթար սպարապետը։ Հին սերն այրում էր նրա ողջ էությունը։ Երբեմն նրա աչքերի առջև բացվում էին Տրտու գետի երջանիկ օրերի պատկերները, այն աղբյուրը, որի մոտ առաջին անգամ իր գրկում գալարվեց Գոհարը։ Ինչո՞վ արդարացնի իր արարքը. ի՞նչ ասի սիրեցյալին, որ իր դեռաբույս կյանքի առաջին քաղցրանուշ պտուղները իրեն էր տվել միայն, և հիմա իր ձեռքով կտրտում է այդ կախարդական ծառի արմատները, նրան պոկում իր բնական տեղից ու հանձնում ուրիշ, օտար այգեպանի խնամքին։

Բայց Մխիթարը սովորություն չուներ ետ կանգնելու այն ճանապարհից, որ ընտրել էր։ Տեսնելով, որ ոչ ոք չի համարձակվում որևէ խոսք ասել՝ սպարապետը հավաքեց իր սառնասրտության վերջին բեկորները, զինվեց նրանցով ու ասաց.

— Աստծո և իմ ու քո հոր կամքով դու պետք է ամուսնանաս Թովմա հարյուրապետի հետ, Գոհա՛ր։

Ասաց ոչ իր, բոլորովին օտարի ձայնով, որ դաժան ու ծանր էր, ինչպես գերեզմանի մեջ գցած առաջին քարի խուլ դղրդը։

Գոհարը գունատվեց դանդաղ, ինչպես երկինքը՝ լուսաբացին։ Նրա այտերի կարմրությունը հալվեց ջրի մեջ ընկած գինու կաթիլի պես, և մնաց մի դալուկ ճերմակություն։

— Իսկ իմ ամուսնությունը ինչո՞ւ պիտի վճռվի այսքան պատվարժան մարդկանց ներկայությամբ,— կարողացավ հարցնել նա։— Մի՞թե դա այդքան կարևոր բան է։

— Այո, աղջի՛կս, քո ամուսնությունը միայն քո անձի գործը չէ,— միջամտեց մինչ այդ լուռ Տեր-Ավետիսը։— Քո ամուսնությունը հարկավոր է մեր հայրենիքին։

Տեր-Ավետիսի ասածներից հետո բացվեց նաև մելիք Բարխուդարի լեզուն։

— Դու առաջինն էիր, որ ինձ խնդրում ու ստիպում էիր հաշտվել Պղնձաքարի տերերի հետ, դո՛ւստր իմ,— ասաց գերեզմանից եկող ձայնով։— Այժմ եկել է այդ հաշտության պահը, և ես օրհնում եմ քո ու իմ փեսացու Թովմա հայրուրապետի՝ պատվարժան մելիք Թուրինջի որդու պսակը։

— Ամե՛ն,— շշնջացին մելիքները։

— Սուրբ տիրամայրը օգնակա՞ն լինի ձեզ,— բարձրաձայն օրհնեց քահանան։

— Աստված հատուցի՛,— ավելացրեց մելիք Եգանը։

— Դա միայն քո՞ կամքն է, հա՛յր իմ,— ոչ թաքցրած բարկությամբ հարցրեց Գոհարը՝ թեթևակի օրորվելով։ Նրա ձայնը խիստ էր, լիքը դառնությամբ ու բողոքով։

— Ե՛վ իմ, և՛ մելիքների, և՛, մանավանդ, մեր տեր Մխիթար սպարապետի կամքն է դա։

Արցունքները միանգամից ժայթքեցին Գոհարի աչքերից։ Նա մի ոչնչացնող հայացք նետեց սպարապետի վրա ու ասաց.

— Եթե մեր տեր սպարապետը, որի ստրուկներն ենք մենք, ինձ հրամայի նետվել կրակի մեջ՝ կկատարեմ անծպտուն։ Համաձայն եմ, արեք՝ ինչ ուզում եք։

Նա արագ դուրս եկավ։ «Մորթե՛ց, սպանե՛ց»,— մտքում տառապում էր սպարապետը։ Այնինչ Տեր-Ավետիսը շնորհավորում էր իրեն բոլորովին կորցրած, կարծես մեռած, բայց չթաղված Թովմային և նրա աներոջը՝ հոգով տապալված մելիք Բարխուդարին։

— Պատրաստվեցեք հարսանիքի,— լսվեց սպարապետի ձայնը,— յոթ օր քեզ ժամանակ, տե՛ր Բարխուդար...

Նա դուրս եկավ։ Նրան հետևեցին Տեր-Ավետիսն ու Թովմա հարյուրապետը։ Սրան թվում էր, թե ինքը գնում է նետվելու կրակի մեջ։ Միջանցքում հասավ սպարապետին, համբուրեց նրա ձեռքը։

— Ես հավիտյան պարտական եմ քեզ, տե՛ր իմ։

— Ուրա՞խ ես,— դառնությամբ հարցրեց սպարապետը։

Թովման երկու ձեռքով ծածկեց դեմքը։

ԴԱԺԱՆ ԱՆՁՆԱԶՈՀԸ

Մխիթար սպարապետը վրանից տեղափոխվեց մելիք Բարխուդարի ամարաթում իր համար պատրաստած հարկաբաժինը։

Մթնեց։ Մղձավանջային գիշերը նստեց ծանր, անհեռանկար։ Մելիքներն ու հարյուրապետները գնացին քնելու։ Մխիթարը մնաց գերեզմանի պես տխուր սենյակում, կանթեղի արնանման լույսի ու դառն խոհերի ծանրության տակ։

Ամրոցը խորասուզվել էր խորին անդորրության մեջ։ Գարնանաշունչ քամին երբեմն պոռթկում էր պատուհանի տակ ու շքանում... Լռությունը նորից էր սփռվում քնած ամրոցի վրա։ Մխիթարը կանգնել էր բաց պատուհանի առջև ու, նայելով կուպր խավարին, տառապում էր։ Չէր կարողանում մոռանալ այդ օրվա դեպքը։ Երբեմն բռնում էր գլուխն ու հառաչում ծանր. «Ես իմ ձեռքով սպանեցի իմ բախտը, աստվա՜ծ իմ, այս ի՞նչ արի ես...»։ Այժմ ամեն ինչ նրա համար օտար ու ատելի էր բովանդակ աշխարհում, մխիթարության ոչ մի հենարան չէր գտնում, ոչ մի լուսավոր շող չէր ծնվում նրա հոգում։

Նա լավ էր հասկանում, որ իր արածը ազգօգուտ գործ էր։ Դրանով նախ կհաշտեցնի թշնամի մելիքներին, ապա Գոհարին ուրիշի գիրկը նետելով՝ նրան կկտրի իրենից և գուցե ինքն էլ փոքր-ինչ մոռանա նրան։ Այո, հարկավոր էր այն, ինչ արեց ինքը, թեև անգթորեն բռնադատեց մի սիրող ու վեհ սիրտ։ Դա պետք էր՝ հանուն ավերակների վրա ստեղծած իրենց նորաբույս իշխանության։ Այդ քայլը թելադրեց նրա արթուն միտքը, զորավարի նրա վճռականությունը։ Իսկ սիրտը՞։ Օ՜... սիրտը ապստամբ էր։ Բողոքի ալիքը ծառս էր լինում նրա խորքից։ Սիրտը չէր հնազանդվում...

Բայց ուրախ էր, որ արդեն կատարել էր անդառնալի քայլը։ Եռ գնալու կամուրջն այրված էր այլևս։ Գոհարն իր համաձայնությունը տվեց ու հեռացավ՝ վիրավոր, չարացած, պատրաստ ամեն փորձանքի ու տառապանքի։

Այս սրտակեղեք մտքերի մեջ էր Մխիթարը, երբ սենյակի դուռն անաղմուկ բացվեց, ու անսպասելի հայտնվեց Գոհարը։ Մխիթարը սոսկաց։ Նրան թվաց, թե երազում է տեսնում աղջկան կամ նրա երևակն իր լարված, բորբոքված մտքի պատրանքն է։ Նա փակեց աչքերը՝ պատրանքից խուսափելու համար։

— Զղջո՞ւմ ես, տե՛ր սպարապետ,— կծու, օտարոտի ձայնով հարցրեց Գոհարն՝ առաջ գալով։ Երբեք նա Մխիթարին «տեր» չէր ասել։ Նրա

բերնից «Մխիթար» բառը միշտ հնչել է իբրև քաղցր երաժշտություն, իբրև անմոռաց մի երգ։

Մխիթարը բաց արեց աչքերն ու շշնջաց.

— Գոհա՜ր...

— Ես այլևս քեզ համար «Գոհարս» չեմ,— ձեռքը թափ տվեց հպարտ աղջիկն ու շարունակեց կշտամբող ձայնով։— Ես եկել եմ քեզ ասելու, որ քո հրամանին չէր, որ հնազանդվեցի, այլ իմ հոր ս.ան կենդանության և իմ եղբայրների կյանքի համար վիզ առա անկարելին։ Իմացի՛ր, եթե մի փոքր անգամ համոզված լինեի, որ իմ մերժումից հետո դու հիմնահատակ չէիր կործանի հորս տունը, չէր վտանգվի հայոց մեծերի միաբանությունը, ապա ոչ միայն քո, այլև աստծո կամքին հակառակ կկանգնեի, ձեռք չէի մեկնի Թովմա հարյուրապետին։

— Նա ազնվագույն երիտասարդ է,— կմկմաց Մխիթարը։

— Ինձ համար քեզնից բացի ուրիշ տղամարդ չի ապրում հողի երեսին,— Գոհարը հեղձամաղձուկ լինելով՝ փղձկաց։

— Դաժա՜ն ես,— հառաչեց սպարապետը։

— Դու դեռ իմ դաժանությունը կտեսնես, տե՛ր սպարապետ։ Զգուշացի՛ր ինձանից։ Անպատված կինն ավելի ահարկու է լինում, քան տափաստանի վագրը։

— Ես պատրաստ եմ մահն ընդունել քո ձեռքից միայն, և դա ինձ համար երջանկություն կլինի։

Գոհարը դառնորեն ժպտաց։

— Հարկ չէ, որ քեզ նման զորավարն այդպես խոսի։ Ես չեմ ցանկանում, որ հայոց զորքերի հրամանատարը տասնիննամյա անփորձ պատանու պես մի կնոջ առջև շփոթվի, կորցնի գլուխը և երեսը մաշի արցունքների ազի կաթիլներով։ Իմացի՛ր, որ մենք այլևս օտար ենք։ Բայց իմացիր նաև, որ ես ամեն ինչ կանեմ հանուն քո հզորության։ Ես կօգնեմ, որ դու ոչ մի ճակատամարտից գլխիկոր չվերադառնաս, ես իմ մատներով կխեղդեմ քո թշնամիներին։ Սակայն...

Գոհարը լռեց։ Մխիթարը հազիվ էր զսպում իրեն, որ չընկնի նրա ոտքն ու նրա ծնկները գրկելով՝ հազար անգամ ներողություն չխնդրի նրանից։

— Դու մոռացիր ինձ, տե՛ր սպարապետ,— դողդոջուն ձայնով ասաց Գոհարը։— Մոռացի՛ր։

— Իսկ դո՞ւ։

— Մի՛ փորձիր թափանցել իմ սրտի խորքերը։ Ես քեզ համար այլևս մի օտար կին եմ։ Մնաս բարո՛վ։

Նա շուռ եկավ ու գնաց դեպի դուռը։

— Գոհա՜ր կաց մի պահ ևս,— թուլացած ձայնով խնդրեց սպարապետը, բայց աղջիկն շտապեց իր ետևից ծածկել ծանր դուռը։

Մխիթարը երկու ձեռքով բռնեց գլուխը։

Իսկ դրսում արդեն գազազել էր գարնանամուտի քամին։

Առավոտյան սպարապետը զեկույց-նամակ գրեց Դավիթ-Բեկին։ Մեկ առ մեկ պատմեց, թե ինչպես է ինքը մտել Խնձորեսկ ամրոցը, պատժել մելիք Բարխուդարին։ Գրեց նաև, որ երկու թշնամի մելիքներին հաշտեցրել է, և շուտով կալանալու է Թովմա հարյուրապետի պսակադրությունը մելիք Բարխուդարի դստեր՝ Գոհարի հետ։ Նա Բեկին խնդրեց իր օրհնությունն ուղարկել նորապսակներին՝ այդ գրեթե բռնի ամուսնությանը շուք ու հանդիսավորություն տալու համար։ Հետո նա սուրհանդակ հղեց Զագեձոր՝ կնոջը և Վարդ-Խաթունին՝ պատվիրելով անհապաղ գալ Խնձորեսկ... Թովման ևս մարդ ուղարկեց հոր մոտ՝ հարսանիքի պատրաստություն տեսնելու պատվերով...

Գոհարի և Թովմա հարյուրապետի մոտակա ամուսնության լուրը տարածվեց գավառներում։ Ե՛վ զարմանում էին, և՛ ուրախանում։ Զարմանում էին, որ շատերի ձեռքը մերժած Գոհարն իր համար փեսացու է ընտրել վերջերս միայն մելիք դարձած, երեկվա ռամիկ Թուրինջի որդուն։ Ուրախանում էին, որ ընկավ գայթակղության քարը, թշնամությունը վերացավ Խնձորեսկի ու Պղնձաքարի մելիքների միջից, և նորից խաղաղություն ու միաբանություն ստեղծվեց հայոց տերերի շրջանում։

Այդ օրերին Խնձորեսկից բազում հրավիրակներ էին մեկնում Սյունիքի ու Արցախի գավառները՝ հայ մելիքներին հրավիրելով հարսանիքի։ Ճանապարհներին երևում էին զուգված-զարդարված խմբեր, որոնք շտապում էին մելիք Բարխուդարի ամրոցը՝ ավելի շուտ գեղեցկուհի Գոհարին տեսնելու ցանկությամբ, քան հարսանիքի հաճույքին։ Ջորիների վրա նվերներ էին բերում, ճակատները կարմրացրած ոչխարներ քշում՝ հարսանիքին ընծա։

Եկան ամենահեռավոր գավառներից անգամ։ Վարանդայի մելիք Բաղրը բոլորին զարմացրեց իր շքախմբով։ Միայն ճերմակ ձիեր հեծած վարանդացիները երեք ձեռք պարկապզուկ նվագողներ էին բերել։ Վեց հոգի ծանր շղթաներով կապած բերում էին մի ահռելի ցուլ։ Անասունի ճակատը, մեջքն ու պոչը կարմիր էր ներկված։ Նրա վրա կապել էին ձյունաճերմակ մի գառ ու մի կարմրակատար աքաղաղ։ Զվարճասեր վարանդացիները հագել էին կարմիր ու կանաչ զգեստներ և ծամածրռվելով պարում էին ցուլի առջև՝ գրգռելով նրան։

Խնձորեսկ մտան ահագին աղմուկ-աղաղակով։ Ամրոցի մուտքի մոտ իջան ձիերից ու նստոտեցին գետնին՝ պահանջելով, որ ինքը Բարխուդարն ու նորահարսը ոտքով դուրս գան իրենց դիմավորելու։ Մելիք Բաղրը գրկեց ոտքով մինչև ամրոցի դարպասը եկած Բարխուդարին, համբուրեց Գոհարի ճակատը։ Վարանդացիները «ախ» քաշեցին նորահարսի ճառագայթող գեղեցկությունից ինքնամոռաց։ Նրանցից յուրաքանչյուրն իր նվերը թափեց հարսնացուի գլխին։ Մետաքսի կտորներից, շալեղենից ու ֆոանգի ատլասից ծանրացած Գոհարը հազիվ էր քայլում դեպի տուն։

Եկավ Սաթենիկ տիկինը, չափից դուրս պճնված Վարդ-Խաթունի հետ։ Վերջինս երկնագույն ձիու վրա էր՝ հպարտ իր տոհմի բարձրությամբ։ Նրանց ընդառաջ գնացին մելիք Բարխուդարի կինն ու հարսները։ Մելիքի կինը լացակումած գրկեց Սաթենիկ տիկնոջը։

— Բախտավո՜ր լինեն,— արցունքն աչքերին շշնջաց Սաթենիկը։

Զրուցելով մտան կանանց հարկաբաժինը։ Վարդ-Խաթունը շորորում էր՝ զնգզնգացնելով թևերի թանկագին սուրմաները։ Այնպես էր ծիծաղում, որ հեռվում եղածներն անգամ նայում էին նրա կողմը։ Սաթենիկ տիկինն իրեն պահում էր աննկատելի։ Նա ամուր բռնել էր Ծամամի ձեռքը. սա խլված նայում էր հյուրընկալ կանանց, աշխատելով կռահել, թե նրանցից որ՞ն է իր եղբոր նշանածը։

Շուտով Խնձորեսկ ժամանեցին նաև Դավիթ-Բեկի համհարզն ու Հայոց ժողովի ատենադպիր Մաղաքիան։ Բեկն օրհնության թուղթ ու երկնագույն երանգներով հնդկական մի ծանրագույն մարգարիտ էր ուղարկել նորահարսին։ Մելիք Բարխուդարն արտասվեց, երբ Մաղաքիան հանդիսավոր ու երկարածոր կարդաց Բեկի օրհնության գիրը։

Պղնձաքարից եկան մելիք Թուրինջն ու նրա ժառանգները։ Զորը դղրդաց զուռնայի և ծանր թմբուկների խլացնող ձայներից։ Գեղջկական գույնզգույն զգեստներով պղնձաքարցիները ծիծաղ ու զարմանք առաջացրին։ Պարում էին կանայք՝ գլխներին խոնջայի սինիներ. տղամարդիկ գինի էին խմում։ Մի քանիսը որսի բազեներ էին թոցնում։ Մխիթարի պահանջով մելիք Բարխուդարն ընդառաջ գնաց փեսահորն ու ժողովրդի ներկայությամբ համբուրվեց նրա հետ։

— Հի՜, հի՜, հի՜...— քրքջաց աշտարակին կանգնաս Եսային։— Գայլը խեղճացավ, տեսա՞ք, տեսա՞ք, ոնց համբուրեց ռամիկ մելիքի մուրը։

— Ոնն էլ կհամբուրի։ Սպարապետի գլխովը շուռ գա, ներեց, թե չէ հիմա սուգ կլիներ այս ամրոցում,— հարեց Սեմեոնը։

Հարսանիքն սկսվեց։ Բարխուդարի տանու երեցը մի կերպ ոտքի կանգնեց (հարբած էր), սեղանն օրհնեց ու, եկեղեցուց եկած նորապսակ-

ներին կանգնեցնելով նրանց համար առանձնացված տեղը՝ կերկերուն ձայնով ասաց.

— Զկնի փրկության հոգու, հարկ է ամուսնուն գավազանով խրատել կինն յուր, զի մարմինն հանցավոր է ու տկար։

Խիստ ծիծաղելի հնչեցին անուս քահանայի ասածները։ «Ինչո՞ւ հենց այդ խոսքերը հիշեց ստահակը»,— վիրավորվեց Բարխուդարը։ Նա կարծեց, թե հյուրերը հոհոում են հենց իր վրա։ Չէ՞ որ երկու շաբաթ առաջ իրեն ծեծել տվեց Մխիթարը։ Ակնարկով կանչեց Միհրանին։

— Հեռացրու այդ սև բողոճին. ոտքը կտրիր իմ գավառից։

Երեք օր Բարխուդարի հարսանքասրահը չէր դատարկվում։ Խմում էին անհագուրդ։ Առիթը Մխիթարն էր տալիս։ Ծանր վշտից նա դեռ ուշքի չէր եկել ու կրծքով սեղանին հենված խմում էր՝ գուսաններին հրամայելով սիրտ մորմոքող բաներ երգել։ Գինին մոլեգնում էր բոլորի երակներում։ Երբեմն Մխիթարը բռունցքով խփում էր սեղանին։ Զգիտեին նրա մոլեգնության պատճառը։ Սաթենիկը բացատրում էր, թե գերի Նաղաշ Հակոբի վշտից է անում։ Ամուսնու մոլեգնության պատճառը միայն նրան էր հայտնի, և նա աշխատում էր մեղմացնել Մխիթարին, բնավ ցույց չտալով, որ ինքը տեղյակ է նրա մեծ վշտին։

Կիրակի օրը Մխիթարը հրամայեց մեկնել Պղնձաքար։ Շտապ կապեցին բաժինքը։ Բարխուդարն իր հովիվների առաջն արեց հինգ հարյուր ոչխար, հիսուն կով ու երեսուն ձի՝ դստերը նվեր։ Երբ հարսանիքի թափորը դուրս եկավ ամրոցի բակը, Մխիթարը մելիքներից պահանջեց նվերներ տալ փեսային։ Ինքը մի քսակ արծաթ նետեց Թովմայի գիրկը։ Տեր-Ավետիսը նվիրեց իր ոսկեպատ գոտին։ Բոլորը հետևեցին նրանց օրինակին։ Ով դրամ չուներ հետը, խոստանում էր ոչխար կամ ձի նվիրել փեսային։

Ժողովուրդը, որ թափվել էր այդ զարմանալի արարողությունը տեսնելու՝ մնաց բերանբաց։ Այդքան առատ նվեր չէին տեսել։ Բայց դա դեռ բոլորը չէր։ Երբ հարսանյաց թափորը դուրս եկավ ամրոցից, Մխիթարը մելիք Եգանին կարգացրեց Այլախից բերած երկու թնդանոթը բեռնել ջորիներին ու տանել Պղնձաքար։ Դա սաստիկ վշտացրեց մելիք Բարխուդարին։

— Բերդ է շինում Պղնձաքարը,— ատամները կրճտացնելով՝ ասաց կողքին գտնվող Պակի որդուն։

— Պետք է ուրախ լինես, աղջկադ ապահովության համար է,—շտապեց հանգստացնել Պակին։

Բայց զորապետներից թաքուն չմնաց այն նպատակը, որով այդպիսի լսված ու չտեսնված շռայլություն արեց Մխիթարը։ Ինքը Մխիթարն էլ էր լավ հասկանում, թե ինչ է անում։ Բացի սահմանային մի քանի բերդերից, ուրիշ ամրոց թնդանոթ չուներ։ Ամրացնել, հզորացնել էր պետք մելիք Թուրինջին։ Հիմա, երբ Թուրինջը երկու թնդանոթ ունի, ոչ ոք չի կարող մոտենալ Պղնձաքարին։

Երեկոյան հասան Պղնձաքար։ Մխիթարը հրամայեց հանգստանալ՝ վաղը հարսանիքը վերսկսելու համար։ Ծածուկ կանչեց Եսայուն և Թովմային։ Հրամայեց չքնել ու իրենց հարյուրակները պատրաստ պահել ամեն անակնկալի։ Ինքը գնաց ու փակվեց Թուրինջի օթևանում։

Առավոտյան հարսանիքը վերսկսեցին։ Ոմանք թեև քնել էին մեռածի պես, բայց դեմքներն ուռած էին, աչքերի տակ կապույտ պարկեր էին գոյացել։ Տեր-Ավետիսն օրորվում էր։ Գիշերը չէր քնել, գուսանների հետ խմել էր ձիերի ախոռում, նրանց երգել տվել մինչև խռպոտվելը։

Մեծ քարանձավում, որտեղ հարսանիքն էր, հավաքվել էին գրեթե բոլոր հյուրերը՝ կանայք ու տղամարդիկ։ Հազիվ էին գավաթները լցրել, երբ մեկը ներս ընկավ ու գոչեց.

— Դավիթ-Բեկը եկա՛վ...

Սպարապետը գավաթը ցած դրեց ու վազեց դեպի քարանձավի մուտքը։ Բոլորը թափվեցին դուրս։ Վարդ-խաթունն իրեն գցեց այն սենյակը, ուր քնել էր տիկին Սաթենիկի հետ։ Արագ սկսեց պճնվել, նոր զարդեր ավելացնել գլխին ու զգեստներին։

Զորքը շտապ շարվեց։ Գինով մելիքներն ու հարյուրապետները տաշտերով ջուր լցրին իրենց գլխներին՝ մի կերպ սթափվելու համար։ Սպարապետը մելիք Թուրինջի, Բարխուդարի, Եգանի և սրանց շքախմբերի հետ գնաց Դավիթ-Բեկին դիմավորելու։ Փողեր հնչեցրին։ Հարսանքավորները՝ մարդ, կին երեխա թափվեցին դուրս։ Դրոշակներ հանեցին։ Բեկի օդապարիկ երիվարը երկնագույն թռչունի պես խաղում, սլանում էր կարծես ոչ թե գետնի վրայով։ Հզոր կուրծքն առաջ մղած նժույգն ասես ուզում էր ետ հրել իր առջև եղած ամեն արգելք։ Թվում էր նրանով էր հպարտ, որ իր մեջքին կրում էր Հայոց աշխարհի պարծանքը։

Ովքեր առաջին անգամն էին տեսնում Բեկին, հմայվեցին զարմացած։

Դավիթ-Բեկը թուխ, ազնվական դեմք ուներ։ Հայկական բարեձև մորուքն ալեխառն էր, քիթն արծվենի, աչքերը շողուն, որ սևեռվում էին շփոթեցնող հայացքով։ Լայն ճակատի վրա տևական մի մտահոգություն էր դրոշմված, որ նշան էր նրա մշտապես փոթորկված ներաշխարհի։

Բարձրահասակ էր նա, լայնալանջ ու լայնաթիկունք, բայց ոչ թանձրամարմին։ Բնությունը ոչինչ չէր խնայել այդ մարդուն, ո՛չ մարմնական ուժ ու տոկունություն, ո՛չ կորով, ո՛չ խելք։ Նրան շրջապատողները

գիտեին, որ գահերեց զորավարը բարիով առաջնորդվող, արդարակորով ու երկայնամիտ մարդ է, դպրության գաղտնիքներին ծանոթ, զորավոր խոսքով և գործով, և վրեժխնդիր թշնամյաց ազգին հայոց։

Բեկը սրագագաթ գլխարկ ուներ՝ ծայրին Հայոց ժողովի ավագանուն պատկանելու կարմիր փունջ՝ ոսկեզօծ ծոպերով, որ միայն ինքն էր կրում՝ ի նշան գահերեց զորավարության։ Նրա ետևից բերում էին երկնագույն դրոշը՝ եզերքը կարմիր։ Բեկի նժույգը արծաթահունչ ձայնով խրխնջաց ու, ետևի ոտքերի վրա կանգնելով՝ մեխվեց տեղը։

— Ողջո՜ւյն Պնձաքարի բնակիչներին,— ձեռքը պարզելով գոչեց Բեկը։

— Ապրի Դավիթ-Բե՜կը,— որոտացին հարբած, խռպոտ ձայներով։

Գլխաբաց, շփոթված մելիք Թուրինջը գինի ու հաց պարզեց Բեկին։ Սա մեղմ ժպտաց, իջավ նժույգից ու դանդաղ մոտեցավ ծերունուն։

— Քո արևը թող միշտ առատ լինի մեր գլխին, տե՛ր Դավիթ-Բեկ,— կարողացավ ասել իրեն կորցրած Թուրինջը։— Ճաշակիր այս սուրբ գինին ու հացը, որ մեր պապերն են ավանդ թողել մեզ՝ մեր մի բուռ հողի հետ։

Բեկը հուզված բռնեց ծերունու աջը։

— Վկա է աստված, որ ես խաղաղությամբ ու սիրով եմ եկել քո տունը,— ասաց նա և Թուրինջի ուսը գրկած՝ գնաց նրա առաջնորդությամբ։ Նրանց ընդառաջ եկավ Վարդ-խաթունը, օծանելիքների գրգռիչ բուրմունք սփռելով՝ նա ընկավ Բեկի գիրկը, որն իր հորեղբոր որդին էր։

— Քիչ ես քո շուքով քաղցրացնում մեր աչքը, Դավի՜թ...— ասաց՝ արցունքներ թափելով։— Չգիտե՞ս, որ քեզ կարոտով ենք հիշում, քեզ նման մի տղամարդն էլ հերիք է, որ ամեն հայ հպարտանա, որ ինքը հայ է։

Դավիթ-Բեկը ներողամիտ ժպտաց։

— Ծաղկում ես, Վա՜րդ,— ասաց կատակով,— քեզ համար ձմեռ չկա, տեսնում եմ։

— Աստված ձմեռը հեռու տանի մեր աշխարհից։

Բեկը թողեց հորեղբոր աղջկա թևը ու Թուրինջին խնդրեց իրեն ցույց տալ Պղնձաքարի ամրությունները։ Միայն մելիքներին թույլատրեց ուղեկցել իրեն, մյուսներին հրամայեց գնալ և շարունակել հարսանիքը։ Թուրինջն իր թանկագին հյուրին տարավ ժայռակղզու պռունկը, ցույց տվեց ժայռերի մեջ եղած քարանձավները, գաղտնի անցքը։ Բեկը հետաքրքրվում էր ամեն ինչով։ Նա խոսում էր միայն սպարապետի ու Թուրինջի հետ։ Ցանկություն հայտնեց տեսնել նորափեսային։ Թովման եկավ կաս-կարմիր դեմքով, բայց անշփոթ ու մի քիչ էլ համարձակ։ Բեկը նայեց նրան, խորամանկ ժպտաց։ Հայացքով գտավ Բարխուդարին.

— Տեսնո՞ւմ ես, ի՜նչ փեսա ունես,— ասաց մեղմ։— Ես լինեի սրտանները՝ երեք գյուղ բաժինք կտայի հարսին։

Բարխուդարի գույնը գնաց։ Վրդովմունքը թաքցնելու համար պատշաճից ավելի խոր գլուխ տվեց ու ասաց կորացած.

— Ես արդեն որոշել եմ երեք գյուղ նվիրել Թովմա հարյուրապետին։

Բեկն աչքով արեց Մխիթարին։ Իրար հասկացան։ Մխիթարը ցնծում էր։ Ինչպե՞ս չցնծար. Բեկը հավանում էր իր կատարած քայլը։

Բեկը կատակներ արեց մելիքների հետ։ Մելիք Բարխուդարը թեև լսում էր նրան ու ինքն էլ ծիծաղում մյուսների պես, բայց սրտից արյուն էր կաթում։ Վիրավորված էր, որ Դավիթ-Բեկը շնորհ չէր արել գալ իր տունը և դա դեռ հերիք չէր, ահա եկել է ճրու մելիք Թուրինջին հյուր։ Այդ բանը նա անպատվություն էր համարում իր համար։ Բացի դա, հասկանում էր, թե ինչու Բեկը խորամանկ կերպով իրենից երեք գյուղ կորզեց ու տվեց Թուրինջին։ Տուգանք առավ, պատժեց դրանով։ Բայց դրանով կբավարարվի՞, թե դեռ մեծ պատիժն առջևումն է։ Աստվա՜ծ գիտե։ Ինչպե՜ս կուահես, Բեկի աչքերին նայել չի լինում։

Ամրոց-ավանը դիտելուց հետո միայն, Բեկը ցանկություն հայտնեց ներկա լինել հարսանիքին։ Հարսանքատան մուտքի առջև նրա ոտքի տակ մի տարեկան հորթ մորթեցին։ Բեկը անցավ արյան վրայով։ Հարսանքատան առաջ, գորգերի վրա կանգնած նրան էին սպասում կանայք։ Երբ մոտեցավ, բոլորը, բացի Վարդ-խաթունից, գլուխ խոնարհեցին։ Բեկը սեղմեց Սաթենիկ տիկնոջ ձեռքը, շտկվեց, նայեց վախեցած, իրենով հիացած կանանց և աչքը պահեց Գոհարի վրա։ Սա շիկնեց ամբողջովին։ Բեկը մոտեցավ նրան և ուսերը բռնելով՝ համբուրեց նրա ճակատը։

— Տարակույս չկա, որ դու բախտավոր կլինես այս նոր ամրոցում, Գոհա՜ր,— ասաց ժպտուն։— Հույս ունեմ, որ դու քո ազնվությամբ ու հայրենասիրությամբ օրինակ կլինես բոլոր հայ տիկիններին։

Ցսպասելով պատասխանի, նա արագ հեռացավ տիկինների մոտից ու գնաց, նստեց իրեն հատկացված տեղը։

Հարսանքատան քարե առաստաղը քրտնել էր համադամ կերակուրների գոլորշիներից։ Չէր կարելի որոշել սփռոցների գույնը։ Գինին հեղվել էր նրանց վրա։

Մելիքները խմում էին զուսպ, ուտում էին նույնպես սակավ, իսկ նայու խումբը խժռում էր, ինչ դնում էին իրենց առջև։

— Պի՜նդ կեր, Սեմեոն,— հռհռում էր Ծատուրը։— Տեսնենք մեկկել ե՞րբ է մեր տեր սպարապետը մեզ հարսանիք տանելու։

— Էնքան կերա, որ գոտիս կտրեց,— գլուխը թափ էր տալիս Սեմեոնը։

Նսային դաշույնով կտրեց թոնրում խորոված ոչխարի ճուռը ու դեմ արեց նրա բերանին։

— Կե՛ր, է՛, կե՛ր... Էժան ալյուր, դու՝ քո հոգին, կե՛ր։ Մելիք Բարխուդարի ունեցվածքից է։ Զուտողի ապրանքն ուտողին հալալ է, կե՛ր...

Հարսի գլխավերևը կանգնած աղջիկները երգում էին տխուր, մելամաղձոտ, բողոքող, բայց և դուրեկան ձայնով.

«Նախեցեք ու մի վախեք,
Վա՛յ հազար, ինձ կորցնողին»։

Մխիթարին թվում էր, թե երգն իրեն է ուղղված։

***

Խնջույքը վերաջացավ. բոլորը գնացին իրենց հատկացված օթևանները։ Որդիների հետ մենակ մնալով, Բարխուդարը երկու ձեռքով խփեց գլխին ու հեկեկաց։

— Անպատվե՛ց, խայտառակե՛ց ինձ,— խեղդվում էր նա։— Իմ հրավերին չեկավ, այնինչ կտրեց ճրո մելիքի հացը. մի տկլոր հարյուրապետի հարսանիքին շնորհ արեց... Վա՛յ ի՛նձ, վա՛յ...

— Այդ տկլորը հիմա քո փեսան է, հա՛յր,— փորձեց հորը հանգստացնել Պակին։— Ասել է թե քո որդին է, և դու պետք է ուրախ լինես Բեկի կողմից Թովմա հարյուրապետին տրված պատվից։

— Իմը խլեցի՞ն, ուրիշին տվին,— գոչում էր Բարխուդարը։— Վաղը Բեկն ինձ կպատժի։ Այս գիշեր Մխիթարը կթունավորի նրան, կլարի իմ դեմ։ Աստվա՛ծ իմ, այս ինչ աղետ է, որ դու բերում ես իմ գլխին։

Առավոտյան Բեկի համհարզը եկավ Բարխուդարի ու նրա որդիների տունը։ Բարխուդարը բոլորովին կորցրեց արիությունը։

— Կանչում է պատժելո՞ւ, գլխատելո՞ւ,— ողբագին ասաց նա ու փաթաթվեց զավակներին։— Կանչեցեք Գոհարին, ասացեք թող գնա Բեկի ոտքը, միայն նա կարող է փափկացնել մարդախոշոշ առյուծի սիրտը։

Բայց Գոհարին կանչելու ժամանակ չկար։ Համհարզի գնալուց անմիջապես հետո եկավ ատենադպիր Մաղաքիան ու ասաց, թե Բեկը զարմանում է, թե ինչու է Բարխուդարն ուշանում գալու, բարի լույս մաղթելու իրեն։

Գնացին. ճանապարհին Բարխուդարը Մաղաքիային հարցրեց.

— Ինչո՞ւ է սպասում ինձ, սիրելի՛ս, ասա՛, աստծո՛ւ սիրուն, մի՛ թաքցրու։

— Մարգարեն ինքն անգամ չի կարող գուշակել Դավիթ-Բեկի միտքը, տե՛ր մելիք, մի՞թե քեզ հայտնի չէ դա,— խուսափուկ պատասխանեց ատենադպիրը։

Մելիքին ու նրա որդիներին տարան մի ընդարձակ, քարակոփ սենյակ։ Հասարակ մի աթոռի վրա նստած էր Բեկը. նրա երկու կողմերին կիսաշրջան բոլորել էին Պղնձաքարում գտնվող մելիքները, հարյուրապետները։ Բարխուդարն ու նրա որդիները ընկան Բեկի ոտքերը։

— Վե՛ր կացեք,— ցածր, բայց ահազդու ձայնով հրամայեց Բեկը։

Վեր կացան, բայց և իսկույն ետ-ետ գնացին։ Բեկը չէր նայում Բարխուդարին։ Նրա հաստ, թեթևակի սպիտակած հոնքերը բարդացել էին ցոլուն աչքերի վրա ու անթարթ նայում էին մի կետի։ Ոչ ոք չէր շարժվում, ծպտուն չէր հանում։ Նույնիսկ կարծես չէին շնչում։ Լռությունն այնպես խոր էր, որ լսվում էր անդունդի խորքում գալարվող գետի հեռավոր մռնչոցը։

Մելիք Բարխուդարը հազիվ էր մնում ոտքի վրա։ Նրան թվում էր, թե հիմա վայր կընկնի ու այլևս չի կարողանա վեր կենալ։ Շնչում էր ծանր, խեղդվելով։ Հանկարծ նա իր վրա հառած զգաց Բեկի հայացքն, ու սիրտը նվաղեց։

— Դե՛,— հարցրեց Բեկը՝ նստած տեղը շեշտակի թեքվելով առաջ։

— Ներիր ինձ, տե՛ր Դավիթ-Բեկ։ Հայտնի է, որ ես իմ գլուխն ու իմ զավակների կյանքը Հայոց ժողովին եմ նվիրել։ Հիշիր իմ ծառայությունները քեզ ու մեր գործին։

— Ես պատասխան եմ պահանջում այն անմեղների կողմից, որոնց արյան հեղման պատճառը եղար քո արարքով,— մռնչաց Բեկը։

— Դրա համար մեղա եմ գալիս, տե՛ր իմ։

— Ես զարմանում եմ, թե ինչո՞ւ է Մխիթար սպարապետը թողել, որ դու այժմ շնչես հայոց անապական օդը։

Բեկը երկար լռեց։ Բոլորը գիտեին, որ իրարամերժ վճիռներ էին այդ պահին անցնում նրա գլխով։ Վերջապես նա ծառս եղավ տեղը, սյունացավ իրենից ահագին կարճ Բարխուդարի դեմն ու գոչեց.

— Դու չգիտեի՞ր, որ Թուրինջին իմ հրամանով է մելիքություն տրվել։ Դու չգիտեի՞ր, որ ես կենդանի չեմ թողնում այն մարդկանց, որոնք սեպ են խրում մեր միաբանության մեջ։

— Վա՛յ ինձ, վա՛յ իմ գլխին,— աղաղակեց Բարխուդարը։

— Գո՞հ չես, որ հող եմ տալիս անհողներին, ռամիկներին։ Ապա

ո՞ւմ տամ, ո՞ւմով պահենք երկիրը, ապա քաղցած տկլորներով կպահե՞ս աշխարհը Հայոց. մուրացկա՞ն մնա ժողովուրդը՝ քո ճարպերը ուռեցնելու համար։ Հակառա՞կ ես կամքիս, կամքին Հայոց ժողովի։

Բարխուդարը, ետ-ետ գնալով՝ կպավ անծեփ պատին ու բնկավ։ Բեկը շուռ եկավ, նստեց տեղը, հևաց։ Բոլորը կարկամել էին. Պակին սպասում էր, որ հիմա հորը քարշ կտան դուրս ու կմորթեն։ Նա սարսափից փայտացել էր։ Բայց Միհրանը, որ ավելի քաջատեղյակ էր Դավիթ-Բեկի բնույթին, չէր սարսափում այլևս։ Գիտեր, որ վտանգն անցել է, ու հայրն ազատվել մահապատժից։ Եթե Բեկը մեկին որշել էր գլխատել, ապա առանց հարցաքննելու կատարում էր իր վճիռը։

— Է՛յ,— լսվեց Բեկի ձայնը,— բարձրացրեք ձեր հորը։

Որդիները բարձրացրին մելիքին։ Բեկը ձեռքով արեց, որ սա գա, կանգնի իր սովորական տեղը՝ իրենից աջ, երրորդը՝ սպարապետից ու Տեր-Ավետիսից հետո։ Հազիվհազ իրեն հավաքելով՝ Բարխուդարը կանգնեց տեղը։

— Այսօրվա հարսանյաց տոնակատարության պատվին և քո զավակների սիրույն եմ ես ներում քեզ, մելի՛ք Բարխուդար,— խոսեց Բեկը։— Բայց թող քեզ համար դաս լինի՝ այսուհետև զանց չառնել վերևից եկած հրամանը, որ աստծու կամքն է... Ապա դաս լինի թող բոլոր նրանց, ովքեր սրտում քեն ունեն ժողովրդի դեմ։ Մենք երկիրը կարող ենք պահել՝ միայն դիմադիր կանգնելով թշնամուն։ Իսկ այդ դիմադիր ուժը ժողովուրդն է։

Քիչ հետո նրանք արդեն նստել էին հարսանքատանը և վայելում էին գինի ու գուսանների երգը։ Բեկը մտերիմ խոսում էր մելիք Բարխուդարի ու նրա որդիների հետ։ Ասես ոչինչ չէր եղել։

Կեսօրին մելիքները նորից հավաքվեցին Բեկի մոտ։ Նրանք մեկ առ մեկ պատմում էին իրենց գործերի մասին։ Բեկը լուռ էր ու մռայլ։ Դժվար էր կռահել պատճառը։ Յուրաքանչյուրին թվում էր, թե Բեկն իր վրա է չարացած. հիշում էին իրենց արած մանր ու մեծ մեղքերը։ Բոլորին հայտնի էր, որ Դավիթ-Բեկից ոչինչ ծածուկ չի մնում, որ նա Հալիձորի աշտարակներից արծվի հայացքով տեսնում էր երկրի շեներում ու ամրոցներում կատարվող դեպքերը, լսում հաստ պատերի մեջ ասված խոսքը։ Երբեմն, երբ մելիքներից կամ զորապետներից մեկը որևէ բան էր մոռանում զեկուցելու, Բեկը հոնքերը բարձրացնում էր ու հարցնում.

— Ամե՞նն ասացիր, ոչի՞նչ չմոռացար։

Բոլորին լսելուց հետո նա դարձավ մելիք Բարխուդարին.

— Արաքսի ափին զոհվել է իմ սիրելի հարյուրապետներից մեկը, որ Հալիձորի Երկրի ապավեն գնդի արի զորապետներից էր։ Նրա տեղն

ազատ է, և ես վճռել եմ վերցնել քո Պակի որդուն։ Թող հենց հիմա նա մեկնի Հալիձոր՝ իր կնոջն ու զավակներին վերցնելով հետը։ Նա այնտեղ կվայելի իմ հայրական սերն ու հովանավորությունը։

Պակին ցնծաց։ Նրա գերագույն նպատակն էր լինել Դավիթ-Բեկի սեփական գնդում՝ երկրի երևելիների հետ։ Մանավանդ հեռու կլիներ դաժան հոր անսպառ թոնթորանքներից և մեծ եղբոր նվաստացուցիչ հրամաններից։ Պակին ուրախանում էր հոգու մեջ, այնինչ նրա հոր սիրտն ասես սառել էր։ «Պատանդ է տանում զավակիս ու թոռնիկներիս,— մտածում էր նա։— Բեկը չի վստահում ինձ։ Շղթայում է ձեռքերս, ա՜խ, խորամանկնե՛ր։ Այս բոլորը Մխիթարի արարքներն են։ Եվ ինչո՞ւ գլխիս փչեց հարձակվել այս ամրոցի վրա»։

— Դրանով դու ինձ մեծ շնորհ ես անում, տե՛ր Դավիթ-Բեկ— ուշքի գալով՝ շտապեց ասել նա՝ շինծու ժպիտը դեմքին։— Ես հավիտյան երախտապարտ կմնամ քեզ։

Դավիթ-Բեկը հայացքով գտավ մելիք Թուրինջին, որ կանգնել էր ամենից վերջում, խեղճ ու կրակ։

— Գաղթականներ շա՞տ կան Պղնձաքարում, տե՛ր Թուրինջ,—հարցրեց նա։

— Հը՞,— հարցը ուշ գլխի ընկավ Թուրինջն ու անհամարձակ առաջ եկավ։— Գաղթականնե՞ր, հարցնում ես, տե՛ր գահերեց։ Կան։ Էլի են գալիս։

— Էլի կգան,— ասաց Բեկը։— Ամենից շատ գալիս են Պարսկաստանից։ Շահ Աբաս հայակերի գերած, Պարսկաստան տարած հայերի ժառանգներն են։ Ջեն հանդուրժում օտարի լուծը։ Թողնում են ամեն ինչ ու գալիս։ Լուր կա, որ հինգ հազար ընտանիք հասել են Սև լեռները և ուր որ է կանցնեն Արաքսը։ Պիտի տեղավորել նրանց, մելիքնե՛ր։ Պարզեցեք, թե ձեր գավառներում որտեղ դատարկ գյուղեր կան, թող գան, բնակվեն այնտեղ։ Հրամանս է՝ ընդունել բացգիրկ. հող տալ, ապրուստի միջոցներ տալ և ապա հարկուտուրք չառնել նրանցից, մինչև ամրանան։ Պա՞րզ է, պատվելի մելիքներ։

— Պատրաստ ենք հրամանիդ, տե՛ր գահերեց զորավար.— պատասխանեցին մելիքները։

Բեկը երկար խոսեց գաղթականներին տեղավորելու մասին ու վեր կացավ։ Դուրս եկան նաև մյուսները։ Գիշերը մոտենում էր իր կեսին։

Առավոտյան, երբ դեռ լեռների կատարները չէին հրդեհվել արևի կրակից, հնչեցին այգեբացի փողերը։ Իսկ քիչ հետո զորքի գլուխն անցած՝ դուրս եկավ Դավիթ-Բեկը։ Մելիքներն ու զորապետները նրա հետ էին։

***

Ամեն ինչ կատարվեց անսպասելի. իր արածն իրականությունից դուրս էր թվում Գոհարին։ Զարմանում էր, թե ինչպես համաձայնեց դառնալ մի մարդու կին, որին ընդամենը մի անգամ էր տեսել, որի նմաններին նայել էր վերից, ինչպես վայել էր իր նման ազնվազարմ ու հպարտ մեկին։

Առագաստի գիշերը բնավ չքնեց, ամուսնուն չթողեց մոտենալ մահճին։ Առավոտյան, լսելով ամրոցից հեռացող զորքի փողահարությունը, կիսով չափ բարձրացավ անկողնուց ու սարսափեց իր հետ կատարվածից։ Զգնաց Դավիթ-Բեկին ու Մխիթարին ճանապարհելու։ Վիրավորված էր մինչև սրտի խորքը։

Երբ փողհարության ձայնը հեռացավ ու աստիճանաբար մարեց, կարծես աշխարհը լցվեց մի անողորմ դատարկությամբ։ Ամեն ինչ անիմաստ էր նրա համար։

Առաջին անգամ քննախույզ նայեց իրենից մի քիչ հեռու, գորգի վրա զգեստներով պառկած ամուսնուն։ Թովման քնել էր մանկական անմեղությամբ՝ գլուխը ետ թեքած, առատ մազերը գորգի նախշերին։ Լուսաբացի շողը խաղում էր նրա անարատ դեմքին, որից մաքրություն, հոգու պարզություն և միաժամանակ մի մեծ նվիրվածություն էր ճառագում։

«Ահա և իմ ամուսինը,— մտածեց Գոհարն ու դառնորեն ծիծաղեց։— Դու էլ ինձ նման անբախտ կլինես, թշվա՜ռ,— մտովի խոսեց նրա հետ։— Ես քեզ չեմ սիրի իմ ողջ կյանքում։ Բայց և քեզ հետ կլինեմ հավիտյան։ Կլինե՜մ»։

Հիշեց Մխիթարի տառապած հայացքը։ Ընթրոստացավ նրա դեմ։ «Կատաղի՜ր, քրքրվի՜ր...— Մխիթարի հասցեին շպրտեց նա։— Ի՜նձ ինչ. դու քո ձեռքով թաղեցիր քո բախտը»։ Խղճաց Թովմային։ Երեկոյան, երբ մենակ մնացին առագաստի սենյակում, և երբ խեղճը ցանկացավ բռնել իր ձեռքը, կոպտորեն հրեց նրան ու հրամայեց չմոտենալ իրեն։ Ոչինչ վերաբերմունք ցույց չտվեց նրա ծնկաչոք պաղատանքներին, սպառնալիքներին։ Միայն համառորեն կրկնեց. «Հեռացի՜ր, մի՜ մոտենա ինձ»։

Ու մնաց մենակ՝ իր մտքերի ու ցավերի հետ։

Երկար նայեց Թովմային, նորից նկատեց, որ մի վայրենի, բայց և վեհ ու գեղեցիկ բան կա նրա գրեթե պատանեկան դեմքին (Թովման իրենից հինգ տարով փոքր էր)։ Խղճահարության պես մի բան ծագեց

նրա սրտում։ Վեր կացավ, մետաքսե վերմակը (հոր տնից էր բերել) նետեց մի կողմ ու բոբիկ, միայն գիշերային շապիկով մոտեցավ ամուսնուն։

Ամուսինը շնչում էր խաղաղ՝ հոգնածությունից խոր քնած մարդու բավականությամբ։ Գոհարի սիրտը թպրտաց, կուրծքն սկսեց վերուվար անել։ Դիմացը կարծես Մխիթարն էր։ Բարկացավ, թե ինչո՞ւ Մխիթարը դուրս չի գալիս իր սրտից։ Մի՞թե հնար չկա նրա անունն ու պատկերը պոկել կրծքից։ Երբ համոզվեց, որ դա լինելու բան չէ՝ կատաղությամբ լցվեց Մխիթարի դեմ։ Վրեժի մի մեծ զգացում վառվեց նրա վիրավորված սրտում։ Դրանից մղված՝ նետվեց Թովմայի գիրկն ու սկսեց համբուրել նրան...

Թովման արթնացավ իսկույն։ Մի պահ չհասկացավ, թե ինչ է կատարվում իր հետ։ Հետո գիտակցեց եղածը և ուժեղ բազուկներով փաթաթվեց կնոջ պարանոցին... Գոհարը աչքերը փակեց ու մոռացավ ամեն ինչ...

...Դրսում բոլորովին խաղաղ էր։ Միայն ինչ-որ տեղ բառաչում էր մի անհանգիստ մատակ։

...Վերջապես Գոհարը խառնեց ամուսնու մազերն ու ասաց.

— Քնով էիր անցել, երեխա՜... Իսկ Դավիթ-Բեկը մեկնեց։ Զգնացիր բարի ճամփա մաղթելու։ Ամաչի՜ր, հարյուրապետ ես ու մելիքի զավակ...

— Բեկը գնա՞ց,— անսպասելի, անհուն երջանկությունից իրեն կորցրած հարցրեց Թովման։

— Վե՜ր կաց, ինձ տար հորդ մոտ,— հրամայեց Գոհարը։

Ի՞նչ իմանար խեղճ գեղջուկի զավակը, որ հենց այդ պահից իրեն բախտ է վիճակված ընդմիշտ կատարել քմահաճ կնոջ հրամանները։ Բայց Գոհարի հրամանը քաղցր մի պարտականություն համարեց իր համար։

Պղնձաքարցիները տխրել էին։ Փոքր-ինչ առաջ այնքան թանկագին հյուրեր ունեին, իսկ այժմ միայն ծեր ու պառավ խնամիներն էին մնացել։ Մյուսները մեկնել էին՝ երեկվա թշնամու աղջկան թողնելով իրենց տանը։ Ի՞նչ պիտի անի այստեղ այդ գոռոզ մելիքի նույնքան գոռոզ աղջիկը,— մտածում էին պղնձաքարցիները։

Մելիք Թուրինջը վերադարձել էր Բեկին ու սպարապետին ճանապարհ դնելուց, և սրտում մի մեծ ուրախություն՝ բազմել իր սովորական տեղը։ Երբ հարսն ու որդին ներս մտան նրա սենյակը, նա շփոթությունից կանգնեց ու գլուխ տվեց հարսին, բայց զգալով, որ անհարկի ու ծիծաղելի բան արեց՝ արագ նստեց տեղը։

Գոհարն աննկատելի ժպտաց, մոտեցավ, բռնեց սկեսրայրի ձեռքն ու խոնարհ համբուրեց։ Մելիքն իրեն բոլորովին կորցրեց։ Բայց և փրքվեց՝ չիմանալով անելիքը։ Հարսն ասաց, որ ինքն ուզում է նայել գյուղը։

Երեքով դուրս եկան քարանձավից։ Ժայռի պռունկով անցնելիս Գոհարին թվաց, թե քայլում է երկնքի ու երկրի միջև, դատարկ տարածության վրայով։ Զարմանալի գեղեցիկ, կախարդող տեսարաններ բացվեցին նրա առջև։ Գետի մյուս կողմում կաղնու անտառն էր՝ մուգ, թանձր գույներով։ Անտառն սկսվում էր լեռնագագաթի ձյունների տակից ու անփութորեն իջնելով՝ խառնվում գետի փրփուրներին։ Գետի այս ափին վայրի խնձորենիների մի մեծ զանգված էր գանգուրված։ Համատարած զմրուխտ կանաչի մեջ գետը նման էր մեկի կողմից մոռացված արծաթ գոտու։

«Կարո՞ղ եմ այստեղ փոքրիշատե բախտավոր լինել,— ինքն իրեն հարցրեց Գոհարը։— Ա՜խ, եթե կարողանամ մոռանալ նրան, մոռանա՜լ, ատե՛լ...»։

Նա զգաց, որ արևն այստեղ ինչ-որ յուրահատուկ համ ու ջերմություն ունի, մի բան, որ չէր զգացել Խնձորեսկի կիրճում։ Այստեղ հրապուրիչ էին նույնիսկ լերկ ժայռերը՝ իրենց խոժոռ ու հպարտ ձևերով։

Գոհարը երկար շրջագայեց։ Սկեսրայրի ու ամուսնու հետ մտավ Արևմտյան Հայաստանից փախստական գյուղացիների խրճիթ-քարանձավները։ Ոմանց հարցուփորձ արեց. խոսում էր միայն ծեր սկեսրայրի հետ։ Ամուսնու վրա ուշք չէր դարձնում։ Ուշք չէր դարձնում նաև գեղջուկ կանանց վրա, որոնք ամեն կերպ աշխատում էին արժանանալ նրա մի քաղցր ժպիտին, մի խոսքին։

Ցանկություն հայտնեց ելնել ամենաբարձր ժայռը։ Ծերունին առարկեց, բայց տեսնելով, որ հարսն արդեն մագլցում է վեր, ինքն էլ հետևեց նրան՝ հառաչելով ու տնքտնքալով։ Ժայռի վրա մի մենավոր մասրենի կար միայն։ Այդտեղից երևում էր ամբողջ հովիտը։

— Այստեղ ինձ համար երկու սենյակ պիտի կառուցել,— ասաց Գոհարը,— հենց այսօր պետք է սկսել։ Շենի մատչելի տեղերը, որտեղից հնարավոր է մուտք գործել մեր ժայռերը, պետք է պարսպել կրկնակի պատերով, դարձյալ հենց այսօրվանից։ Վարպետներ գտեք։ Փողը ես կտամ։

Հայր ու որդի գեղջկական միամիտ տարակուսանքով նայեցին միմյանց։ Լռեցին սակայն։ Իջան ժայռից։ Գոհարը, որ գնում էր առջևից, ջեշտակի ջուռ եկավ նրանց կողմը։

— Լսեցի՞ք,— հարցրեց իշխանավայել ձայնով։— Որպես հարս, ես հլուհնազանդ կլինեմ ձեզ։ Բայց մի՛ մոռացեք, որ ես մելիք Բարխուդարի դուստրն եմ։ Իմ հայրը, Դավիթ-Բեկից առաջ, ոչ մի թագավորի ու խանի հարկ չի տվել։ Պետք է, որ իմանաք։ Ես կարող եմ ոչ միայն մի ամրոց, այլև մի ամբողջ թագավորություն վարել։ Տան գործերին չեմ խառնվի, բայց դրսի բաներում պետք է լսեք միայն ինձ։ Մի կարծեք, թե հայրս ինձ խնայելով՝ հեշտությամբ կուլ կտա այս կոշտ պատառը։ Նա դեռ կգա մեզ վրա։ Պետք է ամուր ատամներ դեմ անել նրան. անառիկ ամրոց ունենալ։

— Ունենանք, ունենանք, հա՛րս ջան,— իսկույն համաձայնեց Թուրինջը։

Այս օրվանից սկսեցին ամրացնել Պղնձաքարը։

ԱՆՀԱՆԳԻՍՏ ՄԱՐԴԸ

Դավիթ-Բեկը վերադառնում էր Հալիձոր։

Գարունն իր բոլոր երանգներով արշավում էր լեռնաշխարհի վրա։ Կապանի անտառում աշնանից մնացած խազալի քրքրված ծիրանիի նմանող պատռվածքներից շատրվանել էին խոտի կանաչ փնջեր։ Որտեղ խազալ չկար, հողը ծածկվել էր մանուշակների կապույտ թավիշով։

Դավիթ-Բեկն անհագ շնչում էր գարնան բույրերով հագեցած անտառային խոնավ օդը, ու թվում էր, թե չի կշտանա երբեք։ Անտառի ճեղքվածքներից երևում էր խուստուպ լեռան ատամնավոր գագաթը։ Արևի ցոլքը խաղում էր նրա վրա, և թվում էր, թե առասպելներով սրբացված այդ լեռը բոցավառվել է, ու երկնքի կապույտն էլ հենց այդ բոցերից թռած թանձր ծուխն է...

Բեկի նժույգն զգուշությամբ անցնում էր լեռնային արահետների կապերը, ծառս լինում հոխորտացող գետակների վրայով և ոռնգները ֆոֆռացնելով՝ մղվում առաջ։ Պատշաճ հեռավորության վրա Բեկին էր հետևում նրա թիկնապահ գունդը։

Բեկն ուրախ էր։

Պարսիկներից ազատագրված երկիրն արդեն սկսել էր ապաքինել իր ծանր վերքերը, որ դարեր շարունակ մնացել էին նրա հոշոտված մարմնին։ Անտառներում ու ձորերում գտնվող շեները ծխում էին խաղաղ։ Շատ տեղեր շինականները կտրատում էին մացառուտները՝ գարնան ցորեն ու կորեկ ցանելու համար, նոր տներ էին կառուցում քարափներին։ Աղջիկները համարձակ իջնում էին ձորերի աղբյուրները՝ այլևս վախ չունենալով պարսիկ առևանգողից։

Այս ամենը տեսնում էր Բեկն, ու նրա սիրտը լցվում էր անկրկնելի բերկրանքով։ Այժմ յուրայիններից հաճախ էին նրա դեմքին ժպիտ տեսնում, և նա հաճախ էր պայծառանում պատանեկան խանդավառությամբ։

Ամբողջ ձմեռ նա դրեթե չէր եղել Հալիձորում։ Իր թիկնապահ գնդի հետ ման էր եկել գավառները, նոր զորագնդեր էր կազմել Վայոց ձորում, Ջաբաբերդի լեռնանցքում, Ագուլիսում և սահմանային այլ վայրերում։ «Մեր երկիրն իրենից մի ռազմական ճամբար պիտի ներկայացնի,— ամեն տեղ ասել էր նա։— Մենք մեր իշխանությունը զենքի ուժով ստեղծեցինք, այդ զենքի ուժով էլ պետք է պահենք։ Մեր ուժը մեր դիմադրողական կարողության մեջ է։ Ոչ ոք չի կարող դուշակել, թե մեր երկրի վրա երբ և որտեղից կարող է գալ պարսիկը, թուրքը...»։

Տունդարձի ճանապարհին նա վճռել էր այցելել Կապանի պղնձի բովերը։ Պետք է ավելացնել պղնձի հանույթը։ Պղնձին լավ գին են տալիս Ռուսաստանում։ Դրանով կարելի է հարստացնել Հայոց ժողովի նորաստեղծ գանձարանը, ապահովել զորքի ռոճիկն ու պարենը։ Շատ բան էր մտադիր անել Բեկը, միայն թե մի նոր փորձանք չգար նրա փոքրիկ երկրի գլխին, որ դարձել էր համայն հայության հույսը։

Կեսօրին, երբ իջել էին Կավարտի ձորը, հանդիպեցին երկու մուրացկանի։ Տեսնելով զորագունդը, սրանք քաշվեցին ճանապարհի եզրը ու գլուխները խոնարհեցին։ Դավիթ-Բեկը ձին պահեց նրանց մոտ։

Մուրացկաններից մեկը տարեց էր, թուխ՝ հայկական կացնաձև մորուքով, հաստ հոնքերով ու կեռ քթով։ Մյուսը շեկ էր, կապույտ աչքերով, մռայլ ու մթնած։ Սա թեև տակավին երիտասարդ էր, բայց երկար, շիկավուն մորուք ուներ։ Երկուսն էլ բոկոտն էին, խղճուկ ցնցոտիներով։ Բայց անսովոր աչքն էլ կարող էր տեսնել, որ դրանք մուրացկաններ չեն։

— Ի՞նչ մարդիկ եք,— հարցրեց Բեկը։

— Իսկ ես ուզում եմ իմանալ, թե ո՞ւմ հետ պատիվ ունեմ խոսելու,— հարցրեց տարեցը։

Բեկը հոնքերն իջեցրեց։ Ատենադպիր Մաղաքիան մուրացկաններին ասաց, որ իրենց հետ խոսողը Դավիթ-Բեկն է։ Մուրացկանները շոքեցին, տարեցի առանց այն էլ խոշոր աչքերը լայնացան, նա թեքվեց առաջ՝ ավելի լավ տեսնելու իր դիմացինին։

— Մի՞թե ես մոռացել եմ Դավիթ-Բեկին,— կմկմաց երկյուղած։— Ախր ես նրան շատ անգամ եմ տեսել... Քսան տարի առաջ, երբ դեռ գերի չէի քշվել օտար աշխարհներ։ Այն ժամանակ դու ոչ մի ճերմակ մազ չուներ, տե՛ր Դավիթ-Բեկ, իսկ հիմա...

— Ո՞վ ես,— աշխատելով հիշել նրան՝ նորից հարցրեց Բեկը։

— Շամախեցի եմ, տե՛ր Դավիթ-Բեկ։ Քեզ տեսել եմ Գանձասարում, երբ ուխտի էիր գալիս այնտեղ... Ա՜խ, ա՜խ... Դու սև նժույգ ունեիր, ճակատին՝ սպիտակ պիծակ։ Հիշում եմ։ Իմ անունը Վրթանես է, ոչ բարով զինագործ...

— Սև նժույգս հիշում եմ, Վրթանե՛ս, բայց քեզ՝ ոչ,— ասաց Բեկը։

— Հավանական է,— հառաչեց Վրթանեսը։— Ինձ վրա շնո՞ւրհք է մնացել, որ մարդու տեղ դնեն, հիշեն... Քսան տարի շան պես շղթայված էի գերության։ Գերի էինք, ես էլ, այս խեղճ ռուսն էլ, Վլադիմիր Խլեբ է անունը։ Սրան էլ էին թուրքերը գերել, ստրուկ արել, ծախել... Աստված օգնեց, փախանք գերությունից։ Մի բարի մարդու էինք որոնում, որ օգնի։ Նախախնամությունն ինքը քեզ հանդիպեցրեց մեզ։

— Ուրա՞խ ես,— հարցրեց Բեկը։

— Այժմ հանգիստ հոգով կիջնեմ գերեզման, հասա, վերջապես, իմ հայրենի հողին,— ջերմեռանդությամբ ասաց Վրթանեսն. ու նրա աչքերը լցվեցին։

Բեկն իր զինվորներին հրամայեց նրան ու նրա ընկերոջը դնել ձիերի վրա։

Շարժվեցին։ Ճանապարհը զառիթափ էր, բայց բարեկարգ։ Կավարտի ձորում գյուղերը շատ էին, խոշոր ու շեն։ Ամեն տեղ հողը մշակված էր խնամքով։ Ներքևում Կապանի պղնձագույն ժայռերն էին՝ անհրապույր ու լերկ։ Այնտեղ էին պղնձի ելքերը։ Շուտով կհասնեն ու դադար կառնեն երկար ճանապարհից հետո։ Բեկը ձեռքով արեց Վրթանեսին։ Ձա իր ձին մոտեցրեց նրան։

— Պատմիր, Վրթանե՛ս եղբայր,— խնդրեց Բեկը։

— Պատմելու բա՞ն է, տե՛ր Դավիթ-Բեկ։ Մարմինս փշաքաղվում է, որ հիշում եմ,— հասկանալով՝ թե ինչ է կամենում զորավարը՝ ասաց Վրթանեսն ու հառաչեց։— Քսան տարի շան պես քթից ջուր էի խմում... Ջահել էի, որ թուրքերն ավերեցին մեր Շամախին։ Կհիշես։ Նոր էի սկսել զինագործություն սովորել։ Իմացան արհեստիս մասին, չսպանեցին։ Տարան արաբների աշխարհը՝ Դամասկոս ու ծախեցին մի թուրք զինագործի։ Ոտքերիս շղթա դրին ու նետեցին արհեստանոց։ Սկսեցի բանել։ Ստիպեցին հավատս փոխել, փոխեցի։ Մեղադիր մի՛ լինիր, տե՛ր։ Կյանքը քաղցր է։ Բայց երեսանց ընդունեցի Մուհամմեդի դինը։ Թաքուն խաչն էի պաշտում։ Ապրեցի տասը տարի։ Մի օր էլ սրան բերին (նա ձեռքը պարզեց Վլադիմիր Խլեբի կողմը)։ Հազիվ տասնհինգ տարեկան լիներ։ Վրան հալ չկար։ Ճամփին ինչ տանջանք տես չէին պատճառել նրան անօրենները... Դոնի կողմերին էին գերի վերցրել, քշել, ծախել էին իմ տիրոջը։ Ասացի՝ կմեռնի։ Իմ տերը նույնիսկ ափսոսաց սրա համար տված մի քանի արծաթը։ Ես սկսեցի խնամել։ Ռուս է, իմ հա-

վատակիցը,— ասացի,— ինչի՞ կորչի անմեղ հոգին։ Խնամեցի։ Ապրեց։ Սրա կրոնն էլ փոխեցին։ Բայց ես խաչը մոռանալ չտվի։ Տասը տարի էլ միասին ապրեցինք։ Աստված թշնամուս էլ չտա այդ տեսակ ապրուստ...

Վրթանեսը հառաչեց, կարոտով նայեց լեռների կողմը և, տեսնելով, որ Բեկն սպասում է՝ շարունակեց.

— Վերջն ի՞նչ ասեմ, տե՛ր Դավիթ-Բեկ։ Դամասկոսում սովորեցի թուր ջրդեղելու արհեստը։ Այդ բանի գաղտնիքը դամասկոսցի զինագործները գիտեն միայն։ Թնդանոթ ձուլելն էլ սովորեցի։ Սովորեցի ու փախա։ Աչքս փախուստի ճանապարհին էր։ Հաջողվեց վերին խնամակալի շնորհիվ։ Երեք ամիս է ահա, որ սար ու ձոր չափչփում էինք։ Վերջը, գոհանա՞մ աստծուց, հասանք մեր մուրազին...

Վրթանեսը լռեց։ Վոլոդիմիր Խլեբը, որ հայերեն քիչ-միչ խոսում էր, խորին երախտագիտությամբ ասաց.

— Ես իմ կյանքով պարտական եմ Վրթանես եղբորը, նա ինձ փրկեց գերությունից։

Բեկը ժպտաց. «Տա՜ աստված, որ քո թագավորն էլ մեզ փրկի գերությունից»,— մտքում ասաց նա ու հարցրեց.

— Ուրեմն թնդանոթ ձուլելու բանը գիտե՞ք։

— Այնպիսի թնդանոթ ձուլենք, որ ինգլիզի թոփից հեռու գցի,— պատասխանեց Վրթանեսը։

— Բարի՜,— ասաց Բեկն ու լռեց, ընկավ մտքերի մեջ։ Նրան չխանգարելու համար երկու զինագործները մի փոքր ետ ընկան։

Բարձրացան Կավարտի լեռը։ Արևը մարեց Խուստուփի կատարին։ Կապույտ, թրթռուն երեկոյի շղարշը սփռեց լեռների վրա ու սկսեց թանձրանալ։ Ներքևում՝ պղնձի ելքերից ու բովերից ոչ հեռու, այգիների մեջ, երևաց Կապանի պղնձաելքերի ու բովերի տեր Պղինձ Արթինի ամարաթը։

***

Մութն արդեն պատել էր աշխարհը, աստղերը դալուկ ցոլում էին, երբ Դավիթ-Բեկը հասավ Պղինձ Արթինի ամարաթի բարձր պարիսպներին։ Մեծեցին ծանրադիր դարպասը։ Մեկի մռութը երևաց դարպասի անցքից։ Սրան ասացին, որ Դավիթ-Բեկն է եկողը։ Սա օթակով հարվածեց պղնձե տախտակը, կանչեց ինչ-որ մեկին։ Դարպասը բաց արին։ Բակ մտնելով՝ Բեկն իջավ ձիուց և գնաց նոնենիների խիտ շարքերի արանքով։ Այգուց ցելած հողի ու դաղձի հոտ էր գալիս։ Թթենիների ճյուղերը հասել էին մինչև ապարանքի կտուրը։ Բեկը կանգ առավ շրա-

վազանի մոտ։ Ջրերի մեջ տեսավ լուսնի կես սկավառակը։ Նայեց երկնքին։ Լուսինն արդեն գլխավերևում էր՝ եղջյուրները վեր, մուգ-կարմիր շրջանակի մեջ։ Դա դուր չեկավ Բեկին. «Երաշտ է լինելու»,— մտածեց չարացած։ Անհանգստացավ։ Գարունը շուտ եկավ ու չոր է։ Լավ նշան չէ։ Հիմա բացվել, չորացել են Հայկական պարի լեռնանցքները։ Թուրքերը դրան են սպասում։ Մի շաբաթ առաջ Թուրքիայից Վարանդա հասած իր առաքած լրտեսները տագնապալի լուրեր բերին։ Իսկ ռուսաց թագավորի պատվիրակից դեռ տեղեկություն չկա։ Գալի՞ս է, թե կորավ ճանապարհին... Ինչո՞ւ է Եսայի կաթողիկոսը լռել, բանբեր չի առաքում։ Վրաց թագավորը անվերջ զգուշացնում է. «Պատրաստվիր, թուրքերի կողմից վատ հոտ է գալիս։ Դավ են նյութում մեր դեմ»։— Գրում էր նա։ Զմեռն էլի հանգիստ անցավ։ Իսկ գարունը տագնապ է բերում։

Սանդուղքների գլխին երևաց Պղինձ Արթինի գունդ մարմինը։ Ծառան կերոնով լուսավորում էր նրան։ Արթինը պարսկական խալաթով էր, գլխաբաց։ Սանդուղքի աստիճաններով ցած վազելիս քիչ մնաց գլորվի։ Հասավ Բեկին, խոնարհումներ արեց, համբուրեց նրա քղանցքի ծայրն ու շփոթված ասաց.

— Իմ գլուխն ու կարողությունը քեզ մատա՜ղ, տե՛ր մեր Դավիթ-Բեկ։ Բարո՜վ ես եկել իմ տունը։

— Տեղավորի՛ր իմ մարդկանց, Արթի՛ն պարոն,— չոր-չոր հրամայեց Բեկը, ապա ատենադպիր Մաղաքիային և զինագործներին ձեռքով արեց, որ հետևեն իրեն. բարձրացավ ապարանքի ապակեպատ պատշգամբը։

Պղինձ Արթինի տանն իրար խառնվեցին։ Սպասավորներն ու ծառաները, միմյանց խանգարելով՝ ընթրիքի պատրաստության գնացին։ Ոչխարի խղճալի մայոց լսվեց։ Շները վազեցին մորթված ոչխարի տաք արյունը լիզելու։ Բեկը նստել էր ապարանքի սենյակներից մեկում։ Ջահերի լույսը խոնջություն էր բերում։ Բեկի առջև, ձեռքերը փորին կանգնել էր Պղինձ Արթինը և թեկուզ ջանում էր հանգիստ ու անվրդով լինել, սակայն տագնապով էր նայում Բեկին։ Երկրի գահերեց զորավարն առաջին անգամն էր լինում իր տանը։ Արթինն աշխատում էր կոահել նրա գալստյան պատճառը։ Բայց ապարդյուն։ Մի՞թե հնարավոր է որևէ բան կոահել այս խստադեմ, դաժան հայացք ունեցող, միշտ ամուր սեղմված շրթունքներով մարդու մտքերից... Առասպելներ էին պատմում Բեկի մասին։ Ասում էին, թե նա տասը պատի միջով էլ է կարողանում տեսնել, թե դենն ինչ է կատարվում։ «Տեսնես ճանապարհին մտե՞լ է Կավարտի պղնձի ելքերը»,— ահով մտածում էր Արթինը։

Այնինչ Բեկն իր մտքերի հետ էր ու չէր էլ նկատում իր առջև խո-

նարը կանգնած տանտիրոջը։ Միայն երբեմն նայում էր դռների մոտ, ցածրիկ նստարանին տեղավորված Վրթանեսին ու Վոլոդիմիր Խլեբին։ Զինագործների երևալը ուրախացրել էր Բեկին։ Մտածեց նրանց պահել՝ թնդանոթներ ձուլելու համար։ Դա նրա վաղուցվա երազանքն էր։ Զինագործներին իր մոտ կպահի գոնե մի կես տարի։ Ասենք, եթե ուզենա էլ, չի կարող նրանց ուղարկել Շամախի։ Մինչև Գանձակ մի կերպ կհասնեն։ Իսկ Շամախին պարսիկների ու շամխալաթների ձեռքին է։ Կբռնեն ու երկուսին էլ կսպանեն։ Ափսո՜ս են... Իսկ ո՞վ չի ճանաչի, որ դրանցից մեկը հայ է, մյուսը՝ ռուս։ Երկուսին էլ քարածեծ անելով կկորցնեն։ Պարսիկ մոլլաներն ամենուրեք հավատացյալներին գրգռում էին «սարը Մոսկոֆի» թագավորի դեմ։ Բեկը դարձավ Վոլոդիմիր Խլեբին.

— Ո՞ր քաղաքից ես։

— Դոնի գետաբերանից,— պատասխանեց Վոլոդիմիրը՝ կանգնելով։

— Հեռո՞ւ է։

— Տասնհինգ օրվա ճանապարհ է, եթե անվտանգ լինի,— ասաց Պղինձ Արթինը։

— Եթե դու կամենաս, տե՛ր Դավիթ-Բեկ, ապա ես տասնհինգ օր հետո կլինեմ իմ աշխարհում,— նորից խոսեց Վոլոդիմիրը։

— Ինչպե՞ս թե «կամենաս»։ Քո գլխի տերը դու ես, եղբա՛յր իմ,— ժպտաց Բեկը։— Հենց հիմա էլ կարող ես գնալ դեպի քո երկիրը, բայց... ճանապարհ չկա։— Նա ցանկացավ ասել, որ ահա չորս ամիս է, ինչ թագավորի պատվիրակը Բաքվից չի կարողանում հասնել Հայոց աշխարհը, բայց չասաց, տեղը չէր, ուստի ձեռքերը տարածեց ու կրկնեց։— Ճանապա՛րհ չկա, սիրելի՛ս։ Քո ու մեր թագավորի թշնամիները քեզ կբռնեն ու... Աստված մի՛ արասցե, որ նրանց ձեռքն ընկնես։ Շամախին ավազականոց է դարձել։ Այնտեղ եղած ռուս վաճառականներին կոտորել են պարսիկները։ Պիտի համբերեք սակավ մի, մինչև ճանապարհները մաքրվեն, մինչև ձեր թագավոր կայսեր զորքն առաջանա...

— Ճշմարիտ է,— հաստատեց Պղինձ Արթինը,— Շամախում տերություն են անում շամխալ ավազակները։ Այնտեղից ոչ ոք չի կարողանում դուրս գալ դեպի Բաքու ու Հաշտարխան։

— Լսեցի՞ք, զինագործ եղբայրներ,— հարցրեց Բեկը։— Այս խոջան աշխարհի ծակուծուկին տեղյակ մարդ է։ Ես չեմ ուզում, որ ձեր մի մազը պակասի։ Սպասեցեք, մինչև աստծու ողորմության օրը... Ես ձեզ ռոճիկ կնշանակեմ։

— Արա այնպես, ինչպես կամքդ է, տե՛ր մեր,— համաձայնեցին զինագործները։

— Կմնաք, մինչև կամ ձերոնք կգան մեր աշխարհը, կամ մեր մարդիկ կգնան ձեր երկրի կողմերը. նրանց հետ էլ կգնաք։

Բեկը վեր կացավ ու, դիմելով դեպի միջանցք՝ իրեն կրնկակոխ հետևող Արթինին, ասաց, որ լվացվել է ցանկանում։ Միջանցքում նրա սպասին պատրաստ էին երկու երիտասարդ։ Մեկը ձեռքին արծաթե կոնք ուներ, մյուսը՝ նույնպես արծաթե ջրածիկ ու վենետիկյան անուշահոտ օճառ, ուսին ծոպավոր դաստառակ։ Բեկը կռացավ կոնքի վրա, լվացվեց բավականությամբ։

— Քանի՝ սպասավոր ունես, պարո՛ն Արթին,— հարցրեց սպասավորների գնալուց հետո։

— Տասնհինգ,— պատասխանեց պղնձատերը։— Մեծ տուն ենք, հոգսերնիս շատ։

— Մի այդքան էլ ծառա կունենաս, երևի։

— Աստծո տվածին քարով չենք տալիս, կա՛, տեր Դավիթ-Բեկ։

— Բարի՛,— ասաց Բեկն ու լռեց։

* * *

Տանտիրոջ խնդրանքով Դավիթ-Բեկը գնաց նրա գերդաստանին ծանոթանալու։ Դա վաղեմի սովորություն էր հայոց մոտ։ Պատվելի հյուր գալու դեպքում, տանտիրոջ առաջին պարտքն էր իր գերդաստանի մեծին ու փոքրին ներկայացնել նրան։ Հյուրն ու հյուրընկալն անցան կերոններով լուսավորված միջանցքը ու մտան մի ընդարձակ սրահ։ Լույսն այդտեղ ավելի շատ էր. օդը հագեցած էր օծանելիքների ծանր հոտով։ Պատուհաններին թանձր վարագույրներ կային։ Կահույքն ընտիր էր՝ արևելքն ու արևմուտքը խառնված։ Հատակի հայկական գորգերին դրված էին վենետիկյան աթոռներ, բյուզանդական մոմակալներ, արաբական զարդասեղաններ։ Անկյունում շողում էր ոսկեզօծ շրջանակով մի մեծ հայելի՝ կողքին կաղնեփայտե քանդակազարդ հանդերձապահարան։ Սրա վրա մեղմ թխկթխկում էր կլոր, մեծ ժամացույցը՝ իրար գրկած երկու ըմբիշների ոսկեձույլ արձանիկով։ Բազմաթիվ գահավորակներ ու բազմոցներ էին դրված պատերի տակ։ Նրանք ծածկված էին հնդկական կերպասով, քիրմանի ոսկեզօծ դիպակներով։ Մոմակալները արծաթից էին, բազմատեղ ու շլացուցիչ։ Այդ ամենը՝ կահույքն ու օծանելիքների հոտը մի քմպարար թմրություն էր պատճառում։ Մի հայացքով ընդգրկելով դահլիճը՝ Դավիթ-Բեկը նայեց պատի տակ խմբված Արթինի գերդաստանի անդամներին ու մոտ գալով՝ ողջունեց սիրալիր։ Բոլորը խոնարհ գլուխ տվին ու ձեռքները ծալելով՝ մնացին.

— Գալուստդ բարի՛,— դողդոջ ասաց իշխանուհու հագուստով մի ծեր կին։

— Մայրս է,— շտապեց հայտնել Արթինը։

Բեկը սեղմեց պառավի սմքած ձեռքը։ Պառավի օրհնությունները շատացան։ Նա նեղվում էր ոսկեթել կապայի, ոսկուց ու հակինթից հյուսած սուրմաների, գլխանոցի մեծագին զարդերի ծանրությունից։ Խոսելիս քրտնեց։ Բեկը սեղմեց նաև Արթինի կնոջ ձեռքը։ Պակաս զարդերով չէր ծանրացած նաև այդ մրահոն, վախվորված հայացքով ու ձյունաճերմակ դեմքով շահել կինը։ Այնպիսի գեղեցկություն ուներ նա, որ Բեկը թեթևվակի շփոթվեց, երբ սեղմում էր նրա մատները։ Իրենց մոր մոտ կանգնած էին երկու պատանի, մեծը հազիվ տասնհինգ տարեկան։ Երկու մանուկ աղջիկ ահով ու միաժամանակ հետաքրքրությամբ էին նայում Բեկին։ Նրանց հետ էին նաև Արթինի բազմաթիվ հարազատները՝ առողջ ու պարարտ՝ բտած խոզերի պես։ Բոլորն էլ կանգնած էին հանդիսավոր, զգաստ, բացի Արթինի ութ տարեկան տղայից, որ բերանը ծայրից-ծայր բացած՝ քաղցր ժպտում էր հյուրին, մյուսները նեղվում էին։

— Ահա իմ գերդաստանը, տե՛ր Դավիթ-Բեկ,— բոլորին ներկայացնելով՝ գլուխ տվեց տանտերը,— ամենքս պատրաստ ենք հավատարիմ ծառա լինելու քեզ։

— Հայոց ուխտին,— ուղղեց Բեկն ու, ձեռքը դնելով ժպտացող տղայի ուսին՝ մեղմ հարցրեց.— Ճիշտ չե՞մ ասում, խենթո՛ւկ։

Երեխայի ժպիտը թռավ դեմքից, ու նա ակնապիշ նայեց հորը։

— Երեխան հայերեն չգիտի, պարսկերեն հարցրու, տե՛ր Դավիթ-Բեկ, մեր տանը հայերեն չեն խոսում,— ասաց Արթինի կինը ու գունատվեց՝ նկատելով ամուսնու սպառնագին հայացքը։

Դավիթ-Բեկի հոնքերը բարդացան։

Նա շեշտակի շուռ եկավ ու դիմեց դեպի դուռը։ Տանտերը սայթաքելով՝ վազեց նրա ետևից։

Բեկն ընկավ այն սենյակը, ուր իրեն էին սպասում ատենադպիր Մաղաքիան ու զինագործները։ Սրանք, որ խաղաղ զրուցում էին, ոտքի ելան միանգամից։ Մաղաքիան հազվադեպ էր իր տիրոջը տեսել այդպես կատաղած, ծոմված դեմքով։ Բեկը ձեռքով զինագործներին նշան արեց, որ գնան։ Սրանք իսկույն հեռացան։ Մաղաքիան, տեսնելով մահացու սարսափած Պղինձ Արթինին՝ գլխի ընկավ, որ մի ծանր բան է պատահել։

— Դե՛,— դառնալով տանտիրոջը՝ որոտաց Բեկն ու հևքից ցնցվեց։

— Ների՛ր...— բառաչեց Արթինն ու ծանր ծունկի իջավ։— Խնայիր, քո ծառան եմ, սխալվե՛լ եմ։ Ես հայ եմ, ես իմ հայությունը չեմ կորցրել։

— Ապա զավակնե՞րդ,— մռնչաց Բեկը։— Նրանց պարսի՞կ ես դարձրել, հա՞։ Հայոց լեզուն սպանե՞լ ես, հա՞։

— Մեղա՛, մեղա՛,— կտրատվեց Արթինը։— Նրանք վաճառականներ պիտի դառնան, տե՛ր իմ, թե չէ...

— Լռի՛ր,— խեղդվեց Բեկը։— Ուրացո՛ղ։ Ազգը լեզուն է պահում, լեզո՛ւն... Մեր հողը առել են մեր ձեռքից, լեզվով ենք հայ մնում։ Իսկ դու սպանում ես մեր լեզուն, հայությո՛ւնը...

Բեկը հևում էր սոսկալի եղեռն տեսած մարդու պես ու չէր կարողանում հանդարտվել։ Արթինն անվերջ թողություն էր խնդրում։

— Մենք արյուն ենք թափում, որ անապական պահենք հայոց հոգին, իսկ դու սպանում ես մեր նախնավանդ լեզուն. մանուկներիդ պարսիկ ես դարձնում, հա՞,— նորից գոռաց նա՝ անզուսպ կատաղությամբ։— Այդպես էր կամենում Հազկերտ հայակերը, Շապուհը, Շահ Աբա՛սը...

Անշարժ մնացած Մաղաքիան արյան հոտ էր զգում։ Հիմա Բեկը սաստիկ ծեծել կտա Պղինձ Արթինին։ Սակայն Բեկն այդ չարեց։ Նա գնաց նստեց գահավորակին. մթնեց՝ ամպրոպ ծնող երկնքի պես։ Ավանդապահությունը չէր, որ զսպում էր նրան։ Ուրիշ բան կար։ Մեծ գործի համար էր եկել պղնձի բովերի ու ելքերի տեր այս ճարպագունդ Արթինի մոտ։ Նա էր միայն, որ գլուխ ուներ պղնձահանման գործից։ Գանձարանին ահագին տուրք էր տալիս։ Պետք է թնդանոթներ ձուլել, հրացաններ պատրաստել։ Պետք է ավելացնել պղնձի արդյունահանությունը...

— Գլուխդ բարձրացրո՛ւ,— վերջապես սակավ-ինչ մեղմությամբ խոսեց Բեկը։— Երևի մի պարսկացած հայ է զավակներիդ պարսկերեն սովորեցնում։ Այդպե՞ս է։

— Ո՛չ, ուսուցիչը պարսիկ է,— անհամարձակ պատասխանեց Արթինը։

— Հա՛, հա՛...— թունավոր քրքջաց Բեկը։— Ես պարսիկների ոտքը կտրել եմ մեր աշխարհից, իսկ դու պահո՞ւմ ես։ Քանի՞ գլուխ կա ուսերիդ։ Հենց հիմա իմ աշխարհից խրկիր, քշիր պարսկին, հենց հիմա՛։ Շո՛ւտ... Վարձիր հայ դպիր, ուղղիր խայտառակ արարքդ։ Թե չէ կկախեմ, մորս գերեզմանը վկա, կկախե՛մ... Այսօր լեզուներդ կմոռանաք, վաղը հավատներդ, մյուս օրը՝ ձեր հայրենիքն ու հայ լինելը, կձուլվեք օտարներին։ Հայը կկորչի աշխարհի երեսից։ Կկորչի՛... Այդպես հալվել ենք դարեր, բայց այդպես չպիտի՛ լինի այլևս, չէ՛...

Երկար ժամանակ անցավ, մինչև Բեկը հանդարտվեց մի փոքր։ Իր զինվորներից մեկին ուղարկեց Տաթև՝ Հովակիմ եպիսկոպոսին խնդրելով, որ մի ձեռներեց դպիր ուղարկի Պղինձ Արթինի զավակներին կրթելու։ Ընթրիքից հետո Արթինին ու Մաղաքիային արձակեց և մնաց մենակ։

***

Դեռ լույսը չբացված Դավիթ-Բեկը կանչեց զինագործներին։ Սրանք եկան քնից կշտացած, նոր զգեստներով, մաքուր ու առույգ։ Բեկի սիրտը լցվեց բերկրանքով, բայց դեմքն առաջվա նման խոժոռ էր։ Ձեռքով նշան արեց, որ զինագործները նստեն իր դիմացը՝ թախտին։ Մտածեց մի պահ։ Ապա կռացավ դեպի զինագործները՝ ասես մի մեծ գաղտնիք հայտնելու մտադրությամբ։

— Դուք ինձ համար թնդանոթ պիտի ձուլեք։ Ես հավիտյան երախտապարտ կլինեմ ձեզ։ Ի՞նչ կասեք։

— Կձուլենք, տե՛ր Դավիթ-Բեկ, մեր արհեստն է,— պատասխանեց Վրթանեսը։— Միայն մեզ տեղ ու օգնականներ տուր։

— Այնպիսի թնկանոթներ, որ հնարավոր լինի ուղտի ու ջորու վրա կրել։

— Կարելի է։

— Իսկ հետո մեծերն էլ կձուլենք, սայլերով տեղափոխելու համար։ Միշտ չէ, որ նեղվածք ենք ապրելու մեր լեռներում։ Վայոց ձորի լեռնանցքից դենը Արարատյան աշխարհն է։ Հասկացա՞ք։

— Աստված սրտինդ տա,— Վրթանեսի աչքերը շողացին։

Կանչեցին Պղինձ Արթինին։ Սա եկավ քնատ, վախվորված, ընկած ուսերով։ Խոնարհ բարև տվեց։ Բեկը չպատասխանեց նրան. հարցրեց դժգոհ.

— Պարսիկին քշեցի՞ր։

— Ուղարկեցի, տե՛ր գահերից զորավար,— իսկույն պատասխանեց Արթինը։

— Բարի՛,— Բեկը վեր կացավ.— Հիմա ուզում եմ տեսնել քո ամբարթը, պղնձի ամբարները։ Առաջնորդիր։

Դուրս եկան բակ։ Կուշտ կերած, խոշորագլուխ շներն ընդառաջ եկան նրանց ու, պոչները ետևի ոտքերի արանքը խրած՝ կնձմնձացին շարությամբ։ Թզենու ճյուղերի միջից ճկաց ցայգահավը։ Բեկը նայեց երկնքին։ Արևելքում հորիզոնը կաթի գույն էր ստացել։ Կարծես սարերի գլխին ճերմակ ժապավեն էին կապել։ Ծեգում էր։

Բազմաթիվ սենյակներ, մառաններ ու մթերանոցներ ցույց տալուց հետո, Արթինը Բեկին տարավ մի ընդարձակ կիսանկուղ սրահ՝ լայն դռնով ու բարձր պատուհաններով։ Այդտեղ իրար վրա դարսված էին ձուլված ու կաղապարած պղնձի հաստ շերտեր՝ երեք-չորս ոտնաչափ երկարությամբ։ Բեկի աչքերը շողացին։ Ձուլված պղնձի այդպիսի կույտեր շատ կային սրահում։ Նա հաճույքով շոշափում էր պղնձի աղյուսները, ձեռք տալիս արջասպի ու ծծմբափոշու պարկերին։ Վերջապես կանգնեց սրահի մեջտեղն ու դարձավ զինագործներին.

— Հը՞, ի՞նչ կասեք, հարմա՞ր տեղ է։

— Հարմար է,— պատասխանեց Վրթանեսը։

Սրահից դուրս եկան։ Հավքերն արդեն շատախոսում էին։ Արևելքում եղած լուսավոր շերտը տարածվել էր՝ գինու մեջ թափած կաթի պես։ Երկինքը դառնում էր բաց կապտավուն։ Բեկը նստեց պատի տակ դրված քարերից մեկին։

— Այս երկու պատվարժան մարդիկ պիտի մնան ու բանեն քո տանը,— առանց նայելու տանտիրոջը, միայն ձեռքը պարզելով նրան՝ խոսեց Բեկը։

— Իմ աչքի ու գլխի վրա,— իսկույն արձագանքեց Արթինը՝ տակավին չըմբռնելով, թե ինչ փորացավ ունի Բեկը, որ ծեգից առաջ էր արթնացել ու այդքան հետաքրքրությամբ զննեց իր ապարանքը։

— Վարպետ Վրթանեսն ու Վոլոդիմիր Խլեբը այստեղ պիտի թնդանոթներ ձուլեն,— շարունակեց Բեկը։

— Ի՞նչ,— աչքերը պլշեց Արթինը։

— Թնդանոթներ։

— Տե՛ր աստված, մենք հո Ամստերդամում կամ Ճենովայո՞ւմ չենք։

— Իսկ այնտեղ աստվածնե՞ր են բնակվում,— սուր հարցրեց Բեկն ու խստությամբ շարունակեց։— Քո ապարանքի մեծ սրահը այսօրվանից պատկանում է պատվարժան Վրթանես վարպետին ու նրա օգնական Վոլոդիմիր Խլեբին, Պղի՛նձ Արթին։ Երկուսն էլ սակավապետ մարդիկ են։ Օրվա մեջ նրանց ընդամենը երեք անգամ պիտի կերակրես։ Առավոտյան տապակած հավ ու կարագ, կեսօրին ոչխարի խորոված, փլավ և մի կուլա գինի. երեկոյան սև սուրճով ու թարմ մածունով յոլա կգնան։ Կարծում եմ Պղինձ Արթինն այնքան էլ աղքատ չէ և իր խոհանոցից առատորեն բաժին կհանի ոչ միայն Վրթանես ու Վոլոդիմիր վարպետներին, այլև այն երեսուն բանվորներին, որ պետք է օգնական լինեն նրանց։

— Հիրավի ես աղքատ չեմ, տե՛ր Դավիթ-Բեկ, բայց իմ քարավանները պետք է պղինձ տանեն օտար երկրների շուկաները։

— Որ երկրների,— հարցրեց Բեկը։

— Դեպի Թավրիզ ու Կոստանդնուպոլիս։

— Թավրիզի շահ Թահմազը հազիվ է իր ձիերի ու զինվորների համար գարի գողանում շրջակա գյուղերից։ Ինչպե՞ս չի Արթինը հասկանում, որ նրա գանձարանը դատարկ է հետին աղքատի մառանի պես։ Իսկ այն հայը, որ կհամարձակվի Հայոց աշխարհից Կոստանդնուպոլիս տանել թեկուզ մի փուշ, կվառվի խարույկի վրա։

— Հապա ես ո՞ւմ հետ պետք է առևտուր անեմ, տե՛ր Դավիթ,— կապ ընկավ Պղինձ Արթինը։

— Մեր ճանապարհն այժմ դեպի Շամախի է. փակ է, բայց կբացվի։ Այնտեղ հայ ու ռուս վաճառականներ կլինեն։ Քո պղինձը պետք է թնդանոթներ դառնան, իսկ ավելցուկը կարող ես քշել դեպի Ռուսաստան, միայն Ռուսաստան։

Պղինձ Արթինին այնպիսի մի մեծ վիշտ համակեց, որ կարծես լուր բերին, թե հարազատներից մեկը մեռել է։ Իրեն թալանե՞լ է ուզում Դավիթ-Բեկը, թե՞ իրոք կվճարի վերցրած պղնձի գինը։ Ապա երեսուներկու մարդու ծա՞խքը։ Ամեն օր մի այդպիսի խումբ կերակրել, այն էլ հավի մսով, խորովածով, գինով ու կարագով։ «Կքանդվե՞մ... Տունս կավերվի»— դառնորեն մտածում էր նա։ Սակայն ահից ձայն չէր հանում։ Ի՞նչ ասեր անզիջում ու դաժան Բեկին։ Բայց միայն այդ չէր։ Դավիթ-Բեկը Պղինձ Արթինին հրամայեց իր ծառաներին ու սպասավորներին հանձնել Վրթանեսին՝ արհեստանոցում բանելու համար։ Սա արդեն անտանելի էր։ Արթինը քիչ էր մնում մազերը փետեր։ Սոսկալի ծանր էր նրա վիճախիկ, սա բոլորովին հանդարտվեց ու, գլուխ տալով Բեկին՝ ասաց.

— Ես քո պատրաստած պղինձը կգնեմ այն գնով, որով դու պիտի վաճառես օտար քաղաքներում։ Արհեստանոցիդ ու իմ մարդկանց կերակրելու համար հավելյալ դրամ կտամ։ Ես չեմ թողնի, որ դու վնասվես...

Արթինի տրամադրությունը միանգամից փոխվեց։ Սկզբում չհավատաց լսածներին, բայց երբ Բեկը հանգամանորեն բացատրեց, թե ինչ գնով պետք է վերցնի իր պղինձը ու նրա մարդկանց համար վճարի կանխիկ, սա բոլորովին հանդարտվեց ու գլուխ տալով Բեկին՝ ասաց.

— Դու Քրիստոսի պես արդար մարդ ես, տե՛ր Դավիթ-Բեկ։ Միշտ հզոր է այն թագավորը, որ շահում է արդյունահանող մարդկանց, ծաղկեցնում վաճառականությունը։ Դու քո ոտքը հենիր վաճառականներիս վրա, բոլոր գահերի հենարանները մենք ենք։ Այդպես եղել է, այդպես էլ կլինի։

Պղինձ Արթինը զարմանում էր Դավիթ-Բեկի եռանդի վրա։ Ո՞րտեղից գտավ այդ զինագործներին, ինչպե՞ս գլուխը մտավ թնդանոթ ձուլելու բանը։ Ուրախ էր, որ Բեկն իրեն ոչ միայն չզրկեց, այլև միջոց տվեց պղնձի հանույթն ավելացնելու, նոր ելքեր բանալու, նոր բովեր ստեղծելու համար։ «Խորամանկն է հայոց գահերեց զորավարը,— մտածեց նա ու երեսին խաչ հանեց,— կայսրի խելք ունի, արևը շա՜տ։ Իսկ այն պարսիկ ուսուցիչը... Ա՜խ, ա՜խ, խայտառակվեցի։ Ինչո՞ւ չլսեցի կնոջս, երեխաներիս հայ ուսուցչի չհանձնեցի։ Լսողները կծիծաղեն»։

Բայց Բեկն արդեն մոռացել էր միջադեպը։ Վրթանեսի ու Վոլոդիմիրի խելքի հետ նա սկսեց սարքավորել թնդանոթ ձուլելու արհեստանոցը։

Զինագործ Վրթանեսը խստաբարո ու բանիմաց մարդ դուրս եկավ։ Հենց առաջին օրվանից, երբ սկսեցին պատրաստություն տեսնել առաջին թնդանոթը ձուլելու համար, նա Բեկին ասաց.

— Դու չպիտի խանգարես ինձ, տե՛ր Դավիթ-Բեկ։ Ես էլ իմ գործի զորավարն եմ. կողքից խորհուրդ տվողներին տանել չեմ կարող։

— Իսկ ես միայն քեզ կօգնեմ, մինչև դու ձուլես առաջին թնդանոթը,— պատրաստակամություն հայտնեց Բեկը։

— Այդ դեպքում հանիր զորավարական զգեստներդ ու աշխատիր ինձ հետ։

Բեկը սիրով համաձայնեց։

Մարդ ուղարկեցին Կավարտի բովերը պղինձ ձուլելու երկու կաթսա բերելու համար։ Հրակայուն կավ գտան Տաթևի մոտերքը, որտեղ դեռ խոր հնությունից բրուտությամբ էր զբաղվում ամբողջ մի գյուղ։ Կավը բերին՝ կաղապարների համար։ Մի շաբաթ հետո թնդանոթ ձուլելու հարմարանքն արդեն պատրաստ էր։ Բեկն ամբողջ օրը բանում էր բանվորների հետ, լռությամբ կատարում Վրթանեսի հրամանները, տանում նրա կշտամբանքներն ու դիտողությունները։ Վարպետը երբեմն գոռում էր նրա վրա, եթե սա որևէ բան իր ուզածի պես չէր անում։ Բեկի թիկնապահները, որոնք նույնպես սևագործ բանվորներ էին դարձել, զայրանում ու զարմանում էին, թե ինչպես է հայոց գահերեց զորավարը մի հասարակ զինագործի կշտամբանքները հանդուրժում։ Բայց ոչ ոք սիրտ չէր անում այդ մասին որևէ ակնարկ անել ոչ միայն Բեկին, այլև չէին խոսում նույնիսկ իրար միջև։

Սկսեցին առաջին թնդանոթը ձուլել։ Քուրայի թանձր ծուխը փաթաթվում էր Պղինձ Արթինի ապարանքին, խուժում պատուհաններից։ Ծծմբի հոտը զզվեցնում էր բոլորին։ Բեկի դեմքը ծխոտել էր, մորուքը ժանգագույն դարձել։ Նրա ձեռքերը կոշտացել էին, զգեստներն ամբողջովին թաթախվել մրի մեջ։ Դադարի պահերին միասին էին ճաշում։ Բեկը նստում էր զինագործ Վրթանեսի ու Վոլոդիմիր Խլեբի արանքում և ուտում միևնույն ամանից, խմում միևնույն փարչից։ Երբեմն կատակներ էր անում Վոլոդիմիր Խլեբի հետ։

— Հը, ի՞նչ կասես, Վոլոդիմի՛ր եղբայր, ուզո՞ւմ ես քեզ պսակենք։ Պղինձ Արթինը սիրունիկ աղախիններ ունի, որի վրա ձեռքդ դնես, քոնն է, աստվա՜ծ վկա...

— Հա՛, այդ գունդուկծիկ Արթինն այնպիսի աղախիններ է հավա-

քել, որ նույնիսկ պառավ որձաձիու խրխնջոցն են բերում,— ավելացնում էր Վրթանեսը։

Եվ քրքջում էին անզուսպ։

Արհեստանոցում բանողների համար ջուր էր բերում Արթինի աղախիններից մեկը։ Արծաթե ջրածիկը գրկած, երկչոտ եղնիկի պես նա մտնում էր ծխով ու մրով լիքը արհեստանոցն ու անխոս մոտենում նախ Բեկին, ապա վարպետներին։ Բեկն ուրախ աչքով էր անում Վոլոդիմիրին ու աղախնին հրում դեպի նա։

— Առաջ նրան ջուր տուր, ջուրը ջահելինն է։— Եվ հրճվում էր երիտասարդ վարպետի շփոթությունից։

Ամեն օր Հալիձորից սուրհանդակ էր գալիս Կավարտ։ Մխիթար սպարապետը Բեկին տեղյակ էր պահում այն բոլոր անցքերին, որ կատարվում էին իրենց երկրում։ Հաճախ Բեկի համհարզն աննկատելի երևում էր արհեստանոցում ու ակնարկով Բեկին դուրս հրավիրում։ Մրոտ հագուստով, խանձված դեմքով Բեկը մի թաքուն տեղ լսում էր հեռու երկրներից ժամանած բանբերներին։ Սրանք ծպտված էին՝ մեկը թափառական գուսանի սազով ու զգեստով, մյուսը՝ խաճալի մուրացկան, գնչու կամ մենակյաց կուսակրոնի տարազով։ Բայց որքան էլ սրանք խնամքով էին ծպտված, այնուամենայնիվ, Բեկը բոլորին ճանաչում էր առաջին հայացքից։ Ուշադիր լսում էր նրանց հաղորդածները, առատորեն վարձատրում ու ետ ուղարկում՝ նոր հանձնարարություններով։

Իսկ ստացած տեղեկությունները Դավիթ-Բեկը խորին գաղտնիք էր պահում ու միայն Մխիթար սպարապետին իրազեկ դարձնում Հայաստանից դուրս կատարվող դեպքերին։ Հայոց լեռներում թառած այդ մարդը բարձր գագաթներից տեսնում էր շրջակա աշխարհներում կատարվող անցքերը։ Այդ ամենը հարկավոր էր նրան՝ անսխալ կողմնորոշվելու համար։

***

Առաջին թնդանոթը ձուլեցին վեց շաբաթում։

Բեկը առաջարկեց փորձել առաջնեկը։ Թնդանոթը հանեցին դուրս։ Վրթանեսը նրան ուղղեց հեռավոր մի ժայռի ու կլոր ձմերուկ հիշեցնող սևագույն ռումբը դրեց մեջը։

Դավիթ-Բեկը շունչը պահած սպասում էր։ Նրա աչքերը լայնացել էին. մրոտ քիթը սրվել, բռունցք արած ձեռքը դողում էր հուզմունքից։ «Իսկ եթե բան չստացվի՞»,— տագնապով մտածում էր նա։ Վրթանեսը վառեց պատրույգն ու մի կողմ քաշվեց իսկույն։

Հանկարծ Բեկի ականջներն այնպես դղրդացին, որ թվաց թե խլացավ։ Ռումբը սուլելով թռա՛վ... Վայրկյան հետո գիմացի ժայռը դղրդաց։ Քարե բեկորներ գլորվեցին ձորը, փոշու սյուն բարձրացավ։

Բեկը գրկեց թնդանոթի մոտ հանդարտ կանգնած Վրթանեսին ու սրա ոսկորները խշշացնելով՝ սեղմեց հուժկու կրծքին։ Հուզմունքից չգիտեր ինչ ասեր, միայն համբուրում էր նրա մրկած բեղերը։ Նրա թիկնապահ զինվորներն իրենց զորավարին երբեք այդպես հուզված և ուրախ չէին տեսել։

— Քո անունը պետք է սրբերի դասում գրել,— վերջապես գոչեց Բեկը՝ ամուր թափահարելով Վրթանեսի ուսերը։— Դու հաստաբեստ սյուն ես գնում հայոց տանը։

Դպիր Մաղաքիային մոտ կանչելով, նա հրամայեց Վրթանեսին ու Վոլոդիմիր Խլեբին հարյուրապետի աստիճան շնորհելու և ցմահ ռոճիկ սահմանելու թուղթ գրել։

Թնդանոթը բերին, կանգնեցրին Արթինի այգում։ Զարդարեցին մետաքսե գույնզգույն ժապավեններով, ծաղիկներով, կանաչ ճյուղերով։ Դպիր Մաղաքիան նրա լանջին ոսկեգույն խաչ նկարեց։ Բեկը հրամայեց խնջույք սկսել այգում, հենց թնդանոթի շուրջը։ Մարդ ուղարկեց Պղինձ Արթինի ետևից։

Նլքերից եկավ Պղինձ Արթինն ու կերուխումը տեսնելով՝ ահից բերանը բացուխուփ արեց։ Բայց ինքն էլ մի փարչ գինի խմեց՝ հարբելու նպատակով։ Սկսեց հաճոյանալ Բեկին։ Վոլոդիմիր Խլեբն օրորվելով ընկավ Դավիթ-Բեկի գիրկն ու, գինոտ շրթունքները կպցնելով նրա բեղերին՝ ասաց.

— Այն անիծված սունկը սիրտս է մտել, տե՛ր Դավիթ-Բեկ, քունս փախել է, ինձ պսակիր նրա հետ։

— Հաստա՞տ,— ուրախությունից իրեն կորցրեց Բեկն ու վեր թռավ նստաբարձից։— Հիմա՛, հիմա՛, խաչեղբայրդ ե՛ս եմ, ե՛ս... Այնպիսի նվերներ տամ քեզ, որ քո յոթը սերունդները լիուլի վայելեն։

Բեկը բռնեց Պղինձ Արթինի ուսը.

— Հարսանիքի պատրաստություն տես, պարո՛ն Պղինձ, հենց հիմա, շուտ։ Ժլատություն չանես, հա՛... Քո տնից ենք աղջիկ ուզում։ Բաժինքը թագավորական պիտի լինի, թե չէ շլինքդ թոկ կդնեմ։

Տարօրինակ հարսանիքը տևեց ողջ գիշեր, ապա նաև մյուս օրը՝ մինչև երեկո։ Բեկն իր աչքով ստուգեց Պղինձ Արթինի պատրաստած բաժինքն ու տասը ոսկի նվիրեց նորահարսին։ Սա դողում էր՝ չգիտես անակնկալ երջանկությունի՞ց, թե ահից։ Բեկը երկու ձեռքով բռնեց նրա գլուխն ու համբուրեց շրթունքները։

— Հայոց զորքի համար տղաներ պիտի ծնես, հա՛րս ջան, լսո՞ւմ ես։ Դե, շնորհավո՞ր լինի, օրհնո՞ւմ եմ... Վոլոդիմիրն իմ եղբայրն է, չմոռանա՞ս...

***

Վերջապես Դավիթ-Բեկը մեկնեց Հալիձոր։ Ուղտի վրա տանում էին Սյունիքում ձուլված առաջին թնդանոթը։ Հազիվ մի նետընկեց տարածություն էին հեռացել Պղինձ Արթինի ապարանքից, երբ Բեկին հասավ Գանձասարից եկած մի բանբեր և, առանձնանալով նրա հետ, հենց ձիու վրայից հայտնեց, թե Պետրոս Թագավորի առաքած պատվիրակն ու նրա ընկերները ծպտված ժամանել են Գանձասար ու հիմա Եսայի կաթողիկոսի հյուրն են։

— Վաղո՞ւց է ժամանել պատվիրակը,— հարցրեց Բեկը։

— Մի շաբաթ է, ինչ գտնվում է Գանձասարում,— պատասխանեց բանբերը՝ ձիու վրայից գլուխը տալով Բեկին։

— Մենա՞կ է։

— Ո՛չ, երկու սպա ուղեկցում են նրան։ Ծանր տառապանքներ է կրել ճանապարհին։ Մեզ շուզողները որոգայթներ են լարել նրա դեմ, բայց աստծո օգնությամբ ժամանել է անփորձ։

Բեկն այլևս հարց չտվեց։ Բանբերը զարմանում էր, թե ինչու իր բերած լուրը շուրախացրեց նրան։ Այնինչ Թագավորի մարդու Հայաստան գալը մեծ ոգևորություն և ուրախություն էր պատճառել կաթողիկոսին։ Բայց բանբերը սխալվում էր։ Բեկը միայն արտաքուստ էր սառս ու կարծես լուրին անտարբեր։ Նրա մթագնած, միշտ մի անբաժան մռայլությամբ ծածկված դեմքից դժվար էր կռահել այն ուրախությունը, որ բռնկվում էր նրա հոգում։

Շարունակեցին ճանապարհը։ Բեկը կարծես մոռացավ բանբերին։ Երբեմն փակում էր աչքերը, և բանբերին թվում էր, թե նա քնեց։ Մի անգամ էլ սա զինվորներին ակնարկ արեց, թե իրենց տերը քնել է ձիու թամբին։ Բեկի թիկնապահները միայն ժպտացին։ Այսինքն՝ թե. «Դու քո բանին կաց, մենք լավ գիտենք մեր տիրոջ սովորությունը»։ Երբ հաղթահարում էին մի դժվարին զառիվեր, և Բեկն ու բանբերը փոքր-ինչ առաջ էին անցել թիկնապահներից, Բեկը բացեց աչքերն ու դարձավ բանբերին.

— Եթե չեմ սխալվում, դու Ջրաբերդցի քյոխվա Ջալաբին ես, այո՞։

— Ճանաչեցիր, տե՛ր Դավիթ-Բեկ։ Շնորհակալ եմ։ Այո, ես Ջալաբին եմ։

— Կարծեմ դու երկու անգամ Հայաստանից Պետերպուրխ ես հասել։

— Միանգամայն ճիշտ է, տե՛ր իմ։

— Ժամանած պատվիրակը Թագավոր-կայսրից հրովարտակ բերե՞լ է։

— Բերել է, ինքս եմ իմ աչքով տեսել կաթողիկոսի մոտ։ Վեհափառը սպասում է քո վճռին և խնդրում է շտապես պատվիրակին ընդունել մեծ շուքով ու ժողովրդին հայոց տեղյակ պահես Թագավոր-կայսեր հրովարտակին։

Բանբերն սպասում էր նոր հարցի, սակայն Բեկը նրան պատվիրեց ոչ ոքի չհայտնել Թագավորի պատվիրակի ու հրովարտակի Հայաստան գալու լուրը և լռեց։ Լռեց, սակայն սրտում վայրկյան առ վայրկյան ավելանում էր այն ուրախությունը, որ պատճառեց բանբերի բերած լուրը, որին սպասում էին վաղուց, սպասում էին ազգովի՝ հավատով և հույսով։

Նոր չէր, որ հայերը երազում էին իրենց վրա ունենալ հզորացած Ռուսաստանի հովանավորությունը։ Այդ ազգօգուտ գործի համար էր, որ այնքա՛ն ջանքեր թափեցին Իսրայել Օրին, Մեծ Սյունիքի ու Արցախի տերերը։ Արևելյան Հայաստանում փոքր ու մեծ գիտեին, որ իրենց համար բացվում է օտարի լծից ազատագրվելու, հայրենի երկրում ապահով ապրելու մի նոր արշալույս և որ այդ արշալույսը բացվում է Ռուսաստանից։ Այդ հույսն արդեն դառնում էր իրականություն։ Ռուսաց զորքերը Կասպից ծովի արևմտյան ափերով առաջացել էին դեպի Պարսկաստան։ Նրանք այժմ մոտ էին Հայոց աշխարհին, հասել էին Ռաշտ, Արդաբիլ, Բաքու, Լանկարան։ Ավղանների արշավանքից փլուզվել էր Պարսից բռնակալ պետությունը, և օր-օրի ամրանում էր հայոց նորաստեղծ իշխանությունը։

Մի ժամանակ, երբ Դավիթ-Բեկը նոր էր սկսել իր ազատագրական պայքարը, նրա ուժերը փոքր էին, սահմանափակված ընդամենը մեկ-երկու գավառի մեջ։

Այժմ նրա ստեղծած երկիրն իր մեջ ընդգրկում էր ընդարձակ մի լեռնաշխարհ՝ Քուռ գետի ափերից մինչև Արաքսի շամբուտները, մինչև Մեղրի ու Ագուլիս, մինչև Վայոց ձորի բերանն ու Սևանա ծովակի ափերը։ Այդ ընդարձակ լեռնաշխարհում Բեկն ստեղծել էր ռազմական մի ուժեղ իշխանություն։ Նրան էին միավորվել ոչ միայն Մեծ Սյունիքի բազմաթիվ գավառներն ու քաղաքները, այլև նրա իշխանության ներքո էին գտնվում Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի ու Դիզակի մելիքությունները, որոնք տարիներ շարունակ գտնվում էին պարսից շահերի լծի տակ։

Դավիթ-Բեկի երկիրը վարչական ու ռազմական մի ամբողջական

միասնություն էր՝ իր ավանդական ու նոր օրենքներով, իր զինվորական ուրույն կարգով։ Բազմաթիվ ամրոցներ ու բերդ-սղնախներ էին ստեղծել երկրի սահմանների վրա ու միջնաշխարհում։ Դրանց կայազորները գրտնվում էին հմուտ զորապետների հրամանների տակ։ Երկրում զենք ու զինամթերք էին պատրաստում. մշտական զորք էին ստեղծել։

Արևելյան Հայաստանի այդ նորաստեղծ պետության գերագույն իշխանությունը Հայոց ժողովն էր, որն ուներ իր Ավագանու խորհուրդը, իր գահերեց զորավարը՝ Դավիթ-Բեկը։ Աշխարհագրական պայմաններից ելնելով, Դավիթ-Բեկն իր զինվորությունը բաժանել էր երկու հիմնական խմբի, մեկի վրա սպարապետ կարգելով Մխիթարին, մյուսին զորավար նշանակելով Զրաբերդի Հովհաննես-Ավան իշխանին։

Պարսից լուծը թոթափելուց հետո Դավիթ-Բեկը սկսեց ավելի ամրացնել իր երկիրը, ավելացնել մշտական ծառայության զորքը։ Դա նրան հարկավոր էր։ Նա սպասում էր ռուսաց բանակների գալուն իր երկիրը, որպեսզի նրանց հետ, նրանց օգնությամբ կարողանա պարսիկ խաների ձեռքից ազատագրել նաև Նախիջևանն ու Երևանը, իր նորաստեղծ պետությանը միացնել Շիրակն ու Լոռին, երկիրն ապահովել օսմանյան ահեղ վտանգից։ Սպասում և հավատում էր դրան Դավիթ-Բեկը։ Մնում էր շտապեցնել ռուսաց զորքի մուտքը Հայաստան։ Այժմ, երբ արդեն Պետրոս ցարի պատվիրակը եկել էր իր երկիրը, դրա իրագործումը շատ մոտ էր թվում։

Բեկը սթափվեց մտքերից և նայեց իր կողքին ընթացող, իր խոսքին սպասող քյոխվա Զալաբուն։

Զալաբին գրկել էր թամբի կեղն ու քնել՝ գլուխը նրա վրա։ Բեկը մեղմ ժպտաց, նշան արեց իր թիկնապահներին, որ սրանք հետևեն բանբերին՝ ձիուց չընկնելու համար։

Անտառապատ լեռան ատամի վրա երևաց Հալիձորի բերդը։ Մի ժամվա ճանապարհ էր մնացել, որ տեղ հասնեն։ Բեկին դիմավորելու եկան Մխիթար սպարապետը, Բայանդուր իշխանը, մելիք Փարսադանյան Բալի զորապետը և էլի մի քանի երևելիներ։ Բեկը կեսբերան պատասխանեց յուրայինների սրտաբուխ ողջույնին, մտավ բերդ, աշխատելով խուսափել հանդիսավորության աղմուկից։ Բայց նրանից անկախ զորքն ու ժողովուրդը շրջապատեց նորաձույլ թնդանոթը։ Որտեղի՞ց գիտեին, որ Բեկը թնդանոթ է ձուլել, հայտնի չէր, և Բեկն ավելորդ համարեց հետաքրքրվել դրանով։ Բայց և այնպես ուրախացավ՝ ժողովրդի ու զորքի ոգևորությունը տեսնելով։

Նա անջատվեց յուրայիններից, թնդանոթը թողեց բերդի հրապարակում և քյոխվա Զալաբուն հետը վերցնելով՝ գնաց իր բնակարանը։ Հրամայեց ոչ ոքի չթողնել իր մոտ։ Երկու օր բանբերին պահեց իր հարկաբաժնում, սեղանակից արեց իրեն, սակայն ոչինչ չխոսեց թագավորի պատվիրակի Հայաստան ժամանելու առթիվ։ Միայն երրորդ օրվա երեկոյան կանչեց սպարապետին։ Մխիթարը նրան գտավ իր առանձնասենյակի թախտին՝ մռայլ ու մտախոհ։ Բեկի առջև, արծաթե մատուցարանի վրա, դրված էր չինական երկու գավաթ ու պղնձե մի սրճաման։ Բեկը գլուխը բարձրացրեց, նայեց սպարապետին և անսովոր քնքշությամբ գրկեց նրան։ Սպարապետը սաստիկ զարմացավ Բեկի այդ տարօրինակ սրտազեղությունից. հուզվեց՝ զգալով, որ իր խնամակալն ու հոգևոր հայրը մի առանձին ջերմությամբ իրեն սեղմեց կրծքին։ Նա մի խեղդված հառաչանք լսեց, որ դուրս թռավ այդ աննկուն մարդու կրծքից։

— Ինչպե՞ս է տիկին Սաթենիկը, զավակներդ ինչպե՞ս են,— նրստելով ու, իր դիմացը աթոռ ցույց տալով Մխիթարին՝ հարցրեց Դավիթ-Բեկը։

— Աստծով ողջ-առողջ են, քեզ բարև են հղում,— պատասխանեց սպարապետը՝ զգուշությամբ նստելով աթոռի ծայրին։

— Է՛հ, է՛հ,— տնքաց Բեկը։— Մի ծոծրակ քորելու ժամանակ էլ չի լինում, որ այցի գնամ նրանց։ Կարոտել եմ։— Նրա խոսքերի մեջ զգացվեց անընտանիք ու մենակ ապրող մարդու վշտի մորմոքը։ Բայց Բեկն խկույն հավաքեց իրեն ու Մխիթարին հրավիրեց սուրճ խմելու։

— Մի առևտրական մեծ քարավան պիտի կազմել Շամախու և Բաքվի վրայով Հաշտարխան ուղարկելու համար,— ծանր, ասես գժկամությամբ, ասաց նա։

Շամախուց Բաքու տանող ճանապարհը փակ է, տե՛ր իմ։

— Արդեն բացվել է։ Ռուսաց Պետրոս կայսեր պատվիրակը ժամանել է Դանձասար։

— Վերջապե՞ս...— գոչեց սպարապետն ու սուրճի դատարկ գավաթը մի կողմ դրեց։ Սակայն սպարապետին զարմացրեց այն, որ Բեկն այդ բաղձալի լուրը, որին իրենք անհամբեր սպասում էին ամբողջ ձմեռը, երկու օր թաքուն է պահել ու այժմ էլ հայտնեց առանց ոգևորության, նույնիսկ կարծես անտարբեր։ Սպարապետը խորին մի մտահոգություն նկատեց Բեկի դեմքին։ Դա ուրիշ մտահոգություն էր, իրեն դեռ անծանոթ, ուրիշ մի հոգսից առաջացած։ Դա այդքան ընդգծված չէր եղել նույնիսկ այն ծանր օրերին, երբ իրենք նոր էին սկսել անհավասար կռիվ պարսից դեմ։

Բեկը սուրճը խմում էր անշտապ, առանց հաճույքի։ Թեև սպարապետին խիստ հետաքրքրում էր, թե ինչ է մտադիր անել Բեկը՝ ռուսաց պատվիրակի Հայաստան գալու առթիվ, բայց տեսնելով, որ նա հակ-

ված չէ այդ մասին խոսելու՝ ստիպված լռեց։ Լավ գիտեր, որ Դավիթ-Բեկը երբեք իրենից բան չի թաքցնում և ուր որ է բաց կանի մտքի կծիկը։

ԲԱԽՏԸ ՆԺԱՐՆԵՐԻ ՎՐԱ

Դավիթ-Բեկը վճռեց Հայոց ժողովի ավագանու գաղտնի խորհուրդը հրավիրել Տաթևի վանքում։ Դա նախ և առաջ միջոց էր խորհուրդը թաքնաբար կատարելու։ Եթե ինքը ավագանու հետ մեկներ Դանձասար, ապա թշնամիներին հայտնի կդառնար, որ ծածուկ մի բան է կատարվում այնտեղ։

Մոտենում էին զատկի տոները, ուստի ավագանու՝ Տաթևում հավաքվելը կդիտվեր իբր ուխտագնացության վաղեմի սովորություն, որ կատարվում էր ամեն տարի։ Այդ իսկ նպատակով Բեկը հրամայեց ավագանուն հրավիրել իրենց ընտանիքներով, ուխտավորների մեծ ու փոքր խմբերով։

Ռուսաց թագավորի պատվիրակի Հայաստան գալը նա կամենում էր ծածուկ պահել ոչ միայն թշնամիներից, այլև ժողովրդից ու զորքից։ Ռուսների հովանավորության տակ մտնելը Բեկը կամենում էր ի հայտ անել միայն այն ժամանակ, երբ արդեն ռուսական զորքը կլիներ Հայաստանում։

Բազմաթիվ սուրհանդակներ մեկնեցին երկրի հեռավոր ու մոտիկ գավառները։ Շուտով սկսեցին Տաթև գալ մելիքները, իշխանները, զորապետները։ Նրանք գալիս էին իրենց ընտանիքներով, մատաղացու ոչխարներով, արջառներով, վանքի համար ծանրագին նվերներով։ Հազարավոր ուխտավորներ հավաքվեցին Տաթևում։ Ձիավորները կրակ արին խաչքարերի տակ, ձիերը կապոտեցին սրբազան ծառերից։ Նրանք ծաղրում էին երիտասարդ կուսակրոններին, այնպիսի անպարկեշտ բաներ ասում, որ խեղճերը ծածկում էին իրենց ականջներն ու փակվում նեղլիկ խցիկներում։

Ուշ երեկո էր։ Աստղերով առլեցուն գիշերը թառեց լեռների գագաթներին, ձորերում խաղաց գարնանային թմրաբույր քամին։ Վանքի պարիսպների տակից ու ժայռերի պռունկներից բուրեցին հոնիներն ու փոշնիները։ Կիրճի խորքից լսվում էր Որոտանի դղրդը։ Գազբոյլ լեռան ձյունները հալվում էին տաք քամուց ու թափվում ձորերը, խառնվում գետին, որ գնում էր քմահաճ, ահռելի...

Ուխտավորների աղմուկը դադարել էր։ Ժողովուրդն ու զորքն օթևանել էին Տաթև գյուղում, վանքի ձիթհաններում, բրուտանոցում, հյուրատանը։ Հայոց ժողովի ավագները մեկ առ մեկ հավաքվեցին Եվստաթևու ուխտի առաջնորդ Հովակիմ եպիսկոպոսի մոտ՝ Թանատի սրահում։ Այստեղ ծուլորեն թրթռում էին երկու ոսկեջրած կանթեղ՝ բոցի արնագույն լեզուներով։ Պատուհանի մեջ երբեմն թևաբախում էր անհանգստացած մի աղավնի, փախչում կանթեղի ծանր հոտից։

Մի հնամենի բազմոցում ընկղմվել էր Հովակիմ եպիսկոպոսը։ Նա փոքրամարմին ծերունի էր՝ ոսկրոտ, նեղ դեմքով։ Ձեռքերն ուռած գորտերի պես հանգչում էին բազմոցի բազկակալներին. մատների արանքում սառել էր դեղին հատիկներով համրիչը։

Դավիթ-Բեկը նստել էր նրանից մի փոքր հեռու, ուղիղ նրա դիմացը՝ մի կողքին Մխիթար սպարապետը, մյուսին՝ Հովհաննես-Ավան իշխանը՝ բարձրահասակ ու թխադեմ, սուր քթով ու սուր, երկար բեղերով։ Այդտեղ էին Տեր-Ավետիսը՝ լուրջ ու մտահոգ, Խաչենի զորապետ մելիք Եսային, Վարանդայի մի աչքը շիլ մելիք Բաղրը, ամեն ինչից դժգոհ մելիք Բարխուդարը, Դիզակ գավառի տեր մելիք Եգանը, որ նեղվում էր գիրությունից։ Ջավնդուրի պատանի մելիք Նուբարը խիստ փոքր էր երևում փարթամամարմին մեղրեցի Կոստանդին զորապետի մոտ։ Սիսականի տեր մելիք Շաֆռազն ու Դավիթ-Բեկի հորեղբորորդի Բալի զորապետը նստել էին իրար կից. Շաֆռազը հորանջում էր՝ հավիտենական անքնությունից տառապած։

Ավագանու խորհրդին չէր մասնակցում միայն Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը, որ տկար էր ու հեռավոր ճանապարհորդության անկարող։

Երբ արդեն ամենքը տեղավորվել էին ավագության կարգով, Դավիթ-Բեկը դարձավ դիմացն անշարժ նստած եպիսկոպոսին։

— Իրավունք տուր խորհուրդն սկսենք, սրբազա՛ն,— ասաց հարգալից։

— Աստված բարի տեղ կապի։ Սկսի՛ր։— Աղոթքի պես մրմնջաց եպիսկոպոսը։— Խորհենք մեր անելիքը, հայո՛ց տերեր։ Թագավորի պատվիրակը մեզ է սպասում։

Բոլորը լարվեցին, կարծես չէին շնչում։ Շաֆռազի քունը թռավ։ Մելիք Եգանը քրտնեց, հազը խեղդեց կոկորդում՝ խուլ քոքռալով։ Բայց Բեկը բերանը չէր բացել, երբ խուց մտավ մի երիտասարդ վանական՝ ձեռքին ջրով լի պղնձե կուժ ու մի փարչ։ Դրանք դնելով շեմքի մոտ, նա մեջքն ուղղեց և գիմելով բոլորին՝ ասաց.

— Թող մեր տեր աստվածը հայոց ազգի մարմնավոր տերերիդ այն-

պիսի իմաստություն առաքի, որ դուք կարողանաք ճշտիվ զանազանել չարը՝ բարուց, լավը՝ վատից և արյան ծովերում խեղդվող մեր տառապած ժողովրդին փրկեք կորստյան վիհից։ Անլուծելի անեծք կծանրանա ձեզնից նրա վրա, ով ճշմարիտ ուղին չընտրի այս ի դառն և ի նեղ ժամանակում։

Բոլորը զարմացած նայեցին վանականին, որ հազիվ քսան-քսաներկու տարեկան լիներ, սակայն ազդեցիկ դեմք և ազդու ձայն ուներ։ Սալայն խաչակնքեց բոլորին ու գնաց։

— Մովսես աբեղան էր,— ասաց Հովակիմ եպիսկոպոսը,— սպասավոր է բանի և հմուտ մեկնիչ սուրբ գրքերի։ Գիտակ է առավել, քան տարիքը։ Ճշմարիտը խոսեց, թեև երբեմն ըմբոստ է ու ինքնագլուխ։

Հանդուգն աբեղայի անժամանակ երևալը խորհրդավոր մի երևույթ թվաց Դավիթ-Բեկին։ Ի՞նչ էր կամենում ասել այդ «սպասավոր բանի, ըմբոստ ու ինքնագլուխ» երիտասարդ վանականը։ Արդյոք նրա հոգին ե՞լ է լի տագնապով, որի պատճառով էլ եկավ՝ ծանր անեծքի սպառնալիքով... Դավիթ-Բեկը գլուխը բարձրացրեց.

— Պետրոս թագավորի պատվիրակը ժամանել է Հայաստան։ Բերել է թագավորի հրովարտակը, խորհեցե՛ք, խոսեցե՛ք, մելիքներ։ Ընդունե՞նք, արդյոք, նրա հովանավորությունը, թագավորին հրավիրե՞նք մեր աշխարհը, թե՞ ոչ։ Խոսեցեք, դրա համար ենք հավաքվել։

Այնպես ասաց, որ ոչ ոք չկարողացավ կռահել, թե ինքը՝ գահերեց զորավարն ի՞նչ է կամենում։ Նրա անշարժ, մի թեթև գունատ դեմքից ոչինչ չէր կարելի կռահել։ Լռությունը երկարեց։ Թեև յուրաքանչյուրն իր միտքն ու ասելիքն ուներ, բայց սպասում էր, որ առաջինը խոսի իր հարևանը։

Հասկանալով դա, Բեկը դիմեց եպիսկոպոսին.

— Առաջ, քան մյուսները, հարկ է, որ դու խոսես, սրբազա՛ն։

Անկենդան սրբազանը շարժվեց, բարձրացրեց հայացքը։ Նրա լանջախաչը փայլատակեց ու հանգավ իսկույն։

— Արդարև, խոսե՛նք, մելիքնե՛ր,— ծանր, առարկություն չհանդուրժող ձայնով սկսեց նա։— Ջէ՞ որ քրիստոսանվեր թագավորի մի քաղցր խոսքին էինք սպասում ամենքս։ Ցնծացե՛ք, ուրեմն, որ արարչի անպատում ողորմությունը այսօր հասնում է մեզ։

Նրա ձայնը դարձավ դողդոջ։ Դժվարանում էր հաղթահարել հուզմունքը։

— Ցնծացե՛ք ու բերկրությամբ մեր մատուցեք մեր ողորմած աստծուն, կամքով որի խաչապաշտ թագավորը եղբայրության հրեշտակ է առաքել մեր աշխարհը։ Թող ձեր բերանները լցվեն տիրոջը փառք տվող խոսքերով։ Այսօր մենք տեսնում ենք աստվածաշունչ գործի կատարումը դեպի հայկազյան ցեղը։ Մեր պարտավորությունն է հպատակվել մեծ թագավորին՝ ամենայն Ռուսիո ինքնակալ կայսեր, ցույց տալ, որ ազգն հայոց չի զլանում իսկական գործով իր սերն ու հպատակությունը մատուցել նրան, որ ազգն հայոց կարող է զանազանել ու գին տալ նրա բարերար հոգացողությանը։ Թագավորը մոտենում է մեր աշխարհի սահմաններին ու գալիս է մեր տունն իբրև մեր բարեկամ, մեր ցավերի ամոքիչ... Մեր պարտքն է թագավորի մարդուն ու նրա թուղթն ընդունել պատկավոր և փառավոր պատիվներով ու միշտ հավատարմությամբ կատարել նրա կրկնաշահ հրամանը։ Մի մտածեք, որ օծյալ կայսեր բերանը երբևէ կստի։ Նա խոստանում է անքուն պաշտպան լինել մեզ և մեր բարեբախտության ու անդորրության հոգացող դառնալ։ Ընդունենք, ուրեմն, Հայաստան աշխարհի հզորաձեռն այցելուին՝ ուրախության ու ցնծության աղաղակներով։

Հետզհետե սրբազանի ձայնը դառնում էր հնչեղ ու պահանջկոտ։ Ոգևորվելով՝ նա կանգնեց, և նույնիսկ նրա խամրած աչքերում կայծեր երևացին։

— Գալիս է կայսրը, զավակնե՛րս...— ձեռքերը տարածելով՝ գոչեց նա։— Ռուսաց կայսրը գալիս է մեր արտասուքները սրբելու, մեզ մխիթարելու, անդորրացնելու մեր աշխարհը. գալիս է մեզ փրկելու խլամի շար ու նեղիչ զավակների ձեռքից։ Անփույթ մի լինեք, շտապենք միաբան խորհրդով գնալ, ծունր իջնել ամենաողորմած թագավորի առջև. նրա պատվիրակին հրավիրենք Հալիձոր և արարչական ու արարածական պատիվ ու փառք մատուցենք թագավորին այժմ և հավիտյան։

Եպիսկոպոսը հևաց, նստեց՝ հուզմունքից թուլացած։ Ջուր խմեց։ Թաշկինակը թրջեց, դրեց ճակատին։ Նրա ասածները խոր տպավորություն թողեցին մելիքների վրա։ Պակաս հուզված չէր նաև Դավիթ-Բեկը։ Նա ցանկացավ խոսքը տալ մելիքներին, երբ ծերունի եպիսկոպոսը բոլորովին առույգ ձայնով նորից խոսեց.

— Վեր կացեք, հենց այս պահին հայտնի արեք մեր աշխարհին՝ թագավոր-կայսեր հրովարտակի գալը. մատաղ մատուցեք, շտապեցեք կայսեր պատվիրակի ոտքը։ Ահա իմ կամքը, մելիքնե՛ր. զլացողները մեղսապարտ կլինեն հայոց ժողովրդի ու եկեղեցու առջև...

Նրա խոսքերը սպառնալի հնչեցին։ Ոչ ոքի հայտնի չէր, թե ո՞ւմ էին ուղղված դրանք։ Դավիթ-Բեկի երեսով մի գունատ ստվեր սահեց, աչքի մեկը լայնացավ, և բարկության կայծեր բռնկվեցին նրա մեջ. «Ո՞ւմ է հանդիմանում սրբազանը,— դառնությամբ մտածեց նա։— Ին-

չո՞ւ է կարծում, թե մեր մեջ կա մեկը, որ չուզենա ռուսաց կայսեր օգնությունը»։

Նա գլուխը բարձրացրեց ու շեշտակի նայեց յուրայիններին։ Հասկացավ՝ մելիքներն սպասում էին իր խոսքին։ Բավական չէր աստվածաբան ու հոգևոր մարդու վերամբարձ ճառը։ Դրանցով որքան ասես լիքն են հին ու նոր մատյանները։ Այս գործում հարկավոր է աշխարհիկ մարդու լրջախոհություն ու ստեղծված կացության մեջ ճշգրիտ ելք գտնելու կարողություն։ Բեկը շարունակում էր անշարժ նստած մնալ՝ զգալով, որ սպառվում է իրեն համառորեն սպասող զորապետների համբերությունը։ Նրա դեմքի ոչ մի մկանը չէր շարժվում։ Ասես արձան էր՝ կենդանի, ահազդու աչքերով։ Վերջապես նրա հոնքերը բարձրացան, ու բոլորը լսեցին նրա ձայնը.

— Ի՞նչ ասելիք ունի սպարապետը։

Մխիթարը գլուխը բարձրացրեց, ուղղեց արծաթապատ գոտին։

— Կայսեր մարդուն հրավիրենք Հալիձոր,— պատասխանեց նա։— Հրավիրենք առանց ուշացնելու. հպատակվենք թագավորին։ Այս է մեր ու մեր ժողովրդի կամքը։

— Ճշմարիտ է,— խոսեց Հովհաննես-Ավան իշխանը։— Ինքներս ենք հրավիրել թագավորի պատվիրակին, և ահա նա եկել է արքայական հրովարտակով։ Թագավորը մեզ միաբանության է կոչում իր հետ և պատրաստ է հովանավոր դառնալ մեզ, օգնել զորքով։ Ուրեմն շտապենք պատասխան տալ թագավորին ու գնալ նրա ոտքը։

— Այդ բանում բոլորս միակամ ենք, տե՛ր գահերեց զորավար,— այս ու այն կողմից ձայն տվին մելիքները։

— Միակամ ու միախորհուրդ։

Սրբազանը կարկառեց չորուցամաք ձեռքերը։

— Տե՛ր դո՛ւ, արփիավորիր ազգս հայոց։ Ծնկաչոք շտապեցեք երկրպագության ամենազոր թագավորին, մելիքնե՛ր։

— Ազգովի՜...— զնգաց Դիզակի տեր մելիք Եգանի ձայնը։— Հպատակվենք մեծով ու փոքրով։ Պատվիրակին ընդունենք պատշաճին պատիվներով։ Ժողովուրդը դրան է սպասում։

— Արցախի ժողովրդին հայտնի՞ է պատվիրակի ժամանելը,— հարցրեց Բեկը։

— Ամենքին, տե՛ր գահերեց,— պատասխանեց մելիք Եգանը։— Թեև վեհափառ կաթողիկոսը չանում էր գաղտնի պահել պատվիրակի գալը, բայց ժողովրդի ականջին է հասել բանը։

— Եվ ինչպե՞ս եք տղայական միամտությամբ բոլորին ի հայտ արել այն, ինչ գաղտնի պիտի մնար երկար,— մռայլ գոչեց Դավիթ-Բեկը։

Մելիքներից ոմանք բազմանշանակ նայեցին միմյանց։ Նրանց համար տարօրինակ էր այն, որ Բեկը կամենում էր ծածուկ պահել պատվիրակի ժամանելը։ Թող դա իմանան զորքն ու ժողովուրդը։ Ում ի՞նչ բանն է։ Իրենք են իրենց աշխարհի ու իրենց արարքի տերը։

Բայց այդպես չէր մտածում Դավիթ-Բեկը։ Նա հոնքերն ավելի խտացրեց։ «Հոնքը շինելու տեղը, աչքը կթափենք»,— մտածում էր նա։ Հիշեց քիչ առաջ երևացած Մովսես աբեղային։ «Անլուծելի անեծք կծանրանա ձեզնից նրա վրա, ով ճշմարիտ ուղին չընտրի այս ի դառն և ի նեղ ժամանակում»։ Բեկը մտքում քմծիծաղեց։ Այո, ընտրված է ճշմարիտ ուղին, փրկության ճանապարհը հայոց։ Սակայն դա դեռևս մշուշապատ է, անորոշ։ Այդ ուղին դեռևս օգնական ձեռք չի բերել։ Ինչո՞ւ, ուրեմն, շտապել ժամանակից շուտ ցնծալ։ Բայց արդեն եղածը եղել էր՝ պատվիրակի գալը հայտնի էր շատերին։ Բեկը մի հայացքով ընդգրկեց զորապետներին ու խոսեց դանդաղ, աշխատելով զսպել սրտի դառնությունը։

— Շահավետն ե՞ք մտածում, մելիքնե՛ր։ Այո, ո՛չ ֆրանկների թագավորները եկան մեզ օգնության, ինչպես մի ժամանակ հույս ուներ մեր արյունակից պատվելի Օրբելյան Իսրայելը, ո՛չ էլ յոթը ծովերից անդին գտնվող Պֆալցի Հովհան-Վիլհելմ կուրֆյուրստը, որին այնպե՞ս աղերսում էր Իսրայելը։ Ճշմարիտ է նաև այն, որ ո՛չ պարսիկ շահը կհանդուրժի մեր ինքնուրույն գոյությունը, ո՛չ էլ օսմանլու սուլթանը անքեն հայացքով կնայի, թե մենք ինչպես ենք վերականգնում մեր կորուսված իշխանությունը։ Մենք պետք է մեր հույսը կապենք ռուսների օգնությանը միայն։ Ուրիշ ելք չկա։

— Սակայն,— փոքր լռությունից հետո շարունակեց Բեկը։— Սակայն այդ օգնությունը մենք չպիտի հայցենք հետին մուրացկանի աղերսանքի գնով։ Երբե՛ք ծնկաչոք։ Երբե՛ք պաղատագին։ Այո, պետք է ռուսաց թագավորի պատվիրակին հրավիրենք Հալիձոր։ Այդ էր ի սկզբանե կամքը բոլորիս։ Բայց հրավիրենք՝ թագավորին ցույց տալու մեր զորական կարողությունը, թշնամուն ծունկի բերելու մեր ուժն ու պատրաստակամությունը և ոչ թե թագավորին աղերսող լինենք Աբրահամի գառան խեղճությամբ։ Փոքր-ինչ շտապել ե՞ք, ավագնե՛ր։ Պատվիրակի գալը պետք է ծածուկ մնար, ծածո՜ւկ...— Նա հայացքը սևեռեց Հովհաննես-Ավան զորավարի վրա։— Շտապել ե՞ք։ Տղան դեռ չծնված, անունն Արևշատ ե՞ք դրել։ Ո՞վ արեց այդ միամիտ քայլը։

Հովհաննես-Ավանը վեր կացավ, բարձր հասակով տնկվեց սրահում։

— Աստծուն է հայտնի, որ պատվիրակին մենք ծածուկ ենք պահել մեզանում, տե՛ր գահերեց զորավար։ Բայց ո՞վ ափաշկարա դարձրեց

նրա գալուստը՝ անհայտ է։ Այժմ Արցախի գավառներում ժողովուրդը գիտի, որ թագավորի պատվիրակը եկել է։

— Հիմա լուրը թռավ Թավրիզ և Ստամբուլ՝ մեր թշնամիների ականջը։— Գլուխը տարուբերեց մելիք Բարխուդարը։

— Այդպես է,— հառաչեց Բեկը։— Հիմա մեր թշնամիները կշտապեն միաբանվել և ռուսներից առաջ մտնել Հայաստան։

— Կանխի՞ր վտանգը, գահերե՞ց,— բացականչեց եպիսկոպոսը։— Եղածը եղել է. ուրեմն շտապեցնենք թագավորի գալը, քանի դեռ մեր թշնամիները իրար միս են քրքրում։

— Շտապենք խելքով, ոչ կույր աչքով,— նկատեց Բեկը։— Մեր պարտքն է ռուսների թագավորին հասկացնել, որ թեև մենք փոքր ենք թվով, բայց զորական ուժ ենք ու նրա համար հուսալի կամուրջ կլինենք դեպի Պարսկաստան ու Բաղդատի ճանապարհները։ Բանակցենք թագավորի հետ, ինչպես պատիվ կբերի զորական ուժ ունեցող ու թշնամիներին հաղթած մի փոքր, բայց քաջ ժողովրդի։ Թագավորին ցույց տանք ոչ թե հայ վաճառականի չափն ու կշեռքը, այլ հայ ժողովրդի զենքի ուժն ու նրան հավատարիմ մնալու երդումը։ Այդ անենք առանց աղերսանքի, արժանապատվությամբ։ Մի՛ մոռանաք, որ մեծ գահերի վրա բազմածները աղերսողին ու տկարին ոչ թե գթում, այլ ոտնահարում են։ Նրանք հաշվի են առնում միայն զորություն ունեցողներին։ Իսկ այդ զորությունը մենք ունենք։

Բեկը լռեց։ Այժմ խոսել սկսեցին մելիքները։ Ոմանք առաջարկում էին անհապաղ դեսպանություն ուղարկել Պետերբուրգ, թագավորից շտապ զորք պահանջել, բերել Հայաստան ու արձավել Երևանի ու Վաղարշապատի վրա, մյուսները պնդում էին հայոց այդ երկու քաղաքների վրա գնալ հենց հիմա, առանց արքայական զորքին սպասելու։ Բեկը չէր խառնվում նրանց վեճին։ Նրանց լսում էր ականջի ծայրով՝ միտքն իր խոհերի ետևից։ Նա լավ էր հասկանում, որ Պետրոսն շտապել չէր կարող։ Շտապ Հայաստան մտնելը կռիվ հայտարարել էր նշանակում սուլթանի դեմ։ Իսկ առանց ռուսների օգնության ինքը չէր կարող արշավանք սկսել դեպի Արարատյան աշխարհը։ Թեև Երևանում ու Նախիջևանում սակավաթիվ պարսից ուժեր կային, բայց ահը թուրքերից էր։ Սուլթանն առիթի էր սպասում խուժել Երևան ու Նախիջևան, գրավել Արարատյան դաշտը։ Բայց դա դեռ բոլորը չէր։ Եթե ինքը, առանց ռուսների աջակցության, գնար այդ քաղաքներում նստած պարսիկների վրա, ապա պարսիկ խաները կարող էին միանալ թուրքերի հետ ու ծանրացնել գործը։

Մնում էր սպասել ռուսաց բանակին։ Շտապեցնել նրա գալը։

Ուշ էր, երբ Բեկը վեր կացավ։ Աղմուկը դադարեց։

— Վճռված է,— ասաց նա։— Մենք կընդունենք թագավորի պատվիրակին և պատրաստ ենք բանակցելու նրա հետ։ Միայն, աստծո սիրուն, այդ ամենն անենք առանց աղմուկի, գաղտնաբար։

Որոշեցին թագավորի պատվիրակին գաղտնի դիմավորել Ծիծեռնավանքում և գաղտնի էլ բերել Հալիձոր։ Նաև որոշեցին պատվիրակին դիմավորելու ուղարկել Մխիթար սպարապետին, Հովհաննես-Ավան իշխանին, Տեր-Ավետիսին, մելիքներ Բարխուդարին ու Եգանին։

Դրանով էլ ավագանու խորհուրդը փակվեց։ Բայց ուխտավորները շարունակեցին մնալ Տաթևում, իրենց ուխտը տեղ տալու համար։

* * *

Թեև ուշ գիշեր էր, բայց սրբազանը Դավիթ-Բեկին ու մելիքներին հրավիրեց ընթրիքի։ Բեկը խուսափում էր անվերջ տրտնջացող եպիսկոպոսից, ձանձրանում նրա անվախճան հորդորներից ու միապաղաղ քարոզներից։ Չէր կամենում մասնակից լինել նրա սեղանին, բայց, ավագանու ներկայությամբ սրբազանին մերժելն անպարկեշտ համարելով՝ գնաց նրա հրավերին։

Ընթրիքը համեստ էր ու պարզ։ Բեկն սկսեց ձանձրանալ։ Նրան դուր չէր գալիս, մանավանդ, սեղանատան խորքում շարական կարդացող սարկավագի միապաղաղ, երգեցիկ ձայնը։ Մելիքները խոսում էին ռուսաց թագավորի պատվիրակի ու նրա բերած հրովարտակի մասին։ Տեսնելով նրանց ոգևորությունը, Դավիթ-Բեկն ուրախանում էր սրտանց։

Ինչո՞ւ չուրախանա։ Չէ՞ որ հայոց լեռնաշխարհի տերերը միաբան ու միակամ են։ Այդպես չէր առաջ՝ ազատագրական պայքարն սկսելու օրերին։ Այն ժամանակ շատերն էին խուսափում մտնել նրա դրոշի տակ։ Երկու տարի առաջ չէ՞ր, որ ինքը Շինուհայրի ամրոցում բանտարկեց Տեր-Ավետիս հազարապետին ու նրա աներոջը՝ իր հորեղբայր, հանգուցյալ մելիք Փարսադանին, որոնք խուսափում էին միանալ իրեն։ Հիմա Տեր-Ավետիսն անքակտելի կապերով է միացած հայոց զինվորությանը։ Անմիաբան էր նաև Զավնդուրի տերը՝ երիտասարդ մելիք Նուբարը, որն ահա ավագանու մեջ փայլում է իր քաջուղեղությամբ։ Իսկ որքա՜ն ջանքեր թափեց ինքը՝ Դիզակի ու Վարանդայի տերերին իր իշխանության տակ դնելու համար։

Այժմ հայոց մելիքների միաբանությունն առավել ամուր էր, քան երբևէ։ Բեկը լավ գիտեր դրա պատճառը։ Հայ մելիքներն ընտանի իշխանության ձգտելուց բացի, ռուսների վրա ունեին իրենց հույսը։ Ռուս-

ները մոտ էին Հայոց աշխարհին, և դա ոգի էր տալիս մելիքներին։ «Համենայն դեպս,— մտածում էր Բեկը,— եթե ռուսները չկարողանան էլ շուտ գալ Հայաստան, նրանց մերձությունը նեցուկ կլինի մեզ, մեր միաբանությանը»։ Այս միտքն էր, ամենից առաջ, որ քաջալերում էր Բեկին ու նրան մղում համարձակ գործողության։

Ուշ էր, երբ ընթրիքը վերջացավ, ու դուրս եկան սեղանատնից։ Բեկը շարական կարդացող սարկավագին խնդրեց իրեն տանել Մովսես աբեղայի մոտ։

Սարկավագը նախ սաստիկ զարմացավ գահերեց զորավարի այդ տարօրինակ ցանկությունից, բայց և այնպես կատարեց նրա կամքը։

— Հին գրքերի հոտ է գալիս Մովսեսի խցից, տե՛ր գահերեց զորավար։ Դու այնտեղ ոչ մի հաճելի բան չես գտնի,— ասաց նա։

— Ինչո՞ւ,— հարցրեց Բեկը։

— Մոլորված մարդ է Մովսեսը։ Սիրտ խառնող բաներ կասի։

Սարկավագը նրան առաջնորդեց բակի երկայնքով ու հասցրեց մի նեղ դռան, որի ճեղքից լույսի մի երկու ասեղներ էին ցցվել։

— Արթուն է,— շշուկով ասաց նա։— Կանչե՞մ։

— Ես ինքս,— Բեկը թեթև հրեց դուռն ու գլուխն իջեցնելով, որ չկպցնի ճկած շեմակալին՝ մտավ ներս։

Մովսես աբեղան նստել էր խցի կեսը բռնող սեղանի մոտ և գլուխը հակած՝ գրում էր։ Դռան ձայնից գլուխը բարձրացրեց, զարմացած նայեց Բեկին։ Ապա նրա գունատ դեմքին մի մեղմ ժպիտ երևաց ու արագ կանգնեց տեղը։

— Չե՞ս զլանա, արդյոք, մի փոքր պահ միայն ինձ հյուր ընդունել քո տանը,— առաջ գալով՝ հարցրեց Բեկը։

— Հայոց աշխարհի բոլոր տների դռները միշտ բաց պիտի լինեն քո առջև, տե՛ր գահերեց զորավար։ Համեցիր, եթե իմ անշուք խուցը տհաճ չէ քեզ համար։

Խցի օդը հագեցված էր յուղեղեն ճրագի ծանր հոտով։ Սեղանի մոտ ծռվել էր մի նեղ ու մերկ թախտ՝ կաղնեփայտե մի կոճղ բարձրատեղին։ Ո՞վ գիտի, քանի՞ հարյուր գլուխ է հանգչել այդ փայտե բարձին, որից նրա վրա փոս էր գոյացել՝ երկար բանեցրած լծի ուսակալի պես։ Սեղանի ոտքի տակ, գետնի մեջ տնկված էր կավե մի խեցի՝ կողքին մի պռատ գավաթ։

Բայց և այնպես այդ աղքատիկ խցի մեջ Բեկը մի վեհ ու խորհրդավոր բան զգաց։ Նրա ուշադրությունն իսկույն գրավեց նեղ ու երկար որմնախորշը, որի դարակների վրա խնամքով շարված էին բազմաթիվ գրքեր՝ մի քանիսը արծաթե կողերով, մյուսները միայն կաշեկազմ։ Սեղանի վրա բաց ընկած էին մի մեծադիր մատյան, ապա նաև չինական թղթի մի թերթ՝ մանր, մարգարտաշար գրերով։

— Գրո՞ւմ էիր, Մովսե՛ս եղբայր։ Խանգարեցի՞, անշուշտ,— առաջ գալով՝ հարցրեց Բեկը։

— Բնավ, ինչո՞ւ,— շփոթվեց աբեղան։ Բայց և իսկույն հավաքեց իրեն։— Դու հայ իշխաններից միակն ես, որ պատիվ ես համարել մտնել գրի մարդու նեխած խուցը։

— Եկա՝ իմանալու գրքերի միտքը։

— Քեզ համար խորթ ու անհասկանալի կլինի այն, ինչ ուզում ես իմանալ,— նկատեց աբեղան։

Նրա համարձակությունը դուր եկավ Բեկին։ Նա թիկնոցի փեշերը ծալեց, զգուշությամբ նստեց փոշոտ աթոռին ու, ձեռքը մեկնելով բաց մատյանին՝ հարցրեց.

— Ի՞նչ բան է։

— Սա եռամեծար Գրիգոր Տաթևացու մատյանն է,— նրա անփույթ հարցից մի փոքր նեղացած պատասխանեց Մովսեսը։

— Մի՞թե,— ձեռքն զգուշությամբ գրքին դրեց Բեկը։— Օ՜... Մեծ գանձի տեր ես, Մովսե՛ս։ Եթե չեմ սխալվում, սա այն Գրիգորն է, որ իր «Գիրք հարցմանցի» մեջ վեճի է բռնվել հույն փիլիսոփա Արիստոտելի հետ։ Այդպե՞ս է, Մովսե՛ս։

— Մի՞թե դա քեզ հայտնի է, տե՛ր գահերեց,— զարմանքից աչքերն արագ թարթեց Մովսեսը։ Նա բնավ չէր սպասում, որ պատերազմների սովոր զորավարը տեղյակ կլինի դպրության գործին։

— Փոքր-ինչ հայտնի է,— մռայլ պատասխանեց Բեկը։— Գիտեմ, լսել եմ, որ մեզանում գրքեր կան, որոնցից արյան հոտ չի գալիս, ինչպես մեր պատմությունից ողջ։ Սակայն իմ իմացածը շատ փոքր է, եղբայր իմ։ Ժամանակ մնո՞ւմ է, որ հասու լինենք գրքերի մտքին։ Ես կուզենայի իմանալ, թե ինչ է արել եռամեծար Տաթևացին իր աշխատանքով։

— Այն, ինչ չեն կարողացել անել մեր թագավորներից շատերը,— Բեկի մտերիմ ձայնից խրախուսված՝ պատասխանեց Մովսեսը։ Բեկը հարցական ու հետաքրքիր նայեց նրան։ Աբեղան շարունակեց.

— Եռամեծար ռաբունապետը հանապազ արթուն ու վեհ է պահում հայ մարդու ոգին. օտարների երախներից խլելով՝ հայ է պահում ազգին։

— Հետաքրքիր է. պարզիր, Մովսե՛ս, ուզում եմ իմանալ հնարավորը։

— Ուշացել ես, տե՛ր գահերեց,— ժպտաց աբեղան։— Ես յոթ տարեկանից եմ սկսել, բայց դեռ սկզբին էլ չեմ հասել։

Բեկը մատներով թխկթխկացրեց սեղանը, հայացքն աննպատակ պտտեց։

— Վատ է այն զորավարը, որ մահվան մահճում էլ չի փորձում մի նոր բան սովորել։ Ասա, ինչո՞վ է այս դեղնած գիրքը հային հայ պահել, փրկել կորստից։

— Կասեմ,— ինքնավստահ գլխով արեց աբեղան՝ հայացքը բաց գրքին։— Կասեմ, թեև դժվար թե հասու լինես բոլորին։ Ահա, լսիր, տե՛ր Դավիթ-Բեկ, լսիր, թե ինչ է գրում եռամեծարը։— Նա գիրքը մոտեցրեց աչքերին, մի երկվայրկյան լռեց, ապա.— «Անվախճան է նյութականը և հանապազ ապրում է շրջաստեղծության մեջ։ Մի մարմնից մյուս մարմնի մեջ են փոխանցվում նրա հատկությունները...»։

Դավիթ-Բեկն ուսերը վեր ձգեց։

— Ինչո՞վ է դա պահում ազգը։

— Չհասկացա՞ր, ափսո՜ս,— հառաչեց աբեղան։— Նրանով, տե՛ր Դավիթ-Բեկ, որ փիլիսոփաների հայրը պնդում է, թե ժողովուրդն անմահ է, կապրի մշտնջենապես, սերունդ կտա հանապազ։ Իմաստասերը գրանով ետ է մղում հուսալքության խորշակը, որ այնքան հաճախ է խուժում մեր տկար մարմինները։ Տաթևացին պնդում է, թե հոգին ու մարմինն անբաժան են, ծագում են միաժամանակ։ Հոգին անընկճում պահելու համար պետք է մարմինն անապական ու առողջ պահել, ապաքինել վերքերից ու հիվանդություններից։

— Մեկնիր, մեկնիր ավելի։

— Ես նրան հասկանում եմ այսպես. մարմինը՝ հայրենի երկիրն է, հայրենի տունը, հոգին՝ մարդ արարածը՝ բանական ու հարատև։ Եթե առողջ ու անվտանգ է հայրենի երկիրը, մարդն էլ նրա վրա ապրում է բախտավոր։ Պահեցիր հայրենիքը, կապրի ժողովուրդը։ Հողդ ամուր պահեցիր, ինքդ էլ ամուր կլինես։

Բեկի համար այդ բոլորը առավել խորհրդավոր էին, քան զարմանալի։ Նա հիշեց ագուլիսի վաճառականների հաղորդածը. «Պետրոս կայսրը միտք ունի, որ եթե չկարողանա մտնել Հայաստան, ապա համոզի հայ ժողովրդին՝ տեղափոխվել Կասպից ծովի ափերը, որ շենացնի իր նվաճած ավազուտները»,— հայտնել էին նրանք։ «Եթե ես չկարողանամ ազատագրել ձեր երկիրը, ապա խորհուրդս այս է՝ թող ձեր ժողովուրդը գա ու բնակվի իմ նվաճած հողերում»,— ասել է Պետրոս առաջինը։ Բեկը հիշեց դա, ու նրա մտապատկերում գծվեց իր փոքրիկ հայրենիքը՝ գալարուն գետերով, ձյունաթաց լեռներով, գյուղերով ու քաղաքներով։ Ո՞վ կթողնի իր օջախն ու արտը, որի եզրին է բուսել, ապրել դարեր՝ արյուն ու քրտինք հեղելով իր նախնիների նշխարների վրա։ Հարկավո՞ր

է, որ մարմինը՝ հայրենի երկիրը թողնելով ապրի հոգին՝ պանդխտացած ժողովուրդը։

— Իսկ անվախճա՞ն է, արդյոք, հոգին,— ակամա հարցրեց նա աբեղային։

— Ո՛չ։ Ռաբունապետը գտնում է, որ հոգին մեռնում է, հենց որ կտրվում է մարմնից։

— Իսկ եթե ուրիշ վայր փոխադրվի՞։

— Կմեռնի դարձյալ, ինչպես սարի շուշանը, եթե նրան պոկես ու տանես, տնկես խորշակահար ավազուտում։

Բեկը շեշտակի նայեց աբեղային։ Որևէ բան հայտնի՞ է սրան։

— Կմեռնի՛, այո,— ասաց բորբոք։— Ինչո՞ւ պոկես բույսն իր մայր հողից, ժողովրդին՝ իր օջախից։ Ո՞ւր տանես, ո՞ւմ համար։ Ինչո՞ւ։— Նա սկսեց երթևեկել նեղ խցում։ Նայեց Մովսեսի աչքերին, որոնց մեջ տագնապ և դժգոհություն կար։ Փոքր-ինչ մոտեցավ նրան ու հարցրեց.

— Դու որևէ ծանր բան լսե՞լ ես։

— Լսել եմ ցավալին,— պատասխանեց աբեղան։— Լսել եմ, որ Պետրոս թագավորը մեզ խորհուրդ է տալիս տեղահան լինել ու գնալ, բնակվել ծովափի ավազուտներում։ Նույնն է, թե սարի շուշանը պոկես հազարամյա մոր գրկից՝ հողից ու տնկես խորշակահար ավազուտում։ Նույն է, թե հոգին անջատես մարմնից։ Կկորչենք ազգովի, տե՛ր Դավիթ-Բեկ։ Դու աշխատիր ռուսների զորքը բերել մեր աշխարհը։ Մեզ չպոկես մեր լեռներից։ Մեր հոգին մեր մարմնին է սովոր։ Մի՛...

Բեկն իր ափով փակեց աբեղայի բերանը։

— Կամա՛ց, պատերն էլ ականջ ունեն։ Թող չլսի ժողովուրդը, թող չիմանա անցանկալին։ Հույսով ենք, թող հույսով էլ մնանք, մինչև թագավորին իր զորքով բերենք մեր լեռները։ Հա, դա է միակ ելքը։ Կբերենք։ Նա կգա։ Իսկ մեր գնալը չի՛ լինի։ Լռի՛ր, լռի՛ր, թող քո սրբազանը չիմանա քո միտքը։ Կայրի քեզ...— Նա ձեռքը դրեց բաց մատյանին։— Դու սրա ոգին մեկնիր ժողովրդին, որ թեև այսօրինակ անբավ գանձերի ստեղծողն է ու տերը, բայց տեղյակ չէ սրանց, խարխափում է խավարի մեջ։ Ջահ պիտի դառնալ, Մովսե՛ս, որ այրվելով լուսավորենք մեր բազմագնա ժողովրդի ուղին։ Միայն սուրը չէ, որ ամուր է պահում ժողովրդի ոգին։ Լույսն է, առաջին հերթին, նրա ուժը։ Որքան լուսավոր լինի ժողովրդի միտքը, այնքան հզոր կլինի նա։

Բեկը մի գավաթ ջուր խմեց, գավաթն զգուշությամբ դրեց սեղը և նստեց։ Նրա դեմքին մի երանելի վեհություն կար, որի նմանը շրջապատողներից ոչ մեկի դեմքին չէր նկատել Մովսեսը։

— Փոթորիկը կանցնի, Մովսե՛ս,— նորից խոսեց Բեկը։— Շատ փոթորիկներ են անցել հայ ժողովրդի գլխով։ Այս էլ կանցնի։ Ես հավատում եմ մեր ժողովրդի վաղվա օրվան։ Գեղեցիկ կլինի այդ օրը։ Մի փոքր էլ սպասիր, սիրելի՛ս, մի փոքր էլ համբերիր, և կտեսնենք այդ օրը։ Մենք քեզ հետ միասին բաց կանենք Գրիգոր Տաթևացու դպրոցը, որ հիմնարկել է նրա ուսուցիչ Հովհան Որոտնեցին, որ խափանված է, սակայն, մեր աշխարհի ու մեր հոգու թշնամիների ձեռքով։

— Շենքը դեռևս կանգուն մնում է Որոտանի կիրճում։— Երազկոտ ասաց Մովսեսը։— Կան գրասեղանները, նստարանները, բոլորը քարքանդակ։ Կան դահլիճները։ Բայց դատարկ են նրանք, փակ ու համր։

— Կբացենք խուլ ականջները, համր լեզուները,— ոգևորվեց Բեկը։— Մեր հայրենակիցները հեռավոր աշխարհներում գրքեր են տպագրում։ Նրանց գործատները կբերենք մեր լեռները։ Կնորոգենք խափանված դպրոցը և քեզ հետ միասին մտքի լույս տվող մի փոքր օջախ կհիմնենք մեր մթամած լեռնաշխարհում։

— Կամքից շուտափույտ կատարում, տե՛ր գահերեց զորավար,— հուզված ասաց Մովսեսը։

— Գերեզման ունի՞,— փոքր-ինչ լռելուց հետո, աչքը բաց մատյանից չկտրելով՝ հարցրեց Բեկը։

— Ո՞վ,— թեթև-ինչ կուացավ Մովսեսը։— Տաթևացի՞ն։ Ունի, տե՛ր գահերեց։ Այստեղ են նրա նշխարները։ Մայր տաճարի գավթում։

— Եկեղեցի պիտի շինել նրա շիրիմի վրա։

— Ցանկալին կամեցար, տե՛ր Դավիթ-Բեկ,— ավելի հուզվեց արքունը։— Բայց եթե ուզում ես նրա հիշատակը հարգել, ապա կատարիր նախկին մտածածդ՝ վերականգնիր Տաթևացու այն դպրոցը, որ երեք հարյուր տարի առաջ խափանվեց։ Տաթևացին տիվ ու գիշեր լուսավորում էր մանուկների միտքը ոչ միայն աստվածաբանության կանոններով, այլև հոգուն ու մարմնին հաճելի գիտություններով պես-պես։ Դու իրավացի ես, տե՛ր գահերեց, միայն սուրը չէ, որ պահում է ազգը։ Սրին համազորը մտքի լույսն է, գիտության ջահը, որ մի ժամանակ կար մեր աշխարհում, բայց մարեցին օտարները։

— Կանենք, կվառենք այդ ջահը, Մովսե՛ս,— հաստատուն ասաց Բեկը։— Դպրոցներ կբանանք, կլցնենք մանուկներով, որ գիտակ լինեն աշխարհի իմաստություններին։ Բայց դեռ դրա օրը չէ։ Թող օրը գա, հետո...

Բեկը վեր կացավ, մանր քայլերով երթևեկեց խցում, ասես զգուշանալով արթնացնել քնած գրքերը։ Անհամարձակ շոշափեց դարակներում կողք-կողքի դրած մատյանները և, շուռ գալով դեպի աբեղան՝ խորհրդավոր ձայնով ասաց.

— Իսկ մինչև այդ ես քեզ մի ուրիշ բան պիտի խնդրեմ, եզբա՛յր իմ։ Լռեց։ Զայնն ավելի ցածրացրեց։

— Մեկնիր Էջմիածին։ Սո՛ւս... Ոչ ոք չպիտի իմանա նպատակը, ոչ ոք։ Այստեղ ասա՝ գնում եմ սուրբ իջման տեղն ուխտի։ Նպատակդ այս է. իմանալ, թե ինչ են խորհում հայոց հայրապետը, Էջմիածինը, Երևանը, Արարատյան աշխարհի ժողովուրդը։ Արդյոք կամենո՞ւմ են աջակից լինել մեզ։ Հնարավորություն ունե՞ն, արդյոք, ապստամբելու, պարսիկ Միհրալի խանի դեմ։ Իմացիր՝ ինչ են մտածում ռուսների գալուառթիվ։ Իմացիր, թե պարսիկները Երևանում ինչ զորական ուժեր ունեն։ Ի՞նչ են անում թուրքերը։ Հասկանո՞ւմ ես, Մովսե՛ս, սիրելիս։ Դու պետք է ինձ աջակից լինես։ Դյուրին գործ չեմ հանձնարարում քեզ, բայց հարկավոր է։ Կգնա՞ս։

— Հոգին ու մարմինը պահելու համար պատրաստ եմ անձս զոհելու,— առանց երկար մտածելու՝ պատասխանեց Մովսեսը։

— Ուրեմն նախօրոք ստացիր իմ շնորհակալությունը։

Նստեցին դեմ-դիմաց։ Խոսեցին երկար։ Բաժանվեցին իրարից գոհ ու իրար հարազատ։ Երբ Բեկը դուրս եկավ աբեղայի խցիկից, արդեն հավախոսի պահն էր։ Իր համհարգին գտնելով՝ Բեկը հրամայեց արթնացնել թիկնապահ գունդը։ Ապա հապճեպ հրաժեշտ տվեց եպիսկոպոսին, մելիքներին պատվիրեց շարունակել իրենց ուխտը, մինչև ինքը նրանց հրավիրի Հալիձոր և Մխիթար սպարապետի հետ մեկնեց։

* * *

Տուն էր գաղտնում անշտապ։ Հաճախ կանգնում էր լեռնալանջերը հերկող գութանավորների մոտ, հեռանալը զրույցի բռնվում, ականջալուր լինում նրանց թախծոտ, երկարածոր հոբովելին.

«Հո՜, հո՜... Ահավե՛լ ա, հո՜...»։

Երկար ժամանակ հոբովելը դուրս չէր գալիս գլխից, զնգում էր հաճելի։

«Հո՜, հո՜... Ախպե՛ր ջան...»։

Մի տեղ մի ծեր շինական հարցրեց.

— Ե՞րբ պիտի թագավորի մարդը գա Հալիձոր, տե՛ր գահերեց զորավար։

Դավիթ-Բեկը շեշտակի նայեց սպարապետին։

— Սրա՞նց որտեղից է հայտնի բանը,— սպառնագին հարցրեց նա։

Մխիթարը ուսերը ձգեց։

Շինականն ասաց, որ երեկ իրենց գյուղը եկած Տաթևի մի վարդապետ է լուր արել, թե մենք արդեն ռուս ցարի հպատակներն ենք, թե մելիքները թագավորին հրավիրել են գալ մեր աշխարհը։

— Գլուխը քարովն է տվել վարդապետը,— չարացավ Դավիթ-Բեկը։— Ո՞վ է նրան լիազորել սուտ ու պատիր բաներով մոլորեցնել ժողովրդին։ Մենք ոչ ոքի հպատակ չենք, ոչ ոքի՜։ Ո՛չ մի թագավոր չի եկել ու չի գալու մեր աշխարհը։ Չհավատա՞ք...

— Ասում էր՝ թագավորը մարդ է ուղարկել Գանձասար, և որ նա սպասում է քո հրավերին, տե՛ր Դավիթ-Բեկ։— Անհամարձակ ավարտեց շինականը։

— Մի՛ հավատաք մատաղ լափող զրախոսին։

Երբ արդեն հեռացել էին շինականից՝ Դավիթ-Բեկը բարկացած գոչեց.

— Տեսնո՞ւմ ես, թե ի՞նչ են անում այդ ագռավակերպ հոգևորականները, Մխիթա՛ր։ Թաքունն ափաշկարա են արել, աշխարհի բերանը գցել. հիմի լուրը հասավ սուլթանին։ Հասավ ֆրանկների աշխարհը, Անգղիացոց թագավորին հասավ այն, որ մենք ռուսաց Պետրոսին հրավիրում ենք գալ ու տիրանալ մեզ։

— Սակայն դրա մեջ ի՞նչ տխուր բան կա, տե՛ր գահերեց։ Չէ՞ որ այսօր կամ վաղը կիմանան,— փորձեց Բեկին հանգստացնել սպարապետը։

— Կիմանա՞ն,— ծաղրեց Բեկը։— Տհասնե՛ր, անհեռատես մանուկնե՛ր։ Կիմանա՞ն։ Իհարկե, ի վերջո կիմանան։ Բայց թող իմանան այն ժամանակ, երբ թագավորի զորքն այստեղ կլինի՝ մեր աշխարհում։ Այդ ուրի՞շ բան է... Իսկ հիմա՜... Հիմա դեռ Պետրոս թագավորն իր տանը մեղրագինի է խմում բոյարների հետ, իսկ դուք աշխարհով մեկ լուր եք արել, թե նա մտնում է մեր աշխարհը։ Գործը կսպանեք դեռ բարուրի մեջ, հասկանո՞ւմ եք։

— Միևնույն է, մեր թշնամիներն արդեն սուր են հանում մեր դեմ։

— Իսկ անխոհեմ բերանբացները ջանում են, որ նրանք շտապեն իրենց սուրն իջեցնել մեր գլխին. այդ սուրը ետ վանելու փոխարեն՝ մոտեցնում են։ Շտապում են անհարկի, անզգույշ։

Բեկը մտրակեց ձիուն, բավականին առաջ անցավ թիկնապահ գընդից ու, թամբի վրա շուռ գալով դեպի սպարապետը՝ արդեն քիչ մեղմ շարունակեց.

— Դու կարծում ես, թե ռուսաց թագավորը ահ չունի՞ Թուրքից։ Հը՞։

Ունի՜։ Ով դա չի հասկանում՝ մոլորյալ է։ Եթե բանը Պետրոս թագավորին մնար, ապա նա վաղուց արդեն մեր աշխարհում կլիներ, կլիներ Երևանում, Նախիջևանում, Վանում կլիներ։ Պետրոսին խանգարում են, հասկանո՞ւմ ես։ Պետրոսի ձեռքերը կապում են Ստամբուլում վխտացող ֆրանկների դեսպանները. նրա ոտքին կապ են դնում Հյուսիսի շվեդները, Անգղիան, Հռոմը։ Սրանք չեն թողնի, որ Պետրոսը դառնա արևելքի տերը։ Հասկացե՛ք, Պետրոսի կռիվը միայն Թուրքի դեմ չէ։ Եվրոպայի սատանայակերպ քրիստոնյա տերերը իրենց կանանց անգամ կծախեն, Թուրքերին կզիջեն, որ սրանք արգելք դառնան Պետրոսի առաջխաղացմանը դեպի մեր աշխարհները։ Հա՜։ Այդպես է։

— Ուրեմն գնանք ջուրն քնկնե՞նք,— փշրված սրտով հարցրեց Մխիթարը։

— Ընկի՛ր՝ եթե խելք չունես, եթե մանուկ ես,— ձեռքը թափ տվեց Դավիթ-Բեկը։ Ապա քիչ լռելուց հետո շարունակեց։— Պիտի լռել, սպասել, մինչև Պետրոսը հարմար ժամանակ գտնի ու զորքով գա մեր աշխարհը։ Պիտի գաղտնի պահենք, որ հպատակվել ենք նրան։ Դա պետք է, որպեսզի Թուրքն ու պարսիկը չասեն. «Ահա, դուք՝ հայեր, գնացիք գյավուր ռուսի ոտքն ու նրան բերիք մեզ վրա, և դրա համար էլ մենք կոտորում ենք ձեզ, ջնջում, որ չփաթաթվեք մեր ոտքերին»։ Ահա թե ի՞նչ կասեն։ Իսկ եթե Պետրոսին թաքուն բերենք, առանց մեր անժամանակ ճղճղոցների, առանց աղմուկ-աղաղակի, ապա կկանխենք թշնամիներիս, ապա սուր չի կախվի ոչ մեր, ոչ էլ Արևմտյան Հայաստանի գլխին։

Փոքր-ինչ լռելուց հետո, Բեկն ավելացրեց.

— Ինձ հավատարիմ մարդիկ Ստամբուլից լուր են տվել, թե ֆրանկները ռուսաց դեսպան Նեպլյուևին սպառնում են՝ չմտնել Վրաստան ու Հայաստան. բավականանալ միայն Կասպից ծովի արևմտյան ափերին զավթած հողերով, պահանջում են, որ Ռաշտն ու Արդաբիլը վերադարձնեն պարսիկներին։ Նրանք Թուրքերին զինում են՝ մեր երկիրն ու Վրաստան ուղարկելու համար։ Սա կատակի բա՞ն է։

— Պետրոսը չի լսի նրանց,— նկատեց Մխիթարը։

— Իրենի՞ց է, որ լսի կամ՝ ոչ։ Դա նրա ուժից վեր է, Պետրոսն այնքան հիմար չէ, որ իր դեմ հանի Եվրոպան, Թուրքիան, Պարսկաստանը։ Նա նոր է սկսել ամրանալ Արևմտյան ծովի ափին... Դա դուր չի գալիս Եվրոպայի տերերին։

— Մի՞թե ելք չկա,— հառաչեց սպարապետը։

— Կա՜։— Համոզված ասաց Բեկը,— չխառնվել մեծ տերությունների գործերին, չեզոք մնալ, խաբել՝ մեր դիմադրողական ուժը զորաց-

նելով։ Շարունակել գաղտնի, բայց իսկական բարեկամությունը ռուսների հետ։ Սուլթանին ցույց տալ, որ օտարների գործերին չենք խառնվում, իսկ շահ Թահմազին ստիպել, որ ճանաչի մեր անկախությունը։ Միավորել հայոց ու վրաց զորական ուժերը՝ մոտեցող աղետի դեմ։ Ահա ելքը։

— Այժմ ի՞նչ պիտի անենք,— հարցրեց սպարապետը։

— Էլ ի՞նչ, աշխարհով մեկ են արել այն, ինչ միայն աստծուն պիտի հայտնի լիներ։ Չգիտեմ, ելք չեմ տեսնում։ Ինչպե՞ս չիմացա ժամանակին, ինչպե՞ս չկանխեցի...

Լռեցին։ Ձիերի ընթացքը դանդաղեցրին։ Թիկնապահ գունդը մոտեցավ։ Մթնեց։ Գնացին նաև ամբողջ գիշերը։ Լուսաբացին միայն մտան Հալիձոր։

***

Թեև Հայոց ժողովի ավագանին վճռեց արքայական պատվիրակին բերել Հալիձոր, սակայն Դավիթ-բեկը հրավիրակ չէր ուղարկում նրա ետևից։ Ինչ էր մտածում նա, ոչ ոքի հայտնի չէր։ Տագնապալի ու ծանր օրեր էին։ Սպարապետն անհամբերությունից չգիտեր ինչ անել։ Ամբողջ երկրում արդեն հայտնի էր, որ ռուսական զորք է գալիս Հայաստան, տրտունջներ էին լսվում ժողովրդից ու զորքից, թե ինչու չեն կանչում թագավորի պատվիրակին, շտապ չեն բերում նրա զորքը։ Այդ ամենը լսում էր Մխիթարը, բայց սիրտ չէր անում դրանք հայտնել Բեկին։

Այնինչ Հալիձոր ժամանող գաղտնի լրտեսները նորանոր լուրեր էին բերում Ստամբուլից, Թավրիզից, Էրզրումից, Կարսի փաշայությունից։ Թուրքերը զորք են կուտակում՝ Հայաստան արշավելու համար։ Ֆրանկները նրանց հանդերձանք են տալիս, անգղիացիները՝ հրազեն, Հոլանդիան՝ թնդանոթ ու դրամ։

Ուշադիր լսելով իր մարդկանց հաղորդածները՝ Բեկն ընկնում էր մտատանջության մեջ։ Ուրիշ էլ ի՞նչ ձեռնարկի՝ մոտեցող աղետի առաջն առնելու համար։ Լեռնաշխարհում գրեթե մարդ չէր մնացել, որ զենքի տակ չլիներ։ Վրթանես զինագործը երրորդ թնդանոթն էր ձուլել արդեն։ Աշխարհազորային ջոկատներին վարժում էին հմուտ հարյուրապետներ, մելիքներ։ Վրաց Վախթանգ վեցերորդ թագավորի հետ Դավիթ-Բեկը գաղտնի պայմանագիր ուներ՝ միացյալ ուժերով թուրքերի դեմը կանգնելու։ Մեծ քանակությամբ պարեն ու զինամթերք էին ամբարել Հալիձորում, Ջրաբերդում, Որոտնա բերդում, Դիզակում, Ձագեձորում, Մեղրի

ավանում, Սիսականում։ Ժողովուրդն ամեն ինչ տալիս էր, միայն թե պահեն ձեռք բերած անկախ պետությունը։

Դաժան այդ իրականության խավարում միայն մի լույսի շող էր ժպտում հայերին։ Դա ռուսների օգնության հույսն էր։ Գյուղերում, ավաններում ու քաղաքներում ոգևորված խոսում էին այն մասին, թե ռուսաց զորքերը պատրաստվում են Բաքվից՝ Շամախու վրայով գալ Հայաստան, թե վրաց թագավորը եղբայրական երդում է տվել ուս-ուսի կանգնել հայերի հետ, և հիմա Թիֆլիսում երեսուն հազար զորք ունի հավաքած։

Այդ խոսքերը հասնում էին Դավիթ-Բեկին։ Իհարկե, ռուսները Բաքվում են, և Վախթանգը երեսուն հազար զորք ունի։ Նա էլ է սպասում Պետրոս Մեծին։ Եկավ՝ իսկույն կմիանան նրան, կմտնեն նրա գրոշի տակ։ Բեկին հայտնի էր նաև, որ եթե թագավորը չգա, վրաց զորքը կցրվի, ու Վախթանգը կմնա անօգնական։

Երկու ժողովուրդների փրկությունը պայմանավորված էր ռուսների գալով։ Բայց նրանք չէին գալիս։ Ավելի շուտ՝ արևմտյան տերությունները չէին թողնում, որ գան։ Դրանից էլ Բեկի սիրտն արյունոտվում էր։ Դրա պատճառով էլ երկմտում էր մարդ ուղարկել պատվիրակի ետևից։ Ուղարկի ի՞նչ անի։ Պատվիրակը բանակներ չունի և միայն երկու սպայի հետ է եկել Հայաստան։

Մի անգամ Մխիթարն զգուշությամբ ակնարկեց, որ իզուր չեն իրենք շտապում թագավորի պատվիրակին կանչել Հալիձոր։

— Մելիքներն ու ժողովուրդը տրտնջում են, Բե՛կ,— ասաց նա,— Հովակիմ եպիսկոպոսը կատաղած է։ Ասում է. «Ինքս ծերունի տեղովս կգնամ ու Պետրոսի մարդուն կբերեմ Հալիձոր»։

— Կխեղդեմ հենց իր խցում,— չարացավ Բեկը։

— Բայց մարդը բարին է մտածում։

Բեկը դառնացավ։

— Մի՞թե կարծում ես, որ եկեղեցու սևագլուխ հայրերն ավելին կարող են անել Հայոց աշխարհի համար, քան դու, Վրթանես զինագործը, քո Եսային, ես կամ Թովմա հարյուրապետը։

— Ջմոռանանք, որ եպիսկոպոսը երկրի հոգևոր տերն է։

— Հոգևոր տերը թող առույգ պահի ժողովրդի հոգին, իսկ նրա մարմնի պահպանությունը չպիտի վստահել սևագլուխներին։ Կլափեն, ու ոսկորն էլ չի մնա։ Երես մի՛ տուր այդ վեղարավորներին ու մանավանդ, մի՛ երբեք ցածրացիր նրանց առջև։ Այն երկիրը, որի ձեռքին սրի փոխարեն խաչն է՝ կկործանվի։ Ականջիդ օղ արա ասածներս...

Ամենուրեք լարված վիճակում էին։ Թուրքերից սպասվող վտանգը

տաքնապալի էր դառնում օրավուր։ Շատերն էին կորցնում գլուխները։ Բայց այդ ահի ու տագնապի օրերին մի մարդ կար սակայն, որ չէր կորցնում իր արիությունը և, բազմաթիվ թելերով կապված լինելով օտար աշխարհների արքունիքներին՝ սառն դատողությամբ ու տոկուն համբերությամբ վարում էր իր գործը, գիտեր, թե ինչ է կատարվում այսօր, ինչ պիտի լինի վաղը և ինչ պիտի անի ինքը։ Դա Դավիթ-Բեկն էր։

Իրար հաջորդող դեպքերն այնպես արագ զարգացան, որ Բեկը ստիպված էր արքայական պատվիրակին հրավիրել Հալիձոր արդեն ոչ թե ծածկաբար, այլ ափաշկարա։ Դրա առիթը Եսայի կաթողիկոսի նամակն էր։ «Սիրելիդ իմ գահերեց զորավար հայոց մեծի ու փոքրի,— գրել էր վեհափառը։— Շտապում եմ հայտնել, որ Պետր Ալեքսեիչ կայսրը վճռել է շուտով առաջանալ դեպի մեր ու Վրաց Երկրները։ Նա մեզ հանձնարարում է պատրաստ լինել՝ նշանակված օրը մեր զորքերով Գանձակի դաշտում դիմավորել իր աստվածառաք գնացքը։ Ուրեմն մի հապաղիր, որդյակ իմ, շտապիր քեզ մոտ հրավիրել կայսեր պատվիրակին, որ նա հասու լինի նաև մեր աշխարհի գործերին։ Տիրող ամենակարող կամքով նորոգվում է հայոց խավարած աստղը, և փրկարար լույսը մոտենում է մեր աշխարհին։ Շտապի՛ր, զավա՛կս»։

Թեև Դավիթ-Բեկն աներկբա հավատում էր Եսայի կաթողիկոսի հեռատեսությանը, թեև գիտեր, որ նա փորձառու դիվանագետ է ու աներկյուղ գործիչ, բայց նրա նամակը ևս գուցե առիթ չտար կատարելու վճռական քայլը, եթե Հալիձոր չգար վրաց Վախթանգ թագավորի ծպտված բանբերը։ Վախթանգը Բեկին ցնծությամբ հայտնում էր, որ ինքն արդեն հրաման է ստացել թագավորից ու սպասում է Բաքվից նրա զորքերի շարժվելուն։ Վախթանգը Դավիթ-Բեկին խնդրում էր կազմ ու պատրաստ լինել՝ կայսրին դիմավորելու համար։

Դա արդեն հուսադրեց Դավիթ-Բեկին։ Կարծես գործը գլուխ էր գալիս ցանկացածին պես, կարծես բացվում են փակված ճանապարհները։

Նույն օրը մի հարյուրապետ փայլեկ եկավ Էջմիածնից ու Դավիթ-Բեկին հանձնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի գիրը։

— Փառք աստծու, որ վեհափառը վերջապես հիշել է մեզ,— ասաց Բեկն ու, նամակի վրա տեսնելով կաթողիկոսի շքեղ կնիքը՝ մեղմ ժպտաց։— Ամեն ինչ ունենք՝ կաթողիկոս, կնիք, գավազան, ամեն ինչ բացի զգույշ գործելու, երկիրն անվտանգ պահելու խելքից։

Սկսեց կարդալ։

«Հիսուս-Քրիստոսի ծառա Աստվածատուր Համադանցի Կաթողիկոս Ամենայն Հայոց, վեհ ու վերագիտող հայկազյան սեռի, պատրիարք վաղարշապատ քաղաքի առաքելական աթոռի, ի տեղվոջ իշման բանին

աստծո, լուսակառույց ու տիրանկար, քրիստոսամատույց վեհափառ և հրեշտակարար սուրբ և գերազարդ աթոռիս էջմիածնի...»։

— Այնպես են գրում, կարծես աշխարհների տեր լինեն,— քմծիծաղեց Բեկը։— Իսկ մի պարսիկ զինվորի առջև խեղճանում են իսկույն։

Մի ամբողջ երես բռնող զանազան վերամբարձ տիտղոսներն ու վերադիրները բաց թողնելով՝ Բեկը կարդաց բուն գրությունը։ Իսկ բուն գրությունը կարճ էր։

«Ռուսաստանից երանելի հայերը հայտնում են, որ Պետրոս թագավորը ճանապարհ է ընկել դեպի մեր կողմը։ Աստծու սիրուն, պատրաստվիր գնալ նրա ոտքը և նրան բեր մեր աշխարհը»։

— Արարատյան աշխարհում լուր ունի՞ ժողովուրդը թագավորի գալու մասին,— թուղթը մի կողմ դնելով՝ հարցրեց Բեկը հարյուրապետին։

— Ունի, տե՛ր գահերեց զորավար,— պատասխանեց հարյուրապետը,— բոլորին հայտնի է, որ թագավորը գալիս է։ Ամեն լուսաբացի ու մայրամուտի բոլորս աղոթում ենք դրա համար։

— Ես ուզում եմ, որ դու խոսես իբր զինվորական մարդ։ Ո՞ր քաղաքից ես։

— Երևանից։

— Անո՞ւնդ։

— Հովհաննես, տե՛ր Դավիթ-Բեկ, Կառչիկ Հովհաննես է անունս։ Ես Երևանի Հովհաննես Հունդիբեկյան պարոնտերի խորհրդով եմ բերել կաթողիկոսի գիրը։

— Երևանը զորական ուժ ունի՞։

— Ունի։ Սպասում ենք այն օրվան, երբ դուք իջնեք լեռներից։ Այն ժամանակ մենք տասը հազարանոց զորք կկանգնեցնենք ու Երևանից կքշենք պարսիկ Միհրալի խանին։ Զենք ու զինամթերք ունենք։ Մեզ կօգնեն նաև գավառի գյուղերը։ Բոլորս սպասում ենք քեզ, տե՛ր Դավիթ-Բեկ։ Երևանն ու Արարատյան դաշտի ժողովուրդը հիացմունքի մեջ են սյունեցիներիդ ու արցախցիներիդ քաջագործություններով։ Իսկ պարսիկ Միհրալի խանին կարելի է մի օրվա մեջ քշել Երևանից։

— Եթե՞...

— Եթե դա կամենա Հայոց ժողովի գահերեց զորավար Դավիթ-Բեկը...

— Եթե կամենա՞...— ասաց Բեկն ու լռեց։

Նրան ուրախացրին փայլեկի հայտնած տեղեկությունները։ Երևանը պատրաստվում է ապստամբել պարսից խանի դեմ։ Դա նոր խոհերի առիթ էր տալիս։ Ինքը լավ էր ճանաչում Երևանի պարոնտեր Հովհաննես Հունդիբեկյանին, Գրիգոր վարդապետին, Պողոս Քիչիկբեկյանին, Դավիթ

Միրզեջանյանին։ Դրանք զինվորական գործին քաջատեղյակ մարդիկ էին, որոնց նա հանդիպել էր Վրաստանում, Երևանում, Ապարանի սուրբ ուխտատեղիներում։

Վաղուց էր Դավիթ-Բեկը փայփայում Երևանը պարսիկներից ազատելու միտքը։ Սպասում էր հարմար պահի։ Իսկ ամենից հարմար պահը, իհարկե, հիմա է։ Պարսիկները կորցրել են իրենց գլուխները, ռուսները չոքել են նրանց հյուսիսային կոնակին, ավղանները ջարդել են պարսից զորքը, արքունիքը գրավել։ Բավական է անցնել Վայոց ձորը, մոտենալ Երևանին, և Միհրալի խանը լեղապատառ կճողոպրի Երևանից։ Սակայն...

Սակայն Դավիթ-Բեկի ձեռքերը նորից կապում էր թուրքերից սպասվող վտանգը։ Օսմանյան գազանը գոռոում էր։ Չպիտի իջնել լեռներից՝ վտանգել մեծ զոհողությամբ հաջողած գործը։ Պետք է ցույց տալ, որ ինքը խաղաղ թառել է իր լեռների ծերպերում և այնտեղից իջնելու միտք չունի։

«Ա՛խ, այդ թուրքե՞ր,— Երևանի մասին մտածելիս, մտքում դառնորեն ասաց Բեկը։— Եվ ինչո՞ւ է աստված մեզ երկիր տվել՝ երկու արյունարարբու գազանների արանքում։ Մերթ թուրքն է ուժեղանում, մերթ պարսիկը։ Որի՞ զորական ուժն ընկճես, ինչո՞վ»։

Մի անգամ ևս նրա համար պարզ դարձավ, որ միայն Պետրոս թագավորի օգնությամբ Հայաստանը կազատվի թուրքերի ու պարսիկների ձեռքից։ Միայն նրա օգնությամբ։

Բեկը դարձավ Կառչիկ Հովհաննեսին.

— Որքա՞ն է պարսից զորքը Երևանում։

— Զորք էլ ասո՞ւմ ես, տե՛ր Դավիթ-Բեկ, վախկոտ խուժան ասա,— պատասխանեց Կառչիկը։

— Էլի՛, շա՞տ է այդ խուժանը։

— Բոլորը՝ տակուզուխ, հրացանավոր ու այրուձի՝ տասնութ հազար, գուցե մի քիչ ավելի կամ պակաս։ Բայց դա կանոնավոր զորք չէ, տե՛ր Դավիթ-Բեկ։ Պարսիկներն օր-օրի սպասում են, որ կամ դու կգաս նրանց քշելու, կամ... Լեզուս չի գալիս։

— Կամ թո՞ւրքը,— մռայլվեց Բեկը։— Այդպե՞ս է։

— Ճիշտ կռահեցիր, այդպես է,— հառաչեց Կառչիկը։— Պարսիկները ծաղրում են մեզ, լեզու ցույց տալիս։ Ասում են. «Երազներումդ այստեղ կտեսնեք ուռուսի թագավորին ու ձեր Դավիթ-Բեկին։ Մենք,— ասում են,— Երևանը կտանք թուրքին, ֆրանկին, բայց ձեր կամ ուռուսների ձեռքը չենք գցի»։

«Բանին տեղյակ մարդ ես դու, Կառչի՛կ Հովհաննես,— մտքում

նրան դիմելով՝ ասաց Բեկը։— Ես պարսիկների այդ միտքը լավ գիտեմ։

— Երևանի խանին հայտնի է նաև, որ դու մտադիր ես քո լեռներից իջնել ու նրան վռնդել մեր քաղաքից,— շարունակեց Կառչիկը։— Նա սպասում է դրան։

— Իսկ դո՞ւք։

— Մենք աստծուն պաղատում ենք, որ այդպես լինի։

— Զինվեցեք, բայց ծածուկ։ Իսկ եթե, բան է, խանը գլխի ընկնի, ապա ասացեք, թե պատրաստվում եք թուրքերի դեմն առնելու։

— Իսկ դու ե՞րբ կգաս,— լիահույս նրան նայեց Կառչիկ Հովհաննեսը։

— Երբ ռուսը գա մեր աշխարհը,— Բեկն աչքերը փակեց ու կամացուկ, ասես զգուշանալով, որ իրեն կլրտեսեն՝ ավելացրեց։— Թագավորի գալու լուրը ծածուկ պահեցեք. առիթ մի՛ տաք անժամանակ ոգևորության։ Զգոն եղեք։ Խնայեցեք ժողովուրդը, պահպանեցեք նրան, ինչ կերպ հարմար կգտնեք։ Թուրքը պոչ է խաղացնում, նրանից զգուշացեք, թե չէ Միհրալի խանը սատկած կատու է արդեն։

— Ի՞նչ պատասխան տամ կաթողիկոսին,— նորից հարցրեց բանբերը։

— Ես նրան խորհուրդ կտամ առայժմ չխառնվել ոչ մեկի գործին։ Թող հանդարտ մնա իր վեհափառական գահին։ Նա չի, որ պետք է որոշի մեր ժողովրդի բախտը։ Խավար է հայոց երկնակամարը, և աստծուն է միայն հայտնի, թե ինչպիսի վտանգներ են պայթելու մեր գլխին։ Էջմիածինը թող հեռու մնա աշխարհիկ գործերից, դա ձեռնտու է նրան ու ժողովրդին հայոց։

— Վեհափառը խնդրել է նաև, որ Հյուսիսային թագավորի պատվիրակին ուղարկես իր մոտ։

— Շտապում է։ Ասեղ չի պատվիրակը, որ խրես փափախիդ մորթու մեջ ու տանես։ Կիմանան։ Իսկ դա կարող է կործանիչ հետևանք ունենալ ոչ միայն աթոռի, այլև ամբողջ Այրարատյան աշխարհի հայ ժողովրդի համար։

— Բայազետի պարսիկ խանը նամակ է գրել կաթողիկոսին, որ եթե ռուսները գան Երևան, ապա ինքն անմիջապես կհպատակվի նրանց։

— Եթե գա՞ն,— երկմտեց Բեկը։— Կգա՞ն արդյոք, դժվար է ասել։ Տա աստված, որ գան... Իսկ դուք զգույշ եղեք Բայազետի խանից, բոլոր պարսիկներից։ Նրանք խորամանկել, պղտոր ջրում ձուկ որսալ գիտեն... Զգույշ եղեք։ Բարո՞վ գնաս...

Կառչիկ Հովհաննեսը գնաց։

Հաջորդ օրը Դավիթ-Բեկը Հովհաննես-Ավան իշխանին ուղարկեց Գանձասար՝ Պետրոս Թագավորի պատվիրակին հայտնելու, թե ինքը պատրաստ է նրան ընդունելու իր մայրաքաղաքում։

ԲԱՐԻ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՆԵՐԸ

Լեշից ծանրացած ագռավներ էին թառում Թահմազ Ղուլի Նադիր խանի պալատի վրա։ Մեծ դռան մոտ, որ հազվադեպ էր բացվում, թափվել էին կիսամերկ դերվիշներ ու, բաց փորերը արևին դեմ արած՝ տաքանում էին։

Քամի չկար։ Երկինքը շոր էր, մոխրագույն։ Թավրիզը ծույլ-ծույլ արթնանում էր։ Ագռավները կռավոցով իջնում էին նրա շրջակայքում թափած անթաղ դիակների վրա։ Երբեմն քաղաքի կիսաամայի փողոցում երևում էր կմախք մի մուրացկան։ Մազը թափված շներն զգույշ քայլում էին նրա հետևից։ Հենց որ մուրացկանն ընկնի, վրա կտան ու կգզգզեն նրա հյուծված մարմինը։

Արդեն կես տարուց ավելի էր, ինչ Նաղաշ Հակոբը փակված էր խանի պալատում։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում կռահել, թե ինչու իրեն էլ մյուս գերիների հետ չվաճառեցին և ինչու են պահում պատիվներով։

Նա անվերջ հիշում էր գերվելու զարհուրելի գիշերը, իր պատկերանոցի հրդեհվելը։ Մտքից չէին հեռանում գերության ճանապարհները։

«Եսիրի» ճանապարհը թավալվում էր պարսից Սև լեռների անջուր ձորակներով, մագլցում մռայլ, մրկած սարերը։ Հիշում էր, թե ինչպես էր սև նժույգի վրա մեծ շտապով գնում Թահմազ Ղուլի Նադիր խանը։ Նա բարձրահասակ էր, չորուցամաք, երկարավուն դեմքով։ Նոսր հոնքերի տակ կրակ էին կտրել մոնղոլական ճեղք աչքերը։ Ցանցառ մորուքը ոզնու պես կպել էր ցից ծնոտին։ Ջարության այնպիսի տիպար էր այդ խանը, որ գերի Նաղաշի մեջ անզուսպ ցանկություն էր առաջանում նկարել նրան։ Մի քանի քայլ ետ գնում էր նրա նայիբ Խոսրով յուզբաշին՝ գեղեցկադեմ ու հանդարտաբարո մի պարսիկ, ապա գնում էին թիկնապահները։ Հեծվորների սակավամարդ գունդը քշում էր հայ գերիներին։

Հիշում է։ Խանը գրգռված էր, շար։ Պարզ էր։ Ի՞նչ հույսով գնաց Հայոց աշխարհի վրա և ի՞նչ հույսով էր վերադառնում արքայանիստ Թավրիզ քաղաքը։ Անշուշտ, շահ Թահմազը նրան սպասում էր մեծ հույսով։ Երևի ասել է. «Հայոց զորքն ու զորավարները հեռու են միջնաշխարհից, խփեցեք Արաքսամերձ գավառները և կհաջողակեք»։

Դատարկ էր շահի գանձարանը, զորքը ոռճիկ ու պարեն էր պահանջում, որ չուներ Թահմազը։ Հույսը դրել էին հարուստ ավարի վրա։ Մտածում էին ասպատակել Հայոց սահմանները՝ Զավնդուր, Մեղրի ու Գողթան գավառները, մեծ ավար ու գերիներ առնել՝ վաճառելու, զորքի համար կերակուր ու ոռճիկ հայթայթելու։

Բայց նրանց հույսը քամին տարել էր։ Թահմազ Ղուլի Նադիր խանը կատարվածը հիշելով՝ սարսափում էր։ Տասը հազար մարդ ունեին ինքն ու Բաթալի Սուլթան խանը, երբ սկսեցին գործը։ Առաջին գիշերը նրանց համար աջ էր, Հարսենյաց հարուստ ավանն առան, թալանեցին, գերիներին անցկացրին Արաքսը՝ Թավրիզ ճամփելու։ Իսկ երբ փոքր-ինչ առաջացան դեպի Մեղրի, երևաց Մխիթարը...։

Ինչպե՞ս երևաց, որտեղի՞ց լույս ընկավ։ Չէ՞ որ նա էլ, Տեր-Ավետիսն էլ գնացել էին Գանձասար՝ կաթողիկոսին հյուր, իսկ Դավիթ-Բեկն իր զորքերի հետ գտնվում էր հեռավոր Վայոց ձորում։ Ճակատամարտն սկսվեց հանկարծակի։ Սկզբում հաջողությունը խաների կողմն էր, բայց հետո հայերը, ծանրամեծ կորուստներ պատճառելով նրանց՝ խուճապի մատնեցին։ Խանը մի երկու հազար մարդու հետ մի կերպ ընկավ գետն ու ճողոպրեց... Նաղաշը չի մոռացել խանի տագնապը։ Հիշում է, խանը ձեռքով մոտ կանչեց Խոսրով յուզբաշուն։ Սա ձին քշեց տիրոջ կողքով։ Հակոբը հիշում է նրանց զրույցը.

— Ինչքա՞ն է կորուստը, իմացա՞ր,— հարցրել էր խանը։

— Այո, արևակերպ խան. երկու հազար ինը հարյուր մարդ՝ հինգ հազարից։— Խանն այլևս չէր խոսել։

Հինգ օր գերիներին քշել էին «Եսիրի» արյունոտ ճանապարհով։ Առաջին երկու օրը տանելի էր դեռևս։ Բայց երրորդ օրը պարտված, մազապուրծ խանը հրամայեց շտապեցնել երթը, ետ մնացողներին սպանել։ Ճանապարհը պատվեց դիակներով։ Գիշակեր թռչունների սև, կռավող երամներն օրորվում էին ճանապարհի երկարությամբ։ Սոված գայլեր էին վխտում քարավանի մոտերքը...

Գերիների մեծ մասը կանայք էին, աղջիկներ ու պատանիներ։ Պառավներին ու ծծկեր երեխաներին կոտորել էին։ Տղամարդկանց առանձնացրել և հեռու էին պահում կանանց խմբերից։ Ինքը՝ Նաղաշ Հակոբը, քայլում էր նրանց առջևից, կուրծքն ու թիկունքը բաց։ Զգեստները պոկել էին վրայից, խղճուկ ցնցոտիներ տվել։ Սուր քարերին դիպչելուց նրա մերկ ոտներն արյունոտվել էին։ Մինչև հիմա էլ դեռ մի աչքն ուռած է։ Հիշում է, որ թեև խոշտանգված էր, բայց քայլում էր մեջքն ուղիղ, անմռունչ։ Հաստ պարանով կապված էր իրենից փոքր-ինչ տարիքավոր մեկին։ Սա էլ կապված էր մեկ ուրիշի։ Գնում էին՝ իրար քարշ տալով ու գայթելով...

Այսպես անցան «Եսիրի» ճանապարհը։ Հակոբը հիշում էր Խանի անփարատ կատաղությունը։ Ինչո՞վ մխիթարվեր նա։ Երկու-երեք հարյուր գերիներո՞վ, որ քշում էին դեպի Թավրիզ։ Իրենո՞վ՝ Մխիթարի սիրելի Նաղաշ նկարիչո՞վ, որ գերեց Հարսենյաց ավանում, որի համար լավ գերեգին կտան։ Մխիթարանք չէին դրանք, երբ կորցրել էր տասնապատիկը։ Էլ ե՞րբ կարող է Նադիրը զորք հավաքել, համոզել հարևան խաներին, որ մեկ էլ գան հայերի վրա։ Մեկ է՞լ... օ՜, ո՜չ։ Այս անգամ հազիվ կենդանի պրծավ, հազի՜վ... Խանի այս անզոր կատաղությունը, որի վկան էր ինքը՝ Նաղաշ Հակոբը, ուրախացնում էր նրան։

Պարսիկ զինվորները շտապեցնում էին հայ գերիներին, նիզակներով ու թրերով խփում էին նրանց կոնակներին, գլխներին, ետ մնացողներին սպանում։ Գերիները բոբիկ էին, կխսամերկ, խոշտանգված։ Շատերն անուժ նստում էին գետնին ու նիզակների հարվածների տակ՝ ավանդում իրենց տառապած հոգիները։

Այժմ էլ Հակոբի ականջներում հնչում էր անգղների թևերի մետաղաձայն բախումը, երբ նրանք իջնում էին դեռ տաք դիակների վրա։ Ապա հիշում է, թե ինչպես ինքը լեռան գագաթից վերջին անգամ նայեց Հայոց սարերի ձյունաբարդ կատարներին, որոնց գլխին ճերմակ թաղ էր կապել Արարատը։ Կուրծքը ուռցրեց, շնչեց ծանր ու գոչեց.

— Մնաս բարյա՜վ, հայրենի՜ք...— Այդ պահին նրա սիրտը լցվել էր մի անդարձ ափսոսանքով։ Թեև պարսիկի մտրակը փաթաթվել էր նրա պարանոցին, բայց նա նորից էր գոչել։ Հիշում է. պարսիկները նիզակներով խփում էին իրեն, սակայն ինքը նույնիսկ երգում էր.

«Հայրենիք իմ. տո՛ւն իմ, բո՛ւն իմ,
Ես գնամ՝ դու բարո՛վ մնաս...»։

Հիշում է, թե ինչպես իր երգը խլեցին մյուս գերիները, և լեռը դղրդաց։ Նիզակներն ու մտրակները շաչում էին, մարդիկ ջախջախված գլխներով ընկնում էին, բայց երգը չէին կտրում։ Երգեցին մինչև խռպոտվելը. արյունախեղդ լինելով միայն լռեցին։

Ապա հիշում է, թե ինչպես իջան Սև լեռներից։ Ձյունախանձ տափաստանը դիակի նման փռվել էր հայ գերիների առջև։ Ո՞ւր էր տանում անծայր ճանապարհը։ Ո՞ր փոսի մեջ, ո՞ր ավազուտում կկնքեին իրենց մահկանացուները, ոչ ոք չգիտեր։ Տափաստանում ցրվում էին մարդկային դիակներ, ճանապարհը ներկվում էր արյունով։ Մահաբեր գիշերներին ամեն ինչ թաղվում էր խավարի մեջ։ Փչում էր անապատի ծակող քամին։

Ծանր տառապանքներից հետո ողջ մնացած գերիներին հասցրել էին Թավրիզ։ Ամառային մշուշի մեջ Նաղաշը հազիվ էր նշմարել մզկիթների կանաչ գմբեթները։ Քաղաքի դռների մոտ նրա գլխին պարկ էին հագցրել, անջատել ընկերներից ու բերել խանի պալատը։

Ահա, արդեն կես տարուց ավելի էր, ինչ Հակոբը փակված էր խանի պալատում։ Զանձրացել էր պարսիկների կեղծ սիրալիրությունից, մանավանդ Խոսրով յուզբաշուց, որ հաճախ այցի էր գալիս նրան, անգիր կարդում պարսիկ հին բանաստեղծների գործերից, զանազան զրույցներ պատմում այն հայ ու վրացի խաների մասին, որոնք, ուրանալով իրենց հավատը՝ անդավաճան ծառայել են պարսից շահերին, մեծ պատիվներ ստացել Խուդաբանդայից ու նրա թոռ մեծ Աբբասից։

Յուզբաշին գալիս էր համարձակ, գլուխը խոթում դռան արանքից և բարձր ողջունելով՝ ներս մտնում։ Այդ խորամանկ, բայց և խելացի մարդն այսպես թե այնպես գերի Նաղաշ Հակոբի համար սփոփանքի պես մի բան էր։

Մի երեկո յուզբաշին եկավ ուրախ, սիրալիր բարևեց Նաղաշ Հակոբին։

— Հուսով եմ, որ շատ չես տխրել, բարեկամս, կիրակի օրը չկարողացա այցելել քեզ,— ասաց կարեկցանքով, կարծես մեղավոր։— Գործից գլուխ չեմ կարողանում ազատել։ Ալլահն է վկա...

— Տխուր էի, Խոսրո՛վ աբբաս,— ասաց նկարիչը։— Մենակությունը հաճելի ընկեր չէ։ Համեցի՛ր, նստիր։ Շնորհակալ եմ այցելությանդ համար։

— Իմ գլխի տեր խանը միշտ հարցնում է քո մասին, մեծ Նաղաշ։

— Նրանից էլ գոհ եմ, որ ինձ պատվում է ու դեռ իր սեղանից բաժին ուղարկում։— Նաղաշ Հակոբը մոտեցավ փոքրիկ սեղանին ու ետ քաշեց ուտելիքների վրա գցած ճերմակ ծածկոցը։ Ուտելիքը նոր էին բերել։ Ապակե սրվակի մեջ հուրհրատում էր գինին։

— Մոտ եկ, Խոսրով աբբաս, մի-մի գավաթ գինի անուշ անենք։

— Խմիր ուզածիդ չափ,— գլուխը տարուբերեց յուզբաշին։— Ես շրթունքներս չեմ կպցնի այդ կարմիր մեղքին։ Մեր մարգարեն գինին անմաքուր խմիչք է համարում, մուսուլմանները չեն խմում։ Կարծեմ քեզ հայտնի է դա։

— Հայտնի է,— մի գավաթ լցնելով՝ պատասխանեց նկարիչը։— Բայց ալլահի մարգարեն մինչև հիսունհինգ տարեկան դառնալը խմում էր այս հեղուկը։ Խմում էր, երբ ուժը ներում էր, իսկ երբ հասավ ծերության շեմին, և ուժերն սպառվեցին, գինին անմաքուր համարեց։ Այսպես

է գրված ձեր Ղուրանի մի այեում[1]։ Սակայն երկու այե հետո ձեր մարգարեն խմիչքը ընդունելի է համարում, եթե դա անհրաժեշտ է հավատացյալի գոյությունը պահպանելու համար։

Խոսրովը բարեսիրտ ծիծաղեց։

— Ալլա՜հը վկա, Նաղաշ եղբայր, դու մեր Ղուրանը ամենամեծ մոլլայից էլ լավ գիտես։ Եթե դու մեր հավատին դառնաս, ապա մուսուլմանները քեզ կդարձնեն իրենց ամենամեծ Շեյխ Ուլ Իսլամը։

Հակոբը գավաթը հեռացրեց շրթունքներից, զգուշությամբ ցած դրեց ու կասկածանքով նայեց յուզբաշուն։ Սա ժպտում էր լկտիաբար։ Հասկացավ։ Վերջապես պարսիկը բաց է անում իր միտքը։ Սպասում էր դրան, բայց չէր ուզում հավատալ, որ երբևէ իրեն կառաջարկեն ուրացող դառնալ։ Արյունն սկսեց խաղալ քներակներում։ Խոսրովի ժպիտը դարձավ խղճալի, հարցական, ապա մարեց իսպառ։

— Ես կգերադասեի Դավիթ-Բեկի բանակում մի հասարակ ջորեպան լինել, քան ամբողջ մուսուլմանների Շեյխ Ուլ Իսլամը,— վերջապես շպրտեց Նաղաշ Հակոբը։

Խոսրով նայիբի դեմքին երևաց նախկին ժպիտը։

— Սիրում եմ համառ մարդկանց,— ասաց նա, ձեռքերը տարածելով։— Բայց զարմանում եմ, թե ինչպե՞ս մարդ կարող է իր գլուխը հոժարակամ դնել դահճի կացնի տակ՝ ինչ-որ հավատի սիրուն։ Կթքեմ ամենասուրբ հավատի վրա, եթե նա կվնասի իմ մի մազին անգամ։ Բայց ես դրա համար չեմ եկել քեզ մոտ, եղբա՛յր իմ։ Հավատի գործը թողնենք մեր մոլլաներին ու ձեր քեշիշներին։ Ուրիշ բան ունեմ ասելու...

«Սկսվում է,— մտածեց Հակոբը։— Թող սկսվի, մինչև ե՞րբ պիտի մնամ անդուռ վիճակում»։ Թեև նա իր առջև մի նոր թակարդ էր տեսնում, թեև զգաց, որ յուզբաշին հենց այնպես չխոսեց հավատափոխ լինելու մասին, բայց և այնպես ինչ-որ մի անդորրություն պատեց նրան։ Այնուամենայնիվ, մի գավաթ էլ գինի խմեց ու սպասեց յուզբաշու ասելիքին։ Բայց յուզբաշին միայն ասաց, որ ինքը եկել է նրան մի փոքր զբոսանքի հրավիրելու։

«Ինչո՞ւ են նենգությամբ ուզում սպանել ինձ,— մտածեց Հակոբը,— քաջություն չունե՞ն, արդյոք, մահվան վճիռն ասել ճակատիս...»։

Միասին դուրս եկան. դրսում կանգնած երկու զինվոր բարև բռնեցին։ Յուզբաշին քայլում էր հանդարտ։ Խոսում էր գարնան մասին, ախուվիշ արեց, որ այս տարի չորացել են խանի պարտեզի բոլոր վարդենիները։

[1] Ենթագլուխ, պարբերություն (արաբ.)։

— Մարդ զարհուրում է՝ հիշելով, թե ինչ ձմեռ ապրեցինք։ Վարդենիները ցրտահարվեցին։ Իսկ ի՞նչ վարդեր էին լինում... Թփերը Շիրազից էին բերել տվել։

— Բերեք մեր աշխարհից։ Մեր վարդերը դիմանում են սառնամանիքին անգամ,— ցրված ասաց Նաղաշը և անզուսպ ցանկություն ունեցավ ծաղրել յուզբաշուն։— Մեր աշխարհում վարդեր կան, որ բացվում են մինչև ձյան գալը։ Նրանց բուրմունքից նույնիսկ մեղուներն են հարբում։ Բայց աճում են ժայռերի ծերպերում, անմատչելի են և այնպիսի փշեր ունեն, որ ահ են պատճառում մարդու։

— Գիտեմ, չես պոկի առանց արյունոտվելու,— հառաչեց Խոսրովը։

Նորից քայլեցին։ Տարօրինակ ցանկություններ էին առաջանում նկարչի մեջ։ Երբ անցնում էին բարև բռնած զինվորների մոտով, քիչ մնաց նետվեր նրանց վրա, խլեր նրանց զենքերն ու ջախջախեր մեկնումեկի գլուխը։ Մի ուրիշ տեղ, երբ անցնում էին չոքած նամազ անող մի մոլլայի կողքով, ուզեց քացով խփել նրա կուզ մեջքին։ Հետո անզուսպ ցանկություն էր ունենում թքել յուզբաշու դեմքին։ Միայն հրաշքն էր ասես զսպում նրան։

— Դու քո ունեցվածքը վերցրի՞ր, տե՛ր նկարիչ,— հանկարծ հարցրեց յուզբաշին։

— Այո, իսկ ի՞նչ կա։

— Ոչի՛նչ, դու այլևս ետ չես դառնալու քո նախկին օթևանը։—Հանդարտ պատասխանեց պարսիկը։

— Հասկանում եմ։

— Ոչ ոքի մեղադիր մի՛ լինի, բարի մարդ։ Ալլահը քեզ մարգարեական կարողություն է շնորհել։ Դու և՛ պատկերահան իմաստուն ես Հուշտի Ֆրիանի պես, և՛ շահիր՝ Հաֆեզի քաղցրությամբ։ Գիտեմ։ Մեղք է կտրել քո ստեղծող ձեռքը և աստվածախոս լեզուն։ Իմացիր, իմ ու իմ խանի կամքն է, որ դու ապրես այսուհետև ևս, խոնարհվելով մեր դինին ու օրենքներին։

— Վերջացրու,— կտրեց Նաղաշը։— Անելիքդ արա։

Խոսրովն ուսերը զարմացական ձգեց, ապա քրքջաց, որից ցնցվեցին նույնիսկ իրեն կրնկակոխ հետևող տապարակիր զինվորները։

— Դե, ի՞նչ արած, այո, վերջացնե՛նք,— ծամծմեց յուզբաշին։— Միայն մի պայմանով դու կարող ես վայելել արևի լույսը՝ հավատափոխ եղիր, թլփատվիր ու ապրիր խանի բարձր հովանավորության տակ, այլապես...

— Ընտրված է վերջինը։

— Անխոհե՜մ, անխե՜լք մարդ,— գլուխն օրորեց յուզբաշին։— Մի խաչն ի՞նչ է, որ նրա սիրուն իմաստությամբ զարդարված գլուխդ կտրել ես տալիս։ Հա՜յ-վա՜խ...

Նրա ակնարկով զինվորները շղթայեցին Նաղաշ Հակոբին։ Սա չդիմադրեց։ Վճռված էր. պետք է կատարվի այն, ինչ սահմանված էր վերուստ։ «Մնաս բարո՜վ, հայրենիք,— ինքն իրեն շշնջաց նկարիչը՝ մտովի տեսնելով Հայոց երկիրը, ձորերում կորած գյուղերը, ծխերը, որ սյուն առ սյուն բարձրանում են կտուրներից, բլուրներին ու անդունդների եզրերին թառած վանքերը, հարազատներին, անձկալիներին։—Մնաք բարո՜վ, սիրելիներս, տո՜ւն իմ, աշխա՜րհ իմ։ Մնաք բարո՜վ»։

Շուտով նրան հասցրին մի փոքրիկ, քառակուսի բակ։ Արևի մի մոլորված շող դեռևս խաղում էր սալահատակին։ Ո՞վ գիտե, գուցե դա այն վերջին շողն է, որ տեսնում էր Հակոբը։

Նրան դիմավորեց ցլամարմին մի մարդ, ամբողջովին կարմիր հագած։ Դա խանի դահճապետն էր։ Նրա դեմքն այնպես էր ուռած, որ հազիվ երևում էին աչքերի ճեղքերը։ Նաղաշ Հակոբը տեսավ նրա գոտուց կախված լայներախ կացինը, որի սայրը փայլում էր արծաթի պես։

— Եկել եմ քեզ ծառայելու, Մեծ պատկերահան,— խոսեց դահիճը՝ պղտոր աչքերով նայելով գերուն։— Դու ինձ բոլորովին մի՛ մեղադրի։ Այս աշխարհում ամեն մարդ իր անելիքն ունի։ Իսկ իմ գործը այնքան էլ անպատվաբեր չէ։ Ամեն անգամ, երբ նայում եմ այն մարդուն, որին հավատարմորեն ծառայելու եմ, ուզում եմ, որ նա վերջինը լինի։ Բայց...— դահիճը շուռ եկավ դեպի քիչ հեռվում կանգնած իր օգնականները։— Մոտեցեք, է՛յ, ի՞նչ եք մնացել, հապա եկեք՝ տեսեք ի՞նչ ապրանք ունենք...

Դահճի օգնականները մոտեցան։ Նրանցից մեկը թևի տակ կապոց ուներ։ Դահճապետը կապոցը վերցրեց նրանից, նետեց Նաղաշ Հակոբի ոտքերի տակ ու սիրալիր ասաց.

— Հանիր քո պատվական ցնցոտիները, հա՛յ իշխան, հանիր ու հագիր այս քրջերը, քոնն էլի մի բան են, ափսոս են, կարյունոտվեն...

Խոսելիս դահճապետը փնչացնում էր ջրում լողացող գոմշի պես։ Հակոբի անշարժ հայացքը կացնի վրա էր. աչքերն այնպես էին լայնացել, որ ասես, ուր որ է դուրս կթռչեն ակնախոռոչներից։ Բայց ուրախ էր, որ արիությունը չէր կորցնում։ Երբեմն դեմքը ակոսվում էր տխուր մի ժպիտով, որ սակայն մարում էր իսկույն։

* * *

Տեսնելով, որ պատկերահանը չի շարժվում, դահճապետի օգնականները նրա վրայից պոկեցին պիտանի զգեստներն ու քրջերը հագցրին... Իսկ երբ բռնեցին նրա թևերը, նա պոկվեց նրանցից։

— Ինքս կգնամ, ուր հրամայեք։ Ուրեմն, առաջնորդեցեք, ցույց տվեք կառափնարանը։— Նրա ձայնը զարհուրելի դաժան հնչեց։ Նույնիսկ դահճապետը զարմացած նայեց նրան ու գլուխն օրորեց։

— Զարմանում եմ, թե մի սուտ հավատի համար մարդ ինչպե՞ս կարող է հրաժարվել փառքից ու գանձերից և ծաղկած տարիքում գլուխը դնել կացնի տակ։ Անհասկանալի է։

— Դա միայն անհասկանալի է հիմարներին,— շպրտեց Նաղաշը։

— Եթե ինձ իշխանություն ու գանձ տան, ես հենց հիմա քրիստոնյա կդառնամ,— ծիծաղեց դահճապետը։— Ի՞նչ տարբերություն։ Հավատը մարդու գրպանի մեջ է, ով ավելի ունի՝ նա ամենահավատացյալն է։

Դահիճների առջևից գնում էր ձեռքերը կապոտած նկարիչը։ Մտան ինչ-որ շինության ցածրադիր կամարների տակ։ Դահճապետը քայլում էր գերու մոտով։

— Այսօր քեզ չենք քառատելու, մեծ պատկերահան։ Խանը հրամայել է յոթ օր քեզ պահել։ Ո՞վ գիտե, գուցե սատանան փորիցդ դուրս գա, խելքի գաս ու խղճաս ինքդ քեզ։ Յոթ օրից հետո կսկսվեն կատվի խաղերը մկան հետ... Դա էլ, երևի, երեք օր տևի։ Ինձ համար ամենաձանձրալին հենց այդ երեք օրն է։ Բարկությունից չեմ իմանում ինչ անեմ։ Լինում են այնպիսի վախկոտներ, որ ճչում են գոճիների պես, երբ մենք աքցանով ճմրթում ենք նրանց ամորձիները կամ շիկացած շամփուրով այրում եղունգները։ Իսկ ամենից զզվելին աչքեր հանելն է։ Ինչպես էլ հանում ես, էլի մուռտառի արյունը աչքից շատրվանում է ուղիղ քո դեմքին։

Նաղաշ Հակոբը զզվանքով էր լսում դահճապետին. ափսոսում էր, որ ձեռներն ազատ չեն, որպեսզի ականջները փակի, իսկ դահճապետը խոսում էր առանց դադարի։ Նա այնպիսի զարհուրելի բաներ էր պատմում, որ դրանց անտեղյակ մարդու ուշքը կգնար։ Բայց մահվան դատապարտված նկարչի վրա դահճապետի պատմածները ոչ մի ազդեցություն չէին թողնում։ Նրա միտքը բոլորովին ուրիշ տեղ էր։ Նա արդեն հաշտվել էր մահվան հետ։ Այժմ մի ուրիշ բան էր մտահոգում նրան։ Արդյոք կարո՞ղ է դիմանալ այն խոշտանգումներին, որ սպասվում են իրեն, թե՞ արիությունը կկորցնի ու մահվան սարսափից կուրանա հայրենիքը։

Նրան խոթեցին մի նեղ ու խավար միջանցք։ Այդտեղից զզվելի մրգ-յահոտ էր գալիս։ Ցուրտ էր։ Միջանցքի պատերի վրայով ջուր էր ծորում։ Մթության մեջ խարխափելով՝ դահճապետի օգնականները նրան հասցրին մի նեղ զնդան։ Մեկը լապտեր վառեց։ Նաղաշ Հակոբը իր առջև տեսավ մի այլանդակ արարածի։

— Ահա քո խնամակալը,— ասաց դահճապետը՝ ցույց տալով այլանդակին։— Պաշտելի Զուլում Զեքիրը գիտե այնպես հյուրասիրել իր հյուրերին, որ ամենաուշը երեք օրում նրանք խոստովանում են ամեն հանցանք ու կատարում մեր գլխի գնորդ խանի կամքը։ Այսպես է Զուլում Զեքիրը։ Հույս ունեմ, որ դու երկար չես մնա նրան հյուր և դարձի կգաս, մեծ պատկերահան։ Մնաս Բարո՜վ։

— Կա՛ց,— աղերսեց Նաղաշը։— Գոնե քո կյանքում մի բարի գործ արա, դահի՛ճ, և հենց հիմա կտրիր իմ գլուխը... կտրի՛ր...

— Որպեսզի իմն էլ խանը կտրի՞, հա՞...— քրքջաց դահճապետը։— Մեղք չեմ կարող գործել, մեծ պատկերահան։ Մի՛ կարծիր, թե պարսից դահճապետներն այնքան անգութ են, որ մարդուն ժամանակ չտան իր մեղքերի թողության համար աղոթելու իր աստծուն։ Համբերի՛ր, մինչև ազատվես ցավերով լի այս աշխարհից։

Ճրագի աղոտ լույսի տակ Նաղաշ Հակոբը նկատեց, որ խցի հատակը սառցակալած է, վերևից ջրի կաթիլներ էին թափվում, իսկ պատի տակ մի սատկած շուն էր ընկած։

Դահճապետն ու նրա օգնականները գնացին։ Այն մարդուկը, որին Զուլում Զեքիր էին ասում, ճրագը դանդաղ կախեց զնդանի նեղ դռան բռնակից, երկար ձեռքերը շփեց ու մի զարհուրելի ձայն հանեց... Նաղաշը ժամանակ չունեցավ հասկանալու, թե ինչ է ուզում այդ հրեշը։ Նա իր մեջքին՝ թիակների արանքում, այրոցք զգաց, հետո վիզը ոլորվեց.... Աչքերը մթնեցին, բերանում արյան աղի համ զգաց։ Գլուխը պտտվեց։ Եվ մինչև կըմբռներ, թե ինչ կատարվեց իր հետ՝ ուշքը գնաց...

Ուշքի եկավ խավարի մեջ։ Ոչինչ չէր երևում։ Վերևից սառը ջուր էր կաթում ուղիղ բաց գլխին։ Ասես արճճի գնդակներ էին ընկնում, որից գանգը զրնգում էր։ Նա ցանկացավ գլուխը փախցնել կաթող ջրի տակից, բայց ապարդյուն։ Գլուխը դրված էր երկաթե օղակի մեջ ու ամրացած պատին։ Քիչ հետո նա գտավ, որ ձեռքերը շղթաներով գամված են, իսկ ոտքերը ծալված են ու իրար կապված։ Ինչպե՞ս կարողացավ Զուլում Զեքիրը մագլնդ դարձնել իրեն և առանց դժվարության շղթայել։ Չէ՞ որ ինքը ահագին ուժ ունի, և ոչ մի տղամարդ չէր կարող իր թիկունքը գետնին տալ։

Շուրջը խավար էր։ Սատկած շան գարշահոտը մտնում էր մինչև թոքերի խորքերը, սիրտը խառնում... Գոնե լույսի մի ծվեն լիներ, մի թույլ շող։ Կարծես գերեզմանի մեջ էր։ Իսկ գլխին ընկնող կաթիլներն ասես մտնում էին ուղեղի մեջ, ծակում։ Նա փորձեց աղաղակել, բայց չկարողացավ ձայն հանել, բերանի մեջ թաց լաթ կար։ «Ահա թե ինչպիսի՞ պատիժների են ընդունակ պարսիկները,— մտածեց նա։— Մարդավարի չեն կարողանում գլխատել կամ կախել աստծու ստեղծած թըշվառներին։ Միևնույնը չէ՞, թե մարդ ինչպես պետք է ոչնչանա»։

Նեղ խցում մեռյալ լռություն էր. ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէր լսվում դրսից։ Աշխարհն ասես թաղվել էր անփարատ խավարում։ Ե՞րբ պիտի իրեն տանեն գլխատելու։ Եվ ինչո՞ւ սիրտը չի պայթում։ «Ա՜խ, եթե ձեռքերս ազա՜տ լինեին, ես ինքս կխեղդեի ինձ կամ կծամեի, կկտրեի երակս ու արնաքամ լինելով՝ կսպանեի ինձ։ Այս վիճակում մեռնելը շան մահ է»։

Ոչ մի կերպ Հակոբը որոշել չէր կարող, թե այդպես ինքնամոռաց, խոշտանգված վիճակում որքան էր մնացել խավարի մեջ, երբ դուռը բացվեց, ու ճրագը ձեռքին երևաց Զուլում Զեքիրը։ Գայլի երկար ու տափակ գլխով այդ մարդը հանգիստ էր, ինքնագոհ։ Նա մոտեցավ, ունելիք նման մի բութ գործիքով Հակոբի բերանից հանեց թաց լաթն ու քրքջաց։ Այդպես դևը կարող է քրքջալ միայն։

Շուտով ներս մտավ մի սապատավոր ծերուկ, որ ավելի շուտ վհուկ կնոջ էր նման։ Սա փայտե սկուտեղի մեջ հաց ու ջուր բաներ։ Սկուտեղը մոտեցնելով Նաղաշին՝ ծերուկը կավե գավաթի ծորակը կոխեց նրա շրթունքների արանքն ու հոտած ջուր լցրեց բերանը։ Աղոտ լույսի տակ կատարվող այդ գործողությունն այնքան զարհուրելի էր ու երկու մարդակերպ հրեշների ներկայությունն այնպես սարսափելի, որ Հակոբին թվաց, թե ինքն արդեն հանդերձյալ կյանքում է և շրջապատված է դժոխքի սատանաների ոհմակով։ Այդ անդրաշխարհային շրջապատից կախարդված, նա ակամա խմեց հոտած ջուրը և կերավ հացի այն պատառները, որ նրա բերանն էր խոթում վհուկանման ծերունին։

Զուլում Զեքիրը նորից հռհռաց, իսկ երբ ծերունին անհետացավ, սա ձեռքերը մեկնեց դեպի կիսաբաց դուռը։ Նաղաշ Հակոբը նկատեց, որ մեկը նրան շիկացած շամփուր տվեց։ Աչքերը փակեց և հենց այդ պահին զգաց, որ ոտքերի մատներն այրվում են։ Նա ատամներն ամուր սեղմեց, չճչալու և ուշքը չկորցնելու համար։ Նրա քիթը մխաց սեփական մարմնի խանձահոտից։ Բայց երբ զգաց, որ ոտքի եղունգները հանում են, չդիմացավ, ուշաթափվեց...

Չորս օր հետո միայն վերքերի ցավը մի փոքր մեղմացավ, և նա կարողացավ ըմբռնել շրջապատը, հասկանալ, թե որտեղ և ինչ վիճակում

է ինքը։ Բայց չորրորդ օրվա երեկոյան կրկնվեց այն, ինչ առաջին օրը։

Օրվա մեջ հազիվ մեկական ժամ էր Հակոբը կարողանում ուշքի գալ։ Բայց այդ էլ ընդամենն այն էր, որ հազիվհազ զգում էր, որ ինքը կենդանի է ու շնչում է գարշահոտ օդը։ Ուրիշ ոչինչ։ Խոշտանգումներից նա հյուծվել էր, դիակի պես կախվել շղթաներից։ Միայն զգում էր գլխին կաթող ջրի սառնությունը։ Իսկ դա, ասես, քրքրում էր ուղեղը։

Յոթ օր հետո նրան այցի եկավ դահճապետը։ Սա նայեց նկարչին ու գլուխն օրորեց։

— Մարդ էլ այսքան համա՞ռ լինի։

Զուլում Զեքիրը ձիու պես խրխնջաց։ Ներս մտավ վհուկանման ծերունին։ Նաղաշ Հակոբի շղթաները քանդեցին, գլխի օղակը հանեցին ու կերակուր դրին առջև։ Բայց նա այնպես էր թուլացել, որ չէր կարողանում շարժել ձեռքը կամ ոտքը։ Մսով լիքը տոպրակի պես ընկել էր սալահատակին և ակնապիշ նայում էր իր հոգեհաններին։ Ծերունին սպիտակ կավ քսեց նրա վերքերին և իր ձեռքով սկսեց կերակրել նրան։

— Ես ուզում եմ իմանալ չի՞ զղջացել արդյոք մեծ Նաղաշը և չի՞ ուզում հեռանալ իր մոլորություններից,— հարցրեց դահճապետը։

Բայց նկարիչը պատասխանելու ուժ չուներ։ Լեզուն ուռել էր, գլուխը կարծես ջարդում էին ահագին մուրճերով։ Ակամա կուլ էր տալիս այն, ինչ իր բերանն էր խոթում ծերունին։ Մի քանի ժամ նրան թողին սալահատակին ընկած, իսկ երեկոյան դեմ Զուլում Զեքիրը նորից եկաց։ Այլևս նրան չշղթայեցին։

Երկու օր հետո նրան տեղափոխեցին մի շատ թե քիչ հարմարավետ խուց և, վերքերը դարմանելու հետ միասին, սկսեցին կերակրել մարդավայել։ Այլևս չէին խոշտանգում։

Այսպես շարունակվեց մի քանի շաբաթ։

***

Ապաքինվող նկարչին այցի էր գալիս միայն վհուկանման ծերունին։ Սա շարունակում էր խնամքով դարմանել նրա վերքերը, օրը երեք անգամ կերակրում էր։ Մի անգամ նույնիսկ գինի բերեց։

Սակայն Նաղաշ Հակոբը ոչ մի լավ բան չէր սպասում այդ յուրատեսակ «հոգատարությունից»։ Եվ ահա մի օր, երբ ինքը կարողանում էր արդեն քայլել սենյակում, եկավ Զուլում Զեքիրը և ակնարկներով՝ գերուն հրամայեց հետևել իրեն։ Նկարիչն արդեն համոզված էր, որ իրեն տանում են գլխատելու։ Գիտեր, որ արևելքի բռնակալները իրենց մահապարտ զոհերին գլխատելուց, քառատելուց կամ կախելուց մի քանի

օր առաջ թեթևացնում են նրանց տանջանքները, կերակրում շատ թե քիչ մարդավայել ու հետը վարվում զիջողաբար։ Այդ հիշելով, նրա մեջ կասկած չմնաց, որ իրեն տանում են դեպի կառափնարան։ Դա ուրախացրեց նրան։ Վերջապես հասել է այն պահը, երբ ինքը պիտի ազատվի դժոխային խոշտանգումներից։ Ծերունու ետևից քայլելով՝ նա դարձյալ նույն բանից էր վախենում, չլինի՞ կյանքի վերջին վայրկյանին կորցնի իր հոգու արիությունը։ Երանի՜ թե մինչև զոհասեղանը կարողանա դիմանալ և իր մահով անպատվել նրանց, ովքեր կարծում են, թե ինքը կարող է իր մարմինն ու հոգին ծախել, դավաճանել իր երկրին։

Այս մտքերից նա սթափվեց՝ տեսնելով, որ հասել է մի ոչ մեծ սենյակ՝ վանդակապատ պատուհանով։ Այդտեղ էր դահճապետը։ Սա հանգիստ նստել էր պարսկական գորգով ծածկված թախտին ու կացին էր սրում։ Սենյակի պատուհանից ներս էր ընկել ցերեկվա լույսը և ուրախ խաղում էր կացնի սայրի վրա, որից ասես լույս էր ճառագում։ Պատերից կախված էին զանազան մեծության կացիններ, դանակներ, թրեր, մեծ մասը ժանգոտ։

Ճարպակալությունից հևացող դահճապետը նայելով գերուն ասաց.

— Ա՜... Նաղաշ եղբայր, համեցի՜ր, նստի՜ր։ Այսօր դու իմ պատվական հյուրն ես։ Ներող եղիր, որ ձեռքերդ շղթայված են։ Ճարն ի՞նչ։ Կարգ է։ Ասում են՝ շան հետ ախպերացիր, բայց ճիպոտը ձեռքիցդ մի գցիր։

— Դու ինձ կանչել ես այստեղ շո՞ւն անվանելու,— բարկացավ Նաղաշը։— Շունը դու ես, շունը քո խանն է, և բոլոր նրանք, որոնք թշնամի են իմ երկրին։— Ասաց նա ու սպասեց, որ դահճապետը հիմա կացինը կբարձրացնի՝ իր գլխին իջեցնելու համար, բայց դահճապետը միայն սրտանց ծիծաղեց ու ձեռքով նշան արեց, որ Զուլում Զեքիրը դուրս գա։ Երբ սա գնացել էր՝ ետևից փակելով դուռը, դահճապետն ասաց.

— Խիզախ մարդկանց շատ եմ սիրում, ալլա՜հը վկա։ Բայց մի՜ նեղանա, Նաղաշ, ես առած ասացի, իսկ առածը օրհնված է։ Նստի՜ր, նստի՜ր, սիրելիս, մի վայրկյան վայելքն էլ վայելք է։

Նաղաշ Հակոբը նստեց ցածրիկ նստարանին ու նայեց այն մարդուն, որը կտրելու է իր գլուխը։ Դահճապետն այնպիսի ուշադրությամբ ու խնամքով էր սրում կացինը, որ ասես իր կյանքի ամբողջ նպատակը միայն դրա մեջ էր։ Նրա սափրած երեսը քրտնել էր և ասես հիմա պիտի ճաքճքեր՝ հասած սեխի կեղևի պես։

— Լավ արհեստավորը նա է, որ իր գործիքը սարքին է պահում,— բութ մատը թքոտելով և զգուշությամբ քսելով կացնի սայրին՝ փիլիսոփայեց դահճապետը։— Ի՞նչ կասես։

— Ավա՜ղ, ձեռքս թրի ու սպանելու չեմ սովորեցրել. այլապես ձեզանից շատերի արևը կխավարեր իմ սրից։

Դահճապետի լիքը այտերը ցնցվեցին։

— Ես քաջերի գլուխը կտրում եմ մի թեթև հարվածով։ Բայց չկարծես, թե հեշտ բան է իմ արհեստը։ Գոմշի վզի պես հաստ շլինք էլ է լինում։ Այդպիսին էր Թահմազ Ղուլի Նադիր խանի եղբոր վիզը։ Մի տարի առաջ կտրեցի։ Ալլա՜հն է վկա, մի հարվածը չհերիքեց. ղղմեցի՛, չտեսնված բան էր։ Երկրորդ հարվածով միայն գործը պրծա։ Այդպիսի ամուր վիզ ես դեռ չեմ կտրել իմ օրում,— դահճապետը ուշադիր նայեց Նաղաշ Հակոբի մերկ վզին։— Քոնն էլ պակաս ամուր վիզ չի երևում, եղբա՛յր։ Երբեմն ափսոսանքս գալիս է այդպիսի գլուխ կտրելուց, բայց ո՞վ կարող է հակառակել ալլահի կամքին։

Դահճապետը կացինը մի կողմ դրեց ու ճմլկոտելով՝ վեր կացավ։ Մի քանի վայրկյան նա լուռ նայեց իր գործիքներին ու հորանջեց բավականությամբ։ Ապա կացնի սայրը նորից փորձեց, ժպտաց ու աչքով անելով՝ ավելացրեց.

— Սուր է, անհոգ եղիր, իմ տե՛ր։ Վզիդ վրայով կանցնի քամու պես, բոլորովին ցավ չես զգա։ Բոլոր գլխատվողների համար հո ես այսպես չե՞մ սրում կացինս։ Նեղություն է։ Հենց որ քո գլուխը կտրեմ, այս կացինը կախելու եմ մյուսների կողքին։— Նա ցույց տվեց պատից կախված բազմաթիվ կացինների շարքը։

— Այլևս մարդու գլուխ չե՞ս կտրելու,— զզվանքով հարցրեց Նաղաշը։

— Ինչպե՞ս թե...— զարմացավ դահճապետը։— Ես դեռ այնքան գլուխ պիտի կտրեմ, մինչև որ մեկն էլ իմը կտրի։ Բայց դահիճ արհեստավորներիս մեջ մի լավ սովորություն կա՝ մի կացնով կտրել միայն հինգ հարյուր գլուխ։ Ավելը սրբապղծություն է։— Նա մոտեցավ պատից կախված կացիններին ու ձեռքը դրեց նրանցից մեկի վրա։

— Այ, տեսնո՞ւմ ես, այս կացնով եմ ես կտրել մեր խանի եղբոր գլուխը։ Քաջ մարդ էր, բայց երբ բերինք գլխատելու՝ ջրիկացավ, ուշքը կորցրեց։ Այս մյուս կացինը բերել եմ Սպահանից։ Իմ վարպետն է ինձ նվիրել։ Սա՝ «Իրանի առյուծ» Շահ Աբբաս մեծի դահճապետինն է եղել։ Տեսնո՞ւմ ես, այնքան գլուխ է կտրել, որ մաշվել է։ Թեկուզ միս ու ոսկոր է կտրում, բայց պողպատն էլ է մաշվում։

Նաղաշ Հակոբը սարսափով ու զզվանքով էր լսում մարդկային անթիվ գլուխներ կտրած, գոմշի պես փնչացնող այդ մարդու բարակ ձայնը, որ ասես ասեղի անցքից էր դուրս գալիս։ Դահճապետը դուռը կիսով չափ բաց արեց ու իր օգնականներից մեկին հրամայեց սուրճ բերել։

Նկարիչն այլևս չէր նայում նրան։ Մի տարօրինակ թմրություն էր իջել նրա վրա։ Նա հասկանում էր, որ ապրում է իր կյանքի վերջին վայրկյանները և անտարբերությամբ էր նայում կացիններին, թրերին, դանակներին ու իր արհեստով պարծեցող դահճապետին։

Իսկ դահճապետն արդեն ծալապատիկ նստել էր թախտին ու մեծ բավականությամբ սուրճ էր խմում։ Դատարկ գավաթը ցած դնելով՝ նա կամացուկ հարցրեց.

— Ի՞նչ է մտածում հայ պատկերահանը։

Նաղաշ Հակոբը այնպես շեշտակի նայեց դահճապետին, որ սրա հոնքերը թռան ճակատը։

— Ես զարմանում եմ, թե սա ի՞նչ պատիվ է, որ դու տալիս ես ինձ,— հարցրեց նկարիչը։

Դահճապետը ժպտաց։

— Դե ո՞վ կարող է հրաժարվել ամեն օր մի թուման ստանալուց, տե՛ր Նաղաշ։ Ես կուզենամ քեզ իմ զնդանում պահել հավիտյան։ Մի մարդ ամեն օր քո կյանքը երկարացնելու ու քո տառապանքները թեթևացնելու համար մի թուման է տալիս ինձ ու Զուլում Զեքիրին։

— Իսկ ո՞վ է այդ մարդը։

— Հրամայված է չասել։

Նաղաշ Հակոբը սաստիկ զարմացավ այդ նորությունից։ Ո՞վ է այս օտար, Թշնամի քաղաքում համարձակվել կաշառել շահի դահճապետին ու զզվելի Զուլում Զեքիրին։

Դահճապետը խորհրդավոր տեսք ընդունեց, շորեքթաթ մոտեցավ դռներին՝ ականջ դրեց ու համոզվելով, որ ոչ ոք չի լրտեսում իրենց՝ թռավ նկարչի կողքը։

— Լսիր, գյավո՛ւր, երեք հարյուր թուման քիչ հարստություն համարողը հիմար է։ Ես իմ կյանքում այդքան գանձ չեմ վաստակել։ Քո բարեկամը ուրիշ բաներ էլ է խոստացել։ Իսկ ես երեք երեխայի տեր եմ։ Այս գիշեր քեզ փախցնելու ենք...

Նաղաշ Հակոբը ծառս եղավ տեղը։

— Սը՛ս... Յավա՛շ, յավա՛շ...— ղղնջաց դահճապետը։— Այս գիշեր, այո՛։ Խանը հրամայել է այս երեկո, արևի մայր մտնելու պահին գլխատել քեզ։ Գլխատել, երբ մեր մոլլաները մինարեթներից հավատացյալներին հրավիրեն ալլահի տունը։ Հենց այդ ժամանակ։ Բայց մենք քեզ գլխատելու տեղ մեկ ուրիշին ենք գլխատելու։ Մի խուլ ու համր ծառա ունենք, նրան։ Ինչի՞ է պետք, հինգ ղուռուշ չարժե։ Քո շորերը հագցնելու ենք նրան ու... Հասկացա՞ր։ Ով է իմացողը։ Մենք երկու անգամ այդպես ենք արել, ամեն անգամ հարյուր թուման առնելով։ Իսկ

քեզ համար երեք հարյուր նաղդ են համրում։ Ուրեմն աչալուրջ եղիր ու սպասիր... Իսկ հիմա գնա՛, գնա՛։ Այսպես է, երեք հարյուր թումանից միայն ապուշը կհրաժարվի։ Իսկ ի՞նձ ինչ, թե այն զզվելի խուլ ու համրը սատկի։ Ես նրան հնդկական քնաբեր դեղ կտամ շերբեթի հետ։ Միայն մի սրվակ է մնացել։ Եվ նա այնպե՞ս կթմրի, որ ձեռքերի վրա կտանենք կառափնարան։ Պարզ է։

Դահճապետը շարունակում էր խոսել, այնինչ Նաղաշ Հակոբը չէր լսում նրան։ Այն հույսը, որ ինքը կարող է ազատվել այս զնդանից ու այս սուր կացնից, վերականգնեցին նրա կորած ուժերը։ Սակայն նրա համար առեղծված էր մնում, թե ով է իրեն փրկողը։

Նրան տարան իր խուցը։

ՀՈՒՅՍԻ ՃԱՌԱԳԱՅԹԸ

Այն օրից ինչ Եսային հարյուրապետ էր կարգվել, նա իր վաղեմի ընկերների՝ նախկին թափառականներ Ծատուրի և Սեմեոնի հետ ապրում էր Զագեձորի ամրոցի սպարապետական գնդի զորանոցներում։ Սակայն Ծատուրն ու Սեմեոնը երբեմն ամբողջ օրեր էին անցկացնում Գորիս ավանում։

Երբ պարսիկներից ետ խլած հողերը բաժանում էին ռամիկներին ու սակավահող շինականներին, Ծատուրն ու Սեմեոնը հրաժարվեցին հող ստանալուց։ «Հողը մեր ինչի՞ն է պետք,— ասացին,— ո՞վ գիտե, ո՞ր քարի տակ կթողնենք գլուխներս։ Մեզ ո՛չ տուն է հարկավոր, ո՛չ կին, ո՛չ երեխա. ավելորդ հոգսեր են»։ Նրանք ծիծաղել էին Եսայու վրա, որ սա գնացել էր իր հայրենի Ճակատեն գյուղը, որդուն գտել, հողաբաժին ստացել, տվել նրան ու իր ոռճիկն ամբողջովին ուղարկում էր, որ որդին լավ տնտեսություն ստեղծի։

Իրենց օրը նրանք անց էին կացնում Գորիս ավանի գինետներում։ Գինեվաճառները շողոքորթում էին, գովում նրանց առատաձեռնությունը։ Նրանց առջև էին դնում գինու լիքը փարչեր, թթու դրած վայրի տանձ, երբեմն էլ ոչխարի խորոված գլուխ։ Շինականները բարկանում էին, երբ խմած-ուռած Ծատուրն ու Սեմեոնը նստում էին գինետների առջև ու, կարճ ծխամորճները լցնելով «պիղծ խոտով»՝ ծխում։ Այդ պահերին ահագին ժողովուրդ էր հավաքվում նրանց շուրջը։ Երիտասարդները նախանձով էին նայում «ծուխ անող» մարդկանց, թաքուն փալփալում այն միտքը, որ իրենք էլ, երևի, մի օր «ծուխ կանեն»։

***

Լույսը դեռևս չէր բացվել, երբ ամրոցից դուրս եկավ Փոքր Գորգին ու, թեքվելով աջ՝ մտավ Գորիս ավան։

Ավանը տակավին քնած էր։ Գիշերը մրսած շները հարձակվեցին ձիավորի վրա։ Մոտակա գոմից լսվեց կովի դղրդացնող բառաչ։ Աքլորների կանչերը սաստկացան։ Փոքր Գորգին կանգ առավ իրենց տան առջև։ Թամբի վրայից կռացավ, մտրակի կոթով ծեծեց դարպասը։

— Ո՞վ է,— լսվեց մոր դժգոհ ձայնը։

— Քնո՞վ եք անցել, ի՞նչ է,— գոռաց Գորգին։

— Իսկ դու ո՞վ ես, որ դարպասը ջարդում ես այս սուրբ լույսին,— ոչ պակաս բարկությամբ հարցրեց մայրը։— Գիշերով-գիշերահանա գլո՞ւխ ես բերել, ի՞նչ է...

— Ջանիծե՛ս, մայր, ես եմ, դարպասը բաց։

— Վա՛յ, աչքերս թափվեն։ Ձայնդ չճանաչեցի, թե չէ բերանս ինչե՛ր էին գալիս... Հիմա, հիմա, Գորգի ջան։ Ինչի՞ ես այսքան կանուխ եկել։— Նա արագ բաց արեց դարպասն ու հիացմունքով նայեց որդուն։

Փոքր Գորգին թամբից ցած թռավ, փաթաթվեց մորը։ Վաղուց չէին հանդիպել, թեև ապրում էին իրարից ոչ հեռու։

— Վրայիցդ գինու հոտ է գալիս,— նեղացավ մայրն ու նրան բաց թողեց գրկից։— Չլինի՞ էն վայրենի Եսային է սովորեցնում լակել։ Գլուխը կջարդեմ, հա՛...

Որդին համբուրեց մոր ձեռքը, թարմ կաթի հոտ զգաց։ Մայրը նոր էր կթել կովը։

— Դու մի՛ բարկանա Եսայու վրա, մա՛յր,— մեղմ ասաց Գորգին։— Նա բնավ մեղք չունի. հոր պես է վարվում հետս։ Միայն մի գավաթ եմ խմել ամրոցից դուրս գալուց առաջ։ Ցուրտ էր, ասի՝ կտաքացնի։ Ընկերներիցս մեկը գնացել էր իրենց գյուղը։ Երեկ եկավ՝ մի տիկ գինի հետը։ Շիվանիձորցի է։ Ամենքիս հազիվ մի-մի գավաթ բաժին ընկավ։ Դե, էն ասա, ո՞նց ես։ Քույրիկս ո՞նց է։

— Դու ողջ լինես,— մեղմ ասաց մայրը,— լավ ենք։ Արի՛, արի՛, նոր եմ կովը կթել, տաք-տաք կաթ խմիր, թե չէ գինին...

Մտան բակ։ Ջույգ թթենու տակ նստել էին երեք այծ։ Երկանքի քարերին թառած հավերը կչկչացին տագնապով։ Շունը ձիգ տվեց շղթան ու փաթաթվեց տիրոջ ոտքերին։ Քարանձավի գլխի ժայռից, որ սպիտակել էր ծերտից, մի արծիվ պոկվեց... Գորգին ձին կապեց ծառին. տնտեսվարի աչքով նայեց սեփական բակը։ Ամեն ինչ տեղն էր։ Շունը

կուշտ էր, մազը՝ կոկ։ «Լավ է պահում տունը»,— մոր մասին ուրախ մտածեց Գորգին ու նրա հետ մտան տուն։

Մայրը ճրագ վառեց։ Պատի տակի անկողինը շարժվեց, ու երևաց Գորգու քրոջ գլուխը՝ քնատ աչքերով։ Եղբայրը մոտեցավ, խառնշտորեց քրոջ մազերը։

— Սատանա՛, հերիք չի՞ մրափես։

Քույրն ընկավ եղբոր գիրկը։ Մայրը բարձրացրեց ճրագի պատրույգը։ Գորգին գրպանները քրքրեց ու մի բուռ արծաթ մեկնեց մորը։

— Ռոճիկս է, երեկ տվին, վերցրո՛ւ։

Զարմանքը դրամը հաշվեց։ Գիտեր, թե որքան է որդու ռոճիկը։ Համրեց ու գոհ մնաց։ Որդին դրամը չէր վատնել։ Մոր սիրտը փլվեց. երկու արծաթ վերադարձրեց որդուն, իսկ մնացածը լցրեց արխալուղի գրպանը։

— Ապրես, Գորգի՛, օջախիս ծուխն ես, կյանքդ երկա՛ր... Այդ երկու արծաթը քեզ։ Պահիր, ընկեր-ծանոթ կունենաս, մի բան կուզես հյուրասիրել։ Հիմա դու մարդամիջի տղա ես։

Քույրը վերմակով ծածկել էր կուրծքն ու հետաքրքիր նայում էր եղբորը։ Հիանում էր նրանով։ Գորգին, որին, համանուն քեռուց տարբերելու համար, Փոքր Գորգի էին անվանում, էլ առաջվա գեղջուկ տղան չէր։ Որքա՞ն է փոխվել երկու տարում, այն օրից, ինչ սպարապետը նրան դարձրեց իր համհարզը։ Բարձր հասակ է նետել, տասնապետի գլխարկ ունի՝ սուր գագաթին ռազմիկի տարբերանշան, ինչպես ունեն Երկրի ապավեն գնդի մյուս տասնապետները։ Կարճափեշ կապան սեղմել է մեջքը։ Կաշվե գոտուց քարշ է ընկած երկար սուրը։ Քրոջ մեջ նույնիսկ նախանձ առաջացավ դեպի եղբայրը։ Ինչո՞ւ ինքը տղա չի, Գորգին՝ աղջիկ։ Բայց այդ մտքի համար ինքն իրեն անիծեց անողորմ։ Փոքր Գորգին նոր հրացան ուներ, իսկ երկարաճիտ կոշիկները փայլում էին սև ներկից։ Կատուն մոտեցել էր նրան ու, թավ պոչը նրա կոշիկներին քսելով՝ մլավում էր։

Մայրը ձվածեղ ու մի ման լիքը դեղին խեժ դրեց որդու առջև։ Հետո լավաշ ու վայրի դաղձ բերեց։

— Կեր, բալա՛ս,— ասաց քնքշանքով։— Ձվածեղն էլ կեր, խեժն էլ, առավոտ-առավոտ մարսական են։ Իսկ դաղձը Մարոն է բերել երեկ։ Կարծես սիրտն ասել էր, թե դու գալու ես։ Կասի, քոռանա՛մ, քրոջ սիրտ է...

Գորգին ախորժակով կերավ ձվածեղը։ Ամրոցում, գինի խմելիս, բան չէր կերել։ Խեժի կեսը կերավ, մյուս կեսը մեկնեց քրոջը։

— Առ, սա էլ դու կեր, սատանի՛ կնիկ, որ ոտքս Հալիձոր ընկնի,

քեզ համար արծաթի գոտի եմ առնելու։ Մի լավ էլ նշանած եմ գտնելու։

— Տղամարդ ես, քեզ համար նշանած ճարի,— ծիծաղեց քույրը։— Գյուղի բոլոր սիրուհիներին տարան։

— Ինձ էլ կմնա,— աչքով արեց Գորգին։— Այ, ես մի ընկեր ունեմ, բեղերը մի-մի թիզ։ Աչքի մեկն էլ շիլ է։ Խոստացել եմ, որ քեզ տամ նրան, ի՞նչ կասես։

— Բեր, էլի՛... Կխեղդեմ էս մատներովս...— Մարոն լեզու ցույց տվեց եղբորն ու շուլալվեց վերմակի մեջ։

Մայրը նստեց որդու մոտ և կամաց, որ աղջիկը չլսի՝ ասաց.

— Գոտու մասին լավ հիշեցիր, հո՛ւյս իմ... Մի հատ կառնես Մարոյի համար։ Ախր, ա՛յ որդի, տանելու աղջիկ է։ Երեք անգամ նշանախոս է եկել։ Երկու անգամ «չէ» եմ ասել, ամա երրորդ գալուն չդիմացա, «հա» ասացի։ Ագուլիսի կողմերից է՝ Ազա գյուղից։ Ասում են՝ Արաքսին կպած է։ Ես ի՞նչ իմանամ։ Լավ տան տղա է։ Ամեն տարի հոր հետ գինի է բերում ծախելու։ Սիրտը կպել է մեր աղջկանը։ Դե, ես ի՞նչ իմանամ։ «Հա՛» եմ ասել, պրծել։

— Իսկ Մարո՞ն,— խորհրդավոր հարցրեց Գորգին։

— Մարո՞ն, դե, ի՞նչ իմանամ, կուզի։ Շիմշատ, սիրուն, խելքը գլխին տղա է։ Հերն էլ ազիզ է, Տա՞նք, ի՞նչ անենք։

Գորգին ծոծրակը քորեց։ Երբեք այդպիսի դժվարին հարցի դեմ չէր առել։ Բայց չէր կարող չհավատալ մորը։ Եթե մայրը հավանել է, ուրեմն Մարոն լավ տուն կընկնի։ Ի՞նչ կա որ, թող գնա։ Ազան աշխարհի էն մեկել ծայրին չէ։ Չորս-հինգ օրվա ձիու ճանապարհ։ Մի անգամ եղել է այնտեղ։ Ազայի տներն իրենցի պես քարանձավներ չեն։ Այգիների մեջ են, պատուհաններին մետաքսե վարագույրներ։ Հարսներն այնտեղ երեսները բաց են ման գալիս ու ազատ ասում-խոսում են տղամարդկանց հետ։

— Դու գիտես, մա՛յր, ոնց որ խելքդ կտրում է, այնպես էլ արա,— արագ ասաց Գորգին ու վեր կացավ։— Չգիտե՞ս, որտեղ կլինեն Մատուրն ու Սեմեոնը։

— Ա՛յ ես նրանց բոյին խամ կտավ չափեմ, հա՛...— անիծեց մայրը։— Երեկոյան երևացին։ Ուզում էին մեր տանը քեֆ անել։ Չթողի։ Լակում են, հերիք չի, սատանայի ծխով էլ լցնում են տունը։ Երեք օր հոտը չի գնում։ Ի՞նչ անեմ։ Մեղրեցի գինեվաճառի մոտ կլինեն։ Շատ գիշերներ այնտեղ են քնում։

Գորգին համբուրեց արդեն նորից քնած քրոջ ճակատն ու դուրս եկավ։

— Դե, ես գնացի, մա՛յր,— ասաց շեմից։

— Իսկ ինչո՞ւ եկար, որ գնում ես։— Տխրեց մայրը։

— Եկա այդ գինեմոլներին գտնելու։

— Չլինի՞ բան կա, թաքցնում ես,— անհանգստացավ մայրը։

— Սպարապետի հետ տեղ ենք գնալու։

— Ճանապարհդ բարի՛,— մաղթեց մայրը։ Ցանկացավ համբուրել որդուն, բայց զսպեց։ Դե հո կռվի չի՞ գնում։

Գորգին ցատկեց ձիու թամբին ու բաց դարպասով նետվեց փողոց։ Արևը բարձրանում էր։ Քարանձավի մուտքի մոտ կանգնած Զարմանդը երեսը շուռ տվեց դեպի աղոթարան ու, շրթունքները հազիվ շարժելով՝ շշնջաց.

— Տե՛ր ամենակարող աստված, դու քաղցր աչքով նայես իմ կենտ մինուճարին։ Մե՛ղք եմ։— Նրա աչքերը լցվեցին։ Տան գլխին բուն դրած արծիվը ետ եկավ՝ ճանկերում որս։ Զարմանդը դա բարի նշան համարեց ու մտավ քարանձավ։

***

Գորգին ծեծեց մեղրեցու գինետան դուռը։ Տանտերին տեսնելով՝ քնատ մեղրեցին վախվորված ետ-ետ գնաց։

— Ի՞նչ ես փախչում, է՛յ,— գոռաց Գորգին։— Հո պարսի՞կ չեմ։

Գինեվաճառը ներսից հարցրեց, թե ինչ է ուզում «օրենքի մարդը»։

— Քեզ մոտ զինվորներ կա՞ն,— հարցրեց Գորգին՝ ձայնին «օրենքի մարդու» շեշտ տալով։

— Ես նրանց ա՞րևը թաղեմ,— անիծեց գինեվաճառը՝ կարծելով, թե «օրենքի մարդը» չարացած է զինվորների վրա։— Հա՛, այստեղ են։ Հրե՛ն, կարասների արանքում շնթռկած։ Օխտը տղամարդ է հարկավոր, որ վերկացնեն։

Զին բակում թողնելով՝ Գորգին մտավ գինետուն։ Քացախի, գինու և թթու դրած բանջարեղենի ծանր հոտը մտավ նրա ռունգները, փոշտաց։ Անցավ կարասների մոտով և նրանց արանքում ընկած գտավ Ծատուրին ու Սեմեոնին։ Բայց գինեվաճառն իզուր էր տրտնջում։ Երկու անբաժան ընկերները վեր կացան Փոքր Գորգու առաջին կանչից։

— Ի՞նչ կա, Գորգի՛,— աչքերը տրորելով՝ հարցրեց Ծատուրը։

— Հրաման է՝ շտապ գնալ ամրոց։

— Եփածը սառչո՞ւմ է։— Լայն բերանը բաց անելով՝ հորանջեց Սեմեոնը։

— Դե շուտ արեք, գնա՛նք,— շտապեցրեց Գորգին։

— Է՛յ, գինու կարաս, ասա տեսնենք քանի՝ արծաթ ենք խմել,— հարցրեց Սեմեոնը գինեվաճառին։

— Երկու,— իսկույն պատասխանեց մեղրեցին,— երկու արծաթի։

— Այդքան շա՛տ,— զարմացավ Սեմեոնը։— Խաբում ես։ Ճարպակալած վիզդ կոլորեմ, հա՛... Մի՛ խաբի։

Գինեվաճառը երդվեց, որ բոլորովին չի խաբում և պահանջեց դրամը։ Զինվորները դրամ չունեին, խնդրեցին, որ ապառիկ հաշվի, մինչև գալիք ոռճիկը։ Դուրս եկան։ Գինեվաճառը բռնեց Գորգու թևն ու ափսոսանքով հարցրեց.

— Էլի՞ կռվի եք գնում։

— Քո ի՞նչ բանն է,— թևը նրանից պոկեց Գորգին։

— Ախր ապառիկը...

— Կգա՛ն, կտան, էլի՛... Հո չե՞ն խաբում։ Պարտքի ճանաչ մարդիկ են։

— Ճանաչ են, հա՛, աստված պահի։ Իսկ եթե կռվի եք գնում ու այնտեղից ետ չգա՞ն...

Գորգին այնպես հրեց գինեվաճառին, որ սա զարնվեց լիքը տակառին։

— Անամո՛թ,— շպրտեց Գորգին։— Քո երկու արծաթը թանկ է, քան Հայոց աշխարհի երկու զինվորնե՞րը։

Լավ էր, որ Ծատուրն ու Սեմեոնը դուրս էին եկել և առվի մեջ թրմրած գլուխներն էին լվանում։ Թե չէ, եթե գինեվաճառի ասածները լսեին, նրա փորոտիքը կթափեին անշուշտ։ Գինեվաճառը լաց եղավ։ Գորգին թքեց, գրպանից հանեց մոր տված երկու արծաթն ու շպրտեց նրա երեսին։

— Ա՛ռ, ա՛ռ, մի՛ սատկիր, ուռա՛ծ ջադու։

Նա դուրս եկավ բարկացած։ Նստեց ձին և Ծատուրի ու Սեմեոնի հետ բարձրացավ դեպի ամրոց։ Արևը խնդագին ժպտում էր արդեն։ Տների ծխերը ձգվել էին դեպի ամրոցի պարիսպները։ Գոմերից դուրս արած եզները թրիքոտ մեջքները քսում էին բակերի քարերին՝ քոր անում։ Այծերը, կարճ պոչերը տնկած՝ լիզում էին սալերին շաղ տված աղը։

Գորգին գլխարկը ծռեց ու հետաքրքիր նայեց ջրի գնացող աղջիկներին։ Սրանք գլխաբաց էին. արխալուղների թևքերը ծանրացել էին արծաթե սուրմաներից։ Ուսերը պղնձի կժերն այնպես էին բռնել, որ լայն թևքերը ետ քաշվեն ու երևան սպիտակ դաստակները։ Գորգին շատ էր ցանկանում, որ աղջիկները նայեն իրեն, բայց այդ գոռոզները կարծես չէին էլ նկատում նրան։

Հասան ամրոց։ Այնտեղ արդեն Երկրի՝ ապավեն գնդից հինգ հար-

յուրյակ ռազմաշարք էին կազմել։ Փոքր Գորգին ձին քշեց դեպի սպարապետի տունը։

Զորապետները եկան։ Զորագունդը դուրս եկավ ամրոցից։ Քաղաքաղքի կողմերը տանող ճանապարհն անցնում էր ավանի միջով, կըտրելով նրա ինը թաղերը։ Ժողովուրդը կուտակվեց կտուրներին, կալերում ու ձմեռը գցած աթարի տախտերի վրա։ Մանուկները եռանդով քորում էին իրենց բաց պորտերը, աղմկում։ Պատանիները սուլում էին։ Ծերունիները ձեռքները աչքերին՝ նայում էին զորքին։

Զարմանդը Մարոյի հետ կանգնել էր ժայռեղեն բակում ու աշխատում էր հայացքով զորքի մեջ գտնել որդուն։ Նրա հարևան ծերունին ձայն տվեց.

— Այս ի՞նչ հանդես է, Զարմա՛նդ, զորքն ո՞ւր է գնում։

— Դե, ես ի՞նչ իմանամ։ Երևի էլի վարժանքի են գնում,— պատասխանեց Զարմանդը։

— Չէ, ի՞նչ վարժանք,— մյուս կտրից կանչեց մեկը։— Մխիթարը գնում է ռուսի թագավորի մարդուն բերի։

— Խեր է։— Ձեռքն ականջին դրեց ծերունին։

— Բա հո ռուսից շատ չի լինելու, ա՛յ ալևոր։

— Աստված ռուսի կյանքը երկարի։

— Է, հե՛...— հանկարծ գոչեց մեկը։— Հապա նայեցեք, ա՛յ ժողովուրդ, սպարապետի դրոշակը մեր Փոքր Գորգին է բռնել, Փոքր Գորգի՛ն։ Նայեցե՛ք։

Զարմանդի սիրտը թպրտաց։ Աչքերը շաղվեցին։ Բռունցքով տրորեց ու նայեց... Սպարապետի եռագույն դրոշը ծածանվում էր զորաշարքի առջև։ Մայրը հազիվ ճանաչեց որդուն։ Սա դրոշակի կոթը գրել էր ձիու թամբին և հպարտ-հպարտ գնում էր սպարապետի ու Տեր-Ավետիսի ետևից։ Եսային նրա կողքին էր։

— Աստված տղայիդ երկու ձեռքով պահի, Զարմա՛նդ,— մաղթեց հարևան ծերունին։

— Քոնն էլ, քեռի՛ Թաթոս,— դողդողացող ձայնով պատասխանեց Զարմանդը։ Նրա աչքերը լցվեցին։ Հիշեց ամուսնուն։ Նա էլ ահա այդպիսի հպարտ պատանի էր, երբ ամուսնացան։ Այն ժամանակ ինքը տասներեք տարեկան էր։ Բայց ուրախությունը երկար չտևեց... Ամեն ինչ փոխվեց միանգամից։ Ամուսինը սպանվեց։ Հիմա ինքը երեսունինը տարեկան է։ Ո՞ր քարի տակ մնաց ամուսինը։ Իսկ մեծ որդու սգի շորերը միայն բերեց Մխիթարը, որ պահում է սնդուկի մեջ ու երբեմն կրծքին սեղմած լաց լինում։ Զարմանդը աչքերը սրբեց։ Երանի՜ էլ կռիվ չլինի, որ Գորգին...

— Լսո՞ւմ ես, Զարմա՛նդ, Մխիթարը բան է ասում շինականներին։

Բայց Զարմանդը ոչինչ չլսեց։ Նա նայում էր արդեն հեռացող որդուն։

— Ա՛խ, եթե այսպիսի մի հիսուն հազար զորք ունենայի՜նք,— նորից խոսեց ծերունին,— այն ժամանակ Հայաստան աշխարհի մեջքն ամուր կլիներ։

— Որ ամեն տուն գինվոր տա, հարյուր հազարից էլ ավել կլինի,— գոռնացած նետեց Զարմանդը։— Շատերն իրենց որդիներին պինդ են պահում։— Նա նեղացած շուռ եկավ ու մտավ տուն։

Զորքը գնաց...

* * *

Ամուսնուն ճանապարհելուց հետո տիկին Սաթենիկը երկար նայեց հեռացող զորագնդի ետևից. այսօր նա իր մատյանում կգրի մեծ եղելությունը։ Ռուսաց թագավորի պատվիրակը ժամանել է Հայաստան։ Հայոց հորիզոնում բացվում է մի նոր արշալույս. մոտենում է հույսի ճառագայթը։ Եվ դրանից տիրող սիրտը, որ հանապազ լիքն էր վշտով, մի փոքր թեթևացել էր, ու շրջապատն արտակարգ հարազատ ու հաճելի էր նրան։ Արդեն գլխում ծագում էին այն խոսքերը, որոնցով այդ օրը պետք է շարադրեր իր ուրախությունը։ Նա գնաց իր գրատուն-խուցը։ Ուզում էր հանդիպել Ահարոնին։ Տղան սաստիկ վիրավորվել էր հորից. խնդրել էր իրեն էլ վերցնել, տանել պատվիրակին դիմավորելու, բայց հայրը մերժել էր։ «Դեռ քո պանիր-հաց ուտելու ժամանակն է»,— ասել էր կոպիտ և չէր տարել։ Պետք է սփոփել տղային, չթողնել կոտրված սրտով։

Խցիկում, ցածրիկ գրասեղանին հակված էր Սամամը։ Գլուխն աջ ուսին, լեզուն ատամների տակ, աղջիկը ջանասիրությամբ գրում էր... Ոտնաձայն լսելով՝ նա նայեց դռան կողմը։ Իսկույն վեր կացավ, խոնարհ մնաց։ Տիկինը մոտեցավ և ուշադիր զննեց նրա գրածը։ Ցանկացավ հարցնել, արդյոք Ահարոնը չի՞ երևացել, բայց չարեց։ Զսպեց սրտի կամքը։ Գիտեր իր զգացմունքները թաքցնել ոչ միայն օտարներից, այլև հարազատներից։

— «Ա» տառը սաստիկ մեծ ես գրում,— ասաց կիսաձայն,— «Ա»-ն թեև շատ գործածվող տառ է, բայց փոքրիկ է ու համեստ։ Նշանակում է համեստ էլ պետք է գծվի։ Իսկ դու, նայի՛ր, թե ինչ ես արել. ճյուղերը տարածել, մեծացրել ես անհարկի։

Սամամը գլուխն ավելի կախեց։ Երբ տիկինը նայեց նրան, քիչ մնաց

ծիծաղեր. մի բան, որ նա իրեն հազվադեպ էր թույլ տալիս։ Աղջիկը պոռոշ էր արել, ուռել։ Նրա քիթն ու մի քիչ վեր ձգված շրթունքը թանաքոտ էին, ականջի ոսկե օղերը՝ (ինքն էր նվիրել) նույնպես։ Այդպես նա նման էր վիրավորված ուլիկի, որ մորից խռով կանգնում է գոմի անկյունում։ «Օհո՜... խռովկան է,— մտածեց տիկինը։— Համառ ու ինքնասեր սերունդ է մեծանում»։ Իր զավակներն էլ են այդպես։ Խռովում են աննշան դիտողությունից։ Այդպես չէր առաջ, երբ պարսիկի լծի տակ էին՝ ոչնչացված ու ստրուկ։ Տիկնոջ սրտում մի անուշ բերկրանք խլբրտաց։ Ահա այս գեղջուկ աղջիկը, որին ինքն էր վերցրել նրա ծնողներից՝ գրագիտություն ուսուցանելու, ստրուկ չի ապրի այլևս։

Ծամամը շարունակում էր անշարժ մնալ՝ հայացքը գետնին, վիրավորված։ Կարճափեշ, երկնագույն կապան խիստ սազում էր նրա բարալիկ մարմնին։ Կրծքի թանկագին զարդերն ու թևերի սուրմաները ծիածանի գույներ էին արձակում։ Կապան՝ ինքը տիկինն էր կարել իր ձեռքով, իր ձեռքով էլ ամեն առավոտ հյուսում էր աղջկա առատ մազերը, որ հիմա ծամ առ ծամ կախված են նրա թիկունքին։ Աղջկան հանգստացնելու համար տիկինը նրա գլուխը սեղմեց իր կրծքին։

— Մի՛ վշտանա, գառնո՜ւկս,— գորովանքով ասաց նա։— Ես էլ եմ շատ տառապել, մինչև սովորել եմ գրել-կարդալ։ Դու էլ կսովորես, մի՛ վախենա։ Մեր աշխարհում քիչ աղջիկներ կան, որ գիր գիտեն։ Իսկ դա վատ է։ Պետք է բոլորն իմանան, բոլո՜ր...։ Հանգստացի՛ր, անուշի՛կս։

Տիկինը Ծամամին Պղնձաքարից Զագեձոր էր բերել Գոհարի հարսանիքից հետո։ Նրան շատ էր դուր եկել ուշիմ ու համարձակ Ծամամը։ Բացի դա, սիրտը մի անմեղ ու պարզ մտերմուհի էր ուզում՝ իր կործանված բախտի պատճառած ցավերը մեղմելու համար։ Որդիները չէին սփոփում։ Մեծն իր նման մի հիսուն-վաթսուն պատանի հավաքած՝ անվերջ զինվորական վարժանքներով էր տարված. հոր պես սառն էր ու հոր պես դաժան։ Փոքրը դեռ եղեխա էր։ Իսկ ամուսինը տարվա մեծ մասը տանը չէր։ Տանը եղած ժամանակ էլ չոր էր, մտացրիվ, անուշադիր։ Ծամամին իր տունը բերելով՝ տիկինը կարծես մի թանկագին մխիթարանք գտավ։ Աղջկան դաստիարակում էր իր ուզածի պես՝ հպարտ ու արժանավայել։ Գարնանային թարմություն էր բերել Ծամամն իր հետ։ Աղջիկն աղու ձայն ուներ։ Տիկինը երբեմն նրան նստեցնում էր իր մոտ ու խնդրում, որ մի բան երգի։ Աղջիկը վիզը թեքում էր ու երգում իր հոր տանը լսած գեղջկական մելամաղձոտ երգեր։ Այդ պահերին տիկինը մտաբերում էր իր մանկությունը, որ ձեռքից գետն ընկած մատանի էր այլևս, ու նրա խոշոր աչքերը լցվում էին արցունքներով։ Մի խորին հարազատություն էր զգում նա դեպի գեղջկական պարզ խենթություններ

ունեցող Ծամամը ու ցանկանում էր, որ նա մշտապես մնա այդպես մանուկ, վիրավորվող ու բորբոքվող. այդպես հպարտ, ինչպես հպարտ են նրա հայրենի լեռները։

Ծամամը կարդալ շուտ սովորեց, սակայն գրելում նրա բախտն առատաձեռն չէր։ Այդ բանից սաստիկ նեղսրտվում էր աղջիկը։

— Մի՛ վշտանա, աղջի՛կս,— շոյելով նրա գլուխը՝ նորից ասաց տիկինը։— Կշարշարվես, կտառապես ու մեկ էլ տեսար ստացվեց։

— Ոչինչ էլ չի ստացվի։— Անսպասելի լսվեց Ահարոնի ձայնը։

Տիկինը դանդաղ բաց թողեց աղջկա գլուխն ու շուռ եկավ դեպի դուռը։

Շեմին կանգնած էր մեծ սրգին՝ հեգնական ժպիտը երեսին։ Աչք ծակելու չափ շողում էին նրա գենքերը։ Պատանին նույնիսկ մի թևին ձգվել էր ներբանների վրա՝ բարձրահասակ երևալու ցանկությամբ։ Նրա ճակատին, գլխարկի տակ, կեռվել էր սև գանգուրների մի անհնազանդ փունջ։ Աչքերում փայլում էր սեփական արժանիքները գիտակցող իշխանազնի հանդգնությունը։

Տիկին Սաթենիկի կրծքի տակ խազաց խանգազատանքի այիքը։ Որդին նկատելի հասակ էր նետել։ Թարուրից ե՞րբ ելավ։ Կարծես հոր կեսը լինի։ Նույն ահագին, անհնազանդ աչքերը, հանդուգն հայացքը, քթի նույն հաստատությունը, բերանի անկյուններում նույն հավիտենական հեգնական ժպիտը։

— Դու իզուր ես այդպես մտածում իմ Ծամամի մասին,— որդուն մեղմ հանդիմանեց տիկինը։— Ծամամը լավ է սովորում. նա անպայման գրագետ կդառնա...

— Ա՛յ, մայրիկ ջան,— թուրը մի քիչ բարձր բռնած՝ առաջ եկավ Ահարոնը։— Ախր դրա ինչի՞ն է պետք գրել-կարդալը։ Ավելի լավ է դու դրան ճաշ եփել, կար ու կարկատան անել սովորեցրու, որ մարդու գնալուց հետո շնաթակ չանի։

— Շնաթակը դու կեր,— անսպասելի, նույնիսկ տիկնոջից չքաշվելով, նրա անապն աբեց Ծամամը։— Իսկ քո բա՞ն է սպարապետություն խաղալ։ Դու քու ձին կարգին թամբել չգիտես։ Զինվոր ծառան է թամբում։

— Ե՞ս,— զարմացավ Ահարոնն ու զորական մարդուց իսկույն դարձավ բարկացկոտ պատանին։— Ախ դո՜ւ, թանաք ուտող... Դո՜ւ էիր պակաս, որ ինձ վրա խոսես... Հապա գեմքի՞ն նայեք, գեմքի՞ն, ամբողջովին թանաք է։ Ծծկեր երեխայի պես ինչ ձեռքն է քնկնում՝ տանում է բերանը։

Անպորությունից Ծամամը անսպասելի փղձկաց... Եթե տիկինը չի-

ներ, չէր մնա Ահարոնի խոսքի տակ, այնպե՞ս կշշպուեր, որ եկած ճամփան մոռանար։ Բայց աղջիկը պատկառում էր տիկնոջից, ուստի միայն աղջկային իր լացով կարողացավ արտահայտել սրտի բարկությունը։ Նրան պաշտպանեց տիկինը։

— Չար լեզու ունես, Ահարո՛ն,— ասաց՝ աչքերը որդու վրա ոլորելով։ Հիշեց, որ այդպիսի կծող լեզու ունի նաև ամուսինը, հառաչեց։— Այսուհետև չսե՛մ, չտեսնե՛մ, որ դու վիրավորել ես աղջկան։ Սազական չէ։

Ահարոնը շիկնեց։ Զզջաց, այլ վիրավորվեց, որ օտար աղջկա մոտ մայրն իրեն ծանր դիտողություն արեց։ Եվ ինչո՞ւ է ինքը գլուխ դնում մի տասնմեկ-տասներկու տարեկան աղջկա։ Չէ՞ որ նրանից երկու-երեք տարով մեծ է ու պստանիների գնդի զորապետը։ Համենայն դեպս ատամների արանքից շպրտեց.

— Թող ինքն իր լեզուն իրեն պահի, որ չտանա։

— Ես իմ լեզուն ինձ եմ պահում,— հեկեկոցն իսկույն կտրելով՝ դառնացած ասաց Ծամամը։— Իսկ դու ամեն տեղ ինձ ծաղրում ես, տնազ անում։ Այնպիսի բաներ ես ասում, որ ամաչում եմ... Դու վա՞տն ես, վա՞տը։ Գիգանն ու Դավիթը լավն են, իսկ դո՞ւ...

Սաթենիկ տիկինը հանգստացրեց աղջկան։ Նորից հանդիմանեց որդուն, հորդորեց, որ իրար հետ հաշտ ու սիրալիր լինեն։ Աղջիկը լացը կտրեց։ Ահարոնը նրան մոռացավ։ Տրտնջաց, որ հայրն իրեն չի վերցրել հետը։

— Կարծում է, թե դեռ բարուրի երեխա եմ,— ասաց նեղացած, վիրավորված։— Զվերցրեց, իսկ ես այնքա՞ն եմ ուզում տեսնել թագավորի մարդկանց...

— Մի՛ տրտմիր, զավա՞կս,— մոր աչքերը հազվագյուտ քաղցրությամբ նայեցին նրան։— Թագավորի պատվիրակը կգա մեզ հյուր, կտեսնես այստեղ։

Ահարոնը չարացած դուրս եկավ. ոչինչ չէր սփոփում նրան։

Մյուս օրը, նախաճաշի ժամանակ, Ծամամը թեքվեց Ահարոնի ականջին։

— Եկ ինձ հետ. բան ունեմ ասելու։

Ահարոնը զարմացավ աղջկա կարեկցող ձայնից և թեկուզ որոշել էր նրա հետ չխոսել երբեք ու բանի տեղ չդնել, բայց ակամա հետևեց նրան։ Ծամամը կանգ առավ միջանցքի ցածրադիր կամարներից մեկի տակ, շրթունքները խոթեց Ահարոնի ականջը։

— Ես քեզ օգնեմ, որ դու էլ գնաս թագավորի մարդուն գիմավորելու։

— Դատարկ խոսքեր են...— ձեռքը թափ տվեց Ահարոնը։

— Սկի էլ չէ,— շտապեց Ծամամը։— Մայրիկ-տիկինը խոսք է տվել այսօր ինձ ուղարկել մեր տուն՝ ծնողներիս տեսության։ Ես նրան կխնդրեմ, որ քեզ էլ ընկերակցի ինձ։ Լա՞վ։ Միայն մի զինվոր է ուղեկից լինելու մեզ։ Ճանապարհին նրան կխաբենք՝ կթուչենք դեպի Միծեռնավանք։ Թագավորի մարդկանց այնտեղ են դիմավորելու։ Համաձա՞յն ես։

— Ինչո՞ւ ոչ, միայն թե կարողանաս մորս համոզել,— ուրախացավ Ահարոնը, թեև հավատ չուներ, որ կկատարվի ցանկալին։

Աղջիկը վազեց տիկին Սաթենիկի մոտ։

***

Լեռների ծալքերում սև ամպեր էին խռնվել։ Իշխան Մեծ լեռան գագաթին կայծակ շողաց։ Անձրևաբեր ամպերը բարդ-բարդ կախվեցին ձորերի վրա։ Սկսվեց տեղատարափը։

Մխիթար սպարապետի գունդը գնում էր սարահարթի ճանապարհով։ Անձրևը հասավ նրանց։ Զինվորները ձիերի թամբերից պոկեցին այծենակաճերն ու ծածկվեցին։ Բայց ահռելի թափով տեղացող անձրևը մի երկվայրկյանում ջրեց, ողողեց ձիերին ու մարդկանց։

Գնացքը դժվարացավ։ Ճանապարհը կակղեց. ցեխը կպավ ձիերի սմբակներին, ողողեց փորերը։ Հեղեղատների մեջ փրփրաց անձրևաջուրը։ Պայծառ առավոտը մթնեց։

Գնում էին լուռ։ Թաց թևքերով սրբում էին աչքերը լցվող ջուրը։ Մխիթարը գնում էր առջևից՝ մի կողքին մելիք Եգանը, մյուսին՝ Տեր-Ավետիսը։ Եգանը բարձր-բարձր պատմում էր, թե ինչպես իր զինվորներից մեկի կինը խուզել է ամուսնու մորուքը։

— Հա՛, հա՛...— քրքջաց նա։— Մի շաբաթ առաջ է եղել դեպքը։ Կինը կտրել է մարդու մորուքը, երբ սա խմած-քնած է եղել։ Առավոտյան զոքանչը հավատացրել է, թե երկնային հրեշտակն է նրան պատժել՝ կնոջը ծեծելու համար։ Զինվորը հավատացել է անխիղճների սատանայությանը։ Հրեն ջոկատիս մեջ։ Անմորուք, երեսը պլոկված։ Ի՞նչ անի խեղճը։

— Զոքանչին ոտքի տակ դներ ու ձևեր, շա՛ն որդին,— բորբոքվեց Տեր-Ավետիսը։— Հավատացել է ջադուին։ Ի՞նչ հրեշտակ, ի՞նչ բան, եղբա՛յր։ Մի լավ հասկացնեիր, թե ինչը՝ ինչոց է։

— Որ գնար կնկա կոկորդը կտրե՞ր,— միջամտեց սպարապետը։— Հարկ չկա։ Մորուք է, խուզել են, նորը կգա, կբուսնի։

Լռեցին։ Անձրևը շարունակեց մոլեգին մինչև կեսօր։ Ձիերը սառա-

պեցին ցեխ ծեծելով։ Այծենակաճերն ու մորթե գլխարկները ծանրացան, ճնշեցին մարդկանց ուսերը, գլուխները։ Շուտով սպարապետի գնդին միացան մելիք Բարխուդարն ու նրա փեսա Թովմա հարյուրապետը՝ իրենց ջոկատներով, դրոշներով։ Ողջունեցին միմյանց ու շարունակեցին ճանապարհը։

Երբ իջան Աղավնո գետի ձորը, անձրևը միանգամից կտրվեց, ու երևաց արևը՝ փայլատակող, աչք շլացնող։ Զորագնդի վրայից գոլորշի բարձրացավ։ Զգեստներն սկսեցին չորանալ։ Ցեխը սպիտակեց ձիերի մարմինների վրա։ Մարդիկ աշխուժացան։

Խոր էր Աղավնո ձորը։ Երկուստեք նա սեղմված էր անտառոտ լանջերով, որոնց վրա տնկվել էին սպիտակ, պղնձագույն ու կապույտ որձաքարե ժայռեր՝ մեկը շոքած ուղտի, մյուսը ոռնացող գայլի, մի երրորդը՝ աղոթող մարդու կերպարանքով։

Բարձունքից երևաց Արցախի կապույտ լեռնաշղթան։ Վարանդացիները կարոտով նայեցին, ասես ծիրանի հագած, իրենց լեռներին, որից այն կողմ իրենց ու Արցախի մյուս չորս սղնախներն էին՝ զորքով ու զորապետներով։ Այնտեղից էր գալու այն մարդը, որին դիմավորելու էին գնում իրենք։ Այնտեղով էլ պիտի գան ռուսաց թագավորն ու զորքը։

Անձրևից հետո արևը զարմանալի հաճելի էր ու խայտող։ Դրանից զինվորներն աշխուժացան։ Մեկը մի հին երգ սկսեց. մի ուրիշն անձրևից թրջված լավաշը մեկնեց ծնկներին, որ փոքր-ինչ չորանա։ Նայում էին ձյուներից ազատված, հազիվ կանաչին տվող արտերին, կապույտ ձյունաշղթերին, որ զնգոցով թավալվում էին դեպի ձորերը։

Մատուրը մտրակի կոթով հրեց Վեցկի Մարգարի ուսը, որ գնում էր հենց իր կողքով։

— Գարուն է, է՛... Վեցկի Մարգա՛ր։ Նայիր շուրջդ։ Հողն իր տիրոջ ձեռքին է սպասում։

— Հա՛։ Արորը դաշտ հանելու ժամանակն է,— տնքաց Վեցկի Մարգարը՝ շիկավուն մորուքը տրորելով։

— Ձեռքերդ քո՞ր են գալիս, ի՞նչ է, Մարգա՛ր,— հարցրեց Եսային։

— Հողն ուռել է։ Ցել կտրելու օրերն են։

— Իսկ դու հող ստացա՞ր։

— Չորս սոմարի ստացա։ Մխիթարը խոստացել է փող տալ, որ երեք զույգ արջառ առնեմ, հետո էլ վեցկի կառնեմ, եթե աստված կամենա։

— Ասել է զինվորությունը կթողնե՞ս։

— Դե, հո հավիտյան զինվոր չե՞նք մնալու։ Մի օր դադար կլինի,— չգիտես հեգնանքով, թե համոզված ձգեց Վեցկի Մարգարը։— Երեք

տղա եմ մեծացրել։ Երկուսը կտամ Երկրի ապավեն գնդին, իսկ մեծի հետ հողս կվարեմ, տնտեսությունս կմեծացնեմ։ Հենց որ հող ստացա, մեծ տղիս պսակեցի։ Հերու աշնանն էր,— Վեցկի Մարգարը թուլացրեց ձիու սանձը։— Բայց հարսս անբանի մեկը դուրս եկավ, լուծ չէր քաշում։

— Հարուստի աղջիկ ես բերել, երևի,— եզրակացրեց Եսային։

— Հա՛, մեր շենի քահանայի աղջիկն էր. հարուստ տուն էին։ Աստված ձեր օջախից էդ տեսակ հարսին հեռու պահի. քիչ մնաց տունս քանդեր, ավերեր անիծածը։ Ամա ես էլ իմն արի. հիմի թող հերը քթի սեռը լիզ տա։ Մինչև հարսանիքի օրը ես ու կնիկս շատ տակ տվինք, գլուխ առանք, վերջը վճռեցինք քահանայի աղջիկն ուզել։ Լիքը-լիքը աղջիկ էր, ոտնուձեռը պինդ, երեսները ոնց որ Դարբասի խնձոր՝ կարմիր, կլոր... Քահանան ու իրիցկինը աշրդ դառած ամեն տեղ իրենց աղջկա գովքն էին անում։ Մոտե-մոտ արի քահանային ու նրա կնկանը։ Խնամախոս գնացինք, սրանք չեմուչում արին, «չենք տա» ասին, վերջը կակղեցին, համաձայնեցին։ Վճռեցինք պսակը կապել։ Ասի՝ տեր հայր, գիտես, որ ես մի ոտքս զինվորության կապած շինական մարդ եմ, կարգդ սիրես, թե աղջիկդ բանարար է, տանենք, կնիկս մենակ է, օգնական կլինի, թե չէ՝ դու քեզ համար, ես՝ ինձ։ Քահանան իրա կարգովը երդվեց, թե իրա աղջկա ձեռքից ամեն ինչ էլ գալիս է։ Հավատացինք։ Երեխիս պսակեցինք, հարսը բերինք տուն։ Մի օր, հինգ օր, տասը օր, տեսանք էս հարսը ձեռքը սկի մի բանի չի տալիս։ Անկյալը ձեզ օրինակ. ջրի էլ չի գնում։ Ասի. ա՛յ կնիկ, էս մեր հարսը անբան է, բա ի՞նչ անենք։ Կնիկս ծնկները թակեց... Այդ տեսակ ծույլ, ալարկոտ հարս ոչ տեսած կայինք, ոչ լսած։ Ո՛չ խմոր անել գիտեր, ո՛չ կար ու կարկատան, ո՛չ կովն ու ոչխարն էր կարողանում կթել։ Տունս քանդվեց, տղե՛րք, ձեր արևը վկա... Բանարար չէր, հերիք չէ, բոլորիս չափ էլ ուտում էր... Ես ու կնիկս տրաքվում էինք, բայց, ի՞նչ կասեք, տղիս սիրտը կնկա վրա տաք էր։ Ղարադամի իրենց պուճախում գիշերը մինչև լույս իրանց համար քչփչում էին, սիլիբիլի անում... Արյունս գլխիս էր տալիս... Մին-մին էլ էդ անկյալի վրվրթոցն էի լսում... Տղաս ախր, ածդահայի մեկն է։ Կովարար տղա է։ Որ մի երեք երեխա ետ գցի, տալու եմ Դավիթ-Բեկին։ Հրես ես մեծանում եմ, ինձ հերիք է։

— Դու քո զրույցն արա տեսնենք,— շտապեցրին հետաքրքիր լսողները։

— Ի՞նչ ասեմ, ա՛յ մարդիկ, աստված ձեզ էդ տեսակ հարսից հեռու պահի,— ձեռքերը տարածեց Վեցկի Մարգարը։— Մի օր տղաս ու մեկել երեխեքս տանը չէին։ Ես էի, կնիկս ու էդ օձի կծած հարսս. Տանը ջուր չկար, կնիկս էլ տկար էր։ Հարսին ամաչացնելու համար կուժը վերց-

բի, որ գնամ ջրի։ Կնիկս կծի ունկը բռնեց, չթողեց։ «Քոռանա՜մ, բա ազամարդը ջրի կգնա՞»,— ասաց։ Ես կուժն ինձ քաշեցի, նա՝ իրեն. մի կարգին խոսքուզրույց դուրս եկավ։ Էդ անիծված հարսս տեղիցը չշարժվեց հերիք չի, տարավ-բերեց, թե՝ «Ինչի՞ ես ջրի գնալու համար կռռվում, հերթ գրեք, մի անգամ մեկդ գնացեք, մի ուրիշ անգամ էլ՝ մյուսդ»։

— Հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ...— քրքշացին զինվորները։

— Ա՛յ թե հարս է եղել, հա՜...

— Փառավորվի՛ր, Վեցկի՛ Մարգար...

— Սպասե՛ք, սպասե՛ք,— շարացավ Մարգարը։— Էդ որ լսեցի, արինս գլխիս խփեց։ Ասի՝ եղանը վերցնեմ, տամ էդ անզգամի գիակը փռեմ, ամա կնիկս չթողեց։ Ես գնացի ջրի։ Էդպես էլ չխրատվեց անունը կտրածը։ Նրա համար ուտում-խմում էր, ծամտաքը գցում բերանն ու քերծի գլխին շնթռկած՝ ծամում, հա՛ ծամում... օր-օրի էլ անիծվածը բացվում, ծաղկում էր։

— Վե՞րջը, վերջն ի՞նչ եղավ,— ծիծաղները մի կերպ զսպելով՝ հարցրին այս ու այն կողմից։

— Սպասեք, է՜... Դրա վերջն անիծե՛մ,— տնքաց Մարգարը։— Կարծես մենք շատ ունևոր էինք, ուրեմն, այդ բանն էլ եկավ՝ մեզ վրա ուտող ընկավ։ Հա՛, վերջը մի օր սևերես տերտերիս հանդիպեցի գյուղամիջին։ Սա թե. «Խնամի՛ Մարգար, ուզում եմ գնամ Դիզակի կողմերից մի ձի առնեմ, բերեմ։ Ի՞նչ կասես»։ Ասի՝ շատ էլ լավ կլինի, խնամի՛ տեր-հայր, բայց ինչի՞ ոտք թակես գնաս Դիզակ, հրե՛ն, ես մի քյահլան ձի ունեմ, ուզում եմ ծախեմ, ոչխար առնեմ, արի տամ քեզ, մինչև կյանքիդ վերջը գոհ կմնաս։ Ասացի ու էլ խոսքեր չմնաց, որով չգովեցի ձիուս։ Տեր հայրը համաձայնեց, ասաց՝ իրիկունը կգամ ձիդ տեսնելու։ Ես մի անպետք, անքան յաբու ձի ունեի պառկած, ատամները թափած։ Էնքան ընկած էր, որ զոռով էի տանում ջրի։ Օկա տուն, մտա ախոռը, ձիու ձվերը մի թեթև խանձեցի, մտրակը ձեռքս առա ու... ձեր ուզածի պես սկսեցի թակել։ Թակում եմ, ո՞նց եմ թակում էդ կհալ անասունին... Այնպես աչքը վախեցրի, որ սա սկսեց ծառս-ծառս լինել, մատիս մի շարժումից երկինք թռչել, ոնց որ հրեղեն։ Աչքերն էլ փայլում էին։ Էս բանի վրա էի, որ խնամիս եկավ։ Մի-մի թաս գինի խմեցինք, հետո խնամուս տարա ախոռը։ Ձին որ ինձ տեսավ, տեղը ծառս-ծառս եղավ, խրխնջաց, մի էն տեսակ պար եկավ, ոնց որ երեք տարեկան քուռակը։ «Աշխույժ ձի է»,— ասաց տերտեր խնամիս։— Սկի Դավիթ-Բեկի ձին էլ սրան չի հասնի,— իսկույն վրա բերի ես։ Առևտուրն արինք, գինը կտրեցինք, փողը վերցրի, ձիու սանձը տվի պստիկ աղայիս, որ տանի

խնամու տուն, իսկ ես խնամուս հրավիրեցի՝ մի-մի թաս էլ գինի անուշ անելու։

Էքսի օրը քահանա խնամիս ձին թամբում է, որ գնա հարևան գյուղը կնունքի։ Ձին ոտքերը չի փոխում։ Էս կողմ, էն կողմ է ընկնում քահանան, ամա ձիուն տեղից շարժել չի կարողանում։ Տեր հայրը, վերջապես, գլխի է ընկնում, որ ես խաբել եմ իրեն։ Վազում է գյուղամեջ, ժողովրդին հավաքում գլխին. ինձ կանչում ու ռեխը վրաս ցրիվ տալիս, «Քու էնենցը, քու էնենցը, ա՛յ անիծյալ խնամի,— ասում է,— բա չե՞ս ամաչում, որ էդ տեսակ անպետք ձին ծախեցիր ինձ վրա։ Փողերս ետ տուր, ձիդ տար, տունս քանդեցիր»։ Շատ որ ձեռքին-ոտքին արավ, ես առա ու էն ահագին ժողովրդի առաջ ասի։— Զենդ գլուխդ մի՛ գցի, խնամի՛ տեր-հայր։ Դու ինձ խաբեցիր՝ քու անկյալ, անպետք աղջիկդ կապեցիր ինձ վրա. ո՛չ ավելն է ձեռքն առնում՝ առնք սրբում, ո՛չ էլ ադբյուրից ջուր է բերում։ Աշխարհի անկյալն է։ Երբ որ դու կգաս քու աղջիկը կտանես, ես էլ կգամ իմ ձին կտանեմ, իմացի՛ր։ Այս որ ասացի, տերտերը էլի կռավեց, տա ու ձեռքին արավ, բայց վերջի ի վերջո ձենը փոքր գցեց, տապ արավ...

— Ա՛յ թե դիվան ես դրել գլխին, հա՜...— ասացին այս ու այն կողմից։

— Իսկ հարսդ մի բան գարձա՞վ, թե...

— Մեռա՛վ։— Անտարբեր պատասխանեց Վեցկի Մարգարը։

— Անբանությունի՞ց։

— Է՜...— գլուխն օրորեց Մարգարը։— Դե մեռավ, էլի՜... Ո՞վ իմանա ինչից։ Մի ամիս առաջ մեռավ։ Թաղեցինք, գնացինք ուրիշ հարս բերինք։ Ռամիկի աղջիկ է, ասկու կտոր։

— Զուր չեն ասել, թե ճիպոտդ քոլիցդ կտրիր. հարուստ տնից բերած հարսը մեջ ուտելու, հեռու շուռ տալու սովոր կլինի,— եզրակացրեց Նսային։

* * *

Արևն իր գլուխը դրել էր լեռան ճերմակ բարձին, երբ Մխիթար սպարապետն իր շքագնդով հասավ Սիծեռնավանք։ Ավշար երեց Տեր-Գասպարն իր վանքի հոգևոր հայրերով ու վանական եղբայրներով դիմավորեց Մխիթարին։

— Լուր չկա՞,— հարցրեց սպարապետը։

— Ուր որ է կժամանեն. լուրը հենց նոր բերին,— պատասխանեց վարդապետը։

Նոր էին մտել վանք, նոր էին իջել ձիերից, երբ Աղավնո գետի ափին, ժայռի վրա թառած դեռք աբեղան ազդանշան տվեց. «Գալիս են»։ Լուր տվին սպարապետին։ Սա վանքի տաճարից դուրս եկավ սպառազեն՝ մելիքներով, հարյուրապետներով ու վարդապետով շրջապատված։

Մխիթարը բարձրացավ վանքի պարիսպը, հեռադիտակը դրեց աչքին ու մի կարճ պահ նայեց Արցախից եկող ճանապարհին։ Իջավ պարսպից։

— Դրոշակներ պարզեցեք,— հրամայեց նա։— Գունդը շարեցեք ռազմակարգով։ Գալիս են։

Հարյուրապետները վազեցին նրա հրամանը կատարելու։ Զինվորներն աշխուժացան. յուրաքանչյուրն աշխատում էր լավ երևալ, իր ձիով, զեն ու զարդով արքայական պատվիրակի աչքին ընկնել։

Պատվիրակությունը մոտենում էր արագ։ Երբեմն կորչում էին արահետների ոլորաններում, երբեմն երևում լեռնալանջին։ Վերջալույսից փայլատակում էին նրանց զենքերը, ոսկեկար զգեստները։

Շուտով պարզ նշմարվեց արքայական դրոշակը։ Առաջին անգամն էր հայոց հողի վրա, հայոց երկնակամարում ծածանվում ռուսական դրոշակը, որին այնքա՜ն երազել ու սպասել էր հայ ժողովուրդը։ Պատվիրակությունն անցավ գետը ու սրընթաց մոտեցավ վանքին։

Սպարապետի գունդն առաջ գնաց։ Դավիթ-Բեկի, Հայոց ժողովի, սպարապետական ու մելիքական դրոշակները ծիածանի գույներով բոցավառվել էին զորագնդի գլխամասում։ Վանքի զանգերն անվերջ զողանջում էին։ Զինվորները լուռ էին՝ հիացմունքից ուրախ։ Զլիներ զինվորական կարգը, կաղաղակեին անզուսպ ուրախությունից ու կնետվեին եկողների գիրկը։ Բայց զսպում էին սրտներում կուտակված ուրախությունը։ Արարողության կարգն էր պահանջում։

Մխիթար սպարապետն իջավ ձիուց։ Նույնն արին նաև պատվիրակն ու նրա հետ եկածները։ Արցախի հայոց զորքի գլուխ Հովհաննես-Ավան իշխանը մի բան ասաց պատվիրակին։ Սա երկու քայլ առաջ եկավ ու, իր կողքերից քայլող ռուս սպաներից վերցնելով մի ոլորուն թուղթ, դրեց ճակատին, համբուրեց, ապա կրծքին սեղմելով ռուսերեն ասաց.

— Համայն Ռուսիո մեծ թագավոր կայսր Պյոտր Ալեքսեյիչից բարի եղբայրական ողջո՜ւյն Հայոց աշխարհին, երևելի Դավիթ-Բեկին, զորապետներին, զորքին, հոգևորականներին և առհասարակ ազգին հայոց։

Նրա ասածներն իսկույն թարգմանեցին։

— Փա՜ռք աստվածապսակ թագավոր կայսր Պետր Ալեքսեյիչին,— ոգևորված պատասխանեց սպարապետը։ Զորը դղրդաց ուժգին կանչերից.

— Փա՜ռք, փա՜ռք...

— Բարի գալո՜ւստ մեծ թագավորի մարդուն,— նորից ասաց սպարապետը։— Դու մեր աչքի վրա տեղ ունես, տեր էլլի՛ բեկ։ Համեցիր մեր աշխարհն ու մեզ հետ կիսիր եղբայրության աղուհացը։

Ավշար երեց Տեր-Գասպարը արծաթե սինու վրա աղուհաց մատուցեց պատվիրակին։ Սա արծվաքիթ մարդ էր, բարձրահասակ, ռուսական ձևի մորուքով։ Հագել էր եվրոպական վաճառականի զգեստ։ Զենք չէր կրում։ Աղուհացը ճաշակելուց հետո ասաց.

— Հավիտյա՜ն լինի։

— Լինի՜...— կրկնեցին հայերը։

Հայ մելիքների ու զինվորների վրա շշմեցուցիչ տպավորություն թողեցին այն երկու ռուս սպաները, որոնք ուղեկցում էին պատվիրակին։ Նրանք լայնկա, եռանկյունի գլխարկներ ունեին՝ եզրերին ոսկեթել կարներ, մեջտեղը՝ ջայլամի փետուրներ։ Բաց կանաչ մահուդե կապաների վրա՝ աջ ուսից վար ձգված էին թեզաչափ լայնությամբ վառ կարմիր ատլասե ժապավեններ, որոնց ծայրերը հանգուցված էին ոսկեթել ծոպերով։ Կապաները հազիվ էին հասնում մինչև նրանց ծնկները։ Թևքերը՝ դաստակների մոտից, ետ էին շրջված և պատած էին ոսկեկար դիպակներով։ Ոսկեկար էին նաև նրանց լայն գոտիները։ Ռուսների ոտքերին սպիտակ ու երկար գուլպաներ կային և այնպես կիպ էին նստած, որ նրանց տակից գծագրվել էին ոտքերի ջիլերը։ Երկուսն էլ կարմիր, փնջավոր կոշիկներ ունեին՝ ճտքերը կարճ։ Սպաները բարակ ու սուր բեղեր էին պահում։ Սափրված էին միայն կզակները։ Նրանց լայնեզր գլխարկների տակից իջնում էին ոսկեգույն, գանգուր այտմորուսներ։

Ռուսների թրերի պատյաններն ամբողջովին արծաթից էին՝ կոթերը ոսկով ընդելուզած։ Նրանց կրծքներին վառվում էին բազմաթիվ արծաթե խաչեր, ոսկեգույն կոճակներ։

Հայ մելիքները հառաչեցին։ Երբեք այդպես շքեղ հագնված մարդկանց չէին տեսել։ Հիացմունք էին պատճառում, մանավանդ, ռուսների ուսերից կախված, քամուց ֆոֆռացող կարմիր թիկնոցները։

Սպաներից մեկը պատվիրակի գլխին բռնած պահում էր կարմիր թավշե դրոշակը՝ երկգլխանի արծիվը վրան։ Երկու սպաներն էլ լուրջ թավշե դրոշակը՝ երկգլխանի արծիվը վրան։ Երկու սպաներն էլ լուրջ ու հանդիսավոր էին։ Սակայն նրանք էլ պակաս զարմանքով չէին նայում իրենց առջև կանգնած հայ զինվորներին, որոնք թուխ էին՝ մրի պես, թուխ մորուքներով, դեմքերով, աչքերով՝ սև ու հանդուգն։

---

[1] Դեսպան, պատվիրակ։

— Ահա և քեզ թագավորի մարդիկ,— ասաց Սեմեոնը։— Ամբողջովին ոսկու մեջ են։ Երանի՜ դրանց աշխարհին...

— Բերանիդ ջուրը քեզ պահիր, մա՛րդ աստծո,— հանդիմանեց Սատուրը՝ թեև ինքն էլ ցանկանում էր արտահայտել իր հիացմունքը։

Հետիոտն, հանդիսավոր ու լուրջ մտան վանքի բակը։ Ավշար երեց Տեր-Գասպարը սաղմոս կարդալով՝ գնում էր բոլորի առջևից։

Ներունի վարդապետի հետևից քայլող վանականները բարձր բռնած տանում էին մարգարտակար ծոպերով սրբապատկերներ, գիհի խունկ էին ծխում։ Վարդապետը քայլում էր դանդաղ՝ ձեռքին արծաթե խաչ, որով ստեպ-ստեպ խաչակնքում էր զորքին ու հյուրերին։

Մտան տաճար։ Պատվիրակի ժամանելու առթիվ վարդապետը կարճ մաղթանք կատարեց, հետո նստեցին ճաշի։

Ճաշին մասնակցում էին միայն պատվիրակը՝ իր երկու մարդկանցով և սպարապետն ու մելիքները։ Հարյուրապետներին չհրավիրեցին։ Ուտում էին լուռ։ Տեր-Ավետիսը նստել էր ռուս սպաների արանքում ու անվերջ հյուրասիրում էր նրանց։ Ռուսները դժվարությամբ էին ծամում հայկական լավաշը, ուրցով համեմած խաշած միսը, կանաչ գետադաղձն ու թարմ ջրկոտեմը։ Բայց և հաճույք էին զգում դրանցից։

Առավել խոսում էին Ավշար երեց Տեր-Գասպարն ու պատվիրակը։ Վանահայրը պատմում էր իր հնադարյան վանքի մասին։ Ռուսներին զարմացնում էր, որ հազար երկու հարյուր տարի կանգուն է այդ շենքը, անվնաս են մնացել նրա ներսի որմնանկարներն ու հնադարյան մասունքները։

Արքայական պատվիրակին խիստ տարօրինակ էր թվում, թե ինչու է լռում Մխիթար սպարապետը։ Քաղաքավարության համար միայն, երբեմն, սպարապետը անմեղ հարցեր էր տալիս, որոնք ոչ մի կապ չունեին պատվիրակության ժամանելու հետ։ Պատվիրակը ցանկանում էր ժամ առաջ հայ զորապետներին կարդալ թագավորական հրովարտակը, բայց սպասում էր, որ այդ առթիվ առաջինը խոսք բաց անի սպարապետը։ Սակայն սա լռում էր։

Ճաշն ավարտեցին ուշ։ Մխիթարը վեր կացավ։

— Դժվարին են մեր լեռների ճանապարհները, տե՛ր պատվիրակ,— ասաց նա թարգմանչի միջոցով։— Ծանր կլինի քեզ ու քո պատվարժան մարդկանց համար գիշերային երթը։ Ուստի հարմար է, որ հանգչենք այստեղ, իսկ առավոտյան, աստծով, կմեկնենք Հալիձոր։

— Հաճույքով, տե՛ր սպարապետ,— համաձայնեց պատվիրակը։

Հյուրերին տեղավորեցին վանահոր խցում, որ նախօրոք պատրաստել էին նրանց համար։ Սպարապետը հրամայեց ուժեղացնել պահակությունը և գիշերային հրամանատար նշանակեց մելիք Բարխուդարին։

Ճրագները մարեցին։ Հետզհետե խորին խաղաղություն իջավ Միծեռնավանքի վրա։ Աստղոտ գիշեր էր։ Գետը մռնչում էր վանքի պատերի տակ։ Երբեմն հեռավոր Իշխան Մեծ սարի կողմից երևում էր կայծակի թույլ լուսավորությունը, և ապա մի պահ հետո լսվում էր որոտի խուլ դղրդոց։

* * *

Զագեձորից Պղնձաքար տանող լեռնային արահետը ոլորվում էր անտառապատ ձորերով։ Գիշերվա անձրևից հետո լուսաբացի աստղ լոցած, մաքրված արևը շորացնում էր արահետի սևահողը, ծառերի ոստերը, քարերը։ Գարնանային թարմությամբ էր շնչում լեռնաշխարհը։ Ուրախ համերգում էին ճնճղուկներն ու լորամարգիները։ Առաջին անգամ կչկչում էր մթին թավուտներից ցողաթուրմ բացատը դուրս եկած մոշահավը։ Առուների ու գետակների եզրերին ծլել էր գորշ դաղձը, և նրա բուրմունքից օդը հաճելի ու թեթև էր դարձել։

Արահետն ի վեր, կողք-կողքի, բարձրանում էին ձիավոր Ծամամն ու Ահարոնը։ Նրանց ետևից գալիս էր մի տարեց զինվոր՝ անփույթ նստած չալ ձին։ Ծամամը խենթ ուրախությամբ անվերջ խոսում էր, տեղիանտեղի քրքջում։ Ապա ցատկոտում էր ձիու թամբին, երգում, նորից ծիծաղում անհարկի։ Նրա խենթությունները դուր չէին գալիս Ահարոնին։ Նա բարկանում էր աղջկա վրա։ Սակայն ամոթ էր համարում պատժել մի գեղջուկ աղջկա, մանավանդ, երբ հետը կողմնակի մարդ կար։ Նա գիտեր իրեն հպարտ ու արժանավայել պահել ուրիշների մոտ։ Չէր սիրում, երբ իրեն երեխայի տեղ էին դնում։ Հոր զորապետների հետ խոսում էր մեծավարի՝ օրինակելով Բանդուր-Զաքարիային։ Նրա կարծիքով հայրը ճիշտ չէր անում, երբ զինվորների հետ տնավարի էր վարվում։ Իսկ Բանդուր-Զաքարիան այդպես չէր, նա խիստ էր։ Հենց որ երևում էր զորանոցներում, զինվորներն իսկույն ոտքի էին կանգնում և իրենց ձիգ ու հնազանդ պահում։ Այդպես լավ է։ Իսկ հայրը երես է տալիս։ Նույնիսկ գինի էր խմում երեկվա շրջմոլիկ Եսայու հետ։ Երբեմն քնում է զորանոցում։

Կեսօրին հասան Աղավնո գետի ձորը և հենց այդտեղ էլ հանդիպեցին Միծեռնավանքից վերադարձող զորագնդին, որ հարգ ու պատշաճ բերում էր թագավորի պատվիրակին։

Մխիթարը սաստիկ զարմացավ՝ որդուն ու Ծամամին տեսնելով։ Բարկացավ, նույնիսկ մտրակը բարձրացրեց՝ որդուն հարվածելու հա-

մար, բայց հիշելով պատվիրակին՝ մի կերպ զսպեց իրեն։ Ստիպված ժպտաց ու պատվիրակին հայտնեց, որ դրանք իր զավակներն են։ Այնուամենայնիվ, հասցրեց մի ահեղ հայացքով որդուն ու նրան ուղեկցող զինվորին հասկացնել տալ, որ «ձեր հաշիվները դեռ հետո կտեսնեմ, սպասեցե՛ք»։

Պատվիրակին խիստ դուր եկավ Ահարոնը։ Նրան մոտ կանչեց, թամբից կռացավ, համբուրեց նրա քրտնած ճակատը։ Ապա գրպանից մի արծաթե կլոր նշան հանելով՝ կպցրեց տղայի կրծքին։ Դա Պետրոս թագավորի նկարն էր, որ մեդալիոնի ձևով պատրաստել էին Հոլանդիայում։ Ուրախությունից Ահարոնը խենթացավ ու համբուրեց պատվիրակի ձեռքը։

Ծամամը երկու ձեռքով բռնել էր թամբի կեղն ու բերանը լայն բաց արած նայում էր ռուս սպաներին։ Հանկարծ նա ձին մոտ քշեց ու անսպասելի թռավ սպաներից մեկի գիրկը։

— Ռո՛ւս, ռո՛ւս...— այնպես սրտանց բացականչեց նա, որ բոլորը հուզվեցին։

Աղջիկը կպավ սպայի կրծքին ու ամուր գրկեց նրա վիզը։ Սպան շփոթվեց մի երկվայրկյան, ապա համբուրեց աղջկա ճակատը։ Պատվիրակը ռուսերեն մի բան ասաց։ Սպան հանեց իր լանջախաչն ու գցեց աղջկա վզովը։ Ծամամը համբուրեց նրա այտմորուքը։

— Ռո՛ւս, ռո՛ւս... Բարի՞ն եկար, ռո՛ւս...— շարունակում էր գոչել նա սրտառուչ։ Նույնիսկ սպարապետի աչքերը լցվեցին։ Ոմանք արտասվեցին։ Ավշար երեց Տեր-Գասպարը ձեռքերը կարկառեց դեպի երկինք ու խզված ձայնով գոչեց.

— Տե՛ր, ամենակարո՛ղ աստված, դո՛ւ քո բարեգութ ձեռքն անպակաս անես այս մանուկների գլխից։ Դո՛ւ անբաժան պահիր մեզանից ռուսի եղբայրությունը։

Արդեն ոչ երիտասարդ պատվիրակի աչքերը ևս լցվեցին և արտասուքները թաքցնելու համար ձին առաջ մղեց։ Ծամամը թռավ իր ձիու թամբին ու, մոտենալով եղբորը՝ մեղավոր ասաց.

— Գնում էինք տուն, մութը վրա հասավ, ճանապարհներս մոլորեցինք։

— Ա՜խ, դո՛ւ սատանա պայտող,— գլուխն օրորեց Թովման։—Լա՛վ մոլորվողն ես։ Տեսնես ի՞նչ փորացավ ունես, որ եկել ես այս կողմերը։

Ահարոնը սիրտ չէր անում մոտենալ հորը։ Վախենում էր։ Միայն թե պատվիրակի ներկայությամբ ցուրտ խոսք չասի հայրը, իսկ տանը թեկուզ կապի սյունից ու ծեծի որքան ուզում է։

Ամենից շատ ուրախ էր Ծամամը։ Ուրախ էր այն բանից, որ կատարեց Ահարոնի մտադրությունը, որ ռուս սպան իրեն լանջախաչ նվիրեց, որ պատվիրակը բարի մարդ է։ Ուրախ էր ամեն բանի համար։ Արևը այնքա՜ն պայծառ է, այնքա՜ն գորովալից, որ կարծես օրը չի մթնելու, և երբեք խավար չի լինելու։

Հաճախ անցնում էին գյուղերի միջով։ Ամեն տեղ աղուհացով էին դիմավորում ռուսաց թագավորի մարդկանց։ Մի քանի տեղ ժողովուրդը ձիուց իջեցրեց հյուրերին և ստիպեց խմել մատաղի մսաջուրը, որ արել էին ճանապարհի եզրերին։ Արտակարգ բանուկ ու մարդաշատ էր այդ օրերին Քաշաթաղքից Հալիձոր տանող ճանապարհը։

Առաջին գիշերը մնացին Խոնածախ գյուղում։ Մաղթանք կատարեցին հին եկեղեցում։ Մինչև կեսգիշեր գյուղը չէր հանդարտվում։ Զուռնա էին փչում, ձիախաղեր կազմակերպում, նվերներ տալիս պատվիրակներին։

Առավոտյան դուրս եկան Խոնածախից։ Սպարապետը որոշել էր այդ օրը հանգրվանել Պղնձաքարում՝ մելիք Թուրինջի տանը։ Թովմա հարյուրապետին նա առաջ հղեց՝ պատշաճ պատրաստություն տեսնելու համար։

***

Ռուս սպաների համար ամեն ինչ արտակարգ զարմացուցիչ էր։ Զարմացուցիչ էին հայոց լեռները, որոնք ասես երկնքի կամարները պահում են իրենց գագաթների վրա։ Զարմացուցիչ էին խոր ձորերն ու կիրճերը՝ մեկը մյուսից ահարկու ու անմատչելի։

Ռուսական լայնադիր տափաստանների այդ զավակները Հաշտարխանից ծովով եկել էին մինչև Բաքվի ավազուտները, անցել Մուղանի մեռած դաշտը և միայն Հայոց աշխարհում ոտք դնելուց հետո տեսել իսկական լեռներ, կիրճեր, քարաժայռերի վիթխարի զանգվածներ։ Նրանց խիստ զարմացնում էին հայոց շենները, որտեղ տների մեծ մասը քարաժայռերի մեջ էին ու այնքան բարձր, որ երբեմն արծվի բներ էին երևում նրանց տակ։

Այո, ռուս մարդու համար ամեն ինչ տարօրինակ էր այս երկրում։ Քիչ զարմանք չէր պատճառում նրանց ժայռերի մեջ ապրող թուխ ու հանդուգն դեմքերով ժողովուրդը, պարզ. անկաշկանդ զգեստներ հագած, թավ մորուքներով հայ զինվորները, որոնք համարձակ ասում-խոսում էին իրենց զորապետների հետ։ Զորապետները սիրալիր էին դեպի հասարակները և իրենց զգեստներով քիչ էին տարբերվում զինվորներից։

Ամենուրեք՝ ձորաբերաններում, ժայռերի մեջ փորված քարանձավ-

ներում, գետերի նեղ ափերին, զինված մարդիկ էին երևում։ Անգամ վարուցան անող շինականներն իրենց մեջքներին զենք ունեին։

Մի կիրճով անցնելիս պատվիրակներն ականատես եղան արտառոց տեսարանի։ Ուղղահայաց կտրված ժայռի լանջից ծխեր էին բարձրանում։ Ահագին բարձրության վրա գտնվող քարանձավներից երկար թոկեր էին կախված։ Այդպիսի մի թոկով վեր էր մագլցում մի երիտասարդ կին՝ մեջքին շրով լի պղնձե կուժ կապած, կրծքին մանկական բարուր...

— Այս ժայռի մեջ նախամարդի՞կ են ապրում,— չհավատալով աչքերին՝ երկյուղած հարցրեց ռուս սպաներից մեկը։

Քյոխվա Զալաբին նրա ասածները իսկույն թարգմանեց։ Հայ մելիքները ներողամիտ ժպտացին։ Մելիք Եգանը բռնեց հարց տվող ռուսի ուսը։

— Հապա մի այս կողմն էլ նայիր, ռո՛ւս եղբայր։ Տեսնո՞ւմ ես այն եկեղեցին։ Հին գրեր կարդացող մարդիկ ասում են, թե հազար տարվա շենք է։ Մի նայիր սրա կամարներին ու նախշերին։ Կարծես երկնքից են իջել, մարդու ձեռք չի կպել։ Լավ նայիր...

Հենց ճանապարհի եզերքին կանգնած էր մի փոքրիկ, հրաշակերտ եկեղեցի։ Նրա դռան շրջանակի քանդակները նման էին նուրբ ասեղնագործության։ Զանգակատան կամարները ևս քանդակազարդ էին։ Դռան գլխին ծաղկում էին նոնենու ճյուղը, խաղողի ողկույզը, քիչ հետո՝ թզենու մոտ բառաչում էր առչևի ոտքերի վրա չոքած մի պախրա...

— Հրա՜շք է,— սքանչացած գոչեցին սպաները։

— Հա՛, բա՞, հրաշք է... Եվ այս տաճարն ահա այն ժայռում ապրող մարդկանց ձեռքի գործն է։ Մերոնք նախամարդու շապիկը դեռ Բաբելոնի աշտարակաշինությունից առաջ են հանել։ Սա դեռ ի՞նչ... Բա որ դու Տաթևը, Բղենու Նորավանքը տեսնես։ Դեռ Գառնին ու Էջմիածինը չեմ ասում։ Է՜... եղբա՛յր, աստված հային ամեն շնորհք տվել է, բայց բարի բախտ չի տվել, բա՜խտ...

Երեկոյան դեմ հասան Պղնձաքար։ Շենի ամբողջ բնակչությունը դուրս թափվեց թանկագին հյուրերին դիմավորելու։ Նորից աղուհաց մատուցեցին, ոչխար ու հորթ մորթեցին։ Նորից զուռնայի ու արևմտյան գավառներից բերած պարկապզուկի ձայնը դղրդաց ծերպերում։ Ներոնի մելիք Թուրինջը ուրախությունից կորցրել էր իրեն ու միայն անվերջ ասում էր.

— Գոհանա՜մ քեզ, տե՛ր երկնային, վերջապես ռուսի ոտքը կպավ հայոց հողին...

Ծամամը խելահեղ տարերքի մեջ էր։ Տուն հասնելով՝ թռավ, մտավ ամեն ծակուծուկ։ Կծեց մոր այտը, ընկավ տատի գիրկն ու քաշքշեց

նրա սուրմաները, կամթեց իրենց փոքրիկի ուռած թշերն ու բոլորին գործից գցելով՝ հավաքեց գլխին, պատմեց, թե ինչպես է ինքը համբուրել «ռուս քեռուն»։ Նա բռնեց Ահարոնի թևն ու զոռով քարշ տվեց յուրայինների մոտ։ Ահարոնը մի տեսակ շփոթվեց, քաշվեց գեղջուկ կանանցից։ Նրան համբուրեցին՝ ծոցներից ուրցի ու ժախի հոտ արձակող, դեմքներից ու ձեռքներից նոր թխած հացի ու գաթայի բուրմունք եկող տատիկներ ու մայրիկներ։ Պատանի պղնձաքարցիները երկյուղած նայում էին նրա հարուստ զգեստներին, զենքերին, ծածուկ ձեռք տալիս դրանց։

Գոհարը գորովանքով գրկեց Ահարոնին ու երկար պահեց թևերի արանքում։ Նրա խիստ ու ահազդու աչքերը լցվեցին, բայց նա արցունքները կուլ տվեց։ Կարծես իր դեմը կանգնած էր պատանի Մխիթարը, այն Մխիթարը, որին ինքն առաջին անգամ տեսել էր Գանձասարում, Տրտու գետի ափերին։

Պղնձաքարում բոլորն ուրախ էին թանկագին հյուրերի այցելությունից, բացի երկու մարդուց։ Մեկը մելիք Բարխուդարն էր, մյուսը՝ նրա դուստր Գոհարը։ Տարբեր էին նրանց տրտմության պատճառները։

«Ինչո՞ւ է հանգրվանի տեղը մեր ամրոցն ընտրել,— Մխիթարի դեմ զայրանալով՝ ինքն իրեն հարցնում էր Գոհարը։— Մի անգամ է՞լ է ցանկանում պատժել ինձ՝ իր ներկայությամբ, իր քար լռությամբ ու այրող, բայց և օտարացող հայացքներով։ Ի՞նչ է ուզում ինձանից Մխիթարը։ Ինչո՞ւ չի մոռանում ինձ։ Գիտեմ, եկել է ինձ տեսնելու, ի՜նձ... Թե չէ պատվիրակին ուրիշ, ավելի հարմար տեղ կարող էր տանել գիշերելու»։

Հարսանիքի օրերին թեև Գոհարը վճռել էր ոչ մի անգամ չհանդիպել Մխիթարին, չտեսնելու տալ, չխոսել հետը, նույնիսկ մի թռուցիկ հայացքի չարժանացնել նրան, բայց սիրտը պատռվում էր, և զգում էր, որ անկարող է զսպել հոգու ալեկոծությունը։ Նա սարսափում էր Մխիթարին հանդիպելուց, բայց միաժամանակ ուզում էր, որ հանդիպումը լինի, թեկուզ պատվի ու կյանքի գնով, միայն թե լինի։

Այժմ, երբ Մխիթարն արդեն իր տանն էր, նրա սիրտը քրքրվում էր հազար ու մի կասկածներից։ Երբեմն նրան թվում էր, թե Մխիթարը երբեք իրեն չի սիրել ու միայն իր գեղեցկությամբ հրապուրված լինելով է հետապնդել իրեն ու ապա իր սիրո պտուղները առնելով՝ մոռացել, լքել. ավելին՝ իրեն ամուսնացրել ուրիշի հետ։ Երբեմն էլ համոզվում էր, որ աշխարհում ոչ ոք այնպես սիրել չէր կարող, ինչպես Մխիթարը, ու սաստիկ խղճահարվում էր, արտասվում մենակության մեջ, ինքն իր հետ։

Վիշտը նա տանում էր ուղտի պես լուռ՝ վարպետորեն թաքցնելով շրջապատից։ Ոչ ոք չէր տեսնում, չէր զգում նրա վիշտը։ Գոհարը գիտեր չթաքցնել ամենափոքր ուրախությունն անգամ, և դա ի ցույց էր դնում ամենքին՝ այն տպավորությունը թողնելով, որ ինքը վիշտ ու ցավ չունի...

Այդպես էր անում նաև այժմ՝ բարձր հյուրերի ներկայությամբ։

Պակաս տառապանքի մեջ չէր նաև նրա հայրը՝ մելիք Բարխուդարը։

Խնջույքի սեղան էին բացել մեծ քարանձավում։ Գինուց արդեն սկսել էին մշուշվել Բարխուդարի աչքերը։ Սրտում արյունոտվում էր վիրավորված ինքնասիրությունը։ «Էլի անարգեց ինձ ռամիկի զավակը,— բարկությամբ լափլափում էր նա այս միտքը։— Պատվիրակին անցկացրեց իմ տան մոտով, բերեց այստեղ... Հը՛մ... Անարգե՛ց, բերեց ճրտ մելիքի տունը, որի հացից ռամիկի հոտ է գալիս։ Անպատվություն է, խայտառակություն...»։

Մելիք Եգանը թափահարեց նրա ուսը։

— Խմիր, է՛, տե՛ր Բարխուդար, խմենք ռուսաց թագավոր-կայսեր արևշատության...

Բարխուդարը գավաթը բարձրացրեց ու, դիմելով պատվիրակին՝ բղավեց.

— Միաբան լինենք, ռուսնե՛ր, միաբան ու միակամ։ Այն ժամանակ շահն ու սուլթանը դադար չեն ունենա իրենց գահերի վրա։ Միաբա՛ն...

Խմեց։ Նորից մտքերի քրքրող որդը մտավ գլուխը։ Երբեմն կատաղի հայացքներով էր նայում Մխիթարին։ «Երկա՞ր պիտի հոգիս լափես... Եվ ինչո՞ւ չեմ վերջ տալիս այդ դևին։ Հը՞։ Մի սրվակ հնդկական թույնը բան չարժե... Կամ մի թաքուն արձակած գնդակը։ Ես սպարապետության պատիվը կբերեմ իմ տունը, կբերե՛մ...»։ Նայեց դիմացը նստած մեծ որդուն։ Բութ մռութով, նեղ, մանրիկ աչքերով ու տափակ ճակատով Միհրանը դուր չեկավ նրան։ Նույնիսկ զզվեց։ «Քեռիներին է քաշել շան լակոտը։ Դրանից ի՞նչ սպարապետ դուրս կգա»։

Պատվիրակը նստել էր ցցված, հանդիսավոր, կարծես կացնի կոթ էր կուլ տվել։ Մելիքները հասկանում էին, մեծ տերության մարդը հենց այդպես էլ պիտի պահի իրեն։ Հովհաննես-Ավան իշխանը պատվիրակին պատմում էր, թե ինչպես են ինքն ու Վրաց Վախթանգ թագավորը պատժել լեռնաբնակ շամխալաթներին, որ անվերջ իջնում, հարձակվում էին Վրաց հողի, Թիֆլիս քաղաքի վրա, ավեր անում գյուղերը։

Սպարապետը գինի լցրեց պատվիրակի համար։

— Տրաքվել կարելի է,— ցանկացավ հրաժարվել պատվիրակը։

— Ազնվական գինի է, տե՛ր պատվիրակ։ Անո՛ւշ խում։— Սպարապետը դաշույնով կտրեց պղնձե սինու մեջ դրած խորոված գառան առջևի ոտքը և մեկնեց պատվիրակին։— Խմի՛ր, ճաշակիր, տե՛ր պատվիրակ։ Մենք մեր սիրած թագավորի մարդկանց այսպես կհյուրասիրենք։

— Իսկ եթե նրանք շա՞տ լինեն,— հարցրեց պատվիրակը։

— Թող տասը հազարով գան մեզ հյուր, կկերակրենք, կհագցնենք, ու ոչ ոք ոչ մի բանի կարիք չի զգա։ Թո՛ղ գան։

— Իսկ եթե այդ հյուրերը ցանկանան երկա՞ր մնալ ձեր երկրում։

— Աստված տա։ Թող մնան հավիտյան։ Մենք հյուրից փախչողը չենք։ Մեր ամբարներն ու սրտերը բաց են ցանկալի հյուրերի համար։ Անհոգ եղիր։

Երկուսն էլ հասկացան իրար։ «Նշանակում է հայերը կարող են ռուսական տասը հազարանոց մի զորաբանակ պահել իրենց ծախքերով, այն էլ երկար ժամանակ,— մտածեց պատվիրակը։— Այդպես էլ պետք է գրել թագավորին»։

Թագավորը նրան պատվիրել էր իմանալ՝ արդյոք Հայաստանում պարեն կգտնվի՞ զորքի ու ձիերի համար։

Կերուխումի ժամանակ Բարխուդարն արանք գտավ ու մեն-մենակ հանդիպելով Գոհարին՝ հարցրեց հեգնաբար.

— Ինչպե՞ս ես, դո՛ւստրս։

— Քո բարեխնամ աղոթքներով ողջ-առողջ,— ցրված պատասխանեց աղջիկը։

— Հը՛մ... Երևո՛ւմ է։ Պղնձաքարը դարձրել ես անառիկ բերդ։ Ռամիկ ամուսնուդ ու սկեսրայրիդ խելքի բանը չէ։ Քո արարքն է։ Տեսնո՛ւմ եմ։

— Իրավացի ես, հա՛յր։ Ես եմ ամրացրել մեր բնակատեղին։

— Ո՞ւմ դեմ,— ատամները կրճտացրեց մելիքը։

— Ով թշնամությամբ գա մեզ այցի։

— Ե՛ս կգամ,— կռանալով դեպի դուստրը՝ ֆշշացրեց Բարխուդարը։— Կը-գա՛՛՛ամ... Հեշտությամբ չեք մարսի, չէ՛...

— Արի՛,— գունատվեց մելիքի աղջիկը։— Կընդունենք, ոնց որ հարկն է։

— Ծնկաչո՞ք, այդպես չէ՞...

— Ոտքի վրա, արճիճո՛վ, մահո՛վ, անեծքո՛վ...

— Ո՛ւ...— մռնչաց մելիքը։— Հույսդ նրա վրա է, գիտե՛մ։ Նա էլ չի մարսի, չէ՛... Չե՛մ թողնի։

Մելիք Բարխուդարը թողեց աղջկան ու արագ մտավ խնջույքի սենյակը։ Գոհարը երկար ժամանակ քարացած կանգնել էր տեղը։ Գիտեր

հոր դաժանությունը։ Բայց այդքան լկտիաբար սպառնալուն բնավ չէր սպասում։

— Կապրենք՝ կտեսնենք,— չարությամբ ասաց նա ու նոր միայն նկատեց, որ հայրը հեռացել է...

Գիշերը, երբ բոլորն արդեն փակվել էին իրենց օթևաններում, Գոհարը ծածուկ կանչեց Փոքր Գորգուն։

— Հաճա՞խ են հանդիպում հայրս ու սպարապետը։

— Հաճախ, տիկի՛ն,— գլուխ տվեց Փոքր Գորգին։— Շա՜տ հաճախ։

— Դու ստվերի պես հսկիր քո տիրոջը,— խորհրդավոր շշնջաց Գոհարը։— Աչալուրջ եղիր, զգուշացիր, մանավանդ հորիցս, նրա մարդկանցից։ Լսո՞ւմ ես... Սը՜ս... Ոչ ոք չիմանա։ Դու, միայն դու իմացիր, զգո՜ւյշ եղիր...

Ու հուզմունքից լաց եղավ։

Առավոտյան հյուրերը մեկնեցին։

Այն պահին, երբ սպարապետի զորագունդը պատվիրակի հետ մեկնում էր Հալիձոր, Պղնձաքար ամրոցից, աչքից հեռու մի դետից հեռացող սպարապետին էր նայում Գոհարը։ Արցունքները լվանում էին նրա ձյունաճերմակ դեմքը։

ԼՈՒՅՍԸ ՄԵՐ ՏԱՆ ՄԵՋ

Մեղրի գյուղաքաղաքի շուկայում լուսաբացի քամին փոշի բարձրացրեց։ Փոշու հետ շուկայի բաց դարպասից փողոց ընկավ հյուծված մի շուն, միզեց փողոցի ծռված պատին ու վազեց դեպի գետափ։ Այնտեղ մսագործներն անասուն էին մորթում։ Շունը վազում էր՝ դունչը տնկած, մսի ու թարմ արյան հոտը քթին։ Այնպես էր վազում, կարծես մեկը պարան էր կապել նրա քթին ու թափով քաշում էր։ Փողոցի կեռմանում նա զարնվեց մենավոր մի անցորդի, կլանչեց, ատամները կրճատացրեց, բայց նորից շարունակեց վազել՝ գրգռիչ հոտի կողմը։

Անցորդը, որ թափառական երաժիշտի մեկն էր՝ մի հին, կոտրած, կարկատած սազ մեջքին, նայեց շան ետևից, ծիծաղեց, ախորժակով հորանչեց ու, կիսաբաց կուրծքը քորելով, մտավ շուկա։ Դռան մոտ նըստած մի մուրացկան գլուխը տարուբերում էր։

— Չկծե՞ց... Ա՛յ, ա՛յ, ա՛յ... Ուժ չուներ։ Եթե առաջվա ուժն ունենար՝ կձևեր։

Երաժիշտը զարմացած կանգ առավ նրա մոտ։

— Կուզեիր, որ շունն ինձ կծե՞ր։ Ո՞վ ես, մարդ աստծո։

— Գնա ճանապարհդ,— արհամարհանքով վարից վեր նայելով երաժշտին՝ նետեց մուրացկանը։

— Ես չարությամբ չեմ հարցնում, եղբա՛յր,— շշիշեց երաժիշտը։

— Չարություն տանելու սովոր եմ, կուզես դու էլ արա։ Միայն մի կտրի արևս։ Գնա։

— Բայց տարօրինակ է վարմունքդ,—համառեց երաժիշտը։— Չէ՞ որ մենք վիճակակիցներ ենք։ Ինչո՞ւ չես ցանկանում ասել, թե ով ես դու։

— Ե՞ս,— մռայլվեց մուրացկանը։— Եթե դա քեզ կկշտացնի, ուրեմն իմացիր։ Ես մի ժամանակ առյուծ էի, իսկ այժմ այն շան նման եմ, որ նույնիսկ չկարողացավ պատռել քո փեշը։ Հա՛։ Նա էլ մի ժամանակ ուժեղ էր, ինձ նման տեր ուներ, բուն ուներ։ Հասկանո՞ւմ ես, մարդ, նա հպարտ կանգնում էր իմ ապարանքի բակում և իր հզոր ձայնով ամենին իմաց տալիս, որ ինքն ու ես կանք, ուժեղ ենք։ Հիմա նա էլ ինձ նման անտուն է։ Հա՛, հա՛։ Հացից ու հալից ընկել է։ Քոսոտ է ու թշվառ՝ ինչպես ես, ե՛ս... Ինձ նման զրկված է, և մենք միասին կսատկենք այս փոշու մեջ։ Բայց ի՞նչ եմ ասում, նա ավելի բախտավոր է, նա չի տեսել աստվածների կործանումը, գերության լուծը, նա իր ավերակ բնի վրա է մնացել, մինչև ինձ վերստին գտավ...

— Ախր դու ո՞վ ես,— առավել հետաքրքրվեց երաժիշտը։

— Ե՞ս,— ցնցոտիների մեջ խլրտաց թշվառը։— Ես նա եմ, որին մի ժամանակ դու երազումդ էլ չէիր կարող տեսնել։ Ես նա եմ, որի առջև խոնարհումներ էին անում Սպահանի շահը, Ստամբուլի սուլթանը, Ջենովայի դուքսը։ Ես նա եմ, որի տեսությանը կարոտ էին աշխարհի ամենահարուստ թագուհիներն ու իշխանուհիները։ Մի ժամանակ ես աստված էի, ու մարդիկ երկրպագում էին ինձ։

«Խելքը կորցրած մուրացկան է»,— տխուր մտածեց երաժիշտն ու ձեռքը գրպանը տանելով՝ մի քանի սև դրամ նետեց նրա առջև։

Մուրացկանը գազազեց.

— Ե՛տ վերցրու, թշվառակա՛ն,— աչքերը նրա վրա ոլորելով՝ որոտաց նա։— Ողորմությունդ ե՛տ վերցրու, թե չէ, թե չէ... Ես ողորմության կարոտ չեմ։ Ե՛ս, ե՛ս... Ես տե՛ր եմ, արքա՛ եմ։ Ե՛ս, ե՛ս...— Նա լաց եղավ։

Երաժիշտը ավելի մռայլվեց։ Հասկացավ, որ իր առջև նստածը սովորական մուրացկան չէ, այլ մի խորհրդավոր պատմություն ունեցող թշվառ, ուստի արագ հեռացավ։

Թեև արևն արդեն դիպել էր բարդիների կատարներին ու ոսկեզօծել

նրանց բունն ի վեր ելած խաղողի բաց կարմիր ճյուղերը, բայց շուկան դեռևս դատարակ էր։ Դա մի մեծ քառանկյունի հրապարակ էր՝ շրջափակված մեծ ու մանր կրպակներով։ Դրանցից շատերի դռները մեխած էին, մյուսները՝ կրնկահան բաց, բայց ո՛չ ապրանք կար մեջները, ո՛չ վաճառող։ Շուկան անտանելի կեղտոտ էր։ Աղբակույտերի մեջ սատկած շներ ու կատուներ էին նեխվում։

Մի լքված կրպակի մոտով անցնելիս, երաժիշտը նրա մեջ երկու քնած մարդ տեսավ։ Մուրացկաններ էին՝ կիսամերկ ու բոկոտն։ Մեկը ծեր էր, մյուսը՝ պատանի։ Ըստ երևույթին, հայր ու որդի էին։ Քրքրված մի գլխարկ էր ընկած նրանց մոտ։ Երաժիշտը մի քանի սև դրամ հանեց քսակից և կամաց, որպեսզի քնածները չարթնանան, թափեց գլխարկի մեջ։ Ապա մի խոր հառաչանք դուրս թռավ նրա կրծքից, ու նա հեռացավ։

Շուկայում սկսեցին հատուկենտ մարդիկ երևալ։ Առաջինը եկավ կանաչեղեն վաճառողը։ Էշի վրա երկու կողով էր բարձել նա՝ մեջները թարմ սոխի, կոտեմի, համեմի ու բոխու փնջեր։ Սա բեռն իջեցրեց ու սպասեց գնորդի։ Նրանից հետո երևաց մի կին, մի հին քուրջ փռեց փոշու մեջ, վրան դարսեց չորթանի կլոր գնդեր, ընկույզի խեղեփ, աղած տաքդեղ, բանջարեղենի սերմեր և նստեց փալասի մոտ։ Հետո հայտնվեց աչքի մեկը կույր մի ծերունի՝ շալակին երկու տիկ։ Տիկերն զգուշությամբ ցած դնելով՝ նա խռպոտ գոչեց.

— Գինի՜, լավ գինի՜...

Շների մի մեծ ոհմակ հետևներից գցած եկան մսավաճառները, ապա նպարավաճառները, կոճակ, թել ու ասեղ ծախողները։ Վերջիններս ծույլ-ծույլ նստեցին դատարկ կրպակների առջև ու սկսեցին եռանդով գովել իրենց ապրանքը։

Արևն ընկավ շուկա։ Ճանճերի ու բոռերի երամները պտտվեցին կախան մսերի շուրջը։

Այս ամենը տխուր տպավորություն էր թողնում երաժիշտի վրա։ Նա երկար ման եկավ շուկայում։ Սակայն փակ կրպակներից ոչ մեկը չբացվեց։ Մի ժամանակ նրանց մեջ ակնեղեն, գխտորայծի կաշի, մետաքս ու բամբակե գործվածքներ էին վաճառում։ Իսկ հիմա թափառական շներն ու մուրացկաններն են վխտում միայն։ Մի տխուր ամայություն և մի դառն աղքատություն էր տիրում երբեմնի շեն շուկայում։

— Սո՜խ, սո՜խ...— կոկորդ էր պատռում կանաչի վաճառողը։— Լիճքի սոխ։ Էժան կտամ, եկե՛ք, վերջին փունջն է մնում։

— Միսը պրծավ, հա՜...— կանչում էր մեկ ուրիշը։— Տաք-տաք կոլոլակի մի՜ս։

— Բլի՜թ, բլի՜թ...— կանացի ձայնով բղավում էր զամբյուղն ուսից կախած մի տղամարդ։

Բայց գնորդներ քիչ կային։ Մսի վրայի ճանճերն ավելանում էին։ Մոտիկ թաղված շները հաճախ գզվռտում էին՝ կուրացնող փոշի բարձրացնելով։ Այս ամենին ականատես երաժիշտը գլուխն օրորեց ու քայլերն ուղղեց դեպի շուկայի ելքը։ Մեկը բռնեց նրա թևը.

— Բլիթ գնիր, եղբա՛յր... Աստծո՜ւ սիրուն, գնիր։ Տանու բլիթներ են՝ բրնձով ու կարագով։ Դեռ տաք են։ Վերցրու, համտես արա, հետո գնիր։ Անուշիկներն են։— Նա զոռով մի բլիթ խոթեց երաժշտի բուռը։

— Տուր առանց համտեսի,— ասաց երաժիշտը։

— Քանի հատ,— ուրախացավ բլիթավաճառը։

— Տասը։

— Այ, օրհնվի՜ ճանապարհդ, բարի օտարական,— շշկլվեց բլիթավաճառը։— Առավոտ-առավոտ անուշ մարդու հանդիպեցի։ Գործս աջ կգնա։ Համեցի՜ր։ Ի՜նչ համեղ բլիթներ են... Նմանը ոչ մի տեղ չես գտնի։

Երաժիշտը բլիթների գինը վճարեց, փորձեց մեկի համը։

— Համեղ է,— ասաց,— երևում է կինդ քաղցր ձեռք ունի։

— Է՜... է՜հ,— հառաչեց բլիթավաճառը։— Քաղցր ձեռք ուներ, հա՜... Ունե՜ր։ Հիմի ո՞վ գիտի, ի՞նչ քոսոտ մահմեդականի համար է բլիթ թխում։ Ա՜խ, ա՜խ... Աստված չուզեց, որ մնա...

— Հեռացա՞վ քեզանից։

— Տարա՜ն, եղբայր,— տնքաց բլիթավաճառը։— Աշնանը եղավ։ Լսած կլինես։ Թահմազ Ղուլի Նաղիր խանը շուն Բաթալի Սուլթանի հետ կոխեց մեր Հարսենյաց գյուղը... Կոտորեց, տարավ գերի...

— Հա՜... լսել եմ,— երաժշտի դեմքի վրայով մի տխուր ստվեր անցավ։— Դժբախտություն էր։ Չկարողացա՞ք դեմն առնել։

— Առանք, բայց մի փոքր պատնեշն ի՞նչ կարող էր անել ահագին հեղեղի դեմ, եղբա՛յր։ Խաներն անթիվ զորքով էին եկել... Ա՜խ, անիծվե՛ն։ Մտնելով մեր մեծանիստ ավանը, ամեն ինչ լափեցին, մանրեցին և ոտքի կոխան արին։ Ով գլուխը մի կերպ ազատել է, էլ չի ուզում վերադառնալ ավեր տունը։ Իմ տնից ես եմ մնացել միայն ու մի վեց տարեկան աղջիկ։ Ես այլևս չեմ գնա այնտեղ։

— Իսկ եթե հրաման լինի գնա՞լ։ Եթե օգնե՞ն քեզ։

— Է՜... Բարի՜ մարդ։ Ո՞ւմ ցավն է կտրել, որ մեզ օգնի...— հառաչեց ծանր ցավերից ընկճված բլիթավաճառը։— Հրե՜ն, դարպասի մոտ վեր ընկած այն մուրացկանին տեսնո՞ւմ ես։ Մի ժամանակ նա մեր աշխարհի ամենաբախտավոր մարդն էր։ Հիմա օրվա հացի կարոտ է։ Պարսիկները թալանեցին նրա շեն տունը, արվեստանոցն ավերեցին, զա-

վակներին կոտորեցին, գերեցին։ Ինքն էլ գերվեց երկար։ Աստվա՞ծ գիտի, թե ինչպես է ազատվել եսիրությունից. հարցնում ենք, պապանձվում է։ Մի երկու օր է, ինչ, ո՞վ գիտի, որպիսի՞ տառապանքներով հասել է այստեղ։ Աստծով փրկվեց փոքր տղայի հետ միասին։

— Ի՞նչ մարդ է։

— Պատկերահան Նաղաշ Հակոբն է։ Մեծ բանաստեղծ Նաղաշ Հովնաթանի որդին։

— Մի՞թե։

— Այո, երաժիշտ եղբայր։ Ձեռքը ոսկի է, սրա պատկերները հմայում են նայողին։ Նկարները վառեցին, արվեստանոցն ավերեցին, դրանից էլ խելքը կարծես մի փոքր պակասել է։

— Է՛, հե՛...— գլուխը տարուբերեց երաժիշտը։— Խե՜ղճ մարդ։ Անունը լսել եմ։ Բայց, սպասի՛ր, բարեկամ, Հարսենյաց գյուղն է թշնամու ճանկն ընկել, թալանվել։ Մեղրին էլ, փա՜ռք աստծո, հրես շեն է, ապա ինչո՞ւ է այս շուկան այսպես ամայի։ Ինչո՞ւ են վաճառականների կրպակները փակ, դատարկ։

— Խոշաները առևտուր չեն ուզում անել։

— Ապրանք չունե՞ն,— հոնքերը կիտեց երաժիշտը։

— Ունեն։ Վախենում են հանել շուկա։ Պահում են։ Հարցրու Նաղաշ Հակոբին, նա կասի։ Նա մի ժամանակ մեծատների ցանկալի այցելուն էր։

— Է՛հ, իմ ի՞նչ բանն է,— երկարածորեց երաժիշտը։— Դե, մնաս խաղաղությամբ, եղբա՛յր, գործիդ հաջողություն։

— Բարի երթ,— պատասխանեց բլիթավաճառը՝ գոհ, որ միանգամից տասը բլիթ վաճառեց։

Թափառական երաժիշտը մի փոքր էլ ման եկավ շուկայում, փերեզակներից թել ու ասեղ գնեց ու դիմեց դեպի դարպասը։

* * *

Մեղրի գյուղաքաղաքը ձորի մեջ էր՝ լերկ ժայռերի արանքում։ Ձորում կանաչ այգիներ կային՝ ծառավոր խաղողով, իսկ վերև՝ ժայռոտ լեռնալանջերով ձգվում էր մեծ պարիսպը։ Ձորը շրջափակող բարձունքների վրա մարտական աշտարակներ էին շինված, որոնք հսկում էին ձորի մեջ կուտակված գյուղաքաղաքը։ Մեղրին հեռու չէր Արաքսից։ Նրա այգիները հասնում էին մինչև միշտ պղտոր ու աղմկոտ գետը։ Իրար վրա կուտակված տները նման էին հնադարյան միջնաբերդի։ Փոքրիկ, ժայռերեն բակերում թզենիներ ու նռենիներ էին տարածված։ Գյուղաքաղաքը երկաթե մի ամրապինդ դարպաս ուներ միայն, որ գտնվում էր Արաքսի կողմը թեքված ձորաբերանում։ Այդ դարպասն օր ու գիշեր պաշտպանում էին գյուղաքաղաքի կայազորի զինվորները։

Երաժիշտն անցավ նրանց մոտով։ Զինվորները շոր ընկույզ էին ջարդում, ծամում ծուլորեն։ Մի ուրիշ տեղ կրակի վրա Արաքսի լոքո էին խորովում։ Ոչ ոք բանի տեղ չդրեց թափառական երաժշտին. թեև սա կուզեր մի փոքր զրույցի բռնվել նրանց հետ։

Ձորով անցնող գետակի կապույտ ջրերում մեղրեցի հարսները գորգեր էին լվանում։ Զինվորները սրամիտ խոսքեր էին շպրտում մերկ սրունքներով ջրի մեջ մտած հարսներին։

Երաժիշտը մտավ մի նեղ փողոց։ Թեև Մեղրիում տներն անկանոն էին ու խառնափնթոր, սակայն փողոցներն ու բակերը զարմանալի մաքուր էին։ Դրսի պատերը ներկված էին սպիտակ կավով։ Սալարկ մայթերի երկայնքով ուրախ քշշում էին առուների ջրերը։ Կանաչ ներկած դարպասի առջև նստած մի պառավ ձեռքը մեկնեց երաժշտին։ Սրան թվաց, թե պառավը ողորմություն է խնդրում։ Սակայն պառավի բուռը լիքն էր ընկույզի խեղեփով ու շոր թթով։

— Վերցրու, օտարական ես երևում, զավա՜կս,— կերկերուն ասաց պառավը։

Երաժիշտը վերցրեց շոր միրգը, շնորհակալություն հայտնեց ու գնաց։ Մի տեղ կաշի էին դաբաղում։ Ծանր հոտը տարածվել էր շորս կողմ։ Ներկարարի արհեստանոցի առջև ահագին ամբոխ էր հավաքվել։ Պատի տակ, շոր գետնին նստել էր մի երիտասարդ գուսան ու եռանդով երգում էր.

«Կարմիր երես նման վարդի,
Ինչպես ծաղիկ ծաղկազարդի...»։

Թափառական երաժիշտը հիշեց Թիֆլիսի խնջույքները։ Շուռթեցի Նաղաշ Հովնաթանն իր երգերով արբեցնում էր վրաց թավադների ու հայ վաճառականների խանումներին։ Ինչքա՜ն են միասին խրախճացել հանգուցյալի հետ։ Նրա համար անսպասելի հայտնություն էր Հովնաթանի որդի Հակոբը։ Թեև լսել էր, որ Հակոբը նկարիչ է, բայց երբեք չէր տեսել նրան, չգիտեր, որ նա ապրում էր Սյունիքում։ Դառնացավ՝ նրա հետ պատահած դժբախտությունն իմանալով։

Երաժիշտը ճանապարհը ծռեց՝ քաղցր հիշողությունների հետ գեթ մի պահ մենակ մնալու հույսով։ Հիշեց։ Նաղաշը մի խնջույքում արտակարգ եռանդով երգեց այդ երգը.

«Ես՝ Նաղաշս մեղաց ծով եմ,
Նոցա սիրովն գինով եմ...»։

Խանումները շունչները պահած լսում էին։ Եվ ահա Վախթանգ թագավորի ազգականուհիներից մեկը՝ մի մանկամարդ գեղեցկուհի, չհամբերեց, մատանիներով ծանրացած ձեռքերը տարավ աչքերին ու հեկեկաց...

Դրանից էլ սկսեց ուռչել բամբասանքի ու այպանման կծիկը։ Վախթանգը Նաղարշին հեռացրեց պալատից։ Այնուհետև երաժիշտը չի հանդիպել նրան։ Միայն վերջերս է իմացել, որ դժբախտ բանաստեղծը վերադարձել է իր հայրենի գյուղաքաղաք Շոռոթն ու մահացել այնտեղ։ «Պետք է մի անգամ գոնե այցի գնալ նրա գերեզմանին։ Շիրիմ ունի՞ արդյոք Նաղարշը։ Եթե ոչ, պետք է կառուցել»։

Գուսանի նոր երգը հասնում էր նրա ետևից.։

«Ասիս Մասիս լեռներդ ի վար,
Հո՜, որ ոսկի կալ կկուտեն։

Թուխ, ամ դու տուր հատ մի կալեդ,
Թե չէ՝ առնում պաք մ'երեսեդ»։

Զարմանալի լավ էր երգում երիտասարդ գուսանը։ Մի դարպասի արանքից երկու մանկամարդ կին հանել էին իրենց գլուխները ու զմայլված ականջ էին դնում գուսանի երգին։ Մի պառավ վերևից գոռաց.

— Կռապաշտ, հեթանոսի ձայնին եք մալո՞ւմ, ծամը կտրածներ։ Տուն եկեք։

Մանկահասակ կանայք ետ քաշվեցին։ Ի՞նչ հրաշալի աչքեր ունեին նրանք։ Երաժիշտը միայն մի վայրկյան տեսավ նրանց աչքերը, ճերմակ պարանոցները, այտերի խալերը։

«Է՜հ,— հառաչեց նա,— կյանքս անցավ առանց կրակի»։

Եկեղեցու մոտ, այնտեղ, ուր մեծ պարիսպը ծունկ էր տալիս ու շեշտակի բարձրանում դեպի լեռը, մի գորշ ապարանք կար՝ բարձր պարիսպներով, երկաթե ծանր դռնով։ Կիսաբաց դարպասից երևում էին տան նեղ պատուհանները, բակը, որտեղ արդեն բազմաթիվ ձիեր էին կապված։ «Եկել են»,— եզրակացրեց երաժիշտն ու քայլերն արագացրեց։

Դարպասի մոտ մեկը կտրեց նրա առաջը։

— Ո՜չ հարսանիք է, ո՜չ կերուխում, ո՞ւր ես գնում, ե՛տ,— ասաց չարությամբ։

Բայց երաժիշտը հրեց նրան ու գնաց՝ առանց ետ նայելու։ Մաքուր ավլած բակում տակառ-թաղարների մեջ նարինջի ծառեր կային։ Ոսկեգույն նարինջները կախվել էին բարակ ճյուղերից ու ասես հիմա հասած տանձերի պես կընկնեն ու կփլվեն սալաքարերին։

Դարպասապահը, որ մի պահ շշկլվել էր, վազեց, թաղարների մոտ կտրեց հանդուգն երաժշտի ճանապարհը։ Գոռաց՝ բռունցքները տնկելով, բայց իսկույն ետ-ետ գնաց։ Անտանելի էր անկոչ հյուրի հայացքը։ Պատշգամբում երևաց տանտեր Կոստանդին զորապետն ու արագ իջավ հյուրին ընդառաջ։

— Հույս ունեմ, որ ոչ ոք չճանաչեց քեզ, տե՛ր Դավիթ-Բեկ։

— Եկե՞լ են,— հարցրեց ծպտված Դավիթ-Բեկը։

— Հրամանիդ են։

Բեկն արագ բարձրացավ քարե սանդուղքը, շրխկոցով բացեց մի դուռ ու ներս մտավ։ Վրայի սաղն ու զգեստները պոկեց, նետեց մի կողմ։ Շուռ եկավ դեպի Կոստանդինը, որ ձեռքերը կրծքին մնացել էր շեմքին։

— Շուկայի դռան մոտ մի մուրացկան կա։ Հասցրու ինձ։ Խոջանեերից ոչ ոք չպիտի տեսնի նրան։ Գնա,— ասաց չոր-չոր, տնքաց ինչ-որ ծանր հոգսից, ապա հրամայեց սառը թան բերել։

* * *

— Բլի՛թ... բլի՛թ... շուկայով մեկ գոռում էր բլիթավաճառը։

Հանկարծ փողոցի սալահատակը դղրդաց ձիերի սմբակներից։ Երկրի ապավեն գնդի մի խումբ զինվորներ խուժեցին շուկա։ Բլիթավաճառը ձայնը կտրեց։ Զինվորները ցած թռան ձիերից, մոտեցան գետնին նստած Նաղաշ Հակոբին։ Սա ցասկոտ նայեց նրանց։

— Հեռո՜ւ...— բղավեց անհույս ու ձեռքով սկսեց պաշտպանվել։— Անաստվածնե՛ր, պարսիկնե՛ր... Ո՞ւր եք քաշում ինձ, ո՞ւր։

Նրա ճիչը թռավ շուկայով մեկ։ Կանաչի ծախողները փախան։ Սերմավաճառ պառավը հապշտապ հավաքեց առջևը փռած լաթն ու ծլկեց... Մսավաճառներն արագ կողպեցին կրպակները։ Բլիթավաճառը իրեն գցեց սրանց կրպակը, նախքան դուռը կփակեին։

— Նաղաշ Հակոբին տարան,— հևաց նա։

— Ի՞նչ մեղք է գործել թշվառը,— դողդոջ հարցրեց մի մսավաճառ։

— Երևի թաքցրած ոսկի ունի կամ, ով գիտի, լրտես է... Մեղա՜ քեզ,— պատասխանեց մի ուրիշը։

— Սո՜ւս, մեղք ես անում,— դողաց բլիթավաճառը։— Առավոտ կանուխ այստեղ մի թափառական երաժիշտ երևաց։ Տասը բլիթ առավ։ Ինչի՞ն էր պետք այդքանը։ Մութ արարած էր երևում, աստված հեռու պահի։ Այս բանում նրա մատը խառն է, մորս գերեզմանը վկա։

— Որ քիչ լեզվիդ տաս՝ գլուխդ հանգիստ կլինի։

Նաղաշ Հակոբը գոռում էր, դիմադրում զինվորներին։ Նրա շունը կատաղի հաչում էր։ Մտրակով խփում էին, բայց շունը չէր հեռանում իր թշվառ տիրոջից։ Քրջով խոցեցին Նաղաշի բերանը, դրին ձիու վրա ու տարան։ Շունն աղեկտուր կլանչելով հետևեց տիրոջը։

Զորանոցի բակում միայն մուրացկանի բերանից հանեցին քրջերը։

— Վժժոցդ կտրի՛ր,— նրան ասաց մի տասնապետ։— Քեզ վտանգ չի սպառնում, և տանում ենք մեր տիրոջ մոտ, հասկացիր։

— Ծանակդ հորդ համար պահիր, դեղնամոռ՛ութ,— չհավատաց, գոչեց Նաղաշը։— Թագավորներն ու իշխանները վաղուց են թքել ինձ պես թշվառի վրա։

Նրա զգեստները կարդի բերին, մի կերպ հասկացրին, որ իրեն ոչ մի վատ բան չի սպասվում, ապա ծածուկ տարան Կոստանդին զորապետի ապարանքը։

Դավիթ-Բեկն արդեն փոխել էր զգեստները։ Ապարանքի բազմաթիվ կամարներից մեկի տակ կանգնած՝ նա խոսում էր Սյունիքի խոջաների համքարության ավագ, Ագուլիսի պարոնտեր մելիք Մուսու հետ։ Սա գլխաբաց էր, սև մորուքը կրծքին։ Խիստ կարճահասակ էր երևում պարթև Բեկի մոտ։ Նա կապույտ կապա ուներ հագին՝ փեշերը մինչև հատակի սալերը։ Կարմիր, լայն գոտուց կախված էր բազմահատիկ համրիչը։ Գլուխը լերկ էր. կլոր սեխի պես՝ վրան քրտինքի մանր կաթիլներ։

Դավիթ-Բեկն ասում էր.

— Պետք է վերսկսել խափանված առևտուրը։ Ահա իմ կամքը։ Դու համքարության ավագն ես, դու պիտի գլուխ բերես դա։

— Քարերի՞ առևտուր անենք, տե՛ր Դավիթ-Բեկ,— կմկմաց մելիք Մուսին։— Ապրանք չունենք, ամեն ինչ տարան։ Հիմա քամին է խաղում իմ ամբարներում։

Նա սկսեց տխուր գույներով նկարագրել այն դառն աղքատությունը, որի մեջ էին ընկել վաճառականները՝ պարսից դեմ մղած պատերազմների, Ստամբուլի ու Սպահանի առևտրական ճանապարհների խափանման հետևանքով։

Բեկը վերևից էր նայում այդ կարճահասակ, ճաղատ մարդուն, ու նրա մեջ անզուսպ ցանկություն էր առաջանում թքել նրա կլոր դեմքին, նրան վայր գցել ու ոտնահարել... Բայց չէր անում, լավ իմանալով, որ երկրի ամենահարուստ այդ մարդը միայն կարող է վերսկսել առևտուրը ու Հայոց ժողովի գանձարանին առատ հարկ տալ։ Նրան հլու-հնազանդ են հայ վաճառականները, նրա հետ հաշվի են նստում եվրոպացիք, նրա

քարավաններին անվտանգ ճանապարհ էր տալիս անգամ թուրքական սուլթանը։

— Քո նախնիներն առևտուր են արել Լենկ-Թեմուրի հետ, Ջհան շահի գանձարանը նրանք են լցրել, Շահ Աբբասը նրանցով էր հարուստ, էլ չեմ ասում Ջենովան, Ստամբուլը, Հաշտարխանը, որտեղ քո նախնիները մետաքսի ու ակնեղենի կրպակներ ունեին։ Աշխարհի բոլոր պետություններին օգնել եք դուք՝ հայ վաճառականներդ, իսկ հիմա, երբ արդեն մենք մեր իշխանությունն ունենք, զլանո՞ւմ եք վերականգնել առևտուրը... Զգուշացի՛ր, մելի՛ք Մուսի...— Եվ առանց պատասխանի սպասելու մտավ իրեն հատկացված սենյակը։

Այդտեղ արդեն նրան էր սպասում Նաղաշ Հակոբը։ Բեկը երկար զննեց թշվառին, որ տակավին ուշքի չէր եկել անակնկալ կատարվածից ու զարմացած նայում էր երկրի գահերեց զորավարին։ Բեկը դանդաղ մոտեցավ, բռնեց Նաղաշի ձեռքը, բարեկամաբար թափահարեց։

— Ճանաչեցի՞ր ինձ, Նաղաշ Հակոբ։ Մենք այսօր հանդիպել ենք։

— Ես քեզ առաջին անգամն եմ տեսնում։ Եվ կկամենայի իմանալ, թե ո՞վ ես դու։

— Ես Դավիթ-Բեկն եմ։

— Մի՞թե,— սաստիկ զարմացավ նկարիչը ու իր խոշոր, քննախույզ աչքերը հառեց նրա վրա։— Ես կարծում էի, թե վերջապես կա մի իշխանավոր, որ գութ ունի ու բարությամբ կվարվի թշվառների հետ։ Երևում է, որ սխալվել եմ։

— Ինչո՞ւ,— անհանգստացավ Բեկը։

— Դու ինձ կապանքներով բերիր քո դուռը։ Քո զինվորները վայրենի են։ Դու բռնություն գործ դրեցիր, թեև Դավիթ-Բեկն ես։ Այո, դու Դավիթ-Բեկն ես, բայց չպիտի մոռանայիր, որ ես էլ Նաղաշ Հակոբն եմ։ Ես եմ, որ կարող եմ անմահացնել հողի երեսին սողացող մահկանացուներին և ոչ թե բռնությունն ու սուրը, զորավարի անունը։ Դու չէ, զորավար գահերեց, որ բռնություն պիտի գործածեիր թշվառիս վրա։ Ես քո մասին լսել եմ ցանկալին, այն, ինչով պետք է մարդը վեհ լինի։

— Դու ներող եղիր, Նաղա՛շ,— սաստիկ նեղվելով՝ խնդրեց Բեկը։— Իմ զինվորները տեղյակ չեն եղել, որ քեզ են բերում ինձ մոտ։ Այդ ամենը լոկ տխուր թյուրիմացություն է։ Ես ուրախ եմ, որ պրծել ես գերությունից։ Ես լսել եմ քո համբավը, գիտեմ, թե ինչի ես ընդունակ դու։ Ես բարձր եմ գնահատում քո ձեռքից ճառագող լույսը։

— Առավել ուրախալի,— մեղմ ժպտաց վիրավորված, տառապած նկարիչը։— Եթե իրոք քո մեջ սեր կա դեպի գեղեցիկն ու վեհը, մի բան, որ բացակայում է թագակիրների մոտ, ապա ներում եմ արարքդ։ Հենց

այն բանով, որ ինձ նման մի թշվառի խոսակից ես արել քեզ, ուրեմն մեծ ես և բարձր իմ տեսած ու նկարած իշխաններից ու թագավորներից։

— Ես թասակից եմ եղել քո հոր՝ մեծ Նաղաշ Հովնաթանի հետ։

— Որ մեռավ թշվառության մեջ, աքսորական, երբ դու արդեն տեր էիր,— հառաչեց Նաղաշ Հակոբը։

Դավիթ-Բեկը փոքր-ինչ շփոթվեց։

— Աստված է վկա, որ տեղյակ չեմ եղել,— ասաց մեղավոր։—Այն օրերին վտանգներով լի էր մեր աշխարհը։ Հիմա ես ամեն ինչ կտայի, եթե հայրդ ապրեր։

— Ուրախանում էր քո սկսած գործով,— շշուկով խոսեց Հակոբը։— Երազում էր նորոգված տեսնել հայոց իշխանությունը։ Կամենում էր աջակից լինել քեզ, սակայն մահն ավելի շուտ հասավ նրան, քան դու։

— Հոգին լույս,— ջերմությամբ ասաց Բեկը։— Սակայն տրտմությամբ ոչինչ անել չենք կարող այլևս։ Մեծ Նաղաշը գնաց, դու մնացիր։ Մխիթարանք է մեզ։ Լսել եմ գլխիդ եկած աղետի մասին։ Մոռացիր, արի մարդ, և օգտակար եղիր ազգին հայոց։ Ես կօգնեմ քեզ, որ դու վերաշինես քո ավերված գործատունը, պատկերահանության գործը սովորեցնես ուրիշներին։

— Տարօրինակ բարություն,— ինքնամոռաց ասաց Նաղաշ Հակոբը, որ անվերջ նայում էր մի կետի։

— Դու ևս պետք է օգնես ինձ։

— Մուրացկանն ինչո՞վ կարող է օգնել երկրի տիրոջը,— գլուխը բարձրացրեց նկարիչը։

— Մոռացիր անցածը, մեծ մարդ,— փոքր-ինչ պահանջկոտ առաջ տարավ Դարիթ-Բեկը։— Մեծ է կորուստդ, գիտեմ։ Բայց դու մնում ես նույն Նաղաշը, դու հայրենիք ունես, որ օտարներից անկախ է այլևս, և ժողովուրդ ունես քո թիկունքին։ Մխիթարվիր դրանցով։ Դեն նետիր վշտի բեռը։ Ես կօգնեմ, որ դու նորից գործատուն ունենաս, որ քո անունը նորից պատվով տան մեր աշխարհում։

— Մի՞թե լինելին ես մտածում, տե՛ր գահերեց,— անվստահ հարցրեց Նաղաշը՝ նորից սևեռուն նայելով Բեկին։

— Ես ջրի վրա սերմ գցողներից չեմ,— պատասխանեց Բեկը։

— Ուզում եմ հավատալ,— մեղմ ասաց նկարիչը։— Սակայն ամեն ինչ երերուն է այս աշխարհում։ Իմ հայրը չէ՞ր, արդյոք, որ պալատներ էր ծաղկում ու իր երգերով հմայում արքաներին։ Նա չէ՞ր, որ էջմիածնի մեռած պատերին շունչ ու կենդանություն տվեց։ Ի՞նչ արին նրա հետ։ Նրան պալատից վտարեցին հետին մուրացկանի պես և մեռավ կարի-

քից ու ցավերից։ Հավատալին անհավատալի է դարձել այլևս, շատացել են լույս մարողները։

Բեկը սրտահաճ խոսքերով սկսեց մխիթարել նրան, հուսադրել՝ նրա ծանր դժբախտությունը մոռանալ տալու համար։ Նաղաշն ականջ էր դնում նրան՝ հայացքը պատուհանից երևացող լեռներին, աչքերի մեջ թախիծ ու կորցրած հույս։ Երկար ժամանակ նա չէր հավատում լսածներին։ Անհետ կորած էր համարում իր վաղեմի անունն ու փառքը և խնդրում էր Բեկին՝ իրեն ազատ արձակել։

— Թող շարունակեմ քարշ տալ կյանքիս մնացորդները ինձ համար ազատ, անկաշկանդ։ Ազատ թշվառությունն ավելի հաճելի է, քան ստրուկ լինելով անվան ու հարստության տեր լինել։

— Կամքը քոնն է,— հուսահատ ասաց Դավիթ-Բեկը։— Բայց ես բնավ չէի կարծում, որ մեծ Նաղաշի որդին այդքան նեղսիրտ կլինի ու կհրաժարվի ծառայել իր ժողովրդին ու հայրենիքին։

Այս խոսքերը սաստիկ վիրավորեցին Նաղաշ Հակոբին, սակայն զգալով, որ արդարը գահերեց զորավարն է՝ լռեց։ Բեկը նորից սկսեց համոզել նրան, որ նա ուշքի դա կատարված դժբախտությունից ու ձեռնարկի պատկերահանության գործը։ Նա խոստացավ նրան օգնել ամեն ինչով։

— Մի՞թե հաճելի չէ քեզ, Նաղա՛շ Հակոբ, որ դու մեզանում նորից կենդանացնես հայ ժողովրդի ծաղկելու, պատկերահանելու արվեստը։ Աշակերտներ ունենաս, կորստյան չմատնես հորդ հիմնածը։

Երկար լռությունից հետո Նաղաշն ասաց.

— Բարին ես կամենում, տե՛ր մեր։ Փորձենք, մտածենք։

— Մտածիր։ Ես պատրաստ եմ աջակից լինելու քեզ։

Նկարիչը հասկացավ, որ մի անգամ էլ է բախտն օգնության գալիս իրեն։ Հիշեց որդուն, իր ավերված տունն ու արվեստանոցը։ Ներսում գլուխ հանեց, խլրտաց ստեղծելու ոգին, որ վիրավոր էր, բայց ոչ մեռած։ Նա նայեց Բեկին։ Այնքա՜ն բարություն կար Բեկի դեմքին, որ մեղք կլիներ չհավատալ նրան։

— Կմտածեմ, տե՛ր Դավիթ-Բեկ,— նորից ասաց նա։— Ես հավատում եմ քեզ։

* * *

Բեկը գնաց խորհրդի հրավիրված խոջաների մոտ։ Խոջաներ էին եկել Ագուլիսից, Դաշտից, Քաղաքիկից, Դիզակից։ Ներս մտած Բեկին տեսնելով՝ բոլորն իսկույն մեջքները ծալեցին։ Այդտեղ էին նաև Մեղրու զորապետներ Կոստանդինն ու Սարին։

Բեկը նստեց գահավորակին։ Ձեռքերը դրեց փղոսկրե բազկակալներին։ Ձսպանակները ճռճռացին։ Ատենադպիր Մաղաքիային նշան արեց, որ նստի իր կողքին՝ ցածրիկ սեղանի մոտ։ Խոջաները պապանձվել էին, նույնիսկ թարթիչները չէին շարժում։ Սիրտ չէին անում Բեկին նայել։ Յուրաքանչյուրն ուզում էր աննկատելի մնալ։ Հիշում էին Մուսու խոսքերը։ «Ձլսել Բեկին. այս խառնակ օրերին ամբարներդ բաց չանեք։ Բեկը մեզ կթալանի, ետին մուրացկանության կհասցնի»։ Պղինձ Արթինը տեղ չէր գտնում ձեռքերը պահելու։ Սոսկում էր, երբ հիշում էր իր տանը կատարված դեպքը։ «Ո՞ր աստվածն է այս մարդուն այսքան կորով տվել,— մտածում էր Բեկի մասին։— Դևի ուժ ունի ու օձի խելք։ Տերն ազատի նրա բարկությունից»։

— Ականջ արեք, պատվարժան խոջաներ,— ծանր սկսեց Բեկը։ Թեև ձայնը ցածր էր, սակայն զնգաց պողպատի պես։ Ապա մի հայացքով ընդգրկեց իր դիմացը նստածներին և շարունակեց նախկին ձայնով.

— Հիմա, փա՜ռք աստծո, մեր աշխարհը անկախ ու ազատ է։ Մենք մեր օձիքը պոկել ենք պարսիկներից։ Բայց, պարոննե՛ր, երկիրը մեծ կարիքի մեջ է։ Հայոց ժողովի գանձարանը դատարկ է։ Զորքին պետք է կերակրել, ռոճիկ տալ, զենք գնել։ Ի՞նչ եք ասում։ Չե՞ք կարծում, արդյոք որ ժամանակն է վերսկսել առևտուրը օտար երկրների հետ։ Խոսեցե՛ք։

Նա ոտքը ոտքի վրա գցեց։ Լսվում էր բաց պատուհանից ներս ընկած մեղվի բզզոցը։ Խոջաները լուռ էին։ Սպասում էին, որ հարևանը խոսի։ Խոջայական համքարության ավագ մելիք Մուսին գլուխը կախել էր։ Փորձված, աշխարհներ տեսած ու հազար սեղանից հաց կերած այդ մարդը հասկանում էր, որ ամեն պատճառաբանություն հակառակ կլինի երկրի տիրոջ կամքին, Բեկը առարկություն չի ընդունի և թշնամաբար կլցվի իրենց դեմ։ Նա համարձակվեց գլուխը բարձրացնել ու նայել Բեկին։ Սա համառորեն նայում էր իրեն։ Մելիք Մուսին սարսռաց նրա հայացքից։ Ճար չկար, պետք է ինքը սկսեր։

— Թող հայտնի լինի մեր գլխի տիրոջը, որ մենք մեր կյանքն ու հարստությունը չենք խնայել հայոց երկրի համար,— ասաց հանդիսավոր։

— Ձենք խնայել,— լեզու առան մյուսները ևս։— Աստծուն է հայտնի, որ չենք խնայել...

— Մեզնից շատերը կռվել են քո գնդի մեջ, տե՛ր Դավիթ-Բեկ,— մի փոքր ոգևորվեց մելիք Մուսին։— Մենք վաճառական մարդիկ ենք, մեզ համար առևտուր անելը հաց ու ջրից թանկ գործ է։ Բայց ի՞նչ անենք, տե՛ր։ Ի՞նչ է մնացել մեր ամբարներում, որ խնայում ենք։ Մետաքս

չկա, բամբակ չկա, կաշի չկա։ Գործատները փակվել են։ Մելիքները բուրդ չեն վաճառում։ Ինչո՞վ սկսենք առևտուրը։

«Աղվե՛ս, խաբեբա, կարծում ես տեղյա՞կ չեմ ձեր հարստություններին»,— մտածեց Դավիթ-Բեկը՝ շարությամբ նայելով աստծու անունով երդվող մելիքին։

— Դու ի՞նչ կասես, խոջա՛ Մկրտում,— մելիք Մուսուն ընդհատելով՝ դիմեց նա բարձրահասակ, չոր-չոր մի խոջայի։

— Ես էլ մի թել ապրանք չունեմ, աստվա՜ծ է վկա,— տեղը ծառս լինելով՝ աղաղակեց խոջա Մկրտումը։— Ձենք թաքցնում, մեր որդկերանց արևը, աստծուն պարտական կմնանք։

Մյուսները ևս երդվեցին աստծու անունով, որ ոչինչ չունեն առևտուր անելու համար։ Արդեն համբերելու տեղ չկար։ Բեկը կապտել էր։ Նրա աջ այտը խաղում էր, շրթունքներն սպառնագին սեղմվել էին։ Ատենադպիր Մեղաքիան զգում էր, որ հիմա փոթորիկ կլինի։

— Դավաճանե՛ր,— որոտաց Բեկն, ու նրա ձայնից դողացին սրահի բազմաստեղն ջահերը։

Խոջաները զարհուրեցին. ոմանք նայեցին դռան կողմը։ Պատժից փախչելու միտք խուժեց գլուխները։ Մելիք Մուսու գույնը դարձավ պատի ծեփ։ Թեև նրանք շատ բան էին լսել Դավիթ-Բեկի անողոքության մասին, բայց չէին կարծում, որ նա այդպես կայլակերպվի։ Մի քանիսը չոքեցին, մյուսները նույնիսկ ուժ չունեցան այդ անելու։

— Ձինվորնե՛ր,— ձեռքը դեպի ելքը մեկնելով՝ գոչեց Դավիթ-Բեկը։

Կոստանդին ու Սարի զորապետները դուրս թռան։ Խոջաների լեզին պատռվեց։

— Ոչքի եկ, տե՛ր Դավիթ,— կամաց ասաց ատենադպիր Մաղաքիան։

— Խաբում եք՝ հետին ստահակների պես,— գոռաց Բեկն ու ոտքը խփեց գետնին։

— Ո՞վ է մեր տերության հպատակ մելիք Մուսին, ո՞վ է, թող առաջ գա,— կարծես չճանաչելով երկրի առաջին խոջային՝ հրամայեց նա։

Մելիք Մուսին չոքեչոք մոտեցավ Բեկին։ Թվում էր, թե նա շարժվող դիակ է։ Երբեմնի այդ ուռած-փքված մարդը, որի զգեստների արժեքով կարելի էր մի ամբողջ կրպակ գնել՝ ոչնչացված էր։

— Խղճա՜ մեզ, տե՛ր Դավիթ-Բեկ, մեղքացի՛ր...— ձեռքերը առաջ կարկառելով՝ աղերսեց նա։

— Մեղքանում են ընկածին, տնանկին։ Մեղքանալ կարելի է Հարսենյաց գյուղացի խոջա Խաչիկին, որ թալանված է, տնանկ,— որոտաց

Բեկը։— Իսկ քե՛զ, քեզ, մելիք Մուսի, խաբեբա՛։ Քեզ մեղքանալ չկա. մի անգամ մեղքացել եմ, հերիք է։ Եվ ձեզ փրկություն չկա, անամոթնե՛ր, ազգուրացնե՛ր։ Դու, խոջա Մուսի, նշանակում է, այնքան ես դեռևս ընկել, որ մի ուղտաբեռ մետաքս էլ չունե՞ս, հա՞։ Դու էլ չունես, հա՞, խո՛ջա Մկրտում։ Խե՛ղճ մարդիկ, աղքա՛տ են, տնա՛նկ... Կուզե՞ք վեր կենանք, գնանք շինականներից հաց մուրանք՝ ձեզ կերակրելու համար։ Հը՞։

Բեկի տեսքն ահազդու էր։ Խոջաները դողում էին. յուրաքանչյուրը միջոց էր որոնում արդարանալու, ազատվելու գահերեց զորավարի ճանկերից։ Հիմա զինվորները կգան, ու Բեկը կհրամայի ոտնատակ տալ իրենց։

— Ո՞ւմ եք ուզում խաբել, սատանայի ծնունդներ,— ամեն պատշաճություն մոռացած՝ գոռում էր Բեկը,— ես ձեր հավերի ձու ածելու տեղն էլ գիտեմ, գիտե՛մ։ Դուք չե՛ք ճանաչում ձեր տիրոջը։ Եվ դեռ երդվում եք աստծու անունով...

Կոստանդին ու Սարի զորապետները եկան ու հայտնեցին, որ Բեկի թիկնապահ գունդը սպասում է բակում։ Խոջա Մկրտումի վարտիքը թրջվեց։ Մյուսների վիճակը ևս մխիթարական չէր։ Սոսկալի ծանր լռություն տիրեց։ Բեկը երբեմն ծառս էր լինում, մոտենում զորապետներին՝ հրամայելու, որ զորքը ներս բերեն ու դատաստան տեսնեն իրեն խաբողների հետ, բայց նորից էր կարողանում զսպել իրեն։

— Դե՞,— վերջապես խոսեց նա, բայց արդեն բավական ցածր ձայնով։— Հիմա ի՞նչ կասեք, պատվելի՛ հայեր...

Ծպտուն չկար։

— Խոսեցե՛ք, թե չէ հիմա ձեզ կհանձնեմ իմ զինվորների կամքին։ Իսկ նրանք խնայել չգիտեն։ Խոսեցեք, եթե չեք ուզում, որ զորքին հրամայեմ հենց հիմա բռնագրավի ձեր ունեցվածքը։ Առաջինը դու խոսիր, մելի՛ք Մուսի և ամաչիր քո տիրոջ ու աստծու առաջ...

— Էլ ամոթ ու պատիվ չմնաց,— աղաղակեց մելիք Մուսին։— Մեղավո՛ր ենք քո առաջ, տե՛ր Դավիթ-Բեկ։ Մեր վիզները պատրաստ են թեքվելու քո սրի տակ, բա՛յց... Բայց մի բան էլ կա, տե՛ր մեր, վաճառական մարդը երբեք չի ասի, թե ինքն ինչ ունի։ Այդ է մեր կանոնը։ Այդպես եղել է հնուց։ Վաճառականի աջ ձեռքը չպիտի իմանա, թե ինչ գանձ է շղշափել ձախը։ Այս է մեր օրենքը։ Ունենք, ճշմարիտ է, վերև աստված կա, շատից-քչից ապրանք ունենք, բայց դրանք, դրա՞նք... Ախր քի՛չ, շա՛տ քիչ բաներ են դրանք, որով սկսենք քո կամեցած առևտուրը։

— Լավ գործը քչով է սկսվում,— ընդհատեց Բեկը։

— Ճշմարիտ է, աստված վկա, ճշմարիտ է։ Վաճառական ենք, խոջա ենք։ Վաճառականը ինչքան էլ չունենա, էլի եթե շորերը թափ տաս, մի ուղտաբեռ ոսկի կթափվի վրայից։

Ատենադպիր Մաղաքիան մեղմ ժպտաց քթի տակ։ Իսկ դռների մոտ կանգնած զորապետները զարմանում էին, թե ինչու Բեկը իր կոշիկների կրունկներով չի ճզմում այս հրեշավոր մարդկանց գլուխները։ Եթե իրե՞նք լինեին նրա տեղը...

— Եթե մի շաբաթ հետո ձեր քարավանները չբռնեն սուտորի ճանապարհները, ապա ես այլևս ոչ ոքի չեմ ների,— զուսպ բարկությամբ ասաց Բեկը։— Թող հայտնի լինի ձեզ, որ ես հրամայել եմ վերացնել մեր երկրի գավառների մեջ եղած այն հարկը, որ մելիքները գանձում էին իրենց գավառները մտած վաճառականներից։

Խոջաների խմբի մեջ փոքր-ինչ հուզմունք անցավ։ Այդ բանը խիստ ձեռնտու էր նրանց։

— Բայց մեր առևտուրը պետք է լինի ուրիշ երկրների հետ,— շարունակեց Բեկը։— Պետական գանձարանը ուրիշ երկրների հետ արած առևտրից է հարստանում։

— Բոլոր ճանապարհները փակ են, տե՛ր գահերե՛ց, ո՞ւմ հետ առևտուր անենք,— անվստահ ասաց մելիք Մուսին,— Թավրիզ չենք կարող գնալ։ Շամախում լեզգիներն ավերել են ռուս և հայ վաճառականների ամբարները։ Էրզրումի ճանապարհը կտրել են Նախիջևանի ու Երևանի խաները։ Սպահանն ավղանների ձեռքին է։ Ո՞ւր տանենք մեր ապրանքը։

— Ռուսաստան,— պատասխանեց Բեկը։— Մենք այլևս ճանապարհ չունենք դեպի Սպահան ու Ստամբուլ։ Մեր ճանապարհը հիմա տանում է միայն դեպի ռուսաց թագավորի հողը։ Այստեղից Դիզակի Տող գյուղը, այնտեղից՝ Սալյան, հետո Բաքու։ Այնտեղ ռուսներն են։ Բաքվում իշխան Դոլգուռուկովը ձեզ նավեր կտա, ու դուք կհասնենք Հաշտարխան, հետո՝ Մոսկով։ Հասկացա՞ք։

— Ռուսների հետ առևտուր անելը շահավետ է,— ասացին այս ու այն կողմից։

Թեև խոջաները հավանում էին Բեկի ասածներին, բայց դեռ վարանում, կասկածում էին։ Ինչպիսի՞ն կլինի այդ ճանապարհը։ Գուցե ռուսները չօգնեն։

— Ես երեք հարյուր ձիավոր կտամ, որ ձեր առաջին քարավանն ապահով հասցնեն ռուսաց տիրապետության սահմանները։

— Օրհնվե՛ս, տե՛ր Դավիթ-Բեկ,— բացականչեցին խոջաները։

Նրանք, որ քիչ առաջ անիծում էին Բեկին ու պատրաստ էին փախչելու նրանից, այժմ սկսեցին քաղցր խոսքերով գովել նրա աշխարհա-

շինությունը, բարությունը և իմաստուն խելքը։ Նույնիսկ խոջա Մկրտումի լեզուն բացվեց։ Սկսեցին Բեկին պատմել այն առավելությունները, որ իրենք կունենան ռուսների հետ առևտուր անելով։

— Դեռ մեր ապուպապերն են ռուսների հետ առևտուր արել,— ասաց խոջա Առաքելը։

— Այո, այո՛, մենք շատ ապրանք ենք տարել Ռուսաստան,— արագախոսեց խոջա Մկրտումը։— Այն ժամանակները երանելի էին։ Ես Ռուսաստանի վրայով հասել եմ մինչև վերին ծովը։ Հաշտարխանից գնացել եմ Բուխարա, Սմրղանդ։ Ուր էլ գնայիր, տե՛ր Դավիթ-Բեկ, կտեսնեիր մեր հայ վաճառականներին։ Ես հարյուր երկիր եմ ման եկել՝ Բալխի-Բուխար, Գիլան-Մազանդարան, Հինդուստան ու Բելուջիստան, Բուրսա, Արզրում, Թոխաթ, Իզմիր, Ալիկոռնա, Վանատիկ, Ալաման, Ջենևա, Մառչիլա, Ֆռանգստան, Ամստերդամ, Իլով։ Ինչ տեղ ասես, որ ես չեմ եղել, բայց առևտրի համար ամենից ձեռնտուն ու օրհնված տեղը Ռուսաստանն է, Մոսկովի ու Պետերբուրխի շուկաներն են։

— Ճշմարիտ է,—ծերունի խոջայի ասածները հաստատեց մելիք Մուսին,— իմ պապը Ջուղայի այն խոջաներից մեկն էր, որ սրանից վաթսուն-յոթանասուն տարի առաջ նվերներ ուղարկեցին ռուսաց Ալեքս թագավորին։ Շատ հազվագյուտ իրերի հետ մերոնք Ասպահանցի Ջաքար Սահրադյան խոջայի միջոցով թագավորին ուղարկեցին մի գահ։ Գահի մեծ մասը ոսկուց է, վրան մեծ ու փոքր չափի ութ հարյուր յոթանասունվեց աղամանդ, մեկ լալ, հազար երկու հարյուր քսաներեք հակինթ, երեք շարք մարգարիտ, երկու մարգարտե հրեշտակներ և այլ թանկագին քարեր։ Հիմի էլ այդ աթոռը կա Մոսկովի պալատում, ինքս եմ իմ աչքով տեսել քսան տարի առաջ։ Ռուս թագավորներն այդ աթոռի վրա են թագադրվում. նրա վրա նստում են մեծ տոներին, եկեղեցական արարողությունների ժամանակ, ուրիշ երկրների դեսպաններ ընդունելիս։ Ռուսները մեծ պատիվը լավ գիտեն։

Մյուս խոջաները ևս սկսեցին խոսել այն շահավետության մասին, որ կունենան իրենք, եթե Ռուսաստանի հետ կտրված առևտուրը վերսկսեն։

— Դուք ձեր քարավանները համաձակ պետք է տանեք դեպի այդ երկիրը,— բոլորին լսելուց հետո մեղմ ասաց Բեկը։

— Լավ կլիներ, որ դու գիր գրես ռուս թագավորին, տե՛ր Դավիթ-Բեկ,— խորհուրդ տվին մի քանիսը։

Բեկը ժպտաց։

— Իսկ ձեզ հայտնի՞ է, որ ռուսաց թագավորի պատվիրակն արդեն Հայաստանի սահմաններումն է ու մի քանի օր հետո կլինի Հալիձորում։

— Ի՞նչ, ի՞նչ,— ուրախությունից պատշաճ կարգը մոռանալով՝ հարցրին խոջաները։

— Այո, աստծով, մենք շուտով դաշն կունենանք ռուսների թագավորի հետ։

— Սուրբ Իսրայել[1], հողով-տեղով լույս դառնաս, քո ցանկացածը կատարվում է,— բացականչեց ցղնեցի խոջա Անձրևը։

Խոջաներն իսկույն մոռացան այն բոլոր վիրավորանքներն ու ստորացումները, որ քիչ առաջ ստացան Բեկից։ Բեկը հիմա նրանց համար աստծու պես պաշտելի էր։

— Հը՞, հիմա սկսո՞ւմ եք առևտուրը, թե՞...— հարցրեց Բեկը։

— Սկսում ենք, սկսո՛ւմ, տե՛ր մեր,— իրար խանգարելով պատասխանեցին խոջաները։— Մենք որ առևտուրն սկսենք, մետաքսի ու կաշվի գործատներն էլ կբացվեն։ Աստված քեզ երկար կյանք տա, ներո՛ղ եղիր։

— Ձեզ հետ առևտուրի կգա նաև խոջա Խաչիկը,— ասաց Բեկը։

— Բայց նա ոչինչ չունի, նրա տունն ավերված է, թալանված,— դժկամ ասաց մելիք Մուսին։

— Նա օգնություն կստանա Հայոց ժողովի գանձարանից։

— Աստված էլ քեզ օգնի,— օրհնեցին մի քանիսը։

Մինչև կեսօր խոսեցին գործից։ Խոջաներին զարմացնում էր Բեկի խելքը, առևտրի գործը լավ հասկանալը։

Երբ Բեկը հեռանում էր Մեղրուց, Կոստանդին զորապետն զգուշությամբ ասաց.

— Լավ էիր սկսել նեղել այդ նենգոտ խոջաներին, տե՛ր Դավիթ-Բեկ, բայց հետո ինչո՞ւ զիջեցիր։ Ձինվորները նրանց բուրդը կգզեին։ Ձպիտի զիջեիր...

— Սխալվում ես, բարեկա՛մս,— մեղմ առարկեց Բեկը։— Վաճառական մարդու հետ պետք է շոյող լեզվով խոսել։ Ձինվորն ու զորավարը հերոս են պատերազմի դաշտում։ Բայց այդ հերոսությունն էլ է փողի պահանջ զգում։ Իսկ այդ փողը վաճառականների մոտ է։

— Ուրեմն խլենք նրանցից,— տաքացավ Կոստանդինը։

— Խլենք, որ աղբյուրը կտրե՞նք։ Սուր լեզու ունես Կոստանդին, գիտեմ, բայց վաճառականի արշինն ավելի սուր է։ Բոլոր տերությունները իրենց խարիսխները վաճառականների վրա են հենում։ Նրանց չի կարելի նեղել, վտանգավո՛ր է...

---

[1] Ակնարկվում է Իսրայել Օրին։

Այդ օրվանից մեղրեցիներն իրենց շուկայում այլևս չէին տեսնում Նաղաշ Հակոբին։ Նրա շունը երկար որոնեց իր տիրոջը և, ի վերջո, կորավ...

***

Հայոց նախագահ իշխանության նստավայր Հալիձոր բերդաքաղաքը ցնծության մեջ էր։ Գիշերվանից սկսած լեռնային ճանապարհներով դեպի Հալիձոր էին շտապում ձիավոր ու հետևակ ժողովրդի հոծ զանգվածներ։ Լեռնաշխարհի ամենահեռավոր անկյուններում անգամ տարածվել էր ռուսաց թագավորի պատվիրակի Հայաստան ժամանելու լուրը։ Եվ ահա, ում ոտքը բռնում, շտապում էր Հալիձոր՝ ներկա լինելու պատվիրակի ընդունելության հանդեսին։

Արևը ոսկեգույն թագ էր դրել սարերի կատարներին, բայց Հալիձորը տակավին ծրարված էր լեռների ստվերների մեջ։ Սակայն այնտեղ ամենքը ոտքի վրա էին։ Քաղաքի միակ դարպասի երկու աշտարակների վրա փողփողում էին հայոց և ռուսաց դրոշները։

Ձիավոր ու հետևակ ամբոխը, սեղմվելով դարպասին, լցվում էր քաղաք, աղմկում, հորձանք տալիս, տարածվում ծուռումուռ փողոցներում։ Մայր աշտարակի վրա, դետքում կանգնած զինվորներն ուշադիր հետևում էին ճանապարհի անցուդարձին։ Ահա նրանցից մեկը վերցրեց փայտե ծանր թակը և, պղնձե տախտակին հարվածելով՝ ազդարարեց.

— Գալիս է Վարանդայի մելիք Բաղրը։

Աշտարակի տակ խռնված ժողովուրդն աղմկեց։ Մի տասնյակ ձիավոր ետևը գցած՝ Բայանդուր իշխանը գնաց Հալիձոր ժամանած առաջին մելիքին դիմավորելու։ Պարսպի վրայից փողեր հնչեցին։ Դրան պատասխանեցին մելիքի զորագնդից։ Քաղաք շտապող ժողովուրդը երկփեղկվեց։ Պարսպի տակ և հենց ճանապարհի եզրին նստոտել էին բազմաթիվ գուսաններ։ Սրանք հանեցին իրենց նվագարաններն ու սկսեցին երգել։ Դեռ հեռվից Բայանդուր իշխանը ձեռքը բարձրացրեց ու ողջունեց մելիք Բաղրին։ Ապա նրան պատվով առաջնորդեց դեպի քաղաք։

Զորքով ոգևորված ժողովուրդը հազիվ էր խաղաղվել, երբ դիտանոցից նորից գոռացին.

— Գալիս է Մեղրու Կոստանդին զորապետը...

Նորից իրարանցում ընկավ, նորից զուռնաչիները դղրդացրին օդը։ Հալիձորցիները թանձր հոսանքով դիմեցին դեպի դարպասը։ Բոլորը կամենում էին տեսնել մեղրեցիներին։

Բայանդուր իշխանը ձիով հազիվ պատռեց ճանապարհը փակած ամբոխը և գնաց Կոստանդինին ընդառաջ։ Սրա մի կողմին Սարի զորապետն էր՝ գոռոզ ու ինքնահավան, մյուս կողմում՝ Մեղրու պարոնտերը։

Քաղաքի դռներին մոտեցավ ամբողջովին սև հագած, սև նժույգներով ու սև դրոշներով մի գունդ։ Սև էին նրանց սաղավարտները, զրահները, անգամ թրերի պատյաններն ու նիզակները։ Ժողովուրդը պապանձվեց։ Զուռնաչիներն ու գուսանները դադարեցրին նվագը։ Նույնիսկ մուրացկանները հանդարտվեցին։ Բոլորը հանեցին իրենց գդակները։ Ժամանողը Շուշանադաշտի ճակատամարտում նենգությամբ սպանված Թորոս իշխանի գունդն էր։ Իբր մշտնջենական սգո նշան, այդ գունդը ամբողջովին սև էր՝ դրոշակից սկսած մինչև ձիերն ու թամբերի արդուզարդը։

Պատկառանք պատճառեց նաև մելիք Փարսադանյան Բալի զորապետը։ Սրա վիզը ծուռ էր, թրի ծանր հարվածը խոշտանգել էր նրան, ու նա դեմքով ոչ թե դեպի առաջ, այլ դեպի ձախ էր նայում։ Բալին հագել էր կարմիր մահուդե անդրավարտիք, կապույտ ու կարմիր թելերից գործած շապիկ՝ վրան թևքերը կախ արխալուղ՝ լաստիկ կտորից։ Զինակիրը բերում էր նրա զենքերը։

Եկան Գրհամ-Կալերի ու Մանլևի տերերը՝ չալ ձիերի վրա։ Սրանց հետ էին նաև Բաղաբերդի շիլաշք Ադամ զորապետը, Կուլբերդի Ղազարը, Շվանիձորի զորապետ Սարգիսը։ Նրանցից առաջ քաղաք մտան ծանրազգեստ խոջաները, բոլորն էլ սպիտակ ջորիներով։ Ապա Շէնհերի զորապետներ Մինասն ու Ստեփաննոսը։

— Այս ի՞նչ է, տե՛ր Բայանդուր, չափող-կտրողներին է՞լ եք կանչել,— բարձր հարցրեց Սարգիս զորապետը։

— Ապա ո՞նց,— պատասխանեց Բայանդուր իշխանը։— Ոսկին թրից զորավոր է։

— Միաբա՞ն են։

— Այո, խոջաները մեծ քարավան են պատրաստում Ռուսաստան տանելու։

— Փա՜ռք աստծու...

***

Հալիձորն սպասում էր պատվիրակության ժամանելուն։ Արևը հասավ աշտարակներին։ Օրը տաքանում էր։ Ճանապարհը լեփ-լեցուն էր հետևակ ու ձիավոր ամբոխով։ Գալիս էին ռամիկներ, վանականներ, նույնիսկ ժայռաբնակ ճգնավորներ, որ այդ տարիներին բազմացել էին Սյունիքում։ Ով ինչպես կարողացել՝ զուգվել-զարդարվել էր։ Շատերը գալիս էին իրենց կանանց ու երեխաների հետ՝ պարեն-պաշարով։

Դարպասներին մոտեցան Վրթանես զինագործն ու Վոլոդիմիր եղբը։ Քայլում էին դանդաղ՝ ամեն բանի ուշադիր։ Վոլոդիմիրն ամուր բռնել էր երիտասարդ կնոջ ձեռքը։ Կինը ամոթից իրեն կորցրել էր։ Հայերի մեջ կարգ չէր, որ հասարակության ներկայությամբ ամուսինը բռնի կնոջ թևը։ Մուրացկանների մոտով անցնելիս զինագործները նրանց դրամ բաշխեցին, ապա մտան քաղաք ու քաշվեցին մի կողմ։ Կսպասեն Դավիթ-Բեկի հրավերին։ Նա էր նրանց կանչել Հալիձոր։

Կեսօրին նորից փոշու ամպ բարձրացավ։ Դիտանոցում իրար խառնվեցին։ Մի տասնապետ երկար հեռադիտակն իջեցրեց աչքերից ու գոչեց.

— Գալի՜ս են։

Հալիձորը դղրդաց։

Քաղաքացիները դուրս թափվեցին տներից, գործատներից, կրպակներից։ Երեխաներն աղմուկով բարձրացան պարիսպները, թառեցին բարձր ընկուզենիների ու բարդիների վրա։ Գուսանները ելան տների տափակ կտուրները։ Մուրացկանները ոտնատակ չընկնելու ահից քաշվեցին դեպի անտառապատ լանջը։ Զորքն արագ կարգվեց և քառանկյունի կազմելով՝ բռնեց եկեղեցու հրապարակի կեսը։

Հայոց ժողովի ապարանքից դուրս եկան Դավիթ-Բեկը, Հովակիմ եպիսկոպոսը, մելիքներն ու իշխանները։ Նրանց ետևից գալիս էին խոջաները, հարյուրապետները, հոգևորական դասը։

— Դի՛ն... դա՛ն։ Դի՛ն... դա՛ն...— զողանջում էին եկեղեցու զանգերը։ Նրանց ձայնը փշրվում էր կիրճերի խորքերում։ Հալիձորի զանգերին արձագանքեցին մոտակա շենների զանգերը։ Ապա իրար կոչ անելով՝ նրանց ձայները տարածվեցին դեպի լեռնաշխարհի չորս կողմերը։

Դավիթ-Բեկի թափորը հասավ հրապարակ։ Ձիերը մոտեցրին։ Բեկը հազիվ զսպեց իր նժույգը և, առանց համհարզի օգնության՝ հեծավ։ Հովակիմ եպիսկոպոսին նստեցրին մի հնազանդ, պառավ ջորու վրա։ Սրբազանի ետևից շարվեցին եպիսկոպոսներ, շուրջառներով քահանաներ, ժամաշապիկ հագած տիրացուներ, ծնծղա խփողներ, դպիրներ։ Բոլորն էլ հետիոտն։ Վահանավանքից եկած վանական եղբայրները եռանդով ճոճում էին անհամար խաչվառներ...

Երբ Բեկը դուրս էր գալիս քաղաքի դարպասից, ներքևից ու վերևից գոռացին.

— Մեր գլխի՜ վրա ընդունիր թագավորի մարդուն, տե՛ր Դավիթ-Բեկ,...

— Բարի գալո՜ւստ...

Դարպասից մինչև ձորաբերանը, ահագին մի տարածություն լցված էր ժողովրդով։ Բացի սահմանային զորագնդերից, մյուս բոլոր գնդերը եկել, իրենց դրոշակներով շարվել էին նեղ ճանապարհի երկու կողմերին։ Եկել էին նաև գավառների աշխարհազորային գնդերը։ Զորքը լավ էր հագնված։ Աշխարհազորային գնդերը խայտաբղետ էին։ Նրանք զինվել էին թրերով, նետ ու աղեղներով, նիզակներով, քչերը հրազեն ունեին։

Արևն սկսեց այրել։ Ամպի մի քանի ծվեն երևացին երկնակամարում։ Բայց նրանց քշեց-տարավ Գեղվա ձորից դուրս գրծած քամին։ Մի արծիվ սրընթաց անցավ կիրճի երկայնքով, ցանկացավ իջնել ժայռի վրա, բայց, ըստ երևույթին, նկատելով կիրճը լցված, ձորալանջերը բռնած անհամար մարդկանց՝ վախեցավ ու հապշտապ ճախրեց դեպի նուստուպի կողմերը։

Զորում երևաց արքայական դրոշակը։ Ժողովուրդն ու զորքը ցնծության աղաղակ բարձրացրին։ Թնդանոթներից համազարկ տվին։ Մխիթարի գունդը դուրս եկավ ձորից։ Առջևից գալիս էին սպարապետը, ավագ պատվիրակն իր օգնականներով, արցախի զորավար Հովհաննես-Ավան իշխանն ու Տեր-Ավետիսը, նրանցից հետո գալիս էին Դիզակի մելիքը, Խաչենի մելիք Եսային, Բարխուդարը, Մինասը, Թուրինջը, Թովման, ապա նրանց գնդերը։

Բեկը քաշեց ձիու սանձը, որպեսզի իր աջ կողմին կանգնի Հովակիմ եպիսկոպոսը՝ ձախում՝ Բայանդուր իշխանը։ Մյուս մելիքներն ու զորավարները ավագության կարգով շարվեցին նրանց թիկունքում։ Իրար ետևից կանգնեցին հոգևորականները, հարյուրապետները, տանուտերերն ու խոջաները։ Երկու խմբերը ընդհուպ մոտեցան իրար ու ձիերը պահեցին։ Առաջինը բարձրագոչ խոսեց ավագ պատվիրակը։

— Մեր օգոստոսափառ Պետրոս մեծահզոր թագավորից ողջույն հայոց գահերեց զորավար Դավիթ-Բեկին, հայոց հոգևոր տերերին, զորքին, զորապետներին ու ժողովրդին համայն։

— Աստված երկար կյանք պարգևի ռուսների մեծ թագավոր-կայսրին,— պապանձված ամբոխի գլխով թռավ Բեկի թավ ձայնը։— Փա՛ռք մեծ թագավորին, փա՛ռք,— գոչեց նա։

— Փա՛ռք,— գոչեցին ժողովուրդն ու ճանապարհի երկու կողմերին շարված զորքը։

Զորերը դղրդացին։

Հովակիմ եպիսկոպոսը աղուհաց մատուցեց պատվիրակներին, ապա մի երկար պահպանիչ կարդաց թագավորի արևշատության։ Հոգևոր հայրերը միաբերան երգեցին. «Օրհնյա՛լ ես, տե՛ր, զի սքանչելի է անուն քո»։ Իջան ձիերից, գրկախառնվեցին պատվիրակների հետ։

Երբ այս սրտառուչ արարողությունն ավարտվեց, Բեկը, թեթև խոնարհում անելով՝ ասաց.

— Շնորհ արեք, տե՛ր պատվիրակներ, մտեք մեր տունը։

Նորից հեծան ձիերը, և նորից վիթխարի թափորը շարժվեց դեպի քաղաքի դարպասը։ Արևը խայտում էր կայտառությամբ։ Զորքն ու ժողովուրդը չէր դադարում «փառք» գոռալուց։ Գուսանները պատռում էին իրենց կոկորդները։ Հարյուրավոր դրոշների, պլպլան խաչվառների փայլատակումը, պատվիրակների ու մելիքների գունագեղ հագուստների ու զենքերի շողքն իրար խառնվելով, ստեղծել էին գույների շլացուցիչ մի ծով։ Լեռնականներին թվում էր, թե հրաշք է կատարվում իրենց աչքի առաջ։ Երբեք այդպիսի շքեղություն ու հանդիսավորություն չէին տեսել։

Բերդի դարպասից սկսած մինչև Հայոց ժողովի ապարանքը ծածկված էր ծաղիկներով, ուռենու կանաչ ոստերով։ Տների պատուհանները, դրից ու պատշգամբներից գոռգեր ու գույնզգույն դիպակներ էին կախել։ Բաց էին կրպակները, գինետներն ու խորտկարանները։ Շուկայում, փողոցներում ու հրապարակում սկսեցին ընդհանուր խրախճանք։ Գինու տակառներ էին գլորում քաղաքից դուրս տեղավորված ժողովրդի ու աշխարհազորի համար։ Ոչխարներ ու եզներ էին մորթում։ Կանայք հաց էին բաժանում մուրացկաններին։ Վեցկի Մարգարն ու Սեմեոնը մի գեղեցիկ առաջ ձիերից իջան։ Որտեղից-որտեղ հայտնվեց նաև Եսային։

— Է՛յ, եղբայրնե՛ր,— դեռ ձիու վրայից բղավեց նա։— Գինու կառասները բաց արեք։ Այսօր ամենամեծ խրախճանքը պետք է լինի։

Նա թամբից ցած թռավ ու փաթաթվեց ընկերներին։

— Աչքներդ լո՛ւյս,— գոչեց հուզված,— վերջապես մի հալալ բարեկամ ունեցանք։

— Լո՛ւյս, լո՛ւյս...

— Ասում են՝ թագավորն արդեն գալիս է դեպի Գանձակ, ճի՞շտ է, զինվո՛ր եղբայրներ։— Գինով լիքը կավե գավաթները դեմ անելով նրանց՝ հարցրեց գինեվաճառը։

— Քո գործը չի՛,— նրա ուռած փորը թփթփացրեց Սեմեոնը։— Դու քո բանին կաց՝ ուտելիք բեր ու մի խառնվիր զորական մարդկանց գործին։ Դե, խմե՛նք, խմե՛նք, եղբայրնե՛ր, խմենք ռուսի կենացը,— նա գավը դատարկեց, դեմ արեց գինեվաճառին, ապա, դառնալով փողոցը խցկած մարդկանց՝ գոռաց։— Է՛յ, ի՞նչ եք իրար կրունկ տրորում. մո՛տ եկեք, խմենք ռուսի կենացը, ռուսի՛... Աստված թող նրա ոտքը շուտ հասցնի մեր լեռները։ Եկեք խմեցեք... Ես փող ունեմ, ես կվճարեմ։ Գուսաններ կանչե՛ք, ո՞ւր են գուսանները, ես երգել, պարել եմ ուզում։ Ռուսի բարի գալստյան կենա՛ցը...

Պատվիրակների գալստյան պատվին Բեկը հրամայեց զորքին ու

ժողովրդին գինի բաժանել։ Հալիձորի մայր եկեղեցու գավթում, վիթխարի կաթսաների մեջ միս եփեցին։ Երկրի ապավեն գնդից մի ջոկատ կարգ էր պահպանում հրապարակում։ Զինվորները մեկ-մեկ մոտենում էին կաթսաներին։ Մատուցող զինվորները լավաշների մեջ միս էին փաթաթում, աղ ցանում վրան ու տալիս նրանց։ Գինու տակառները դատարկվում էին իրար ետևից։ Ոմանք արդեն հարբել էին։ Մի երիտասարդ, գինով զինվոր բռնել էր Եսայու օձիքը։

— Կնիկ եմ ուզում, տե՛ր հարյուրապետ, կարգիր ինձ, կարգի՛ր...

Զինվորները հոհոռում էին։

Մեկը գոռաց.

— Գուսան են բերում, ճանապա՛րհ...

Զրաբերդցի մի հաղթանդամ տասնապետ ուսերին դրած բերում էր գրեթե պատանի մի գուսանի։ Սա ահից գոռում էր, մի ձեռքով ճոճում սազը, մյուսով՝ ամուր կպած մնում տասնապետին ու աղաչում, որ իրեն բաց թողնի։ Սրանց հետևում էր ամբոխը։ Բոլորը գոռում էին, աղմկում։

Տասնապետը ուսերից ցած դրեց գուսանին։ Զինվորները խլեցին նրան, դրին սյունից կապած ջորու մեջքին և ստիպեցին երգել։ Խեղճ գուսանը ծնգացրեց սազը, բայց ահի՞ց, թե շփոթմունքից մոռացավ երգը։ Նրան գինի խմեցրին։ Դրանից տղայի լեզուն բացվեց։

«Փութա՛ռ մեզ, նախշուն կաքավ,
Սարերն ամեն կանաչեցավ։
Շաղկղա՛, շաղկղա՛,
Կաղկղա՛, կաղկղա՛...»։

— Ա՛յ ջան, ա՛յ ջան,— ոգևորվեց Սեմեոնը։

— Զայնդ անսպա՛ռ, մանո՛ւկ գուսան,— գոռացին խենթացած։

— Անսպա՛ռ։ Թանձր տեղից ասա, արևդ ապրի։ Մե՛կ էլ, մե՛կ էլ։

Եկեղեցու բակը դղրդում էր զինվորների ու ամբոխի անզուսպ ուրախությունից։

Մութը վրա հասավ։ Հազարավոր խարույկների բոցերից խավարը չէր մոտենում Հալիձորին։ Ողջ գիշեր ճանապարհը թնդում էր։ Հեռու ու մոտ գավառներից նոր խմբեր էին գալիս։

— Աշխարհի բերանը պատռվել է, ու բոլորը թափվում են Հալիձոր։ Այսքան էլ մարդ կլինի՞,— ասում էին հին հալիձորցիները։

* * *

Առավոտյան մելիքներից ոչ ոք չերևաց հրապարակում։ Բոլորը գրասենյակում էին Դավիթ-Բեկի մոտ։

Կեսօրին Մխիթար սպարապետը, Բայանդուր իշխանն ու Տեր-Ավետիսը գնացին պատվիրակների օթևանը՝ նրանց Բեկի մոտ բերելու։ Երբ նրանց առաջնորդությամբ պատվիրակները մտան Հայոց ժողովի ատյան-սրահը, Բեկն ու ավագանին արդեն սպասում էին նրանց։ Բեկը նստել էր դիպակներով ծածկված գահավորակին։ Պատուհաններից առատ լույս էր թափվում։ Արևի մի շերտ ընկել էր Բեկի սաղավարտին ու շողում էր անծուխ կրակի պես։ Նրա աջ կողմում, նույնպես դիպակածածկ գահավորակին հանգչում էր Հովակիմ եպիսկոպոսը։ Նրա մորուքն անշարժ իջել էր կրծքին, մանր աչքերը կիսախուփ էին, թվում էր՝ ննջում է՝ կրծքին ընկած արևի հաճելի ջերմությունն զգալով ծերացած ոսկորների մեջ։

Բեկի մյուս կողմում կանգնել էր Հովհաննես-Ավան իշխանը՝ սպառազեն ու հպարտ։ Ապա աղեղնաձև շարվել էին մելիքներն ու երևելի խոջաները։ Նրանց թիկունքում խիտ շարքերով կանգնել էին հիսուն զինվոր՝ Երկրի ապավեն գնդից։ Նրանք մի ձեռքով պահում էին երկար նիզակներ, մյուսով՝ Դավիթ-Բեկի ու մելիքների դրոշները։

Բեմի առջև, գորգի վրա ծալապատիկ նստել էր ատենադպիր Մաղաքիան՝ ծնկներին ընկուզենու հղկած տախտակ, վրան՝ մաքուր թուղթ։ Մաղաքիան գրիչ-մելանը դրել էր կողքին ու արձանացել։ Սրահի դռների մոտ, զուգահեռ շարքով սրամերկ կանգնել էին հարյուրապետները։ Նայային ուղիղ նայում էր իր դիմացը ձգված Թովմա հարյուրապետին ու երբեմն աննկատելի աչքով էր անում նրան։ Երկուսն էլ ուրախ էին, որ Բեկը իրենց ևս մասնակից էր արել բարձր պատվիրակության ընդունելությանը։

Պատվիրակները եկան։ Սրամերկ հարյուրապետների շարքերի միջով անցնելով ու դահլիճի հանդիսավորությունը և, մանավանդ, Դավիթ-Բեկին ու եպիսկոպոսին տեսնելով՝ ավագ պատվիրակը մի փոքր շփոթվեց։ Նա մոտեցավ Բեկին ու խոր գլուխ տվեց։ Նույնը կատարեցին նաև նրա երկու ընկերները։ Ավագ պատվիրակը գլուխը բարձրացրեց։

— Մեր տեր թագավորի հրամանով մենք Հայաստան աշխարհն ենք բերել համայն Մեծ ու Փոքր և Սպիտակ Ռուսիո ինքնակալ թագավորկայսեր ձեզ առաքած հրովարտակը։

Երկու ձեռքը պարզելով՝ պատվիրակը Դավիթ-Բեկին մեկնեց Պետրոս թագավորի հրովարտակը։ Դա կանաչ ժապավենով հանգուցած, գլանաձև փաթաթած թուղթ էր՝ հանգույցին արքայական կարմիր կնիք։

Բեկը պատվիրակից վերցրեց հրովարտակը, համբուրեց ժապավենը և ճակատին կպցնելուց հետո՝ բաց արեց։

Հոլանդական թղթի ձախ անկյունում դրոշմված էր թագավորական մեծ կնիքը՝ երկգլխանի արծվի հպարտ պատկերով։ Բեկը հիշեց Տաթևի վանքում, Մովսես աբեղայի ցույց տված մագաղաթի մի ծվեն, որի վրա դեռ մնացել էր Բագրատունյաց Աբբաս թագավորի սեփական ձեռքով գրած գիրը՝ Տաթևի նորակառույց վանքին նվիրված գյուղերի ու ավանների անուններով։ Մագաղաթի վրա պահպանվել էին նաև հայոց թագավորի կնիքն ու ստորագրությունը։

Բեկի սիրտը մղկտաց։ Ութ հարյուր տարուց ավելի էր անցել Աբբաս արքայի ապրած օրից։ Ութ հարյուր տարի հայ հոգևորականները աչքի լույսի պես պահպանել էին մագաղաթի այդ պատառը։ Իսկ թագավորությո՞ւնը... Այն վաղուց էին կորցրել հայերը։ Վաղեմի փառքի ու հզորության փշրանքներն էին մնացել միայն Հայոց աշխարհում։ Կմիանա՞ն այդ փշրանքները, ավերակների մեջ նորի՞ց կկենդանանա հայոց նորոգ թագավորությունը։ Դժվար էր կռահել։

Բեկն սթափվեց վայրկենապես գլուխը խուժած մտքերից, ուսերը շտկեց ու հրովարտակը հանձնեց ատենադպիր Մաղաքիային՝ ընթերցելու։

Մաղաքիան երկյուղածությամբ համբուրեց հրովարտակի թուղթը և, նրա թավ ձայնը հնչեց զորապետների ու մելիքների ականջներում։

Նա կարդաց հստակ, հատ-հատ.

— «Գովյալն ու բարձրյալն աստծո օգնությամբ և ողորմածությամբ, մենք՝ վեհափառ, հզոր ու մեծափառ թագավոր և մեծ իշխան Պյոտր Ալեքսեևիչ, ամբողջ Մեծ և Փոքր ու Սպիտակ Ռուսիո ապավենը, Մոսկվայի, Կիևի, Վլադիմիրի, Նովգորոդի, Վյատկայի և Կազանի թագավոր, Աստրախանի արքա. Սիբիրի խաքան. Սմոլենսկի Մեծ իշխան. նաև թագավոր Տվերի, Յուղուրի, Պերմի, Վյատի, Բուլղարիո. մեծ ու ինքնակալ իշխան Ցածր կողմի ու Չեռնիգովի, Ռյազանի, Ռոստովի, Յարոսլավի, Բելավերշի, Օգուրի, Օրդուրի, Կոնդոնի և ամբողջ հյուսիսային կողմի տեր. տիրակալ Արևելքի, Հյուսիսի, Արևմուտքի և ուրիշ շատ երկրների ու հողերի։ Իմ ողորմած ողջույնն ու օրհնությունն եմ ուղարկում Հայոց աշխարհի սղնախների մեծին ու փոքրիկ, զորավարներին ու մելիքներին, տանուտերերին ու բարձր և ցածր հոգևոր հովիվներին, ժողովրդին ու զորքին ամբողջ։ Մեր թագավորական ականջին է հասել, որ դուք ձեր երկրում սղնախներ եք ստեղծել, զորք հավաքել ու ձեր հողը մաքրել

պարսիկներից։ Մեզ՝ քրիստոնյա ողորմած թագավորիս, շատ ուրախություն պատճառեց ձեր փրկությունն անօրենից, և մենք փառք տվինք մեր Հիսուս-Քրիստոսին, որ չի մոռանում իր ծառաներին ու օգնության է գալիս նրանց։ Մեր ականջին է հասել նաև, որ դուք ձեր աշխարհում միաբերան ու միակամ վճռել ենք ընդունել մեր թագավորական օրհնությունն ու մտնել մեր հպատակության տակ։ Մենք սիրով ենք ընկալում ձեր խնդիրը և մեր բարձր պատվիրակի միջոցով հայտնում ենք մեր հոգու ցնծությունն ու պատրաստակամությունը՝ մեր բարի հովանավորության տակ առնել ձեզ և բոլոր տառապած քրիստոնյաներիդ, որ ապրում են ձեր կողմերում։ Այս է մեր անդառնալի ու անսուտ խոսքը։ Ուրեմն, թող աստված օրհնի մեր միաբանությունը այժմ և հավիտյան։ Ամե՛ն»։

— Ամե՛ն,— ջերմեռանդությամբ կրկնեցին հավաքվածները։

Մաղաքիան ավարտեց արքայական հրովարտակի ընթերցումն ու թուղթը հանձնեց Բեկին։

Դավիթ-Բեկը վեր կացավ, մի քայլ արեց դեպի լուռ ու ձիգ կանգնած պատվիրակներն ու ասաց՝ հանդիսավոր և հուզված.

— Մեծով ու փոքրով մենք մեր շնորհակալության խոսքն ենք ուղղում բարեպաշտ ու առաքելակերպ Պետրոս Մեծ թագավորին՝ իր աստվածահաճ ողորմության համար և լիաբերան աղոթում ենք, որ մեր տեր աստվածը նրան մշտենջական քաջառողջություն պարգևե։ Այն ամենը, ինչ լսեցինք մեր ականջներով՝ հաճելի ու բերկրալի էր, տե՛ր պատվիրակներ։

Նա շուռ եկավ դեպի յուրայինները։

— Թող լինի՛։

— Թող լինի՛,— դղրդաց բարձրակամար սրահը։

Բեկը պատվիրակներին հրավիրեց նստել նախօրոք նրանց համար պատրաստած գահավորակներին։ Ինքը ևս նստեց։

— Ուրիշ ի՞նչ է պատվիրել նորին մեծություն թագավոր-կայսրը։

— Ողորմած թագավորը մեզ հրամայել է նաև ասել, որ ինքն այս ամսում կհասնի Բաքու և զորքով ու զորավարներով կգա Գանձակ։— Պատասխանեց ավագ պատվիրակը։— Պատրա՞ստ եք, արդյոք, ընդառաջ գնալու նրան՝ ձեր զորքով ու զորապետներով։

— Պատրաստ ու միակամ,— պատասխանեց Բեկը։

— Աստված օգնական։

— Թող այսուհետև մեր գլխից անպակաս լինի ռուսի ձեռքը,— շարունակեց Դավիթ-Բեկը։— Մենք փոքր ենք, բայց գիտենք պաշտպանել մեր տունն ու պատիվը։ Հարցրու դարերին՝ նրանք կհաստատեն։ Դիմացել ենք մեր արյանը ծարավ թշնամիներին, որովհետև մեր ձեռքը սովոր

է սուր բռնելու։ Կռվել, դիմադրել գիտենք ու դրանով էլ ապրում ենք և կապրենք... Այսպես է եղել ճանապարհը հայոց։

Վերջին բառերը նա շեշտեց թափով, արժանավայել։ Զորապետների երակներում եռաց հպարտության ու արժանապատվության արյունը։ Հիշեցին իրենց մղած կռիվները։ Նուբար իշխանը թուրը կնոսով չափ հանեց պատյանից ու զնգոցով գցեց տեղը։ Դա արեց ակամա։ Ուշքի եկավ, կարմրեց՝ հասկանալով, որ իր արարքն անհարկի էր։ Բեկը նայեց նրան։ Նուբարի սիրտն ասես կրակ ընկավ, ամեն ինչ մթնեց աչքին։ Բեկը ձեռքը մեկնեց դեպի նա ու դիմեց պատվիրակներին։

— Լսեցի՞ք այս քաջ երիտասարդի թրի ձայնը, տե՛ր պատվիրակներ։ Այդ ձայնի մեջ է մեր ապահովությունը։ Այս քաջը մի փոքրիկ գավառի տեր է միայն։ Սակավամարդ է նրա զորագունդը, սակայն զսպում է Նախիջևանում նստած պարսիկ խանի արյունոտ ախորժակը։ Հուշել գիտի։ Արժանի է գովասանքի։ Այսպես են այստեղ հավաքված բոլորը՝ ճելիք ու իշխան, շինական ու զորապետ։

Նուբարը կաս-կարմրեց, մի՞թե իրոք իրեն գովեց Բեկը, այն Բեկը, որ քաղցր խոսքում ժլատ էր։ Նա խոր գլուխ տվեց Բեկի կողմը։ Բեկը շարունակեց.

— Լսեցեք, արժանագո՛ւյն պատվիրակներ, մենք ազգովի միակամ ընդունում ենք ձեր թագավորի իշխանությունը, հպատակվում ենք նրան։ Մենք եղբայր ենք ուզում, մե՛ծ, բարի եղբայր, որ բազուկ-բազկի օգնենք միմյանց։ Մենք այնպիսի եղբայր ենք ուզում, որ մեզ կով չտա։ Այսօրվանից մենք կայսրի ժողովուրդն ենք։ Դու գրիր նրան, շտապեցրու գալ մեր աշխարհը։ Մենք կկերակրենք նորին մեծության բանակը, կհագցնենք, ոռճիկ կտանք, միատեղ կկռվենք մեր և նրա թշնամիների դեմ։

Դավիթ-Բեկը դարձավ յուրայիններին։

— Աստված ռուսին է ապվեն դարձրել մեզ, ուրեմն՝ ամուր բռնենք նրա փեշը, հայե՛ր...

— Բռնե՛նք, բռնե՛նք,— բացականչեցին ամենքը։

Դավիթ-Բեկը ոտքի ելավ։ Ռուսները հիացմունքով էին նայում նրա կորովի դեմքին, այրող աչքերին, որոնց երկար նայել անհնարին էր։ Ոչ մի տեղ նրանք այդպիսի աչքեր չէին տեսել։

— Տե՛ր մելիքներ ու զորապետներ,— խոսեց Բեկը,— հայոց եկեղեցու սրբազան հայրե՛ր, մենք միակամ հպատակվեցինք ռուսաց թագավորին։ Ժողովուրդն ու զորքը մեզ են սպասում։ Գնանք, նրանց հետ հավատարմության երդում տանք Պետրոս թագավորին։ Գնա՛նք։

Բոլորը դուրս եկան սրահից։ Դրոշակները փողփողացին բաց օդում։

Արևն արդեն թեքվել էր Կապույտջիղի կողմերը։ Քաղաքը լեփ-լեցուն էր ժողովրդով։ Զորքը կանգնել էր հրապարակի պատերի տակ։

Բեկին ու պատվիրակներին տեսնելով՝ ժողովուրդն ալիք տվեց, զարնվեց պատերին ու հոսեց դեպի մեծ հրապարակը։ Բեկը մելիքների ու պատվիրակների հետ բարձրացավ հրապարակի մոտ գտնվող մի ցածրիկ շինության կտուր։ Նա ձեռքը բարձրացրեց։ Ամբոխի վիթխարի զանգվածը տատանվեց։ Ալիքը հասավ քաղաքի պարիսպներից դուրս, անտառը շրջակայքի տափարակներն ու բլուրները։ Բեկը ձեռքը երկար թափահարեց։ Ամբոխը չէր հանդարտվում։ Տասնյակ հազարավոր ձայների որոտը դղրդացնում էր ժայռերը։ Բեկը գոչեց.

— Մելիքնե՛ր, տանուտերե՛ր, զինվորնե՛ր, շինականնե՛ր, լսեցե՛ք։ Լսի՛ր, ժողովո՛ւրդ հայոց։ Մեզ իր եղբայրական ձեռքն է մեկնել Ռուսաստանը։

— Ապրի՛,— գոռացին ամբոխի միջից, և այդ հատուկենտ ձայները կորան հզոր որոտի մեջ։

— Ապրի՛...— գոչում էր ամբոխը, զորքը։

— Ապրի՛...— արձագանքում էին լեռները։

Մարդկային ձայների որոտը զարնվեց ժայռերին, արձագանքեց անտառներում, կիրճերում, քարանձավներում, հասավ երկնքի կամարներին։

— Այսուհետև ու ընդմիշտ ռուսների հետ միասին կլինե՛նք,— գոչեց Բեկը։

— Կլինե՛նք,— ավելի հուժկու որոտաց ամբոխը։

— Կլինե՛նք,— գոռում էին Եսային, Փոքր Գորգին, Սեմեոնը, Վեցկի Մարգարը։ Գոռում էր Զարմանդը, որ աղջկա հետ հենց նոր էր եկել Զագեձորից։

— Կլինե՛նք,— կոկորդ էին պատռում շինականները, ցնցոտիներով մուրացկանները, շքեղ հագուստներ հագած խոջաները, վանականները, բոլորը՝ տղամարդ թե կին։

Եսայուն թվում էր, թե իր ձայնը գալիս է ոչ թե կոկորդից, այլ իր ամբողջ էությունից։ Խորթ, բայց խորհրդավոր ձայն էր դա։ Եվ դա իրեն տարօրինակ հզոր էր թվում։ Կարծես իր ձայնը լեռնաշխարհից անցնում էր կապույտ սարերը, կտրում անծայրածիր տափաստաններ ու հասնում ռուսական թագավորին։ Ի՞նչ սիրտ պետք է ունենա մարդ, որ ականջ չդնի այդ սրտառուչ աղաղակին, հասու չլինի այս ժողովրդի խնդրին։

— Միաբազուկ ու միահավատ լինենք ռուսի հետ,— խաչը պարզելով իրիկնամուտի ջինջ օդում՝ խռպոտ աղաղակեց Հովակիմ եպիսկոպոսը։

— Լինենք...— նորից որոտաց ամբոխը։

— Լինե՛նք,— գոչում էր Փոքր Գորգին ու չէր կարողանում զսպել ուրախության պոռթկումը։ Նա թռչկոտում էր ձիու վրա, գլխարկը երկինք նետում, բռնում դժվարությամբ ու գոռում՝ հազարավոր կոկորդներից ժայթքող միևնույն բառը։ Կարծես իր ուրախությունը ծագում էր հոգու խորքից ու տարածվում ողջ մարմնում այնպես, ինչպես գինին է տարածվում երակների մեջ, արյունը եռացնում...

— Լինենք ռուսի հե՛տ,— աղաղակում էին զինվորները, կանայք, նրանց ուսերին ու ծառերի ճյուղերին թառած մանուկները։ Բերդի աշտարակներից որոտացին թնդանոթները։ Երկրի ապավեն գնդի զինվորները, որ առանձին խռնված էին մի կողմում, հրացաններից համազարկ տվին օդի մեջ։ Այդ արդեն խելագարության չափ ոգևորեց ամբոխին։ Ահռելի մի ուժ զգալով իր մեջ՝ ամբոխը որոտում էր, տատանվում, ալիք-ալիք զարնվում պատից-պատ։

Եվ լսվում էր միայն նույն արձագանքը։

— Լինե՛նք...

Ժողովրդի ու զորքի ցնծությունը տեսնելով, Բեկը մտածում էր.— «Համենայն դեպս, այս ոգևորությունը մի տասը տարի կորովի կպահի հայ ժողովրդին։ Իսկ հետո՞։ Աստված մի՛ արասցե, որ թագավորը չկատարի իր խոսքը»։

— Երդվենք մեր նախնիների գերեզմաններով ու սուրբ ավետարանով, որ հավիտյան հավատարիմ կլինենք ռուսներին,— նորից գոչեց Բեկը։

— Երդվո՛ւմ ենք...

Բեկը համբուրվեց պատվիրակների հետ։ Նույնն արին նաև զորապետներն ու մելիքները։ Հովակիմ եպիսկոպոսն արծաթակազմ ավետարանը մեկնեց Բեկին։ Բոլորը չոքեցին ու երդվեցին ավետարանի առջև։ Երդվեցին նաև պատվիրակները։

Բեկը կտուրից իջավ, թագավորի հրովարտակը հանձնեց ատենադպիր Մաղաքիային ու հրամայեց երկու հարյուրապետի հետ ման ածել ժողովրդի մեջ, ցույց տալ, կարդալ բոլորին։ Եպիսկոպոսի հրամանով բազմաթիվ քահանաներ սկսեցին շրջել զորքի ու ժողովրդի մեջ ու բորին երդվեցնել ավետարանի վրա։ Թնդանոթները երեք անգամ էլ համազարկ տվին ու լռեցին։

Հանդիսավոր արարողությունն ավարտվեց։ Հայոց ժողովի ավագանին հավաքվեց ատյանի։ Հրավիրեցին նաև պատվիրակներին։ Նրանց ներկայությամբ երդմնագիր գրեցին թագավորին։ Սրա մեջ ասված էր.

«Մեր գրի պատճառն այս է, քրիստոսապսակ ու բարեգութ թագավոր մեր Պյոտր Ալեքսեյիչ։ 1724 թվի գարնան մեջ ենք։ Մենք՝ Հայաս-

տան աշխարհի Մեծ Սյունիքի ու Արցախի բոլոր գավառների իշխաններս, մելիքներս ու հարյուրապետներս՝ մեր եպիսկոպոսներով, քահանաներով, ժողովրդով ու զորքով, մեր հոժար կամքով և մեր հաճությամբ հպատակ դարձանք քեզ՝ ռուսների մեծ թագավորիդ։ Սուրբ ավետարանի վրա երդվեցինք, որ այսօրվանից մինչև Քրիստոսի գալուստը լինենք քո ժողովրդին եղբայր, քո հրամանի տակ»։

Երդմնագրի տակ նախ ստորագրեց Դավիթ-Բեկը, կնքեց, ապա նույնն արին ավագանու մյուս անդամները։

Անակնկալներից խույս տալու նպատակով՝ Դավիթ-Բեկը զորապետներին հրամայեց անմիջապես հեռանալ Հալիձորից ու ամրանալ սահմանագլխային բերդերում։ Զագեձորի գունդը նա հանձնեց Սիսականի մելիք Շաֆռազին՝ Շահապունիքի լեռնանցքի պաշտպանությունն ուժեղացնելու համար։ Ապա մի գունդ ուղարկեց Վայոց ձոր՝ Արենիի կիրճում ամրություններ կառուցելու և պահակություն անելու։ Բեկը զորապետներին բացատրեց, որ այժմ ամենից շատ իրենց վտանգ է սպասվում Արարատյան աշխարհի կողմից, որտեղ ճանապարհները չորացել են ու անակնկալ կերպով կարող են երևալ թուրքաց բանակները։ Վայոց ձոր գնացող գնդին նա երկու թնկանոթ տվեց, որ ձուլել էին Վրթանես զինագործն ու Վոլոդիմիր Խլեբը։

***

Վերադառնալով իր օթևանը, Դավիթ-Բեկը հոգնած ընկավ բազմոցին ու աչքերը փակեց։ Ապա երկու անգամ ծափ զարկեց։ Սենյակ մտավ նրա միակ սպասավորը։ Բեկն անքուն աչքերը բարձրացրեց և հարցական նայեց նրան։ Սպասավորը գլուխ տվեց.

— Ինքդ կանչեցիր, տե՛ր իմ։

— Ե՞ս,— զարմացավ Բեկը։— Հա՜, կանչեցի՛, Սողոմո՛ն, կանչեցի։ Է՛... Է՛հ, Սողոմո՛ն, սիրելի՛ս...

— Հոգնած ես, տե՛ր իմ,— նկատեց սպասավորը։— Երեք ամիս կլինի, որ մի գիշեր կարգին չես հանգստացել։ Այդպես չի կարելի, տե՛ր իմ։

— Չի՛ կարելի։ Այո՛, գիտեմ, որ չի կարելի,— երկիմաստ խոսեց Բեկը։— Ո՛չ այսպես է կարելի, ո՛չ էլ այնպես... Բայց ի՞նչ կարող ես անել նախախնամության առջև։ Ամեն ինչ նրա ձեռքին է. նրա՜, Սողոմո՛ն։ Եթե նա գութ ունենար, բարի լիներ վերին բախտ բաժանողը, ապա ես էլ ուրիշների նման իմ բույնը կունենայի, իմ ճտերը, ի՛մ, ի՛մ... Դե՜, բա՜ն չկա, սիրելի՛ս, կդիմանանք։ Հիմա կանչիր այն երկու մարդուն։

— Զինագործնե՞ր,— հարցրեց սպասավորը։

— Նրանց։

— Այս վայրկյանին,— Սողոմոնը դուրս եկավ։

Բեկը հանեց ռազմական զգեստը, անփույթ գցեց աթոռի թիկնակին, հագավ տանու պատմուճանն ու ծանր նստեց ցածրիկ թախտին։ Այդ զգեստներով նա ծեր էր երևում, թեև ընդամենը հիսունհինգ տարեկան էր ու մազերի մեջ դժվար էր ասել՝ սևո՞ն է շատ, թե՞ սպիտակը։

Բեկի ննջասենյակը գրեթե զուրկ էր որևէ կահավորանքից։ Գորգով ծածկած մի ցածրիկ ու երկար թախտ կար այնտեղ՝ վրան նստաբարձ։ Կարճատ սեղանի մոտ երկու հասարակ աթոռ էր դրված, պատի հնամաշ գորգից կախված էին մի քանի հնադարյան զենքեր։ Պատուհանի գոգին դրած պղնձե ջրամանն ու ջրածիկը չէին մեղմացնում երկրի գահերեց զորավարի ննջարանի անշուքությունը։ Բեկն ապրում էր միայնակ։ Կին ու երեխա չուներ։ Ամբողջ կյանքն անցկացնելով պատերազմների մեջ՝ նա ժամանակ չէր ունեցել իր բույնը հյուսելու և ուշքի էր եկել այն ժամանակ, երբ արդեն ծերության շեմին էր, ու սրտում սառել էր վաղեմի երիտասարդական ավյունը։

Սպասավորը բերեց Վրթանեսին ու Վոլոդիմիր Խլեբին։ Սրանք խոր գլուխ տվին ու խոնարհ կանգնած մնացին դռների մոտ։ Բեկը ձեռքի հոգնած շարժումով նրանց հրավիրեց մոտենալ։ Հյուրերը երկու քայլ արին ու կանգ առան։

— Մո՛տ եկեք, եղբայրնե՛ր,— մեղմ, մի քիչ էլ ծերունական ձայնով հրավիրեց Բեկը,— մոտ եկեք, նստեցե՛ք։

Զինագործները քաշվելով կատարեցին նրա կամքը։ Վրթանեսը զարմացել էր։ Հուժկու ձայնով, միշտ անզիջում ու խստաբարո Բեկը, որի ահից դողում էին ոչ միայն Պղինձ Արթինը, այլև երկրի երևելիները, այժմ մի բարի ու հեզ ծերունի էր դարձել, որ ահա ծալապատիկ նստել է թախտին ու կարծես պատրաստվում է երեկոյան աղոթքի։

— Ձե՞ք քնել,— հարցրեց Բեկը։

— Ոչինչ, տե՛ր Դավիթ-Բեկ,— պատասխանեց Վրթանեսը։— Սովոր ենք։ Գիտեինք, որ կանչելու էիր, սպասում էինք։

— Կարճ կկտրեմ,— ասաց Բեկը։— Ձեր ձուլած նոր թնդանոթները փորձեցինք։ Ուրախ եմ, որ միայն գովասանական խոսքեր պիտի ասեմ ձեզ։ Շնորհակալ եմ, եղբայրնե՛ր...

Զինագործները ոտքի կանգնեցին ու խոր գլուխ տվին նրան։

— Չի՛ հարկավոր, մի՛ արեք, չէ՛,— ձեռքերը թափ տվեց Բեկը։— Ինչո՞ւ խոնարհվել հարազատի առջև, ինչո՞ւ։ Ես ձեզ չեմ ուզում խոնարհ տեսնել։ Ես սիրում եմ ծունկ-ծնկի նստել բարեկամների հետ։ Ես ուրախանում եմ, երբ թշնամիներս են խոնարհվում իմ առջև։

— Թող աստված օգնի, որ հայի բոլոր թշնամիները խոնարհվեն քո առջև,— հուզված ասաց Վրթանեսը։

Բեկը գորգի տակից մի փոքր քսակ հանեց ու մեկնեց զինագործներին։

— Վերցրեք այս փոքրիկ պարգևը՝ ի նշան իմ շնորհակալության ձեր անփոխարինելի գործի համար։

Վրթանեսը հասկացավ, որ քսակի մեջ դրամ է։

— Չի հարկավոր, տե՛ր Դավիթ-Բեկ, ինչո՞ւ ես մեզ ամաչեցնում,— կանգնելով՝ հրաժարվեց նա։— Մենք մեր վարձն ստանում ենք Պղինձ Արթինից այնպես, ինչպես դու ես սահմանել։

— Չվերցնեք՝ կվիրավորվեմ,— համառեց Բեկն ու քսակը խոթեց Վրթանեսի ձեռքերի մեջ։ Ապա թեքվելով դեպի Վոլոդիմիր Խլեբը՝ հարցրեց.

— Հը՞, եղբա՛յր, ինչպե՞ս է քեզ ծառայում կինդ։

Վոլոդիմիր Խլեբը շիկնեց ու գլուխը կախ գցեց։

— Հալալ ծիծ կերած դուրս եկավ,— նրա փոխարեն պատասխանեց Վրթանեսը,— հաճելի հարս է։ Մեր ուրախությունն ու սփոփանքը նա է։ Շուտով նա Վոլոդիմիրին մի զավակ կպարգևի։

— Հա՜, ա՜...— ժպտաց Բեկը։— Աստվա՜ծ տա, աստվա՜ծ տա։ Կնունքին ես էլ կգամ։ Ուրա՜խ եմ։— Նա անլսելի հառաչեց, հուզմունքը թաքցնելու համար շուռ եկավ, ցածրիկ սեղանի գզրոցից հանեց սևացած թաքցնելու համար շուռ եկավ, ցածրիկ սեղանի գզրոցից հանեց սևացած ծխամորճն ու ծխախոտ լցնելով մեջը՝ վառեց։ Բեկը միայն տանն էր ծխում։

Մի քանի վայրկյան ծխելուց հետո դարձավ Վոլոդիմիր Խլեբին.

— Եղբա՛յր իմ, Վոլոդիմիր, ես քեզ կանչել եմ՝ իմ խոստումը կատարելու համար։ Դու արդեն տեսար, որ ձեր թագավորի պատվիրակները իմ հյուրերն են։ Նրանք մի քանի շաբաթ կմնան մեզ մոտ։ Եթե ուզում ես մեկնել, սպասիր, ես քեզ նրանց հետ կճանապարհեմ Ռուսաստան, իսկ եթե շտապում ես, ապա վաղը վաճառականների մի քարավան է ուղարկվելու դեպի Շամախի ու Հաշտարխան, կուղարկեմ նրա հետ։

Վոլոդիմիր Խլեբը հուզված կանգնեց։

— Խոնարհագին շնորհակալ եմ, տե՛ր Դավիթ-Բեկ,— ասաց նա։— Բայց, դե, ինչպե՞ս ասեմ։ Հիմա ես ուզում եմ մնալ այստեղ։ Վարպետ Վրթանեսն ինձ հայրություն է արել, չեմ ուզում բաժանվել նրանից, հետո էլ կինս այստեղ եղբայրներ ու մայր ունի... Ներիր ինձ, բայց ես չեմ կարող գնալ, կմնամ ձեր աշխարհում։

— Կամքը քոնն է, եղբա՛յր իմ,— հուզվեց Բեկը,— ինչպես ցանկանում ես... Բայց տե՛ս, սրտիդ անկյունում դառնություն չթողնես։

— Աստված մի՛ արասցե, տե՛ր Դավիթ-Բեկ,— սրտանց ասաց Վոլոդիմիրը։— Ես ինձ այստեղ զգում եմ, ինչպես իմ հայրենի գյուղում։ Այսինքն՝ ճիշտն ասած, ես այնտեղ հարազատ չունեմ։ Թուրքերը այրեցին Դոնի մոտ եղած մեր գյուղը, սպանեցին հորս, մորս, իսկ ինձ եսիր տարան...

— Թուրքե՛րը...— Բեկի աչքերը փայլատակեցին բարկությունից և մի պահ համեստ տանտիրոջից նա դարձավ ահեղ զորավար։— Թուրքերը որքան մեր, այնքան էլ ձեր թշնամիներն են։ Ա՜խ, եթե ձեր թագավորներն ու բոյարներն այդ բանը լավ հասկանա՜ն...

Բեկը ծափ տվեց ու սպասավորին պատվիրեց սուրճ բերել։ Երեքով նստեցին ցածրիկ սեղանի շուրջը։ Սուրճ խմելիս խոսում էին զինագործության մասին։ Լուսադեմին Բեկը ճանապարհեց հյուրերին։ Ապա թիկնեց թախտի նստաբարձին ու այդպես էլ քնեց։ Սպասավորը ոտքի թաթերի վրա ներս մտավ, նրան ծածկեց այծենակաճով։ Բեկը երբեք անկողին չէր մտնում։

Բայց նրա հանգիստը կարճ տևեց։ Արթնացավ ծանր երազից։ Ապարդյուն աշխատեց հիշել երազը։ Մտաբերեց Մովսես աբեղային, նրա ասածները. «Թող մեր տեր աստվածը ձեզ՝ հայ ժողովրդի մարմնավոր իշխաններիդ, այնպիսի իմաստուն խելք տա, որ դուք կարողանաք ճշտիվ զանազանել շարը բարուց, լավը՝ վատից ու արյան ծովերում խեղդվող մեր անպաշտպան ու տառապած հայոց ազգին փրկեք կորստյան ճանապարհից»։

Բեկի մեջ ցանկություն առաջացավ հենց հիմա տեսնել Մովսեսին, ասել, որ այո, ինքը ճշմարիտ ուղին ընտրեց երեկվա իր արածով։ Դրանով ինքը փրկության է տանում ժողովրդին, Հայաստան աշխարհը։ Այդպես չէ՞ր, միթե, մտածում ու գործում Իսրայել Օրին։ Բեկը հիշեց իր հանդիպումը Օրու հետ՝ Շամախում, երբ Օրին, իբրև Պետրոսի դեսպան, Ռուսաստանից մեկնում էր Պարսից աշխարհը։ «Մեզ համար ռուս ազգից բացի, ուրիշ բարեկամ չկա,— ասել էր Օրին։— Ես իմ ծաղկուն տարիները մաշեցի Եվրոպայի տերերի դռներին, բայց օգնության ձեռք գտա միայն ռուսների կողմից։ Ռուսների բարեկամությամբ միայն կապրի մեր աշխարհը»։

— Ճշմարիտ ես դու, Օրի՛,— մոտենալով պատուհանին՝ ինքն իրեն խոսեց Դավիթ-Բեկը։— Այդպես ենք խորհում մենք ևս, ժողովուրդը մեր։ Մեր ազգի ապահովության միակ միջոցը ռուսների բարեկամության մեջ է։ Ուրիշ մեծ ու սրտացավ բարեկամ չունենք մենք։ Կգա այդ բարեկամը,

գալի՞ս է։ Այսօր չկարողանա էլ, վաղը կգա, բայց կգա։ Միայն հարկավոր է պահել երկիրը, ժողովուրդը։ Պահել՝ ազգովի դիմադիր լինելով մեր տանը մոտեցող փոթորկին և ոչ թե ազգովի նահատակ։

Նա ճակատը հպեց պատուհանի ապակուն և աչքերը փակեց...

Երբ գլուխը բարձրացրեց, սարերի կատարներին արդեն բռնկվել էր արևի խարույկը։ Նա թափահարեց գլուխն ու շուռ եկավ։ Շեմքին կանգնած էր Սողոմոնը։

— Տեսա՞ր, լսեցի՞ր,— հարցրեց Բեկը։

— Ո՛չ տեսա, ո՛չ լսեցի, տե՛ր իմ,— պատասխանեց Սողոմոնը։— Միայն զգում եմ, զգո՞ւմ... Թող չվհատվի Սյունիքի արծիվը. աստված մեծ է ու գութը շատ։ Հրամայիր բերել լվացվելու պարագաները։

— Բե՛ր։

Լվացվելուց հետո Բեկը Սողոմոնին հարցրեց.

— Ի՞նչ կա։

— Աբել Ագուլեցի խոջան է սպասում քեզ։

— Թող սպասի, մելիքները գնացի՞ն։

— Գնացին։

— Սպարապե՞տը։

— Դեռ այստեղ է։

Սոպավոր գաստառակով Բեկը սրբեց երեսը, շորացրեց խիտ մազերն ու ասաց.

— Դու գիտե՞ս, թե որտեղ է պահվում այն պարսիկ գերի յուզբաշին... Ինչպե՞ս է անօրենի անունը։— Բեկը մտածեց։

— Միր Օղուզ։

— Բեր ինձ մոտ, ծածուկ, թող ոչ ոք չիմանա։ Գնա՛։

— Հրամանդ։

* * *

Սողոմոնը բերեց Միր Օղուզ յուզբաշուն։ Բեկն արդեն իր զեն ու զարդի մեջ էր և նորից էր կանգնել պատուհանի մոտ։ Գերին թավալվեց նրա ոտքերի տակ։ Բեկը երկար նայեց նրան, ապա Սողոմոնին հրամայեց գրիչ-մելան բերել։ Գերուն թողնելով գետնին փռված, նա նստեց ցածրիկ սեղանի մոտ, վերցրեց փետուրե գրիչն ու մի թերթ հոլանդական թուղթ և գրեց։

«Պարսից շահ Թահմազին, Հայոց գահերեց զորավար Դավիթ-Բեկից ողջույն։ Իմացած եղար, ո՞վ շահ, որ Սուլթան Ահմեդը Էրզրումում նըստած Քյոփուրլու-Աբդուլլահ փաշային հրամայել է զորք հավաքել ու

գալ քո աշխարհի վրա։ Սուլթանը մտադիր է ավերել քո Թավրիզ քաղաքը, փախստական անել քեզ՝ Սեֆյան գահի վերջին ժառանգիդ, և հասնելով Սպահան՝ քո հոր գահը խլել՝ իր հավատակից Միր Մահմուդին պարսից շահ հռչակել։ Մեծ աղետ է մոտենում քեզ ու մեր աշխարհին։ Թող բացվի քո մտքի իմաստուն դուռը, որ կարողանաս ջոկել բարին ու չարը։ Եթե ուզում ես ժառանգել հորդ գահը, ապա շուտափույթ մարդ առաքիր ռուսաց Պետրոս թագավորի ոտքն ու օգնություն խնդրիր նրանից։ Պետրոս թագավորը բարեկամ է քեզ և թշնամի ապստամբ Միր Մահմուդին։ Ձեռքդ պարզիր նրան, ու նա կփրկի քո գահն ու Պարսկաստանը։ Ուրիշ կերպ դու կկորցնես ամեն ինչ, և երկիրդ կդառնա թուրքի ավարը։ Այժմ մեր աշխարհում է գտնվում ռուսաց թագավորի պատվիրակը, և ես ընդունել եմ ռուսների թագավորի օգնական ձեռքը։ Շտապի՛ր, քանի դեռ Ստամբուլի օձը չի փաթաթվել քո շլինքին»։

Վերջացնելով նամակը, Բեկը կարդաց, կնքեց ու ոլորելով, կապեց կանաչ ժապավենով։ Ապա դառնալով Միր Օղուզին՝ ասաց.

— Հենց այդպես, քեզ նման ձեռ Թահմազ շահը կտապալվի, կընկնի Սուլթան Ահմեդի ոտքերը, եթե աստված նրան զրկի օգտակար մըտքից։ Վե՛ր կաց, Մի՛ր Օղուզ։

Գերին վեր կացավ ու խոնարհ կանգնեց Բեկի դիմաց։

— Բավական է, որքան կրեցիր գերության շղթաները, այժմ ազատ ես և կարող ես վերադառնալ քո աշխարհը։

Միր Օղուզը շոքեց Բեկի առջև և համբուրեց նրա պատմուճանի փեշը։ Բեկը ետ քաշվեց։

— Առ այս նամակն ու հասցրու շահ Թահմազին։ Դա կլինի քո ազատության վարձը։ Գնա, իմ մարդիկ քեզ կուղեկցեն մինչև Արաքսի Խուդափիրին կամուրջը։

Շնորհակալության ոչ մի խոսք չկարողանալով ասել, պարսիկը ետ-ետ գնաց և մեջքով բաց անելով դուռը՝ իրեն գցեց միջանցք։ Սպասավոր Սողոմոնը նրան տարավ Բայանդուր իշխանի մոտ՝ Պարսկաստան ուղարկելու համար։

ԳԱՐՈՒՆԸ ՔՈՒՌ ԳԵՏԻ ԱՓԻՆ

Անտառի արահետով բարձրանում էին չորս ձիավոր։

Առջևից գնացող նեսային ամուր փաթաթվել էր այծենակաճի մեջ, գլխանոցի կնգուղը քաշել աչքերին ու տապ արել։ Տեղատարափ անձրև էր։ Քարոտ արահետը հազիվ էր նշմարվում ջրեղեն զանգվածի միջից։

Եսային լուռ էր։ Չէին խոսում նաև նրան ուղեկցող Ծատուրը, Սեմեոնը, Վեցկի Մարգարը։ Միայն անհամբեր Ծատուրը երբեմն մի թունդ հայհոյանք էր շպրտում անձրևի հասցեին։

Եսային ընկերների հետ գնում էր իր հայրենի գյուղը։

Թեև տասնչորս տարի առաջ էր հեռացել այս վայրերից, բայց եղանիկի արահետներն անգամ հիշում էր նա։ Գյուղից հեռացել էր՝ վերադառնալու հույսն անդարձ կորցրած։ Բայց ահա բախտը նրան ետ էր բերում կորցրած ճանապարհով։

Կինը շուտ մեռավ։ Սով էր։ Զդիմացավ։ Դատարկ խրճիթում մնացին ինքն ու տասներկու տարեկան որդին՝ Արտավազդը։ Ո՛չ հող ուներ, ո՛չ անասուն։ Իսկ գլխահարկն ու մելիքական տուրքերը պահանջում էին։ Կնոջը նոր էր թաղել, երբ մելիքի վերակացուները կտրեցին նրա դուռը։ Տունը տվեց մելիքին, բայց դրանով չպրծավ։ Ստիպված էր որդուն էլ ծախել։ Միևնույն էր, երեխան սովից կմեռներ։ Որդին լաց չեղավ, երբ վերակացուները նրան տարան հարկի դիմաց։ Ինքը՝ Եսային ծանր վշտից մազերը փետեց ու նույն գիշերը փախավ գյուղից... Տասնչորս տարի քամու պես թափառեց աշխարհ-աշխարհ՝ միշտ սոված, անօթևան։ Քնեց ճանապարհների եզրերին, իջևանների ախոռանոցներում։ Շատ անգամ փորձեց բախտը, բան չստացվեց։ Նույնիսկ գողության գնաց, սակայն դրանով էլ փորը չկշտացավ, մնաց նույն սոված ու տկլորը։ Հուսահատությունից մտածում էր վերջ տալ իր կյանքին, երբ հանդիպեց Մխիթար սպարապետին։

Այժմ հայոց զորքում հարյուրապետ էր նա, և ահա խուրջինում այնքան արծաթ ունի, որ դրանով կարող է երեք զույգ եզ գնել։ Այժմ նրա հետ հարգանքով են խոսում մելիքներն անգամ։

Մի տարի առաջ որդին եկավ Զագեձոր՝ հոր մոտ։ Լսել էր, որ հայրը հարյուրապետ է։ Եսային լաց եղավ՝ գլուխը որդու նիհար ուսերին դրած։ Արտավազդն արդեն կարգին տղամարդ էր։

— Ապեր, եկել եմ քո ոտքը։ Ինձ իմ տիրոջից ետ գնիր,— խնդրեց որդին։

Եսային դիմեց սպարապետին։ Սրան դուր եկան Արտավազդի երկար, աշխատող ձեռքերը։ Ապատեց Արտավազդին։ Ութ սոմարի վարելահող նվիրեց ու հոր խնդրանքով նշանակեց իրենց գյուղի տանուտեր... Հայրը ունեցած դրամը հանձնեց որդուն ու ճանապարհեց գյուղ։

Եսային մեղմ ծպտաց թաց բեղերի արանքից։ Լսել էր, որ մի տարում որդին կարգին տնտեսություն է ստեղծել, ամուսնացել, նոր տուն շինել։ Գոհանում էր բախտից։

Անձրևը չէր դադարում, այնինչ մութը վրա հասավ։ Այլևս անհնար

էր շարունակել ճանապարհը։ Անտառում մութը այնքան խիտ էր, որ թեկուզ հենվիր նրան, չես ընկնի։ Եսային հիշեց, որ մոտակայքում իրենց գյուղի խոզանոցներն են։ Ձիու գլուխը շուռ տվեց ձորի կողմը. ձին գնաց ծխի հոտի վրա։ Շուտով կրակի մի նեղ շերտ նկատեցին։ Շների հաչոցից անտառը դղրդաց։

— Է՛յ, բարի՛ մարդիկ, շները պահեք,— կանչեց Եսային։

Մեկը սաստեց գազազած շներին ու բաց արեց խոզանոցի ցանկապատ դուռը։ Ձիավորները մտան բակ։ Խոզերը խռնվել էին փոքրիկ խրճիթի բոլորքը, կպել իրար։ Մորուքավորի մեկը ջահ վառեց։

— Ո՞վ եք,— հարցրեց անհանգիստ։

— Տերունական մարդիկ,— պատասխանեց Եսային։— Գուցե ինձ ճանաչեք, ես ձեր գյուղացի Եսայի հարյուրապետն եմ։ Լսած կա՞ք։

— Հը՞,— կարկամեց ջահակիրը,— ո՞նց չէ... Ա՜խր, այդ ինչպե՜ս, Եսայի՛ եղբայր... Տե՛ր հարյուրապետ։ Այս հուդա գիշերին, անձրևո՜վ...

Ջահակիրը մոտ եկավ, բարևեց։

— Ես Մարտիրոսն եմ, տե՛ր հարյուրապետ, երևի չես մոռացել։

— Տոհմդ ասա։

— Արջանց Մարտիրոսը։

— Հա՞...— քրքջաց Եսային։— Քու պապի եղած-չեղածը արջը պոկել էր, չէ՞։

— Հա՛, այդ օրվանից էլ մեզ Արջանց են ասում։

— Դե, բարո՜վ, հազար բարի տեսանք, Մարտիրո՛ս։ Օգնիր, թրջված ենք՝ թանի կարաս ընկած մկան պես։

Ձիերին քաշեցին ծածկի տակ։ Մտան խրճիթ։ Անտաշ քարերից շինած խրճիթում ոչ մի կահավորանք չկար։ Պատերի տակ, արջի մորթու վրա, պառկած էին երկու հոգի։ Ոտնաձայնից նրանք արթնացան, բռունցքներով ճմռեցին քնատ աչքերը։ Եսային թփթփացրեց նրանցից մեկի մեջքը։

— Է՛յ, Սոված Ազարիա՛, հլա դու ո՞ղջ ես,— գոռաց քնահարամ եղածի ականջին։— Հիմի է՞լ ես նապաստակի միսը հում ուտում,— ու ծիծաղեց։

— Տե՛ր Հիսուս-Քրիստոս։ Էս մեր Եսային է՞։

— Հենց նա,— Եսային համբուրեց Ազարիայի բեղերը։

Երկրորդը գուսան Հեթումն էր՝ նիհար, ցանցառ մորուքի մազափնջով։ Քնատ աչքերով նա տնղեց նորեկներին ու դժգոհեց. «Երգել կտան. չեն թողնի, որ մի քիչ աչքս կպցնեմ»։ Դրսից եկան ձիերը տեղավորողները։

— Թոնիրը վառեցեք, հա՛յ քրիստոնյաներ,— խնդրեց հարյուրապետը,— թրջվել ենք, երկու օր էլ տաք կերակուր չենք կերել։

Խոզարածները վառեցին խրճիթի մեջտեղը գտնվող փոքրիկ թոնիրը, որի կավե կլոր պատերը երկու թզաչափ բարձր էր գետնից։ Զինվորները նկատեցին գուսանին ու զվարթացան։

— Է՜, հե՜... գուսան Հեթումն էլ է այստեղ։ Ուրախ գիշեր կանցկացնենք,— բացականչեց Ծատուրը։— Է՜յ, ճնգճնգա՜ն եղբայր, ո՞ր գյուղից ես։

— Խնձորեսկից,— պատասխանեց գուսանը։— Գնում էի Մեղրու կողմերը։ Գիշերը վրա հասավ։ Շնորհակա՜լ եմ, հայ քրիստոնյաները տեղ տվին։

— Խնձորեսկի՞ց ես, ուրեմն,— Ծատուրը թաց հետույքը դեմ արեց թոնրից ելնող բոցին։— Ասում են, թե ձեր գյուղում որ մեկը երեք տղա է ունենում, երրորդին կուրացնում է, որ գուսան դառնա։ Այդպե՞ս է։

— Աստված ների քեզ, զինվո՛ր եղբայր,— խռովեց Հեթումը։— Սկի էլ այդպես չէ։ Ո՞ր քրիստոնյան այդ բանը կանի։ Բայց մեր գյուղում գուսաններ շատ կան։ Հարյուրից ավելի են։ Դա ճիշտ է։ Լավ օրից չեն թափառական դառնում։

— Քամակով դուռ բացողներն էլ են շա՞տ։

— Է՜հ, ձեռ մի՛ առնի,— տնքաց գուսանը։— Որտե՞ղ մուրացող չկա։

Եսային երեք արծաթ մեկնեց Մարտիրոսին։

— Վերցրու, մեզ համար գոճի մորթիր։

Մարտիրոսը քորեց փրշոտ ծոծրակը։

— Ախր, Եսայի՛ ջան, բա քեզանից...

— Պառավ շանը քուչի-քուչի չեն անի, վերցրո՛ւ,— շտապեց Եսային։— Դու չունես, գիտե՛մ, իսկ էգուց քու տերը գոճու համար զավակդ կտանի։ Վերցրու։

Գոճի մորթեցին։ Կաշին հանելուց ու փորոտիքը թափելուց հետո գլխիվայր կախեցին թոնիրը։ Ճարպը ճրթճրթաց։ Շուտով խորովվող մսի հոտը բռնեց խրճիթը։ Դռներին կպած շները ծմրկտացին։ Գուսան Հեթումն աղմուկով կուլ տվեց թուքը։ Սաստիկ ուտել էր ուզում։ Մարտիրոսը շուռումուռ էր տալիս գոճին ու խոսում.

— Գնացիր, Եսա՛յի եղբայր, ու իզը-թոզդ սառեց։ Ասում էինք էլ չես երևա։ Հիմի աստծո՛ւն փառք, գլուխդ վրադ տեսանք։ Ուրախ ենք...

— Դուք ո՞նց եք, դո՞ւք, շինականնե՛ր,— հարցրեց Եսային։— Ձեզնից պատմեք։

— Շնորհակա՛լ ենք,— ոչ իսկույն պատասխանեց Մարտիրոսը։ Նրա ձայնի մեջ թաքցրած դժգոհություն կար։— Աստված Դավիթ-Բեկի կյանքը երկար անի, Մխիթարինն էլ։ Պարսիկից պրծանք... Հիմի շունչ ենք քաշում։ Միայն թե կռիվ չլինի։ Ասում են՝ թուրքերը... Հը՞, Եսայի՛։ Բեկին ու սպարապետին մոտ մարդ ես, ի՞նչ կասես։

— Հաշոցներ են,— մռայլ պատասխանեց Եսային։— Բայց ո՞վ իմանա, կարող է կռիվ լինել։ Դե, թող լինի, մենք պատրաստ ենք։

— Հա՜, մատա՜ղ։ Պատրաստ կացեք։ Աստված մի՛ արասցե, որ նորից շուն ու գելի ձեռք ընկնենք։

— Է՜հ,— հառաչեց Եսային։— Աստված ողորմած է։ Նա մի ձեռքով պատժում է մեզ, որովհետև արդար դատավոր է, իսկ մյուսով դարմանում մեր վերքը, որովհետև ողորմած է։

— Ողորմած լինի, ողորմա՜ծ...— չպպացրեց գուսանը։— Թող էլ մեր աշխարհի վրա չբացվի երկնքի բարկության դուռը։

Գոճին խորովվեց։ Փայտե փոքրիկ եղան խրեցին նրա կարմրած կողերի արանքն ու թոնրից հանեցին։ Խոզարածները աղ ու կորեկահաց դրին մասրենու ճյուղերից գործած սալակի վրա։ Բոլորը հանեցին իրենց դանակները։ Եսային արմունկով հրեց Սեմեոնին։ Սա խուրջինից մի փոքրիկ տիկ ու փայտե երեք գավաթ հանեց։ Եսային թթի օղի լցրեց գավաթները, բաժանեց խոզարածներին։ Գուսանը հրաժարվեց խմելուց։

— Անդարդ մարդ ես երևում, գուսա՜ն Հեթում,— մսի մի մեծ պատառ հրելով բերանը՝ ասաց Ծատուրը։

— Հա, էլի՜... Դարդերս որ թափեմ Երասխը՝ ջուրը կանգ կառնի,— գլուխն օրորեց գուսանը։— Հային էլ կասե՞ն անդարդ ես։

— Դե լավ, մի՛ որդնոտվիր,— գոչեց Սեմեոնը։— Ավելի լավ է երգես։ Նստել ես, ո՛չ խմում ես, ո՛չ երգում։ Բա էլ ի՞նչ սատանի ախպեր ես։

— Թող կուշտ ուտի հետո,— միջամտեց Եսային։

Գուսանը կշտացավ, տաշտի մոտից ետ քաշվեց ու այծենի տոպրակից հանեց սազը։ Մի քանի անգամ ծնգծնգացրեց լարերն ու երգեց։ Կրակի թույլ բոցից նրա դեմքը պղնձագույն էր դարձել, աչքերը չէին երևում հոնքերի թփերի տակ։ Բերանի խոռոչում փայլում էին սպիտակ ատամները։

«Վա՜յ, դարման ենք՝ քամու բերնին, հո՜...
Եսիր ենք՝ հարամու բերնին, հո՜...»։

Երգեց կամաց, սիրտ քրքրող։ Մսի պատառը սառեց Եսայու բերանում։ Հիշեց օտար ճանապարհները։ Օտարի դռներին մի ժամանակ ինքն էլ էր երգում այդ երգը։ Սեմեոնի աչքերը թացացան։ Ծատուրն արագ

կուլ տվեց բերանի պարունակությունը։ Միայն Վեցկի Մարգարն ու խոզարածներն էին անտարբեր մորմոքուն երգին։ Շատ էին լսել։

Հեթումի սազը նվում էր հիվանդ երեխայի պես։ Մի-մի գավաթ էլ օղի խմեցին։ Եսային գավաթի պարունակությունը լցրեց բերանն ու կուլ տվեց միանգամից։ Օղին այրեց կոկորդը, եռաց ստամոքսի մեջ ու երգի հետ զնգաց երակներում։ Նայեց գուսանին. մի տարի առաջ ինքն էլ այդպես ոտնահարված էր, կիսամերկ։ Հեթումի կապան բոլորովին քրքրվել էր, կուրծքը բաց էր, ո՛չ շապիկ ուներ, ո՛չ բաճկոն։ Ոտքերի տրեխները փտել ու հրաշքով էին կպած մնում ծուռումուռ մատներին։ Գուսանը թափահարեց ճերմակ գլուխն ու ձայնը բարձրացնելով երգեց՝ կական անող պառավի պես.

«Եսիր տարան ջահել-ջիվան.
Աշխարքս բռնել է ջիվան.
Գետն էր արին.
Արին՝ ելման,
Վա՜յ մեր բախտին, մեր աշխարհին,
Սրտիցս կաթում է արին»։

Երբեք այդպիսի բան չէր եղել։ Միշտ ամեն ցավ արհամարհող, քեֆի և ուրախության սիրահար Սատուրը հանկարծ անզուսպ հեկեկաց։ Սեմեոնի բարձր ուսերը ցնցվեցին։ Վեցկի Մարգարը ձեռքը տարավ աչքերին։ Եսայու սիրտը ճմլվեց. մի բան այրվեց ներսում։ Ահավոր ցավից գլուխը շեշտակի բարձրացրեց, ու ամեն ինչ աչքին արյան գույն ստացավ։ Նա ոտքի թռավ ու որքան ուժ ուներ գոռաց գուսանի վրա.

— Բավակա՜ն է, ծե՛ր բու... Բավակա՜ն է արյուն երգես։ Կտրի՛ր, սիրտս ես կրակում, դե՜...

Երգի մոլուցքով տարված գուսանը չհասկացա՞վ նրան, թե չուզեց լսել, շարունակեց երգել.

«Վա՜յ մեր բախտին, մեր աշխարհին...»։

— Կտրի՛ր, կտրի՛ր,— որոտաց Եսային ու գուսանի կրծքից պոկեց սազը։

— Վա՜յ, սա՜զս։ Տո՛ւր, տո՛ւր, տո՛ւր հարյուրապետ,— մերկ ձեռքերը նրան պարզեց գուսանը։— Հացս մի խլի, աստծո՜ւ սիրուն, տե՛ր հարյուրապետ, զավակներիս հացը տուր...— նա հեկեկաց։

— Իսկ դու բավական է անվերջ արյուն-արցունք երգես, անդանակ մորթես մեզ։ Անօրե՛ն, ավերա՛կի բու։ Ուրիշ երգ երգիր, ուրի՛շ... Բավակա՛ն է, հազար տարի արյուն ու լաց երգեցինք։ Մարդու սիրտ է պայթում, ձեռքեր թուլանում։ Անիծվածնե՛ր...

— Մեր բաժինն է, տե՛ր հարյուրապետ,— հառաչեց գուսանը։— Արյունն ու արցունքը մեր բաժինն է, մենք ուրիշ երգ չունենք, չէ՞...

— Ունե՛նք,— հեաց Եսային,— հիմա պիտի լացը չորացնել։— Նա սազը բարձրացրեց, որ նետի թոնրի մեջ։ Ներունի գուսանը աղեկտուր ճչաց։ Մարտիրոսը բռնեց Եսայու ձեռքը։

— Մի՛ արա,— ասաց սպառնագին։— Սազը ե՛տ տուր։

— Տո՛ւր, տո՛ւր,— ամուր բռնելով սազի կոթը, պահանջեց նաև Սոված Ազարիան։

— Հեռո՛ւ, հեռո՛ւ,— գոռաց Եսային։— Դուք ի՞նչ է, գլխիս տե՞րն եք։

— Չէ՛, ի՞նչ տեր,— չարացավ Մարտիրոսը։— Մենք ռամիկ-ստրուկներ ենք։ Դու ես տերը, դո՛ւ, տե՛ր հարյուրապետ։ Տկլոր ու սոված ռամիկ էիր։ Հիմա իշխան ես դարձել։ Մեզ էլ գցիր կրակը, գցի՛ր, է՛... Տե՛ր ես, կարո՞ղ ես... Հրե՛ն, տղադ մեր գյուղում գայլ է դառել, մեջքներիցս կաշի է հանում։ Սազը ե՛տ տուր, թող գուսանը մեր լացը լա։

— Լռի՛ր...,— խեղդված ձայնով գոռաց Եսային։ Նրա աչքերը շլացվեցին, դողաց։

— Լռե՛մ, լռե՛մ,— ձեռքով բերանը ծեփեց Մարտիրոսը։— Ճարս ի՞նչ, պետք է լռեմ։ Դու հարյուրապետ ես, տղադ՝ տանուտեր։ Թոռդ էլ ի՞նչ, պետք է լռեմ։ Դու մեզ պես պորտդ բաց ռամիկ էիր։ Հիմա՞։

— Հիմա հարյուրապետ ես։ Տղադ գյուղի հոգեառն է։ Չէինք ուզում մելիք կդառնա։ Ձայնդ տաք տեղից է գալիս։ Լռե՛մ...

Հարյուրապետը նայեց համագյուղացիներին ու իր զինվորներին։ Բոլորի գլուխները կախ էին։ Ծանր վիշտն ընկճել էր նրանց։ Երևում էր, որ բարկացած են, շատ բան են ուզում ասել, սակայն սիրտ չեն անում։ «Տղադ մեր գյուղում գայլ է դառել, մեջքներիցս կաշի է հանում»,— ականջին խփում էր Մարտիրոսի ասածները։ «Ո՞վ, իմ տղա՞ն, հա՞...»,— նա չէր ուզում հավատալ լսածներին։ Ցանկացավ սազը խփել Մարտիրոսի գլխին, բայց ձեռքերը չգնացին։ Ո՞ւմ խփի, ռամիկ Մարտիրոսի՞ն։ Ո՞չ, ինքն այդ բանը չի անի։ Նա մոնչաց վիրավոր արջի պես ու սազը մեկնեց Հեթումին։ Սա վերցրեց, ետ-ետ գնաց ու կուչ եկավ պատի ակ։

— Մեր ցավն էր երգում գուսան Հեթումը,— մռայլ ասաց Ազարիան։— Դու չե՞ս ուզում լսել, տե՛ր հարյուրապետ, քո բանն է, մի՛ լսիր, մեզ ի՞նչ։ Ռամիկի լացը շատ է, ցավը խոր։

Եսային կապտեց։

— Իսկ ես ի՞նչ է, մելիքզադա՞ եմ, թե՞ իշխան, հը՞, Ազարիա՞, ամաչիր։

— Դու մեզ պես պորտդ բաց ռամիկ էիր։

— Հիմա՞։

— Հիմա հարյուրապետ ես։ Տղադ գյուղի հոգեառն է։ Չէինք ուզում

ասել, բայց էլ թաքցնելու տեղ չկա, պարսիկից էլ անգութ է անիծվածը, վառում, խորովում է մեզ։ Տե՜ր ողորմի...

Եսային սիրթնեց։ Նրա փորում ասես աղիք կտրվեց։

— Ջի՜ր,— հանկարծ գոռաց նա,— ձիերը բերե՜ք...— ու նետվեց դեպի այծենակաճը։

Զինվորները ծառս եղան տեղներից։ Եսային դուրս թռավ խրճիթից։ Շները ոռնացին։

— Տե՜ր Հիսուս-Քրիստոս,— մրմնջաց մի բուռ դարձած գուսանը։

Ձիերը ողողվել էին թանձր քրտինքի մեջ, սլանում էին հևալով։ Անձրևային գիշերվան հաջորդել էր պարզ առավոտ։ Արևը խայտում էր։ Լեռնալանջերի ցելերից, մասրենու թփերից ու ֆոֆոռացող խոտից արբեցնող բուրմունք էր տարածվում օդում։ Բայց ոչինչ չէր տեսնում Եսային։ Նրա ձին բարկությունից լարում էր վերջին ուժերը՝ աչքն ականջի տակ ճռճվող մտրակին։ Շուտով ծխի հոտ եկավ։ Շների հաչոց լսվեց։ Եսայու սիրտն արյունոտվեց։ Դիմացը հայրենի գյուղն էր...

Խաղաղ առավոտ էր։ Տափակ կտուրներին սյուն-սյուն տնկվել էին օջախների ծխերը։ Շինականներից ոմանք արդեն բակերում ու փողոցներում կապում էին գութանի փոկերը։ Ոմանք լծերն ու վեցկիները բեռներում կապում էին գութանի փոկերը։ Ոմանք լծերն ու վեցկիները բեռնել էին ջորիներին։ Պատրաստվում էին գնալ լեռնալանջերում կորեկ ցանելու։

Ձիավորներին տեսնելով՝ նրանք հանում էին գլխարկները։ Խոնարհ գլուխ տալիս ու զարմացած նայում ձիերի կատաղի վազքին։ Եկեղեցու զանգերը ծլնգում էին տխուր, անիմաստ։ Փողոցում քուջուջ անող հավերին շաղ տալով՝ ձիավորները հասան եկեղեցուն։

— Ո՞րն է տանուտերի տունը,— հարցրեց Եսային մի շինականի, որ եզան ոտքերից պոկում էր թրիքի գնդերը։

— Հրե՜ն,— երկյուղած պատասխանեց շինականը՝ ձեռքը դեպի մի նորաշեն, երկհարկանի տուն պարզելով։

Ձիերը կոխկրտեցին ճանապարհին նստած նորածին հորթին։ Մի կին կուժը ցած գցեց ուսից ու փախավ։ «Անօրեն բան եմ անում»,— արագ անցավ Եսայու գլխով։

Երկհարկանի տունը շրջապատված էր պարսպով։ Այնտեղից գալիս էր կրի ու թարմ ներկի հոտ։ Կանաչ ներկած դարպասը բաց էր։ Երկու հորթ անմեղ կանգնել էին բակի անկյունում։ Ամեհի մի գամփռ փորձեց կտրել շղթան ու նետվել ձիավորների վրա։ Երկու կին երկանք էին

աղում պատի տակ. «Լավ տնտեսություն է ստեղծել»,— չարությամբ մտածեց Եսային ու քաշեց հևացող ձիու սանձը։

Սանդուղքի աստիճաններով ներքև վազեց որդին։ Թևերը թափահարելով նա ուրախ կանչեց.

— Ապե՜ր, ապե՜ր ջան։

Պատշգամբում երևաց փորը կլորիկ, սիրունատես մի հարս։ Արտավազդը վազեց դեպի հայրը։ Մոտեցավ, որ բռնի ձիու ասպանդակը... Երկճյուղ մտրակը սուլոցով փաթաթվեց նրա գլխին։ Նրա ականջի բլթակը թռավ։ Պատշգամբում կանգնած կինը ծղրտաց։ Արտավազդը բռնեց գլուխն ու շոքեց հոր ձիու ոտքերի տակ։ Արյունը շատրվանեց նրա քունքից։ Եսային թռավ նրա մեջքին ու սկսեց կոխկրտել կրունկներով...

Ծատուրն ու Սեմեոնը ցատկեցին ձիերից և վազեցին գազազած հարյուրապետին բռնելու։ Սա երկուսին էլ դեն հրեց. երկճյուղ մտրակը անվերջ իջնում էր գետնին փռված տանուտերի վրա։ Մեկը կախվեց Եսայու թևից։

— Խնայի՜ր, ապի՜,— ծղրտաց հարսը և ուշաթափվեց։

Եսայու ձեռքը թուլացավ, նայեց հարսին ու զարհուրեց։ Ջոքած հարսի ոտքերի արանքում ինչ-որ մսագունդ էր շարժվում։ Խելագարի պես նա վերցրեց մսագունդը։ Երեխան դեռ տաք էր, երևում էին փշատի չափ քիթը, փակ աչքերի գծերը։ Եսային մոնչաց ու փլվեց գետնին։ Ահից հարսը երեխան վիժել էր։ Այլևս ոչինչ չլսեց Եսային։ Լսեց Ծատուրի ու Վեցկի Մարգարի հայհոյանքը, Սեմեոնի գոռոցը.

— Խելագարվել է, աստվա՜ծ իմ...

Հարևանները եկան։ Երկանք անող պառավներից մեկը Եսայու գրկից պոկեց մեռած երեխային։

— Տղա է, վա՜խ-վա՜խ,— քրքրվեց նա։

Հարսին տարան ուշքի բերելու։ Արտավազդի վրա ջուր սրսկեցին։ Բոլորն ահից քարացել էին։ Մթնում էր։

Եսային նստել էր որդու տանը՝ թախտին ու դաժան հայացքով նայում էր դիմացը՝ գորգին նստած Արտավազդին։ Սրա գլուխը փաթաթված էր, քիթն ուռել էր, աչքերի տակերը կապտել էին։ Շրթունքներից մեկը ճեղքվել էր։

— Խոստովանի՜ր,— մոնչաց հարյուրապետը։

— Մեղա՜, հա՜յր, մեղա՜,— մի կերպ նստելով՝ մրմնջաց որդին։

— Չգիտեի՞ր, չգիտեի՞ր, որ ե՜ս, գայլի սիրտ կերած մարդ եմ։ Ես քու սիրտը կխորովեմ, շա՜ն ծիծ կերած։ Ինչպե՞ս թե քերթում ես ռամկի կաշին։ Ո՞վ ես դու, ես քո՜ւ...

— Մեղա՜, մեղա՜, հա՜յր, էլ չե՜մ անի, չէ... Երդվում եմ մորս գերեզմանով, չե՜մ անի։

Հայրը երկար լուռ մնաց, ապա վեր կացավ, մտավ կից սենյակը, որտեղ պառավները խնամում էին թշվառ հարսին, կռացավ, համբուրեց հարսի գունատ ճակատը։ Հարսը լաց եղավ։ Եսայու սիրտը փլվեց։ Արցունքներն իրենք իրենց գլորվեցին նրա այտերից։

— Բան չկա, մեկն էլ կբերես,— ներողություն հայցող ձայնով ասաց նա ու դուրս եկավ։ Պառավները երեսները խաչ հանեցին։

— Քանի՞ ծուխ է գյուղում,— նստելով տեղը՝ հարցրեց որդուն։

— Հարյուր ութսունչորս։

— Ռամի՞կը։

— Կեսից ավելին։

— Հը՜մ։ Աշնանացանը ո՞նց է։

— Լավ թփոտել է, սատանի ականջը խուլ։ Աստված կարկուտ չտա։

— Առավոտյան կանուխ ժողովրդին հավաքիր եկեղեցու բակը։ Բոլորին։ Դավիթ-Բեկի հրաման կա։

— Պատերա՞զմ է։

— Քու բանը չի։

Եսային դուրս եկավ։ Մթության մեջ գնաց դեպի գյուղի ծայրը։ Գնում էր գերեզմանատուն՝ կնոջ շիրիմին այցի։ Ավելի շուտ ուզում էր ազատվել օրվա մղձավանջից։ Ա՜խ, զարհուրելի ճակատագիր... Ամեն տեղ արյուն...

Մինչև լուսաբաց մնաց գերեզմանատանը՝ կնոջ շիրիմի վրա...

***

Տասներորդ դարի վերջին կառուցած եկեղեցին հրաշակերտ տաճարի էր նման. մի վանական կարդացել էր դռան քարե արձանագրությունը և գյուղացիներին բացատրել, որ եկեղեցին կառուցել է Սյունյաց Սոֆիա իշխանուհին՝ «ի փրկություն հոգու»։ Եկեղեցու բակում հնագարյան շիրիմներ կային։ Մի քանիսի գրերը հազիվ էին նշմարվում, մյուսները մաշվել էին՝ գյուղացիների անվերջ նստելուց, եզներին ու ոչխարներին աղ տալուց։

Ճակատենցիները հավաքվել էին եկեղեցու առաջ, նստոտել հողմնահար գերեզմանաքարերին՝ ծերունիները մի կողմ, երիտասարդները՝ մի այլ։ Սպասում էին տանուտերին ու նրա հորը։ Ծեր քահանան ննջում էր՝ մորուքը կրծքին։ Իր ողջ զեն ու զարդով եկավ Եսային՝ զինվորների

ու գլուխը կապած որդու հետ։ Բոլորը, բացի քահանայից, ոտքի կանգնեցին։ Հարյուրապետը մոտեցավ։

— Բարև, համագյուղացինե՛ր,— ողջունեց բարձր։ — Լա՞վ եք՝ տնով-տեղով։

— Գոհանա՜նք աստծուն,— պատասխանեցին մի երկուսը։— Ոտքդ բարի՜։

Ժողովուրդը զարմացած ու հիացած նայում էր համագյուղացի հարյուրապետին։ Նրա զգեստները ընտրովի էին, զենքերը՝ նույնպես։ Բայց զարմացնում էր նրա դաժան դեմքը։ Շատերն ականատես էին եղել, թե նա ինչպես է պատժել տանուտեր որդուն։ Այդ բանը դուր էր եկել նրանց։

Եսային չիջավ ձիուց։ Հայտնեց, որ ինքը Դավիթ-Բեկի հրամանով է եկել բեկար տանելու։

— Գնում ենք Գանձակ, լսո՞ւմ եք, հա՜յ քրիստոնյաներ,— ասաց ոգևորված։— Ռուսի մեծ թագավորը գալիս է մեր աշխարհը։ Գնում ենք դիմավորելու։

— Բարի՜ լինի։

— Բարի չէ, բա ի՞նչ է,— ոգևորվեց Եսային,— հավիտյանս պրծենք Թուրքի ու պարսիկի ահից. ռուսաց տերության մեջ կապրենք մարդավայել։ Իմացա՞ք։ Հիմա մեր գյուղը պիտի երեսուն ջորի, հինգ ջորեպան, երեք խալվար գարի ու հինգ խալվար ալյուր տա զորքի համար, ապա և մսացու երեք եզ ու քսան ոչխար։ Լսո՞ւմ եք։ Հրաման է, կատարեցե՛ք, մինչև կեսօր ձեզ ժամանակ։

— Թագավորը հաց չունի՞ ուտելու, ի՞նչ է,— դժգոհ հարցրեց մեկը։

— Պարենը թագավորի զորքի համար է,— չարացավ Եսային։— Մենք արդեն մտել ենք ռուսի թագավորի ծառայության մեջ։ Հասկանո՞ւմ ես։ Թագավորի զորքը գալիս է մեր աշխարհը...

— Աչքներս ջուր է կտրել սպասելուց,— աղաղակեցին այս ու այն կողմից։

— Որ մեր վերջին կորեկն էլ ուզեք՝ կտանք։ Միայն թե ռուսների հետ ապրենք։

— Կտա՜նք, կտա՜նք,— ասացին միաբերան։

Շուտով եկեղեցու բակում գարու և ալյուրի ջվալների մի մեծ կույտ գոյացավ։ Ով ինչքան կարողանում՝ նվիրաբերում էր մեծ գործին։ Քսանից ավելի տղամարդ հոժարակամ համաձայնեցին բեկար գնալ, բայց Եսային հինգ հոգու վերցրեց միայն։ Ուրախ էր, որ հենց առաջին գյուղում գործը աջ գնաց։ Գիտեր, վախից չէ, որ համագյուղացիները կատարում էին հրամանը, եթե օրորոցն էլ ուզես՝ կտան ռուսների համար։ Նրանց գալստյանն էին սպասում։

Երբ արդեն բեռները կապել պատրաստել էին, Եսային տխուր նայեց ծվենների մեջ, բոկոտն ռամիկներին, սիրտը ճմլվեց։ Իրենք երևի բան էլ չունեն ուտելու, բայց հորերը դատարկեցին։

— Ես ձեր առատաձեռնության մասին կհայտնեմ հենց իրեն՝ թագավորին (ամաչեց սուտ խոսելուց։ Ինքն ինչպե՞ս կարող է տեսնել թագավորին)։— Բայց մի բան է զայրացնում ինձ։ Ինչո՞ւ չեք քարերով ջնջել ձեր տանուտերի գլուխը, հը՞։ Անօրենություններ է արել։ Գիտե՞մ, լսե՛լ եմ, արժանի էր պատժի (իր արարքն էր ուզում արդարացնել)։ Հիմի պարսիկի օրերը չեն, իմացե՛ք։ Հիմի մենք մեր գլխի ու երկրի տերն ենք։ Եթե մեկ էլ տանուտերը ձեզ նեղի, սպանեցե՛ք։ Հա՛, հա՛, սպանեցեք հարամ ծիծ կերածին։

Ոչ ոք ծպտուն չհանեց։ Զարմանում էին լսածներից, չէին հավատում։ Ինչպե՞ս թե սպանեն տանուտերին։ Բա տանուտերն էլ դաժան չի լինի՞։

Եսային վերադարձավ որդու տունը, մտավ հարսի սենյակը։ Գունատ հարսն Աստվածամոր պատկերի առաջ չոքած աղոթում էր։ Մոմի նատ հարսն Աստվածամոր պատկերի առաջ չոքած աղոթում էր։ Մոմի ու խնկի հոտ էր գալիս։ Կեսրայրին տեսնելով՝ թշվառի լեզուն կապվեց։

— Բարակ սիրտ ունես,— չհամարձակվելով մոտենալ հարսին՝ ասաց Եսային։— Այնպես վախեցար, որ մեղքի տակ ընկանք՝ ե՛ս էլ, մարդդ էլ։ Աստված ների։ Ա՛ռ, վերցրու այս փողը (քսակը նետեց կարկամած հարսի գոգը)։ Մոմ կառնես ու կվառես Ագռավաքարի խաչում։ Դե, մնաս բարո՛վ...

Հարսը ուշքի եկավ ու վազեց հեռացող կեսրայրի ետևից։ Բրդե մի զույգ գուլպա խոթեց նրա կապայի գրպանն ու երեսը ծածկած ետ փախավ։

Բեռնած ջորիների, եզների ու ոչխարի քարավանի հետ Եսային դուրս եկավ Ճակատենից։ Որոշ տեղ նրան ուղեկցում էր որդին։ Հայրը չէր խոսում նրա հետ։ Մոայլ պատկերը ցնցում էր նրան։ Ձեռքերն ասես այրվում էին աշխարհ չեկած թոռան մարմնի ջերմությունից։

***

Արքայական պատվիրակությանը ճանապարհ դնելուց մի շաբաթ հետո Գանձասարից սուրհանդակ եկավ Հալիձոր։ «Թագավոր-կայսրը գալիս է,— Դավիթ-Բեկին գրել է Հովհաննես-Ավան իշխանն ու կաթողիկոսը։— Շտապիր զորքով ժամանել Գանձակ՝ նորին մեծությանը դիմավորելու։ Այնտեղ է գալու նաև վրաց Վախթանգ թագավորն իր զորքով»։

Ուրիշ ի՞նչ ուրախություն էր հարկավոր Դավիթ-Բեկին։ Կատարվում էր այն, ինչին ձգտում էին, ինչի մեջ տեսել էին իրենց հույսը։ Բեկն իսկույն մեկնեց Զագեձոր։ Այնտեղ իր ձեռքով կազմեց-կապեց ներքին գավառների զորագնդերը ու, հանձնելով Մխիթար սպարապետին, հրամայեց մեկնել Գանձասար՝ Հովհաննես-Ավան իշխանի զորքին միանալու և Պետրոս ցարին դիմավորելու համար։

Սպարապետին առանձին ասաց.

— Թագավոր կայսրին ասա, որ Թուրքաց կողմերից սպառնացող վտանգի պատճառով ես չկարողացա ամբողջ զորքով ինքս գալ նրան դիմավորելու։ Ամեն ժամ սպասում ենք Թուրքին։ Տղայություն կլինի երկիրը թողնել առանց զորքի։

Մխիթար սպարապետը գնաց երեք հազարանոց սպառազեն ձիավորներով։ Նրա հետ էին Տեր-Ավետիսը, մելիք Բարխուդարն ու մելիք Եգանը։ Տանում էր նաև կնոջը և մեծ որդուն։ Սյունիք հարս գալուց հետո տիկին Սաթենիկը դեռ չէր եղել հորանց տանը։ Առիթ էր՝ հոր ու մոր գերեզմանին այցելելու։

Թեև դա Մխիթարի սրտովը չէր բնավ, բայց այս անգամ չուզեց մերժել կնոջ խնդրանքը։

Հայոց այրուձին ճանապարհ ընկավ մարտ ամսի երկրորդ շաբաթվա առաջին օրը։ Պայծառ առավոտ էր՝ թարմ, գարնանային։ Ճանապարհը լցվում էր լեռնալանջերով, պտույտներ կազմում, ժայռերի վրայից նետվում մթին ձորերն ու հոգնած, հևալով բարձրանում ծերպերը։ Երբեմն մի ձիավոր հազիվ էր անցնում անհնարին լեռնակապը։ Այրուձիու առջևից քշում էին գարիով ու ալյուրով բեռնած ջորիներ, մսացու արջառների երամակը, ոչխարի հոտը։

Մեծ Սյունիքի լեռները մնացին ետ։ Սպարապետի գունդը մտավ Արցախի Խաչեն գավառը։ Այստեղ ևս լեռները թանձրամած էին անտառներով, գրեթե անմատչելի։ Սակայն գյուղերը շատ էին, կուտակված իրար կտրտող ձորերի խոռոչներում, լեռների դարավանդներում։ Դրանք միմյանց հետ կապված էին արահետների նոսր ցանցով։ Խաչենցիներն աղմուկով դուրս էին գալիս գյուղերից, այծի ճարպկությամբ անցնում քարակապերն ու ցնծությամբ դիմավորում իրենց զորքի սպարապետին։ Նրան հյուրասիրում էին, մարդիկ դնում հետը՝ մի գյուղից մյուսն ուղեկցելու։ Շատերը միանում էին նրան՝ Գանձակ գնալու համար։

Սպարապետին ուրախացնում էր այն վիթխարի ոգևորությունը, որ հայ ժողովրդին պատճառել էր ռուսների մոտալուտ գալը։

Գնում էին անվերջանալի անտառների միջով։ Կաղնուտներում վարազ ու արջ էին խփում, որոնք այնքան շատ էին, որ ուղղակի ընկնում

էին ձիերի սմբակների տակ։ Դաղարները կարճ էին։ Շտապ կերակրում էին ձիերին, որսի միսը խորովում ու նորից շարունակում ճանապարհը։

Հասան Խաչենի կիրճը։ Վերելքը դարձավ անհնարին։ Սպարապետը հրամայեց փողեր փչել։ Վեքեներում՝ ատամնավոր ժայռերի ծերպերին մարդիկ երևացին։ Երբ բարձրացան վերջին սարի թամբը, երևաց լայնածավալ տափաստանը։ Դա Քուռի հովիտն էր։ Հեռվում, մշուշի մեջ, ամպերի վրա բազմել էին Կովկասի լեռնագագաթները։ Հովիտն սկըսվում էր լեռնապարի փեշերից ու, իր գրկում օրորելով օձագալար Քուռը՝ գնում, ծավալվում էր դեպի Կասպից ծովը։

Գանձասարում սպարապետին դիմավորեցին շուքով։ Վանքի աշտարակներից, սղնախից ու մոտիկ Վանք գյուղի զինվորական ճամբարից թնդանոթներ արձակեցին։ Հովհաննես-Ավան իշխանը անտառախիտ ձորապռնկից մինչև վանքի դարպասները զույգ տողանով շարել էր իր զորքը։ Զինվորները հրացանային համազարկով դիմավորեցին սպարապետին։ Սաթենիկի աչքերը չէին ցամաքում։ Հուզմունքից թուլացավ, երբ նկատեց հորեղբորը՝ Աղվանից Եսայի Հասան Ջալալյան ծերունի կաթողիկոսին։ Կաթողիկոսը ոտքով եկավ ընդառաջ, գրկեց սպարապետ փեսային, ու նրա պարթև ուսերը ցնցվեցին։

— Կատարվո՞ւմ է, ժողովո՛ւրդ հայոց։ Աստծո ողորմությունը հասնում է մեզ։ Գնանք, ռուսաց թագավորի փեշն ընկնենք։ Գալի՞ս է... Բացվում է փրկության ճանապարհը հայոց։

Սաթենիկ տիկնոջն իջեցրին ձիուց։ Սա շաղված աչքերով գնաց դեպի հորեղբայրը։ Կաթողիկոսը սրբեց աչքերը։

— Դո՞ւ էլ, դո՞ւ էլ, աղջի՛կս, Սաթենի՛կ... Այս ի՞նչ աստվածառաք ուրախություն բերիր ինձ,— հուզված, կերկերուն ձայնով ասաց նա։

Սաթենիկը նետվեց նրա գիրկը։ Կաթողիկոսին շրջապատած եպիսկոպոսներն ու վարդապետները հազիվ ճանաչեցին Սաթենիկին՝ այն մանկահասակ, ուշիմ աղջկանը, որ այնպես եռանդ ուներ ուսումնառության մեջ և անհավատալի էր, թե նա մի օր մարդու կգնա, երեխաներ կունենա։

Հորեղբոր գրկից պոկվելով՝ Սաթենիկը քաշեց կողքին կանգնած որդու թևքը։

— Որդիս է, հորեղբա՛յր, Ահարոնը...

— Օ՜... Ողորմած ես, տե՛ր մեր, աստվա՛ծ մեր,— շշնջաց կաթողիկոսը։

Ահարոնը ամաչ-ամաչ փաթաթվեց ծերունուն, որի զգեստներից խնկի ու մագաղաթի հոտ էր գալիս։ Ծերունին երկար ժամանակ իր գըրկից բաց չթողեց տղային։ Ջրակալած աչքերով, ջերմ քաղցրությամբ էր նայում նրան։

— Այս ի՞նչ անուշիկն ես, զավա՛կս,— խոսեց նա։— Աստված քեզ հետ լինի։ Հապա մյուս եղբորդ ինչո՞ւ չես բերել։

— Նա դեռ փոքր է, վեհափառ հայրիկ,— պատասխանեց տղան։

— Տիրոջ աջը վրան։

Կաթողիկոսը Սաթենիկին ու Ահարոնին ուղարկեց վանքի իր հարկաբաժնում հանգստանալու, իսկ ինքը գնաց սպարապետի զորաբանդին ողջունելու, որ արդեն դուրս էր եկել ձորից ու մարտական տողան էր կազմում։ Սյունեցիները խանդավառ բացականչություններով դիմավորեցին նրան։

Վեհ էր Աղվանից Եսայի Հասան Ջալալյան կաթողիկոսը։ Բարձր հասակ ուներ նա, պատկառելի դեմք ու կորովի հայացք, որ կարծես թշնամիներին շփոթեցնելու համար էր աստված պարգևել նրան։ Նա գոհ մնաց սյունեցիների մարտական շարքերից, կեցվածքից։ Նրա աչքերը լցվեցին, բայց կարողացավ արցունքները զսպել ու մի սրտառուչ պահպանիչ կարդաց նրանց համար։ Բայց նա մտքում դժգոհեց, երբ իմացավ, որ Դավիթ-Բեկը չի եկել ու սակավ զորք է ուղարկել Պետրոսին դիմավորելու։ Հովհաննես-Ավան իշխանին ևս դուր չեկավ Բեկի արարքը։ Այդ նկատեց սպարապետը, բայց լռեց, չցանկացավ օտարների ներկայությամբ քացատրություն տալ։

Կեսօրից հետո, կուշտ ու կուռ կերած, գնացին Բում ավանը։ Այնտեղ էր հավաքվել Արցախի զորքի մի մասը։ Եկել էին Մռավ լեռներում բուն դրած Մեծ Սղնախի գնդերը, Քիրսի Փոքր սղնախների զորքերը։ Նրանք տեղավորվել էին ավանի փողոցներում, կալերում, հրապարակներում։ Հարյուրավոր վրաններ էին տնկվել իրար մոտ, իրար կից։ Ձիերը վրնջում էին՝ սեպերը ձիգ տալով։ Նրանց հրապուրում էր լեռնային ազատ օդը, ծիլ տված սիզախոտի բույրը։

Արցախցիները սպասում էին սյունեցիներին, որ միասին գնան Գանձակ։ Երբ սպարապետն ու Հովհաննես-Ավան իշխանը մենակ մնացին իշխանի վրանում, նա հարցրեց.

— Արդյոք հիվանդ չի՞ Դավիթ-Բեկը, տե՛ր սպարապետ։

— Ոչ, տե՛ր իշխան,— պատասխանեց սպարապետը։— Նա գնացել է Վայոց ձորի կողմերին կառուցվող ամրությունների աշխատանքին հետևելու։ Թուրքերը անհանգստանում են։

— Գոնե զորքն ուղարկեր...

— Վտանգ կա արևմուտքից, իշխա՜ն, զգուշությունը լավ բան է։

— Անշուշտ,— համաձայնեց իշխանը։— Բայց եթե թագավորի գալն իմանան, թուրքերը սիրտ չեն անի։

— Աստված տա, սակայն գազազած են. թիկունքներին Անգղիան է, Ֆրանկի թագավորը։ Աստված նրանց պատժի։ Թուրքին քըս կտան, կգցեն մեր մարմնին։

Երկուսն էլ լռեցին։ Մոմակալի վրա ուրախ ճրթճրթում էին սպառվող մոմերը...

Դրսում հետզհետե մրափում էր բանակը։

***

Հայոց քսան հազարանոց բանակը լեռներից իջավ դեպի Քուռ գետի հովիտը։ Նրա ետևից փոշու մեջ գալարվում էր գումակը։ Հովիվները քշում էին ոչխարի հոտերը, արջառների ու ստերջ կովերի նախիրները։ Դրանք տանում էին ռուսաց բանակին նվեր։

Երկու օր հետո լեռներից իջան Գանձակի դաշտը։ Կեսօրին հորիզոնի վրա փոշու ամպ նկատեցին։ Առաջ ուղարկած դեռքերը ձիերի ականջները մտած վերադարձան բանակ։

— Գալիս են,— հայտնեցին նրանք։— Վրացիները մոտենում են։

Հայ զորապետները՝ Հովհաննես-Ավան իշխանի, Մխիթար սպարապետի ու Եսայի կաթողիկոսի գլխավորությամբ, դրոշներով, խաչ ու խաչվառներով մի փոքր ընդառաջ գնացին վրացիներին։ Սրանք չուշացան։ Նախ երևացին նրանց դրոշները, ապա Վախթանգ թագավորի փայլատակող սաղավարտը։ Հայոց զորքը հոսեց դաշնակից զորքին ընդառաջ։

Ոսկեգույն պատմուճանների, սաղավարտների, զրահների ու բազմերանգ դրոշների վետվետ գույներով ողողված թագավորական շքախումբը շեշտակի մոտենում էր՝ իր ետևից ձգելով զորքի անվերջանալի շարանը։ Հայերի բանակից բարեկամական փողեր հնչեցին։ Նույնն արին նաև վրացիները։

Վախթանգ թագավորն իր շքախմբով մոտեցավ. զսպեց գնացքից եռացող նժույգն ու առույգ իջավ թամբից։

Փոշին նստեց։ Թագավորին դիմավորեցին հայ զորավարները։ Դրոշակները խառնվեցին, դարձան գույների մի վետվետող զանգված։ Թագավորը ռազմական հանդերձի մեջ էր։ Ցից սաղավարտի վրա փայլատակում էր ոսկե խաչը։ Նա թեթևակի ճերմակած մորուք ուներ ու սև, կրակոտ աչքեր։

— Ողջո՜ւյն հայ եղբայրներին,— գոչեց նա՝ ձեռքը օդում թափահարելով։

— Թող ողջ լինի մեր եղբայր թագավորը,— պատասխանեցին հայ զորավարները։

Թագավորը համբուրեց կաթողիկոսի ձեռքը։ Հայ իշխանները փաթաթվեցին նրան ու համբուրվեցին ամբողջ զորքի առաջ։ Դաշտը դղրդաց երկու արյունակից ժողովուրդների զորքերի ցնծության աղաղակներից։

— Աչքներս լո՜ւյս,— գոչեց ծերունի կաթողիկոսը։— Գալիս է փրկիչը քրիստոնեից...

— Գալի՜ս է, գալի՜ս...— հուզվեց թագավորը։

— Ինչպես մեր փրկիչ Քրիստոսը ծաղկազարդի օրը եկավ Երուսաղեմ, այնպես էլ Մոսկվայի բարեգութ թագավորն է այժմ գալիս մեր տառապած աշխարհները՝ մեզ անօրենից փրկելու համար։ Ցնծացեք ու փառք տվեք նրան։

— Փա՜ռք,— միաբերան գոչեցին հայ ու վրաց զորավարները։

— Փա՜ռք, փա՜ռք...— որոտաց զորքը։

— Ուրեմն,— ոգևորված շարունակեց կաթողիկոսը,— ամբողջ սրտով օվսաննա՜ գոչենք նրան և պատրաստ լինենք ընդունելու նրա ձեռքը՝ ասելով. «Օրհնյա՜լ եկար։ Հանուն տյառն՝ օրհնություն որդուն Դավթի, փա՜ռք ի բարձունս»։

— Փա՜ռք...— խլեցին, գոչեցին ծավալված բանակները։

— Մեր աչքերը լո՜ւյս,— իրար գրկելով գոչում էին հայ ու վրացի զինվորները։— Ահա դարձյալ միասին ենք, միակամ ու միաբազուկ։

— Միակամ էլ կմնանք այժմ և հավիտյան։

Եղբայրական ցույցից հուզված հայոց ու վրաց զորքերը բարձրաձայն աղաղակում էին, գոռում՝ ոգևորությունից իրենց կորցրած։ Ծնծղաներ ու փողեր էին հնչեցնում, թմբուկներ զարկում։

— Միաբա՜ն...— որոտում էին բանակները, և նրանց ձայնը տարածվում էր Քուռի հովտում։

Ահարոնը Զագեձորի գնդի հետ էր՝ Եսայի և Թովմա հարյուրապետների մեջտեղը։ Նրա ականջները դղրդում էին անընդմեջ կանչերից. կոկորդը լարում էր, բերանը լայն բաց անում, փորը սեղմում, որպեսզի իր ձայնն ավելի հուժկու հնչի, քան Եսայու կոպիտ, գայլի ոռնոց հիշեցնող բղավոցը։ Նա լավ տեսնում էր վրաց թագավորին՝ սաղավարտով,

լանջախաչով, ոսկեպատ թրով, արքայական ծիրանիով, որ կարծես բոցե լեզուներից էր հյուսված։ Թագավորի դեմքը բարի էր, ժպտուն, նա մատանիներով ծանրացած ձեռքը երբեմն տանում էր աչքերին։ Բայց թագավորը գավորը հասակով բարձր չէր (դա տխրեցրեց Ահարոնին)։ Թագավորի գլուխը հազիվ էր հասնում Հովհաննես-Ավան իշխանի ուսին։ «Մոսկովի թագավորը, անշուշտ, բարձրահասակ կլինի»,— մտածեց Ահարոնը։ Ապա պատկերացրեց, թե ինչպիսի՞ շքեղություն կունենա Դավիթ-Բեկը, եթե թագ ու արքայական զգեստներ կրի։

Զորավարներով շրջապատված թագավորն առաջ եկավ։ Ահարոնին թվաց, թե նա նայեց իրեն ու նույնիսկ ժպտաց։ Մի վայրկյան կարծեց թե ճախրում է երկնքի կամարներով։ Բայց թագավորը չէր նայում նրան։ Ահարոնը տխրեց։ Այնպե՞ս կուզեր, որ թագավորը տեսնի իր կրծքի մեդալիոնը՝ Պետրոս կայսեր պատկերով, որ իրեն էր նվիրել ռուսաց պատվիրակը։

Վախթանգը հետաքրքրությամբ դիտում էր հայոց զորքը։ Կանաչ կապաներ հագած, երկար գլխարկներով, ճերմակ գլխանոցներով զինվորները երիտասարդ ու քաջատես էին։ Նրանք զինված էին իրենց լեռներում ձուլած հրացաններով, երկար թրերով, նիզակներով, նետուաղեղով։ Վախթանգին դուր եկավ նրանց ռազմակարգը։ Զինվորները կանգնած էին երեք-երեք, մեջընդմեջ։ Հայոց գնդերում կային քահանաներ ևս։ Դրանք նույնպես զինված էին ու իրենց տարազով քիչ էին զանազանվում զինվորներից։

Զորատեսից հետո մեծ հացկերույթ եղավ բաց դաշտում։ Մինչև գիշերվա կեսը խրախճացան՝ իրար խառնված։ Հայերը ոչխարի խորոված կտորներ էին հրամցնում վրացիներին, սրանք սնամեջ կոտոշներով գինի էին տալիս նրանց։ Մեղրու, Կարճևանի, Շիվանիձորի սպիտակ, թունդ գինիներին սովոր հայերը հեշտությամբ էին դատարկում վրացական մեղմաբարո գինին։ Բաց դաշտում, ձիու թամբերին նստած գինովանում էին նաև զորավարները։

Եսայի կաթողիկոսը ճերմակ ձեռքը խփեց գետնին.

— Այս հողը մեր եղբայրության երկու հազար տարվա վկան է,— բացականչեց նա։— Ամեն թիզի վրա միատեղ է հայի ու վրացու արյունը, զավակնե՞րս, լա՞վ հիշեցեք։ Մեր Վարդան զորավարն այստեղ է իր բանակի մեջ առել ձեր ու աղվանից հեծյալ գնդերը և նետվել խալխալ՝ պարսիկներին մեր աշխարհի սահմաններից քշելու։ Այստեղ են եղբայրացել մեր Գագիկ արքան ու ձեր Բագրատ Կյուրոպաղատ երրորդը։ Միաբազուկ գրոհելով Գանձակի արաբ էմիր Ֆաղլունի վրա՝ նրան

ջարդել, վանել են մեր աշխարհից։ Ուրեմն արժանի հետևորդները լինենք սուրբ ու անսուտ երդումով իրար բազկակից նախնիներին մեր։

— Լինե՞նք, լինե՞նք,— ուրախ կրկնեցին թագավորն ու հայ և վրաց զորավարները։

Լուսաբացին զորական կարգով շարժվեցին դեպի Գանձակ։ Գնում էին գունդ առ գունդ, մեջընդմեջ, մեկ՝ հայոց, ապա՝ վրաց գնդերը։ Հեծելազորը գալիս էր ետևից։

Երկու ժամվա ճանապարհ էր մնացել, որպեսզի միաբան զորքը հասնի Գանձակ, երբ բաց դաշտում երևաց նրանց ընդառաջ եկող Գանձակի ադրբեջանական բանակը։

Գանձակեցիների տասը հազարանոց հեծյալ և հետևակ բանակի առջևից բազմաթիվ ու բազմագույն դրոշների հովանու տակ, ճերմակ ձիերի վրա գալիս էին ծերունի Մահմադ Ղուլի խանը, ադրբեջանցիների հոգևոր առաջնորդ Ալի-հազրաթ Շեյխ Ուլ-Իսլամը, գանձակեցի մելիք Հովսեփն ու հայերին քաջածանոթ Քալբալի բեկ զորապետը։

Հենց որ նետընկեց հեռավորություն մնաց բանակների միջև, երկու կողմից բարեկամության փողեր հնչեցին։ Բանակներն արագացրին իրենց ընթացքը և միացան արձակ դաշտում։

Զորավարները նորից իջան ձիերից։ Մահմեդ Ղուլի խանը բազկատարած գնաց դեպի վրաց և հայ զորապետները։

— Բարի գալո՞ւստ, թանկագի՞ն եղբայրնե՞ր,— ադրբեջաներեն բացականչեց նա։— Թող մեր սրտերն ու մտքերը հավիտյան միասին լինեն, ինչպես միասին են մեր հողն ու ջուրը, մեր օջախն ու հացը։

Նա փաթաթվեց նախ թագավորին, ապա Հովհաննես-Ավան իշխանին ու Մխիթար սպարապետին։ Մյուսները ևս արին նույնը։ Եսայի կաթողիկոսն ու Ալի-հազրաթ Շեյխ Ուլ-Իսլամը համբուրվեցին։

Այնինչ երեք հարևան ժողովուրդների բանակները գոչում էին ոգևորված.

— Լինենք միաբա՞ն...

Զորքերը խառնվեցին իրար, ճանաչներ ու հին ծանոթներ գտան և այդպես խառնված, ոգևորված, հուզված շարժվեցին դեպի Գանձակ։

Քուռ գետի ընդարձակ հովտում գարունը պերճացել էր տափաստանային հմայքներով։ Թեև տակավին մարտի առաջին կեսն էր, բայց կանաչն արդեն ծածկվում էր ալիք-ալիք, իսկ վաղահաս գարին հորանց էր գնում արդեն։

Միացյալ բանակները կանգ առան Զոլակի դաշտում, որտեղից երևում էին Գանձակի մինարեներն ու եկեղեցիների բարձր գմբեթները։

Անհամար վրաններ բուսան Կոշկար և Քուռ գետերի խառնուրդ թերակղզում։ Ջինջ օգում մեղմ խշշացին հայոց, վրաց և ադրբեջանական զորագնդերի դրոշները։

Բանակեցին ու սպասեցին։

***

Պատանի Ահարոնի համար ամեն ինչ արտակարգ հետաքրքիր էր։ Ապքում էր հոր վրանում։ Առավոտից իրիկուն հորը հյուր էին լինում վրաց իշխանները, ադրբեջանցի բեկերը, հայ մելիքները։ Երբեմն սպարապետն ինքն էր գնում թագավորին կամ խանին այցի։ Հաճախ հետը տանում էր նաև Ահարոնին։ Դրանից տղան հպարտանում էր անսահման։ Մանկության շապիկը պատռվել էր, ու նա իրեն իսկական զինվորական էր համարում։ Հյուրերի մոտ իրեն պահում էր արժանավայել, հպարտ, մեծավարի։ Վիրավորվում էր, երբ մեկնումեկը նրան, իբր երեխայի, որևէ բան էր հանձնարարում։

Ջոլակ հասնելու օրն անմիջապես սուրհանդակներ էին ուղարկել Կասպից կողմերը՝ Պետրոս թագավորին իմաց տալու, որ իրենք հիսուն հազարանոց միացյալ բանակով սպասում են նրա գալստյանն ու հրամանին։

Ճեպագնաց սուրհանդակները ետ եկան ինն օր հետո։ Նրանք բերել էին Բաքվում բանակած ռուսաց զորքերի հրամանատար, իշխան Դոլգորուկովի նամակը։

«Մեր ուրախությանը չափ չկա, որ դուք՝ հայերդ, վրացիներդ ու ադրբեջանցիներդ, միավորվել եք և մտել մեր ողորմած թագավորի դրոշի տակ,— գրում էր իշխանը։— Աստվածաշունչ թագավորը ճանապարհին է, շուտով կհասնի Բաքու, ու մենք նրա հետ կգանք ձեր բանակատեղին։ Կամեցող աստծու օգնությամբ շուտով միասին կլինենք»։

Նամակն իսկույն թարգմանեցին երեք լեզուներով, բազմացրին ու կարդացին զորքի մեջ։

Ջոլակի ցածր ու անգույն երկինքը թնդում էր հիսուն հազար մարդկանց ոգևորված կանչերից։

Եսային իր հարյուրյակը տարավ վրաց հեծելազորի նստատեղը։ Ոչխար մորթեցին։ Եսային երկու կոտող գինի խմեց ու սկսեց պարել զուռնայի նվագի տակ։ Շուտով նրանց միացավ նաև ադրբեջանական մի հարյուրյակ։

— Եղբայրնե՛ր, սիրելինե՛րս,— գոռում էր Եսային,— մեր միաբանությունն ահուդող կդցի Ռումի Օսմանլուի սիրտը։ Խմենք ռուսաց թագավորի արևշատության...

— Խմե՛նք, խմե՛նք...— գոռում էին այս ու այն կողմից։

— Հա՛, հա՛... Չարը գնաց, բարին եկավ, բարի՛ն...

Թաղիքե գլխարկով, կարմիր, ուռած այտերով մի վրացի հարյուրապետ դաշույնով կտրեց իր բութ մատի սեռը։

— Արյամբ կնքենք մեր եղբայրությունը,— գոչեց նա։

Եսային ու ադրբեջանցի մի յուզբաշի նույնպես կտրեցին իրենց մատները. երեքն իրենց արյունը խառնեցին միմյանց։

— Պրծա՛վ,— գոչեցին նրանք՝ համբուրելով միմյանց գինեհամ բեղերը։— Էլ մեր եղբայրությանը վերջ չկա։

— Չկա՛, չկա՛,— խանդավառվեցին զինվորները։

Զորքը խրախճանում էր։ Քահանաներին ու մոլլաներին քաշքշում էին, ստիպում նորից կարդալ Դոլգորուկովի նամակը։ Հետո գինի էին խմեցնում, լցնում մորուքներին ու քրքջում՝ փորները բռնած։

Զորավարներն ականատես էին իրենց զորքերի եղբայրացմանը։ Նրանց աչքերն արցունքոտվում էին։ Եսայի կաթողիկոսը շշնջում էր.

— Փա՛ռքդ շատ, աստվա՛ծ, կատարվում է Մեսիայի պատվիրանը։

***

Իրիկնամուտի թափանցիկ մշուշը հարսանեկան քողի պես թրթռում էր Բոսֆորի ժայռոտ ափերին։ Ծովն ընկնող արևից հրդեհվել էին Ոսկե եղջյուրի փրփուրները, Ստամբուլի մինարեների երկար գմբեթները, գորշ պատերի արանքներում խեղդված շուկաներն ու խանութները փակվում էին։ Միայն տեղ-տեղ դեռ լսվում էր մինարեների վրա թառած մոլլաների ծկլթոցը։

Շուտով դադարեցին նաև այդ ձայները։ Փողոցները դատարկվեցին։ Քաղաքը մնաց թափառական շներին ու ոտից-գլուխ կարմիր հագած գիշերապահ զինվորների տնօրինությանը։

Սուլթան Ահմեդը նոր էր վերադարձել Այա Սոֆիայից։ Այդ օրվա երեկոյան նամազը այնտեղ էր կատարել։ Թեև պալատում դեռ մեծ ու փոքր արթուն էին, բայց միջանցքներն ու սրահները դատարկ էին։ Հատ-ու կենտ սպասավորները, հանդիպելով ծանր ու մռայլ քայլող սուլթանին, սարսափած նետվում էին գետնին ու ճակատները անվերջ կպցնում գունավոր սալաքարերին։ Ոչ մեկին չէր նայում սուլթանը։

Երբ մտավ իր ընդունարանը, ստվերի պես իրեն հետևող մեծ վեզիրը մեջքից կիսվելով, ասաց.

— Կախեթի Մուհամմեդ Ղուլի[1] խանից սուրհանդակ է եկել։

Սուլթանը մտավ շլացնող լույսերով ողողված մի սենյակ։ Այդտեղից մի լայն դուռ տանում էր դեպի կանանոց։ Թող գետնի տակը մտնեն այդ Մուհամմեդ Ղուլի խանն էլ, նրա սուրհանդակն էլ։ Այսօր բաղնիք են տարել ֆրանսիական դեսպանի նվիրած ճերմակամորթ աղջկան... Ինքը դեռ ձեռք չի տվել նրա մատաղ կրծքին... Մեծ վեզիրը, թաթերի վրա, կատվի զգուշությամբ հետևեց նրան։ Սուլթանը կանգ առավ։ Թափանցիկ մետաքս հագած մանկամարդ մի աղջիկ ոսկե մատուցարանի վրա սուրճ բերեց։ Սուլթանը բյուրեղապակյա գավաթը մոտեցրեց գորտի բերան հիշեցնող մուրթին։ Հոգնած, հանգստության կարոտ աչքերով նայեց մատուցող աղջկան։ Մի նոր փոսիկ հայտնաբերեց նրա կզակին։ Կախարդող փոսիկ էր։ Դեմքի մորթը նուրբ էր՝ նոր բացված հովտաշուշանի թերթիկի պես։ Գնա ֆրանսուհո՞ւ մոտ, թե հենց հիմա նետվի այդ թափանցիկ գառան վրա ու հոշոտի նրան։

Սուլթանը պղտոր հայացքը շուռ տվեց վեզիրի կողմը։ Սա նորից երկուտակվեց։

— Վրաց Վախթանգ թագավորը միացել է հայերի ու ադրբեջանցիների հետ,— ասաց՝ աչքը մանկամարդ աղջկա մերկ սրունքներին։— Նրանք հիսուն հազարանոց բանակ են դրել Քուռ գետի ափին։ Ուռուսների գյավուր Պետրոսը գալիս է նրանց միանալու։

Սուլթանը մի ումպով խմեց սուրճը։ «Բարալիկ է,— մտածեց մատուցող աղջկա մասին,— իսկ ֆրանսուհին առյուծի կուրծք ունի»։ Նա գլխից հանեց ութ ծալ փաթթոցը։ Սուր ճաղատը փայլեց գլաքարի պես։ Նստեց ոսկեհուռ գահավորակին։ Մանկամարդ աղջիկը չոքեց նրա առջև ու շուշան մատներով սկսեց տրորել սուլթանի ոտքերը։ Սուլթանը կապույտ երակներով այլանդակված ձեռքերը դրեց ծնկներին։ Սպասեց։

— Ուռուսները կմտնեն Գյանջա, Թիֆլիս ու Երևան։ Այլևս դժվար կլինի նրանց դուրս մղել, տիեզերքի՛ կենտրոն,— նորից խոսեց մեծ վեզիրը։— Պարսկաստանը կգնա մեր ձեռքից։

— Ի՞նչ է մտածում սերասկյարը,— վերջապես խոսեց սուլթանը։

— Հարյուր հիսուն հազարանոց բանակ է հավաքել Քյոփուրլու Աբդուլլահ փաշան։ Նստած է Էրզրումում. մնում է քո աստվածառաք խոսքին։ Հրաման տուր, ո՛վ սուլթանների սուլթան։

— Գանձարանը դատարկ է։

— Փող գտել եմ, ալլահի՛ ստվեր,— շտապեց ասել վեզիրը։— Քո ոտքի փոշին մտածել է այդ մասին։ Անգլիական դեսպանը երկու հարյուր հազար ոսկի է խոստանում։ Ֆրանկի գյավուր Դը-Բոնակը՝ ևս նույնքան։ Հոլանդացիք վարկ են տալիս առանց հավելյալի։ Առատաձեռն դարձել անօրենները։ Մեր հավատի ու գահի թշնամի ուռուսը հզորանում է, ձեռք է մեկնում այն աշխարհներին, որ մերը պետք է լինեն։ Կանխիր գյավուր Պետրոսին, ո՛վ աստվածների կողմից թագադրված տեր մեր։

— Զո՞րքը,— խոժոռեց սուլթանը։

— Առաջին անգամը չէ, որ քո մեծության զորքը գնում է թշնամու վրա։ Զորքը տրտնջում է անգործությունից։ Թե չգնան գյավուրների վրա, կգան, ալլահը խափանի, մեզ վրա... Զորքը ճերմակ աղջիկներ ու հնչուն դրամ է ուզում։

Սուլթանը վեր կացավ։ Վճռված է, գնում է ֆրանսուհու մոտ։ Ոտքով հրեց մանկամարդ աղջկան։ Սա արագ հեռացավ։ Սուլթանը նայեց վեզիրին։ Իրար անսովոր մոտ նրա մանրիկ աչքերը փայլատակեցին։ Ծառան գնաց դեպի կիսաբաց դուռը։

— Կանչիր սերասկյարին,— նետեց ուսի վրայով։

Մեծ վեզիրը թեթևացած հոգոց հանեց։ Թաթերի վրա քայլեց դեպի ելքը... Թևեր էր առել։ Իր հարկաբաժնում իրեն էր սպասում անգլիական դեսպանը։ Դեսպանն իր հետ բերել էր ոսկու այն պարկը, որ խոստացել էր «բախշիշ» տալ, եթե ինքը կարողանա «արդարության արևին» մղել պատերազմի՝ ռուսների դեմ։

Ո՞ր հիմարը կհրաժարվի ոսկու պարկից։

Բայց դեռ չէր հասել ծանր վարագույրներով ծածկված դռներին, երբ դեմ առ դեմ հանդիպեց ֆրանսիական դեսպան Դը-Բոնակին։ Մանր աչքերով, ցածրահասակ ֆրանսիացին այնպես ոլորվեց վեզիրի առջև, որ կարծես միջից պիտի կիսվեր։ Մեծ վեզիրը բարկացավ։

— Անժամանակ եկար,— չարությամբ ասաց նա։— Արդարության բախշողը գնաց վայելելու քո թագավորի պարգևը։

Բայց դեսպանն արդեն ուղղվել և նրա ուսի վրայով նայում էր դիմացի դռանը։ Այնտեղ՝ վարագույրները կիսով չափ ետ տարած, կանգնել էր սուլթանը։ Դեսպանը մի կողմ հրեց մեծ վեզիրին։ Մանր քայլերով մոտեցավ սուլթանին, խոնարհում արեց անպատշաճ։

— Շտապի՛ր, երջանի՛կ սուլթան...— ծղրտաց նա։— Պետրոսը Դերբենդից շարժվում է դեպի Գանձակ։ Դավիթ-Բեկն ու Գանձակի խանը միացել են Վախթանգին և սպասում են Պետրոսին։ Իմ թագավորը չի ցանկանում, որ Նոյ նահապետի սրբատուն Արարատն ընկնի Պետրոսի ճանկը։ Ձեռքիցդ կգնա նաև Պարսկաստանը ողջ... Պետրոսը լեհերի հետ

[1] Աշգուրաց վրացի՝ Կոստանդին անունով։

խաղաղության դաշն է կոել։ Նա ցանկանում է խավարեցնել Բոսֆորի կիսալուսինը։

Սուլթան Ահմեդի դեմքի ոչ մի մկանը չշարժվեց։ Գունատ էր, սառն ու հանդիսավոր։ Միայն աչքերն էին չարությամբ փայլատակում։ Սպասում էր էլի ինչ-որ բանի։ Դեսպանը կռահեց նրա միտքը։

— Մենք լեհերին կստիպենք հանդարտ մնալ, ձեռք չպարզել Պետրոսին,— գողություն արած մարդու պես՝ շուտասելուկով վրա տվեց Դը-Բոնակը։— Շվեդները կգնան Ռիգայի վրա։ Մենք Լիֆլանդիան ոտքի կհանենք ռուսական արշի դեմ։ Իսկ դու, ծիրանածի՜ր սուլթան, գնա հայերի ու վրացիների աշխարհները, պատժիր նրանց, Պետրոսին վոընդիր Կասպից ծովի ափերից։

Սուլթանը դառը ժպտաց։

— Ջորքը ոռճիկ է ուզում։

— Կա՛,— դեսպանը շփեց ձեռքերը։— Փող որքան ուզես կտանք։

— Իսկ զե՞նք։

— Երկու նավ զենք կա նեղուցում։

— Խոսիր մեծ վեզիրի հետ։

Սուլթանը գնաց։ Դեսպանը շուռ եկավ դեպի մեծ վեզիրը։ Սա ձեռքերը ծալել էր փորին, գլուխը ետ գցել, աչքերը կկոցել լույսից։

— Հիմա ի՞նչ կասես, ծիրանաշո՞ղ վեզիր,— դեմքը ծամածռելով՝ հարցրեց ֆրանսիացին։

— Փաշաները պատերազմ չեն ուզում։— Սառը պատասխանեց վեզիրն ու գիշատիչ հայացքով նայեց իրենից մի գլուխ կարճ դեսպանին։

— Գիտե՛մ, գիտեմ,— ծռմռվեց դեսպանը։— Երկու հարյուր հազար ոսկին պատրաստ է։

— Ուռուսի դեսպան Նեպլյուևը երեք հարյուր է տալիս։

Դը-Բոնակի ծնոտը դողաց։ Թուքը կուլ տվեց։ Խորամանկ աչքերը ման ածեց շուրջը։

— Կես միլիոն,— թուքը շաղ տալով՝ գրեթե ճչաց նա։

Վեզիրը քրտնած ափով փակեց նրա բերանը։

— Ցավա՜ղ, գյավո՜ւր։ Գնա՜նք։

Նույն գիշեր վեզիրն իր ձեռքով գանձարանում տեղավորում էր Դը-Բոնակից ու անգլիական դեսպանից ստացած ոսկու պարկերը։ Քրքջում էր քրիստոնյաների անխելքության վրա։ Իրար միս են կրծում, իսկ մեջտեղը շահում են իրենք... Հի՛, հի՛, հի՛... Եվ խելագարներ կան, որոնք կարծում են, թե կարելի է խավարեցնել Բոսֆորի կիսալուսինը։

***

Ստամբուլի ռուսաց դեսպան իշխան Նեպլյուևը սաստիկ անհանգիստ էր։ Այդ օրը Բարձր Դռնից իրեն հավատարիմ հայերը լուր էին տվել, թե Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանները գաղտնի տեսակցություն են ունեցել սուլթանի և մեծ վեզիրի հետ։ Թե ինչ են խոսել նրանք, հայերին չի հաջողվել իմանալ։

Պետերբուրգից երեկ եկած սուրհանդակը հայտնել էր, որ Պետրոսն արդեն մեկնել է հարավ. Բաքվում մեծ զորք է կուտակելու և գնալու է Հայաստան ու Վրաստան։ «Հետևիր սուլթանի ամեն մի քայլին,— խրատաբար պատվիրել էր Պետրոս թագավորը։— Իմացիր անգլիական ու ֆրանսիական դեսպանների միտքը։ Մի՛ թույլ տուր, որ այդ փորձված շները սուլթանին գրգռեն մեր դեմ։ Սուլթանին հավատացրու, որ ես գնում եմ Շամախի՝ իմ հպատակ վաճառականներին կողոպտած անբարիշտներին պատժելու համար միայն։ Հավատացրու, որ ես հավիտենական խաղաղություն եմ կամենում սուլթանի հետ։ Ուղարկում եմ հարյուր հազար հոլանդական ոսկի, լցրու մեծ վեզիրի փորը»։

«Հարյուր հազա՜ր,— մտքում դառնորեն կրկնեց Նեպլյուևը,— Դը-Բոնակը ավելին կտա, ավելի՜ն... Փողի ուժով են աշխարհներ առնում»։ Իշխանը անհապաղ կանչել տվեց Պետերբուրգից եկած սուրհանդակին։

— Թագավորը ե՞րբ կհասնի Շամախի,— հարցրեց տագնապը թաքցնելու ճիգ անելով։

— Աստծո կամեցողությամբ՝ մարտի վերջերին,— պատասխանեց սուրհանդակը։

Նեպլյուևը բանբեր ուղարկեց մեծ վեզիրի մոտ և հայտնեց, որ ինքն ուզում է տեսնել սուլթանին։ Բանբերը ետ եկավ։ «Ծիրանածինը ոչ ոքի չի ընդունում»,— հայտնել էր վեզիրը։ Նույնիսկ բանբերին թույլ չէին տվել վեզիրի ընդունարանի շեմքից ներս մտնել, պատասխանել էին դռնից։

Նեպլյուևը կատաղեց։ Ուրեմն հայերի բերած տեղեկությունները ճիշտ են։ Իսկ քոսոտ վեզիրը մռութը շատ է ցցել։ Ստիպված էր անձամբ գնալ սուլթանին տեսության։ Նեպլյուևը հագավ դեսպանական զգեստները, նշանները փակցրեց, երկու կապիտան վերցրեց հետը և պատրաստվեց մեկնել Բարձր Դուռը։ Բայց, երբ հիշեց, որ կեսգիշեր է՝ շարաստվեց մեկնել Բարձր Դուռը։ Բայց, երբ հիշեց, որ կեսգիշեր է՝ շարացած զգեստները պոկեց վրայից ու պառկեց։ Առավոտը կգնա։

Գիշերը նրան արթնացրին։ Մի հայ հոգևորական ուզում էր անհապաղ տեսնել դեսպանին։ Իշխանը հրամայեց ներս բերել նրան։ Երբ

սա եկավ, դեսպանն իսկույն ճանաչեց նրան։ Հայը Ստամբուլի հայոց պատրիարքի մարդն էր՝ շարժուն աչքերով մի հոգևորական։

— Ֆրանկի Դը-Բոնակն ու Անգղիո դեսպանը կաշառեցին մեծ վեզիրին, պայծառափա՛յլ իշխան,— հևասպառ հայտնեց հոգևորականը։— Սուլթանը հրամայել է կանչել սերասկյար Քյոփուրլու Աբդուլլահ փաշային։ Պատերազմի են գնալու ձեր թագավորի դեմ։ Ճարը տես։

— Ինչպե՞ս իմացար,— հանկարծակիի գալով՝ ակամա հարցրեց Նեպլյուևը։

— Մեզ համար դժվար չէ,— դառն ժպտաց հայը։— Մե՛ զ վեզիրին մեծ կաշառք են տվել։ Շտապիր, տե՛ր դեսպան, քանի դեռ Բարձր Դուռը պատերազմի հրովարտակ չի տվել։ Եվրոպացիք ութ նավ զենք են տրամադրել թուրքերին։

Մինչև Նեպլյուևը արթնացնել տվեց երկու կապիտաններին, մինչև հագավ պատշաճ կերպով, լույսը բացվեց։ Մոռանալով, որ իր մոտ հագավ պատշաճ կերպով, լույսը բացվեց։ Մոռանալով, որ իր մոտ օտար մարդ կա, բաց արեց դրամի սնդուկներն ու հուսահատ նայեց նրանց։ Գրեթե դատարկ էին։ Իսկ հարյուր հազարով ոչինչ չես կարող անել։ Եվրոպացիք տասնապատիկն են տվել թուրքերին։ Նեպլյուևը գլուխը բռնեց։

— Ինչո՞վ կաշառեմ անկշտում վեզիրին,— դուրս թռավ նրա բերանից։

— Մի՛ հուսահատվիր,— հանդարտ ասաց հայ հոգևորականը։— Դրամը մենք կտանք՝ մեր դժբախտ հայրենիքի սիրուն։ Այնքան կտանք, որքան տվել են անգղիացիք ու ֆրանկները միասին, դեռ մի քիչ էլ ավելի։ Միայն շտապիր, ողորմա՛ծ տեր, կասեցրու սուլթանի միտքը։ Պատերազմը ձեռնտու չէ մեր տեր թագավոր Պյոտր Ալեքսեյիչին։

Նեպլյուևը գնաց։ Հայ հոգևորականը մնաց նրա դեսպանատանը՝ աղոթելով նրա գործի հաջողության համար։

Բարձր Դռան միջանցքում Նեպլյուևը երկար սպասեց։ Չհամբերեց, բարկացած հրեց դռան առջև կանգնած ծառային ու բաց արեց վեզիրի ընդունարանի դուռը։ Բայց «երևելին» այնտեղ չէր։ Ամեն պատշաճություն մոռանալով՝ Նեպլյուևը վազեց դեպի սուլթանի հարկաբաժինը։ Պահապան ենիչերիների վրա այնպես գոռաց, որ սրանք ակամա ճանապարհ տվին «գյավուրների թագավորի մարդուն»։

Սուլթանի ընդունարանի մարմարե կամարների տակ ձեռքերը կրծքին ծալած, մռայլ կանգնած էր մեծ վեզիրը։ Նեպլյուևին տեսնելով՝ նրա հոնքն անգամ չշարժվեց։ Բորբոքված դեսպանը մոտեցավ ու առանց սովորական «սալամի», ասաց պահանջկոտ.

— Հենց հիմա ինձ տար սուլթանի մոտ, հենց այս պահին։

Վեզիրը մատը դրեց շրթունքներին։

— Ցավա՜ղ...— խորհրդավոր ասաց նա։

— Ես իմ թագավորի անունից պահանջում եմ...

— Անհնարի՜ն է։ Սուլթանը մեծ նամազի վրա է։ Մոր մահվան տարելիցի օրն է։ Մուսուլմանական սրբազան կանոնով ով խախտում է հավատացյալի ջերմեռանդ աղոթքը, նա քարահար է լինում, թեկուզ կայսր լինի... Մեր օրենքը քեզ լավ պետք է հայտնի լինի, տե՛ր դեսպան։

— Դուք պատերազմ եք սկսում մեր դեմ...

— Ալլահի կամքն է երևի...

Այլևս անելիք չկար։ Նեպլյուևը շեշտակի շուռ եկավ՝ առանց հրաժեշտի խոսք ասելու։ Դա ամենամեծ վիրավորանքն էր մուսուլմանին։ Սպասում էր, որ վեզիրը պատիվ կպահանջի։ Բայց ոչինչ նման բան չկատարվեց։ Երբ դուրս էր գալիս պալատից, հանդիպեց ֆրանսիական դեսպանին։ Դը-Բոնակը եռանկյունի գլխարկը հանեց ու խոնարհ ողջունեց։

— Անպատկա՛ռ,— շեշտակի նայելով նրան՝ շպրտեց Նեպլյուևը։— Անմեղ ժողովուրդների արյունն ես վաճառո՞ւմ...

— Խը՛, խը՛, խը՛...— անամոթ քրքջաց Դը-Բոնակը։— Զարմանում եմ ձեր միամտության վրա, ռուսնե՛ր։ Արժե՞ երկու հայի ու մի կենտ վրացու համար արյուն պղտորել։ Խը՛, խը՛, խը՛...

Նեպլյուևը մի կոպիտ խոսք նետեց ֆրանսիացու շպարված երեսին։ Բայց Դը-Բոնակն իր պատիվը պաշտպանելու ոչ մի շարժում չարեց։ Նայեց չորս կողմը։ Ոչ ոք չտեսավ իր անպատվությունը և, ջորու ատամները բաց անելով, քրքջաց.

— Դիվանագիտությունը տաքարյունություն չի՛ սիրում,— ասաց մեղմ ու հեռացավ արագիլի քայլերով։

Թավրիզում երեկոն իջնում էր մինարեներից ազան ծկլթացող մոլլաների ձայնի հետ։ Դորշ մշուշ էր բարձրանում տափաստանից, թանձրանում, ասես ներկվում թանաքով ու փռվում քաղաքի վրա։ Թմրեցնող էր մշուշը, տաղտկալի էր մոլլաների ամենօրյա ազանը, որով մուսուլմաններին հրավիրում էին այցելել ալլահի տունը, ծունկի գալ ու հետույքները ցցելով ճակատները խփել խոնավաբույր գետնին՝ ալլահից հանդերձյալ կյանքի լուսեղեն փերիներ ու ջեննաթի վայելքներ աղերսել...

Մզկիթները լցվում էին ծայրից-ծայր։ Մետաքսյա թանկագին աբան մեչիտի փողու մեջ էր թաթախում խանը, ծնկները մաշում էին քաղցրավենիների բազրգյանները, ողջ օրն իր կրպակում ծալապատիկ նստած դրամատեր սառաֆը, ջորեպանը, ջրկիրը, փողոցներ մաքրողները, գողերն ու ամբողջ օրը քաղաքացիների աղտեղությունները կողովներով բակերից կրող համալը։

Թանկագին հագուստներով երևելիների կողքին շոքում էր ոտաբոբիկ, կրունկները ճաքճքած ու սևացած մուրացկանը։ Թեև գլուխը պտտվում էր քաղցից, վրայից թափվում էր ոջիլը, բայց ամենից ջերմեռանդ նա էր աղոթում շիա մուսուլմանների ալլահին ու բոլորից շատ հավատում, որ ալլահն իրեն ավելի առատ երկնային բարիքներ կպարգևի, քան իր մոտ շոքած բազրգյանին կամ խանին։

Մեչիտից դուրս գալով, մուրացկանը ձեռքը պարզում էր իր աղոթակից խանին, սակայն խանի նոքարները նրան շպրտում էին մի կողմ։ Ամբողջ գիշեր մուրացկանը դողում էր շուկայի պանդոկի առջև, սովից գալարվում էին աղիքները։ Բայց երեկոյան դարձյալ գալիս էր մոլլայի կանչին ու, շոքելով խանի մոտ, ջերմեռանդ աղոթում՝ իրեն ստեղծած ալլահի հավիտենական փառքի համար, շահին զորություն կամենալով, որ երկրի երեսից ջնջի բոլոր քրիստոնյաներին ու սնահավատներին, որոնց գոյության հետևանքով է, որ ինքը ահա մուրացկան է, իսկ երկրում աստվածային պատիժ է՝ երաշտ ու սով։

Ցերեկը խառնիճաղանջ ամբոխ էր հավաքվում շուկաներում։ Դերվիշները շնթռկում էին հարուստ կրպակների առջև, ձեռները երկինք կարկառում, ալլահի անունով վախեցնում վաճառականներին ու, նրանցից մի քանի սև փող պոկելով՝ բաժանում աղքատներին։ Թափառական բանաստեղծը Ղուրանից քասիդներ էր արտասանում՝ երթևեկելով խաշած բակլա ու ոչխարի եփած դմակ ծախող մսավաճառների շարքերի առջև։ Շները հոտհոտում էին պատի տակ կիսամեռ տարածված ընկնավոր շիայի երեսն ու նրա թուլացած ձեռքից խլում բրնձյա բլիթը, որ թշվառի բուռն էր կոխել մի աստվածավախ սեյիդ։ Շները գզվռտում էին, փոշի շաղ տալով կրպակների մսի ու ակնեղենի վրա, ապա պոչները կեռած վազում դեպի լուլաքաբաբի խոհանոցները...

Ուղտերի քարավան էր մտնում շուկա։ Հեռու Սըմրղանդից եկած վաճառականը ոտքը դնում էր կռացած ծառայի մեջքին ու իջնում ձիուց։ Ուղտերը շոքեցնում էին. հարյուրավոր համալներ մսի վրա հավաքվող ճանճերի պես շրջապատում էին քարավանը։

— Ոտքիդ ղուրբա՜ն, արբա՜բ, բեռդ թող ես կրեմ, էժան կանեմ, ալլահի՜ սիրուն,— գոռում էր ծանր փալանը մեջքին մեկը։

— Ես ավելի էժան կկրեմ,— առաջ էր ընկնում մեկ ուրիշը։

Շարբաթագործը ջրածիկը դեմ էր անում վաճառականի քթին։

— Սառնաբաթով շարբաթ, ջեննաթի ջրի պես անուշ, գավաթը կես ղուրուշ, աստվածասե՛ր արբաբ, վերցրու։

Այդ օրերին Թավրիզի փողոցներում, շուկաներում ու մեչիտների բակերում ահռելի քանակով ամբոխ էր հավաքվում։ Նրանք փախել, եկել էին հեռավոր Շիրազից, Սպահանից, Ֆահրապատից։

— Միր Մահմուդը շիաների մորթուց տիկ է հանում,— լալագին հայտնում էին տնանկ փախստականները։— Հավատացյալ շիանե՛ր, աղոթեցեք ալլահին, որ մեզ փրկի դժոխքի կրակներից։

— Սյունի թուրքերը վեր են կացել, է՛յ, ալլահի՜ զավակներ,— գոռում էր կիսախելագար մի մուրացկան,— մեր գլուխներից սարեր են շինելու, մեր մարմինները նետելու են շներին։

— Ալլա՜հ, ալլա՜հ,— հառաչում էր ամբոխը։

Պարսկաստանն այրվում էր աշխարհակործան հրդեհի մեջ։ Ոչ ոք չգիտեր, թե ինչ է սպասում իրեն վաղը։ Լուրեր էին տարածվում, թե ապստամբ ավղանները գահընկեց շահ Սուլթան Հյուսեինին (Թավրիզում նստած շահ Թահմազի հորը) ստիպել են խողի միս ուտել ու ապականել մոլլա Սեֆիի պատկերը։ Խոսում էին շշուկով, ահով նայելով չորս կողմը։ Չլինի՞ Թահմազի «ականջները» լսեն։ Բայց խոսում էին, վիճում։ Ի վերջո վճռում են, որ պատուհասները միայն քրիստոնյաների մեղքից է։ Մեկը գոռում էր.

— Կոտորենք բոլոր քրիստոնյաներին...

Եվ շուկան մոլտում էր։ Գազազած ամբոխը վազում էր դեպի հայոց թաղը։ Բայց միայն ավերակներն էին նորից ավերում։ Հայոց թաղում ոչ մի հայ չէր մնացել, բոլորն անցել էին Արաքսի մյուս ափը։ Ամբոխը հարձակվում էր եկեղեցիների վրա, սակայն չէին կարողանում հիմնահատակ անել։

Վրա էր հասնում երեկոն. գազազած, փոշու մեջ կորած, քաղցից գալարվող քաղաքը նիրհում էր ամբողջ օրը որս չճանկած վագրի նման՝ գլուխը թաթերին, աչքերը կիսաբաց, մրսող ու կատաղի։ Գիշերը քաղաքը մնում էր գողերին։ Առավոտը շուկաներում պատմում էին, որ գողերը սպանել են մի սառաֆի, երեխաներին կոտորել, տունը թալանել։ Խոսում էին շշուկով, բայց ի վերջո զայրագին գոռում էին.

— Քրիստոնյաներն են անում, ալլահի հակառակորդ գյավուրները։ Պիտի կոտորել բոլոր քրիստոնյաներին ու ջհուդներին։ Ալլա՜հ, ալլա՜հ...

Թեև դեռ ամառը շատ հեռու էր, բայց Թավրիզում ցերեկը շոգ էր լինում։ Քամի չկար. շոգը տևում էր մինչև երեկո։ Բարձր պարիսպներով

շրջապատված շահական պալատն աշխուժանում էր միայն երեկոյան դեմ, երբ երկարում էին բարդիների ու մինարեների ստվերները, և եկեղեցու քիվերում շոգից ապաստան գտած աղավնիները ճախրում էին շահի պալատի վրայով։ Զինվորները փող էին փչում։ Շահի անհամար սպասավորներն ու ծառաները քաշվում էին իրենց խցերը։ Շահը նամազ էր անում խաների ու երևելիների հետ։ Հետո նստում էին ընթրիքի։ Շարբաթի գույնի գինի էին խմում, նվագածուներ էին կանչում։ Կիսամերկ աղջիկների երամը ճախրում էր խրախճանքի սրահում, շահն ու խաները զվարճանում էին։ Ապա շահը գրկում էր պարող աղջիկներից մեկին ու մտնում ամբողջովին հայելապատ սենյակ...

Միջանցքում նվում էր թառը։ Սազանդարը ծորում էր հեշտագրգիռ մի երգ... Պալատն ընկղմվում էր երգի մեջ։

Շահի համար տխուր ու ձանձրալի էր միայն ուրբաթ օրը։ Պետք է լսեր գավառներից եկած խաների գանգատները, ստիպված լիներ Իսկանդար խանին հրամայել գանձարանից փող տալ ալժիրյան օծանելիքների ու հնդկական զարդերի համար։ Հարեմը լափում էր գանձարանի փշրանքները։

Առավոտ էր։ Նամազից հետո Թահմազը մտել էր իր մեծ սրահը՝ խաներին ու զորավարներին լսելու։ Այդ սրահը շահի գաղտնի խորհրդարանն էր, որին պարսիկները «շահի ականջ» էին անվանում։ Նրա պատերն ու վենետիկյան թանձր վարագույրով ծածկված միակ նեղ դռան մյուս կողմում կանգնած պահապանը ապահովում էին գաղտնիքները։ Խորհրդարանում բազմաթիվ հայելիներ կային, իսկ երկու նեղ պատուհանների արևագույն ապակիների միջով ահագին լույս էր թափանցում ներս։

Շահ Թահմազը ծանր նստել էր գահավորակին։ Ոտքերը հազիվ էին հասնում գետնի արծաթագույն գորգին։ Շահը միջահասակ էր, ավելի շատ լայնքով մեծացած, քան բարձրությամբ։ Երկար ու մազոտ ձեռքեր ուներ նա, որոնց մատները մշտական շարժման մեջ էին։ Նրա մսալի այտերը լավ սափրած էին, քթի տակից տարածվում էին երկար ու սուր բեղերը։ Ամուր սեղմված էին սեֆյան տոհմին յուրահատուկ մսալի, կարմիր շրթունքները... Մոնղոլական կանաչ աչքերը թեթևակի կկոցել էր նա։ Հեշտանքից ու վաղ հասակից սկսած պալատական զեխությունից նրա մարմինը թույլ էր, քներակները շարժուն։

Շահի առջև, երկու քայլի վրա, կանգնել էին նրա մտերիմ խաները։ Գանձարանի պետ ու հարկերի վերակացու Միր Բաշիր խանը թթված էր, աչքերը կկոցած։ Նրա կողքին կանգնած էր Թահմազ Ղուլի Նադիր խանը։ Նախկին ջորեպանը թեև մշտական ատելությամբ էր

լցված դեպի մյուս խաները, սակայն երբեք ցույց չէր տալիս։ Նա իրեն Պարսկաստանի առաջին խանն էր համարում։ Ջորեպան էր, բայց երբ ավղանները մտան Սպահան, նա երեք հազար բաշիբոզուկ հավաքեց ու, գնալով Ղազվին փախած Թահմազի մոտ՝ իր զորքը դրեց նրա ծառայության տակ, հետո ամեն կերպ օգնեց, որ Թահմազն իրեն շահ հռչակի ու նստի Իրանի հյուսիսային մայրաքաղաքում։ Թահմազ Ղուլի Նադիր խանը սապատավոր մեծ քիթ ուներ, ցցված այտոսկրներ։ Թեև ամեն օր անուշահոտ օճառներով լողանում էր բաղնիքում, քիսաչինեռին պատվիրում մինչև արյուն դուրս գալու աստիճան քերել իր մարմինը, բայց ձեռքերից ու մարմնից դարձյալ ջորու քրտինքի ու կաշվի հոտ էր գալիս։ Երեսունհինգ տարի շարունակ ջորի էր թիմարել, աղբը մաքրել, քնել ջորու համետի վրա։

Թահմազ Ղուլի Նադիր խանի կողքին կանգնած էր բարձրահասակ, չորուցամաք ծերունի Իսկանդար խանը։ Սեֆյան շահերին մատուցած իր անբասիր ծառայությունների համար նա հռչակված էր ամբողջ Պարսկաստանում։ Հպարտ խանը երկար, ճերմակ մորուք ուներ, որով երդվելը նրա համար ավելի ծանր էր, քան շահի գլխով։ Իսկանդարը զզվում էր իր մոտ կանգնած Թահմազ Ղուլի խանից։ Նա ատում էր ջորեպան խանին, որի երակներում ո՛չ ազնվական արյուն կար, ո՛չ էլ Ղուրանի քասիդներից մի խեցի գիտեր։ Նրա երկար մորուքը հինայած էր, հինայած էին նաև քներակների վրա կախված խոպոպները։ Նա հագել էր կարճ թիկնոց ու կապա, կապել էր սպիտակ գոտի՝ ի նշան ազնվական դասի պատկանելության։ Գոտու արանքում խրած էր հոլանդական մի ատրճանակ, մի բան, որ շահը միայն Իսկանդար խանին էր թույլատրել։ Նա կարմիր կասաբի կտորից լայն վարտիք ուներ, որի փողքերը խնամքով հավաքված էին խոյի նախշուն գուլպաների ու սաղրի քոշերի մեջ։

Խաները լուռ էին, անշարժ։ Սպասում էին շահի խոսքին։ Գիտեին, թե ինչու է շահը կանչել իրենց։ Պալատ հասած յուրաքանչյուր լուր նախ նրանց էր հասնում, ապա՝ շահին։ Խորհրդի էին եկել յուրաքանչյուրն իր վճռով։ Թեև միջանցքում հարգալից «սալամ» էին ասել միմյանց, բայց ցույց էին տվել, որ անտեղյակ են, թե ինչու է շահը կանչել իրենց։

Շահ Թահմազը շարացած էր. աչքի պոչով նայում էր խաներին, սակայն չէր կարողանում կռահել, թե ինչ են մտածում նրանք։ Ալլահն էլ չի կարող բան հասկանալ Իսկանդար խանի հանդարտ աչքերից, Թահմազ Ղուլի ջորեպանի աղվեսի դեմքից, Միր Բաշիրի ուռած երեսից։

Սուրհանդակ է եկել հայերի Դավիթ-Բեկից։ Նամակ է բերել։ Դավիթ-Բեկը խորհուրդ է տալիս ընդունել ռուսաց թագավորի օգնության

ձեռքը։ «Շտապի՛ր,— գրել է Դավիթ-Բեկը,— քանի դեռ Ստամբուլի օձը չի փաթաթվել քո շլինքին»։ Ստամբուլի օ՞ձը։ Այո՛, նա իր ամբողջ թույնը կթափի հիվանդ ու հոգեվարք ապրող Պարսկաստանի մարմնի մեջ։ Իմաստուն է Դավիթ-Բեկը, դարձել է ուռուսներին հպատակ, թագավորի մարդկանց փառքով է ընդունել։ Իսկ անգլիացիներն ուրիշ բան են պահանջում։

Պետրոս թագավորը մեծ նավատորմ է քշել Կասպից ծովը, իր ուժով ահ է գցել Ստամբուլի սուլթանի սիրտը։ Այդ բանն անգլիացիներին, ֆրանկներին ու ծովի մուկ հոլանդացիներին ստիպում է շտապ միջոցների դիմել Պետրոսի դեմ։ Դա լավ գիտի շահը։ Գյավուր եվրոպացիները միմյանց առաջ են կտրում, որ ավելի շուտ համբուրեն սուլթանի կեղտոտ ոտքերը։ Իրենց կանանց կծախեն, բայց չեն թողնի, որ ուռուսներն առաջանան դեպի արևելքի շուկաները, դրա համար էլ թուրքի սուլթանին «քրս» են տալիս ուռուսների վրա։ Նրանց դեսպանները կատարում են, երբ հիշում են, որ ուռուսական նավեր կան Ռեշտում։

Ընդամենը մի շաբաթ առաջ անգլիական դեսպանը այցի էր եկել շահին։ Իրեն լկտի պահող այդ չորուցամաք, զարմանալի սիրունատես մարդը սաստիկ դժգոհեց, որ շահի բաղնիքում սպանական օճառ ու հայկական գինիներ չկային. ապտակել էր սպասավոր պարսիկին, որովհետև սա նրա կոշիկները ոչ թե ալժիրյան յուղով էր փայլեցրել, այլ մաքրել էր այծի ճարպով։ Իսկ երբ հավաքվել էին անգլիացուն ընդունելու, սա գլուխ չէր խոնարհել Թահմազին ու ոտքի մեկն առաջ, մյուսը ետ դրած՝ անպատկառ ձայնով ասել էր.

— Լսել եմ, որ դու, շա՛հ, միտք ունես մարդ ուղարկել ռուսների ցարի ոտքը և պաղատել, որ նա իր զորքով գա ու մտնի քո հոր աշխարհը («քո հոր» բառերը անգլիացին շեշտել էր, և այդ բանը սաստիկ խոցել էր շահին)։ Քո միտքը հայտնի է Արևմուտքին։ Ե՞տ կանգնիր այդ կործանիչ ճանապարհից, այլապես դու կկորցնես քո գահը։ Հենց որ ձերդ մեծությունը թույլ տա, որ Պետրոս ցարը ոտքը մի քայլ էլ առաջ դնի Պարսկաստանում, ապա սուլթանը երկու հարյուր հազարանոց բանակով կգա քեզ վրա։ Սուլթանը հիմա անգլիական նավեր ունի, ֆրանսիական թնդանոթներ ու հոլանդական հրազեն։ Ընտրիր՝ կամ Պետրոսն ու գահազուրկ լինելը, կամ Պետրոսին մերժելն ու հորդ գահը ժառանգելը։

Անգլիացին գնացել էր՝ առանց պատասխանի սպասելու։ Բոսֆորում կանգնած են նրանց նավերը։ Նրանք հիմա հրահրում են սուլթանին՝ Պարսկաստանի դեմ, իսկ սուլթանը խոստացել է օգնել Միր Մահ-

մուդին։ Օ՜... ալլա՜հ, ալլա՜հ։ Ինչո՞ւ է մարդ արարածի տեղն այսքան նեղ այս լայնարձակ աշխարհում...

Հորը՝ սեֆյան Սուլթան Հյուսեին շահին գահընկեց արեց Ղանդահարի Միր Մահմուդ խանը, գրավեց Սպահանը։ Գյուլնաբաթի ճակատամարտում ցրեց, ոչնչացրեց հոր զորքերը ու ճերմակ ձիու վրա մտավ Սպահանի մեծ մեշիտը։ Միր Մահմուդն իրեն շահ է հռչակել։ Հորը՝ Սուլթան Հյուսեինին անպատվեց՝ երեք օր թողնելով իր վրանի մուտքի առջև չոքած։ Ապա նրան թույլ տվեց միայն երկու կին վերցնել իր հարստությունից ու ապրել թաղիքե անշուք մի վրանում։

Այժմ Միր Մահմուդը մտածում է գրավել նաև Պարսկաստանի հյուսիսային նահանգները, իրենից՝ սեֆյանների օրինական ժառանգից խլել Թավրիզը, գահընկեց անել իրեն՝ Թահմազին։ Մի ամիս առաջ Թահմազը շիա մոլլաների խորհրդով ու նրանց առաջնորդությամբ զորք ուղարկեց ապստամբ ավղանի դեմ։ Հիսուն հազար մարդ հավաքեց ու հանձնելով կռիվներում փորձված Ֆրավստոն զորավարին, ուղարկեց ավղանների վրա։ Բայց Ֆրավստոնը պարտվեց ու հինգ հարյուր ղզլբաշի հետ հազիվ կարողացավ ազատվել գերությունից։ Կործանվեց մեծ ջանքերով հավաքված բանակը։ Ինքը գլխատել տվեց Ֆրավստոնին։

Ամեն կողմից ծվատվում էր երբեմնի հզոր ու լայնածավալ Պարսկաստանը։ Ռուսները գրավել են Բաքուն, Գիլանն ու Մազանդարանը, նրանց նավերը կանգնած են Ռաշտում։ Ռուսները գաղտնի բանակցություններ են վարում ավղանների հետ, որ եթե Թահմազը չընդունի իրենց առաջարկը, ապա օգնության գնան Միր Մահմուդին՝ նրան թուրքերից հեռացնելու պայմանով։ Թուրքերը կուտակվել են Էրզրումում, Դիարբեքիրում, Վանում և պատրաստ են իրենց մագիլները խրել Իրանի փխրուն մարմնի մեջ։

Իսկ Թավրիզում եղած զորքը քիչ է, թույլ ու երերուն։ Ավելի շատ ավազակությամբ են պարապում։ Շատերը նույնիսկ զենք չունեն, բոբիկ են, կերակրվում են բնակիչներից խլած ուտելիքներով։ Հայերն ու վրացիները այլևս չեն ճանաչում պարսիկների գերիշխանությունը և հավատարմության երդմնագիր են ուղարկել Պետրոս ցարին։ Ինչպե՞ս կարող ես նրանց հետ խոսել։ Նրանք իրենց թիկունքը տվել են հզորացած Ռուսաստանին։

Թահմազը գիտեր, որ զենքով ինքը չէր կարող որևէ հաջող գործողություն ձեռնարկել։ Թեև թագ ուներ գլխին, ու շրջապատողները «Իրանի նոր առյուծ» էին անվանում նրան, բայց նա լավ գիտեր իր թուլությունը։ Գիտեր, եթե Դավիթ-Բեկը ցանկանա անցնել Արաքսը, ապա հեշտությամբ կգրավի Թավրիզը։ Այո, Թահմազն անզոր էր՝ ատամները

թափած առյուծի պես։ Զորք չուներ, եղածն էլ կնամոլ ու վախկոտ կողոպտիչների մի ոհմակ էր։ Հիսուն հազարով պարտվեցին Միր Մահմուդի տասնհինգ հազարանոց հեծելազորից։

Մնում էր համբերել, կառչել դեռ «Իրանի առյուծ» Շահ Աբբաս առաջինի քաղաքականությանը՝ խաբել ու խորամանկել...

Խաները համբերությամբ սպասում էին, թե շահը երբ շնորհ կանի խոսելու։ Յուրաքանչյուրը լավ գիտեր, որ շահը իրենց ձեռքին ընկույզի պես բան է. բավական է հուպ տալ երկու մատով՝ իսկույն կչարդեն։ Բայց խոնարհվում էին նրան։ Թահմազն այն միակ տիրակալն էր, որ չի ցանկանում ավղաններին տեսնել պարսից գահի վրա։ Սյունների ավղանները շիա պարսիկների թշնամիներն են, նրանք ոչնչացնում են պարսիկ տոհմական խաներին, զավթում նրանց հողերը, կանանոցները, նրանց մանուկներին կոտորում, աղջիկներին սյունների դարձնում ու տալիս զորքին։ Միր Մահմուդը մահ է պարսիկ մեծամեծների համար։ Պարսիկները սիրում են սեֆյան տոհմը, ու խաները հասկանում էին, որ շահ Թահմազն իրենց հարկավոր է, ինչպես զենքը՝ պաշտպանվելու համար։

Վերջապես Թահմազը շեշտակի բարձրացրեց գլուխն ու իր թավ, բայց անվստահ ձայնով հարցրեց.

— Ի՞նչ եք մտածում, պատվելի՛ խաներ։

Խաները խոնարհվեցին, ձեռքները կպցրին նախ շրթունքներին ու ապա դրեցին սրտների վրա։ Թահմազ Ղուլի Նադիր խանն ասաց.

— Ալլահը բոլորիս փոխարեն քեզ է պարգևել մտածելու շնորհքը, սեֆյան դրախտում ծագած արև։ Քո մի խոսքը մեր հազար գլխի գինն ունի։

— Այդպե՛ս է, այդպե՛ս, բազո՛ւկ արդարության,— շտապեցին հաստատել մյուս խաները։

Շահը նորից մտածմունքի մեջ ընկավ։ Բայց դա կարճ տևեց։ Նա խոսեց՝ աչքերը խաներին հառած, ցածրաձայն, ասես վախենալով, որ մի ավելորդ բան կասի։

— Հայերի Դավիթ-Բեկը նամակ է ուղարկել ինձ։

— Մի՞թե,— զարմացան խաները, թեև նրանք ավելի շուտ էին կարդացել այդ նամակը, քան ինքը՝ շահը։

— Ստամբուլի սուլթանը հարյուր հիսուն հազար զորք է դրել Էրզրումում։ Բեկը խորհուրդ է տալիս ուռուսների օգնությունը խնդրել։

«Քանի դեռ Ստամբուլի օձը չի փաթաթվել քո շնքին»,— Բեկի գրածները հիշեց Թահմազ Ղուլի Նադիր խանն ու մտքում դառնորեն ծիծաղեց։— «Գիտենք, գիտենք, դու բլբլա, տեսնենք մտքումդ ի՞նչ կա»։

— Մեծ շահ Աբբասը խաբում էր ուռուսների Բորիս Գոդունոֆ ցարին,— կամաց՝ ասես միայն իր համար, ասաց Իսկանդար խանը։— Նրա հետ բարեկամ էր ձևանում և խաբելով չէր թողնում, որ նա անցնի Կավկավ լեռների այս կողմը։

— Ալլահը Շահ Աբբասից ոչինչ չէր խնայում,— ավելացրեց Միր Բաշիր խանը։— Ալլահը նրա ճանապարհը փառքով էր պատել։ Մենք մեր քարավանը պետք է տանենք Շահ Աբբասի գծած ճանապարհով...

— Արդար է,— գլուխը շարժեց շահը։— Բայց ուռուսների հետ բարեկամ լինել, նշանակում է արձակել սուլթանի ու Միր Մահմուդի ձեռքերը և որ սարսափելին է՝ կատաղեցնել անգլիացիների ու ֆրանկների թագավորներին։

— Ուռուսներից պետք է հեռու մնալ։— Համաձայնեց Թահմազ Ղուլի Նադիր խանը։— Ուռուսները մեր հողերը կտան հայերին ու վրացիներին։ Դավիթ-Բեկից պետք է պահանջել երեք տարվա հարկը, վրացիներից՝ նույնպես։ Հրովարտակ գրիր Վախթանգին ու Դավիթ-Բեկին, որ իրենց զորքերով գան ու ծառայեն քեզ այնպես՝ ինչպես եղել է հնուց ի վեր։

Իսկանդար խանի ճերմակ դեմքի վրայով աննկատելի մի ժպիտ անցավ։ «Լա՜վ կկատարեն հրամանդ»,— մտածեց նա։ Բայց լռեց։ Իսկ երբ Թահմազ Ղուլի Նադիր խանն ավարտել էր ասելիքը, խոսեց.

— Հայերն ու վրացիները մեծ զորք են հավաքել՝ թուրքերից պաշտպանվելու համար։ Թուրքը պարսկական գահի թշնամին է։ Պետք է բարեկամանալ հայերի ու վրացիների հետ՝ թուրքերի հեղեղի առաջն առնելու։ Ճարը միայն դա է, մե՛ծ շահ։ Ուրիշ ելք չկա։

Շահի երկարավուն դեմքը կապտեց։ Աչքերը կլորացան, սափրած այտերը դողացին։

— Ո՞ւմ հետ բարեկամանամ,— գոռաց նա,— իմ թշնամիների՞, խոզի մի՞ս ես կերել, Իսկանդա՛ր խան...

— Թող շահը ների ինձ ու հարգանքով նայի ճերմակ մազերիս,— հանդարտ առաջ տարավ Իսկանդար խանը։— Ականջ արա քո վերջին ծառային։ Դավիթ-Բեկն ու վրացիները մեծ զորական ուժ ունեն իրենց աշխարհներում։ Եթե նրանք միանան, ապա տասը օր հետո իրենց անիծված լեռներից կհասնեն Թավրիզի դարպասներին։ Կախեթի Մահմադ Ղուլի խանը կաշկանդել է Վախթանգի ոտքերը։ Իսկ Դավիթ-Բեկն անկաշկանդ է։ Պիտի շահել նրա սիրտը։ Դեսպան ուղարկիր նրա դուռը։ Միացիր նրա ու Վախթանգի հետ, որ կարողանանք թուրքերի առաջն առնել։ Ահա իմ խորհուրդը։

— Չլինի՞ թե պաշտելի Իսկանդար խանը ցանկանում է, որ ես արքայական թագ ուղարկեմ Դավիթ-Բեկին։— Գոռաց շահը։ Նրա բեղերի ծայրերը դողացին։

Իսկանդար խանը գլուխ տվեց։

— Եթե հեռավոր Մոսկվան բանի տեղ է դրել հայերին, ապա ինչո՞ւ մենք պետք է բաց թողնենք նրանց։

— Ես Թավրիզի դռներն ավելի շուտ բաց կանեմ սուլթանի փաշաների առջև, քան հայերին և ուռուսներին թույլ կտամ ոտք դնել Արաքսից այս կողմը,— շահի մսալի շրթունքներից փրփուր թափվեց։— Հայերի անունը լսել չե՛մ ուզում։ Սուլթանի զորքերի ախորժակը պիտի բավարարել Հայաստանում ու Վրաստանում։ Թուրքերին պետք է ուղղել ուռուսների դեմ։ Հասկանո՞ւմ եք, ուռուսների, հայերի ու վրացիների վրա պիտի մերկացնել սուլթանի թուրը։ Գնացեք և մտածեցեք, թե ի՞նչ միջոցներով փափկացնենք սուլթանի շարացած սիրտը և նրան հեռու պահենք մեր աշխարհից։ Գնացե՛ք։

Խաները գլուխ տվին ու, ետ-ետ գնալով՝ դիմեցին դեպի ելքը։

ԽԱՓԱՆՎԱԾ ՀՈՒՅՍԵՐ

Միաբան զորքն սպասում էր Պետրոս ցարին։ Ամեն օր Հայաստանից ու վրաց կողմերից ժողովրդյան մեծ ու մանր խմբեր էին գալիս բանակատեղ։ Գալիս էին քահանաներով, զուռնաչիներով. գինի և ուտելիք էին բերում զինվորների համար, հյուրասիրում էին առատառատ։ Օրերով մնում էին զորքի մեջ՝ թագավոր-կայսեր գալուն սպասելով։

Թեև բանակների տնտեսները զորավարներին երդվում էին, որ գինին վաղուց է սպառվել, բայց բանակի կեսն ամեն օր հարբած էր լինում։ Գետնի տակի՞ց էին խմիչք գտնում, ի՞նչ է,— զարմանում էին զորավարներն ու թագավորը։ Բանակի մեջ անկարգություններ ծագեցին։ Մահապատժի սպառնալիքով արգելվեց գինի բերել բանակ։ Բայց դա էլ չօգնեց։ Տասնապետները գիշերով ձիավոր խմբեր էին ուղարկում Տայքի ու Գարդմանի կողմերը։ Հայ գյուղացիները տկերով գինի ու հոնի օղի էին տալիս նրանց՝ խմելու խաչապաշտ թագավորի արևշատության համար։ Երբեմն բոլորովին վճար չէին վերցնում։ Զորքին պարապ չթողնելու համար երեք բանակների զորապետական խորհուրդը վճռեց կանոնավորել ճանապարհները, կամուրջները, մաքրել աղբյուրներն ու շրհորները։

Դա էլ չօգնեց։ Աշխատանքից վերադառնալիս, սայլերի ու ձիերի վրա բերում էին տասնյակ հարբած զինվորների։ Նրանց կոխում էին առուների մեջ, թրջոց դնում, թաքցնում զորապետներից։ Ոմանց ծեծում էին, հրամայում բանակատեղից կրել ու գետը թափել ճամբարի աղտեղությունը։

Շուտով զորքի մեջ լուր տարածվեց, թե ցար Պետրոսը Դերբենտ քաղաքից ետ է դառել, գնացել իր աշխարհը։

Նման լուրեր տարածողներին ծեծեցին ուշաթափվելու աստիճան, սակայն չկարողացան գտնել լուրերի աղբյուրը։

Լռեցին միաժամանակ։ Բայց շարաղետ լուրը նորից բռնկվեց։

Մի դաժան հարցաքննություն սկսվեց։ Բայց ի՞նչ կարող էին պարզել։ Ոմանք պնդում էին, թե գիշերով զինվորները պոռնիկ կանանց են բերել իրենց վրանները և լուրը լսել նրանցից։ Մյուսներն ասում էին, թե լեզգիների լեռներից եկած երկու դերվիշ են պատմել, որ իբր թե իրենց աչքով են տեսել Դերբենդից հեռացող ոսկե կառքը՝ միշին բարձրահասակ թագավորը։

Հավատացողներ եղան։ Բայց քահանաները խաչով, ավետարանով, մոլլաները Ղուրանով մտան զորքի մեջ ու հանգստացրին դյուրահավատներին։ Իշխան Դոլգորուկովի նամակը նորից կարդացին։ Զորքը խաղաղվեց։

Շաբաթ օր էր։ Բանակատեղին հանդարտ էր։ Ճաշից հետո ոմանք պառկել էին վրանների ստվերներում, որոնք գետափին լվանում էին իրենց փոխնորդը։ Ձիերը գարի էին խժռում՝ պոչերով քշելով իշամեղուների պարսերը։ Օդն անշարժ էր, ծանր։ Քուռից մժեղների ամպեր էին սողում դեպի բանակատեղին։

Եսային նոր էր եկել իր հետ եղբայրացած վրացի հարյուրապետի մոտից։ Ծածուկ գինի էին խմել։ Եկել, գլուխը դրել էր ոլորած այծենամի վրա ու աչքերը կիսախուփ՝ ննջում էր... Գինին խաղում էր երակների մեջ, չէր թողնում մի փոքր քնել։ Հիշում էր վրացի հարյուրապետի մոտ եղած երկու կանանց։ Մանկամարդ էին, ինչպես ասում էին՝ դեռ բերաններից կաթնահոտ էր գալիս։ Եվ այնպե՞ս էին համբուրում սատանի աղջիկները, որ մարդու սիրտ էր քամվում... Վրացի ընկերը նրանց թաքցրեց այծենակաճերի տակ։ Դե, ո՞վ կիմանա, որ գիշերն իրենք կլուսացնեն նրանց հետ... Աստված ներո՞ղ կլինի...

Գետափից եկավ Վեցկի Մարգարը՝ իր ու հարյուրապետի լվացած շապիկները մերկ ուսին։ Նա միայն մի վարտիքով էր՝ փողքերը թաց։

Թաց շապիկները նետեց վրանի ձողապարանին, պպզեց ու այդպես էլ մոտեցավ ստվերում մեկնված հարյուրապետին։ Տագնապով նայեց չորս կողմն ու զգուշությամբ ձեռք տվեց Եսայու ուսին։

— Քնա՞ծ ես,— հարցրեց շշուկով։

— Չէ, ի՞նչ կա,— դժգոհեց, որ խանգարվեցին քաղցր անուրջները՝ մրթմրթաց հարյուրապետն ու աչքերը թեթևակի բաց արեց։

— Թիֆլիսից փերեզակներ են եկել։ Ասեղ, կոճի թել, մաստակ ու նման զիրթ-զիբիլ են ծախում։ Ասում են, որ... Դե, էլի էն բանն են ասում, էլի՜... որ իբր թե ռուսի թագավորը վերադարձել է...

Հարյուրապետը ձիու քրտինքի հոտ արձակող ձեռքով փակեց Վեցկի Մարգարի բերանը։

— Լեզուդ կկտրե՛մ,— սպառնաց՝ աչքերն ահեղ ոլորելով։ Ապա թափահարեց նրա ուսերը։ Նայեց չորս կողմը։ Լսող չկար։— Խմա՞ծ ես, ի՞նչ է։

— Հանիր թուրդ, լեզուս կտրիր,— ատամները կրճտացրեց Վեցկի Մարգարը,— կտրի՛ր, բայց ասացին, ականջներս էլ լսեցին։ Վրացիներն էլ լսեցին, քիրվաներն էլ։ Կամեցան փերեզակին խեղդել, բայց թշվառը լացուկոծ արեց, երդվեց։ Ասում է՝ ողջ Թիֆլիսը գիտի այդ մասին։ Պետրոսը Դերբենդից վերադարձել է, վերադարձե՛լ...

Եսային ցնցվեց։ Առաջին անգամը չէր, որ լսում էր նույն բանը։ Սուտը քառասունք չունի։ Կասեին, կպրծներ։ Լուրը համառորեն տարածվում էր։ Ուրեմն՝ մեջը մի բան կա։ Հարյուրապետի սև, թանձր հոնքերը կեռվեցին զարձան ավելի մութ։ Նա երկարաձգոր սուլեց... Մինչ այդ չէր հավատացել շար լեզուներին, բայց հիմա հավատաց։

— Խաբե՞ց ուրեմն,— գոռաց, շարացած ասաց նա։ Ուզեց ծառա լինել, գոռալ, որ իրենք խաբված են, բայց կարողացավ զսպել պոռթկումը։— Խաբե՞ց,— կատաղելով, որ չի կարողանում ձայնը բարձրացնել՝ խեղդվեց Եսային։— Վայե՞լ է մի աշխարհակալ թագավորի խաբել փոքրիկ ժողովուրդներին, որոնք իր փեշն են բռնել, իր հույսին ապավինել, հը՞։

— Ասված չանի՛, ասված չանի՛,— ձեռքերը թափահարեց Վեցկի Մարգարը։

Եսային ընդոստ վեր կացավ, կապան կոճկեց, զենքերը կապեց ու գնաց սպարապետին գտնելու։ Վրանների մոտով անցնելիս նկատեց, որ վրաց զինվորներն էլ են փսփսում։ Սիրտը մաղվեց։ Վրացիներն իրեն տեսնելով՝ ձայները կտրեցին։ «Ճշմարիտ է»,— ահով մտածեց հարյուրապետը։

Հոր վրանի առջև կանգնած Ահարոնը հարյուրապետին հայտնեց, թե հենց հիմա, թագավորի խնդրանքով, հայրը գնաց նրա մոտ։ Եսային քարացավ։

— Նորություն կա՞,— հարցրեց՝ կապ ընկնելով։

— Երեք ձիավոր եկան Թիֆլիսից,— պատասխանեց պատանին։— Մեկը հայ էր, մեկը՝ վրացի, մյուսը՝ ռուս։ Ռուսն՝ ասում են, մեծ թագավորի դեսպանն է։

Եսային նորից երկարաձգոր սուլեց։ Այդպես անում էր մուրացկան ժամանակ, երբ օտար քաղաքներում մերժում էին ողորմություն տալ ու դեռ հողակոշտեր ու քարեր էին շպրտում իր վրա...

* * *

Վախթանգի ընդարձակ վրանում նեղվածք էր։ Վախթանգը նստել էր պարզ, անզարդ գահին։ Մոտը՝ նույնպիսի անշուք գահի վրա, բազմել էր Եսայի կաթողիկոսը։ Մյուսները՝ Մխիթարը, Մահմադ խանը, Հովհաննես-Ավան իշխանը, վրաց իշխաններն ու ադրբեջանցի զորապետները ոտքի վրա էին՝ կիսաշրջանաձև բոլորած թագավորին ու կաթողիկոսին։ Դիմացը՝ գորգի վրա, կանգնած էր ռուսաց դեսպան, բարձրաստիճան սպա Իվան Տոլստոյը՝ իր ուղեկիցների հետ, որոնք նրան բերել էին միավորված զորքի բանակատեղին։

— Հուսանք՝ բարի է, տե՛ր դեսպան,— լռությունը խախտեց թագավորը՝ ուղիղ նայելով դեսպանի բաց կապույտ, տագնապով լի աչքերին։ Թագավորն ինչ-որ վատ բան էր գուշակում։

— Միշտ չէ բարին առաջնորդում մարդկանց,— պատասխանեց Իվան Տոլստոյը։

Զորավարներն անհանգիստ նայեցին միմյանց։ Թագավորի դեմքով մի մութ ստվեր անցավ։ Կաթողիկոսի մատների մեջ սառան տերողորմյայի հատիկները։ Վրանում քար լռություն էր. միայն լսվում էր դեսպանի բարակ ձայնը։

— Մեր տեր Հիսուս-Քրիստոսը համբերությամբ է զինում մեզ, որով և ապրում ենք բարձրյալի հովանու տակ։ Ես մեր տեր թագավորով և ապրում ենք բարձրյալի հովանու տակ։ Ես մեր տեր թագավորից հրաման ունեմ հայտնելու ձեզ, երևելի այրեր, որ դուք անհապազ բանակցության մեջ մտնեք պարսից շահ Թահմազի հետ։ Չնայած վաղ ժամանակներից բարեկամություն գոյություն ունի Ռուսիո և Պարսից միջև, սակայն ռուսահպատակները բազմաթիվ հալածանքների են ենթարկվել շահին հպատակ լեռնական ցեղերի կողմից։ Նրանք Շամա-

խում սպանեցին ռուս վաճառականներին, կողոպտեցին նրանց կայքն ու գանձը, որ մի քանի միլիոնի արժեք ուներ...

«Ինչո՞ւ է հիշում անցածը,— անհանգիստ մտածեց սպարապետը։— Այդ բոլորը հայտնի են մեզ։ Մի՞թե ուրիշ ասելիք չունի ողորմած թագավորը»։ Նույնը մտածում էին նաև Վախթանգը, կաթողիկոսը, խանը, սակայն պատշաճ չէր ընդհատել դեսպանին, ուստի սպասում էին համբերությամբ։

— Շամախու աղետից հետո,— շարունակեց դեսպանը նույն տաղտկալի ձայնով,— մեր թագավոր-կայսրը բարկացավ ու զենքի դիմեց։ Այժմ Կասպից ծովի արևմտյան ափերին գտնվող արքայական զորքերը անվտանգ են դարձրել կայսրության այս կողմերի սահմանները։ Նորին մեծության կայսրը մարդ ուղարկեց շահ Թահմազի մոտ՝ պատրաստակամություն հայտնելով օգնել նրան՝ ապստամբ ավղանների դեմ և նրան հաստատել իր հոր գահի վրա, եթե շահը դաշն կոի իր հետ և Կասպից ծովի եզերքի երկրները Ռուսաստանի սեփականությունը ճանաչի։ Բայց անարի շահ Թահմազը լսեց մեր բարեխնամ թագավոր-կայսեր կրկնաշահ առաջարկը և չկատարեց բարին։ Այժմ թագավորը մտադիր չէ իր զորքերը ետ քաշել ծովի ափերից։

Իվան Տոլստոյը մի պահ լռեց, նայեց զորավարների մռայլ, մթնած դեմքերին, զգաց, որ մեծ տագնապի մեջ են նրանք, ուստի խոր հոգոց հանեց ու շարունակեց.

— Այժմ մեր տեր թագավորը հանձնարարում է ձեզ, որ դուք բանակցության մեջ մտնեք անխոհեմ ու իր բարին չհասկացող Թահմազի հետ, բացատրեք նրան, որ մեր թագավորը, չկամենալով թշնամի լինել նրան՝ պահանջում է Կասպից ծովափի նահանգները անհապաղ ճանաչել նրա սեփականությունը։

— Իսկ մեզ համար ի՞նչ է մտածում թագավորը։— Վերջապես չհամբերեց, հարցրեց Վախթանգը։

— Նրա գութը շատ է ձեզ վրա,— պատասխանեց Տոլստոյը՝ հայացքը կաթողիկոսի ձեռքին, որ դողում էր ծնկան վրա։— Նա խորհուրդ է տալիս ձեզ, ազնվագո՛ւյն այրեր, որ դուք շահից պահանջեք ձեր երկրները զիջել Ռուսաստանին։

Վախթանգի այտերը դողացին։

— Այդքա՞նը,— հուսահատ ճչաց նա։— Ո՞վ ողորմություն կտա մեզ, ո՞վ։ Դա կացնի սայրին մերկ ձեռքով խփել է նշանակում։ Իսկ ո՞ւր է թագավորն ինքը, ո՞ւր է նրա զորքը։

— Թագավորը Դերբենդից վերադարձավ Ռուսաստան։

Զորավարները գունատվեցին։ Հովհաննես-Ավան իշխանն արագ թարթեց մի վայրկյանում բարկությամբ լցված աչքերը, չհավատաց լսածներին։ Մահմադ խանը հառաչեց։ Եսայի կաթողիկոսը փորձեց բարձրանալ աթոռից, բայց չկարողացավ։ Անսպասելի ծանր լուրը ուժասպառ դարձրեց այդ աննկուն մարդուն։ Զորավարները մերթ նայում էին դեսպանին, մերթ սփրթնած, իրեն կորցրած Վախթանգին։ Թագավորը խոսք չէր գտնում։ Ի՞նչ ասեր։ Շառաչելով փշրվեց այն ամենը, ինչի սպասում էին...

Վերջապես Վախթանգը դարձավ դեսպանին ուղեկցող հային ու հայերեն հարցրեց.

— Զորքո՞վ է հեռացել Պետրոսը։

— Զորքով, տե՛ր արքա,— պատասխանեց հայը հառաչելով,— Դերբենդում ու Բաքվում մի քանի գունդ է թողել միայն, իսկ մնացածով հեռացել է դեպի Մոսկով ու Պետերբուրխ։

Զորավարներն աղմկեցին։ Հուսալքության այնպիսի պահ էր, որ կարծես յուրաքանչյուրն զգում էր իր մոտալուտ կործանումը։

— Հիմա մենք ի՞նչ պատասխան տանք մեր զորքին ու ժողովրդին,— դառնալով դեսպանին՝ հարցրեց Վախթանգը։— Հիմա մնացինք կրակի մեջ։ Ձեր թագավորը մեզ խաբեց... ոտքի հանեց մեզ, գրգռեց մեր թշնամիներին, իսկ ինքը թողեց ու հեռացավ...

Թարգմանիչ հայը իսկույն թարգմանեց թագավորի ասածները։ Տոլստոյը մի փոքր նեղն ընկավ։ Երևում էր, որ նա էլ չէր հավանում Պետրոսի արարքը։

— Նա նորից կգա, թագավո՛ր,— ասաց՝ ոչ վստահ։— Ողորմածն ինձ հրամայել է դեսպան մնալ ձեր երկրում, ձեզ հետ։ Ես ամեն ինչ կանեմ, որ թագավոր-կայսրը գա ձեզ օգնության։

— Մենք թագավորին ենք ուզում,— գոչեց վրաց իշխաններից մեկը։— Մենք զորք ենք ուզում։ Դեսպանն ինչների՞ս է։ Հիմա թուրքը կմտնի մեր տները, կավերի մեր աշխարհները, մեր զավակներին գերի կտանի...

Նրա ասածները չթարգմանեցին։

— Ալլա՜հը փրկի,— ծանր տնքաց Մահմադ խանը։— Մնացինք հարամու բերանին։ Օսմանլուն կգա, մենք կկորչենք. մի բան արա, տե՛ր դեսպան, գոնե ձեր թագավորը թող մի երկու հազար զինվոր ուղարկի մեզ օգնական, որ մեր մարդիկ տեսնեն, թե ռուսը եկել է մեզ աջակից. դրանով մեր զորքերի սիրտը կպրկվի։ Մենք օսմանլուի հետ կռիվ կանենք, նրան ջուղաբ կտանք, մինչև թագավորը գա մեզ օգնության։ Իսկ

եթե թագավորը չգա և նրա զորքը մեզ չհասնի, մենք, վրացիքն և հայոց ազգը ոտնատակ կկորչենք։ Գրիր, դեսպա՛ն, մեր խնդրանքն այս է՝ գոնե մի զորագունդ ուղարկի մեզ մեր ողորմած թագավորը։

Զորավարները սկսեցին տրտնջալ, բողոքել։ Ահեղ վտանգ էր կախվել նրանց աշխարհների վրա։ Բոլորը հասկանում էին, որ իրենք մատնված են կորստյան։ Հովհաննես-Ավան իշխանը ծանր ասաց.

— Թագավորն անպատվեց մեզ։ Այդպիսի բան չէր սազում մեծ տերության արքային։ Հիմա ի՞նչ անենք, եղբայրնե՛ր...

«Դավիթ-Բեկն իրավացի էր, որ չէր շտապում,— դառնորեն մտածեց սպարապետը։— Հիմա նա կծիծաղի բոլորիս վրա։ Լավ էր, որ ինքը չեկավ այստեղ, կխայտառակվեր»։

— Եթե Անգլիան ու Ֆրանսիան արդեք չլինեին, հիմի մեր զորքերն այստեղ էին,— ասաց Իվան Տոլստոյը։ Սակայն նրան լսող չկար այլևս։

Զորավարները դուրս եկան թագավորի վրանից։ Դեսպանին Թիֆլիսից ուղեկցող վրաց զինվորներն արդեն բանակում հայտնել էին, որ Պետրոսը հեռացել է ու չի գալու իրենց աշխարհները։ Բանակի վրա ասես կարկուտ էր մաղվել։ Հիսուն հազար մարդ շրջապատել էին Վախթանգի վրանը։ Եկել էին՝ ով ինչպես լսել էր լուրը՝ բոբիկ, կիսամերկ, լոզանալու տեղից, ձիերի թիմարելուց, զենքով ու անզեն։

— Ո՞ւր է ռուսի թագավորը, ինչո՞ւ չի գալիս,— գոռացին հաղթաթափված, չարացած, պահանջկոտ։

Զորավարները ետ-ետ գնացին։ Բայց կանգնեցին։ Ո՞ւր փախչես հարազատ զորքից։ Իսկ զորքը գոռում էր, մռնչում.

— Ծրևի նեղացրել եք թագավորին, իշխանն ե՛ր,— որոտում էր մի վրացի զինվոր։

— Ինչո՞ւ չեք գնացել նրա ոտքը։

— Վիզ առնիք ինչ ուզում էր, տվողը մենք ենք հո, ձեր մեջքից չէ՞ր։

— Խաբեցիք մեզ։

— Դուք եք փախցրել մեր տեր թագավորին։

Ոչինչ պատասխան չէին գտնում զորավարները։ Վախթանգը պապանձվել էր։ Եսայի կաթողիկոսը բարձրացավ մի սայլի վրա ու, խաչը պարզելով՝ մի կերպ խաղաղեցրեց գազազած զինվորներին։

— Մենք դարձյալ սպասում ենք մեր տեր թագավորի գալստյանը, ինչպես մեր նախահայր Ադամն էր սպասում իր արարչին, զավակնե՛ր... Հանդարտվեցե՛ք։ Դժբախտություն չի եղել։ Թագավորը պետական գործով է մեկնել իր մայր քաղաքը։ Թագավորի զորքերը Բաքվում են, Դերբենդում, Գիլանում, Ռաշտում։ Թագավորի դեսպանը մեզ հետ է։ Թագավորը կգա, ձեռք կմեկնի մեզ, որովհետև ասված է. «Ով որ խմելու ցուրտ ջուր կտա հանուն առաքյալի, նրա վարձքը չի կորչի»։ Արիացե՛ք, զավակնե՛ր։ Ռուսները մեզ հետ կլինեն։

Բայց նրան քչերը հավատացին։ Նախկին մարտական, ոգևորված բանակն արդեն դադարել էր ռազմական ուժ լինելուց և մի խառնիճաղանջ, անկազմակերպ ու գոռգոռան ամբոխի էր վերածվել...

Մխիթարը որդուն հրամայեց վրանը պոկել։ Ապա մոտեցավ Վախթանգին ու խանին հրաժեշտ տալու։

— Ի՞նչ պատասխան տանեմ Դավիթ-Բեկին,— հարցրեց նա թագավորին։

— Աստվա՛ծ գիտե...— հառաչեց Վախթանգը։— Ես ամեն օր կգրեմ Պետրոսին, գրեցեք դուք էլ։ Խնդրենք, աղերսենք, որ նա գա մեզ տիրություն անելու, ճա՛ր ինչ...

— Այսօր կամ վաղը թուրքերը կգան, տե՛ր թագավոր, այդ մասին մտածիր,— ցասն ասաց սպարապետը։— Գործենք միաբազուկ, միասին։ Սա է մեր ժողովուրդներին փրկելու ելքը։

Վախթանգի աչքերը լցվեցին։ Նա ամուր գրկեց սպարապետին, համբուրեց նրա ճակատն ու շշնջաց.

— Զինվորությունն ամուր պահենք։ Հույս՝ աստված։ Կկռվե՛նք։

Մահմադ խանը փաթաթվեց Մխիթարին.

— Իրար քոմագ կանգնենք, Մուխիթա՛ր եղբայր։

— Կանգնե՛նք, կանգնենք հավիտյան։

Սպարապետը վազեց դեպի իր զորագունդը։ Հարյուրապետները արդեն պոկել էին տվել վրանները, ձիերը թամբել և կազմ ու պատրաստ պահում էին։ Լուռ էին։ Սգավոր։ Ասես հենց նոր էին հողին հանձնել անձկալիներից մեկին։

Հայոց բանակը շարժվեց դեպի Հայաստան։ Վրացիները, հրաժեշտի ձեռքեր թափահարելով նրանց ու ադրբեջանցիներին՝ մեկնեցին Թիֆլիս... Զոլակի դաշտում երկարում էին սարերի ստվերները։

Հինգ օր հետո, երբ Մխիթար սպարապետը հասել էր Աղամլո գետի կիրճը, նրանց դեմ գուրս եկավ խելահեղ արագությամբ սլացող մի ձիավոր։

Դա Դավիթ-Բեկի սուրհանդակն էր։

— Օսմանյան Քյոփուրլու Ադբուլլահ փաշան Հարյուր հիսուն հա-

զարանոց բանակով շարժվում է դեպի Հայաստան։ Բեկը հրամայել է շտապ վերադառնալ տուն։

Մխիթարը տխուր ժպտաց։ Ամեն ինչ կատարվում է այնպես, ինչպես կանխագուշակում էր Բեկը։ Միայն Բեկը դեռ չգիտեր, որ Պետրոս թագավոր-կայսրը վերադարձել է իր մայրաքաղաքը։

Սև ամպեր էին կուտակվում Հայոց աշխարհի վրա։

* * *

Բայց Մխիթարը սխալվում էր։ Դավիթ-Բեկին հայտնի էր արդեն թագավորի վերադարձը։ Հալիձորում բոլորը գիտեին այդ մասին։ Հալիձորը ռազմական ճամբարի էր նման։ Թեև այնտեղ զորք քիչ կար, բայց քաղաքացիները զինված էին և զենքերը չէին հանում նույնիսկ աշխատանքի պահերին։

Սպարապետը Դավիթ-Բեկին պատմեց իրենց, վրաց ու ադրբեջանական գնդերի խանդավառությունը, ապա դեսպան Իվան Տոլստոյի բերած անսպասելի լուրը։

— Ինչպե՞ս էինք սպասում թագավորին, ինչպիսի՞ ոգևորություն կար զորքերի մեջ,— ասաց նա։

— Այդ ոգևորությունը հիմա էլ պետք է պահել,— նկատեց Բեկը,— պետք է զորքին ու ժողովրդին հավատացնել, որ Պետրոս թագավորը մեզ չի լքել, որ կգա անպայման։ Դա հարկավոր է մեզ այս ծանր օրերին։ Պետրոսը մեղք չունի, Մխիթա՛ր։ Նրան եվրոպացիները խանգարեցին...

— Մի՞թե քրիստոնյա չեն այդ Եվրոպայի թագավորները։ Ինչո՞ւ են մահմեդական սուլթանին սատար կանգնում, մեզ՝ ոչ։ Չեմ հասկանում։ Չե՛մ հավատում։

— Միամի՛տ ես,— ծուռ ժպտաց Բեկը,— նրանց համար Բոսֆորի կիսալուսնի մի շողքը քո ամբողջ ժողովրդի արյունն արժե։ Սուլթանի փալինքը համով է Հռոմի պապի ու Ֆրանկի թագավորների համար։ Նրանք չեն ուզում Պետրոսի հզորանալը։ Պրծավ գնաց։ Իսկ եթե դու կատակես, նրանց ի՞նչ բանն է։ Դու նրանց գանձարանը մի սև դրամ չես գցում...

Բեկը կանչեց մելիք Եգանին ու հրամայեց մեծ քանակությամբ մթերքներ կուտակել երկրի անմատչելի բերդերում, ամրոցներում, ժայռերի խոռոչներում։— Գիշերով արա, ծածուկ, մուկն անգամ չպիտի իմանա, թե որտեղ ինչ ես թաքցնում,— սպառնագին հրամայեց նա Եգանին։

* * *

Հայոց զորքերը քաշվեցին դեպի իրենց անմատչելի լեռները և սպասեցին այն աղետներին, որ այսօր չէ, վաղը պիտի պայթեին նրանց վրա...

Վախթանգ թագավորը գնաց Թիֆլիս։ Գանձակեցիները փակվեցին իրենց պարսպավոր քաղաքում։ Կովկասի լեռնաբնակները նորից սկսեցին ասպատակել նրանց գավառները։ Ասպատակիչները երբեմն մոտենում էին Թիֆլիսին։ Վրաստանն ավերվում էր։ Ռուսաց արքունիքը թեև հուսադրում էր Վախթանգին, բայց ոչ մի ռուս զինվոր չերևաց վրաց սահմաններում։ Վախթանգը մնաց անօգնական։ Երբեք չհուսահատվող այդ մարդը քաջալերվեց հայոց հետ միաբան լինելով և պատրաստ էր դեմ կանգնել թուրքաց բանակներին, բայց բռնկվեց վրացիների համար ազգակործան հրդեհը։ Երկրի ներսում սկսվեց մի ծանր, եղբայրասպան պատերազմ։

Կախեթի ուրացող վրացի Մուհամմեդ Ղուլի խանը հարձակվեց Վախթանգի վրա։ Նրան դրդողը Վախթանգի եղբայր Եսսան էր, որ ուրացողին իմաց էր տվել ռուսների հեռանալը։ Կախեթի ուրացողը մտավ Քարթալիան ու քարուքանդ արեց Վախթանգի երկիրը։

Այս դժբախտությանը հետևեց մեծ աղետը։

Վրաստան խուժեցին թուրքերը։ Թուրք փաշաները Վախթանգից հպատակություն պահանջեցին։ Վերջինս ճարահատյալ կատարեց թուրքերի պահանջը՝ չկորցնելով ռուսներից սպասվող օգնության հույսը։

Բայց թուրքական հպատակությունն էլ չօգնեց նրան՝ ազատվել բախտի դաժան հարվածներից։

Թուրքերի գալով ոգևորված՝ իսլամի կրոնն ընդունած Կախեթի Մուհամմեդ Ղուլի խանը մեծ բանակով հարձակվեց շեն ու վաճառաշահ Թիֆլիսի վրա, գրավեց, կոտորեց բնակչությանը և երբեմնի ծաղկուն քաղաքը ավերակների կույտ դարձրեց։

Սակայն դավաճանը չկարողացավ լիովին վայելել իր բարբարոսության պտուղները։ Օսմանյան բանակները գրավեցին Քարթալինան, և Մուհամմեդ Ղուլի խանն ստիպված էր նրանց հանձնել Թիֆլիսի բանալիները։

Գահից ու մայրաքաղաքից զրկված Վախթանգը փոքրաթիվ հավատարիմներով թափառում էր Վրաստանի լեռներում։

Դեսպան Իվան Տոլստոյը հեռացավ նրա մոտից։ Վախթանգի դավաճան եղբայր Եսսան սյունի մահմեդական գարձավ և Մուստաֆա փաշա անունով նստեց Թիֆլիսում, իբրև օսմանյան վալի։

Լքված ու հուսահատված Վախթանգը մի բուռ հավատարիմ քաջերով անցավ Կովկասյան լեռներն ու փրկության կայան գտավ Ռուսաստանում։

Վրաստանը կորցրեց իր դիմադրական ուժը։ Սա ծանր հարված էր նաև հայերի համար։ Մնաց հայոց զինվորությունը։

* * *

Հալիձորում ամրություններ էին կառուցում. վաղ առավոտից մինչև երեկո արևը տաքացնում էր քաղաքի շուրջը լրացուցիչ պատնեշներ շինող ու խանդակներ փորող մարդկանց։ Դավիթ-Բեկի հրամանով Հալիձոր էին բերել վանքերի միաբաններին։ Հող փորելուց նրանց փափուկ ձեռքերը քերծվեցին, կապտավուն բշտիկներ գոյացան մատների վրա։ Հոգևորականները դժվարությամբ էին ուղղում ցավող մեջքները։ Մտքներում դաժանորեն անիծում էին Դավիթ-Բեկին։ Երկու վարդապետ փախչելու փորձ արին։ Նրանց բռնեցին ու Բեկի հրամանով կախեցին խանդակի վրա։ Շուտով դիակները հոտեցին։ Ստիպված էին դրանք նետել ձորը։ Կախած թողեցին միայն Բղենու Նորավանքի միաբաններից մեկի դիակը։ Այդ միաբանն ընդդիմացել էր Բեկի հրամանին ու նույնիսկ գոռացել. «Դավիթ-Բեկը Քրիստոսի թշնամին է»։ Նրա լեզուն կտրել էին ու կախել։ Նույնիսկ Հովակիմ եպիսկոպոսը չէր կարողացել փրկել իր սանիկին։

Երկիրը տենդագին պատրաստվում էր թուրքաց զորքերի արշավանքի դեմ։

Դավիթ-Բեկը հանգիստ չուներ։

Մի միտք անվերջ զբաղեցնում էր նրան։ Արդյոք ամեն հնարավոր բան արե՞լ էր իր փոքրիկ երկրի դիմադրողական ողջ կարողությունն իմանալու համար։ Թեև ազգովի զինված էին ու պատրաստ յուրաքանչյուր անակնկալի, բայց նա նոր ուղիներ ու միջոցներ էր որոնում՝ ավելին անելու։

Նա վճռեց Շարուրի ու Նախիջևանի դաշտային մասերում գտնվող գյուղերի բնակչությանը տեղափոխել լեռները։ Կրնկնեն օսմանյան հեղեղի բերանն ու կկորչեն։ Նա զինված ջոկատներ ուղարկեց Շարուր և Նախիջևանի կողմերը։ Զինվորները մտնում էին գյուղերն ու բացատրում Բեկի միտքը։

— Բարձրացեք լեռները, եղբայրնե՛ր,— ասում էին նրանք հրապարակներում, եկեղեցիներում, ճանապարհներին։— Թուրքը գալիս է, շտապեցե՛ք։

Դաշտի գյուղերում սիրով ընդունեցին Բեկի հրավերը։ Ծանր իրերը թաղեցին հորերում, խոտի ու դարմանի պաշարները վառեցին, անասունները դուրս արին գոմերից, ինչ հնարավոր էր բեռնեցին նրանց ու մանր երեխաները շալակելով՝ շարժվեցին դեպի Սյունիքի ու Արցախի լեռները։

Դաշտային գավառներից տեղափոխվեց վաթսունմեկ գյուղ։ Նրանց տեղավորեցին Սիսականում, Խաչենում, Սղուկում, Քաշաթաղում։

Բեկը հրամայեց աշխարհազորական ջոկատների մեջ մտցնել նաև բոլոր վանականներին՝ եպիսկոպոսից սկսած մինչև վերջին լուսարարը։ Զինեցին նույնիսկ Մանլեի, Շինուհայրի, Ավետարանոցի ու Հալիձորի մենաստանների կույսերին։

— Մեզանում ամեն ոք պետք է կռվել, դիմադրել իմանա,— խստորեն պատվիրում էր Բեկը։— Ով ձեռքին զենք չունի, նա թշնամուն բարեկամ է։

Երբեմն Հալիձոր էին գալիս անտուն, անկայք գյուղացիների մեծ ու փոքր խմբեր։ Սատանան գիտեր, թե որտեղից էին լույս ընկնում նրանք։ Գալիս էին, խոնվում Դավիթ-Բեկի ապարանքի առջև ու պահանջում, որ իրենց էլ զենք տան, վերցնեն բանակ։

Բեկն ընդունում էր նրանց, տեղավորում Հալիձորում։ Սակայն զենք գնելու համար գանձարանում մի սև դրամ չէր մնացել։ Բեկը Տաթևի եպիսկոպոսից պահանջեց հիսուն հազար ոսկի տրամադրել իրեն։

Հովակիմ եպիսկոպոսը շարացած եկավ Հալիձոր։

— Դու կործանում ես հայոց եկեղեցին, զորավար գահերե՛ց,— տրտնջաց նա ձիուց իջնելով ու առանց ճանապարհի փոշին վրայից թափ տալու՝ Բեկի մոտ մտնելով։— Դու եկեղեցու սպասավորներին բռնությամբ զինվոր ես գարձնում հերիք չէ, այժմ էլ դրա՞մ ես պահանջում։ Որտեղի՞ց է վանքին դրամ, ուշքի՛ եկ, կործանիչ մի՛ լինիր։

— Եթե կործանվի երկիրը, էլ ո՞ւմ պետք կլինեն քո վանքերը, սրբապա՛ն,— չզիջեց Բեկը։— Մի՛ ժլատանա, մի՛։ Տաթևի վանքի թանգարի դահլիճի տակ, քո գաղտնի գանձարանում դու քսան պարկ հոգևորական ոսկի ունես, դրանով մի ամբողջ բանակ կարելի է զինել։ Հանիր ու տուր երկրի փրկության։ Հանի՛ր, եթե չես ցանկանում, որ իմ ձեռքով չարդեմ գաղտնարանի դուռը։ Ո՞ւմ համար ես պահում դրամը, ոսկեղեն անոթները, գոհարակուռ սրբությունները։ Թուրքերը առել են Թիֆլիսը, պատրաստվում են գալ մեզ վրա։ Գանձերդ նրա՞նց ես թողնում։ Հա՞։ Հիմա երկիրը մեզանից մեծ զոհողություններ է պահանջում, իսկ նա, ով կզլանա անել այդ զոհողությունը, Քրիստոսի հավատի թշնամին է և ազգուրաց։

— Բե՛կ,— գոնատվեց եպիսկոպոսը։

Բայց Բեկը պահանջեց կատարել իր կամքը։ Սրբազանը չզիջեց։ Բեկը զինված ջոկատ ուղարկեց Տաթև։ Այնտեղից Հալիձոր բերին վերջին արծաթե մոմակալն անգամ։

Բոլոր վանքերում հոգևորականներից զինվորական ջոկատներ ստեղծեցին։ Դրանց վարժեցնում էին Դավիթ-Բեկի կարգած հարյուրապետները։ Սրանք դաժան էին սևազգեստների հետ։ Ղրիները ու տասնապետները։ Սրանք դաժան էին սևազգեստների հետ։ Ղրիներն ու տասնապետները։ Սրանք դաժան էին սևազգեստների հետ։ Մեցի սպիտակ բեղավոր մի տասնապետ, որ քսանութ տարի ծառայել էր ռուսաց բանակում ու վերջերս եկել Սյունիք, երկճյուղ մտրակը թափահարում էր Տաթևի վանական ջոկատի վարդապետների վրա ու գոռում.

— Նիզակն ուղիղ բռնեցեք, վանքի՛ առնետներ։ Քանի՞ անգամ ասեմ, եզա՛ն գլուխներ...

Պղինձ Արթինի բովերի մոտ ու Դիզակի Տող գյուղում հապճեպ երկու արհեստանոց շինեցին։ Բեկի հրամանով մելիք Եգանն այդտեղ հավաքեց դարբինների, զինագործների երկու մեծ խումբ։ Սրանք սկսեցին թրեր կռել։

Գյուղերում մարդիկ ման էին գալիս զինված։ Դաշտ էին գնում զենքները վրան։ Երբեմն նայում էին Կապուտջիղ լեռան կողմերը։ Չի՞ երևում, արդյոք, կովակոչի ազդանշան կրակը։ Չի՞ կանչում, արդյոք, Դավիթ-Բեկը։

Դաշտերում, այգիներում, ճանապարհներին, վանքերի բակերում հաճախ էին երևում Բեկի զինվորական վերակացուները։ Վայ նրան, ով զենք չունենար հետը կամ չիմանար, թե զորահավաքի ազդանշան լինելուց ինքը ո՛ր ջոկատի մեջ պետք է լինի և ո՞ւր պիտի գնա։ Այդպիսիներին պառկեցնում էին խճերի վրա ու ծեծում։

Նույնիսկ երեխաները գիտեին, թե իրենց հայրերը որ տասնապետի աշխարհազորային խմբի մեջ են։ Գիշերները բարձր լեռների գագաթներին դեռքեր էին դնում հետևելու՝ արդյոք չի՞ երևում Կովակոչի գագաթի կրակը։ Հնուց սովորություն էր, եթե թշնամի էր մոտենում Սյունիքին ու Արցախին, ապա կրակ էին վառում Կապուտջիղ լեռան գագաթին՝ ազդանշան տալով ամբողջ լեռնաշխարհին։

***

Դավիթ-Բեկի ննջարանում վառվում էր մի մոմ միայն։ Բաց պատուհանի միջով երևում էր գարնանային պուտ լուսինը՝ ճերմակ շրջանակի մեջ։ Սա լողում էր բարձր պատուհանի կամարին քսվելով։

Դավիթ-Բեկը նոր էր վերադարձել Վարանդայի ու Դիզակի սղնախներից և հոգնած նստել թախտին։ Նրա դիմացը՝ հասարակ աթոռների վրա, նստած էին Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսը։

Ուշ գիշեր էր արդեն։ Բեկի աչքերը հոգնածությունից դժվարությամբ էին բաց մնում։ Այդ տեսնելով՝ զորավարները վեր կացան։ Սակայն Բեկը ձեռքով նշան արեց, որ մի փոքր էլ սպասեն։

— Պետք է օգնության ձեռք մեկնել Երևանին,— ծանր ասաց նա։— Նրա վրա է գալու թուրքերի առաջին հարվածը։ Պիտի փրկել Երևանը։— Բեկը մեկնեց իր միտքը։ Անհապաղ մարդ ուղարկել Երևան, երևանցիներին հասկացնել, որ իրենք առայժմ, մինչև ռուսների գալը, չեն կարող օգնել նրանց։

— Պետք է Երևանի բնակչությունը տեղափոխել լեռները,— ասաց Բեկը։— Քանի՞ տուն հայ կա այնտեղ,— հարցրեց Տեր-Ավետիսը։

— Տասը հազար,— պատասխանեց վերջինս։— Հայ բոշաներն էլ հետը։

— Կպահենք,— վստահ ասաց Բեկը։— Երևանցիները կռվել գիտեն։ Պիտի շահել այդ ուժը։ Երևանի պարսիկ Միհրալի խանը կլքի հայերին, հենց որ թուրքերը մոտենան քաղաքին։ Ահռելի բանակների դեմ ի՞նչ կարող են անել մի բուռ քաղաքացիները։

Մի փոքր մտածելուց հետո նա դարձավ Տեր-Ավետիսին։

— Կգնա՞ս Երևան,— հարցրեց՝ ասես զղջալով։

— Կուզես Ստամբուլ էլ կգնամ, Բե՛կ,— պատասխանեց Տեր-Ավետիսը,— միայն երևանցիները մի փոքր հաստակող են, դժվար թե կատարեն օգտակար խորհուրդը։

— Եթե ըմբռնեն մոտեցող վտանգի մեծությունը՝ կկատարեն.— խոսեց Մխիթարը։— Պետք է մտածել նաև էջմիածնի մասին։ Կաթողիկոսարանը տեղափոխենք Տաթև կամ Գանձասար։ Միևնույն է, թուրքը քարը քարին չի թողնի էջմիածնում։

— Ավելի դժվար է Աստվածատուր Համադանցի վեհին համոզելը,— ասաց Բեկը։— Բայց վատ չէր լինի փորձել։ Կարո՞ղ ես, Տե՛ր-Ավետիս, համոզել կաթողիկոսին։

— Կհամոզվի՝ լավ, չի համոզվի՝ գլուխը քարը,— ձեռքերը թափահարեց Տեր-Ավետիսը։— Իսկ երևանցիներին կարելի է հասկացնել իրենց բարին։

— Վաղը մեկնիր,— Տեր-Ավետիսին նայելով՝ քնքշանքով ասաց Բեկը, կարծես վերջին անգամն էր տեսնում նրան։— Էջմիածնի կողմերին է Տաթևի Մովսես աբեղան. հույս ունեմ, չես մոռացել նրան։ Գտի՛ր։ Նա քեզ կօգնի։ Միայն կաթողիկոսն ու Երևանի տերերը պետք է իմանան քո ով լինելը։ Գտի՛ր։

— Այնպիսի սատանա դառնամ, որ դու էլ չճանաչես ինձ,— ուրախ ասաց Տեր-Ավետիսը։

— Այն դեպքում, բարի ճանապա՞րհ։— Բեկը գրկեց Տեր-Ավետիսին։— Հետդ մի ճարպիկ զինվոր վերցրու։ Իբր թե ուխտավոր եք...

Տեր-Ավետիսը դուրս եկավ Մխիթարի հետ։ Ուրախ էր, որ դժվարին գործի է գնում։ Տուն գնալիս Մխիթարին խնդրեց իրեն ուղեկից տալ Փոքր Գորգուն։

— Դուրեկան տղա է,— ասաց նա,— և՛ քաջություն ունի, և՛ խոհրամանկություն։ Տուր հետս տանեմ։

Սպարապետը չառարկեց։

«ԵՍ ԱՊՐԵԼ ԵՄ ՈՒԶՈՒՄ»

Իբրև ջերմեռանդ ուխտավորներ, Տեր-Ավետիսն ու Փոքր Գորգին Վաղարշապատ հասան Հալիձորից դուրս գալու վեցերորդ օրը։ Հետիոտն էին, հոգնած ու փոշոտ։

Դաշտավայրի երկինքը պատած էր անշարժ, մոխրագույն ամպերով։ Երեկոյան ժամերգության պահն էր։ Զանգերի ղողանջը խով էր, խեղդված։

Վաղարշապատում մարդիկ խոսում էին Փոքր Գորգու համար տարօրինակ բարբառով, որից քիչ բան էր հասկանում նա։ Անբարյացակամ էին դեպի ուխտավորները։ Ծուլորեն էին պատասխանում նրանց հարցերին։ Զգացվում էր մի դառն ընկճվածություն։ Այսօր, վաղը թուրքերը կգան։ Ո՞վ գիտե, ինչպիսի՞ աղետների կենթարկվեն նրանք...

Փոքր Գորգուն զարմացնում էին վաղարշապատցիների տները՝ ցածրիկ, տափակ կտուրներով։ Լայն փողոցներում ծանր-ծանր քայլող գոմեշները ծույլ-ծույլ քաշում էին ճռնչացող սայլեր։ Փշատենիներն այնպես սուր էին բուրում, որ Փոքր Գորգին փոշտում էր ամեն քայլափոխի։ Տների բակերում փորի վրա ընկած էին գոմշի մեծությամբ կարասներ։ Արագիլները համարձակ ման էին գալիս բակերում, կտուրներին, մի ոտքի վրա երկար մնում բարդիների ճյուղերի մեջ հյուսած իրենց բնում։

Մտան վանքի բակը։ Այդտեղ արդեն տեղ գցելու տեղ չկար։ Ուխտավորները թափված էին իրար վրա։ Մեծ, փոքր, տղամարդ, կին երեխաները դեպի վանքի մոխրագույն պատերը՝ աղոթում էին, համբուրում խաչքարերը, սուրբ իջման տեղի գետինը։ Մի մանուկ ծկլթում էր։ Մի պառավ բռնել էր ուշաթափ, երիտասարդ մի կնոջ գլուխ, որ սա իրեն չդարկի քարերին։ Փոքր Գորգին նկատեց հարսի կէսաբաց ուսը՝ ճերմակ, ինչպես ամպի ծվեն, ու ափսոսաց թշվառին։ Այդքա՞ն երիտասարդ է ու այդպե՞ս դիվահար...

Գետնին՝ այստեղ-այնտեղ արյան չորացած ու թարմ լճակներ կային։ Պարարտ դեմքերով վանքի միաբանները կաշվե տոպրակները ձեռքներին ամբոխը ճեղքելով՝ մոտենում էին մատաղ անող խմբերին և, ոչխարի մորթիները, գլուխներն ու ոտքերը հավաքելով լցնում տոպրակները։ Մարդիկ իրար հրմշտելով համբուրում էին նրանց արյունոտ ձեռքերը, մորթած ոչխարների ետևի աջ ոտքը տալիս նրանց՝ օրհնության մի երկու ժլատ խոսք լսելու հույսով։

Տեր-Ավետիսն ու Փոքր Գորգին չոքեչոք մոտեցան մայր տաճարի մուտքին, համբուրեցին ոտնահետքերից մաշված սալաքարերն ու մնացին դռների մոտ։ Ներս մտնելու հնար չկար։ Տաճարը խցկված էր մարդկային զանգվածով։ Գորգու մոտ կանգնած մի բեղավոր, բարձրահասակ շինական ուժ էր գործ դնում խրվել ամբոխի մեջ։ Նրանից գինու ու սխտորի զզվելի հոտ էր գալիս։ Մի ահագին մոմ գլխից վեր պահած գոռում էր՝ խզված, խոպոտ ձայնով.

— Թողե՞ք, դժոխքի՞ զավակներ, ճանապարհ տվեք գնամ՝ մոմս վառեմ կաթողիկոսի ոտքերի տակ, ձեռքը պաչեմ...

Մի երիտասարդ կրոնավոր հրեց նրան։

— Կաթողիկոսը գնաց հանգստանալու, ժամերգությունը վերջացավ, մի՞ զոռի ձիթհանի գոմշի պես, ամո՛թ է։

— Հը՞, գնա՞ց, իսկ ես մոմ եմ առել, տե՛ս, տե՛ս,— ու մոմը ճոճեց աբեղայի գլխավերևը։

— Վաղը կբերես, վա՞ղը։ Կաթողիկոսը պատարագ է մատուցելու։

Փոքր Գորգին մի կերպ իրեն գցեց Տեր-Ավետիսի մոտ։

— Մովսեսը, տե՛ր հայր,— ասաց՝ արմունկով հրելով նրան։— Հրե՛ն, նայի՛ր։

— Նկատել եմ...— կամաց ասաց Տեր-Ավետիսը։— Աչքիցդ չգցես։

Ժողովուրդը տաճարից դուրս հորդեց։ Քրտինքի, գինու և օղու հոտը տարածվեց բակում։ Տեր-Ավետիսն ամուր բռնեց Գորգու ձեռքը, որպեսզի իրար չկորցնեն քաշքշուկի մեջ։ Մարդկային հոսանքն ալիք տվեց ու տերևի պես թոցրեց տարավ նաև Մովսես աբեղային։ Նրան աչքից կորցրին։ Տեր-Ավետիսը հայհոյեց։ Հիմա որտե՞ղ գտնի աբեղային։

Զանգակատան գմբեթի վրայից մի վարդապետ գոռում էր.

— Ուխտավորներ... Վանքի հյուրատունը լեցուն է, տեղ չկա։ Ցըր-

վեցեք և օթևան խնդրեցեք Վաղարշապատի աստվածասեր մարդկանց տներում։ Այս գիշեր ծանր անձրև է լինելու, ապաստան որոնեցեք...

— Գնանք, Գորգի՛,— չարացած ասաց Տեր-Ավետիսը։— Մովսեսին կորցրինք խաժամուժի մեջ։ Մութը վրա է ընկնում, գնանք, օթևան որոնենք։

Ժանգառքն ընկել էր։ Վանքի բակից դուրս եկան, մտան մի փողոց։ Բարդու գլխին վերջին անգամ թևերը թափահարեց արագիլն ու իջավ իր բույնը։ Այծերի հոտը փոշի բարձրացրեց փողոցում։ Երկու գյուղացի ծանր մահակներով հարվածում էին առվի պղտոր ջրի մեջ խրված գոմեշին։ Սա պոչով մտրակում էր ջուրը, գլուխը թափահարում ու փնչում բավականությունի՞ց, թե մահակների հարվածներից։ Մի պառավ մոտիկ բակից ճղճղում էր.

— Տեղ չկա, հա՛յ քրիստոնյաներ, տասնչորս հոգի ենք. այդքան էլ հյուր ունենք, էլ ձեզ որտե՞ղ պահեմ, տեղ չկա...

— Աստծու սիրուն, գոնյա թողեք գոմում մնանք, հիվանդ ունենք,— խնդրում էր մի ուխտավոր։ Նա փոքր երեխա ուներ շալակին։ Մոտը կանգնած էին մի պառավ ու մի երիտասարդ հարս՝ խոնարհ ու տառապած։ Գորգին ճանաչեց հարսին։ Այն ընկնավորն էր, որին տեսավ վանքի բակում։ Հիշեց նրա ճերմակ ուսը... խղճահարվեց սաստիկ։

Բոլոր տների առաջ ուխտավորներ էին խռնված ընտանիքներով, ձիերով, էշերով։ Վաղարշապատցիները քշում էին նրանց, հայհոյում, երդվում սուրբ Գայանեի անունով, որ տեղ չունեն։ Տեր-Ավետիսն ու Գորգին մթության մեջ հասան գյուղի ծայրը, կանգ առան մի փոքր այգու մոտ։

— Կմնանք այստեղ՝ բաց երկնքի տակ,— ասաց Տեր-Ավետիսը,— անձրև է գալու, թող գա, շաքար չենք, որ հալվենք։

Մտան այգի։ Զգույշ անցան խաղողի վազերի մոտով։ Գնացին դեպի մեծ ընկուզենին։ Նրա տակ կգիշերեն։ Ընկուզենու մոտ, ցանկապատին կպած մի անշուք քողտիկ նկատեցին։ Ցեխից շինած տնակ էր դա։ Նեղլիկ դռնակի առջև նստել էր փորը տաշտակ մի շան լակոտ։ Սա ընկավ Տեր-Ավետիսի ոտքերը։

— Բարի՛ երեկո, տանտերե՛ր,— ողջունեց Տեր-Ավետիսը, թեև քողտիկի ներսը մութ էր ու մարդ չէր երևում։

Նեղլիկ դռնակի մեջ հայտնվեց մի երիտասարդ, սիրունատես կին՝ աղքատիկ զգեստներով։ Տեսնելով քահանային ու նրա ընկերոջը, սա շալի տուտով ծածկեց բերանը, շան լակոտին քշեց ավելով և, մոտենալով հյուրերին՝ մնաց լուռ։

— Գիշերելու տեղ տուր, աղջի՛կս,— ասաց Տեր-Ավետիսը,— ուխտավոր մարդիկ ենք։ Գյուղը ծայրից-ծայր լիքն է։

— Համեցիր, տե՛ր հայր,— քաշվելով հրավիրեց կինը։— Էս է իմ տունը։ Եթե կարող եք երկուսով տեղավորվել՝ եկեք։

— Հապա դո՞ւ։

— Ե՞ս։ Ես գիշերս տանը չեմ լինի։ Գնալու եմ վանք։ Հաց են թխելու։ Խմոր պիտի անեմ։

— Անգլո՞ւխ ես։

— Ունեի,— հառաչեց հարսը։— Սպանեցին մի տարի առաջ։ Գնացել էր Երևան՝ փշատ ծախելու։ Սև՛ լիներ այդ օրը։ Անձրև է լինում, թրջված մտնում է շուկա։ Կպչում է մի պարսիկ սեյիդի։ Սեյիդն աղմուկ է գցում, թե քրիստոնյան մուտտաեց իրեն։ Պարսիկները հավաքվում ու գլխատերիս սպանում են տեղն ու տեղը։

— Աստված հոգին լուսավորի, նահատակ է...— փորձեց այրուն մխիթարել Տեր-Ավետիսը։

— Բա ինձ ի՞նչ անի աստված,— անսպասելի բորբոքվեց այրին։— Ես նրա ստեղծածը չե՞մ, հը՞։ Հաց չպիտի ուտե՞մ։ Ո՞վ է տվողը։ Շան օրի եմ։ Վանքի ճորտն եմ. եթե խղճում են՝ մի կտոր հաց են գցում առաջս։ Ասում եմ՝ ինձ ծախեցեք մի թուրքի, պարսիկի, թող գնամ կորչեմ։ Հոգիս էլ կորչի... Ինչի՞ս է պետք։

Այրին շալի տուտով ծածկեց երեսն ու հեկեկաց։ Գորգու սիրտը ճմլվեց։ Այսքա՞ն երիտասարդ ու այսքա՞ն անբախտ...

— Հանդարտվի՛ր, զավա՛կս,— մեղմ ասաց Տեր-Ավետիսը,— խաչդ է՝ պիտի տանես։

— Զզվել եմ, չե՛մ կարողանում։ Անիծի՛ր ինձ, տե՛ր հայր։ Խաչս ծանր է։

Այդպես հեկեկալով նա վերցրեց ունկը կոտրած, լանջը կոծկած պենձիկն ու գնաց ջրի։ Հետ եկավ արդեն լացը կտրած, բայց չարացած, դժգոհ։ Ջրամանը դրեց հյուրերի առջև։

— Ուրիշ բան չունեմ ձեզ հյուրասիրելու,— ասաց դարձյալ չարացած։

— Անունդ մեզ նվիրիր,— նստելով կոճղին՝ խնդրեց Տեր-Ավետիսը։

— Արուսյակ,— հարսը նայեց երկնքին։— Հիմա անձրև կգա։ Համեցեք, մտեք տունս։ Ասենք, տունս էլ կաթում է։ Ա՜խ, աստվա՛ծ, կամ տերություն արա, կամ հոգիս առ...

Հյուրերը մտան քողտիկ։ Ճյուղերից գործած ու երկու կողմից ցեխով ծեփած այդ հյուղակի առաստաղը եղեգից էր, տեղ-տեղ սևացած, փտած։ Անկյունում չոր խոտ էր փռած։ Դրա վրա էր, երևի, պառկում Արուսյա-

կը։ Բացի մի կոտրված տաշտակից ու այն պենձիկից, որով Արուսյակը ջուր էր բերել, ուրիշ կարասի չկար։

Տեր-Ավետիսը Արուսյակին խնդրեց ճրագ անել։

— Ճրա՞գ,— հառաչեց այրին։— Ինձ ո՞վ է ճրագ ու ձեթ տվել։ Չունե՛մ։

— Մարխ էլ չունե՞ս, մա՛րխ... Բեր կպցրու։ Մարդու սիրտ է պայթում խավարից, քո թշվառությունից։

Արուսյակը զարմացած նայեց տարօրինակ քահանային։ Քիչ առաջ հեզ ու հնազանդ էր՝ աստծո գառան պես, ձայնը կորած էր, իսկ այժմ ասես խան է՝ հրամայող ու շար։ Հարսը նույնիսկ ահ զգաց նրանից։ Մարխ վառեց՝ երկար փչելով, թշերն ու սիրունիկ բերանն ուռցնելով։ Մարխի լույսից քողտիկի պատերն արյան գույն ստացան։ Գետնին փռված շոր խոտն ասես բոցավառվեց։

— Գյուղում գինի ծախող կա՞,— հարցրեց Տեր-Ավետիսը՝ մռայլ ու խոժոռ։

— Կա։

— Հա՞ց էլ։

— Կճարվի։

— Գնա գինի և ուտելիք առ մեզ համար։— Տեր-Ավետիսը մի բուռ սև դրամ լցրեց մոլորված հարսի գոգը։

Արուսյակը գնաց, վերադարձավ՝ ձեռքին մի կուլա գինի, գոգնոցում՝ հաց, այծի պանիր, ցողը վրան կանաչի ու աղ դրած բոխի։ Հյուրերն արդեն տեղավորվել էին շոր խոտի վրա։ Արուսյակը գոգնոցը վուռնց խոտին, գինին և ուտելիքը դրեց հյուրերի առջև և ինչ-որ տեղից փայտի մի փարչ բերեց։ Ապա մնաց ոտքի վրա։

— Նստիր ու մեզ հետ հաց կեր,— հրավիրեց Տեր-Ավետիսը։

— Տե՛ր հայր... Աղբ ես կին եմ, դուք՝ տղամարդիկ, ինչպե՞ս կարելի է։

— Նստի՛ր, նստիր,— պահանջեց Տեր-Ավետիսը։— Գա՛ ես, գա՛... Աշխարհը գայլ է, դուք՝ գառ։ Մահմեդականները լափում են ձեզ, մորթում, թքում երեսներիդ, իսկ դուք... (Նա ձայնը բարձրացրեց)։ Ինչո՞ւ չես ամուսնուդ վրեժը հանել, ինչո՞ւ։ Ինչո՞ւ չես գնացել ու թոնրի խաչերկաթով խառնել պարսիկ սեյիդի փորը։

— Տե՛ր հայր...— զարհուրեց Արուսյակն ու լեզուն կապ ընկավ։

— Ուժ չունե՞ս, ձեռք չունե՞ս, խաչերկաթ չկա՞ր այս անտեր գյուղում։ Ինչո՞ւ եք ստրուկ մնում, ոչխար մնում։ Ինչո՞ւ չեք սպանում ձեզ սպանողներին, մեկը՝ նրանք, երկուսը՝ դուք։

Տեր-Ավետիսը հեռաց։ Լիքը գավաթը քաշեց գլխին, նորից լցրեց, խմեց։ Արուսյակը շոքել էր նրա դիմացը և ահից ու զարմանքից լայն բացված աչքերով նայում էր տարօրինակ, շարացած հյուրին։ Հանկարծ նա գլուխը թափ տվեց ու ասաց խեղդված, վիրավորված.

— Ուժ ունե՞մ, սի՛րտ էլ, ձեռք էլ, խաչերկաթ էլ կճարվի։ Բայց ահեղ դատաստան կա։ Քրիստոսի գալ կա, դժոխք կա, ա՛խ, աստվա՞ծ... Արյո՞ւն...

— Իսկ սեյիդի համար չկա՞ն այդ դժոխքն ու դատաստանը։

— Չգիտե՛մ,— ձեռքերը թափահարեց Արուսյակը՝ ասես պաշտպանվում էր մեկից։— Ես ոչինչ չգիտե՛մ. թող անիծվեն բոլորը՝ քրիստոնյա, մահմեդական, բոլո՞ր...

Այրին լաց եղավ։ Գորգու սիրտը նորից ճմլվեց։ Կարծես աշխարհի ողջ ցավը տվել էին այդ միակ, անտեր հարսին։ Ինչ արին, շարին, Արուսյակը մի պատառ չդրեց բերանը։ Ներքին մի մեծ վիրավորանք այրում էր նրան։ Խեղդվում էր, ցանկանում էր մի զարհուրելի բան կատարել։ Չհամբերեց, վեր կացավ և առանց բերանը բաց անելու գնաց...

Գորգին հացի մնացորդները հավաքեց, դրեց մի անկյունում, դատարկ կուլան կախեց պատի մեջ խրած ցցին ու երբ եկավ, նստեց իր տեղը, Տեր-Ավետիսն արդեն թիկնել էր պատին ու համբացել։

Մարխը հանգավ։ Դռան վերևի ճեղքից երևաց երկնքի կապույտ երիզը, որը պակայն շտապով մթնեց, ու սկսվեց տեղատարափ անձրևը։ Օճաղքից սառը կաթիլներ ընկան Գորգու դեմքին։ Թևքով սրբեց։ Մտքից չէր հեռանում Արուսյակը, նրա ամուսինը, որին սպանել էին միայն նրա համար, որ հայ է, քրիստոնյա, որ թաց փեշով կպել էր մի սեյիդի։ Անձրևը տեղում էր զարմանալի արագ։ Պատերի ճեղքերում թաքնված լվերը կծում էին։ Քունք չէր տանում։ Ամեն ինչ տարօրինակ էր նրա համար։ Քրոջ պես հարազատ էր թվում միայն թշվառ Արուսյակը։ Ինքը կարծես մեկ անգամ էլ է տեսել նրան, բայց որտե՞ղ։ Սիծաղելի է նույնիսկ մտածել այդ մասին։ Սակայն համառորեն ինչ-որ աչքեր էր հիշում, մեկի փոքրիկ բերանն ու ձայնը։ Ո՞ւմ է նմանեցնում։ Քրո՞ջը։ Ո՛չ, քույրն ուրիշ աչքեր, ուրիշ ձայն ուներ...

Անձրևը դադարեց։ Դռան գլխի ճեղքից նորից կապույտ երանգ երևաց։ Դրսում մեղմ ճկում էր գիշերային հավքը։ Թրջված փշատենուց սուր հոտ էր խուժում քողտիկ։

Գորգին չէր կարողանում քնել։ Աչքին երևում էր մերթ ծիծաղկուն քույրը, մերթ անզորությունից հեկեկող Արուսյակը, և առվում խրված գոմեշը, և այն շինականը, որ մոմը ձեռքին գոռում էր աբեղայի վրա։

խաչերկա՜թը... Այն սեյիդը, որ սպանել էր Արուսյակի ամուսնուն։ Ի՞նչ ահավոր է աշխարհը։ Իսկ մի՞թե այդ բոլորը չի տեսնում աստված։

Քողտիկում շոգ էր։ Մարխի հոտը դեռ գալիս էր, փշատենու բուրմունքը հարբեցնում էր։ Իսկ դռան վերևից երևացող երկնքի պատառիկն այնպե՜ս պայծառ էր, աստղերն այնպե՜ս հմայիչ էին... Այդ աստղերը հիմա իրենց տուն-քարանձավի երդիկից էլ են նայում։ Հիմա մոր քունն էլ չի տանում, կարոտում է իրեն...

Լվերը գազազել էին, կծում էին անխնա։ Փոքր Գորգին՝ զգույշ, որպեսզի չարթնացնի Տեր-Ավետիսին, վեր կացավ։

— Ո՞ւր,— հարցրեց Տեր-Ավետիսը։

Գորգին զարմացավ։

— Մի՞թե քնած չես, տե՛ր հազարապետ։

— Քնա՞ծ,— տնքաց Տեր-Ավետիսը։— Մեռածը կքնի։ Ա՜խ, հոտած աշխարհ։ Ո՞ւր էիր գնում։

— Այստեղ քնել չի լինում, գնամ, պառկեմ դրսում՝ ծառի տակ։

— Քնի՛ր, քնի՛ր,— առարկեց Տեր-Ավետիսը։— Դրսում հազար չար ու շառ կա։ Քնիր այստեղ։

Երկար տառապանքից հետո միայն քունը մոտեցավ Գորգու աչքերին։ Այնինչ Տեր-Ավետիսի քունը բնավ չէր տանում։ Մտածում էր վաղվա հանդիպման մասին։ Ինչ գնով էլ լինի, պետք է գտնի Մովսես աբեղային, ապա տեսնի կաթողիկոսին։ Ինչո՞ւ Բեկն իրեն ուղարկեց փտած ծերունու մոտ, ի՞նչ կհասկացնես նրան, իզուր ջանքեր են։ Իր ի՞նչ բանն էր, ինքը կռվի, պատերազմի մարդ է...

Դռան մյուս կողմից ոտնաձայն լսեց։ Զգույշ նստեց տեղը, սրվեց։ Չլինի դավադիրներ են... Ձեռքը տարավ փիլոնի տակ թաքցրած ատրճանակին։ Սպասեց։ Ձայնն այլևս չկրկնվեց, սակայն չհամբերեց, վեր կացավ, մոտեցավ դռանն ու զգույշ կիսաբաց արեց։ Դրսի զովը շոյեց դեմքը։ Լուսինն արդեն դուրս էր եկել ու մոլորվել փշատենու ճյուղերի արանքում։ Ծառն ասես հրդեհվել էր։ Փշատենու տակ կանգնած էին երկու ստվեր... Տեր-Ավետիսը լսողությունը լարեց։ Տղամարդու ձայն լսեց։

— Փախչե՛նք, Արուսյա՛կ, հոգյա՛կս։

Այդ ձայնը ծանոթ թվաց Տեր-Ավետիսին։ Ո՞րտեղ է լսել։ Մի՞թե իրոք դա Մովսեսի ձայնն է...

— Զզվել եմ վանքից, ստրկությունից, ես ապրե՛լ եմ ուզում, Արուսյա՛կ...

— Սո՛ւս, Մովսես, սո՛ւս, կլսեն, կանիծեն,— ասում էր հարսը։— Մարդ կուղարկեն մեր ետևից, կբռնեն... Ա՜խ, աստվա՜ծ...

«Է՛, հե՛...— քմծիծաղեց Տեր-Ավետիսը։— Խաբեց, թե գնում է վանք։ Ա՛յ թե ինչպիսին ես դու, Արուսյա՛կ»։ Նա մթության մեջ ժպտաց։ Մի վեհ ու ազնիվ բան էր կատարվում փշատենու տակ, որի ճյուղերի մեջ խճճվել էր լուսնի սկավառակը։ Ասես նա դուրս էր գալիս հենց սիրահարների թիկունքից։

Տեր-Ավետիսն ուրախ էր, որ գտել է Մովսեսին։ Դե, հիմա թող որքան ուզում է կրծի Արուսյակի շրթունքները, առավոտը կգտնի նրան։ Ջնկատվելու համար դուռը կամացուկ դրեց ու ետ գալով պառկեց իր տեղը։ Գորգին մուշ-մուշ քնել էր։ Կաթոցը կտրել էր, քողտիկը լիքն էր անձրևի և փտած խոտի ծանր հոտով։ Սկսեց մտածել Արուսյակի ու Մովսեսի մասին։ «Ամեն տեղ նույն ախ ու վախը, նույն լացը, տառապանքը։ Ինչո՞ւ մարդն ազատ չէ՝ լեռան արծվի պես, ճնճղուկի պես, օձի պես։ Հա՛, հա՛, թեկուզ օձի պես՝ իր գլխին, ինքն իր հետ, իր համար։ «Մարդ կուղարկեն մեր ետևից, կբռնեն... Ա՜խ, աստվա՜ծ»։— Հիշեց Արուսյակի խոսքերը։ Ո՞վ կբռնի, ինչո՞ւ բռնեն, ի՞նչ իրավունք ունեն բռնելու նրանց, որոնք մի-մի սիրող սիրտ ունեն միայն։

Մտածում էր Տեր-Ավետիսը՝ աչքը դռնակի գլխի կապույտին, որը հետզհետե ողողվում էր լուսնի կրակով։

Արուսյակը եկավ առավոտյան։ Տեր-Ավետիսը թթված, դառնացած կանգնած էր փշատենու տակ։ Արուսյակը ամոթխած բարևեց։ Տեր-Ավետիսը նրա մազերին կպած երեքնուկի մի կանաչ տերև նկատեց։ Հարսի այտերը շիկնած էին, շրթունքները երեկվանից ավելի վարդագույն։

— Մազերիդ վրայի տերևը վերցրու, աղջի՛կս,— ասաց Տեր-Ավետիսը։— Վանք կգնաս, կնկատեն, ո՞վ իմանա՝ ինչեր կմտածեն։ Շորերիդ վրա էլ խոտի քիստեր կան։

Արուսյակն այնպես շիկնեց, որ ասես հիմա կբոցավառվի։ Ակնապիշ նայեց Տեր-Ավետիսին։ Սա ժպտաց։

— Եթե ուզում ես Մովսեսի հետ փախչել վանքից, ես կօգնեմ,— ասաց՝ հայացքը բացվող արշալույսին։— Հիմա գնա ու գտիր նրան։ Ասա Տեր-Ավետիսն է կանչում։ Լսո՞ւմ ես, ուրիշի չասես, բերանիդ խուփ դիր։ Գնա, ի՞նչ ես շշկլվել, ես հասկանում եմ քեզ ու Մովսեսին... Սերն օրհնված է...

Արուսյակը փորձեց համբուրել նրա ձեռքը, մեղա գալ, բայց Տեր-Ավետիսն ամուր բռնեց նրա կլոր ուսերը։

— Դու բարեկամի հետ գործ ունես, թշվա՛ռ... Մի՛ երկնչիր, գնա գտիր Մովսեսին։ Շտապ բեր, հարկավոր է։ Իսկ գիշերվա դեպքը ես մոռանում եմ։

***

Երկար սպասեց Տեր-Ավետիսը։ Արուսյակը չէր վերադառնում։ Բարկությունից քահանա հազարապետը դադար չէր գտնում։

— Չհավատա՞ց ինձ, վախեցա՞վ աղջիկը, փախա՞վ Մովսեսի հետ, հը՞,— մատները կտրատելով ինքն իրեն խոսում էր նա։ Չհամբերեց, Փոքր Գորգուն հրամայեց մնալ քողտիկում, սպասել, գուցե Արուսյակը վերադառնա, իսկ ինքը գնաց վանք։

Փողոցներում լճացել էր անձրևաջուրը։ Փորները բաց մանուկները մտնում էին պղտոր ջրով լիքը դերբուկներն ու ներկվում կավաջրով։ Ուխտավորները շտապում էին վանք՝ գրկներին մատաղացու գառներ, աքլորներ, հիվանդ երեխաներ։ Արագածի կողմից քամի էր փչում։ Փշատենիների ալյուրը և ուռենիների սպիտակ ծաղկաթելերը պարում էին օդում։ Երբեմն, ցանկապատի տակ նստած ծերունիները, ձեռքները դիմահար անելով՝ կանգնում էին ու ողջունում։

— Օրհնյա՜, ի տե՛ր...

Միայն այդ պահերին էր Տեր-Ավետիսը հիշում, որ ինքը քահանայի զգեստով է և ավելի էր բարկանում նրա գորավարական անհանգիստ, անհնազանդ սիրտը։

Վանքի բակում դարձյալ խոնվել էին անհամար ուխտավորներ։ Ամբոխը ճեղքելով՝ հազարապետն այս անգամ ուղիղ գնաց դեպի վեհարան։ Ճանապարհին հայացքով որոնում էր Մովսես աբեղային։ Վեհարանի դռների մոտ քսան-երեսուն երիտասարդ վանական աղմուկով ետ էին մղում մուրացկանների, ընկնավորների, լուսնոտների զանգվածը, որ համառորեն փորձում էր վեհարան մտնել՝ կաթողիկոսի ձեռքը համբուրելու հույսով։

— Հանդարտվեցե՛ք, թշվառնե՛ր,— գոռում էր մի բարձրահասակ վանական։— Վեհն ինքն իր ոտքով դուրս կգա ու կլսի բոլորիդ, հանգարտվեցե՛ք, աստծո աչքից ընկածներ... Մի՛ խանգարեք վեհի աղոթքը...

Տեր-Ավետիսը վանականների մեջ տեսավ Մովսես աբեղային։ Սա էլ մյուսների նման ետ էր մղում ամբոխի գրոհը։ Ժպտաց բեղերի արանքից։ Արուսյա՜կը, փշատի ծա՜ռը... Արմունկներով հրմշտելով իրեն սեղ

հայրապետական մեծագին գավազանը, որ կարծես հրեղեն բոցեր արձակող բարակ սյուն լիներ։ Նրա նեղ ուսերին գցած էր ոսկե թելերով ասեղնագործած եմիփորոնը, որի փեշերը ծալծլվել էին գետնին։ Այդպես կաթողիկոսը մի զարդարուն խաղալիքի էր նման, քան կենդանի մարդու։

«Ո՞ւմ են պետք այս պճնությունները»,— մտածեց Տեր-Ավետիսը և, առանց հրավերի սպասելու, լայն, հաստատուն քայլերով դիմեց դեպի հայրապետը։

— Անժամանակ եկար,— բորբոք ձայնով խոսեց կաթողիկոսը։

Տեր-Ավետիսի ծանր քայլերից սրահի հատակը երերաց։ Նա բռնեց կաթողիկոսի աջն ու համբուրեց։

— Ես Տեր-Ավետիս հազարապետն եմ, վեհափա՛ռ։ Ինձ քո դուռն է առաքել Սյունիքի ու Արցախական աշխարհի գահերեց զորավար Դավիթ-Բեկը,— ասաց նա՝ ուղիղ նայելով հայրապետի մարած, կնճիռների ոստայնով պատած աչքերին։

Վեհափառի մորուքը ցնցվեց. աչքերը լայն բացվեցին, ցամաք շրթունքները շարժվեցին։

— Բարի՞ է,— հարցրեց ու աչքը գցեց քիչ հեռվում դրված փոքրիկ գահավորակին։

Տեր-Ավետիսը հասկացավ, որ ծերունին նստել է կամենում։ Գահավորակը մոտեցրեց նրան, ձեռքից վերցրեց գավազանն ու խաչը և օգնեց, որ նստի։ Լսեց բացվող դռան ձայնը։ Շուռ եկավ չարացած։ Ներս մտան երկու եպիսկոպոս՝ բարկացած ու գունատ։ Զար նայեցին Տեր-Ավետիսին։ Սա շուռ եկավ դեպի վեհափառը։

— Ես կամենում եմ մեն-մենակ լինել քեզ հետ, վեհափա՛ռ,— և ջեշտակի նայեց եպիսկոպոսներին։ Վեհափառը ձեռքով նշան արեց, որ սրանք դուրս գան։ Եպիսկոպոսները չարությամբ նայեցին անկոչ հյուրին, բայց և ստիպված կատարեցին վեհի կամքը։

Տեր-Ավետիսն ասաց.

— Դավիթ-Բեկն իր զորքով ու ժողովրդով երկրպագում է սուրբ օծությանդ։

— Ինչպե՞ս է ժողովուրդը, զորքը, Բեկն ինքը։

— Քաջառողջ ու արիակամ։ Կռվում ու ապրում են Հայաստանյաց աշխարհի համար։

— Օրհնյա՛լ եղիցեն այժմ և հավիտյան,— մաղթեց հայրապետը, ապա, ուշադիր նայելով սյունեցուն՝ շարունակեց։— Լսել եմ քո անունը, հազարապե՛տ... Քաջության շատ գործերով ես դու պսակել քեզ։ Օրհնյա՛լ լինես։ Բայց, արդյոք, չե՞ս երկնչում այդքան արյուն թափելուց։ Չէ՞ որ դու սպասավոր ես աստծու տան և ծառա Քրիստոսի։

Մեղմ մի ժպիտ անցավ Տեր-Ավետիսի խանձված դեմքի վրայով։

— Երբե՛ք, բնավ չեմ երկնչում, վեհափառ,— պատասխանեց նա,— և հավատացած եմ, որ մեր Հիսուս-Քրիստոսը հանդերձյալ աշխարհում պատիվներով կպսակի ինձ, որովհետև ես արյուն եմ թափել արդարության համար։ Ով ձեռք է բարձրացնում մեր երկրի վրա, նա աստծու թշնամին է։ Այդ հիշելով՝ ես մոռանում եմ, որ հոգևորական եմ...

— Տերը փրկի քեզ,— երկյուղած շշնջաց կաթողիկոսը։

— Ի՞նչ սիրտ կարող է համբերել, ի՞նչ մարդ կարող է սուր չվերցնել, երբ իր բնի վրա ճախրում է անգղը և ցանկանում է հափշտակել իր ձագուկներին։

— Արդարև է,— հառաչեց ծերունին։ Ապա ծափ տվեց երեք անգամ։ Ներս մտած սպասավորին հրամայեց կառք շտեմել, ասելով, թե ինքը սակավ մի ուշանալու է։ Սպասավորը գնաց։

— Թող ներվի ինձ իմանալու, թե ո՞ւր է գնում վեհափառը,— համարձակ հարցրեց Տեր-Ավետիսը։ Թեև այդ հարցը դուր չեկավ կաթողիկոսին, բայց նա, հառաչանքը կուլ տալով՝ պատասխանեց.

— Պարսկաստան։— Ապա զշջաց պատասխանի համար։ Այդ Տեր-Ավետիսը դուր չէր գալիս վեհափառին, մի տարօրինակ վախ էր զգում նրանից։ Այնուամենայնիվ, ակամա շարունակեց։— Գնում եմ շահ Թահմազի դուռը։ Կանչել է...

— Մի՛ գնա, վեհափա՛ռ,— կես խնդրանքով, կես հրամայաբար ասաց Տեր-Ավետիսը։— Ո՞վ է շահ Թահմազը, որ գնում ես նրա ոտքը։ Նա քեզ...

Կաթողիկոսը ջղաձգորեն թափահարեց կապույտ երակներով աղավաղված ձեռքը։ Նրա աջ աչքի մեջ մի հատիկ արցունք շողաց։

— Ի՞նչ անեմ, որ չգնամ,— խոսեց դառնացած, անզոր, խեղճ։— Թուրքն այսօր չէ՝ վաղը կգա կապած, կատաղած։ Տեր է՝ կանչում է, պիտի գնամ հայոց անգլուխ հոտի խնամքին։ Իցե թե կարողանամ դադարեցնել գերումն ու գեռփումն ազգին մեր։

— Իսկ ես եկել եմ քեզ տանելու մեր աշխարհը, վեհափառ։ Այդ է Հայոց ժողովի ավագանու և Դավիթ-Բեկի կամքը։

Վեհափառը ահով նայեց չորս կողմը, դողդոջ ձեռքով հարդարեց փառավոր մորուքն ու աչքերը կկոցեց։ Մի պահ նրա մագաղաթյա դեմքին մի երանելի ժպիտ փռվեց։ Բայց ներքին ուրախության այդ նվազ բռնկումը կարճ տևեց։ Նրա դեմքը մթագնեց, ձեռքն այնպես դողաց, որ

մատանիներն իրար կպչելով զնգացին. աչքերը բաց անելով՝ նա խորտակված ձայնով ասաց.

— Ո՛չ, հազարապե՛տ, թեև բարի է երանելի Դավիթ-Բեկի նպատակը, բայց ես չեմ կարող թողնել իմ անտեր հոտը՝ ժողովրդին հայոց։ Պարսկաստանից զորք կբերեմ՝ Էջմիածինն ու Երևանը պաշտպանելու համար։

Տեր-Ավետիսի դեմքը մթագնեց, շրթունքները սեղմվեցին։ Մի երկվայրկյան անհույս նայեց ծերունուն ու ասաց՝ ոչ առանց հանդիմանության.

— Ուշի՛մ եղիր, վեհափա՛ռ, միտքդ կենդանարար աղբյուրի ջուր արա և հագեցրու մարդկանց ծարավը։ Իմ ասածները կմնան Էջմիածնի այս լուսասփյուռ աթոռի մեջ։ Պարսկաստան մեկնելուդ առիթը հարմար է, որ դու խույս տաս շարի ձեռքից և գաս մեր աշխարհը։ Այժմ այնտեղ է որոշվում հայ ժողովրդի ու հայոց եկեղեցու ճակատագիրը։ Մեր լեռնաշխարհը միակ ապահով վայրն է քո ու քո սրբազան աթոռի համար։ Եթե ոչ գործով, գոնե քո խոսքով ու ներկայությամբ դու կոգևորես մեր զինվորությանը։

Կաթողիկոսը ձեռքերը կարկառեց դեպի Քրիստոսի խաչելության մեծադիր պատկերը, որ ոսկե շրջանակի մեջ կախված էր պատից։

— Տե՛ր, դու հովանի եղիր ազգիս հայոց,— գոչեց երերուն ձայնով։ Ապա մորուքը գցեց լանջախաչին ու գլուխը թափահարեց։— Իմ դիակը պետք է դուրս գա այս սրահից։ Ես աթոռը չեմ պոկի իր մայր արմատից։ Նա պիտի մնա սուրբ իջման տեղը։

— Պահում ես, որ թուրքը պղծի՞,— արդեն զայրանալով՝ ասաց Տեր-Ավետիսը։

— Սեղբո՞սը,— ձեռքը բարձրացրեց ծերունին,— Կոստանդնուպոլսի մեր զավակը։ Սուլթանի արքունիքի մատանին՝ Սեղբոսը կփրկի Էջմիածինը։ Կփրկի՞, ես արդեն նամակ եմ գրել նրան...

— Ուրեմն ինչո՞ւ ես գնում Թավրիզ՝ Թահմասպի ոտքը։

— Գետն ընկածը օձից էլ է բռնում։

Տեր-Ավետիսն, ամեն պատշաճություն մոռացած՝ ասաց խստաշեղ.

— Միամի՛տ մարդիկ, սատկած լեշից են օգնություն հայցում։ Հասկացիր, վեհափառ, շահ Թահմազը մկան ծակը հազար թումանով է խնդրում։ Այդ սատանայաբնակ այրը պատրաստ է Եվայի օձի պես խայթել մեզ։ Իմացիր, այժմ նա դողում է՝ մեր լեռներին նայելուց։ Թող պտտվի սուլթանի գլխով։ Չլիներ թուրքի վտանգը, մենք հիմա նրա պոչը խուզել էինք Նախիջևանից, Երևանից, Թավրիզից էլ քշել անապատները։ Ի՞նչ ուժ ունի Թահմազը, որ ի՞նչ օգնություն տա քեզ։

Կաթողիկոսն ակնապիշ նայում էր չափն անցկացրած քահանային, որ իր առջև կանգնել էր հանդուգն ու անզիջում.

— Հիշիր, թե ում հետ ես խոսում, մոլորյա՛լ։ Ո՞վ է քո թիկունքը։

— Մեր աշխարհը, մեր զինվորությունը,— համարձակ պատասխանեց Տեր-Ավետիսը։— Սյունիքն ու Արցախը անկախ, իրենց գլխի տեր ու միավորված տերություն են այժմ։ Այդ բանը պետք է լավ հայտնի լինի հայոց հոտի հովվին։

— Սյունի՞քը... Արցա՞խը...— բարկացավ կաթողիկոսը։— Հերձվածողների այդ հին բո՞ւյները։ Ո՞վ կթողնի, որ դուք մնաք ձեր գլխի տերը, ո՞վ։ Թո՞ւրքը, թե՞ պարսիկը։

— Ուժով կպահենք։ Ռուսը կօգնի, վեհափա՛ռ։

— Ռուսը գնացել է...

— Թագավորն է գնացել, իսկ զորքը մնում է ծովի ափերին։

— Մնում է, բայց չի գա Հայաստան։

— Կգա՛,— համոզված շեշտեց Տեր-Ավետիսը։— Զգա էլ, մենք մեր ուժով կպահենք մեր երկիրը, հայ ժողովրդին...

Կաթողիկոսը վեր կացավ, ձեռքը մեկնեց Տեր-Ավետիսին։ Սա չկամությամբ համբուրեց իրեն պարզած ձեռքի կապույտ երակը։

— Գնա, գնա՛, աստծո՛ւ սիրուն,— երկյուղած շտապեցրեց վեհը։— Հողն էլ ականջ ունի, լուր կտանի շահին, Միհրալի խանին, Աբդուլլահ փաշային, որ դու մոլորեցնող մտքերով ու ցանկություններով ես եկել ինձ այցի։ Կբարկանան, Էջմիածնի գլխին աստվածառաք պատուհաս կգա։ Գնա, հեռացի՛ր։

— Այսպես էլ գիտեր Դավիթ-Բեկը,— դառը ծիծաղեց Տեր-Ավետիսը։— Զուր չեն ասել, թե՝ «Տանու տերտերին օրհնյա ի տեր չկա»։ Մի գող Միհրալի խան կամ մի կնամոլ ու թուլամորթ շահ Թահմազ քեզ համար ավելի հարգի է, վեհափա՛ռ, քան մի քաջ ժողովուրդ և նրա առաջնորդ Դավիթ-Բեկը։

— Հեռացի՛ր,— աղերսեց կաթողիկոսը։

— Մնաս բարյա՛վ,— շպրտեց Տեր-Ավետիսը։— Գնամ, բայց մեղքը՝ վիզդ, հայրապե՛տ։ Ազգօգուտը չես անում։ Ազգը միայն այս աթոռը չէ։ Քո Սեղբոսը գուցե օգնի քեզ։ Իսկ ո՞վ կօգնի Արարատյան աշխարհի հայությանը։ Ո՞վ։ Նա մատնվում է կորստյան։ Նրան օգնողը միայն հայոց զինվորությունն է, Սյունիքի ու Արցախի հայոց նորոգ տերությունը, որի ձայնը, սակայն, չես ուզում լսել։ Մնաս բարյա՛վ...

Տեր-Ավետիսն արագ դուրս եկավ վեհարանից, ետևից լսեց կաթողիկոսի խուլ հեկեկանքը։ Նա ճեղքեց ամբոխն ու գնաց։

* * *

Արուսյակը կրակ էր արել քողտիկի առջև։ Փոքր Գորգին ու Մովսես աբեղան քարերին նստած խաղաղ զրուցում էին։ Տեսնելով Տեր-Ավետիսին՝ երկուսն էլ ոտքի ելան։ Արուսյակը շփոթությունից ձեռքից վայր գցեց փայտե փարչը։ Նույնիսկ ցանկացավ փախչել։ Ամոթից խեղդվում էր։ Դեռևս կարծում էր, թե զարհուրատես քահանան կպատժի իրեն։ Սակայն Տեր-Ավետիսը մեղմ, հայրական քնքշանքով ասաց.

— Վազիր ջուր բեր, աղջի՛կս, թեև մարդ ձեր ջրից բան չի հասկանում։ Որքան խմում՝ այնքան ծարավում ես։

Արուսյակը կուժը վերցրեց ու վազեց փողոց։ Տեր-Ավետիսը շարացած գոչեց.

— Խոզեր տաս, որ արածեցնի, ուրիշ ոչինչ։

Երկու երիտասարդներն էլ հասկացան, որ այդ խոսքերն ուղղված են կաթողիկոսին։

— Մերժե՞ց,— հարցրեց Մովսեսը։

— Գնում է պարսից շահի ոտքը։—Տեր-Ավետիսը թքեց։—Եվ մինչև ե՞րբ պիտի մեր հոգևոր հայրերը դռնեդուռ ընկնեն ու իրենց հավի խելքով կորստյան մատնեն մեր դժբախտ ազգին։

Ասաց, սակայն զղջաց։ Մտքերն ավելի լայն է բաց անում, քան պատշաճ է անփորձ երիտասարդների մոտ, թեև նրանց հավատում էր, ինչպես իր ձեռքին։

— Գնում ենք,— տնքալով ասաց նա։— Դու կմնաս այստեղ, Մովսե՛ս։

Ասաց ու նայեց նրան։ Մովսեսը շառագունել էր արդեն։ Տեր-Ավետիսը հասկացավ, որ Արուսյակն ամուր է շղթայել աբեղային։ Նույնիսկ ուրախացավ, որ այդպես է։ Տուն, կին, երեխա ունեցող մարդը ատամներով կպաշտպանի իր պատիվը, իր հողը, հայրենի աշխարհը։

— Կմնա՛ս,— շարունակեց նա,— մինչև Թուրքերի երևալը։ Թուրքերի մասին հավաքիր հարկավոր տեղեկություններ և դարձիր Հալիձոր։— Մի փոքր սպասեց, նայեց խղճուկ քողտիկին, փշատի ծառին, ժպտաց թաքուն ու ավելացրեց,— հետդ կբերես նաև Արուսյակին։ Զիմանամ, չլսեմ, որ նրան թողնես, կբերես։ Դա իմ կամքն է ու հրամանը։ Մնաս բարյա՛վ։

Զսպասեց Արուսյակի վերադարձին։ Ինչո՞ւ ամաչեցնել թշվառին։ Թող մեն-միայնակ վայելի իր սիրո պտուղները՝ ցավերով լի այս աշխարհում։ Ո՞վ իմանա՝ երկա՞ր կտևի այդ վայելքը։ Ամուր սեղմեց Մովսեսի ձեռքը և վազելով իրեն գցեց փողոց։ Գնաց Երևան տանող ճանապարհով։

Նրան հետևում էր Փոքր Գորգին։

* * *

Երեկո էր արդեն, երբ նրանք անցան Հրազդանի քարե կամուրջն ու բարձրացան գետափի ժայռերի գլուխը։ Օդը անշարժ էր, տաք։ Գետը որոտում էր. պղտոր, ամեհի ալիքները հարվածում էին երկուստեք նրան խեղդող ժայռերին։ Ժայռերի վրա Երևանի բերդն էր՝ հաստ ու երկար պարսպով, մարտական ամրապինդ աշտարակներով։

— Ամուր է անիծվածը,— ասաց Տեր-Ավետիսը՝ հայացքով չափելով բերդի պարիսպների ահռելի բարձրությունը։

Գնացին դեպի գետի ձախ ափը, ժայռերի վրա կուտակված Զորագյուղ թաղը։ Բարձունքից երևաց ամբողջ Երևանը։ Քաղաքը գտնվում էր փոսի մեջ, շրջապատված Կոնդի ու Անապատի բլուրներով, այգիներով։ Բերդից բացի, որի մեջ ապրում էր պարսիկ Միհրալի խանն իր երեսելիներով ու զորքով, քաղաքն ուրիշ ամրություն չուներ, անպարիսպ էր։ Թեև հյուսիսից դյուրամատչելի էր նա, բայց Հրազդանի կիրճը երեք կողմից անառիկ էր դարձնում նրան։

Երևանի հայերն ապրում էին յոթ մեծ թաղերում, որոնք իրար կից էին ու այգիների նեղ շերտերով էին բաժանվում միայն։ Գետամերձ Խնկենու կամ Զորագյուղ թաղը նմանում էր Սյունիքի ամուր շեներին։ Տներն իրար վրա էին, մեկի կտուրը՝ մյուսին բակ։ Այդտեղ ապրում էին քաղաքի աղքատ արհեստավորները, մշակները, մուրացկանները։ Այստեղ ծառ ու կանաչ չկար։

Կոնդի ժայռոտ բարձունքին էր գտնվում Միրանի թաղը։ Այդ թաղի տները երկհարկանի էին, փողոցները՝ նոր, դարպասները՝ կարմիր ներկած։ Դա ևս երեք կողմից շրջապատված էր ժայռերով։ Իսկ ժայռերից ներքև, դեպի գետն իջնող թեքության վրա խիտ այգիներ էին։ Միրանի թաղն իշխում էր քաղաքի վրա և հեռվից նայողի վրա միջնաբերդի տպավորություն էր թողնում։ Կոնդում ու Միրանի թաղում բնակվում էին քաջությամբ հայտնի ու դեպի պարսիկներն ատելությամբ լցված երևանցիներ։ Այնտեղ էին բնակվում նաև հայ բոշաների մոտ հարյուր ընտանիք, որոնք հաշտ ու համերաշխ էին իրենց քաջարի հարևանների հետ։ Փոսի մեջ ու հյուսիսային բլուրներում կուտակված էին Քարհանքի, Անապատի, Բերդի, Երկուերեսա և Զորավորի թաղերը։ Այստեղ փողոց-

ները շատ թե քիչ կանոնավոր էին, տներն ավելի բարեշեն, որոնք հազիվ էին երևում խիտ այգիների մեջ։

Կոնդի ժայռերի միջով անցնում էր քաղաքին ջուր մատակարարող Երևանի նշանավոր առուն, որ տասնմեկերորդ դարում կառուցել էր Ապիրատ հայ իշխանը։ Այդ առուն նաև հարմար խանդակ էր պաշտպանության համար։

— Այս էլ մեր Երևանը,— ժայռի գլխից ցույց տալով քաղաքն ու ներա թաղերը Փոքր Գորգուն, ասաց Տեր-Ավետիսը,— թուրքերի վտանգը չլիներ, հիմա մենք այստեղ էինք, ու սա կլիներ մեր մայր քաղաքը։ Հայոց աշխարհի սիրտն է Երևանը։

— Ուրեմն ապրում ենք անսի՞րտ,— հարցրեց Փոքր Գորգին։

— Է՛, է՛հ...— սուլեց Տեր-Ավետիսը,— գնանք, գնանք, մութը վրա է հասնում։

Նրանք իջան բլրից ու մտան Զորագյուղի նեղ զուկակները։ Փողոցներում խաղում էին թխահեր, խոշոր աչքերով, զարմանալի ժիր երեխաներ։

Հնչեցին Զորագյուղի սուրբ Սարգիս եկեղեցու զանգերը։ Բակերի նեղլիկ դռնակներից դուրս եկան պառավներ ու ծերունիներ և, երեսներին խաչ հանելով՝ շտապեցին եկեղեցի։

Բարձրացան Կոնդ։ Այդտեղ ժողովուրդն ավելի շատ էր։ Սակայն Բարձրացան Կոնդ։ Այդտեղ ժողովուրդն ավելի շատ էր։ Սակայն ոչ ոք ուշադրություն չէր դարձնում օտարականներին։ Էշերի վրա բեռնած բանջարեղեն ծախողները կոկորդ էին պատռում։

— Թարխո՛ւն, թարխո՛ւն...

Մի փոքր հրապարակում տասը-քսան երիտասարդ թաղիք էին հարում։ Կարպետի մեջ փաթաթած, անհագին գերան դարձած թաղքասարքը պագցել էին գետնին և, ոտքերով տրորելով ու գլորելով՝ քշում էին հրապարակի մի ծայրից մյուսը։ Մեկը երգում էր։

«Թաղի՛ք, թաղի՛ք, երկայն աղիք,
Խան էի, դարձա խաղալիք...»։

Քարերի վրա նստած հարսներն ու աղջիկները ծիծաղում էին՝ արագ պտտելով գուլպայի ճաղերը։ Բոլորն էլ մաստակ էին ծամում։

Հասան սուրբ Սարգիս եկեղեցուն։ Նրա բակը լիքն էր երևանցիներով։ Ժամերգությունն ավարտվել էր։ Իրար հրմշտելով, կատակելով ու սրամիտ խոսքերով միմյանց ծանակելով՝ մարդիկ դուրս էին գալիս եկեղեցուց։

Տեր-Ավետիսն ու Փոքր Գորգին մտան գրեթե դատարկ եկեղեցին։ Զոքեցին սալահատակին։ Բեմում մարմրում էին երկու-երեք մոմեր։ Մի

վարդապետ ու երկու քահանա իջան բեմից և դիմեցին դեպի ելքը։ Սրանք ևս ուշադրություն չդարձրին օտարականներին։ Այդ բանը սատիկ վիրավորեց Տեր-Ավետիսին։ Աղոթքը կիսատ թողնելով՝ նա վեր կացավ ու արդեն հեռացողների ետևից կանչեց.

— Մենք օտարական ենք, է՛յ, մարդ արարածներ, գիշերը հո չե՞նք մնալու փողոցում։

Վարդապետը շուռ եկավ, մի պահ նայեց օտարականներին ու ասաց դժգոհ.

— Քաղաքում հյուրատներ կան, գնացեք այնտեղ։

— Անհյուրընկալ մարդի՛կ եք,— շարացավ Տեր-Ավետիսը։— Իսկ գուցե մեր գրպանում հյուրատան վարձի համար մի ծակ դրամ էլ չկա։— Եվ չսպասելով պատասխանի՝ արագ քայլեց դեպի ելքը։ Բակում բարձրաձայն դիմեց մուրացկաններին.

— Է՛յ, Քրիստոսի զավակներ, բարի եղեք ինձ ցույց տալ Գրիգոր վարդապետի տունը։

Մուրացկանները նայեցին իրար։ Հենց այդ պահին մեկը բռնեց Տեր-Ավետիսի ուսը։ Սա շուռ եկավ, անբարյացակամ նայեց իր ուսը բռնած վարդապետին։

— Գրիգոր վարդապետը ես եմ,— ասաց վերջինս։— Մեզ շատ մի՛ նախատիր, պարզապես անծանոթ մարդիկ եք, ո՞վ իմանա... Գնա՞նք։

— Լսել ես Տեր-Ավետիսն եմ,— կամաց, որպեսզի ուրիշները չլսեն, հայտնեց հազարապետը։— Եկել եմ Դավիթ-Բեկի մոտից։

Վարդապետի աչքերը փայլատակեցին, երկու ձեռքով նա հափշտակեց Տեր-Ավետիսի աջն ու թափահարեց։

— Ներող եղիր, ո՞վ իմանար, թե...

— Ինձ տար ձեր պարոնտերի տունը և հավաքի կանչիր ձեր քաղաքի իշխաններին։ Հույժ կարևոր գործ կա։

— Գալի՞ս են,— ուրախությունից կապ ընկավ վարդապետը։

— Գնանք։ Կիմանաս,— ասաց Տեր-Ավետիսը՝ հասկանալով, որ հարցը ռուսների գալուն էր վերաբերում։

Ծեր չէր Գրիգոր վարդապետը. մորուքը նոր էր սկսել ճերմակել, աչքերը կարմրած էին, խելացի։

Բարձրացան մի նեղ փողոցով։ Չէին խոսում. անցուդարձ անողները շատ էին։ Վարդապետը հարցուփորձ չէր անում, կռահել էր, որ հազարապետ քահանան գաղտնի գործով է եկել Երևան։ Նա նրան տարավ քաղաքի պարոնտեր Հովհաննես Հունգիբեկյանի տունը։ Երկհարկանի, քարաշեն այդ տունը շրջապատված էր բարձրադիր պարսպով։ Բակում փոքրիկ պարտեզ կար՝ թթենիներով, եղրևանու երկու ծաղկած

ծառով։ Որսի շները խլրտացին շնանոցում։ Քարե ոլորձուն աստիճաններով բարձրացան վեր։ Լայն պատշգամբում ծաղիկների թաղարներ էին դրված։ Առաստաղից կախված նավթի լամպը լուսավորում էր ծաղիկները, վարդերն ու նարնջի ոսկեգույն գնդերը։

Բարձրահասակ, փոքրիկ գլխով, սև աչք-ունքով ու երկար բեղերով պարոնտեր Հովհաննես Հունդիբեկյանը ծալապատիկ նստել էր գորգով ծածկված թախտին ու սաթե տերողորմյայի հատիկներն էր գցում։

Անսպասելի հյուրերին տեսնելով՝ նա բարձրացրեց փոքրիկ գլուխը։ Վարդապետն ու Տեր-Ավետիսը մոտեցան նրան։ Փոքր Գորգին մնաց աստիճանների գլխին։ Պարոնտերն անտարբեր նայեց վարդապետին։ Դժգոհեց, որ սա իր բերած քահանայի հետ եկավ ու խանգարեց իր մտորումները։ Նա միայն մի թռուցիկ հայացք նետեց Տեր-Ավետիսի վրա. «Տեսնես ո՞ր գյուղի անծուխ քահանան է,— մտածեց։— Եկել է էլի ողորմության՝ իր աղքատ եկեղեցու համար»։

— Ընդունիր մեր թանկագին հյուրին,— պատշաճ ողջույնից հետո, հանդիսավոր ասաց Գրիգոր վարդապետը։— Քահանայի զգեստով այս մարդը Դավիթ-Բեկի հաղարապետ Տեր-Ավետիսն է։

Պարոնտերը ծառս եղավ, այնպես երկյուղած նայեց Տեր-Ավետիսին, որ կարծես թագավոր էր այցելել իրեն։

— Իմ տունն ու տեղը քեզ մատա՜ղ,— շուտասելուկով վրա տվեց նա,— ո՞ր խաչն է քեզ առաքել մեր քաղաքը...

— Կամա՜ց,— նկատեց Տեր-Ավետիսը։— Թող միայն քչերն իմանան, որ ես եկել եմ Երևան։

Մտան նեղ միջանցքը. գինու, թթու դրած վարունգի ու աղցան ձկան հոտ առան։ Երևաց մի դեռատի հարս և հյուրերին տեսնելով՝ արագ անհետացավ։ Պարոնտերը բաց արեց բարձր դռներից մեկն ու հյուրերին ներս հրավիրեց։ Սենյակում մոմեր վառեցին։ Տանն իրարանցում սկսվեց։ Պարոնտերի երեք եղբայրները եկան ու հարգալից ողջունեցին հեռուներից ժամանած հյուրին։ Թաքուն նայում էին Տեր-Ավետիսին, որի մասին զարհուրելի բաներ էին լսել։ Պարոնտերը նրանց ուղարկեց քաղաքի երևելիներին կանչելու։ Պատվիրեց չասել պատճառը։

Սենյակը հարուստ էր։ Պատերի տակ դրված էին գորգերով ծածկված թախտեր՝ մեծ ու մանր նստաբարձերով, որոնք մետաքսից էին, կարերը՝ ոսկեթել։ Հատակին՝ սպիտակ, հաստ թաղիքի վրա նույնպես գորգեր էին փռված։ Դրանցից էլ չէր լսվում ներս ու դուրս անողների ոտնաձայները։ Չորս պատերից յուրաքանչյուրի վրա փակցված էր յոթոստեղն կանթեղ՝ սպիտակ մոմերով։ Սենյակի մեջտեղը դրված էր ցածրոտ կլոր սեղան՝ վրան արծաթե ջրածիկ ու ոսկեջրած թասեր։ Պատուհանների գոգերին կիտրոնի ու վարդի թաղարներ կային, որոնցից հաճելի բուրմունք էր սփռվում սենյակում։

Թախտերից մեկի վրա մրափում էր Վանի թավամազ կատուն։ Տիրոջը տեսնելով՝ կատուն մռռաց, վեր կացավ, ձգեց գեղեցիկ մարմինն ու թռավ նրա ուսին։

— Ժամանակ գտա՞ր, անիրավ,— քնքշանքով ասաց Հովհաննես Հունդիբեկյանն ու կատվին ուսից վերցնելով՝ շոյեց նրա փայլատակող մեջքը։

— Հրաշալի կատու է,— ասաց Տեր-Ավետիսը։

— Իմ պապերն են բերել Վանից։ Սերունդ առ սերունդ ապրում են մեր տանը,— բացատրեց տանտերը։

Ընթրիք մատուցեցին։ Տանտերը հյուրին ու վարդապետին հրավիրեց կլոր սեղանի մոտ։ Տեր-Ավետիսի բերանի ջրերը գնացին, երբ սեղանին երևաց հայկական կոլոլակը՝ պղպեղով ու սոխով համեմված։ Կոլոլակից հետո տապակած ճուտ ու փլավ մատուցեցին։ Ուտում էին լավ ախորժակով։ Տեր-Ավետիսը զարմանում էր, թե ինչո՞ւ խմիչք չեն մատուցում։ Բայց անհարմար էր գտնում ակնարկ անել այդ մասին, թեև սիրտը ոսկեգույն գինի էր ուզում։

Գինի տվին միայն կուշտ ուտելուց հետո։ Վարդապետը հրաժարվեց խմելուց։ Պարոնտերը միայն մի գավաթ դատարկեց։ Տեր-Ավետիսը հագեցավ երրորդ գավաթից հետո ու վեր կենալով՝ ասաց.

— Օրհնվի՛ տունդ, Հովհաննես եղբա՛յր, համադամ կերակուրներ ճաշակեցինք։

Դրսում արդեն բոլորովին խավար էր, երբ հավաքվեցին Երևանի տերերը։ Նրանք գալիս էին մեկ-մեկ։ Ներս էին մտնում, շեմքին հանում մաշիկները, ձեռքները խոնարհ դնում կրծքերին ու այդպես ողջունում տանտիրոջն ու նրա հյուրերին. ապա նստում էին ավագությամբ, ծալապատիկ։ Տեր-Ավետիսը ուշադիր զննում էր նրանց, բարևում գլխի շարժումով։ Հովհաննես Հունդիբեկյանը նրան ծանոթացնում էր նորեկների հետ, յուրաքանչյուրի համար անպայման որևէ բարեմասնություն գտնելով։

Շուտով հավաքվեցին քաղաքի բոլոր երևելիները՝ Երկուերեսա թաղի երիտասարդ մելիք Պողոս Քիչիբեկյանը, Միրանի թաղի ավագներ՝ ներկարար Կառչիկ Հովհաննեսն ու կաշեգործ Դավիթ Միրզեջանյանը, Մարիամի որդի ըմբիշ Թութիկը և էլի մի քանի պատվական քաղաքացիներ։

Հրավիրվածները նստոտեցին ծալապատիկ։ Իր կյանքը ձիու վրա անցկացրած Տեր-Ավետիսը չէր կարողանում ծալապատիկ մնալ։ Ծունկքերը նա մեկնեց գորգին։ Կառչիկ Հովհաննեսը մեղմ ժպտաց քթի

տակ։ «Սա ի՞նչ դև է, որ ծալապատիկ չի կարողանում նստել»։ Բայց, երբ իմացավ, որ գյուղական երեցի անշուք զգեստներով այդ օտարականը Դավիթ-Բեկի հազարապետ Տեր-Ավետիսն է, բերանը լայն բացեց ու ագահությամբ սկսեց նայել սյունեցուն հատուկ նրա թավ հոնքերին, կոշտ ու կոպիտ դեմքին, որ ասես պղնձից էր ձուլած։

Երևանցիներն անհամբեր սպասում էին, որ հյուրը խոսի։ Ինչո՞ւ է եկել Տեր-Ավետիսը։ Բարի՞ է լուրը, թե մի չար անգղ է մոտենում հայոց երկնակամարին։ Բայց նույնիսկ խորամանկ ու հնարագետ ծիրանիթաղցիները չկարողացան որևէ բան կռահել Տեր-Ավետիսի մթնած-մռայլած դեմքից։

Երբ ծառան դուռն ամուր փակել էր, Տեր-Ավետիսը գլուխը բարձրացրեց։

— Երևանցի եղբայրնե՛ր, ես ձեզ եմ բերել Սյունիքի ու Արցախի զինվորության գահերեց զորավար Դավիթ-Բեկի բարևը։

— Ապրի բարև ուղարկողը,— իրար ընդհատելով պատասխանեցին երևանցիները։

— Ես բերել եմ նաև Դավիթ-Բեկի նամակը,— շարունակեց Տեր-Ավետիսը։— Այն, ինչ դուք պետք է լսեք այժմ, խորին գաղտնիք պիտի մնա, մինչև աստծո հաճությամբ կատարվի բաղձալին։— Տեր-Ավետիսի ձայնը տիրական էր։ Բառերը նրա բերանից ընկնում էին արճճի ծանրությամբ։— Դուք գիտեք, որ երրորդ տարին է, ինչ մեր Մեծ Սյունիքն ու Արցախական աշխարհը, ժողովրդի ջանքերով, իրենց ուսերից նետել են պարսից շահերի բեռն ու ապրում են ազատ, անկախ։

— Աստված է՛լ ավելի զորություն տա ձեզ,— բացականչեց Գրիգոր վարդապետը։— Դուք վառեցիք հայոց տան հանգած օջախը, հույս ներշնչեցիք դարավոր ստրկության մեջ մրափած ժողովրդին հայոց։

— Այդպես է,— հաստատեց Հովհաննես Հունդիբեկյանը։— Մեր քաղաքացիները ձեր անունով են երդվում։ Միհրալի պարսիկը ձեր ահից փափկել է ու մեզ հետ խոսում է հարգանքով։

— Դավիթ-Բեկը Երևանից վաղուց քշած կլիներ Միհրալի խանին, եթե հանգամանքները մի փոքր օգնեին մեզ,— ասաց հազարապետը։

— Մենք դրան էինք սպասում,— գոչեց Կառչիկ Հովհաննեսը։— Հիմա էլ աչքերս ձեր ճանապարհին է։ Զենքով, ժողովրդով պատրաստ ենք։

— Թող Դավիթ-Բեկը երևա մեր կողմերում ու, մինչև մի գավաթ Դալմայի գինի խմի, մենք Միհրալուն կկախենք բերդի աշտարակներից,— ձայն տվեց Պողոս Քիչիբեկյանը՝ հարցական նայելով յուրայիններին։

— Գիտեմ, գիտեմ,— շտապեց ասել Տեր-Ավետիսը։— Կգանք։ Պետրոս թագավորը մեզ մենակ չի թողնի։ Այս տարի չկարողացավ գալ, կգա եկող տարի։ Նա Բաքվում քսաներեք գունդ զալմղներ ու զազախներ ունի՝ մեր աշխարհն ուղարկելու համար։ Մեզ հետ նամակի կապ է պահում ողորմած թագավորը։

— Մենք էլ ենք ստացել նրա հուսադրական թուղթը,— շտապեցին տեղեկացնել երևանցիները։— Սպասում ենք ձեր ու ռուսների գալուն։

— Միայն հազար ռուս գա Երևան, և մենք հոտած Միհրալուն կախ կտանք բերդի մայր աշտարակից։

— Կախաղանի թոկը մոմած, պատրաստ է։

— Մեր քաղաքում և շրջակա գյուղերում տասը հազարի չափ զինված մարդ ունենք,— հանդարտ ասաց Հովհաննես Հունդիբեկյանը։— Միհրալի խանն ահից բակն է մտել։ Մենք վառոդի ու գնդակի պակաս չունենք։ Մենք օր-օրի սպասում ենք Դավիթ-Բեկի երևալուն, որ զենքերս ուղղենք խանի վրա։

— Այդպես է, այո՛,— հաստատեցին մյուսները ևս։

— Բայց, եղբայրնե՛ր,— ձայնը մի փոքր իջեցնելով ասաց Տեր-Ավետիսը։— Այն զենքը, որ դուք պատրաստել եք պարսիկների դեմ, այժմ ստիպված կլինեք ուղղել մի ավելի ահարկու թշնամու դեմ։ Դուք գիտեք, որ թուրքն առել է Թիֆլիսը։ Սուլթանը հարյուր հիսուն հազարանոց բանակ է դրել Էրզրումում։ Եթե ոչ այսօր, ապա վաղը կգա մեզ վրա...

Պողոս Քիչիբեկյանն աղմուկով կուլ տվեց թուքը։ Դավիթ Միրզեջանյանի հոնքերը թռան ճակատը, Կառչիկ Հովհաննեսն «ախ» արեց։ Գրիգոր վարդապետը ձեռքից վայր գցեց երկար տերողորմյան։ Կատուն ցատկեց տերողորմյայի վրա ու սկսեց խաղալ նրա կրակագույն հատիկների հետ։

— Հարյուր հիսուն հազա՞ր,— հառաչեց պարոնտեր Հովհաննեսը։

— Մի՞թե տեղյակ չեք,— զարմացավ Տեր-Ավետիսը։

— Տեղյակ ենք, որ թուրքն առել է Վրաց աշխարհը։ Գիտենք նաև, որ Էրզրումում սուլթանը զորք է հավաքում։ Բայց Միհրալի խանը երդվում է, որ Էրզրումում հազիվ տասը հազար ասկյար կա, որ թուրքը չի գա Երևանի վրա, որ շահ Թահմազը բարեկամացել է սուլթանի հետ։

— Թաքցնում է, խաբում է մեզ անօրենը,— չարացավ ներկարար Կառչիկ Հովհաննեսը,— հիմա իմացա՞ք, թե ինչու չի մեր մարդկանց թույլ տալիս դուրս գալ քաղաքից։ «Ղարսի կողմերում խոլերա է»,— ասում է։ Հաշում է անատամը։ Ինքը գիտի, թե ինչ է կատարվում Էրզրումում, բայց մեզ քնով է անում, որ ճարը չտեսնենք։

— Ի՞նչ եք լռել, իշխանն՝ր, խոսեցեք,— գոչեց Պողոս Քիչիբեկյանը։— Աղետ է գալիս։

— Հավաքենք տղաներին և հենց հիմա վրա տանք Միհրալու վրա, քերդն առնենք,— փրփրած առաջարկեց Կառչիկը։— Էլ ինչի՞ ենք սպասում։ Ական դնենք պարսպի տակ ու վերջ...

— Օգուտն ի՞նչ...— տաքացած Կառչիկին ընդհատելով՝ ասաց Տեր-Ավետիսը։— Բերդը կառնեք ահագին կորուստի գնով... Կթուլանաք։ Քյոփուրլու Աբդուլլահի զորքը մորեխի պես կգա ձեր քաղաքի վրա։ Ի՞նչ պիտի անեք։

Կառչիկ Հովհաննեսը կծկվեց, ոգևորության կրակը մարեց։ Լռեց՝ չարացած ու դժգոհ։

— Ի՞նչ ճանապարհ է ցույց տալիս մեզ մեր ապավեն Դավիթ-Բեկը,— հարցրեց Գրիգոր վարդապետը։

— Գուցե քեզ ուղարկել է Թուրքին հպատակվելու խորհրդո՞վ,— հարցրեց Քիչիբեկյանը։

— Է՛դ էր պակաս,— ծաղրեց Դավիթ Միրզեջանյանը։— Ես իմ երեխաներին կմորթեմ, բայց Թուրքին վիզ չեմ թեքի։

— Բեկն այդպիսի խորհուրդ չի տալիս ձեզ,— ասաց Տեր-Ավետիսը։— Միևնույն է, հպատակվեք էլ, Թուրքը ձեզ ամենքիդ կմորթի։ Նա էրզրումից հանել է բոլոր հայերին, քշել Արդահանի կողմերը, այնտեղ կոտորել։ Թուրքին հպատակվելը՝ կործանում է։ Իմացեք։

— Ուրեմն ի՞նչ անենք...

— Լսեցեք Դավիթ-Բեկի խորհուրդը,— հանդարտ պատասխանեց Տեր-Ավետիսն ու, ծածկագրպանից հանելով Բեկի նամակը՝ մեկնեց վարդապետին։

Վարդապետը կատվին ծնկից իջեցրեց, տրորեց աչքերն ու, Թուղթը հեռու պահելով՝ կարդաց.

«Երևանցի հայե՛ր. աշխարհաքանդիչ օսմանլուն գալիս է ձեր քաղաքի վրա։ Զգույշ և զգոն եղեք։ Հազարապետ Տեր-Ավետիսը բերանացի ձեզ կհաղորդի իմ կամքն ու խորհուրդը։ Լսեցեք բարին»։

Հոլանդական Թղթի պատառիկը ձեռքից-ձեռք անցավ։ Բոլորը համբուրեցին Բեկի կնիքի կարմիր դրոշմը։

— Հիմա լսեք Դավիթ-Բեկի և Հայոց ժողովի ավագանու խորհուրդը։— խոսեց Տեր-Ավետիսը։— Ամբողջ ժողովրդով դուք պետք է տեղափոխվեք Սյունիք ու Արցախ։

Երևանցիները մի պահ պապանձվեցին, կարծես ինչ-որ դիվական բան տեսան իրենց առջև։ Նույնիսկ չէին շնչում։ Մի քանիսը խուլ հառաչեցին։ Մյուսները, ադամախնձորները վերուվար անելով՝ Թուքները

կուլ տվին։ Բաց պատուհանից ակամա նայեցին իրենց քաղաքին, իրենց տներին, որոնցից շատերի պատուհանները դեռ լուսավորված էին։ Հիշեցին իրենց այգիները՝ Սամբեկի Դալմայից մինչև Փարաքարի կողմերը, ապա շուկաները, արհեստանոցները, անասունների հոտերն ու նախիրները, որ պահում էին Հրազդանի կիրճում և շուտով պետք է տեղափոխեն Արագածի լանջերը, Գեղամա սարերի արոտները։ Թողնե՞լ այս ամենը՝ պապերից ժառանգած տները, առևտուրը, արհեստագործությունը, իրենց եկեղեցիները։ Հնարավո՞ր բան է միթե։ Դեռ Հայկ նահապետից շատ առաջ սերնդեսերունդ ապրում են այստեղ։ Հիմա գաղթի ճանապարհը բռնե՞ն, տնանկ ու մուրող դառնա՞ն։

Տեսնելով, որ երևանցիները հանկարծակիի եկան իր առաջարկից, և ոմանք նույնիսկ թշնամաբար են նայում իրեն, Տեր-Ավետիսը վեր կացավ։

— Ձեր միակ փրկությունը Երևանից տեղափոխվելու մեջ է,— ասաց անխղճորեն դաժան։— Նախիջևանի ու Շարուրի դաշտային գյուղերն արդեն բարձրացել են լեռները։ Անառիկ տեղեր կան Վայոց ձորում, Խաչենում, Վարանդայում։ Եկեք, միառժամանակ ապրեցեք այնտեղ։ Մենք ամեն ինչով կօգնենք ձեզ։ Լավ խորհեցեք, եղբայրնե՛ր։ Մեր ռազմական օգնության վրա հույս մի՛ դրեք։ Ուժերս սակավ է, չենք կարող բաց դաշտում ճակատ տալ Թուրքերի հարյուրապատիկ առավել զորքերին։ Թուրքը կառնի Երևանը. մեծ աղետ է գալիս ձեզ վրա... Տեղափոխվեցեք մեր աշխարհը։

— Ի՞նչ, ի՞նչ,— կապ ընկնելով գոչեց Պողոս Քիչիբեկյանը։ Նրա աչքերը ոլորվեցին բների մեջ։— Ավերակնե՞ր անենք մեր տները։ Թողնե՞նք մեր պապերի շեն օջախները։ Շահ Աբբասի տված վերքերը նոր են լավացել, էլի՞ վերք տանք դժբախտ քաղաքիս։— Նա Թռավ դեպի Տեր-Ավետիսը, բռունցքները Թափահարեց իր գլխի վրա ու գոռաց արդեն չափն անց, կատաղի։— Մուրացկա՞ն անենք մեր զավակներին։ Ո՞ւր է ռուսը, ո՞ւր եք դուք, դո՞ւք... Խաբեցի՛ք, Թե զինվեցեք, գալիս ենք. ինչո՞ւ չեք գալիս հապա։ Չէ՛, երբե՛ք, ոչ մի պայմանով մենք չենք Թողնի մեր քաղաքը։

— Ո՞ւր տանենք մեր գործատները, ընտանիքները, ո՞ւր,— ոչ պակաս վրդովմունքով աղաղակեց Կառչիկ Հովհաննեսը։— Զուլում է։ Աստվա՞ծ, ես քու...

Գրիգոր վարդապետը լալով մորմոքվում էր.

— Հանդարտվեցեք, խենթե՛ր, այնպես խոսեք, որ հասկանանք միմյանց։

Բայց նրան լսող չկար։ Բոլորը գոռում էին՝ ամեն պատշաճ կարգ մոռացած, շար աչքերով խեթելով իրենց մեջտեղը սյունի պես կանգնած Տեր-Ավետիսին։ Փոքր Գորգին իրեն գցեց հազարապետի մոտ, ձեռքը դրեց թրի դաստակին։ Թող մեկը համարձակվի սուր հանել, այն ժամանակ ինքը...

Այնինչ Տեր-Ավետիսը հանգիստ ու հանդարտ կանգնել էր երևանցիների օղակում։

— Գոռգոռալով կտուրը մոխիր չե՞ք գցի,— առանց ձայնը բարձրացնելու ասաց նա։— Ուզում եք մեծով ու փոքրով ծախվե՞լ Եգիպտոսի ստրկավաճառանոցներում, Թուրքանա՞լ՝ դժոխքին հանձնելով ձեր հոգիները։ Ավելի լավ չէ՞, արդյոք, պատվով ապրեք մեր լեռնային անմատչելի տեղերում, քան բնաջնջվեք։— Նրա ռունգները լայնացան, ձայնն ահարկու դարձավ, կարծես մենամարտի էր պատրաստվում։— Պարսիկ Միհրալի խանը ձեզ կմատնի իր հավատակից Թուրքի ձեռքը։ Թուրքը Միհրալի խանը ձեզ կմատնի իր հավատակից Թուրքի ձեռքը։ Թուրքը հիմա ոչ մի հայի կենդանի չի ուզում թողնել։ Խելք հավաքեցեք ու խորհեցեք բարին։ Մեկ օր ժամանակ, սպասում եմ Դավիթ-Բեկին տրվելիք ձեր պատասխանին։

Նա արագ դուրս եկավ։ Փոքր Գորգին խեթ-խեթ նայեց գազազած երիտասարդ մելիք Պողոս Քիչիբեկյանին ու վազեց հազարապետի ետևից։

Տեր-Ավետիսը Գորգու հետ մտավ Հունդիբեկյանի խոհանոցը։ Նեղ թախտին մրափել էր պարարտ սպասուհին։ Տեր-Ավետիսն ուժգին հարվածեց նրա ցցված հետույքին։ Թշվառ կինը զարհուրած ծառս եղավ տեղը։

— Գինի՛ բեր,— հրամայեց Տեր-Ավետիսը ու նստեց սպասուհու մարմնի ջերմությունից տաքացած թախտին։— Խելքի կտոր չունեն պլխներումը, միայն քամակներն են հաստացնում։ Թող գոռան, որքան ուզում են։

Երկար ժամանակ աղմկում էին երևանցիները։ Գոռում էին, ով ինչքան ուժ ուներ։ Հովհաննես Հունդիբեկյանը պատուհաններն ամուր փակել էր, որ աղմուկը սենյակից դուրս չգա։

— Եթե Թուրքերը Երևանն առնելու միտք ունեն, հապա ինչո՞ւ է Միհրալի խանը հանգիստ նստել իր տեղը. խոտ է արածո՞ւմ, ի՞նչ է,— ձեռքերը թափահարում էր Կառչիկ Հովհաննեսը։— Միհրալին չգիտի՞, որ սյունեցի Թուրքը կմաշկի իր շիա կաշին։

— Կամա՜ց, ա՛յ անասնավածներ,— անհույս փորձում էր համոզել

տանտերը, բայց ոչինչ չէր ստացվում։ Գոռում էին խոպոտվելու աստիճան։

— Եթե իրոք մեծ վտանգ լիներ, կաթողիկոսը հո մեր թշնամին չի՞, կզգուշացներ։ Հրե՜ն, նրա բարեկամ Սեղբոս հարուստը Ստամբուլում ամեն օր սուլթանի հետ է նստում, վեր կենում։

— Բայց Դավիթ-Բեկը լուսանի լսողություն ու տեսողություն ունի, նրան ավելի է հայտնի բանը,— աշխատում էր համոզել Գրիգոր վարդապետը։— Նրան լսեք, հայ քրիստոնյաներ։

— Լսենք, որ գնանք նրա գերին դառնա՞նք,— առարկում էր Դավիթ Միրզեջանյանը։— Բեկն ուզում է Երևանի հարստությունը տանի իր լեռները, որ տիրանա։ Ուզում է մեզ իր զորքի մեջ մտցնի։ Ահա նրա փորացավը։ Խելք ունեցեք։

Գրիգոր վարդապետը չկարողացավ բան հասկացնել գազազած իշխաններին։ Յուրաքանչյուրի բնավորությունը նա լավ գիտեր։ Ամեն ոք իր կայքն էր ուզում պաշտպանել։ Չէին կամենում թողնել այն հարստությունները, որ ունեին քաղաքում։ Բացի այդ, բնավ չէին հավատում, որ Թուրքերն իրոք այդքան վիթխարի զորք են կուտակել ու պիտի գան հենց Երևանի վրա։

Հովհաննես Հունդիբեկյանը բարձրացավ թախտը ու այնպես գոռաց յուրայինների գլխին, որ սրանք ձայնները կտրեցին։

— Լսեցե՛ք, խելագարնե՛ր։ Վերջապես դուք իշխաննե՞ր եք, թե շուկայի խուժան։ Լսեցե՛ք։ Դավիթ-Բեկի առաջարկությունը մերժում ենք։

— Այո՛, այո՛, մերժում ենք,— հավանություն տվին այս ու այն կողմից։

— Բայց միաժամանակ չենք կարող նաև բանի տեղ չդնել նրա խորհուրդը,— շարունակեց պարոնտերը,— համբերություն ունեցեք լսել, ձեզանից մեծ եմ։ Այսպես, ուրեմն, պատրաստ սպասում ենք։ Հա՛, եթե իսկապես Թուրքը գա մեր քաղաքի վրա, հո մենք էլ խոտ չե՞նք արածում։ Տասը հազար մարդ զենքի տակ ունենք, դեմը կառնենք, մեր ունեցվածքն ու զավակները կտեղափոխենք Սևանի կողմերն ու պաշտպան կկանգնենք մեր քաղաքին։ Բան է, եթե Թուրքը զոռի՝ կթողնենք, կհեռանանք։ Համաձա՞յն եք, տաքգլուխներ։

— Խելոք բան ես բարբառում, Հովհաննե՛ս պարոնտեր։

— Համաձայն ենք,— գոչեցին այս ու այն կողմից։

— Ինչո՞ւ շտապենք քամակներիս փարչ կապել ու ճղել։ Սպասենք։ Եթե իսկապես Թուրքը գա, և այդ քահանա հազարապետի ասած զորությունն ունենա, ապա իսկույն կքաշվենք լեռները։

— Այո՛, այո։

— Լավ խորհեցեք, իշխանն ե՛ր,— խնդրեց վարդապետը,— վախենում եմ հետո ուշ լինի, ո՛ւշ...

— Հո մենք էլ մատաղ ուտող սևագլուխնե՞ր չենք, հա՛յր սուրբ։ Ջենք ունենք։ Հենց որ տեսանք ուժներս չի պատում՝ կթողնենք ու կճղենք։

Այդպես էլ որոշեցին։ Թուրքը դեռ չի երևում, Լոռվա ու Շիրակի կողմերից ձայն չկա։ Միհրալի խանը հանգիստ նստել է իր պալատում, պարսիկ վաճառականները շուկաներում ղայլան են ծխում ու ապրանքների գինը նույնն է, ինչ երեկ, մյուս օրը, երեք տարի առաջ։

Վճռեցին իրենց խորհրդակցության մասին ոչ ոքի մոտ բերան չբանալ։ Նույնիսկ երդվեցին վարդապետի մագաղաթե ավետարանի վրա։ Բացի այդ, որոշեցին Հովհաննես Հունդիբեկյանին ու Գրիգոր վարդապետին ծածուկ ուղարկել Միհրալի խանի մոտ՝ նրանից մի հաստատ տեղեկություն իմանալու համար, որից հետո միայն պատասխան տան Դավիթ-Բեկի դեսպանին։

Հյուրերը ցրվեցին։ Հովհաննես Հունդիբեկյանը Տեր-Ավետիսին գտավ խոհանոցում՝ գինի խմելիս։ Նեղացավ։

— Դու անպատվում ես ինձ, Տե՛ր-Ավետիս, իմ տանը մի ուրիշ հարմար տեղ չգտա՞ր, որ եկել ես խոհանոց։

— Մի՛ սրտնեղվիր,— մռայլ պատասխանեց Տեր-Ավետիսը։— Միևնույն է, մի պատառի հարգանքը չիմացողը, հազար պատառինն էլ չի իմանա։ Ի՞նչ որոշեցիք։

Պարոնտերը ուսերը վեր քաշեց.

— Դեռ համաձայնության չենք եկել, եղբա՛յր պատվական, խորհում ենք։

— Խորհեցեք՝ ինչպես հարմար եք գտնում։

Հյուրերին տարան նրանց համար պատրաստած մի զով սենյակ։ Ծառաները տաք ջրով լվացին նրանց ոտքերն ու անաղմուկ հեռացան։

— Խելքդ մի բան կտրե՞ց,— պառկելով տեղը՝ Փոքր Գորգուն հարցրեց Տեր-Ավետիսը։

— Ջեն ուզում, թող չուզեն, գլուխները քարը,— պատասխանեց Գորգին։

— Է՛...— հառաչեց Տեր-Ավետիսը։— Տղա ես դեռ, Գորգի՛, չնեղանա՞ս։ Երևանցիները քաջ կռվողներ են, իմացիր։ Տասը հազար զորք ունեն։ Մեզ հետ լինելուց՝ կշահենք։ Իսկ եթե մենակ մնան՝ կկորչեն. մասնատված ջուրը շուտ է ցամաքում, որքան էլ գետը վարար լինի։ Մեր դժբախտությունն էլ հենց այն է, որ մասնատված ենք դարեր ի վեր...

* * *

Առավոտ էր։ Քաղաքից բերդ տանող ճանապարհը փոքր-ինչ տամուկ էր։ Ձիերը հազիվ էին դերբուկների վրայով թռցնում իշխան Հովհաննես Հունդիբեկյանի կառքը։ Թեև բերդը քաղաքից այնքան էլ հեռու չէր, ընդամենը մեկ ժամվա ոտքով ճանապարհ, բայց իշխանն ու Գրիգոր վարդապետը հարմար գտան շուքի համար կառքով գնալ խանի մոտ։

Դիմացը Մասիսներն էին՝ ամպի խուռն գալարները գլխներին։ Աջ կողմին՝ կիրճի մեջ, հոխորտում էր Հրազդանը։ Առավոտը խաղաղ էր։ Հատուկենտ պարսիկ զինվորներ էին միայն հանդիպում ճանապարհին։

Կառքը մոտեցավ Երևանի բերդի փակ դռներին։ Դիտանոցից ճանաչեցին եկվորներին։ Պարսիկ մի յուզբաշի նրանց խնդրեց կառքը թողնել դրսում և ոտքով մտնել բերդ։ Այդ բանը խիստ զայրացրեց պարոնտերին, սակայն ավելորդ աղմուկի տեղիք չտալու համար կատարեց նրա խնդրանքը։ Մտան բերդ։

Խանի պալատի փոքրիկ հրապարակում երեք պարսիկ զինվոր սրբում էին այնտեղ գիշերած զինվորների ու ձիերի աղտեղությունը։ Պալատի մեծ մուտքի պատը շողում էր աղյուսների վառ կարմիր, կանաչ ու կապույտ գույներով։ Կարծես երփներանգ գորգ էր կախված պատից։ Պարոնտերն ու հայր սուրբը երկար սպասեցին դռան մոտ, մինչև պահապան զինվորը գնաց ու վերադարձավ խանի նայիբի հետ։

— Ի՞նչն է ձեզ տարաժամ բերել խանի դուռը, պատվակա՛ն այրեր,— հարցրեց բարձրահասակ, վրան ճերմակ կտավ փաթաթած սյունի նմանող նայիբը։

— Դու մեզ տար խանի մոտ,— կոպիտ պահանջեց Հովհաննես Հունդիբեկյանը։— Մենք պարտական չենք բոլորին զեկուցելու, թե ինչն ինչոց է։

Նայիբը ներողամիտ ժպտաց։ Բայց վատ թաքցրած ատելություն կար այդ ժպիտի մեջ։ «Ժպտա, հա՛... Այդպես կատու կդառնաս»,— նրա մասին մտածեց Հունդիբեկյանը։

Վերջերս պարսիկները հարգանքով էին վերաբերվում ոչ միայն հայ իշխանների ու հոգևորականների հետ, այլև գլխարկ էին հանում հասարակ քաղաքացիների առջև։ Ինչպե՞ս չհանեն։ Նստած են ականած շենքի մեջ։ Պարսկաստանը շունչը փչող դիակ է դարձել։ Ռուսները թիկունք են հայերին։ Սյունիքում ու Արցախում հայերը բանակներ ունեն, իսկ սյունի թուրքերը այսօր կամ վաղը կերևան Երևանի պատերի տակ։ Հան-

գամանքներն ստիպում էին պարսիկներին հաշտ ու սիրալիր լինել հայերի հետ։

Միհրալի խանն արտակարգ ուրախությամբ ընդունեց քաղաքի պատվիրակներին։

— Օ՜... դուք ինձ բախտավորեցրիք այս առավոտ,— շողոքորթ ժպիտը դեմքին՝ բացականչեց նա ու, երկու ձեռքով բռնելով հյուրերի ձեռքերը՝ երկար թափահարեց, նույնիսկ մի փոքր կորանալով մեջքից,— համեցի՛ր, քեշի՛շ բաբա, համեցի՛ր, սիրելի՛ շահապ[1] Հովհաննես։ Այս գիշեր լավ երազ եմ տեսել։ Հուսամ, որ ալլահը ձեզ բարի գործով է առաքել իմ տունը։

Խանը հյուրերին նստեցրեց իր ընդունարանի լայն թախտերին շաղ տված նստաբարձերին, ապա նստեց նաև ինքը։

— Մենք ուզում ենք քեզ հետ միայնակ խոսել, խա՜ն,— ասաց Հովհաննեսը։

— Իմ աչքի ու գլխի վրա,— պատասխանեց խանը և նայեց նայիբին։ Սա գունատվեց, խոր գլուխ տվեց խանին ու դանդաղ դուրս եկավ։ Խանը նստեց։ Բարակ, հինայած հոնքերը բարձրացրեց ու հարցական նայեց հյուրերին։ Նրա դեմքն անշարժ էր, աչքերը դատարկ։ Թեև սիրտը լի էր տագնապով, բայց պարսիկը գիտեր երեսհաճ ձևանալ, հմտորեն թաքցնել հոգեկան խռովքը։

— Մե՛ծ խան,— խոսեց պարոնտերը։— Դու մեր գլուխների տերն ես, մեր քաղաքի պահապանն ու խնամողը։ Դու գիտես, որ մենք երբեք չենք զլացել կատարելու քո ամենափոքր կամքն անգամ։ Մենք երբեք քեզ չենք նեղացրել։

— Օ՜... այո՛,— շտապեց շողոքորթել խանը։— Ալլա՜հն է վկա, որ ես շատ գոհ եմ ձեզանից, պատվելի՛ երևանցիներ։ Դուք մեծով ու փոքրով գովական մարդիկ եք։ Ուրեմն ասացեք, ի՞նչն է ձեզ վրդովել այդպես։

— Լուր է հասել մեզ, մե՛ծ խան, որ թուրքերը զորք են հավաքել ու պատրաստվում են գալ Արարատյան աշխարհի ու մեր Երևանի վրա։— Պատասխանեց պարոնտերը։— Սուլթանի հրամանով, թող ալլահը կորի նրա սերունդը, Էրզրումի Քյոփուրլու Աբդուլլահ փաշան հարյուր հիսուն հազար զորք է հավաքել և այսօր կամ վաղը կանցնի Հայկական պարի լեռներն ու կգա մեզ վրա։ Մենք եկել ենք իմանալու, թե ի՞նչ է մտածում մեր կայքի ու մեր զավակների պահապան մեծ խանը։

[1] Քաղաքագլուխ, պարոնտեր։

Եթե հայերն ուշադիր նայեին խանի աչքերին, ապա կտեսնեին այն մեծ երկյուղը, որ մի պահ փայլատակեց նրանց մեջ ու թաքնվեց շինծու ժպիտի տակ։

— Ո՞վ է այդ սուտ լուրերը տարածել,— կեղծ բարկությամբ հարցրեց խանը։— Ինչո՞ւ չեք նրան բռնել ու ցցի հանել, հայե՛ր։— Ձայնը բարձրացրեց։— Սո՛ւտ է, թշնամու խոսք, թուրքի հերյուրանք, որ վախեցնեն մեզ։ Հարյուր հիսուն հազա՜ր... Որտեղի՞ց, սուլթանի բկին չոքել են սերբերն ու մաջառները։ Ստույգն այն է, որ Էրզրումում հազիվ տասը հազար զորք կա միայն։

— Լուրերը հավաստի աղբյուրներից են, խա՜ն,— ասաց հայը սուրբը։

— Մի՛ հավատա, քեշի՛շ բաբա,— բացականչեց խանը։— Բոլորովին անտեղի է ձեր երկյուղը։ Վա՜յ, վա՜յ, վա՜յ...

«Մտքները ծուռ է,— մտածեց նա։— Լսել են աղետի մասին, կամենում են գլխների ճարը տեսնել։ Խի՛, խի՛, խի՛... Ուզում են ինձ մենակ թողնել։ Օ՜, միամի՛տ հայեր, ձեր խորամանկ շունը չի խաբի պարսիկի քոսոտ աղվեսին անգամ»։

— Վա՜յ, վա՜յ, վա՜յ...— շարունակեց նա,— և ինչպե՞ս եք հավատում թուրքերի գալուն։ Իմացե՛ք, արժանագույն այրեր, սուլթանը խաղաղության դաշն է կնքել շահ Թահմազի հետ, թող ալլահը շահին քաղցր աչքով նայի,— համոզող ձայնով, մի փոքր էլ վիրավորված ասաց նա։— Միր Մահմուդ ավղանի օրերը հաշված են։ Մեծ պարտություն է նա կրել շահի զորքերից։ Սուլթանը երդվել է Այա Սոֆիա տաճարում, որ բարեկամ կմնա պարսիկներին։ Ալլահի՜ սիրուն, այդ մասին բերան չբանա՜ք... Գաղտնիք է։

Այս ամենն ասաց համոզված։ Ապա լռեց՝ հաճույք զգալով, որ հայերը հավատում են իր փչոցներին։ Մտքում ծիծաղեց նրանց վրա։ Ինչպե՞ս կարող է ասել ճշմարտությունը, որ, այո՛, թուրքերը վիթխարի բանակ են կուտակել Էրզրումում, որ նրանց օգնում են ֆրանկներն ու անգլիացիները, որ սուլթանը վճռել է հողի երեսից ջնջել սեֆյան տոհմը։ Այա Սոֆիայի տաճարում երդվել է շահ Թահմազին կապել ձիու պոչից ու բաց թողնել։ Ասե՞լ, որ ինքն էլ ահուդողի մեջ է, կապել-կշկռել է իր հարստությունը, որ թուրքերի երևալուց՝ ճողոպրի նրանց ձեռքից։ Ասե՞լ։ Հո շիկացած երկաթ չի՞ կուլ տվել։ Թուրքն այսօր, վաղը կգա Երևանի վրա։ Ինքը նրան կգրգռի հայերի դեմ, կասի. «Հայերն են ուռուսներին բերում ձեզ վրա, հավատակից թո՛ւրք եղբայրներ, պատժեցեք հայերին»։ Թող սուլթանի զորքերը ծվատեն Երևանը, իրե՞ն ինչ... Գաղանը

կկշտանա հայերի հարստությամբ, հայերի արյամբ։ Ինքը գլուխը կազատի փորձանքից... Առաջին անգամը չէ, էլի՛ օրինակներ են եղել։

— Հանգիստ եղե՛ք, սիրելինե՛րս,— համոզող ձայնով խոսեց խանը։— Երեկ մարդ եկավ շահի մոտից։ Շահը հիսուն հազարանոց բանակ է ուղարկում Երևանը պաշտպանելու համար։ Մի՞թե ձեր կաթողիկոսը դրա համար չմեկնեց Թավրիզ։ Գնաց, երեկ ինձ մոտ էր. ուղարկեցի փառքով ու շուքով։ Կաթողիկոսը զորք կբերի՝ Թահմազ Ղուլի Նադիր խանի գլխավորությամբ։ Իմ եղբայրը քսան հազարանոց զորք է գումարել ու ճանապարհին է դեպի Երևան։ Խոյի խանը ևս կգա՝ երեսուն հազարանոց զորքով։ Կգան, եթե սուլթանը, աստված մի՛ արասցե, շար խորհուրդ ունենա մեր դեմ, ապա մենք հարյուր հազարանոց բանակ դեմ կդնենք նրան և ուռուսի թագավորի հետ էլ դաշն կկռենք ու նրա զորքերը բերել կտանք թուրքի վրա։

— Բերանդ տաճա՛ր, մե՛ծ խան,— ջերմությամբ ասաց հայր սուրբը։

— Գլխներիցդ հանեցեք ձեր կասկածները, հայե՛ր,— բացականչեց խանը։

— Հանենք, բայց թուրքին մի՛ հավատաք, մոլավ կանի ու մեկ էլ տեսար վրա տվեց։ Պետք է շտապեցնել շահի զորքերի գալուստը,— ասաց պարոնտերը։

— Անշուշտ,— համաձայնեց խանը՝ ցնծալով, որ այդքան դյուրությամբ խաբեց հայերին։— Դրա համար ձեր կաթողիկոսը շտապեց Թավրիզ։ Շահը զորք կուղարկի ու կաթողիկոսի հետ կգա Երևան։ Թահմազը ոչ ոքի չի զիջի Երևանը։ Երևանը Պարսկաստանի դարպասն է։

— Մերոնց մեջ կասկած կա, խա՛ն, որ, ներող եղիր, եթե թուրքերը գան, չե՞ք լքի մեզ արդյոք։

— Ջհանդամի[1] բաժին դառնամ, եթե այդպիսի միտք լինի իմ ջորեպանի գլխում անգամ,— այնպես բացականչեց խանը, այնպես անկեղծ հուզմունքով ասաց այդ խոսքերը, որ Հովհաննես պարոնտերը զղջաց անպատեհ խոսքերի համար։ Խանը վեր կացավ, արծաթակար ծածկոցի տակից հանեց Ղուրանը, դրեց ճակատին, համբուրեց նրա ոսկե կազմն ու ավելի հուզված, ավելի սրտառուչ բացականչեց.

— Նահլաթ[2] լինի իմ ու իմ սերնդի վրա, եթե ասածներիս մեջ մազի չափ անգամ սուտ լինի։ Թող այս Ղուրանը կուրացնի իմ զավակներին, ինձ ու եղբայրներիս, եթե ես մենակ թողնեմ ձեզ։

---

[1] Դժոխք։

[2] Անեծք։

— Մենք էլ երդվում ենք, խա՛ն,— տեղը կանգնեց Հունդիբեկյանը,— երդվում ենք, որ միատեղ, քեզ հետ միասին պաշտպան կանգնենք մեր քաղաքին։

— Այդպես է, այո՛,— ոգևորվեց Գրիգոր վարդապետը։

Խանը ուսերին գցեց ծիրանին, հյուրերին հրավիրեց ճաշասենյակ, բռնեց նրանց ուսերն ու սիրալիր խոսքերով վերջնականապես հանգստացնելով նրանց՝ տարավ նախաճաշի։ Սեղանն արդեն ծանրացած էր համադամ կերակուրներով։ Երկու ժամ հետո խանը նրանց ճանապարհեց մինչև դարպասը։

— Ի՞նչ կասես, հա՛յր սուրբ,— արդեն կառքի մեջ՝ հարցրեց պարոնտերը։

— Անկեղծ երդվեց, ես հավատում եմ նրան,— պատասխանեց վարդապետը։

— Ես էլ։ Ուրեմն ի՞նչ պատասխան տանք Դավիթ-Բեկի դեսպանին։

— Նա չպիտի իմանա, որ մենք եղել ենք խանի մոտ։

* * *

Պատշգամբում կանգնած Փոքր Գորգին զարմացած նայում էր ցածի հրապարակին, որտեղ ահագին ժողովուրդ էր խռնվել։ Երկու զույգ իրար ագուցած սյուների վրա հորիզոնական պրկած էր մի երկար ճոպան, որի վրայով գլխապտույտ արագությամբ վազում էր լարախաղացը։ Նրա զգեստները տարօրինակ էին։ Կրծքին ու թևերին գրբացի ծրարներ ու զանգուլակներ էին կարված։ Վառ կարմիր կապան կարճ էր, գույնզգույն վարտիքը կիպ գրկել էր ոտքերը, իսկ կնգուղ գլխարկն աքլորի կատար էր հիշեցնում։

Երկար լանգառքը ձեռքին լարախաղացը ճարպկությամբ ցատկոտում էր ճոպանի վրա, ոտքի թաթով կախվում նրանից, սողում մեջքի վրա։ Հավաքված ամբոխը «ա՜խ» էր անում։ Պակաս զարմացած ու երկյուղած չէր նաև Փոքր Գորգին։ Կյանքում այդպիսի հրաշք չէր տեսել։ Մա՞րդ է ճոպանի վրա, թե՞ սատանա։

Ճոպանի տակ, եզան երկար պոչը ձեռքին, վազվզում էր հրեշակերպ ծաղրածուն։ Նա սուր կոտոշներ ուներ, այծի մորուք։ Մազեղեն բաճկոնի վրայից կախված էին շան թաթ, ձիու ատամներ, խոզի ժանիքներ ու էլի նման բաներ։ Ծաղրածուն մերթ կանգնում էր գլխի վրա ու թաթերը պարզած՝ պտտվում տեղը, մերթ խելառ ուլի պես տրճկի տալիս, մկկում, մլավում, հաչում։ Պատի տակ նստած զուռնաչիների այտերն ուռել էին լարված նվագելուց։ Ահագին թմբուկն ականջ էր ծակում։

Լարախաղացը պարում էր նվագի տակ։ Մաղրածուն եղան պոչը պտտում էր իր գլխին ու նետվում հավաքվածների վրա։ Մեկի մորուքն էր համբուրում, մյուսի ուսերին ցատկում, երրորդի ոտքերի արանքով անցնում ու բարձրանում մեջքը։ Ապա նվերներ էր հավաքում ու գոռում.

— Ներկաբար Գարսևանը երեք դրամ տվեց։ Կնիկը սիրե՛մ...

Իսկ ամբոխը հռհռում էր բավականությամբ։ Փոքր Գորգին կլանված նայում էր այդ զարմանահրաշ տեսարանին, երբ լսեց հաստամարմին սպասուհու ձայնը։

— Խե՛ղճ տղա, մեղա՛ քեզ աստված...

— Այդ ինչ բան է,— երկյուղած հարցրեց Գորգին։

— Է՛հ, է՛հ,— երեսին խաչ քաշեց կինը։— Աստծո պատժածն է... Չե՞ս տեսնում՝ լարախաղաց է։ Փորը դև է մտել։ Քառասուն տարի պիտի այդպես խաղա, որ դևը սատկի։ Մեղք է, մե՛ղք... Մեղա՛ քեզ, աստվա՛ծ, քո շունը դառնանք, դու մեզ հեռու պահես չարից ու չարիքից։

— Ինչպե՞ս է, որ վայր չի ընկնում ճոպանից։

— Սուրբ Կարապետն է պահում, որդի՛ս, Մշո Սուլթան սուրբ Կարապետը։ Մեռնեմ սուրբ Կարապետին։ Խաղալը տվովի է։ Ինքն էլ է սուրբ։ Երեկոյան լարախաղացին կտանեն քահանայի տունը, ոտքերը կլվանան ու ջուրը կբաժանեն ընկնավորներին, լուսնոտներին, դևոտներին։ Մեղա՛ քեզ, աստվա՛ծ...

Երկյուղից ու զարմանքից Գորգու աչքերը չովել էին, բայց և այնպես ցանկացավ գնալ եկեղեցու բակը, մոտիկից տեսնել սրբին։ Սակայն հենց այդ պահին թիկունքից լսեց Տեր-Ավետիսի հզոր ձայնը։ Հազարապետը կանգնել էր շեմքին՝ անքուն ու չարացած։ Սպասուհին դեմքը թթվեցրեց ու վազեց խոհանոց։

— Այս տանը բոլորը մեռա՞ծ են, է՛յ,— նրա ետևից կանչեց Տեր-Ավետիսը։

— Բերանդ բարի բաց արա, հեթանոս,— ծղրտաց հաստլիկը։— Պարոնտերը գնացել է եկեղեցի, նրա եղբայրները շուկայումն են։ Արևը, տես, որտեղ է հասել, իսկ դու արշաքուն ես տվել։

Սպասուհին այս ամենն ասաց զարմանալի արագ ու, դուռը շրխկոցով փակելով, անհետացավ։

Բակ մտան Հովհաննես Հունդիբեկյանն ու Գրիգոր վարդապետը։ Նրանց ետևից երևացին երեկոյան խորհրդի մասնակիցները։

— Օրհնյա ի տե՛ր,— բարձրանալով պատշգամբ՝ ողջունեց պարոնտերը։

— Աստված օրհնի...— քրթմնջաց Տեր-Ավետիսը։

Մտան երեկվա սենյակը։ Երևանցիները լուռ էին, գլխահակ։ Չէին կարողանում նայել Տեր-Ավետիսի աչքերին։ Սա հասկացավ բանը։

— Հը՞,— հարցրեց չարացած։

— Ժողովուրդը չի ցանկանում հեռանալ իր քաղաքից,— մեղավոր պատասխանեց Հունդիբեկյանը։— Մեր կաթողիկոսը գնացել է շահի մոտ։ Տեսնենք ինչ լուր է բերում։ Դժվարինն ես կամենում, Տեր-Ավետիս։ Անհնարին է։ Երեխաներ, տուն, տեղ... Կմտածենք՝ հետո...

— Լռի՛ր, հերի՞ք է,— չթողնելով, որ պարոնտերը շարունակի իր ասելիքը՝ այնպես որոտաց Տեր-Ավետիսը, որ պատուհանի ապակիները զնգացին։ Երևանցիները կատաղի հայացքով նայեցին նրան։ Նույնիսկ Գորգին մտքում նախատեց Տեր-Ավետիսի անպատշաճ վարմունքը։ Հիմա երևանցիները կթափվեն իրենց վրա, պատիվ կպահանջեն։ Բայց Տեր-Ավետիսն ավելի բարձրացրեց ձայնը.

— Միհրալի խանը մածնե՞ց գլուխներդ։ Հերովդեսի նման լա՞ց եղավ՝ Հովհաննես Մկրտչի առջև՝ նրան գլխատելուց առաջ։ Հավատացի՞ք խաբկանքին։

Պարոնտերը ցնցվեց։ Վարդապետի շրթունքները դողացին։ Որտեղի՞ց գիտի այս դաժան քահանա-զորավարը, որ իրենք եղել են բերդում՝ խանի մոտ։

— Մածնե՞ց պարսիկը. պատրողական խոսքերով խաբե՞ց ձեզ,— շարունակեց Տեր-Ավետիսը։— Այդ չարաբաստ ու վատշվեր խանի խոսքը հալած յո՞ւղ է՝ ձեր մարմնի ու հոգու համար պիտանի, իսկ Դավիթ-Բեկը թշնամի՞ է, որ խորշում եք նրանից։ Կոտորվեցե՛ք, ջնջվեցե՛ք, հող դարձեք, կնարմատնե՛ր, անխոհեմնե՛ր...

Գազազել էր, աչքերից կրակ էր ժայթքում։

— Թող թուրքը գա ու մորթի ձեզ,— գոռաց ավելի կատաղի։— Դուք այնքան անհոգ ու պղերգ եք, որ արժանի եք դրան։ Ապա ժողովո՞ւրդը, մանուկնե՞րը, կանա՞յք։ Նրանց մեղքը ձեր շլինքներին։— Ոտքը գետնին խփեց, թքեց հատակին ու դուրս թռավ։ Միայն բակում նրա ետևից հասավ Հովհաննես Հունդիբեկյանը։

— Տե՛ր հազարապետ,— ձեռքերը պարզելով՝ գոչեց նա,— ե՛տ դառ, աստծո՛ւ սիրուն։

— Փորոտիքդ կթափեմ, հեռո՛ւ,— մռնչաց Տեր-Ավետիսն ու գնաց...

Գնում էր գազազած, հևալով։ Փոքր Գորգին հազիվ էր հասնում նրա ետևից։ Շուտով քաղաքից դուրս եկան։ Մինչև Նորքի ձորաբերանը գնացին լուռ։ Գորգին զարմանում էր, թե ինչու երևանցիները պատիվ չպահանջեցին հազարապետից անարգանքի համար։

Քաղաքը մնացել էր հեռվում։ Նորքի ձորում աղմկում էր ձնհալից վարարած Գետառը։

— Ատրճանակդ հե՞տդ է,— վերջապես, առանց Փոքր Գորգու կողմը նայելու՝ հարցրեց Տեր-Ավետիսը։

— Հետս է,— պատասխանեց Փոքր Գորգին։

— Առաջ նայիր։

Գորգին նայեց ձորաբերանին։ Ճանապարհով հանդարտ իջնում էին երկու պարսիկ ձիավոր։ Մեկն ինչ-որ բան էր պատմում մյուսին։

— Հենց որ մոտենանք, ես խոսք կգցեմ, իսկ դու կբռնես ձիերի սանձերը,— կամաց պատվիրեց Տեր-Ավետիսը։— Ամուր կբռնես։ Ես կկրակեմ։ Չի է հարկավոր, պետք է շուտ տուն հասնել։

Փոքր Գորգին հասկացավ նրա միտքը։ Այն բանից, որ մի այդպիսի վտանգավոր գործի են դիմում իրենք, նրա մեջ արթնացավ դաժան մի զգացում։

Պարսիկները մոտեցան։ Զինվորներ էին՝ հրացաններով ու երկար թրերով։ Տեր-Ավետիսը կանգնեց ճանապարհի մեջտեղն ու գլուխ տվեց։

— Սալա՛մ, զինվոր եղբայրներ,— բարեկամի ձայնով ողջունեց նա պարսկերեն։— Թող բարի լինի ձեր երթը։ Չե՞ք ասի, արդյոք, թե ո՞րն է Բաշ-Գյառնիի ճանապարհը։ Խանից նամակ ունեմ Բաշ-Գյառնիի նայիբին...

Փոքր Գորգին հնազանդ ծառայի պես բռնեց զինվորների ձիերի սանձերը։ Պարսիկները դա մեծագույն պատիվ էին համարում։ Նրանք շուռ եկան թամբի վրա։

— Հրե՛ն... այն ուղղությամբ բռնեցեք ճանապարհը,— սկսեցին բացատրել նրանք։

Փոքր Գորգու ականջները դղրդացին։ Կրակոցներից ձիերն այնպես ծառս եղան, որ Գորգին կախվեց օդում։ Զինվորներից մեկն ընկավ ուղիղ նրա գլխին։ Տղայի աչքերից կայծեր թռան, բայց կարողացավ ոտքի վրա պահել իրեն։

— Ուշքի՛ եկ,— գոչեց Տեր-Ավետիսը,— ձիերն ամուր պահիր։

Նա դիակները քարշ տվեց ու նետեց գետը։

— Թռի՛ր թամբին,— կարգադրեց զարմանալի սառնությամբ։

Թամբը դեռ տաք էր։ Փոքր Գորգին ձին թոցրեց Տեր-Ավետիսի ետևից։ Սլացան դեպի Գեղարքունիք։ Սևանա ծովափով կհասանեն Սոթոց գավառը, կանցնեն Վարդենիսի լեռնանցքը և Որոտանի ակունքների մոտով կիջնեն Սիսական։

— Դիակներն ինչո՞ւ գցեցիր գետը,— երկար լուռ մնալուց հետո սիրտ արեց հարցնել Գորգին։

— Նորքի մոտերքն էին։ Կգտնեին ու անմեղ նորքեցիների վրա շառ կգցեին,— պատասխանեց Տեր-Ավետիսը։— Մարդ պետք է այնպես ապրի, որ իր ստվերով անգամ չկտրի ուրիշի արևը...

Փոքր Գորգին զարմացած նայեց նրան։ Այդ ի՞նչ մարդասիրություն է ծագել հազարապետի սրտում։ Հենց հիմա երկու մարդու արև խավարեց, իսկ այնպես է խոսում, կարծես կյանքում միայն սրբապատկերներ է նկարել ու ոչ մեկի քիթն անգամ չի արյունոտել։

ՄԵՆԱՎՈՐ ԳԵՐԵԶՄԱՆԸ...

Փշատի խիտ ճյուղերի միջից խոսեց ցայգահավը։ Բարդու վրա թևերը ծափծափեց արագիլը։ Կապույտ մշուշը սկսեց գունատվել։ Թփերի արանքից երկչոտ քայլերով դուրս եկավ Արուսյակը, ուղղեց զգեստն ու անցավ առվի վրայով։ Մովսեսը ետևից ասաց.

— Երեկոյան էլի կգամ, աղունի՛կս։

— Հա՛, կսպասեմ, հոգի՛ս։

Արուսյակը կորավ ադամամութի մեջ։ Լսվեց քողտիկի դռան փակվելու ձայնը։ Մովսեսը երջանիկ հոգոց հանեց։ Փշատի ծառը բուրում էր։ Ծառի՞, թե Արուսյակի մարմնի բույրն էր ողողել շրջապատը։ Ա՜խ, սիրտ կպայթի այսքան մեծ բերկրանքից...

Արագիլը թռավ դեպի Արաքսի եղեգնուտները։ Մովսեսը նայեց երկնքին։ Մեգում էր։ Հնադարյան ընկուզենու փչակից նա հանեց Նարեկն ու գնաց դեպի վանք։ Գիրքը երեկոյան էր վերցրել հետը։ Մի կաղ օտարական խնդրել էր Նարեկ կարդալ հիվանդ որդու գլխին։ Մովսեսը գտավ կաղ օտարականին ու, հիվանդի սնարին կանգնած՝ կարդաց Նարեկը։ Երբեք այդպիսի ջերմությամբ չէր կարդացել։ Երբ բակից դուրս եկավ, Վաղարշապատն արդեն արթնանում էր մրափած գոմշի պես՝ ծույլ, դժկամ։

Հասավ վանքի դարպասին։ Սակայն դեռ չէր ծեծել նեղլիկ դռնակը, երբ ետևից քառատրոփ եկող ձիու ոտնաձայն լսեց։ Դուռը շտապ ծեծեց։ Ո՞վ գիտի, ի՞նչ անիծվածի մեկն է մոտենում...

— Ո՞վ է,— դարպասի մյուս կողմից լսվեց մեկի քնահարամ ձայնը։

— Ես եմ՝ Մովսեսը, Վահա՛ն եղբայր, բաց արա։

Դուռը ճռնչալով բացվեց։ Մինչև Մովսեսը ներս կմտներ, ծոծրակին զգաց ձիու այրող շունչը։ Շուռ եկավ սարսափած։ Բարձրահասակ մի զինվոր թռավ ձիու թամբից։

— Դուռը մի՛ փակեք,— գոչեց հևալով։— Գալիս եմ Լոռի քաղաքից։

Մովսեսը վատ բան գուշակեց, թեև զինվորը հայ էր՝ սուր գլխարկով, մահուդե կարմիր կապայով։ Մտան վանքի բակը։ Ձիավորը շոքեց, հանեց գլխարկն ու երեք անգամ համբուրեց սուրբ իշման տեղի հողը։

— Ինձ տարեք կաթողիկոսի մոտ,— վեր կենալով՝ հևաց նա։

— Կաթողիկոսը աթոռում չէ,— պատասխանեց Մովսեսը։

— Գրո՜ղը տանի, տարեք տեղապահի մոտ, արթնացրեք բոլորին, զանգերը խփեցեք, թուրքը գալիս է...

Դռնապահը նիգերը գցեց։ Մովսեսը լրաբերի հետ վազեց վեհարան։ Արթնացրին կաթողիկոսի տեղապահ Հովասափ վարդապետին։ Սա զգեստները հագնելով՝ շարացած նայեց Մովսեսին։

— Ինչո՞ւ ես փոշոտ։

— Գյուղ էի գնացել, հա՛յր սուրբ, հիվանդ կար, Նարեկ կարդացի։

— Մեռա՞վ։

— Թուրքերը գալիս են։

— Ի՜նչ,— վարդապետի թևը մնաց օդում,— խելագա՞ր ես։

— Դրսում սուրհանդակ կա, հա՛յր սուրբ, Լոռի քաղաքից է, հրաման տուր, ներս բերեմ։

— Բե՛ր։

Լոռեցին համբուրեց վարդապետի դողացող ձեռքը։

— Քյոփուրլու Աբդուլլահ փաշան մտավ մեր աշխարհը։ Ինքը գալիս է Երևանի վրա։ Նրա Ռեջեբ փաշան քսան հազար ենիչերիով պաշարել է Լոռին։ Մերոնք փակվել են բերդում։ Կռվում են։ Մելիքն ինձ ուղարկեց իմաց տալու։

— Հեռո՞ւ են,— հարցրեց վարդապետը։

— Առաջավոր գնդերը տեսա Սպիտակի լեռնանցքում։ Գերի ընկնելուց հազիվհազ պրծա...

Տասը երիտասարդ վանական քաշեցին էջմիածնի մայր զանգի պարանը։ Լուսաբացի խաղաղության մեջ սփռվեց նրա տագնապալի ձայնը։ Դա՜ն դի՜ն... Դա՜ն, դի՜ն... Մանր զանգերը ողբասաց կանանց նման ձայնակցեցին նրա չարագուշակ կոնչոցին։ Ահաբեկ վանականները դուրս թափվեցին խցերից և աղմկելով խռնվեցին մայր տաճարի առջև։ Իրար հետ խոսում էին գոռգոռալով. վիթխարի զանգի ձայնը չէր թողնում, որ բան լսեն։ Լուրը թռավ Վաղարշապատի փողոցներով։ Գյուղացիները խմբերով լցվեցին վանքի փակ դարպասների առջև։

— Է՛յ, բա՛ց արեք դուռը,— գոռում էին նրանք։

— Կաթողիկոսին ինչո՞ւ ուղարկեցիք Թավրիզ։

— Հիմի ո՞վ է մեր գլուխը, ի՞նչ պիտի անենք։

Վաղարշապատում շփոթ ընկավ։ Էջմիածնի մայր տաճարի պատերը մերկացրին զարդերից։ Մերկացրին նաև վեհարանը։ Սուրբ անոթները, տիրոջ սպասները, մեծամեծ թագավորների ու նախարարների նվիրած ոսկե ու արծաթե զարդերը տարան պահելու թաքստոցներում։

Վանքից ձիու վրա դուրս եկավ Հովասափ վարդապետը։ Նրան ուղեկցում էր միայն Մովսես աբեղան, նույնպես ձիավոր։ Դրսում սպասող ամբոխը կլանեց նրանց։

— Խոսի՛ր, հայր սուրբ,— գոռացին միաբերան։

— Լուրը սուտ չէ,— կերկերուն ասաց վարդապետը։— Թուրքերը գալիս են։ Ամրացեք հոգով ու մարմնով, շինականնե՛ր։ Ես գնում եմ Երևան՝ խանի մոտ։ Աստված անճար չի՛ թողնի իր արարածներին։

— Ինչո՞ւ ես գնում խանի մոտ,— բղավեց մի գլխաբաց շինական։— Պարսիկը ե՞րբ է մեզ թիկունք կանգնել. գնա Դավիթ-Բեկի մոտ, ռուսների մոտ գնա, հայր սուրբ, թող գան մեզ տերություն անեն։

— Հա՛, հա՛, Դավիթ-Բեկի մոտ շտապիր։

Բայց վարդապետը այլևս չէր լսում նրանց։ Ձին թռցրեց ու դուրս եկավ Վաղարշապատից։ Աղբյուրի մոտ Մովսեսը նկատեց Արուսյակին։ Կուլայով ջուր էր տանում։ Սիրտը մղկտաց։ Արուսյակը տեսավ նրան էլ, վարդապետին էլ, իրեն գցեց թզենու ստվերը։ «Երևի այլևս չհանդիպենք,— դառն մտածեց Մովսեսը,— թուրքը գալիս է»։ Նա զարհուրեց։ Արուսյակին եսիր կտանեն։ Նրա գլուխը մի սուր միտք խրվեց։ Պետք է հեռանալ էջմիածնից, փախցնել Արուսյակին։ Այդ մտքից նրա աչքերը փայլատակեցին։ Ետ նայեց. թզենու տակ Արուսյակը արցունքներն էր սրբում։ «Կփախցնե՛մ»— վճռեց նա։ Բայց երբ նայեց իրենից քիչ առաջ ձիու վրա տմբտմբացող Հովասափին, զարհուրեց։ Կանիծի դևը։ Արուսյակը վանքի ճորտն է... Անիծելը դեռ ոչինչ, մարդ կուղարկի լեռները՝ իմ ետևից, մորթել կտա ի՛նձ էլ, Արուսյակի՛ն էլ։ Այդպես արին Դանիել կուսակրոնի հետ։ Սա պատռել էր ժամաշապիկն ու փախել Ապարան, Օհան շինականի աղջկա մոտ։ Շինական էր դարձել, վար էր անում, եզ ու կով պահում։ Բայց մի օր Դանիելին խեղդած գտան արտի եզերքին՝ գութանի մոտ։

Սուր աչք ու վագրի մագիլներ ունի Հովասափ վարդապետը։

Ա՜խ, Արուսյա՜կ...

Հասան Երևան։ Այստեղ դեռ լուր չունեին թուրքերի գալու մասին։ Մարդիկ խաղաղ իրենց բանին էին։ Բողբոջած թթենիների ու եղրևանիների վրա պտտվում էին մեղուների պարսերը։ Փողոցների երկարությամբ ձգվող առուների մեջ անշարժ կանգնած էր ջուրը՝ գորտի աղտեղությունից գոյացած ժանգագույն ծածկոցը վրան։ Երբեմն մի կին էր

դուրս գալիս նեղլիկ դարպասից ու, փայտե փարչը կոխելով առվի մեջ՝ ջուր էր վերցնում։

Ամեն տեղ կեղտ էր ու գարշահոտություն։ Մարդիկ շարժվում էին աղբակույտերի արանքով։ Օդում վխտում էին դեղին մոծակների, իշամեղուների ու ճանճերի երամները։

Շուկայի մոտով հարսանյաց թափոր էր անցնում։ Ջուռնաչիները ծորուն մի եղանակ էին նվագում։ Խոնչաները գլխներին դրած մանկամարդ հարսները պարելով գնում էին թափորի առջևից։ Երեխաների խմբերը շրջապատել էին հարսանքավորներին ու ահագին աղմուկով ուղեկցում էին նրանց։ «Աղվեսը» գույնզգույն թաշկինակներ ձեռքին պտտվում էր հարսանիքի կառավարչի շուրջը։ Երկու ծերունի գինի էին մատուցում հանդիպած մուրացկաններին։ Կանայք ծալծլված զգեստների գրպաններից չոր միրգ էին հանում ու շաղ տալիս մանուկների վրա։ Սրանք գունդ ու կծիկ էին դառնում գետնին, գզվռտում՝ իրար ձեռքից մրգերը խլելով։

Ձիավորներն անցան հարսանքավորների մոտով։

— Խե՜ղճ մարդիկ,— մատով արցունքը սրբելով, խոսեց Մովսես աբեղան։ Սիրտը ճաքում էր, ուզում էր որևէ բան ասել։ Հո չի՞ կարելի ամբողջ ճանապարհին մունջ մնալ, թեկուզ հետդ ինքը՝ Հուդան լիներ։

Վարդապետը չլսելու տվեց նրա ասածները։ Շուկայից դուրս եկան ու բռնեցին բերդ տանող ճանապարհը։ Դա սաստիկ զարմացրեց Մովսեսին։

— Հայր սուրբ, այս ո՞ւր ենք գնում, ինչո՞ւ չես քաղաքացիներին իմաց տալիս, որ թուրքը մոտենում է։

— Դա քո խելքի բանը չէ,— չար նետեց Հովասափը։

— Ուրեմն հայերին թողած՝ խանի դո՞ւռն ես գնում,— գոչեց Մովսեսն ու ձին պահեց։— Ե՛տ դառ, հա՛յր սուրբ, ե՛տ դառ՝ երևանցիների հետ մտածենք մեր անելիքը։ Մի՛ գնա խանի մոտ, դա՛... դա... օգտակարը չէ...

Վարդապետը ցասումով նայեց նրան ու որոտաց.

— Փակիր խոտորախոս բերանդ, պի՛ղծ։

— Դո՛ւ չես, որ պետք է փակես բերանս,— արդեն չհամբերեց, գոչեց Մովսեսը։— Այսօր հարյուրավոր շինականներ էին թափվել վանքի բակը։ Ինչո՞ւ չզինեցիր նրանց, չպատրաստեցիր կռվի։ Ուրեմն ժողովրդին անտեր թողնելով՝ վազում ես պարսիկ Միհրալի խանի մո՞տ, ապահով ապաստա՞ն ես որոնում։ Իմացա՛։ Կաթողիկոսը լքեց երկիրը, փախավ շահ Թահմազի դուռը՝ գլուխն ազատելու նպատակով, դու էլ խանի մոտ ես շտապում։ Ահա թե ում բերանը պետք է փակել։

Վարդապետը մտրակը բարձրացրեց ու կատաղի աչքերը ոլորեց Մովսեսի վրա։

— Ես քո լեզուն արմատահան կանեմ, ապստա՛մբ,— որոտաց նա։

— Զեռդ կարճ է, վարդապե՛տ,— քմծիծաղեց Մովսեսը։— Ամոթ ու խիղճ ունեցեք աստծո և մարդկանց առջև, անհոգինե՛ր։ Կորստյան եք մատնում ազգը հայոց և դեռ սպառնում եք նրա զինվորին։

Մովսեսի ձայնն այնպես ցասկոտ ու սպառնալից էր, որ վարդապետը բան չգտավ պատասխանելու և միայն բերանը բացուխուփ արեց։ Մանավանդ նրա երկյուղը մեծ եղավ, երբ Մովսեսը նրան ցույց տվեց ծոցում թաքցրած ատրճանակի կոթը։

— Հեռացի՛ր ինձանից,— կմկմաց հայր սուրբը,— հեռացի՛ր։

— Կհեռանամ, իսկ դու գնա խանի մոտ և գլուխդ փրկիր էջմիածնի գանձերով ու ժողովրդի արյունով։ Բայց հիշիր, Հովասա՛փ վարդապետ, չե՛ս մարսի։ Կապրենք՝ կտեսնենք։

Մովսեսը ձիու գլուխը շուռ տվեց շուկայի կողմը։ Հովասափը արագ ձին քշեց դեպի բերդ։ Հասնելով շուկա, Մովսեսը ձին թռցրեց գազարի ու բողկի թմբերի վրայով և, նետվելով ամբոխի մեջ՝ որքան ուժ ուներ գոռաց.

— Թուրքերը գալիս են, է՛յ, հա՛յ ժողովուրդ, ճարդ տես...

Շուկայի աղմուկը դադարեց միանգամից։ Կարծես ամեն շարժում քարացավ մոգական մի հրամանով։ Ձայնը կտրեց նույնիսկ մոտակա տափակ կտուրին կանգնած կովարար մի կին, որ անվերջ անիծում էր չգիտես ում։ Բայց այդ լռությունը մի վայրկյան տևեց միայն։

Հանկարծ շուկան դղրդաց հազարավոր ձայներից։ Ամբոխը նետվեց Մովսեսի վրա, ու նրա ձին սեղմվեց մարդկանց խիտ օղակում։ Ներկարար Կառչիկ Հովհաննեսը, որ շուկա էր եկել դաբաղած կաշի գնելու, ձեռքը գցեց Մովսեսի գոտուն ու աշխատեց նրան պոկել թամբից։

— Լեզուդ կկտրե՛մ, եթե սուտ ես ասել։

— Ցլբայրնե՛ր,— ուշք չդարձնելով ներկարարի սպառնալիքներին՝ գոռաց Մովսեսը։— Երդվում եմ Քրիստոսի ճակատով։ Այսօր էջմիածին հասավ Լոռի քաղաքից եկած լրաբերը։ Թուրքերը գալիս են, աստված է վկա։ Միհրալի խանն ու էջմիածնի սուրբ տերերը թաքցնում են ձեզանից։ Հրե՜ն, Հովասափ վարդապետը թռչում է խանի բերդը՝ գլուխը փրկելու։ Կաթողիկոսը փախել է Թավրիզ։ Միամիտ մի՛ լինեք, գլուխներիդ ճարը տեսեք։ Սպիտակի լեռնանցքը սևացել է թուրքերի բանակից։

— Ագռա՛վ, ագռա՛վ...— փրփրեց Կառչիկ Հովհաննեսը։— Կռավեցիր հայոց տան վրա, ես քո՛ւ... Գնա՛նք, աբեղա՛։ Հետևիր ինձ։— Նա

բռնեց Մովսեսի ձիու սանձը, մեծ տանջանքով նրան հանեց շուկայից ու տարավ։

Կրպակներն շտապ փակեցին։ Դարաղչիներն ու դարբինները հանգցրին քուրաների կրակները։ Փերեզակները հավաքեցին իրենց հնոտին։ Կանայք վայնասուն բարձրացրին։ Շուկան դատարկվեց։

Կառչիկ Հովհաննեսը Մովսեսի ձին ուղարկեց իր ախոռը, ապա միասին գնացին սուրբ Սարգիս եկեղեցին։ Կառչիկը ժամհարին հրամայեց անվերջ խփել զանգերը։ Տաճնապալի զանգահարության ձայնին առաջինը եկավ Գրիգոր վարդապետը։ Եկեղեցու բակն ու հարակից նեղ նրբանցքները խցկվեցին մարդկային զանգվածով։ Մովսեսն ուժասպառ էր եղել՝ լուրը հարյուր անգամ կրկնելուց, բայց նորից կրկնեց՝ երբ Հովհաննես Հունդիբեկյանի հետ եկան քաղաքի երևելիները։

Ծանր լուրը տարածվեց քաղաքում, հասավ հետին մուրացկանին, թոնրի պռնկին կպած անդամալույծին։ Զանգերի տագնապահար զողանջը ցինի կռավոցի էր նման։ Փողոցներում ու բակերում անհոգ խաղացող երեխաներն անգամ լրջացան, հաշտվեցին մի կոտրած վեգի համար իրար մուրթ ջարդողները։ Հարսների դեմ շարացած, նրանց «օխտը պորտը շների բաժին» դարձնող պառավները գոգնոցների ծայրերը կպցրին աչքներին ու սիրալիր կարեկցանքով նայեցին հարսներին։ Մոռացվեց հին, թայֆայական վրեժը, որ անլուռ մխում էր շատերի սրտում։

Գրիգոր վարդապետն ու Հովհաննես Հունդիբեկյանը գնացին խանի մոտ, նրանց միացան նաև քաղաքի քահանաները, մեծահարուստ վաճառականները, արհեստավորների ավագները։

Բերդում ևս իրարանցում էր։ Զորանոցների մոտ պարսիկ զինվորների մեծ ու մանր խմբեր էին կուտակվել։ Մաքրում էին զենքերը, ճրագու քսում, կարկատում կաշվե վառոդամանները։ Գարսիկները դարձյալ սիրալիր գիմավորեցին հայերին։ Նայիբն ասաց, որ խանն սպասում է նրանց և ուր որ է կգա ընդունարան։

Հայերը գնացին Հովասափ վարդապետի մոտ։ Արձան դարձած Հովասափը բերանի մի անկյունով պատասխանեց քաղաքացիների բարևին։ Հովհաննես պարոնտերը կշտամբեց նրան.

— Աղետի բոթը լսել ես ու չես հայանում մեզ, հա՛յր սուրբ։

— Ամեն մարդ իր գլխի տերն է,— շարացած պատասխանեց վարդապետը։

— Հա՜-ա՞...— փրփրեց պարոնտերը։— Այդպե՞ս են մտածում էջմիածնում։ Դե, գնացեք Թուրքի ոտքը, մահմեդական դարձեք, գլուխներդ ապահով կլինի։

— Հարկ լինի, ինքդ էլ կգնաս,— խոցեց վարդապետը։

Միհրալի խանը հայերին հանգստացրեց։ Ղուրանի վրա երդվեց, որ ինքը հայերին մենակ չի թողնի, ասաց, որ շահը մեծ զորք է ուղարկել Երևանը պաշտպանելու համար։ Ապա անձամբ, հայերի ներկայությամբ բերդում եղած տասնութ հազարանոց իր բանակը ճանապարհեց Եզվարդի կողմերը՝ քաղաքի մատույցները պաշտպանելու համար։

— Բնավ մի՛ երկնչեք Թուրքերից,— ասաց նա հայոց պատվիրակությանը։— Շահ Թահմազն ու ձեր կաթողիկոսը մեծ բանակով մոտենում են Արաքսին և մինչև Թուրքերի Ապարան հասնելը՝ կլինեն Երևանում։ Գնացեք ու պատրաստ եղեք շահին ու կաթողիկոսին ընդունելու։

Հայոց պատվիրակությունը վերադարձավ քաղաք։ Պետք է պատրաստել ժողովրդին, կապել-կազմել աշխարհազորային ջոկատները՝ քաղաքը պաշտպանելու համար։

Օրավուր սպասում էին Թուրքերի երևալուն։

***

Մովսեսը վճռեց գնալ Վաղարշապատ՝ Արուսյակի ետևից։ Այն ամենը, ինչ տեսել, լսել էր Երևանում, տակնուվրա էին արել նրա հոգին։ Բոլորը խաբում էին միմյանց։ Միհրալի խանը խաբեց Հովասափ վարդապետին, վարդապետն էլ իր հերթին խաբեց միամիտ երևանցիներին, թե շահը կգա ու կպաշտպանի նրանց։ Եվ ինչպե՞ս են հավատում խաբեբաներին։ Ի՜նչ աշխարհ է սա, ի՜նչ կյանք։ Անվերջ մտածում էր Մովսեսը։

Վանք չգնաց։ Ամեն ինչ այնտեղ ատելի ու զզվելի էր արդեն նրա համար։ Բացի այդ, զգուշացավ Հովասափ վարդապետի դավերից։ Մի պատանի ուղարկեց Վահան վանականի մոտ՝ խնդրելով, որ սա տղայի միջոցով ուղարկի իր պղնձե խաչն ու Նարեկը։ Նարեկը թաքցրեց ծոցում, երկար նայեց հնամենի խաչին։ Քանի հազար մարդ է համբուրել այս սառը պղինձը՝ հավատալով, որ նա կփրկի իր մարմինն ու հոգին։ Անջունչ մետաղին փրկչի տեղ են դնում ու մոլորվում, անվերջ մոլորվում... Մեղա՜ քեզ, տե՜ր։ «Ուշքի եկ, թշվառ ժողովուրդ հայոց, խաբում են քեզ ամենուրեք»,— ինքն իրեն անվերջ կրկնում էր նա։

Հիշում էր, թե ինչպես էին հավատացյալները համբուրում Հովասափ վարդապետի ձեռքերը, քղանցքները, իսկ նա գայլի հայացքով էր նայում երիտասարդ հարսներին, մտրակով ծեծում վանքի մշակներին։ Մի անգամ նույնիսկ եռացրած ջուր լցրեց մի ճորտի գլխի, որը փորձում էր փախչել վանքից։ Եվ օրավուր Մովսեսի մեջ մի անջնջելի ատելություն էր առաջանում դեպի վանքը, վանական նեղվածք միջավայրը,

դեպի այն ամենը, ինչ սրբագործված էր դարերով։ Դիվական խորհուրդներ էին ծնվում նրա հոգում, սարսռեցնում ողջ էությունը։ Կատաղությունը մոլեգնության էր հասնում, երբ հիշում էր Արուսյակի ասածները. «Հովասափ վարդապետն ինձ երեք ոսկի խոստացավ, եթե ես գիշերը մնայի նրա խցում»։

Եվ ահա նա կանգնել էր Արուսյակի քողտիկի առջև ու մնացել մոլոր... Արուսյակը տանը չէր։ Փշատենին կորցրել էր վաղեմի բուրմունքի սրությունը։ Պետք է սպասել Արուսյակին, նա կգա։

Եվ Արուսյակը եկավ։ Մութն արդեն ընկնում էր Արարատյան դաշտի վրա։ Մովսեսը մտավ քողտիկ, բռնեց Արուսյակի մեջքն ու համբուրեց նրա ծոծրակը։

— Իսկ ես կարծում էի, թե չես գա, հոգի՛ս,— շշնջաց կարոտակեզ։

— Հովասափը դեռ չի վերադարձել, Մովսե՛ս,— վախվորված ասաց Արուսյակը։— Ես այլևս չեմ կարող մնալ վանքում։ Վերակացուն ասաց, թե գիշերս պետք է լվացք անենք։ Չլսեցի, եկա։ Կարծում էի, թե քեզ չեմ գտնի, թե գնացել ես անվերադարձ։

Դրսում մեղմ սոսափում էր փշատենին։ Աստղերի լույսն ընկել էր նրա շյուղերին, որոնք մոմի պես թրթռում էին խավարի մեջ։ Այլևս սպասելու ժամանակ չկար։

— Փախչենք,— հևաց աբեղան։

— Արյուն կլինի, Մովսե՛ս։ Փախիր մենակ։ Չե՛մ ուզում ընկնել արյանդ տակ, ինձ թող գայլի բերանում, փախի՛ր...

— Միայն միասին։ Այստեղ և այն աշխարհում,— ասաց Մովսեսն ու թռավ առվի վրայով։

Կպան իրար ու մթության մեջ խարխափելով գնացին...

— Ես զարհուրում եմ, Մովսե՛ս։ Դև Հովասափի ահը հետևում է ինձ։ Արա՛գ գնանք, փախչե՛նք։ Ես ճախրե՛լ եմ ուզում, ճախրե՛լ։ Ինչո՞ւ մարդն էլ թևեր չունի, ինչո՞ւ։

— Ունեցել է։ Մարդը մի ժամանակ թևեր է ունեցել, բայց աստված կտրտեց։

Խավարը կլանել էր նրանց։ Շրջապատն ամայի էր՝ դարանակալ վիշապի պես հետամուտ ու համր...

***

Մինչև Սևանա ծովակը գնացին անմարդաբնակ սարերով։ Շտապում էին, Գեղամա լեռան թամբից երևաց ծովակը, և Տեր-Ավետիսը թեթևացած հոգոց հանելով՝ իջավ ձիուց։

— Բախտ ունենք, Գորգի՛, ձիերը վատը չեն։ Ո՞վ իմանա, գուցե հենց խանի ախոռից են։ Իշի՛ր, զառիթափ է։

Փոքր Գորգին քաշում էր ձիու սանձն ու հրապուրված նայում Սևանի կախարդական գույներին։ Արևը գլուխը նոր էր հանել Արեգունի լեռների վրայից։ Նրանց վրա կախված ամպերի եզրերը շիկնել էին։ Ասես վիթխարի թոնիր էին վառել, որից մանուշակագույն բոց էր բարձրանում դեպի երկնքի խորքերը։ Մինչդեռ լճի այն մասը, որ դեռևս ծածկված էր սարերի ստվերով, սև էր՝ Մուխրանի թավշի պես։ Լիճն անընդհատ փոխում էր իր գույները՝ ոսկեգենից ճերմակ, ապա բաց կանաչ կամ մանուշակի երանգ ստանալով։

Արևն արդեն անցել էր ամպերի գլուխը, երբ ձիավորները հասան լճափ։ Տեր-Ավետիսը մերկացավ մինչև գոտին ու, կռանալով ջրի վրա՝ կանչեց.

— Գորգի՛, ջուր լցրու մեջքիս։ Այսպիսի անմահական ջրով ինքը՝ Հիսուս-Քրիստոսն էլ չի մկրտվել։

Գորգին, ափերը կից անելով՝ ջուր լցրեց նրա ամուր, ասես ժայռի բեկոր մեջքին։ Տեր-Ավետիսը լվացվեց բավականությամբ։ Ապա նստեցին քարերի վրա ու պանիր-հաց կերան։ Ձիերին կերակրեցին պարսիկների թամբախուրջիններում եղած գարու մնացորդով ու ծովափի արահետով գնացին դեպի արևելք։

Գնում էին ամայի վանքերի ու ավերակ գյուղերի մոտով։ Երբեմն Տեր-Ավետիսը ձին մոտեցնում էր լճափի մամռոտ ժայռերին տնկված խաչքարերին ու աշխատում կարդալ արձանագրությունները։

— Ինչո՞ւ են այս կողմի գյուղերն ամայի, տե՛ր հազարապետ,— մի ավերակի մոտով անցնելիս՝ հարցրեց Փոքր Գորգին։

— Է՛հ, մի ժամանակ շեն էին։ Շահ Աբբաս հայակերը քշեց սրանց բնակչությանը, տարավ Պարսկաստան։ Սա Սյունյաց Գեղարքունիք ծովազարդ գավառն է։ Հարյուր քսաներկու մեծ գյուղ ուներ այս գավառը։ Հիմա մի երկու-երեքն են շեն, մնացածներում բվեր են կռավում։

Երեկոյան հասան Վարդենիսի հովիտը։ Ջյունն այստեղ նոր էր վեր կացել, և կանաչը դեռ չէր ծածկել սև հողը։ Ծովակից փչող զեփյուռը սառն էր։ Փոքրիկ, լեռնային գետակը պարզ էր ու վճիտ։ Գնացին գետակի հոսանքն ի վեր։

— Մի քիչ վերև Վարդենիս գյուղն է։ Լսել եմ, որ մի քանի տուն հայեր կան այնտեղ, գնանք, գիշերը մնանք՝ առավոտյան կանցնենք Վարդենիսի լեռնանցքը։

Շուտով մայրամուտի լույսի մեջ երևաց գմբեթը ճեղքված եկեղե-

ցին՝ շուրջը գետնափոր տներ, մեծ մասն ավերակ։ Մի տեղից բարակ ծուխ էր ելնում։ Գնացին ծխի վրա։

— Է՛յ, հա՛յ քրիստոնյաներ, ճանապարհորդ ենք, այս գիշեր տեղ տվեք,— ձիու վրայից կանչեց Տեր-Ավետիսը, ապա առանց պատասխանի սպասելու՝ ձիու սանձը նետեց Գորգուն ու բաց արեց ծուխ արձակող գետնափորի դռնակը։

Գետնափորի թոնրից բոց էր ելնում դեպի երդիկը։ Տեր-Ավետիսն աչքերը ճպճպացրեց ու փոշտաց՝ ռունգները խուժած ժահահոտից։ Ապա բարձրաձայն ողջունեց.

— Թող օրհնվի՛ այս տունը։ Բարի երեկո ձեզ, հայե՛ր։

— Աստծո՛ բարին, տե՛ր հայր,— խզված, ՝չարացած ձայնով պատասխանեց մեկը։

Տեր-Ավետիսը նայեց թոնրի շուրջը բոլորածներին, և թվաց, թե ընկել էր մի ստորերկրյա աշխարհ։ Չորս ծերունի նստել էին գետնին։ Գրեթե մերկ էին, ոչ ոքի վրա մարդկային կերպարանք չէր մնացել։ Դրանք մի-մի կմախք էին՝ խոշոր, շոված աչքերով, որոնք վախեցած ու զարմացած նայում էին իրեն։ Նրանցից քիչ հեռու՝ ուս-ուսի տված նստել էին երեք պառավ՝ դարձյալ կիսամերկ, ճպռոտությունից գրեթե կույր աչքերով։ Պատի տակ դրված էր մի խոշոր կաթսա, որից գոլորշի էր բարձրանում։

«Կերակուր են եփել»,— մտածեց Տեր-Ավետիսը։ Սիրտը տաք ուտելիք ուզեց։

— Համեցիր, տե՛ր հայր,— խոսեց ծերուններից մեկը՝ բարձրահասակ, ուռած դեմքով։ Նրա աջ աչքը թափված էր ու միայն սև խոռոչն էր երևում։— Նստիր թոնրի մոտ, տաքացիր՝ եթե կամենում ես։— Նա հրեց կողքի ընկերոջը, որ սա տեղ անի հյուրի համար։

Տեր-Ավետիսը շոքեց թոնրի շուրթին, ձեռքերը դեմ արեց կրակին։ Ծերունիները շնչում էին ծանր. անշարժ էին՝ ժայռին նստած կույր բվերի պես։ Տեր-Ավետիսը երկյուղ զգաց։ Իսկապես, գուցե ընկել է ուրվականների աշխարհ։

— Ո՞ւր են ձեր ջահելները, երեխաները,— լռության ահը ցրելու համար՝ հարցրեց նա։

— Այնտեղ,— ոսկրացած ձեռքը դեպի երկինք մեկնեց միաչքանին։ Տեր-Ավետիսը նորից ահ զգաց, նույնիսկ շարխափանի աղոթքը հիշեց։ Հասկացավ, որ գյուղն աղետի է ենթարկվել։

— Վաղո՞ւց է եղել,— հարցրեց նա։

— Առաջին ձյունին,— պատասխանեց նույն ծերունին՝ միակ աչքը

մեխած հյուրի վրա։— Գնացին դժոխքի ճանապարհով, հիմա այնտե՞ղ են... Չտեսա՞ր նրանց։ Ճանապարհին էին։ Ոսկորնե՞րը... Հը՞։

Նրա մոտ նստած մի բուռ մարմնով, սուր կապտած քթով ծերունին հանկարծ քրքջաց՝ ցցված ատամները փայլեցնելով, ապա մի այնպիսի ձայն հանեց, որից Տեր-Ավետիսը փշաքաղվեց։ Պառավներից մեկը մոտեցավ, լաթով փակեց նրա բերանը, կարծես ուզում էր խեղդել։ Ծերունու դեմքը սևացավ, ապա ճերմակեց, շոած աչքերը փակեց ու, գլուխը կրծքին թեքելով՝ համրացավ։

— Ոսկորնե՞րը...— գոռաց միաչքանին։— Մերը մնա՞ց... Ինչի՞ մնաց։ Ինչի՞ տարան, հը՞։ Դու դեռ մարդ ես, գազան չես դեռ, քահանա ես, պատասխան տուր։ Հարյուր ձիավորով եկան։ Սեգին էր։ Մտան գյուղ։ Հրացանով սպանեցին շներին։ Գոնե շները թողնեին, կուտեինք, բա ո՞նց, սովն աստված չունի։ Մենք մեղավոր չենք, չէ՞... Աստծո արարածն ենք, բերան ունենք... Միհրալի խանի մարդիկ էին։ Երեսուն տուն էինք։ Մտան բոլորի տները, հորերը բաց արին, քունջ ու պուճախ ավելեցին, լցրին պարկերը։ Մի ծեղ խոտ էլ չթողին, վառեցին, քակորն էլ վառեցին։ Հետո տարան, տարա՞ն... Լսո՞ւմ ես, մա՛րդ։ Տարան՝ մեծին, փոքրին, կով, ոչխար, ձի, էշ։ Գյուղը սրբեցին, բեռնեցին գրաստներին, մարդկանց շալակը տվին, տարա՞ն... Ամեն բան տարան...

Պառավներն այնպես հեծկլտացին, որ կարծես քաղցից գազազած գայլեր ոռնացին կիսամութ գետնատանը։

— Ձայններդ կտրեցե՛ք,— գոռաց միաչքանին, որ, ըստ երևույթին, բոլորի վրա իշխանություն ուներ։— Ո՞վ է ձեր ճղճղոցը լսողը, ճիճուներ, որդե՛ր... Լսո՞ւմ ես, գյուղում մի ատամ մաշրելու ծեղ չթողին, մի հավ չթողին։ Տարա՞ն... պարսիկը տարավ։ Գիլխանձ ծանրաձմեռ էր, ձյունը՝ ծնկահար։ Երեխաները կոտորվեցին ճանապարհին, կանայք սառեցին, մնացին ձյունների մեջ։ Մինչև Կոտայից գավառը մեր սիրելիների դիակներն էին շաղ տված ձյունամեծ դաշտերում։ Դիակնե՞րը... Կոտորվեցի՛ն, պրծան։ Մնացինք էս ագռավներս։ Ագռավն ի՞նչ՝ գայլե՛րս... Բու ենք՝ ավերակների մեջ, վայո՞ւմ ենք։ Լսեցի՞ր մեր վայոցը։ Չլսեցի՞ր, ապա լսիր։

Եվ նրա ձեռքի շարժումով բոլորը մի այնպիսի վայնասուն բարձրացրին, որ մրոտ օճորքը դողաց։ Ահից Տեր-Ավետիսը նույնիսկ չկարողացավ վեր կենալ պպզած տեղից, փախչել անդրշիրիմյան այս որջից։ Պառավները ծեծում էին գլուխները, կական անում։ Ծերուններն անեծքի ահավոր բառեր էին ասում՝ երկարածոր, լալագին, չպպացնելով անատամ լնդերը։

Վայնասունից ձիերը խրտնեցին։ Գորգին հազիվ կարողացավ զրս-

պել նրանց։ Նրա մարմինը դող ընկավ։ Ո՞ւր մտավ հազարապետը։ Ձիերը կապեց քարե սանդին ու, ատրճանակը հանելով՝ մոտեցավ գետնափորի դռանը։ Սակայն ահից սիրտ չարեց բաց անել դուռը։ Նրա ճեղքից նկատեց, որ Տեր-Ավետիսը կանգնած է շեմքի մոտ՝ պատի տակ, զարհուրած ու այլակերպված։

Վերջապես ոռնոցները դադարեցին։ Տեր-Ավետիսը դողում էր բարկությունից, ահից ու մի անորոշ զգացումից։ Ինչ-որ դիվային բան էր նախազգում նա այդ կիսամերկ, մազմզոտ ծերունիների շրջապատում։ Գազանային մի բան կար նրանց աչքերում, չփակվող բերաններում, ոսկրոտ ձեռքերի շարժումների մեջ։

Մեջքը պատին հենած՝ նա նայում էր այդ ուրվականներին ու չէր իմանում՝ ինչ աներ։ Ի՞նչ ասեր այս թշվառներին, որոնց հարազատներին քշել, կոտորել էին պարսիկները, որոնք ամբողջ ձմեռը մատնված են եղել սովի, գազանացել են։

Միաչքանին ոսկրոտ ձեռքերով տրորում էր ծնկները։ Մյուսները չոված, կլորացած աչքերով նայում էին իրեն։ Ինչո՞ւ են այդպես նայում, մի՞թե ինքը թշնամի է նրանց։ Ինչո՞ւ են պառավները աչքերը գցել պատի տակ դրած կաթսային։

Հանկարծ մի զարհուրելի միտք անցավ Տեր-Ավետիսի գլխով։ Նրա ձեռքերը դողացին, մաշկի տակ ասես ասեղներ մտան։ Նա կռացավ կաթսայի վրա, կափարիչը բարձրացրեց ու ցած գցեց իսկույն։ Կաթսայի ջրի միջից ցցված էին դարմանի ցողուններ։

— Գորգի՜,— խեղդված ձայնով կանչեց Տեր-Ավետիսը։— Խուրջինները բեր, Գորգի՜...

Փոքր Գորգին իր ու պարսիկ զինվորներից խլած ձիերի խուրջինները բերեց։ Տեր-Ավետիսը նրանց մեջ եղած ուտելիքը թափեց ծերունիների առաջ ու կարեկցանքով ասաց.

— Դարման են եփում, Գորգի։ Գնա՛նք,— նա թողեց, որ նախ Գորգին դուրս գա գետնափորից։ Տղա է, կվախենա։ Ապա դուրս եկավ ինքը։

Արդեն մութ էր։ Արագ հեծան ձիերն ու սլացան գյուղից դուրս։ Լեռան ճեղքից եղջյուրը հանեց լուսինը։ Ներքևում մռնչում էր Սևանա ծովը։

Զարհուրելի գիշեր էր։

***

Ծեգում էր։ Արահետի երկու կողմերին բարդիները խշշում էին։ Ջորակից մի շուն հաչաց, նրան ձայնակցեցին ուրիշները։ Շուտով բոլորովին լուսացավ։ Այգիներում երևացին վանքապատկան գյուղացիներ, շար վերակացուներ։ Այլևս վտանգավոր էր շարունակել ճանապարհը։

Մովսեսը բռնեց Արուսյակի թևն ու մտան թփուտը՝ թաքնվելու։ Հոգնած էին, նստեցին հանգստանալու։

Մովսեսը նայում էր Արուսյակի ցորնագույն դեմքին, ճերմակ վզին, որի վրա ոլորվել էին մազերի անհնազանդ խոպոպները։ Նայում էր ուշադիր, ասես առաջին անգամ էր տեսնում նրա մուր հոնքերը, հյուսիսային թարթիչի շրթունքները, փարթամ կուրծքը, որ ահա վերուվար է անում անհանգիստ։ Արուսյակը նրան խղճալի թվաց՝ անտեր, որբացած, «Ահա և իմ կինը,— մտածեց նա։— Ինչպե՞ս ինձ կընդունի Դավիթ-Բեկը. սյուների ինձ կապել կտա ու կգանահարի՞, որ ես խախտել եմ կուսակրոն լինելս։ Ինձ համար կին եմ բերել հետս, թե՞ ներողամտորեն կժպտա ու կօրորի ինձ համար կին եմ բերել հետս, թե՞ ներողամտորեն կժպտա ու կօրորի ծանր հոգսերից ճերմակած գլուխը։ Ինչ էլ որ լինի՝ ինքը չի լքի Արուսյակին։ Թող գանահարեն, ճակատին աղվեսադրոշմ դաջեն, Արուսյակին չի թողնի։ Կքաշվի մի անկյուն, նախրապանություն կանի, ճորտ կդառնա, բայց ձեռքից բաց չի թողնի իր բախտը...

Իսկ եթե հանկարծ ինքը չկարողանա՞ կնոջն ապահով տեղ հասցնել, կորցնի նրան։ Այս մտքից նրա կոկորդը քերվեց։ Նա գրկեց Արուսյակին։

— Դու վախենո՞ւմ ես, Արուսյա՛կ,— հարցրեց ահաշշուկ։

Արուսյակը գլուխը թաղեց նրա կրծքում ու լաց եղավ անձայն։ Նրա ուսերը դողում էին, որից ծոծրակի խոպոպը թռչկոտում էր։ Բայց միայն ուսերը չէին, որ դողում էին, դողում էր նաև սիրտը։ Մովսեսն այրվող շրթունքները հպեց խոպոպին. խոր շնչեց երիտասարդ մարմնի բույրը։

— Ես ամեն փորձանքից կպաշտպանեմ քեզ, սիրելի՜ս...— ասաց ու նորից զարհուրեց։ Ո՞վ է ինքը, ի՞նչ ունի բովանդակ աշխարհում, որով պաշտպանի իր բախտը, իր Արուսյակին։

Հորը կորցրեց մանուկ հասակում։ Մայրը մարդու գնաց՝ իրեն էլ հետը տանելով, բայց նոր հոր տանն էլ նրա բախտը կույր գտնվեց։ Պարսիկները սպանեցին խորթ հորը, իսկ մորը գերի տարան... Իրեն մոխրից հանեց մի կիսակույր վարդապետ ու տարավ Եվստաթևու վանքը։ Երկար տարիներ պահեց վանքում՝ աշխարհից ու մարդկանցից հեռու։ Սովորեցրեց գրել-կարդալ և, հին գրքերով լի մի սնդուկ թողնելով նրան ժառանգություն՝ ինքը վախճանվեց։

Մովսեսի համար բովանդակ աշխարհն իր գրքերն էին միայն. իր սփոփանքը նրանց մագաղաթի հոտն էր, երկաթագիր տառերը, որոնք նրա առջև բաց էին անում դարերի պատմությունն ու թվերի լեզուն, իմաստասերների մտորումներն ու աստղերի խորքերը թափանցելու գաղտնիքները։ Հետո երեք տարի սովորեց Ապրակունիսի մենաստանում, հասու եղավ հունական ու ասորական հին փիլիսոփաների գործերին,

տարվեց Գրիգոր Տաթևացու և Հովհան Որոտնեցու իմաստություններով ու, արդեն գիտունի համբավով, դարձավ Տաթև։

Աշխարհը նրա համար խոնավ խուց էր. նրա բարեկամները զառամած գրքերն էին, վաղուց անցած-գնացած վարդապետները, որոնք իր հետ խոսում էին գրքերի լեզվով միայն ու մղում գրչության, փիլիսոփայելու, խորհելու յուրովի, գրելու յուրովի։

Եվ այսպես գնում էր նրա կյանքը, երբ հանդիպեց Արուսյակին։

Ինչպե՞ս տարվեց նրանով, ինչպե՞ս էր, որ Արուսյակի շունչն առավել թանկացավ նրա համար, քան մագաղաթների բույրը։ Նրա մեջ բռնկվեց իրեն անծանոթ կրակը, և նա զգաց, որ ինքը մարդ է՝ սիրելու, ապրելու, աշխարհին իր աչքերով նայելու հատկություններով։ Նա տեսավ, որ հենց Արուսյակի մեջ է այն աշխարհն ու վայելքը, որի մասին թեկուզ ժլատ և զգույշ, բայց և այնպես խոսում էին իմաստունները։

Նեղ ու անձուկ էր թվում նրան աշխարհը, նրա հոգին ձգտում էր ինչ-որ լուսավոր, արտակարգ բանի, սակայն ինչի՞, ինքն էլ չէր կարողանում որոշել։

Արուսյակն այլևս չէր հեկեկում։ Նա գլուխը դրել էր Մովսեսի ծունկանն ու քնել։ Երկու օր ու գիշեր ծուխ էր կուլ տվել վանքի հացատանը, իսկ երրորդ գիշերը փախել էին՝ առանց մի փոքր անգամ դադարի։ Առավոտվա թարմությունն աննկատելի փակել էր նրա աչքերը, և նա քնել էր մանկան հանդարտ, անմեղ քնով...

* * *

Անգեղակոթ ավանի մոտ Տեր-Ավետիսը քաշեց ձիու սանձն ու կանգ առավ։ Երկու օր ու գիշեր նա ու Փոքր Գորգին թամբից գրեթե չէին իջել։ Վարդենիսում տեսած մղձավանջի ցնցող տպավորությունից տակավին չէին ազատվել։ Դարմանակերների որջից փախչելով՝ նրանք գիշերն անցել էին Արեգունի լեռները, իջել Որոտանի ակունքները, մի փոքր դադար առել և ապա Ակունք[1] ավիրակ գյուղի մոտով իջել դեպի Սիսականի հովիտը։

Երեկո էր։ Անգեղակոթ ավանի հազար երկու հարյուր տներից ծուխ էր բարձրանում։ Նեղ փողոցները լիքն էին ձիավոր ու հետևակ մարդկանցով։ Ճանապարհը խեղդվում էր արևելքից դեպի Սիսականի լեռնանցքն ընթացող աշխարհազորային գնդերից։ Մարդիկ շալակներին հող փորելու գործիքներ, կացիններ, սղոցներ ու պարենի տոպրակներ

[1] Բազար-չայ ավանի հին անունն է։

ունեին։ Շատերն իրենց բեռները տանում էին էշերի, ջորիների ու փալանած եզների վրա։

Տեր-Ավետիսը մոտեցավ աշխարհազորային մի ջոկատի։

— Այդ ո՞ւր եք գնում, ախպերացո՛ւ,— հարցրեց բարձրահասակ մի շինականի։

— Ժամանա՛կ գտար, տե՛ր հայր,— դժգոհեց շինականը։— Ելկիր, թե չէ հարյուրապետները որ տեսնեն՝ վզակոթիդ կտան ու քեզ էլ կքշեն Շահապունիքի կիրճը։ Այնտեղ ամրություններ են կառուցում։ Ի՞նչ անենք, որ ծխական տերտեր ես, հրամանը Դավիթ-Բեկից է։

Շինականների, ռազմիկների հետ գնում էին նաև բազմաթիվ հոգևորականներ, կանայք։ Մի քանիսի գլուխները փաթաթած էր լաթերով, որոնց տակից արյուն էր դուրս եկել։ Բեկար գնալուց հրաժարվողներին ծեծել էին անխնա։

— Սկսվում է,— մռայլ ասաց Տեր-Ավետիսը։— Ժողովուրդը տեղահան է եղել, Գորգի։ Մենք ուշացել ենք։ Գնանք Շահապունիք։

Նեղ ու խոր էր Շահապունիքի կիրճը։ Նրա երկու կողմից վիթխարի ժայռեր էին ուղղահայաց թեքությամբ իջնում նեղված գետի վրա, մոտենում իրար՝ գետի համար հազիվ մի փոքր անցք թողնելով։

Բարձունքից երևում էր Արարատյան դաշտն՝ իր այգիներով, աղուտներով ու ճահճուտներով։ Այնտեղից դեպի Շահապունիքի լեռնանցքն էր ոլորվում Սյունիք բերող մեծ ճանապարհը։

Շահապունի գետը գազազել էր։ Սարերի վրա եկած թարմ ձյունը տեղահան էր արել հին ձյունի ահռելի հեսանները, որոնք սահել էին գետի մեջ և նա, խեղդվելով ժայռերի արանքում՝ գոռում-գոչումով հազիվ էր դուրս պրծնում իրեն սեղմող պատնեշներից ու ցրվում, հանդարտվում Նախիջևանի հարթության վրա։

Կեսօր էր, երբ Տեր-Ավետիսը հասավ Շահապունիքի ճամբարին։ Անտառից ցած՝ զկեռենու և ալոչի խիտ թփուտների մեջ հարյուրավոր վրաններ ու ճկուն ոստերից հյուսած անշուք քողտիկներ կային։ Հինավուրց կամարով աղբյուրի մոտ տնկած էր թաղիքե մի վրան։ Նրա մոտ կերակուր էին եփում Զարմանդն ու ձագեձորցի մի քանի կանայք։ Մուխը տարածվում էր լեռնալանջն ի վեր, հասնում ճերմակ ձյուներին ու աղալով՝ մերվում երկնքի կապույտին։ Ներքև, հենց լեռնանցքի բերանը փակող ժայռերի գլխին հազարավոր մարդիկ էին բանում։

Մորը տեսնելով, Փոքր Գորգին իջավ ձիուց ու վազեց դեպի նա։

— Դու մնա, Գորգի՛, ես գնում եմ Դավիթ-Բեկին գտնելու,— ասաց Տեր-Ավետիսն ու իջավ ցած։

Մայրը չգրկեց որդուն, մի կերպ զսպեց մայրական սրտի պոռթկումը։ Փայտե մեծ շերեփը ձեռքին կանգնեց օջախի մոտ ու ո՞չ այն է ուրախ, ո՞չ այն է տնազով, ասաց.

— Կորածը տուն եկավ, աչքս լո՞ւյս...

Գորգին չվիրավորվեց, գիտեր մոր խիստ, կոպտող բնավորությունը։ Հասկանում էր, որ հիմա նրա սիրտը թփրտում է իր անսպասելի հայտնվելուց, բայց չի ցանկանում սրտի զեղումը ցույց տալ օտար կանանց մոտ։

— Ինչպե՞ս ես, մա՛յր. չէի սպասում, որ այստեղ կհանդիպեմ քեզ,— ասաց որդին՝ ձին կապելով ալոջի թփից։

— Ես էլ չէի սպասում, որ այս թոն ու թացին օջախս մարած կթողնեմ ու կընկնեմ այս չոլերը։ Բարո՞վ եկար։ Թուրքին տեսա՞ր, թե ստվերից ճղեցիր։

— Ա՜խ, մա՛յր, կշտամբելու ժամանակ գտա՞ր։ Գլորվում ենք դեպի արյան ծովը։

— Գիտեմ. դրա համար էլ ժողովրդով եկել ենք այս վերանա տեղերը, որ արյան առաջն առնենք։

— Մարոյին է՞լ ես բերել,— չորս կողմը նայելով հարցրեց Գորգին։

— Թողի՞ն, որ բերեմ,— հառաչեց մայրը։— Տարա՜ն։ Եղբայր ես, է՜... Հարսանիքին էլ չհասար։ Ագեցի գինեվաճառը գործը պրծավ ու բկիս չոքեց, թե՝ Մարոյին տուր տղիս՝ տանեմ։ Ես էլ ճար չունեի, տվի՝ առանց քեզ սպասելու։ Յոթը սարի էն կողմը շպրտեցի քորփիս։ Աչքերս կուրանա՜ն։ Գնա՜ց...

Գորգին նստեց ձավարով լի ջվալի վրա։ Տխրեց։ Ո՞վ գիտի, քրոջը մե՞կ էլ կտեսնի։ Խառն օրեր են սկսվում, Ազան էլ հեռու է՝ Արաքսի ափին։ Հիշեց քրոջ սլայիկ հասակը, սև, խոհուն աչքերը, որոնք իսկույն արցունքներով էին լցվում, հենց որ ինքը եղբայր լինելու իրավունքով, տեղի-անտեղի սուր խոսք էր ասում նրան։ Հիմա երևի Մարոյի աչքերից արցունքները չեն ցամաքում...

— Թթվեցի՞ր,— նկատելով, որ տղան տխրեց՝ քնքուշ նկատեց մայրը։— Բա՜ն չկա, վախենա՜ս ոչ. քրոջդ այնպես ճանապարհեցի, որ շենի բերանը բաց մնաց։ Ամեն ինչից բոլ-բոլ տվել եմ, կերուխումն ու դափուզուռնան էլ իր տեղին։ Մի՛ տրտմի։

Ասաց ու կռացավ կաթսայի վրա, որպեսզի ոչ ոք չնկատի աչքերում ծանրացած արցունքները։ Այնուամենայնիվ, չհամբերեց, որդուն քաշեց վրանի ներսն ու մսի անուշ կտորներ դրեց առաջը։ Կապոցից մի սրվակ գինի հանեց։

— Մարոյի հարսանիքից մնացած գինուց է։ Պահել եմ քեզ համար։ Տանը շատ կա։ Խմի՛ր, ցուրտ է, բալա՛ս։

Գորգին խմեց գինին ու, ձեռքը գլխի տակ դնելով՝ քնեց։ Սաստիկ հոգնել էր երկար ու դժվարին ճանապարհից։

Տեր-Ավետիսը վրանների ու քողտիկների արանքով հասավ կիրճի բերանը։ Մեծ ճանապարհն անցնում էր ձորի խորքով, գետին զուգահեռ մի նեղ, ոլործուն ժապավեն կազմելով։ Հետո սկսվում էր զառիվերը՝ անհամար կեռմաններով, դժվարանցանելի կապերով։ Հենց այդ զառիվերի վրա էին կախված երկար ձգվող ժայռերը։ Բարձունքին՝ թփերի ու մատղաշ կաղնուտի մեջ զորքը պատնեշներ էր կառուցում։ Անտառից բերած գերանները դարսել էին զառիթափի եզերքին, ցանկապատի պես մի բան շինել և այժմ մեծ ու մանր քարակույտեր էին դիզում գերանների ետևին։ Քարերը բերում էին շալակով։ Զինվորներն ու աշխարհազորի մարդիկ վխտում էին ամենուրեք, մտնում անտառ, ապա դուրս գալիս՝ քարերի ու գերանների ծանրության տակ ճկած։ Քարակույտերը ձգվում էին կիրճի պռունկից մինչև վերև, ուր անտառը վերջանում էր, և սկսվում էր ձյունածածկ սարի լանջը։

Տեր-Ավետիսը Դավիթ-Բեկին գտավ անտառի եզրին։ Ութ հոգով մի երկար գերան էին բերում ուսերին։ Անտառից լսվում էր կացինների անընդմեջ թխկոց, մարդկանց կանչեր, հայհոյանքներ։ Գերանի մի ծայրն ուսին դրած՝ Դավիթ-Բեկն արագ փոխում էր ոտքերը։ Տեր-Ավետիսը վազեց և, ուսը դեմ անելով գերանին՝ թեթևացրեց գահերեց զորավարի բեռը։

— Ե՞րբ եկար,— հևաց Բեկը։

— Հենց հիմա,— պատասխանեց Տեր-Ավետիսը։— Բայց լա՜վ գործ ես գտել, հա՜, տեր Դավիթ-Բեկ։ Իսկական զորավարի զբաղմունք է, չնեղանաս։ Որ դու գերան չդնես ուսիդ, գործը գլուխ չի գա՞։

— Քիչ խոսիր,— փնչացրեց Բեկը։— Քո ուսն էլ պիտի դարձնեմ լուծ քաշած խամ արջառի ուս...

Գերանը ցած դրին անդունդի պռնկին, Բեկը դժվարությամբ ուղղեց ծռված ուսը, վրայից թափ տվեց կեղտափոշին, ցուցամատով սրբեց ճակատին հատիկ-հատիկ դուրս ված քրտինքն ու նստեց։ Նրա ձեռքերը քերծված էին, բութ մատի վրա արյուն կար։

— Հավանո՞ւմ ես արածներս,— հարցրեց Տեր-Ավետիսին։

— Չեմ հասկանում, թե այդ քարակույտերը ինչի՞ համար են,— ուսերը վեր ձգեց Տեր-Ավետիսը։

— Ա՜խ, չե՞ս հասկանում։ Լա՜վ։ Գնանք՝ ցույց տամ,— Բեկը վեր կացավ, արագ հասավ զառիթափի պոնկին։ Այդտեղից հազիվ էր երևում փրփրած գետը, ու նրա ձայնն էլ հնչում էր խուլ, հեռավոր։ Կանգ առան անդունդի պոնկին։ Տեր-Ավետիսի սիրտն ահ ընկավ։ Անդունդը գլխապտույտ էր։ Բեկը ոտքով մի ոչ մեծ քար հրեց ներքև... Քարը դղրդոցով գնաց՝ կայծակնային ընթացքի ժամանակ ուրիշ տասնյակ քարեր պոկելով... Ներքևում ոլորվող ճանապարհից փոշի բարձրացավ։ Զորն այնպես որոտաց, ասես ժայռեր փլվեցին։

— Տեսա՞ր,— մանկական խանդավառությամբ հարցրեց Բեկը— Հը՞։ Ո՞նց էր։

— Խելոք է մտածված,— հավանություն տվեց Տեր-Ավետիսը։

— Է՜հ, բարեկա՜մս, աստված մի ձեռքով մեզնից կտրել է, մյուս ձեռքով տվել։ Այնպիսի լեռնաշխարհ ունենք, որ հռոմեական բանակներ էլ են կուլ տվել։ Լեռնային պատերազմներով պիտի մաշենք թշնամու ուժերը։ Այս գերաններն ու քարակույտերը տեսնո՞ւմ ես, այնպես են շարված, որ բավական է մի գերան հանես, մյուսները կպոկվեն տեղներից, ու քարերի վիթխարի զանգվածները կհոսեն դեպի, հրե՜ն, այն ճանապարհը, որը միայն թշնամիներ է բերել հայ ժողովրդի գլխին... Մնում է խորամանկություն խաղալ, թուրքերի բանակները քաշել դեպի այս կիրճը, հետո հեշտ է նրանց հետ հաշվեհարդար տեսնել... Այսպիսի ամրություններ ենք կառուցում նաև Վարանդայում՝ Կարկառ գետի կիրճում, Ջրաբերդում, Դիզակում։

— Լավ է մտածված, ո՞ւմ միտքն է,— հարցրեց Տեր-Ավետիսը։

— Միևնույն է,— մռայլ ասաց Բեկը։— Ի՞նչ լուր ես բերել։

— Կաթողիկոսը մերժեց մեր խնդրանքը։ Զուզեց գալ Սյունիք, գնաց շահի դուռը։

— Գիտեմ։

— Ուզում է շահից զորք խնդրել, բերել՝ Երևանն ու Էջմիածինը պաշտպանելու համար։

— Ցնդա՜ծ ծերուկ,— բացականչեց Բեկը։— Քաշալը ճար ունենա՝ իր գլխին կանի։ Շահ Թահմազն ամեն օր սպասում է թուրքի գալուն, որ փախս տա, ո՞վ իմանա, որ չհանդամը։ Է՜հ, ծերունի Աստվածատուրը խելքը թոցրել է։ Հետո՞։

— Խնդրեցի, սպառնացի, բան դուրս չեկավ։ Կաթողիկոսը երևանցիների գլուխն էլ է վարել։ Զուզեցին լսել աստվածահաճ խորհուրդը։ «Ձենք թողնի,— ասում են,— մեր քաղաքը»։

— Իսկ ուժ ունե՞ն, կդիմադրե՞ն,— հարցրեց Բեկը։

— Լավ է կոտորվենք զենքները ձեռքիս,— ասացին,— քան հպատակվենք անօրենների։ Մոլորված են։ Հավատում են, թե Միհրալի խանն ու կաթողիկոսը զորք կբերեն քաղաքի պաշտպանության համար։ Չեն հավատում, որ թուրքը մեծ բանակներով կգա իրենց վրա։ Վստահ են իրենց ուժին։

— Վստահությունը հաղթանակի կեսն է,— նկատեց Դավիթ-Բեկը։

— Ասացին՝ կսպասենք, եթե տեսնենք, որ թուրքը մեծ ուժով է գալիս՝ կթողնենք քաղաքը։ Տասը հազարի չափ մարդ ունեն զենքի տակ։ Կկռվեն։ Իսկ կաթողիկոսի հույսը Ստամբուլում Սեղբոս անունով մի հարուստ մարդու վրա է։

— Գիտեմ, Սեղբոսը սուլթանի սիրելին է։

— Այդ Սեղբոսն էլ սուլթանից հրաման պիտի վերցնի, որ թուրքերը ձեռք չտան Էջմիածնին։

— Ամեն մարդ միայն իր բույնն է ուզում փրկել,— գլուխն օրորեց Դավիթ-Բեկը։— Էջմիածինն իր ոսկե խաչերի համար է դողում, իսկ ժողովրդին՝ թեկուզ ջուրը տանի՜։ Տանի... Կաթողիկոսը դեռ Թավրիզումն է։ Այնտեղից երեկ եկած իմ մարդը հայտնեց։ Շահը պատիվներ է տալիս ծերունուն։ Խոստանում է անպայման օգնել հայերին։ Փչո՜ց...

Բեկը գնաց դեպի կամարակապ աղբյուրը, մտավ նրա տակ, փորի վրա տարածվեց սալաքարերին ու կուշտ խմեց սառցահամ ջուրը։ Վեր կացավ, հողոտ ձեռքերով սրբեց բեղերը։

— Սևանա ծովակի ափին դարմանակեր մարդկանց հանդիպեցի,— զգույշ ասաց Տեր-Ավետիսը։

— Դու է՞լ ես առասպելներ հորինում,— հոնքերը կիտեց Բեկը։

— Կարգս վկա։ Վարդենիսի ավերակներում տեսա՝ մի տան մեջ, հարցրու Փոքր Գորգուն...— Տեր-Ավետիսը պատմեց զարհուրելի եղելությունը։ Բեկը լայն բաց արած աչքերով լսում էր նրան ու երբեմն ցնցվում։

— Այդ մասին ոչ ոքի բան չասես։ Քո այդ Գորգու բերանն էլ ծեփի,— խստիվ պատվիրեց Բեկը։— Զորքի վրա ծանր կազդի։ Լսո՞ւմ ես։ Լռե՛լ..

* * *

Մովսեսն ամուր բռնել էր Արուսյակի ձեռքը։ Մթության մեջ խարխափելիս, ականջ էր դնում ամեն մի աննշան ձայնի, թվացող ստվերանգամ նկատելիս, հանում էր ատրճանակը ու քարացած սպասում։

Այսպես քայլեցին ամբողջ գիշերը։

Լուսադեմին լսեցին Հրազդան գետի խուլ որոտը։ Օդում սառնություն զգացվեց։ Մոտենում էին կիրճին։ Դա մի թեթև հանգստացրեց Մովսեսին։ Մինչև լույսը բացվելը կհասնեն գետափ, կանցնեն կամուրջն ու գետի ձախ ափով կիջնեն Երևան։ Թվում էր, թե արդեն վտանգն անցել է։

— Հոգնե՞լ ես,— հարցրեց Արուսյակին։

— Թեկուզ մինչև աշխարհի ծայրը տար, կգամ, Մովսե՛ս, միայն հեռացրու ինձ այս անիծված տեղերից։

— Շուտով, քաղցրի՛կս,— մեղմ ասաց Մովսեսը,— շուտով կհասնենք Երևան։ Դադար կառնենք սակավ մի ու կմեկնենք Սյունիք։ Դավիթ-Բեկը չի հեռացնի ինձ՝ իր հին բարեկամին, նա մեծ սիրտ ունի։ Նա սպասում է ինձ։ Ես դպրոց պիտի հիմնեմ նրա խորհրդով ու աջակցությամբ։ Կապրենք նրա հովանավորության տակ։

Երկար ժամանակ գնացին լուռ։ Ինչ խռսին։ Օտար ու անծանոթ վայրեր էին, վտանգնելով լի ճանապարհ և Հովասափ վարդապետի հետապնդման ահը։

— Ե՞րբ կհասնենք Հալիձոր,— այս անգամ արդեն հարցրեց Արուսյակը։

— Աստված կամենա՝ երկու շաբաթ հետո,— պատասխանեց Մովսեսը։— Շտապիր, սիրելիս, ուր որ է լույսը կբացվի։

— Թող բացվի, Մովսե՛ս, ես վախենում եմ խավարից։ Ա՛խ, որքա՜ն եմ ուզում հեռանալ ամենից, ամեն չարից ու վատից. մի կտոր հող ունենալ, լինել քեզ հետ՝ մեր սեփական քողտիկի տակ, միասին, հավիտյան միասին...

Արարատի կատարների ձյունն արդեն փայլատակում էր արևի բոցերից, երբ նրանք իջան Հրազդանի կիրճը։ Կանաչ թփուտների մեջ արթնացած լորամարգը երգում էր՝ գարնան հրապույրով ինքնամոռաց։ Գետը փրփուր էր նետում ժայռերին, խլում իր ջրերի մեջ կանաչ վարսերը լվացող ուռիների ոստերը։

Գետի քարքարոտ ափով քայլեցին վեր։ Հոգնել էին։ Մյուս ափին՝ վանքապատկան այգիներում, մարդիկ երևացին։ Առուներն էին մաքրում, ծառերի չորուկները կտրատում։ Այլևս անհնարին էր լույսով շարունակել ճանապարհը, կճանաչեն... Մովսեսը մի հարմար տեղ գտավ ու նստեցին հոգնած, հուսահատ...

Դարձյալ չէին խոսում։ Յուրաքանչյուրն իր մտքերի ու երազանքների հետ էր։ Արուսյակը ծոցից մի լավաշ հանեց։ Հացը թաթախեց գետի ջրում ու կերան անախորժակ։

— Ես քեզ համար ամեն երեկո փափուկ տեղ կգցեմ, Մովսե՛ս,— շշուկով ասաց Արուսյակը։— Կրակ կանեմ մեր օջախում ու տաք ջրով կլվանամ քո ոտքերը։ Իսկ եթե աստված կամենա՝ զավակ ունենանք, ես նրա համար ճոճք կշինեմ ուռենու ճյուղերից ու օրորոցի երգ կասեմ մեր մանկիկի համար...

Արուսյակը երազում էր բարձրաձայն։ Երբեմն երանելի մի ժպիտ էր անցնում նրա դեմքի վրայով։ Արձագանք չստանալով սիրելիից, նա զարմացած նայեց նրան։

Մովսեսը քնել էր՝ գլուխը քարին։ Արուսյակը թախիծով նայեց նրան։ Երկար նայեց։ Հիշեց քիչ առաջվա իր ասածները։ Ինչո՞ւ էր շաղակրատում։ Մի՞թե լինելու բան էին այն ամենը, որոնց մասին երազում էր նա։ Ո՛չ, ո՞վ կտա իրեն այդպիսի երջանկություն։

Նա զգույշ կռացավ Մովսեսի վրա. այտերին զգաց նրա շունչը՝ տաք ու հաճելի։ Արևն արդեն բարձրանում էր, նրա ծվեններից մեկն ընկել էր Մովսեսի դեմքին ու խաղում էր անփութորեն։

Մասրենու թփի արանքից գլուխը բարձրացրեց մի զարմանալի արարած։ Արուսյակը դժվարությամբ գլխի ընկավ, որ դա նապաստակի ձագ է՝ ճեղքված շրթունքով, երկար, ցից ականջներով ու շեղ, անմեղ աչքերով։ Ձագը հոտոտեց օդը։ Երևի առաջին անգամ էր գլուխ հանել բնից։ Եթե Արուսյակը ձեռքը մեկներ՝ կբռներ շլդիկի ականջները։ Բայց անշարժ մնաց՝ անմեղ կենդանուն չվախեցնելու համար։ Թող ապրի ձագուկը։ Ապրի՜, թեև ինքն ու Մովսեսը քաղցած են, իսկ խորոված նապաստակի միսը համեղ է։ Ինչո՞ւ մարել մի անմեղ կյանք, մի մոր սիրտ արյունոտել։ Թող ապրի, թող ամենքն ապրեն հողի վրա, աստծո երկնքի տակ...

Նապաստակի ձագը շրթունքներով շոշափեց մասրենու նուրբ ընձյուղները, մի փոքրիկ տերև պոկեց, ծամեց ու, գետից պոկված հովի շրշյունից խրտնելով՝ մտավ բույնը։

Մի ոսկեգույն բզեզ իջավ Մովսեսի մազերին, բարակ տոտիկներով շոշափեց սև գանգուրները և թռավ։ Ձորը լիքն էր արևի հաճելի ջերմությամբ։ Գարնան թարմությունն էր հառնում հողից, կանաչներից, գետի ջրերից։ Արևը պայծառ էր, կիրճը լիքը կախարդական երգով։ Ի՜նչ լավ է այսպես՝ ազատության մեջ, սիրելիիդ հետ, նապաստակի խաղաղ բնին հարևան։ Այստեղ չկա Հովասափ վարդապետը՝ իր մոխրագույն, անկենդան աչքերով, անճոռնի ձեռքերով։ Կան միայն գարնան արևը, բզեզների ոսկեգույն թևիկները, կա Մովսեսը, որ ահա քնել է՝ գլուխը կանաչած քարին, սիրելի, կյանքից էլ առավել սիրելի Մովսեսը...

Արուսյակը կռացավ, որպեսզի համբուրի Մովսեսի կարմիր շրթունքները, բայց քարափի գլխից ձայներ լսեց ու ցնցվելով նայեց վեր...

Հենց իրենց գլխավերևը՝ քարափի վրա, կանգնած էին մի խումբ ձիավորներ։ Ձիերն անհանգիստ դոփում էին գետինը։ Մեկը մտրակը Երևանի կողմը մեկնած՝ մի բան էր ասում մյուսներին։ Արուսյակը ցնցեց Մովսեսի ուսը։

— Վե՛ր կաց, վե՛ր...

Մովսեսը ծառս եղավ տեղը։

— Ի՞նչ է։

— Աղե՛տը... հեծկլտաց Արուսյակը։— Հրե՛ն, Հովասափը։ Նայիր քարափին։ Ես զարհուրում եմ, Մովսե՛ս...

Մովսեսը երկար նայեց քարափին կանգնած զինվորներին ու փրլված ձայնով ասաց.

— Հովասափը չէ, Արուսյա՛կ։ Թուրքե՛րն են...

Քաջերի արանքով նրանք սողացին վեր։ Թփուտները վերջացան։ Մնաց գետի լերկ, ավազոտ ափը՝ նեղ ու վտանգավոր։ Քարափին ձիավորների նոր խմբեր երևացին։ Մի գնդակ սուլելով անցավ Մովսեսի ականջի տակով ու խրվեց ավազի մեջ։ Թուրքերը նկատել էին փախստականներին ու զվարճանալով՝ գնդակ էին արձակում նրանց վրա։

— Մտիր գետը,— անհույս ասաց Մովսեսն ու Արուսյակին քաշեց ետևից։

Երկուսով ընկան գետի փրփուրների մեջ։ Մովսեսն ամուր պահում էր Արուսյակի ձեռքը։ Մինչև կուրծքները խրվեցին ջրի մեջ։ Ալիքները ծառս էին լինում նրանց մեջքի վրայով, հարվածում, փորձում տապալել նրանց։ Բայց դիմանում էին։

— Էլ չեմ կարող, Մովսե՛ս,— ճչաց Արուսյակը,— դու փախիր, թող գետն ինձ տանի...

— Լողա ինձ հետ։

Վերևից հրացանային կրակի տարափ էին արձակում։ Գետի խշշոցի միջից երբեմն լսվում էր թուրքերի քրքջոցը։ Մի ձեռքով Արուսյակի դաստակն ամուր սեղմած, մյուսով Մովսեսը կռվում էր գետի ալիքների հետ՝ աշխատելով որքան կարելի է շուտ հասնել մյուս ափ։ Կատաղի ալիքները նրանց քշում էին ցած, բայց Մովսեսը վստահ էր իր ուժին։ Գետը կանցնի, միայն թե ազատվեն գնդակների տարափից։ Իսկ գնդակներն իրար ետևից մխրճվում էին ջրի մեջ՝ առջևում, կողքերին, ետևին...

Նա արդեն գետի կեսն անցել էր, երբ դիմացը՝ ջրի վրա նկատեց արյան մի երկար ծվեն։ Արյունն օրորվեց ալիքի վրա ու սլացավ ներքև...

— Անաստվածնե՛ր...— զարհուրելի ձայնով գոռաց նա։

Կրակի տարափը սաստկացավ։ Մովսեսը գլուխը կոխեց ջրի տակ ու մի քանի վայրկյան գնաց դեղնավուն մշուշի մեջ... Ինչ-որ արգելքի դեմ առնելով՝ նա գլուխը հանեց ջրից ու տեսավ, որ ջուրն իրենց մոտեցրել է ափին։ Լողաց՝ վերջին ուժերը լարելով, ձախ ձեռքում զգալով Արուսյակի դաստակը։

Ափն ի վար օրորվեց ջրի վրա, մինչև հասավ գետի կեսը ու դուրս եկավ։ Թուրքերն այլևս չէին երևում։ Նա ջրից հանեց Արուսյակին ու չ քեց տաք ավազի վրա։

Ամեն ինչ թաղվեց սև մշուշի մեջ։ Նույնիսկ չէր լսում ոտքերի տակ թավալվող գետի շառաչը։ Արևն ասես փլվում էր, ու նրա այրող բեկորները թափվում էին իր գլխին։ Աչքերի առջև միայն Արուսյակի անշարժ հայացքն էր՝ մեռած, անկենդան։ Աչքերը կիսախուփ էին։ Թաց մազերն անփութորեն փռվել էին կանաչների վրա, որոնք կարմրում էին արյունից։ Արուսյակի շապիկը կպել էր մարմնին ու ասես դեռ թրթռում էր սիրելիի կուրծքը։ Աչքերի անկյուններում ջրի՞, թե վերջին արցունքների կաթիլներն էին մնացել՝ արևի ցոլքերը վրան։

Մովսեսը սարսռաց։ Դաժան հայացքով նայեց շուրջը։ Գազազած գետն ու լերկ ժայռերն էին նրա ողբին վկա։ Գոնե մի շունչ արարած լիներ, որ գոռար, բողոքեր բախտի արյունոտ արարքի դեմ։ Բայց ոչ ոք չկար։ Ամեն ինչ մեռած էր։ Մեռած էին խոտերը, աստղածաղիկները, թզենու փոքրիկ թուփը, որ կպել էր ժայռի կրծքին։

Մեռած էր Արուսյակը։ Թշնամու գնդակն անցել էր նրա ձախ թևատակից... Մովսեսը անզուսպ կատաղությամբ գոռաց.

— Ուրիշ ճանապարհ չունե՞ր գնալու, մա՜հ...— ու ընկնելով թաց դիակի վրա՝ երկար հեկեկաց։ Այլևս ոչ ոքից ահ չուներ։ Թող գան՝ թուրքը, Հովասափ վարդապետը, պարսիկ սեյիդը, բոլորը, բոլո՜ր թող գան ու հոշոտեն իր վշտերի բուն մարմինը...

Արևը չորացրեց նրա ու դիակի զգեստները։ Արուսյակի աչքերի անկյուններում այլևս արցունքներ չկային։ Մովսեսին թվում էր, թե ինքը ևս դիակ է, ու այլևս տեղից բարձրանալու ուժ չի գտնելու։

Միայն մայրամուտին նա վեր կացավ, մի սրածայր քար գտավ ու սկսեց փորել գետափի փափուկ հողը։ Փորում էր գազազած, կատաղած՝ աշխարհի, աստծո ու բոլոր մարդկանց վրա։ Քրտինքը ծորում էր դեմքից, եղունգներն արյունոտվել էին, բայց փորում էր քարով, ձեռքերով. ատամներով բռնում՝ հողից հանում էր ուռենու արմատները...

Փոսը պատրաստեց։ Ծանր քայլերով մոտեցավ, գրկեց, բարձրացրեց դիակն ու դեմքը թաղեց նրա կրծքին։ Արուսյակից թաց հողի բույր

էր գալիս։ Շոշափեց ու նրա զգեստների տակ մի թրջված, ծվատված լավաշ գտավ։ Մովսեսը հեծկլտաց, գլուխը թափահարեց ու խնամքով ծածկեց Արուսյակի կուրծքը։ Ապա փակեց նրա կիսաբաց աչքերն ու շալով դեմքը փաթաթելով՝ դրեց փոսի մեջ...

Մինչև մութն ընկնելը մնաց սիրելիի գերեզմանի վրա։ Ոչինչ չէր կարողանում անել, նույնիսկ ուժ չուներ լաց լինելու։ Միայն երբեմն գլուխը դնում էր խոնավ հողին ու հեկեկում անձայն, անարցունք։

Իր դառը կյանքի միակ սփոփանքն էր թաղել նա այս ամայի գետափին։

Մութը խեղդեց կիրճը։ Մովսեսը պոկվեց գերեզմանից ու բարձրացավ դեպի ժայռի գագաթը։ Գնում էր՝ մագլցելով քարերի արանքով, բռնելով ծառերի ոլորուն արմատները։ Ստեպ-ստեպ ետ էր նայում, սակայն խավարը կլանել էր Արուսյակի մենավոր գերեզմանը։ Միայն Հրազդանն էր որդեկորույս մոր նման ծառս լինում, հառաչում ներքևում։

Մովսեսը բարձրացավ մոտիկ ընկուզենին ու նայեց դեպի Արագածի կողմերը... Սկզբում թվաց, թե սև ամպ է իջնում լեռնալանջով, բայց քիչ հետո նկատեց զորքերի զանգվածները։

— Թուրքն է,— ասաց ինքն իրեն ու շուռ գալով՝ ետ նայեց։ Այգիների մեջ խաղաղ ծխում էր Երևանը։— Խե՜ղճ մարդիկ։ Դուք դեռ չգիտեք, թե ինչ վիշապ է սողում դեպի ձեր օջախները, ձեր մանուկների օրորոցները...

Նա արագ իջավ ծառից ու վազեց դեպի Երևան։

***

Կառչիկ Հովհաննեսը մահուդի ներկատնից տուն էր վերադառնում գազազած։ Ամբողջ մի շաբաթ գործի չէր գնացել, արհեստանոցը չէր բացել։ Թուրքերի Հայաստան մտնելու լուրն ամեն ինչ տակնուվրա էր արել։ Թեև թշնամին դեռ հեռու էր, թեև ոմանք նույնիսկ չէին հավատում, որ պատերազմ է, ու օսմանլուի զորքը մտել է Հայաստան, բայց և այնպես Երևանը տագնապի մեջ էր։ Տագնապի մեջ էր նաև Կառչիկը։ Ամեն օր կռվում էր քաղաքի պարոնտեր Հովհաննես Հունդիբեկյանի և մյուս երևելիների հետ։ «Քանի ուշ չէ, բերդը գրավենք, Միհրալի խանին խրկենք։— Պահանջում էր նա։— Նստած կմնա կրծքներս ու մորուքներս կփետի»։ Բայց նրան չէին լսում։ «Միհրալին կկռվի Թուրքի դեմ,— ասում էին։— Շահն ու կաթողիկոսը գալիս են զորքով։ Ինչո՞ւ չօգտվենք դրանից»։

Կառչիկը բորբոքվում էր, գոռում, բայց իզուր։ Երևանի տերերը նրան լսել չէին ուզում։ Միայն այդ օրը նա գնաց ներկատուն, այնտեղ եղած ապրանքը թաքցրեց, հորից հանեց վաղուց պահած զենքերն ու ծածուկ բաժանեց իր մտերիմներին։ Եվ ահա վերադառնում էր տուն՝ տագնապի մեջ, չարացած։ Չէր նկատում հանդիպող համաքաղաքացիներին, չէր պատասխանում նրանց ողջույնին։

Արդեն տուն էին հասնում, երբ շուռ եկավ իրեն հետևող օգնականների ու աշակերտների կողմը։

— Դուռը լավ փակեցի՞ք, ադա՛,— հարցրեց՝ երկար բեղերը ցընցելով։

— Հրամանդ, վարպե՛տ,— հեզ պատասխանեց ավագ օգնականը։

— Պահապանն ո՞վ մնաց։

— Սարգիսը։

— Զքնի՞։ Զենքո՞վ է։ Ասացի՞ք, որ չքնի, հը՞։

— Ասացինք, վարպե՛տ, չի քնի։

— Շները շատացել են։ Պարսի՜կը... Խաբում է էծի կճեղակի խանը, ես նրա... (Ապա կամաց, որ անցորդները չլսեն)։— Գնա, մի աբասու էն խոտից բեր։ Սիրտս ուզում է։ Նայիր շորը տա։ Թացը ծուխ չի անում, վազի՛ր։

Ավագ օգնականը մտավ մի նրբանցք։ Կառչիկ Հովհաննեսը մյուսների հետ հասավ իր տանը։ Դարպասի ներկը խունացել էր։ «Այս տարի պիտի ներկել»,— որոշեց նա, բայց Թուրքի ահը հիշելով՝ օթակը շրջխկացրեց չարացած։ Թվաց, թե դուռն ուշ են բաց անում։ Զարությունը կրկնապատկվեց։ Ծառային կապտակի։ Դարպասի մեծ փեղկի մեջ կտրած դռնակը ետ գնաց, և Հովհաննեսն իր առաջ տեսավ մեծ աղջկան։ Սա գլուխ տվեց հորը։ Հոր բարկությունը մեղմացավ։

— Ծառան մեռա՞ծ է, ի՞նչ է,— հարցրեց նա։

— Գնացել է եկեղեցի,— պատասխանեց հազիվ տասներեք տարեկան աղջիկը։

Հայրը գրկեց նրան, կարոտով նայեց նրա ճառագայթող աչքերին, համբուրեց ոսկեգույն մազերը։

— Այլևս դու չգաս դուռը բաց անելու,— ասաց՝ բակի երկայնքով գնալիս։— Զգա՜ս... Հազար շունուգել կա քաղաքում, դստրի՜կս։ Դու արդեն մեծ ես։

Ներկարար Կառչիկ Հովհաննեսի տունը գտնվում էր Զորագյուղի քարափի վրա, սուրբ Սարգիս եկեղեցու մոտ՝ այգու մեջ։ Այգին շրջապատված էր երկու մարդահասակ բարձրությամբ պարսպով։ Թթենիների ծառուղին դարպասից ձգվում էր մինչև այգու ծայրը։ Այնտեղ Ագուլիսի

ու Աստապատի վարդեր կային՝ մանուշակագույն ընձյուղներով, դեռ չճաքած կոկոններով։ Խաղողի թմբերը բաց էին արել. վազերը զարդարվում էին նուրբ, կանաչ տերևներով։ Գարնանային թարմություն էին շնչում բարդիները, որոնց կատարներն օրորվում էին՝ ասես փշատենիների բուրմունքից հարբած։

Կառչիկը կանգնեց ջրհորի մոտ։ Աշակերտներից մեկը փայտե դույլը կախեց հորը և, ճախարակը պտտելով՝ ջուր հանեց։ Կառչիկը մերկացավ մինչև գոտին, սկսեց լվացվել։ Այդ հինավուրց ջրհորի մոտ այդպես լվացվել էին նրա բոլոր նախնիները։ Տատից լսել էր, որ հայոց Ապիրատ իշխանը մի անգամ հյուր է եղել այս տանը և իր Կառչիկ նախապապն է Ապիրատին խորհուրդ տվել Հրազդանից առու հանել, բերել Երևան, կանաչեցնել լերկ քաղաքը։

Լվացվելուց հետո Հովհաննեսը բարձրացավ տուն։ Պատշգամբը ապակեպատ էր, լայն ու լուսավոր։ Գունավոր ապակիների միջից ծիածանի շողեր էին թափվում ներս։ Հատակին՝ ծաղկավոր գորգերի վրա խաղում էին Հովհաննեսի երեք փոքր որդիները՝ ինը, յոթ և հինգ տարեկան։ Հորը տեսնելով՝ նրանք դադարեցրին խաղը։ Հայրն արխալուղի գրպանից չամիչ հանեց ու թափեց նրանց առջև՝ գորգի վրա։ Նստեց։ Ձեռքով նշան արեց, որ բաց անեն ապակեպատ պատշգամբի փեղկը։ Հրազդանի դղրդոցը հասավ քարափին թառած տանը։ Բացվեց Սամբեկի-Դալմայի այգիների հեռաստանը։

Իրիկնահաց բերին։ Եկավ կինը՝ կրծքին ու թևերին ոսկե սուրմաներ, ճակատին մարգարտե ճարմանդ։ Արծաթե սրվակից գինի լցրեց ամուսնու համար։ Աղջիկը մի պնակի մեջ տապակած սիբեխ բերեց։

— Նստեցե՛ք,— օգնականներին հրավիրեց Հովհաննեսը։— Մի-մի թաս գինի խմենք։

Օգնականները նստեցին առանձին։ Աշակերտները գնացին խոհանոցում ընթրելու։ Հովհաննեսն ուտում էր ախորժակով։ Ականջները շարժվում էին, բեղերի ծայրերից կաթում էր ոսկեգույն գինին։ Ձեռքը երբեմն մեկնում էր ծեծած սխտորով համեմած մածնի փարչին ու խմում դանդաղ, բավականությամբ։ Աչքի պոչով նայում էր կնոջ մոտ, իր սպասին կանգնած աղջկանը։ Ննդյան տոներին պարոնտեր Հովհաննես Հունդիբեկյանը ակնարկ արեց, որ միտք ունի աղջկան նշանել իր որդու համար։ Հովհաննեսի որդին լավ վաճառական է, դրամ վաստակել գիտե, թեև մի քիչ կարճ է ու սև։ Մեղք չի՞ լույսի պես ճերմակ իր դուստրը նրան տալ... Բայց ճար չունի, պետք է «հա» ասի։ Խառն ժամանակներ են, Թուրքերը կգան...

Փողոցից մեկը գոռաց.

— Թուրքերը մոտենում են Հրազդանին...

Կառչիկ Հովհաննեսը մածնի փարչը դեն նետեց ու թռավ փողոց։ Այնտեղ երեխաներով ու ծվծվացող կանանցով շրջապատված էր մի աբեղա։ Հովհաննեսը տնկվեց նրա առջև։

— Ի՞նչ մարդ ես,— հարցրեց չարությամբ։

— Ես հենց քո տունն էի գալիս, Հովհաննե՛ս։ Ես Մովսես աբեղան եմ։ Հիշո՞ւմ ես, շուկայից ինձ բերիր քո տուն։ Աչքովս տեսա Թուրքին, Հրազդանի մյուս ափին էր, գալիս է...

Փողոցը դատարկվեց իսկույն։ Հովհաննեսը բռնեց Մովսեսի ձեռքն ու քաշեց դեպի իր տունը։ Ճանապարհին Մովսեսը կցկտուր պատմեց Արուսյակի սպանվելու դեպքը։ Բարձրացան պատշգամբ։ Կառչիկը վրշտից քարացած կնոջը կարգադրեց բերել իր զենքերը, ապա դարձավ օգնականներին ու աշակերտներին.

— Դուք էլ զինվեցեք, Թուրքը գալիս է...

Կինը աչքերը սրբեց, զենքերը մեկնեց ամուսնուն ու գունաթափ շրթունքները հազիվ բացեց.

— Հարամու բերանն ընկանք, Հովհաննե՛ս...

Ամուսինը չպատասխանեց նրան, չհանգստացրեց։ Քաղաքը դղրդում էր մարդկանց աղաղակներից։ Եկավ ավագ օգնականը։

— Ինչի՞ են աղաղակում անիծվածները,— հարցրեց Կառչիկը։

— Միհրալի խանի զորքը ջարդվել է Եղվարդի տակ։ Մնացորդները փախստական գալիս են։ Ժողովուրդը գազազել է։

— Ե՞րբ գնացին Թուրքի դեմ։ Ե՞րբ կռիվ եղավ,— զարմացավ Կառչիկը։

— Գիշերս են գնացել դեպի Ապարան։ Այսօր Թուրքին հանդիպել են Եղվարդի տակ։ Պարտվել են իսկույն։

— Ուրեմն Թուրքը Եղվարդն առե՞լ է,— հառաչեց Կառչիկը։— Խաբվեցի՞նք։ Պաշարվեցի՞նք։ Մխելու խոտ բերի՞ր։

Ավագ օգնականը մի բուռ ծխախոտ խոթեց նրա գրպանը։ Հովհաննեսը սևացած ծխամորճը թութուն լցրեց, վառեց աբեթի կրակով։ Դառը ծուխը ձգվեց դեպի պատշգամբի բաց փեղկը։

— Արթուն եղեք մինչև իմ գալը,— քթածակերից ու բերանից առատ ծուխ արձակելով՝ կարգացրեց նա յուրայիններին։

— Վա՜յ, ապին վառվում է...— կանչեց ամենափոքր տղան։

Հովհաննեսի սիրտը մխաց։ Երեխան առաջին անգամն էր իրեն ծխելիս տեսնում։ Եթե իմանա՞ր, թե ինչ կրակ է ընկել սիրտը... Միհրալին պարտվել է։ Թող սատկի շունը։ Մովսեսին հետը վերցնելով, նա գնաց դեպի Եղվարդից եկող մեծ ճանապարհը։

Քարափին խլրտում էր ժողովուրդը։ Գետի ձայնը խլացել էր։ Երեխաները բարձրացել էին ձորի վրա կախված ծառերը, տների կտուրները։ Ցածրում՝ ճանապարհով փախչում էին պարսիկները՝ ձիավոր ու հետևակ։ Շատերն անղեն էին, արյունլվա։ Խանի նայիբը հետիոտն վազում էր դեպի բերդը...

Կառչիկ Հովհաննեսը կատաղությունից գոռաց.

— Փախչո՞ւմ եք, կնիկմարդե՞ր...

— Երկիր պաշտպանողների՞ս նայեք...— խլեց նրա հարևանը։

— Մեզ վրա էին ասլան կտրել։ Ա՜խ, ես դրանց արևը մարեմ։

Կառչիկ Հովհաննեսը ոտքի տակից վերցրեց աղտոտ մի տրեխ ու նետեց պարսիկների վրա։ Ներքևից հայհոյեցին։ Այս անգամ Հովհաննեսը քար վերցրեց։ Բոլորը հետևեցին նրա օրինակին։

— Ջարդե՞նք, հոգիներս կերա՞ն։— Բայց ձեռքը մնաց օդում։ Մեկն ամուր բռնել էր դաստակը։ Գազազած շուռ եկավ։ Պարոնտեր Հունդիբեկյանն էր՝ չարացած ու մռայլ։

— Համբերի՞ր,— խիստ ասաց նա։— Երեխա հո չե՞ս։ Ցավներս ուրիշ է։

Բայց և այնպես երևանցիները սկսեցին վերևից թքել պարսիկների վրա, չորացած թրիք, փտած լաթեր նետել նրանց գլխին։ Հովհաննես պարոնտերը հազիվ էր զսպում ամբոխի զայրույթը։

Ողջ գիշեր քաղաքում չքնեցին։ Եղվարդից փախած մի երեց պատմում էր, թե ինչպես են թուրքերը ջարդել պարսիկների տասնութ հազարանոց բանակը։

— Եվ զարմանալին այն է, հավատացյալնե՞ր, որ թուրքերը հազար ութ հարյուր մարդով էին։ Եվ նրանց մեծ զորքը դեռ Կարբիի կողմերին է։ Եվ ասում են՝ Կարբին դիմադրում է... Եվ հենց որ վրա տվին թուրքերը, պարսիկները ճղեցին։ Համա կոտորած էր, հա՞...

Հովհաննես պարոնտերի տանը գաղտնի խորհուրդ եղավ։ Լրտեսներ ուղարկեցին Եղվարդի ու Կարբի գյուղաքաղաքի կողմերը՝ թուրքերի ուժերի ու մտադրությունների մասին տեղեկություններ բերելու։ Վճռեցին նաև անհապաղ ամրացնել քաղաքի հյուսիսային թաղը, որ ավելի դյուրամատչելի էր։ Խորհուրդը Հովհաննես պարոնտերին ընտրեց քաղաքի բոլոր զինված ուժերի գլուխ, նրան օգնական տալով Կառչիկ Հովհաննեսին։

Կեսգիշեր էր, երբ Մովսեսի հետ Կառչիկը տուն եկավ։ Ոչ ոք չէր քնել։ Պատշգամբում խռնվել էին Կառչիկի տատի՝ զառամած մի պառավի շուրջը ու ահից լուռումունջ սպասում էին։ Հովհաննեսը մոտեցավ տատին, համբուրեց նրա սմքած ձեռքը։

— Թո՞ւրքը,— ձեռնափայտը ճոճելով հարցրեց պառավը։

— Հա՛, մե՛ծ մայրիկ, գալիս է...

— Զուլո՞ւմ է...— հառաչեց մեծ մայրիկը։— Ես դեռ աղջիկ էի հորս տանը՝ Կարբիում, որ թուրքը եկավ։ Գաղթեցինք Սյունիք։ Ա՜խ, ա՜խ... հետո ետ եկանք, երբ թուրքը հեռացավ։ Հը՞, Հովհաննես, որդի՞ս, գուցե հիմա էլ գնանք Սյունիք։ Պնդոց է...

— Հիմա ուշ է, մեծ մայր, թուրքը Եղվարդի դաշտը բռնել է։ Հենց որ քաղաքից դուրս գանք, վրա կտա. բաց դաշտում չենք դիմանա։

— Ա՜խ, Գաբրիել հրեշտակ, հոգիս չառար, որ էլ չտեսնեի թուրքին։ Հյուրդ ո՞վ է։

— Պանդուխտ, օտար մարդ է։

— Աստված հասնի պանդուխտին էլ, նեղյալին էլ։ Ա՜խ, զավակնե՞րս... Ջարի՞ր, ժամանակին զավակներիս չհեռացրիր քաղաքից։ Հիմա ո՞ր կրակը տանք գլխներիս։ Զավակնե՞րս...

Հովհաննեսը գինի ուզեց։ Մովսեսի համար լցրեց մի մեծ փարչ։

— Խմենք, Մովսե՛ս։ Այսօր կանք, վաղն ո՞վ իմանա։ Բախտավոր աստղի տակ չի ծնվել հայ ժողովուրդը։ Բայց ի՞նչ արած, կկռվենք... Քաղաքն ամուր է երեք կողմից, բաց կողմն էլ կամրացնենք։

— Քանի՞ մարդ կարող է զենք վերցնել,— հարցրեց Մովսեսը։

— Բոլորը՝ մարդ, կին, երեխա։ Տասը հազարի չափ զինված տղամարդ կա քաղաքում։ Եթե դու էլ զենք վերցնես, կլինես տասը հազար մեկերորդը։

— Ատրճանակ ունեմ, միայն թուր գտիր ինձ համար։ Տասը հազարը քիչ չէ, Հովհաննե՛ս։ Դիմանալ կարելի է։ Գուցե Դավիթ-Բեկն օգնության հասնի կամ, ով գիտե՝ ռուսները գան։ Դուք մարդ ուղարկեցեք Բեկի մոտ...

Հովհաննեսը բան չասաց։ Խմեց, աղ դրած վարունգ ծամեց ու վեր կացավ։ Օգնականներն ու աշակերտները արդեն զինված սպասում էին նրան։ Մովսեսին մի թուր տվին՝ ծանր ու երկար։ Հովհաննեսը ծիծաղեց։

— Գրի մարդ էիր, զինվոր դարձար, Մովսե՛ս։ Հո՛, հո՛, հո՛... Թուրը ծանր է՞։ Ասում են՝ պապերիցս է մնացել։ Քեզ նվեր, դրանով պահպանիր կյանքդ ու երկիրդ։

Դուրս եկան փողոց։ Ամեն կողմից զինված ջոկատներ էին հավաքվում Զորագյուղի եկեղեցու բակը։ Զինված քաղաքացիներին հարյուրակների ու տասնյակների բաժանեցին։ Հրամանատարներ կարգեցին առաջներում բանակում ծառայած մարդկանց, որսկաններին, ըմբիշներին, նույնիսկ նրանց, ովքեր ավազակությամբ էին պարապել։

Լուսացավ։ Ի զարմանս Մովսեսի, երևանցիները խուճապի նշաններ ցույց չտվին։ Վստահ էին իրենց ուժին, նույնիսկ երեխաները զենք ունեին ու մեծերի ոտքերի տակ ընկնելով՝ ամեն կերպ ուզում էին մի բանով օգնել նրանց։

Քաղաքի հյուսիսային թաղի բնակչությունը տեղափոխվեց Զորագյուղ, Կոնդ, Երկերեսու և Միրանի թաղերը։ Զորապետների խորհրդով ժողովուրդը քանդեց փոսի թաղի տները։ Գերանների ու քարակույտերի մի երկար պատնեշ շինեցին այստեղ։ Դա քաղաքի դյուրամատչելի կողմն էր։ Ապա մեծ առվի ջուրը կապեցին բանջարանոցները։ Ջուրը արագորեն սկսեց լճանալ երկարավուն փոսում՝ Միրանի թաղի ստորոտից մինչև բերդի բլուրները։

Մյուս օրվա երեկոյան վերադարձան Կարբու և Եղվարդի կողմերն ուղարկված լրտեսները։ Նրանք ուրախ լուրեր բերին։ Թուրքական բանակը խճճվել է Կարբի գյուղաքաղաքի տակ։ Կարբեցիներն ամրացել են իրենց բերդ հիշեցնող գյուղաքաղաքում ու Հովանավանքում և քաջաբար դիմադրում են թուրքական բանակին։

— Ղոչ Ալի և Յուլղուզ Հասան փաշաները չորս օրում մի քանի հազար մարդ են կորցրել Կարբիի պարիսպների տակ,— հայտնեցին լրտեսները։— Սերասկյար Աբդուլլահ փաշան գնացել է նրանց օգնության։ Բայց Կարբին երկար կդիմանա, կռվում են։

Այդ լուրը ոգևորեց երևանցիներին։ Դարբիններն սկսեցին կարկատել հին վահանները, սրել ժանգոտած թրերը, նիզակները։ Կառչիկ Հովհաննեսը մի զինագործի հետ ձեռքի նռնակներ ու ռումբեր շինեց։ Վառոդ պատրաստող երկու ասորու մեծ գումար տվին։ Սրանք գիշերցերեկ սկսեցին վառոդ պատրաստել Երկերեսու թաղում։

Կառչիկ Հովհաննեսը երկու պարկ վառոդ թաքցրեց իր տան ներքնահարկի թոնրի մեջ։ Շուկաները դատարկվեցին, կրպակներին կողպեք դրին։ Քաղաքացիներն իրենց հարստությունը թաքցրին փլատակներում, հորերում գերեզմանատանը։

Երևանը դարձավ ռազմական ճամբար։ Նիզակներով, տապարներով, թրերով և հրացաններով զինված խմբերը գիշերում էին քարափների վրա, փոսի արհեստական ամրությունների գլխին։ Երեք օրում բանջարանոցների փոսը լցվեց ջրով։ Ջուրն այնքան բարձրացավ, որ գոմեշները լողալով էին անցնում։

Երևանը դարձավ յուրօրինակ մի բերդ։ Սակայն երիտասարդները չէին ներում ծերերին, որ թույլ չտվին գրավել Երևանի բերդը, Միհրալի խանին քշել այնտեղից։ Խանը փակվել էր անառիկ բերդում ու կենդանության ոչ մի նշան չէր ցույց տալիս։ Ասես կոտորվել էին գլխովի։

Ապրիլի յոթին լրտեսները լուր բերին, որ թուրքերը հեռանում են Կարբիի տակից, Կարբին պաշարելու համար նրանք այնտեղ թողել են մի զորաբանակ և յոթանասունհինգ հազար զորքով մոտենում են Երևանին...

Մռայլ, ամպամած օր էր։ Գիշերն անձրև էր եկել։ Հողը փափկել էր, գետը պղտորվել։ Գետափնյա ժայռերը լվացվել էին։ Քարափին կանգնած երևանցիները քարե կամուրջի մյուս կողմին, մշուշի մեջ, մարդկանց և անասունների ահագին զանգվածներ նկատեցին։ «Թուրքերն են»,— մտածեցին ու մտան դիրքերը։ Կառչիկ Հովհաննեսը ձորագյուղցի հինգ հարյուր հրացանակիրներով իջավ դեպի կամուրջը։ Բայց շուտով պարզվեց, որ մոտեցողները փարաքարցիներ էին։ Ամբողջ գյուղով տեղահան էին եղել ու գալիս էին քաղաք։ Բերում էին երեխաներին, պառավներին, անասունների հոտերն ու նույնիսկ շները։

Անցնելով կամուրջը՝ փարաքարցիները թեքվեցին դեպի Զորագյուղ։ Նրանց տանուտերը համբուրվեց զենքերի մեջ կորած Կառչիկ Հովհաննեսի հետ։

— Կռվենք ու մեռնենք միասին, եղբայրնե՛ր,— հուզված ասաց նա։— Եկել է փորձության օրը։ Ուրեմն՝ պաշտպան կանգնենք մայր քաղաքիս։ Հազար հարյուր հիսուն զինված մարդ ունենք, վարպե՛տ Հովհաննես, մատաղ հայոց երկրին...

Փարաքարցիների կանանց ու երեխաներին բաժանեցին տների վրա։ Ապա կամրջի կամարի մեջ փոս փորեցին, տասք փութ վառոդ լցնելով նրա մեջ՝ պայթեցրին։

Երեկոյան դեմ լուր բերին, որ քաղաքին են մատենում Գոգմբեթի, Կավակերտի, Առընչի, Զագավանի, Նորա-Գեղջ գյուղերի բնակչությունը։ Դրանց ևս ընդունեցին գրկաբաց։ Գյուղացիների մեծ մասն անզեն էր։ Երևանցիները նրանց զենք տվին և սկսեցին վարժեցնել շինականներին։

Գիշերն անցավ խաղաղ։ Պատնեշների գլխին, ժայռերի ծերպերում ու բարձր կտուրների վրա անքուն կանգնած դետքերը «ախ» էին անում՝ Օշականի ու Եղվարդի կողմերի անհամար հրդեհները տեսնելով։ Հրդեհների լույսից աղոտացել էր աստղերի փայլը։ Վառվում էր Հրազդանի աջ ափից մինչև հեռավոր Շամիրամի դաշտն ընկած Արարատյան հովիտը։ Վառվում էին Արագածի փեշերի գյուղերը, Աշտարակը, Կոշը, Մուղնին... Արագածը լուսավորվել էր հրդեհի ցոլքերից։ Կարծես հրեղեն լավան ժայթքում էր հենց լեռան գագաթից ու իր ճանապարհին լափելով, ոչնչացնելով ամեն ինչ՝ հոսում դեպի Արաքսի արյունոտ ջրերը...

Լուսացավ հազար յոթ հարյուր քսանչորս թվականի ապրիլի ութը։

Ծուխը թանձրացել էր երկնակամարում։ Արևը մշուշվեց նրա սև քողի տակ։

Շուտով փոշու վիթխարի ամպեր բարձրացան ու թանձրացրին ծխի ծածկը։ Երևացին սև դրոշների փնջեր, ապա ասես Դալմայի այգիները շարժվեցին դեպի Հրազդանի աջ ափը։

Թուրքական բանակը, ծանր ալիք տալով՝ կանգնեց քաղաքի դիմացի այգիներում, բլուրների տակ, լցրեց փոսերն ու առուները։ Հողի կանաչ ծածկոցը տրորվեց սև դանգվածի տակ...

Երևանը պաշարվեց։ Թուրքերը քսաներեք թնդանոթ ամրացրին խաղողի այգիներում ու փողերն ուղղեցին քաղաքի վրա։ Բանակում հարյուրավոր խարույկներ վառվեցին ու սկսեցին կերակուր եփել։ Բանակի գլխին օրորվում էին գիշակեր թռչունների ծանր երամները...

Երևանցիները վճռեցին մի պատգամավորություն ուղարկել բերդում փակված Միհրալի խանի մոտ։ Ո՞վ գիտե, գուցե կարողանան խանին համոզել, որ սա միանա հայերին ու համատեղ պաշտպանեն քաղաքը։ Վեց պատկառելի ծերունի ընտրեցին պատգամավորության համար։ Պատգամավորության գլուխ դրին ծերունի մելիք Աղամալյան Աղավելին։

Հասնելով բերդի փակ դռներին՝ հայ ծերունիները պահակներից պահանջեցին, որ իսկույն խանին տեղյակ պահեն իրենց ժամանելու մասին։

Հայ պատգամավորները երկար խաշվեցին արևի տակ։ Բերդի դարպասն ուշ բաց արին։ Նրանց դիմավորեց չեչոտ, աչքի մեկը կույր մի մոլլա և լուռ առաջնորդեց դեպի խանի պալատը։ Բայց նրանց չտարան խանի մոտ։ Հանձնարարեցին սպասել ընդունարանում։

— Մեծ խանը բաղնիք է գնացել,— անտարբեր ասաց սենեկապետը,— սպասեցեք։

Սպասեցին։

Սակայն այդ նույն պահին Միհրալի խանը սուրճ էր խմում իր վեզիրների, նայիբների ու պարսիկ մյուս երևելիների հետ։ Երկար ժամանակ ոչ ոք չէր խոսում։ Վերջապես հագենալով սուրճից, խանը հարցրեց.

— Ի՞նչ պատասխան տանք հայերին։

Մեծ վեզիրը հազաց ու մորուքը բռնելով պատասխանեց.

— Պետք է հայերին գրգռել, որ կռվեն թուրքերի դեմ։

— Մինչև ե՞րբ,— հետաքրքրվեց մեկը։

— Մինչև կոտորվեն գլխովի,— վեզիրի փոխարեն պատասխանեց խանը ու կլոր փորը բռնելով՝ քրքջաց։— Թուրքը կառնի Երևանը։ Թավրիզից օգնության հույս մի՛ ունեցեք,— շարունակեց նա՝ խմորի գունդ հիշեցնող ձեռքով շոյելով սուրճից տաքացած փորը։— Ադրուլլահին կասենք, թե հայերը չթողեցին, որ մենք մեր բերդի ու քաղաքի բանալիները բերենք քեզ։ Կասենք՝ հայերը մեզ փակեցին բերդում։ Հույսերը

ուռուսների շուտափույթ գալու վրա դնելով՝ զենքի դիմեցին ձեր դեմ։ Կասե՞նք, կասե՛նք։ Ո՞վ է մեզ արգելողը։ Երդվում եմ Մուհամմեդի Ճոր ծիրանի գոտիով, որ թուրքերը մեր մի մազին անգամ չեն դիպչի, երդվո՛ւմ եմ...

— Ինշալլա՜հ,— բացականչեցին այս ու այն կողմից։— Իմաստունն ես մտածում, մե՛ծ խան։

— Հրաման տվեք թոփչիներին ու թվանքչիներին, որ կգլխատի նա, ով մի գնդակ կամ մի թոփ կարձակի թուրքերի վրա։ Հրամանը տար, պատվելի մոլլա Ասադ, հասցրու բոլոր յուզբաշիներին, զորքին։ Թող Աբդուլլահն իմանա, որ մենք նրա ու սուլթանի դեմ քեն չունենք։

— Այդ գյավուր ծերունիներին չպիտի բաց թողնել, խա՛ն։ Նրանց պատանդ պահիր, պետք կգան։— Խորհուրդ տվեց մեծ վեզիրը։

Իզուր էին երևանցիներն սպասում բերդ ուղարկած իրենց պատգամավորներին։ Նրանք բանտարկված էին։

ԱՅՍՊԵՍ ԷՐ ԱՅՐՎՈՒՄ ՄԵՐ ՏՈՒՆԸ

Սկսվեց այն, ինչին սպասում էր գահերեց զորավար Դավիթ-Բեկը։

Դեռ թուրքերի Հայաստան խուժելուց առաջ նա կռահում էր, թե որ ուղղություններով Աբդուլլահ փաշան կսկսի իր արշավանքը։ Այդ էր ուղղությունները պատճառը, որ նա իր բանակը բաժանել էր երկու մասի։ Մի մասը Հովհաննես-Ավան իշխանի գլխավորությամբ տեղավորել էր Ջրաբերդի, Գյուլիստանի և Վարանդայի սղնախներում, մյուս մասը, Մխիթար սպարապետի հրամանի տակ դնելով՝ պահում էր Մեծ Սյունիքի հարավում և արևմտյան լեռնանցքներում։ Այդ տեղերից էր նա սպասում թուրքական բանակների հարձակմանը։

Եվ իրոք, եղավ այնպես, ինչպես կռահել էր Դավիթ-Բեկը։

Վրաստան մտած օսմանյան բանակը հեշտությամբ նվաճեց Թիֆլիսը, դա ամուր հենարան դարձրեց իր թիկունքում և, Քուռ ափով առաջանալով, պաշարեց Գանձակ քաղաքը։ Գանձակի հայերն ու ադրբեջանցիները մելիք Հովսեփի և Քյալբալա բեկի գլխավորությամբ սկսեցին քաջությամբ պաշտպանվել։ Սակայն նրանք կատարեցին մի մեծ, ճակատագրական սխալ։ Հավատալով Գանձակում եղած պարսիկ կայազորի հրամանատարների երդումներին, նրանք իրենց քաղաքից չհեռացրին այդ օտար վտանգը։ Ընդհակառակը, պարսից կայազորին ևս մասնակից արին քաղաքի պաշտպանությանը։ Պարսիկները դրժեցին իրենց երդումը

և պաշարման երրորդ օրը, գիշերը գաղտնաբար բաց արին Գանձակի դռները...

Օսմանյան բանակը գրավեց Գանձակը ևս։ Թուրքերը բնակչությանը սրի մատնեցին, իսկ մելիք Հովսեփին ու Քյալբալա բեկին իրար կապելով՝ այրեցին քաղաքի հրապարակում։

Օսմանյան հրամանատարությունն շտապում էր իր բանակները հասցնել Բաքու, որպեսզի այդ քաղաքը գրավելով՝ ճեղքի ռուսաց զորքերի ճակատը, ծովափին երկարած ռուսաց բանակը բաժանի երկու մասի և հարկադրի նրանց հեռանալ Կասպից ծովի արևմտյան և հարավարևմտյան ափերին գրված հողերից։

Սակայն այդ նպատակն իրագործելու համար Թուրքերն ամենից առաջ պետք է ճնշեին Սյունիքի և Արցախի հայոց զինվորությունը։ Դրա համար նրանք սկսեցին ամրացնել Գանձակը՝ դա հուսալի հենակետ դարձնելու հայերի դեմ։ Ռազմական մի այլ խորամանկության էլ դիմեց Աբդուլլահ փաշան։

Որպեսզի Դավիթ-Բեկը հնարավորություն չունենա միավորել իր ուժերը և որպեսզի նրան ցած բերի իր լեռներից ու ջախջախի բաց դաշտում, նա Մակվի ու Բայազետի վրայով մի խոշոր բանակ ուղղեց դեպի Նախիջևան, դրանով մեծ սպառնալիք ստեղծելով Սյունիքի թիկունքում։

Բայց դյուրին բան չէր Դավիթ-Բեկին մոլորեցնելը։ Լավ իմանալով, որ բաց դաշտում ինքը դժվար թե կարողանա հաղթահարել օսմանյան տասնապատիկ առավել ուժերը, Դավիթ-Բեկը չիջավ լեռներից։ Նա վճռել էր թշնամուն քաշել դեպի Արցախի ու Սյունիքի կիրճերը և տեղական կռիվներում ոչնչացնել նրան։

Դրանում համոզված էր հայոց գահերեց զորավարը։

Այդ էր պատճառը, որ նա չգնաց Երևանին օգնության։ Պաշարված թողնելով Երևանը, Աբդուլլահ փաշան իր յոթանասուն հազարանոց զորքը կնետեր նրա վրա, և պարտությունն անխուսափելի կլիներ։

Իսկ Երևանը պաշարված էր։ Որքան երկար տևի այդ պաշարումը, որքան շատ Թուրքեր ընկնեն նրա տակ, այնքան կհեշտանա լեռնցիների վիճակը։

Արյունով էր բացվում Արարատյան աշխարհի առավոտը։

Արյան ու հրդեհների մեջ խեղդվող այդ աշխարհի ցավերին անտարբեր՝ արևը բարձրանում էր սարերի կապույտ եզերքից ու սկսում իր տիեզերական ճեմը՝ հավասարապես լուսավորելով Արագածի ալեոր

գլուխը, Թուրքական բանակներին, ծխացող դիակներով լեցուն գյուղերը։

Գարնանային շողերով վետվետում էր Արարատյան դաշտի կանաչը, փայլատակում էին լեռնային լճերը, գետերն անփույթ փրփրում էին քարաժայռերի կրծքերին։ Մռայլ էր ծերունի Մասիսը, որ ամպի քողով ծածկել էր կնճիռներով պատած դեմքը՝ մեկ անգամ ևս չտեսնելու այն արյունն ու հրդեհները, որ տեսել էր երկու հազար տարի շարունակ՝ շատ անգամ վկա լինելով Հայոց աշխարհի ավերմանը...

Հրազդանի ափին՝ այգիներում ու կանաչ արտերի մեջ խլրտում էր Թուրքաց բանակը։

Արևը դեռ չէր հասել բանակին, երբ եգիպտական սրագագաթ վրանից դուրս եկան ենիչերիների գնդերի հրամանատարներ Ղոչ Ալի և Յալղուզ Հասան փաշաները։ Արաբ ստրուկները մոտ բերին նրանց նժույգները, կռացան, որպեսզի փաշաները ոտքները դնեն՞ իրենց մեջքներին ու բարձրանան թամբերի վրա։ Փաշաները ձի հեծան ու երեք հարյուր հրացանակիր ենիչերիների ուղեկցությամբ դիմեցին դեպի Հրազդանի աջ ափի բարձունքները։ Տեղ հասնելով, նրանք սկսեցին դիտել քարափների վրա ամրացած քաղաքը։

Նրանց զարմանք պատճառեց ոչ միայն խորունկ կիրճը, որի մեջ գալարվում էր պղտոր Հրազդանը, այլև այն վիթխարի պատնեշն ու ջրային արգելակը, որ հայերը ստեղծել էին քաղաքի հյուսիսային մասում՝ փոսի մեջ։

— Պինդ ընկույզ է,— առաջինը խոսեց Ղոչ Ալի փաշան։— Պողպատե ատամներ են պետք, որ փշրենք։

— Երևանցիները կռվող հայեր են,— ավելացրեց Յալղուզ Հասան փաշան։— Հապա նայիր, թե ոնց են ծանակում մեզ անհավատները...

— Շատ եմ տեսել։ Վերջը ոտքերս էին լիզում՝ գութ հայցելով։

Բազմաթիվ բերդեր ու քաղաքներ գրված փաշաների համար դժվար չէր իսկույն և ճշգրիտ որոշելու Երևանի ամրության թույլ տեղերը։ Նրանք հետզհետե իջան Հրազդանի քարափից ու մի փոքր առաջ գնացին գետի հոսանքն ի վեր։ Խոսեցին, խորհեցին կարճ ու վճռեցին գրոհն սկսել գետափից՝ Զորագյուղ թաղի ուղղությամբ։ Վերադարձան բանակ ու հրամայեցին ոտքի հանել իրենց զորքը։

Բանակում փողեր հնչեցին։ Ենիչերիների հետևակ զորքը գումարվեց գունդ առ գունդ։ Ճերմակ ձիու վրա նրանց այցի եկավ սերասկյար Աբդուլլահ փաշան։ Զորքը բարձրագոչ ողջունեց նրան։ Սափրված, կեռ բեղերով ու կոր, հաստատուն քթով Աբդուլլահի դեմքն անշարժ էր, ասես անկենդան։ Նոսր հոնքերի տակ կուտակված աչքերը միայն բավական

էին, որ նա ահուսարսափ ազդեր դիմացինին։ Մի պահ քննախույզ նայելով ենիչերիներին, նա խոսեց զնգուն, շփոթեցնող ձայնով։

— Հարուստ է գյավուր էրմենիների Երևանը, ո՜վ Մուհամմեդի զավակներ։ Մարգարեի անհաղթ ձեռքն է մեզ առաջնորդել՝ վայելելու այդ հարստությունը։ Վերցրեք Երևանը, և երեք օր ձերը կլինի նա... Ձերն է էրմենիների կայքը, ձերն են նրանց կանայք ու աղջիկները։ Առեք ու վայելեցեք։

Ենիչերիների տասներկու հազարանոց հետևակ զորաբանակն իջավ դեպի գետը։ Նրանք փայտե երկար ելարաններ էին տանում՝ Զորագյուղի քարափը բարձրանալու համար։ Բանակի սև զանգվածը հասավ գետափ, մի պահ կանգ առավ և գունդուկծիկ մտավ գետը։ Ափ դուրս գալով՝ թուրքերն իրենց թրերը դրին ատամների տակ ու կազմվելով, դասավորվելով՝ միակամ մագլցեցին թեք լանջն ի վեր։ Բանակատեղից սկսեցին ոմբակոծել քաղաքը։

Ճակատամարտն սկսվեց...

Բլրի վրա կանգնած երկու փաշաները հետևում էին իրենց զորքերի գրոհին։ Կարմիր վարտիքներով ենիչերիների մի հինգհարյուրյակ հասավ ուղղահայաց իջնող ժայռի ստորոտը։ Երկու տասնյակ փայտե ելարան դեմ արին ժայռին ու նետվեցին աստիճանների վրա։ Վերևից խփեցին քարերով, գնդակ արձակեցին։

Ելարանները ջարդվում էին մեկը մյուսի ետևից։ Ենիչերիները խորտակվելով տապալվում էին։ Բայց ջարդված ելարանների տեղ նորերն էին գնում, և նորից ենիչերիներն ահագին աղմուկ-աղաղակով նետվում էին նրանց վրա։

Այս անգամ վերևից բոցավառվող բարձեր ու լաթեր նետեցին գրոհողների վրա։ Բարձերը պատռվեցին, ու կրակի հեղեղ թափվեց գետափին խլրտացող զորքի գլխին։

— Շեյթա՜ն, շեյթա՜ն...— ատամները կրճտացրեց Ղոչ Ալի փաշան։

Գետափը ծածկվեց դիակներով։ Թուրքերը թնդանոթներից հարվածեցին քարափի տներին, որտեղից պաշարվածները կրակի ու քարի տարափ էին տեղում գրոհողների վրա։ Ռումբերն սկսեցին ավերել այդ տները։ Բայց դա ավելի վնասեց գրոհողներին։ Հենց քարափի պոնկին կառուցած տները խորտակվեցին գետափի երկայնքը ծածկող թուրքերի վրա...

— Հեռացրե՛ք կրակը,— գագազեցին փաշաները։

Աջ կողմից, ուր ժայռապատն ավելի ցածր էր ու գետափի լանջն ավելի դյուրամատչելի, գրոհողների մի մեծ խումբ հասավ ժայռի ստորոտը։ Նրանց առջևից վազում էր ճերմակ շապիկով, գլխաբաց մի մոլլա։

Նրա բերանում բռնած թուրը փայլում էր արևից։ Վերևից խփում էին քարերով, հրազենով, բայց մոլլան ելարանի վրայով արագ հասավ ժայռի գլուխն ու թուրը ճոճեց։ Նրան հասան էլի մի տասնյակ խիզախներ։

— Մաշալլա՜հ...— գոհունակությունից ինքնամոռաց գոչեցին փաշաները։

Սակայն ուրախության ժպիտն իսկույն թռավ նրանց դեմքերից։ Մոլլային ու նրա ընկերներին սրախողխող արին։ Ելարանը բոցավառվեց ու ջախջախվելով՝ ընկավ ներքև։

— Շեյթա՜ն,— բաճկոնը պատռեց Յալղուզ Հասանը։— Այս ի՜նչ տեսակ քաղաք է, ալլա՜հ, ինչպե՞ս պայթեցնենք նրա ժայռերը...

Բլրի վրա տնկվեց մոայլ-մթնած սերասկյար Աբդուլլահը։ Ձինավառ էր, գլխին հովանի էր անում սուլթանական դրոշը. ձեռքի մականը թնթնակի դողում էր.

— Խրվե՞լ եք,— առանց փաշաներին նայելու՝ հարցրեց հեգնանքով։

— Հրաման տուր, սերասկյա՛ր, ինքս սուլթանի ծառաներին տանեմ գրոհի,— ծաղիկների վրա շոքելով՝ խնդրեց Ղոչ Ալի փաշան։

Աբդուլլահը, շիկավուն հոնքը բարձրացնելով, ատամները սեղմած նայեց գետի վերին հոսանքի կողմը։ Այնտեղ ժայռերն ավելի բարձր էին, ու անհնարին էր մագլցել նրանց վրայով։

— Հրամա՛ն տուր, տե՛ր սերասկյար... աղաչո՛ւմ եմ, գնդերը ձեռքից գնում են,— նորից աղերսեց Ղոչ Ալին։

Փաշան ձեռքը թափ տվեց։ Ղոչ Ալին թուրը մերկացրեց ու վազեց ներքև։ Ձինվորները հազիվ մոտեցրին նրա ձին՝ գետն անցնելու համար։ Ղոչ Ալուն հետևեցին երեք հազար անկյուրիացի զրահակիր քարագնացներ։ Նրանք երկար նիզակներ ունեին, պողպատե զրահներ ու ցցավոր սաղավարտներ։

Քարագնացներն անցան գետն ու ծանր-ծանր մագլցեցին դեպի վեր։ Առջևից գնում էր Ղոչ-Ալին։ Յուրաքանչյուր երեք զինվոր մի ելարան էր տանում հետը։ Ղոչ Ալի փաշան նետվեց դեպի ելարաններից մեկը, սակայն վերևից գցած քարը կպավ նրա ուսին, ու նա չոքեց... Երկու ասկյար նրան քարշ տվին դեպի գետը։

Անկյուրիացի քարագնացները նույնպես չկարողացան հասնել բարձունքին։ Նրանց ելարանները ջախջախվում էին, զրահավոր ասկյարները ծանր թրմփոցով ընկնում էին քարերի վրա։ Այնինչ պաշարվածներն անվերջ հարվածում էին վերևից։

Քարի ծանր հարվածից ուշքի եկած Ղոչ Ալի փաշան կանգնել էր սերասկյարի առջև և գլուխը խոնարհած՝ նրա խոսքին էր սպասում։ Սակայն սերասկյարն ասես համրացել էր։

Գետի ձախ ափը սևացել էր դիակներից։ Գրոհողներն անհույս նետվում էին նոր բերած ելարանների վրա, սակայն ապարդյուն։ Նրանց աչքն արդեն վախեցել էր, իսկ վերևից թափվող գնդակների, քարերի ու բոցավառ իրերի հոսանքն աչք բաց անելու ժամանակ չէր տալիս։

Աբդուլլահ փաշան հրամայեց գրոհը դադարեցնել։

Մութը վրա էր ընկնում։

Մովսեսը նստել էր կիսով չափ փլված մի տան մոտ։ Կառչիկ Հովհաննեսի կինը փաթաթում էր նրա ձախ ուսի վերքը։ Գլխաբաց, խելագար հայացքով ու արյունակոխ աչքերով մոլլայի հարվածը վրիպեց, թուրը միայն սահեց Մովսեսի ուսի վրայով՝ կտրելով փափուկ մսի մի բարակ շերտ, թե չէ հիմա նա էլ, ուրիշների պես, պառկած կլիներ եկեղեցու բակում։ Մոլլայի երկրորդ հարվածը գուցե իշներ հենց գլխին, եթե Կառչիկ Հովհաննեսի նվիրած թրով ինքը ժամանակին չխառներ նրա փորը...

— Ցավո՞ւմ է, եղբա՛յր,— հարցրեց Հովհաննեսի կինը։

— Ուրիշ տեղս է ցավում, քույրի՛կ,— մեղմ պատասխանեց Մովսեսը։— Այս վերքը թեթև է, անբուժելին կա։— Աչքերը փակեց ու հիշեց Արուսյակին։ Որքա՜ն բախտավոր կլիներ, եթե իր վերքն Արուսյակը դարմաներ, իր Արուսյակը...

Երկու դեռատի աղջիկ փարշերով ջուր բերին։ Մովսեսը խմեց ագահ։ Մարավից թոքերն այրվում էին։ Ամբողջ օրը դիրքերից դուրս չէր եկել։ Հովհաննեսի դստրիկը պատի տակ լցնում էր հրացանը ու տալիս նրան։ Ինքը նշան էր բռնում, կրակում։ Ամեն կրակից հետո գետափին թավալվում էր մի թուրք։ Սակայն սիրտը չէր հովանում. թվում էր, թե այն թուրքին չխփեց, որն սպանեց իր Արուսյակին։

Մովսեսը վեր կացավ, նույնիսկ շարժեց վիրավոր ձեռքը։ Երկու քայլ առաջ գնաց։ Ոտքերի տակ ընկած տեսավ սպիտակ շապիկով մոլլային։ Մովսեսը երկար նայեց նրա բաց աչքերին։ Դա առաջին մարդն էր, որին սրախողխող արեց ինքը։ Մա՞րդ, թե թշնամի։ Սրով չգար իրենց վրա, չէր սատկի։ Եվ ինչո՞ւ են գալիս։ Ի՞նչ են ուզում այս թուրքերը։ Մի՞թե մի ուրիշ գործով չեն կարող վաստակել իրենց հացը։

Մովսեսն անցավ դիակի վրայով։ Շուրջը ցնծություն էր։ Կանայք լավաշների մեջ փաթաթած եփած հավի մսի պատառներ, թթու դրած վարունգ ու բոխի էին մատուցում տղամարդկանց։ Ինչքա՜ն էլ համարձակ են դարձել այս կանայք, խոսում են, քնքուշ նայում նույնիսկ անծանոթներին։

* * *

Սև նժույգը ֆոֆոացնում էր ռունգները, որոնց միջից ատես կրակ էր ժայթքում։ Նրա կրծքակալ զրահը, պողպատե դիմակալն ու ոսկեզօծ ծոպերով քմփուշի եզրերն սպիտակել էին քրտինքից։ Ձին բարկությամբ ձգում էր սանձն ու դժվարությամբ քայլում խաղողի թմբերի վրայով։

Քյոփուրլու Աբդուլլահ փաշան աչքերը կկոցած նայում էր շուրջը փռված բանակին։ Վրանների առջև կերակուր էին եփում։ Ուղտերը գլուխները դարձրել էին դեպի արևելք ու որոճում էին՝ կանաչ շրթունքները չպպացնելով։ Վրանների առջև բազմաթիվ աղջիկներ ու կանայք կային, որոնք փաշային տեսնելով՝ փռվում էին գետնին։ Հայ գերուհիներ էին դրանք, որոնցով լիքն էր բանակը։ Բանակատեղից գարշելի հոտ էր գալիս։

Փաշան մռայլ էր։ Առաջին օրվա գրոհը վերջացավ խայտառակ անհաջողությամբ։ Տասը հազարանոց բանակ թողեց Կարբիի պատերի տակ, այդ անհնազանդ գյուղաքաղաքը պաշարված պահելու համար։ Լոռու կողմերից լուր չունի։ Առա՞ն Լոռին, թե՞ այնտեղ էլ մաշվում է օսմանյան սուրը, և հոսում մարգարեի սիրուն իրենց կյանքը նվիրած հավատացյալների արյունը, ինչպես այսօր հոսում էր Երևանի ժայռերի տակ։

Եթե Լոռին, Կարբին ու Երևանի մի օրվա գրոհը այդքան զոհեր խլեցին իրենից, ապա ինչքա՜ն զոհեր կտանեն Սյունիքը, Արցախը։ Ինչո՞վ կընկճի Դավիթ-Բեկի ուժը, ռուսներին ինչպես քշի Բաքվից ու Դերբենդից, մտնի Պարսկաստանի խորքերը...

Հիմա թշնամիները սուլթանի առաջ շարախոսում են իր դեմ։ Բոլորն էլ կարծում էին, թե ինքն իր վիթխարի բանակով հեշտությամբ կանցնի Շիրակը, Լոռին ու Արարատյան աշխարհը և, Երևանում հանգստանալուց հետո՝ կկտրի Սյունիքն ու Արցախը, կմոտենա ռուսական բանակատեղին։ Բայց երկար ժամանակ էր, ինչ դուրս էր եկել էրզրումից և դեռ գտնվում էր Երևանի պատերի տակ։ Այսօրվա դիմադրությունից երևաց, որ հայերն իրենց դեռ երկար կստիպեն մնալ այս անիծված հողում։ Որտեղի՞ց են այդ ֆահլա-հայերը դիմադրություն սովորել։ Մի՞թե հայը զենք բանացնել գիտի։

* * *

Պաշարված երևանցիները վերջապես գլխի ընկան, որ Միհրալի խանը բերդում փակված է պահում մելիք Աղամալյան Աղավելին և մյուս

ծերունի պատվիրակներին։ Առանց այն էլ Միհրալու դեմ ատելությամբ լցված քաղաքացիների կատաղությանը սահման չկար։

— Նստել է մեր սրտի մեջ օձը ու կծում է,— ասում էին նրանք։

— Մեղքը մերն է,— շարանում է Կառչիկը։— Պիտի բերդն առնեինք ու խանին շանսատակ անեինք։

Հայհոյեցին խանին, գազազեցին նրա դեմ։ Սակայն արդեն ուշ էր։ Երևանի բերդն ամուր էր, և հազիվ թե նրանք կարողանային որևէ բան անել։ Ստիպված լռեցին։ Ուժերը պետք է խնայել։

Հյուսն վարպետները մի քարանետ մեքենա էին շինել։ Հիսուն հոգով անճոռնի այդ հսկային անիվների վրա գլորեցին մինչև Զորագյուղ ու կանգնեցրին քարափին։ Նրա մոտ հինգ-վեց փթանոց քարեր կուտակեցին։

Գիշերը հորդ անձրև եկավ։ Դա ուրախացրեց երևանցիներին։ Առավոտյան, երբ լույսի շողերն ընկան կիրճ, նկատեցին, որ Հրազդանն այնպես է վարարել, որ այլևս ոչ մի մարդ, ոչ մի ընտիր նժույգ սիրտ չէր անի մտնել նրա պղտոր ալիքների մեջ։

Թերևս դա էր պատճառը, որ այդ օրը թուրքերը չվերսկսեցին գրոհը։ Միայն հարվածում էին թնդանոթներից։ Ռումբերը դիպչում էին տներին, խորտակում պատերը։ Ամեն ռումբից զոհեր էին լինում։ Բայց չնկատելու էին տալիս։ Նույնիսկ մայրերը կական չէին անում իրենց մեռած մանուկների վրա ու նրանց թաղում էին լուռ արտասվելով։

Երեք օր հետո թուրքերը փոքր լաստեր մոտեցրին գետին։ Յուրաքանչյուր լաստի վրա տեղավորեցին տասը-տասներկու զինվոր ու հրեցին ջուրը։

Քարանետից արձակեցին առաջին քարը։ Սա աղեղ կապեց ձորի վրա ու ընկավ գետը՝ լաստերից մի քիչ վերև։ Նոր քար դրին մեքենայի «թաթին»։ Այս անգամ արդեն քարը մի լաստ խորտակեց։ Դա ոգևորեց պաշարվածներին։ Մի նոր զենք էլ ունեին թշնամու դեմ։

Սակայն լաստերը շատ էին։ Նրանց վրա տեղավորված թուրքերն արագ անցնում էին գետն ու լաստերից ցատկելով ափ, հրացաններից կրակ տեղում պաշարվածների վրա։ Հրացանակիրները մնացին ափին։ Նոր լաստերով եկան նիզակակիր գնդեր, դրանք վահաններով փակեցին իրենց գլուխներն ու զարմանալի արագությամբ բարձրացան լանջն ի վեր։

Թուրքերն այդ օրը Երևանի վրա նետեցին երեսուն հազար ասկյար։ Բացի հեծելազորից, մյուս բոլոր գնդերը լաստերով անցնում էին գետը, գրոհում քաղաքի վրա...

Սերասկյար Աբդուլլահ փաշան կանգնել էր քարափին։ Նրա ոտքերի տակ ճմրթվել էին խաղողի դալար ընձյուղները, արցունքի պես ծորում

էր նրանց կանաչ հյութը։ Փաշան անհանգիստ էր։ Թեև այդ օրը գրոհի էր նետել իր ընտիր հետևազորը, բայց և հասկանում էր, որ զառիվերով բարձրացող ամբոխը հազիվ թե կարողանա հասնել քաղաքի բարձունքներին։ Սակայն միաժամանակ զարմանում էր հայերի հանդգնության վրա, որոնք ցցվում էին դիրքերից ու քարերի և գնդակների տարափ թափում ներքև...

Գետափին ավելանում էին սպանվածների կույտերը։ Փաշան կատաղությունից կրծում էր շրթունքները։ Ժայռեղեն պատնեշն անմատչելի էր։ Բայց շուտով փաշան նկատեց, որ աջից ու ձախից մոտեցող ժայռերը մի տեղ հեռանում էին իրարից՝ մի նեղ, բայց դյուրին մատչելի անցք թողնելով դեպի քաղաք։ Ինչպե՞ս է, որ մինչև հիմա իրենք չեն նկատել այդ թույլ տեղը։ Հեռադիտակը վերցնելով համհարզից՝ նա երկար նայեց այդ նեղ ցածրությանը, ապա դարձավ մոտը կանգնած սիփահիներից մեկին։

— Տեսնո՞ւմ ես այն նեղուցը,— ձեռքը քաղաքի կողմը մեկնելով՝ հարցրեց նա։— Թռիր Յուլղուզ Հասան փաշայի մոտ։ Հայհոյիր այդ անխելքին ու հրամայիր բոլոր ուժերով գրոհել այդ նեղ անցքի ուղղությամբ։ Շտապի՛ր։

Սիփահին գնաց...

Սակայն առանց սերասկյարի հրամանի էլ, Յալղուզ Հասան փաշան արդեն նկատել էր դեպի քաղաք տանող անցքն ու իր գնդերից երկուսը տարավ այնտեղ։

Ահա նրանք հասան բարձունքին։ Թռիչքը խիզախ էր ու գեղեցիկ։ Արևի տակ կայծկլտացին անհամար թրեր։ Աբդուլլահն ուրախությունից քրքջաց։ Մի այդպիսի թռիչք էլ, մի խիզախում էլ, ու հայերի պաշտպանության մեջ ճեղքվածք կգոյանա։

Այդ պահին քաղաքի կողմից մի զարհուրելի դղրդոց լսվեց։ Յալղուզ Հասան փաշայի գրոհողների մեջ ինչ-որ դիվային բան կատարվեց։ Թանձր ծուխ բարձրացավ այնտեղ ու սողաց քարոտ լանջն ի վար։ Գրոհողների ետևի շարքերում իրարանցում ընկավ։ Խուճապից զինվորները կոխկրտեցին միմյանց, գունդ-գունդ գլորվեցին դեպի գետը։ Լաստավորները նահանջը խափանելու համար լաստերը հրեցին գետի խորքը։ Բայց և այնպես հարյուրներով մարդիկ թափվեցին գետը և, մաքառելով ալիքների հետ՝ իրենց գցեցին լաստերի վրա։

Ծուխը ցրվեց, ու Աբդուլլահը պարզ տեսավ, թե ինչպես է բանակը նետվում դեպի գետը։ Սարսափելի խուճապ էր։ Փաշան անզորությունից պատառոտեց ոսկեկար շապիկի օձիքը։ Բայց նրա կատաղությունը սարսափի փոխվեց, երբ տեսավ, թե ինչպես հայերը դուրս թռան արահետի

անցքից ու աղաղակով թափվեցին խուճապից իրար կոխկրտող, գետը թափվող Յալղուզ Հասանի գնդերի վրա։

Գետափին մի սոսկալի կոտորած սկսվեց։

— Շեյթա՜ն, շեյթա՜ն...— միայն անզոր գոռում էր Աբդուլլահ փաշան։

Գետը սևացավ ջուրը նետվողների խմբերից։ Շատերին գետը խեղդում էր ջրապտույտների մեջ։ Մարդիկ բռնում էին իրար ոտքերից, մազերից, զգեստներից ու աշխատում իրենց մի կերպ գցել աջ ափը։

Յալղուզ Հասան փաշան թրով սրան-նրան հարվածելով՝ կարողացավ ոմանց ետ տալ ու դիմադրության փորձ անել, սակայն խուճապահար փախչող մյուս խմբերը նրան առան իրենց ալիքի մեջ ու նետեցին գետը...

Աբդուլլահի գլխի վրայով գնդակներ թռան։ Պարտությունից գունատ ու ամոթահար նրա թիկնապահները սիրտ արին զգուշացնելու.

— Այստեղ վտանգավոր է, փաշա՛, հեռացիր այստեղից։

Բայց փաշան բանի տեղ չդրեց նրանց խորհուրդը։ Սակայն, երբ մի գնդակ պոկեց նրա գլխարկի սիրամարգի փետուրը, նա շրջվեց ու հազիվ զսպեց իրեն, որ չփախչի դեպի իր վրանը...

Գետի ձախ ափին այլևս ոչ մի զինվոր չէր մնացել։

Թաց զգեստներով ու անգդակ Յալղուզ Հասան փաշան փովել էր Աբդուլլահի ոտքերի տակ և բռունցքներով ծեծում էր գլուխը... Դրագիր մոլլան սերասկյարի ականջի տակ կռավում էր.

— Տասնմեկ հազար սպանված ու գետակուր եղած։ Երեք փաշա, հինգ հարյուր սիփահի տասնապետ...

— Կտրի՛ր կռավոցդ,— փրփրեց սերասկյարը.— Կնիկնե՛ր, վախկոտնե՛ր։

Մութը վրա հասավ։

Հայերը հավաքեցին թուրքերի թողած զենքերը, դիակներից պոկեցին նրանց թրերը, վառոդամանները և ահագին ավարով վերադարձան քաղաք։

Գլխավոր հրամանատար Հովհաննես Հունդիբեկյանը նստել էր ժայռի տակ մի չեչաքարի ու կավե գավաթից մածուն էր ուտում, շուտ-շուտ սրբելով դեմքի քրտինքը։ Նրա առջև խոնարհ կանգնել էր Դավիթ Միրզեջանյանն ու զարմանքով նայում էր պարոնտերին, որը հացի պատառները կուլ էր տալիս առանց ծամելու։

— Բոլո՞րին ես կերակրել,— հարցրեց պարոնտերը։

— Բոլորին,— պատասխանեց Դավիթը։

— Գինի տուր Կառչիկ Հովհաննեսի մարդկանց, յուրաքանչյուրին մի փարչ։ Իմ ամբարներից բերել տուր։ Իմ գինին լավն է։ Մյուսների համար վերցրու գինեվաճառներից, անվճար։ Ասա՝ ես եմ հրամայել։ Չհնազանդվողներին կկախեմ։ Այդպես էլ ասա, հասկացա՞ր։ Գնա։

Կառչիկ Հովհաննեսը եկավ հոգնած, բայց խանդավառ։ Գլխավոր հրամանատարը փաթաթվեց նրան։ Բռունցքը տնկեց թուրքերի կողմը։

— Կերա՞ր, Աբդուլլա՛հ փաշա,— գոռաց ոգևորությունից։— Դեռ սպասի՞ր, գլխիդ շատ վայ կտաս։— Համբուրեց Կառչիկի բեղերը։— Ա՛յ, գործ արիր, հա՞։ Եվ ինչպե՞ս մտածեցիր տակառներով վառոդ վառել ու նետել շների թանձր տեղը։

— Կարծեցին, թե աստվածային պատիժ է։ Այնպես էին ճղում,— հռհռաց Կառչիկը։

Ավարի զենքերը բաժանեցին գյուղերից եկածներին։

Ճակատամարտը վերսկսվեց երեք օր հետո։ Այս անգամ հայերը թուրքերին թույլ չտվին մոտենալ գետին։ Դիրք էին բռնել գետի ձախ ափին, քարերի արանքում, փոսերի մեջ։ Քսան քարանետ մեքենաներից անվերջ խփում էին գետին։ Թուրքերը ոչ մի լաստ չէին կարողանում մոտեցնել նրան։

Նրանք քաշվեցին իրենց ճամբարն ու սկսեցին կրակել միայն թընդանոթներից։ Փաշաների խորհուրդը որոշեց քսան հազարանոց մի բանակ ուղարկել Երևանի թիկունքը։ Երեք փաշայի գլխավորությամբ այդ բանակը Եղվարդի կողմերով իջավ Զանգվի կիրճն ու լաստերով անցավ գետը։ Քանաքեռի կողմից իջան Երևանի փոսը, որտեղ ահագին հաստությամբ ջուր էր կուտակվել։ Լճացած ջուրը հոտում էր, մածակների անհամար երամներ էին պտտվում նրանց վրա։ Ջրային ավազանից դենը արհեստական պատնեշներ էին կապել երևանցիները։ Ոչ մի կերպ հնարավոր չէր հաղթահարել այդ արգելքները։

Մնում էր սեղմ օղակի մեջ պաշարած պահել քաղաքը, բնակիչներին մատնել սովամահության։

Սերասկյարը ճեպագնաց սուրհանդակ ուղարկեց Բայազետ։ Մի շաբաթ հետո Բայազետից եկավ այնտեղ գտնվող երեսունհինգհազարանոց բանակը, որը ճամբար էր դրել Բագրևանդում և սպասում էր Երևանի անկմանը, որպեսզի միանալով Աբդուլլահին՝ Թավրիզի վրայով գնա դեպի ռուսաց սահմանները։

Փաշան ձիու վրա դիմավորեց օգնության եկած զորքին։

— Երևանը ձեզ եմ հանձնում, քաջեր,— ասաց նա։— Գնացեք առեք, և ինչպես կամենում եք՝ վարվեցեք հայերի այդ հարուստ քաղաքի հետ։

Բայազետցիները, որոնք վաղուց էին լսել Երևանի հարստությունների, հայ աղջիկների ու կանանց գեղեցկության համբավը, մոլեգնեցին։ Մեկ օր ու մեկ գիշեր հանգստանալուց հետո երեք հարյուր լաստի վրա նրանք մտան գետը։ Բայց ոչ մի լաստ չհասավ մյուս ափին։ Գետի ջրերը թանձրացան արյունից։ Անհամար դիակներ կուտակվեցին կամուրջի մոտ գտնվող ջրապտույտի մեջ։

Թուրքերը ետ քաշվեցին։

Սերասկյարը ռազմական խորհուրդ հրավիրեց։ Փաշաները հուսալքված էին։ Բայազետի բանակի ջարդն անչափ ուրախացրել էր Յալղուզ Հասան փաշային։ Նա սուր ծաղրեց նրանց հրամանատարին, որ գոռոզացել էր, թե ինքը մի գրոհով կառնի Երևանը։

— Անհնարին է անցնել Հրազդանը,— ասաց նա։— Կկոտորվենք մինչև վերջին մարդը։ Սուլթանից օգնական զորք պիտի խնդրել։

— Բայց միթե քի՞չ են մեր զորքերը,— շարացավ Աբդուլլահ փաշան։

— Հայերի տեղն ամուր է, մե՛ր գլխի տեր։ Միայն սովի մատնելով կարող ենք ընկճել նրանց։

Վճռեցին նամակ գրել սուլթանին։ Կամ օգնական զորք ուղարկիր, կամ թույլ տուր Երևանը պաշարած թողնել ու շարժվել դեպի Սյունիք ու Թավրիզ։ Գրոհները դադարեցին։ Բանակն սկսեց խժռել ճանապարհին հափշտակած ավարը։ Աղտեղությամբ ապականեցին բանակատեղին։ Պարենն սպառվելու վրա էր։ Շրջակա գյուղերն արդեն ավերված էին։ Ցորենի վերջին հատիկն անգամ խլել էին շինականներից։ Կերը վերջանում էր։

Զորքի մեջ սկսվեց խուլ տրտնջոց։ Երեսուներեք օր էր, ինչ նստել էին բաց երկնքի տակ։ Ձիերը նիհարեցին։ Արաքսի շամբուտներից ու Հրազդանի ճահճուտներից մոծակների ամպեր էին ելնում, փաթաթվում վրաններին։ Զինվորներն սկսեցին տենդել մոծակների խայթոցներից, հոտած ջրերից լուծ ընկան։

Մայիսի երկրորդ շաբաթից անտանելի շոգ սկսվեց։ Զիմացան, թե ե՞րբ անցավ գարունը, ինչպես եկավ ամառն իր շոգերով, մոծակներով, օձերով ու իշամեղուների անհամար պարսերով։

Աբդուլլահ փաշան մի գունդ ուղարկեց էջմիածին՝ դրամ, պարեն ու ձիերի համար կեր պահանջելով։ Բայց մինչև նրա ուղարկած մարդիկ կհասնեին էջմիածին, սուլթանից հրաման եկավ՝ անվթար պահել էջմիածինը, ոչ մի վնաս չհասցնել նրան։ Փաշան սաստիկ զարմացավ այդ

տարօրինակ հրամանի վրա։ Նա իր խորհրդական, ուրացած հայ Մուրադ-Ասլանին հարցրեց.

— Ո՞վ կարող է համոզած լինել կենդանի մարդկանց մեջ վեհագույն սուլթանին, որ նա հրամայի ինձ՝ ձեռք չտալ էջմիածնին։

— Սեղբոս հայը, ամենագերազանց փաշա,— իսկույն պատասխանեց ուրացողը։— Այդ գարշելի գյավուրը սուլթանի սիրելին է։ Ես վախենում եմ, որ նա սուլթանին համոզի ձեռք չտալ նաև Երևանին։ Օ՜... փողով ուժեղ ու ճարպիկ է գյավուր Սեղբոսը։

— Գրոցի ծո՜ցը,— շարացավ փաշան։— Իսկ ես ինչո՞վ կերակրեմ զորքը, ո՞րտեղից ոռճիկ տամ նրան։

— Երևանն առ, մե՛ծ բարերար,— խորհուրդ տվեց Մուրադ-Ասլանը։— Երևանում եղած պարենը մի տարի լիուլի կհերիքի քո զորքին։

— Դիմադրում են, քաղաքն ամուր է։

— Գանձակից բերել տուր Սարը Մուստաֆա և Ռեջեբ փաշաների զորքերը, ի՛մ գլխի տեր։ Թող գան Ղազախի ու Գոկչայի վրայով։ Մի՛ հուսահատվիր, երևելի այր, նոր զորքեր բերել տուր։ Քաղաքը փոսի կողմից դյուրամատչելի է, ամրությունները հզոր չեն։ Շտապիր, պայծառափա՛յլ տեր, թե չէ Դավիթ-Բեկը կգա Սյունիքի ու Արցախի զորքերով, ու ծանր կլինի բանը...

«Սողո՛ւն, աղվե՛ս, օ՛ձ»,— իր հավատարիմ խորհրդականի աչքերին նայելով՝ ուրախ, բայց և միաժամանակ ատելությամբ մտածեց փաշան։ Նա չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ մարդ անսանձ ատելություն կունենա դեպի իր ազգը։ Լինում էին պահեր, որ նա ցանկանում էր թքել ուրացողի երեսին, իր թուրը խրել նրա սիրտը, բայց զսպում էր իրեն։ Մուսուլմաններից ոչ ոք այնքան ծառայություններ չի մատուցել իրեն, որքան այս հավատափոխ հայը։ Ո՞ր որսորդը կսպանի այն շանը, որն իր հոտառությամբ անսխալ գտնում է եղնիկի քնած ձագը և տիվ ու գիշեր հսկում իր տիրոջը, որ ոչ մի վտանգ չմոտենա նրան։

Աբդուլլահ փաշան վճռեց կատարել նրա խորհուրդը։

* * *

Այդ ծանր օրերին, երբ Երևանը քաջաբար ետ էր մղում թուրքական բանակների գրոհները, Սյունիքում ու Արցախում նոր դեպքեր կատարվեցին։ Բայազետից Տղմուտ գետի հոսանքով առաջացող օսմանյան բանակն անցավ Արաքսն ու, կարճ ճակատամարտում փախուստի մատնելով պարսիկ Ասլամազ Ղուլի խանի հապճեպ հավաքած զորքը՝ մտավ Նախիջևան։

Սակայն նրանք սիրտ չարին դուրս գալ Նախիջևանից ու մոտենալ Սյունյաց լեռներին։ Հայոց գնդերը բռնել էին Արաքսի կիրճն ու Շահապունիքի լեռնանցքը և սպառնալի ուժ էին օսմանցիների համար։ Նախիջևանի բանակը մնաց քաղաքում, սպասեց Երևանի անկմանը, որ լեզեզի սերասկյարի մեծ բանակի հետ պատերազմական գործողություններ սկսի բուն Սյունիքի դեմ։

Ահա այդ օրերին, երբ Դավիթ-Բեկն ամրացնում էր Արաքսի ու Շահապունիքի անցքերը, Արցախից նրան լուր բերին, թե օսմանյան մի խոշոր բանակ, Պարսավի դաշտից, Կառկառ գետի ուղղությամբ մոտենում էր Արցախի Վարանդա գավառի սահմաններին։

— Ի՞նչ են մտածում ձեր զորապետները,— լրաբեր հարյուրապետին լսելուց հետո հարցրեց Դավիթ-Բեկը։

— Սպասում ենք քո հրամանին, տեր Դավիթ-Բեկ,— պատասխանեց հարյուրապետը։— Հրաման տուր Ջրաբերդի ու Գյուլիստանի զորքին՝ գնալ Վարանդայի մելիք Բաղրին օգնության։ Բաղրն Ավետարանոցի սղնախում երկու հազար զինվոր ունի միայն, իսկ թուրքերի բանակը տասնհինգ հազարից ավելի է։ Նրան առաջնորդում են Շահին, Սալահ և Ալի փաշաները։

— Ո՞ւմ խնդրանքն ես հայտնում ինձ,— հարցրեց Բեկը։

— Հովհաննես-Ավան իշխանի։ Նույնպես և վեհափառի խնդրանքը, տեր Դավիթ-Բեկ։

Այս զրույցը տեղի էր ունենում Սիսականի լեռնանցքում, ուր շարունակում էր բանակած մնալ Դավիթ-Բեկի զորքի մի մասը։ Զորապետներից միայն Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսն էին Բեկի մոտ, մյուսները գնդերի հետ ամրացնում էին կիրճի բերանը։ Լրաբերն անհամբեր սպասում էր Բեկի խոսքին։ Այնինչ սա ուշացնում էր ասելիքը։

— Ճշմարիտը չեն մտածում Հովհաննես-Ավան իշխանն ու Եսայի կաթողիկոսը, հարյուրապե՛տ,— վերջապես դառնալով լրաբերին՝ խոսեց Բեկը։— Չպետք է Գյուլիստանի ու Ջրաբերդի սղնախներից թեկուզ մի զինվոր հանել։ Դրանք են, որ զսպած են պահում Գանձակում նստած թուրքական բանակին։ Մի՞թե դժվար է հասկանալ, որ Կառկառ ուղարկելով՝ թուրքերը մտադիր են իր ամրություններից հանել Ավան իշխանին ու պատերազմել բաց դաշտում։ Իսկ դա պարտություն է նշանակում։

— Ապա ի՞նչ ես հրամայում, տե՛ր Դավիթ-Բեկ,— տարակուսեց լրաբերը։

— Մելիք Բաղրն իր ուժերով թող կասեցնի թշնամուն։

— Երկու հազար հոգո՞վ, տասնհինգ հազարի դե՞մ,— զարմացավ հարյուրապետը։

— Ջրի կաթիլ կա, որ ծայռ է ճեղքում,— մեղմ ասաց Բեկը և այլևս չխոսեց։

Վարանդացի հարյուրապետին զարմացնում էր այն հանդարտությունը, որ ուներ հայոց գահերեց զորավարը։ Ահա նա նստել է կանաչների վրա ու անվրդով նայում է իրիկնամուտի բաց կապտավուն գույներով ողողված Արարատյան դաշտին, Մասիսներին, որոնց ձյունե գագաթներն ավելի են պարզվում վերջալույսի ցոլքերից...

Բայց Բեկը չէր մոռացել լրաբերին։ Նա վեր կացավ ու հարցրեց.

— Քանի՞ օրում հասար այստեղ։

— Երեք օրում, տե՛ր Դավիթ-Բեկ։— Պատասխանեց հարյուրապետը։— Գիշեր ու ցերեկ ձիավարել եմ։

— Տեսնում եմ, ձիդ ուժասպառ է, ինքդ էլ տառապած։ Հիմա գնա, հրեն իմ վրանը, հանգստացիր այնտեղ։

Գիշերը Դավիթ-Բեկը մտավ սպարապետի վրանը։

— Վերցրու Զագեձորի ձիավոր գունդը և մեկնիր Վայոց ձորի կողմերը։

— Վտա՞նգ կա,— շտապ կոշիկները հագնելով՝ հարցրեց սպարապետը։

— Չլսեցի՞ր մելիք Բաղրի լրաբերին։

— Բայց վտանգը Վայոց ձորից չէ,— զարմացավ սպարապետը։— Թուրքերը Վարանդայի վրա են գալիս։

— Դու մեկնիր դեպի Վայոց ձոր։ Կես ճանապարհին թեքվիր աջ ու Քաշաթաղքի անտառներով կախվիր Վարանդայի վրա։ Խաբիր, մոլորեցրու թուրքերին։ Հասկանո՞ւմ ես։ Թող Վարանդայում մելիք Բաղրից բացի մյուսները չիմանան, որ դու Մխիթարն ես։ Զգեստափոխվիր, մորուքդ խուզիր, բան չկա, էլի կգա։ Թող թուրքերը չկարծեն, թե մեր ուժը սակավ է, և իրենց ամեն մի ոհմակի հայոց զորքերի սպարապետը պետք է դիմավորի։

Երբ սպարապետը դուրս էր գալիս վրանից, Բեկը զգուշացրեց.

— Թշնամու բանակը քաշիր Կառկառի ձորերը և նոր սկսիր գործդ։ Այնպես արա, որ հաղթությունը լիակատար լինի, որ հենց առաջին հանդիպումից թուրքերի մեջ ահուսարսափ ընկնի։ Այդ բանակը նրանք ուղարկել են մեր ուժերը հետախուզելու, փորձելու համար։ Գնա, հաջողություն եմ մաղթում։

Բուն բանակից աննկատելի անջատելով Զագեձորի հեծյալ գունդը, Մխիթարը լուսաբացից առաջ հեռացավ Սիսականի լեռնանցքից ու բրդ-

նեց Վայոց ձոր տանող ճանապարհը։ Զագեձորի գնդի վրանները չպոկեցին, այն տպավորությունը թողնելով, որ բուն բանակը շարունակում է ամբողջովին մնալ Սիսականի լեռնանցքում։

Մի՞թե քիչ էին բանակին մոտեմոտ անող թուրքական լրտեսները։

Երեք օր հետո սպարապետի այրուձին արդեն Վարանդայի գավառումն էր։ Շոշ գյուղի մոտ նրան ընդառաջ եկած մելիք Բաղրի զինվորները զարմացած հարցրին.

— Ի՞նչ մարդիկ եք։

— Զորք ենք, ինչպես տեսնում եք,— պատասխանեց հասարակ հարյուրապետի զգեստներով Մխիթարը։— Գալիս ենք Գյառնո կողմերից մելիք Բաղրին հյուր։ Մեզ տարեք նրա բանակատեղին։

Մելիք Բաղրը բանակ էր դրել Կառկառի սղնախում և սպասում էր Դավիթ-Բեկի օգնությանը։ Նրա զարմանքը շատ եղավ, երբ իր վրանը մտած, անբեղ ու անմորուք հարյուրապետը թեթև ողջույնից հետո ասաց.

— Թող ոչ ոք չիմանա, որ ես Մխիթար սպարապետն եմ, տե՛ր Բաղր։ Լսո՞ւմ ես, ոչ ոք։ Ես Գյառնո տերերից եմ ու փախչելով թուրքերից՝ իմ գնդի հետ եկել եմ քո գավառում ապաստան որոնելու։ Այդպես։ Իսկ այժմ ուտելիքի հոգս քաշիր և կանչիր քո հարյուրապետներին։

Մելիք Բաղրն ուրախությունից կորցրեց իրեն։ Սակայն նրա համար առեղծված մնաց, թե ինչու է սպարապետը թաքցնում իր ով լինելը։

Ընթրեցին հապճեպ։ Մելիք Բաղրի հարյուրապետները զարմանում էին գյառնեցի հարյուրապետի ախորժակի վրա։ Երբ գինի հրամցրին, հյուրը հրաժարվեց խմելուց։ Նույնն արին նաև նրա հետ եկած Եսայի ու Թովմա հարյուրապետները։ Երբ ընթրիքը վերջացել էր, ու հարյուրապետները դուրս էին եկել մելիքի վրանից, Մխիթարն ասաց.

— Բաց դաշտում չենք բռնվի թշնամու հետ, տե՛ր մելիք։ Մենք քիչ ենք, նա՝ շատ, կհաղթահարի։ Բայց և Կարկառի ձորը մտած թուրքերից ոչ ոք չպիտի գլուխն ազատի, ոչ ոք։ Հասկանո՞ւմ ես, սա մեր առաջին հանդիպումն է մեր նոր թշնամու հետ։ Պետք է ծուղակ ստեղծել, խորամանկությամբ խեղդել նրան։

— Ուրեմն ի՞նչ ես առաջարկում, տե՛ր սպարապետ,— խորհրդավոր հարցրեց մելիքը։

— Գնանք թուրքերին հպատակվելու։ Աղուհացով, քահանաներով, ավետարանով, նաև նվերներով ծանրագին։

— Ի՞նչ ես ասում,— զարմացավ Բաղրը։— Ինչպե՞ս, ինչո՞ւ։

— Կամաց։— Զգուշացրեց Մխիթարը։— Փաշաներին կշողոքորթենք, կխաբենք։ Հարգ ու պատշաճով կբերենք մեր գյուղերը, կտեղավորենք տներում ու կզինաթափենք անսպասելի։

— Վտանգավորն ես առաջարկում, տե՛ր Մխիթար։

— Հաջողությանը չեմ կասկածում։ Իսկ եթե չընդունեն մեր հպատակությունը, կկռվենք։ Միայն վստա՞հ ես քո մարդկանց վրա։ Մատնիչներ չկա՞ն ձերոնց մեջ։

— Մատնիչնե՞ր,— գլուխն օրորեց Բաղրը։— Մատնիչ. երբեք։ Դու լավ չես ճանաչում վարանդացիներին, տե՛ր սպարապետ։ Նրանք մեռնելն ավելի են գերադասում, քան թշնամուն հպատակվելը։

— Ուրեմն ինքս կբացատրեմ քո հարյուրապետների ու տանուտերի անելիքը։

Գիշերը զորքին բացատրեցին, թե ինչ միջոցով են վճռել խորտակել թուրքական բանակը։ Մելիքը, գյառնեցի հարյուրապետն ու գյուղերի տանուտերերը քահանաների հետ կգնան թուրքերին դիմավորելու՝ հպատակվելու մտադրությամբ։ Ապա թուրքերին կտեղավորեն գյուղերում, յուրաքանչյուր տան երկու-երեք հոգի տալով և գիշերը, ընդհանուր ազդանշանով, ամեն տուն կզինաթափի իր հյուրերին։

Այս առաջարկը թեև սաստիկ տարօրինակ թվաց վարանդացիներին, բայց խելքի մոտ գտան։

— Մի տարակուսեք, եղբայրնե՛ր,— ասաց ծպտված սպարապետը։— Ես ինքս էլ կգնամ թուրքերին դիմավորելու։ Աստծո կամեցողությամբ եթե հաջողվի մեր մտածածը՝ լավ, հակառակ դեպքում՝ նորից ստիպված կլինենք կռվելու։ Այսպես թե այնպես կռիվն անխուսափելի է, ինչո՞ւ չփորձել դյուրինը։

— Փորձենք, տե՛ր հարյուրապետ, համաձայն ենք,— ասացին վարանդացիները։

Զորքը բաժանեցին գյուղերի վրա։ Սյունեցիներին նույնպես ցրեցին իրար մոտ գտնվող Շոշ, Սարիշեն, Ավետարանոց, Սղնախ և սրանց գրեթե կից գյուղերում։ Հրամայվեց զենքերը ծածուկ պահել, զգուշացնել նաև կանանց ու պատանիներին, թուրքերին հյուրասիրելու պատշաճ պատրաստություն տեսնել, ինչպես և հարմար օթևաններ առանձնացնել նրանց համար։

Ստեղծվեց մի տագնապալի ու լարված վիճակ։ Փորձությունը վտանգավոր էր։ Սակայն միևնույն էր, պետք է կռվեին։ Գուցե խորամանկելով ավելի դյուրացնեն իրենց տունը մտած աղետը կասեցնելը։

* * *

Հաջորդ օրը, երբ արդեն զորքը ցրվել էր գյուղերում, Մխիթարը մելիք Բաղրի, Եսայու, Թովմայի ու տասներկու ծերունիների հետ, քա-

հանաներով, խաչով-խաչվառով դուրս եկավ Շոշ գյուղից ու շտապ մեկնեց դեպի օսմանյան բանակը, որ անարգել, բայց և զգուշությամբ բարձրանում էր Կառկառ գետն ի վեր։ Նրանք հետևերը տանում էին նաև հապճեպ հավաքած թանկագին նվերներ, աղուհաց, հինավուրց Ղևոնդիկ վանքից բերած դողդոջ մի վարդապետ ու մի ավետարան։

Մռայլ ու ամպամած եղանակ էր։ Քիրս լեռան վրա ձյուն էր նստել։ Կառկառի ձորում գիշերը եկած կարկուտը սպիտակ շապիկ էր հագցրել նորելուկ կանաչին։ Ցուրտ էր, որ թեև հազվադեպ, բայց և այնպես անսպասելի լինում էր այդ կողմերի լեռներում։

Հայ պատվիրակների խումբը գետափին, Արքայական այգիներ կոչված վայրում, հանդիպեցին Թուրքական բանակին։ Սա գալիս էր գունդուկծիկ, զգուշությամբ ու տագնապով։ Կարկուտը հասել էր սրանց։ Ասկյարները թրջված էին մինչև վերջին թելը, ձիերը սսկվել էին, ականջները կախել։ Հայերը սպիտակ դրոշ պարզեցին։ Թուրքաց բանակից մի քանի ձիավոր պոկվեցին և, երկար նիզակները հորիզոնական բռնած՝ առաջացան դեպի ծերունիները։

Աղուհացը ձեռքին Մխիթարը շոքեց թաց գետնին ու բարձրագոչ ասաց.

— Խաղաղ պատգամավորություն ենք, երևելի այրեր։ Եկել ենք մեր հոժար կամքով հպատակվելու աշխարհների տիրակալ սուլթանին, որի գալստյանն էինք սպասում։ Բարի եղեք մեզ տանել ձեր փաշայի մոտ։

Նրա ձայնն այնպես անկեղծ էր, խոսքն այնպես համոզիչ, որ թուրքերը, մի պահ խորհրդակցելով միմյանց հետ, շրջապատեցին նրանց ու տարան դեպի բանակը։

Շահին, Սալահ և Ալի փաշաները հետիոտն կանգնած էին կարկուտից սպիտակած նեղ տափարակում։ Հայերը հասան նրանց ու միասին շոքեցին։ Վարդապետը, ավետարանը առաջ պարզելով՝ ծերունական ձայնով աղաղակեց.

— Մեր գլխի ու մեր սրտի վրա եք եկել, ո՜վ փաշաներ։ Ընդունեցեք մեր աղուհացը, մեր հպատակությունը, և մենք պատրաստ ենք ծառայելու ձեզ այժմ և հավիտյան։ Մենք արյուն թափելու միտք չունենք և ահա մեծով ու փոքրով եկել ենք համբուրելու ձեր ոտքն ու հպատակվելու ձեզ։

Շահին փաշան, որ մյուս երկու փաշաներից ավելի տարիքովն էր, հարցրեց.

— Իսկ ո՞ւր է ձեր զորքը, ո՞ւր են ձեր հարյուրապետները, մելիքները։

— Ահա բոլորս քո առջև,— այս անգամ պատասխանեց Մխիթար սպարապետը։— Մենք ենք Վարանդայի տերերը։ Մենք զորք չունենք։ Մենք խաղաղ շինականներ ենք, երևելի փաշաներ։ Ահա աղուհացով եկել ենք ձեր ոտքը։ Հպատակվում ենք ամբողջ գավառով։

— Իսկ որտե՞ղ են Դավիթ-Բեկը, Մխիթար փաշան, Հովհաննես-Ավան իշխանը, նրանց զորքը,— նորից հետաքրքրվեց Շահին փաշան։

— Աստված ծանր անեծքի տակ դնի նրանց։— զարմանալի անկեղծությամբ բացականչեց Մխիթարը։— Նրանք հեռու են մեր գավառից։ Մենք նրանց հետ վեճի մեջ ենք։ Նրանց իշխանությունը չենք ճանաչում, որովհետև նրանք կործանիչ ճանապարհ են բռնել ու չեն զանազանում լավը վատից։ Մենք զորք չունենք, տե՛ր փաշաներ։ Մենք պատրաստ ենք ձեզ ընդունելու իբրև բարեկամներ, կերակրելու, պահելու ձեզ, հարկ տալու սուլթանին, միայն թե դուք քաղցր աչքով նայեք մեզ։

Մյուս ծերունիները ևս սկսեցին արտասվախառն խոսքերով երդվել, որ իրենք երբեք թշնամի չեն լինի սուլթանին, որ կռիվ ու արյուն չեն ուզում և ահա կամովի եկել են հպատակվելու փաշաներին։

Սպարապետը աչքի տակով նայում էր թուրքական զորքին։ Թրջված, հոգնած ու մրսած զորքը հանգստի էր կարոտ։ Ձիերը տառապած էին։ Քիրսի ձյուներից փչող քամին սարսռեցնում էր մարդկանց։ «Համենայն դեպս, եթե սրանք մեզ չհավատան, կկռվենք»,— մտածում էր նա շոշաֆեպս, եթե սրանք մեզ չհավատան, կկռվենք»,— մտածում էր նա շոշաֆելով լայնափեշ կապայի տակ թաքցրած դաշույնն ու կարճափող ատրճանակը։

Շահին փաշան դարձավ Մխիթարին։

— Ինչո՞վ երաշխավոր լինեմ, որ դուք անկեղծ եք։

— Նրանով, որ երդումով ու աղուհացով ահա եկել ենք քո ոտը, փաշա՜։

— Իսկ եթե ես ձեզ հենց հիմա կոտորե՞լ տամ,— ձեռքը սրի դաստակին դնելով՝ հարցրեց փաշան։

— Ոչինչ չես շահի,— աներկյուղ պատասխանեց Մխիթարը։— Եթե դու մեզ կոտորես կամ ձերբակալես, ապա մեր գավառի ժողովուրդը, որ մեզ հույսով ու խաղաղությամբ ուղարկել է ձեր ոտքը, կհեռանա խակույն, միայն ավերակ ու ամայի տներ թողնելով ձեզ։ Ապա մեր վիճակը տեսնելով՝ ժողովուրդը ատելությամբ կլցվի ձեր դեմ, մեզ փոքր ի շատե կամակից մելիքները, որոնք ևս մտադիր են առանց կռվի հպատակվելու ձեզ, կկորցնեն ձեր նկատմամբ ունեցած հավատը, կմիանան Դավիթ-Բեկին, և դա ձեզ համար կորստաբեր կլինի։ Մի՛ մոռացեք, որ դժվար է ծունկի բերել մեր լեռնաշխարհը։ Իսկ եթե դուք մեզ բարի աչքով նայեք,

ապա մյուս գավառներին օրինակ կլինի դա, և մելիքները Դավիթ-Բեկին լքելով՝ սիրահոժար կգան ձեզ հպատակվելու։

Շահին փաշան ծամծմում էր բեղերի ծայրերը։ Լուռ էին մյուս երկու փաշաները ևս։ Մխիթարը դժվարանում էր կռահել՝ հավատացի՞ն իրեն, թե՞ ոչ։ Աչքի տակով նայում էր նռան թփուտներով ծածկված ձորին։ Եթե փաշաները փորձեն ձերբակալել իրեն, կկրակի նրանց վրա ու կընկնի ձորը...

— Մտածենք,— վերջապես ասաց Շահին փաշան։— Սպասեք մեր հրամանին։

Նա շուտ եկավ ու գնաց Ալի ու Սալահ փաշաների հետ։ Նրանց համար վրան տնկեցին գետափին։ Բանակը կծկվեց խարույկների շուրջը։ Սակայն մութն ընկնելու հետ նորից սկսվեց կարկտախառն անձրևը։ Խարույկները մարեցին։ Թրջվել, սարսռում էին նաև փաշաների վրանի մոտ մնացած հայ պատգամավորները։

— Սրանք մեզ կկոտորեն, տե՛ր Մխիթար, փախչենք,— սպարապետի ականջին շշնջաց Եսային։

— Մի՛ վռազի,— ասաց Մխիթարը։— Փախչելը դյուրին է։ Բայց ես համոզված եմ, որ կկատարվի ցանկալին։

Գիշերը թաց էր, կույր ու ցրտաշունչ։

Առավոտյան Շահին փաշան հայերին ասաց.

— Ընդունում ենք ձեր հպատակությունը, հայե՛ր։ Խոհեմ եք մտածել։ Դրանով դուք կփրկեք ձեր անձն ու ձեր ժողովրդին։ Այժմ մեզ առաջնորդեցեք դեպի ձեր գյուղերը։

Հայերն ուրախության աղաղակ բարձրացրին, նորից ու նորից երդվեցին ավետարանի վրա, համբուրեցին փաշաների ձեռքերը, բերած նվերները հանձնեցին նրանց ու նրանց առաջնորդեցին դեպի իրենց գյուղերը։ Մխիթարը բռնել էր Շահին փաշայի ձիու սանձը և հետիոտն գնալով՝ ամենածանր խոսքերով վատաբանում էր Դավիթ-Բեկին, Մխիթարին և մյուս հայերին, որոնք կործանիչ ճանապարհ են բռնել։

— Այժմ մենք բոլոր մելիքներին կհամոզենք, որ շտապ հեռանան Դավիթ-Բեկից ու գան՝ հպատակվելու ձեզ, ողորմա՛ծ փաշաներ,— ասում էր նա։— Ժողովուրդը չի սիրում Դավիթ-Բեկին, կռվել չի ցանկանում։ Մեր օրինակը խրախույս կլինի մյուսներին։ Կտեսնեն, որ դուք բարի կամքով ու աչքով եք նայում մեզ, կլքեն Դավիթ-Բեկին ու կգան ձեր ոտքը։

— Օգտակարն ես մտածում,— հավանություն էր տալիս Շահին փաշան։

Փաշաները գոհ էին, որ առանց արյուն հեղելու նվաճում են Վարանդան։ Արշավանքի սկզբում նրանք տագնապով էին նայում Վարանդայի լեռներին։ Արդյոք կկարողանա՞ն ընկճել հայերի դիմադրությունը, գրավել նրանց սղնախները։ Իսկ այժմ ահա հայերն իրենք իրենց ոտքով գալիս են եկել և իրենց գավառը հանձնում են կամովի։ Պետք է փոքր-ինչ շողոքորթել, սրանց միջոցով պառակտում գցել հայ զինվորության մեջ ու նվաճել ողջ երկիրը։

Մոտեցան Շոշ գյուղին։ Այնտեղից դուրս եկան բոլորը՝ մարդ, կին, մեծ ու փոքր։ Նրանք իրենց ձեռքներին սպիտակ լաթեր, աղուհաց, նույնիսկ վաղ գարնան ծաղիկներ ունեին։ Կանայք իրենց շալերը փռեցին փաշաների ոտքերի տակ։ Մի բարձրահասակ, ճերմակ մազերով կին ձեռքերը երկինք բարձրացրեց ու աղաղակեց սրտաբուխ.

— Բարի՜ն եկաք, փաշանե՛ր։ Մեզ համար ցանկալի հյուր եղեք, և մենք ձեզ խնամելով կպահենք մեր սրտերի ու գլուխների վրա։

Մտան գյուղ։ Գորշ երկինքը որոտաց։ Ամպրոպի արձագանքը հազարապատկվեց ձորերի մեջ ու փշրվեց դղրդոցով։ Քիրսի վրա կայծակ շողաց։

— Տեղավորեցեք իմ մարդկանց, հայե՛ր,— ձիուց իջնելով՝ հրամայեց Շահին փաշան։

Շուտով աղուհացով եկան նաև Շոշին հարևան Սղնախ, Արկաթալի, Հոնուտ, Քարինտակ գյուղերի տանուտերերը և հնազանդությամբ, խաչով, աղուհացով ներկայացան փաշաներին՝ նրանց զորքը տեղավորելու պատրաստակամությամբ։

Շեն ու մարդաշատ էին Վարանդայի գյուղերը։ Նրանք այնքան մոտ էին իրար, որ գրեթե կից էին։ Անհիշելի ժամանակներից Կառկառի բերրի հովտում բնակվող վարանդացի հայերը հարուստ տնտեսություններ ունեին։ Նրանք բամբակ ու խաղող էին մշակում, մետաքսի գործատներ ունեին և առևտուր էին անում հարևան աշխարհների հետ։ Վարանդացիներն ապրում էին բազմամարդ գերդաստաններով։ Նրանց տները երկհարկանի էին, քարաշեն, լայն բակերով, մեծ մասը պարսպապատ այգիների մեջ։

Մելիք Բաղրը օսմանյան զորքը բաժանեց գյուղերի վրա, փաշաների մոտ տանուտերերին պատվիրելով փառավորապես հյուրասիրել բոլորին, հանգիստ օթևաններ տալ և կերակրել նրանց ձիերը։ Երբ զորքը բաժանվել էր, մելիք Բաղրը և Մխիթարը փաշաներին հրավիրեցին Բաղրի ամարաթը, որ գտնվում էր Շոշ գյուղի կենտրոնում, մի բարձր բլրի վրա։

Մելիքի գերդաստանի անդամները ծանրագին նվերներով դիմավորեցին փաշաներին, նրանց ոտքերի տակ գորգեր փռեցին։ Մելիքի հարսներն ու աղջիկները տաք ջրով լվացին փաշաների գլուխներն ու ոտքերը։ Ամեն կերպ նրանք ջանում էին սիրաշահել փաշաներին։ Երբ սրանց փառավորապես բազմեցրել էին ճաշի սեղանի մոտ, մելիքի մանկամարդ աղջիկը արծաթե սինու մեջ երեք ողկույզ խաղող դրեց փաշաների առաջ։

— Տարվա այս ժամանակին խաղո՞ղ ունեք,— զարմացան փաշաները։

— Մեզանում ամեն բարիք կգտնվի, տե՛ր փաշաներ,— խոնարհ գլուխ տվեց մելիքի Բաղրը։— Մենք ունևոր մարդիկ ենք, մենք սուլթանին այնքան հարկ կտանք, որ չի տա մի ամբողջ վիլայեթ։ Վայելեցեք դստրիկիս ձեզ ընծայած խաղողը։

Փաշաները ողկույզները վերցրին ու զարմացան։ Ողկույզները ձուլված էին ոսկուց։ Այդօրինակ նվերը դուր եկավ փաշաներին։ Նրանք բավականությունից ժպտացին ու գովեցին հայերի հնարամտությունն ու առատաձեռնությունը։

Կերակուրներ մատուցեցին։ Մելիքն ու Մխիթարը ոտքի վրա ծառայում էին փաշաներին, առատորեն գինի խմելով։

Նույնը կատարվում էր նաև մյուս գյուղերում։ Հայերը հյուրասիրում էին թուրքերին, հաճելի անկողիններ պատրաստում նրանց համար, սիրաշահում մեծով ու փոքրով։ Այդ սիրալիրությունից, առատ նվերներից ու հյուրասիրությունից գոհացած թուրքերը բնավ չէին կասկածում, թե ինչ է սպասվում իրենց այդ գիշեր։ Կուշտ կերած ու նվերներով հագեցած՝ նրանք պառկեցին հայ կանանց գցած անկողիններում՝ երկարատև ճանապարհից, անձրևից ու կարկուտից տառապած իրենց մարմիններին հանգստություն տալու հույսով։

Գիշերը կիսվեց։ Մեկը մյուսի ետևից մարեցին գյուղերի ճրագները։ Հայ զինվորները անաղմուկ դուրս եկան իրենց թաքստոցներից և, պայմանավորված ազդանշաններով միմյանց իմաց տալով Մխիթարի հրամանը՝ սկսեցին զինաթափել թուրքերին...

Մթության մեջ երեք ստվեր անաղմուկ մտան մելիքի Բաղրի տան այն սենյակը, ուր քնած էին փաշաները։ Փոքր Գորգին երեսին խաչ հանեց ու մոտեցավ Շահին փաշայի անկողնուն։ Սա արթնացավ, դիմադրության փորձ արեց, բայց ընկավ Գորգու սրի հարվածից։

Մելիք Բաղրը բռնեց Ալի փաշայի կզակն ու դաշույնով կտրեց նրա գլուխը։ Մխիթարն արթնացրեց Սալահ փաշային։ Սա նստեց տեղը։ Այն հարսը, որ լվացել էր Սալահի ոտքերը, ճրագով մտավ սենյակ։ Լույսի

տակ փաշան նկատեց հատակին փռված դիակները և աղաղակեց զարհուրած։

— Հանդարտվի՛ր, Սալահ փաշա,— նրա բերանը փակեց Մխիթարը։— Ես վճռել եմ քեզ կենդանի հասցնել Դավիթ-Բեկին։ Աղաղակդ ապարդյուն է, քո բանակն այժմ զինաթափվում է այն բներում, որ դուք մտադիր էիք ավերակների կույտեր դարձնել։

Փաշային կապոտեցին։ Մելիքն ու Մխիթարը դուրս եկան։ Բակում իրար կապկպված էին փաշաների բազմաթիվ թիկնապահներն ու նոքարները։ Երկու զինվոր մոտեցրին Մխիթարի ու Բաղրի ձիերը։ Ձիու վրա Մխիթարը մերկացրեց սուրն ու թռավ դեպի գյուղամեջ։

Գյուղը խաղաղ էր, սսկված։ Եթե այդ պահին մի մոգական ուժ իր հզոր ձեռքով պոկեր Կառկառի հովտում եղած բոլոր գյուղերի տների ծածկերը, ապա նրա առջև կբացվեին հազարավոր այնպիսի պատկերներ, որոնք քիչ առաջ կատարվեցին մելիք Բաղրի տանը։

Ահա մի կին զարմանալի սառնասրտությամբ թոկով կապոտում է իր անապական անկողնում քնած թուրքի ձեռքերն ու ճչում.

— Արդա՜ն արի... Ձգայիք զավակիս մահին։

Ահա մի շինական պլոկում է ասկյարի զենքերը։

— Ինձ էի՞ր ուզում գերել։ Գերվիր ինքդ։

Ահա մի թուխերես պատանի արթնացնում է մի հաստամարմին տասնապետի.

— Վեր կաց, իմ գերին ես արդեն։

Ահա մի ենիչերի աղաղակելով փորձում է հանել դաշույնը։ Մեկ ուրիշը ձեռքերը թափահարելով բարձրացնում է վերև՝ գերի հանձնվում, անիծելով այն օրը, որ ասկյար դարձավ։ Եվ այսպես շարունակ, ամեն տեղ, ամեն տան...

Առավոտը բացվեց ամպերի ճեղքերից։ Տներից սկսեցին դուրս հանել գերիներին։ Տասնհինգ հազար գերված ասկյարներ հավաքեցին Շոշ գյուղը։

Մխիթարը ձիու վրա կանգնել էր կապկպած Սալահ փաշայի գլխավերևը, նայում էր գյուղերից բերած գերիներին։ Փաշան խոժոռ նայում էր գազազած ամբոխին, որ հավաքվել էր նրանց շուրջը։

— Եվրոպայի կեսը ոտնատակ եմ տվել, թագավորներ եմ շղթայել, քաղաքներ այրել, ժողովուրդներ գերել, բայց ձեզ նման խորամանկ կովող մարդկանց չեմ հանդիպել, հարյուրապե՛տ,— ասաց նա՝ Մխիթարին դիմելով։

— Բարի եղիր իմ իսկական անունը տալ, Սալա՛հ փաշա։ Ես Մխիթար սպարապետն եմ։

— Մի՞թե,— փաշայի աչքերը չռվեցին։

— Այո, իմացիր։ Այն, ինչ դու տեսնում ես, դեռ մեր գործի սկիզբն է։ Մեր լեռներում կսպառվեն Աբդուլլահ փաշայի բանակները։ Մեղադիր մի՛ լինի ինձ, փաշա, որ այս գիշեր կռվի այդ տեսակ միջոցի դիմեցի։ Ի՞նչ արած։ Դուք բազում եք՝ մորեխի պես և եկել եք մեզ վրա՝ մեր աշխարհը քարուքանդ անելու, մեզ կոտորելու։ Ստիպված ենք մենք էլ ձեզ խաբել։ Մենք մեղք չունենք, աստված է վկա։ Պիտի մեր տնից վանենք ձեզ, որ ապրենք։

— Իրավունք ունեք,— ծանր տնքաց գերի փաշան։— Բայց մի բան է զարմացնում ինձ։ Ինչո՞ւ դուք ընտրեցիք մեզ դիմադրելու ճանապարհը, չէ՞ որ դուք անզոր եք սուլթանի ուժի դեմ։ Իմ բանակը գերելով դուք դեռ չկտրեցիք օսմանյան աղեղի լարը, որից ահ ունեն շատ մեծ տերություններ։

— Կկտրենք, փաշա՛, մեզ վրա ուղղած ձեր աղեղի լարն էլ կկտրենք,— պատասխանեց Մխիթարը։— Երկու հազար տարի մեզ վրա եկած թշնամիները փորձում են սպառել մեզ, մեր ժողովրդի վերջը տալ, բայց սպառվում են իրենք։ Այդպես էին մտածում Բյուզանդիո տերերը, որ սակայն կորան իրենք։ Այդ էր փորձում Լենկ-Թեմուրը, Չինգիզ խանը, Ջհան շահը։ Բայց ինչպես տեսնում ես, մենք կանք, նրանք՝ ոչ։ Բռնությամբ ետ տալ չես կարող գետի ընթացքը, փաշա՛։ Ջուր ջանքեր են։ Մենք ձեզ ևս կվանենք մեր աշխարհից։

— Եթե հայերդ չլինեիք, մենք վաղուց Դարբանդն ու Բաքուն առել էինք ռուսներից,— ասաց փաշան։— Ինչևիցե, գովում եմ քո հնարամտությունը, Մխիթա՛ր փաշա։ Դու կանխեցիր մեր վճիռը։ Մենք պիտի ոչնչացնեինք այս գյուղերի բնակչությանը, ինչպիսի նվերներով էլ սիրաշահեիք, ինչպիսի սիրալիրությամբ էլ հյուր պահեիք մեզ։ Այո, կանեինք, երբ հրաման լիներ այստեղից հեռանալ դեպի ծովի ափերը։ Այս էր մեր վճիռը։ Միայն դուք ավելի շուտ գործեցիք, քան մենք։

Մխիթարն այլևս չխոսեց։ Վարանդայում մնաց երկու օր ևս։ Թուրքերից վերցրած զենքի մի մասը հանձնեց մելիք Բաղրին, մյուս մասը բեռնելով՝ նույնպես թուրքերից վերցրած հինգ հազար ձիուն, գերիներին քշելով, շտապ վերադարձավ Հալիձոր։

Այժմ նա կարող էր գնալ Երևանին օգնության։

* * *

Ծաղկած ծիրանիների տակով Կառչիկ Հովհաննեսը գնում էր, ավելի շուտ վազում էր դեպի սուրբ Սարգիս եկեղեցին։ Ջահակիր աշակերտը

հազիվ էր հասնում նրան։ Ջահի լույսն արնագույն էր դարձնում մայթերի սալաքարերն ու ծաղկած ծիրանիները։

Կառչիկը հասավ եկեղեցի, որտեղ սովորաբար հավաքվում էր ռազմական խորհուրդը։

— Է՛յ, ո՞վ կա այստեղ,— կանչեց նա՝ գլխարկը հանելով ու նրանով սրբելով քրտնած դեմքն ու գլուխը։

Մեր լուսարարը թոնթորալով դուրս եկավ անկյունում եղած քրջերի միջից։

— Կրա՞կ է, Հովհաննե՛ս եղբայր։

— Գտիր Գրիգոր վարդապետին, զորապետներին, շուտ։

Մերունին ընդունելով մտավ կողքի խուցը, որտեղ հենց նոր պառկել էին սուրհանդակ պատանիները։ Արթնացրեց նրանց ու աչքերը կպցրել էին սուրհանդակ պատանիները։ Արթնացրեց նրանց ու աչքերը կպցրել էին սուրհանդակ պատանիները։ Ապա ետ եկավ ու հորանջելով ասաց.

— Խաղաղվել են անօրենները, նույնիսկ թոփ չեն արձակում։

— Դարանել են, ծերո՛ւկ։ Ուժեր են բերել տալիս։— Ատամների արանքից պատասխանեց Կառչիկ Հովհաննեսը։

Զորապետներն ու Գրիգոր վարդապետը եկան, բարձրացան բեմ, ծալապատիկ նստոտեցին սալահատակին։ Մոմեր ու կերոններ վառեցին։ Պատի վրայից զարմացած նայում էր Աստվածամոր մեծադիր նկարը։ Սյան վրա օրորվում էր խաչված Քրիստոսը։ Մոմերի լույսն անդրադարձել էր բյուրեղապակյա ջահի մեջ ու թույլ բոցկլտում էր եկեղեցու խորհրդավոր կիսախավարում։

— Երեսուներեք օրվա պաշարման ժամանակ թուրքերի կեսը շանսատակ եղավ,— խոսեց Կառչիկ Հովհաննեսը, ու նրա աչքերը փայլատակեցին։— Հը՞, ի՞նչ կասեք, քի՞չ է։ Քիչ չէ։ Բայց մեզնից էլ ընկան հազար հոգուց ավելի, վիրավորներն էլ հետը։ Մենք էլի՛ կպաշտպանվենք, սակայն թուրքի երկար լռությունը բարի բան չի խոստանում։ Երևում է, որ փաշան օգնական զորքի է սպասում։

— Աստված էլ մեզ կօգնի, եղբայրնե՛ր,— ասաց Գրիգոր վարդապետը։

— Աստծո հույսը քիչ է,— ձեռքը թափ տվեց Կառչիկը։— Ասում եմ, մարդ ուղարկենք Դավիթ-Բեկի մոտ, թող գա օգնության։ Թող իմաց տա ռուսների թագավորին, որ մենք ամուր ենք պահում մեր քաղաքը, որ զորք ուղարկի։ Ի՞նչ կասեք, երևելի այրեր...

Հովհաննես պարոնտերը կոկորդը մաքրեց։

— Ռուսները հեռու են։ Բաքվից այստեղ երկար ճանապարհ է։

— Կդիմանանք, մինչև գան։ Երեսուներեք օր է դիմանում ենք։

— Թող ինքը՝ Դավիթ-Բեկը գա,— ասաց Դավիթ Միրզեջանյանը։

— Եկել էր, էլի՜...— գոչեց Կառչիկ Հովհաննեսը։— Ինչո՞ւ չլսեցիք նրան, նրա խորհուրդը։

— Սխալվեցի՜նք,— տնքաց վարդապետը։— Չլսեցինք բարին։ Այժմ Բեկն ինչո՞վ օգնության գա։ Նախիջևանում Թուրքն է, Գանձակում ևս։ Թուրքին թողնի իր տան շեմին ու գա՞։ Լինելու բան չէ։

— Գոնե մի բարի խորհուրդ կտա մեզ։

— Հիմա մարդ ուղարկե՞նք, թե չէ,— բարկացավ Կառչիկ Հովհաննեսը։— Երկար լեզու ծամելու ժամանակ չկա։ Հարցնում եմ՝ մարդ ուղարկե՞նք Սյունիք։ Մտածեցեք արագ, առանց ծամծմելու։ Վիճակներս ծանր է։

— Ուղարկենք,— համաձայնեց Հովհաննես պարոնտերը։— Լավ չարինք, որ չլսեցինք Բեկի խորհուրդը։ Խաբվեցինք խանին, անհեռատես կաթողիկոսին։ Մինչև ե՞րբ կարող ենք դիմանալ։ Թուրքը սովամահ կանի բոլորիս, եթե ուժով չկարողանա վերցնել մեր քաղաքը։ Գուցե Դավիթ-Բեկը կարողանա օգնել մեզ, որ ճեղքենք թուրքերի օղակն ու ժողովրդին հանենք քաղաքից։ Դա խելքի մոտ բան է։

Պարոնտերի ասածը Կառչիկի սրտովն էր։ Հասկանում էր, որ երկար դիմանալ չէին կարող։ Կընկնեն մինչև վերջին մարտիկը։ Հետո՞։ Այլևս ուշ էր զղջալ՝ Դավիթ-Բեկի առաջարկը մերժելու համար։ Հիմա պետք է ժողովրդին փրկելու ելք գտնել։ Այդ ելքը միայն քաղաքից հեռանալու մեջ էր տեսնում նա։

Ավագանին որոշեց մարդ ուղարկել Սյունիք՝ Դավիթ-Բեկի մոտ։ Ցրվեցին։

Խորհրդից վերադառնալիս՝ Կառչիկ Հովհաննեսը գնաց դեպի իր տունը։ Աշակերտներից մեկին ուղարկեց Մովսեսին գտնելու։ Փողոցներում մութ էր, պատերի տակ, դարպասների ետևներին, ծառերի արանքներում զինված խմբեր էին կանգնած։ Մի քանիսի հետ զրույցի բռնվեց։

Հասավ տուն. հոգնած էր, ոսկորները կոտրատվում էին։ Առաջին անգամ հիշեց, որ ինքն արդեն քառասուն տարեկան է։ Ե՞րբ այդքան շուտ անցան տարիները։

Մի ռումբ կպել էր իր տան վերևի հարկին ու փլցրել պատի կեսը։ Պատշգամբի գերաններից երկուսը կախվել էին, սյուները ծռվել։ Բակն ու այգին ամայի էին։ Ձմերուկի մարգերում եղինջ էր բուսել։ Պատատուկի աներես ոստայնը փաթաթվել էր վարդենուն ու նրան գետնին սեղմած՝ հյութասպառ էր անում։ Կառչիկը տնքաց։ Մտավ կիսավեր պատշգամբի տակ, կամարների արանքով մոտեցավ խոր նկուղի դռանը։

Տախտակների ճեղքից աղոտ լույս էր ծաթում գոլ օդի մեջ։ Կառչիկը մտավ նկուղ։

Տատը մատները դրեց շրթունքներին։

— Սո՜ւս... Կամա՛ց, Հովհաննես, երեխաները քնած են։

Տատի մոտ նստել էին կինն ու դուստրը՝ տխուր, թառամած։

— Ո՞նց եք,— նրանց դիմեց Հովհաննեսը։

— Է՜... ջուրը մեզ տանի,— վսվսաց պառավը՝ խզված, արցունքից թացացած ձայնով։— Դու կրակի մեջ, մենք՝ այստեղ։ Աստծուն ենք ապավինել։

Պատի տակ, գորգի վրա քնած էին երեք որդիները։ Մեծի բերանը բաց էր, փոքրը թաթիկը դրել էր ականջի տակ։ Հայրը համբուրեց նրանց։ Ճրագի լույսից զավակները գունատ էին երևում։ Կարծես անշնչացած էին։ Հայրը սոսկաց ու, երեսին խաչ հանելով՝ ետ քաշվեց։

— Սրտապինդ կացեք,— ասաց՝ հառաչանքը հազիվ խեղդելով։— Երեխաներին լավ նայեցեք։

Մովսեսը եկավ։ Հովհաննեսը նրան դուրս տարավ ու բակում՝ թթենու տակ ասաց.

— Մեկնիր Սյունիք։ Քեզ կիջեցնենք մի ապահով տեղ։ Գնա, Դավիթ-Բեկին հայտնիր մեր խնդրանքը։ Թող գա ու մեզ հանի պաշարումից։ Զղջացել ենք, որ չլսեցինք նրան։ Կպատմես, ինչ տեսել ես քո աչքով։ Աստծո ստեղծածն ենք, ասա, մեզ մի՛ մատնիր կորստյան, ե՛կ։ Կճեղքենք պաշարումն ու, դուրս գալով՝ կմեկնենք Սյունիք։

Երկար խոսեցին։ Միրանի թաղից քսան երիտասարդ բերել տվին, որոնց լավ հայտնի էր իրենց թաղի ելքերը։ Մովսեսի հետ համբուրվելով՝ Կառչիկը նրան ճանապարհ դրեց։ Միրանիթաղցիները Մովսեսին տարան։

Կառչիկը խոր հոգոց հանեց։ Նայեց ամպամած երկնքին, շփեց ճակատը։ Պատատուկի խեղդված թփից մի վարդ պոկեց, հոտ քաշեց, բույր չզգաց, վարդը դեն նետեց ու, աշակերտներին ձայն տալով՝ գնաց դեպի դիրքերը։

Տխուր ու ծանր գիշեր էր։

* * *

Ստամբուլից օգնական զորք եկավ, զորքի հետ էր սուլթան Ահմեդի սաստիկ հրամանը՝ շտապ առնել Երևանն ու գնալ դեպի Կասպից ծովի ափերը, խանգարել ռուսների առաջխաղացումը դեպի Պարսից աշխարհի խորքերը։

Սուլթանը Քոթահիո փաշայի հրամանատարության տակ էր դրել քսանհինգ հազարանոց մի բանակ և ուղարկել Աբդուլլահին օգնության։ Քոթահիո փաշան երկար տարիներ ձիու վրա նստելուց՝ ծուռ ոտքերով, տակավին երիտասարդ թուրք էր։ Նրա նեղ, թաթարական աչքերի տակերը կապտած էին, հինայած հոնքերը շարժուն։ Անփույթ կանգնելով Աբդուլլահ փաշայի առջև, նա ասաց.

— Բարիքներ բաշխող սուլթանն ինձ հրամայել է գալ ու առնել գյավուր էրմենիների Երևանը։

Սերասկյարը խոցվեց նրա ամբարտավան կեցվածքից ու մանավանդ ինքնավստահությունից։ Նույնիսկ պատշաճին ողջույն չտվեց այդ բոի քոթահիացին։ Բայց Աբդուլլահը գիտեր նրա հանդգնության պատճառը։ Քոթահիո փաշան սուլթան Ահմեդի քեռորդին էր ու մեծ վեզիրի սիրելին։

— Որքա՞ն է զորքդ,— ստիպված դառնությունը կուլ տվեց սերասկյարը։

— Քսանհինգ հազար։

— Ես քեզ էլի այդքան ենիչերի կտամ։

— Ուրիշ մարդ ինձ չի հարկավոր,— քմծիծաղեց Քոթահիո փաշան։— Գյավուր էրմենիներն ի՞նչ են, որ քամու բերանը տանք մեր ճակատագրերի տեր սուլթանի զորքը։ Ինքս կառնեմ Երևանը։

Աբդուլլահը նույնիսկ ուրախացավ այդ գոռոզ ամբարտավանի ինքնավստահությունից։ «Թող քիթը փշրի Երևանի ժայռերին, հետո ես կիմանամ, թե ինչպես կխոսեմ այս երես առած ավանակի հետ»։

Նա համաձայնեց։ Խորհուրդ տվեց երկու օր դադար տալ զորքին ու ապա գրոհել Երևանի վրա։ Քոթահիո փաշան գնաց դեպի գետը՝ գրոհի մատույցներն ու քաղաքի ամրություններն անձամբ տեսնելու։

Հրազդանի ջրերն արդեն իջել էին։

Պաշարման քառասունյոթերորդ օրը, վաղ առավոտյան, թուրքերը վերսկսեցին գրոհը։ Թեև Աբդուլլահը քեն ուներ Քոթահիո փաշայի դեմ ու ցանկանում էր նրա պարտությունը, բայց և այնպես հրամայեց թընդանոթներից կրակ տեղալ քաղաքի վրա, և քոթահիացիներին որոշ օժանդակ զորամասեր հանձնեց։

Քոթահիո փաշան ձիու վրա առաջնորդեց իր քսանհինգ հազարանոց բանակը։ Լավ հանգստացած, կուշտ ու իրենց բազմության վրա վստահ քոթահիացիները թմբուկների զարկերով ու մոլլաների աղաղակներով անցան բարակացած գետն ու կիրճի երկարությամբ բռնելով գետի ձախ ափը՝ իրենց փաշայի ետևից նետվեցին դեպի ամրությունները։ Այս

անգամ յոթ հարյուր ելարան դեմ արին ժայռերին։ Թուրքերի մեծ մասը գրոհում էր գետից քաղաք տանող միակ արահետի ուղղությամբ...

Հայերն իրենց փոքրաթիվ ուժերը բաժանել էին չորս մասի։ Մի փոքրիկ գունդ հսկում էր քաղաքի հյուսիսային ամրությունները, որտեղ լճացած ջուրն արդեն նվազել էր։ Թեև թուրքերն այդ կողմից դեռևս սիրտ չէին անում հարձակվել, բայց և այնպես պետք է ապահովել թիկունքը։ Այդտեղ եղած կովողների հրամանատարներն էին Մարիամի որդի Անտոնը և Զագավանի տանուտեր Մովսեսը։

Երկրորդ զորախումբը՝ Պողոս Քիչիբեկյանի և Մկրտիչ ու Տղուն եղբայրների գլխավորությամբ պաշտպանում էին Երկերեսանու թաղի գեբայրների գլխավորությամբ պաշտպանում էին Երկերեսանու թաղի գետահայաց մատույցները։ Հովհաննես Հունդիբեկյանը երեք հազար կըտտահայաց մատույցները։ Հովհաննես Հունդիբեկյանը երեք հազար կըտրիճներով իջել էր գետափ ու դիրքեր գրավել հին կամուրջի և ջրաղացների արևմտքում, որտեղից թուրքերը մտադրվել էին անցնել գետն ու շրջանցելով հարավային բլուրները՝ թիկունքից մոտենալ Զորագյուղ թաղին։

Հետն ընդամենը երկու հազար մարդ վերցնելով՝ Կառչիկ Հովհաննեսը պետք է պաշտպաներ արահետի անցքը։ Նեղն ընկած զորամասերին օգնելու համար առանձնացրել էին հազար հինգ հարյուր նիզակակիրներ և, Գրիգոր վարդապետի հրամանատարության տակ դնելով՝ ուղարկել Խնկենուց թաղը, այնտեղից թուրքերի գրոհը խանգարելու համար։

Թուրքերի գրոհն սկսվեց ամբողջ ճակատով։ Գետափին չոքած հրացանակիր ասկյարները կրակում էին անընդմեջ։ Ծուխը տարածվում էր զորքի վրա, հասնում մինչև ժայռերի գլուխը։ Նիզակակիրների գնդերը հասան ժայռերին, ելարանները դեմ անելով՝ թրերը դրին բերաններում, մագլցեցին վեր...

Հին կամրջի մոտից մինչև Աշտարակի ճանապարհը ծածկված էր գրոհող բանակի զորագնդերով։

Տասը հազարանոց մի գունդ հարձակվեց Հովհաննես Հունդիբեկյանի գրաված դիրքերի վրա։ Դանդաղ, ծանր-ծանր առաջանում էին գետն անցած թուրքերը։ Հրացաններից կրակելով՝ նրանք քայլ առ քայլ մոտենում էին այն լանջին, որտեղ, անջուր առվի մեջ, քարերի ու ժայռերի արանքում շունչները պահած սպասում էին Հունդիբեկյանի մարդիկ։

Իր վրա եկող բանակը տեսնելով՝ Հովհաննես պարոնտերը ահ զգաց։ Սակայն դա տևեց մի վայրկյան միայն։ Հաջորդ վայրկյանին արյունը եռաց, շուռ եկավ դեպի իր մարտիկներն ու աներեր ձայնով գոչեց.

— Ձերկնչե՛ք այս ավազակներից, եղբայրնե՛ր... Կոտորեցեք՝ մեր զավակների ու մեր քաղաքի փրկության համար։

Հայերն սկսեցին կրակել հրացաններից։ Գնդակների ու քարերի տարափ տեղացին կենդանի պատի պես դեպի իրենց դիրքերը բարձրացող թշնամու վրա։ Թուրքերի առաջին շարքերը նոսրացան, սակայն մյուսները համառորեն բարձրանում էին թեք լանջով։

Երկու բանակների արանքում մնաց վաթսուն քայլ, հիսուն, երեսուն քայլ հեռավորություն։

Հովհաննես Հունդիբեկյանը թուրը մերկացրեց, մի վայրկյան ժամանակ գտավ նայել աջ ու ձախ և, տեսնելով, որ իր մարդիկ սրամերկ նետվեցին թշնամու վրա, թուրը ճոճելով գնաց...

Կոտորածն սկսվեց։

Հայերի դիրքը նպաստավոր էր։ Նրանք վերևումն էին, թուրքերը՝ ցածրում, ու վեր բարձրանալու համար, երբեմն, պետք է մագլցեին քարքարոտ լանջը։ Մի բարձրահասակ թուրք ոստնեց դեպի պարոնտերը, սակայն նրա ոտքի տակից դուրս պրծավ սալաքարն ու նա ընկավ։ Հովհաննեսը թրով կիսեց թուրքի գլուխը։ Նորից արյունը եռաց, նա կորցրեց իրեն, գժվեց, սկսեց հարվածել աջ ու ձախ...

Կիրճը դղրդում էր իրար հոշոտող, քրքրող, ծվատող ու լափող բանակների աղաղակներից, մեռնողների ճիչերից, ելարանների վրայից գահավիժողների բառաչներից։

Աբդուլլահ փաշան կանգնել էր ընկուզենու տակ և հեռադիտակն աչքերին հետևում էր մարտի ընթացքին։

Սպանդը զարհուրելի էր։

Փաշային զարմացնում էր քոթահիացիների համառությունը։ Հընձվում էին անխնա, ելարանները ջախջախվում էին՝ ցած տանելով իրենց աստիճաններից կառչած մարդկանց։ Սակայն նոր ելարաններ էին դնում, նորից նետվում նրանց վրա։ Նրա աչքից չվրիպեց ջրաղացների ու հին կամրջի արանքում կատարվող մարտը։ Այդտեղ թուրքերը նեղում էին հայերին։ Հայերն աշխատում էին ետ մղել քոթահիացիների հարվածները, բայց թվով քիչ էին ու հետզհետե սեղմվում էին դեպի ջրաղացների գլխին կախված ժայռերը։

Սերասկյարը աչքը չէր կտրում Քոթահիո փաշայից, որի գլխին պահում էին սև ու սպիտակ գույնի դրոշը՝ մարդկային գանգի ու կիսալուսնի պատկերով։ Աբդուլլահը դառնանում էր։ Թեև պարզ տեսնում էր, որ հաղթողն իր զորքն է, բայց նա կուզեր, որ այդ հաղթանակը չլիներ։ Կփքվի ինքնահավան քոթահիացին, կպարծենա, սուրհանդակ կթողնի Ստամբուլ, թե ինքն առավ Երևանը ու կպահանջի հատուցել իր ծառայությունը։ Սուլթանը նրան կնշանակի սերասկյար... Կխայտառակվի Քյոփուրլու հինավուրց տոհմը։ Գոնե սպանվեր քոթահիացին...

Նրա ուշադրությունն ամբողջովին ջրաղացների կողմն էր։ Նկատեց, թե ինչպես համառորեն դիմադրելով՝ ետ-ետ գնացող հայերն աշխատում էին պոկվել հարձակվողներից ու մի հին փլատակի մոտով հասնել քաղաք տանող անցքին, ամրանալ այնտեղ։ «Է՛հ, է՛հ,— մտքում ծիծաղում էր նա քոթահիացու վրա,— աջից պետք է շրջանցի, փակի հայերի նահանջի ճանապարհը։ Իսկ նա զոռում է ճակատից, տխմա՛ր»։

Բայց փաշան սխալվել էր։ Քոթահիո փաշան կատարեց այն, ինչ միակ միջոցն էր։ Մի մեծ զորաջոկատ կտրեց հայերի ձախ թևն ու շեշտակի հարվածելով՝ նրանց նեղեց դեպի ժայռերը...

Հովհաննես Հունդիբեկյանը նկատում էր, թե ինչպես են նվազում իր մարդկանց շարքերը։ Նրանք նեղվելով ետ-ետ էին գնում։ Բայց արդեն թուրքերը կտրել էին քաղաք տանող անցքը։ «Կընկնենք գլխովի»։— Մտածեց նա և մի տարօրինակ հանդարտություն պատեց նրան։ Մի վայրկյան էր հարկավոր միայն, որ նա հաշտվի կատարվածի հետ ու մահվան աչքերին նայի սառը հայացքով։ «Մինչև գնալս շատերին կգցեմ»։

Նրա ձախ թևում նոր ճեղք առաջացավ։ Դա կատարվեց անսպասելի։ Հազիվ կարողացավ թռչել ջրաղացի առվի վրայով։ Թիկունքում՝ քսան քայլ դենը, ժայռն էր։ Պաշտպանվում էր արիաբար։ Ձեռնամարտի բռնվեց երկու թուրքի հետ, ինքն էլ չիմացավ, թե ինչպես տապալեց նրանց։ Սաղավարտն ընկավ գլխից, ու արդեն ճերմակող մազերը թափվեցին ճակատին։ Նրա հետ մնացած մի բուռ մարդկանց վրա գրոհում էին թշնամու նորանոր խմբեր։

Հովհաննես պարոնտերը հասկացավ, որ ամեն ինչ վերջացած է։ Թիկունքում անմատչելի ժայռն էր, առջևում՝ թուրքերը՝ գունդ-գունդ, անհատնում։

— Գրոհի՛ր...— ինքնամոռաց գոռաց նա ու ընկավ թուրքերի վրա։

Նրա հետ մնացած երեք հարյուրի չափ մարտիկները խառնվեցին թուրքերին, ու ջրաղացների արանքում սկսվեց սպանդը։

«Մեռնում եմ, ուրեմն թող մի թուրք էլ տանեմ հետս»,— այս միտքն էր միայն կենդանի մնացել Հովհաննես պարոնտերի գլխում։ Թուրքերը ետ-ետ էին գնում, «շեյթա՛ն, շեյթա՛ն» գոռում՝ զարմանալով, թե ինչպես մարդ արարածը կարող է դիմադրելու այդպիսի կամք ունենալ, ձեռքերը չբարձրացնել ու գութ չաղերսել հաղթողներից։

Հովհաննեսն զգաց, որ մի տաք հոսանք այրեց ձախ ուսը՝ վերից վար, մինչև գոտկատեղը։ Ոտքերի տակ նկատեց իր կտրված ձեռքը, որ թպրտաց մի վայրկյան։ Բերանը բաց արեց՝ «մնաք բարով» գոռալու

համար, բայց գլորվեց դեպի գետափ... Թույլ զգաց դաղձի հոտն, ու ամեն ինչ թաղվեց հավիտենական խավարի մեջ...

Ջրաղացների մոտ կատարվածը նկատեց Կառչիկ Հովհաննեսն ու աչքերը փակեց... «Սրբացա՜վ,— մտածեց Հովհաննես Հունդիբեկյանի մասին։— Գնաց մարդ տուն յուր հավիտենից։ Պատվով գնաց»։

Թուրքերը վերջացրին դիմադրողների դիակների կողոպուտն ու նետվեցին դեպի քաղաք...

— Վառոդի տակառնե՜րը,— ամբողջ ձայնով գոռաց Կառչիկ Հովհաննեսը և նետվեց դեպի բացված ճեղքը։ Թեև արդեն կեսօրն անցել էր ու շոգը մեղմացել, բայց խեղդվում էր տապից, բերանը լայն բաց էր անում, ոռնգներն ուռցնում։ Օդը չէր հերիքում։

Հարյուր քսան փոքր տակառ գլորեցին ճեղքվածքի ուղղությամբ, որտեղ փարաքարցիների ու ձագավանցիների հազարյակը կտրել էր գետափից սև զանգվածով բարձրացող թշնամու առաջն ու ետ էր մղում նրա հորձանքը։ Տակառները հասցրին բարձունքի պռունկը։ Նրանց տափակ մասերում թողած անցքերը բաց արին ու դյուրավառ պատրույգներ խոթեցին վառոդի մեջ։

— Շտապեցեք, վերջացրեք,— մի տեղից մյուսը վազելով՝ վառոդագործներին խնդրում էր Կառչիկ Հովհաննեսը։

Կանայք դեն էին նետել իրենց շալերը և քարափի վրայից քարեր, փայտի ու երկաթի կտորների հեղեղ էին թափում թուրքերի վրա։ Շատերն ընկնում էին թշնամու անթիվ հրացանների գնդակներից։ Ընկածներին քաշում էին մի կողմ ու նորից քարեր նետում գրոհողների վրա։ Նեղ անցքի մոտ դիակների կույտեր էին գոյացել։ Փարաքարի տանուտերը վիրավորվել էր աջ ուսից, բայց ձախով թուրը բռնած՝ ոգևորում էր յուրայիններին։

Երևաց Կառչիկ Հովհաննեսի տատը։ Հերարձակ, կուրծքը բաց, ձեռքին վառվող ջահ, նա գալիս էր դեպի բարձունքը։ Նրան հետևում էին հարսն ու աղջիկ ծոռը, ապա էլի ուրիշ կանայք։ Հովհաննեսը տեսավ նրանց։

— Մե՛ծ մայր,— գոռաց խռպոտ, բայց ասելիքը կուլ տվեց ու ձեռքով ցույց տվեց անցքի կողմը։

Կանայք փայտե դույլերով եռացրած ջուր նետեցին ցածում խոնվածների վրա։

— Վառե՛նք, խորովե՛նք, զավակնե՛րս...— ծղրտաց մեծ մայրն ու ձեռքի վառվող ջահը նետեց ներքև։

«Մինչև մութն ընկնելը որ դիմանանք, հերիք է»,— մտածում էր Կառչիկը՝ պատրույգներ մտցնելով վառոդով լիքը տակառների մեջ։ Եվ

որպեսզի կարողանան դիմանալ, աջ թևում եղած երկու հարյուր նիզակավորներին ուղարկեց փարաքարցիներին օգնության։ Քար կրող պատանիներին կանչեց մոտը ու պատվիրեց հավաքել քաղաքում եղած շներին։ Այդ տարօրինակ հրամանից զարմացած, պատանիները մնացին շվայ։

— Ձեզ չե՞մ ասում,— գոռաց Հովհաննեսը։— Գնացեք, բոլոր շներին բերեք, քրջեր ու լաթեր էլ բերեք։ Շո՛ւտ։

Պատանիները թռան դեպի թաղերը։

Կանայք շարունակում էին եռացրած ջուր թափել ցած։ Ոմանք շալերը թաթախում էին նավթի մեջ, վառում ու դրանք էլ նետում թշնամու վրա։ Մոտիկ տների պատերը քանդեցին։ Քարերի կույտերն սպառվում էին։

Երևանը դիմադրում էր գերբնական, անհավատալի ուժով։

Հովհաննես Հունդիբեկյանի երեք հազարանոց բանակը ջարդելուց հետո թուրքերին հաջողվեց խցկվել Զորագյուղի անցքը, ետ մղել փարաքարցիներին և բարձունքի վրա մի քանի նեղ փողոցի մուտքեր գրավել։ Փարաքարցիները, Կառչիկ Հովհաննեսից օգնություն ստանալով՝ թշնամուն թույլ չէին տալիս առաջանալ։ Նրանք վառոդ լցրին տների տակ ու պայթեցնելով՝ շուռ տվին փողոցի վրա։

Օրվա անհաջողությունից թուրքերը կատաղել էին։ Նրանք նետվում էին փլատակների վրա, մենամարտի բռնվում փողոցների անցքերը պահպանող հայերի հետ։ Քոթահիր փաշան ամեն կերպ աշխատում էր խուժել քաղաք՝ գիշերային սպանդ սարքելու համար։ Նա այլևս չէր կասկածում իր հաղթանակի վրա։ Նույնիսկ թիկնապահներից մեկին ուղարկեց սերասկյարի մոտ՝ պահանջելով, որ իր ետևից ուրիշ զորք չուղարկի քաղաք։

— Քաղաքը ես եմ առել, ու նրա հարստությունը պատկանում է իմ զորքին։— Սուրհանդակի բերանով ապսպրեց նա Աբդուլլահ փաշային։

Մութը վրա հասավ։ Թուրքերը մի փոքր թուլացրին իրենց գրոհը։ Միայն կրակում էին հրացաններից ու ռումբեր արձակում։ Անհնարին էր մթության մեջ շարունակել գրոհները։ Բայց նրանք մնացին իրենց դիրքերում։ Գետափից մինչև Զորագյուղի պռունկը, որտեղ հասել էին նրանց առաջավոր խմբերը, բռնված էր բանակի սև զանգվածով։ Փաշան հրամայեց կերակրել զորքին։ Տնտեսները կիսաեփ միս, հաց ու այծի տկերի մեջ պահած ջրիկ պանիր բաժանեցին զորքին։

— Մի փոքր էլ համբերեցեք, Մուհամմեդի՜ զավակներ,— զորքի մեջ պտտվելով՝ ոգևորում էր փաշան։— Վաղը մենք սուրճ կխմենք երևանցիների շուշաբանդներում, և ձեզնից յուրաքանչյուրը մի-մի գեղեցկուհի կունենա իր ծնկների վրա։

Կիսավայրենի, բարբարոս քոթահիացիներն ախորժակով լիզում էին իրենց շրթունքները։ Ե՞րբ պիտի լույսը բացվի։

Խավար գիշերն իջավ պաշարված քաղաքի ու պոչը ծալած, գետափին շնթռկած թուրքական բանակի վրա։ Գետը հառաչում էր։ Երկնքում ծանրացել էին կապարե ամպեր։ Ոչ մի աստղ չէր երևում։ Հետզհետե մարմրեցին գետի մյուս ափին մրափած բանակի կրակները։ Բերդի սև ուրվականը ձուլվեց խավարին...

Բայց քաղաքում ոչ ոք քնած չէր։

Կառչիկ Հովհաննեսը իր զորքի մի մասը հավաքեց Զորագյուղի թաղի պռունկը։ Քիչ էին մնացել։

— Պատրաստ եղեք գրոհելու,— զորապետներին պատվիրեց Հովհաննեսը։— Վառվող տակառներ կգլորենք թուրքերի վրա։ Հետո ամբողջ ուժով վրա կտանք։ Այս գիշեր պետք է անօրենին շպրտենք գետի մյուս ափը։

Ոչ ոք չառարկեց նրան։ Տրտունջ չեղավ։ Հավատո՞ւմ, թե չէին հավատում գիշերային մարտի հաջողությանը, միևնույն է, պատրաստ էին կռվի։

Տակառների մեջ պատրույգ դրին ու շարեցին քարափի պռնկին։ Թաղերն ուղարկված պատանիները մի քանի տասնյակ շուն բերին։ Վտանգի հոտն առած անասունները կնճմնձում էին, պոչները կոխում ետևի ոտների արանքը, կուչ գալիս։ Հին շորեր ու լաթեր փաթաթեցին շների մեջքներին։ Ապա նավթ լցրին նրանց վրա ու սպասեցին Կառչիկ Հովհաննեսի հրամանին։

Կառչիկը զորքը դասավորեց գրոհի։ Շներին վառեցին ու բարձրացնելով նետեցին վար։ Շներն աղեկտուր ձայներ հանեցին։ Կրակով բռնկված լինելով՝ նրանք մի պահ թավալվեցին պատնեշների տակ, ապա զգալով ջրի մոտիկությունը՝ բնազդով նետվեցին դեպի գետը։

Թեք լանջը ծածկած թուրքերի մեջ վայնասուն ընկավ։ Վառվող, խելակորույս շները գժոխային ոռնոցով նետվում էին օդ, թավալվում, պտույտ տալիս մրափած զորքի մեջ...

— Տակառնե՞րը...— հրամայեց Կառչիկ Հովհաննեսը, երբ արդեն վերջին շունը նետել էին ցած։

Կարճ պատրույգները վառեցին ու բոլոր հարյուր քսան տակառները գլորեցին թեք լանջով։ Հովհաննեսը շունչը պահած սպասում էր պայթյունի։ Ամեն վայրկյան նրան մի ամբողջ հավիտենականություն էր թվում։ Բայց ահա լսվեց առաջին որոտը, և կրակի մի վիթխարի շատրվան թռավ օդ։ Դրան հաջորդեց երկրորդը, երրորդը... Կիրճը դղրդաց...

Լուսավորվեցին անգամ հեռավոր բլուրները։ Պայթյուններն անընդմեջ էին։ Նույնիսկ հայերը զարհուրեցին՝ իրենց գործի արդյունքը տեսնելով։ Մթության մեջ թվում էր, թե գետնի տակից ահռելի սաստկությամբ կրակե հորձանք էր ժայթքում ու շաղ տալիս գետափին։

Թուրքաց բանակի մեջ դժոխային կրակ ընկավ։

Կառչիկ Հովհաննեսը սուլոցով հանեց թուրը։

— Իմ ետևի՞ց,— բղավեց նա։— Հանո՞ւն մեր հողի ու հայրենիքի...

Առաջինը նա ցած թռավ պատնեշից։ Հայերը, միահամուռ աղաղակ բարձրացնելով՝ թափվեցին գլուխները կորցրած, կրակներից ու անհամար պայթյուններից սարսափահար թուրքերի վրա։

— Ուռուսը եկա՞վ...— թուրքերեն գոռաց Կառչիկ Հովհաննեսը և թուրն իջեցրեց իրար կոխկրտող, խուճապահար խլրտացող թշնամու վրա։

— Ամմա՞ն... ուռո՞ւսը եկավ,— գոռում էին հայերը թուրքերեն։

— Փախե՞ք, գյավուրնե՞րը...

Ո՞վ կարող էր տարբերել, թե ո՞ւմ ձայնն է այդպես կռնչում դժոխային կրակներով լցված ձորում։ Յուրաքանչյուրը մտածում էր իր կյանքը փրկելու մասին։ Բոլորին թվում էր, թե երկրային պատիժ է փլվում իրենց գլխին։ Իսկ ռուսների անունն ավելի սաստկացրեց խուճապը։

Սարսափը համատարած էր։ Թուրքերն իրար կոխկրտելով, հրելով, իրար վրա ցատկելով ու բղավելով նետվում էին ներքև՝ կրակից ու սրերից պրծնելու խելագար մոլեգնությամբ։

Գետափին Քոթահիո փաշան թրով հարվածում էր փախչողներին, հրամայում ետ դառնալ։ Բայց փախչողների թանձր ալիքը հարվածեց նրան, առավ իր մոլեգին հոսանքի մեջ։ Թուրը նրա ձեռքից ընկավ, և նա ուշքի եկավ միայն գետի սառնությունն զգալով։

Այնինչ հայերը, որ քաջատեղյակ էին տեղանքին, անխնա կոտորում էին խավարի մեջ գլուխները կորցրած ու միայն գետին հասնելու անասնական մոլուցքով համակված թուրքերին...

Լուսացավ։

Բարձունքի դիրքերում կանգնած երևանցիների առաջ բացվեցին գիշերային մարտի հետևանքները։ Հրազդանի ձախ ափը՝ գետափի նեղ տափարակից մինչև բարձունքն ու Զորագյուղի անցքը, ծածկված էր անհամար դիակներով։ Շատերը դեռևս ծխում էին։ Այրված մսի հոտը ապականել էր օդը։ Տեղ-տեղ դեռ սողում, գալարվում էին վառված, բայց տակավին կենդանի մարդիկ։

Նույնիսկ ամենասրտոտ փարաքարցիներն անգամ ծածկեցին դեմքները։

Կառչիկ Հովհաննեսը մանր խմբեր ուղարկեց թուրքերի զենքը հավաքելու և հայ մարտիկների դիակները բերելու համար։ Մինչ նա ստուգում էր, թե ովքեր են զոհվել գիշերային մարտի ժամանակ, օսմանյան բանակի գլխավոր հրամանատարի վրանի մոտ, ցոկոլ բռնած ծիրանու տակ, Աբդուլլահի առջև չոքած էր գլխաբաց, պատառոտված ու թրջված զգեստներով Քոթահիո փաշան։

— Քամու բերա՞նը տվիր մեր ճակատագրերի տեր սուլթանի զորքը, հա՞,— որոտում էր սերասկյարը։— Գոռող ու անխելք կնիկմարդ ես։ Առա՞ր քաղաքը։

— Ուռուսները եկան էրմենիներին թիկունք, ուռուսնե՛րը,— աղաղակեց շղթայակապ փաշան։

— Ուռուսնե՛րը... խի՛, խի՛, խի՛...— ծաղրեց սերասկյարը։— Ո՞ւր են ուռուսները, խո՛զ, վախկո՛տ, ա՛ղբ։ Քո անխելքությամբ կոտորեցիր սուլթանի զորքը։ Դավաճա՛ն։— Սերասկյարը տարիների բարկությունն էր թափում իր հակառակորդի գլխին։ Նա ոտքերով սկսեց տրորել այն մարդուն, որից ամենից շատ էր վախենում կայսրության մեջ։ Նրա ցընծությանը սահման չկար։ Ո՞վ կարող էր հանդիմանել նրան, որ ինքը քսանհինգ հազարանոց բանակի կորստյան համար պատժել է ռազմադաշտից գլխաբաց ու անզեն ճողոպրած մեկին, թեկուզ Քոթահիո փաշան չէ, ինքը՝ սուլթան Ահմեդը լիներ դա։

— Կախեցե՛ք,— հրամայեց նա իրեն շրջապատած փաշաներին։

Մոմած թոկի ծայրը կապեցին ծիրանու բարձր ճյուղին, օղակը հագցրին ուշաթափ փաշայի վիզը։ Ծառից կախվելով, նա անզոր թպրտաց, խռխռաց, լեզուն հանեց ատամների տակից ու անշարժացավ՝ վիզը թեք, աչքերը շռած։

— Դադարեցրեք անմիտ գրոհները, մինչև Քռի ափին գտնվող բանակների ժամանելը,— հրամայեց Աբդուլլահ փաշան ու քայլեց դեպի իր վրանը։

Փաշաները խոր գլուխ տվին նրան։

Իսկ այդ պահին սուրբ Սարգիս եկեղեցու բակում, հինավուրց գերեզմանների մոտ, երևանցիները հողին էին հանձնում Հովհաննես Հունդիբեկյանի, Պողոս Քիչիբեկյանի, Դավիթ Միրզեջանյանի և մյուսների մարմինները։

Թաղման արարողությունը կատարում էր Գրիգոր վարդապետը։

Ոչ ոք լաց չէր լինում։ Քահանաները խունկ էին ծխում։ Եկեղեցիների զանգերը զողանջում էին տխուր, մելամաղձոտ։

Սգում էին լուռ, անարցունք։

ՎԱՃԱՌՎԱԾ ԱՐՅՈՒՆԸ

Սիսականի լեռնանցքը հուրհրատում էր վառ կարմիր կակաչներից։

Կարծես գիշերվա անձրևի հետ արյուն էր ցողվել սարերի կանաչներին։ Օրը տաք էր, օդը գոլ, հաճելի։ Բարձունքների մշտական ձյունաշերտերից անհամար աղբյուրներ էին պոկվում, փշրվում ժայռերի վրա, ճերմակ ժապավեններ կազմում ձորակներում, կանաչների մեջ թավալվում դեպի խորխորատում կորած Շահապուն գետը։

Վայրի մեղուների անտեսանելի պարսերը զնգուն էին դարձրել օդը։

Լեռնանցքի սեռում, ուր դեռ մնում էր Արտաշես արքայի տնկած ճանապարհացույց սյունը, կանգնած էր Դավիթ-Բեկը։ Այնտեղ էին Մխիթար սպարապետը, Տեր-Ավետիսը, մելիքներ Բարխուդարը, Շաֆռազն ու Եգանը։ Վարը՝ կիրճի մեջ, զորքն ու ժողովուրդն արդեն ավարտում էին ամրությունների կառուցումը։ Բեկը հեռադիտակով նայում էր կապույտ հորիզոնի մեջ ճերմակին տվող Մասիսների կողմը։

— Վեհ են,— ասաց նա՝ հեռադիտակը հանձնելով համհարզին։— Մեծ Մասիսը կարծես ճերմակ ամպ լինի՝ անշարժ ու անբիծ։

— Գերության մեջ էլ է վեհ Մասիսը,— ավելացրեց սպարապետը։

Դավիթ-Բեկը մեկ անգամ էլ նայեց արևմուտք։ Ջղինված աչքով Մասիսը հազիվ էր նշմարվում։

— Ի՞նչ լուր կա այնտեղից,— հարցրեց Դավիթ-Բեկը սպարապետին։

— Պաշարված Երևանը դիմադրում է տակավին,— պատասխանեց Մխիթարը։— Դիմանում են։ Դաշտի գյուղերը թուրքերն ավերել են։ Այսօր սուրհանդակ եկավ Արցախից։ Հովհաննես-Ավան իշխանը հայտնում է, թե Սարը Մուստաֆա և Ռեջեբ փաշաներն իրենց զորքերը հանկարծակի հանել են Գանձակից ու հեռացել...

— Դեպի ո՞ւր,— հետաքրքրվեց Բեկը։

— Գնացել են Երևան՝ Աբդուլլահին օգնելու։

Դավիթ-Բեկը մի երկվայրկյան լռեց, ապա ասաց մռայլ.

— Անխոհեմ ու անմիտ գտնվեցին երևանցիները։ Ջլսեցին մեր խորհուրդը...

— Պարսիկները դավաճանել են երևանցիներին,— ավելացրեց Տեր-Ավետիսը,— նրանց պատգամավորներին բանտարկել են բերդում։ Այժմ լեզու են ուզում գտնել Երևանը պաշարած թուրքերի հետ։

— Պարսիկի տրամադրությունն է։ Հետո՞։

— Աստվածատուր կաթողիկոսը Թավրիզից վերադարձել է էջմիածին։

— Թուրքերին հանձնվելո՞ւ,— գոչեց Բեկը։

— Սուլթանից հրաման կա, որ Թուրքերը ձեռք չտան վանքին ու կաթողիկոսին։

— Նա փրկեց իր գլուխը,— դառը գոչեց Բեկը։— Լա՜վ հովիվ է, խե՜ղճ հոտ...

Բլրի ստորոտից խոտը երկփեղկելով դեպի զորավարներն էր բարձրանում Մովսես աբեղան։ Նրա մորուքը գզգզված էր, վիրավոր թևը տակավին չէր առողջացել։ Քայլում էր ծանր, հոգնած։ Դավիթ-Բեկը հազիվ ճանաչեց նրան։

— Վերջացա՞վ,— տագնապով հարցրեց նա՝ չսպասելով Մովսեսի ողջույնին։ Վայրկյան առաջ էր ուզում իմանալ Երևանին վիճակված բախտը։

— Ոչ դեռ, տե՛ր Դավիթ-Բեկ,— շունչը ետ բերելով՝ պատասխանեց Մովսեսը։ Նրա ձայնի մեջ հանդիմանություն ու տրտունջ կար։— Երևանցիները դիմանում են։ Կռվում են համառությամբ։ Թուրքերի կեսը պառկել է Երևանի պատերի տակ։

Բեկը նստեց։ Ձեռքով նշան արեց, որ Մովսեսն էլ նստի։ Խղճահարվեց սաստիկ։ Աբեղան ասես ծերացել էր քսան տարով։ Ցանկացավ բռնել նրա ձեռքը, քաշել դեպի իրեն, համբուրել քրտնախաշ երեսը, բայց դա պատշաճ չհամարեց զորապետների մոտ։ Խնդրեց պատմել, թե ի՞նչ է կատարվում Երևանում։

— Օսմանցիների ուժերը մեծ է, զորավա՛ր տերեր,— հառաչեց Մովսեսը։— Մանրելով, փշրելով չես սպառի։ Երևանցիներն ինձ ուղարկեցին ձեզ մոտ՝ մի ճար գտնելու։ Խե՜ղճ են, կկորչեն գլխովի... Միհրալին ու կաթողիկոսը խաբեցին։

— Ե՞րբ պիտի խելքի գան, չխաբվեն...— չարացավ մելիք Բարխուդարը։

— Հա՜, հա՜, աստված նրանց քաջություն է տվել՝ խելքն առնելու գնով,— ավելացրեց մելիք Եգանը։

Նրանց ասածները դուր չեկան Բեկին։

— Հարգանքով խոսեցեք,— խստորեն նկատեց նա։— Հերոս քաղաքի մասին է խոսքը։ Գլուխ խոնարհեցեք երևանցիների առջև...

Բեկը վեր կացավ, թափ տվեց կապայի հողոտ փեշերը, խոտերի միջից պոկեց Բրթնջուկի մի հատ ցողուն ու տարավ բերանը։ Թթվաշությունից դեմքը ծռմռեց։ Ոտքի ծայրով փորեց փափուկ սևահողը։ «Թուրքերը հեռացել են Գանձակից,— մտմտաց դառնորեն,— գնում են Երևանի վրա։ Երևանը Պարսկաստանի հյուսիսային դարպասն է, բայց կամուրջը Սյունիքի վրայով է։ Երևանից հետո կմիանան Նախիջևանի բանակին ու կգան մեզ վրա»։ Քայլեց խոտերի մեջ։ Ի՞նչ բուրավետ է սարի կանաչը, ի՞նչ թարմացնող են կակաչները... Մարդ ցանկանում է լիզել նրանց թափանցիկ կարմիր թերթերը... Մեջքիդ վրա պառկես հենց այստեղ՝ ուրցի հոտից արբած այս բլրի վրա ու վայելես առավոտվա արևը... Հոգս ու ցավ չունենա՞ս... Երևա՞նը...

— Տե՛ր Բարխուդար,— Բեկը դիմեց Խնձորեսկի մելիքին։— Ասում եմ՝ մտնենք քո վրանը։ Երևում է, որ միայն իմ գոտին չի թուլացել։ Ի՞նչ կասես։

Բարխուդարն ուրախությունից խոնարհում արեց։ «Մտքում բան կա, որ շնորհ է անում իմ հացին գալ»,— մտածեց նա ու բոլորին հրավիրեց իր վրանը։ Ցողաթուրմ խոտերը կոխկրտելով իջան բլրից։ Բարխուդարի խոհարարներն իրար անցան։ Առաջին անգամն է, որ Բեկը շնորհ է արել ճաշել իրենց զորագնդում։

Նստոտեցին վրանի առջև փռված գորգերին։ Բարձունքից երևում էր Արարատյան դաշտի արևելյան նստվածքը։ Դենը՝ Փոքր Մասիսից ձախ, Տղմուտ գետն էր, Ավարայրի դաշտը, մշուշի քողը վրան։ Մեջքը մի մեծ քարի հենած, Դավիթ-Բեկը նայում էր հեռուն... Ասես իր սուր հայացքով պատռում էր ոչ միայն Ավարայրի վրա նստած մշուշի շղարշը, այլև դարերի թանձր քողը, որի տակ, մոխրի շերտով ծածկված կրակի պես, դեռ ապրում են Ավարայրի հերոսները։ Մի քանի ամիս առաջ էր, երբ ահա, իր դիմացը նստած Մովսեսը վանքի խցում կարդում էր. «Յազեր

Մովսեսը բան չասաց։ Միտքն ուրիշ տեղ էր. մի թարմ գերեզման էր գալիս նրա աչքի դեմը. մի մենավոր գերեզման...

Խոսում էին միայն մելիքները։ Բոլորին մտահոգում էր հայոց մայր քաղաքի վիճակը։ Զեռքերը խոտի անարատ ցողով սրբելուց հետո, Բեկը դարձավ Մխիթարին.

— Վերցրու Երկրի ապավեն գունդն ու քո գնդի հետ թռիր Երևան։ Տար և տեր Բարխուդարին՝ զորքով, իմաց տուր երևանցիներին, գիշերով ճեղքիր պաշարողների օղակը, քաղաքից հանիր պաշարվածներին ու կրունկդ թուրքերին արած՝ փախիր։ Լսեցի՛ր, տե՛ր սպարապետ։

— Հրամանդ ի կատար,— տեղը տնկվեց Մխիթարը։

Մելիք Բարխուդարը նորից շոյված զգաց իրեն։

* * *

Քյոփուրլու Աբդուլլահ փաշան կատաղել էր իրար հաջորդած անհաջողություններից։ Հիսունմեկ օր էր, ինչ նստած էր Երևանի շուրջը։ Հազարավոր զինվորներ էր կորցրել քաղաքի պատերի տակ։ Թնդանոթներին հազիվ տասը-տասնմեկական ռումբ էր մնացել միայն։ Գումակը խրվել էր Շիրակի լեռներում, և ո՞վ իմանա, երբ տեղ կհասնի։ Ալյուրն սպառվում էր, բրինձ չկար։ Անվերջ միս ուտելուց զինվորների բերանները թարախակալել էին, լնդախտը բռնել էր զորքի կեսը։ Ասկյարները ցավից գալարվում էին, խոտ ու շեկ կավ ծամում։ Շոգն անտանելի էր դարձել։ Հոտած ջրից հազարավոր մարդիկ փորհարինք էին ընկել ու մեռնում էին՝ չդիմանալով լուծին ու տենդին։

Իսկ Երևանը դեռ կանգուն էր։ Ա՛խ, այդ հայե՛րը... Փաշան չէր հասկանում, թե ինչ հույսով են հայերը դիմադրում։ Անզոր կատաղությունը նա թափեց Արագածի փեշերում, Նիգ և Ծաղկոտն գավառներում շեն մնացած հայ գյուղերի վրա։ Թալանի մատնեց, այրեց տներն ու ցանքերը և հազարավոր գերիներ լցրեց բանակ։

Նրան հանգիստ չէին տալիս Բարձր Դռնից եկող լուրերը։ «Սուլթանը անբավական է քեզանից, սիրելիդ իմ Աբդուլլահ,— գրում էր սուլթանի հարեմի զարդը՝ իր քույրը։— Շուտ վերջացրու այդ անիծված Երևանի բանը և գնա ուռուսների վրա։ Մեծ վեզիրը տրտնջում է, Ֆրանկի ու Անգլիայի դեսպանները դժգոհում են։ Քո ուշացումը ձեռնտու է Մոսկոֆի ցարին։ Շտապի՛ր»։

«Շտապի՛ր»,— կրկնում էր փաշան։— Բայց, մի՞թե չի շտապում։ Ա՛խ, այդ եվրոպացիներ՛ը... Իրենց ճանկերի մեջ են առել թուլակամ սուլթանին, մագիլները խրել նրա մարմինը և ուր ուզում, ծռում են։

Այս հուսահատ վիճակում էր սերասկյարը, երբ մի օր, լուսաբացին նրա բանակատեղին հասան Սարը Մուստաֆա ու Ռեջեբ փաշաները։ Աբդուլլահը դուրս թռավ իր վրանից, արագ հեծավ նժույգն ու գնաց իրեն օգնության եկած փաշաներին ընդառաջ։ Նրա հուսահատությունը ցրվեց, երբ տեսավ նոր ժամանած բանակը՝ առույգ, կորովի ու թարմ։ Նրանց ձիերը պարարտ էին, վրաց երկրում հարուստ ավար առած զորքը կատաղի էր՝ պատրաստ հրի ու սրի բերանը նետվելու։ Բանակը ցնծությամբ դիմավորեց նոր ժամանած գնդերին։ Աբդուլլահի աչքերը լցվեցին։ Նա գրկեց թրի հարվածից ծնոտը ճեղքված Սարը Մուստաֆա փաշային ու համբուրեց նրա կարմրավուն, աղահամ բեղերը։ Գրկեց նաև երիտասարդ, բարձրահասակ ու շիլաշք Ռեջեբին, որին առաջին անգամն էր տեսնում։

— Ո՞ւմ թողիք Գանձակը,— հարցրեց նա։

— Տասը հազար մարդ մնաց այնտեղ,— պատասխանեց Սարը Մուստաֆան։— Խրվե՞լ ես, սերասկյա՛ր աղա։

— Խրվել եմ, ազի՛զ,— հառաչեց Աբդուլլահը։— Այդ հայերը խելագարվել են, ալլա՜հը վկա։ Մահ են ուզում։

— Այո, դժվար է։ Արցախի հայոց սղնախներին մոտենալ չի լինում։ Շահին փաշայի գունդը կուլ տվին Վարանդայում։

Փաշաները ձիերի վրա մտան նոր ժամանած բանակը։ Սա ծանրաբեռնված էր թալանով, գերիներով։ Ձիերի թամբերից կախված էին վրացական արծաթե թասեր, Իմերեթիայի գորգեր, Թիֆլիսի կերպասի կապոցներ, հավեր՝ մորթած ու դեռ կենդանի։ Երկանիվ սայլերին լծած էին Ղազախի գոմեշներ։ Սայլերի միջից երբեմն երևում էին գերի վրացուհու սարսափած աչքեր, վտիտ մանուկների ու պատանիների դեմքեր, որոնց թլփատել էին, գլուխները խուզել։

Աբդուլլահ փաշան ձին պահեց ենիչերիների հինգ հազարանոց գընդի առջև։ Սև, կարմիր, շեկ ու մոխրագույն մազմորուքով ենիչերիները խոժոռ նայեցին սերասկյարին։ Նրանց կերպարանքներին նայել չէր լինում, վագրի աչքեր ունեին ու արյունածարավ հայացք։ Քանի՞ սուլթանի են այդ գազանները կախել Ստամբուլի Աթմեյդանում։

— Սալա՜մ, Մուհամմեդի ամենաքաջ զավակներին,— ողջունեց սերասկյարը։

Գունդը մռլտաց անորոշ, խռպոտ ու շոր։

— Երևանը սպասում է ձեզ,— շարունակեց Աբդուլլահը,— երդվում եմ մարգարեի կրունկով, որ ուրիշ զորքի չեմ թողնի բաժին առնել ձեր ավարից։

— Ինշալլա՜հ,— այս անգամ միահամուռ որոտաց գունդը։

— Թող ինքն՝ ալլահը առաջնորդի ձեզ։

Աբդուլլահ փաշան գիշերը մնաց Սարը Մուստաֆա ու Ռեջեբ փաշաների վրանում։ Վճռեցին գրոհն սկսել առավոտյան։ Զորքին ոգեմիկ տվին։ Գերիներին ուղարկեցին Աշտարակի կողմերը։ Թնդանոթներն ուղղեցին քաղաքի վրա։ Բանակում հարյուրավոր ոչխար մորթեցին։ Փաշաները նստեցին կերուխումի։ Սարը Մուստաֆան երկու չքնաղ վրացուհի նվիրեց Աբդուլլահին։ Սա գինոտ ու ճարպոտ շրթունքներով սկսեց լիզել գերուհիների կուսական երեսները...

Պարզ, անաստղ գիշեր էր։ Լուսնի պռունկը դուրս էր եկել Գյառնո լեռներից ու արյունոտ մանգաղի պես կախվել կապույտ մշուշի տակ, ժայռերի վրա թառած Երևանի գլխին...

Օսմանյան բանակը մրափել էր՝ գլուխը թաթերին դրած վագրի պես։

***

Կառչիկ Հովհաննեսը ծանր տագնապի մեջ էր։

Սյունիք առաքած Մովսեսից լուր չկար։ Տե՞ղ հասավ, թե ճանապարհին վտանգի հանդիպեց։ Զինանոցի մոտ, որտեղ դարբինները ճրագի լույսի տակ նորոգում էին թուրքերից խլած զենքը, Կառչիկը զենք էր բաժանում կանանց ու դեռևս տեղից շարժվելու ընդունակ ծերունիներին։ Սրանք գիտեն, որ թուրքը չի խնայելու իրենց։ Ուրեմն ավելի լա՞վ չէ սպանվեն զենքը ձեռքին, քան մորթվեն՝ ոտքերը կապոտած հավերի պես։

Դարբնոցից Կառչիկ Հովհաննեսը գնաց Զորագյուղի դիրքերը։ Քայլում էր մթին փողոցներով, ոտքերը նվում էին, գլուխն անքնությունից պայթում։ Մի անփարատելի դառնություն էր կուտակվել սրտում։ Կարծես գնում էր դեպի դժոխք։ Ափսոսանքի զգացումը տանջում էր նրան։ Մի ամբողջ քաղաք մղեցին կործանման։ Ո՞վ կների այսքան արյունը։

Նրան ընդառաջ եկավ Գրիգոր վարդապետը։ Հուսահատության ոչ մի նշույլ չկար վարդապետի ալեխառն, մի քիչ սուր, մի քիչ էլ հանդուգն դեմքի վրա։

— Թուրքերը մեծ օգնություն են ստացել,— հայտնեց նա։

— Իրենց համար վատ։ Շանսատակ կլինեն,— ասաց Կառչիկը։

Լուսաբացին սկսվեց այն, ինչ կատարվում էր շաբաթներ շարունակ։ Այս անգամ թուրքերը գրոհում էին քաղաքի բոլոր կողմերից...

Շուտով Կառչիկ Հովհաննեսին լուր բերին, թե Սարը Մուստաֆա փաշայի զորքը անցել է փոսի ջրային արգելակն ու մտել Անապատի թաղը։ Կառչիկը ավանցի մի բուռ երիտասարդների ու կանանց զորագունդն ուղարկեց այնտեղ։ Նրանց փրկեց միայն Անապատի թաղի տնեերի խտությունը և այն արգելափակերը, որ նախօրոք ստեղծել էին։ Թուրքերի առաջխաղացումը դադարեցրին։ Սակայն ուժ չունեին նրանց շպրտելու Անապատի թաղից։

Փողոցային մարտերը տևեցին երեք օր շարունակ։ Ջրաղացների կողմից հարձակվող թուրքերը կոտորեցին Զորագյուղի անցքը փակած բոլոր պաշտպանվողներին և խելակորույս կատաղությամբ դիմադրող կանանց։

Շուտով թուրքերն առան նաև Երկերեսու թաղը։ Ոչ ոք փախուստ չտվեց, չթողեց իր դիրքը։ Ընկան՝ զենքը ձեռքներին, ճզմված ահռելի ուժի տակ։

Հայերը սեղմվեցին սուրբ Սարգիս եկեղեցու շրջակայքի փողոցներում ու տների բակերում։ Միայն հրաշքը կարող էր փրկել նրանց։ Իսկ այդ հրաշքին այլևս ո՛չ հավատացող կար, ո՛չ սպասող։ Կռվում էին, որովհետև ուրիշ ելք չունեին։

Ողջ մնացած հատուկենտ հարյուրապետներն ու տասնապետները գիշերը հավաքվեցին եկեղեցի։ Առանց սուրը մեջքից հանելու Գրիգոր վարդապետը հապճեպ պատարագ արեց, սուրը մեռոնով հաղորդեց բոլորին։

— Մեռնենք սուրը ձեռքներիս,— կերկերուն ձայնով գոչեց նա։— Մեր տեր Հիսուս-Քրիստոսը բացգիրկ կընդունի մեզ, զավակնե՛րս...

Եկեղեցուց դուրս գալով՝ վարդապետը ծերունիների ու կանանց մի փոքր խմբի հետ խաչով-խաչվառով գնաց Կոնդ, որտեղ ապրում էին հարյուր տուն հայ բոշաներ։ Վարդապետը ոտնամանները հանեց, պատռեց շապիկը, կուրծքը բաց արեց ու խաչը ձեռքին մտավ հայ բոշաների տանուտեր Ղազար Բաբուրյանի բակը։ Երեխաների ու կանանց կականի վրա բոշաները դուրս թափվեցին իրենց տներից։

Բոշա Ղազարը՝ այծի մորուքով, չորուցամաք մի մարդ, Գրիգոր վարդապետին նկատելով՝ համբուրեց նրա աջը։

— Օգնության ձեռք մեկնիր,— բարձրաձայն աղաղակեց վարդապետը,— մի մոռացիր այն աղուհացը, որ կիսել ենք միասին։ Մեր զավակներին մահ է սպառնում։ Քրիստոսի՞ սիրուն, հասիր մեր հավարին։ Աստծո հրամանով ես եկել եմ քո փեշը բռնելու։

Բոշան զարհուրեց վարդապետի անդրշիրիմյան ձայնից, նրա ահեղ տեսքից, հայ կանանց ու երեխաների կականից։ Նրա սիրտը տակն ու վրա եղավ։ Աչքերից առատորեն արցունքներ թափվեցին։

— Մեղքդ շլինքս մի՛ գցիր,— դողացող ձայնով ասաց նա։— Ես երկու հարյուր քաջ երիտասարդ ունեմ, որոնք զինված են ու վարժ՝ թրի

և հրացան արձակելում։ Ես նրանց բոլորին կհավաքեմ ու կառաջնորդեմ ձեր դիրքերը ու ձեզ հետ կպատերազմեմ թուրքերի դեմ։

Վարդապետը հեկեկաց։ Կանայք օրհնության խոսքեր աղաղակեցին։ Բոշա Ղազարն իր մարդկանց բաժանեց հինգ ջոկատի, նրանց վրա զորապետներ կարգեց ու հանձնեց Կառչիկ Հովհաննեսի հրամանին։

Մանր այդ խմբերը մթության քողի տակ, միայն իրենց հայտնի ճանապարհներով, մոտեցան թուրքերի գրաված թաղամասերին։

Առավոտը բացվեց աննկատելի։ Դառնության օր էր դա՝ անհնարին աղետներով։ Սև ամպերի միջից հազիվ էր նշմարվում արևի արյունոտ սկավառակը։ Բայց երևանցիները վաղուց էր, ինչ ո՛չ արևոտ օրն էին նկատում, ո՛չ անձրևն ու ամպը։ Ոչ ոք չիմացավ, որ սպիտակ թութը հասել է, անտերությունից քաղաքի կատուները վայրենացել են, շները կատաղել լեշ ուտելուց։ Երևանցիներն ստիպված էին ոչնչացնել քաղաքում մնացած այդ վերջին չորքոտանիներին։

Հոգու արիության կապերը թուլացան։ Սակավաթիվ պաշտպանվողների մեջ ծայր առավ քայքայիչ տրտունջը։ Ոչ մի տեղից փրկության հույս չունեին այլևս։ Թույլ հոգիները ընկրկեցին։ Ոմանք իրենց դժգոհությունը չէին թաքցնում նույնիսկ անզիջում ու անողոք Կառչիկ Հովհաննեսից։ «Այս ի՞նչ արեցիք,— համարձակ ասում էին նրանք Հովհաննեսին ու բոլորին քաջալերող վարդապետին։— Թշնամիներն օրեցօր ավելացնում են իրենց բազմությունը, իսկ մենք գնալով՝ նվազում ենք։ Ինչո՞ւ չընկաք փաշայի ոտքերը, գութ չաղերսեցիք անբախտ քաղաքիս համար»։

Անկումն ակնհայտ էր։

Կառչիկ Հովհաննեսն ու Գրիգոր վարդապետը զիջեցին։ Որոշեցին մարդ ուղարկել Աբդուլլահ փաշայի մոտ՝ հպատակություն հայտնել և հաշտություն խնդրել։ Երբ այդ մասին հայտնեցին սակավաթիվ պաշարվածներին, բոլորը լռությամբ համաձայնեցին։ Սակայն ոչ ոք սիրտ չարեց բանագնաց լինել։ Վարդապետը սուրը մի կողմ նետեց ու ասաց.

— Ինքս կգնամ։

— Չի՛ հարկավոր,— խզված ձայնով բացականչեց փարաքարցի մի ռամիկ Հարություն անունով՝ դուրս պրծած աչքերով, արևախանձ դեմքին։— Ես կգնամ։ Ես թուրքի լեզվին լավատեղյակ եմ։ Սպիտակ դրոշ տվեք։

Սպիտակ լաթ կապեցին մի փայտի ծայրին ու տվին Հարությունին։ Գրիգոր հայր սուրբը թաց աչքերով օրհնեց նրան, մասունք տվեց։ Հարությունին պարանով ժայռից իջեցրին։ Սպիտակ դրոշը գլխի վրա բռնած՝ նա անցավ գետն ու բարձրացավ վեր։ Մյուս ափին խռնված թուրքերը ուրախ ձեռքով արին նրան։

Հարությունը հասավ թուրքերին։ Մի բարձրահասակ, ծուռքիթ թուրք տասնապետ նրա ձեռքից խլեց դրոշակը, նետեց ոտքի տակ ու հարցրեց.

— Ի՞նչ ես կամենում, գյավո՛ւր էրմենի։

— Ինձ տարեք ձեր փաշայի մոտ, ես բանագնաց եմ։ Երևանի տերերը հաշտություն են խնդրում։ Մենք հպատակվում ենք սուլթանին։

— Խի՛, խի՛, խի՛...— քրքջաց տասնապետը։ Մյուսները ևս քրքջացին։— Է՛... խորամա՛նկ աղվես եք, գյավուր էրմենիներ։ Խի՛, խի՛, խի՛... Հաշտվենք, որ զրկվե՞նք ավարից, այն ամենից, ինչ մեր բաժինն է։

— Դուք ինձ տարեք փաշայի մոտ,— խնդրեց Հարությունը։

— Ձեր քաղաքը պիտի թալանենք։ Ձեր կանայք, ձեր գանձերը, կայքը մերն են։ Ո՛չ մի հաշտություն։— Տասնապետը կողքին կանգնած ասկյարից խլեց տապարն ու ամբողջ ուժով խփեց Հարությունի գլխին...

Կառչիկ Հովհաննեսը ժայռի վրայից տեսավ այդ հարվածն ու ակամայից կուչ եկավ, գլուխը թաքցրեց քարի ետևում։ Կարծես այդ հարվածն իր գլխին հասավ։

— Մի՛ հուսահատվիր, Հովհաննե՛ս,— հանդարտ ասաց քաղաքում հայտնի հացթուխ Ախիջանյան Միրզեն՝ մի կարճահասակ, երկար բեղերով մարդ։— Հիմա ես կգնամ։ Մեր քաղաքի սիրուն ես պատգամավոր կգնամ թուրքերի բանակը։ Եթե ինձ էլ սպանեն, ապա ես կմեռնեմ հոժարությամբ, իսկ եթե ապրեցի, ապա կընկնեմ փաշայի ոտքերը և գութ կաղերսեմ քաղաքիս համար։

Միրզեն ջերմությամբ համբուրեց բոլորին, հետը վերցրեց իր աշակերտին ու պարանով քարափից իջան։ Հայերը հույսով հետևում էին պատգամավորներին։ Ահա նրանք անցան գետն ու մոտեցան թուրքերի առաջակալ ջոկատներին։ Միրզեն գնում էր առջևից, աշակերտը՝ ետևից։ Հենց որ հասան թուրքերին, սրանք տապարներով հարձակվեցին նրանց վրա։ Միրզեին հոշոտեցին տեղն ու տեղը։ Աշակերտը շեշտակի շուռ եկավ ու փախավ դեպի գետը։ Թուրքերը վազեցին նրա ետևից, բայց ճարպիկ երիտասարդը ժայռի պոնկից իրեն նետեց գետը, մի պահ կորավ ջրի տակ, ապա դուրս գալով ափ՝ հասավ Ջորագյուղ։

— Ավա՛ղ մեզ, քրիստոնյանե՛ր,— աղաղակեց նա ահարեկված ձայնով։— Բազմացել ու մեծացել են մեր մեղքերը, աստված անարժան է համարում ողորմել մեզ։

— Կռավոցդ կտրի՛ր,— գոռաց Կառչիկ Հովհաննեսը։ Ապա դարձավ իր հետ մնացած չորս-հինգ հարյուր հոգուն ու հարցրեց։— Պատրա՞ստ եք, սիրելինե՛ր։

— Պատրաստ ենք՝ մահը մահով ետ տալու,— պատասխանեցին նրան։

Երկու կին բերին Գրիգոր վարդապետի դիակը։ Հայր սուրբն օգնության էր գնացել Անապատի թաղում օրհասական կռիվ մղող բոշաներին ու սպանվել։ Թշնամու գնդակը ցցվել էր նրա ձախ թիակի մեջ։ Նրա դեմքին մի երանելի խաղաղություն էր իջել։

Կառչիկ Հովհաննեսը հրամայեց վարդապետին թաղել եկեղեցու բակում։ Բայց հենց այդ պահին թուրքերի մի մեծ խումբ սկսեց խուժել դեպի եկեղեցի։ Դիակն անթաղ թողնելով՝ բոլորը նետվեցին դեպ թուրքերը...

Կռվում էին նեղ փողոցներում, բակերում, տների մեջ։ Համառում էին. իրար ոգևորում, հերոսության մղում միմյանց։ Ուրիշ ոչինչ չէր մնացել։ Երանի էին տալիս ընկածներին, որոնք չտեսան քաղաքի ավերումը։ Մի պատանի բուսավ Հովհաննեսի մոտ։ Նրա գլխից արյուն էր հոսում։

— Բոշի Ղազարն սպանվեց,— ասաց տղան ու պարսատիկը լարեց։ Սակայն թուլացած ընկավ Հովհաննեսի ոտքերի տակ։— Թուրքերն առան Ծիրանի թաղը,— ասաց ու փչեց շունչը։

Հովհաննեսը ցանկացավ գրկել պատանու դիակն ու դնել մոտիկ խաչքարի պատվանդանին, երբ դիմացը ասկյարների խմբեր նկատեց, հրացանը նետեց, մերկացրեց թուրը։

Մարտն այժմ մղվում էր միայն Ջորագյուղի թաղում։ Բոլոր կողմերից թաղը խուժելով՝ թուրքերն սկսեցին կոտորել օրհասական դիմադրություն ցույց տվող կանանց, երեխաներին։

Կառչիկ Հովհաննեսը հասկացավ, որ ամեն ինչ արդեն վերջացած է, և միայն վերջին վայրկյաններն են ապրում ինքն ու իր հետ մնացած հիսուն-վաթսուն հոգին։ Նա քաշվեց դեպի սուրբ Սարգիս եկեղեցին։ Ընկերների հետ ետ մղեց ենիչերիների մի ոհմակ։ Նահանջելիս Հովհաննեսի ոտքերը դիպչում էին ամեն տեղ սփռված դիակներին։

Խնկենու թաղի կողմից ուժգին պայթյուն լսվեց։ Դա ուրախացրեց Հովհաննեսին։ «Վառոդի ամբարը պայթեցրին դարբինները, ապրեն»,— ինքն իրեն ասաց նա։ Մտավ մի ցածրիկ մատուռ, ատրճանակը լցրեց, փեշով սրբեց թրի արյունը, դուրս եկավ մատուռից։ Կրակեց դեմ-դիմաց հանդիպած թուրքի փորին, թրով խփեց մեկ ուրիշին, ապա թռավ ցածրիկ պատի վրայով։

Այլևս ոչ ոք չկար հետը։

Բակերի ու փակուղիների անցքերով Կառչիկ Հովհաննեսը հասավ իր տուն։ Ցանկանում էր վերջին անգամ տեսնել յուրայիններին։ Իմանալ՝ իր կենդանի՞ են, թե արդեն չկան... Չէր համբերում։ Ո՛չ, չի թողնի, որ իր կինը, մատաղ դուստրը, որդիներն ընկնեն թուրքերի ձեռքը, ավելի լավ է զոհվեն հարյուրների, հազարների պես...

Պատը մագլցեց հեշտությամբ ու թռավ իր այգու մեջ։ Հենց այդտեղ հանդիպեց թուրքերի մի մեծ խմբի։ Քառասուն-հիսուն հոգի կլինեին։ Նրանք իրար ձեռքից խլում էին գորգերը, արծաթե պնակները, ոսկեղեն անոթները, անխղճորեն տրորում էին այն գորգերը, որոնց վրա խաղացել ու մեծացել էին իր պապերը, ինքը, իր որդիները։ Ավարը ձեռքից-ձեռք հափշտակող թուրքերը չնկատեցին նրան։ Հովհաննեսը մոտեցավ։

— Է՛յ, քաջե՛ր,— աներկյուղ կանչեց նա։— Ահա ես իմ կամքով հանձնվում եմ ձեզ։

Ենիչերիները զարմացած նայեցին նրան։ Հովհաննեսը ատրճանակն ու թուրը նետեց նրանց ոտքերի տակ։

— Սա իմ տունն է։ Այստեղ ես գանձեր ունեմ թաքցրած։ Եթե խոստանում եք խնայել ինձ ու իմ երեխաներին, ես իմ բոլոր գանձերի տեղը ցույց կտամ ձեզ։ Ապա եթե չանեք խնդրանքս, սատանան էլ չի գտնի հայի պահուստը։

Թուրքերը շրջապատեցին նրան։

— Իսկ եթե սուտ ես ասում, գյավո՛ւր,— գոռաց մեկը։

— Այն դեպքում դուք ինձ կմորթեք։ Տեսնո՞ւմ եք, ես արդեն անզեն եմ։

— Ցույց տուր գանձերիդ տեղը։

— Երդվեցեք ալլահի անունով։ Ես հավատում եմ ձեր երդմանը։

— Երդվում ենք,— գոչեցին մի քանիսը։— Թող ալլահը չորացնի մեր կանանց արգանդը, եթե չխնայենք քո զավակներին ու քեզ։

— Այդ դեպքում գնանք,— վստահ ասաց Հովհաննեսն ու քայլեց դեպի իր տան նկուղների ցածրիկ կամարները։— Իմ հայրը մեծ խոջա էր։ Մենք պապից—թոռ խոջաներ ենք։ Պահուստ շատ ունեմ, ալլահի՞ սիրուն, առե՛ք, ձեզ լինի, միայն մի՛ դրժեք ձեր երդումը...

Հովհաննեսը ծեծեց նկուղի փակ դուռը և հանգիստ, դեռ մի քիչ էլ ուրախ կանչեց.

— Մեծ մայր, ես եմ, դուռը բա՛ց։

Դուռը բացվեց։ Մեծ մայրը թուրքերի տեսքից սարսափած՝ ետ-ետ գնաց։ Երեխաները ճչացին։ Հովհաննեսն աչքերը մի վայրկյան փակեց, օրորվեց, ապա ուժ գտավ ու մտավ ներս։ Նրան հետևեցին ենիչերիները։

— Ճրագ արա, մե՛ծ մայրիկ, և աղոթիր մեր հոգու փրկության համար։

Ճրագ վառեցին։ Հովհաննեսը չնայեց երեխաներին, կնոջը, աղջկան, որոնք ահուդողի մեջ կծկվել էին նեղ նկուղի մի անկյունում։

— Հիմա բոլորս կփրկվենք, բոլո՜ր...— նախկին հստակ ու աներկյուղ ձայնով ասաց նա ու մի նավթոտ պատրույգ վառեց ճրագից։ Դարձավ թուրքերին։

— Գանձն այստեղ է,— ձեռքով ցույց տվեց նկուղի մի անկյունը։— Հիմա ես կհանեմ։ Դուք ձայն մի հանեց, Մուհամմեդի՜ սիրուն, երեխաները կվախենան։

Նա դանդաղ մոտեցավ նկուղի կիսախավար անկյունին, կռացավ, բարձրացրեց թոնրի փայտե ծանր ծածկը։ Թոնիրը լիքն էր վառոդով։ Երեսին խաչ հանեց ու վառ պատրույգը նետեց վառոդի մեջ...

Զգաց միայն վառոդի շլացուցիչ բոցը։

Նրա տունը դղրդոցով խորտակվեց... Ամեն ինչ ծածկվեց փլատակների տակ։ Հրդեհի լեզուները սողացին գերանների վրայով։

Այդ օրը հազար յոթ հարյուր քսանչորս թվականի հունիսի յոթն էր։

Վաթսուն օր քաջաբար պաշտպանվելուց հետո Երևանն ընկավ...

***

Սերասկյար Աբդուլլահ փաշան մտավ Երևան։ Նրան ուղեկցում էին Սարը Մուստաֆա, Ղոչ ալի, Յուլղուզ Հասան և Ռեշեբ փաշաները, բոլորն էլ երկնագույն ձիերի վրա, տոնական զգեստներով, դրոշներով ու ծնծղաներով, թմբուկների որոտով։ Մուրադ-Ասլանը բարձր բռնած տանում էր սուլթանական զինանիշը։ Ապա գալիս էր փաշայի թիկնապահ գունդը։

Ձիերի սմբակներն արյունոտվեցին։ Գնում էին անհամար դիակների ու արյան լերդացած դերբուկների վրայով։ Նեխվող դիակների ու արյան ճենճերահոտը տարածվել էր ավերված քաղաքում։

Աբդուլլահը մոայլ նայում էր դիակների կույտերին, ավերակներին։ Ծանր գնով առավ Երևանը։ Վաթսուն օրվա ընթացքում քսանյոթ հազար զոհ տվեց։ Իսկ գրավածը դիակների ու մոխիրների կույտեր էին միայն։ Փաշաներն ամենուրեք ականատես էին քստմնելի գործերի։

Բակերում, դեռևս կանգուն տներում, այգիներում ու բանջարանոցներում զորքը հագուրդ էր տալիս իր անասնական կրքերին։ Սպանվածների դիակները մերկացնում էին, կտրում մատներն ու ականջների բլթակները՝ մատանիների ու ականջօղերի համար։ Իրարից խլխլում էին գորգեր, կարպետներ, արծաթե անոթներ, վերմակներ ու բարձեր։

Այս ամենը տեսնում էին օսմանյան բանակի հրամանատարները, բայց արգելք չէին լինում։ Աբդուլլահը խոստացել էր քաղաքը թողնել զորքի քմահաճույքին։

Փաշաները կանգ առան Անապատ թաղի այգիներում։ Վրաններ խփեցին։ Նոր էին փաշաները մտել սերասկյարի ոսկեթել, սրագագաթ վրանը, երբ նրանց հայտնեցին, թե Երևանի բերդից ձիավորներ են գալիս դեպի բանակատեղին։

— Խանի մարդիկ են. գալիս են քո ոտքը, հաղթողների՜ փաշա,— Աբդուլլահին ասաց ուրացող Մուրադ-Ասլանը։

— Իմ հետին ուղտապանին ուղարկիր, թող խլի նրանց ձիերն ու հետիոտն բերի,— հրամայեց սերասկյարը։

Խանի մեծ վեզիրին պոկեցին ձիուց։ Վրայից հանեցին թանկագին զգեստները. հրամայեցին հագնել ուղտապանի ոջլոտ կապա և բոկոտն տարան փաշայի վրանը։ Մյուս պարսիկներին չթողին մոտենալ սերասկյարի դռանը։

Մեծ վեզիրը արծաթե սինու մեջ դրած Երևանի բերդի բանալիները գլխից բարձր բռնեց ու չոքեչոք մտավ սերասկյարի վրանը։ Բանալիները դրեց Աբդուլլահի ոտքերի տակ ու երեք անգամ գլուխը խփեց գետնին։

— Ո՞վ ես, անօրե՛ն,— հարցրեց Աբդուլլահը՝ արյունոտ աչքերով լափելով մեծ վեզիրին։

— Քո գութը հայցող Միհրալի խանի մեծ վեզիրն եմ, ողորմա՜ծ տեր,— աղաղակեց պարսիկն ու գլուխը նորից խփեց գետնին։

Փաշան հափշտակեց բանալիների խուրձը և ուժգին խփեց նրա ճաղատին։

— Ինչո՞ւ անձնատուր չեղաք իմ ժամանելու առաջին օրը,— գոռաց նա։— Ինչո՞ւ սուլթանի հպատակների արյան հեղման պատճառ դարձաք, շի՜ շան թաթեր։ Ինչո՞ւ,— փաշայի ձայնը հասնում էր հեռուները։

— Թող ալլահը զորությամբ պսակի արեգակին համահավասար, բարիքներ ու մեծ անուններ բաշխող մեծ սուլթանին, ո՛վ առաքինի փաշա,— բազկատարած գոչեց մեծ վեզիրը։— Այդ մենք չէինք դիմադրում քեզ։ Մենք վաղուց էինք ուզում հպատակվել այս աշխարհում երկնքի միակ գործակալ սուլթանին և Երևանը հանձնել քեզ։ Բայց հայե՛րը... Գյավուր էրմենիները չթողեցին։ Նրանք մեզ փակեցին բերդում, արգելեցին դուրս գալ քո առաջ։ Մեծամեծ վնասներ հասցրին նրանք քեզ, ո՛վ գթագորով փաշա։

Փաշան ծամծմեց հաստ շրթունքները, բանալիների խուրձը նետեց Ռեշեբ փաշայի ծնկներին (սրա զորքն առաջինն էր մտել Երևան), ապա թունավոր նայելով մեծ վեզիրին՝ որոտաց.

— Ինչո՞ւ ինքը՝ խանը չի եկել իմ ոտքը։ Միտք ունի կախվե՞լ իր բերդի պատերից։

— ...Օ՜... ողորմած փաշա։ Խանը բերդի բանալիներն ուղարկեց քեզ և այժմ ծանրագին ընծաներ է պատրաստում քեզ ու քո փաշաների համար։

Փաշայի ակնարկով մեծ վեզիրին քարշ տալով դուրս նետեցին վրանից։ Թուրքերն սկսեցին ծանակել նրան, հայհոյել պարսից շիա աղանդը։ Մեկը միզեց վեզիրի մորուքին, փետեց գլուխը։ Բայց չսպանեցին։

Երեկոյան դեմ փաշային այցելության եկավ Միհրալի խանը։ Քառասուն երևելիներ բերում էին ընծաները՝ ոսկով լի քսակներ, արծաթե անոթներ, ընտիր կերպասի թոփեր, մետաքս, արևելյան հազվագյուտ քաղցրավենիք։ Երկու պարսիկ մոլլա փաշաների համար նվեր աղջիկներ էին բերում։ Ի նշան հպատակության՝ խանն ու նրա մարդիկ գալիս էին հետիոտն, գլխաբաց, թրերը շլինքներից կախ։

Ընծաներն ընդունեցին իսկույն։ Խանին ու նրա մարդկանց թողին բանակի մեջ։ Ոչ ոք չխոսեցրեց նրանց։ Չկերակրեցին, նույնիսկ ջուր չտվին և գիշերը թողին բաց երկնքի տակ։

Առավոտյան Աբդուլլահը ձի հեծավ. Միհրալի խանին հրամայեց բռնել իր ձիու սանձն ու առաջնորդել դեպի բերդ։ Պարսիկներն այդպիսի անպատվության չէին սպասում։ Ճանապարհին, փաշայի հրամանով, պարսիկ երևելիներից շատերին մորթեցին։

Մեծ վեզիրը սոսկում էր այդ ամենից։ Հարմար պահ գտնելով, Շեյխ Ուլ Իսլամին ասաց.

— Լավ չէ՞ր լինի՝ մենք էլ հայերի պես ընկնեինք մարդավայել, քան տանեինք այս անպատվությունը։

— Սո՜ւս, սո՜ւս,— դողաց Շեյխ Ուլ Իսլամը։— Գլուխը պատվից թանկ է։

Միհրալի խանին, մեծ վեզիրին ու Շեյխ Ուլ Իսլամին կապեցին խանի պալատի դռանը, առջևները շան լակաման դրին ու ստիպեցին լիզել։ Խանի աչքի առջև նրա կանանոցը թալանեցին, մերկացրին կանանց ու ստիպեցին կանգնել ենիչերիների կացարանների առջև՝ մերկ, ինչպես ծնվել էին մորից։

Այդ օրը երկու հազար պարսիկ կախեցին բերդի պատերից։

Կախեցին նաև ծերունի Աղամալյան մելիք Աղավելին և նրա ընկերներին։

* * *

Բարձր Դոնից հրաման եկավ։ Սուլթանը Աբդուլլահ փաշային գրում էր. «Պատվազուրկ մի՛ արա պարսիկ խանին, երևելի պատանդներ վերցրու նրանից, իսկ իրեն արձակիր կայքով ու հարեմով, թող գնա իր աշխարհը։ Ալլահի կամքն է, որ մենք գութ ունենանք մեր հավատակից պարսիկների նկատմամբ»։

Փաշան խանի մեծ որդուն և երկու եղբայրներին պատանդ ուղարկեց Ստամբուլ։ Խանի զորքի մնացորդները ցրեց իր բանակի մեջ։ Ապա խանին հրամայեց հեռանալ Երևանից՝ իր հարեմն ու կարողությունը հետը վերցնելով։

Խանը ցնծում էր հոգու մեջ։ Բանն իր ցանկացածի պես վերջացավ։ Երևանցիների արյան գնով փրկեց իր կյանքը։

* * *

— Այսպես, ո՛ւրեմն, ավելորդ է այլևս շարունակել ճանապարհը,— իր նեղվածք վրանի մեջ հավաքված հարյուրապետներին ասաց Մխիթար սպարապետը։— Թուրքերն առել են Երևանը...

Մի շաբաթ առաջ էր սպարապետը իջել Սյունիքի լեռներից՝ Երևանին օգնության հասնելու նպատակով։ Սակայն կանգ առավ Շարուրի դաշտում՝ Երևանից փախած մի քանի խղճուկ տնանկներից իմանալով ծանր լուրը։

Մութը վրա էր հասնում։ Քամին լեռներից դեպի Արարատյան դաշտն էր քշում անձրևամած ամպեր։ Վրանի պատատոը տարուբերվում էր։ Փոքր Գորգին մոմ վառեց։ Փախստական երևանցիները պատմում էին թրենց գլխին եկածը։ Նրանց աչքերում մի տարօրինակ սառնություն կար, մի մթին վիշտ, որ երբեք, ոչ մի ձեռքով չէր դարմանվելու։

— Երևանը քանդվեց, ա՜խ, աստվա՜ծ,— ասում էին փախստականները։— Այնտեղ էր, որ դուք պետք է տեսնեիք տղամարդկանց տանջանքը, կանանց կականը։ Տեսնեիք, թե ինչպես էին ողջ մնացածները ծվատում իրենց կուրծքը, աղաղակ բարձրացնում թուրքերի թրի տակ...

Սպարապետն ու մելիք Բարխուդարը խոսք չէին գտնում մխիթարելու թշվառներին։ Նայի հարյուրապետի աչքերը լցվեցին։ Բարխուդարը շարացած քաշում էր տերողորմյայի հատիկները։ Փախստականները հայտնեցին, որ փաշան ազատ է արձակել Միհրալի խանին։

— Իր հարստությունը վեց հարյուր հիսուն ուղտի բեռնած, հիմա այդ դեը վերադառնում է Թավրիզ։ Ինքներս տեսանք Խոր Վիրապի մոտ։

Սպարապետը շփեց մազակալած դեմքը։ Բարխուդարը տերողորմյան գցեց գրպանը։

— Անտեղի ոտք թակեցինք, եկանք,— զգույշ նկատեց մուտքի մոտ կանգնած Եսայի հարյուրապետը։— Հիմա էլ դատարկ ձեռքով ետ պիտի գնանք։

— Մտքինդ ասա,— խստությամբ նկատեց սպարապետը։— Խոսքդ սար ու ձոր մի գցի։

— Ասեմ,— համարձակվեց Եսային։— Ինչո՞ւ Միհրալուն անպատիժ բաց թողնենք, աստված է նրան հանձնել մեր ձեռքը։ Այդ բանն ինձ վրա թող, տեր սպարապետ։ Ախր ինչո՞ւ նա գլուխն ազատի ու դեռ այնքան էլ հարստություն տանի հետը։ Վեց հարյուր հիսուն ուղտաբե՜ռ... Բա՜... Իմ հարյուրյակը հերիք է, տե՜ր սպարապետ։ Մի մերժիր, «հոպ» կանեմ, ո՜ւ... Եթե էգուց կեսօրին խանը քո ոտքերի տակ չլինի, գլուխս քեզ ընծա։

Մելիք Բարխուդարը ևս հարմար գտավ ռամիկ հարյուրապետի առաջարկը, թեև ատում էր նրան։ Սպարապետը համաձայնեց։ Առիթ էր՝ Միհրալի խանին պատժելու, բացի այդ, վեց հարյուր հիսուն ուղտաբեռ հարստությունն ինչո՞ւ բաց թողնի ձեռքից։

— Համաձայն եմ,— վերջապես ասաց նա։

Եսային գոտին ձգեց, աչքերը փայլատակեցին։ Անակնկալից խուսափելու համար սպարապետը երկու հարյուրյակ էլ տվեց նրան։ Փոքր Գորգին խնդրեց, որ մի հարյուրյակն ինքը գլխավորի։ Մխիթարը դրան էլ համաձայնեց։

Կես ժամ հետո Եսային արդեն ձիու վրա էր։ Երևանցի փախստականներին հետը վերցնելով՝ նա սլացավ դեպի Արաքսի կողմերը՝ Միհրալի խանի ճանապարհը կտրելու։ Լույսը չբացված կհասնեն մեծ ճանապարհին ու կսկսեն...

— Քանի՞ մարդ ունի իր հետ խանը,— հարցրեց նա երևանցիներին։

— Փաշան նրա մարդկանց կամ կախել է, կամ ցրել։ Խանի հետ մեծ վեզիրն է, ծառաները, ուղտապաններն ու մոլլաների մի ոհմակ։ Բոլորը միասին հազիվ հարյուր հոգի։

— Զենք ունե՞ն։

— Քշերը։ Աբդուլլահ փաշան զինաթափել է նրանց։

Եսային ուրիշ հարց չտվեց։ Ձիերը գնում էին արագ՝ ետևից փոշու ամպ բարձրացնելով։

* * *

Լեռների ատամներին թառած աստղերը վերջին անգամ թարթեցին իրենց կապույտ աչիկներն ու կուլ գնացին ծեգի կաթնավուն մշուշի մեջ։ Լուսանում էր, բայց Շարուրի դաշտավայրի վրա ադամամութը տակավին չէր ցրվել։ Տոթը մեղմացել էր, նույնիսկ մի թեթև սյուք անցավ ամայի դաշտի վրայով. ուղտափշերից թափվեցին ցողի մանրիկ հատիկներ։

Միհրալի խանը վրայից դեն նետեց ծածկոցն ու, աչքերը բաց անելով՝ լայն հորանջեց։ Արթնացավ ինքն իրեն, անդորր հոգով, քնից լավ կշտացած։ Նրա անկողինը հենց ճանապարհի եզրին էր, մի խարխլված ջրհորի մոտ։ Քարավանի ուղտերը գլուխները ուսերին՝ որոճում էին։ Երեք օր անվերջ քայլել էին Արարատյան այրող արևի տակ։ Միայն այդ գիշեր էր կանգ առել։ Երբ խանը հրամայեց դադար առնել մինչև լուսաբաց, ուղտերն իրենք իրենց չոքեցին, իսկ մարդիկ թափվեցին խանձված գետնին։

Խանը լայն հորանջեց։ Մեծ վեզիրը չոքել էր փոքրիկ գորգի պատռիկին ու առավոտյան նամազն էր անում։ Նամազ էին անում նաև մոլլաները, ուղտապանները։ Սակավաթիվ ծառաները ուտելիքի հոգսով էին զբաղված։ Կանանց մասում արթնացել էր սապատավոր ներքինին ու հորանջում էր՝ անատամ բերանի խոռոչը բաց։

Խանը չոքեց գորգի վրա։ Ծառան մատուցեց աղոթքի պարագաները։ Խանը գլուխը բարձրացրեց դեպի արևելք՝ ալլահին փառք տալու և շնորհակալ լինելու իր անձը փրկելու համար։ Բայց աղոթքի խոսքը կիսատ մնաց բերանում։ Դեմը, տասը քայլի վրա, ձիավորներ նկատեց. աչքերը թարթեց, բերանը բացուխուփ արեց։ Եվ մինչև ուշքի կգար, մեծ վեզիրն ընկավ նրա ոտքերը։

— Ավազակնե՜ր, խա՜ն...— ու դողաց ողջ մարմնով։

Խանը ծառս եղավ տեղը, ձեռքը տարավ դեպի թուրը, բայց այդ պահին գլխի վրա հնչեց մեկի մոնչոցը։

— Հանձնվիր առանց աղմուկի, Միհրալի՜ խան։ Խոստանում եմ քեզ անվնաս հասցնել իմ տիրոջ ոտքը։

Նա դեռևս ուշքի չէր եկել անակնկալ կատարվածից, երբ զգաց, որ թևերը կապոտում են թիկունքին։ Մեկը բռունցքով ուժգին հարվածեց նրա վզակոթին։

— Ինչո՞վ կարող ես հատուցել մեր քաղաքի կործանման համար, պղծագո՜ղծ։

Նրան գցեցին նաև ուղտի վրա։ Քարավանի մյուս ծայրից մեկը բառաչեց։ Այնտեղ մորթեցին մի հանդուգն պարսիկի, որ փորձել էր դիմադրել։ Մի կին աղեկտուր ճչաց, բայց, ըստ երևույթին, փակեցին նրա բերանը։ Մեծ վեզիրը սողում էր ուղտի ոտքերի տակ։ Նրան բռնեցին։ Երևանցի փախստականներից մեկը քարով ջախջախեց նրա գլուխը, ապա գոռաց.

— Խանի՛ն տվեք, խանի՛ն... Արևը սևացնեմ, որ մերը սևացրեց։

Խանը դողաց։ Արդյոք վստահելի՞ պաշտպանություն ունի, թե այդ խենթը իրեն կպոկի ուղտի վրայից ու գլուխը կջախջախի։

Թեև Եսային ու Փոքր Գորգին ամեն զգուշություն գործադրել էին, բայց և այնպես մի քանի պարսիկ կարողացան փախչել ու գլուխներն ազատել ամայի դաշտի խորքերում։ Նրանց չհետապնդեցին։ Ուղտերին վեր կացրին ու քարավանի գլուխը շուռ տվին դեպի Վայոց ձոր։

Եսային շտապեցնում էր ուղտապաններին։ Սև նժույգի վրա նա քարավանի մի ծայրից մյուսն էր սլանում և մտրակով դաղում ծանրաշարժ պարսիկներին։

— Շոգը հիմա կհասնի, կկծի անապատի օձի պես,— գոռում էր նա,— շտապեցե՛ք։— Եվ նորից էր շաչում նրա մտրակը։

Փոքր Գորգին ձին քշում էր նաև ուղտի կողքով, որի մեջքին մետաքսի մի փոքր վրան էր տնկված։ Գորգուն սաստիկ հետաքրքրում էր, թե ինչ կա այդ վրանի մեջ։ Կյանքում ուղտ չէր հեծել։ Նա մոտ կանչեց Վեցկի Մարգարին։

— Է՛յ, Մարգա՛ր քեռի, ապա մի ձիուս սանձը բռնիր։

Սանձը Վեցկի Մարգարին տալով՝ Գորգին կանգնեց ձիու մեջքին ու բռնելով ուղտի թամբի կեղը՝ թռավ նրա վրա։ Տեղավորվելով վրանի առջև՝ նա ետ տարավ մետաքսե վարագույրը... Մի դեռատի աղջիկ սարսափած նայում էր իրեն։ Գորգին երբեք այդպիսի աչքեր չէր տեսել։ Սև էին՝ տափաստանի գիշերվա պես։ Փոքրիկ դեմքը գունատ էր, որի վրա գծագրվել էին բարակ, կարմիր շրթունքները՝ ինչպես արյան բիծը նոր եկած ձյան վրա։ Աղջիկը թավշե բաճկոն ուներ՝ թևերն ու կուրծքը բաց։ Վարդագույն նեղ վարտիքը ծրարել էր նրա ծնկները։ Մի զույգ արծաթապատ մաշիկ դրված էր աղջկա ոտքերի մոտ։

Անծանոթ տղամարդուն տեսնելով՝ աղջիկը թույլ ճչաց և հինայած մատներով փակեց աչքերը։

Փոքր Գորգին մի քիչ էլ առաջ սողաց ու մնաց քարացած։ Հեքիաթ է, ի՞նչ է։ Ուղտն օրորվում է. օրորվում է նաև հրաշքը։ Վրանի գագաթի անցքից լույսի մի խուրձ ընկել էր աղջկա բաց վզին, ականջների մարգարտե գինդերին, մազերին, որոնցից խենթացնող բուրմունք էր գալիս։

Կողքին ինչ-որ բան շարժվեց։ Գորգին նկատեց մի փոքրիկ, սմքած երեսով, կնճիռներով ողողված սևամորթ պառավ։ Գորգին նույնիսկ վախեցավ նրանից։ Գաճաճ պառավը բռնեց Գորգու թևն ու բարակ ձայնով ասաց.

— Այիշեն վախենում է, կտրի՛ճ, դու ձեռք մի՛ տուր Այիշեին։ Ես քեզ ոսկի կտամ։ Մե՛ղք արի, Այիշեն փոքրիկ է...

Բայց Գորգին չէր լսում նրան։ Անթարթ նայում էր դիմացը դողացող աղջկան և չէր կարողանում սթափվել կախարդանքից։ Մի տարօրինակ բան էր կատարվում նրա հետ։ Իրեն բոլորովին անծանոթ մի զգացմունք խլրտաց նրա սրտում, մեծացավ, դարձավ այրող կրակ։ Նա ձեռքն զգուշությամբ մեկնեց աղջկան։ Դեռևս չէր հավատում, որ դա հրաշք չէ։ Մի թանկագին բան փշրելուց վախեցող մարդու պես նա աղջկա մարմարե ձեռքերը պոկեց նրա դեմքից։ Աղջկա սև, երկար թարթիչներից արցունքներ կաթեցին...

— Տե՛ր աստված,— հառաչեց Գորգին ու զարմացած նայեց պառավին։

Մանր աչքերը թարթելով՝ ստրկուհին աղերսեց.

— Այիշեն մեղք է, կտրի՛ճ, Այիշեին չպանես...

«Պանե՞լ, ո՞ւմ սպանել, այս երկնային արարածի՞ն»։— Մտածեց Գորգին ու աչքերն արագ թարթեց։ Երբեք այդքան մոտ չէր եղել ոչ մի կնիկմարդու։ Իսկ Այիշեն մա՞րդ էր, թե հավերժահարս, որի մասին լսել էր հեքիաթներում։ Աղջկա դողացող մատներն ափի մեջ պահած՝ Գորգին շնչում էր ծանր, կցկտուր։ Չէր զգում ուղտի փափուկ քայլերը, չէր լսում թզուկ պառավի ձայնը։ Կլանված նայում էր Այիշեին։

— Այիշե,— վերջապես խոսեց նա,— դու մի վախենա։ Դե, ասում եմ՝ մի՛ վախենա։— Նա համբուրեց աղջկա թանզիֆե շղարշով պատած ազդրը։ Ցանկացավ համբուրել նաև արցունքոտ այտերը, բայց վախեցավ ահաբեկել նրան։ Չոքեչոք ետ-ետ գնալով՝ իջավ ուղտի պարանոցին ու թռավ Վեցկի Մարգարի մոտեցրած ձիու մեջքին։

— Ի՞նչ կար,— հարցրեց Մարգարը։

Գորգին չպատասխանեց։ Աչքերը փակել էր, գլուխը ետ գցել։

— Քա՞ռ ես, հարցնում եմ, ի՞նչ կար ուղտի վրանում։

— Հը՞,— ցրված նրան նայեց Գորգին։

— Գժվե՞լ ես, Գորգի՛,— գոռաց Մարգարը։

— Կամա՛ց, Այիշեն կվախենա՛, կամա՛ց,— սաստեց Գորգին։

— Է՛... հե՛, խելքդ տարե՞լ է խանի լպստած աղջիկը։

— Կտրի՛ր ձայնդ։

— Տե՛ր աստված,— երկյուղով ասաց Վեցկի Մարգարը։— Տղային

հմայեցին։ Այսքան կարճ պահի այդ տեսակ բան կլինի՞։ Ուղտապանից իմացա՝ վրանում խանի փոքր աղջիկն է, ոնց էլ հմայեց...

Մինչև Վայոց ձորի բերանը Գորգին չհեռացավ Այիշեի ուղտի մոտից։ Երբեմն պառավը գլուխը հանում էր վրանից ու աչքով անում նրան։ Այնինչ Գորգին ոչինչ չէր ըմբռնում, չէր տեսնում շրջապատը, ուղտերը, պարսիկ գերիներին։ Չէր տեսնում նույնիսկ Եսայու զարհուրելի կերպարանքը։

Վայոց ձորի բերանում, որտեղ Արփենի գետը դուրս էր գալիս նեղ կիրճից ու բարկությունը տարածում Շարուրի դաշտի վրա, Եսայուն դիմավորեց սպարապետը՝ մելիքի ու հարյուրապետների հետ։ Քարավանը կանգ առավ։ Ծանր փոշին նստեց գետնին։ Նառն, առատ լորձունք շաղ տալով՝ մոութը մեկնեց ճամփեզրյա եղինջներին։ Եսային ձիուց իջավ ու վազեվազ մոտեցավ սպարապետին։

— Տե՛ր սպարապետ,— ուրախությունից կակազելով սկսեց նա, բայց Մխիթարը թույլ չտվեց, որ շարունակի։

— Գիտե՛մ, գիտե՛մ,— ձեռքը թափ տվեց նա։— Տեսնում եմ, սատանա՜... Ո՞ւր է Միհրալին։

Միհրալի խանին պոկեցին ուղտի մեջքից ու գցեցին սպարապետի ոտքերի տակ։ Ամբողջ օրը կապկպված մնալուց խանի ձեռքերն ուռել էին, դեմքը սևացել՝ փոշուց ու քրտինքից։ Մխիթարը բռնեց խանի մորուքն ու թափահարեց։

— Մահվա՞ն մատնեցիր երևանցիներին,— ֆշշացրեց ատամների արանքից,— ծախեցի՞ր մի ամբողջ քաղաք՝ քոսոտ գլուխդ ազատելու համար։ Հը՞։ Խոսի՛ր, է՜...

— Ալլահը գիտի, որ ես մեղք չունեմ, Մուխիթար խան...— հեկեկաց խանը։

— Չունե՞ս,— ատամները կրճտացրեց սպարապետը։— Հապա ո՞վ խաբեց, մոլորեցրեց երևանցիներին, թե թուրքերը բարեկամացել են ձեզ հետ, թե չեն գա քաղաքի վրա, թե շահ Թահմազը մեծ զորք է ուղարկում Երևանը պաշտպանելու։ Հապա ո՞ր շունը փակեց բերդի դռներն ու երևանցիներին մենակ թողեց։— Նա այնպես քաշեց խանի մորուքը, որ մի փունջ մազ մնաց մատների արանքում։ Զզվեց, ձեռքը գցեց կարմիր կոշիկների ճակերին, թքեց ու ցնցող ձայնով գոչեց.

— Ջորի՛ բերեք։

Խանը համբուրեց նրա կոշիկները, գութ աղերսեց։ Բայց սպարապետն անզիջում էր։ Զինվորները երկու տարեկան, դեռ չթամբած մի ջորի բերին։ Եսային պարանի օղակը հագցրեց խանի հաստ շլինքը, ծայրը կապեց ջորու պոչին։ Մտրակով դաղեցին ջորու ողորկ հետույքը։ Ջորին

ծառս եղած, խրտնեց պոչին կապած ծանրությունից ու սլացավ գետի քարքարոտ ափն ի վեր...

Ուղտերը չոքեցրին, բեռները վերցրին նրանց մեջքներից ու սկսեցին հաշվել ավարը։ Խանի հարեմը տարան գետափ։ Սպարապետը խստիվ հրամայեց՝ ձեռք չտալ կանանց։

Գիշերը մնացին կիրճում։

Փոքր Գորգին այծենակաճը փռել էր ճյուղերը մինչև գետնին կախ ընկած ուռենու տակ, Այիշեին նստեցրել վրան։ Լուսնի շողերից դեղնել էին ժայռերը, գետի ալիքները, ուռենու դողացող ճյուղերը։ Գորգին կարծես տենդի մեջ էր։ Այիշեի փոքրիկ ձեռքը ամուր պահում էր իր ափերի մեջ ու նայում նրա արձակ մազերին, լուսնի շողից դալկացած դեմքին։ Այդպես Այիշեն փոքր երեխայի էր նման։ Գորգու սիրտը թպրտում էր. կարծես երազի մեջ է...

— Այիշե՜...— երբեմն միայն շշնջում էր նա։

Ջորի միջով զով անցավ։ Լուսաբացը մոտենում էր։ Այիշեն գլուխը դանդաղ թեքեց ու դրեց Գորգու ուսին։ Գորգին կորցրեց իրեն, չիմացավ թե ինչպես համբուրեց նրա բարակ շրթունքները։ Վախեցավ ինչ-որ բանից։ Գլուխը բարձրացրեց։ Բանակը քնած էր։ Մոտը կանգնած ձին գարի էր խժռում դանդաղ, հաճույքով։ Հեռվում ճչում էր գիշերահավը։

Գորգին նորից համբուրեց աղջկա բերանը։ Դողաց հուզմունքից։ Հպարտ նայեց բանակին։ Այիշեն իրենն է այլևս, իր սիրածը, իր կինը։ Կսպանի, ով համարձակվի ձեռք մեկնել նրան։ Այիշեն իրենն է... Այս մտքից Գորգին քրտնեց։ Հիշեց մորը՝ ահեղ ու անզիջում։ Ի՞նչ կասի մայրը, երբ իմանա, որ ինքը պարսկուհի կին է առել։ Հիշեց Եսայու շարացած ձայնը.

— Խանի աղջիկը քոնը չէ, բաց թող։

— Իմն է, ի՛մը, մենակ ի՛մը...

Եվ ահա Այիշեն երկու ձեռքով գրկել էր Գորգու վիզն ու ներքևից թախծոտ, վախեցած աչքերով նայում էր նրա գրեթե պատանեկան դեմքին։ Գորգին նրան սեղմեց կրծքին, խելագարի պես համբուրեց բերանը, աչքերը, խնամքով պառկեցրեց...

Փաթաթվեցին այծենակաճի մեջ։ Երբ նա ձեռքը տարավ դեպի աղջկա գոտին, սա համբուրեց նրա կուրծքն ու ասաց.

— Մատա՜ղդ լինեմ, ինձ չտաս ուրիշի, չտա՜ս... Ինձ պահիր քեզ համար։

Այդ գիշեր Գորգու հետ կատարվեց զարմանալի մի բան։ Առաջին անգամ նա զգաց, որ ինքը կարող է իր կյանքով պաշտպան լինել մի էակի, որն իր համար թանկ է նույնիսկ սեփական կյանքից։ Գլուխը

Այիշեի մատաղ կրծքի վրա՝ նա իրեն բախտավոր, զորեղ ու հպարտ էր զգում։ Լուսինը կաթ էր ցնցուղում կիրճի մեջ։ Գետափին կոկռում էին գորտերը, սարերից սուսամբարի բուրմունք էր լցվում ձորը։

Այիշեն շնչում էր մեղմ, հոգնած։ Շուտով նա գլուխը գցեց Գորգու թևին ու քնեց մանկական քնով։ Շապիկի կոճակները բաց էին մնացել, և լուսնի լույսն ասես բխում էր նրա ճերմակ կրծքից։ «Այիշե՛, Այիշե՛»... մտքում անվերջ կրկնում էր Գորգին՝ չկշտանալով նրանից, նրա տեսքից։

Երեք օր մնացին Վայոց ձորում։ Սպասում էին, գուցե թուրքերը Երևանն առնելուց հետո անմիջապես մոտենան Սյունիքին։ Սակայն նրանց երևալու նշաններ չեղան։ Լրտեսները վերադարձան Երևանից ու հայտնեցին, որ թուրքերը երկար ժամանակով են նստել այնտեղ։

Այդ երեք օրվա ընթացքում միայն մի անգամ Գորգին գնաց սպարապետին տեսության։ Մխիթարին հայտնել էին, թե տղան պոկ չի գալիս խանի աղջկանից։ Սպարապետը թեև չարացել էր, բայց բան չասաց իր սիրելիին։

Ընկեր տղաներից մի երկուսը կամեցան տեսնել Փոքր Գորգու «հուրի-փերիին»։ Սակայն Գորգին այծենակաճով ծածկեց Այիշեին ու ընկերներին հեռու քշեց։ Մի անգամ Եսային ասաց.

— Է՛... որդյա՛կ իմ Գորգի, այդ հրեշտակը քեզ բոլորովին խելքահան կանի։ Մորդ ի՞նչ պատասխան կտամ։ Զիդ անխնամ ես թողել ու պոկ չես գալիս պարսկուհուց։ Ամո՛թ է, մեջքդ ճիպոտներով կկապտացնեն։

Գորգին հայացքով սուր խեթեց նրան ու ատամները սեղմեց։ Այիշեն լաց եղավ։ Նրա կլորիկ ուսերը ցնցվում էին, ծնկները դողում, ձայնը խեղդվում էր ափի մեջ։ Այդ օրը Գորգու համար ատելի էր ոչ միայն Եսային, այլև ատելի էին ընկերները, աշխարհը, նույնիսկ սպարապետը։

Երեք օր կիրճում մնալուց հետո շարժվեցին դեպի Սիսական։ Ուղտերին հազիվ էին անցկացնում ժայռերի տակով։ Լեռնային կածանների անսովոր անասունները տնքում էին, մնչում՝ երկար շրթունքները կախ։ Քարավանի գլուխը հասել էր լեռների բարձունքին, իսկ պոչը դեռ թավալվում էր կիրճի խորքում։ Արևն այրում էր, ժայռերից շիկացած օդ էր փաթաթվում մարդկանց դեմքերին։ Զառիվերով բարձրանում էին ծանր ու դանդաղ։

Գորգին Այիշեին փաթաթել էր այծենակաճի մեջ, դրել ձիու թամբի կեղին, աջ ձեռքով գրկել մեջքը, ձախով բռնել ձիու սանձը։ Մռայլ էր ու չար։ Երբեմն բաց էր անում աղջկա երեսն ու քնքշանքով սրբում նրա դեմքի քրտինքը, հով անում։ Այդ պահերին պայծառանում էր Այիշեն, բայց և այնպես աչքերը խորունկ վշտով էին նայում Գորգուն։

Առաջին անգամ Գորգին զզվեց զինվորությունից, մենության մեջ կորչելու կարոտ զգաց։ Թող չքվեն, գետնի տակն անցնեն բոլորը, ընկերները՝ Սեմեոնը, Մատուրը, Վեցկի Մարգարը, բոլորը։ Ինքը նրանց տեսնել չի ուզում։ Ուզում էր փախչել նրանցից, մտնել անտառի թավուտներն ու մեն-մենակ ապրել Այիշեի հետ...

Գիշերը մնացին Անգեղակոթ ավանում։ Փոքր Գորգին գնաց ծխատեր քահանայի մոտ, համբուրեց ձեռքը, մոտը եղած բոլոր դրամը տվեց նրան և խնդրեց, որ Այիշեին քրիստոնյա մկրտի։ Քահանան համաձայնեց և խնդրեց, որ Այիշեին տարան եկեղեցի։ Սակայն վրա հասան Մատուրն ու Սեմեոնը, քահանային ծեծեցին, քշեցին եկեղեցուց։ Ցանկացան խլել նաև Այիշեին ու անհետացնել, բայց Գորգին մերկացած թրով պաշտպանեց աղջկան։

— Հետը կպսակվեմ առանց մկրտելու էլ,— գոռում էր նա՝ վայրենի ձայնով։— Ու ինքը՝ Հիսուս-Քրիստոսն էլ գա, չե՛մ զիջի, չէ՛...

Հաջորդ օրը քարավանը մտավ Որոտանի կիրճը ու նորից երկարեց արահետների վրա։ Այլևս ոչ ոք չէր խոսեցնում Գորգուն։ Զէին բարևում։ Աշխատում էին հեռու լինել նրանից «Մոռացան»,— մտածում էր Գորգին ու կոշտ ձեռքով շոյում Այիշեի փափուկ մազերը, հուսադրում նրան, ինչպես կարող էր։

Մոտենում էին Տաթևի վանքին։ Կեսօրին կարճ գագար առան ու իջան կիրճի խորքը։ Քարավանի ծայրը հասավ Սատանի կամրջին։ Գորգին վճռեց Տաթև հասնելուց ընկնել սպարապետի ոտքերն ու աղաչել, որ թույլ տա Այիշեին մկրտել։

Դիմացը՝ գլխապտույտ բարձրության վրա, երևաց Տաթևը։ Նրա զանգերի ձայնը հազիվ էր հասնում մինչև կիրճի խորքը. ասես ղողանջում էին հենց երկնքի կամարներից։ Գետի զովը դիպավ Գորգու դեմքին։ Դիմացը, ցածում, երևաց Սատանի կամուրջը։

Դադարի հրաման տվին։ Մնալու էին կիրճում։ Սատանի կամրջից փոքր-ինչ վերև, հին եկեղեցու շուրջը, բազմաթիվ մանր տնակներ կային, որտեղ իջևանում էին կամրջի ականջում գտնվող ջերմուկ ջրերում բուժվելու եկած հոդացավով տառապող մարդիկ։ Գորգին Այիշեին տարավ տեղավորելու այդ տնակներից մեկում։ Մի բարի պառավ իր մի հատիկ սենյակը տվեց նրանց։

— Հիվա՞նդ է աղջիկը,— հարցրեց կարեկից։

— Հը՞, չէ, մայրիկ, հոգնած է,— պատասխանեց Գորգին։— Դու տեղ տուր մեզ, ես քեզ առատ կվարձատրեմ։

Պառավը խորամանկ ժպտաց։ Մութն ընկնելուց գնաց հացատանը

քնելու։ Փոքր Գորգին Այիշեին խոտելով՝ դրեց կարպետով ծածկած թախտին։

— Այիշե՜,— ասաց սրտի թրթիռով։— Դու է՛լ լաց մի լինի, ես իմ կյանքով կպաշտպանեմ քեզ։ Հավատո՞ւմ ես։

— Հավատում եմ,— սրտանց ասաց աղջիկը և առաջին անգամ ժպտաց։ Գորգին անհագ համբուրեց նրան ու գնաց ձին տեղավորելու։

Երկու օր մնացին այդտեղ։ Երրորդ օրվա երեկոյան Փոքր Գորգուն կանչեցին սպարապետի մոտ։ Մխիթարը իջևանել էր հենց դիմացի լեռան պոնկին բազմած Տաթևի վանքում։ Գորգին ուրախացավ։ Առիթ է, սպարապետից Այիշեին մկրտելու իրավունք կխնդրի ու կպսակվի հետը։ Պառավին հանձնարարեց արթուն հսկել Այիշեին, ձին հեծավ ու լեռան արահետով շտապեց դեպի Տաթև...

Տաթևից վերադարձավ չորս օր հետո, լուսաբացին։ Ուրախ էր, սպարապետը հարգել էր նրա խնդրանքը, թույլ էր տվել, որ նա մկրտել տա Այիշեին ու պսակվի հետը։

Պառավը մոլոր նստած էր տնակի շեմին։ Նրան վշտացած տեսնելով՝ Փոքր Գորգին վատ բան գուշակեց։ Թամբից ցատկեց հենց պառավի դիմացը։ Բաց դռնից ներս նայեց ու սփրթնեց։

— Ո՞ւր է Այիշեն։

— Տարա՜ն,— ցցված ծնկները տրորեց պառավը։

Գորգին բռնեց նրա ուսերը։

— Ի՞նչ...

— Էն իրիկունը, որ դու գնացիր, երեք հոգի եկան, աղջկան տարան։ Մեջ ընկա, որ չթողնեմ, անպատվեցին աստծո պատժածները։

— Ո՞ւր տարան, ովքե՞ր էին,— խեղդվեց Գորգին։

— Զորական մարդիկ,— տնքաց պառավը։— Ասացին հրամանը ձեր մեծավորից է։ Աղջկան առան, դրին Արազի ափից մեր ջրերը բուժվելու եկած, էն օրը տուն գնացող հիվանդների քարավանի հետ ու մի զինվորի հսկողությամբ ճանապարհեցին։ Ասացին պարսիկի աղջիկ է, ուղարկում ենք իր երկիրը, որ մեղքի տակ չընկնենք։

Փոքր Գորգին երկու ձեռքով բռնեց գլուխը։ Վիշտն այնպես ծանր էր, որ առաջին բոպեներին, չիմացավ ինչ անել։ Սթափվելով՝ նետվեց դեպի ձին։ Հենց հիմա կսլանա Այիշեի ետևից։ Թռավ ձիու մեջքին, դուրս եկավ ճանապարհը։

Սակայն հենց այդտեղ էլ զսպեց ձիուն։ Ո՞ւր է գնում։ Այիշեին տարել են չորս օր առաջ։ Իսկ այստեղից մինչև Արաքսի կամուրջը երկու օրվա ճանապարհ է։ Հիմա Այիշեն Պարսկաստանում է։ Որտե՞ղ գտնի նրան, ինչպե՞ս։ Ա՜խ, անսիրտ մարդիկ։

Խորունկ կիրճը ասես սեղմվեց նրա կողերին։ Նա ձիուց իջավ ու, երբ մեկնում էր դեպի Տաթև, պառավը հասավ ետևից ու թաշկինակում փաթաթած մի բան մեկնեց նրան։

— Աղջիկդ տվեց, որդի, ա՛ռ։

Փոքր Գորգին բաց արեց թաշկինակը ու նրա մեջ գտավ Այիշեի ականջի օղերից մեկը։ Գորգին այլևս ուժ չունեցավ մնալ ձիու թամբին։ Վայր թռավ ու սկսեց թավալվել գետնին...

* * *

Դավիթ-Բեկի ապարանքի առջև կանգ առան երեք ձիավոր։ Ճանապարհի փոշին նստել էր նրանց զգեստներին, մորուքներին. ձիերը սևացել էին փոշեխառն քրտինքից։ Երևում էր, որ նրանք շատ հեռվից են գալիս։ Նրանցից մեկը Էջմիածնի կաթողիկոսի տեղապահ Հովասափ վարդապետն էր՝ խոժոռ, ասես թույնով լիքը շարժուն աչքերով։ Նրա մորուքը գզգզված էր, գլխի կնգուղի ծալքերում դեղին փոշի էր կուտակվել։ Մյուսները Էջմիածնի ճորտ գյուղացիներ էին։

Բակում ձիերի ոտնաձայն լսելով՝ Դավիթ-Բեկի սպասավոր Սողոմոնը դուրս եկավ, կկոցեց կարճատես աչքերն ու, վարդապետին նկատելով՝ բռնեց կապայի ոսկրե կոճակը (շարը խափանելու համար)։ Ճորտերն օգնեցին, որ վեց փթանոց վարդապետն իջնի ձիուց։

— Այս ի՞նչ քոչ է,— հարցրեց Սողոմոնը։

Հովասափն առաջ գնաց։

— Ես վարդապետ եմ...— սկսեց նա, բայց Սողոմոնը ժամանակ չտվեց։

— Ի՞նչ անեմ, որ վարդապետ ես, այստեղ վանք չի։ Քոչդ քաշիր։ Ձիերի թրիքի հոտից սիրտս խառնում է։ Հեռացի՛ր։

— Այդ ո՞ւմ վրա ես բարկացել, Սողոմո՛ն,— ներսից հարցրեց Դավիթ-Բեկը։

— Ո՞վ իմանա,— նախկին շարությամբ պատասխանեց Սողոմոնը։— Վարդապետ է, ինչ հորս ցավը։ Կարծես թե ես իրա ծառան եմ...

— Թող ներս գա,— ներողամիտ ասաց Բեկը։

Սողոմոնը թթվեց։ Հովասափ վարդապետը խեթ նայեց նրան ու բարձրացավ վեր։

Բեկը մենակ չէր. նրա մոտ էին Մխիթար սպարապետը, Տեր-Ավետիսն ու Մովսես աբեղան։ Մովսեսն ու Տեր-Ավետիսն իսկույն ճանաչեցին փոշոտ, հեռացող վարդապետին։ Մովսեսն այտերն այնպես ուռցրեց, որ ասես ուզում էր թքել վարդապետի մորուքին։ Հիշեց Արուսյակին։

Արյանը գլխին խփեց, միայն զորավարների ներկայությունն ու Դավիթ-Բեկի տանը լինելը նրան զսպեց, որպեսզի չնետվի այդ գևի վրա ու եղունգները չխրի նրա կոկորդը։

Մխիթարն աչքերը կկոցելով նայեց հյուրին, սեղանի վրայից վերցրեց կիսատ թողած թանի գավաթն ու խմեց՝ վրան վարունգ կրծելով. թթվեց։ Չէր սիրում սևազգեստներին։

Հովասափ վարդապետը լայն խաչակնքեց ներկաներին։ Մի վայրկյան միայն հայացքը թողեց Մովսեսի կապտած դեմքին ու չիմանալով, թե զորավարներից որն է Դավիթ-Բեկը՝ դիմեց բոլորին.

— Ամենայն հայոց վեհափառ կաթողիկոսն իմ բերանով ողջույն է ուղարկել ձեզ՝ հայոց զորավարներիդ։

— Կաթողիկոսն արդեն տա՞նն է, Հովասա՛փ հայր սուրբ,— հարցրեց Տեր-Ավետիսը։

— Աթոռին է՝ աստծո ողորմությամբ։— Հայր սուրբն աշխատեց հիշել Տեր-Ավետիսին, նույնիսկ մի փոքր թեքվեց դեպի նա։ Տեր-Ավետիսը քմծիծաղեց.

— Տեր Դավիթ-Բեկ,— դարձավ նա Բեկին,— այսօրվա մեր հյուրը էջմիածնի սրբազնագույն կաթողիկոսի տեղապահ Հովասափ վարդապետն է։ Երևի հայր սուրբը կարճ հիշողություն ունի, դժվար է ճանաչում ինձ։ Համեցի՛ր, հա՛յր սուրբ, նստի՛ր։

Վարդապետը մի փոքր շփոթված նստեց Տեր-Ավետիսի մատուցած աթոռին։ Հոգնածությունից քիչ էր մնում փլվեր գետնին ու խոմփացներ իսկույն։ Նրան սառը թան տվին։ Խմեց, առանց քաշվելու, մի ամբողջ վարունգ կերավ։

Դավիթ-Բեկը ծխամորճի կոթը սեղմել էր ատամների արանքում և քննախույզ նայում էր ճարպակալած հյուրին։ Նրան այնքան չէր հետաքրքրում, թե ինչ է կամենում Աստվածատուր Համադանցի կաթողիկոսը, որքան ուզում էր որևէ բան իմանալ Աբդուլլահ փաշայի մտադրություններից։ Հովասափը կուլ տվեց վարունգի վերջին պատառը, ձեռքերը դրեց ծնկներին ու հառաչեց։

— Անշուշտ, ձեզ հայտնի է, որ Երևանն ընկել է։

Նորից Մովսեսի մեջ ցանկություն առաջացավ թքել նրա դեմքին։ Եվ հրաշքն էր զսպում նրան միայն։

— Հայտնի է,— ասաց Բեկը։— Սև լուրը շուտ է տեղ հասնում։

— Ա՛խ, տե՛ր աստված,— տնքաց վարդապետը։— Այրվում ենք կրակի մեջ։

— Ինչո՞ւ,— զարմացավ սպարապետը։— Չէ՞ որ վեհափառը Աբդուլլահ փաշայի ամենօրյա ցանկալի հյուրն է։

— Թաքուն չէ,— հաստատեց վարդապետը։— Ուրիշ ելք չկա, եղբայրնե՛ր։ Մենք գերի ենք փաշայի ձեռքին։ Ամեն օր սպասում ենք, որ նա բանտ կնետի մեզ, վեհափառին էլ հետներս, հիմնախիլ կանի տուրք իշման տեղը։ Ինքներդ պիտի լավ հասկանաք, թե ինչն է վեհափառին ստիպում սիրալիր ձևանալ փաշային։

Դավիթ-Բեկը քմծիծաղեց աննկատ, ապա աչքունքով սպարապետին հասկացրեց, որ չխանգարի վարդապետին. «Թող խոսի, տեսնենք, որտեղ է կապում»։ Հովասափը կռահեց, որ իր հանկարծակի երևալը դուր չեկավ զորավարներին։ Ուստի շտապեց ասել այն, ինչի համար եկել էր։

— Եթե պատվելի զորավարներիդ հաճո է, ապա իմացեք, որ ես եկել եմ վեհափառի հանձնարարությամբ և ինչ որ ասեմ, նրա աստվածահաճո խոսքն է։— Նա լռեց, բարկացայտ նայեց Մովսեսի կողմն ու դառնալով Դավիթ-Բեկին՝ շարունակեց։— Քե՛զ, անտարակույս, հայտնի է, զորավա՛ր մեծ, որ անհատնում է օսմանցիների ուժը։ Սուլթանը միայն այս տարի նվաճել է Կաֆլան-Տիվենից մինչև Երևան ընկած երկրները։ Այդ երկրներում ոչ մի դատարկ տեղ չի թողել, լցրել է զորքով և հիմա պատրաստվում է գնալ դեպի մեծ ծովը։ Նա մտադրվել է տիրել նաև ձեր լեռնաշխարհին։ Մեծ է նրա բարկությունը ձեր դեմ, որ դուք հպատակվել եք մոսկովյան թագավորին և նրա համար բաց եք արել այս կողմի աշխարհների դռները։ Խոհեմ չես վարվել, տե՛ր Դավիթ-Բեկ զորավար։ Գրգռել ես սուլթանին, բայց դեռևս ուշ չէ, և ամեն ինչ դեռ կորած չէ։ Վեհափառը խնդրում է քե՛զ, տե՛ր Դավիթ-Բեկ, գնալ Աբդուլլահ փաշայի ոտքը։ Ուրեմն ծանրագին ընծաներ տար նրան և աղերսիր, որ նա բարի աչքով ու անքեն սրտով նայի քեզ ու քո աշխարհին։ Իմացիր նաև, զորավա՛ր զահերեց, որ ով գնում է սերասկյարին հպատակվելու, նա սիրով է ընդունում նրան, չի սպանում, չի անպատվում, չի նեղում, այլ մեծամեծ ընծաներով հարգում ու պատվում է և թողնում, որ նա իշխանություն անի իր աշխարհում։ Կաթողիկոսն իր աստվածախոս բերանով խնդրում է քեզ, որ շտապես և երկրպագություն մատուցես փաշային։ Դրան է սպասում փաշան։ Որքան շուտ, այնքան բարի։

— Իսկ եթե ես գրողի ծոցն ուղարկեմ քո կաթողիկոսին ու նրա «բարեգութ» փաշայի՞ն,— չհամբերեց, վարդապետի խոսքը կտրեց Բեկը։

— Այն դեպքում աղետալի կլինի քո և խեղճ հայ ժողովրդի վիճակը,— պատասխանեց վարդապետը։— Փաշան կգա իր ամենի զորքով ու կկործանի ձեզ։

— Եվ թուրք փաշային մեր լեռները կառաջնորդի ինքը՝ կաթողիկոսը, այդպես չէ՞,— հարցրեց սպարապետը։

Բեկը հանդիմանող հայացքով նայեց նրան։ Վարդապետը հառաչեց.

— Է՛հ, է՛հ, մոլորվա՞ծ մարդիկ։ Կաթողիկոսը գիշեր-ցերեկ աղոթում է հայ ժողովրդի համար։ Նա ցանկանում է արյան ծովից փրկել այն մի բուռ հայերին, որ դեռ կենդանի են մնում այս աբյուսածարավ հողի վրա։ Մեղադիր մի՛ եղեք աշխարհի բոլոր թագավորներից խաբված ու լքված վեհափառին։ Մի՛ ամբաստանեք նրան։

Վարդապետը լռեց։ Նա արդեն վերջացրել էր իր ասելիքը։

— Եվ դա այն ամե՞նն է, ինչ ուզում է ասել մեզ կաթողիկոսը,— հարցրեց Դավիթ-Բեկը։

— Ամենը։— Ծանր պատասխանեց Հովասափը։— Նա մեղմացրել է փաշայի բարկությունը։ Եթե դու, գահերե՛ց զորավար մեր Դավիթ-Բեկ, գնաս փաշայի դուռը, նա բարի աչքով կնայի քե՛զ էլ, քո աշխարհքին էլ։

Բեկի աչքերում ցուրտ կայծեր շողացին։ Մովսեսը նկատեց, թե ինչպես է ջղաձգորեն թրթռում նրա աջ այտը։

— Սողոմո՛ն,— շուռ գալով դեպի դուռը՝ զուսպ չարությամբ կանչեց Բեկը։ Սողոմոնը ներս մտավ իսկույն։— Այս պատվելի վարդապետին տար, լավ կերակրիր, օթևան տուր և ճանապարհ դիր, երբ կկամենա։— Դարձավ նեղացած վարդապետին։— Դու մեր խոնարհ ողջույնը տար վեհափառին և ասա, որ այլևս չխառնվի մեր գործերին։ Էջմիածինը խուլ է հայոց վշտին, և նրա կաթողիկոսը մեռած է հայ ժողովրդի համար։ Բարի՛ երթ...

Առավոտյան Հովասափ վարդապետը չարացած հեռացավ Հալիձորից։

* * *

Հունիսի վերջերին Հալիձոր եկավ Նաղաշ Հակոբը։ Անգամ Բեկը դժվարությամբ ճանաչեց իր սիրելիին։ Հակոբը ցնցոտիների մեջ էր, տառապած ու անհույս։ Ագուլիսի հանդիպումից հետո Բեկը նրան ճանապարհել էր Եվրոպա՝ Ամստերդամից հայոց տպարանը Հայաստան տեղափոխելու համար։ Եվ ահա երկար տառապանքից հետո Նաղաշ Հակոբը վերադարձել էր կես ճանապարհից։

Մտնելով Դավիթ-Բեկի սենյակը, Նաղաշը հանեց գլխարկն ու բազկատարած ողջունեց Դավիթ-Բեկին։

— Ահա ես վերադարձա, տե՛ր գահերեց զորավար։ Ափսոսում եմ, որ քեզ ուրախացնելու փոխարեն ծանր վիշտ պիտի պատճառեմ։

— Դժբախտությո՞ւն է պատահել, Նաղաշ։ Ձեռնունա՞յն ես։

— Ձեռնունայն ու խաբված,— գոչեց նկարիչն ու հեռապատ ընկավ գահավորակին։— Ամեն ինչ կորա՞վ...

Դավիթ-Բեկը կանչեց Սողոմոնին ու պատվիրեց գնալ դեղապետի տեսնելու։ Բայց նկարիչը ձեռքը թափ տվեց։

— Չի՛ հարկավոր։ Կդիմանամ։ Իմացիր, տե՛ր գահերեց, ծախեցին մեզ, կործանեցին մեր հույսի սյունը... Մենք քնած ենք եղել, ոտքներս՝ ջրում։

— Միայն թե առանց լացուկոծի խոսիր,— հանդիմանեց Բեկը։— Թալանեցի՞ն քարավանդ։

— Թալանեցին հայ ժողովրդի քարավանը, որ գնում էր մոլոր ճանապարհներով։ Ծախեցի՞ն, գերության մատնեցին մեզ,— սուստիկ վրդովված պատասխանեց նկարիչը։— Ռուսներին ստիպեցի՞ն, սպառնացի՞ն։ Ա՜խ, եվրոպացի աղվեսներ։ Հունիսի տասներկուսին ռուսները հարկադրված եղան հաշտության պայմանագիր կնքել սուլթանի հետ։ Հայաստանն ու Վրաստանը հանձնվեց սուլթանին։

Դավիթ-Բեկին թվաց, թե ամպրոպ ճայթեց սենյակի կամարների տակ։ Օդը դարձավ խեղդուկ։ Նա գունատվեց միանգամից, և աչքերը լցվեցին արյունով։ Նրա աջ ձեռքն ակամա բռունցք էր դարձել, այտն անվերջ ցնցվում էր։

— Ոչինչ չթաքցնես, Նաղա՛շ,— սպառնագին պահանջեց նա։— Պատմիր ամեն ինչ։

— Պատմեմ,— շունչը ետ բերեց Նաղաշ Հակոբը։— Պատմեմ, որ իմանաս եղելությունը։ Դառն է, բայց ի՞նչ արած։ Մի՞թե դառնությունը չէ հանապազ բաժին եղել մեր ժողովրդին, որ գիտե աստվածներ ստեղծել, բայց աստվածներից փշրանքների անգամ չի արժանանում։

Նաղաշը վեր կացավ, ջուր խմեց ու արդեն փոքր-ինչ հանդարտ ասաց.

— Ստամբուլ հասա մայիսի վերջերին։ Հանգրվանեցի պատրիարքի մոտ՝ նավով Ամստերդամ մեկնելու համար։ Ամեն ինչ բարեհաջող էր ընթանում, պատրիարքը խոստացել էր աջակից լինել ինձ։ Սակայն մեկնելուս նախօրյակին մեզ հայտնի դարձավ ծանր աղետը։ Սուլթանը ռուսներին ստիպեց զիջել և ստորագրել հաշտության թուղթը։ Ռուսաց դեսպան իշխան Նեպլյուևը շատ է համառել, նույնիսկ սպառնալով պահանջել, որ սուլթանն իրենց զիջի Հայաստանն ու Վրաստանը, Երևանից ու Թիֆլիսից հեռացնի իր զորքերը, բայց բան չի ստացվել։ Ֆրանկի Դը Բոնակը և անգլիո թագավորի դեսպանը ամուր էին կոխել սուլթանի ոտքը։ Սուլթանը միայն Նեպլյուևի պահանջի վրա գլուխն է տարուբերել։

Նեպլյուևը մի ամբողջ շաբաթ մնացել է իր ասածին, սպառնացել պատերազմով, դարձյալ անօգուտ։ Մի շաբաթ հետո խեղճը նոր զիջում է արել՝ համառորեն պահանջել, որ Հայաստանն ու Վրաստանը ո՛չ ռուսինը լինի, ո՛չ Թուրքինը, մնան անկախ ու չեզոք ճանաչվեն։ Սուլթանը պատասխանի համար երկու օր ժամանակ է խնդրել։ Մտադիր է եղել կատարել Նեպլյուևի այդ պահանջը։ Ա՜խ, տե՛ր աստված, բախտ չունենք, բա՜խտ...— նկարիչը երկու ձեռքով բռնեց գլուխը։

— Հետո՞,— անհամբերությունից նրա ձեռքերը ետ քաշեց Բեկը։

— Էլի անգղիացիք ու ֆրանկները մեջ են ընկել։ «Տիրիր հարուստ Հայաստանին ու Վրաստանին, սուլթա՛ն Ահմեդ, մենք քո թիկունքին ենք,— ասել են,— ո՞վ կարող է քո մի մազին դիպչել։ Տիրիր, մի՛ թույլ տուր, որ ռուսները մտնեն այդ երկրները»։ Նեպլյուևը սաստկաբար կրռվել է մեծ վեզիրի հետ։ Անգղիացիք ռազմանավեր են մտցրել Բոսֆոր, սպառնացել Նեպլյուևին, որ ռազմանավերը քշել կտան դեպի Ազով։ Ա՜խ, ա՜խ... Սպառնացել են հարձակվել հյուսիսից։ Երկու շաբաթ իրար ծնոտ են կրծել։ Անգղիո դեսպանը կատաղած շպրտել է Նեպլյուևի երեսին. «Խորհուրդ կտամ՝ ձեռք քաշես հայերից ու վրացիներից, նրանք հին ժամանակներից պատկանել են Թուրքերին, ինչո՞ւ եք ուրիշի համար ձեր գլուխը խոթում կրակի մեջ»։ Նեպլյուևը համառել է։ Անգղիացիք՝ նույնպես։ «Եթե Պետրոսը ոտքը մի քայլ էլ առաջ դնի արևելքում,— ասել է նա,— ապա իմ թագավորն ու շվեդների Կարլը հյուսիսից կմտնեն Ռուսաստան»։ Դա դեռ հերիք չէ, անգղիացիներն իրենց թնդանոթներն ուղղել են Նեպլյուևի դեսպանական նավի կողմը։ Պետրոսը ճարահատ զիջել է։ Սուլթանի հետ պայման են կապել, որ այլևս չպատերազմեն միմյանց հետ, և որ Պետրոսը բավականանա Կասպից ծովի ափերին գրաված հողերով։ Ահա թե բանը ոնց է եղել, տե՛ր Դավիթ-Բեկ։

Բեկը ծխամորճը դրել էր ատամների տակ, բայց ոչ մի կերպ չէր կարողանում աբեթը կպցնել ծխելու խոտին։ Նաղաշը նայեց նրան ու զարհուրեց։ Հիմա, հենց հիմա Բեկը կխելագարվի։

— Շարունակի՛ր,— ասաց Բեկը։— Ես լսում եմ։

— Մեծ վեճ է եղել ռուսաց ու Թուրքաց սահմանները որոշելիս։ Հաշտության պայմանը կապվել է հուլիսի տասներկուսին։ Ստամբուլի հայոց պատրիարքը սգի մեջ է։ Ա՜խ, տե՛ր աստված... Թող ինձ Ստամբուլ գնալու ճանապարհին մորթեին, և ես չլսեի այն ամենի կործանումը, ինչի համար մենք դրինք մեր կյանքն ու կայքը։

— Կնիկմարդու պես սուգ ու շիվան մի՛ արա, Նաղա՛շ,— զարմանալի հանդարտ ասաց Բեկը։— Արիացիր։

— Հեշտ է ասել «արիացիր»,— մռնչաց նկարիչը։— Ինչպե՞ս կարելի է։

— Կարելի է,— վստահ ասաց Բեկը։— Երբ ես չորս հարյուր հոգով սկսեցի իմ գործը, կռահում և նախատեսում էի ամեն դժբախտություն։ Շարունակիր, մի՛ լռիր, ես ուզում եմ իմանալ ամեն ինչ։

Նաղաշ Հակոբը հառաչանքը կուլ տվեց։

— Քուռ ու Արաքս գետերի խառնուրդը դառնում է Թուրքիայի, Պարսկաստանի և Ռուսաստանի սահմանակետը։ Իմացիր, տե՛ր Դավիթ-Բեկ։ Սա է։ Պրծա՜վ... Ցնծա՜, հա՛յ ժողովուրդ... Անվերջ արյուն թափեցիր, շահողն օտարները եղան։ Ա՜խ, ես հայոց աստծու... Մեղա՜, մեղա՜, տե՛ր, Այս ի՞նչ է կատարվում ինձ հետ... Մեր աշխարհը տվին սուլթանին, ենիչերիներին, վա՜յ մեզ, վա՜յ...

— Բավակա՛ն է,— անսպասելի որոտաց Դավիթ-Բեկը։ Երկար ժամանակ նա կանգնած մնաց բաց պատուհանի առջև, ապա սկսեց մտամտալ սույզ քայլել գորգերի վրա։ Վերջապես շուռ եկավ դեպի նկարիչն ու մեղմ ասաց.

— Մի հուսահատվիր, Նաղա՛շ։ Այդ ամենը ես կանխազգում էի։ Սակայն ոչ ոք չի կարող մեր ճանապարհից շեղել մեզ։ Ո՛չ ոք։ Ես ողորմություն չեմ հայցել ոչ ոքից և մտադիր էլ չեմ հայցելու։ Մենք կշարունակենք մեր կռիվը՝ մեր ժողովրդի ու մեր հայրենիքի ազատ գոյության համար։

— Դա է ճշմարիտ ելքը։ Ժողովրդի գոյության ճանապարհը,— հավանեց Նաղաշ Հակոբը։ Ասելիքը վերջացրած համարելով՝ նա գլուխ տվեց Բեկին ու քայլեց դեպի ելքը։ Սակայն Դավիթ-Բեկը մի փոքր էլ պահեց նրան։

— Այլևս դու չես բռնի օտար ճանապարհներ, Նաղա՛շ։ Օտարի հացը դառն է, ժպիտը՝ կեղծավոր։ Մնա Հալիձորում, այստեղ բաց արա պատկերահանի քո արվեստանոցը, ավելացրու աշակերտներիդ թիվը ու սկսիր գործդ։

Նաղաշն աչքերը թարթեց։ Չէր հավատում լսածներին։

— Այս խառը ժամանակ ի՞նչ արվեստանոց, տե՛ր գահերեց,— ուսերը ձգեց նա։— Մի՞թե դրա ժամանակն է։

— Մարմինը պահելու համար լուսավոր պետք է լինի հոգին, Նաղա՛շ։ Ժամանակին նայենք՝ կմնանք հավիտենական խավարում։ Դու

քո լույսի օջախն ստեղծիր մեր տանը։ Ինչպիսի փոթորիկներ էլ լինեն, չպետք է հուսահատվել։ Գնա, համարձակ սկսիր գործդ։ Մի քանի օրից հետո ես կգամ արվեստանոցդ։

Նաղաշ Հակոբը գնաց։ Դավիթ-Բեկը մնաց մենակ։

Այլևս մենակ էր նաև Հայոց արևելյան լեռնաշխարհում ապրող իր քաջարի ժողովուրդը։ Նրա առջև փակել էին հույսի բոլոր դռները։

Այժմ նա մեն-մենակ պետք է մարտնչեր այն հողի համար, որ իրենցն էր ի սկզբանե, իրենց հայրենի տունը, որը, սակայն, անխիղճ եվրոպացիները վաճառել են արյունռուշտ սուլթանին, առանց տիրոջ կամքը հարցնելու։

Մի՞թե Թուրք ենիչերին իր ազնվական գերուն հարցնում է, թե ինքն ո՞ւմ կցանկանա վաճառվել։

Վերջ առաջին գրքի

ՃԱՆԱՊԱՐՀ ՀԱՅՈՑ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Հազար յոթ հարյուր քսանչորս թվականի ամառն անցավ առանց որևէ նշանակալից իրադրության։ Թուրքական բանակը նստած էր մնում Երևանում։ Սյունյաց սահմանագլխային ամրոցներից Արարատյան դաշտ առաքված լրտեսները վերադառնում, պնդում էին, որ Քյոփուրլու Աբդուլլահ փաշան տեղից շարժվելու ոչ մի նշան, ցույց չի տալիս։

Խաղաղ անցան նաև աշունն ու ցրտակապան ձմեռը։ Դավիթ-Բեկը թուրքական բանակներին սպասում էր հաջորդ՝ 1725 թվականի գարնանը։ Սակայն ձմռան վերջին Ստամբուլում եղած հավատարիմները նրան լուր տվին, թե արաբները ապստամբել են Եգիպտոսում, որը ահուդողի մեջ է գցել սուլթան Ահմեդին։ Թուրքերն իրենց ռազմական ամբողջ զորությունն ուղղել են այդ վտանգավոր ապստամբությունը ճնշելու։ Երևանում եղած թուրքական զորքի մեծ մասը ևս ուղարկվեց Եգիպտոս։

Մի ձմեռվա սառույց էլ հալվեց, մի գարուն էլ եկավ, ու նոր ծաղիկներ եկան։

Եկավ 1726 թվականի գարունը։ Ձմեռը ծանր ու բքառատ էր եղել։ Քամին սարերից ձյունի վիթխարի հյուսքեր էր քշել, լցրել կիրճերը, անհամար ձորակներն ու խանդակները, փակել լեռնաշխարհի ճանապարհները։

Ողջ ձմեռը լեռնցիները կտրված էին մնացել բովանդակ աշխարհից։ Բայց այդ ծանրաձմեռ օրերին անգամ Դավիթ-Բեկի սուրհանդակներն անվերջ մաշել էին լեռնային ճանապարհները։ Նրա լրտեսները թափանցել էին Երևանում նստած փաշայի զորակայանը, մտել շահ Թահմազի պալատը, լուրեր բերել Ստամբուլի Բարձր Դռնից։

Թեև Սյունիքն ու Արցախը վայելեցին երկու խաղաղ տարի ևս, բայց

հայերը լավ էին հասկանում, որ խաբուսիկ է այդ խաղաղությունը, որ վաղ թե ուշ կպայթի պատերազմի փոթորիկը։

Տևական կռիվներում սուլթանն արյան մեջ խեղդեց ապստամբ Եգիպտոսը։ Հարյուր հիսուն հազար արաբ գլխատեց նա Ալեքսանդրիայում ու, նրանց գլուխները նավերով Ստամբուլ ուղարկելով՝ բուրգեր շինեց իր մայրաքաղաքի Աթմեյդան հրապարակում։

Այժմ արդեն Դավիթ-Բեկի հավատարիմ մարդիկ տագնապալի լուրեր էին հաղորդում նրան։

Ավղան Միր Մահմուդն առաջվա պես նստած էր Սպահանում։ Պարսից աշխարհը խեղդվում էր նրա մագիլների մեջ։ Պետրոս կայսրը վախճանվել էր մի տարի առաջ, և նրա գահին բազմել էր Եկատերինա կայսրուհին։

Դավիթ-Բեկը հասկանում էր, որ Պետրոսն իր հետ գերեզման տարավ նաև հայոց բախտի նորածագ աստղը։

1726 թվականի վաղ գարնանը թուրքերը պատերազմ սկսեցին պարսից դեմ։ Նրանք դյուրին կերպով գրավեցին Մակուն։ Մակվա խանն ու նրա մոտ ապաստան գտած Նախիջևանի փախստական Ասլամազ Ղուլի խանը թուրքերին դիմադրելու փորձ արին, բայց նրանց հապճեպ հավաքած խաժամուժ զորքը լքեց ռազմադաշտը։ Խաները հազիվ կարողացան վերցնել իրենց ընտանիքներն ու մի քանի տասնյակ հավատարիմներով ապաստան գտնել Դավիթ-Բեկի մոտ։ Սրանց Սյունիք գալուց մի քանի օր հետո, Հալիձոր հասավ նաև Բայազետի Խոսրով խանը։

Դավիթ-Բեկը նրանց ընդունեց պատիվներով։

— Պատճառն ի՞նչ է, որ դուք թավրիզում ապաստան որոնելու փոխարեն եկել եք իմ երկիրը,— մի անգամ հարցրեց նա խաներին։

— Թահմազն ուժ չունի դեմ կանգնել թուրքերին, հովանավո՛ր մեր,— պատասխանեցին խաները։— Մեր հույսը դու ես։ Մենք քո օգնությամբ թուրքերին կքշենք Նախիջևանից, Բայազետից, Մակվից։ Մենք այժմ անպաշտպան փախստականներ ենք, տե՛ր զորավար գահերեց, մենք ապավինում ենք քո խղճին ու բազկին։

Բեկը նրանց պահեց Հալիձորում և Հայոց ժողովի գանձարանից ապրուստի միջոցներ տրամադրեց։ Նա ուրախ էր, որ խաներն ապաստան են գտել իր մոտ։ Այդ երևույթը մեծ կշիռ կստեղծի հայոց իշխանության համար թե՛ ներսում և թե՛ հարևան երկրներում։ Բացի այդ, խաները չեն հաշտվի կատարվածի հետ և վաղ թե ուշ զենք կբարձրացնեն թուրքերի դեմ. շիա պարսիկները չեն սիրում օսմանյան սյունի մահմեդականներին. նրանց էին համարում պարսկական գահի կործանման ու իրենց երկրի ավերման պատճառը։

Սակայն այն բանը, որ Դավիթ-Բեկը ապաստան տվեց փախստական խաներին, բնավ դուր չեկավ հայ զորապետներից մի քանիսին։ Ոմանք տրտնջացին ափաշկարա. «Երեկ չէ՞ր, արդյոք, որ Նախիջևանի Ասլամազ Ղուլի խանը, Բարկուշատի Բաթալի Սուլթան խանի հետ, կռվում էր իրենց նորաստեղծ իշխանության դեմ։— Ասում էին։— Շուշանաձորի ճակատամարտում Բաթալի Սուլթան խանը Թորոս իշխանին հաղթեց և պատանի Ստեփանոս Շահումյանին գերի տարավ միայն այն պատճառով, որ նրան իր գնդերով օգնության էր հասել Ասլամազ Ղուլին»։

Տրտնջում էին ոչ միայն զորապետներից շատերը, այլև զորքը, մանավանդ Երկրի ապավեն գնդի մարտիկները։ Մի քանի տաքգլուխներ փորձ արին գիշերով մտնել խաների կացարանն ու սպանել նրանց։ Դավիթ-Բեկն այդ իմանալով՝ կատաղեց, աստիճանազուրկ արեց երկու տասնապետի, որոնք առիթ էին տվել ու գլխավորել խռովությունը։

Տրտունջները սաստկացան։ Մի անգամ, երբ Դավիթ-Բեկը պատրաստվում էր այցի գնալ պարսիկ խաներին, նրա մոտ եկավ Մխիթար սպարապետը։

— Զորքն ու ժողովուրդը դժգոհում են, տե՛ր Դավիթ-Բեկ,— ասաց նա՝ պատշաճ ողջույնից հետո։— Դու իզուր ես ապաստան տալիս պարսիկ խաներին, որոնք այնքա՜ն չարիքներ պատճառեցին մեզ։

— Իսկ ի՞նչ ես մտածում դու, որ հասարակ զինվոր չես, այլ սպարապետ,— հոնքերը կիտելով հարցրեց Բեկը։

— Ես կարծում եմ, որ պետք է խաներին կամ կոտորել, կամ շրջաթայված ուղարկել Աբդուլլահ փաշային,— պատասխանեց սպարապետը։

Եվ ստացվեց բնավ անսպասելի մի բան։ Դավիթ-Բեկը ծանր շընչեց, լայնացրեց ռունգներն ու ասաց չարացած.

— Չէի՞ր ցանկանա արդյոք, սիրելի՛դ իմ Մխիթար, որ ես ինքս էլ իմ կամքով գնամ Աբդուլլահի ոտքն ու համբուրեմ նրա ներքանը։

— Բե՜կ,— սփրթնեց սպարապետը...

— Մի՛ խոսիր,— դառնանալով, որ սպարապետը հարկավորին չափ հեռատեսություն չունի, մռայլ ասաց Դավիթ-Բեկը։— Չե՞մ ուզում... ես չեմ կամենում այլևս ականջալուր լինել այլախորհուրդներին։ Նմանօրինակ խակ ու տգայական խորհուրդները միայն աղետ են բերում հայ ժողովրդի գլխին։ Լքե՞մ մոտիկ հարևանիս, դահճի՞ն մատնեմ նրան։ Ա՛յդպիսի խորհուրդ միայն խելագարները կարող են տալ։

Վիրավորված, զարմացած ու այլակերպված Մխիթարը չէր հասկանում, թե ի՞նչ է կատարվում Բեկի հետ։ Կարծես իր առջև բոլորովին մի ուրիշ մարդ էր՝ Դավիթ-Բեկի կերպարանքով ու զգեստներով։

— Բե՛կ, Բե՛կ, — աղերսեց սպարապետը։ — Դու ինձ հայրություն ես արել, Բե՛կ։ Ես չեմ ուզում հակառակել քո ոչ մի խոսքին։ Բայց դու վտանգավոր խաղ ես սկսել։ Թուրքերի բարկությունն ավելի կասստկանա, երբ իմանան, որ դու ապաստան ես տվել իրենց թշնամի խաներին։ Լա՜վ մտածիր, աղաչո՛ւմ եմ...

— Թուրքն այսօր կամ վաղը կհեռանա Հայաստանից ու Պարսկաստանից,— առաջվա ցասումով շարունակեց Բեկը։— Պարսիկը նորից կմնա մեր հարևանը, թուրքին՝ թշնամի։

— Եվ քո թշնամին։

— Այո՛, և իմ։ Բայց դա երեկ էր։ Դա կարող է լինել և վաղը։ Իսկ այսօր պարսիկը թուրքի թշնամին է։ Այսօր նա մեզ հետ հաշտվելու միջոցներ է որոնում։ Այսօր նա ուժ է մեր թշնամու դեմ։ Օգտվիր դրանից, եթե կարողանում ես ու խելք ունես։ Հանգուցյալ Օրբելյան Իսրայելը ֆրանկների երկրների մեծամեծաց դռներն էր մաշում՝ Հայոց աշխարհին օգնություն բերելու համար։ Տվի՞ն քո եվրոպացիք այդ օգնությունը։ Այդ եվրոպացիք չէի՞ն արդյոք, այդ քրիստոնյա տերությունները չէի՞ն, որ երեկ մեր աշխարհը ծախեցին սուլթանին։ Ծախեցի՛ն, ինչպես վերջին ստրուկին, որին ուժասպառ էին արել՝ երկար ու ձիգ տարիներ շարունակ ազատություն խոստանալով, խաբելո՜վ...

— Նույնը կանի և պարսիկը,— չզիջեց սպարապետը։

— Արել է ու կանի։ Բայց այսօր այդպես չէ. խաները դեռևս ուժ ունեն, խաները մեզ հետ միաբան կկռվեն թուրքերի դեմ. ինչո՞ւ մերժել դա, ինչո՞ւ, երբ մենակ ենք ու օգնության կարոտ։ Բարի՜ գիշեր։

Սպարապետը նրա մոտից դուրս եկավ նեղսրտված, մոլոր։ Բայց և այնպես Բեկը չգնաց խաներին այցի։ Մտավ Երկրի ապավեն գնդի զորանոցներն ու երկու օր շարունակ դուրս չեկավ այնտեղից։ Նրա երբեմնի վեհաշուք մորուքը գզգզվել էր, աչքերի տակ կասկածելի կապույտ էր երևում։ Նա այժմ հազվադեպ էր ընդունում զորապետներին։ Մելիքները երբեմն ժամերով կանգնած էին մնում նրա ընդունարանի նախասենյակում։

Միայն նրա սպասավոր Սողոմոնին էր հայտնի, որ ամեն ուրբաթ օրվա գիշերը երկու հայ ու երկու պարսիկ լրտեսներ էին դուրս գալիս Հալիձորից ու մեկնում անհայտ ուղղությամբ... Դրանց մասին ուշ իմացավ Մխիթար սպարապետը։ Վիրավորվեց սաստիկ, տարակուսանքից ուսերը ձգեց։ Ինչո՞ւ գահերեց զորավարն իրեն տեղյակ չի պահում, թե ի՞նչ մարդիկ է ուղարկում լրտեսության, ո՞ւր և ի՞նչ նպատակով։

Երբ այդ մասին նա զգույշ խոսք բաց արեց Բեկի մոտ, հակառակ իր սպասածին, Բեկն անհոգ ծիծաղեց և միայն իրեն հատուկ հնարամտությամբ աշխատեց աննկատելի իմանալ, թե ով է այդ գաղտնիքը հայտնել նրան։ Սպարապետը տվեց այն զինվորի անունը, որը պարսիկ ու հայ լրտեսներին ծածուկ անց էր կացնում գաղտնի ուղիներով և որից էր իմացել բանը։

Հաջորդ օրը սպարապետը հրապարակում ցից հանած տեսավ այդ զինվորին։ Ցնցվեց։ Վիրավորանքը կրկնապատկվեց։ Երեկոյան Բեկն այդ առթիվ նրան ասաց.

— Տեսա՞ր ցից հանած զինվորին։

— Տեսա, Բե՛կ։ Դաժան ես։ Չէ՞ որ զինվորը բանն ինձ էր հայտնել միայն՝ իր սպարապետին։

— Միևնույն է։ Եթե քո գաղտնիքն էլ գան ու ինձ հայտնեն, այրիր հայտնողին։

Այս անգամ սպարապետը Դավիթ-Բեկի մոտից դուրս եկավ խորտակված հոգով։ Մի սառը ճեղք էր առաջանում նրա և Բեկի միջև։

Այդ ճեղքը վերանալու փոխարեն, սակայն, մեծացավ։

Աբդուլլահ փաշայից պատվիրակություն եկավ Սյունիք։

— Պահանջում եմ անհապաղ շղթայես պարսիկ խաներին ու հանձնես իմ մարդկանց։— Խստորեն ասպարել էր նա։— Դրանք սուլթանի թշնամիներն են, և ով նրանց ապաստան է տալիս՝ իր վրա է քաշում տիեզերքի տիրոջ արդար բարկությունը։

Դավիթ-Բեկը մերժեց Աբդուլլահ փաշայի պահանջը։ Դա արդեն անհանդուրժելի համարեց Մխիթարը։

— Պարսիկ խաների համար դու վտանգում ես մեզ, տե՛ր Դավիթ-Բեկ,— փոքր-ինչ բորբոք ասաց նա։— Կատարիր փաշայի կամքը։

— Երբ ինքդ լինես գահերեցը, կանես քոնը,— պատասխանեց Բեկը։— Իսկ այժմ հանգիստ թող ինձ մինչև իմ վերջին կայանը։

Եվ մնաց համառ, իրասածի։

* * *

Շուտով ի հայտ դարձավ մի ծանր լուր ևս։ Թուրքերը տասնօրյա գրոհներից հետո առել էին Շամխոր քաղաքը։ Ադրբեջանցի ու հայ պաշտպաններն ընկել էին գլխովի, իրար հետ բազուկ-բազկի։ Շամխորի անկման լուրը Գանձասարից թռավ-անցավ գավառները։ Նախիջևան, Գանձակ ու Շամխոր քաղաքներն առնելով՝ թուրքերը երկսայր աքցանի մեջ առան Սյունիքն ու Արցախը։

Հայոց գնդերի մեջ կասկածելի շշուկներ սփռվեցին։

Երևացին թափառական կրոնավորներ։ Չգիտես որտեղից լույս ընկնելով՝ նրանք լուր տարածեցին, թե Էջմիածնի կաթողիկոսը թրքացել է և կոնդակ է հղել բոլոր հայերին՝ ընդունել իսլամը։ Կիսախելագարի մեկը՝ մերկ ու բոբիկ թափառում էր գյուղերում ու հայտարարում, թե ինքը Հիսուս Քրիստոսն է, որ ահա եկել է վերջին դատաստանի։

Դավիթ-Բեկի հրամանով գտան թափառական կրոնավորներին ու իրեն Քրիստոս հայտարարողին։ Կրոնավորներին այրեցին Հալիձորի հրապարակում։ Սուտ Քրիստոսի որովայնը թափեցին ու, թողնելով հրապարակում ընկած, ասացին.

— Եթե Քրիստոսն ես, ապա հարություն առ։

Նրա դիակը հոտեց, ու քաղաքացիները Բեկին խնդրեցին հրաման տալ՝ լեշը քաղաքից դուրս նետելու։

Դավիթ-Բեկն սկսեց երբեմն իր տունը կանչել պարսիկ խաներին, միատեղ խրախճանում, նարդի էին խաղում մինչև լուսաբաց։ Խաները կարողացել էին իրենց հավատարիմ մարդկանց միջոցով մի երկու-երեք հարյուր մարդ հավաքել Հալիձոր՝ Բեկի հետ թուրքերի դեմ դուրս գալու համար։ Մի անգամ Դավիթ-Բեկը խաներին հասկացրեց, թե օգտակար կլինի, եթե շահ Թահմազը բանակցություններ սկսի իր հետ։ Ակնարկեց նաև, որ ինքը չի ցանկանում առաջին քայլն անել և կուզենա, որ շահն ինքը մի այդպիսի հրավերք անի իրեն։

Խաները գաղտնի պատվիրակություն ուղարկեցին Թավրիզ։ Այդ պատվիրակության մասին հայերից միայն տեղյակ էին Դավիթ-Բեկն ու Մովսեսը, որ իր դպրոցում զբաղված լինելով հանդերձ՝ Բեկի առենադպիրի պաշտոնն էր կատարում միաժամանակ։

Եվ ահա Հալիձոր եկան Թահմազ շահի առաքած մի խան ու մի մոլլա։

— Մեր արեգնափայլ շահն ուզում է բանակցել քեզ հետ, ո՞վ հայերի շահնշահ Դավիթ-Բեկ,— ասացին նրանք։— Ուրեմն առաքիր քո մարդկանց շահի դուռը։ Շահն ուրախ ու երջանիկ կլինի, մանավանդ, եթե ինքդ շնորհ անես գնալ նրա մոտ և միատեղ խորհել, քննել անօրեն թուրքերի դեմն առնելու գործը։

Բեկը Հայոց ժողովի ավագանու խորհուրդ գումարեց, և շահի պատվիրակները կրկնեցին նույնը, ինչ ասել էին նրան։

Այդ անսպասելի նորությունը տարօրինակ թվաց հայ զորապետներին։ Սպարապետը բարկությունից հանգիստ չէր գտնում նստած տեղը և սպասում էր, որ Դավիթ-Բեկը պատվիրակներին դուրս կվռնգի ու կհրամայի փակել նրանց աչքերը, անհապաղ անցկացնել Արաքսը։

Բայց այդպես չեղավ։ Զորապետներին խոսք շտալով՝ նա պատվիրակներին խնդրեց սպասել մի որոշ ժամանակ, մինչև իրենք վճռեն իրենց անելիքը։ Նրանց ուղարկեց Պղինձ Արթինի ապարանքը ի պահ։

— Դուք էլ խորհեցեք, ավագնե՛ր,— ասաց նա յուրայիններին։— Հարմար է, որ մենք պարսիկների հետ հաշտվենք ու միասին ճակատանք թուրքական բանակներին։

Դրանով ավարտվեց ավագների խորհուրդը։

Մխիթար սպարապետը բոլորովին հուսահատվեց։ «Փախստական խաները խելքահան են արել Դավիթ-Բեկին,— ցավով, ցասումով ու երկյուղով մտածում էր նա։— Այդ նրանք են մեզ նետում շահ Թահմազի ձեռները։ Խելագարվե՞լ է Բեկը, աստվա՜ծ իմ։ Ինչպե՞ս կարելի է հաշտվել պարսիկների հետ։ Այժմ էլ Միր Մահմուդի՞ն գրգռենք մեր դեմ»։

Ոչ մի կերպ նա չէր կարողանում կռահել Բեկի միտքը։ Միայն ավելի ու ավելի էր համոզվում, որ նա մոլորվել է։ Բայց և սիրտ չէր ավելի ու ավելի էր համոզվում, որ նա մոլորվել է։ Բայց և սիրտ չէր անում նորից երես առ երես բախվել նրա հետ։ Պատժից չէ, որ վախենում էր։ Ամենից շատ նրան սարսափեցնում էր ավելի ահավոր մի բան՝ պառակտումը։

Պարսկաստան դեսպանություն ուղարկելու համամիտ էին մի քանի մելիքներ միայն և Բայանդուր իշխանը։ Մյուսները տրտնջում էին, ձեռքները թափահարում, խուսափում այդ մասին որևէ բացորոշ բան ասել։ Միայն Տեր-Ավետիսն ու մելիք Ծգանն էին իրենց դժգոհությունը հայտնում սպարապետին։ Սակայն Բեկի մոտ սրանք էլ սիրտ չէին անում բերան բաց անել այդ առթիվ։ Իսկ մելիք Շաֆռազն ասում էր.

— Ես հավատում եմ Բեկին, նա անփորձ ճանապարհով չի տանի մեզ։

Այնինչ, պարսից պատվիրակները ձանձրանում էին Պղինձ Արթինի ապարանքում։ Դավիթ-Բեկն ասես մոռացել էր նրանց գոյությունը։

* * *

Սկսվեց այն, ինչից առավել շատ էր զգուշանում Դավիթ-Բեկը։

Զորքի մեջ հուսալքության նշաններ երևացին։ Բեկի մարդիկ ամեն օր որևէ տհաճ տեղեկություն էին հայտնում նրան.— «Մնացել ենք անօր որևէ տհաճ տեղեկություն էին հայտնում նրան.— «Մնացել ենք անճար ու անօգնական,— խոսում էին զորանոցներում, պահակային դետքերում, գյուղերում։— Թուրքերը պարկի մեջ են առել մեզ։ Չորս տարի է արյուն ենք թափում, բայց վերջը չի երևում»։

Նայր առած տրտունջներից հետո սկսվեց դասալքությունը։ Սկզբում հատուկենտ վախկոտներ լքեցին զորքը և կորան, ո՞վ գիտե որ սա-

տանայի գիրկը։ Լուրեր տարածվեցին, թե թուրքերը ձեռք չեն տալիս իրենց կողմն անցածներին։

Երկրի ապավեն գնդի զինվորները մի քանի դասալիք որսացին ու կախեցին մեծ ճանապարհի վրա։ Բայց դա էլ չօգնեց։ Օսմանցիների ահը մեծ էր։ Փախուստ տվին արդեն մանր խմբեր։ Զավնդուրի գնդից Բարսեղ անունով մի հարյուրապետ վերցրեց իր հարյուրյակն ու հեռացավ դեպի Արաքսի հովիտը։ Նրան չկարողացան բռնել։ Թեև Բարսեղը չանցավ թուրքերի կողմը, բայց միաբանության լուծման քարը դրեց և սկսեց ավազակությամբ պարապել Սև լեռներում...

Տրտնջալ սկսեցին նաև որոշ մելիքներ ու տանուտերեր. «Ո՞ւր է տանում մեզ այդ արյունահեղությունը,— ասում էին նրանք։— Վերջը որտե՞ղ է»։

Վրաններում, իրենց տներում կամ ճանապարհներին ասված այս քսփսոցները հասնում էին Դավիթ-Բեկի ականջին ու դառնացնում նրան։ Իհարկե, նա կարող էր մի գիշերվա ընթացքում ձերբակալել տրտնջացողներին, ոչնչացնել նրանց, բայց չէր անում։ Հասկանում էր, որ դրանով չի փրկի վտանգված գործը։ Ավելին, ծայր կառնի մի ներքին, եղբայրասպան կռիվ։ Պետք է համբերել, չլսելու տալ այդ ամենը և մի արտակարգ միջոց գտնել, որով հնարավոր լիներ անսասան պահել միաբանությունը, ոգևորել հուսահատվածներին։

Այժմ ավելի շատ էր լինում զորքի մեջ։ Թեև սիրտը ծանրացած էր դառնությամբ, բայց ուրախ էր ձևացնում իրեն, տագնապի ոչ մի նշան չէր ցույց տալիս։ Ջիարշավներ էր կազմակերպում, ճաշում զինվորների հետ։ Մելիքների նկատմամբ արտակարգ ուշադիր էր ու անվերջ առիթներ էր ստեղծում գիշերն անցկացնել այս կամ այն մելիքի տանը՝ կերուխումի հրավիրելով բոլոր զորապետներին։

Մի անգամ, երբ զորապետներով ու մելիքներով Բեկը գտնվում էր Մեղրիում, Կոստանդին զորապետի տանը, նա մելիքներին ներկայացրեց մի պարսիկ հարյուրապետի ու ցնծությամբ ասաց.

— Շահ Թահմազից նոր պատվիրակ է ժամանել, եղբայրնե՛ր։ Բարի լուր է առաքել մեզ շահը։ Լսեցե՛ք։ Շահի զորքերը, Թահմազ Ղուլի Նադիր խանի գլխավորությամբ, Ուրմիո մոտ ջարդել են օսմանյան Ղարա Բիբար փաշայի բանակը։ Փաշան մազապուրծ փախել է Վան։ Մթնել է սկսել օսմանցիների աստղը, աչքներդ լո՛ւյս...

Զորապետներն աշխուժացան, սկսեցին հարցուփորձ անել պարսիկ հարյուրապետին, մանրամասնություններ իմանալ Ուրմիո ճակատամարտի մասին։

— Թահմազին լքած խաներն արդեն հավաքվում են նրա շուրջը,— բարձրաձայն հայտարարեց Դավիթ-Բեկը։— Թավրիզն ուժ է կուտակում օսմանլուի դեմ։

Այդ լուրը չուրախացրեց Մխիթար սպարապետին։ Նրան դուր չեկավ Դավիթ-Բեկի ոգևորությունը։ Ի՞նչ անենք, որ Նադիրը հաղթել է ինչ-որ Ղարա Բիբար փաշայի։ Դրանով թուրքերը հո չեն քաշվի Երևանից ու Գանձակից։ Պատերա՞զմ է... Պատերազմի աստվածն օրը տասը կին է փոխում։

— Կանչենք Հալիձորում եղած պարսիկ խաներին, մարդիկ ուղարկենք Պղինձ Արթինի ապարանքը, թող շահի պատվիրակները գան,— առաջարկեց Կոստանդին զորապետը։

— Նրանք արդեն այստեղ են,— ասաց Դավիթ-Բեկը։

Պարսիկ խաներին ու պատվիրակներին բերին կերուխումի։ Բեկը նրանց նստեցրեց իր մոտ, իր ձեռքով գինի լցրեց նրանց համար։

Այդ արդեն բոլորովին դուր չեկավ սպարապետին։ Նա իր գավաթը նետեց գետնին։ Բարեբախտաբար Բեկն ու պարսիկները չնկատեցին նրա այդ արարքը։ Առաջին վեճից հետո սպարապետը մի տարօրինակ սառնություն էր զգում դեպի Դավիթ-Բեկը։ Նրան թվում էր, թե գահերից զորավարը կորցրել է իր երբեմնի արթուն խելքն ու հավասարակշռությունը և այն չի անում, ինչ հարկավոր է։

Խնջույքից հետո, երբ պատվիրակներն ու փախստական պարսիկ խաները գնացել էին, Բեկն ասաց.

— Լսեցեք, զորապետնե՛ր։ Հարկավոր է հարգել շահի խնդրանքը և դեսպանություն ուղարկել նրա մոտ։

Սպարապետը ցնցվեց։ Մելիք Բարխուդարը նկատեց նրա այլափոխությունն ու դառն քմծիծաղեց։ Բարկությունից սպարապետի աչքերը մշուշվել էին, մոմերի լույսն արնագույն էր թվում նրան։ Ինչպե՞ս...— մտածում էր նա,— շահի դո՞ւռը գնանք։ Այս ի՞նչ է կատարվում Բեկի հետ»։

— Փախստական խաներին ուղարկենք Պարսկաստան,— նորից խոսեց Բեկը։— Ուղարկենք հենց վաղը։ Թող գնան ու շահի բանակում կրուվեն թուրքերի դեմ։ Ապա դեսպանություն կազմենք՝ Թավրիզ ճանապարհելու։ Շահի հետ միաբանվել է հարկավոր թուրքերի հերն անիծելու համար։

— Որ հետո Թահմազն իր ճանկե՞րը խրի մեր մարմինը,— չդիմացավ, ճչաց սպարապետը։ Բոլորը զարմացած նայեցին նրան։— Հեռու կաց այդ վտանգավոր ճանապարհից, տե՛ր Դավիթ-Բեկ։ Հեռո՛ւ...

— Դատիր առանց տաքանալու, ինչպես վայել է մի ամբողջ ժողովրդի բախտի տիրոջը,— հանդարտ ասաց Բեկը։

— Ես դատում եմ խղճի մտոք,— չզիջեց սպարապետը։

— Հերի՛ք է, հերի՛ք,— ձեռքերը թափահարեց Բեկը։— Վճռված է։ Վերադառնանք Հալիձոր, դեսպանություն ուղարկենք Թավրիզ։ Իսկ պարսիկներին վաղը ճանապարհ դիր, Մխիթա՛ր։ Լսո՞ւմ ես, ճանապարհ դիր պատվով ու հարգանքով։— Նա դարձավ տանտիրոջն ու գոչեց.— Էլի գինի՛ բեր, Կոստանդին։ Գինու գավաթները ձեռքներիս դիմավորենք հայոց լուսաբացը և մեկնենք Հալիձոր։

***

Թեև մի շաբաթ էր անցել, ինչ վերադարձել էին Հալիձոր, բայց Դավիթ-Բեկը չէր մոռացել Մխիթար սպարապետի հանդուգն առարկությունները, երբ ինքը ցանկություն հայտնեց անհապաղ դեսպանություն ուղարկել Պարսկաստան։ Դժգոհությունը ցույց չէր տալիս իր սիրելիին։ Առաջվա պես սպարապետի հետ պտտվում էր զորանոցները, զրույցի բռնվում զինվորների հետ և կատակելով, ուրախանալով՝ վերադառնում տուն։

Շուտով նա դեսպանություն կազմեց՝ Թավրիզ ուղարկելու համար։

Դեսպանության գլուխ նշանակեց Բայանդուր իշխանին։ Նրա հետ դրեց բանիմաց ու չվհատվող Մովսես աբեղային՝ մելիքական զգեստներ տալով նրան։ Ընտրեց նաև երեք հարյուրապետ ու պարսից արքունիքի սովորություններին քաջատեղյակ ագուլիսցի Խաչիկ անունով մի խոջայի։ Դեսպանությանն ուղեկցելու համար Բեկն իր ձեռքով երեք հարյուր ձիավոր ընտրեց Երկրի ապավեն գնդից՝ բոլորն էլ բարձրահասակ ու կորովի մարդիկ։

Դեսպանությունը ճանապարհելու նախօրյակին զորապետները հավաքվեցին Բեկի մոտ։ Յուրաքանչյուրի դեմքին կարելի էր կարդալ նրա միտքը՝ համաձա՞յն է գահերեց զորավարի արարքին, թե՞ ոչ։ Բեկը չէր նայում սպարապետի կողմը։ Չէր ուզում նորից վեճի բռնվել նրա հետ։ Նույնիսկ չէր ցանկանում խորհուրդ հարցնել ավագանուց, բայց ձևականության համար կանչել էր նրանց, թեև միևնույն էր, անելու էր իրենը։

— Քանի ուշ չէ, մեկ անգամ էլ խորհիր, տե՛ր Դավիթ-Բեկ, ազգո՞ւտ գործ ես անում, արդյոք, շահի դուռը վազելով,— խոսեց սպարապետը՝ փորձելով նրան ետ պահել իր մտադրությունից։

— Ես պատվազրկության նշույլ անգամ չեմ տեսնում դրա մեջ,— սառը պատասխանեց Բեկը։

— Ի՞նչ կմտածի Աբդուլլահը, երբ լսի, որ մենք բարեկամանում ենք պարսիկներին, դեսպան ենք ուղարկում շահի մոտ։

— Վատ զորավար է այն մարդը, որ չի հասկանում դեպքերի իմաստը,— պատասխանեց Բեկը։

Վիրավորանքը ծանր էր։ Սպարապետի սիրտը տակնուվրա եղավ։ Բարխուդարը մտքում թունոտ շարախնդաց նրա դեմ։ Մելիքները զարմացած նայում էին մերթ Բեկին, մերթ իրեն կորցրած սպարապետին։ Բեկը ոտքն ուժգին խփեց գետնին։ Մի քանիսը ահից սկվեցին։ Հիմա մի անհաճո բան կկատարվի։

— Զորքը տրտնջում է,— բարկությունից կապտեց Բեկը։— Տրտնջում է և ժողովուրդը... Ականջներդ լա՛վ բաց արա, տեր Մխիթար սպարապետ (վերջին խոսքերը խիստ հանդիմանական էին)։ Զավնդուրի Բարսեղ հարյուրապետը փախավ... Բարսեղը վերջին օրինակը չէ։ Դասալիքները շատացել են։ Զորքին հուսադրել է պետք։ Ինչո՞վ հուսադրենք, ինչո՞վ։ Սպարապետ ես՝ ճարը գտիր... Դաշնակից պիտի որոնել Թուրքի դեմ։ Որոնել այստեղ, մեր հարևանների մեջ, Թեկուզ Թուլլին, անօրենին, երեկվա մեր թշնամուն։ Ով չի հասկանում այս, նա տիրացու է, տգետ, անխելք տիրացու...

— Բե՛կ,— մի քայլ առաջ գալով գոչեց սպարապետը։— Ուշքի եկ, Բե՛կ։ Հիշիր, թե ի՞նչ ես անում... գու սպասատան ուզիր մեր թշնամի խաներին, ապա նրանց պատվով ճանապարհեցիր իրենց աշխարհը։ Հիմա էլ դու մեզ նորի՞ց ես նետում Բահմազի ոտքերը, կախման մե՞ջ ես դնում մեզ նրանից։

— Ես վերջին շան ոտքն էլ կընկնեմ, եթե համոզված լինեմ, որ նա օգնական է կանգնելու ահեղ վտանգի մատնված ժողովրդին հայոց։ Ահա, հասկացի՛ր, վերջապես, տե՛ր սպարապետ։

Բայց Մխիթարը չէր զիջում։ Խոսում էր տաքացած, ձեռքերը թափահարելով։ Մելիքները չէին խառնվում նրանց վեճին։ Սիրտ չէին անում կողմ կանգնել մեկին կամ մյուսին, հասկանալով, որ նրանցից յուրաքանչյուրը կարող է ողջ բարկությունը շուռ տալ իր գլխին։

— Ավղան Միր Մահմուդը կթշնամանա մեզ հետ,— նորից բացականչեց Մխիթարը։

— Կարծես մինչև հիմա քո հորեղբայրն էր,— հեգնեց Բեկն ու ծռեցնայեց զորապետներին։— Հիմա բոլորն են մեզ թշնամի, բոլո՛ր...

— Եվ Թահմազը։

— Եվ Թահմազը, այո՛,— համաձայնեց Բեկը.— բայց նա Թուրքի թշնամին էլ է. նա գնում է Թուրքի վրա։

Այժմ Բեկը խոսում էր ոչ առաջվա բարկությամբ. նայում էր ուղիղ սպարապետի աչքերին։ Սա դիմանում էր նրա ծանր հայացքին։ Ձայնը ցածրացրեց նաև սպարապետը։ Նույնիսկ սկսեց խնդրել, աղերսել, որ դեսպանությունն չուղարկվի Պարսկաստան։ Փորձում էր համոզել, որ դրանից ոչ մի շահ չեն ունենա իրենք։ Ընդհակառակը, կգրգռեն Թուրքերին, կգազազի Միր Մահմուդը։

— Զարմանում եմ, թե ինչպե՞ս ես հավատում Թահմազին,— անհույս վերջացրեց նա իր երկար հորդորները։— Հավատո՞ւմ ես, որ նա կօգնի մեզ։

— Հավատո՛ւմ եմ.— հանդարտ պատասխանեց Բեկը։

— Միամտությո՛ւն...— դուրս թռավ սպարապետի բերանից։ Ջրդեջաց՝ չափն անցկացնելու համար։

Զորապետները նայեցին Բեկին։ Կուլ կտա՞ այդօրինակ վիրավորանքը, թե հիմա կհրամայի ձերբակալել սպարապետին։ Այդպես արեց չորս տարի առաջ, երբ սպարապետը խուսափել էր պարսիկների հետ ճակատամարտել՝ իր զորքի պարտությունը կանխագուշակելով։ Բեկը հրամայել էր գլխատել Մխիթարին, բայց մելիքների պաղատանքներին զիջելով՝ ներել էր... Հիմա՞ էլ չի կատարվի, արդյոք, նույնը...

Բայց Բեկը, առանց սրտում կուտակված բարկությունը ցույց տալու, զարմանալի հանդարտությամբ ասաց.

— Այսուհետև ես գլխատել կտամ նրան, ով կհամարձակվի մի փոքր անգամ հակառակ կանգնել իմ կամքին, թեկուզ դա իմ ամենասիրելին լինի։

Երկար լռեց՝ ռունգները լայնացրած շնչելով ծանր օդը։ Մելիք Բարխուդարը ցնծում էր։ Գժտությունը առկա էր։ Ափսո՛ս, որ Բեկը բանտ չի ուղարկում սպարապետին։ Բայց հասկացրեց. «Թեկուզ դա իմ ամենասիրելին լինի»։ Գիտեր, որ Մխիթարը Բեկի սիրելին է և նրան իր որդին է համարում։ Արած ակնարկը պարզ էր։

— Ցրվեցե՛ք,— պահանջեց Բեկը։— Գնացեք և սպասեցեք հրամանիս միայն։ Իսկ դու, սպարապե՛տ Մխիթար, քիթդ մի խոթիր այնտեղ, որտեղ իրավունք չունես։ Սպարապետությունդ արա, իսկ երբ ինքդ գահերեց զորավար կդառնաս, այն ժամանակ կգործես քո գլխու։

— Բե՛կ, հա՛յր...— խեղդվելով գոչեց սպարապետը։ Բայց Դավիթ-Բեկը ձեռքի կտրուկ շարժումով պահանջեց, որ նա միայն լսի։ Նորից երկար լռեց, ապա դարձյալ, սպարապետի աչքերին սևեռելով իր ծանր հայացքը՝ շարունակեց ընդհատումներով.

— Թուրքերը նորից են երևացել Վարանդայի սահմաններում։ Կարկառի պարտությունը գազազեցրել է նրանց, վրեժ են կամենում լուծել դրա համար։ Մանր խմբերով ասպատակում են Վարանդայի գյուղերը։ Հարկավոր է մի խոշոր ուժ ունենալ այնտեղ։ Հենց հիմա վերցրու քո գնդերն ու մեկնիր այնտեղ, Մխիթա՛ր սպարապետ։ Վարանդայում կանգնեցրու թշնամուն։ Այժմ գնացեք բոլորդ։

Մյուս օրը Բայանդուր իշխանի դեսպանությունը դուրս եկավ Հալիձորից։ Զորապետները տխուր ճանապարհեցին դեսպաններին։ Նրանց հետ չէին միայն սպարապետն ու Տեր-Ավետիսը։ Իրենց գնդերով նրանք մեկնել էին Վարանդա։ Բոլորը հասկանում էին, որ Բեկը սպարապետին հեռացրեց Հալիձորից, աքսորեց գուցե երկար ժամանակով։ Մելիք Բարխուդարը ցնծության մեջ էր։ Վերջապես ինքը դուրս մնաց Մխիթարի հրամանատարությունից և իր գնդով մնաց Հալիձորում։ Բայց նրա զարմանքը շատ եղավ, երբ, սպարապետի հեռանալու հաջորդ օրը, Բեկը նրան ևս հրամայեց անմիջապես մեկնել Վարանդա՝ սպարապետի հրամանին։ Բեկի այս անսպասելի վճռափոխությունը հանելուկ մնաց Բարխուդարի համար։ Ատամները սեղմելով՝ նա կատարեց գահերեց զորավարի կամքը և Հակարո գետի հովտում հասավ դեպի Վարանդա գնացող Մխիթար սպարապետին։

Դավիթ-Բեկի այս խստություններն ամենից առավել ուրախացնում էր Մովսես աբեղային։ Ամեն օր, Բեկի հրամանով, դպրոցում գործը վերջացնելուց հետո, նա այցելում էր գահերեց զորավարին՝ իր խորհուրդներով օգնում նրան։ Նա համոզված էր, որ տագնապներով լի այդ օրերին հայ ժողովուրդը պետք է մի դաժան, բայց արդար ձեռք ունենար, անողոք, բայց շրջահայաց ու արի տեր, մի մեծ խելքի ու պողպատե կամքի տեր։

Այդ տերը Դավիթ-Բեկն էր։

Դեսպանության մեկնելու օրվա երեկոյան Սողոմոնը մի երկտող հանձնեց Դավիթ-Բեկին։ Բեկը դառնորեն քմծիծաղեց՝ ձյունի վրա ագռավի ոտնահետքեր հիշեցնող Մխիթարի ձեռագիրը ճանաչելով։

«Դու անբուժելի վերք պատճառեցիր ինձ։ Դու իմ պատիվը հավասարեցրիր օտար խաների ոտքի ցեխին։ Ես գնում եմ Վարանդա՝ մեր աշխարհի սահմանները պաշտպանելու։ Դու պարսից շահին դաշնակից եղիր, տե՛ր Դավիթ-Բեկ, իսկ ես իմը կանեմ։ Ես ինձ դուրս եմ դնում քո իշխանությունից։ Կարող ես գալ ինձ պատժելու։ Տեսնենք ո՞վ է շահելու։ Մխիթար»։

Բեկը թուղթը ճմրթեց ու ցասումով նետեց հատակին։

— Հիմարնե՛ր...— ասաց դառնացած սրտով։— Աստված ձեզ ուժ ու կորով է տվել՝ խելքից զրկելու գնով։— Նա ատամները կրճատցրեց, թռավ, պոկեց պատից քարշ ընկած սուրը, մերկացրեց ու նետվեց դուրս...

Հիմա ձայն կտա, տագնապ կբարձրացնի, կհանի Երկրի ապավեն գունդը ու կտանի Մխիթարին պատժելու։ Վազեց դեպի ապարանքի ելքը, բայց աստիճաններին չհասած՝ ձեռքը թափ տվեց ու թուլացած ընկավ սարսափած իրեն հետևող Սողոմոնի գիրկը...

Գիշերը Սողոմոնից ծածուկ նա գնաց Երկրի ապավեն գնդի զորանոցները և մնաց այնտեղ։ Առավոտյան, երբ Պղինձ Արթինը Սողոմոնին հարցրեց, թե որտեղ կարող է տեսնել Բեկին, սա ուսերը վեր ձգեց։

— Զորանոցները գնա, Արթի՛ն պարոն,— ասաց լացակումած։— Անշուշտ այնտեղ է՝ ձիու թամբը բարձ արած։ Ա՜խ, աստվա՜ծ, այս ի՞նչ է կատարվում խեղճ տիրոջս հետ...

Դավիթ-Բեկը բոլորից թաքուն պահեց սպարապետի նամակը։

* * *

Եկավ հազար յոթ հարյուր քսանվեց թվականի մայիսը։ Ճանապարհներն արդեն բացվել էին։ Հայոց լեռնաշխարհում երևացին հայ գաղթականների այդ տարվա առաջին խմբերը։ Դրանք փախել էին Երևանից, Արարատյան դաշտի գյուղերից, Լոռուց, Թիֆլիսից։ Ջարացած, աստծուն ու իրենց բախտն անիծող այդ թշվառները խմբերով կանգ էին առնում Սյունիքի ու Արցախի գյուղերում, կերակուր ու օթևան որոնում։ Տեղացիներն «ախ» էին անում գաղթականների վիճակը տեսնելով, զարմանում էին նրանց տարօրինակ բարբառներից, բայց և սիրով կերակրում էին բոլորին, զգեստ ու զենք տալիս, ինչպես խստորեն հրամայել էր Դավիթ-Բեկը։

Գաղթականների խմբեր երևացին նաև Վարանդայում։ Այնտեղ հասած Մխիթարից ու մելիք Բաղրից նրանք պահանջեցին իրենց ընտանիքները տեղավորել, իսկ իրենց զենք տալ, զինվոր վերցնել։ Վարանդացիները սիրահոժար ընդունեցին նրանց, բաժանեցին գյուղերի վրա։ Կռվելու ընդունակներին Մխիթարը զենք տվեց։

— Հանդիպե՞լ եք թուրքին,— հարցնում էր նա Քռի ափերից լեռները գաղթած հայերին։

— Վերջին հանդիպումը լինի,— պատասխանում էին գաղթականները։— Հանդիպեցինք, այո։ Գալիս են խոշոր բանակով։ Սարը Մուստաֆա փաշան, որ Երևանն առնելուց հետո նորից է եկել Գանձակ, տասնհինգ հազարանոց մի բանակ է թողել Գանձակում՝ գյուլիստանցիների ու ջրաբերդցիների դեմ, իսկ ինքը հիմնական բանակով գալիս է ձեզ վրա։

Հովհաննես-Ավան իշխանը ևս Ջրաբերդից զգուշացրեց սպարապետին։ Սարը Մուստաֆա փաշայի շարժման ու մտադրությունների մասին։ Ցավալին այն էր, որ ջրաբերդցիներն ու գյուլիստանցիներն անկարող էին գալ սպարապետին օգնության։ Չէր կարելի զորքը հանել երկրի հյուսիսային գավառներից, որոնք մոտ էին Գանձակին, իսկ Գանձակում թուրքական մի խոշոր բանակ կար դեռևս։

Մելիք Բաղրի, Բարխուդարի ու զորքի հարյուրապետների հետ խորհրդակցելով՝ սպարապետը վճռեց գործել Դավիթ-Բեկի նախասիրած ձևով։ Նա Կարկառ գետի միջին հոսանքում գտնվող Նախիջևանիկ, Քոթուկ, Մոխրաթաղ ավանների ու սրանց շրջակայքի գյուղերի բնակչությանը տեղափոխեց Քիրսի կիրճն ու Քարինտակ գյուղի վրա կախված Շոշ լեռը, որտեղ դեռ մնում էին Վասակ Սյունի մարզպանի կառուցած բերդի ավերակների հետքերը։ Մխիթարը վճռեց թշնամուն քաշել Շոշի կիրճն ու ծուղակի մեջ առնել նրան։ Այդ կիրճի բարձունքներին ևս, նախօրոք, Դավիթ-Բեկի հրամանով, քարեղեն զանգվածներ էին կուտակել, ամրություններ կառուցել, ինչպես Շահապունիքի կիրճում։

Մնում էր օսմանյան բանակին հրապուրել դեպի Շոշի կիրճը։

Մայիսի քսանութին Վարանդայի ցածր կողմերում դեռ թաքնվող ջոկատները Շոշ գյուղում գտնվող սպարապետին լուր տվին, որ Սարը Մուստաֆայի բանակը մտնում է Կառկառի կիրճը։ Մխիթարը վճռեց հետևակ զորքը թողնել կիրճի բարձունքներին, իսկ հեծյալ գընդերով գնալ թուրքերին ընդառաջ։

Վարանդա գալուց հետո սպարապետը սաստիկ ծածկամիտ ու լռակյաց էր դարձել։ Հազվադեպ էր խոսում անգամ Տեր-Ավետիսի հետ։ Թթված էր ու չար։ Թեև ոչ ոք, նույնիսկ Տեր-Ավետիսը, չգիտեր Բեկին ուղարկած նրա նամակի մասին, բայց և այնպես սրանք կռահում էին, որ մի սև որդ է կրծում սպարապետի սիրտը։ Տեր-Ավետիսը մի երկու անգամ փորձեց իմանալ նրա մռայլության պատճառը, բայց ապարդյուն։ Սպարապետը խուսափեց։

Ճաշում էր Եսայու գնդում, քնում գետնին՝ այծենակաճի մեջ։ Արդելել էր իր վրանը տնկել։ Ծանր էր նրա համար Դավիթ-Բեկի հետ գժտվելը։ Բայց և չէր կարողանում հաշտվել Բեկի արարքի հետ։ Դաշնակի՞ց լինել պարսից շահին... Վտանգավոր ու անպատվաբեր արարք է։ Անկախ երկիրն էլի՞ դնել հին թշնամու ոտքերի տակ... Ո՜չ, այդ բանի հետ հաշտվել չէր կարող նա։ Թեև ամեն կերպ աշխատում էր մոռանալ եղածը, բայց յախղճը տանջում էր, թվում էր, թե իր ձեռքով մորթել է եղբորը կամ զավակին։ Բայց և այնպես համոզված էր, որ արդարն ինքն է, մեղավորը՝ Բեկը։

Հունիսի առաջին օրերին Սարը Մուստաֆա փաշայի բանակը մտավ Կառկառի կիրճը։ Լեռների վրայից հայերը նկատեցին գետն ի վեր սողացող թշնամուն, և նրանց մեջ մի ծանր ահ ընկավ։ Շատերը, որ մինչ այդ հույս ունեին, թե մի անակնկալ բան կկատարվի, թշնամին չի գա Վարանդայի վրա, այժմ ահով տեսան թուրքերի բանակը։ Կդիմանա՞ն օսմանցիների այդքան բազմությանը։ Իրենք ընդամենը հինգ հազար հոգի էին՝ չորս անգամ թշնամուց պակաս, որն ահա ափից ափ բռնել է Կառկառի ձորը ու գալիս է սպառնալի։

Մութն ընկավ։ Կապույտ մշուշը կլանեց թուրքերին։ Երկնակամարում իրենց աչքերն ուրախ թարթեցին առաջին աստղերը...

— Արգելում եմ կրակ վառել,— իր զորապետներին հրամայեց սպարապետը։— Ծածկվեցեք անտառում։ Ձիերը հեռու տարեք, նույնիսկ գայլը չպիտի առնի մեր հոտը, իմանա, որ այստեղ շունչարարած կա։

Մխիթարը գիշերապահ ջոկատներ ուղարկեց կիրճի խորքը՝ թուրքերի շարժմանը հետևելու և իրեն տեղյակ պահելու հրամանով։

Շուտով խավարը կուլ տվեց մերձակա ժայռերն ու ձորերը։ Գետի խշշոցը պարզվեց։ Լեռների ատամների արանքից երկչոտ լուսինը հանեց իր փշրված պռունկը։ Հայոց բանակատեղի վրա իջավ գերեզմանային լռություն։

Գիշերվա կեսին Մխիթարը հրամայեց կանչել Թովմա հարյուրապետին։ Փոքր Գորգին նրան քնած գտավ ու արթնացնելով՝ տարավ կաղնու անտառը, որտեղ վայրի զկեռենու տակ, այծենականճն ուսերին արթուն էր սպարապետը։ Թովման առաջին անգամ սպարապետին ծխելիս տեսավ ու զարմացավ սաստիկ։

— Եկա հրամանի՛դ, տեր սպարապետ,— վայելուչ հասակով մեկ կանգնելով Մխիթարի առջև՝ զեկուցեց Թովման։

— Բարի,— մեղմ ասաց սպարապետը։— Քանի՞ կտրիճ ունես։

— Հինգ հարյուր հիսուն ձիավոր,— ոչ առանց հպարտության պատասխանեց Թովման։— Հրամանիդ պատրաստ են բոլորը։

Մխիթարն ուշադիր նայեց նրան։ Լուսնի լույսի տակ Թովման առավել գեղեցիկ ու պարթև էր երևում։ Խիզախ, անընկճում այդ երիտասարդը հանդարտ հայացքով էր նայում զորավարին՝ պատրաստ նրա կես բերան հրամանին նետվելու կրակի մեջ։

«Հպարտ է, և դա անշուշտ նրանից է, որ Գոհարի պես կին ունի»,— ոչ առանց նախանձելու մտածեց սպարապետը և առաջին անգամ սառնություն զգաց դեպի իր այնքան սիրելի հարյուրապետը։ Աչքերը փակեց։ Մտքում պատկերացրեց Գոհարին՝ մի պահ իր գրկում, հաջորդ պահին երիտասարդ ու կորովի Թովմայի փքուն շրթունքները համբուրելիս։ Նրա սիրտը տակնուվրա եղավ, և կուրծքը խորտակող մի հառաչանք դուրս թռավ նրա բերանից։ Աչքերը բաց արեց։ Թովման զարմացած իրեն էր նայում։

— Ինչպե՞ս են հայրդ, Գոհարը,— ակամա հարցրեց Մխիթարը։— Լուր ունե՞ս։

— Ունեմ։ Ապրում են՝ քեզ համար աղոթելով, տե՛ր սպարապետ։ Շատ բարև են անում։

— Բարի,— ասաց Մխիթարը ցավով։— Այրուձիդ վերկացրու, հեռացիր դեպի Կաղարծի գյուղը, ապա թեքվիր ձախ և անտառի արահետներով ծածուկ իջիր Նախիջևանիկ գյուղի վրա։ Հետևիր օսմանյան բանակի շարժմանը, բռնիր նրա պոչը, որպեսզի խանգարես նրա անարգել առաջացումը, և նրա հնարավոր նահանջի դեպքում կտրես ճանապարհը։ Ըմբռնեցի՞ր։

— Լիովին,— ձգվեց Թովման։

— Քեզ ուղեկից կլինի մելիք Բաղրի գնդից մի ջոկատ։ Քաջ և գավառին լավատեղյակ մարդիկ են։

Մխիթարն այլևս չնայեց նրան, թեև խոսեց երկար, հանգամանորեն պարզաբանեց նրա անելիքը։

— Գնա՛, բարին քեզ հե՛տ,— ասաց հուզված։— Զգույշ կաց, խնայիր մարդկանց ու քեզ։ Ճանապարհիդ շատ կարոտած հայացքներ կան...

Թովման կտրուկ շուռ եկավ ու հաստատուն, վայելուչ քայլերով հեռացավ։ Մխիթարը փակեց աչքերը։ Ոչ մի կերպ չէր կարողանում մանրամասնորեն հիշել Գոհարի դեմքը։ Հիշում էր միայն աչքերը՝ ջերմ, կարոտով ու ծանր հանդիմանությամբ լի այն աչքերը, որոնց այնքան հուզմունքով ու պապակով համբուրում էր ինքը մի ժամանակ։ Այն աչքերը, որոնց վաղուց է ինչ չի տեսել։ Որքա՜ն կուզեր, որ այս պահին, ծանր ճակատամարտից առաջ գոնե հեռվից տեսնել նրան...

Մոտենում էր լուսաբացը։ Թաքստոցներում պահված բանակը ձայնածպտուն չէր հանում։

* * *

Սարը Մուստաֆա փաշայի բանակը դանդաղ սողում էր դեպի դիմացը կապտին տվող Վարանդայի լեռները։ Նրա բարձրացրած փոշին թանձր շղարշով ծածկում էր սիփահիների այրուձին, ենիչերիների հետևակ գնդերը, գումակը, ուղտերի շղթան, որոնց վրա կրում էին լեռնային թնդանոթներ, վառոդի պարկեր, ուտեստ ու ավար։

Կառկառի հովիտը պերճացել էր թարմ կանաչից։ Անմեղ ժպտում էին աստղածաղիկները, օշինդրն արբեցնող փոշի էր սփռում. բարդիները խշշում էին թախծոտ։ Բանակի առաջակալ ջոկատները կիրճ տանող արահետի վրա մարդկային ոտնահետքեր չէին գտնում։ Հանդիպում էին միայն դատարկ, ամեն ինչ սրբած, մաքրած գյուղերի։ Բանակը ոտնակոխ էր անում խաղողի վազերը, աշնանացանի զմրուխտ կանաչը, անխնա կտրտում էին կեռասենիները՝ կիսահաս միրգը խժռելու համար։ Բանակի ետևից սևանում էր կանաչ հողը, ապականվում կրծած ոսկորներով, մորթած անասունների փորոտիքով, մեռած գերիների սև կետերով։ Նրա ետևից պղտորվում էին զուլալ ջրերը։

Բանակի սև զանգվածը մոտեցավ Շոշ գյուղի կիրճի բերանին ու կանգ առավ։ Սարը Մուստաֆա փաշան քաշեց ձիու սանձը, հեռադիտակը դրեց փոշուց մրմռացող աչքերին ու սկսեց դիտել դիմացը բարձրացող լեռները։ Հոլանդական հեռադիտակը մոտեցրեց ձյունոտ գագաթները, անտառները, ջրվեժները։ Սակայն փաշան կենդանության ոչ մի նշույլ չէր նկատում լեռներում։ Ճանապարհը ոլորվելով կորչում էր կիրճի խորխորատներում և ապա դուրս գալիս լեռան թամբը, որտեղ դեռևս ձյուն կար։ Փաշան երկար նայեց այդ ժայռակուտակ լեռնաշղթային, որի անցքերով պիտի տաներ իր զորքը։

Նրա մոտ խոնարհ կանգնած էր Մուրադ-Ասլանը և նույնպես ահով էր նայում Արցախի լեռներին։ Երևանն առնելուց հետո սերասկյար Աբդուլլահ փաշան իր հմուտ խորհրդականին դրել էր Սարը Մուստաֆա փաշայի հետ՝ նրան օգնելու իր խորհուրդներով և, մանավանդ, հետևելու փաշայի գործունեությանը, նրա մտքերն ու արարքները ծածկաբար իրեն հայտնելու համար։ Այժմ Մուրադ-Ասլանը դժգոհում էր, որ սերասկյարն իրեն ուղարկեց Արցախի արշավանքին մասնակցելու։ Վտանգներով լի երկիր էր Արցախը։

— Մի՞թե այս կողմերին ուրիշ ճանապարհ չկա դեպի հայերի սրդնախը,— հեռադիտակն աչքերից պոկելով՝ հարցրեց Սարը Մուստաֆա փաշան իրեն շրջապատած զորապետներին ու խորհրդականներին։

— Այս կողմերից միայն մի ճանապարհ է տանում դեպի Քարինտակ լեռան վրա գտնվող ամրոցը, քաջաբազուկ փաշա,— պատասխանեց Մուրադ-Ասլանը։— Մյուս ճանապարհը Խաչեն գավառի վրայով է, որ սակայն դժվարամատչելի է և բռնված է հայերի հիմնական բանակով։ Այնտեղ գյուղեր ու ամրոցներ շատ կան։

— Մեր դիմացը և՞ս գյուղեր շատ կան,— հարցրեց փաշան։

— Կան, բայց դատարկ են։ Մխիթարը ժողովրդին քշել տարել է երկրի խորքերը։ Լեռնանցքը դժվարամատչելի է, փաշա՛։ Մխիթարը կա-

բող է դարանած լինել կիրճում։ Այստեղ է անհետացել Շահին փաշայի բանակը։ Պիտի հանգամանորեն շոշափել կիրճը, նախքան նրա մեջ մտնելը։

Մի փոքր էլ առաջ գնացին ու կանգ առան։ Դեմ-դիմաց խոյացած երկու վիթխարի լեռ փակում էին կիրճի նեղ անցքը։ Գետը մոլեգնում էր նրանց գրանիտե գրկի մեջ։ Փաշան ահով էր նայում երկրի խորքը մտած կիրճին...

Տասական ոսկի խոստացան նրանց, ովքեր կամովին հանձն կառնեն մտնել կիրճը հետազոտության։ Հանձնառուներ շատ եղան։ Նույնիսկ այծամորուք մի մոլլա ներկայացավ փաշային։

— Մուհամմեդի սիրուն ես մարդկանց կտանեմ դժվարինը կատարելու, փաշա՛, դրամ չեմ ուզում։ Մարգարեն ինձ հրավիրում է ալլահի դրախտը... Ժամանակն է թոթափել այս աշխարհի բեռն ու գնալ ջեննաթի վայելքների գիրկը։

Կամավորները գնացին հետազոտության։ Փաշան մտավ իր վրանը։ Մի ծանր դառնություն էր պաշարել նրան։ Կռիվներում խանձված այդ ահարկու մարդը երբեք չէր երկնչել, երբ գրոհի էր նետվել սլավոնական քաղաքների վրա, ծեծել Վիեննայի դարպասները, եվրոպացի թագավորներ գահազուրկ արել և շլինքներին թոկ դնելով՝ քարշ տվել իր երիվարի ետևից։ Բայց այս լեռնային երկիրը մեծ ահ էր ձգել նրա սիրտը, որ չէր հեռանում վիրավոր զինվորին հետևող շնագայլի պես։

Դրսում խավար էր։ Վրանի բաց դռան արանքից երևացող կիսալուսինը միայն արյամբ էր ներկում դիմացի ժայռերն ու գետի ծառս լինող ալիքները։ Փաշան ահ զգաց մենակությունից։ Հրամայեց սուրճ մատուցել ու կանչել Մուրադ-Ասլանին։

Ուրացողը եկավ շողոքորթ, մշտական ծուռ ժպիտը բերանի անկյուններում։ Փաշան ձեռքով նշան արեց, որ սա նստի։ Ապա պղնձե սկիհից սուրճ լցրեց նրա համար։ Ուրացողը քրտնեց ուրախությունից։

— Ո՞րն է հայերի այս երկրի հարստությունը, որ ալլահի ստվերը սուլթանը կամենում է տիրանալ,— հարցրեց փաշան՝ կում-կում խմելով սուրճի շագանակագույն փրփուրը...

— Օ՜, հայոց Սյունիքն ու Արցախը հարուստ երկրներ են, փաշա՛,— շրթունքները լիզելով բացականչեց Մուրադ-Ասլանը։— Ոսկու ամբարներ կան նրանց Ագուլիսում ու Հին Ջուղայում։ Հայ խոջաները կրպակներ ունեն աշխարհի բոլոր շուկաներում։ Նրանք նավեր ունեն ծովերի ու օվկիանոսների մեջ։ Աշխարհի հարուստ քաղաքներից ոսկին հոսում է դեպի այս լեռների ամրոցները։ Այստեղ են խոջաները պահում իրենց ընտանիքներն ու գանձերը։ Կապանում պղնձի ելքեր կան։ Արցախում

հայերը ոսկի ու արծաթ են հանում։ Մեղրին, Ամարասն ու Որդուվարը հարուստ են մետաքսով, պատվական մահուդով, այս լեռների բարձր արոտներում տարածված են ոչխարի ու տավարի անհամար հոտեր։

— Հալիձորը հեռո՞ւ է,— հարցրեց փաշան։

— Եթե ալլահը կամենա, թող միշտ լույս մնա նրա անունը, ապա մենք մի շաբաթ հետո այնտեղ կլինենք։

— Ամո՞ւր է։

— Շա՜տ... Այդ քաղաքը դեռ ոչ ոք չի կարողացել գրավել։ Դու երևելի զորավարներից առաջինը կլինես, որ մտնես Սյունիքի սիրտը՝ Հալիձոր։ Հիշիր, թե ինչ է ասել ողորմած սուլթան Բայազետը. «Հայաստանը հիմնովին առնելու համար պետք է խորտակել Սյունիքն ու Արցախը»։

— Ինքը փորձե՞լ է այդ անել։

— Փորձել է, բայց ապարդյուն... Ոչ մի թուրք դեռ ոտք չի դրել այս լեռնաշխարհի սրտին։

Փաշան չինական գավաթը ցած դրեց։ Նույնն արեց նաև Մուրադ-Ասլանը, թեև դեռ կուլ չէր տվել թանկագին սուրճի վերջին կումը։

Վրանի շուրջը մրափել էր բանակը։ Նույնիսկ պահապանների կանչերը չէին լսվում։ Փաշան արձակեց Մուրադ-Ասլանին և, կոլոլվելով այծենակաճի մեջ՝ գլուխը դրեց ձիու թամբին ու աչքերը փակեց...

Կամավոր հետախույզները վերադարձան ծեգին։ Մոլլան մտավ փաշայի վրանը։

— Կիրճի խորքով հասանք մինչև լեռան գլուխը,— զեկուցեց նա՝ ցցված, ժանգոտած ատամները ցույց տալով։— Մի թագի անգամ չտեսանք։ Բանակի թարմ հետքեր էին երևում միայն։ Պարզ է, որ հայերը թողել հեռացել են։ Ճանապարհն ազատ է քո առջև, հաղթողների փաշա։ Գնա անարգել...

Նույնը հաստատեցին նաև մյուս հետախույզները։

Արևածագին բանակն արդեն ոտքի վրա էր։ Սարը Մուստաֆա փաշան հեծավ նժույգը, մտավ զորքի մեջ ու, թուրը պարզելով դեպի կիրճի երախը՝ գոչեց.

— Այս ճանապարհը տանում է դեպի մի հարուստ աշխարհ։ Մի՛ երկնչեք այս լեռների վայրենի տեսքից. ալլահի անունը տվեք և հաղթահարեցեք վերելքը։ Ձեր դիմաց զորք չկա, գնացեք՝ աստծուն ապավինելով։

Բանակը, որ նույնպես ձգտում էր դեպի հայերի առասպելական հարստությունները, ոգևորությամբ խուժեց դեպի կիրճի անցքը...

Նեղ ճանապարհը ոլորվում էր փրփրած գետի աջ ափով։ Երկուստեք ուղղահայաց լանջեր էին, որ երկնքի խորքում գրեթե միանում էին միմյանց։ Թվում էր, թե գնում են երկրի խոր ճեղքվածքի միջով։

Փաշան ևս մտավ կիրճ։ Նրան նորից մի տարօրինակ ահ պատեց։ Բայց, դեպի վեր սողացող զորքը նկատելով՝ սրտապնդվեց։ Գնում էին իրար կրունկ տրորելով, իրար մեջքի շնչելով։ Ձիերը մռութներով հրում էին առջևից գնացող հետևակ զինվորներին։

Շուտով ամբողջ բանակը մտավ կիրճ և սկսեց դժվարին զառիվերը...

* * *

Թուրքաց բանակի առաջակալ գնդերն արդեն հասել էին կիրճի բարձունքին, իսկ պոչը կտրվել էր կիրճի բերանից, երբ հանկարծ մի զարհուրելի դղրդոց լսվեց։ Կարծես պարզ երկնքում ամպրոպ ճայթեց, ու խորտակվեցին երկնքի կամարները։

Երկնամերձ բարձունքներից դեպի կիրճի խորքերը վիժեցին քարերի մրրկաթափ զանգվածներ... Փոշու վիթխարի ալիքներ ելան։ Կայծակի արագությամբ գահավիժող քարեղեն զանգվածները մի վայրկյանում հասան ճանապարհին ու խորտակվեցին իրար կրունկ տրորող զորագնդերի վրա...

Սարը Մուստաֆա փաշան փշաքաղվեց։ Ձին խրտնեց, ծառս եղավ ետևի ոտքերի վրա ու հեծավ դրոշակակիր ասկյարի ձիու գավակը։ Երկնքի կապույտ ծվենը մթնեց...

— Ջուլո՜ւմը...— փաշայի ականջի տակ գոռաց Մուրադ-Ասլանը։

— Երկրաշա՞րժ է,— ճչաց փաշան։

— Երկիրը փլվում է, ամա՜ն...

Զորքը գլուխը կորցրեց։ Քարերի զանգվածները ջախջախում էին ահից գազազած ուղտերին, խրտնած ձիերին, ահուսարսափից շփոթված մարդկանց։ Շատերը թափվեցին գետը...

— Շեյթա՜նը... շեյթա՜նը...— գոռում էր այծի մորուքով մոլլան՝ թրով ճանապարհ բացելով դեպի կիրճի բերանը։

— Ալլա՜հ, ալլա՜հ,— աղաղակում էին մարդիկ։

Բոլորը համոզված էին, որ երկրաշարժ է։ Այնինչ, վերևում փոշու ամպերով ծածկված կիրճի պոնկին, հայ զինվորները պոկում էին փայտե ցցերը, տեղահան անում քարակույտերը պահող գերանները ու կրրկընվում էր սարսափելին... Մեծ ու մանր քարերի կույտերը փլվում էին ականջ պատռող որոտով, նետվում դեպի ձորը։ Լեռնաշխարհը թնդացականջ պատռող որոտով, նետվում դեպի ձորը։ Լեռնաշխարհը թնդաց-

նող այդ որոտմունքից ահ էին զգում նույնիսկ իրենք՝ այդ գաժան թաթարդն ստեղծած հայերը։

— Շտապեցեք, եղբայրնե՛ր...— քարակույտից քարակույտ թռչելով՝ ոգևորում էին զորապետները։

Քարե հեզեզից ազատվածների զանգվածը խփեց Սարը Մուստաֆա փաշային ու, նրան իր ընթացքի մեջ առնելով՝ տաշեղի պես քշեց դեպի կիրճի ելքը։ Մի քար հարվածեց փաշայի ձիու գլխին։ Փաշան ընկավ խելակորույս ամբոխի ոտքերի տակ... Մուրադ-Ասլանն ու մի թուրք տասնապետ նրան հազիվ քաշեցին ոտքերի անտառի տակից։ Գլխաբաց, պատառոտուն զգեստներով ու արյունոտ դեմքով փաշան ևս փախավ զանգվածի հետ... Մուրադ-Ասլանն ամուր բռնել էր նրա ձեռքը։

Երբ դուրս եկան կիրճից, փաշայի հետ քշերն էին մնացել։ Փաշան երկու ձեռքով խփեց բաց գլխին։

— Բանակս կործանվե՛ց, բանա՛կս...— գոռում էր հուսահատ։

Մուրադ-Ասլանն ուժգին թափահարեց նրան։

— Մի՛ քրքրիր քեզ։ Աստծուն փառք տուր, որ ողջ մնացիր։ Արի իմ ետևից, շտապիր, թե չէ ուր որ է հայերը կհասնեն... Ցած նայիր, նրանք շտապում են կտրել մեր փախուստի ճանապարհը։

— Հայերի զորք կա՞ այստեղ։— Դողաց փաշան։

— Կա։ Քո այդ ցնդած մոլլան կույր է, չի տեսել դարանը։ Ա՛խ, ալլահ։

— Դժոխքի խորքն անցնի այս աշխարհը,— հեծկլտաց Սարը Մուստաֆա փաշան և Մուրադ-Ասլանի ետևից փախավ...

Ձորի խորքում նրանք հասան գումակից ետ մնացած մի փոքր խմբի։ Նրանցից երկու ձի խլեցին ու հեծնելով՝ սլացան դեպի արձակ դաշտը։ Լեռան վրայից նրանց հետապնդելու իջան Թովմայի ուղարկած մի խումբ ձիավորներ...

Թովման իր այրուձիով կտրեց կիրճից դուրս պրծած, դեպի դաշտ ճողոպրող թշնամու ճանապարհը և սկսեց կոտորել անխնա։ Քարե կարկուտից ազատված, ահաբեկված թուրքերը, որոնցից շատերը փախուստի ճանապարհին կորցրել էին իրենց ձիերն ու զենքերը, ընկան ավելի մեծ աղետի մեջ։ Շուտով նրանց թիկունքին իջավ նաև Մխիթար սպարապետը՝ Զագեձորի ձիավոր գնդով և ընկնելով թշնամու վրա, սկսեց կոտորածը...

«Ի՞նչ կասի Դավիթ-Բեկը, իմանալով այս հաղթանակի լուրը», ոգևորությունից ինքնամոռաց մտածում էր Մխիթարը՝ բլրի վրայից նայելով այն ամենին, ինչ կատարվում էր կիրճից դուրս՝ փոքր-ինչ արձակ դաշտում։ Նա կուզեր, որ հենց հիմա Բեկը տեսներ, թե ինքն ինչպես

պարտության մատնեց թշնամուն, ինչպես է կատարում իր պարտքը երկրի ու ժողովրդի հանդեպ։

Ամեն ինչ վերջացավ երեկոյան դեմ։

Թովմա հարյուրապետը պատառոտված, ծվատված դրոշների մի խուրձ թափեց Մխիթար սպարապետի առջև։

— Սարը Մուստաֆա փաշան ճողոպրեց, տե՛ր սպարապետ։ Իմ մարդիկ հետապնդեցին նրան, բայց նա անհետացավ մի թիկնապահի հետ։ Գերիներ ենք վերցրել, իսկ ավար զենքին թիվ չկա...

Մխիթարը նայում էր Թովմայի հանգիստ, ինքնավստահ, միևնույն ժամանակ երջանիկ դեմքին, որ ունենում են բախտի շռայլ պարգևները վայելող մարդիկ։ Նորից գլուխ բարձրացրեց սրտում բուն դրած նախանձի օձը։ Գոհա՞ր... Եվ ինչո՞ւ ինքը նրան ամուսնացրեց այս քաջաբեղ հաղթամարդու հետ։ Ինչո՞ւ։ Նրա մեջ ցանկություն առաջացավ բռնել հարյուրապետի օձիքն ու գոռալ. «Տո՛ւր նրան, ում ես իմ կոտրած ձեռքով հանձնեցի քեզ՝ պոկելով սրտիս վրայից։ Տո՛ւր...»։ Բայց զորավար լինելու արթուն գիտակցությունը զսպեց նրան։

— Բարի՞,— ասաց հեռուներին նայելով։— Ավարը տեղափոխեցեք Քարինտակ գյուղը։ Զենքերը պահ տվեք տանուտերին։ Մյուս բարիքները բաժանեցեք զորքին։

Թովման սուլեց, նրա մարդիկ սպարապետի առաջը բերին վզին թոկ դրած այծամորուք մոլլային։

— Դիմադրեց շունը,— չարացած բացականչեց Թովման։— Զենք չուներ, մտել էր աղվեսի բույնը։ Երբ ուզեցի դուրս քաշել, ձեռքս կծեց։— Նա զզվանքով նայեց մոլլային։ Սա գլխաբաց էր, բոբիկ, բաց կրծքով, ծվատված վարտիքով։ Այտերին ուռուցքներ կային։ Ծնկի մաշկը պլոկվել էր, արյունը շորացել մազմզոտ սրունքներին։ Բայց այդ թշվառության մեջ էլ մոլլան հանդուգն էր ու գազազած։ Նրա մոխրագույն աչքերը լիքն էին չարությամբ։

— Հը՞, կերա՞ք,— մոլտաց սպարապետը։— Հույս ունեմ, որ այլևս կմոռանաք մեր աշխարհի ճանապարհը։

— Մոռանա՞նք...— լափլփեց մոլլան։— Նոր ենք այս ճանապարհին սովորում։ Մի կարծիր, թե այս ճակատամարտն էլ շահելով վախեցրիր մեզ, գյավուրների սերասկյար։ Աբդուլլահ փաշան դեռ հարյուր հազար զորք ունի ձեր աշխարհում։

— Նրանք էլ ձեր բախտին կարժանանան,— հանդարտ պատասխանեց Մխիթարը։— Ինչո՞ւ եք դուք ձեր մուրթները խոթում կրակի մեջ։ Ինչո՞ւ եք եկել այս երկրի վրա, որը ձերը չէ, ոչ մի վտանգ չի սպառնում ձեզ և ոչ մի վնաս չի պատճառել սուլթանին։

Մոլլան ծոմոից արյունոտ բերանը, պոկեց կախ ընկած ատամը, դեն նետեց ու արագ-արագ վրա տվեց.

— Ես մարգարեի զինվորն եմ ու իմ արյունը պիտի տամ նրա սրբազան կրակին։ Իմ խելքի բանը չէ խառնվել ալլահի գործին, բայց կարող եմ քեզ պատասխան տալ, հա՛յ սերասկյար, որովհետև դու քաջության օրինակ տվիր։ Դու պիտի իմանաս, որ երկնքի տակ եղած բոլոր աշխարհները պատկանում են Մուհամմեդի տեղապահ սուլթանին, և նա նորից կգա ձեզ վրա։ Եվ իմացիր նաև, որ այս կողմերի բոլոր երկրները մերն են, մեզ են պատկանում։ Մենք գնում ենք գյավուր ուռուսների վրա։ Իսկ դուք անհնազանդ ազգ եք, խանգարում եք մեզ։ Սուլթանի բարկությունը բևեռեցիք ձեզ վրա և ձեր մարմիններն ու հոգիները մատնեցիք կորստյան։ Դուք օգնական եք գյավուր ուռուսներին, դրա համար էլ մեր մարգարեն բարկացել է ձեզ վրա, իրավունք է տվել կոտորել ձեզ։

— Բոլորդ նույն զուռնան եք փչում։ Շահին, Սալահ, Ալի փաշաները ևս այդպես էին ասում ինձ։ Իսկ պատվելի մոլլան չի՞ մտածում, արդյոք, որ մենք և ռուսները ևս իրավունք ունենք ձեզ կոտորելու, ինչպես դու տեսար այսօր...

— Անպարտ է օսմանյան յաթաղանը, և բոլոր ազգերը պիտի անցնեն նրա տակով,— գոչեց մոլլան։

— Ցնդա՜ծ,— ծիծաղեց սպարապետն ու Թովմա հարյուրապետին հրամայեց մոլլային տանել մինչև կիրճի բերանը և արձակել ազատ։

Թովման ծոծրակը քորեց։

ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ամրոցի հարավային աշտարակի պատին, ո՞վ գիտե երբ առաջացած ճեղքում, ծաղկել էր մասրենու մի փոքրիկ թուփ։ Իր գորշ, բարակ արմատներով նա գրկել էր պատի տեղահան եղած քարն ու մնացել...

Տիկին Սաթենիկն առաջին անգամ նկատեց այդ թուփը։ Առավոտ էր։ Մոտեցել էր պատուհանին՝ խոհերի ծանրությունից թեթևանալու և նկատել էր թուփը։ Մասրենու վրա վառվում էր առաջին դեղնակարմիր վարդը... Գիշերը թեթև անձրև էր եկել, և թարմացած վարդը բուրում էր, նազանքով ժպտում բարձրացող արևին։ Աշտարակը տիկնոջ սենյակի պատուհանի դիմացն էր և այնքան մոտ, որ երևում էր վարդի վրա պտտվող մեղուն։

Ողջ գիշեր իր սեղանին հակված տիկինը գրել էր... Ծանր բաներ

էր շարադրել իր մատյանում, լաց էր եղել՝ գլուխը դնելով թանաքոտ թղթին։

«Ժայռի մեջ էլ է ապրում գեղեցկությունը,— վարդին նայելով մտածեց տիկինը,— մի աննշան թուփ է, բայց կենդանություն է տալիս մեռած աշտարակին»։ Նա կամեցավ հեռանալ պատուհանից, երբ թփի տակից երեք փոքրիկ ձագեր հանեցին իրենց մազմզոտ գլուխները։ Արծվի ձագեր էին։ Տիկնոջ գունատ դեմքի վրայով ժպիտ անցավ։ Գորշ, դեռ չամրացած կտուցներով ձագերն անվստահ կոնչացին, կտուցները խփեցին քարերին ու զարմացած նայեցին կապույտ հեռուները... Երևի առաջին անգամն էին իրենց գլուխները հանում բնից։ Ի՞նչ գեղեցիկ է երկինքը, օդը, արևը, որ ոսկի է ցնցուղում լեռների վրա։

Տիկինը խոր հոգոց հանեց։ Ծանր, միայն իրեն հայտնի վշտերի բեռան տակ նա չէր էլ նկատել, թե ինչպես է անցել ձմեռը, եկել գարունը, չէր նկատել լեռնաշխարհի զարթոնքը, մասրենու ծաղկելը, արծվին, որ վաղուց կարկատել է իր արքայական ապարանքը, ձու դրել, ձագեր հանել։

Դուռը շրխկոցով բացվեց, և քամու նման սենյակ ընկավ Վարդխաթունը։

— Հաղթանա՜կ...— հևասպառ ճչաց նա ու նետվեց կին պատմիչի գիրկը։— Հաղթել են մերոնք՝ սպարապետդ, իմ երեցը։ Սուրհանդակ եկավ Վարանդայից, երեցս է ուղարկել։ Շոշի կիրճում մերոնք գլխովին ջարդել են Սարը Մուստաֆա փաշայի զորքը։ Ջարդե՞լ են... Հաղթանա՜կ, ցնծա՜, է՛։— Նա բարձրաձայն համբուրեց Սաթենիկին։

— Իսկ ի՞նչ լուր կա Դավիթ-Բեկից,— հարցրեց տիկինը։

— Բեկը գնացել է Ագուլիս։ Աչքը լո՜ւյս... Երևի լուրն իմացել է և հիմա անուշ գինի է խմում խոջաների կանանց հետ։ Ա՜խ, սիրունիկներն են անիծվածները... Վարանդայի ջարդից հետո թուրքերը գլուխները կորցրել են։ Սիրտ չեն անում գնալ Արցախի կամ Ագուլիսի վրա։ Վարանդայի դասը մեծ է։ Ա՜խ, տե՜ր աստված... Սիրտս ուրախությունից պայթում է։ Պատկերացնում եմ երեցիս գոռոզությունը։ Պա՜հ, պա՜հ, պա՜հ,— ծոմովեց նա։— Հետն այլևս խոսել չի լինի։ Գոնե մի օրով գար, ես նրա մորուքը կփետեի...

— Հիմա նրանք չեն գա Ջագեձոր, կգնան Բեկին զորավիգ։ Փառքդ շա՜տ, աստվա՜ծ մեր։ Երեսդ մի՛ թեքիր մեզանից։— Տիկին Սաթենիկի աչքերը լցվեցին։— Արծվի ձագեր տեսա առավոտ-առավոտ, բարի է։

Այդ օրը նա իր մոտից չհեռացրեց Վարանդայից եկած սուրհանդակին։ Գրասեղանի մոտ նստած, իր մատյանում գրում էր նրա հայտնած տեղեկությունները։ Իսկ երբ ամեն ինչ գրել էր և սուրհանդակին

արձակել, դարձյալ չհեռացավ գրասեղանի մոտից։ Մի անբացատրելի կարոտ էր զգում դեպի Մխիթարը։ Մտովի սլանում էր նրա մոտ, ընկնում նրա ոտքերն ու աղերսում, «Մի՛ արա, Մխիթա՛ր ս... Մոռացի՛ր նրան, մե՛ղք եմ... Մոռացի՛ր»։ Նորից լաց եղավ, հիշելով, որ իրեն չի պատկանում այն տղամարդու սիրտը, որն իր ամուսինն է, հայոց զինվորության աստղը։ Արցունքները կուլ տալով, նա մատյանում գրեց.

«Ապա, երբ քանդվեցին ձմռան կապերը, գարնան քաղցրության փոխարեն մեր աշխարհի վրա փչեց դառնության հողմը, ցոլացավ երկնակուլ բոցն արևմտյան։ Իր որջից դուրս եկավ կատաղի Աբդուլլահ փաշան թուրքաց։ Եկավ՝ կլանելու ամենայն աշխարհն Հայոց...

«Իսկ Վարանդայում թուրքերին հաղթող Մխիթար սպարապետը, որ իմ կենաց կցորդն է, վայելուչ և պայծառ երեսով տղամարդ է։ Թխակերպ են մազերը նրա, որ թանձրությամբ վիժում են բարձր ուսերին։ Խիտ ու կամարաձև կեցվածք ունեն նրա հոնքերը. երկայն ինչք ունի նա և գանգուր մորուք և ճառագայթող աչքեր։ Բարձրակերպ է, թիկնահաղթ ու բազկով կորովի։ Դաժան է միաժամանակ, իրասածի, բայց մեծասեր սրտով է ինքը իրեն ընծայել ժողովրդին հայոց...»։

Գրիչն ընկավ տիկնոջ ձեռքից. նա գլուխն առավ ափերի մեջ ու անձայն լաց եղավ։ Թղթի ճերմակ դաշտին երևաց դեղնակարմիր վարդը, ապա մեծացավ, պայծառացավ, և տիկինն իր առջև տեսավ Գոհարի հանդուգն ժպիտը։ «Իմն է այն տղամարդը, որի մասին այդպես շռայլում ես քո սրտի խոսքը»։

Ամբողջ օրը տիկին Սաթենիկը դուրս չեկավ իր սենյակից։ Մեծ որդին՝ Ահարոնն իր պատանիների «կաթնակերաց գունդը» տարել էր վարժանքի։ Ծամամն ու փոքրիկ Դավիթը դայակի ուղեկցությամբ իջել էին Գորիս ավան՝ գեղջուկ երեխաների հետ խաղալու։

Տիկինը մնացել էր մենակ, անսփոփ։ Ա՛խ, ինչքա՜ն դառն ու աղի է կյանքը... Եվ դառն ու աղի էին նրա պատմության տողերը։ Ծանր էջեր թերթելիս՝ նա ակամա սկսեց կարդալ ձմեռը գրած տողերը, որոնք վերաբերում էին Երևան քաղաքի կործանմանը, որ տիկնոջը պատմել էին Երևանից փախած հայերը...

«Քաջաբար էին կռվում երևանցիները, բայց անօրեն թուրքը հաղթեց։ Երևանում մի շեն տուն չմնաց, փլցրին։ Մեծ, փոքր, տղամարդ, կին, ով ողջ էր մնացել՝ ետիր արին։ Տներն այրել են, եկեղեցիներն ախոռ դարձրել։ Էլ Երևանում մի հոգի չի մնացել, որ մի սև փող արժենա։ Քահանաների մորուքները փետել են, այնքան գանահարել, որ վրաներն այլևս միս չի մնացել։ Բոլոր աղջիկների հետ խառնակվել են իրենց մայրերի աչքերի առջև։ Իրենք մեկը մյուսին ասում են. «Գյավուրին տանջելը վարձք է»։ Վա՜յ մեզ, վա՜յ մեր հայոց ազգի անտեր գլխին։ Մեռելներին չեն թողնում թաղեն, գցում են շների առաջ։ Հիվանդներին թափում են հորերը, որ փտեն ողջ-ողջ»։

Տիկինը զարհուրեց իր գրածներից։ Գիշերն անցկացրեց մղձավանջի մեջ։ Հենց որ աչքը կպցնում էր, երևում էին մորթած մանուկներ, կծող, կատաղած ու մերկ կանայք և թուրքեր, թուրքե՛ր... Յաթաղաններով, դիվական քրքիջներով, արյունաթաթախ ձեռքերով թուրքեր... Տիկինն արթնանում էր զարհուրելի երազից ու նետվում պառավ աղախնի գիրկը։

— Փրկեցե՛ք...— աղիողորմ ճչում էր նա։

Մի անգամ էլ (լուսաբացին էր) փողերի ու շեփորների ձայն լսեց և խելագարի պես ճչաց.

— Ամա՜ն, թուրքերը եկան... Ջավակնե՛րս,— և նետվեց դեպի կից սենյակը։

Սակայն պառավ սպասուհին հասցրեց փակել նրա ճանապարհը։

— Ուշքի եկ, տիրուհի՛,— աղաղակեց նա,— չե՞ս լսում, որ ամուսնուդ փողերն են հնչում։

— Ամուսնո՞ւս,— ցնցվեց տիկինը։— Ինչո՞ւ է գալիս ամուսինս, ինչո՞ւ... Իմ սրտի դռները փակ են նրա առաջ։ Ինչո՞ւ է գալիս... Գուցե հիմա այնտեղ՝ Նախիջևանում կամ Ագուլիսում թուրքը նորից է արյուն անում։ Ինչո՞ւ չի գնում այնտեղ։ Զգեստնե՛րս...

Կից սենյակի դուռը շրխկոցով բացվեց, և երևաց Ահարոնը՝ գանգուր մազերով, ամուր, կարճ վզով, ինչպես հորն էր։

— Մա՛յր, հայրիկը եկա՞վ...— ցնծությամբ գոչեց տղան ու թռավ դուրս։

* * *

Ամրոցում բոլորն արդեն ոտքի վրա էին։ Դռները բաց արին։ Նախ ամրոց մտավ սպարապետը, ապա Տեր-Ավետիսը։ Նրանց ետևից զինվորները գետնի վրայով քարշ էին տալիս թուրքական տասնյակ դրոշներ։ Ամրոցի բնակիչները ցնծության աղաղակներ բարձրացրին։ Բանդուր-Զաքարիան վազեց սպարապետի ձիու սանձը բռնելու։

Սակայն նրանց ուրախության վրա սառը ջուր մաղվեց։ Սպարապետը չողջունեց նրանց, ինչպես անում էր միշտ, երբ վերադառնում էր հեռավոր ուղևորություններից։ Նա նույնիսկ չնայեց իրենով հիացած կանանց, Բանդուր-Զաքարիային։ Զարացած ու մռայլ հայացքով խեթեց դեպի իրեն մղվող որդուն։ Սա ետ-ետ գնաց։

Ոչ միայն ամրոցի բնակիչները, այլև մելիքներն ու հարյուրապետները չէին հասկանում, թե ինչն է իրենց սիրելի զորավարին դարձրել այդպես չար ու անբարեհամբույր։

— Զորքին կերակրիր,— Բանդուր-Զաքարիային հրամայեց Մխիթարը։— Ոռճիկ տուր բոլորին։ Արգելում եմ առանց իմ հրամանի մարդ թողնել կամ ընդունել ամրոց։

Քարե սանդուղքների գլխին նրան դիմավորեց կինը։ Ամուսնու թթված դեմքից, չարությամբ լի աչքերից ու հապշտապ քայլերից Սաթենիկը կռահեց, որ եթե ոչ դժբախտություն, ապա մի մեծ անախորժություն է պատահել նրան։ Բայց չհամարձակվեց բան հարցնել ուրիշների ներկայությամբ։ Սպարապետը համբուրեց տիկնոջ ճակատը, մի կողմ հրեց դեմը դուրս եկած ավագ որդուն ու մտավ իր սենյակը։ Նրան հետևեց միայն կինը։

— Ի՞նչ է պատահել քեզ, Մխիթա՛ր,— մեջքը հենելով ծածկած դռանը՝ հարցրեց Սաթենիկը։

— Ի՞նձ,— քմծիծաղեց սպարապետն ու փլվեց պատահած աթոռին։— Ինձ ի՞նչ պիտի պատահի։ Չտեսա՞ր թուրքական դրոշները։ Հաղթեցինք Վարանդայում։ Ինչպե՞ս են զավակներդ։

— Զավակնե՞րս...— հառաչեց տիկինը։— Խոսքդ սար ու ձոր մի՛ գցիր, Մխիթար։ Ասա, ինչո՞ւ ես եկել։

— Չէի՞ր կամենում գալս։

— Ո՛չ։ Թուրքերը Նախիջևանից գնում են Ագուլիսի վրա։

— Գիտեմ։ Հետո ի՞նչ։

— Քո տեղը տունը չէ,— գրեթե ճչաց Սաթենիկը։— Դու հիմա պետք է Դավիթ-Բեկի հետ լինես։ Ո՞ւր է Դավիթ-Բեկը։

Սպարապետը վզից պոկեց գլխանոցը, հանեց կարմիր, երկարաճիտ կոշիկներն ու, կնոջ հարցն անպատասխան թողնելով՝ անփույթ մեկնվեց թախտին։ Դա ավելի անհանգստացրեց տիկնոջը։ Նրա մեջ մի ծանր կասկած ծնվեց։ Նա մոտեցավ ամուսնուն ու շոքեց նրա առջև։

— Մի՛ թաքցնի, Մխիթա՛ր, ո՞ւր է Բեկը։ Ինչո՞ւ դու նրա հետ չես։

— Դա քո իմանալու բանը չէ,— շպրտեց սպարապետը։

Սաթենիկը երկու ձեռքով բռնեց նրա ուսերն ու թափահարեց։

— Իմ իմանալու բա՞նն է։ Պատասխանի՛ր։ Ի՞նչ է պատահել։ գժտվե՞լ ես Բեկի հետ։ Հեռացե՞լ ես, դավաճանե՞լ...

— Ի՞նչ...— գոչեց սպարապետն ու ծառս եղավ։ Կանգնեց նաև Սաթենիկը։ Մի պահ երկուսը բարկացայտ հայացքներով նայեցին իրար։

— Դու ինձ դավաճա՞ն ես համարում,— մռնչաց Մխիթարը իրենից

դուրս։— Վարանդայում քսան հազար ասկյարի դիակ է ընկած։ Եվ դու, և դու համարձակվո՞ւմ ես...

— Դու լքել ես Բեկին, լքե՛լ...— ծվծվաց Սաթենիկը։— Այդ ես զգում եմ, տեսնում։ Այդ եմ կարդում քո դեմքին, քո աչքերում։ Ա՛խ... աստվա՛ծ։— Նա երկու ձեռքով փակեց երեսն ու հեկեկաց։ Ապա անսպասելի շոքեց, գրկեց ամուսնու ծնկները և ողբասաց շարունակեց,— մի՛ արա, Մխիթա՛ր... Մի՛ սևացնի իմ, առանց այդ էլ, սև օրը։ Խղճա զավակներիդ, ինձ խղճա։ Մի՛ թողնի, որ դավաճանի անունը դաջվի քո ճակատին...

— Սաթենի՛կ,— խեղդվելով գոչեց Մխիթարը։— Ուշքի՛ եկ, Սաթենի՛կ։ Հասկացիր, թե ինչ ես ասում։ Այո՛, ես թողել եմ Բեկին, հեռացել նրանից։ Բայց ես դավաճան չեմ... Ես իմ ուխտի տերն եմ։ Ես թշվառանքի մեկն եմ՝ մենակ ու անմխիթար, ես անբախտ եմ։ Ինձ չեն հասկանում շատերը։ Գոնե դու, դո՛ւ հասկացիր իմ վիշտը։

Սաթենիկը հեկեկաց։ Մխիթարը մի պահ նայեց նրա ցնցվող ուսերին, կռացավ, համբուրեց կնոջ գլուխը և արագ դուրս եկավ։ Միջանցքում մռութ արած կանգնել էր Ահարոնը։ «Սա՞ էլ է ինձ դավաճան համարում»— մտածեց ու ցնցվեց։ Մոտեցավ, բռնեց որդու ուսերը։

— Հը՞, ո՞նց է պատանիներիդ գունդը, կաթնակերներդ։

— Հա՛յր,— քիչ առաջվա վիրավորանքն իսկույն մոռանալով՝ Ահարոնը փաթաթվեց հորը։— Ես այնպե՛ս էի կարոտել քեզ...

Սպարապետի կոկորդը քերվեց։

— Իսկ ես քեզ նույնիսկ կոպտեցի,— հուզվեց նա։— Նեղացա՞ր։ Մի՛ նեղանա, տղաս, դու էլ հո... Դե լա՛վ, ո՞ւր են Դավիթն ու Ծամամը։

— Նրանք դեռ քնած են։ Այսօր իմ «կաթնակերների» գունդը տանելու եմ վարժանքի։ Դու արի տես, հայրի՛կ։ Գոհ կմնաս։ Բոլոր տղաները մեծացել են, վարժվել...

— Կգա՛մ, կգամ, տեսնեմ ինչ եք դառել։ Իսկ դու, ահա, կարգին տղամարդ ես։ Տասնյոթ տարեկա՛ն...

Առաջին անգամ հայրը նկատեց, որ որդին իրոք տղամարդ է դառնում։ Հասակն իրենից քիչ է պակաս, վերին շրթունքի վրա երևում է սև մազագիծը, աչքերը մանկական չեն այլևս, ու ձայնը կոշտացել է։

Որդին գնաց իր «գունդը» վարժանքի տանելու։ Հայրը մի քանի վայրկյան մտամոլոր մնաց միջանցքում, ապա քայլերն ուղղեց դեպի երեխաների սենյակը։

Սաթենիկը կանգնել էր երեխաների սենյակի մուտքի մոտ, մեջքը դռներին հենած։ Նա այլայլված էր, անարյուն շրթունքներն ամուր սեղմվել էին, հայացքը չար էր ու սպառնագին։ Թվում էր, թե հիմա ձա-

գերը վտանգից պաշտպանող արծվի պես կծղրտա ու կհարձակվի իրեն մոտեցողի վրա։ Մխիթարը սոսկաց՝ կնոջն այդպես այլափոխված տեսնելով։

— Հը՞մ,— մոլտաց նա։— Արգե՞լ ես դնում առաջս։ Ձե՞ս թողնում մտնեմ երեխաներիս տեսնելու, խոսքներդ մե՞կ եք արել դու և նա...

— Ուշքի եկ, Մխիթա՛ր,— ձեռքերն առաջ պարզելով՝ աղերսեց Սաթենիկը։— Դավիթ-Բեկը նոր աշխարհազորի կոչ է արել, ժողովուրդը գնում է նրա ձայնին, հավաքվում են նրա դրոշի տակ։ Գնում են մարտընչելու հայրենիքի համար։ Իսկ դու լքել ես նրան։ Հեռացել ես նրանից։ Դարերի անեծքը կծանրանա քեզ վրա։ Ուշքի՜ եկ...

— Ես պարսից շահի ոտքն ընկնո՛ղը չեմ,— ահեղագոչ որոտաց սպարապետը։— Ես իմ բազկով ու արյունով պաշտպան կկանգնեմ ժողովրդին հայոց։ Կմեռնեմ, բայց խորամանկ ու հայակեր շահի հետ միաբանվել չեմ կարող։ Դա կործանում է, հասկացե՛ք, վերջապես, դու էլ քո Բեկն էլ։

Եվ առանց կնոջ խոսքին սպասելու՝ հապշտապ հեռացավ...

Քայլեց՝ չիմանալով ուր։ Դեմ առավ Տեր-Ավետիսի հարկաբաժնի դռներին։ Ներսից ուրախ քրքջոց լսեց։ Դուռն ուսով հրեց։

Տեր-Ավետիսի մոտ էին մելիք Բարխուդարը, Թումա հարյուրապետը, Եսային, մելիք Եգանը։ Սեղանին գինի, տապակած հավ ու կարմրախայտ կային։ Երևում էր, որ ուրախ ժամանակ են անցկացնում ընկերները։ Բոլորը ոտքի կանգնեցին։ Վարդ-խաթունը շորորալով մոտեցավ Մխիթարին։

— Իսկ ո՞ւր է Սաթենիկը, ինչո՞ւ նրան էլ չես բերել, Մխիթա՛ր։

— Իր մատյանների հետ է,— աշխատելով կարելույն չափ հանգիստ ու անվրդով ձևանալ՝ պատասխանեց սպարապետն ու նստեց խաթունի մատուցած աթոռին։— Օհո՜, տապակած կարմրախայտ,— ասաց կեղծ ուրախ,— սքանչելի՜ է։ Դե՛ դու բախտավոր մարդ ես, Ավետի՛ս... Կարմրախա՜յտ... Իսկ իմ տնից թանաքի ու թղթի հոտ է գալիս միայն։

Վարդ-խաթունը բազմանշանակ նայեց ամուսնուն։ Բարխուդարը գառը ժպտաց։ Հասկացան, որ անախորժություն է ծագել սպարապետի ու նրա տիկնոջ միջև։

Գինի խմեցին։ Սպարապետը ձեռքով վերցնում էր կարմրախայտն ու ախորժակով խժռում։ Խմում էր շատ։ Կնոջ հետ ունեցած անախորժ զրույցը ցավ էր պատճառում։ Դա առաջին ընդհարումն էր, որ կատարվեց Բեկից հեռանալու պատճառով։ Թեև մի քանի խճճված բառերով միայն ինքն ակնարկեց Բեկի հետ գժտվելու առիթը, բայց և այնպես սրտում ցավ մնաց։ Որքան էլ շուտ կոահեց մարդու հոգու խորքերը թափանցող այդ դյուրագրգիռ, իր բախտից դժգոհ կինը։ Կոահե՞ց... Եվ հիմա, երևի, իր մատյանում գրում է եղածը...

Վարանդայից վերադառնալիս նկատել էր, որ մելիքները տարօրինակ հայացքներով էին նայում իրեն։ Զգո՞ւմ են, որ ինքը բաժանվել է Բեկից, թե՞ որևէ ճանապարհով տեղյակ են այն նամակին, որ ինքն ուղարկեց Բեկին։ Զորապետների այն հարցին, թե ինչու չեն իրենք մեկնում Ագուլիս՝ Բեկի մոտ, նա պատասխանել էր, թե այդպես է Բեկի հրամանը։

Նորից գինի խմեցին։ Մելիք Բարխուդարը խոպոտ երգեց.

«Քասերը լինի,
Կարմիր գինի,
Ձեզ անուշ լինի...»

«Անուշ լինի,— մտքում շարությամբ կրկնեց սպարապետն, ու մի սառը դող անցավ նրա մարմնով։— Մենք այստեղ լակում ենք, իսկ Դավիթ-Բեկն այնտեղ, գուցե, օրհասական ճիգ է թափում թշնամու դեմ»։— Նրա կուրծքը վերուվար արեց։ Շունչն ասես կտրվում էր։ Ինչո՞ւ եկավ Զագեձոր, չգիտե՞ր, որ տանն իրեն ոչ մի ուրախություն չի սպասում, կնոջ թթված դեմքին էր կարո՞տ։ Նա գավաթը ցած դրեց, ընդոստ վեր կացավ։

— Ո՞ւր, ո՞ւր,— անհանգստացավ Վարդ-խաթունը։— Հիմա ճտով փլավ կբերեն, մի փոքր էլ...

— Գնանք «կաթնակերների» վարժանքը դիտելու,— ասաց սպարապետը,— պատանիներին խոսք եմ տվել, մարդն իր խոսքին տեր պիտի լինի...

Ու գնաց դեպի ելքը։ Խոստումը կատարելը պատրվակ էր, չէր դիմանում, սիրտը նեղվում էր, ուզում էր հեռանար, պոկվեր իրեն տանջող մտքերից։ Մելիքները հետևեցին նրան։

Ձիերը թոցրին բաց դարպասից ու մեկնեցին դեպի դիմացի դաշտը, որտեղ Ահարոնը վարժեցնում էր իր պատանիներին։

Արևոտ օր էր։

***

Վարարակն գետի ափին, հինավուրց Զանգեզոռ վանքի շուրջն ահագին բազմություն էր հավաքվել։ Գետափի տափարակից մինչև լեռնալանջի անտառը ծածկվել էր ուխտավորների հարյուրավոր խմբերով։ Ուխտի էին եկել ոչ միայն մոտակա Զագեձորից, Գորիսից, Սանդերից,

Վերին Շենից, Քարաքունջից, այլև Քաշաթաղքի, Ծղուկի, նույնիսկ Սիսական գավառներից։ Եկել էին ընտանիքներով։ Պատերի տակ, մասրենու թփերից ու գետափի ուռիներից հարյուրավոր ճոճքեր էին կախել՝ ծծկերների համար։ Տղամարդիկ գառ ու ոչխար էին մորթում, կանայք պղնձե կաթսաների մեջ մատաղի միս էին եփում։ Փերեզակները վխտում էին ուխտավորների մեջ՝ մանր-մունր բաներ վաճառելով պառավներին ու հարսներին։

Զարմանդը ևս այստեղ էր։ Նա տեղավորվել էր համագյուղացիների հետ։ Որդու անվան մատաղացու բերած գառը հեզ կանգնել էր ուռենու ստվերում և երբեմն մայում էր բարակ, սրտակեղեք ձայնով։ Գետափի ավազուտում շները քաշքշում էին մորթած անասունների փորոտիքը։ Տաթևից եկած եպիսկոպոսներն ու վարդապետները պատարագ էին մատուցում։

Զարմանդն իր գառը գրկեց, տարավ վանքի բակը, տապալեց հինավուրց մի խաչքարի առջև ու մի գեղջուկի խնդրեց կտրել գառան վիզը։

— Ա՛յ խաչ, դու անփորձ պահես իմ զինվոր մինուճարին...— շշընջաց երկյուղած։ Նա չնկատեց, թե ինչպես զինվորների մի փոքր խումբ մոտեցավ ուխտավորներին։ Ժողովուրդը հավաքվեց նրանց շուրջը։ Զինվորների գլուխն էր Պակի զորապետը՝ Դավիթ-Բեկի դրոշով։

— Լսի՛ր, ժողովո՛ւրդ հայոց,— զնգուն ձայնով գոչեց նա։— Կոչ եմ բերել մեր տեր գահերեց զորավար Դավիթ-Բեկից։ Ահա նա,— նա համբուրեց ձեռքին բռնած ոլործուն թուղթը, կպցրեց ճակատին ու, կոկորդը քերելով, գիրկապ անելով կարդաց.

«...Թող մեր բարի ձայնը հասնի հայ ժողովրդի բոլոր մեծին ու փոքրին։ Ահա եկել է այն օրը, երբ յուրաքանչյուրը մեզանից պիտի ցույց տա, որ ինքը կարող է իր կյանքը զոհաբերել հայրենիքի սուրբ օջախին ու հողին հայոց։ Ուրեմն կազմեցեք աշխարհազորային գնդեր, զինվեցեք մեծով ու փոքրով, կին թե տղամարդ և եկեք ձեր զորքին օգնության։ Թուրքը, հիմնահատակ ավերելով մեր աշխարհները՝ այժմ մոտենում է մեր լեռներին։ Աստծո՜ սիրուն, եղբայրնե՛ր, քույրե՛ր, գնդեր կազմեցեք, հապշտապ եկեք Ագուլիս՝ մոտեցող գազանի առաջն առնելու։ Թող մեր քաղցր աշխարհի սերն առաջնորդի ձեզ դեպի սրբազան պատերազմ։ Սպասում եմ ձեզ։ Հայոց ժողովի գահերեց զորավար Դավիթ-Բեկ Մելիք Փարսադանյան»։

Ուխտավորների ամբոխը պապանձված լսեց Բեկի կոչը։ Մի երկվայրկյան չհասկացան, թե ինչ է պահանջում Բեկը։

— Այդ ի՞նչ նոր հրաման է,— գոռացին այս ու այն կողմից։

— Հրաման չի, հայե՛ր,— պատասխանեց Պակի զորապետը,— Դավիթ-Բեկի կոչն է։

— Էլի՞ զինվոր է ուզում։

— Մեծին ու փոքրին կովի է կոչում։

— Է՛յ, զորապե՛տ եղբայր, հապա մի անգամ էլ կարդա, լսենք։

Ամբոխը պապանձվեց. «Թող մեր բարի ձայնը հասնի...»— նորից զնգաց զորապետի ձայնը։ Կոչը տասն անգամ կարդալ տվին։ Պակին խոպոտվեց, թափահարեց Բեկի դրոշն ու խնդրեց, որ մի պահ լռեն։ Ապա լարեց երկար վզի մկաններն ու հուժկու ձայնով ասաց.

— Ովքեր կմտնեն աշխարհազորային գնդերի մեջ և կգնան մեր տեր Դավիթ-Բեկի կոչին, նրանք մեծագին պատիվներ կստանան և երեք տարի կազատվեն ամեն տեսակի հարկուտուրքից։

Այդ արդեն ազդեց։ Ամբոխը տատանվեց, որոտաց գարնան ամպրոպի պես։

— Վանքի հարկերի՞ց էլ կպրծնենք,— գոռացին այս ու այն կողմից։

— Բոլորի՛ց։ Ո՛չ մի հարկ, ո՛չ մի տուրք չեք տա...

— Կգնա՛նք։

— Իսկ զենք կտա՞ Բեկը։

— Կտա՛,— կոկորդը պատռեց Պակին։— Հավաքվեցեք ու գնացեք Ագուլիս, եղբայրնե՛ր ու քույրե՛ր։ Շտապեցեք, Բեկի աչքը ձեր ճանապարհին է։

Զարմանդը մտավ համագյուղացիների խմբի մեջ։ Գորիսցիները խոսում էին բարձրաձայն, ասես կռվում էին միմյանց հետ։

— Է՛յ, Զարմա՛նդ, դու էլ ես գնալո՞ւ,— հարցրեց իրենց ավանի ջրաղացպանը՝ փրչոտ հոնքերով մի կաղ շինական։

— Ինչո՞ւ չի գնա,— այրու փոխարեն պատասխանեց կակազ բրուտը։— Երեք տարի հարկ ու տուրք չի տալու։ Տուրքե՛ր...

— Լռի՛ր, մկկան այծ,— փրփրեց Զարմանդն ու կրակի մոտից վերցրեց երկար, կեռակտուց շամփուրը։— Հարկուտուրքից պրծնելը չէ, երկիրն է վտանգված, հայրենի՛քը... Հասկանո՞ւմ ես։ Ուզում ես եկ, ուզում ես գնա քու տոուզ կնկա փեշի տակը մտիր։

— Ա՛խ, լեզու ունես, հա՛...— նեղացավ բրուտը։

Գյուղացիները դեռ խոսում, վիճում էին։ Շատերը հրաժեշտ էին տալիս կանանց ու երեխաներին, մյուսները տատանվում էին՝ գնա՞լ Դավիթ-Բեկի կոչին, թե՞ ոչ։ Զարմանդը շեշտակի շուռ եկավ, ձեռքի շամփուրը բարձրացրեց ու ծղրտաց՝ ականջ պատռող ձայնով։

— Է՛յ, ով որ տղամարդ է, փափախ ունի գլխին, թող գա իմ ետե-

վից։ Թուրքը գալի՞ս է... Գնանք Դավիթ-Բեկին զորավիգ... Գնանք պահապան կանգնենք մեր տան, մեր օջախին, հողին հայոց։ Դե, եկե՛ք, եկե՛ք...

Զարմանդի ետևից գնացին տասը-քսան ուխտավոր։ Կաղ ջրաղացպանը վեր կացավ նստած տեղից։

— Ինձ էլ տար, Զարմա՜նդ...— և գնաց օրորվելով։

Վանքի պատերից դեռևս աղմկում էր ուխտավորների ամբոխը։ Զարմանդը Պակի զորապետից խլեց Դավիթ-Բեկի դրոշն ու ծղրտաց.

— Գնանք, եղբայրնե՛ր, Դավիթ-Բեկը կանչում է...

Այդ օրվանից սկսած Ագուլիս տանող ճանապարհներին անվերջ փոշի էր երևում։ Գյուղերից ու ավաններից խմբերով մարդիկ էին գնում Դավիթ-Բեկի կոչին։ Զինված էին՝ ով ինչով կարողացել էր։

Երկիրը տագնապի մեջ էր։

***

Մի ամբողջ շաբաթ սպարապետն անցկացրեց պատանիների «կաթնակերաց գնդի» հետ, գիշերները խելահեղ կերուխում էր սարքում։ Դրան երբեմն մասնակից էր դարձնում նաև որդուն։ Ոչ մի պահ դադար չէր գտնում։ Ագուլիս ուղարկած լրտեսները վերադարձան ու հայտնեցին, որ Թուրքերը դեռ նստած են Նախիջևանի ու Օձնասարի տակ, սպասում են Քյոփուրլու Աբդուլլահ փաշային։ Սա Երևանում նոր զորք է գումարել և շուտով պետք է ժամանի Նախիջևան։ Դավիթ-Բեկն աշխարհազորային գնդեր է հավաքում գավառներից։

Մխիթարն իր լրտեսների հաղորդած լուրերը գաղտնի էր պահում մելիքներից։ Ասենք՝ մելիքները ժամանակ էլ չունեին հետաքրքրվելու, թե ինչ է կատարվում գավառներում։ Նույնիսկ չիմացան, որ իրենց գյուղերից էլ են աշխարհազորայիններ մեկնում Ագուլիս։ Անվերջ խելագար խրախճանքի մեջ էին։ Գիշերները խմում էին, երգում, գոռում սազանդարների ու գուսանների վրա։ Ցերեկները արջաքուն տալիս։ Ուռել էին, աչքերի տակերը կապտել։ Հարբած ընկնում էին խնջույքի սրահում։ Սպարապետը հրամայում էր կժերով ջուր լցնել նրանց վրա ու նորից քարշ տալ սեղանի մոտ։

Մի երկու անգամ Վարդ-խաթունն ու տիկին Սաթենիկը եկան՝ ամուսիններին հանդիմանելու և կործանիչ կերուխումին վերջ տալու, բայց սպարապետը կոպտորեն դուրս քշեց նրանց սրահից ու ծառաներին հրամայեց այլևս նրանց սրահին մոտ չթողնել։

Յոթերորդ օրվա գիշերը սպարապետը անցկացրեց մղձավանջի մեջ։

Երբեք այդպես չէր հարբել։ Երեկոյան հրամայեց գավաթները դեն նետել ու խմել կուլաներով։ Ով չէր կարողանում կուլան դատարկել, գինին լցնում էին բերանը։

Գիշերը կիսվել էր։ Գինարբուքի սրահում մշուշ էր։ Սպարապետը նստել էր մռայլ, անկենդան։ Վճռել էր յուրայիններին հայտնել իր ու Դավիթ-Բեկի երկպառակության մասին։ Ինչ լինելու է, թող լինի. պիտի պարզի վերջապես, թե ով է իր կամակիցը, ով՝ ոչ։ Արյան հոտ էր զգում։ Գինուց օրորվող Եսայի հարյուրապետին հրամայեց երեսուն տապարակիր զինվոր բերել ու կանգնեցնել սրահի նախասենյակներում։ Կգլխատի նրան, ով հակառակի իրեն՝ իմանալով, որ ինքը հեռացել է Դավիթ-Բեկից ու այլևս չի ճանաչում նրա գահերեցությունը։

Եսային մի ծանր, խորհրդավոր բան գուշակեց սպարապետի հրամանից, բայց գնաց կատարելու։ Սակայն դեռ նոր էր սրահից դուրս եկել, երբ իսկույն ետ եկավ։ Սպարապետն ատամները սեղմեց, սիրտը կասկած ընկավ։ «Չլինի՞ թե մելիքներին հայտնի է իմ արյունոտ մտադրությունը և ահա կանխեցին Եսայուն»— ցասումով մտածեց նա ու ատամները կրճտացրեց։

— Ինչո՞ւ ետ եկար։— Հարցրեց Եսայուն։

— Քյոխվա Զալաբին է եկել Գանձասարից,— հայտնեց Եսային։— Ծառաները չեն թողնում ներս գա։

— Բե՛ր,— մռլտաց սպարապետը։

Քյոխվա Զալաբին եկավ իսկույն։

— Բարի՞ է,— անհամբեր հարցրեց սպարապետը, մի կերպ մնալով ոտքի վրա։

— Բարի է, բարի՜, տե՛ր սպարապետ,— պատասխանեց Զալաբին։— Գանձակի մոտ Հովհաննես-Ավան իշխանը ջարդեց Ռեջեբ փաշային։

Սպարապետը շրթունքները լմլմորեց։ Գինովությունը հետզհետե անցավ։ Շուտ եկավ դեպի սրահը։ Այլևս մելիքներին չի հայտնի իր ու Բեկի գժտության ծանր լուրը։ Էլ ո՞վ կհավանի իր արարքը։ Հովհաննես-Ավանը հաղթություն է տարել։ Իսկ ինքն ուզում էր ասել եղածը, ապա ոչընչացնել իրենից դժգոհներին։

— Արցախի մեր եղբայրները ջարդել են Թուրքերին, է՜յ, ցնծացե՛ք,— խոր շունչ քաշեց սպարապետը,— ապա վերջացրեք կերուխումը. մեկնում ենք Շահապունիք։

Կես ժամ հետո ամրոցի սալահատակը դղրդաց հարյուրավոր նժույգների սմբակների դափից։ Առաջինը բաց դարպասից դուրս սլացավ սպարապետը։ Զորքը հետևեց նրան...

***

Ագուլիսի փողոցներն ու հրապարակները խցկվել էին մարդկային բազմություններով։ Խայտաբղետ հագուստներով ու զենքերով շինականները լցվել էին ամեն ծակուծուկ։ Բերանբաց հիացմունքով էին նրանք նայում քաղաքի մեծահարուստ վաճառականների պալատներին, տասնմեկ վանքերի ոսկեզօծ գմբեթներին, ծածկած շուկայի անհատնում բարիքներին, ակնեղենի ու մետաքսի կրպակներին։ Երբեմնի մաքուր քաղաքը, որտեղ արգելված էր անասուն պահել, և կառք անգամ թույլ չէր տալիս մտնել փողոցները, կեղտոտվեց ձիերի ու ջորիների աղտեղությունից։

Գեղեցիկ ու հարուստ էր Ագուլիսը։ Լինելով մի խոր կիրճի մեջ, նա երեք կողմից շրջապատված էր ժայռեղեն բնական պարիսպներով։ Բաց էր միայն Արաքս գետի կողմը, սակայն այդ ցածրությունը պատած էր խուռնախիտ այգիներով և մի հզոր պարսպով։

Քաղաքից փոքր-ինչ դուրս, նեղ ձորալանջին վեհանում էր Թովմա առաքյալի վանքը։ Նրա մայր տաճարի դուռը զարդարված էր փղոսկրով, իսկ գմբեթին շողշողում էր ոսկե վիթխարի խաչը։ Թովմայի վանքից պակաս հարուստ ու չքեղ չէին նաև մյուս տասը վանքերն ու տաճարները։ Քաղաքի նեղ փողոցներում, քարե բաց նովերի միջով օր ու գիշեր վազում էին բազմաթիվ քահրիզների[1] սառնորակ ջրերը։

Ագուլիսցիները իրենց քաղաքը երբեմն «Նոր Անի» էին անվանում։ Թեև Ագուլիսը չուներ Բագրատունիների մեծահռչակ մայր քաղաք Անիի հզորությունն ու վեհությունը, բայց արևելքում հռչակված էր իր հարստությամբ։ Հաճախ Էջմիածնի սնանկացած կաթողիկոսները աղերսագրերով ագուլիսցիներին էին դիմում իրենց ծանր պարտքերն ու անհատնում կարիքները հոգալու համար։

Հարստությամբ հղփացած ագուլիսցիները ոչ միայն իրենք էին երես առած, այլև երես էին տվել իրենց հոգևորականներին, որոնք Էջմիածնի գերիշխանությունը ձևականորեն էին ընդունում միայն։ Վաճառական Ագուլիսը չէր խառնվում ազատագրական շարժումներին և մտահոգված էր միմիայն իր հանգիստն ապահովելու գործով։

Քաղաքի կենտրոնում, ուր ձորի վրա աղեղվում էր հնադարյան կամուրջը, ծաղկում էր Ագուլիսի մեծ շուկան։ Աշխարհի բոլոր ծայրերում հռչակ էին վայելում Ագուլիսի ճերմակ բուրդը, բամբակը, բարակ չիթը, չոր միրգը, ընտիր մետաքսը, գույնզգույն ու նուրբ կաշիները,

[1] Արտեզյան ջրհորներ։

որից նույնիսկ Եվրոպայի արքաներն էին կոշիկներ կարել տալիս իրենց համար։ Աշխարհի շուկաներում հայտնի էին Ագուլիսի կերպասը, գիտորով դաբաղած այծի մորթին, գոհարեղեն զարդերը, ծանրագին ակնեղենը։

Դավիթ-Բեկն իր զորապետների հետ օթևանել էր Թովմա առաքյալի վանքում։ Վաճառականները խնդրել էին նրան՝ գալ ու ապրել իրենցից որևէ մեկի պալատում, սակայն Բեկը հարմար էր գտել մնալ վանքում, որտեղ տեղավորված էր նրա զորակայանն ու զորքի մի մասը։

Թովմա առաքյալի վանքը շրջապատված էր ամրապինդ պարսպով, աշտարակներով, որոնք նրան ամրոցի տեսք էին տալիս։

Կեսօր էր։

Ճանապարհը պահակող հեծյալ խմբերից մեկը արշավով մտավ Ագուլիս։ Ձիավորները գոռացին նեղ փողոցները փակած ամբոխի վրա, որ ճանապարհ տան իսկույն։ Նրանք իրենց հետ բերում էին բարձրահասակ, անմորուք ու անբեղ մի թուրք ձիավորի, որի աչքերը կապել էին թաշկինակով։ Թուրքը ձեռքին սպիտակ դրոշ ուներ։ Ձիավորների խումբը դժվարությամբ հասավ Թովմայի վանքի բակը։ Երկրի ապավեն գնդի զինվորները ձիուց պոկեցին թուրքին։

— Եկել է մեր վանքում քրիստոնյա մկրտվելո՞ւ,— հարցրեց մեկը։

— Պատգամավոր է Աբդուլլահ փաշայից,— պատասխանեցին ձիավորները։— Եկել է քեզ թլպատելու, իծի՛ մուրուք։

— Հի՛, հի՛, հի՛...— քրքջաց «իծի մուրուքը»։— Լա՜վ ուրացող գտար։ Ասա Վարանդայի ճակատամարտի ահը փաշային երեխից կտրել է, էլի՛... Մեռնե՜մ սպարապետի անունին։

Պատգամավորին տարան Դավիթ-Բեկի մոտ, աչքերը բաց արին։ Բեկը նստած էր վանքի բակում, հին գերեզմանաքարերից մեկին և զրուցում էր իր առջև կանգնած աշխարհազորային գնդերի պետերի հետ։ Նրա մոտ խոնարհ կանգնել էր նաև Ագուլիսի պարոն-տեր մելիք Մուսին։ Թուրքին տեսնելով՝ Բեկն ընդհատեց զրույցը։ Մելիք Մուսին ցնցվեց։ Աշխարհազորային գնդերի պետերը հետաքրքիր նայեցին բարձրահասակ թուրքին։ Զարմանքը, որ քիչ առաջ ազատ համարձակ խոսում էր Բեկի հետ, քիթկալը քաշեց բերանին ու հոնքերը կիտեց։ Թուրքը դաժան դեմք ուներ ու վայրենի հայացք։ Աչքերն ահ էին ազդում։

— Ո՞վ ես և ինչո՞ւ ես եկել մեր քաղաքը,— ուղիղ նայելով թուրքին՝ հարցրեց Բեկը։

Թուրքն աղմուկով հազաց, բերանի պարունակությունը կուլ տվեց ու խոպոտ պատասխանեց.

— Ինձ քեզ մոտ է ուղարկել մեր գլխի տեր սերասկյար Աբդուլլահ փաշան։

— Որտեղի՞ց ես եկել,— նորից հարցրեց Բեկը։

— Նախիջևանից, որտեղ բանակած է փաշան։

— Արդեն Երևանից ժամանե՞լ է։

— Այո։ Հիմա Նախիջևանում է։

— Թե՞ Վարանդայում,— հոնքը բարձրացրեց Բեկը։— Ապաքին. վե՞լ է, արդյոք, քաջարի սերասկյարը։ Նոր դրոշակնե՞ր է կարել տվել՝ Վարանդայում կորցրածների փոխարեն։ Զարմանում եմ, թե ինչու սուլթաները նրան չի փոխել՝ Վարանդայի կրկնակի ջարդից հետո...

— Մի ասա, հա՛յ իշխան, պատերազմի բախտը փոփոխական է,— նկատեց պատգամաբերը։

Բեկը մի փոքր լռեց, ապա առանց նայելու նրան՝ հարցրեց.

— Ի՞նչ է կամենում քո փաշան։

— Մեր գլխի տերը կամենում է, որ դու հպատակությամբ այցելես իրեն։

— Ձեր դահիճները պարապ են երևի,— քմծիծաղեց Բեկը։

— Քո չգալով նրանց գործը կբացվի։ Բոլորիդ մահ է սպասում։

Զարմանքը ամուր սեղմեց Զանգեզուրի վանքից հետը բերած շամփուրը։ Պարոն-տեր մելիք Մուսին շունչը պահած նայում էր Բեկին։ Ինչքա՜ն լավ կլիներ, եթե Բեկը համաձայներ գնալ փաշայի մոտ՝ հաշտություն խնդրեր։ Իր համար միևնույն էր, թե ում հարկ կտա Ագուլիսը՝ Դավիթ-Բեկի՞ն, թե՞ սուլթանին։ Երկուսն էլ չեն կտրի վաճառականի գլուխը։ Առանց վաճառականի ոչ մի գահ ամուր չէ այս հողի վրա։

— Ա՞յդ է փաշայի կամքը,— հարցրեց Բեկը Թուրքին։

— Նրա առաջարկը չընդունելու դեպքում մենք հիմնահատակ կկործանենք ձեր քաղաքները, ձեր ժողովրդին սրի կքաշենք։

— Օ՜, բարի է երևում ձեր փաշան։— Բեկը ձայնը խստացրեց։— Հեռացի՛ր այստեղից ու քո փաշային ասա, որ այլևս գլխացավանք չպատճառի մեզ իր խորհուրդներով։ Այս անգամ խնայում եմ։ Երկրորդ պատգամաբերին այլևս ետ չենք տա։ Հեռացի՛ր, քո կեռ լուսնի հետ։

— Խոնարհ հպատակների համար վտանգավոր չէ օսմանյան կեռ լուսինը,— ասաց Թուրքը։

— Ասա քո փաշային, որ մեր լեռները խոնարհվել չեն սիրում։ Ազատ ապրելը մեզ համար մնացել է հայրենատուր ավանդություն։ Գնա՛։

Բեկը վեր կացավ։ Զինվորները նորից կապեցին պատգամաբերի աչքերը և տարան։ Նրանք սկսեցին բարձրաձայն հայհոյել փաշային, սուլթանին ու Մուհամմեդի դինը[1]։ Մի քանիսը տրտնջացին, թե ինչու

[1] Հավատը։

Բեկը Թուրքին բաց թողեց ողջ։ Թուրքերն այդպես չէին վարվում իրենց պատգամատարների հետ։ Բեկը լսում էր նրանց ու լռում։

— Իմաստուն վարվեցիր, տե՛ր Դավիթ-Բեկ,— կամաց ասաց մելիք Մուսին։

«Եթե սրտինդ ես ասում»,— մտածեց Դավիթ-Բեկը։

Չի հեծնելով՝ նա մելիք Մուսու, մեղրեցի Կոստանդին ու Սարի զորապետների և աշխարհազորային գնդերի պետերի ուղեկցությամբ իջավ քաղաք։ Շուկայի մոտ զորքն ու ժողովուրդը դղրդոցով դուրս եկան.

— Կեցցե՜ Դավիթ-Բեկը...

— Բե՜... կը՜...— արձագանքեցին ժայռերը։

Բեկը թեքվեց դեպի պարոն-տերը։

— Տեսնո՞ւմ ես, ժողովուրդն իրեն պատրաստել է քաջությամբ պաշտպանել իր հայրենիքը,— ասաց նրան։— Սրանք կպահեն երկիրը, քեզ ու քո գանձերը։

Մուսին գլուխ տվեց։

— Օրհնվի՜ բազուկդ,— ասաց բարձրաձայն, բայց սրտում ուրիշ ցավ կար, ուրիշ աչքով էր նայում զորքին ու գահերեց զորավարին։ Ինքն ու իր քաղաքը բախտավոր կլինեին, եթե այս դաժան ու անզիջում Բեկն իր զորքով այստեղ չլիներ։ Մի քանի պարկ ոսկի. մի քանի հարյուր թոփ մետաքս, մի քանի գեղեցիկ աղջիկ, և դրանով կփափկացներ Թուրք փաշայի սիրտը, նրան հեռու կպահեր իրենից ու իր քաղաքից։

Ագուլիս հասան Պարսկաստան ուղարկած դեսպանները։ Բեկը նրանց ընդունեց վանքի խցերից մեկում, մենակ։

— Ձեռնունա՞յն եք,— հարցրեց՝ հույսով նայելով Բայանդուր իշխանին։

— Ո՛չ,— պատասխանեց հոգնած, փշրված իշխանը։— Բայց եղածն էլ մի բան չէ։ Երկար պահեց մեզ շահն իր պալատում։ Պատիվներ տվեց։

— Իսկ զո՞րք,— չհամբերեց Բեկը։

— Բերինք։ Հինգ հազարանոց մի խաժամուժ։ Դալիս են մեր ետևից, վաղն այստեղ կլինեն։ Բերում են Ասլամազ Ղուլի ու Խոսրով խաները։

Բեկը մի փոքր լռեց, ծխամորճը լցրեց, տվեց Սողոմոնին, որ վառի։ Ապա ասաց.

— Ուժ չեն, բայց ուժ կտան մերոնց։ Էլի զորք է, ժողովուրդը կասի՝ մենակ չենք, շահը մեզ օգնություն է ուղարկել։ Չլինելուց լավ է։ Իսկ ձեզ հայտնի՞ է արդյոք, որ շահը մեծ բանակ է ուղարկել Թուրքերի դեմ։ Մակվի վրայով պարսիկները Թուրքին խփելու են թիկունքից, որ մեր գործն այստեղ հեշտացնեն։ Արցախում Թուրքերը նորից մեծ պար-

տություն են կրել։ Իմացի՛ք, հայտնեցեք զորքին։— Ջնայեց իշխանին ու մյուս դեսպաններին։ Առաջին անգամն էր սուտ խոսում։ Արցախի հաղթությունը ճիշտ էր, բայց որ շահը մեծ զորք է ուղարկել թուրքերի դեմ սուտ էր, հորինեց։ Հարկավոր էր։ Պետք էր զորքին հուսադրել, որ չվախենա մենակությունից, չհուսահատվի։

Դեսպանները հավատացի՞ն՝ դժվար էր գուշակել։ Բայց գորքի մեջ տարածվեց ոգևորող լուրը։ Պարսիկները բանակ են ուղարկել իրենց օգնության։ Շահը մեկնել է Բայազետի կողմերը՝ թուրքերին թիկունքից խփելու։

Հավատացողների թվում էր նաև մելիք Մուսին։

Խաները եկան՝ իրենց զորքով ու հարեմներով։ Ուրախ էին, կայտառ։ Բեկը խաների զորքը տեղավորեց Ագուլիսի շրջակայքում՝ այգիների մեջ, պարեն տվեց։ Խաներին պահեց զորակայանում։

— Ալլահն օգնում է,— ցնծացին խաները, երբ իմացան արցախցիների հաղթության մասին,— ահա մենք պատրաստ ենք ծառայելու քեզ, տե՛ր Դավիթ-Բեկ։

***

Շահապունիքում բանակած Մխիթար սպարապետը օր-օրի սպասում էր թուրքերի երևալուն։ Բայց թուրքերը սիրտ չէին անում մոտենալ կիրճին։ Մխիթարը հեծյալ ջոկատներ ուղարկեց Նախիջևանի կողմերը՝ հրամայելով ասպատակել ճանապարհներն ու հանկարծակի հարվածներով անհանգստացնել թուրքական բանակի թիկունքը։ Մի երկու անգամ էլ ինքը գնաց գիշերային հարձակման։

Նախիջևանում և Օձնասարի տակ բանակած թուրքերը գազազեցին։ Մխիթարը կտրել էր Երևան տանող ճանապարհը։ Նրա ջոկատները հարվածում, հափշտակում էին թուրքերի գումակները, որոնք Շիրակի և Երևանի վրայով ուղարկվում էին Աբդուլլահ փաշային։ Թուրքերը զարար չունեին իրենց թիկունքը խոցոտող Մխիթարից։ Այս հաղթանակներն ուռցնում էին սպարապետի սիրտը։ Ամեն տեղ խոսում էին նրա մասին, նրա համբավը բարձրանում էր օր-օրի։ Քյոփուրլու Աբդուլլահ փաշան ահով էր տալիս նրա անունը։

Բայց այս ամենը չէր դարմանում հին ցավը։ Հանգիստ չէր սպարապետի հոգին։ Մի շաբաթ առաջ տիկին Սաթենիկը մեծ որդու հետ եկել էր Շահապունիք և ոչ մի առիթ բաց չէր թողնում, որ կշտամբի, նախատի ամուսնուն՝ Դավիթ-Բեկից անջատվելու համար։

«Գուցե իսկապե՞ս ես դավաճան եմ,— երբեմն ինքն իրեն հարցնում

էր սպարապետը,— ո՛չ, երբե՞ք,— անմիջապես ժխտում էր նա։— Ահա ես կռվում եմ թուրքերի դեմ, և իմ գնդերը փառք են բերում հայ ժողովրդին ու նրա բանակին։ Իսկ որ ես բաժանվել եմ Բեկից, դա իմ մեղքը չէ»։

Նա սաստիկ զայրացել էր կնոջ վրա. ինչո՞ւ է եկել բանակ, ինչո՞ւ չի վեր ընկել տանը՝ իր թանաքոտ սեղանի մոտ։ Նա տանել չէր կարողանում Սաթենիկի կշտամբող խոսքերը, ծանր ու չարացած հայացքը։ Կատաղում էր, մանավանդ, որ կինը երբեք չէր մեղադրում Դավիթ-Բեկին։ Ինչո՞ւ չի նախատում նրան, որ մելիքների ու զորապետների ներկայությամբ սաստիկ վիրավորեց իրեն՝ հեռացրեց Հալիձորից, աքսորեց... Ինչո՞ւ Սաթենիկը չի դժգոհում, որ Բեկը հաշտություն է որոնում պարսից շահի հետ։

Թեև բաժանվել էր Բեկից և երդվել այլևս նրա հետ չհաշտվել, բայց սպարապետը սրտի խորքում շարունակում էր սիրել նրան։ Սիրում էր անընկճելի քաջության, երկաթե կամքի ու իրենց գործին անսպառ նվիրվածության համար։ Բայց տանել չէր կարողանում, որ Բեկը հույս է դրել պարսիկների հետ դաշն կապելու վրա, իր բանակում պահում է պարսից խաներին, նրանց խաժամուժ զորքը, որ հենց առաջին ճակատամարտում կլքեն նրան...

Մի անգամ, երբ վերադարձել էր Նախիջևանի դաշտում կատարած մի նոր ասպատակությունից, իր վրանի առջև խոնարհումներով նրան դիմավորեց Մովսես աբեղան։ Մխիթարը գլխի թեթև շարժումով պատասխանեց նրա ողջույնին։ Շուրջը կասկածելի լռություն էր, կարծես բանակը սգի մեջ էր։ Ինչ-որ ծանր բան գուշակելով՝ Մխիթարը մտավ վրան։ Այնտեղ էին կինն ու Ահարոնը։ Կինը սգավոր էր։ Մովսեսը ևս մտավ վրան։ Վեհ էր երիտասարդ աբեղան, անհանգիստ ու գունատ։ Ասես իր հետ բերել էր հարազատի մահվան բոթը։ Մխիթարի սիրտը տակնուվրա եղավ։ Չլինի՞ Բեկը ճակատամարտ է տանուլ տվել, կամ...

— Ի՞նչ կա,— զսպելով սրտի զգացմունքները՝ չոր-չոր հարցրեց Մովսեսին։

— Ողջույն,— ծանր պատասխանեց Մովսեսը,— մելիքները եղբայրական ողջույն են ուղարկում քեզ։

Մխիթարն ականջը սրեց։ Իսկ բարև չի ուղարկե՞լ արդյոք Դավիթ-Բեկը։ Բայց ոչ, Մովսեսը նրա անունը չտվեց։

— Ինչպե՞ս է զորքը,— Մխիթարն այծենակաճը մի կողմ նետեց։

— Ջինավառ ու արհավիրքին պատրաստ,— Մովսեսի ձայնը կշտամբող էր։

Սպարապետը նայեց Սաթենիկին։ Սա գլուխը թեքել էր ու խոնջած,

չարացած նայում էր մի կետի։ Սպարապետը փշաքաղվեց։ Երևի կինն ամեն ինչ հայտնել է աբեղային։

— Ինչո՞ւ ես եկել,— վերջապես նորից հարցրեց Մովսեսին։

— Եկել եմ ուրախանալու քո քաջության գործերով, բայց տխրեցի՝ լսելով ծանր ու դառն իրողությունը։

Սպարապետը հայացքով շանթեց կնոջը։

— Այդ դո՞ւ ես հայտնել, հա՞։

— Այո՛, ես,— Սաթենիկը ցասկոտ նայեց նրան։— Ես եմ ամեն ինչ հայտնել Մովսեսին։ Արա՝ ինչ ուզում ես։ Ես համբերել չեմ կարող այլևս, ես կգոռամ, կազդարարեմ ամենքին, աշխարհին, որ դու, որ դո՛ւ...

Ահարոնը հոնքերը կիտած, շունչը պահած նայում էր հորը։ Սպարապետը խոցվեց նրա հայացքից, թուլացած նստեց ցածրիկ աթոռին ու գլուխն առավ ձեռքերի մեջ։

— Ուշ չէ, տե՛ր սպարապետ,— երկար լռությունից հետո հանդարտ խոսեց Մովսեսը։— Քանի դեռ ամենին հայտնի չէ պառակտումը՝ զիջիր։

— Թե չէ կհայհոյե՞ն ինձ, կանիծե՞ն, դավաճա՞ն կանվանեն,— մռնչաց սպարապետը։— Այդպե՞ս չէ, այդ չէ՞ միտքդ։

— Քո մասին ոչ մի բերան այդպես չի խոսի,— պատասխանեց Մովսեսը։

— Մեռա՞ծ կհամարեն... Թող համարեն։ Ես իմ թքածը չե՛մ լիզի։

Նորից ծանր ու երկարատև լռություն տիրեց։ Մխիթարն առաջինը խախտեց տհաճ լռությունը։

— Ե՞րբ պիտի վերադառնաս, Մովսե՛ս։

— Հենց այսօր։

— Հենց այսօր էլ Ագուլիսում եղած իմ բարեկամներին կտանես իմ նվերը՝ հարյուր հիսուն թուրք զորապետների գլուխ, տասներեք ուղտաբեռ վառոդ, հարյուր հիսուն հրացան։ Կտանե՛ս։

— Զորքն ու զորապետները ցնծության մեջ են քո արածներից,— կարծես հենց այնպես ասաց Մովսեսը։

— Իսկ Դավիթ-Բեկը,— Մխիթարը շունչը պահեց։

— Վարանդայի հաղթության պատվին հրամայել է գինի բաժանել զորքին ու ժողովրդին։ Երեք օր շարունակ, առավոտից երեկո հնչել են վանքերի ու եկեղեցիների զանգերը։

— Մե՛ծ շնորհ է,— քմծիծաղեց սպարապետը։— Իսկ ի՞նչ են անում պատվելի խաները։ Պատրաստ են կռվելու։

— Հինգ հազար զինվորով մտել են Բեկի դրոշի տակ։

— Որ հետո լքե՛ն նրան,— շարունակեց սպարապետը։— Անխոհեմություն է վստահել պարսիկ խաներին, Մովսե՛ս, երեխայի անխոհեմություն։ Խաներն ի վերջո կմիանան թուրքերի հետ՝ մեր դեմ։ Հասկացիր, հասկացրու՝ ուրիշներին։

— Դա թողնենք, տե՛ր սպարապետ,— խնդրեց Մովսեսը։— Ես շտապում եմ։ Երկիրը տագնապի մեջ է։ Թուրքերն այսօր կամ վաղը կնետվեն Ագուլիսի վրա։ Բեկը մտադիր է ճակատամարտ տալ Մարաղայի դաշտում՝ Արաքսի ափին։

— Թող տա, ի՞նձ ինչ...— դուրս թռավ Մխիթարի բերանից։ Բայց և իսկույն զղջաց։ Սրտանց չասաց։ Սիրտը մրմռաց։ Հասկացավ՝ Մարաղայի դաշտում կվճռվի հայ ժողովրդի բախտը...

Չկամեցավ ասել, որ իր մի քանի բանիմաց հավատարիմները ծպտված պտտում են Դավիթ-Բեկի բանակի մոտերքը և, ուշի-ուշով հետևելով Բեկի գործողություններին՝ ամենաշնչին նորությունն անգամ ճեպագնաց սուրհանդակներով հայտնում են իրեն։ Ինքն այս հեռավոր գագաթներից տեսնում է Մարաղայում կատարվող յուրաքանչյուր քայլը և Բեկին մենակ չի թողնի ծանր պահին։

— Սրտինդ չե՛ս ասում, տե՛ր սպարապետ,— կշտամբեց Մովսեսը։— Թշնամին ղորեղ է։

— Թող պարսիկ խաները օգնեն ձեզ։

— Խաներին մոռանա՞նք,— բացականչեց Մովսեսը։— Հայրենիքն է վտանգի տակ, սպարապե՛տ հայոց։ Սպառնալիքը մեծ է, վտանգն անդառնալի։

Սաթենիկը հեկեկաց։ Մովսեսը նորից խոսեց։

— Ինձ քեզ մոտ է հղել...

— Ո՞վ,— նրան ընդհատեց սպարապետը՝ հույս ունենալով, որ Մովսեսին իր մոտ է ուղարկել Դավիթ-Բեկը։

— Իմ խիղճը,— պատասխանեց Մովսեսը։— Պաղատագին խնդրում եմ՝ միացիր Բեկի հետ, հաշտվիր...

— Երբե՛ք,— որոտաց սպարապետը։— Թող Բեկը հաշտվի շահի հետ։ Ես այլևս ձեռք չեմ մեկնի նրան։ Ես չեմ մոռանա այն անպատվությունը, որ նա պատճառեց ինձ։ Ես հպատակ չե՛մ լինի պարսիկին։ Եթե դու մտադրվել ես ինձ հաշտեցնել Բեկի հետ, ապա լսիր, Մովսե՛ս, սխալվում ես։ Այդ բանը չի՛ լինի։

— Տե՛ր սպարապետ,— աղաղակեց Մովսեսը։

— Վերջացա՛վ... որքան ուզում ես մնա կամ երբ ուզում ես գնա։ Ես այլևս ոտք չեմ դնի Հալիձոր։ Ես շուտով կմեկնեմ հյուսիսային Սոթոց գավառը։ Սևանա ծովի մոտից թուրքերի մի զորաբանակ նեղում է Գեղարքունյաց մելիք Շահնազարյան մելիք Ապովին։ Ես գնում եմ իմ հարևանին օգնության։ Ահա ամենը։ Գնա՛ս բարյավ...

Բայց կատարվեց ծանր մի բան։ Հանկարծ նրա առջև չոքեցին Մովսեսը, Սաթենիկը, իսկ որդին ընկավ նրա ոտքերը։

— Կամ մեզ սրի քաշիր, կամ գնա Դավիթ-Բեկին օգնության,— աղաղակեց տիկին Սաթենիկը։

Սպարապետը սարսռաց։ Երբեք այդպիսի հանդգնության չէր սպասում։ Նա վեր թռավ, բոբիկ ոտքերով կանգնեց գետնին ու բերանը բացուխուփ արեց։ Հյուրը, որդին ու կինը միաբերան սկսեցին պաղատել։ Սաթենիկը հեկեկաց, սպառնաց աստծու անունով։ Բայց Մխիթարը մնաց անհողդողդ։ Նա ոտքերը թփթփացնելով գոռաց կնոջ վրա և հրամայեց դուրս կորչել։

— Լսո՞ւմ եք, դո՛ւրս, հենց հիմա, այս վայրկյանին, դո՛ւրս կորեք, թե չէ...

Նա բռնեց Մովսեսի ու որդու օձիքներն ու դուրս նետեց վրանից։ Սաթենիկը մնաց գետնին տապալված։ Մխիթարը երեք զինվոր կանչեց։

— Հենց հիմա կնոջս ու որդուս առաջնորդեցեք դեպի Զագեձոր,— հրամայեց նա։— Հենց հիմա։ Թամբեցեք ձիերը, շո՛ւտ...

Սաթենիկը ցասումով վեր կացավ։

— Աստծո ահեղ անեծքը վրադ, եթե չկատարես իմ կամքը,— բացականչեց նա ու դուրս եկավ...

Երեք օր հետո տիկին Սաթենիկն ու Ահարոնը հասան Վարարակն հովիտը։ Ոչ հեռվում երևաց Զագեձոր ամրոցը։

— Ճանապարհը ծռեցեք դեպի հյուսիս,— ուղեկից զինվորներին հրամայեց տիկինը։

— Ո՞ւր ենք գնում, մա՛յր,— անհանգստացավ որդին։

— Պղնձաքար,— հառաչեց տիկինը։— Միայն Գոհարը կարող է կոտրել քո հոր համառությունը։ Նրան պետք է ուղարկել հորդ մոտ։

Նա գլուխը շուռ տվեց, որպեսզի որդին չնկատի ստորացումից ժայթքած իր դառն արցունքները։

ԱՐԵՎՆ ԱՐԱՔՍԻ ԿԻՐՃՈՒՄ

Արաքսի կիրճում վաղուց խանձվել էին վաղ գարնանը երևացած հատուկենտ ծաղիկները. խոտը խամրել էր, մասրենու գաճաճ թփերը սմքել էին։ Երկար ժամանակ անձրև չէր եկել։ Ցերեկը մրկած ժայռերը շիկանում էին, հողը ճաքճքվում էր, ավազն այրում։ Գիշերը տոթ էր՝ խեղդուկ ու ծանր։

Հայոց բանակը տեղավորվել էր Ագուլիս ու Որդուվար քաղաքների արանքում՝ լերկ բլուրների վրա։ Ցածում Մարաղայի նեղ դաշտն էր։

Մի ամբողջ ամիս զորքն ամրություններ էր կառուցել երկու իրար մոտ գտնվող քաղաքների մատույցներում։ Երեք թնթև թնդանոթ դիրք էին բռնել Դաշտ գյուղի այգիներում։ Արաքսից մինչև Ագուլիսի լեռը մի խոր խանդակ էին փորել՝ թշնամու հեծելազորի շեշտակի ընթացքը կասեցնելու նպատակով։

Բանակն օր ու գիշեր սպասում էր խանդակներում, արհեստական հողաթմբերի արանքում, պատնեշների ետևին։

Հուլիսի քսանյոթին Դաշտի արևմտյան եզրին փոշի երևաց։ Օսմանյան բանակը մտնում էր Արաքսի կիրճը։ Շուտով հայերը թուրք ձիավորների մանր խմբեր նկատեցին։ Համարձակ ձիարշավելով նրանք հասան մինչև Արաքսի եղեգնուտները, բարձրացան վերևի բլուրներն ու սկսեցին անհանգիստ նայել Որդուվարի ու Ագուլիսի կողմերը։ Մինչև կեսօր նրանք անպատիժ խաղացին ազատ դաշտում և ապա հեռացան անշտապ։

Հայերը գիշերն արթուն անցկացրին։ Նախիջևանի կողմերից վերադարձող լրտեսները հայտնում էին, որ թուրքերի մեծ բանակը տեղահան է եղել ու ծանր-ծանր սողում է դեպի Մարաղա։

Լուսաբացին թշնամին արդեն մեկնվել էր նեղ դաշտի արևմտյան լայնքով՝ Արաքսից մինչև Ցղնա գյուղի բարձունքը։ Դաշտի այդ մասը սևացել էր բանակի անհամար վրաններից։

Հայերն ականջ էին դնում վիթխարի բանակի խուլ գոմոռոցին և սպասում լուռ տագնապով։

Թուրքերի միջոցում, մի փոքր ետ, մի բարձր բլրի բուսել էր սերասկյարի կարմիր վրանը՝ սև ու դեղին շերտերով։ Նրա վրա կախվել էր սուլթանական դրոշը։ Բանակի հետ եկած գիշակեր թռչունների երամները ծածկեցին երկնքի երեսը։

Մինչև երեկո թուրքերը նստեցին հանգիստ։ Երեկոյան դեմ մի հինգ հարյուր ձիավոր պոկվեցին գորշ զանգվածից ու սլացան դեպի հայոց բանակի միջոցը։

Դավիթ-Բեկը կանգնել էր միջոցի կենտրոնում՝ մի ոչ բարձր բլրի վրա։ Այնտեղ էին Բայանդուր իշխանն իր օգնականներ Զաքարիա ու Հովհաննես զորապետների հետ, մեղրեցի Կոստանդինն ու Սարին, Շիվանիձորի Սարգիս հարյուրապետը, Տաթևի Ղիշին, Դիզակի մելիք Եգանը, Սուռվիզ Բալի զորապետը, Թորոս իշխանի եղբայր մելիք Նուբարը, պարոն-տեր Մուսին, Մեծ Գայլաբերդի զորապետը, բաղաբերդցի Ադամ հարյուրապետը, Ջուղայի Մաղա մելիքն իր որդի Տիլանչի բեկի հետ,

Մովսես աբեղան, պարսից երկու խաներն ու մի քանի հարյուրապետներ։

Աշխարհազորային գնդի պետերը, որ խառնվել էին նրանց, զարմացած ու լարված նայում էին դաշտի կեսը բռնած ահռելի բանակին։

— Ուզում են շոշափել մեր դասավորությունը,— թուրքաց հեծելազորը ցույց տալով՝ ասաց Բեկը։

— Հրաման տուր թնդանոթներով զարկեն,— խնդրեց Բայանդուր իշխանը։— Հանդուգն են, կարծես խաղուպարի են եկել։

— Մի՛ շտապիր,— հանդարտ պատասխանեց Բեկը։— Ժամանակը կգա... Եթե մոտենան ավելի, հրազենի կրակով գիմավորեցեք։

Բայց թուրքերը չմոտեցան։ Արշավեցին ձախ, ապա շուռ եկան, սլացան դեպի գետն ու գանդաղ հեռացան...

Մութը վրա հասավ։ Օսմանյան բանակի անհամար կրակների ցոլքից երկինքն արյան գույն ստացավ, աստղերն աղոտացան։

Հայ զորապետներն սկսեցին ենթադրություններ անել, թե թուրքերը որտեղի՞ց պիտի տան առաջին հարվածը։ Բեկը միայն լսում էր նրանց։ Չէր խառնվում նրանց վեճին, կարծիք չէր հայտնում։ Նրան զարմացնում էր, թե ինչպես Աբդուլլահ փաշայի նման մի փորձված զորավար չի հասկանում, որ ութսուն հազարանոց զորքով անհնարին է ծավալվել Մարաղայի նեղ դաշտում։ «Երևի զորքը մաս առ մաս կնետի մարտի»— մտածում էր նա։ Եվ դա ուրախացնում էր նրան։ Եթե իրոք թուրքերը մաս առ մաս սկսեն ճակատամարտը, ապա իր համար հեշտ կլինի ամուր դիրքից ընկճել նրանց։ Իսկ եթե ամբողջ բանակով գրոհեն, ապա, գործելու ասպարեզ չգտնելով, թուրքական գնդերը կխանգարեն միմյանց։ Ինչևիցե, վաղը կսկսվի ճակատամարտը։ Թշնամու ութսուն հազարանոց բանակի դեմ կանգնած են քսաներկու հազար հայեր ու հինգ հազար պարսիկ։ Վաղը Մարաղայի դաշտում կորոշվի հայոց մի փոքր աշխարհի բախտը։ Կընկնեն ահա իրար հետ տաք-տաք վիճող այս զորապետներից շատերը։ Կընկնեն, բայց չեն ընկճվի թշնամու ուժից։ Այստեղ պետք է խորտակիչ հարված տալ թշնամուն։ Եթե նույնիսկ հաղթությունը լիակատար չլինի, այնուամենայնիվ, նորից ահուդող կգցեն թշնամու սիրտը։ Ով կենդանի մնա, նա ականատես կլինի վերջին։ Վերջի՞ն, թե՞ սկզբի։ Որտե՞ղ է վերջը։ Սկիզբը եղավ, վերջը՝ ոչ, չի երևում։ Կապրեն այդպես կռվելով, ազգովի դիմադրելով այն արհավիրքներին, որ դարեր-դարեր անվերջ գալիս է Հայոց աշխարհի վրա։ Կդիմադրեն բոլորը՝ սերնդե-սերունդ, մինչև մի տեղ կվերջանա արհավիրքը... Այդպես է եղել ի սկզբանե ճանապարհը հայոց։

Դավիթ-Բեկը դառնացած էր։ Սպարապետը հետը չէր. «Լքեցի՞ր, խռովեցի՞ր, չվերադարձար,— սպարապետի հետ մտովի խոսում էր նա։—

Տասը հազար զորքով նստել ես Շահապունիքում ու ինձ թողել մենակ։ Ա՜խ, Մխիթա՜ր... Մխիթա՜ր... Սրտոտ ու քաջ ես, գիտեմ, բայց ինչո՞ւ կույր ես դիվանագիտության մեջ»։

Նա նկատեց, որ իր համառ լռությունն անհանգստացնում է զորապետներին, ուստի սթափվեց և խոսեց հանդարտ ու հուսադրող ձայնով.

— Թող ձեզ բնավ չվախեցնի մեր առաջ կուտակված թշնամու բազմությունը, սիրելինե՛րս։ Հիշեցեք, որ նա ուրիշի տուն մտած անարի գող է, իսկ մենք պահապան ենք մեր տան ու մեր զավակների։ Քաջության շատ օրինակներ եք ցույց տվել դուք։ Հիմա մեր հայաբուն աշխարհը մնացել է մեր բախտին. քաջալերող խոսքերով արիացրեք ձեզ ու ձեր գնդերը և բնավ մի՛ երկնչեք թշնամու առջև։ Հավատացե՛ք, հաղթությունը մերը կլինի։ Աբդուլլահ փաշան գլխիկոր կփախչի՝ մեզ վրա նորից գալու մտադրությունը կորցրած։

Զորապետները լսում էին նրան ու ակնդետ նայում թուրքական բանակի կողմը։ Այդպե՞ս կլինի, ինչպես ասում է Բեկը, թե՞ վաղն իրենք այլևս չեն տեսնի հայոց արևը։

Զորքին կերակրեցին։ Ագուլիսից ու Որդուվարից եկած հայ կանայք ուտելիք բաժանեցին զինվորներին։ Նրանցից շատերը չվերադարձան իրենց տները։ Մնացին՝ վաղվա մարտի վիրավորներին օգնելու։

Թանձր մութ էր արդեն, երբ բանակատեղ հասավ Հովակիմ եպիսկոպոսը։

— Օրը եկա՞վ, զավակնե՛րս...— բազկատարած գոչեց նա։— Պահեցե՛ք աշխարհը Հայոց։

Նրա հետ եկել էին նաև նահատակի պատանք հագած բազմաթիվ քահանաներ, վարդապետներ, եպիսկոպոսներ։ Սրանք ինքնակամ ցրվեցին զորքի մեջ ու սկսեցին հաղորդության մասունք տալ զինվորներին։

Շուտով եկավ նաև Ծիծեռնավանքի Ավշար երեց Տեր-Գասպարը։ Սա հետը հինգ հարյուր զինված շինական էր բերել։ Համբուրեց Դավիթ-Բեկի դրոշն ու ասաց հուզված.

— Եկա աստծունը տալու, իմն առնելու, տե՛ր Դավիթ-Բեկ։ Հողապատառս տուր, որ կանգնեմ մահու դեմ՝ հողին պաշտպան։

Բեկը նրան պատվիրեց իր ջոկատը տանել գետափ, որտեղ բանակած էր պարսից զորագունդը։ Ավշար երեց Տեր-Գասպարը ժպտաց։

— Գնամ պարսիկներին հսկեմ, որ չճղե՞ն, տե՛ր Դավիթ-Բեկ,— հարցրեց ծաղրանքը չթաքցնելով։

— Գնա խցան եղիր Մեղրի տանող անցքին։ Քեզ հետ կլինի նաև Զարմանդն՝ իր աշխարհազորայիններով,— պատասխանեց Բեկը։

— Հա՛, լա՛վ հարևաններ ունեմ,— նորից կատակեց երեցը։— Մի թևիս պարսիկը, մյուսին՝ կնիկ զորապետը։ Երկուսն էլ իրար արժեն։

Նրա կատակները մի փոքր զվարճացրին մոայլ զորապետներին։ Ավշար երեց Տեր-Գասպարն էլի կատակեց։ Դա սաստիկ դուր չէր գալիս մելիք Մուսուն։ «Տե՛ր աստված, այս ի՞նչ տեսակ մարդիկ են,— մտքում ասում էր նա,— մահվան բերանում են, բայց էլի սարսաղություն են անում։ Իսկ վաղը, տեսնես, ո՞ր քարի տակ արնաքամ կլինեն»։

Մելիք Մուսին այնպես էր ուզում, որ ինքը հիմա լիներ Սպահանում, Վենետիկում, թեկուզ Ստամբուլում, որտեղ հարուստ կրպակներ ուներ, բարեկամներ ուներ ամեն ազգի վաճառականների մեջ։ Եվ ինչո՞ւ իր ճակատագիրը կապեց սրանց հետ։ Ինչո՞ւ ժամանակին չգնաց Աբդուլլահի ոտքը, ծունր չդրեց նրա առջև ու նրա զորքը չբերեց Ագուլիս։ Վաղը փաշան կառնի քաղաքը, և ո՞վ գիտի, ինքը ոսկու պարկերով կամոքի՞ նրա բարկությունը, փաշան կների՞ իրեն, թե կկախի խկույն։

Այնինչ, զորապետները շարունակում էին խոսել վաղվա մարտի մասին։ Բայանդուր իշխանի հետ մեկը վիճում էր։ Դավիթ-Բեկը մթության մեջ հազիվ ճանաչեց նրան։ Դա Տաթևի երիտասարդ Ղիշի հարյուրապետն էր։

— Չպիտի իջնենք մեր ամրություններից, տե՛ր իշխան,— ասում էր նա Բայանդուրին,— հենվենք բլուրներին ու կանգնենք։ Մխիթարը Վարանդայում թակարդ սարքելով խորտակեց թուրքաց բանակը։ Մենք էլ անենք նույնը։

— Լավ կլիներ, որ քաշվեինք Մեղրու կիրճը,— ասաց մելիք Նուբարն ու համարձակ նայեց Դավիթ-Բեկի կողմը։— Մեղրու կիրճն ավելի նեղվածք է։

«Քաշվեք, է՛,— մտքում գոչեց մելիք Մուսին։— Ո՞ր սատանան է ստիպում մնալ այստեղ։ Քաշվե՛ք, կորե՛ք, չքացե՛ք. ես գիտեմ, թե ինչպես կփրկեմ իմ քաղաքը»։

— Մարաղան էլ նեղ կիրճ է,— նկատեց Բայանդուր իշխանը։— Որ թուրքերը իրար հեծնեն, էլի բոլորին տեղ չի անի։ Մի կողմից գետն է, մյուս կողմից Ցղնայի լեռը։ Այստեղ բացվելու, արձակ գործելու հնար չունի Աբդուլլահը։ Սա մեր երկրի դուռն է։

«Գոնե մի տասը հազարանոց գունդ էլ լիներ,— ականջը նրանց՝ մտածում էր Բեկը։— Կթաքցնեի Ցղնայի ձորերում ու ճակատամարտի վճռական պահին դրանով կհարվածեի թշնամու թիկունքին՝ աջ թևից»։ Բայց որտեղի՞ց տասը հազարանոց գունդ։ Ազգովի եկել են։ Գուցե հիմա Մխիթարը ևս նեղն է և չի կարողանում ետ մղել թշնամուն։ Արցախի

Հովհաննես-Ավան իշխանը հազիվ է պահում երկրի հյուսիսային գոնները։ Ո՞վ գա օգնության, որտեղի՞ց, նա սթափ դարձավ զորապետներին.

— Ճակատամարտն ընդունում ենք այստեղ՝ Մարաղայի դաշտում։ Թշնամուն երկրի խորքը բաց թողնելը մահացու է։ Վաղն այստեղ մի նոր Վարանդա պիտի լինի։ Արաքսը պիտի բարձրանա թշնամու արյունից։

Լռեց։ Սրտում կուտակված շանթ զգաց։ Պիտի պայթի։ Վաղը կմխրճվեն թշնամու բանակների մեջ ու կսկսեն հունձը... Թեկուզև շատերն ընկնեն, ընկնի թեկուզ ինքը՝ կնքելով իր տառապած կյանքը։ Դե, ի՞նչ կա որ... Իր գնալով հո աշխարհը չի՞ կործանվի։ Կգնա, հետո թող գա Մխիթարը, թող նա տիրություն անի երկրին Հայոց։ Տիրություն անի մենակ, իր ձևով... Գուցե ճշմարիտը նա է, գուցե նա կփրկի աշխարհը։ Եթե այդպես է, ուրեմն փույթ չէ, թող ինքն ընկնի՝ հանուն այդ փրկության։ Ավելի լավ է ինքը վերջանա, գնա, դա նա՛, նա՛, որին սիրել է որդու պես և հիմա էլ սիրում է սրտի բոլոր ուժով։

Դավիթ-Բեկը զորապետներին ուղարկեց իրենց գնդերը, ինքը մնաց բլրի գագաթին։ Նայում էր վաղվա սպանդի դաշտին։ Արաքսի մութ ջրերը չէին երևում։ Միայն լսվում էր նրանց խուլ հառաչը։

***

Միայն լուսադեմին մի շուտանցուկ նինջ հաղթահարեց Զարմանդին։ Բայց մի փոքր պահ էր դա։ Արթնացավ խկույն, հիշեց որդուն։ Կարծես լսեց նրա օգնություն հայցող ձայնը. գլուխը բարձրացրեց, ու պատրանքը չքացավ։ Մոր սիրտը թպրտաց։ Այսօր արյուն կլինի այստեղ։ Ո՞ւր է որդին, նա՞ էլ արյան ծովի մեջ է, արդյոք, այս պահին։ «Ո՞վ Մարիամ կույս, դո՛ւ կրակից, թրից հեռու պահիր մինուճարիս, մե՛զք եմ. թե մահ կա՝ ինձ տուր, նրան՝ ոչ»,— ձեռքերը պարզելով շշնջաց նա։ Ապա սթափվելով՝ ըմբռնեց շրջապատը. նայեց թուրքերի բանակի կողմը։ Ահեղ վիշապը դեռևս մրափած էր՝ լուսադեմի կապույտ մշուշը վրան։

Կողքին արթնանում էին համագյուղացիները, որոնց ինքն էր բերել այստեղ։ Ահա հորանջում է կաղ ջրաղացպանը՝ նիհար ու փրշոտ, ինչպես ձմեռային քնից նոր արթնացած արջը։ Եկել է, որ պաշտպանի իր արտը, քարափին շինած իր նոր տունը։ Նրա մոտ բրուտն է. ընչազուրկ ռազմիկ էր։ Սպարապետը հող տվեց նրան, սկսեց բրուտություն անել։ Նրանց հետ են էլի մի տասնյակ շինականներ։ Նրանք նիզակները հենել են քարերին, նստոտել հողին և զրուցում են։

Զարմանդը մոտեցավ նրանց։ «Բարի լույս» ասաց, ու սիրտը ճմըլվեց։ Ինքն է պատճառ դարձել, որ սրանք եկել են կռվի։ Ամեն մեկը մի տուն երեխա ունի, մեղքի տակ կընկնի... Ա՜խ աստված։ Զարմանդը ծանր նստեց նրանց մոտ։

Հավախոսի պահն էր։ Ծեգի ցնցուղը դիպավ Քամքուհ լեռան կատարին։ Երեք զինվոր մի թուրք առաջներն արած քշում էին դեպի Դավիթ-Բեկի բլուրը։

— Այդ ի՞նչ է,— տեղը կանգնելով հարցրեց բրուտը։

— Քո՞ռ ես, չե՞ս տեսնում, որ գերի է,— հպարտ-հպարտ պատասխանեց զինվորներից մեկը։— Բռնեցինք գետի մոտ։ Եկել էր ձեզանից մեկնումեկին գողանալու։ Հիմի ահից շալվարը թրջել է ու շան հոտ է գալիս վրայից։ Թյո՛ւհ։

Զարմանդը ճանաչեց թքոտող զինվորին։ Նա իրենց գյուղի նախրապանի որդին էր։ Մյուսներն էլ ճանաչեցին նրան։ Ուզեցին կանչել, հարցափորձ անել, բայց նախրապանի որդին արդեն հեռացել էր։

— Նախրչու Ավետիսն էր,— ասաց բրուտը։— Ճանաչեցի՞ք։

— Լեզվից ճանաչեցի, հոր նման չախչախ է,— պատասխանեց ջրաղացպանը։

— Մխիթարը նրան հող է տվել, որ տուն-տեղ դառնա,— ասաց Զարմանդը։— Արժանի՞ լինի...

— Տվել է, բայց ուրիշներն առել են,— հառաչեց ջրաղացպանը։— Հայրը պարտք է ունեցել, տղան իր հողը վաճառել է, պարտքից ազատվել։ Հույս ունի, որ նորից հող կտան։

— Ուրեմն հիմա՞ էլ անհող է։

— Կստանա երևի, այստեղ՝ մեզնից շատերի հետ,— քրթմնջաց բրուտը։

— Սուրբ լույս է, աստծո՛ մարդ, ոչխդ բարի բաց արա։— Հանդիմանեց Զարմանդը ու ահով նայեց թուրքաց բանակի կողմը։— Մրափել է։ Զարթնանա՛ր։

Բրուտը սուր բղով ծակ տրեխն էր կարկատում։

— Հա՛, հա՛...— ասաց նա՝ կաշեփոկը ատամներով քաշելով։— Ջահել է նախրչու տղան, դեռ կանաչկարմիրը չեն կապել, բայց դե, ա՛յ քույր, մեր օրը չե՞ս տեսնում։ Է՛հ, է՛հ...

Լռեցին։ Նայեցին Մարաղայի դաշտին, որ լեռների արանքում բացվել էր՝ գերեզմանի երախի պես։

Թուրքերը թմբուկ զարկեցին։ Շինականները ձայները կտրեցին։ Բրուտն արագ հագավ տրեխը։ Ականջ դրին լարված, շունչները պահած։

Երկնքի կապույտը գունատվեց հետզհետե։ Շուտով Արաքսի վրա կախված ամպի ծվենը երիզվեց ոսկեղեն ծոպերով։

Ճակատամարտի պահը մոտենում էր։

Թմբուկների ձայնին խառնվեց այգաբացի փողերի կոկոցը։ Դիմացի բլուրներն ու ձորակները խլրտացին։ Թուրքաց ութսուն հազարանոց բանակի սև զանգվածը եռաց, տեղահան եղավ, խառնվեց իրար, բաժանվեց և բլուրներից հորձանք տալով ցած՝ կիսալուսնաձև կեռվեց դաշտում։ Նրանց անհամար վառ կարմիր վարտիքներն այնպես էին իրար խառնվել, կարծես զորքը մինչև ծնկները խրվել էր արյան մեջ։

Օսմանյան բանակը տեղահան եղավ հունից ելած, ափի թումբերը խորտակած գետի թանձր հոսանքի պես դանդաղ, բայց և սպառնագին։ Նրանց գլխին օրորվող նիզակների անտառի վրա տատանվում էին գընդերի տարբերանշանները՝ ձիու պոչեր, կիսալուսնաձև ոսկորներ, չորադերի տարբերանշանները՝ ձիու պոչեր, կիսալուսնաձև ոսկորներ, չորացած գանգեր։ Սև զանգվածի մեջ, տեղից տեղ էին վազվզում մոլլաների կանաչ չալմաները։

— Տե՛ր, օգնյա՛ մեզ...— բացականչեցին շինականները։

Դավիթ-Բեկի բլրի վրա երևաց վարդապետներով շրջապատված Հովակիմ եպիսկոպոսը։ Նա մասունքով թաթախած լանջախաչը դեմ արեց Բեկին։ Սա դժկամ համբուրեց սառը ոսկին՝ աչքը թուրքական բանակից չկտրելով։ Եպիսկոպոսը սմքած ձեռքերը կարկառեց երկինք։

— Օրհնում եմ քո բազուկը, զավա՛կս...— դողդոջ գոչեց նա։— Կատարիր անկարելին՝ հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո։

— Գնա այստեղից, սրբազա՛ն,— հանդարտ խնդրեց Բեկը։— Գնա և աղոթիր աստծուն՝ իր արարածների փրկության համար։ Իմացիր՝ կկռվենք անդարձ։ Մեզնից ոչ ոք չի ուզում կորչել՝ այլապատառ թողնելով մեր աշխարհը։

Եպիսկոպոսը գնաց։ Դավիթ-Բեկն իր մոտ կանչեց Վրթանես զինագործին ու, ձեռքը մեկնելով դեպի թշնամու բանակը՝ հարցրեց.

— Տեսնո՞ւմ ես այն բլուրը, որի վրա կարմիր վրան կա։

— Տեսնում եմ,— պատասխանեց Վրթանեսը։

— Թնդանոթներով խփիր նրանից ցած, այն տեղին, ուր երկու ձորակները խառնվում են։

— Հրամա՛նդ,— Վրթանեսը վազեց դեպի թնդանոթները։ Այնտեղ նրան սպասում էր Վոլոդիմիր Խլեբը։ Վրթանեսն իր ձեռքով մի ռումբ դրեց թնդանոթի մեջ, Վոլոդիմիրը պատրույզը միացրեց և սպասեցին Դավիթ-Բեկի ազդանշանին։

***

Շքեղ վրանի առջև, թիկնապահների ու խորհրդականների բազմությամբ շրջապատված կանգնել էր Քյոփուրլու Աբդուլլահ փաշան։ Հինայած եղունգներով նա տրորում էր մորուքն ու ականջ դնում Մուրադ-Ասլանին։ Սա ձեռքերը կրծքին ծալած խոսում էր խոնարհ.

— Միջոցում Բայանդուր իշխանի զորքն է, արևագո՛ւյն փաշա։ Այդ Բայանդուրը քսան տարի ծառայել է ուռուսների բանակում։ Խորամանկ ու քաջակամ մարդ է։ Նրա այրուձին ընտրովի է։ Աջ թևում ծուռվիզ Բալի զորավարն է։ Մի ճակատամարտում կտրվել է նրա վզի կեսը, բայց հետո հրաշքով կպչել, լավացել է։ Հետևակ գնդեր ունի Բալին՝ զրահապատ են ու քաջ կռվողներ։ Դավիթ-Բեկի ձախ թևում Նուբար անունով մի երիտասարդ մելիք է, երկու հազար չավնդուրցիներով։ Նրան զորավիգ է ագուլիսցի մելիք Մուսին։ Սրա զորքի վրա շատ հույս չունի Դավիթ-Բեկը։ Հիշի՛ր, փաշա, Ագուլիսի վաճառականները հնուց ի վեր սուլթաններին բարեկամ են եղել։

— Իսկ ո՞րն է պարսիկների զորագունդը,— հարցրեց փաշան։

— Այն, որ գետի մոտ է։ Հույս ունեմ, որ հենց առաջին հարվածից նրանք կճղեն։ Բայց խորամանկ է Դավիթ-Բեկը, պարսիկների մոտ բանակ է դրել աշխարհազորային գնդեր։ Դրանք վայրենի ռամիկներ են, կկռվեն մինչև սատկեն գլխովին։ Նրանք զորապետը մի բոի և խելագար կին է։

— Թնդանոթներ ունե՞ն։

— Ունեն։ Իրենք են ձուլել։

— Հրազենով զինվածները շա՞տ են։

— Ո՛չ, իմ գլխի տեր, հրացան քիչ ունեն։ Հազիվ մի հինգ հարյուր փող։ Սյունեցիները սրամարտի մեջ են քաջ։

— Ամբողջ բանակո՞վ են,— նորից հարցրեց փաշան։

— Ամբողջ, տասներկու հազար զինվոր, հինգ հազար պարսիկ գող-ավազակ, մի տասը հազար էլ աշխարհազորային ռամիկ-շինական։

— Մխիթար սպարապետից ի՞նչ լուր կա։

— Խռովել է Դավիթ-Բեկից, մեկնել է Սևանի կողմերը, հետը տասը հազար մարդ ունի։

— Եվ ինչի՞ վրա են հույս դրել այս անմիտները...— քրքջաց Աբդուլլահ փաշան։

— Կկորչեն գլխովի,— տիրոջ օրինակով քրքջաց նաև Մուրադ-Ասլանը։— Անհնազանդ մարդիկ են այս սյունեցիները։ Աստված մահվան է մատնել նրանց։ Թող կորչեն ուրեմն։

Ագուլիսի այգիների կողմից որոտացին հայոց թնդանոթները։ Օդը խշշաց։ Ռումբերն ընկան բլրից ցած՝ երկու ձորակների խառնման տեղը, որտեղ կուտակված էր ենիչերիների զրահավոր գունդը։

Աբդուլլահը հրամայեց թնդանոթից խփել այն բլրին, որտեղ կանգնած էր Դավիթ-Բեկը։

***

Ճակատամարտն սկսվեց միանգամից։ Դեռևս արևը չէր հասել Մաբաղայի դաշտին։ Տակավին հով էր։ Թուրքաց բանակը զանգված առ զանգված իջավ բլուրներից ու շարժվեց դեպի հայերի ամրությունները։ Հրացանակիրներն առաջ ընկան ու երկար շարքով շղթելով՝ սկսեցին կրակել։ Մի շարքին փոխարինում էր մյուսը, մինչև սրանք նորից կլցնեին կայծքարով հրացանները։ Թնդանոթները որոտում էին անընդմեջ։

Աբդուլլահ փաշան հեռադիտակը չէր հեռացնում աչքից։ Նայում էր ցրոհող բանակներին։ Սիփահիների տասնհինգ հազարանոց այրուձին գնում էր միջոցի վրա։ Ահա նրանք մերկացրին սրերը ու արագացրին արշավը... Հայերի դիրքերից կրակ տեղացին։ Գնդակների հոսանքը թափվում էր սիփահիների վրա։ Ահա ընկավ մի ձիավոր, երկրորդը, երրորդը.... Թուրքաց այրուձիուն դիմավորեց հայերի նիզակների անտառը։

Կոտորածն սկսվեց։

Յալդուզ-Հասան փաշան իր զորքը տարավ գետափի երկարությամբ, քշեց պարսիկների վրա։ Ասլամազ Ղուլի ու Խոսրով խաները վազեցին դեպի իրենց դիրքերը։

— Քաջացեք, ալլահի՛ զավակներ,— գոչեցին նրանք։

Պարսիկները կրակ տեղացին։ Հրացանները ծուխ էին արձակում, նետերը մխրճվում էին թուրքերի շարքերը։ Խաները, որ չէին սպասում այդքան զորքի միանգամից հարձակվելուն իրենց դիրքերի վրա, հասկացան թուրքերի միտքը։ Մի հարվածով կամենում էին իրենց ետ շպրտել ու անցնել Դավիթ-Բեկի թիկունքը։ Նրանք սրերը մերկացրին ու առաջ վազելով՝ իրենց զորքին հանեցին հակագրոհի։

Սակայն խաների զինվորները ետ ընկրկեցին։ Պարսիկներից մեկը գոռաց.

— Թուրքերը զրահավո՛ր են...

Գետի մոտ գտնվող ջոկատները թափվեցին ջուրն ու արագ լողացին դեպի մյուս ափը։ Խաները գազազեցին։

— Ե՛տ դառեք, ե՛տ,— գոռում էին նրանք։

Բայց թուրքերը շեշտակի մխրճվեցին պարսից խաժամուժի մեջ։ Սկսեցին ջարդել։ Խոսրով խանը նետվեց թուրքերի վրա, սակայն նրա ձին ընկավ։ Ոտքը մի կերպ հանելով ասպանդակից՝ նա իրեն գցեց ջուրը։ Պարսիկները զենքերը նետեցին ու վազեցին դեպի գետը... Թուրքերն անխնա կոտորում էին նրանց։

— Առա՛ջ,— գոռաց Յալդուզ-Հասան փաշան ու ձին թոցրեց պարսիկների դիակների վրայով։ Հիմա կհասնի լերկ բլրին ու կանցնի հայերի թիկունքը։

Բայց բլրի տակ կատարվեց անսպասելին։ Երկար նիզակների մի ամբողջ անտառ ցցվեց փաշայի առջև։ Առաջ ընկած ասկյարները շամփրվեցին իսկույն։ Բլրի տակից, քարերի արանքներից ու ձորակներից դուրս հոսեց խայտաբղետ մի զանգված և աղաղակելով փակեց թուրքերի ճանապարհը։

— Խփեցե՛ք, սրանց արևը խավարե՛մ...— ծղրտում էր Զարմանդը։ Երկար նիզակով նա շամփրեց մի շիկամորուք թուրքի։ Կրակվեց։ Աչքերն ասես դուրս թռան։ Կողքին լսում էր բրուտի թանձր հայհոյանքը։ Աջ կողմին գոռում էր ջրաղացպանը։

— Ջարդեցե՛ք, եղբայրնե՛ր։

Աշխարհազորային գնդերը կատաղի ճակատամարտ սկսեցին թուրքերի բանակի դեմ։ Տեղանքը զառիվեր էր, ու թուրքերը չէին կարողանում ազատ բարձրանալ դեպի բլուրները։ Նրանց թրերը չէին հասնում նիզակավորներին։ Իսկ նիզակավորները այնքան շատ էին, որ ասես բուսնում էին գետնի տակից։

Յալդուզ-Հասան փաշան հազիվ խուսափեց օձի պես դեպի իր կոկորդը ցցված նիզակից ու ձին ետ թոցրեց։ Նրան թվաց, թե անտառաբնակ դևերի էր հանդիպել։ Ետ դարձավ. բլուրներից իջավ դաշտ այն հույսով, որ հայերը կհետևեն իրեն, կիջնեն բլուրներից, ու ինքն այնտեղ նրանց կջարդի։ Սակայն հայերը միայն քրքջացին բլուրների վրայից ու սկսեցին գնդակ արձակել ետ քաշված թուրքերի վրա։

Դավիթ-Բեկը ժամանակին էր մտածել, որ պարսիկները կարող են լքել դիրքերը, դրա համար էլ երկու աշխարհազորային գունդ տեղավորել էր նրանց թիկունքում։ Իր դիտանոցից նա տեսավ կատարվածը։ Տեսավ, թե ինչպես հենց առաջին հարվածից պարսիկները խուճապի մատնվեցին ու թափվեցին գետը։ Նրանցից քչերին հաջողվեց կտրել արագընթաց Արաքսի ջրերն ու փրկվել պարսից սահմաններում։

— Դավաճանեցի՛ն,— դառնորեն գոչեց Բեկը։— Վախկոտների պես լքեցին շուն շանորդիները։

— Մխիթար սպարապետն իրավացի էր, տեր Դավիթ-Բեկ,— անհամարձակ նկատեց նրա մոտ կանգնած Մովսեսը։— Չպետք է վստահեիր պարսիկներին։ Լավ է, որ աշխարհազորային գնդերը ետ մղեցին թուրքերին, թե չէ...

— Թե չէ՝ ի՞նչ...— շարությամբ հարցրեց Բեկը։

— Կծանրանար վիճակները։

— Անտառ մտնողը պիտի իմանա, որ գայլի կարող է հանդիպել,— հեգնանքով ասաց Բեկը։— Դրա համար էլ աշխարհազորը դրվել էր խաների թիկունքում։

Հաջողությունից խենթացած Զարմանդն իր ողջ բարկությունը թափեց խանդակներում ու փոսերում թաքնված հատուկենտ պարսիկների վրա, որոնք ահից դիակների պես կպել էին գետնին։

— Ձեր վա՛յը տամ,— գոռում էր նա՝ նիզակով խփելով։— Է՞դ էր ձեր տղամարդությունը... Հոգե՛մ ձեր գլուխը...

Շուռ գալով դեպի աջ, նա մի քանի վայրկյան ուշադիր նայեց եռացող ճակատամարտին ու ծղրտաց.

— Վե՛ր կացեք, շինականնե՛ր... մելիք Նուբարի գունդը նեղվում է...— Եվ առանց սպասելու, որ բոլորը հետևեն իրեն՝ ուրուրի դեմ գնացող թխսամոր պես սլացավ դեպի աջ կողմի բլուրները։ Այնտեղ Ռեչեր փաշայի հեծելազորը նեղում էր մելիք Նուբարին։

— Պի՛ղդ կաց, Նուբա՛ր, եկա՛նք,— գոռաց նա ոգևորող ձայնով։

Նիզակների անտառը նորից ցցվեց սիփահի թուրքերի դեմ։ Շինականներն ինքնամոռաց նետվում էին թշնամու վրա, նիզակներով նրանց պոկում ձիերից, թափում ձիերի փորոտիքն ու իրենք էլ ընկնում ձիերի ոտքերի տակ...

Դավիթ-Բեկը նկատեց Զարմանդի աշխարհազորային գնդի արարքը, և թուքը չորացավ բերանում։ Նա աչքերը մի պահ փակեց՝ շինականների հնձվելը չտեսնելու համար։ Ապա ձայն տվեց Ղիջի հարյուրապետին.

— Գունդդ տար աշխարհազորին օգնության։ Շտապի՛ր։

Ղիջին սնգսնգալով վազեց բլրի ետևում կանգնած իր գնդի կողմը։ Ամբողջ զորքն արդեն նետված էր ճակատամարտի խառնարանը։ Դավիթ-Բեկը պահել էր միայն Հալիձորի Երկրի ապավեն գունդը և սիրտ չէր անում նրան ևս նետել կռվի։ Դաշտում իրար հոշոտում էին հայ ու թուրք գնդերը։ Թուրքերը զանգված առ զանգված ավելանում էին, իսկ հայերը՝ նվազում։ Բայց և այնպես դիմանում էին։

Հալիձորցիները խոժոռ կանգնել էին ձորում և հազիվ էին զսպում մարտերի սովոր իրենց ձիերին։

***

Մարաղայի դաշտը ծածկված էր իրար հոշոտող զորաբանակներով։

Հասել էր օրհասական ժամը։ Դավիթ-Բեկը տեսնում էր, թե ինչպես են հալվում իր գնդերը։ Զախ թևում Բալի զորապետի գունդը խժռելով՝ թուրքերը նրան նեղում էին դեպի գետը։ Ծանր էր նաև միջոցում ճակատող Բայանդուր իշխանի հեծելազորի վիճակը։ Նրա այրուձին արիաբար մարտնչում էր թուրքաց հեծելազորի դեմ, բայց ուժերի կատարյալ գերակշռությունը թուրքերի կողմն էր։

Բայանդուր իշխանի գունդը չէր նահանջում։ Հայ մարտիկներն ընկնում էին ճակատելով, ընկածին փոխարինում էր մեկ ուրիշը։ Արաքսի ձորը դղրդում էր թնդանոթների որոտից, հրացանների պայթյուններից, իրար հոշոտող բանակների աղաղակներից։ Իսկ արևը դեռ նոր էր հասել երկնքի կենտրոնը և շողացնում էր արյունով ներկված ավազը...

Բեկը հաճախ էր նայում թուրքերի թիկունքին։ Այնտեղ դեռևս սև զանգվածներով նստած էին բազմաթիվ գնդեր՝ պատրաստ ամեն վայրկյան գալու իրենց վրա։ Ամենից շատ այդ գնդերն էին անհանգստացնում նրան։ Թշնամին պահեստի շատ ուժ ունի դեռևս։ Եթե այդ գնդերն էլ Աբդուլլահը նետի ճակատամարտի, այն ժամանակ ինքը կկատարի իր վերջին նպատակը...

Բայց թուրքերը խնայում էին իրենց ուժերը։

Աշխարհազորային գնդերը փախուստի մատնեցին Յալդուզ-Հասան փաշայի հետևակը։ Սա խուժեց դեպի դաշտի կենտրոնը, կուտակվեց ու արգելք դարձավ հեծելազորի շարժմանը։ Բլուրների մոտից պոկվեցին երեք գունդ և արշավեցին դեպի հայերը։ Բեկը տեսավ այդ, գոհ մնաց աշխարհազորայիններից։ Աբդուլլահը պահեստում այժմ չորս գունդ ուներ միայն՝ երկուսը հետևակ, երկուսը՝ հեծյալ։ Եթե փաշան նրանց էլ նետի մարտադաշտ, ապա ինքը կանցնի Հալիձորի Երկրի ապավեն գնդի գլուխն ու կկատարի՝ ինչ մտադրվել էր նախօրոք։

Ձիու ականջը մտած եկավ մի սուրհանդակ։ Նա թևքով մաքրեց քունքից հոսող արյունն ու գոչեց.

— Բալի զորապետի գունդը ձեռքից գնում է, տե՛ր Դավիթ-Բեկ, օգնի՛ր։

— Աստվա՜ծ օգնի...— ծանր ցավը մի կերպ խեղդելով՝ ասաց Դավիթ-Բեկը։— Բալի զորապետին հրաման է՝ կյանքի գնով պահել Որդուվարի դուռը, գնա՛։

Սուրհանդակը շուռ եկավ, և նրա ձին կորավ ծխի ու փոշու մեջ։

Բեկը ձեռքը բարձրացրեց։ Մովսես աբեղան տնկվեց նրա առջև։

Բեկը նայեց նրան։ Մովսեսը վեհ էր, բայց և գազազած, սրամերկ, պատրաստ կռվի մեջ նետվելու։

— Ի՞նչ ես կամենում,— հարցրեց Բեկը։

— Բալի զորապետը...

— Ինչքա՞ն մարդ ունես։

— Աշակերտներս ու երեք հարյուր շինական։

— Ինչո՞ւ եկար, ինչո՞ւ ես բերել աշակերտներիդ, խափան թողել դպրոցը։

— Եկա՝ ժողովրդիս հետ աղետին դիմադիր լինելու։ Իրավունք տուր։

Բեկը ծամծմեց շրթունքները, ձեռքը թափ տվեց մերժողական։

— Խնայո՞ւմ ես ինձ,— նեղացավ Մովսեսը։

— Խնայում եմ այն լույսը, որ դու ունես քո մեջ,— պատասխանեց Բեկը։— Եթե ոչ դու, ապա էլ ո՞վ կվառի Գրիգոր Տաթևացի եռամեծար ռաբունապետի ճրագը։ Աշակերտներիդ եմ մեղքանում։ Հասկացիր, Մովսես։

— Տե՛ր իմ,— դողաց Մովսեսը։— Թույլ տուր, հայրենի հողը թանկ է դպրության լույսից։

Բայց Բեկը չլսեց նրան։ Գունատ, ցավից կծկված դեմքը դարձրեց դեպի ռազմաճակատ։ Բանակի ձախ թևը, որտեղ մելիք Նուբարն էր ու Զարմանդը, դանդաղ սեղմվում էր գետին։ Կռվում էին, բայց ճնշումը մեծ էր։ Ահա Աբդուլլահը մի գունդ ևս նետեց այդ կողմը։ Պահն է։ Հենց այդտեղ պետք է կասեցնել թշնամուն։ Շինականներին պետք է օգնել։ Եթե նրանք ընկրկեն ու, աստված մի՛ արասցե, փախչեն, ապա հուսալքությունը կսկսվի, և աղետը վրա կհասնի հանկարծակի։ Բեկը տեսնում էր, թե ինչպես են տապալվում շինականները։ Կռվում, ընկնում էին նաև Ավշար երեց Տեր-Գասպարի ռամիկները։ Աղաղակում էին, մոլեգնում, խոցում թշնամուն, մեկին, երկուսին... Ապա իրենք էին ընկնում։ Շատերը հասցնում էին երեսները շուռ տալ դեպի իր կանգնած բլուրը։ Վերջին «մնաս բարովն» էին, անշուշտ, ասում իրեն...

Դավիթ-Բեկի կոկորդը սեղմվում էր... Դիմացը դեռ կանգնած էր Մովսեսը։ Ի՞նչ է ուզում այս ուսումնական մարդը՝ միակ լուսավոր գլուխն իրենց մռայլ լեռնաշխարհում։

— Գո՛ւնդդ,— ակամա դուրս թռավ Բեկի բերանից։

— Պատրաստ է հրամանիդ, տեր գահերեց,— վառվեց Մովսեսը։

— Գնա աշխարհազորին զորավիգ։ Թռի՛ր։

Մովսես աբեղան իր աշակերտների և Ծղուկ գավառում հավաքված

երեք հարյուր նիզակակիր շինականներով իշավ գետափ։ Բեկը տեսավ նրա կապայի ֆոֆռացող փեշերը, լայն թիկունքը, շինականի գլխարկը։ Հետո կորավ աչքից։ Աչքերը մշուշո՞վ լցվեցին, թե՞ ծուխն ու փոշին կոպտվեց Մովսեսի փոքրաթիվ գունդը։ Մովսեսը, իր այնքա՞ն սիրելի Մովսեսը գնաց... Ե՞տ կգա, նորի՞ց կմտնի Հարանց Մեծ Անապատը՝ խափանված դպրոցը կենդանացնելու համար, թե...

Բեկը գլուխը շուռ տվեց, որպեսզի չտեսնի, թե ինչպես է Մովսեսը մխրճվում թուրքերի շարքերի մեջ, նետվում սրամարտի... Լավ գիտեր, որ տաքարյուն աբեղան չի խնայի իրեն։

Բալի զորապետին սեղմելով՝ թուրքերն առաջացան դեպի բլուրները։ Նրանք մղվում էին դեպի մեղրեցիների թիկունքը...

Աղետը մոտենում էր։

Դավիթ-Բեկը հասկացավ։ Ճակատամարտը մոտենում էր իր վախճանին։ Այդ արագացնելու համար, ահա Աբդուլլահը մարտի նետեց իր վերջին երկու գունդը ևս։ Բեկը քմծիծաղեց գոհ։ Նորից հիշեց սպարապետին։ «Լքե՞ց, հեռացա՞վ։ Խռովե՞լ է, չի հաշտվում անգամ օրհասական պահին»... Նա բարձրացրեց ձեռքը։ Այս անգամ նրա դիմացը տընկվեց շիվանիձորցի Սարգիս հարյուրապետը։

— Հալիձորցիների գունդը տար մեղրեցիներին օգնության։ Շտապի՛ր։

— Տե՛ր իմ,— խոսեց Սարգիսը։

— Ի՞նչ է,— Բեկի աչքերը փայլատակեցին։

— Որ Հալիձորի գունդն էլ նետենք... Դու կմնաս անզորք։

— Մոտեցել է հաղթության ժամը։ Փաշան իր ողջ զորքը նետեց մարտի։ Կկոտորենք, մինչև մութը վրա գա։ Կկոտորե՞նք... Շտապի՛ր։

Սարգիսը թռավ ձիու թամբին, բայց Բեկը պահեց նրան։ Մի լուսավոր միտք էր մտել նրա գլուխը, որից մի թեթև պայծառացավ մթագնած դեմքը։ Երանելի դեմք էր դա, ասես սուրբ էր, լուսարձակ...

— Հինգ հարյուրյակ թող ինձ, մնացածը տար,— նա ձեռքով արեց, որ Սարգիսը հեռանա։

Բլրի մոտ նորից փոշի բարձրացավ։ Գնաց պահեստի վերջին գունդը։ Բալի զորապետին նեղող թուրքական գնդերը նետվում էին դեպի Որդուվարի դուռը՝ լայն ու անջուր մի ձոր։ Բայց Հալիձորի հեծելազորը շեշտակի խփեց նրան ու ետ մղեց։ Ենիչերիների մի գունդ վահանափակ արեց հալիձորցիներին ու կռիվն ավելի բորբոքվեց այդտեղ։

Դավիթ-Բեկն իր վերջին ուժն էլ նետեց մարտի։ Հետո՞։ Հետո ի՞նչ Աբդուլլահին հաղթանակ չի տա։ Երբե՞ք։ Ահա ոչնչանում է նրա զորքը ևս։ Իրենք կդիմանան մինչև մութն ընկնելը, հետո կքաշվեն դեպի Մեղրի՝ նորից կռվելու պատրաստ։ Բեկն զգում էր, որ իր խիղճը հանգիստ է։ Ինչի՞ց էր։ Մի՞թե այդպես համոզված էր հաջողությանը։

Նա նայեց աշխարհազորայինների գնդերի կողմը։ Մովսեսը չէր երևում, իսկ նրա մարդիկ Զարմանդի ու Ավշար երեց Տեր-Գասպարի հետ փակել էին թշնամու ճանապարհը։

Բայց Դավիթ-Բեկի մյուս զորապետները համոզված էին, որ աղետը մոտենում էր իր կատարմանը, որ իրենք պարտվում են անդարձ։ Հայոց գնդերն ուր որ է իսպառ կոչնչանան...

— Տե՛ր իմ,— Բեկը լսեց Սողոմոնի ձայնը, շուռ եկավ։— Տեղդ փոխիր, տե՛ր իմ։ Թշնամին քեզ վրա է գալիս։

Բեկը ցնցվեց, բայց լռեց։ Սողոմոնը բռնեց գլուխն ու ընկավ նրա ոտքերը։

— Այստեղ վտանգ է սպառնում քեզ, տե՛ր իմ...— աղաղակեց նա,— իսկ դու դեռ հարկավոր ես հայոց թշվառ ժողովրդին։

Բեկը լսեց նրան։ Տարվեց ճակատամարտով։ Ցնցվեց։ Մի՞թե աղետ է։ Այո, աղետն արդեն մոտենում էր։ Թվաց, թե ամեն ինչ կորչում է հալիտյան։ Իսկ արևը փայլում է զարմանալի պայծառ։ Ո՞ւմ համար է փայլում, երբ ոչ մի տեղից օգնության հույս չկա։ Գոնե մութը շուտ վրա հասներ։ Բայց ո՛չ, աղետ է, դժբախտություն...

Թշնամին հաղթում էր։

Թուրքերի մի նոր սեազգեստ գունդ հարձակվեց հայոց բանակի աջ թևի վրա... Բեկը նորից դառնորեն քմծիծաղեց։ Աբդուլլահը կռվի նետեց անգամ իր թիկնապահ գունդը։ Ութսուն հազարը՝ քսաներկու հազարի դեմ... Վատ չէր։ Հիմա երկու կողմից կռվում են բոլորը... Հայերը քիչ, թուրքերը՝ շատ...

Վերջացավ։ Կամ այս, կամ... էլ ի՞նչ կամ. ժամն է, որ գոռող թուրքերին նորից ցույց տա իր կամքը, ուժը, այն, որ դժվար է հաղթել իրեն։

Բեկը վազեց դեպի իր նժույգը։ Սողոմոնը չհասցրել բռնել նժույգի սանդակը. Բեկը թռավ թամբին։ Ձին կանգնեց ետևի ոտքերի վրա։ Զգա՞ց մարտի մոտիկությունը, թե՞ արյան հոտ առավ, մղվեց առաջ...

— Իմ ետևի՞ց, քաջե՛րս... Ժա՞մն է...— կանչեց Բեկն ու թռավ դեպի միջոցը, ուր արյունաքամ էր լինում Բայանդուրի գունդը։

Նրա ետևից թռան Հալիձորի Երկրի ապավեն գնդի վերջին հինգ հարյուր մարտիկները։ Բլրի վրա մնաց միայն Հովակիմ եպիսկոպոսն ու էլի հինգ-վեց վանական, որոնք գետնատարած աղերսում էին վերին խնամակալին՝ փրկության ձեռք մեկնելու հայոց բանակին։

Օգնություն չկար։ Եպիսկոպոսի մոտ չոքած ատենադպիր Մաղաքիան ծվատեց պատանքի շապիկը, մոտիկ ընկած, մեռած զինվորի

ձեռքից պոկեց նրա թուրն ու վազեց դեպի մարտնչող յուրայիններին։ Փա-
տանավոր վանական եղբայրները հետևեցին նրան։

Դավիթ-Բեկը հասավ Բայանդուր իշխանին։ Հայ զինվորները պո-
ռացին.

— Ապրի՜ Դավիթ-Բեկը...

Եվ կատաղած, կրակված նետվեցին մարտի...

Միջոցում ճակատամարտը սաստկացավ։ Դավիթ-Բեկին մարտի մեջ
տեսնելով՝ հայոց գնդերի մնացորդները սրտապնդվեցին, դեմ կանգնե-
ցին իրենց ճնշող ահռելի ուժին։

Դավիթ-Բեկի շեշտակի հարվածից Ռեջեբ փաշայի գունդը ետ-ետ
գնաց, բայց և իսկույն վերականգնեց իր խախտված մարտակարգը։
Ռեջեբ փաշային ասացին, որ սև նժույգի վրա կայծակողը հենց ինքը՝
Դավիթ-Բեկն է։

Փաշան երկու հազարյակ հետևակի գլուխ անցավ ու նետվեց դե-
պի Բեկը։

— Յավա՜շ, յավա՜շ...— գոռում էր նա։— Կենդանի բռնեցեք հա-
յոց սերասկյարին։ Ալլա՜հ, ալլա՜հ...

— Ալլա՜հ, ալլա՜հ...— ոգևորված մռնչում էր թուրքական բանակը։

Իր դիմացի սև զանգվածից բացի ոչինչ չէր տեսնում Դավիթ-Բե-
կը։ Խփում էր դիպուկ, ծոծրակներին, գլխներին... Եվ կայծակում էր
նրա դամասկոսյան երկար թուրը... Իր վրա ևս թրեր էին շաչում, բայց
հալիձորցի քաջերը ետ էին մղում թուրքերի հարվածները կամ ընդու-
նում իրենց վրա...

Բեկն իր կողքին զգում էր Սողոմոնի մոտիկությունը։ Սողոմոնը գո-
ռում էր զարմանալի հստակ ձայնով, ընկնում Բեկի առաջն ու հար-
վածում, հայհոյում։ Ե՞րբ է հայհոյանք սովորել Սողոմոնը։ Սողոմոնից
դենը ատենադպիր Մաղաքիան է՝ գլխաբաց, առանց զրահի, մի չալ
ձիու վրա։ Նա ճոճում էր թուրն ու հարվածում։

Մի ձիավոր կտրեց Բեկի առաջը։

— Ե՛տ դարձիր, Բե՛կ,— սպառնալի գոչեց նա,— հետևիր մարտին։

Մովսես աբեղան էր՝ պահանջկոտ, սպառնալի։

— Կորա՞ն,— հևասպառ հարցրեց Բեկը։

— Կռվում են,— պատասխանեց Մովսեսը,— անունդ տալով ընկ-
նում են։ Ետ դարձիր, աստծո՜ սիրուն... Քո կորուստը կորուստ է ան-
դարձ...

Բայց Բեկը ձին թոցրեց առաջ, դեպի ուղտի մեծությամբ ձիու վրա
հոխորտացող փաշան։ Սակայն Հալիձորի կտրիճները նորից ընկան նրա
առջևն ու նրան թողին մի փոքր ետ։ Թուրքերն ընկրկեցին, հասան փոքր

ձորակին ու զորանալով՝ նորից գրոհեցին հայոց փոքրաթիվ հեծելազորի
վրա։ Նորից սրեր բախվեցին, սաղավարտներ գլորվեցին, զրահներ պա-
տռվեցին։

Բեկը ժամանակ գտավ ու նայեց ձախ։ Աշխարհազորային գնդերը
դեռևս դիմանում էին։ Նրանց վրա ծածանվում էր մելիք Նուբարի դրո-
շը։ Դիմանում էին, բայց երկա՞ր կտևի. վերջին ճիգերն են... Աջ թևում
արնաքամ էր լինում Բալին, նոսրանում էին Կոստանդինի ու Ագամի
գնդերը։ Եվս մի կես ժամ, և ամեն ինչ կվերջանա։ Թեև բոլորը քաջու-
թյամբ էին դիմադրում, սակայն Բեկը համոզվեց, որ օրհաս է, ու ճա-
կատամարտը տանուլ է տվել։ Ձիու վրա նրա մոտ ընկավ Սարգիս հար-
յուրապետը։ Նրա մի ականջը կտրված էր, արյունը լցվում էր ծոցը։
Եկել էր Բեկին փրկելու։

— Նահանջի հրաման տուր,— հուսահատ գոռաց նա։— Կործանվում
ենք։ Վա՜յ մեզ, վա՜յ մեր աշխարհին։

Բեկը չէր շնչում։ Նահանջել՝ նշանակում է կորստյան մատնել վեր-
ջին զինվորին ևս։

— Նայիր դենը,— անհույս բղավեց արյունաթաթախ Սարգիս հար-
յուրապետը և թուրը մեկնեց դեպի Ցղնայի լեռները։

Այդ լեռների արանքից դեպի ռազմադաշտ էր սլանում մի խոշոր
բանակ։ Երևում էին կատաղած ձիերը, թրերի անտառը, որ գլխներից
վեր պահած շողում էր թեքվող արևից։

Դավիթ-Բեկի աչքերը լայնացան, վիզը երկարեց...

— Թուրքական նոր հեծելազունդ է,— հուսահատ ասաց Սողոմո-
նը։— Իսկ մենք կարծում էինք, թե Աբդուլլահն իր բոլոր զորքերն է նե-
տել կռվի։ Նահանջի հրաման տուր, Բե՛կ, քաշվենք լեռները, թե չէ շարդ-
վում ենք գլխովին։

Նրան ու Սարգիս հարյուրապետին թվաց, թե Բեկը խելագարվել է։
Ապա եթե ոչ, ինչո՞ւ է ժպտում։ Դա ի՞նչ դիվական ժպիտ է նրա դեմ-
քին։ Ինչո՞ւ։ Ժպտալու պա՞հ է։

— Զորացե՛ք,— սրտապնդիչ ձայնով գոչեց Բեկը։— Փա՜ռք,
փա՜ռք...— Անվերջ նայում էր Ցղնայի լեռներից արշավող գնդերին։
Առջևից սլանում էր մի սպիտակ նժույգ։ Հեծվորը չէր երևում, միայն
սուրն էր փայլատակում նժույգի ականջների արանքում։

Նրա ետևից սլանում էր այրուձին։ Վազքից խելագարվել էին ձիե-
րը։ Ահա նրանցից մի երկուսն ընկան։ Պարզած դրոշակների մետաքսը
պատառոտվեց։

— Ամեն ինչ կորցրի՞նք...— այդ բանակը տեսնելով գլուխը ծեծում
էր Սարգիսը։ Սողոմոնը հեկեկում էր։

Հայոց բանակի մեջ ուրախ էր մի մարդ, և դա Դավիթ-Բեկն էր։ Ինչպե՞ս նա չճանաչի հեծելազորն առաջնորդող սպիտակ ձիավորին։ Քանի՞ անգամ է այդ ձիավորն իր նժույգի ականջը մտած փութանակի սուրացել թշնամիների վրա։ Ինչպե՞ս չճանաչի հարազատին, սիրելիին... Բեկը կանգնեց ձիու ասպանդակներին ու որքան ձայն ուներ՝ կանչեց.

— Մխիթար սպարապետը եկա՞վ...

Նրա ձայնը թռավ ուժասպառ բանակի վրայով, հազարապատկվեց բերդերբերան։ Ամեն կողմից դոչում էին.

— Մխիթար սպարապետը եկա՞վ...

— Ջա՛րկ, զա՛րկ թուրքին, զա՛րկ թափո՞վ...

— Թափո՞վ, հայե՛ր, թափո՞վ...— խրախուսում էին արդեն նոր ոգի առած հարյուրապետները։

Մովսես աբեղան ձին թոցրեց Բեկի մոտ։

— Սպարապետը, Բե՛կ, սպարապե՞տը...

Դավիթ-Բեկը հազիվ ղսպեց հեկեկոցը։

* * *

Ցղնայի ձորից դուրս գալով՝ Մխիթար սպարապետի գնդերը բաց-զատվեցին ու լայն ճակատով նետվեցին թուրքերի ձախ թևի վրա։ Թուրը ձիու ականջների արանքից նետած՝ սլանում էր Մխիթարը։

— Եկա՞, դիմացե՞ք... Հիմա՞...— ատամներն արյունոտելով մորնչում էր նա։

Նրա ձախ կողմին Տեր-Ավետիսն էր՝ ձիու վրա երկարված, հարվածի նետվող նիզակի պես։ Այրվում էր՝ վայրկյան առաջ մարտի մել ընկնելու մոլուցքից։ Այդպես իրենց գնդերի առաջն ընկած մրրկում էին մելիք Բարխուդարը, Շաֆռազը, Եգանը։ Սրամերկ կնոջ կողքից սլանում էր Թոմման, փոթորկվում էր Եսային։ Աչքը դիմացի սև զանգվածին՝ նա գնում էր թշնամու վրա։

Մխիթար սպարապետի հեծելազորի անսպասելի հարվածից թուրքական հետևակը խուճապահար ետ շրջվեց ու իրար լափելով, կոխկրտելով մխրճվեց Ռեջեբ փաշայի հեծելազորի վրա։ Թուրքերի շարքերում շփոթ ընկավ, մարտակարգը խախտվեց։ Միջոցում կուլող թշնամու գնդերը վահանափակ լինելով ետ ընկրկեցին՝ յուրայիններից չկտրվելու և շրջապատման մեջ չընկնելու համար։

Սպարապետի զորքի հարվածը շեշտակի էր։ Թշնամին երեք կողմից նեղվեց, սկսեց կուտակվել ու խեղդվել գետափի բարակ շերտերի վրա։ Կռվում էին միայն նրանց առաջավոր շարքերը։ Տեղ չկար ընդարձակվելու, մարտակարգը վերականգնելու համար։ Հեծելազորը կոխկրտում էր հետևակին, հետևակը խանգարում էր հեծելազորին։

Հայոց արյունաքամ գնդերի վրա թռավ Զարմանդի ձայնը.

— Մխիթարը եկա՞վ, արիացե՞ք, եղբայրնե՛ր։ Զարկի՞ր անխնա...

— Զարկի՞ր...— կրակվեց աշխարհազորը և բռնկվեց ինչպես հողմախառը հուրը՝ չոր եղեգնի միջով անցնելիս։

— Թափո՞վ...— կոկորդ էին պատռում ամեն կողմից։

Այս ամենը տեսնում էր Դավիթ-Բեկը, բայց դեռ հաղթություն չէր համարում դա։ Պետք է ետ շպրտել միջոցում եղած Ցալդուզ-Հասան փաշայի գունդը, սեղմել գետին, թափել ջուրը։ Այդ դեպքում միայն կսկսվի թշնամու իսկական խուճապը։ Բեկը ձին մղեց առաջ, որ եռաց, խաղաց ու գնաց կայծակված...

— Բե՛կ, Բե՛կ, ո՞ւր,— նրա ետևից գոչեց Մովսեսը։

Բայց Բեկը ետ չնայեց։ Ձեռքից բաց չպետք է թողնել հաջողության թելը։ Ուր որ է թուրքերն ուշքի կգան, ու նորից կսկսվի նախկինը։ Պետք է շտապել, կիսել խուճապված թուրքերին՝ մաս-մաս անելով վերջացնելու համար։ Պետք է շտապե՞լ... Նրա ձին թռավ դիակների վրայով։ Նրա մռայլ դեմքին ծռվեց այն հեգնական ժպիտը, որ միշտ հայտնվում էր նրա շրթունքներին, երբ ներսում եռում էր ճակատամարտի կրակը, և ինքը նետվում էր կենաց ու մահվան մենամարտի...

— Արիացե՞ք, քաջերս... Առա՞ջ... Թափով, թռիչքո՞վ...— որոտում էր նրա ձայնը։

Հալիձորցիների փոքրիկ գունդը նորից նետվեց նրա ետևից։

Թշնամին սկսեց սեղմվել գետին. թուրքերը ժամանակ չգտան ետ մղելու սպարապետի գնդի անսպասելի հարվածը։ Որևէ բան լսելն անհնարին էր։ Կիրճում միայն դղրդում էր միալար որոտը՝ «բո՛ւ»։

Բեկն աշխատում էր կիսել իր դիմացը ետ-ետ գնացող հեծելազորը, ապա ընկնել գլուխը կորցրած հետևազորի վրա ու փախուստը լիակատար դարձնել։ Դա նրան արդեն հաջողվում էր։ Հալիձորի Երկրի ապավեն գունդը սեպ դարձավ, սուր ծայրով մտավ արդեն հաղթության հույսը կորցրած, հայերին օգնության եկած զորագնդից վախեցած թշնամու կուրծքը։ Ահա նա երկու մասի բաժանվեց, մեկի ձեռքից ընկավ սուլթանական դրոշը, մի քանի սիփահիներ շուռ տվին իրենց ձիերի գլուխները...

Բայց այդ պահին հանկարծ թուրն ընկավ Դավիթ-Բեկի ձեռքից։ Նրա գլուխը կթռչեր իր վրա խոյացած թուրքի հարվածից, եթե ձին ծառս չիներ ետևի ոտքերի վրա, և թուրքի հարվածը չիջներ նրա գլխին։

խին... Թուրքը չհասցրեց երկրորդ անգամ հարվածել, ընկավ Մովսեսի զարկից՝ ուսից մինչև գոտկատեղը ճեղքված։

Բեկն ընկավ։ Հալիձորցիները թռան նրա վրայով ու թուրքերին ետ մղեցին։ Վեց հոգի ձիերից ցատկեցին Բեկի մոտ։

— Ոտքս հանեցեք ասպանդակից, ձի՛ տվեք,— փշրված ձայնով գոչեց Բեկը։

Մովսեսն ու Սողոմոնը նրան կանգնեցրին։ Բայց Բեկի աջ ձեռքն անզոր կախ էր ընկել, ու կապայի թևքից արյուն էր կաթում։ Թրի հարվածն իջել էր աջ ուսին, պատռել զրահն ու վիրավորել ծանր։

Նրա մոտ երևաց Բայանդուր իշխանը։

— Աղե՞տ է,— սարսափահար հարցրեց նա։

— Գնա մարտի՛դ,— հազիվ կարողացավ ասել Բեկը։— Ես հիմա։— Բայց ուշաթափ կախվեց Սողոմոնի ձեռքերից։ Մի խումբ հալիձորցիներ շրջապատեցին նրան։ Բայանդուր իշխանը Բեկի վրայից պոկեց նրա պատմուճանն ու սաղավարտը և նետեց Մովսեսին։

— Հագիր, վերցրու Բեկի թուրը, նստիր իմ ձին, նա Բեկի ձիուն նման է։ Շո՛ւտ արա, մարտի մեջ նետվիր, թող ոչ ոք չիմանա, որ Բեկը...

Մովսեսը հապշտապ հագավ Բեկի պատմուճանը, սաղավարտը դրեց, թռավ իշխանի ձիու մեջքին ու սլացավ՝ ետևից տանելով ձիավորների խումբը։

— Թափո՛վ, հա՛յ քաջեր, զա՛րկ անօրենին,— աշխատելով ձայնը նմանեցնել Դավիթ-Բեկի ձայնին՝ գոչեց նա ու մխրճվեց գետափին սեղմված թուրքերի շարքերի մեջ։ Մի զինվոր նրա ետևից բարձր բղավեց տանում էր Բեկի դրոշը։

— Կեցցե՛ Դավիթ-Բեկը...— բղավում էին հալիձորցիները, և թեկուզ նրանցից ոմանք գիտեին, որ Բեկը վիրավորվել է, բայց չիմանալու էին տալիս՝ հաղթությունը ձեռքից բաց չթողնելու համար։

Բայանդուր իշխանը Բեկին փաթաթեց իր պատմուճանի մեջ ու հանձնելով իր թիկնապահներին, հրամայեց տանել բլրի մյուս կողմը, Հովակիմ եպիսկոպոսի մոտ։

***

Թուրքական բանակի ձախ թևում ու գրեթե նրա թիկունքում հանկարծակի երևացած Մխիթար սպարապետի հեծյալ գնդերը սկսեցին մի նոր ու զարհուրելի կոտորած։

Բլրի վրա, իր վրանի մոտ կանգնած Աբդուլլահ փաշան, որ քիչ

առաջ ձեռքերը շփում էր հաղթանակի հաճույքով, ցատկեց զահավորակից ու, մի քանի քայլ առաջ վազելով, գոչեց.

— Այս ի՞նչ է կատարվում, ո՞վ անցավ մեր թիկունքը։

Բայց նրա թիկնապահները կարկամել էին։ Բանակի մեծ մոլլան թուլացած շոքեց գետնին։ Փաշան սարսռաց։ Մի՞թե կորցնում է հաղթությունը, որ քիչ առաջ նա կատարյալ էր համարում։ Մի ձիավոր սուրհանդակ եկավ ու ցատկելով ձիուց՝ թավալվեց փաշայի ոտքերի տակ։

— Հայերը շրջապատում են մեզ... Կոտորո՞ւմ են։

— Ո՞վ եկավ հայերին օգնության,— ճղավեց փաշան։

— Մուխիթար սպարապետը...

— Ի՞նչ...— փաշայի ձեռքը դողաց։ Քացով զարկեց սուրհանդակի փորին։ Սա գլորվեց ցած...— Խաբե՞ց,— գլուխը ծեծեց փաշան։— Այս անգամ էլ խաբեց խորամանկ Դավիթը... Ուժերը թաքցրել էր։— Փթանոց ոտքերով նա սկսեց դոփել գետնին ու բղավել անբնական, անասնական ձայնով.

— Երիվարը՞ս...

Արաբ ծառաներն իսկույն մոտ բերին նրա ձին ու օգնեցին, որ բարձրանա թամբի վրա։ Բոլորն շտապ հեծան իրենց ձիերը։ Աբդուլլահը թուրը ճոճեց ու սլացավ դեպի բանակ։ Բայց դեռ չէր հասել նրան, երբ հետևակի մի ահագին զանգված խուճապահար զարնվեց նրան։ Դա փախստական ասկյարների գլուխը կորցրած զանգվածն էր։ Նրանք նետել էին իրենց ծանր զենքերն ու փորձում էին փախուստով ազատել գլուխները... Նրանց ետևից սրարշավ հարվածում էր հայոց այրուձին։ Հայերն անխնա կոտորում էին անզեն խառնիճաղանջ ամբոխ դարձած թուրք հետևակին, սմբակահար անում նրան։

— Ե՛տ, ե՛տ, անիծվածնե՛ր,— գոռաց փաշան ու թրով հարվածեց առջևից փախչող ասկյարներին։

— Ջուլո՛ւմ... Ջուլո՛ւմ,— գոռում էին ասկյարները։

— Ամա՛ն...— բղավում էր զանգվածը։

Ուշք չդարձնելով փաշայի սպառնալիքներին՝ նրանք կոխկրտում էին իրար, ընկնում՝ այլևս վեր կենալու ուժ չունենալով։ Մուրադ-Ասլանը բռնեց փաշայի թևն ու ցնցեց։

— Նայիր գետին։

Փաշան նայեց Արաքսին ու ոռնաց անբնական ձայնով։ Ջորը թափվում էր գետը։ Բոլորը փախչում էին հուսահատության վայրենի աղաղակներով։

— Ե՛տ տվեք, ե՛տ...— խռպոտ գոչեց նա։

Մուրադ-Ասլանը նորից քաշեց նրա թևը։

— Աչ նայիր։

Ցղնայի կողմից հայերի մի մեծ զորագունդ սլանում էր այն ուղղությամբ, որտեղ կանգնած էր Աբդուլլահ փաշան։ Փաշան կարծես շլենքին զգաց թրի սառը հարվածը։ Ձիու գլուխը շուռ տվեց դեպի գետը և մի վայրկյան հետո արդեն Արաքսի պղտոր ջրերի մեջ էր...

Հայոց գնդերը երեք կողմից հարվածում էին լքված ու փախստական թուրքերին։ Գետը սևացել էր դեպի պարսից ափը ճողոպրող ձիավոր ու հետևակ ասկյարներից։ Նրանց ետևից երբեմն ջուրն էին մտնում հայերն ու կոտորում անխնա, անգութ։ Գերի չէին վերցնում։

Արևն արդեն մայր էր մտնում։

Մարաղայի դաշտը ծածկվել էր անհամար դիակներով, սատկած ձիերով, թափած զենքով։ Արևմտյան բլրի վրա մնացել էր միայն սեբասկյար Աբդուլլահ փաշայի վրանը։

* * *

Առավոտ էր։

Թովմա առաքյալի վանքի բակում գլխիկոր կանգնել էին հայ զորապետները։ Մելիք Փարսադանյան Բալին անձայն լաց էր լինում։ Երբեմն բացվում էր եպիսկոպոսարանի դուռն ու շեմին երևում էր Մովսեսը։

— Հը՞,— դեպի նա նետվելով՝ հարցնում էին զորապետները։

— Վիրաբույժը հավաստիացնում է, որ կփրկվի։ Բայց դեռ ուշի չի եկել։ Շնչում է ծանր,— պատասխանում էր Մովսեսը։

— Տե՛ր աստված, դու նրան բախշի մեզ, քո շո՛ւնն ենք, մե՛զ արի,— շշնջում էին զորապետները։

Եպիսկոպոսական ննջարանի միակ մահճակալին պառկած էր Դավիթ-Բեկը։ Վիրաբույժը դարմանել էր նրա վերքը, կարել բարակ մետաքսաթելով, փաթաթել։ Բեկի գլխավերևը կանգնած էր Հովակիմ եպիսկոպոսը, ոտքերի մոտ՝ Մխիթար սպարապետը։ Սա անթարթ նայում էր Բեկի կապտած շրթունքներին, ճակատին, որի կնճիռներում երևում էին քրտինքի կաթիլներ։ Ահավոր վիշտը խեղդում էր սպարապետին...

Փայտե անշուք մահճակալին պառկած էր հայոց բախտը։

Ոչ մի հարազատ չուներ այդ մարդը։ Մենակ էր՝ դառնություններով լի այս աշխարհում և, արյունոտ բաճկոնից, կոիվների մեջ խանձված թրից ու մի մեծ, շա՜տ մեծ սրտից բացի, ոչինչ չուներ...

Մխիթարի կոկորդը լցվում էր, աչքերն այրվում էին։ Մի անգամ,

դեռևս մի անգամ Բեկը բաց անի ծանր կոպերն ու տեսնի, որ ինքը նրա հետ է, նրանից անբաժան այլևս։

Վիրաբույժը ձեռքերը լվաց պղնձե կոնքի մեջ և, նստելով վիրավորի մոտ՝ դանդաղ ասաց.

— Քիչ հետո աչքերը բաց կանի, կեսօրին կխոսի, իսկ մի շաբաթ հետո ոտքի կկանգնի։ Վերքը վտանգավոր չէ. միայն արյուն շատ է կորցրել։

Հիրավի, երկու ժամ հետո Դավիթ-Բեկը աչքերը բաց արեց։ Մերունի վիրաբույժը ժպտաց կարճ խուզած բեղերի միջից։ Վտանգն անցել էր։ Հովակիմ եպիսկոպոսը խնամքով ծալեց Նարեկը։ Ամբողջ գիշեր հազիվ լսելի ձայնով Բեկի գլխին կարդացել էր մեծ բանաստեղծի քերթվածքները։

Սպարապետը չոքեց ու այդպես էլ մոտեցավ Բեկին, բռնեց, համբուրեց նրա ձեռքը։ Բեկը երկար նայեց սպարապետին։ Անգույն շրթունքները բաժանելով՝ նա հարցրեց.

— Ովքե՞ր են ընկել։

— Դու ողջ լինես, տե՛ր մեր,— շշնջաց սպարապետը։

— Թվիր ընկածներին,— պահանջեց Բեկը։

Մխիթարը նայեց վիրաբույժին։ Սա գլխով նշան արեց, որ կարելի է խոսել։ Բեկը սպասողական նայում էր սպարապետին։ Նրա հայացքը հրամայական էր։

— Մարաղայի ճակատամարտում իրենց կյանքը փառքով կնքեցին Հովհաննես ու Զաքարիա հարյուրապետները, մելիք Բարխուդարի Պակի զորապետ որդին, մեղրեցի Սարին ու Առաքելը, Ջուղայի Մաղա մելիքն ու Տիլանչի բեկը, Տեր-Գասպար Ավշար Երեցը, շիվանիձորցի Սարգիս հարյուրապետը, գայլաբերդցի Ղազար զորապետը...

Մխիթարը թվում էր նահատակված զորապետներին, երկյուղածությամբ ու դողով տալով յուրաքանչյուրի անունը։ Դավիթ-Բեկն աչքերը փակել էր ու մտովի տեսնում էր իր այն քաջ զինակիցներին, որոնց հետ ինքն անցել էր արյան ու կրակի ծովերով, որոնք հիմա չկան, հանգչում են հայոց հինավուրց հողի գրկում։

— ...Ապա ընկել են երեք հազար հարյուր քառասունվեց կտրիճ,— շարունակում էր սպարապետը։— Աշխարհազորից նահատակվել է չորս հազար մարդ...

— Հոգիներին արքայությո՛ւն...— շշնջաց Բեկը։

— Ամե՛ն,— ավելացրեց եպիսկոպոսը։

Բեկը երկար ժամանակ անթարթ նայում էր գիմացի բաց պատուհանին, որի միջից պայծառ ժպտում էր արևը։

Սպարապետը բռնեց նրա ձեռքը։ Աչքերը լցվել էին։ Պահն էր, որ սաեր զղջման խոսքը, որ արդեն այրում էր նրան։ Կռահելով նրա միտքը՝ Բեկը ներողամիտ ժպտաց.

— Տե՛ր իմ,— դողդոջ սկսեց սպարապետը, բայց Բեկը ձեռքի թույլ շարժումով հասկացրեց, որ լռի։ Ապա նշան արեց, որ թեքվի իր վրա։ Նա իր թույլ ձեռքը գցեց սպարապետի վզովն ու համբուրեց նրան։

— Ես գիտեի՛, գիտեի՛, Մխիթա՛ր,— ասաց դանդաղ։— Գիտեի, որ չես լքի ինձ։ Մոռացիր եղածը, մոռացի՛ր...

Սպարապետն արցունքները սրբեց արդեն վանքի բակում։

— Վտանգն անցել է,— դեպի իրեն վազող զորապետներին ասաց նա՝ խոր հոգոց հանելով։— Դավիթ-Բեկն ապաքինվում է։

ՄԱՐԱՂԱՅԻ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Հալիձոր բերող ճանապարհը նորից բանուկ դարձավ, նորից նրա վրա երևացին ձիավոր ու հետիոտն մարդկանց խմբեր, մենավոր ճանապարհորդներ։ Նրանք գալիս էին հեռավոր Ջրաբերդից, Վարանդայից, Սոթից, Քաշաթաղքից։ Գալիս էին խաչվառներով հոգևորականներ, մելիքներ, տանուտերեր, շատերն իրենց կանանցով, ծառաներով։ Հալիձոր էին շտապում նաև շքեղ հագնված վաճառականներ, ցնցոտիների մեջ կորած ռամիկներ, կիսամերկ մուրացկաններ։

Նրանք ամենը խոնվում էին Դավիթ-Բեկի տան առջև ու շշուկով հարցնում Բեկի առողջությունը։ Մովսեսն ու Սողոմոնն արդեն ձանձրացել էին միևնույն պատասխանից. «Բեկն ապաքինվում է»։

Մարդիկ փառք էին տալիս արարչին, համբուրում Բեկի տան քարերը, մատաղ անում մոտակա Վահանավանքում, մոմեր վառում նրա գավթում թաղված Սյունյաց թագավորների շիրիմներին և ծնկաչոք աղոթում աստծուն, որ իրենց համար խնայի Դավիթ-Բեկի կյանքը։

Վաճառականները ծանրագին նվերների հետ Բաղդադի խուրմա ու հնդկական շոր բանան էին բերում հիվանդ Բեկի համար։ Ռամիկները ծոցներից հանում էին իրենց սարերում եղած բուժող խոտեր ու արմատիքներ և խնդրում Մովսեսին ու Սողոմոնին, որ դրանք դնեն Բեկի վերքին։

Հալիձոր էր եկել նաև տիկին Սաթենիկը՝ որդիների ու Ծամամի հետ։ Նրանից փոքր-ինչ շուտ եկել էր Գոհարը։ Սա փայլատակում էր իր գեղեցկությամբ, զգեստների շքեղությամբ ու կարողացել էր իր բարեհամբույր խոսքուզրույցով բոլորի սրտերը գրավել։ Բայց և իշխանական հպարտությամբ էր նայում մելիքների կանանց, տղամարդկանց հետ որսի էր գնում, մասնակցում էր ձիարշավներին։ Նա հպարտ էր, որ Շահապունիքից ինքն էր Մարաղայի ճակատամարտին հասցրել Մխիթար սպարապետին։

Այնինչ, միանգամայն փակ կյանք էր վարում տիկին Սաթենիկը։ Թեև նրա ուրախությունն անչափ էր, որ ամուսինը հաշտվել էր Դավիթ-Բեկի հետ, բայց այդ ուրախությունը սփոփանք չէր բերում։ Չէ՞ որ Մխիթարի ու Բեկի հաշտվելը նա ձեռք էր բերել սեփական արժանապատվության ստորացման գնով։ Երբ հիշում էր, թե ինքն ինչպես հասավ Պղնձաքար, ինչպես սկսեց պաղատել Գոհարին, որ սա գնա և սպարապետին համոզի՝ հաշտվել Բեկի հետ, փշաքաղվում էր, ձեռքերը դողում էին և գլուխը բռնելով հեկեկում էր՝ մոր կողմից անտեղի վիրավորանք ստացած դեռատի աղջկա պես։

Իր տանը Գոհարը սառն ուրախությամբ դիմավորեց տիկնոջը. բարևեց պատշաճին ու, նստեցնելով իր նորակառույց սենյակներից մեկում, մնաց ոտքի։

Սաթենիկը չի հիշում, թե ինչ խոսքեր էր ասել այն կնոջը, որն իր բախտի հափշտակիչն էր և որի մի խոսքն իր ամուսնու համար հազարապատիկ թանկ էր, քան արքայական հրովարտակները։ Չի հիշում նաև Գոհարի պատասխանները։ Բայց երբեք չի մոռանա գոռող գեղեցկուհու հեգնական ժպիտը, նրա աչքերի փայլը, երբ ինքն աղերսում էր, որ նա գնա սպարապետի մոտ, նրան համոզի հաշտվել Դավիթ-Բեկի հետ։

Երբեք այդքան ընկճված ու ստորացված չի եղել Սաթենիկ տիկինը։ Այժմ, երբ ամեն ինչ կատարվել, վերջացել էր բարվոք, տիկինն ավելի էր տառապում։ Ոչ մի կերպ չէր կարողանում մոռանալ իր ստորացումը, թեև լավ էր հասկանում, որ հենց այդ ստորացումը վճռեց Մարաղայի ճակատամարտի բախտը, հայրենի երկիրը փրկեց կործանումից։

Հալիձոր գալուց Սաթենիկը նորից խոցվեց, երբ իմացավ, որ այդտեղ է նաև Գոհարը։ Նա աշխատում էր բնավ չհանդիպել Գոհարին, բայց, հակառակի պես, Գոհարն ամեն օր, միևնույն ժամին, իր թիկնապահ պատանիների հետ, անցնում էր այն տան մոտով, որտեղ ապրում էր տիկինը։ Գոհարը ձին խաղացնում էր ասպետի պես, ծիծաղում՝ իր զրնգուն ձայնով խենթացնելով իրենով հիացողներին։ Սաթենիկի երեխաները վազում էին դեպի պատուհանները՝ Գոհարի գնացքը դիտելու։ Տիկինը բարկանում էր զավակների վրա ու աղախնին հրամայում փակել պատուհանի փեղկերը։

Բարեբախտաբար Մխիթարը քիչ էր մնում Հալիձորում։ Երբեմն շաբաթներով բացակայում էր։ Սովորաբար վերադառնում էր գիշերը՝ հոգնած, անքուն ու փոշոտ։ Տիկինն զգում էր, որ ամուսինը ևս աշխատում էր չհանդիպել Թովմա հարյուրապետի կնոջը, և այդ բանը սակավ-ինչ մխիթարում էր նրան։

***

Տանու մուշտակն ուսերին, վիրավոր թևը կրծքին կապած, իր անշուք սենյակում նստած էր Դավիթ-Բեկը։ Դիմացը խոնարհ կանգնած էր Նաղաշ Հակոբը։

— Մարդը գնում, գործն է մնում, տե՛ր գահերեց զորավար,— դանդաղ խոսում էր նկարիչը։— Սերունդները ուրախանում են մարդու բարի գործով, հիշում նրան։ Հաճելի է, եթե մնում է նրա պատկերը։ Եկող ժամանակների մարդիկ հարազատ են զգում նրան ավելի, երբ իրենց հետ են տեսնում։

Դավիթ-Բեկը երբեմն նայում էր երիտասարդ, լրջադեմ Նաղաշին, և նրա գունաթափ դեմքը լուսավորվում էր ներքին հուզմունքից։

— Ահա քո պատվերով, տե՛ր գահերեց, ես քաշեցի ռամիկ Եսայի հարյուրապետի նկարը։ Համեստ է իմ կատարածը և գուցե ոչ արժանի քո աչքին, բայց ներող եղիր և թույլ տուր քո պատկերն էլ քաշեմ՝ գալող սերունդների համար։

— Սրտամոտ բան ես կամենում, Նաղա՛շ Հակոբ,— ասաց Բեկը,— բայց դրա համար չէ, որ ես կանչել եմ քեզ։— Նա հայացքը գցեց սեղանին դրած Եսայու մեծադիր նկարին։— Նաև գովում եմ շնորհքդ։ Եսայու պատկերի մեջ դու բռնել ես ոգին, հայ ժողովրդի անընկճում ոգին։ Դա երևում է նրա աչքերից։ Թեև կռվի է նետվում Եսային՝ իմա ժողովուրդը հայոց, բայց մարդասպան չի երևում, այլ գնում է փրկելու մարդուն մահվան ճիրաններից։ Այդ պատկերի մեջ ես սեր եմ տեսնում դեպի կյանքը ու հաղթելու ու ապրելու կամք եմ տեսնում միաժամանակ։ Տեսնում եմ այն, թե ինչով է մարդը մարդ, մարդկային կերպարանք ունենալուց զատ։ Հոգին է, որ մարդուն վեհացնում է, և գովում եմ, որ ամենից առաջ տվել ես մարդու հոգու միտքը, մարդուն մարդ դարձնող այդ հատկությունը։ Կուզենայի սակայն, որ Եսայու ձեռքի ուժը ևս տեսնեի քո պատկերի մեջ, այն ձեռքի, որ տաճարներ կառուցել գիտի, որ ժայռեր հալել գիտի, ու հաց ու խաղող ստեղծել, և թուր բռնել գիտի միաժամանակ՝ իր հողն ու տունը պաշտպանելու չար նեղիչներից։ Այդ մի բանն է, սիրելի Նաղաշ, որ բացակայում է քո նկարի մեջ։

Նաղաշը լսում էր նրան ու ակնապիշ նայում Եսայու պատկերին։

Զարմանալի ճիշտ նկատեց Բեկը։ Եսայու ձեռքը այն չէր, ինչ հարկավոր էր։ Թույլ էր ու անիմաստ դրած հողքին։ Ինքն իր ողջ ուշադրությունը դարձրել է Եսայու աչքերի վրա, ներսի կրակը հանելու և ի ցույց դնելու վրա միայն։

— Կուզեմ, տե՛ր գահերեց,— անկեղծ ասաց նա։— Զգում ես առավել, քան զորավարին է պետք։

— Բայց կրկնում եմ, դրա համար չէ, որ քեզ կանչել եմ,— ասաց Բեկը։— Ես արդեն հրամայել եմ այստեղ՝ Հալիձորում քեզ համար արվեստանոցի շենք առանձնացնել՝ սրահով, կացարաններով, աշակերտների խցերով։

— Մի՞թե,— դեպի նա շուռ եկավ Նաղաշը։

— Դարձյա՞լ զարմանում ես։

— Զարմանում եմ, որ դու այս խառն ժամանակներում այդպիսի մի մեծ գործ ես ձեռնարկել, տե՛ր գահերեց։

— Զարմանալու բան չկա, Նաղա՛շ Հակոբ,— մեղմ ժպտաց Դավիթ-Բեկը։— Ես ուզում եմ, որ Հալիձորում, Մովսես աբեղայի դպրոցից բացի, ունենանք նաև քո նկարչական դպրոցը։ Նոր չէ, որ հայերը պատկերահանման դպրոցներ են ունեցել մեր բնաշխարհում։ Քեզ հայտնի է, անշուշտ, որ դեռ Անիի ծաղկման ժամանակ այնտեղ արվեստանոց ուներ Մարգարե նկարիչը։ Խեղանում նկարչատուն ուներ Մերուն ծաղկողը։ Այդպիսի արվեստանոցներ կային հայոց Կիլիկիայում, Միջին Հայքում և այլուր։ Բայց կործանվելով մեր պետականությունը, կործանվեցին նաև լույսի այդ օջախները։

— Իմ հանգուցյալ հայրը՝ Նաղաշ Հովնաթանը միտք ուներ պատկերահանի գործատուն բացել մեր աշխարհում և աշակերտներ ժողովել, կրթել նրանց։

— Տեսնո՞ւմ ես,— ուրախացավ Բեկը։— Քո հայրն էլ է մտածել օգտակարը։ Անենք ուրեմն այն, ինչ մտածել ենք։ Ավելացրու աշակերտներիդ թիվը։ Արվեստանոցդ կահավորիր՝ ինչով հարկ է։ Եվրոպայից բերել տուր անհրաժեշտը։ Այդ ամենի ծախքերը կքաշեմ ես։

Նաղաշ Հակոբն ուրախությունից կորցրեց գլուխը։

— Օ՜... Մեծ մարդ,— բացականչեց նա։— Ինչո՞վ պիտի երախտապարտ լինեմ քեզ՝ քո մեծագործության համար։

— Նրանով, որ արդար ծառայես ժողովրդին ու հայրենիքին քո։— Պատասխանեց Բեկը։

— Պատրաստ եմ ծառայելու անձնուրաց,— հուզված ասաց Նաղաշը։— Միայն, տե՛ր գահերեց, մի մերժիր խնդրանքս. թույլ տուր նկարեմ քեզ։

— Հետո՞, հետո։ Հիմա ժամանակը չէ։

Դուռը բացվեց։ Ներս մտավ սպարապետը։ Բեկը գորովանքով նայեց նրան. ու մի ուրախ ժպիտ սփռվեց նրա տակավին գունատ դեմքին։

— Բարի լո՞ւր կա,— հարցրեց կանխագուշակելով բարին։

— Շահ Թահմազը հրեշտակ է առաքել մեզ։ Թավրիզն ու շահը ցնծության մեջ են։

— Բարի՛,— վերքի ցավից մի թեթև դեմքը ծռմռեց Բեկը։— Հետո՞։

— Շահը մեծ դեսպանություն է պատրաստում քեզ մոտ ուղարկելու։

— Մի՞թե։

— Սաստիկ բարկացել է Ասլամազ Ղուլի և Խոսրով խաների վրա, որ լքել են քեզ։ Պատրաստ է ներողություն խնդրել քեզանից։

— Ո՞ւմ է մտադիր դեսպան ուղարկել մեր աշխարհը։

— Թահմազ Ղուլի Նադիր խանին։

— Մե՛ծ պատիվ է,— հեգնորեն ասաց Բեկը։— Ի՞նչ արած, կընդունենք, թող գա։ Հը՞, ի՞նչ կասես, սպարապե՛տ, պարսից դեսպանությունն ընդունե՞նք թե՝ ոչ։

— Անշուշտ պետք է ընդունել, վնասն ի՞նչ...— սրտանց պատասխանեց Մխիթարը։

— Դե, ուրեմն պատրաստվիր դեսպանին դիմավորել։

Թեև այդ հանձնարարությունը սպարապետի սրտովը չէր, բայց լռեց։ Կուզեր հետին ջորեպանին ուղարկել պարսից դեսպանին ընդունելու։

— Մարաղայի ճակատամարտի արձագանքները հասել են Եվրոպայի արքունիքներն անգամ։— Դանդաղ խոսեց Բեկը։— Ստամբուլում եղած անգղիական դեսպանը գաղտնել է։ Թող կատաղի ծովաշունը։ Սուլթանին ցավակցություն է հայտնել Աբդուլլահի պարտության համար։ Նորից զենք ու դրամ է տվել սուլթանին։ Նորից են նա և Ֆրանկի Դը-Բոնակը սուլթանին գրգռում մեր դեմ։ Սուլթանը սգո զգեստներ է հագել։

— Թող սգավորվի,— ասաց Մխիթարը։

Նա ու նկարիչը երկար չմնացին Բեկի մոտ։ Ստեպ-ստեպ ներս մտնող ծերունի վիրաբույժը նրանց ակնարկում էր, թե ժամանակն է հանգիստ թողնել հիվանդին։

* * *

Արաքսը գաղտնել էր։

Աշնան հեղեղներից ուռած նրա կավագույն ջրերը բարձրացել և ողողում էին առափնյա տափարակները։ Ձկնկուլ թռչունների երամները կռավում էին գետի վրա, սլացքով ընկնում, մի պահ կորչում ջրերի մեջ, և, ապա վեր խոյանալով՝ թառում մերձակա ժայռերին՝ որովայնում տակավին թպրտացող ձուկը մարսելու։

Հին Ջուղայի դիմաց, Արաքսն աղեղող կամրջին պարսից կողմից եկած մի խումբ ձիավորներ երևացին։ Առջևից ընթացող մեկը բերում էր շահական դրոշը։ Պարսիկները փողեր հնչեցրին, ապա հանդիսավոր անցան կամուրջն ու ոտք դրին Հայաստանի հողին։

— Ճերմակ դրոշ պարզեցեք,— հրամայեց պարսից դեսպանության գլուխ Թահմազ Ղուլի Նադիր խանը ու քաշեց գետի որոտմունքից խրտնած նժույգի սանձը։

Շահական առյուծակիր դրոշի մոտ կախվեց սպիտակ մետաքսե պաստառը՝ նշան խաղաղ այցելության։ Գետամերձ եղեգնուտի դեղին պատը խշշաց, ու հայ ձիավորներ մոտեցան զորախմբին։ Նրանց առաջնորդող Եսային գլխարկը հանեց, նրանով սրբեց ճակատն ու, մի փոքր հեռու կանգնելով, հարցրեց պարսկերեն.

— Ո՞վ եք և ինչո՞ւ եք եկել մեր աշխարհը։

— Ես Թահմազ Ղուլի Նադիր խանն եմ,— պատասխանեց դեսպանը։— Պարսից շահի կողմից գնում եմ հայոց գահերեց զորավար Դավիթ-Բեկի դուռը։

— Ա՜...— երկարացրեց իբր թե բանին անտեղյակ Եսային, ձին մի փոքր էլ առաջ մղեց ու շթաքցրած արհամարհանքով հարցրեց։— Պարսից ո՞ր շահի դեսպանն ես, խա՜ն։

Թահմազ Ղուլի Նադիր խանը խոցվեց։ Ինչպե՞ս է համարձակվում այդ բրդոտ վայրենին այդպիսի վիրավորական հարց տալ իրեն։ Համենայն դեպս հարկադրված էր պատասխանել։

— Պարսկաստանը մի շահ ունի, և դա ալլահի ստվեր Թահմազ շահն է։

— Մի՞թե,— ժպտաց Եսային,— իսկ մենք լսել ենք, որ Պարսկաստանում երկու շահ կա։ Մեկը Սպահանում՝ ողորմած հոգի Սուլթան Հյուսեին շահի թախտին նստած Միր Մահմուդ ավղանը, մյուսը՝ ողորմածիկի որդի Թահմազը։ Ուրեմն դու Թահմազի դեսպա՞նն ես, բարի՛, բարի՛... Լավ կլիներ, եթե ձեր շահը Խոսրով խանին կամ Ասլամազ Ղուլին ուղարկեր մեր աշխարհը։ Նրանք այս տեղերին ծանոթ են։ Մի անգամ տեսել եմ նրանց, կարծեմ Մարաղայում։ Ա՜խ, ի՞նչ շքեղ հագուստներ ունեին... Դե՛, ի՞նչ արած, տե՛ր դեսպան խան, համեցիր, մեր աչքի վրա տեղ ունես։ Մի փոքր նեղություն քաշիր հանգստանալ այստեղ, մինչև ես քո գալստյան մասին տեղեկացնեմ իմ տիրոջը։

Առանց պատասխանի սպասելու՝ Եսային շուռ տվեց ձիու գլուխն

ու, թանձր փոշի շաղ տալով դեսպանների վրա՝ անհետացավ ժայռերի արանքում։ Թահմազ Ղուլի Նադիր խանը կրծոտեց կարմիր շրթունքները, իջավ ձիուց։ Նույնն արին նաև նրա հետ եկած երկու հարյուր հիսուն ձիավորները։ Շեյխ Ուլ Իսլամին օգնեցին, որ իջնի ձիուց։

Արևն սկսեց վառել։ Խանը, որ առաջին անգամն էր լինում Հայաստանում, իր մանր, վագրի կանաչ աչքերով նայեց երկնքի խորքերը մտած հայոց լեռներին։

— Անիծված երկիր է երևում,— քրթմնջաց նա։

— Սատանան էլ գլուխ չի հանի այս ձորերից։ Արևը կծում է անասպատի կարիճի պես։— Տրտնջաց Շեյխ Ուլ Իսլամը։— Գոնե շուտ մըտնենք ծածկի տակ։

Ի՞նչ իմանար տասներկու ծալ շալմայի ծանրությունից տառապող այդ մուսուլմանը, որ դեռ մինչև երեկո մնալու է խանձող արևի տակ։

Ժայռից կախված թզենու ստվերում, լեռներից եկող զուլալ գետակի ափին տնկած էր սպարապետի վրանը։ Վրանի առջև Մխիթարը կռացել էր ցածրիկ սեղանին դրած շախմատի տախտակի վրա, Մովսես աբեղայի դեմ և համառորեն որոնում էր պատասխան քայլը։ Մովսեսի բարակ, գեղեցիկ շրթունքներին ժպիտ էր գծագրվել։ Սպարապետին նեղն էր լծել նա։ Նրանց մոտեցավ Եսային և հենց ձիու վրայից հայտնեց, որ դեսպանությունը ժամանել է։

— Մի՛ խանգարի,— շարացավ Մխիթարը։— Գրողի՛ ծոցը։ Այս, ախր ինչպե՞ս եղավ, Մովսե՛ս։

— Տանուլ տվիր, տե՛ր սպարապետ,— հանգիստ պատասխանեց Մովսեսը։— Վռազում ես։ Արքայական խաղում վռազելը վտանգավոր է, տանուլ տվիր։

— Մի՛ կոկոա,— պարտությունից չորացած՝ կտրեց սպարապետը։ Հեռքի մի շարժումով նա խաղատախտակը շուռ տվեց։— Անիծված փղի ճանկից պրծում չկա։— Դարձավ Եսային։— Ի՞նչ ես ուզում, ո՞վ է եկել։

— Շահի դեսպանությունը։ Կամրջի մոտ խանձվում են,— անփույթ պատասխանեց հարյուրապետը։

— Թո՛ղ խանձվեն,—շարացավ Մխիթարը։—Գլուխ չեն բերել, դժոխքի ծոցը։ Դե՛, Մովսե՛ս, մեկ էլ խաղանք։

Ամբողջ օրը սպարապետը չպոկվեց խաղից։ Թզենու ստվերի շարժվելու հետ փոխում էր տեղը, բարկանում, հուզվում ու նորից սկսում խաղալ։ Միայն երեկոյան դեմ հիշեց շահի դեսպաններին։

— Ժամանա՞կ գտան,— դժգոհ փնչացրեց Մխիթարը, ապա Եսային հրամայեց գնալ դեսպանների ետևից։

Սպարապետի բերած ձիավորները դուրս եկան ստվերներից, զինավարժեցին, պարզեցին Հայոց ժողովի դրոշը։ Փողհարներին կանգնեցրին գետափին։ Սպարապետը կարգադրեց՝ դեսպանությունը երևալուց հրացանների համազարկ տալ։ Երեք հարյուր հրացանակիրներ շարեցին ձորակի երկայնքով։ Սպարապետը գնաց ստուգելու հրացանակիրների կարգը։ Գոհ մնաց։ Բայց և այնպես բռնեց մի երիտասարդի հրացանն ու թափահարեց։

— Ի՞նչ ես փուշ կերած հորթի պես բերանդ բաց արել, հոնքերդ խոժոռ պահիր ու տղամարդ կաց։ Շահի դեսպան ենք ընդունում, կատակ չէ։

Ժայռի մյուս կողմից փողի ձայն լսվեց։ Փոքր Գորգին սպարապետին մոտեցրեց անհանգիստ նժույգը։ Ձիեր հեծան նաև Մովսեսը, Թովման և էլի չորս հարյուրապետ։ Սպարապետը ձեռքը թափ տվեց։ Զորը դղրդաց թմբուկների ու փողերի միահամուռ ձայներից։ Իսկ հենց որ պարսիկները երևացին՝ հրացաններից համազարկ տվին։ Շեյխ Ուլ Իսլամի ձին խրտնեց համազարկից, շարքից պոկ եկավ ու հաստամարմին տիրոջը գետնովը կտար, եթե պարսիկներին ուղեկցող Եսային ժամանակին չբռներ նրա ձիու սանձը։ Խանն ամոթից կապտեց, խեթ նայեց սարսափած Շեյխին և երկու քայլ գալով՝ բարձրաձայն ասաց.

— Ողջո՞ւյն հայոց զորավար, հաղթող ու տիրապետող Մուխիթար խանին։

— Աստված ողջ պահի մեծապատիվ Թահմազ Ղուլի Նադիր խանին ու նրա ցեղը,— պատասխանեց Մխիթարը։

— Մեր գլխի թագ Իրան ու ոչ Իրան երկրների տեր շահ Թահմազն իմ բերանով հարցնում է՝ ինչպե՞ս է հայերի մեծ ու հաղթող իշխան իշխանաց Դավիթ-Բեկի թանկագին առողջությունը։

— Ողջ-առողջ է Դավիթ-Բեկը։ Թող ալլահը ողջ պահի ձեր շահի գլուխը։

— Ապա իմ բերանով շահը հարցնում է. ինչպե՞ս է ձեր քեշիշ բաբայի, զորապետների, մելիքների ու զորքի առողջությունը։

— Բոլորն ապրում են աստծո արևի տակ, ողջ և ուրախ։

— Մեր գլխի թագ շահ Թահմազն ինձ դեսպան է առաքել ձեր աշխարհը՝ խաղաղության ու եղբայրության բարի կամքով։— Թահմազ Ղուլի Նադիր խանը խոր գլուխ տվեց։

— Համեցի՛ր, դեսպա՛ն, մեր դռները բաց են բարի հյուրերի առջև։

Նորից հայերը հրացանային համազարկ տվին։ Նորից փողեր փչեցին։ Խանն ու սպարապետն իջան ձիերից, սեղմեցին միմյանց ձեռք։ Մխիթարն ասաց.

— Գիշերը կմնանք այստեղ, երևելի՛ դեսպան։ Մեր ճանապարհ-

ները դժվարին են և, ինչպես տեսնում եմ, քո մարդիկ հոգնած են։ Կմնանք, առավոտյան, ասածս օգնությամբ, կմեկնենք մեր աշխարհի խորքերը։ Շնորհ արա, խա՛ն, մտիր իմ անշուք վրանը։

Խանն ու Շեյխ Ուլ Իսլամը մտան սպարապետի վրանը, որը կահավորված էր համեստ, բայց ընդարձակ էր։ Շեյխ Ուլ Իսլամը նստեց՝ առանց հրավերի սպասելու։ Սև կնճիռներով պատած նրա դեմքը զզվանք էր պատճառում սպարապետին։ Մի քանի մազից բաղկացած մորուքը չէր ծածկում ցցված, գիշատիչ կզակը, որի տակ ծալծլվել էր սմքած մաշկը։ Շեյխ Ուլ Իսլամի իրար մոտ, փոս ընկած աչքերը ճաղատ էին։ Ոչ միայն սպարապետը, խանն ինքն էլ էր զզվում այդ հոտած մարդուց։

Պարսիկ զինվորները ջորիների վրայից իջեցրին շահական նվերները։ լիքը նաֆռաշներն ու տեղավորեցին սպարապետի վրանում։ Սպարապետի հրամանով Փոքր Գորգին զինվորական պարզ ընթրիք բերեց։

Շեյխն իր մախաղից ուտելիք հանեց ու դրեց առջևը։ Նույնիսկ մի փոքր թաս հանեց ծոցից ու ջուր խմեց նրանով։ Մեղք էր համարում ձեռք տալ քրիստոնյայի հացին ու ջրին։

Այնինչ, խանն ախորժակով ուտում էր խաշած միսն ու գլուխ սոխը։ Զրուցում էին եղանակից, պարսից կողմերում երևացած «սև ցավի» մասին։ Սպարապետը խուսափում էր դեսպանության գալու նպատակի մասին խոսք բաց անել, թեև նաֆռաշների մեծությունից կռահում էր, որ պարսիկները մեծ հույսեր ունեն իրենց հետ դաշն կապելու վրա։

Առավոտյան սպարապետն ասաց, որ գնալու են որսի։

— Արաքսի քարավաններում ընձաուծներ են երևացել, խա՛ն, գնանք փորձենք մեր բախտը։

Թեև խանը շոյվեց, որ մի այդպիսի պատիվ են անում իրեն, բայց և ինքնասիրությունը վիրավորված համարեց, որ որսի պատրվակով հայոց զորքերի հրամանատարն ուշացնում է իր դեսպանության մեկնումը։

Որսը շարունակվեց երեք օր։ Բազմաթիվ վարազներ, գետային թռչուններ և երկու ընձաուծ խփեցին։ Սրանց մորթիները հանեցին ու գցեցին սպարապետի և խանի ձիերի վրա։ Եսային ու Թովման ընձաուծի ականջները կապեցին իրենց գլխարկներին, իսկ ժանիքները կախեցին կրծքներին։ Իրենք էին սպանել գազաններին։

Միայն չորրորդ օրվա առավոտյան Մխիթարը որոշեց դեսպանությունը տանել Հալիձոր։ Եսայուն ծածուկ պատվիրեց.

— Դու առաջնորդիր մեզ, Եսայի՛, գնում ենք Մեղրաձորի կիրճով։

կես ճանապարհից շուռ կգանք դեպի Նավսի լեռը, կբարձրանանք Խուստուպի լանջով և Քաջարանի կիրճով կիջնենք Հալիձոր։ Հասկացա՞ր։

— Անանցանելի ճանապարհ ես ցույց տալիս, տե՛ր իմ,— զգուշ նկատեց հարյուրապետը։

— Թող դեսպանն իմանա, որ անհնարին է թափանցել Սյունիքի սիրտը։

Եսային առաջ ընկավ, և շուտով դեսպանական քարավանը մտավ Մեղրաձորի կիրճը։ Ձառիվերով ոլորվող արահետը մերթ ելնում էր անդունդի վրա կախված ժայռերի գլուխը, մերթ մտնում մթին անտառն ու իջնում ձորերի խորխորատները։ Ճանապարհն ահ էր պատճառում պարսիկներին։ Հաճախ ստիպված էին լինում իջնել ձիերից ու մի կերպ հետիոտն անցնել արահետի կապերը։ Գրեթե ամեն տեղ ձիավորներ ու հետևակ զինվորների խմբեր էին երևում։ Սրանք անսպասելի դուրս էին գալիս մթին ձորախորշերից, խոժոռ ու շարացած նայում պարսիկներին, անհետանում իսկույն։

— Արդյոք ավազակներ չե՞ն դրանք,— մի անգամ ահով հարցրեց Շեյխ Ուլ Իսլամը։

— Ո՛չ, պատվելի Շեյխ,— ժպտաց սպարապետը։— Մեր երկրում արդեն չորս-հինգ տարի է, ինչ ավազակ չկա։ Սրանք մեր սահմանապահ զորամասերի շարժուն ջոկատներն են։

Սակայն ճշմարտությունն այն էր, որ Դավիթ-Բեկն իր զինվորական ուժը պարսիկներին ցույց տալու համար միջնաշխարհի բերդերից ու զորակայաններից բազմաթիվ ջոկատներ էր ուղարկել այն ճանապարհները, որոնցով պիտի անցնեին դեսպանները։

— Մեծ զորք ունեն հայերը,— հարմար պահ գտնելով՝ խանին ասաց շեյխը։

— Դու զենքերի՞ն նայիր...

Վահրավարի ձորահովտում դեսպանության առաջ դուրս եկավ վաճառական մի մեծ քարավան։ Ականջները կախ ջորու վրա նստած էր քարավանի տեր խոջան։ Սա մտերմաբար սերմեց սպարապետի ձեռքն ու թեթևակի ողջունեց խանին։

— Ո՞ւր եք տանում ձեր ապրանքները, խոջա՛ եղբայր,— հարցրեց խանը՝ զարմանալով քարավանի մեծությունից։

— Ռուսաստան,— պատասխանեց խոջան։

— Հեռու ճանապարհ է,— նկատեց խանը։— Թավրիզը տասնապատիկ մոտիկ է։

— Թավրի՞զը...— ասես մեռածի անուն լսելով՝ բացականչեց խոջան։— Հա, Թավրիզը Մոսկվայից տասն անգամ մոտիկ է, խա՛ն, բայց

ո՞ր Թավրիզցին կարող է գնել իմ մետաքսը, գորգերը, կաշիները, ընկույզի փայտը։ Ռուսները բարձր գին են տալիս հայոց ապրանքներին։ Այ, ուրիշ բան էր Սպահանը, բայց այն էլ...

Խանը հասկացավ, թե ինչ է կամենում ակնարկել խոջան։ Խոցվեց մինչև սրտի խորքերը, բայց նորից լռեց։ Խոջան մի թուի մետաքս նվիրեց խանին ու Շեյխ Ուլ Իսլամին։ Վերջինս ուրախությունից հուզվեց։ «Նորից են հարստացել հայերը»,— մտածեց խանը։

— Ահռելի երկիր ունեք, տե՛ր սպարապետ,— երբ արդեն դուրս էին եկել խորունկ կիրճից՝ ասաց խանը։— Եվ ինչպե՞ս եք երթևեկում այս տեղերով։

— Սյունեցու համար դժվար տեղեր չկան, խա՛ն,— պատասխանեց սպարապետը։— Այս կիրճում է ինը հարյուր տարի առաջ ոչնչացել ձեր աշխարհը՝ ոտքի կոխան արած, ձեր Թավրիզ քաղաքում նստած արաբ Յուսուֆ ոստիկանի հիսուն հազարանոց բանակը։ Սա ձեր երկրի կողմից Սյունիքի խորքը տանող միակ ճանապարհն է։

«Ա՛խ... խորամանկնե՞ր»,— դառնությամբ մտածեց խանը։ Նա լավ էր հասկանում, թե արաբների օրինակով ինչ էր ուզում իրեն հասկացնել սպարապետը։ Բայց չիմանալու էր տալիս և վիրավորանքները տանում էր ուղտի համբերությամբ։ Ի՞նչ կարող էր ասել Մարաղայի հերոսին։

Երկրորդ օրվա գիշերը մնացին Խուստուպ լեռան ուսերին՝ հավերժական ձյան շերտերից մի քիչ ներքև։ Անտառներում ու սարերի փեշերին խորհրդավոր կրակներ էին վառվում։ Քունը մոտ չէր գալիս Շեյխ Ուլ Իսլամին։ Նրան թվում էր, թե ինքն ընկել է դևաբնակ մի աշխարհ, որտեղից դուրս գալու ելք չեն գտնելու։ Զղջացել էր, որ համաձայնեց գալ դեսպանության հետ։

Մյուս օրը Քաջարանի կողմից մտան Զորք գավառը։ Դժվարին ճանապարհ էր։ Ստիպված հաճախ գնում էին ոտքով։ Սպարապետը շատախոս էր դարձել։ Նա խանին ու Շեյխին զանազան զրույցներ էր պատմում այս ամեհի ձորի մասին։ Երբ նրանք անցան Գեղի գետի բարձրավանդակը, մի վիթխարի ժայռի վրա հինավուրց բերդի աշտարակներ երևացին։

— Հալիձո՞րն է,— հարցրեց խանը։

— Ո՛չ, սա Բաղաբերդն է, խա՛ն,— մտրակը բերդի կողմը մեկնելով՝ պատասխանեց սպարապետը։— Սա մեր Սիսական Բաղակ անունով իշխանն է կառուցել հազար ութ հարյուր տարի առաջ։ Ձեր Շապուհ արքան մեծագունդ զորքերով երեք անգամ հարձակվեց սրա վրա, չկարողացավ գրավել։ Շապուհը մի անգամ ծանր վիրավորանք է հասցնում իր զինակից, մեր նախահայր Անդովք իշխանին։ Սա պատեհ առիթ է գտնում ու հարձակվում շահի Տիզբոն մայրաքաղաքի վրա, կողոպտում և մեծ ավարով ու գանձերով գալիս, ամրանում է այս բերդում։ Շապուհը երեք անգամ հարձակվում է այս բերդի վրա ու երեք անգամ էլ շարաշար պարտություն կրում։ Երբ չորրորդ անգամ է ցանկանում գրոհել Անդովքի բերդը, արքայի մեծամեծներն ընկնում են նրա ոտքերն ու աղաչում՝ այլևս չպատերազմել անառիկ բերդի դեմ և չկոտորել պարսից զորքի մնացորդները։ Շապուհ արքան գլխիկոր հեռանում է այստեղից։

Թեև սպարապետը նկատում էր, որ խանը յուրովի բարկանում է այդ զրույցները լսելուց, բայց չնկատելու տալով՝ շարունակում էր պատմել, թե ինչ դեպքեր են եղել այս կիրճերում, պարսից ո՞ր շահը, արաբ ո՞ր էմիրը կամ Բյուզանդիո ո՞ր զորավարն ի՞նչ պարտություններ են կրել այստեղ։ Մի լեռան մոտով անցնելիս՝ սպարապետը ցույց տվեց երկնքի խորքերը մտած կիսավեր աշտարակներն ու ասաց.

— Իսկ սա Պահու բերդն է։ Կիսավեր է, երկրաշարժն է կործանել։ Այս բերդը կառուցել է մեր Արտաշես արքան, սրանից տասն և ինը դար առաջ։ Հռովմի զորավարները գալիս են մեր աշխարհի վրա, հրով ու սրով մտնում Արարատյան դաշտը։ Արտաշեսը քաջաբար կռվում է նրանց դեմ և լուր տարածում, որ իր անհամար գանձերը գտնվում են այստեղ՝ Պահու[1] բերդում։ Հռովմեացիները գայթակղվում են այդ առասպելական գանձերով ու իրենց ամբողջ բանակը քշում Սյունիք։ Բայց այդ բանակը հալվում է այս ահռելի լեռների մեջ, և Հռովմի տասը զինվորից մեկը հազիվ է հասնում Պահու բերդին։ Նրանք բերդը գրավում են մեծ զոհեր տալով, երբ այլևս ոչ մի հայ զինվոր կենդանի չէր մնացել այնտեղ։ Բերդն առնում են, բայց այնտեղ ոչ մի սեստերց[2] անգամ չեն գտնում։

— Երևի ձեր թագավորը նախօրոք դրամը փախցրել էր,— ասաց խանը։

— Ո՛չ,— ծիծաղեց սպարապետը։— Այստեղ գանձ չի էլ եղել բնավ։ Արտաշեսը դիտմամբ էր տարածել գանձերի համբավը, որպեսզի ագահ հռովմեացիների ախորժակը գրգռի և Արարատյան դաշտից դուրս հանելով՝ մղի դեպի այս լեռնաշխարհի պնդոցները, ոչնչացնի այս ծորերում։

— Այդպես էլ արե՞ց։

---

[1] Այժմ Քաջարան։

[2] Հռոմեական մանր դրամ։

— Այո։ Ոչ մի հոռում զինվոր չի կարողացել ետ դառնալ։

— Խորամանկ ազգ եք,— չհամբերելով ասաց խանը։

— Խորամանկ ու քաջ,— ուղղեց սպարապետը։— Երկուսն էլ փոքրի հավատարիմ զենքերն են։

Պարսիկները չէին կարողանում թաքցնել իրենց զարմանքը՝ Սյունյաց զարհուրելի լեռները, կիրճերը, գրեթե ամեն քայլի հանդիպող ամրություններն ու անտառներում ճամբարած զորքերը տեսնելով։ Մխիթարը մտքում հրճվում էր նրանց ահն ու զարմանքը նկատելով։ Թեև պարսիկներն այլևս հարցեր չէին տալիս, բայց նա շարունակում էր իր զրույցները։

Իջան Բաղաց ձորը. Մխիթարն ասաց.

— Այս ձորում, պատվելի՛ խան, քաջության շատ երևելի գործեր են կատարվել։ Այստեղ Քրիստոսի աշխարհ գալուց երեք հարյուր տարի առաջ մեր Արդուվար[1] նախահայրը հաղթեց Ալեքսանդր Մակեդոնացու կուսակալ Նեոպտղեմեոս զորավարին և լավ ջարդ տվեց նրան։ Այդ այն Ալեքսանդրն է, որին դուք Իսկենդարի Զուլղար եք ասում։ Մակեդոնացին ձեր Դարեհ արքային քշեց մինչև Վրկանա ծովի այն կողմի անապատներն ու գրավեց նրա հարստությունները։

Չնայած Մխիթարը պարզորոշ տեսնում էր, որ իր պատմությունները դուր չեն գալիս խանին, բայց նորից միամիտ էր ձևանում և առանց որևէ առիթի շարունակում զանազան հին զրույցներ պատմել նրան՝ աշխատելով հասկացնել տալ, որ այնքան էլ դյուրին չէ ընկճել Սյունիքի դիմադրական կարողությունը, նվաճել այս երկիրը։ «Թող իմանա այս բարձրաքիթ խանը, թե ում հետ գործ ունի»,— մտքում ասում էր նա և նորից պատմում այն, ինչ լսել էր իր պատմիչ կնոջից տարիներ առաջ, երբ Սաթենիկը նրա համար սիրով կարդում էր հին մատյաններ, աշխատում ամուսնուն տեղյակ պահել Հայոց աշխարհի պատմությանը։

* * *

Երեկո էր, երբ հասան Հալիձոր։

Քաղաքի դռների մոտ դեսպանությանը դիմավորեց միայն Բայանդուր իշխանը։ Սա շոր քաղաքավարությամբ ողջունեց խանին ու արշավով նրան մտցրեց բերդ։ Խանը մինչև սրտի խորքը վիրավորվում էր հայերի սառը վերաբերմունքից։ Բայց ինչ կարող էր անել։ Հասկանում էր, որ հայերն իրավունք ունեն արհամարհելու, բանի տեղ չդնելու իր երերուն գահը հազիվհազ պահող շահ Թահմազին։

Խանին շշմեցրին Հալիձորի ամրությունները, աշտարակների յուրահատուկ ձևը, որոնք հրացաններից ու թնդանոթներից կրակելու լավ հարմարություններ ունեին։

Հալիձորը միայն մի կողմից էր շատ թե քիչ մատչելի։ Բայց այդ նեղ պարանոցը փակված էր անսովոր հաստությամբ կրկնակի պարիսպներով, որոնցից յուրաքանչյուրը տասներկու աշտարակ ուներ՝ անկյունային ու ճակատային հրակնատներով։ Միակ դարպասը երկաթից էր։

Դեսպաններին տեղավորեցին բերդի հեռավոր շենքերից մեկում։ Բազմաթիվ սպասավորներ տվին և խնկույն մոռացության մատնեցին նրանց գոյությունը։

Մութն ընկավ։ Փողոցներում հատուկենտ մարդիկ էին երևում միայն։ Բայց գինետները բաց էին։ Մայր եկեղեցուց ոչ հեռու գտնվող գինետան խորքի պատի տակ նստած էին Ծատուրը, Սեմեոնն ու ծաղկատար դեմքով, ծայրն ասես մուկ կերած քթով մի մարդ։ Ծաղկատարը կիսամերկ էր։ Բաց էր նրա առողջ, ուժեղ կուրծքը։ Բարձրահասակ, ծաղը հազիվ զսպում։ Նրանց առջև դրված էր ուռած փորով գինու մի կուվա, երեք տափակ գավաթ, սոխ ու հաց։ Խոսում էին կիսաձայն, ասես վախենում էին ինչ-որ մեկից։

— Տեսա՞ք, այսօր շահի խաները եկան Հալիձոր,— հարցրեց ծաղկատարը՝ շարժուն աչքերն արագ թարթելով։

— Քուռ չէինք,— փնչացրեց Ծատուրը՝ գինու և սոխի հոտ արտաշնչելով նրա դեմքին։— Գինիդ լակիր։ Խաներ էլ կգան, շահեր էլ, քե՞զ ինչ։ Դու էլի էդ սոված զկրտացողը կմնաս։ Իշին քուռակ ծնվեց, հի՛, հի՛, հի՛...

— Անշուք ու սառը դիմավորեցինք,— խոսակցությանը խառնվեց Սեմեոնը՝ ատամների տակ ղրճացնելով շոր լավաշն ու սոխը։— Պարսիկներին մի ամբողջ օր պահեցինք Արաքսի կիրճում, արևի տակ։ Հետո այնպիսի տեղերով բերինք, որ լեղաճաք եղան խանն էլ, Շեյխն էլ։ Իսկ հիշո՞ւմ եք, թե ինչպիսի ուրախությամբ ու պատվով ընդունեցինք ուսաց պատվիրակին։ Յոթ օր տոն էր, որքան ուզում ես կեր, խմիր։ Զրի՛... Եվ ինչո՞ւ այդ պարսիկներին չկորցրեցին, ինչո՞ւ (մազմզոտ բռունցքը խփեց սեղանին ու ձայնը բարձրացրեց)։ Մենք Մարաղայում ու Վարանդայում արյուն թափենք, որ պարսիկը գա, ու էլի շղթա դնի՝

[1] Սրա անունով է կոչվում Որդուվար քաղաքը, որ ինքն է հիմնադրել։

մեր վզին։ Ես կգնամ ուղիղ Դավիթ-Բեկի մոտ ու կասեմ սրտինս։ Թող պարսիկների ականջներն ու քթերը կտրի ու ետ ուղարկի։

— Զգո՞ւյշ եղիր, որ քո ականջները չկտրի,— քրքջաց Ծատուրը։ Ծաղկատարը հառաչեց, ծոծրակը քորեց։— Քու ի՞նչ բանն է, որ քիթդ խոթում ես ամեն տեղ։ Դու քո խաչը քաշիր...

— Խա՞չը...— չարացավ Սեմեոնը։— Ո՞ր խաչը քաշենք։ Ինչո՞ւ պարսիկին պատիվ տանք։ Խաչապաշտ ռուսին տալիս ենք՝ հասկանում եմ, ես ռուսի անունով եմ թուրքերի դեմ կռվել, ռուսի՞...

— Ասում են Դավիթ-Բեկն ու Մխիթար սպարապետը հենց պարսիկների պատճառով են կռվել, խռովել,— խզխզոցով հայտնեց ծաղկատարը։

— Ի՞նչ ես քամի անում,— լրջացավ Սեմեոնը։

— Հա՛, հա՛, էն խաչը,— երդվեց ծաղկատարը։— Մարաղայից առալ է եղել։ Հիշո՞ւմ եք, Բեկը պահում էր պարսիկ խաներին, հետո էլ դեսպան ուղարկեց Թավրիզ։ Սպարապետը պահանջել էր, որ խաներին կոտորեն, դեսպան չուղարկեն շահի մոտ։ Դրա համար էլ ինքն ու Բեկը կռվել են, իրար անպատվել։

— Ձենդ կտրելո՞ւ ես, թե չէ,— մռնչաց Սեմեոնը։

— Ինքդ կտրիր, էլի՞,— լացաձայն պատասխանեց ծաղկատարը,— սուրդ դիր կոկորդիս ու կտրիր, թող պրծնեմ։ Մարդ լսածն էլ չի կարողանում ասել... Երդվում եմ հորս ոսկորներով, այդպես է եղել, ինչպես ասացի։ Կռվել են։ Բեկն սպարապետին դուրս է արել իր տնից։ Սա էլ զորքով թողել գնացել է Վարանդա։ Հիշո՞ւմ եք, երբ Շահապունիքում էինք, սպարապետի մոտ եկավ մելիք Բարխուդարի դուստրը՝ Գոհարը։ Ինչո՞ւ եկավ։ Ասեմ։ Սպարապետի կինն ընկել էր նրա ոտքերը, որ գնա ու սպարապետին հաշտեցնի Բեկի հետ։ Ա՜խ, տե՜ր երկնային։ Ախր Գոհարը սպարապետի սիրուհին է (երեքն էլ հետաքրքրությունից քթերը կպցրին)։ Այդ հուրիմալաքը մի կերպ կարողացել է համոզել Մխիթարին, որ սա հաշտվի Բեկի հետ։ Չլիներ Գոհարը, Մարաղայի դաշտում թուրքը Դավիթ-Բեկին, աստված չանի, կջարդեր։ Բա՞, բանն այդպես է եղել։ Է՜հ, է՜հ, մարդ չի իմանում, թե որին հավատա, որին՝ ոչ։

— Բա՞...— բերանը լայն բաց արեց Ծատուրը։

— Բա ու ջան։— Գավաթը մոտեցնելով ժանգոտ ատամներին՝ քրքրջաց ծաղկատարը։— Հիմի էլ պարսից շահն է մոտեմոտ անում Դավիթ-Բեկին։ Չլինի՞ նորից գզվռտոց լինի, էլի սպարապետը խռովի Բեկից։

— Չէ, շահին երես չպետք է տալ,— տնքաց Սեմեոնը։— Ռուսի փեշը պետք է պինդ բռնել։ Ահա թե ինչ կասեմ։

— Ասում եմ՝ գնամ ռուսի հողը, գուցե կուշտիս հաց ունենամ,— խոսեց ծաղկատարը։— Ասում են՝ այնտեղ ապրուստն էժան է։

— Հա՛յ, հա՛յ...— գլուխը թափահարեց Սեմեոնը։— Փորդ հացուկդառնա, ո՞նց չէ... Երեք տարի չափչփել եմ ռուսի հողում։ Ջահել էի, խոջա Անձրևի մոտ ծառա էի։ Ա՜խ, ա՜խ... Մի շապիկացու կտավի համար վզակոթիս տվեց, դուրս արեց։ Ձեռքս գնացել էր կտավի վրա, մեղքս չեմ թաքցնում։ Հենց ռուսի հողումն էլ ինձ խրկեց՝ Արխանգել քաղաքում։ Երեք տարի քամու պես մահ եկա ռուսի հողում՝ ձեռքս պարզած, շլինքս ծուռ։ Աղքատ, սրբված ժողովուրդ է։ Բոյարները շներից վատթար են պահում խեղճերին։ Շունն ի՞նչ... Շների հետ փոխում են քրիստոնյաներին։ Գյուղերից փախչում են հյուսիսի անտառները։ Այնտեղ էլ էրվում են կրակի մեջ։ Մուժիկներին որ տեսնեք, սրտներդ կպատրվի, քաղցած են, բոբիկ։ Ա՜խ աստված...

Լռեցին։ Սեմեոնի ասածները ծանր տպավորություն թողեց։ Խոսք չգտան երկար ժամանակ։ Վերջապես մուրացկանն ասաց.

— Ինչ էլ լինի, պիտի հեռանամ, գնամ ռուսի երկիրը։ Քրիստոնյա տերություն է, թուրքի ահը չկա։

Նա երեսին խաչ հանեց ու վեր կացավ։

— Շե՜ն մնաք, զինվո՜ր եղբայրներ,— ասաց,— սրտանց շնորհակալ եմ։ Այսօր կուշտ կերա։ Պակասացրածիս մեկի տեղ աստված հազարը տա ձեզ։ Մութ է, գնամ գլուխ դնելու մի անկյուն որոնեմ...

Նա գնաց օրորվելով, երբեմն ինքն իրեն քրքջալով՝ չգիտես ինչուց։

— Ինչո՞ւ է պարսիկ խանին պահում պատվով,— անսպասելի ձեռքը սեղանին խփեց Սեմեոնը։— Չե՜մ ուզում, թող կորցնի, հեռացնի։— Նա պատռեց շապկի օձիքը։ Հարբել էր։

* * *

Մովսեսը դեսպանության առջև կյանքին տեղյակ էր պահում Դավիթ-Բեկին։ Հայտնում էր, որ Թահմազ Ղուլի Նադիր խանը տրտնջում էր, որ իրեն երկար են պահում Հալիձորում և կարծես մոռացել են. խանը իրեն վիրավորված էր զգում։ Հայ երևելիներից ոչ ոք չէր այցելում նրան։ Խանը խոցված ասել է. «Արդեն մի ամբողջ շաբաթ է, որ դուք ինձ փակված եք պահում ձեր բերդում։ Իսկ Դավիթ-Բեկն արժանի չի գտնում գոնե իմ երեսը տեսնել»։ Գազազել է, գոռացել պարսիկը։ Հայհոյել է սպասավորներին, թե ինչու հացը թարմ չեն տվել, մյուս օրվա թխածն է եղել։ Շեյխ Ուլ Իսլամը քրիստոնյաներից ոչ ոքի թույլ չի տա-

լիս մտնել իր օթևանը։ Ինքն է գնում շուկա, ձու առնում, եփում, ուտում։ Զզվում է մեր հացից։

Դավիթ-Բեկը Մովսեսին լսում էր գրեթե անտարբեր։ Պատվիրում էր խանի տրտունջները բանի տեղ չդնել։

— Ասա խանին, որ շուտով չեմ կարող ընդունել նրան, թող սպասի։

— Կասե՛մ,— ուրախացավ Մովսեսը. նա նույնպես տանել չէր կարողանում խանի գոռոզությունը։

— Ուրիշ ի՞նչ կա,— գլուխը բարձրացրեց Բեկը։

— Մշո սուլթան սուրբ Կարապետ վանքի վանահայրը հիսուն ձիավորով ու քառասուն ընտանիքով երեք օր առաջ հասել է Տաթև և եպիսկոպոսին խնդրել, որ իրեն գյուղատեղ տա։

— Ինչո՞ւ է եկել,— մռայլվեց Բեկը։— Ինչո՞ւ են դատարկ թողնում երկիրը։ Դա լավ չէ, Մովսե՛ս, լա՛վ չէ։ Երկիրը ժողովրդով է երկիր։ Թուրքերի ուզածն էլ այն է, որ Հայաստանը դատարկվի հայերից։ Աղե՛տ է։

— Հրաման տանք ե՞տ գնան,— հարցրեց Մովսեսը։

— Ո՞ւմ, մշեցիների՞ն։ Ո՛չ։ Կկորչե՛ն ճանապարհներին։ Մարդ ուղարկիր, թող բերեն, տեղավորեն Հարսենյաց գյուղում, ավերակը շինացնեն։ Հրովարտակ գրիր՝ հողով, ջրով, արոտով ու անտառով տուր նրանց։ Ուրի՞շ։

— Այս երեկո սուրբ Աստվածածին եկեղեցու մոտ գտնվող գինետանը մի կասկածելի շոփուռ է երևացել։ (Բեկը ցասկոտ նայեց Մովսեսին, սա գլուխ տվեց)։ Ո՛չ, թուրքերի կողմից ուղարկված լրտես չէ։ Անտուն, թափառական հայ է։ Տակից-գլխից խոսել է։ Ասել է, իբր թե քո և Մխիթարի միջև վեճ է եղել, և դրա պատճառը պարսիկ խաներն են եղել։ Զինվորներից մեկը հարբած դժգոհել է, թե ինչու ենք մենք պատվով պահում շահի դեսպանությունը։ Պահանջել է կոտորել նրանց։ Մաղկատարին բռնել ենք։ Պիտի փակել խոտորախոս լեզուն։

— Բաց թող,— ձեռքը թափ տվեց Դավիթ-Բեկը։— Թող գնա ուր ուզում է։ Այդպիսի բան եղել է։ Մեղք չունի։ Էլի՞ բան ունես։

— Աստվածատուր Համադանցի կաթողիկոսը վախճանվել է։

— Հա՛,— ոչ այն է ուրախացած, ոչ այն է զարմացած գոչեց Բեկը։— Աստված հոգին լուսավորի։ Եղած-չեղածը մի հաշիվ էր։ Ո՞ւմ են օծել տեղը։

— Կարապետ Ուլնեցի անունով մեկին։ Նաղաշ Հակոբը ներկա է եղել օծմանը։ Գնացել էր Էջմիածին՝ որդան կարմիր ու հին գրքեր բերելու։ Հակոբը բողոքել է կաթողիկոսին, թե ինչո՞ւ Սյունիքի եպիսկոպոսին ու Գանձասարի կաթողիկոսին չեն հրավիրել նրա ընտրությանը։

Ուլնեցին նրան վռնդել է ընդունարանից։ «Ես իմը չեմ համարում ապրստամբ ու ամբարիշտ արցախցիներիդ և սյունեցիներիդ»,— ասել է վեհը։

— Հա՞, ա՛...— դառն ժպտաց Բեկը։— Այդպես է, վատը գնում է, վատթարն է գալիս։ Թուրքերի դրածոն է, ի՞նչ էիր ուզում։ Միայն հիմա մեր Հովակից սրբազանն իրեն կուտի, հուսով էր, թե ինքը կաթողիկոս կդառնա։

* * *

Պարսից դեսպաններին Դավիթ-Բեկն ընդունեց միայն նրանց գալուց մեկ ամիս հետո։ Ընդունեց առանց փոքրիշատե հանդիսավորության։ Զորապետներն ու մելիքները պատերազմական ժամանակվա զենքով ու զգեստով էին միայն։ Ընդունելությանը ներկա էին Հայոց ժողովի նախագահին, այլև բազմաթիվ հարյուրապետներ, տասնապետներ, նույնիսկ հասարակ զինվորներ, վաճառականներ ու հոգևորականներ։

Թահմազ Ղուլի Նադիր խանը շփոթվեց, երբ Շեյխ Ուլ Իսլամի և դեսպանության քսան երևելիների ու նաֆռաշները շալակած պարսիկ զինվորների հետ մտավ Հայոց ժողովի կլոր սրահը։ Դռների դիմաց պարզ, անպաճույճ գահավորակին բազմած էր Դավիթ-Բեկը։ Խանն առաջին անգամ էր տեսնում այդ բարձրահասակ, ճերմակ մազմորուքունիքում։ Խանը գլուխ տվեց Բեկին։ Նրա կողքին կանգնած Մովսեսը հասկացրեց, որ մի քիչ էլ առաջ գնա։ Խանը մի քանի քայլ էլ արեց դեպի Բեկը։ Նրան հետևել ցանկացավ Շեյխ Ուլ Իսլամը, բայց Մովսեսը զզվանքով քաշեց նրա թևը...

— Պատշա՛ճ չէ,— ասաց պարսկերեն։

Խանը մոտեցավ Բեկին, խոնարհումներ արեց, գոտուց կախած ոսկեթել քսակի միջից հանեց ոլործուն, ոսկեհյուս թելերով կապված, մեծ կնիքով կնքված շահական նամակն ու, կպցնելով շրթունքներին և ճակատին՝ մեկնեց Բեկին։

— Ինքդ կարդա,— ասաց Դավիթ-Բեկը։

Թահմազ Ղուլի Նադիր խանը շփոթությունից քրտնեց։

— Թող ների ինձ մեծ իշխանը, որ ես գրել-կարդալ չգիտեմ։

Բեկի աչքերում մի ակնթարթ հեգնական կայծեր երևացին։ Նա անփութորեն վերցրեց ոլործուն թուղթն ու մեկնեց Մովսեսին։ Մովսեսը կանգնեց խանի կողքին ու իր թավշե ձայնով կարդաց.

«Հանուն գթառատ և ամենաողորմած աստծու։ Ո՞վ Ալի, ո՞վ Մուհամմեդ։ Իշխանությունն ալլահինն է. աստված նա է»։

Քար լռության մեջ գնալով ավելի բարձրանում ու հստականում էր Մովսեսի հաճելի ձայնը։ Մելիքներն ու զորապետները շունչները պահած լսում էին։

«...Հաղթական շահ Թահմազ՝ արքա Պարսից (Մովսեսը շինծու հազաց)։ Մեր խոսքը՝ առ քաջդ Դավիթ-Բեկ ու առ քաջ զորավարդ Հայոց, որ քեզ հետ են՝ ողջո՞ւյն։ Ով աստծու մարդու շահերը պաշտպանի, աստված նրան ամեն վտանգից կազատի։ Օ՜... բարձրագույն ալլահ, դու ես ամենից մեծասիրտն ու մեծահոգին։

«Իմ սիրելի եղբայր Դավիթ-խան (Մովսեսը նորից հազաց)։ Բազում-բազում անգամ ազդ եղավ մեզ քո քաջությունը, բայց հիմա մենք ոչ միայն լսեցինք, այլ ականատես եղանք ձերոնց մեծամեծ գործերին, որ դու մղեցիր իմ ու քո թշնամիների դեմ։ Այսօր դու դարձար քո աշխարհի տերը, որ մի ժամանակ մեզ էր պատկանում։ Այժմ ալլահի կամքով այդ աշխարհը հանձնում եմ քեզ՝ որդոց որդի անխափան իշխելու։ Դու եղիր նաև Արաքսից այդ կողմն եղած երկրների տերը և իշխիր քո կամքով ու խելքով։ Քեզ են հպատակ ոչ միայն Ղափանի և Ղարաբաղի տերերը, այլև իմ բարձրյալ կամքով քեզ եմ տալիս ձեր նախնի Բարկուշատը, Նախիջևանը, Երևանը, Գյոկչան, առհասարակ Քուռի ու Արաքսի միջև ընկած աշխարհները ողջ։

«Ուրեմն, երբայր իմ, ունեցիր գահ արծաթե, ածե մարգարտաշար վարսկալ և մատանի կրիր վարաղագիր։ Արքայական կամքովս հագիր կարմիր կոշիկ, ունեցիր ոսկե մական, որի վրա գրիր անունն ու պատիվը քո ցեղի։ Կտրիր քեզ համար դրամ՝ քո պատկերի դրոշմով։ Բազում ընծաների հետ քեզ եմ ուղարկում խաչվառ դրոշակ, նաև երկաթագամ ու բևեռապինդ սաղավարտ, բոցանշան թուր ևս ի սարսափ մեր թշնամիների։ Թող քո ձեռքից սատակե գազանն մարդախոշոշ ու անգառագեղ։

«Ազդ լինի նաև քեզ, իմ գահի ու գլխի անսուտ բարեկամ, իշխանաց-իշխան Դավիթ-խան, որ քեզ օգնական ուղարկած խոսրով ու Ասլամազ Ղուլի խաները պատժվեցին իմ հրամանով՝ պատերազմի ճակատը լքելու համար։ Որովհետև իմ թագավոր հայրը, որին թող աստված բնակեցնի ջեննաթի ամենազով տեղը, ասում էր. «Եթե դու պատահմամբ վիրավորանք ես հասցրել քո բարեկամին, ապա շտապիր ներողություն խնդրել նրանից»։ Ուրեմն մեծասիրտ եղիր և մոռացիր եղածը։

«Այժմ իմ շահական բերանով ես քեզ ասում եմ. ես արդեն ինձ հետ հիսուն հազար հեծյալ ու հետևակ մարդ ունեմ։ Պատրաստվում եմ գնալու Միր Մահմուդ ավղանի վրա՝ այդ ավազակին քշելու իմ հոր մայր քաղաքից ու փրկելու իմ պապերի գերեզմանները։ Ականջ արա

ինձ, եղբա՛յր իմ, Դավիթ-խան, և վերցրու քո զորքերն ու փութա գալ իմ տունը, որ բազուկ-բազկի քշենք, հեռացնենք անօրեն ամբարիշտին և այնուհետև կողք-կողքի, եղբայրաբար վայելենք՝ դու քո աշխարհը, ես՝ իմը։ Ահա իմ խնդիրը քեզ, եղբա՛յր իմ։

«Գիրս ավարտվեց հաջողությամբ։ Գրվեց Ջիան տարվա Ջումադի հինգերորդ ամսվա քսաներեքին մեր թագավորանիստ Թավրիզ քաղաքում։ Հիշիր, եթե քո բարեխոսությունն ու ողորմությունն ուղեկից լինեն մեզ՝ տիեզերքը պետք է իր ուսերին գցի հպատակության քղամիդը։

«Օ՜, Մուհամմե՛դ, օ՜, Ալի՜... Երկնքի թագավորության ծառա Շահ Թահմազ, սարուկ ութի և չորսի»[1]։

Մովսեսն ավարտեց արքայական թղթի ընթերցումը և, դա հանձնելով Բեկին՝ ետ-ետ գնաց, կանգնեց հարյուրապետների շարքում։

Սրահում ազատ շունչ քաշեցին։ Բոլորը նայում էին Բեկին։

Սա նստած էր առաջվա դիրքով՝ անշարժ։ Թահմազ Ղուլի Նադիր

Սա նստած էր առաջվա դիրքով՝ անշարժ։ Թահմազ Ղուլի Նադիր խանը եռում էր բարկությունից։ Կանգնած էին թողել իրեն, անպատվություն էր։ Աչքերը բարձրացրեց ու նայեց Բեկին։ Սարսուռ զգաց։ Բեկի հայացքի նման հայացք ունենում են միայն անապատի առյուծները։

— Ուրիշ ի՞նչ է պատվիրել իր դեսպանին վեհափառության աղբյուր շահը,— վերջապես հարցրեց Բեկը։

— Արեգակին համահավասարը քեզ ու քո երևելիների համար արքայական նվերներ է ուղարկել իմ ձեռքով,— պատասխանեց խանը և յուրայիններին ակնարկեց, որ բաց անեն նաֆռաշները։

Կապոցների միջից հանեցին մի եռագույն դրոշ՝ խաչվառության նշանով։ Խանը դրոշի մետաքսը թափ տվեց։

— Թող այս դրոշակը միշտ դեպի հաղթանակներ առաջնորդի ձեզ, հայե՛ր,— բարձրաձայն ասաց նա։

— Ամե՛ն,— միաբերան պատասխանեցին հայերը։

Շահը Դավիթ-Բեկի ու նրա բոլոր զորապետների համար մի-մի ձեռք թանկագին զգեստ և մեկական արաբական նժույգ էր ուղարկել։ Բացի բազմաթիվ զենքերից, սաղավարտներից, վարսակալներից, շահը Բեկին նվեր էր ուղարկել նաև մի ոսկե տուփ, որի մեջ դրված էին կապույտ գոհարից կերտած մի մատանի, մի կարմիր, խոշոր հակինթ, մի մարգարտե բարեմա, կրծքին կախելու համար ոսկե շղթայով մի գոհար։

Ընծաները բաժանեցին զորապետներին։ Սրանք լուռումունջ ընդունեցին ու նորից կանգնեցին իրենց տեղերը։ Դավիթ-Բեկն ասաց.

— Թող երկնային տերը հատուցի այն շնորհների համար, որ շահն

[1] Ակնարկում է Մուհամմեդի տասներկու օգնականներին։

արել է մեզ։ Այժմ պատվելի խանը թող հանգստանա երեք օր ևս, մինչև ես իմ երկրի մեծամեծների հետ որոշեմ, թե ո՞վ է այն առաջին արքան, որի կանչին պիտի գնամ իմ զորքերով՝ ռուսաց կայսրուհին, Ստամբուլի սուլթա՞նը, Միր Մահմուդ շա՞հը, թե՞ Թավրիզի շահ Թահմազը։

Այս ասելուց հետո Բեկն արագ կանգնեց ու գնաց դեպի կից սենյակը։ Զորապետների շարքը երկփեղկվեց, ու նրան շրջապատած՝ դուրս եկան սրահից։ Մովսեսը խանին հրավիրեց հետևել իրեն։

— Տեսա՞ք, տեսա՞ք ինչ շոքեց պարսից առյուծը,— դուրս գալով սրահից ուրախ գոչեց մելիք Շաֆռազը։— Թիակների վրա դրինք գոռոզին։

— Մարաղայի՛ արդյունքն էր,— պատասխանեց Տեր-Ավետիսը։

Զորավարներն սպասում էին, թե Բեկը Հայոց ժողովի ավագանու խորհուրդ կգումարի ու կքննեն շահի առաջարկները, բայց Բեկը կարծես մտադրություն էլ չուներ խոսելու նրանց հետ։ Անհանգիստ էր մանավանդ սպարապետը։ Ի՞նչ պատասխան կտա Բեկը դեսպանին։ Մի՞թե կհամաձայնի ու զորքով կգնա շահին օգնելու՝ Սպահանից Միր Մահմուդին հեռացնելու համար։ Մի՞թե։ Հավատը չէր գալիս, բայց և վրդովվում էր։ Բեկը նրա հետ անգամ խոսք չփոխանակեց շահի առաջարկների մասին։

Նշանակված երեք օրն անցավ։

Նորից հավաքվեցին այն սրահը, որտեղ ընդունել էին շահի դեսպանին։ Դեսպաններին բերին։ Սրանք մտան սրահ, գլուխ տվին Բեկին ու ձեռքները փորներին դրած՝ մնացին։ Դավիթ-Բեկը նայում էր ոտքերի տակ փռած գորգի ծոպերին։ Երկար լռեց՝ պահին հանդիսավորություն տալու համար։ Խանն ու հայ զորապետները շունչները պահած սպասում էին նրա խոսքին։ Վերջապես Բեկն աչքերը բարձրացրեց։

— Մենք սիրով ու հաճույքով ընդունեցինք շահ Թահմազի խոսքերն ու հրավերը, մե՛ծ դեսպան...

Խանի աչքերը շողացին։ Զորապետների արանքով անհանգիստ շարժում անցավ։ Սպարապետը հոնքերը կիտեց։ «Մի՞թե Բեկը վճռել է գնալ ու կռվել Թահմազի համար»,— դառնորեն մտածեց նա։ Բայց ժամանակ չունեցավ միտքն ավարտել, Բեկը շարունակեց՝ առարկություն չվերցնող ձայնով.

— Մեր երկու տերություններիս համար ռազմական դաշնը ձեռնտու է, մանավանդ, երբ իր տեղից ելել է օսմանյան բորենին և ձգտում է լափել մեր մարմինները։ Իմացի՛ր, մե՛ծ դեսպան, որ մենք դաշն ունենք

նաև ռուսաց կայսրուհու հետ։ Նա ևս մեզ հրավիրում է միանալ իր հետ ու գնալ իր թշնամիների վրա։ Մեզ նամակ էր գրել նաև Աբդուլլահ փաշան, խոստացել էր չմոտենալ մեր աշխարհի սահմաններին, եթե մենք չխանգարենք իրեն, թողնենք, որ նա հեշտությամբ մտնի ձեր աշխարհը ու տեր դառնա Պարսկաստանին։ Մենք մերժեցինք փաշայի դաշնը, և արդյունքը եղավ Մարաղան։

Բեկը խոր շունչ քաշեց, դեմքն ակամա ծռմռվեց վերքի ցավից, նույնիսկ մի փոքր գունատվեց։ Դա անհանգստացրեց զորապետներին։ Բայց Բեկն ուսերը շտկեց և խոսքն առաջ տարավ ավելի ազդու ձայնով։

— Մեր սրտերն ուրախությամբ լցվեցին, երբ կարդացինք շահի գիրը։ Մենք պատրաստ ենք ռազմական դաշն կնքելու ձեզ հետ, պարսիկնե՛ր...

Դեսպանը ցնծությունից այնքան շփոթվեց, որ նույնիսկ մի քայլ առաջ եկավ ու խոր գլուխ տվեց Բեկին։

— Օ՜... տիեզերքի տակ դժվար թե քեզ նման մի ուրիշ իմաստուն այր էլ գտնվի, տե՛ր Դավիթ-Բեկ խան։

Բեկը չնայեց յուրայիններին։ Դիտեր, որ նրանք սաստիկ դժգոհ են իր ասածներից։ Երևի սպարապետը նորից է մտածում հեռանալ Հալիձորից։ Բեկը շեշտակի նայեց ուրախությունից իրենց կորցրած խանին։

— Մենք մեր զորքերը կմիացնենք շահի բանակին...

— Տե՛ր Դավիթ-Բեկ,— լսեց սպարապետի երերուն ձայնը։

Մելիքների խմբի մեջ շշուկ անցավ։

Բեկը չլսելու տվեց սպարապետի ասածն ու շարունակեց.

— Ես շահի հետ զինակից կլինեմ (հապաղեց փոքր-ինչ)։ Բայց պայմանն այս է, արժանագո՛ւյնդ դեսպան։ Թող շահ Թահմազն իր զորքով անցնի Արաքսը, գա մեր երկիրը, որ միասին գնանք Նախիջևանն ու Երևանը թուրքերից ետ առնենք։ Հենց որ ասածս ողորմությամբ միացյալ ուժերով մենք Նախիջևանից ու Արարատյան դաշտից դուրս մղենք թուրքերին, այն ժամանակ կգնանք Սպահանի վրա,— նա դարձավ զորապետներին։— Այդպե՞ս է, տե՛ր զորապետներ։

— Այսպես է,— պոռթկուն ցնծությամբ պատասխանեցին բոլորը, և ամենից բարձր հնչեց սպարապետի ձայնը։

Խանը գունաթափվեց։ Նրա շրթունքները դողում էին, ծնկները ճռճվում։

— Բայց շահը չի կարող Միր Մահմուդին թողնել իր թիկունքում ու զորքով գալ ձեզ օգնության, մե՛ծ իշխան,— ասաց նա։— Դա վտանգավոր է գահի համար։

— Իսկ ինչպե՞ս կարելի է թուրքերին թողնել մեր թիկունքում ու

գնալ ձեր աշխարհի խորքերը՝ Սպահանի վրա,— դաժան ժպտաց Բեկը։— Դա կրկնակի վտանգավոր է։ Թուրքերը կխուժեն Սյունիք ու Ատրպատական, հենց որ մենք հեռանանք մեր աշխարհից։ Երեխայի համար անգամ պարզ է դա։

— Շահը օգտակար չի խորհում, տե՛ր դեսպան։ Երկու ճակատով կռվել չի՛ լինի,— միջամտեց Մխիթար սպարապետը։— Մի՞թե ձեզ հայտնի չէ, որ Միր Մահմուդը պալատական կռիվների մեջ կորցրել է գլուխը։ Այժմ նրանից սակավ վտանգ կա։ Մեծ վտանգը Թուրքից է։ Եկեք նախ Թուրքի հետ վերջացնենք բանը, հետո գնանք ավղանի դեմ։ Այսպե՞ս կարելի է փրկել Թահմազի գահը, այլապես նա կկործանվի։

Դեսպանները կարկամել էին։ Նրանց շփոթությունը չնկատելու տալով՝ Բեկը նորից խոսեց.

— Հայտնեցեք տիեզերքի աղոթարան շահ Թահմազին, որ ես նրան ու նրա զորքին սպասում եմ Ջուղայի կամրջի մոտ՝ Արաքսի կիրճում։ Թող շնորհ անի գալ, և մենք մեր երկրի սահմանագլխին կկռենք հավիտենական եղբայրության դաշնը ու կգնանք Թուրքերի դեմ։ Այս է մեր պատասխանը բարեգութ շահին։

Բեկը վեր կացավ։ Բոլորը, նույնիսկ միջատներից նեղվող Շեյխ Ուլ Իսլամը հասկացան, որ Բեկը խորամանկ կերպով մերժեց շահի առաջարկը։

Նույն օրը Մովսեսը պարսից դեսպաններին զգուշությամբ հասկացրեց, թե ժամանակն է, որ նրանք վերադառնան իրենց աշխարհը։

Մինչև Արաքս պարսիկներին ճանապարհ դրեց միայն Եսային մի հարյուրյակով։

Գահի աստիճանավոր ոտքերի տակ, թանկագին գորգերի ու առյուծի մորթիների վրա թիկնած շահ Թահմազի դեմը կանգնել էր Թահմազ Ղուլի Նադիր խանը և պատմում էր դեսպանության արդյունքները։

— Մեզ ընդունեցին տհաճությամբ, արեգակի՞ն փայլ տվող շահ,— ասում էր նա՝ մեջքից կորացած։— «Ինձ ռուսաց կայսրուհին է կանչում,— ասաց հայերի իշխան Դավիթ-Բեկը։— Ինձ Ստամբուլից են նամակ գրել»,— ասաց։ Մի ամիս գրեթե բանտարկած պահեց մեզ։ Նույնիսկ մեր շռայլ նվերների փոխարեն մի քոռ շահի[1] չտվեց քո զորապաններին։

[1] Մանր դրամ։

— Հետո՞,— ետ-ետ գնալով դեպի գահը՝ հարցրեց Թահմազը։

— Ես շահի հետ զինակից կլինեմ միայն այն պայմանով,— ասաց,— որ շահն իր զորքերով և իր ոտքով գա իմ աշխարհը, և միասին գնանք Նախիջևանում ու Երևանում նստած Թուրքերի վրա։

— Ե՞ս,— խելագարվեց շահը։— Ե՞ս գնամ գյավուր հայի ոտքը։ Ստորանա՞մ... Ինչպե՞ս համարձակվեց, ինչպե՞ս մերժեց իմ հրավերը։ Հը՞մ... Հասկանում եմ, նա ուզում է ինձ հանի Թուրքի դե՞մ, որ ուռուսները գործը հեշտացնի։ Օ՜... շեյթա՜ն, շեյթա՜ն... Որտեղի՞ց է այդ գյավուրին այդքան խելք,— ծառս եղավ տեղն ու մագիլները խրեց խանի օձիքը։— Ո՛ւղտ, ավանա՛կ... Ինչպե՞ս չկարողացար խաբել գյավուրներին։ Ինչո՞ւ մելիքներին չկաշառեցիր, ինչո՞ւ...

— Օ՜... Ալլահի՛ ստվեր, օ՜, բարեգո՛ւթ տեր,— շոքեց խանը։— Այդ հայերն ուրիշ տեսակ հայեր են, ուրի՛շ։ Ամեն ինչ խոստացա, բայց ո՞ւմ, ո՞ւմ...

— Ջքվի՛ր,— խռխռաց շահը։

Խանը ետ-ետ գնալով՝ դուրս պրծավ սրահից։

ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԸ

Առաջին ձյունը եկավ նոյեմբերի վերջին։ Եկավ աննկատելի, գիշերը։ Առավոտը, երբ հալիձորցիներն արթնացան, բակերում ու տների կտուրներին նկատեցին ձյան անաղարտ սավանը։ Բայց հենց որ արևը հասավ քաղաքին, ձյունն սկսեց հալվել, պատերը թրջվեցին, փողոցներում ջրափոսեր գոյացան։

Թեև օրը պայծառ էր, և առաջին ձյունն իր հետ թարմ զվարթություն էր բերել, սակայն Հալիձորում ոչ ոք ուրախ չէր։ Բոլորին հայտնի էր, որ Դավիթ-Բեկի վերքը բացվել է, ու նրա վիճակն օր-օրի անհուսալի է դառնում... Մարդիկ փողոց դուրս գալով՝ ամենից առաջ միմյանց հարցնում էին.

— Ինչպե՞ս է Բեկը։

— Հույսը քիչ է,— պատասխանում էին տխուր։

Շուկայում ու կրպակներում խոսում էին ցածրաձայն։ Կանայք քիթ-քթի, վախաշշուկ զրուցում էին աղբյուրների մոտ, եկեղեցիներում։ «Տե՛ր Հիսուս-Քրիստոս, դո՛ւ մեր կյանքից կտրիր ու նրան տուր, խե՛ղճ ենք»։— Աղոթում էին պառավները։ Մեծ վիշտը նույնիսկ համակել էր

երեխաներին։ Մովսեսը փակել էր իր դպրոցը և տիվ ու գիշեր Բեկի տանն էր գտնվում։

Տեսնելով, որ մահն օրավուր մոտենում է Դավիթ-Բեկին, Մխիթարը Հալիձոր հրավիրեց բոլոր մելիքներին ու իշխաններին։ Սրանցից շատերը եկան իրենց կանանց հետ։ Սուրբ աստվածածնի տաճարում Հովակիմ եպիսկոպոսն ամեն առավոտ ու երեկո մաղթանք էր կատարում։

Բեկի տանը ոչ ոք չէր քնում։ Ագուլիսցի ծեր վիրաբուժը չէր հեռանում Բեկի մոտից։ Մերձավորները նրա դեմքին կարդում էին ծանր դժբախտության մոտենալը։

Նոյեմբերի վերջին, շաբաթ օրվա կեսօրին Բեկն իրեն անհամեմատ լավ զգաց։ Նա պատվիրեց իր մոտ հրավիրել մելիքներին ու զորապետներին։ Մովսեսն արցունքն աչքերին դուրս եկավ։ Հասկացավ՝ Բեկն ապրում է իր կյանքի վերջին պահերը և ցանկանում է հրաժեշտ տալ յուրայիններին։

Հիվանդի սենյակը լցվեց մարդկանցով։ Բեկի մոտ նստած էին նրա հորեղբորորդի մելիք Փարսադանյան Բալի զորապետն ու վիրաբույժը։ Մի անկյունում որբի պես կուչ էր եկել Սողոմոնը։ Բեկը պառկած էր փայտե լայն մահճակալին։ Գլխաբաց էր. ճերմակ մազերն անփութորեն թափվել էին բարձերին, ձեռքերը թույլ-թույլ հանգչում էին վերմակի վրա։ Նրա դեմքը նիհար էր, բեղերը թոշնել էին, բայց և այնպես այդ հալված դեմքի վրա դեռ մնացել էր մի սրբազան վեհություն և մի երանելի անդորր։ Աչքերն արտակարգ բարի էին՝ թեթև թախիծով համակված։

Բեկը թույլ տվեց, որ բազկակիցները համբուրեն իր ձեռքը։ Այդ պահին մի մեղմ ժպիտ գծագրվեց նրա ներս ընկած բերանի անկյուններում։

— Աստված ինձ կանչում է իր երկնային տունը,— երբ բոլորն արդեն եկել էին՝ դանդաղ ասաց նա։— Ահա ես հրաժեշտ եմ տալիս ցավերով ծանրացած այս աշխարհին։ Գնում եմ՝ բոլորիցդ գոհ։

Սողոմոնը փղձկաց։ Մելիք Եգանի աչքերից թափվեցին անզուսպ արցունքներ։ Բեկը նկատեց յուրայինների վիշտն ու գլուխը բարձրացրեց։

— Չի՛ հարկավոր։ Ո՛չ արցունք, ո՛չ լաց։ Լացի օր չէ։ Մեր լացը վերջացա՜վ... Թող լաց լինի թույլը, անուժը։ Մի՛ մոռանաք, որ մենք մեր զորությամբ ետ մղեցինք մեր երկրի թշնամիներին։ Կատարվել է այն, ինչ անհնարին էր թվում դարեր...

Լռեց. նշան արեց, որ ջուր տան։ Խմեց ախորժակով։

— Լսեցեք սիրելինե՛րս,— շարունակեց դանդաղ,— ես ձեզ կանչել եմ իմ վերջին խոսքն ասելու։ Արյունով ձեռք բերած ազատությունը երկար չի տևի, եթե թուլանա պայքարի ոգին, խախտվի միաբանությունը։ Միաբանությունն աղբյուր է ամեն բարիքի, անմիաբանությունը եղծիչ է, բարի գործն սպանող։ Մեր հին թագավորությունները կործանվեցին, որովհետև մեր ժողովրդի տերերի միջից վերացավ միաբանությունն ու սերը, որով զորացել էին մի ժամանակ։ Թշնամիները մասամաս անելով մեզ, հոդ-հոդ բաժանեցին։ Այժմ դուք, վերին խնամոց օգնությամբ, զերծ եք այդ սպանիչ ախտից։ Գտեք, ոչնչացրեք նրանց, որովքեր կփորձեն անմիաբանության ախտով վարակել ձեզ։ Այս իմ առաջին խոսքն է։ Ապա մի՛ հավատաք կեղծավոր թշնամիներին, որոնք բարեկամ կձևանան ձեզ՝ ձեզ մոլորեցնելու համար։ Բավակա՜ն է, մենք շատ ենք խաբվել կեղծավորներից...

Բեկը փորձեց բարձրանալ. սպարապետն ու վիրաբույժը բարձեր դրին նրա մեջքի տակ։ Մելիքները շունչները պահած նայում էին նրան։ «Ո՞ւմ կթողնի իրեն հետնորդ»,— մտածում էր մելիք Բարխուդարը։

— Պատուհանը բաց արեք,— խնդրեց Բեկը։— Այդպե՜ս։ Այժմ ես մեր երկիրը թողնում եմ ձեզ, սիրելինե՛րս։ Արթո՛ւն հսկեցեք նրա սահմանները։ Ձեր ձեռքը բաց չթողնեք ռուսի փեշից։ Նրան խանգարեցին, չկարողացավ գալ մեզ օգնության, բայց կգա։ Միայն չլսեք անխոհեմներին, չթողնեք բարին։ Մեր հույսի աստղը նա է՝ Ռուսաստանը։ Այս էլ ականջներիդ օղ արեք, հայե՛ր... Պարսիկի հետ երեք հպարտ ու անզիջում։ Նրա մեջքը կոտրված է։ Նրանից քիչ վտանգ կա։ Մեր մահացու թշնամին Թուրքն է՝ Ստամբուլը, օձաբարո սուլթանը։ Վագր է նա՝ արյունարբու և անգութ։ Եթե մեր խեղճ ազգի գլխին, աստված հեռու պահի, մի սոսկալի աղետ գա, նրանից կգա, իմացե՛ք։ Երբեք չհավատաք բռնակալին, չհավատա՜ք... Մեր լեռնաշխարհը պատնեշ է նրա առջև։ Մենք խանգարեցինք նրան, որ սրընթաց մխրճվեր Դերբենդի դուռը և ռուսներին հեռու վաներ այնտեղից։ Ամուր պահեցեք այս լեռնաշխարհը, որ ռուսը մոտ լինի մեզ։ Իսկ ռուսը կգա։ Իմացե՛ք։

Խոր շունչ քաշեց, լռեց, մեկ-մեկ նայեց յուրայիններին, ու նորից մի անգույն ժպիտ անցավ նրա դեմքով։ Գլուխը բարձրացրեց։

— Եվ քանի որ ես մերձ եմ ի վախճան, ապա կասեմ վերջին պատվիրանս՝ հանապազ կազմ ու պատրաստ պահեցեք մեր մշտական զորքը։ Երկիրը կապրի կանոնավոր, մշտական զորքով։ Այնպես արեք, որ բան դրոշակ ունենաք՝ յուրաքանչյուր դրոշակի տակ հազար մշտական ծառայության զինվոր։ Երբեք զորքը չցրեք. չխեղճանաք թշնամու առաջ, նրան ցույց տվեք, որ դուք էլ պատառոտող մագիլներ ունեք և կարող եք կոնչալ արծվի պես...

Երկար խոսեց Դավիթ-Բեկը. շուտով նրա ձայնը նվաղեց, և նա գլուխը դնելով բարձին՝ աչքերը փակեց ու սկսեց շնչել ծանր, ընդհատվող։ Մելիք Բարխուդարը հազիվ էր զսպում ճիչը. «Ասա, ո՞ւմ ես կտակում իշխանությունդ, Դավի՛թ...»։ Բայց ճիգով զսպում էր իրեն։

Վիրաբույժը խնդրեց, որ բոլորը դուրս գան։ Բեկի մոտ մնացին միայն սպարապետն ու Հովակիմ եպիսկոպոսը։ Դրսում ծովացել էր ժողովուրդն ու զորքը։ Ոչ ոք չէր խոսում, միայն երկյուղով նայում էին մոլոր կանգնած մելիքներին։ Շատերն անձայն արտասվում էին, ոմանք չոքել էին թաց գետնին ու աղոթում էին։ Պատշգամբի մի անկյունում խոնվել էին մելիքների ու զորապետների կանայք։ Նրանց առջև կանգնած էր Սաթենիկը։ Նրա հետ էին նաև Վարդ-խաթունը, Գոհարը, Պղինձ Արթինի մայրն ու կինը։ Բոլորն էլ սևազգեստ էին, լաց եղած աչքերով...

Երեկոյան, երբ արևը մայր էր մտնում, Բեկի սենյակից դանդաղ դուրս եկավ Հովակիմ սրբազանը։ Նա ձեռքերը տարածեց դեպի խոնված ժողովուրդը ու խեղդված ձայնով գոչեց.

— Սգա՜, որբ ու անտեր ժողովուրդ հայոց, քո փրկիչ Դավիթ-Բեկը համբարձվեց դեպի կոչնատերը։ Ընկավ սյունն Հայոց աշխարհի։ Ջարդվեց անդրդվելի վեմն։ Հանգավ մեր թշնամիների անվախ ախոյանը...

Պապանձված ամբոխը հանկարծ մոնչաց, տատանվեց... Հազարավոր մարդիկ թափվեցին գետնին։ Եկեղեցիների զանգերն սկսեցին հառաչել։ Տները դատարկվեցին։ Արևը հանգավ Կապույտջիղի վրա, և լեռնաշխարհը թաղվեց խավարի մեջ...

***

Երբեք Հալիձորում այդքան ժողովուրդ չէր հավաքվել։

Չնայած վրա հասած ցրտերին, լեռնաշխարհի բոլոր գյուղերից, ավաններից ու քաղաքներից տասնյակ հազարներով մարդիկ էին շտապում դեպի Հալիձոր։

Հայ ժողովուրդը գալիս էր իր զորավարին ուղեկցելու դեպի գերեզման. հրաժեշտ տալու այն մարդուն, որ փոթորկի պես մրրկեց իրենց լեռնաշխարհում, դարձավ Հայոց երկրի թշնամիների սարսափը։

Քաղաքի հրապարակում, շուկաներում, պարիսպներից դուրս՝ անտառներում ու ձորերում անհաշիվ ժողովուրդ էր կուտակվել։ Եկել էին երկրի ամենահեռավոր գավառներից անգամ՝ Սևանի ափերից, Վասակաշենից, Քաշաթաղից, Որդուվարից։ Եկել էին Արցախի զորավար Հովհաննես-Ավան իշխանը, Ջրաբերդի մելիք Միրզան, Խաչենի Թարխան ու Եգան զորապետները, Վարանդայի մելիք Բաղրը, եկել էր նույնիսկ

Շամախու պարոն-տեր մելիք Հայկազը (մելիք Մուսու հորեղբայրն էր) և շատ ուրիշ երևելիներ։ Հիվանդության պատճառով Հալիձոր չէր եկել Եսայի Հասան Ջալալյան կաթողիկոսը, սակայն վեց եպիսկոպոս ու երեսուն վարդապետ էր ուղարկել Դավիթ-Բեկի թաղմանը։

Մռայլ, ամպամած օր էր։ Ձորերում նստած ձյունը հալվել էր, քաշվել դեպի լեռնագագաթները։ Երկինքը գորշ էր, անհրապույր։

Ժողովուրդը կուտակվել էր Հալիձորի մայր եկեղեցու առջև. հորձանք էր տվել, խցկվել նեղ փողոցները։ Լուսաբացին սկսված Բեկի հոգեհանգստյան պատարագը տևեց մինչև կեսօր։ Եպիսկոպոսներն օծեցին Բեկի մարմինը և ամփոփեցին դագաղի մեջ։ Վերջապես տաճարի մայր դռնից հոսեց խաչվառների, ջահերի, խաչերի, դրոշակների ու սրբապատկերների անտառը։ Ճերմակ ժամաշապիկներ հագած, գլխաբաց աբեղաների բազմությունը ճեղքեց ամբոխի պատն ու «Ընկեցելոց» երգելով՝ գնաց դեպի հրապարակ։ Սգո զգեստների մեջ եկել էին նաև Մովսեսի դպրոցի սաները։

Յոթանասունհինգ քահանա խունկ էին ծխում և մեղեդիներով, աղոթքներով ու արցունքներով ուղեկցում սգո թափորը։ Նրանց ետևից գեհանգստյան պատարագը տևեց մինչև կեսօր։ Եպիսկոպոսներն օծեցին Բեկի մարմինը և ամփոփեցին դագաղի մեջ։ Վերջապես տաճարի մայր դռնից հոսեց խաչվառների, ջահերի, խաչերի, դրոշակների ու սրբապատկերների անտառը։ Ճերմակ ժամաշապիկներ հագած, գլխաբաց աբեղաների բազմությունը ճեղքեց ամբոխի պատն ու «Ընկեցելոց» երգելով՝ գնաց դեպի հրապարակ։ Սգո զգեստների մեջ եկել էին նաև Մովսեսի դպրոցի սաները։

Յոթանասունհինգ քահանա խունկ էին ծխում և մեղեդիներով, աղոթքներով ու արցունքներով ուղեկցում սգո թափորը։ Նրանց ետևից գնում էին պատշաճ զգեստավորված տասներկու եպիսկոպոս։ Նրանք շարվել էին ըստ ավագության՝ Հովակիմ սրբազանին տեղ տալով դագաղի գլխավերևը։ Հարյուրից ավելի հոգևորականներ, դարձյալ ավագության կարգով, շուրջառ ձգած շարվել էին մի փոքր ետ։ Ձորս հողի դագաղի վրա բարձր պահում էին սև ժապավեններով եզերված ամպհովանի։

Երկու ալեհեր զինվոր դագաղի առջևից տանում էին Բեկի սաղավարտն ու գլխարկը։ Մի քանի աբեղաներ ետ-ետ գնալով, երեսները դեպի դագաղը դարձրած՝ խնկարկում էին։ Տխուր հնչում էին սաղմոսները։

Թաղման թափորն անցավ հրապարակը, մոտեցավ քաղաքի դռներին ու ալիք տալով՝ դուրս եկավ, հոսեց դեպի Կապանի հռչակավոր Վահանավանքը, որի գավթում թաղված էին Սյունիքի թագավորները։

Հալիձորի Երկրի ապավեն գունդը զինավառ ուղեկցում էր սգո թափորին։ Զինվորներն իրենց գլխարկներին, նիզակների ու հրացանների ծայրերին սև ժապավեններ էին կապել։ Բեկի երկար տարիների սպա-

սավոր Սողոմոնը սանձից բռնած տանում էր իր տիրոջ նժույգը։ Բարձրահասակ նժույգը զարդարված էր սև դիպակյա թիկնափոկերով, ականջների վրա ճոճվում էին երկու կարմիր սուլթան։ Նրա փորքաշներից իջնում և գրեթե գետնին էր հասնում վեց գունագեղ փունջ։ Նժույգը ևս տխուր էր։ Երբեմն նա թույլ վրնջում էր, և նրա կոպերի արանքում արցունքի կաթիլներ էին երևում։ Նա իր դատարկ թամբին տանում էր միայն Բեկի ոսկեթել պատմուճանն ու սև այծենակաճը։

— Մենք մեր հույսն ենք տանում թաղելու, Թովմա՛,— խեղդված ձայնով ասաց Եսային կողքից գնացող հարյուրապետին։

— Հա՛, հա՛,— հառաչեց Թովման։— Մի Դավիթ-Բեկն էլ հերիք էր, որ մեղանում ամեն ոք պարծանքով ասեր. «Ես հայ եմ»։ Հիմա որբացա՛նք...

Զորի գյուղերում սաստկացան եկեղեցիների զանգերի զողանջները։ Այդ նույն պահին սուգ էր անում Սյունիքը, Արցախը։ Սգում էին հայոց բոլոր գյուղերը։

Թափորի վերջում գլխաբաց գնում էր հետևակ զորքը։ Նրանք իրենց հետ տանում էին տասներկու սև նժույգ, որոնց թամբին հարմարեցրել էին հանգուցյալի զգեստները, զենքերը, վահանը, զրահը, այն թուրը, որով նա սկսել էր իր մեծ գործը։ Յուրաքանչյուր նժույգի աջ և ձախ կողմից նրա ասպանդակները բռնել էին սև հագած, կուրծքները բաց երկուական ռազմիկ։ Զորս հարյուրապետ կարմիր թավշե բարձերի վրա տանում էին Դավիթ-Բեկի ավազանի խաչը, Գանձասարի կաթողիկոսի նվիրած մատանին, իր ռազմական օգնությունների համար վրաց գահակալներից նվեր ստացած ժապավեններն ու ասպետական նշանները։

Նժույգները տանող զինվորների հետ էին նաև Նաղաշի սաներն ու Ահարոնը։ Թաղման թափորի շքեղությունը երկյուղածությամբ էր լցրել պատանի Ահարոնի սիրտը։ Հանդիսավորությունն այնքան խոր էր ու վեհ, որ նա երբեմն երեսին խաչ էր հանում։

Ամենից բարձր լսվում էր Զարմանդի սրտակեղեք ողբը։ Հանկարծ զույգ ձեռքով նա խփում էր երեսին. նրա դեմքն արյունոտվել էր։ Երեսները ծվատում էին նաև նրան ուղեկցող գեղջուկ կանայք։ Նրանց անզուսպ ողբ ու կականից դղրդում էին լեռներն ու ձորերը։ Թվում էր, թե նրանց հետ ողբում է ուշ աշնան խամրած գույներով պատած լեռնաշխարհը։

Երբ սգո թափորը դուրս եկավ ձորից ու հասավ մի փոքրիկ տափարակի, Զարմանդն ու նրան շրջապատող ողբասաց կանայք հանկարծ արձակեցին իրենց կտավի երկար գոտիներն ու թափորի առջևն ընկնելով մի տարօրինակ պար սկսեցին։ Պարում էին խելահեղ շարժումներով, ծվատում իրենց կրծքերը, խփում գլխներին ու միաժամանակ աղաղակում սրտակեղեք.

«Բոցե՛ր ժայթքիր, ո՞վ Արամազդ.
Զոհիդ արյունն առ քո սրտին...»։

Նրանց միացան մոտիկ գյուղերից եկած բազմաթիվ կանայք։ Նրանց կականից սարսռացին նույնիսկ տարիքավոր շինականներն ու զինվորները։ Գեղջուկ կանայք պտտվում էին մրրիկի պես, ծեծում իրենց կրծքերը, և երեսները ծվատելով՝ կրկնում զարհուրաձայն.

«Դև՛ Արամազդ,
Խև՛ Արամազդ...»։

Ամբոխը սկսվում, սարսռում էր դրանից։ Ահաբեկված հոգևորականները կտրեցին իրենց սաղմոսները, վարդապետները կատաղեցին, եպիսկոպոսների դասի մեջ խլրտում ընկավ։

— Հեթանո՞սը...— մոնչաց Հովակիմ սրբազանը ու գավազանն օդում տնկած՝ գնաց Մխիթարի մոտ։— Տեսնո՞ւմ ես,— հարցրեց ցասկոտ։

— Հանգստացի՛ր, սրբազա՛ն,— կամաց ասաց Մխիթարը։

— Հեթանոսը գլուխ է բարձրացնում, ես ափիբերան հանգստանա՞մ,— չարացավ ծերունին։

— Բայց հիմա պահը չէ հեթանոսի գլխին գավազան շարժել, սրբազա՛ն, խոհեմ եղիր, չնկատելու տուր, և թող ամեն ոք իր ուզածի պես հարգի հանգուցյալի հիշատակը։

Թեև սրբազանը ստիպված լռեց, բայց կատաղությունից ցնցվում էր նրա մորուքը։ Այնինչ, իրար ձեռք-ձեռքի տված կանայք շարունակում էին իրենց հեթանոսական սուգ-պարը՝ մեծ վշտից ինքնամոռաց, անգիտակից։ Շուտով նրանց միացան նաև հարյուրավոր գեղջուկ տղամարդիկ։ Զինվորներից շատերը ևս Ծատուրի, Սեմեոնի, Վեցկի Մարգարի հետ թռան, խռնվեցին գեղջուկներին ու սկսեցին ողբ-պարը։ Տղամարդկանց ողբն ավելի սոսկալի էր։ Նրանք մոնչում էին կատաղի ցուլերի պես, ճանկռոտում հողը, բուռ-բուռ նետում իրենց գլխներին, մուրուքները փետում, ապա քորերով խփում իրենց կրծքներին։ Շատերը թավալվում էին հանգուցյալի դագաղի առջև ու նորից հող տալով գլխներին, գոչում.

«Գի՛նն առ, գի՛նն արյան,
Սև՛ Արամազդ, Դև՛ Արամազդ...»։

Հեթանոսական այդ զարհուրելի ողբագնան, բարեբախտաբար, շուտ վերջացավ։ Վանական հայրերն արդեն պատրաստ էին թափվել կանանց ու գեղջուկների վրա։ Մխիթարն այլևս անզոր էր զսպել Հովակիմ եպիսկոպոսի բարկությունը։

— Էլի հեթանոսը գլուխ հանեց։ Անիծյալ դև՜ը... Հալածեցե՛ք չարին...— գավազանը ճոճելով՝ գոչում էր նա։

Լռեց, երբ սգավորները դադարեցրին պարը։ Արյունլվա, ծվատված, հևալով ու հառաչելով նրանք նորից միացան թափորին։ Ոչ ոք չէր սրբում դեմքի ու կրծքի արյունը։ Նրանց արյունլվա տեսքը սարսուռ էր պատում։

Հոգևորականները սկսեցին կատարել Մաշտոցի հանգիստը։ Գեղջուկները չարախիզ նայեցին նրանց։ Բայց արդեն կատարել էին իրենցը, որ դարեր առաջ թեև խլել էին իրենցից, բայց դեռ հետքերը մնացել էին ժայռերի ծալքերում ու մթին անտառներում կորած գյուղերում։

Արևը թեքվում էր արդեն, երբ թաղման թափորը հասավ Վահանավանք։ Վանքի գմբեթը կիսով չափ կործանված էր. նրա մի պատառ ցցվածքին դեռ կախված էր այն պղնձե խաչը, որ իր ձեռքով տնկել էր Ստեփանոս Օրբելյան եպիսկոպոս պատմիչը 1293 թվականին։

Վանքի գավթում բարձրանում էին Սյունյաց թագավորների խաչգերեզմանաքարերը։ Նրանց շուրջը եղած խոտը խամրել էր, հողը՝ իջել, ու գերեզմանաքարերից շատերը թեքվել էին՝ իրենց մամուռների տակ խնամքով պահելով վիմագրերը։

Սմբատ արքայի գերեզմանի մոտ էր փորված այն փոսը, որ իր մեջ պիտի ամփոփեր Հայոց նորոգ իշխանության ստեղծողի՝ Դավիթ-Բեկի դին։ Երկու գերեզմանափոր ռամիկներ բահերը ձեռքներին կանգնել էին սեահողի մոտ և տխուր, կարծես խուլ ձորը դղրդացնող ձայներին՝ նայում էին իրենց փորած փոսին։ Փոսի մոտ դեռևս մի քանի կանաչ տերև ճյուղերին, կուչ էր եկել մասրենու մի փոքրիկ թուփ։

Մեկ անգամ էլ Մաշտոցի հանգիստը երգելուց հետո Դավիթ-Բեկի դագաղը մոտեցրին բուն տաճարի դռանը։ Մովսես աբեղան բարձրաձայն արտասանեց.

— «Բացեք ինձ զդրո՜ւնս...»։

Վահանավանքի դռները բացվեցին։ Թափորը մտավ տաճար։ Բեկի դագաղը դրին բեմում, նախօրոք պատրաստած աստիճանավոր, բարձր ու սև թավիշով պատած սեղանին։ Նրա երկու կողմերին դրված էին արծաթե մեծ ու փոքր աշտանակներ՝ վառ կերոններով։ Բեկի կրծքին դրին մի հինավուրց ավետարան։

Հոգեհանգստյան պատարագ մատուցելուց հետո Բեկի մարտական ընկերները նրա դին հանեցին տաճարից ու դրին գերեզմանափոսի եզերին։ Լեռնալանջն ու վանքին հարակից ձորերը բռնած ժողովուրդը պարանձվել էր։ Հետզհետե պատռվեց երկնքի գորշ վարագույրն ու ամպերի ճեղքերից արևի ճառագայթների մի քանի խուրձ ընկան Վահանավանքի կոտրած գմբեթին, խաչքարերին ու անդունդի վրա կախված թղենու ամոխրագույն ճյուղերին։ Մի երկու շող էլ ծաթեցին Դավիթ-Բեկի սառած դեմքին։ Հուղարկավորներից շատերին թվաց, թե լույս է ճառագում նրա հավիտենական փակ աչքերից։

Հովակիմ եպիսկոպոսն իր ծերունական ձայնով սկսեց կատարել թաղման արարողությունը։ Բաց գլուխների անտառը խիտ-խիտ ծածկել էր շրջապատը։ Կանայք բոլորել էին Բեկի դագաղն ու կական էին անում։

— Այս ի՞նչ ենք անում մենք, եղբայրնե՜ր... Մի՞թե հողին պիտի տանք վերջին մխիթարիչին հայոց։— Անսպասելի աղաղակեց սպարապետն ու ընկավ Բեկի դիակին... Երբ բարձրացավ, դեմքը ահարկու էր, ձայնը որոտող։

— Երդվում ենք քո սուրբ աճյունի առջև, մեր բախտի աստղ Դավի՛թ-Բեկ, որ մինչև վերջին շունչը կկռվենք Հայոց աշխարհի փրկության համար։ Երդվո՜ւմ ենք...

— Երդվո՜ւմ ենք...— բացականչեցին բոլորը, և ձորը դղրդաց տասնյակ հազարավոր ձայներից։

— Ոչ մի օտար ոտք չի մոտենա քո սուրբ գերեզմանին, Դավի՛թ։ Երդվո՜ւմ ենք,— նորից որոտաց սպարապետի ձայնը։

— Երդվո՜ւմ ենք,— այս անգամ դղրդաց ձորը։

Դագաղն իջեցրին փոսը։ Հալիձորի հրանոթներից համազարկ տվին։ Հրաժեշտ-համազարկ տվեց նաև հրացանակիրների գունդը։ Հովակիմ սրբազանն օրհնեց գերեզմանի հողն ու խաչաձև թափեց դագաղի վրա։ Բոլոր դրոշակները խոնարհվել էին։ Տխուր հնչում էին սաղմոսները...

Դավիթ-Բեկը գերեզման իջավ՝ իր ետևից թողնելով անկախության հասած, միակամ ու միաբան հայ զորապետների մի խումբ ու բովանդակ հայ ժողովրդից ազատության և խաղաղության պտուղները վայելող մի փոքրիկ, բայց հերոսական հատված։

Երբ վերադառնում էին հանգստարանից, արդեն մութն ընկել էր։ Հանկարծ մի զարմանալի վառ աստղ պոկվեց տեղից ու, երկնքի կապույտ շերտի վրա հրեղեն գիծ քաշելով՝ գնաց, ընկավ Կապույտջիղ լեռան ատամների վրա...

***

Դավիթ-Բեկին թաղելու օրից անցել էր երկու շաբաթ։

Սակայն մելիքները դեռևս Հալիձորում էին։ Սպասում էին նոր իրադարձությունների։ Պետք էր մեռած գահերեց զորավարի տեղ նորն ընտրել։ Արդեն սկսել էին խմբավորվել։ Գիշերները ծածուկ այցելության էին գնում միմյանց՝ յուրաքանչյուրն իր խոսակցի միտքը կռահելու դիտավորությամբ։ Եվ վճռել էին սպասել այնքան, մինչև սպարապետը կամենա գումարել Հայոց ժողովը։

Սակայն նրանց զարմանքը մեծ եղավ, երբ մի օր սպարապետը հրավիրեց բոլորին և խնդրեց շտապ մեկնել սահմանագլխային ամրոցները. զորքը տանել արևմտյան գավառները։

— Ձյուն-ձմեռ է, տե՛ր սպարապետ, ինչո՞ւ զորքը ձմեռանոցներից հանենք,— փորձեց առարկել մելիք Բարխուդարը։— Հիմա թուրքը սիրտ չի անի մոտենալ մեր աշխարհի լեռնանցքներին։

— Կանի՛,— ասաց սպարապետը։— Բեկի մահվան լուրն, անշուշտ, ուրախացրել է Աբդուլլահին։ Կօգտվի մեր սգից ու անսպասելի կերևա լեռնանցքներում. պետք է զորքը պատրաստ պահել հենց սահմանների վրա։

Եվ նա պահանջեց կատարել իր կամքը։

Մելիքներն ստիպված էին հնազանդվել։ Պատրաստվեցին մեկնել Հալիձորից։ Բայց դեռ ոչ ոք չէր հեռացել քաղաքից, երբ ստացան Մխիթարի գրավոր հրամանը։ Մխիթարը մելիքներից պահանջում էր զորքին այսուհետև ռոճիկ տալ իրենց սեփական միջոցներից։ Դա արդեն բոլորովին դուր չեկավ մելիքներին։ Սրանք բողոքելու գնացին Տեր-Ավետիսի մոտ։

— Այս ի՞նչ է անում սպարապետը,— հուսահատ շարությամբ գոչեցին նրանք։— Մխիթարը բռնել է մեր օձիքները։ Առաջ զորքին ռոճիկ էինք տալիս Հայոց ժողովի գանձարանից։ Հիմա ինչո՞ւ է ուզում մեզ թալանել, թողնել մի սև դրամի կարոտ։

— Լեզուներդ որ կարճ պահեք, լավ կլինի, տե՛ր մելիքներ,— մռայլ ասաց Տեր-Ավետիսը։— Զուրը որ չհոսի, կհոտի։

Մելիքները գլխի չընկան, թե վերջին խոսքերով ի՞նչ է ակնարկում հազարապետը։ Խոսեցին դժգոհ, բայց սրտներում կուտակված դառնությունը ծածուկ պահեցին Մխիթարից։ Տրտնջում էին, որ նա ինքնագլուխ գործեր է բռնում, ավադանու ժողով չի գումարում, չի հարցնում իրենց կարծիքը։ Նրա դեմ թաքուն պահած հին ոխը նորից գլուխ հանեց։ Տոհմական մելիքները դժգոհում էին։ Այսօր սպարապետն իրենց քշում է

Հալիձորից, հրամայում է գրպաններից հանել վերջին դրամը, իսկ վաղը, ով գիտե, ինչ չարիք կբերի։ Ամենից առավել դաղաղած էր մելիք Բարխուդարը։ Նա լավ էր տեսնում, որ սպարապետը ձգտում է գահերեց դառնալ։ Ինչո՞ւ նրան՝ ռամիկի որդուն տան երկրի իշխանությունը, և ոչ թե, ասենք, Տեր-Ավետիսին, որ Մեծ Պռոշի շառավիղն է գալիս կամ Հովհաննես-Ավան իշխանին, կամ թեկուզ իրեն։

Սակայն սրտի մաղձը միայն որդու՝ Միհրան հարյուրապետի առաջ էր թափում, չէր ուզում ժամանակից շուտ ի հայտ դարձնել իր գաղտնի խոհերը։ Դիտեր, որ գահերեց զորավարին պիտի ընտրի Հայոց մեծ ժողովը։ Ա՛խ, այդ ժողո՞վը... Զորքն ու ժողովուրդը կհավաքվեն ու կգոռան. «Մխիթարին ենք գահերեց ուզում...»։ Ի՞նչ կարող ես անել, որի՞ բերանը փակես։ Ահ ուներ նաև մելիքներից ու զորապետներից։ Կմխաբերանը փակես։ Ա՞ն կարող

Վրթանես զինագործի և Վոլոդիմիր Խլերի տանը։ Զինագործական արհեստանոցում, պղնձի ելքերում ու բովերում արդեն բանում էին երեք հարյուրից ավելի մարդիկ։ Նա բոլորին ծածուկ զինեց Մարաղայում հավաքած ավարային զենքով, մարդկանց բաժանեց տասնյակների և դրեց Վրթանեսի հրամանի տակ։

— Ամեն օր ու ժամ պատրաստ եղիր հրամանիս՝ իսկույն հասնել Հալիձոր,— խստորեն պատվիրեց նա Վրթանեսին։— Վտանգ կա և դա կարող է ծագել բոլորովին անսպասելի, անժամանակ։

Բայց դա բոլորը չէր։

Կար մի ուժ, որ թերևս ոչ ոքի մտքով չէր անցել օգտագործել։ Դա Հալիձորի քաղաքային բնակչությունն էր. ավելի շուտ ներկարարների, կաշեգործների, դարբինների, բրուտների և այլ արհեստների տեր մարդկանց ու մանր առևտրականների այն բազմությունը, որ օրավուր ստվարանում էր նորաստեղծ քաղաքում։

Եվ Մխիթարը վճռեց օգտագործել այդ ուժը ևս։ Իր տանը գաղտնաբար հրավիրելով արհեստավորաց համքարության ավագներին, նա ասաց.

— Մեր երևելի մելիքներին դուր չի գալիս ձեր քաղաքի բազմանալն ու հարստանալը, եղբայրնե՛ր, խորհեցեք ձեր ապահովության մասին։

Եվ չարացած, մելիքներից դժգոհ քաղաքացիները սիրով հանձն առան զինվել ու պատրաստ լինել ամեն տեսակ անակնկալի։ Այդ էլ պետք էր Մխիթարին։ Նա խոստացավ ամեն կերպ նպաստել արհեստավորության ծաղկմանը, թեթևացնել քաղաքացիներից գանձվող հարկերը և զենք տալ չունեցողներին։ Ասա քաղաքացիների համաձայնությամբ, Մովսես աբեղային նրանց վրա զորապետ կարգեց ու պատվիրեց զինվել բոլորովին գաղտնի։

Այս ծրագրերն իրագործելուց հետո միայն Մխիթարն իրեն ապահով զգաց Հալիձորում։ Այնինչ, նրա գործերին անտեղյակ հակառակորդները ուրախանում էին, որ նա ամբողջ զորքը հեռացրել է Հալիձորից։ Դա միամտություն և իրենց ձեռնտու անզգուշություն էին համարում և գործում էին եռանդով։

Անհանդիստ էր նաև Մովսես աբեղան։ Մի անգամ նա ասաց.

— Մտադիր չե՞ս արդյոք զորքը ետ կանչել Հալիձոր, տե՛ր սպարապետ։

— Ապստամբության հո՞տ ես առել,— մռայլվեց Մխիթարը։

— Ի՞նչ ապստամբություն,— սփրթնեց Մովսեսը,— այդպիսի բան չկա, աստված չանի։ Բայց, ասելս այն է, որ մոտենում է Հայոց ժողովի գումարման օրը։ Կարող է...

— Ինձ գահերեց զորավար չընտրե՞ն,— նրա խոսքը շարունակեց Մխիթարը։— Ա՞յդ է կասկածդ։ Կարող է պատահել, ի՞նչ կա որ։ Հայոց զորքը հմուտ զորավարներ քիչ չունի։

— Մի՛ ասա, տե՛ր սպարապետ. ամեն մեկն իր տեղն է պիտանի։ Կասկածներ ունեմ, չասել չեմ կարող։ Մելիք Մուսին երեք անգամ ծածուկ եղել է Տեր-Ավետիսի մոտ։

— Ի՞նչ են խոսել,— լրջացավ Մխիթարը։

— Լրտեսող ծառան ոչինչ չի կարողացել որսալ նրանց զրույցից։

— Գլուխը կտրե՞լ ես տվել,— չարացավ Մխիթարը։

— Ո՛չ, լրտեսի՞։ Ո՛չ,— երկյուղածությամբ պատասխանեց Մովսեսը։— Հավատարիմ մարդ է, բայց չի կարողացել հաջողել մի բան լսել։ Կասկածը լափում է սիրտս։ Վատ բան եմ գուշակում։ Շուկայում մի նպարավաճառ բերանից թոցրել է, թե իբր Հովակիմ սրբազանը, մելիք Մուսին, և, հավատս չի գալիս, Տեր-Ավետիսը չեն ուզում, որ գահերեց զորավարը դու լինես։

— Իսկ ժողովուրդն ուզո՞ւմ է։

— Ժողովուրդը քո կողմն է, զորքը ևս, բայց...

— Տեր-Ավետիսին կասկածելն ավելորդ է, արգելում եմ,— կտրուկ ասաց Մխիթարը։— Իսկ զարմանալի չէ, որ անատամ Հովակիմն ինձ նույնիսկ մատնի թուրքի ձեռքը։ Մելիք Մուսին՝ նույնպես։ Ես ի՞նչ եմ որ...— գոչեց նա։— Իմ հայրը անհող ռամիկ էր՝ ստրուկ, օրվա հացի որ...— գոչեց նա։— Իմ հայրը անհող ռամիկ էր՝ ստրուկ, օրվա հացի կարոտ։ Իմ երակների մեջ Սյունյաց թագավորների արյունը չի վազում։ Ես Օրբելյան տոհմի շառավիղը չեմ՝ Հովակիմ եպիսկոպոսի պես։ Ես ազնվական չեմ, իշխանական զարմ չեմ։ Ե՛ս ստրուկ եմ, ռամիկ...

— Մի՛ ասա, տե՛ր սպարապետ,— դողդոջ ձայնով աղերսեց Մովսեսը։— Ուշքի եկ, անպատեհ է բարկությունդ, լսող կլինի։

— Թող լսեն, իմանան ճշմարտությունը։ Թող ժողովուրդը լսի, զորքը՝ ևս։ Թող ամենքն իմանան...

— Գուցե ետ կանչես Երկրի ապավեն գունդը, օգնության կանչես մելիք Բաղրին կամ թեկուզ Զագեձորի գունդը,— խորհուրդ տվեց Մովսեսը։— Զորքից կվախենան չարկամներդ, ձայները կկտրեն, մեր ունեցած ուժը քիչ է։

— Զորքը բերեմ, որ թուրքի առաջ բա՞ց մնան մեր աշխարհի դրռները, ցնդե՞լ ես,— Մխիթարը հեգաց, բաճկոնակի կոճակներն արձակեց, բայց և հանդարտվեց մի փոքր։— Գնա՛, քո գործին հետևիր, մի ականջդ չորս արա։ Արհեստի մարդկանց լավ զինիր, առանց կասկածդ ի հայտ անելու։ Զգո՛ւյշ եղիր։

Մովսեսը գնաց. երկար ժամանակ Մխիթարը չէր հանգստանում, բարկացած էր մելիք Մուսու դեմ։ Հենց հիմա նրան կարող է քարշ տալ հրապարակ, մորթազերծ անել։ Բայց դա ծանր հարված կլինի միաբանությանը։ Մյուս դժգոհները կզգուշանան, կվերցնեն իրենց զորքերն ու կհեռանան իրենից, կգործեն թիկունքից։ Մելիք Մուսին պաշտպաններ ու համակիրներ ունի։ Նրա հորեղբայրը Շամախու պարոն-տերն է։ Իր քաղաքի ճանապարհը կփակի Սյունիքի վաճառականների առջև, զենք ու վառոդ չի վաճառի նրանց։ Իսկ Տեր-Ավետիսին կասկածելը հանցանք չէ։ Թող քշփչա Մուսու հետ, երևի թափ է տալիս ամբարիշտի խելքը կամ, ո՞վ գիտի, գուցե անմեղ հանդիպումներ են։

Համենայն դեպս, սպարապետն զգում էր, որ արդեն սկսվում է անխուսափելին։ Միայն հարկավոր է սառնասիրտ լինել, չշտապել, թշնամուն բռնել այն պահին, երբ նա կկամենա դուրս գալ իր որջից՝ իր արբանյակների հետ, երբ ցույց կտա իր գարշելի մուրթը...

Միայն այդ ժամանակ։

Եվ նա համոզված էր, որ այդ ժամանակը հեռու չէ...

* * *

Հայոց ժողով գումարելուն մնացել էր մի շաբաթ միայն։

Հալիձորը պատրաստվում էր գահերեց զորավարի ընտրությանը։ Շշուկներն ավելանում էին. Մովսեսը տագնապալի լուրեր էր բերում. մելիք Մուսին օրերով իր տանն էր պահում մելիք Բարխուդարի Միհրան որդուն, շարունակում էր գաղտնի այցելել Տեր-Ավետիսին։ Ուրախ լուրեր էլ էր հայտնում Մովսեսը։ Հալիձորցիները միայն Մխիթարին են ցանկանում գահերեց ունենալ։

Լույս կիրակի գիշերը, երբ Մխիթարը մտատանջ երթևեկում էր իր սենյակում, դուռը կամաց բացվեց, ու անհամարձակ ներս մտավ Փոքր Գորգին։ Սպարապետը զարմացած շուռ եկավ դեպի նա։

— Տեր իմ, նա ուզում է տեսնել քեզ,— շշնջաց համհարզը։

— Ո՞վ,— Մխիթարը մի անհաճո բան զգաց։

— Գոհարը։

— Ը՞սսս...— սպարապետը ձեռքը դրեց բերանին ու տագնապով նայեց թանձր վարագույրով ծածկված խորքի դռանը։ Այդ դռնից այն կողմ կինն էր՝ Դավթի և Սամամի հետ։ Մխիթարը գիտեր, որ Սաթենիկը քնած չէ։ Ոտքի թաթերի վրա նա մոտեցավ համհարզին։— Գնա ասա, որ պատեհ չէ։

— Բայց նա արդեն դռների ետևին է։

— Տե՛ր աստված...— հառաչեց Մխիթարն ու նորից նայեց կնոջ սենյակի կողմը։— Ասա թող գնա, թող...— բայց նրա խոսքը մնաց կիսատ։ Գորգու ուսի վրայով նա նկատեց դռների մեջ կանգնած Գոհարին։ Ցնցվեց իր դահճին տեսնող զոհի նման։

— Սառնասի՛րտ եղիր,— շտապեց զգուշացնել Գոհարը։— Քո հանդեպ տածած զգացումը չէ, որ ինձ բերել է այստեղ։ Այդ զգացումը դու սպանել ես քո ձեռքով։ Ես եկել եմ քեզ զգուշացնելու։ Մեծ վտանգ է սպառնում քեզ, սպարապե՛տ, և դու իրավունք չունես լսել ինձ...

Մխիթարը մոռացավ հարևան սենյակի գոյությունը. հոնքերը մթնեցին, ձեռքն ակամա բռունցք դարձավ։ Շեշտակի նայում էր պառավ կնոջ զգեստներով ծպտված Գոհարին։

— Դավադրությո՞ւն,— վերջապես հարցրեց նա։

— Այո։

— Պատմի՛ր։

Կից սենյակի դռան վարագույրը թեթևակի տատանվեց։ Սակայն աչքին ամեն ինչ մթնած Մխիթարն ու հուզմունքից հևացող Գոհարը չնկատեցին դա։ Միայն Փոքր Գորգին հասկացավ, որ վարագույրի ետևին մարդ կանգնեց. ցանկացավ զգուշացնել տիրոջը, բայց համոզվելով, որ այնտեղ միայն տիկին Սաթենիկը կարող է լինել՝ հանդարտվեց։

— Դավադիրները մելիք Մուսին են ու Տաթևի Գարեգին վարդապետը՝ ուրացող Դավիթ-Տաթևցու եղբայրը։— Արագ սկսեց Գոհարը առանց սպարապետին նայելու։— Մելիք Մուսին ու Գարեգին վարդապետը հորս և եղբորս էլ են կամեցել դավաղրակից անել իրենց, բայց չի հաջողվել։ Նրանց չի հաջողվել նաև իրենց գործակից դարձնել Տեր-Ավետիսին։

— Հապա ինչո՞ւ հայրդ, եղբայրդ կամ Տեր-Ավետիսը չեն հայտնել ինձ,— հարցրեց Մխիթարը։

— Մելիք Մուսին բացարձակ չի առաջարկել,— պատասխանեց Գոհարը։— Ստուգիր ինքդ։ Բայց իմացիր, մելիք Մուսին Ագուլիսից կանչել է իր գունդը, որն այս առավոտյան կմտնի Հալիձոր։ Գարեգին հայր սուրբը ևս հազար մարդ է կանչել Տաթևից... Գալի՞ս են... Դավադիրները վճռել են դատաստան տեսնել հետդ... Աստվա՞ծ իմ, ինչո՞ւ ես կանգնած մնացել, Մխիթա՛ր։ Ուշանում ես, շտապի՛ր...

— Այո, շտապի՛ր, քանի դեռ ուշ չէ,— լսվեց Սաթենիկի ձայնը։ Վարագույրը ետ գնաց, ու նա առաջ եկավ։— Ես ամեն ինչ լսեցի, Գոհար,— ասաց հուզված։— Ուրախ եմ, որ քո կրծքի տակ ազնիվ սիրտ է բաբախում։— Դարձավ Մխիթարին։— Շտապիր, քանի ուշ չէ։ Դու զորք չունես, դու մենակ ես։ Մինչև զորքդ Շահապունիքից բերես, օ՜... տե՛ր

ողորմած։ Ջավակնե՛րս... Շտապի՛ր, միջոցը տես, կործանվում է հայոց տունը, կանխիր խռովությունը։— Տիկինը պահանջկոտ նայեց ամուսնուն։ Թվում էր՝ ինքն էլ պատրաստ է նետվելու վտանգավոր գործի մեջ, կռվելու անզիջում։

— Շտապիր, տե՛ր սպարապետ,— խնդրեց Գոհարը,— փախիր Ջաղեձոր, փախիր Պղնձաքար, փրկիր կյանքդ...

Մխիթարի դեմքը ողողել էր հեգնական մի ժպիտ։

— Մարդ ուղարկենք Մեղրի՝ Կոստանդին զորապետի ետևից,— խորհուրդ տվեց Փոքր Գորգին։

— Ուշ է,— ասաց սպարապետը։

— Տե՛ր աստված,— գոչեց Սաթենիկը։— Մի՞թե մեր ձեռքով պիտի խավարենք մեր բախտը։ Ջհեռանաս Հալիձորից, Մխիթա՛ր, թող կատարվի այն, ինչ երկնայինի կամքն է։ Արիացիր, փակիր քաղաքի դռները. կկռվենք։

— Մնայն առանց խուճապի,— հանգիստ ասաց Մխիթարը։— Գնացեք ձեր սենյակները և սպասեցեք դառը գործի վախճանին։

Փոքր Գորգին ձիու վրա սլացավ դեպի Պղինձ Արթինի ապարանքը՝ Վրթանես զինագործին իմաց տալու բանը։ Մխիթարն իսկույն կանչեց Մովսեսին։ Իմանալով դավադրության մասին, սրանք գունատվեցին, բայց չկորցրին սառնասրտությունը։ Մովսեսը գնաց քաղաքի իր մարդկանց բարձրացնելու։

***

Սպարապետի տանը բոլորը զինվեցին։ Ահարոնն ափսոսում էր, որ Ջաղեձորում է թողել իր «կաթնակերաց» գունդը։ Ա՛խ, եթե տղաներն այստեղ լինեին... Ստվերի պես նա կպավ հորն ու թիկունք եղավ։ Մոտալուտ «գործը» ոգևորում էր պատանուն։

Որդու և իր մոտ եղած չորս թիկնապահ զինվորների հետ սպարապետը խավարի ծածկի մեջ գնաց, մտավ այն շենքը, ուր ապրում էր մելիք Մուսին։ Աստիճանների վրա անաղմուկ խողխողեցին մելիքի պահակ ծառային։ Մխիթարը լցրեց ատրճանակն ու բաց արեց մելիքի սենյակի դուռը։

Թախտին գլխաբաց նստած էր մելիք Մուսին։ Նրա ճաղատը փայլում էր եռաստղ մոմակալի լույսից։ Իր վրա ուղղված ատրճանակը տեսնելով՝ մելիքը թախտից գլորվեց, փորձեց բարձրանալ, բայց սպարապետն իր ծանր կրունկները դրեց նրա թաթերին։

— Ո՞ր ճանապարհով է գալիս զորքդ։

— Խնայիր ինձ, քո շո՛ւնը դառնամ,— աղաղակեց Մուսին. հասկացավ. ամեն ինչ կորած է արդեն, այլևս խաբել չէր կարող։ Ո՞վ մատնեց։

— Հարցնում եմ, դավաճա՛ն, ո՞ր ճանապարհով է գալիս զորքդ,— մռնչաց սպարապետը։— Պատասխանիր իսկույն, եթե ուզում ես ապրել...— ատրճանակի փողը դրեց մելիքի քունքին։— Դե՞։

— Կասեմ, տե՛ր սպարապետ, քո շո՛ւնը դառնամ։— Մխիթարի բառերը համբուրեց Մուսին։— Միայն երդվիր, որ ինձ չես սպանի, երդվի՛ր։ Մեղավոր եմ։ Անօրեն Գարեգին հայր սուրբը գլխահանեց ինձ պես էշին։ Քո ստրուկն եմ, խնայիր, երդվի՛ր, որ կխնայես։

— Երդվում եմ Դավիթ-Բեկի սուրբ շիրիմով,— երդվեց սպարապետը։

Մելիք Մուսուն նստեցրին թախտին։ Սա թեև ուշքը գլուխը հավաքեց, բայց շարունակում էր դողալ։

— Զորքս Ջավնդուրի ճանապարհով է գալիս։— Վերջապես ծնոտը կափկափեց նա։— Երեք հազար հոգի են։ Հիմա երևի մոտենում են Ողջի գետին։ Այդպես եմ հրամայել։

— Զորքդ տեղյա՞կ է, թե ինչու է գալիս Հալիձոր,— հարցրեց Մխիթարը։

— Տեղյակ են միայն հարյուրապետները։

— Անունները տուր։

— Միրզան, Սև Հակոբը, Սևումը, Բարսեղը։ Նրանք դավադրակից են, զորքը՝ ոչ։ Ա՛խ, ա՛խ... Ի՞նչ սատանան դրդեց։ Ա՛խ, Հովակի՛մ սքրբազան...

Մխիթարը շտապ վճռեց անելիքը։ Պետք է ձերբակալ անել Ագուլիսի զորքի հարյուրապետներին, ապա հեռու պահել նրանց զորքը։ Պետք է շտապել։ Թանաք ու թուղթ պահանջեց. բերին։ Մելիք Մուսին ձեռքի ցնցումները հազիվհազ զսպելով՝ գրեց Մխիթարի թերագրածը. «Մեր գործը հաջողակ է գնում, սիրելինե՛րս,— գրեց նա իր հարյուրապետներին։— Զորքը թողեք Ողջի գետի բերանում, իսկ դուք բոլորդ շտապ եկեք Պղինձ Արթինի ապարանքը՝ խորհրդի։ Ես այնտեղ կլինեմ, մեզ հետ է նաև Պղինձ Արթին պարոնը։ Շտապեցեք»։

Մուսին ստորագրեց, նամակը կնքեց իր տոհմական մեծ կնիքով ու հանձնեց սպարապետին։ Մի սուրհանդակ նամակը տարավ մելիքի հարյուրապետներին, իսկ մի ուրիշը թռավ դեպի Պղինձ Արթինի ապարանքը՝ Վրթանես զինագործին պատվիրելու զինաթափ անել մելիքի հարյուրապետներին և շղթայակապ բերել Հալիձոր։

Ապա սպարապետը հրամայեց մելիքին բանտ դնել։ Իսկույն ձերբակալեցին նաև Գարեգին հայր սուրբին։ Նրա վրայից պոկեցին վար-

դապետական զգեստները, մորուքը խուզեցին։ Մնոտն այրելով իմացան Հալիձորում եղած նրա բոլոր դավադրակիցների անունները։ Սրանց ևս ձերբակալեցին։

Լույսը դեռ չէր բացվել, երբ Մովսեսը Հալիձորի արհեստավորների գունդը կանգնեցրեց Հայոց ժողովի ապարանքի առջև։ Զինված քաղաքացիները գաղազած էին՝ պատրաստ սպարապետի հրամանին։ Սպարապետը նրանց ուղարկեց Տաթևից եկող դավադիրների գունդը զինաթափելու։

Լույսի բացվեց։

Հալիձորն արթնացավ փողոցներում այս ու այն կողմ սլացող ձիավորների աղմուկից։ Ժողովուրդը հոսեց դեպի հրապարակ։ Վրթանես զինագործն ու Վոլոդիմիր Խլեբը Հալիձոր բերին իրենց ջոկատը։ Նրանք գանահարելով բերում էին նաև ագուլիսցի չորս դավաճան հարյուրապետներին։ Կեսօրին Հալիձոր հասցրին զինաթափված, պարաններով միմյանց կապած վանքապատկան զինվորներին։

Հրապարակում, հենց եկեղեցու դիմաց կախաղաններ տնկեցին։ Մովսեսի ու Վրթանեսի աշխարհազորի մարդիկ շրջապատեցին հրապարակը։ Սև նժույգի վրա եկավ Մխիթար սպարապետը։ Նա մռայլ էր, խստահայաց ու անքուն։ Առանց ձիուց իջնելու, կանգնեց եկեղեցու առջև, սաղավարտը հանեց, երեսին լայն խաչ քաշեց ու բարձրաձայն ասաց.

— Հալիձորցինե՛ր, մեր մեջ մարդիկ եղան, որ անպատվելով Դավիթ-Բեկի թարմ գերեզմանը՝ դավաճանեցին նրա սուրբ գործին։ Նախվեցին օսմանյան փաշաներին և դավադրություն նյութեցին Հայոց ժողովի և նրա աշխարհի դեմ։

— Անե՛ծք, անե՛ծք...— մռնչաց ամբոխը։— Մա՛հ բոլորին։

— Նրանք ուզում են մեր աշխարհը տալ թուրքերին։

— Ո՛ւ...— գվվաց հրապարակը։

— Հույս ունեին իշխանություն ու պատիվ ստանալ։

— Հիմա տուր, թող ստանան, տե՛ր սպարապետ։ Տո՛ւր։

— Նրանք թուրքերին ծածուկ կբերեին Հալիձոր։ Բայց շնորհիվ վերին խնամոց, պարզվեց նրանց դավը։ Դավաճանները չպիտի ապրեն մեր հողի վրա։

— Մահ, մա՛հ...— որոտաց քաղաքը։

Սպարապետը ձեռքով նշան արեց։ Փողեր փչեցին։ Զինվորները դավադիրներին քշեցին դեպի կախաղանները։ Նրանց հարցաքննում էին հենց կախաղանների սյուների տակ, ժողովրդի ներկայությամբ։ Անողոք խոշտանգում էին համառողներին։ Մովսեսը գրում էր դավաճանի անունը, նրա խոստովանությունը։ Երբ բերին Գարեգին վարդապետին, բոլորը մի պահ պապանձվեցին։ Սա ջարդված էր, արյունլվա, անմորուք։ Միայն անվերջ խաչակնքում էր մուրթը։ Բայց քննիչների բոլոր հարցերին պատասխանեց հանդարտ։

Ամբոխի վրա զզվելի տպավորություն թողեց մելիք Մուսին։ Պառկել էր գետնին ու սողեսող մոտենում էր մերթ Մխիթարի ոտքերին, մերթ Վրթանեսին, որ մտրակով անխնա դաղում էր հարցաքննվողներին։

Հարցաքննությունը տևեց մինչև երեկո։

Առաջինը կախեցին Գարեգին հայր սուրբին։ Երբ թոկի օղակը հագցնում էին նրա վզին, նա գոչեց.

— Ես արժանի եմ սրան, եղբայրնե՛ր... Աղոթեցեք իմ հոգու համար։— Նա իր ձեռքով ուղղեց վզին փաթաթված կախաղանի օղակը։

Ապա կախեցին Ագուլիսի հարյուրապետներին։ Մելիք Մուսին ուշաթափ ընկած էր այն նստարանի մոտ, որին բազմել էր սպարապետը։ Երբ դահիճը մոտեցավ, որ սրան ևս տանի կախելու, Փոքր Գորգին նրա ականջին մի բան ասաց։ Մելիքին ուշքի բերին, երեսնիվայր պառկեցրին քարախճի վրա ու ճիպոտի քսանհինգ հարված տալով՝ տարան բանտ։ Ապա մերկացրին վանքապատկան զինվորներին ու ծեծեցին անխնա...

Երկու օր հետո Տաթևից լուր բերին, որ Հովակիմ եպիսկոպոսը հանկարծամահ է եղել։ Սպարապետը յուրայիններին հրամայեց չգնալ նրա թաղմանը։

Գիշերը նա գնաց բանտ՝ մելիք Մուսուն տեսության։ Ագուլիսի պառոն-տերը կծկվել էր նկուղի խոնավ անկյունում ու դողում էր ցրտից և մահվան սարսափից։ Քիչ էր հավատում սպարապետի երդմանը։ Ո՞ր իշխանավորն է իր երդման տերը մնում։

— Ես իմ երդումը կկատարեմ միայն այն ժամանակ, եթե դու մի բան խոստովանես, շո՛ւն Մուսի,— կանգնելով մելիքի գլխավերևը՝ ասաց սպարապետը։— Ասա՝ դու եղե՞լ ես Տեր-Ավետիսի բնակարանում։— Գորգին բարձր բռնած պահում էր վառվող ջահը։ Դահիճը կացինը ձեռքին կանգնել էր՝ ականջը սպարապետի հրամանին։ Մուսին հեկեկաց։ Ուռած շրթունքներին տակավին արյուն կար։

— Ո՛չ, ո՛չ,— գլուխը թափահարեց նա։— Տեր-Ավետիսը դավադիր չէ։ Եթե նա մասնակից լիներ իմ խորհրդին, հիմա դու, տե՛ր սպարապետ, իմ տեղը շղթայված կլիներիր։ Մի՛ կասկածիր քո հավատարիմին։ Ես նրան չեմ հայտնել իմ միտքը։ Ես չեմ վստահել նրան...

— Իսկ եղե՞լ ես նրա մոտ։

— Եղել եմ։

— Քանի՞ անգամ։

— Երեք։ Գիշերով։

«Ճշմարիտն է խոսում»,— ինքն իրեն ասաց Մխիթարը՝ հիշելով Գոհարի պատմածը։ Ապա մելիքից պահանջեց հայտնել, թե ի՞նչ խոսակցություն է եղել նրա ու Տեր-Ավետիսի միջև։ Մելիքը երդվեց, որ Տեր-Ավետիսը առնչություն չի ունեցել իր ու Գարեգին վարդապետի սարքած դավի հետ։

— Չհավատա՞ս, որ նա դավաճան է, ողորմա՞ծ տեր,— գոչեց նա։— Ով էլ ասի՝ չհավատա՞ս։ Տեր-Ավետիսը դավադիր չէ. ո՞չ, ո՞չ նա, ո՞չ Միհրան հարյուրապետը, ո՞չ Բարխուդարը։ Ոչ մեկը։ Ես նրանց ստիպում էի, որ խոսեն քեզ հետ՝ քեզ համոզեն հաշտվել Թուրքերի հետ, դառնալ սուլթանի հպատակը, վերջացնել արյունահեղ ու անհույս այս պատերազմը։

— Այդ նույն բանը կարող էիր ասել ինձ,— ընդհատեց Մխիթարը։

— Դու դաժան և իրասածի մարդ ես, տե՛ր սպարապետ, դու կասկածում ես անգամ յուրայինիդ, ո՞ւր մնաց ինձ չհամարեիր սուլթանի գործակալը։ Չեմ ասել ահից։ Տեր-Ավետիսի հետ միասին այդ մասին եմ խոսել։ Ուրիշ ոչինչ, վկա՞ է աստված։

Սպարապետը թեթևացած շունչ քաշեց։ Ուրախ էր, որ տարիների իր մտերիմը, իր բազկակից Տեր-Ավետիսը դավադրության հետ կապ չունի։

— Եվ դու այժմ է՞լ խորհուրդ կտայիր հաշտվել Թուրքի հետ, հպատակվել սուլթանին,— հարցրեց նա մելիքին։

— Այո՛, տե՛ր իմ,— չկեղծեց մելիքը։— Հասկացիր, տե՛ր Մխիթա՛ր, մենք ուրիշ ելք չունենք։ Այսօր չէ վաղը Թուրքը կընկճի մեր ուժը։ Իզուր ենք համառում։ Հպատակվենք, որ ապրենք։

— Հպատակությունը միայն քեզ ու քո գանձերը կփրկի Թուրքի ամենակուլ երախից։ Իսկ ժողովրդին կմատնի անդարձ կորստյան։ Վաճառական ես, մտածում ես քո կաշին փրկելու համար միայն։ Իսկ մեր ժողովուրդը կապրի միայն դիմադրելու գնով, իր բոլոր ուժերն ի մի գումարելու, թշնամուն դիմադիր կանգնելու միջոցով։ Ուրիշ ելք չկա։

Սպարապետը դուրս եկավ բանտից։ Բանտապետին պատվիրեց այլևս չխոշտանգել մելիքին, նույնիսկ փոքրիշատե թեթևացնել նրա տանջանքները։ Հրամայեց նաև օրը մի անգամ տաք կերակուր տալ։

Նրա գնալուց հետո բանտապետն ու դահիճը ուսերը վեր քաշեցին ու զարմացած նայեցին միմյանց։

***

Հայոց ժողովը գումարվեց ձմեռվա կեսին։

Լեռնաշխարհի ձյունեղեն կապերը հաղթահարելով՝ Հալիձոր եկան բոլոր մեծ ու փոքր մելիքները, տանուտերերը, զորապետները։ Եկել էին նաև բազմաթիվ վաճառականներ, արհեստավորաց համքարապետներ։ Սրանցից բացի, յուրաքանչյուր գյուղ տասը տղամարդից մեկին ներկայացուցիչ էր ուղարկել Հալիձոր։ Ձորքի մեջ ևս ընտրություն էին արել, ու տասը զինվորից մի պատգամավոր ուղարկել Հայոց ժողովին։

Կախաղանների սյուները դեռևս չէին պոկել հրապարակից։ Նրանց վրա շարունակում էին ճոճվել դավադիրները։ Հայոց ժողովի ավագանու հավաքին Մխիթարն ասաց.

— Դավաճաններն ստացան իրենց պատիժը, տե՛ր զորապետներ։ Միայն մելիք Մուսին է մնում ձեր դատաստանին։

— Նրան էլ պիտի կախեիր Գարեգին վարդապետի հետ,— ասաց Հովհաննես-Ավան իշխանը ցասումով, որ բոլորից առավել էր վրդովվել դավաճանության լուրն իմանալով։

— Իս իմ իրավունքներից վեր համարեցի անել այդ,— պատճառաբանեց սպարապետը։— Մելիք Մուսին Հայոց ժողովի ավագանու մեջ է։ Շամախու հզոր ու հարուստ պարոն-տիրոջ եղբոր որդին, Ագուլիսի պարոն տերն ու տոհմական մելիք։ Նրա դատաստանը պահել եմ ձեզ։

— Անշուշտ պիտի գլխատել,— նկատեց ծուռվիզ մելիք Բալին։— Կախաղանի սյուները դեռ հանած չեն, և ուշ չէ։

— Մի՛ տաքանա, աներձա՛գ իմ։ Անվերջ մարդ կախելով ո՞ւր կհասնենք,— զուսպ բարկությամբ նկատեց Տեր-Ավետիսը։

Մխիթարը տագնապեց։ Մի՞թե հազարապետն էլ է դավադիր, մի՞թե մելիք Մուսին թաքցրեց ճշմարտությունը։ Եթե այդպես չէ, հապա ինչո՞ւ է Տեր-Ավետիսը պաշտպան կանգնում դավաճանին։ Մխիթարը տարակուսած նայեց իր զինակցին, զգաց, որ նա մի անմեկնելի գաղտնիք է թաքցնում իրենից։

— Հենց հիմա պետք է կախել մելիք Մուսուն,— չարացավ Բալի զորապետը։— Մոռացե՞լ եք նրա առաջին դավաճանությունը։ Նա չէ՞ր, որ նենգությամբ սպանեց Հորս...

— Քո մեջ կույր վրեժխնդրություն է խոսում,— նորից հանդիմանեց Տեր-Ավետիսը։— Բարի պտուղ չէ մելիք Մուսին, պարզ է։ Ականջս տանում էր, թե մեծով-փոքրով գնանք հպատակվենք Թուրքին, զենքերս ցած դնենք։ Բայց դա նրա մոլորությունն է, հուսով եմ՝ կուղղվի։ Ան-

շուշտ նրա արարքը ծանր է, բայց չպետք է խախտենք միաբանության այն հիմունքները, որի վրա է կանգուն մեր աշխարհը։

— Ուրեմն պահենք-շահե՞նք դավաճանին,— չղիջեց Բալին։

— Ներենք այս անգամ ևս, պատժենք, տուգանենք ծանր, բայց մահու չտանք։

Տեր-Ավետիսը չէր նայում սպարապետին։ Դժգոհ էր նրանից։ Եթե Մուսին դավաճանել է, իրոք, հապա ինչո՞ւ չի սպարապետը կախել նաև նրան, ո՞ւմից է երկյուղել։ Թողել է, որ իրե՞նք արյան տակ ընկնեն, թե մի ուրիշ նպատակ է թաքցնում իրենցից։ Տհաճ էր այդ ամենը նրա համար, ուստի նա ասաց.

— Թող ինքը՝ սպարապետը որոշի մելիք Մուսու բախտը։ Ես լիովին համաձայն կլինեմ։ Եվ վերջապես, մեկի խոսքը պետք է հրաման լինի՞ մեզ համար, թե՝ ոչ։ Իսկ այդ հրամայողը սպարապետն է։

Մխիթարը թեթևացած շունչ քաշեց։ Ո՛չ, Տեր-Ավետիսը ծուռ նպատակով չի խնայում մելիք Մուսուն։ Միաբանության գործը թանկ է նաև նրա համար։

Մելիք Մուսուն բանտից բերին, նախատեցին սաստիկ և ծեծեցին հենց ավագանու առջև։ Մեծ տուգանք դրին վրան, զրկեցին զորապետի իրավունքից և Ավետարանի վրա երդվել տվին, որ այսուհետև հավատարիմ կմնա Հայոց ժողովին։

Նրան պահեցին Հալիձորում։

***

Հայոց ժողովը գումարվեց մեծ հրապարակում։ Մելիքներն ու զորապետներն իրենց դրոշակներով և շքախմբով կանգնեցին եկեղեցու առջև։ Հրապարակում խռնվեցին գավառներից ու զորակայաններից եկած ներկայացուցիչները։ Մովսեսն ու Վրթանեսն իրենց ջոկատներով օղակեցին հրապարակը։ Ժողովուրդը պապանձվեց։

Մելիք Բաղրը, որ ամենից տարեցն էր ավագանու մեջ, բարձրացրեց Դավիթ-Բեկի դրոշը, որի վրա դեռ մնում էին սգո սև ժապավենները։ Ժողովուրդը «ա՜խ» քաշեց։

— Ականջ արա, ո՜վ սգավոր ժողովուրդ հայոց,— տարիքին անհամապատասխան առույգ ձայնով գոչեց մելիքը։— Ծանր սուգ է տանն հայոց։ Բայց այսօր սգահան ես լինում դո՛ւ, ժողովուրդ հայկազյան։

Նա դրոշակն իջեցրեց։ Երեք սգազգեստ զինվոր դրոշակի վրայից պոկեցին սև ժապավենները։

— Ապրի տունն հայո՜ց,— գոչեցին ժողովրդի ու զորքի միջից։

— Ապրի՜,— որոտաց հրապարակը։

Մելիք Բաղրը նորից բարձրացրեց դրոշակը։

— Այժմ մենք պետք է ունենանք Դավիթ-Բեկին փոխարինող։ Ո՞ւմ եք ձեր անկաշկանդ կամքով ցանկանում գահերեց զորավար ընտրել, ասացե՛ք։

Ամբոխն այնպես պապանձվեց, որ թվաց, թե ամեն ինչ քարացավ միանգամից։ Մխիթարի սիրտը տրոփեց։ Բայց հենց այդ պահին էլ կարծես պայթեց ականջների թաղանթը։

— Մխիթարի՜ն...— որոտաց հրապարակը։

— Մխիթար սպարապետի՜ն։

Տեր-Ավետիսը նայեց դիմացը։ Բոլորը բերանները բաց գոռում էին. «Մխիթարի՜ն»... Կողքին կանգնածներից քչերն էին ձայն հանում։ Ուշքի եկավ ու պատռեց կոկորդը։

— Մխիթարի՜ն... Կեցցե՜ Մխիթար գահերեց զորավարը...— Ուժգին մի շարժումով նա սպարապետին առաջ մղեց, ապա մելիք Բաղրից խլեց Դավիթ-Բեկի դրոշակն ու խոթեց Մխիթարի ձեռքը։ Այս անելուց հետո չոքեց, համբուրեց դրոշակի ծոպերն ու նորից պատռեց կոկորդը...

— Կեցցե՜ գահերեց զորավար Մխիթար սպարապետը...

— Կեցցե՜...— դղրդաց հրապարակը։

Ավագանին հետևեց Տեր-Ավետիսի օրինակին։ Չոքեցին նաև ժողովուրդն ու զորքը։ Միայն մելիք Բաղրը կանգնած մնաց։ Նա Դավիթ-Բեկի թուրը մեկնեց Մխիթարին, ու պապանձված ամբոխի վրա հնչեց նրա ձայնը.

— Եղիր կանգնիչ ու զորացուցիչ վշտագնա ազգիս հայոց։

— Եղի՜ր...

Մխիթարը համբուրեց թրի սառը պողպատն ու դրոշակի մետաքսը։

— Երդվո՛ւմ եմ,— ասաց բարձրագոչ։

— Մխիթարվի՜ր, ո՜վ սգավոր ժողովուրդ...— հուզմունքից դողացող ձայնով գոչեց մելիք Բաղրը և, Մխիթարին բարձրացնելով չոքած տեղից՝ համբուրեց նրան։

Բոլոր ավագները հերթով համբուրվեցին Մխիթարի հետ։ Երբ Մխիթարը համբուրվում էր մելիք Մուսու հետ, վերջինս շշնջաց.

— Մոռացիր եղածը, տե՛ր գահերեց զորավար։ Մարդը սխալական է։ Մոռացի՛ր։

— Մոռանո՛ւմ եմ,— անկեղծ ասաց Մխիթարը։

Զորական փողեր փչեցին։ Եկեղեցիների զանգերը հնչեցին ուրախ։ Զորքի տնտեսները դրամ բաժանեցին զինվորներին։ Հարյուրապետներին ու զորապետներին նվերներ տվին։

Տաքարյուն, շուտ բորբոքվող, բայց և շուտ հաշտվող լեռնցիները մոռացան դավադրությունը, կախաղաններն ու ծեծը և նորից մտերմացան եղբայրական սիրով։

* * *

Գահերեց զորավարի ընտրության պատվին հազարապետ Տեր-Ավետիսը խնջույք տվեց իր տանը։ Հրավիրել էին նաև աշխարհազորի պետերին։ Կանայք «ա՜խ» էին անում Վարդ-խաթունի պճնանքը տեսնելով։ Նույնիսկ Գոհարը նախանձեց նրան։

Վարդ-խաթունը հագել էր երկնագույն արխալուղ՝ կրծքին քսանչորս գոհարե կոճակ, թևերին ոսկե սուրմաներ։ Գոտին լայն էր, ոսկեպատ։ Նա շորորում էր բազմաթիվ սենյակներում, հրամաններ տալիս աղախիններին, կատակներ անում, ջանալով բոլորին հաճելի լինել և զարմացնել իր սրամտություններով։ Սակայն նրա երբեմն անհարկի կատակների մեջ սպարապետն ինչ-որ դառը բան էր նկատում։

Նստել էին ավանդական կարգով՝ կանայք մի կողմ, տղամարդիկ՝ մի։

Խմեցին գահերեց զորավարի կենացը։ Տեր-Ավետիսն այդ երեկո չափից դուրս սիրալիր էր Մխիթարի հետ։ Մի տեսակ մատուակի դեր էր կատարում նրա համար։ Դա դուր չեկավ Մխիթարին։ Ո՞ւր մնաց վաղեմի պարզ ընկերությունը, այն անկաշկանդ մտերմությունը, որ վաղուց ի վեր կար նրանց միջև։

Խնջույքին ներկա էր նաև Զարմանդը։ Իր կյանքում առաջին անգամ պատառաքաղ տեսնելով սեղանին՝ չհասկացավ, թե ինչի՞ համար է դա, մատներով վերցրեց յուղոտ մսի պատառն ու տարավ բերանը։ Գոհարը փոթկացրեց։ Ամուսինը ցասկոտ հայացքով հանդիմանեց նրան։ Բարեբախտաբար Զարմանդը գլխի չընկավ կատարվածը, թե չէ կվիրավորվեր, ու անախորժություն կլիներ։ Նա շարունակում էր ուտել իր ձեռով։ Գինի քիչ էին խմում. զրուցում էին անկաշկանդ։

— Հիմա կարելի է զորքի մի մասը տուն ուղարկել,— նկատեց մելիք Շաֆռազը։ Բոլորը հանկարծ լռեցին։— Թուրքն այլևս սիրտ չի անի գալ մեզ վրա։ Ատամները լավ ենք թափել։ Գյուղերում տրտնջում են եղբայրնե՛ր։ Հարս կա, պսակից հետո մի գիշեր հազիվ է եղել մարդու ծոցում։ Հողը հերկող չկա։

— Այդպես է, ճիշտ է,— հաստատեց Մխիթարը՝ համակիր նայելով Շաֆռազին։ Դիտմամբ ասաց. ցանկանում էր իմանալ՝ թե էլ ո՞վ է կամենում, որ մշտական զորքի թեկուզ մի մասն արձակվի։

— Երեք զինվորից երկուսն ուղարկենք տուն,— գահերեցի համաձայնությունից ոգևորվեց Շաֆռազը,— թող գնան իրենց օջախները շենացնեն։ Մելիքական հասքն ու տուրքը պակասել է։

— Պակասե՞լ է,— կրկնեց Մխիթարը, բայց այս անգամ այնպես, որ բոլորը հասկացան, թե խոսքն ուր է քշում նա։ Շաֆռազը հարցական նայեց Մխիթարին։

— Այո՛, այո՛,— շարունակեց գահերեցը։— Բա որ զորքը չարձակենք, հասքն ու տուրքը ումի՞ց առնենք, ինչո՞վ հարստանանք, ինչո՞վ զարդարենք մեր կանանց, հարսներին, աղջիկներին։ Ամեն մեկի վրայի զարդարանքը մի գնդի ոոճիկ է։

Նա վեր կացավ, գավաթը մի ումպով դատարկեց ու ձեռքը թրի պես մեկնեց Սիսականի տիրոջ կողմը։

— Դո՛ւ, մելիք Շաֆռազ, քաջ մարդ ես, աստծուն էլ է հայտնի դա։ Բայց զարմանում եմ քո ոգևորության վրա։ Ապա ինչո՞վ պահենք աշխարհը, որ զորքը ցրենք, ինչո՞վ... Հանգուցյալ Դավիթ-Բեկը երազում էր ազատել Նախիջևանը, Երևանը, փրկել Հայոց աշխարհի սիրտը՝ Արարատյան երկիրը, Կարսը, Լոռին... Այժմ ճակատագիրը մեզ է հանձնել Հայոց աշխարհի փրկության գործը։ Ես մտադիր եմ նորից տասը հազարանոց մշտական զորք կապել, իսկ դու առաջարկում ես եղածն էլ ցրե՞լ։ Որտե՞ղ է խելքդ։

— Ամեն երկիր մշտական զորքով է կանգուն,— հաստատեց Բայանդուր իշխանը։

— Հերիք է մեծամտանաք Մարաղայի ու Վարանդայի հաղթանակներով,— ձայնը բարձրացրեց սպարապետը։— Օսմանլուն ուժեղ է, ահռելի։ Նրա թաթերը կտրել կարելի է միայն մեծ, կանոնավոր, մշտական զորք ունենալու դեպքում։ Իմացած եղեք, որ եթե թուրքերն առնեն Սյունիքն ու Արցախը ևս, ապա Հայոց աշխարհի վրա հավիտենական գերեզմանաքար կդրվի։

Մի պահ ծանր լռություն տիրեց։ Տիկին Սաթենիկը բազմաթիվ օրինակներ բերեց Հայոց պատմությունից, ցույց տալով, որ անկախ ու հաղթող են եղել այն թագավորները, որոնք մեծ ու մշտական զորք են ունեցել։

— Զոհենք ամեն ինչ, բայց զորքը պահենք,— ասաց նա։— Աստված էլ է ուժեղին հասնում։ Եթե ուժներս լարենք, քսան չէ, երեսուն հազարանոց բանակ կարող ենք զինել, պահել։

Տիկնոջ ասածներն ավելի տպավորություն գործեցին։ Դա խոցեց Վարդ-խաթունի ինքնասիրությունը։ Նախանձի որդն արթնացավ նրա

սրտում։ Բայց դա դեռ բոլորը չէր։ Տիկինը կանգնեց, իշխանավարի նայեց տղամարդկանց ու ասաց.

— Երկու հարյուր հազար ծուխ կա մեր աշխարհում։ Հայտնի՞ է դա ձեզ, եթե ոչ՝ իմացեք։ Ամեն չորս ծխից մի զինվոր վերցնենք, ապա հիսուն հազար զորք կունենանք։ Հիսուն հազա՞ր... Հիսուն դրոշակ։ Ինչո՞ւ չեք ձեռնարկում այդ գործը, հայո՛ց տերեր։

— Նոր զորք պահելու համար միջոցներ են հարկավոր, տիկի՛ն Սաթենիկ,— հառաչեց մելիք Եգանը։— Որտեղի՞ց դրամ գտնենք, չկա՞...

— Կա՛,— շեշտված պատասխանեց տիկինը. նա վերցրեց սեղանի մեջտեղը դրած չոր մրգերի սկուտեղը, միրգը թափեց սփռոցին և սկսեց պոկել իր ականջի օղերը, թևերի սուրմաները, ոսկեպատ գոտին ու նետել սկուտեղի մեջ։— Մեզ համար չկա ավելի թանկագին զարդարանք, քան մեր երկրի ազատությունը,— ասաց հուզված։— Ահա ես իմ ամբողջ ունեցվածքն եմ դնում Հայոց ժողովի սպասին։ Մի մոռանաք, որ թուրքերը նոր պատերազմի են պատրաստվում մեր դեմ։ Թողնե՞նք, որ նորից արյուն լինի, ավերվի՞ աշխարհը մեր։ Ո՞ւմ են հարկավոր մեր զարդերը, եթե ուժ չենք ունենալու թշնամիների դեմ։

Ոչ ոք չէր սպասում, որ բանն այդտեղ կհասնի։ Նույնիսկ Մխիթարը հանդիմանությամբ նայեց կնոջը։ Կանայք գրեթե չէին շնչում. լայն բաց արած աչքերով նայում էին Սաթենիկին, որ մատները ազատում էր մատանիների ծանրությունից։ Վարդ-խաթունը հեռում էր։

Առաջինը Զարմանդը հետևեց Սաթենիկին։ Գեղջուկ այրին հանեց իր գոտին և նրա վրայի արծաթե զարդերը պոկելով՝ գցեց սկուտեղի մեջ։ Նրա արարքը թեև դուր չեկավ մելիքների ու զորապետների կանանց, բայց այլևս սպասելն անպատվաբեր էր։ Գոհարը հանեց իր ականջի խոշոր գինդերը։

— Մենք էլ զոհենք մեր ունեցվածքը, որ երկիրն ապրի,— չգիտես շարությա՞մբ, թե սրտանց ասաց նա ու պոկեց նաև թևերի ծանր սուրմաները։

Վարդ-խաթունը փքվեց, այնպես պոկեց կապայի գոհարե կոճակներն ու ոսկե լանջաղեղը, որ լսվեց կարի ճոռթվելու ձայնը։

Կանայք զրկվեցին իրենց զարդերից։ Սկուտեղը լցվեց թանկագին քարերով, ոսկե ու արծաթե զարդերով։ Տղամարդիկ լուռ էին։ Տիկին Սաթենիկը ծանր սկուտեղը դրեց նրանց առջև։

— Վերցրեք,— ասաց հանդարտ, ուրախ։— Վաղը մենք՝ կանայքս կմեկնենք գավառները և նոր զոհաբերություններ կհավաքենք։ Միայն թե երկիրն առանց զորքի մի՛ թողեք։

— Օրհնվի՞ ծնունդդ,— հուզմունքով պոռթկաց Բայանդուր իշխանը ու հափշտակելով նրա ձեռքը՝ համբուրեց։— Կապրի, կապրի մեր ժողովուրդը, որ քեզ նման մայրեր ունի...

Այլևս ուրախանալու սիրտ չկար։ Վարդ-խաթունն իրեն սաստիկ ստոր բացած էր զգում։ Գոնե այդ ամենն իր տանը չկատարվեր։

Խնջույքը վերջացավ։ Ցրվեցին։ Վարդ-խաթունը Սաթենիկ տիկնոջը ճանապարհեց մինչև սանդուղքների գլուխն ու ետ եկավ։ Մտնելով խնջույքի թափուր սրահը, չարացած անգղի նման աչքերը մաս ածեց սեղանների վրա։ Դեռատի մի աղախին անզգուշությունից ձեռքից գցեց արծաթե պնակը։ Հատակին զարնվող պնակի ձայնը ցնցեց Վարդին։ Նա թռավ դեպի աղախինն ու սրտում կուտակված բարկությունը թափեց նրա վրա։

— Ձեռքդ կոտրվա՞ծ է, շա՛ն աղջիկ,— գոռաց՝ իրենից դուրս ու մի շառաչուն ապտակ հասցրեց աղախնին։— Դո՛ւրս կորեք այստեղից, դո՛ւրս... Հեռացե՛ք, աչքիս մի՛ երևաք...

Աղախիններն ու սպասավորները չքացան խսկույն։ Խորքի դռան արանքում երևաց Տեր-Ավետիսը։

— Ինչո՞ւ ես դիվոտվել,— մոայլ հանդիմանեց նա։

— Դիվոտը դու ես,— գոչեց կինը ոտքը գետնին զարնելով։— Դո՛ւ, դո՛ւ, անխելք, անճար մարդ։ Ես անպատված եմ, հասկանո՞ւմ ես։ Այն թանաք ուտողը թագուհի է խաղում գլխիս... Գահերեցի կի՞նն է... Իմ տանը կարգադրություններ է անում...

— Հանգստացի՛ր, Վա՛րդ,— մոտ գալով՝ մեղմ ասաց Տեր-Ավետիսը։— Սաթենիկը գահերեց զորավարի կինն է, այո՛, և լավ օրինակ տվեց։

— Զոր ցա՛վ է,— կապտեց Վարդը։— «Գահերե՛ց զորավարը»։ Էլ ինչո՞ւ ես գդակ դնում, երբ ռամիկի որդին է գլխիդ գահերեց։ Քո պապերը Պոռշի տոհմից են, ես մելիք Փարսադանյան եմ։ Ե՛ս... Ե՛ս եմ ուզում լինել առաջին տիկինը Հայոց աշխարհում, իսկ դո՛ւ...

— Վա՛րդ, Վա՛րդ...— շարությամբ գոչեց Տեր-Ավետիսը։— Ուշքի եկ, Վարդ, դադարի՛ր։

— Չե՛մ դադարի,— փրփրեց կինը։— Դո՛ւ պիտի լիներիր գահերեցը, դո՛ւ... Մխիթարը քո ձեռքից խլեց իշխանությունը։ Սպասի՛ր... Մի օր էլ դու կճոճվես կախաղանից՝ Գարեգին հայր սուրբի նման։ Ռամիկի որդին չի՛ հանդուրժի քեզ...

Նա արագ գնաց դեպի իր հարկաբաժինը։ Բարկությունից խեղդվում էր, արցունքները հազիվ էր զսպում։ Սեղանների մոտ մնաց քարացած Տեր-Ավետիսը։ Սաստիկ դառն էին կնոջ խոսքերը։ Եվ որտեղի՞ց, ինչպե՞ս է այդ կինը զգում, կռահում իր մտքերը։

«Օ՜... տե՛ր աստված, դու ինձ հեռու պահիր չար խոհերից...»։

Մյուս օրը, երբ կանայք պատրաստվում էին մեկնել գավառները՝ նվիրատվություններ հավաքելու, Վարդ-խաթունը պատվիրեց Սաթենիկ տիկնոջը հայտնել, որ ինքը չի կարող դուրս գալ տնից։

Բայց Սաթենիկ տիկինը ևս չկարողացավ մեկնել գավառները։

Գանձասարից սուրհանդակ եկավ ու հայտնեց, որ վախճանվել է նրա հորեղբայրը՝ Եսայի Հասան Ջալալյան կաթողիկոսը։ Տիկին Սաթենիկն ուշաթափվեց։ Երբ ուշքի բերին, սկսեց ողբալ հորեղբոր մահը։

Հաջորդ օրը Մխիթարի, մի խումբ մելիքների ու հոգևոր հայրերի ուղեկցությամբ նա մեկնեց Գանձասար։

Նորից սուգ պատեց Հայոց աշխարհին։

Դավիթ-Բեկի վախճանվելուց հետո Եսայի կաթողիկոսի կորուստը մի նոր ծանր հարված էր Հայոց աշխարհին։

* * *

Մխիթարը երկար չմնաց Գանձասարում։

Կաթողիկոսին հողին հանձնելուց հետո նա կնոջ և յուրայինների հետ իսկույն վերադարձավ Հալիձոր։ Մռայլ էր։ Թուրքերը պատրաստվում էին նորից սկսել տանուլ տված պատերազմը։

Գարունն արդեն հեռացել էր դեպի լեռնագագաթները։ Կիրճերում թութը հասել էր։ Եղանակը չորային էր, երբեմն տոթ։

Տիկին Սաթենիկը սգո զգեստներով մեկնեց գավառները՝ իր նպատակը կատարելու։ Նրա հետ մեկնեց նաև Գոհարը։ Վարդ-խաթունը մնաց Հալիձորում, պատճառաբանելով, որ հիվանդ է ու չի կարող շարժվել։

Հալիձոր հասան Պարսկաստանից փախած մի խումբ հայ վանականներ։ Սրանք ծանր լուր բերին։ Աբդուլլահ փաշան առել էր Թավրիզը։ Շահ Թահմազը փախել է Խորասան՝ վեց հազար մարդ միայն կարողանալով վերցնել հետը։ Թուրքերը, մեծ օգնություն ստանալով Անգլիայից ու Ֆրանսիայից՝ նորից էին հզորացել։ Նրանց զենքը եվրոպական էր, բանակում հարյուրավոր անգլիական սպաներ կային։

Թավրիզի անկումով նոր վիճակ էր ստեղծվել հայերի համար։ Թուրքերի օղակը նեղվել էր արդեն։ Թեև թույլ, բայց և այնպես Թահմազը պատվար էր օսմանցիների առջև։ Սուլթանը մինչև այդ ստիպված էր գործել երկու ճակատով՝ հայերի ու պարսիկների դեմ։ Այժմ պարսիկները պարտված էին լիովին, և լեռների ծերպերում թառած հայոց զինվորությունը մնացել էր մեն-մենակ՝ թուրքերի ահռելի բանակների առջև։ Օգնություն չկար։ Որտեղի՞ց լիներ։

Հայ մելիքների վրա ծանր տպավորություն թողեց Թավրիզի անկման լուրը։

— Մնացինք մեն-մենակ,— Մխիթարի մոտ գալով՝ ասաց մելիք Բարխուդարը։

— Իսկ մինչև հիմա ո՞վ էր մեզ օգնողը,— նրան ընդհատեց Բայանդուր իշխանը։— Մենակ եղել ենք, մենակ էլ կմնանք։ Հույս աստված...

Մխիթարը երկար լսեց իր տանը հավաքված զորապետներին։ Սրանք ոգևորվեցին նրա լուությունից. խոսեցին տաք-տաք։ Ոմանք գտնում էին, որ պետք է լեզու գտնել թուրքերի հետ, առաջարկում էին մարդ ուղարկել փաշայի մոտ՝ հաշտություն որոնելու։ Մյուսները եռանդուն առարկում էին դրան։

Երկար վիճեցին։ Վերջապես Մխիթարը վեր կացավ ու ձեռքը պարզեց Տեր-Ավետիսին։ Սա կանգնեց հլու, գրեթե շշնչելով։

— Պատրաստվիր գնալ Թավրիզ, տե՛ր հազարապետ,— ասաց Մխիթարը.— ճանապարհվիր վաղը։ Հետդ կլինեն Մովսեսն ու Եսայի հարյուրապետը։ Վերցրու նաև երկու զինվոր։

— Այդ ինչպե՞ս, տե՛ր գահերեց զորավար,— գոնատվեց Տեր-Ավետիսը։— Գնամ թշնամու դուռը, որ ժամանակից շո՞ւտ մատնեմ մեր ահը։

— Թշնամու հետ բանակցելը նորություն չէ,— նրան ընդհատեց Մխիթարը։— Եվ միշտ չէ, որ դա թուլության նշան է։

— Հա՛, հա՛, փորձենք, ի՞նչ կա որ...— միջամտեց մելիք Բարխուդարը։— Գուցե լեզու գտնենք փաշայի հետ ու նրան հեռու պահենք մեր աշխարհի վրա գալու մտքից։

Մխիթարը հավանությամբ նայեց Բարխուդարին։ Սա շոյվեց։ Թեև Բարխուդարը մշտական ատելությամբ էր լցված Մխիթարի դեմ, թեև չէր կամենում նրա գահերեցությունը, բայց նրան գոհացնում էր Մխիթարի բռնած հաստատուն դիրքը՝ անկախ պահել Սյունիքում և Արցախում ստեղծած իրենց երկիրը։ Սյունիքի ամենահարուստ մելիքը լինելով, Բարխուդարը լավ էր հասկանում, որ միայն հայրենի իշխանությամբ կարող է պահել իր վաղեմի մելիքությունը։ Նա լավ գիտեր, որ ինքը, ինչպես և բոլոր մյուս մելիքները, կզրկվեն հայրենի ժառանգությունից, հենց որ երկիրն ընկնի օսմանցիների ձեռքը։ Սուլթանն իր նվաճած երկրներում արմատախիլ էր անում տեղական իշխանությունները, ոչնչացնում էր տոհմիկ իշխաններին, նրանց հողերը հանձնում իր վայ-

բենաբարո փաշաներին։ Այդ էր պատճառը, որ նա պատրաստ էր ամեն զոհողության, միայն թե երկիրը չընկնի օսմանցիների ձեռքը, միայն թե պահպանեն իրենց անկախ գոյությունը։

Լռությունը նորից խզվեց Տեր-Ավետիսի անհարկի բարձր ձայնից։

— Գնալը՝ կգնամ, տե՛ր գահերեց զորավար,— ասաց նա զգալի վիրավորված։— Բայց ի՞նչ կասեն եկեղեցու հայրերը, ժողովուրդը։ «Գնում եք Թուրքի դո՞ւռը։ Գուցե մեր հավատն ուրանալու գնո՞վ եք ուզում գլուխներդ ազատել»։ Կասեն։ Ահա թե մեջն ինչ վտանգ կա։ Չեն հավանի մեր արածը։

— Իսկ ես չեմ էլ սպասում հոգևոր հայրերի հավանությանը,—հանդարտ ձևանալով՝ պատասխանեց Մխիթարը։— Ժողովուրդը խաղաղություն է ուզում, իսկ հոգևոր հայրերի բանը չէ, թե մենք ինչ և ինչպես կանենք։ Մեզանում կանոն է դարձել, որ մեր դիվանագիտության սանձերը միշտ լինեն հոգևոր հայրերի ձեռքին։ Այդ է եղել պատճառը, որ մենք տանուլ ենք տվել մեր խաղը։ Բավակա՛ն է կառչենք խաչի դիվանագիտությունից։ Հայոց երկրի բախտը պետք է որոշենք ոչ թե հոգևոր հայրերը, այլ՝ մենք։

— Հրե՜ն, էջմիածինը հպատակվել է Թուրքերին,— գոչեց Բայանդուր իշխանը։— Դա չէ՞ քո հոգևոր տերերի արարքը, Տե՛ր-Ավետիս։

Մելիքներն զգում էին, որ Տեր-Ավետիսի համար ստորացում է գնալ փաշայի տաքը, բայց գիտեին, որ Մխիթարը չի զիջի։

— Լա՛վ, գնամ,— հառաչեց Տեր-Ավետիսը։— Բայց գնամ ի՞նչ աղերսեմ Թուրքից։

— Ինչո՞ւ աղերսել,— զարմացավ Մխիթարը,— մինչև հիմա մենք ենք նրանց վրա հաղթող եղել։ Աղերսելու բան չկա։ Գնա իմացիր Թուրքերի միտքը, հետախուզիր նրա զորությունը։ Իբր հաղթող կողմ, Աբդուլահից պահանջիր անհապաղ մեզ վերադարձնել էջմիածինն ու Երևանը, որոնք մերն են եղել Բաբելոնի աշտարակաշինության օրից ի վեր։ Պահանջիր այնպես, որ փաշան շշկլվի, չկարծի, թե Թավրիզն առնելով ու չորս կողմից մեզ օղակելով, գերեզմանաքար դրեց մեզ վրա։ Գնա մի անգամ էլ հիշեցրու Մարաղան ու Վարանդան։

— Այդ արդեն ուրիշ բան է,— մի փոքր հանգստացած հոգոց հանեց Տեր-Ավետիսը։— Դա նվաստանալ չէ։ Իսկ ես կարծում էի, թե մուրացկանի պես ձեռքս պարզած պիտի գնամ փաշայի մոտ։

Մխիթարի վճիռն անսպասելի էր նաև մելիքների համար։

Մխիթարը չէր հարցրել նրանց կարծիքը։ Դեսպանություն կազմելու առթիվ ևս չխորհրդակցեց ավագանու հետ։ Դա վիրավորում էր Տեր-Ավետիսի, մելիք Բարխուդարի և էլի մի քանիսի ինքնասիրությունը։ Ինչո՞ւ է անտեսում ավագանուն և միայն հրամայում է։ «Թունդ պղպեղ դուրս եկավ»,— մտածում էին ոմանք։ Մխիթարի բռնած դիրքը դուր էր գալիս քչերին միայն, այդ թվում՝ Մովսես աբեղային։ «Մեկը պիտի հրամայող լինի,— մտածում էր նա,— մյուսները հլու պիտի կատարեն նրա կամքը»։

Մխիթարը զորապետներին հրամայեց չհեռանալ քաղաքից և գնաց հանգստանալու։ Գիշերն արդեն կիսվել էր։ Լսելի էր շների կենտահաչը։ Երկինքը մռայլ էր՝ հատուկենտ աստղերով ճրագած։

ՄԵԿԸ ԲԱՐԵԿԱՄԻ ՄՈՏ, ՄՅՈՒՍԸ՝ ԹՇՆԱՄՈՒ

Մխիթար սպարապետը որոշեց մի դեսպանություն էլ ուղարկել Բաքու՝ ռուսական բանակի գլխավոր հրամանատար գեներալ Գոլիցինի մոտ։ Պետք է օգնություն խնդրել ռուսներից։ Նա դեսպան նշանակեց Բայանդուր իշխանին։ Նրան օգնականներ նշանակեց Վարանդայի մելիք Բաղրին ու Նաղաշ Հակոբին։ Թեև դեսպան գնալը նկարչի սրտովը չէր, սակայն չառարկեց գահերեցին։ Էջմիածնից Հալիձոր գալիս, նա մտադիր էր այդ ձմեռը ձեռնարկել իր արվեստանոցի ստեղծումը, սակայն Դավիթ-Բեկի մահը խանգարեց։ Իր բարերարի վախճանվելու լուրն ստացել էր Հալիձորի ճանապարհին և գնացել նրա գերեզմանին այցի։ Մի ամբողջ գիշեր ողբացել էր նրա կորուստը։ Այնուհետև նա դժվարությամբ էր կարողանում գլուխ բերել իր ծրագիրը։ Զգում էր, որ Դավիթ-Բեկն իր հետ գերեզման տարավ նաև իր երազանքը։ Երկրին նոր վտանգ էր սպառնում։ Պատերազմը մոտ էր, և հազիվ թե Մխիթարը ժամանակ ու միջոցներ ունենար զբաղվել իրենով։

Եվ ահա մռայլ ու անտրամադիր Նաղաշ Հակոբը Բայանդուր իշխանի դեսպանության հետ հայոց լեռներից իջել է Մուղանի տափաստանը ու ձանձրանում էր ինքն իր երազանքների հետ մեն-մենակ։

Օգոստոսյան արևը մայր մտավ։ Տափաստանի վրա փռվեց կապույտ մշուշի բեկբեկուն քողը։ Իրիկնամուտի գույների խաղը մի պահ զվարթացրեց Հակոբին, բայց դա կարճ տևեց։ Մշուշի մեջ կորան ցերեկվա տապից շիկացած մանր ավազաբլուրները, փոքր-ինչ տամկացան ուղտափշի թփերը։ Կովկասյան լեռների կողմից տաք քամի անցավ տափաստանի վրայով։

Վեցերորդ օրն էր, ինչ հայոց դեսպանությունը լեռներից իջել էր Մուղան և, արևի տակ խանձվելով՝ գնում էր դեպի ծովը։ Տափաստանում ամեն ինչ մեռած էր։ Ոչ մի կենդանի շունչ չէր երևում։ Միայն իրիկ-

նապահերին բարձրում ճախրում էին արծիվներ, իսկ ուղտափշի տակից դուրս էր սողում տապից չարացած անապատի օձը։

Զովասուն լեռների սովոր հայերը ցերեկները խանձվում էին թանձր շոգից և իրիկնային ժամերին միայն թեթևանում մի սակավ ու խոսում աշխույժ, կարոտում լեռները, յուրայիններին։

Գնացին վեցերորդ գիշերն ամբողջ։ Նաղաշ Հակոբը գնում էր մի բուռ զորախմբի առջևից՝ զարմանալի հմտությամբ որոշելով ճանապարհը։

— Մոտենում ենք ծովափին,— գիշերվա կեսին ասաց նա Բայանդուր իշխանին։— Լուսաբացին ծովը կերևա։

— Փա՜ռք աստծուն, անվտանգ անցանք։

— Փառք կտանք, երբ ողջությամբ դառնանք տուն։ Ոչ ոք չի կարող գուշակել, թե ինչ է սպառնում մեզ չարությամբ լի այս անապատում։ Այս կողմերում ավազակներ են վխտում՝ ճահճուտի մոծակների պես, թեև այս տափաստանում գրեթե տեր են ռուսները։ Ավազակներին հալածելով, անապատի խորքն են թափանցում ռուսաց բանակի հետախույզ հեծելազնդի մարտիկները՝ հանգուցյալ Պետրոս դի Սարգիս Գիլանենցի ստեղծած հայոց այրուձին։

— Մե՞ծ է հայոց այրուձին,— հարցրեց Բայանդուրը։

— Սկզբում փոքր էր, հետո խոշորացավ։ Ջուղայեցի հարուստ վաճառական Պետրոս դի Սարգիս Գիլանենցը իր հաշվով ու ծախսով ստեղծեց այս այրուձին։ Մեծ համբավ հանեց. ջոկատը բազմացավ. շատ հայեր մտան նրա մեջ՝ Արցախից, Թիֆլիսից, Հյուսիսային Կովկասից։ Ռուսների թագավորը շատ բանով է պարտական այդ քաջ մարդուն։ Ես անձամբ ծանոթ էի նրան։ Ազնվական դեմք ուներ և չնայած կլոտ էր, բայց գեղեցիկ էր ու կորովի։ Ընկավ մի ճակատամարտում։ Հոգին լո՜ւյս...

— Ամե՛ն։

— Հիմա նրա ստեղծած հայոց այրուձին հազար հինգ հարյուր հոգուց ավելի է։ Պետրոս դի Սարգիս Գիլանենցին փոխարինում է նրա օգնական Աղազար դի Խաչիկը՝ արցախեցի մի քաջակորով երիտասարդ, ռուսաց կայսրուհու սիրելին։

Շատ բան պատմեց Նաղաշ Հակոբը ռուսաց բանակում ծառայող հայոց այրուձիու մասին։ Իշխանը հետաքրքրությամբ էր լսում նրան։ Շուտով՝ մոխրագույն երկնքում առկայծող աստղերն սկսեցին հալվել։ Ադամամութն ընկավ. տափաստանը դարձավ ահավոր ու դարանակալ։ Բայանդուր իշխանը յուրայիններին հրամայեց կայծքարով լցնել հրացանները։ Ամեն վայրկյան անակնկալ կարող էր պատահել։

Ցրվող մթության մեջ երևաց կրակի մի թույլ լեզվակ ու անհետացավ։ Ավազաթմբի մոտ ոռնաց տափաստանի գայլը. ցինի կոնչոց լսվեց։ Անապատը կենդանության նշաններ էր ցույց տալիս։

— Մոտենում ենք,— ասաց նկարիչը։

Մի փոքր էլ գնացին։ Ձիերը փռշտացին՝ ծովի խոնավությունն զգալով։ Հանկարծ ավազաթմբի ետևից դեսպանության առաջը տնկվեցին մի խումբ ձիավորներ։ Վաղորդյան մշուշի մեջ երևում էին նրանց եռանկյունաձև գլխարկները, սպիտակ վարտիքներն ու զենքերը։

— Կանգնեցե՛ք, ովքե՞ր եք,— հարցրեց նրանցից մեկը ռուսերեն։

— Հայեր ենք,— չհապաղեց Նաղաշ Հակոբը՝ նույնպես ռուսերեն պատասխան տալով,— հյուր ենք գալիս պոլկովնիկ պարոն Աղազար դի Խաչիկին։

Ձիավորները մի պահ անհետացան բլրի ետևում, և հանկարծ տափաստանի վրայով թռավ շեփորի ձայնը, ասես գետնի տակից բուսան երկու հարյուրի չափ ձիավորներ և նիզակներն առաջ ցցած՝ օղակեցին դեսպաններին։

Բայանդուր իշխանը ողջունեց նրանց։ Համոզվելով, որ եկվորները հայեր են՝ զինվորները մի պահ զարմացան. ապա նիզակները ետ քաշեցին և արդեն առանց մարտակարգի՝ մոտեցան։

— Հայե՞ր եք,— ուրախ բացականչեց մի հարյուրապետ։

— Հայեր,— պատասխանեց իշխանը։

Հարյուրապետն արագ իջավ ձիուց, մոտեցավ նրան և հայերին անծանոթ ձևով զինվորական ողջույն տվեց։ Դեսպանի մարդիկ զարմացած հետաքրքրությամբ էին նայում ռուս և հայ զինվորներին։ Թվում էր՝ արքայական թիկնապահներ են իրենց առջև։ Հարյուրապետը դեսպանին առաջնորդեց դեպի իրենց բանակատեղը։ Լույսն արդեն բացվում էր։ Իսկ երբ արևի ցնցուղը կպավ տափաստանին՝ միանգամից սկսեց շոգը։

Բայանդուր իշխանն ուշադիր նայում էր իրեն ուղեկցող հարյուրապետին, որ սև մազմորուքով, թավ, առաջ ցցված հոնքերով տղամարդ էր։ Նրան թվում էր, թե ինքը մի տեղ տեսել է այդ խստահայաց, բայց և բարի աչքերով մարդուն։ Սա նկատելով, որ իշխանը ճիգ է անում իրեն մտաբերել՝ համեստաբար հարցրեց.

— Դժվարանո՞ւմ ես ինձ ճանաչել, տե՛ր իշխան Բայանդուր։

— Չեմ թաքցնում,— խոստովանեց իշխանը։— Ծանոթ ես երևում, բայց չեմ կարողանում հիշել։

— Ժամանակ շատ է անցել, տե՛ր իշխան։ Ես Թիֆլիսեցի եմ՝ Քուզանենց Փարսադան բեկի որդին՝ Թաղի հարյուրապետը։ Ես մի ժամա-

նակ Մցխեթում էի, Դավիթ-Բեկի գնդում։ Այն ժամանակ ես տասնապետ էի։

— Հիշեցի,— պայծառացավ Բայանդուրն ու հոգոց հանեց։— Հորդ հետ շատ եմ թաս բռնել։ Սիրում էր այցի գալ հանգուցյալ Դավիթ-Բեկին։ Գալիս էր սազանդարներով, գուսաններով։ Քեֆ էինք անում։ Վաղո՞ւց ես ռուսաց ծառայության մեջ։

— Չորրորդ տարին է։ Լուսահոգի Պետրոս դի Սարգիս Գիլանենցի խնդրանքով մտա հայոց այրուձիի մեջ։

— Զղջացե՞լ ես։

— Ո՛չ, տե՛ր իշխան։ Հույս ունեինք գալ Հայաստանը փրկելու, երևվանում հայոց թագավոր նստեցնելու, բայց...

— Հիմա հույսդ կորցրե՞լ ես։

— Ոչ տակավին։ Հայոց այրուձիի մեջ ոչ ոք չի կորցրել հույսը։ Աստված ձեր բազկին զորություն տա։ Մեծ իմպերատոր կայսրուհին մի օր երևի մեզ հրաման կտա՝ գալ ձեր հավարին։ Սպասում ենք։

— Տա՜ աստված։

Թաղի հարյուրապետն էլի մի բան ուզեց ասել, սակայն տեսնելով, որ իշխանը թեքված չէ զրույցի և անվերջ նայում է տափաստանի խորքերը՝ լռեց։ Շոգը հետզհետե անտանելի էր դառնում։ Կեսօրին հանգրստացան մի ճահճահամ ջրհորի մոտ, ձիերին ջուր տվին, շարունակեցին ճանապարհը։

Իրիկնամուտին հասան հայոց այրուձիի բանակատեղին։ Կրակ էին վառել, ընթրիք էին պատրաստում։ Այդտեղ մի քանի տասնյակ վրաններ կային։ Քամի չկար։ Մեջտեղի վրանի գլխին կախվել էր ցարական երկգլխանի արծվանիշով դրոշակը։ Ձիերը եռանդով թափահարում էին պոչերն ու գլուխները՝ տափաստանային բոռերին քշելու համար։ Դրոշակով վրանի ստվերում, ձիու թամբին նստած էր մի սպա ու ձեթ էր քսում ատրճանակին։ Թաղի հարյուրապետը Բայանդուր իշխանին ասաց

— Աղազար դի Խաչիկ գնդապետն է։

Մոտեցող ձիավորներին նկատելով՝ Աղազար դի Խաչիկը գլուխը բարձրացրեց, և նրա մտածկոտ դեմքը հետզհետե պայծառացավ։ Տեսնելով դեսպանության հայոց դրոշը, նա ատրճանակն արագ խոթեց գոտու արանքն ու վեր կացավ։ Թաղին ցատկեց ձիուց և մինչ կզեկուցեր իր պետին, սա հարցրեց.

— Հայոց զորականների՞ց են։

— Այո, պարոն գնդապետ,— պատասխանեց Թաղին։— Հայաստանից են գալիս։ Բայանդուր իշխանն է...

— Բայանդուր իշխա՜նը...— զարմացած գոչեց գնդապետը և արագ բռնեց իշխանի ձիու սանձը։— Համեցիր, իշխա՜ն։ Իմ աղքատիկ վրանը քեզ ընծա։ Ձեր ոտքի տակ գորգեր պիտի փռել, բայց գայլերի պես ենք ապրում այս անիծված տափաստանում։ Ի՜նչ արած...

— Մեր ոտքերը փշի ու քարի են սովոր, գնդապետ։

— Ճշմարիտ է,— հառաչեց Աղազարը։— Աստված օգնի։— Նրա խոշոր աչքերը լցվեցին, ձայնը երերաց։ Բայց և իսկույն հավաքեց իրեն ու, դառնալով վրանների մոտ գտնվող զինվորներին՝ գոչեց։— Է՜յ, առյուծնե՛րս, հայոց լեռներից արծիվներ են թռել մեզ հյուր, եկեք ողջունելու։

Հայոց այրուձիի զինվորներն իսկույն շրջապատեցին դեսպանի մարդկանց, ողջագուրվեցին նրանց հետ։ Դրանք թխամորուս, խանձված դեմքերով, բայց լավ հագնված ու լավ զինված մարդիկ էին։ Նրանց հայացքները հարգալից էին. աչքերում հեռավոր կարոտ ու ափսոսանք էր զգացվում։

— Ինչպե՞ս է երկիրը, տե՛ր իշխան,— անհամարձակ հարցրեց տարեց մի զինվոր։

— Պահում ենք արյունով,— պատասխանեց իշխանը։

— Աստծու զորությունը ձեզ հետ,— ասաց նույն զինվորը մի տեսակ մեղավոր ձայնով։— Մենք էլ ենք արյուն թափում Հայոց աշխարհի համար՝ կռվելով ամենազոր կայսրուհու դրոշի ներքո։

— Թող հաստատ լինի հյուսիսային կայսրուհու գահը,— ասաց իշխանը։

Աղազարի զինվորներն իշխանի մարդկանց տարան իրենց վրանները։ Հանեցին նրանց հոգնած ձիերի թամբերը, կերակրեցին և բոլորելով՝ սկսեցին հարցուփորձ։ Աղազարը Բայանդուր իշխանին, մելիք Բաղրին ու Նաղաշ Հակոբին հրավիրեց իր վրանը։ Երբ վերջացրել էին զինվորական համեստ ընթրիքը, Աղազար դի Խաչիկը հետաքրքրվեց, թե ո՞րն է դեսպանության նպատակը։ Բայանդուրն ասաց, որ իրենք գահերեց զորավար Մխիթարի հրամանով եկել են ռուսաց գեներալներից օգնական զորք խնդրելու։

— Թավրիզը գրավելով՝ թուրքերը երեք կողմից շրջապատել են մեր լեռնաշխարհը։ Որտեղ որ է՝ կթափվեն մեզ վրա։ Կայսրուհու օգնությունն ենք ուզում։

— Նպատակը բարի է,— կամաց ասաց գնդապետը և հայացքը փախցրեց իշխանի սուր հայացքից։ Նրան քաջ հայտնի էր, թե ինչ ճիգերով են իր հայրենակիցները մնում իրենց լեռներում։ Նրան հայտնի էին այն բոլոր դիմումներն ու աղերսագրերը, որ հայ իշխաններն ուղար-

կել էին ռուսական արքունիք։ Տեղյակ էր բոյարների ու մեծ իշխանների հուսադրական խոսքերին։ Այդ ամենի հետ գիտեր նաև այն, որ կայսրուհին այժմ ևս զորք չի կարող ուղարկել Հայաստան՝ հազար ու մի պատճառով կաշկանդված։ Կովի սովոր այդ մարդն այժմ ևս կռահում էր, որ հայոց դեսպանությունը նորից ձեռնունայն կվերադառնա, բայց չկամեցավ վաղօրոք հուսահատեցնել նրանց։

— Քնենք, եղբայրնե՛ր,— ասաց նա։— Առավոտ կանուխ ես ձեզ հետ կմեկնեմ գեներալ ֆելդմարշալ իշխան Դոլգորուկովի մոտ։ Այստեղից մեկ ավուր ճանապարհ է։ Բարիբարո մարդ է Դոլգորուկովը, մի բան կանի։

Փաթաթվեցին այծենակաճների մեջ ու պառկեցին վրանում փռած չոր խոտին։ Մութը կոխել էր աշխարհը։ Մի ձի վրնջաց։ Ապա լսվեց զինվորի մեղմ, մելամաղձոտ երգը, հետո տափաստանն ընկղմվեց խոր լռության մեջ։

* * *

Գնդապետ Աղազար դի Խաչիկը հայոց դեսպանությունը հասցրեց Սալյան։ Տափաստանային այդ խղճուկ քաղաքը հազիվ էր նշմարվում երեկոյան մշուշի մեջ։ Աղոտ կերպով երևում էին մինարեների կատարները։ Շուկան ու կրպակները փակ էին, փողոցներում միայն երևում էին ռուս զինվորական դետքեր՝ սպառազեն և զգույշ...

Գեներալ ֆելդմարշալի զորակայանը տեղավորված էր կիսախարխուլ բերդում։ Միակ կանգուն մնացած աշտարակի գլխին հազիվ էր նկատվում ռուսական դրոշը։ Դրագունների մի խոշոր զորամաս բանակել էր փլվածքների արանքում՝ ամեն տեսակի ու գույնի լաթերից և թաղիքներից շինած կլոր, ցածրիկ վրաններում։ Վրանների շուրջն անհանգիստ գլխով էին անում գումակի ու թնդանոթների հսկայամարմին ձիերը։

Բեղերը նոր ծլած մի տասնապետ դիմավորեց հայերին։ Ողջունեց սիրալիր. նրանց ու Աղազարին տարավ շտապ վերանորոգված մի շենք (պատերից դեռ կրի հոտ էր գալիս) և հայտնեց, որ գեներալը բազնիք է ընդունում։

Դեսպաններն իրենց զգեստները մաքրեցին, լվացվեցին ջրհորի անհաճո ջրով ու սպասեցին։ Գեներալը եկավ։ Նա բարձրահասակ, կլոր դեմքով տղամարդ էր։ Բաղնիքից հետո շիկնել էին թեթևակի խամրած նրա այտերը. կեղծամ չուներ, ոսկեգույն մազերը կպել էին գլխին։ Իմանալով, թե ովքեր են այցի եկել իրեն՝ գեներալը հագավ զինվորական

տոնական հագուստները և դեսպաններին ընդունեց ջահերով լուսավորված մի ոչ մեծ սենյակում։

— Ի՞նչ մարդիկ եք,— հարցրեց լուրջ ու խոժոռ, թեև գիտեր, թե ովքեր են նրանք։

Աղազար դի Խաչիկն իսկույն թարգմանեց նրա հարցը։

— Մենք հայոց գահերեց զորավար Մխիթար սպարապետի դեսպաններն ենք,— պատասխանեց իշխանը և խոր գլուխ տվեց։

— Ա՜...— հիացմունքով գոչեց գեներալը։— Հայաստանի՞ց եք։ Միայն պատասխանեցեք առանց գլուխ տալու։ Ա՜խ, ա՜խ... Արմենիա՜... Շատ թագակիր գլուխներ պիտի խոնարհվեն ձեր առջև, դուք դրան արժանի եք։ Ռուսաստանը հիացած է ձեր քաջությամբ։ Ինչպե՞ս է երկիրը, զորքը, Մխիթարը։

— Թուրքը նեղում է, գեներա՛լ։

— Թուրքը ի ծնե նեղիչ է,— գլուխն օրորեց գեներալը և, գրկելով իշխանի մեջքը՝ նրան ու մելիք Բաղրին նստեցրեց իր երկու կողմերին։ Լռեց։ Մռայլ հայացքը գցեց գետնին։ Աղազար դի Խաչիկին հայտնի էր, որ գեներալ Դոլգորուկովը մինչև այժմ էլ ռուսաց արքունիքում համառորեն պահանջում է զորք մտցնել Հայաստան։

— Թուրքը նեղում է,— կրկնեց գեներալը ցավով. կռացավ դեպի իշխանը։— Եվրոպան էլ է նեղում, իշխա՛ն։ Թուրքերին նրանք գրգռեցին թե՛ մեր և թե՛ ձեր դեմ։ Շահ Թահմազին նրանք արգելեցին ընդունել մեր օգնությունը։ Նրանք չթողին, որ մենք մտնենք ձեր Երևանն ու վրացիների Թիֆլիսը։ Չթողի՛ն... Վերևում շվեդների թագավորը դավեր է լարում մեր դեմ։ Ծովը նավերով է լցրել։ Թուրքերն անգլիական ռազմանավեր են բերել Ազով։ Պետրոսը մեղք չուներ, իշխա՛ն, հավատացեք, մեղք չուներ, բայց...— նա մի երկվայրկյան լռեց, երևի պատեհ չհամարելով շարունակել միտքը։— Այսպես չի մնա. գիմացեք...

— Կդիմանանք,— հառաչեց իշխան Բալանդուրը։— Կդիմանանք մենակ, մինչև վերջին զինվորը։ Այն ժամանակ թող աստծո դատաստանն ընկնի մեր արյան մեղավորների գլխին։ Մենք մեր զենքը ցած չենք դնի...

Գեներալի աչքերը խոնավացան։ Հուզմունքը թաքցնելու համար շուռ եկավ դեպի իր համհարզը, որ խոնարհ սպասում էր դռների մոտ, ու հրամայեց ընթրիք տալ։

— Ես ձեզ կուղեկցեմ գեներալ Գոլիցինի մոտ. նա կանչել է ինձ.— ասաց Դոլգորուկովը։— Իմ տերն ու հրամայողը նա է, իշխա՛ն։ Դուք ձեր խոսքը ասացեք նրան։

— Աղաչում ենք, գեներա՛լ, համոզիր կայսրուհուն, որ զորքով օգնի մեզ։ Համոզիր,— ասաց Նաղաշ Հակոբը։— Մեր հույսը ձեզ վրա է։ Հա-

յաստանում դուք մի ամբողջ ժողովուրդ ունեք բարեկամ, որ ձեր գալստյանն է սպասում ահա արդեն երկար տարիներ ի վեր։

— Այդպես է,— հաստատեց մելիք Բաղրը։— Եթե կայսրուհին երկու-երեք հազար զինվոր տա մեզ, ապա գոհ կլինենք։

Նրանց լսելուց հետո Դոլգորուկովն ասաց.

— Ես Հայաստան զորք մտցնելու համար շատերի գլուխն եմ տարել, բայց դարձյալ պատրաստ եմ կատարելու ձեր խնդրանքը։ Ես իմ կողմից նակամ կգրեմ կայսրուհուն։

Ընթրիք բերին։ Հայերն ախորժակով կերան ռուսական տոուզ հացը, որից սուր, բայց հաճելի հոտ էր գալիս։ Սպասավոր զինվորը պղնձե ահագին ինքնաեռից թեյ լցրեց չինական գավաթները։ Այդ բանը բոլորովին նորություն էր հայերի համար։ Մեղրի օղի խմեցին։ Մելիք Բաղրին զարմացնում էր խոզաճարպի հաստ շերտերը, որից կտոր-կտոր կտրտելով՝ ախորժակով ուտում էր գեներալը։ Զրուցում էին Պարսկաստանում կատարվող դեպքերի շուրջը։ Գեներալն իր հիացմունքն արտահայտեց Վարանդայի ու Մարաղայի ճակատամարտի առթիվ, ապա գովեց գնդապետ Աղազարի այրուձիի քաջությունները։ Գեներալը խուսափում էր դեսպանության առաքելության մասին խոսելուց։

Լուսաբացից առաջ մեկնեցին Բաքու։ Դեսպանությանն ու գեներալին ուղեկցում էր կազակական մի հարյուրյակ։ Հասան ծովափ, ապա թեքվելով ձախ գնացին՝ ծովի ավազուտները ծեծելով։ Ծովն անշարժ էր, գորշ ու անհրապույր։ Տոթը խեղդում էր։ Շիկացած ավազն այրում էր ձիերի սմբակները։ Գնում էին լուռ։ Ո՛չ գյուղի էին հանդիպում, ո՛չ մշակված հողերի։ Զախ կողմին ահռելի անապատն էր, աջում՝ քարացած ծովը։

Չորս օր հետո դեսպանությունը մոտեցավ Ապշերոնյան թերակղզուն։ Ծովափն այստեղ կենդանության նշաններ էր ցույց տալիս։

— Զարմանում եմ, թե ի՞նչ կա այս անապատում, որ կպել եք սրան, փոխանակ մեր աշխարհը գալու,— ասաց Բայանդուրը գեներալին՝ ձեռքով ցույց տալով անկենդան անապատը։

— Այստեղից է սկսվում ձեր աշխարհի ու Պարսկաստանի դուռը,— պատասխանեց գեներալը։

— Դռանը կանգնել եք ու ներս չեք մտնում։

Գեներալը չպատասխանեց։ Դա չվիրավորեց իշխանին։ Ուստի շարունակեց՝ ասես ինքն իր համար։

— Եթե ձեր մեծ հրամանատարը մեզ օգնություն չտա, ապա մենք կհամարենք, որ աշխարհում ոչ մի բարեկամ չունենք։

— Իրավունք ունեք,— պատասխանեց Դոլգորուկովը։

— Մեր հույսը քեզ վրա է, գեներալ,— առաջ տարավ իշխանը։—

Մեզ հայտնի է այն մեծ սերը, որ դու ունես դեպի հայերը։ Ինչո՞ւ չեք միանում մեզ, որ գնանք ու Երևանից քշենք թուրքերին։ Չէ՞ որ մեր աշխարհը մեր կամքով հանձնում ենք ձեզ։

Դոլգորուկովը մեզմ ժպտաց, որից ավելի գեղեցիկ երևաց նա։

— Իրավունք ունեք նախատելու մեզ,— ասաց նա։— Դուք շատ բան արիք մեր կայսրության համար։ Դուք հինգ տարի շարունակ ետ վանեցիք թուրքական այն բանակները, որ պիտի գային մեզ վրա։ Բայց Պետրոսը գնա՞ց... Կոտրվեց թուրքին սաստող ձեռքը։ Մեջտեղը Կոստանդնուպոլսի արյունոտ պայմանագիրը կա, իշխա՞ն։

— Մնում է, որ մենք կոտորվենք,— հառաչեց Բայանդուրը։

— Աստված մի՛ արասցե,— տնքաց Դոլգորուկովը։

— Մենք ձեր առջև ճանապարհ ենք բաց անում դեպի Պարսկաստան ու Միջերկրական ծովի ափերը,— տաքացավ իշխանը,— մենք ուզում ենք, որ դուք չմոռանաք մեզ։

— Հայտնի է, սիրելիս։ Գուցե ամենից շատ ինձ է հայտնի, թե ինչպիսի եռանդով էր Պետրոս ողորմած կայսրը պաշտպանում ձեր և վրացիների դատը։ Նա պահանջում էր, որ սուլթանը ճանաչի ձեր երկու երկրների անկախությունն ու չեզոքությունը։ Նա շատ բան էր ուզում, բայց կրկնում եմ, անգլիացիներն ու ֆրանսիացիները խոչընդոտ դարձան։ Պատերազմով սպառնացին մեզ։ Պահը վտանգավոր էր։

— Այդ եվրոպացիները մեր արյանն են ծարավ,— գոչեց Բայանդուրը։

— Ձեր դժբախտությունը որոնեցեք նրանց մեջ,— կարեկցանքով ասաց Դոլգորուկովը։— Ես զմայլված եմ ձեր գործերով, իշխա՞ն։ Ձեզ միայն աստված է պահում, թե չէ մարդկային խելքից վեր է, թե դեռ ինչպես եք դուք դիմանում այդքան զորեղ թշնամուն։

— Մենակ դու չես զմայլված, տե՛ր գեներալ, բայց մի նեղանա, դատարկ հորովելով արտը չես վարի։ Օգնություն է պետք։

— Այդպես է,— համաձայնեց գեներալն ու նորից մռայլվեց։

Ի՞նչ կարող էր անել նա դիվանագիտության փորձված աղվեսների հետ, որոնք խոտի ծեղի պես տրորում են մի հինավուրց, փոքրիկ, քաջարի ժողովրդի միայն նրա համար, որ Ռուսաստանը ոտք չդնի Կովկասյան լեռներից հարավ։

Շոգն անտանելի էր։

Ապշերոնյան թերակղզում եղած անհամար դերբուկներում ու փոսերում նեղվում էր նավթը։ Գետինը սև էր, տեղ-տեղ միայն ծակծված ուղտափշով ու անապատի աղքատիկ բույսերով։ Ծովից ծանր-ծանր բարձրանում էր շիկացած օդը։

Իշխան Դոլգորուկովը հայոց դեսպաններին տարավ ռուսաց բանակի գլխավոր կայանը։ Ռուսական վրանները զարկված էին ծովափին՝ Բաքու ավանից մի փոքր ներքև։ Զինվորներից շատերը մերկացել, մտել էին ջուրը և հևում էին տապ օդից։ Հեռվում կանգնած էին բազմաթիվ ռազմանավեր՝ ծանր ու ճնշող։

Կեսօրվա այրող պահն էր։ Մարդիկ շնչում էին ջրից հանած ձկների պես։ Վրանների ստվերներում տենդում էին բազմաթիվ զինվորներ։ Մի տեղ գերեզման էին փորում տենդից մեռածների համար։

Գեներալին դիմավորելու եկած մի բարալիկ, կարճ խուզած բեղերով կապիտան ծնոտը կափկափելով զեկուցեց, որ գլխավոր հրամանատար Գոլիցինը երկու օր առաջ մեկնել է Ռաշտ և խնդրել, որ նա գնա այնտեղ։

— Տենդո՞ւմ եք,— տեսնելով որ կապիտանը կակազում է՝ հարցրեց գեներալը։

— Կո-կո-տո՞ր-վում ե՞ ե՞ ենք այս անիծված դը-դը-ժոխքում։

— Գնա լազարեթ,— հրամայեց գեներալը։

Մոծակների պարսերը փաթաթվեցին հայերին։ Զովասուն լեռներում ապրած մարդիկ էին ու զզվում և սարսափում էին այդ թունավոր բզզաններից։

Դոլգորուկովը որոշեց գիշերը մնալ Բաքվում և մյուս օրը հայոց դեսպանության հետ նավով մեկնել Ռաշտ՝ գեներալ Գոլիցինի մոտ։ Մյուս օրը նավ նստեցին։ Հայերից շատերն առաջին անգամ էին ճանապարհորդում ծովով։ Բացի Նաղաշ Հակոբից, մյուսները բռնվեցին ծովային ցավով։ Բայանդուրը հայհոյում էր։ Զինվորները սիրտ էին թափում, տառապում։ Միայն Նաղաշ Հակոբն էր տախտակամածին անշարժ կանգնած ակնապիշ նայում ծովի հեռուներին։

Ծովի մռայլ ու կնճռված հեռաստաններին կենդանություն էին տալիս ճայերը, որոնք ճչում էին անախորժ, քարի պես նետվում ծովն ու նորից դուրս գալիս։ Աչ կողմը ավազոտ ցամաքն էր՝ անհորիզոն ու անկենդան։ Թիավարող նավաստիները երգում էին մելամաղձոտ։ Թեև հայերը չէին հասկանում նրանց երգը, բայց զգում էին հայրենի տան ու հողի այն մեծ կարոտը, որ երգով արտահայտում էին այս շիկավուն, կլոր դեմքերով մարդիկ։

Ռաշտ հասան երկու օր հետո։ Ծովախորշում կանգնած ռուսական նավերից թնդանոթային ողջույնի համազարկ տվին գեներալի ժամանման առթիվ։ Մայրամուտ էր։ Երևում էին Ռաշտի կապույտ մինարեները, հայոց եկեղեցու բարձր գմբեթը։ Հայերը շրջվեցին եկեղեցու կողմն ու երեսներին խաչ հանեցին։

— Այստեղ աննման խոշորաձուկ է լինում՝ սև մորթով, անուշ, ինչպես կարագը,— Ռաշտին նայելով ասաց նկարիչը։— Լավ գորգեր էլ են գործում այստեղ։

— Հիմա քեզ գորգեր կընծայեն, Նաղաշ եղբայր,— հեգնեց մելիք Բաղրը։

— Ես իմն ստացել եմ,— հառաչեց նկարիչը։— Աստված ուրիշին չտա, ինչ ինձ տվեց։

Նավակով Դոլգորուկովին ընդառաջ եկած ծովային սպաները դեսպանական նավն ուղեկցեցին մինչև գլխավոր հրամանատարի ռազմանավը, որի վրա ծածանվում էր կայսրական դրոշը։

Ռազմանավի տախտակամածի վրա Դոլգորուկովին դիմավորեց գեր, մանր աչքերով ու մամուռ այտամորուքով իշխան Գոլիցինը։ Նա սառը պատասխանեց Դոլգորուկովի ռազմական ողջույնին ու տարակուսանքով նայեց հայերին։

— Հայոց դեսպանությունն է, պարոն գեներալ,— զեկուցեց Դոլգորուկովը։— Եկել են Հայաստանից։

Գեներալը մռայլվեց, գլխի թեթև շարժումով ողջունեց հայերին, ու դեմքը շուռ տալով՝ խոսեց Դոլգորուկովի հետ։ Սա աչքունքի շարժումներով իշխանին հասկացրեց, որ ուշադիր լինի դեպի հայերը, բայց Գոլիցինը միայն դեմքն էր կնճռում։ Բայանդուր իշխանը խոցվեց նրա սառը, նույնիսկ արհամարհական վերաբերմունքից։ Երբեք իրեն այդպես նվաստացած չէր զգացել նա։ Բայց լռեց... Ճարն ի՞նչ... Գոլիցինը ինչ-որ մեկին հրամայեց հայերին տեղավորել, իսկ ինքը Դոլգորուկովի հետ մտավ իր խցիկը։

— Ինչո՞ւ եք ինձ մոտ բերել այդ հայերին,— ընկնելով փափուկ բազմոցին՝ դժգոհ հարցրեց նա։

Դոլգորուկովը հանեց երկար ծխամորճը (հանգուցյալ Պետրոս կայսրն էր նվիրել նրան՝ Նարվայի ճակատամարտից հետո։ Այդ ծխամորճն ուղղակի մտնում էր շատ ռուս բարձրաստիճան սպաների աչքը. նախանձում էին, իսկ Դոլգորուկովն իր ծխամորճը հանելով՝ կարծես ուզում էր ասել. «Ահա, Մեծ Պետրոսն իր բերանից հանեց այս թանկագին ծխամորճն ու նվիրեց ինձ, իմացեք»)։ Նա առատ ծուխ արձակեց գեղեցիկ բեղերի արանքից ու ասաց.

— Մենք անպատվում ենք հանգուցյալ Պետրոս կայսեր հիշատակը։

— Ինչո՞վ,— գունատվեց Գոլիցինը։

— Որ հայերին թողել ենք բախտի քմահաճույքին,— գրեթե ճչաց Դոլգորուկովը։— Պետրոսը ողջ լիներ, հիմա մենք Եփրատ գետի ափերին էինք։ Բայց նա գնաց, ու նրա գահը մնաց մի կնկա։

— Իշխա՛ն,— դողացող ձայնով գոչեց Գոլիցինը ու երկյուղած նայեց դռանը։

— Այո՛, այո՛,— չզիջեց Դոլգորուկովը։— Ռուսաստանի փառքը գնա՛ց... Թաքուն չէ։ Ինչո՞ւ է նորին մեծության կայսրուհին մեզ մոծակների կեր դարձնում այս անապատում։ Ինչո՞ւ հրաման չի տալիս մտնել Արմենիա։ Վախենո՞ւմ է։ Իզուր։ Մեզ զինակից հայերը երեսուն հազար զորք կհանեն։ Նրանք մեզ կկերակրեն, կհագցնեն։ Իսկ կայսրուհին վատթարն է անում։ Հայերին մենակ է թողել թուրքերի դեմ... Սա անազնվություն է։

— Աստվա՛ծ իմ...— ահուդողով շշնջաց Գոլիցինը՝ փափլիկ մատներով ձգելով կեղծամի ոլործուն խոպոպները։— Ինչե՞ր ես մտածում, հոգյա՛կս...

— Մտածում եմ՝ Ռուսաստանին ազնվորեն ծառայողի պես։ Բավական է, որ մենք ութ-ինը հազար հրացանակիր ուղարկենք Հայաստան, և հայերը մի շաբաթում կառնեն Երևանը։

— Գուցե կանեն, գուցե ոչ,— ձեռքերը թափ տվեց Գոլիցինը։— Բայց դա իմ ու քո բանը չէ։ Մենք հրաման կատարողներ ենք, հոգյակս. բոյարներ կան, սենատ կա, կայսրուհի կա։ Եվ վերջապես, դու այդ հայերին երես մի տուր։

— Նրանք մեզ են ապավինել, նրանց պետք է օգնել զորքով։ Աստծո դատաստան կա։ Նրանք չլինեին, հիմա թուրքը մեզ քշել էր Կասպից ծովի ափերից։ Հինգ տարի նրանք վահան դարձան մեզ համար...

— Չգիտե՞մ, չե՛մ հասկանում,— թթվեց, ձանձրացավ Գոլիցինը։— Ի՞նչ ես առաջարկում, հոգյա՛կս։

— Ես իմ կարծիքն արդեն հայտնել եմ Պետերբուրգին։ Դուք ևս գրեցեք կայսրուհուն։ Այս կողմերի զորքերի տերը դուք եք։ Գրեք, թող հրաման տա մեզ՝ գնալ Հայաստան։

— Չե՛մ կարող, չե՛մ կարող,— բազկաթոռից ցատկեց Գոլիցինն ու սկսեց վազվզել նեղ խցիկում։— Ես այդ բանն անել չեմ կարող։ Քեզ շատ բան հայտնի չէ, ողորմա՛ծ տեր (նա կանգնեց Դոլգորուկովի դիմացը, հևաց)։ Ես շատ բան գիտեմ դիվանագիտություն ասած պոռնիկ կնոջ վարքից։ Գիտե՞մ... Այո՛, Պետրոսը ցանկանում էր կայսրությանը միացնել Հայաստանն ու Վրաստանը։ Այս չոր ավազուտները չէին գրավում նրան։ Հայաստանի վրայով անցնող առևտրական ճանապարհներն էին քաշում կայսրին։ Բայց չեղա՛վ... (գլուխը տարուբերեց)։ Չեղա՛վ...— խորհրդավոր շարունակեց նա։— Երբ ես մեծ դեսպան Նեպլյուևի հետ Կոստանդնուպոլսումն էի, ֆրանսիական դեսպան դը Բոնակը լկտի ժպիտը դեմքին եկավ մեր նավն ու մեզ առաջարկեց անհապաղ հրաժարվել

մեր մտադրությունից և չփորձել մոտենալ Հայաստանի ու Վրաստանի սահմաններին։ «Հակառակ դեպքում, մենք կօգնենք սուլթանին,— սպառնաց նա,— շվեդներին բաց կթողնենք ձեզ վրա»։ Հիմա իմացա՞ր, թե ով քար դրեց հայոց հարցի վրա։ Այդ նույն աղվեսը դը Բոնակն էր, որ թուրքերին ստիպեց չճանաչել պարսից շահ Թահմազի հետ կնքած մեր դաշնագիրը։ Դը Բոնակի հետ ձեռք-ձեռքի էին տվել անգլիական դեսպանը, Վենետիկը, Ավստրիա ռեզիդենտը։ Նրանք կաշառեցին թուրքերի վեզիրներին, որ սուլթանը ոչինչ չզիջի մեզ, իր զորքը մտցնի հայերի ու վրացիների երկրները։ Անգլիական դեսպանը սուլթանին ասել է. «Կռվեցեք ռուսների դեմ, նրանք Եվրոպայում ոչ մի բարեկամ չունեն։ Կռվեցեք, իսկ մենք ու Դանիայի թագավորը պատրաստվում ենք ներխուժել Ռուսաստան»։ Ահա թե ինչ, հոգյակս։ Նրանք դրամ են տալիս սուլթանին, զենք, ռազմամթերք են տալիս, նավեր ու թնդանոթներ են տալիս...

— Իսկ չէ՞ որ Անգլիան ու Ֆրանսիան իրար թշնամի են,— հարցրեց լսածներից ցնցված Դոլգորուկովը։

— Այո, նրանք ուրիշ դեպքերում իրար կոկորդ են կրծում, բայց մեզ՝ ռուսներիս մեկուսացնելու և թուրքերին մեր դեմ հանելու համար միմյանց թքածը լիզում են։ Մեր դեմ նրանք բարեկամանում են։

— Թշվա՛ռ հայեր...— բացականչեց Դոլգորուկովը։

— Այո, բախտը նրանց չի ժպտում։ Նրանց ազատությունը խլեցին հենց իրենց դռների առջևից...

— Նրանք իրենց լեռներում թուրքերի վիթխարի բանակների դեմն են կանգնել, գուցե չիմանալով, թե ովքեր են իրենց բախտի վրա գիրեզմանաքար դնում։ Մի՞թե պիտի մի այդպիսի հին ու ազնիվ ժողովուրդ կորչի՝ Եվրոպայի գայլերի զոհ դառնալով։

— Աստվա՛ծ փրկե...— շշնջաց Գոլիցինը։

Երկուսն էլ երկար ժամանակ լուռ էին։

— Ի՞նչ պատասխան տանք հայոց դեսպաններին,— վերջապես հարցրեց Դոլգորուկովը։— Եկել են հույսով, հավատով։

— Չգիտե՞մ,— ուսերը ձգեց Գոլիցինը։— Գուցե խորհուրդ տանք գնալ մայրաքաղաք՝ կայսրուհու ոտքը։

— Համենայն դեպս, դուք, իշխա՛ն, ընդունեցեք հայերին. մի քաղցը հուսադրական խոսք ասեք նրանց։

— Հուսադրական խո՛սք...— քմծիծաղեց Գոլիցինը։— Ի՞նչ մեծ շնորհ է։ Կասեմ. օգուտն ի՞նչ։ Կհավատա՞ն։ Հուսադրական խոսքով ո՞ր բանակի առաջը կառնես։ Չէ, չեմ կարող կեղծել։ Ավելի լավ է մի բանով օգնենք նրանց, մտածենք, գուցե զենք տանք, դրամ, գուցե մի հարյուրյակ դրագուն։

Դոլգորուկովը հույսով նայեց Գոլիցինին։ Ուրիշ ինչո՞վ կարող էր օգնել այս մռայլ, հաստամարմին գեներալը։ Խոստացածն էլ շնորհք է, միայն թե կատարի... Չէ որ իրավունքը թագակիրների ձեռքին է. իրենք միայն հրամաններ կատարողներ են։ Ուրիշ ոչինչ։

* * *

Ռուս գեներալները հայ դեսպանների պատվին շքեղ ճաշկերույթ տվին։ Գեներալ Գոլիցինը հագել էր իր գեներալական զգեստը, որով և ներկայանում էր թագուհուն։ Ռազմանավի տախտակամածից թնդանոթային կրակ տեղացին բաց ծովի վրա։ Հայոց ժողովի դրոշը տնկեցին կայսրության արծվակիր դրոշի մոտ։ Փողային նվագախումբը ռազմական քայլերգ նվագեց։

Գեներալները Բայանդուր իշխանին նստեցրին իրենց մեջտեղը՝ դրոշների տակ։ Ծովից փչող իրիկնամուտի տաք քամին խշշացնում էր նրանց մետաքսը։ Ինչքան էլ գեներալներն ուշադիր և հոգատար էին Բայանդուր իշխանի նկատմամբ, այնուամենայնիվ, նրա դառնությունը չէր փարատվում։ Ուշքն ու միտքը Հայաստանումն էր։ Արդյոք խաղա՞ղ է հայրենի աշխարհը, թե՞ արդեն օսմանյան բանակները խուժել են նրա կիրճերը։ Արդյոք ինքը օգնության մի փոքր ուժ կտանի՞ հայ ժողովրդին թե՞ կվերադառնա ձեռնունայն։ Այս միտքը հանգիստ չէր տալիս Բայանդուրին և միայն քաղաքավարությունից դրդված՝ ճաշակում էր ռուսական ուտելիքներն ու երբեմն օղի խմում։

— Թող հայ իշխանն իրեն բարեկամի տանն զգա, իր եղբայրների մոտ,— ասաց Գոլիցինը՝ հաճելի ժպիտը դեմքին։— Մենք՝ ռուսներս երբեք մենակ ու անօգնական չենք թողնի ձեզ՝ հայերիդ։ Այսօր մեր ոտքերին շղթա են դնում օտարները, որ չգանք ձեր երկիրը։ Բայց այդ շղթաները կփշրվեն, չեն դիմանա երկար, և մենք կգանք ձեզ զորավիգ։

— Վախենում եմ ուշ լինի,— ասաց Բայանդուրը։

— Լոկ խոսքեր չեն, որ ես ասում եմ ձեզ, երևելի իշխան,— շարունակեց Գոլիցինը։— Աննպաստ պայմաններ ստեղծեցին մեզ ու ձեզ համար մեր ու ձեր թշնամիները։ Բայց հավատացեք, որ դա երկար չի տևի, և մենք կգանք ձեր աշխարհից ետ վանելու թուրքական բռնադատողներին։ Կգանք, աստվա՞ծ է վկա։

— Իսկ այժմ մենք ձեզ ձեռնունայն չենք ճանապարհի ձեր աշխարհը,— ասաց Դոլգորուկովը։ Պահը հարմար գտավ, գլխավոր հրամանատարը, թեկուզ կես բերան խոստացել էր մի հարյուրյակ դրագուն, զենք և դրամ տալ հայ դեսպաններին։ Քանի դեռ խոսքը չի փոխել, պետք է

նրան կանգնեցնել կատարված փաստի առաջ։ Նա նայեց Գոլիցինին, սրա դեմքին դժգոհություն չնկատեց, ուստի շտապեց վերջացնել բանը։

— Մի հարյուրյակ ռուս զինվորներ կհանձնենք ձեզ, իշխան պատվարժան։ Թող գան Հայաստան, վարժեն ձեր մարդկանց, կռվեն մեր ու ձեր թշնամիների դեմ։ Ապա զենք ևս կտանք՝ հրացան, թուր, նույնպես և դրամ։ Դրանով զինեցեք ձերոնց, դիմացեք մինչև օրը գա, և մենք հասնենք ձեր լեռներին։

Մի այն Նաղաշ Հակոբն էր նկատում, թե ինչպես է պայծառանում Բայանդուրի մթագնած դեմքը։ Ինքը ևս ուրախ էր։ Դատարկ ձեռքով չեն դառնա հայրենիք։

— Այո, այդպես է, մե՛ծ իշխան,— դառնալով Բայանդուրին՝ հաստատեց Գոլիցինը։— Մենք ֆելդմարշալ Դոլգորուկովի հետ վճռել ենք մի հարյուրյակ դրագուն տալ ձեզ, ապա և երկու հազար հրացան, այդքան թուր և նիզակ և վառոդ ու դրամ նույնպես։ Այս է, հավատացեք այն, ինչով կարող կլինենք օգնել Մխիթար զորավարին և ձեզ։ Աստված է վկա, ուրիշ կերպ չենք կարող։

Բայանդուր իշխանը գրկեց թեթև գինով Գոլիցինի շքեղազարդ ուսերը։

— Շնորհակալ եմ, ձե՛րդ պայծառափայլություն,— գոչեց ոգևորված։— Այդպես էլ գիտեինք, որ մեզ ձեռնունայն չեք թողնի։ Գիտեինք...

* * *

Երկու օր հետո հայոց դեսպանները նավով վերադարձան Բաքու։ Նրանց ուղեկցում էր ֆելդմարշալ Դոլգորուկովը։ Բաքվում իշան ցամաք ու, նորից անապատի ավազները սմբակածեծ անելով, հասան Սալյան։ Այդտեղ ֆելդմարշալն իր ձեռքով ջոկեց այն ռուս դրագուններին, որոնք պիտի գնային Հայաստան։ Ապա կապեցին զենքի ու զինամթերքի բեռները, արծաթ դրամի պարկերը։ Այս բոլորն շտապ բեռնեցին ռուսական խոշորամարմին ձիերին և դրագունների հարյուրյակի հետ մեկնեցին դեպի հայոց այրուձիի բանակատեղին։

Հանգստացան մի օր։ Գիշերը հովով պետք է ճանապարհ ընկնեին։ Աղազար դի Խաչիկը զինվորական ճաշկերույթ տվեց իր բանակը եկած գեներալի ու դեսպանի պատվին։ Խոսում էին պատերազմական գործերից։

Կերուխումի տաք պահին Բայանդուրը գավաթը ցած դրեց ու բարձրաձայն դիմեց յուրայիններին։

— Վեր կացեք գնալու։— Ապա դարձավ ֆելդմարշալին։— Ճանապարհ դիր մեզ, իշխա՛ն։ Անչափ գոհ ենք. պահն է վերադառնալու։

Դոլգորուկովը կանգնեց։

— Բայց համբերիր մի պահ ևս, ես կամենում եմ քեզ նորից ուրախացնել։

— Աստված էլ քեզ ուրախացնի, իշխա՛ն,— հուզվեց Բայանդուրը։— Մշտապես երախտապարտ կմնանք ազգովի։

Դոլգորուկովը Աղազար դի Խաչիկին հրամայեց իր այրուձիից երեք հարյուր մարդ առանձնացնել։

— Կատարիր, գնդապե՛տ։ Թող դրագունների հետ մեկնեն Հայաստան։ Ոչ ոք դրա համար մեղադիր չի լինի մեզ։ Հայ մարդիկ են, կասենք, գնացել են իրենց աշխարհը թշնամիներից պաշտպանելու, իրենց իրավունքն է։

Այս արդեն կատարյալ ուրախություն պատճառեց դեսպանին։ Նրա աչքերը թրջվեցին։ Ուրախ էր նաև Աղազար դի Խաչիկը։ Դուրս եկավ վրանից։ Հայոց այրուձին շարեցին։ Բայանդուր իշխանը կանգնեց նրանց առջև ու հուզմունքից դողացող ձայնով ասաց.

— Եղբայրնե՛ր, ձեր հայրենիքին վտանգ է սպառնում։ Արդյոք ցանկանո՞ւմ եք ինձ հետ գնալ Հայաստան՝ մեր պապերի օջախն ու մեր մանուկներին թուրքերից պահպանելու համար։

— Սիրահոժա՛ր,— գոչեցին շատերը։

Կամավորներ շատ եղան։ Բայց ընտրեցին երեք հարյուր հոգի միայն։ Նրանց վրա հրամանատարներ նշանակեցին կապանցի հայ կապիտան Աբդալմասին և Թաղի հարյուրապետին։ Ջոկատը լավ զինելով և պարեն-պաշարով ապահովելով՝ հանձնեցին Բայանդուրին։

Խնջույքը վերսկսեցին։ Բայանդուր իշխանն ուրախ էր։ Ինչպե՞ս չուրախանա, չորս հարյուր հայ ու ռուս զինվոր է տանում հետը։ Դա կամրապնդի իր հայրենակիցների հավատը, թե կայսրուհին չի մոռացել իրենց և կգա օգնության։

Հովն ընկնելուց ֆելդմարշալն ու գնդապետը այրուձիի պետերի հետ երկար տեղ ճանապարհեցին հայոց դեսպանությունն ու զորքը։

Նրանք համբուրվեցին Բայանդուր իշխանի հետ։

— Տերն ընդ ձե՛զ, իշխա՛ն,— ասաց Դոլգորուկովը։— Իմ եղբայրական ողջույնը տար Մխիթար իշխանին և հայ զինվորությանը։ Լավ իմացեք, որ մենք երբեք չենք մոռանա ձեզ, կայսրությանը մատուցած ձեր ծառայությունները։ Ես անվերջ կաղաչեմ կայսրուհուն, որ նա ինձ իմ զորքով ուղարկի ձեր աշխարհը։ Գնաք բարո՛վ...

— Շնորհակալ եմ, տե՛ր իշխան,— զվարթաձայն պատասխանեց Բայանդուրը։— Ես մեր ժողովրդին ու Մխիթարին կհայտնեմ քո անսահմանները դեպի մեզ։ Միայն, Քրիստոսի՛ սիրուն, մի՛ դադարեք և անվերջ ու անձանձիր հասկացրեք թագուհուն, որ մենք սպասում ենք նրա ողորմած օգնության։

Նրանք համբուրվեցին։ Դոլգորուկովը մնաց տեղը, մինչև հայ դեսպաններն ու ձիավոր գունդը մխրճվեցին տափաստանի մշուշի մեջ։

* * *

Տակավին չէին մոտեցել Թավրիզին, երբ երևաց թուրքական ահռելի բանակը։ Մարդկանց, ձիերի, ուղխարների ու տավարի եռացող գորշ զանգվածը տարածվել էր քաղաքում, նրանից դուրս՝ մինչև հեռավոր բլուրները։ Սև թաղիքե անհամար վրանները, դրոշակները, ձիերի երամակները, ամենուր վխտացող զորագնդերը ծանր տպավորություն թողեցին հայ դեսպանների վրա։

— Տե՛ր աստված, այսքան զորք որտեղի՞ց են հավաքել,— շշնջաց Մովսես աբեղան։— Անսպառ են ավազի պես։

Կեսօրն անց էր, բանակից ծխի հազարավոր սյուներ էին բարձրանում և առավել թանձրացնում Թավրիզը պարուրած մշուշը։ Երբեմն հորիզոնի ծայրին փոշու խուռնախիտ ամպ էր տնկվում. բանակ էին մրտնում հեռավոր ասպատակությունների մեկնած ձիավոր գնդեր։ Գիշակեր թռչունների սև երամները կռավոցով պտտվում էին բանակի մոտերքում։

Հայ դեսպանները, որ զվարթ էին մինչև թուրքական բանակին մոտենալը, մռայլվեցին՝ զինված մարդկանց այս ահռելի զանգվածները տեսնելով։ Տեր-Ավետիսը ենթայուն հրամայեց բաց անել Հայոց ժողովի դրոշը։

Առաջ գնացին զգույշ, համախումբ։ Երբ մտնում էին բանակի զանգվածի մեջ, նրանց շրջապատեցին նիզակավոր ասկյարներ։ Ենթային ձեռքն ակամա տարավ դեպի սուրը, բայց և իսկույն ետ քաշեց։ Պակաս տագնապի մեջ չէր նաև Տեր-Ավետիսը։ Այս գազանները հիմա կհոշոտեն իրենց։ Նա բարձրաձայն «սալամ» ասաց և հայտնեց, որ իրենք «ղոնախ» են և որպես «էլչի» են գնում մեծ փաշայի ոտքը։

— Հնազանդվելո՞ւ եք եկել, էրմենիներ,— քրքջալով հարցրեց ծիլավոր փափախ դրած, նեգրի նմանվող մի հսկա թուրք։

— Բանակցելու,— պատասխանեց Տեր-Ավետիսը և խնդրեց իրենց ճանապարհ տալ։

Նրանց տարան անհամար վրանների արանքով և մոտեցրին Թավրի-

զի Երևանյան դարպասներին։ Այդտեղ արդեն խեղդոց էր։ Բայց դարպասներից ներսուդուրս էին անում անթիվ զինվորներ, մոլլաներ, քրձազգեստ դերվիշներ։

Հայ դեսպաններին պահեցին դարպասից մի փոքր հեռու՝ ինչ-որ փաշայի վրանի մոտ։ Դա շքեղ վրան էր՝ ընտիր թաղիքից ու պարսկական գորգերից։ Նրա գլխին տնկված էր կանաչ թավշե դրոշակ՝ ոսկեկար կիսալուսնով։ Երկու ենիչերի պահպանում էին վրանի մուտքը։ Նրանց ոտքերից կապված էին կուպրի պես սև երկու ամեհի շուն։

Հայերին թույլ չտվին մտնել քաղաք։ Դա կատաղեցրեց Տեր-Ավետիսին, սակայն լռեց ճարահատ։ Ողջ գիշեր մնացին երկնքի տակ։ Միայն առավոտյան նամազից հետո նրանց տարան քաղաք։ Մինչև հասան շահ Թահմազի պալատը, որտեղ նստած էր Աբդուլլահ փաշան, կես օր տևեց։ Քաղաքի փոշին, անտանելի տոթն ու աղբակույտերից սփռվող գարշահոտը զզվեցրին հայերին։ Սակայն նրանց տառապանքն ավելի սաստկացավ, երբ նրանց հայտնեցին, որ փաշան քաղաքում չի և հայտնի չէ, թե երբ կվերադառնա։

Դեսպանությունը տեղավորեցին հայոց եկեղեցու գավթում և ասես մոռացան նրա գոյությունը։ Նրանց ապրուստի համար ոք ոչ չմտածեց։ Առաջին օրերը յոլա գնացին խուրջիններում մնացած ուտեստով, հետո սկսեցին անասելի բարձր գներով մի կերպ կեր և ուտելիք գտնել իրենց ու ձիերի համար։ Քաղաքում սակավաթիվ հայ ընտանիքներ էին մնացել միայն։ Նրանց և պարսիկներին այնպես էին թալանել, որ սովամահությունից փրկվելու համար սրանք նույնիսկ իրենց զավակներին էին վաճառում։

Տեր-Ավետիսը համբերությունից դուրս եկավ։ Քսան օր էր, ինչ ոչ ոք չէր այցելում նրան։ Եվ ահա մի երեկո նա հրամայեց հեռանալու պատրաստություն տեսնել։

Առավոտյան հեծան ձիերը, դրոշակը պարզեցին և ուղևորվեցին դեպի Երևանյան դարպասները։ Բայց հրապարակում նրանց հասան մի քանի բարձրաստիճան թուրքեր։

— Ո՞ւր եք շտապում հայե՛ր,— ասացին նրանք պատշաճ հարգանքով։— Փաշան արդեն եկել է և այսօր կընդունի ձեզ։

Բայց Տեր-Ավետիսը համառեց։ Հասկացավ, որ իրենց անպայման կներկայացնեն փաշային, ուստի վճռեց վրեժխնդիր լինել։ Թուրքերը հապճեպ «ինգամ ներողություն» խնդրեցին՝ իրենց անտարբեր վերաբերմունքի համար։ Տեր-Ավետիսը զիջեց։

— Եթե այսօր սերասկյարը չընդունի մեզ, ապա կդառնանք մեր աշխարհը,— սպառնագին ասաց նա։

Նրանց տարան շահի պալատը. կերակրեցին, հրավարեցին լողանալ պալատական բաղնիքում։ Կեսօրից հետո փաշայի խորհրդական Մուրադ-Ասլանը այցելեց նրանց ու հայտնեց, որ սերասկյարը պատրաստ է ընդունել հայոց դեսպաններին։

Տեր-Ավետիսը, Մովսեսն ու Եսային զգեստները փոխեցին, զինվեցին պատշաճին պես, գնացին Մուրադ-Ասլանի ուղեկցությամբ։

— Հրեա՞ է,— ուղեկցին ակնարկելով՝ Մովսեսին հարցրեց Եսային։

— Ո՞վ իմանա, գուցեև ուրացող հայ է,— պատասխանեց Մովսեսը։

Մուրադ-Ասլանն աննկատելի ժպտաց։

Երբ հասան սերասկյարի հարկաբաժինը, Մուրադ-Ասլանը հիշեցրեց, որ դեսպանները պարտավոր են զենքերը հանել։

— Մենք պարտված կողմը չենք, որ զինաթափ լինենք,— անփույթ շպրտեց Տեր-Ավետիսը։

Մուրադ-Ասլանը նորից ժպտաց ու, նրանց թողնելով սերասկյարի ընդունարանի նախասենյակում՝ գնաց։ Սերասկյարի սենյակում, դռների մոտ նա խոր գլուխ տվեց Աբդուլլահին, որ Յալդուզ Հասան, Ղոչ Ալի փաշաների ու էլի մի քանի զորավարների հետ սպասում էր հայոց դեսպաններին։

— Դեսպանները չեն կամենում զենքերը հանձնել,— ասաց նա։

— Օհո՜...— մռմռաց սերասկյարի կողքին կանգնած Յալդուզ Հասանը։— Հապա ի՞նչ նպատակով են եկել գյավուրները։ Զինաթափիր զոռով։

Աբդուլլահը երկար հոնքը ծռեց։

— Զոռով ո՛չ Վարանդայում կարողացանք խլել այդ հայերի զենքը, ո՛չ էլ Մարաղայում,— ծանր ասաց նա։— Թող գան զենքով։

Մուրադ-Ասլանը դուրս եկավ։ Նախ ներս մտավ Տեր-Ավետիսը՝ բարձրագլուխ ու հպարտ։ Նրանից հետո ծանր-ծանր եկավ Մովսեսը, ապա Եսային՝ անփույթ ու հանդուգն։ Երեքն էլ հարգալից արժանապատվությամբ գլուխ տվին Քյոփուրլու Աբդուլլահ փաշային։ Տեր-Ավետիսը ողջունեց պողպատե ձայնով։

— Հայոց գահերեց զորավար, Մեծ ու Փոքր Սյունիքների, Արցախի, Ագուլիսի, Գողթնի, Գեղարքունիքի ու Նախիջևանի ինքնակալ և տիրապետող տեր Մխիթար գահերեց զորավարից, ու Հայոց ժողովի ավագանուց բարի ողջույն քեզ՝ Քյոփուրլուների տոհմի պարծանք Աբդուլլահ փաշայիդ, որի քաջության համբավը հայտնի է շատ աշխարհներում։

Նա նորից գլուխ տվեց, դարձյալ միայն Աբդուլլահին։ Մյուսներին նկատելու չէր տալիս։ Թուրք զորավարները վիրավորվեցին։ Յալդուզ Հասանը վագրի հայացքով էր նայում Տեր-Ավետիսին, որի անունը վաղուց

հայտնի էր նրան։ Նրա մարմնով սարսուռ անցավ, երբ նայեց Եսայուն։ Սա չէ՞ր, որ Մարաղայում թուր էր ճոճում իր գլխին։ Միայն իր ձիու ճարպկության շնորհիվ չէ՞ր, որ փրկվեց սրա ձեռքից։

Այնինչ, Եսային կլանված նայում էր շահական պալատի սրահին, որտեղ այժմ տեր էր թուրք սերասկյարը։ Նրան թվաց, թե ինքն ընկել է հերիաթային մի աշխարհ։ Դեսպանական զգեստները նեղեցին, զենքերը դարձան փթանոց։ Գունավոր ապակիներով պատուհաններից ասես ծիածաններ էին թափվում սրահի մեջ։ Առյուծի թաթեր ունեցող ոտքերով պատվանդանին կանգնած էր ոսկեշրջանակ մի հայելի, որի մեջ նա տեսավ իր ուղղ հասակը և հազիվ հասկացավ, որ դա ինքն է։ Բրոնզե բարձր եռոտանիների վրա դրված էին ոսկե ջահեր։ Պատերին զարմանահրաշ նկարներ էին փակցված, որոնք կլանում էին Եսայու ուշադրությունը, և նա հազիվ էր կարողանում զսպել գեղջկական զարմանքի ճիչը։ Բայց նրան ամենից շատ հետաքրքրում էր Աբդուլլահ փաշան։ Սա ուղտի պես երկար տղամարդ էր՝ հաստ, մեծ գլխով, որ ամուր նստած էր հզոր ուսերին։ Նրա աչքերը սև էին, որոնց մեջ ասես օձեր էին կուտակված։ Նոսր մորուքն իջնում էր ականջների մոտից և նիզակի ծայրի պես ցցվում ծնոտին, ասես, դիմացինի կուրծքը մխրճվելու համար։ Եսային մտքում ծիծաղեց։ Այս փաշան չէ՞ր, որ իր առջևից փախավ Մարաղայի ճակատամարտում։ Ինքն անպայման կթողներ նրա ահա այդ սեխանման գլուխը, եթե նա իրեն չնետեր գետը... Փախա՜վ։ Մի անգա՜մ էլ առիթ կլինի հանդիպել...

— Ի՞նչ է կամենում հայոց գահերեց զորավարը քո բերանով հայտնել ինձ։— Եսային լսեց փաշայի ձայնն ու սթափվեց։

— Մեր գլխի թագն ու պարծանքը ողջություն է ցանկանում քեզ ու քո զորքին,— հանդարտ պատասխանեց Տեր-Ավետիսը։ (Եսային զարմացավ։ Ո՞վ է ում ողջություն ցանկանում)։ Մենք չենք ուզում, որ ձեր և մեր թշնամի պարսիկների դեմ կռվող սուլթանի, թող աստված իր կողքին տեղ տա նրան, զորքն իզուր արյուն թափի Հայաստանի լեռներում, ինչպես դա եղավ Մարաղայում, Վարանդայում, եղավ Երևանի տակ։

Տեր-Ավետիսը նկատեց, թե ինչպես մռայլվեցին թուրք փաշաները։ Մատը նրանց վերքի վրա դրեց, ուրախացավ, շարունակեց նախկին հանդուգն ձայնով.

— Մենք խաղաղություն ենք ուզում։ Մենք ուզում ենք դադարեցնել մեր և ձեր միջև եղած կռիվը։ Ապրենք՝ ամենքս իր համար։

— Իսկ եթե տիեզերքի կարգադրիչ սուլթանը հրամայի ինձ՝ մրոնել ձեր աշխարհը՞,— հարցրեց սերասկյարը։

— Մտել ես ու փորձել։ Քո զորքը նորից կոչնչանա, արժանագո՛ւյն փաշա։ Դրանից կշահի Խորասանի կողմերը փախած շահ Թահմազը,— պատասխանեց դեսպանը։

— Գուշա՞կ ես, թե՞ դեսպան,— չհամբերեց, մեջ ընկավ Յալդուզ Հասանը։

Տեր-Ավետիսը չլսելու տվեց նրան ու առաջվա ձայնով շարունակեց.

— Մենք ցանկանում ենք, որ մեր միջև հնչի հաշտության ձայնը, ապա թե ոչ, կդղրդա պատերազմի որոտմունքը։

— Հպատակվեցեք մեզ, և խաղաղություն կլինի,— ասաց Աբդուլլահը։

— Մենք ոչ ոքի հպատակվելու միտք չունենք բնավ։

— Դու միայն լեզվով ես մեզ ջարդել կամենում,— նորից խոսեց Յալդուզ Հասան փաշան։

Աբդուլլահը խեթ նայեց նրան։ Տեր-Ավետիսը շառաչունեց։

— Թող պատվելի փաշան չմոռանա իսկական ջարդերը։ Իսկ թե ինչ կլինի հետո՝ աստծուն է միայն հայտնի,— բացականչեց նա։

Մի երկվայրկյան լռեցին։ Աբդուլլահը խորհում էր։ Անշուշտ նա կարող էր հրամայել հենց հիմա խարույկի վրա այրել հայ դեսպաններին, բայց զորավարի խոհեմությունը զսպում էր նրան։ Նա գիտեր, փորձել էր, որ ճակատամարտերով անհնար է ընկճել հայոց զինվորությունը։ Կկռվեն նորից։ Ուրեմն ուրիշ միջոցներ են հարկավոր, ուրիշ կերպ պետք է խեղդել հայերի զորությունը։

— Ինչո՞ւ եք դիմադիր կանգնել մեզ, քանի որ այդ երկրները ձերը չեն,— խոժոռ հարցրեց փաշան։— Մի՞թե հայտնի չէ, որ Քռի ու Արաքսի խառնուրդից դեսը գտնվող աշխարհները մեզ են հանձնված։

— Հայտնի է,— պատասխանեց Տեր-Ավետիսը։— Բայց ոչ ոք իրավունք չունի մեկի հողը տալ մյուսին։ Մեր աշխարհն ի սկզբանե մերն է։

— Ուժն իրավունք չի հարցնում։

— Բայց ոչ արդար ուժը, այլ ավազակությունը...

Աբդուլլահի հոնքը ցցվեց։ Նա դարձավ դաժան։

— Դուք ամբարիշտ ազգ եք,— չարությամբ նետեց նա,— դուք չեք հավատում մեզ և, գյավուր ուռուսի ձեռքը բռնած՝ բերում եք մեր աշխարհի վրա։ Այդպես եք անում, հետո խաղաղություն պահանջո՞ւմ։ Սուլթանի ձայնից Եվրոպան է դողում, իսկ դուք խիզախո՞ւմ եք մեր դեմ։ Չե՞ք կորչի, արդյոք, անհետ։

— Ամեն մարդու աստված իրավունք է տվել պաշտպանվելու։ Մենք էլ անում ենք դա,— պատասխանեց Տեր-Ավետիսը։

— Աստված իրավունք է տվել նաև սպանել հակառակորդին։

— Այդ էլ ճշմարիտ է։

— Վերջացնենք։ Ո՞րն է ձեր խոսքը։— Ձեռքը թափ տվեց Աբդուլլահը։

— Ո՛չ հպատակություն, ո՛չ պատերազմ, տե՛ր սերասկյար։ Ես եկել եմ պահանջելու, որ դու մեզ վերադարձնես Նախիջևանը, Երևանը, Լոռին։ Զորքդ հեռացնես այդ քաղաքներից։ Այդ դեպքում կապրենք խաղաղ ու հաշտ։

Փաշան բարձրաձայն քրքջաց։

— Լա՜վ ախորժակ ունես, դեսպա՛ն, հի՛, հի՛, հի՛... Մի՛ մոռանա, որ երկնքի տակ գտնվող երկրների մեծ սուլթանն ինձ ուղարկել է ձեր դատաստանը տեսնելու, որպեսզի այսուհետև ոչ մի հայ երբեք չհանդգնի վերցնելու այն սուրը, որն ալլահի կողմից միայն մեզ է բաշխված։ Իսկ դու եկել ու ինձանից Երևան ու Նախիջևան ես պահանջո՞ւմ։ Միամիտ մարդ... Գնա՛, դեսպան, ասա քո իշխանին, որ ձեզանից միայն կապրի նա, ով կշոքի իմ առջև ու կերկրպագի սուլթանին, երբ ես հրով ու սրով մտնեմ ձեր աշխարհը։

— Կասե՛մ, փաշա,— հանդարտ պատասխանեց Տեր-Ավետիսը։— Միայն իմացիր, մենք ընդառաջ կգանք քեզ, բայց ոչ երկրպագելու...

— Մենք պողպատով կդիմավորենք ձեզ։

— Մեր ատամները սովոր են պողպատ ծամել։

— Վերջացա՛վ,— ձեռքը բարձրացրեց փաշան։

Հայ դեսպաններին դուրս տարան։ Երբ նրանք անցնում էին Թավրիզի մեծ հրապարակով, այնտեղ խառնիխուռն հավաքվել էին թուրքաց բազմաթիվ զորագնդեր։ Ձիու թամբին կանգնած մի թուրք մոլլա գոռում էր.

— Մի՛ երկնչեք անհավատ քրիստոնյաներից։ Վերցրեք սրբազան Ալլի զուրֆըզար թուրը և «յա՜ Ալի», «յա՜ Մուհամմեդ» գոչելով՝ ջարդեցեք ու ջնջեցեք նրանց։

— Հաշա՛, հաշա՛,— կամաց ասաց Տեր-Ավետիսը։— Դուք ձեր փառքի գմբեթը մինչև այժմ խոնարհված չեք տեսել, բայց սպասե՛ք...

— Ես այդ մոլլային ճանաչում եմ,— հանկարծ ասաց Եսային։

— Իսկապե՞ս,— ժպտաց Մովսեսը։

— Հա՛, հա՛, էն խաչը։— Ոգևորվեց Եսային։— Դա այն մոլլան է, որին Վարանդայում Թովմա հարյուրապետը գերի վերցրեց, բայց Մխիթարը բաց թողեց։ Կատու էր դառել այն ժամանակ, իսկ հիմա տեսեք ո՞նց է հոխորտում։

— Զորը դատարկ, աղվեսը՝ խան,— ասաց Տեր-Ավետիսը։— Տեսնես

Թավրիզում քանի՞ հայի գլուխ է կտրել այդ հաշացողը։ Իսկ մենք նրան ազատ ենք արձակել։

Դեսպանները վերադարձան եկեղեցու գավիթը։ Ժամանակն է. պիտի բռնել տունդարձի ճանապարհը։ Տեր-Ավետիսը գոհ էր ինքն իրենից։ Զընկճվեց, շնվաստացավ, թուրք փաշաներին նեղը լծեց։ Կատարեց իր պարտքը։ Իսկ ո՞վ չգիտեր, որ թուրքերը կամովի չէին հեռանա Հայաստանից։

Բայց և այնպես սրտում մի ծանր դառնություն կուտակվեց։ Ո՞ւմ վրա էր գոռում, ո՞ւմ էր վախեցնում։ Ո՞ր մեծ տերության դեսպանն է ինքը։ Ո՞վ է կանգնած իրենց թիկունքում։ Եվրոպայի սրտից մինչև արաբական անապատները բռնված է թուրքական մորեխով։ Եվրոպայի դեսպանները չոքեչոք են մտնում սուլթանի պալատը։ «Խե՜ղճ մեր ժողովուրդ,— դառնորեն մտածում էր նա։— Ո՞վ էր քեզ ասում սուր հանես արյունարբու գազանի դեմ, որ հիմա կանգնես ոչնչացման առաջ։ Ինչո՞ւ ես այդպես հանդուգն։ Ինչո՞ւ չես վիզդ ծուռ պահում, բերանդ՝ փակ։ Ո՞վ է քո տերը։ Ինչո՞ւ խաբվեցիր ու մեն-մենակ մնացիր աշխարհակուլ գազանի առջև։ Նստեիր քո լեռներում, քո մաճն ու մանգաղը բռոնեիր... Ապստամբեցի՞ր, հա՞, լա՜վ արիր։ Բայց հետո՞, տեսա՞ր ինչ արին Երևանի, Լոռու, Նախիջևանի հետ։ Լա՞վ չէր լինի, որ հնազանդ մնայիր քո տանը՝ քո լեզուն ու հավատը մի կերպ պահելով, քան հոխորտալով ընկնեիր փղերի ոտքերի տակ...»։

Տեր-Ավետիսը սոսկաց իր իսկ մտքերից։ Բայց միաժամանակ առաջին անգամ զգաց, որ իրենց բռնած գործը հղի է ծանր հետևանքներով։ Ո՞ւր կտանի իրենց հանդգնությունն ու համառությունը։ Մինչև ե՞րբ կկարողանան դիմանալ։ Իսկ կդիմանա՞ն արդյոք։

Նա տխուր նայեց եկեղեցու գավթում մոլոր կանգնած Մովսեսին, Եսային, այն երկու զինվորներին, որ ուղեկից էին իրեն։ Մի քանի ասկյար փողոցում լկտիաբար հոհոռում էին։ Տեր-Ավետիսին թվաց, թե դա հայի անգութ բախտի դաժան հոհոռոցն է՝ ուղղված հենց իրենց։ Ի՞նչ կարող է անել մի բուռ քաջությունը թշնամու ահռելի ուժի առաջ։ Առաջին անգամ այդ պողպատե մարդն իրեն ընկճված ու անուժ զգաց։

* * *

Օրը մթնում էր արդեն։ Տեր-Ավետիսը յուրայիններին պատվիրեց կերակրել ձիերին՝ գիշերանց ճանապարհ ընկնելու համար։ Սիրտը սոսկվել էր, ոչ մի բարի բան չէր գուշակում։ Ո՞վ գիտե, ի՞նչ դավեր են հիմա թուրքերը նյութում իրենց դեմ...

Նա մեն-մենակ մտավ այն խուցը, որտեղ ապրել էր մի քանի շաբաթ մոռացված ու մտամոլոր։ Կամեցավ կանչել Մովսեսին՝ մենակ չմնալու համար, բայց խցի մի անկյունից հանկարծ դուրս եկավ այն Թուրք երևելին, որ այդ օրն իրեն տարել էր փաշայի մոտ և կարծես ծաղրելու համար՝ պատշաճից ավելի խոր գլուխ տվեց։

— Մի՛ զարմանա, տե՛ր դեսպան,— շոյող ձայնով խոսեց նա։— Իմ գլխի տեր սերասկյարն է ինձ ուղարկել քեզ սփոփելու։

Տեր-Ավետիսը ցնցվեց։ Մի ահավոր բան կար այդ մարդու նեղմանր աչքերի մեջ, որոնք թեև ժպտում էին, սակայն պատրաստ էին հոշոտելու դիմացինին։ Բայց նրա զարմանքը կրկնապատկվեց, երբ բոլորովին վերափոխված տեսավ իր փոքրիկ, անշուք խցիկը։ Առաջվա լերկ պատերը ծածկված էին թանկագին գորգերով՝ մետաքսե կտորներով։ Թախտին բարձեր էին դրված։ Հատակը նույնպես պատած էր գորգերով։

— Դարձյալ կզարմանաս, տե՛ր դեսպան,— առաջվա մեղմությամբ խոսեց Թուրքը։— Բայց ինչե՞ր ասես, որ չեն կատարվում այս ունայն աշխարհում։ Այս բոլոր պատիվները մեծ փաշան է արել քեզ, դու նրան շատ ես դուր եկել։ Այս համեստ նվերները փաշայից են, վայելի՛ր...

— Բայց դու որտեղի՞ց լույս ընկար,— բարկությամբ հարցրեց Տեր-Ավետիսը։

— Դա կարևոր չէ։ Քո այստեղ եղած ժամանակ տիվ ու գիշեր ես հետևում էի քեզ։ Նույնիսկ լսում էի քո մշմշոցը։ Այդպես պետք էր, թե չէ մեր ասկյարները կհոշոտեին քեզ։ Ես պահպանեցի քեզ ու քո մարդկանց։

«Որոգայթ է»,— արագ անցավ Տեր-Ավետիսի գլխով, ու նա ցասկոտ նայեց անկոչ հյուրին։ Վերջինս թեթև խոնարհում արեց ու դուրս եկավ խորքի դռնից։ Տեր-Ավետիսը դեռ ուշքի չէր եկել, երբ Թուրքը վերադարձավ՝ ընթրիքի սկուտեղը գլխին դրած մի ծառայի հետ։ Շուտով երևաց մի ուրիշ ծառա ևս՝ արծաթե խոշոր մատուցարանի վրա տապակած հնդկահավ բերելով։ Ծառաներն ուտելիքն ու մի կուլա գինի դրին թախտի մոտ դրած ցածրիկ սեղանին և իսկույն հեռացան։

Թուրքը փակեց դուռը, մոմ վառեց ու ձեռքով հրավիրեց, որ Տեր-Ավետիսը նստի։ Դրսում մրափել էր բանակը։ Միայն երբեմն լսվում էին ձիերի անհանգիստ խրխինջներ։

— Իմ անունը Մուրադ-Ասլան է, տե՛ր դեսպան,— նստելով խոսեց Թուրքը։— Սուլթանի հպատակների մեջ ես առաջիններից եմ և Աբդուլլահ փաշայի խորհրդատվի պատիվն ունեմ։ Լինենք բարեկամ։

— Երբեմն վատ չէ թշնամու հետ բարեկամանալը,— ծաղրեց Տեր-Ավետիսը, նստեց ցածրիկ աթոռին, խոսակցի դիմացը։

— Օ՜... մարգարեի լեզվով ես խոսում, տե՛ր դեսպան։ Եթե աշխարհի բոլոր թշնամիները բարեկամանային, արևն էլ քաղցր կժպտար աստծու ստեղծած թշվառների վրա։— Թուրքը գինի լցրեց։— Խմենք, տե՛ր դեսպան,— բարեկամաբար ասաց նա։— Պատվական գինի է։

Առանց սպասելու, որ դեսպանը խմի, նա թասը գլխին քաշեց ու, տապակած հնդկահավի մի ոտքը կտրելով՝ սկսեց կրծել։

— Որքան ինձ հայտնի է, բարեպաշտ մուսուլմանները գինի չեն խմում, տե՛ր խորհրդական,— դատարկ գավը ցած դնելով՝ նկատեց Տեր-Ավետիսը։

— Այդպես է, բայց դա մուսուլմանների համար է սահմանված, իսկ ես քրիստոնյա եմ։ Մի՛ զարմանա, եղբայր։ Ես հայ եմ։

— Հա՞յ,— գրեթե ճչաց Տեր-Ավետիսը։— Ի՞նչ հայ, եթե նա ծառայում է Թուրքին։

— Մի՛ շտապիր, տե՛ր դեսպան,— ձեռքը բարձրացրեց Մուրադ-Ասլանը։— Չէ՞ որ դուք էլ վազեցիք՝ ռուսաց թագավորին ծառա դառնալու։ Այդպե՞ս է։ Այո, հայը հիմա օտարին ծառա լինելուց բեցի ուրիշ ճար չունի։ Իսկ տերը, կեղեքողը քեզ համար միևնույն չէ՞ պարսիկ է կամ Թուրք։

— Քրիստոնյա տերն այլ է, մահմեդականն՝ այլ,— առարկեց Տեր-Ավետիսը։

— Դատարկ բա՜ն է,— քրքջաց Մուրադ-Ասլանը։— Քեզ նման խելոք մարդը չէ, որ հետին քահանայի պես պիտի մտածի։ Դու եղիր խոնարհ, և տիրոջդ աչքը քաղցր կլինի քեզ վրա։ Քրիստոնյա անգղիացիներն ու ֆրանկները չէի՞ն, որ ծախեցին ձեզ։

Տեր-Ավետիսը պատասխան չգտավ։ Մի նոր բաժակ դատարկեց։ Մուրադ-Ասլանը դուրս եկավ շատ բանիմաց ու փորձված մարդ։ Նա ասաց.

— Ահա քո Մխիթար տերը առաքել է քեզ այստեղ։ Դու նրա ծառան ես ու քո պարտքն ես կատարում նրա հանդեպ...

Տեր-Ավետիսն աննկատելի ցնցվեց։ «Մխիթարի ծառա՞ն»,— ցասումով մտածեց նա ու երբ գլուխը բարձրացրեց, նկատեց խոսակցի շրթունքների արանքում ծվարած հեգնական ժպիտը։ «Միտքս կարդում է այս շունը»— դառնորեն մտածեց նա։ Մուրադ-Ասլանն իր խոսքն առաջ տարավ.

— Արևմուտքում քրիստոնյաները մեծ բաներ են պատմում Մխիթարի մասին։ Գուցե այդպիսի մեծ խելքի ու քաջության տեր ուրիշ այր չկա ողջ հայության մեջ, թող չուզողը ես լինեմ, տե՛ր դեսպան, բայց մենք խոսքից շեղվեցինք։ Մեր՝ իմ ու քեզ նման մահկանացուներիս չի

տրված դատել մեծերի արարքները։ Գինի խմիր։ Հիմա դու կասես, թե ես ազնիվ հայ չեմ։ Բայց ոչ, ես էլ եմ ուզում, որ Մխիթարը դառնա հայոց թագավոր, որ այդ թագավորությունը փռվի Քուռի ու Արաքսի միացման տեղից մինչև Եփրատ ու Բզնունյաց ծովի հարավային լեռները։

— Եթե այդպես է, ապա ինչո՞ւ չես թողնում օտարին ծառայելն ու մտնում հայոց զորքի մեջ,— հարցրեց Տեր-Ավետիսը։

— Հը՜մ...— արեց Մուրադ-Ասլանը։— Ես ավելին եմ անում, քան դուք։ Լսիր, տե՛ր դեսպան, դու և քո տեր Մխիթարը...

Նրա հազը բռնեց։ «Քո տեր Մխիթա՜րը,— նորից դառնությամբ մտածեց Տեր-Ավետիսը։— Ինչո՞վ է նա ինձ տեր»։

— ...Քո տեր Մխիթարը,— հազը կուլ տալով շարունակեց Մուրադ-Ասլանը,— և բոլոր մելիքներդ մոլորված եք։ Լսո՞ւմ ես, դուք հայ ժողովրդին մղում եք կույր ոչնչացման։

— Մենք ուզում ենք փրկել Հայաստանը։

— Զառանցա՜նք է։ Ինչո՞վ եք ուզում փրկել։ Ո՞վ է ձեզ օգնական, ո՞վ։ Միամի՜տ մարդիկ։ Մերկ պարանոցով գնում եք դեպի թուրքի յաթաղանը, որ ծագեիծագ քանդում է աշխարհը։

— Ուրեմն քո կարծիքով մեզ փրկություն չկա՞,— թեքվելով հարցրեց Տեր-Ավետիսը։

— Կա՜։

— Ո՞րն է։

— Հնազանդվել ուժեղին։ Ձենքը ցած դնել ու գալ սուլթանի ոտքը։ Այդ դեպքում ժողովուրդը չի կոտորվի։

— Այդ բանը երբեք չի լինի։

— Դա քո տիրոջ՝ Մխիթարի խոսքերն են և ոչ թե քոնը։ Մի՛ մոլորվի, իմաստո՛ւն այր։ Լսիր օգտակարը։ Մեծ տերություններ են սոսկում Ստամբուլի կիսալուսնից, իսկ դուք սո՞ւր եք հանում նրա դեմ։ Դուք դրանով մի բուռ դարձած հայերին մատնում եք ոչնչացման։ Հասկանո՞ւմ եք, թե ինչ եք անում։

Կարճ լռելուց հետո, նա շարունակեց.

— Ես ավելի գործի մարդ եմ, տե՛ր դեսպան։ Խոսենք գործից։

— Որևէ հանձնարարություն ունե՞ս փաշայից։

— Փաշայի բերանով քեզ խոսք է ասում ինքը՝ սուլթան Ահմեդը։ Հավատա՛, ես բարեկամի սրտով եմ դիմում քեզ։ Հեռացիր այդ խելագար ռամիկից։

Տեր-Ավետիսը փշաքաղվեց։ Թեև նա գլխի ընկավ, թե խոսքն ում մասին է, բայց հարցրեց խոժոռ, շարացած։

— Ո՞ւմից հեռանամ։

— Միամիտ մի՛ ձևանա, խոսքս քո տեր Մխիթարի մասին է։

— Լռի՛ր, թե չէ՞...

— Համբերի՛ր,— չար ասաց Մուրադ-Ասլանը,— ես սուլթան Ահմեդի խոսքերն եմ ասում քեզ։ Մինչ դու բանտարկված էիր այս խցում, մենք մարդ առաքեցինք սուլթանի ոտքը՝ ձեզ հետ բանակցելու առթիվ։ Ուրեմն լսիր։ Դու կլինես Սյունիքի տեղապահ փաշան, նույնիսկ եթե կամենաս, էջմիածնի կաթողիկոս։ Ես գիտեմ, որ դու հոգևորական ես եղել... Այս մեկ։ Երկիրդ կփրկվի կոտորածից։ Այս երկրորդ...

— Վա՞րձը...

— Մեջտեղից հանել Մխիթարին ու հպատակվել սուլթանին։

— Դավաճա՜ն,— տեղը ծառս եղավ Տեր-Ավետիսն ու մագիլները մեկնեց դեպի Մուրադ-Ասլանը։— Ես քեզ կծվատե՜մ...

— Համբերի՛ր,— զարմանալի հանդարտ ձայնով ասաց Մուրադ-Ասլանը։— Խոհեմ եղիր, տե՛ր դեսպան։ Իմ ասածները ոչ ոք չի լսում։ Քո մարդիկ մեկ ուրիշ խցում են։ Սուլթանի առաջարկն այս է՝ կամ հպատակություն՝ Մխիթարին վերացնելու հետ, կամ պատերազմ։ Նժարների վրա է հայ ժողովրդի բախտը։ Մտածիր և պատասխան տուր։ Մնաս բարո՜վ...

Մուրադ-Ասլանը գնաց դեպի խորքի դուռը։

— Կա՜ց,— նրա ետևից կանչեց Տեր-Ավետիսը։— Հրամայիր ինձ ճանապարհ դնել հենց հիմա, այս ժամին, շո՜ւտ։

— Օրհնվի՜ ճանապարհդ,— ժպտաց ուրացողը։— Բայց ասածներս չմոռանաս։

Վեց օր հետո հայոց դեսպանները մոտեցան Հալիձորին։ Ճանապարհին Տեր-Ավետիսն անվերջ մտածել էր Մուրադ-Ասլանի առաջարկների մասին։ Հազար անգամ փրփրել, կատաղել էր այդ ծախված հայի դեմ, որը հանդգնել էր միտք անել, թե ինքը կդավաճանի Մխիթարին։

— Անամո՜թ, ուրացո՜ղ,— երբեմն գոչում էր նա։ Վճռել էր ամեն ինչ պատմել Մխիթարին։

Մխիթարը նրան դիմավորեց քաղաքի դռների մոտ։ Տեր-Ավետիսը ցած թռավ ձիուց և ամուր, շա՜տ ամուր փաթաթվեց նրան։

Ճաշին, երբ դեսպանության մասին ամեն ինչ պատմել էր, հանգ առավ պատմելու նաև Մուրադ-Ասլանի առաջարկները, բայց հետաձգեց երեկոյան՝ ընթրիքին։ Ընթրիքի ժամանակ հետաձգեց մյուս օրվան, մյուս օրը՝ երրորդ օրվան և ի վերջո այդ մասին ոչինչ չասաց։

Բայց և չէր մոռանում Մուրադ-Ասլանի ասածները։ Գիշերները երկար տապակ էր գալիս անկողնու մեջ ու հառաչում։ Այդ երկաթե կամք

և ուժ ունեցող մարդու սիրտն սկսեց լափել մի անտանելի միտք, որն իրենից չէր հեռանում ոչ մի վայրկյան։

Իսկ իրար հաջորդող դառը դեպքերը նպաստում էին դրան։

ԳՈՐԾՈՒՄ Է ՊՈՂՊԱՏԵ ԲՌՈՒՆՑՔԸ

Հալիձորը տենդային պատրաստության մեջ էր։

Այլևս կասկած չկար, որ այսօր կամ վաղը Թուրքերն իրենց ամբողջ զորությամբ կնետվեն Հայոց լեռնաշխարհի վրա՝ մեկընդմիշտ ոչնչացնելու նրա ռազմական կարողությունը։

Մխիթարը կարողացավ երեք գունդ մշտական զորք ևս ստեղծել՝ յուրաքանչյուրը հազար հոգուց։ Տիկին Սաթենիկը նորից շրջագայեց գավառները և, մեծագումար նվերներ հավաքելով ժողովրդից՝ հանձնեց Հայոց ժողովի տնօրինությանը։

Նոր ստեղծված գնդերը տեղավորեցին խոշոր վանքերում՝ նրանց ծախքերով պահելու համար։ Այս ձեռնարկությունը տրտունջ առաջացրեց հոգևոր հայրերի մեջ։ Նրանք, ի նշան բողոքի, բոկոտն ու կիսամերկ եկան Հալիձոր և աղաղակ բարձրացրին Հայոց ժողովի ապարանքի առջև։ Մխիթարը հրամայեց ծեծել նրանց, վռնդել քաղաքից։ Երկու հանդուգն վարդապետի կարգալույծ արեց։ Հոգևորականներն ահից սկսվեցին, ավելի լայն բաց արին իրենց ամբարների դռները։

Գրեթե ամեն օր հայոց և վրաց հայաշատ գավառներից փախստական մարդիկ էին գալիս Հալիձոր։ Գալիս էին ոչ միայն Թուրքերի կեղեքումներից զզված շինականներ, այլև իրենց վաղեմի իշխանությունից և գավառներից զրկված մելիքներ, թավադներ, իշխաններ։

Մխիթարը նրանց ընդունում էր գրկաբաց։ Բոլորին ուղարկում էր Վրթանես զինագործի մոտ՝ նրա գունդը մտնելու։ Հաճախ ինքն էր անձամբ փախստականներին տանում Պղինձ Արթինի ապարանքը և երբեմն օրերով մնում էր այնտեղ։

Բանսարկուներն սկսեցին շարախոսել, թե Մխիթարը սիրային կապեր ունի Պղինձ Արթինի գեղեցկուհի կնոջ հետ ու նրա համար է այդքան հաճախ հյուր գնում Արթինին։

Մի անգամ, երբ Մխիթարը Թիֆլիսից փախած երեք հայ մելիքի և մի վրաց թավադի պատիվներ տալով տարավ Պղինձ Արթինի ապարանքը, Վարդ-խաթունն ամուսնուն ասաց.

— Քնա՞ծ ես, ա՛յ մարդ, գիտե՞ս ինչ մարդկանց հետ է Մխիթարը քիթ-քթի քեֆ անում Պղինձ Արթինի տանը։

— Դա իմ ի՞նչ իմանալու բանն է,— դժգոհ նետեց Տեր-Ավետիսը։— Տնանկ մարդիկ են, օթևան է տալիս։

— Հը՛մ,— ատամները կրճտացրեց Վարդը։— «Օթևա՛ն է տալիս»։ Աչքերդ բա՛ց արա, միամի՛տ մարդ. դրանք Թիֆլիսից ու Լոռուց փախած իշխաններ են։ Մխիթարը մտադիր է նրանց գյուղեր տալ, զորապետներ կարգել նրանց։

— Թո՛ղ կարգի,— մռնչաց Տեր-Ավետիսը։

— Կկարգի քո տեղը, տոհմիկ մելիքների տեղը և ձեզ վերջին նոքարի պես կպահի։ Իմացա՛ծ եղիր։

— Հե՛-ռի՛ք է...— գոռաց Տեր-Ավետիսը։— Կերաք սիրտ, մարմինս լափեցի՛ք։ Հերի՛ք է, վե՛րջ։ Ձեմ ուզում, չէ՛...

Եվ կրակից փախչողի պես դուրս թռավ տնից։ Երեսուն տարվա ընդմիջումից հետո, այդ օրն առաջին անգամ, բուռն ցանկություն ունեցավ մտնել եկեղեցի, աղոթել սրտանց։

Առավոտյան ժամերգության պահն էր։

Եկեղեցին լեփ-լեցուն էր հավատացյալներով։ Տեր-Ավետիսին տեսնելով՝ քահանաները զարմացան, շփոթեցին սաղմոսի գլուխները։ Տեր-Ավետիսը մոմ վառեց, շոքեց բեմի առաջ և աղոթեց երկար՝ ժողովրդի զարմացած հայացքի առջև։

Եկեղեցուց դուրս գալիս զգաց, որ իր հետ մի ծանր բան է կատարվում, որ մի թանկագին բան պոկվում է իր սրտից, հեռանում, որ կարծես մառախուղով է պատվում նրա երբեմնի հստակ ճանապարհը։

***

Մխիթարը մի խումբ թիկնապահների ու Թիֆլիսից փախած զորապետների հետ իջնում էր Բաղաց ձորը։ Ճանապարհն անցնում էր խիստ թեք լեռնալանջին ծվարած Բեխ գյուղի միջով։ Ոչ ոք չդիմավորեց գահերեց զորավարին, թեև օրը բացվել էր արդեն, և բոլոր տներից երևում էր ճանապարհը։

Մտան գյուղ։ Հենց առաջին հանդիպած տան կտուրին մի մեծ խարույկ էր վառվում։ Այդ տարօրինակ բանը զարմացրեց բոլորին։ Խարույկի մոտ ոչ ոք չկար, և նրա վրա ոչինչ չէր դրված։ Շուտով նկատեցին, որ խարույկներ կային մյուս կտուրների վրա ևս։ Մխիթարն ինչ-որ անհաճո բան գուշակեց։

— Սա ի՞նչ է նշանակում,— մռայլ հարցրեց կողքին, ձիու վրա օրորվող Մովսեսին։

— Չեմ հասկանում,— պատասխանեց Մովսեսը, որ նույնպես զարմացած էր սաստիկ։

— Բողոքի նշան է,— բացատրեց Թիֆլիսեցի փախստականներից մեկը։— Մեզանում կտուրներին կրակ են վառում՝ իբր բողոք պարսիկ խաների կամ թուրք փաշաների դեմ։ Բարի բան չէ։

Գնացին առաջ։ Ջորակում, կամարակապ աղբյուրի մոտ, հավաքվել էր ողջ գյուղը՝ մեծ ու փոքր։ Լուռ էին, սսկված։ Նրանցից երեք ծերունի բաժանվեցին ու, մոտենալով սպարապետին՝ յուրաքանչյուրը մի փետրահան հավ դեմ արեց նրան։ Սպարապետի գույնը թռավ։ Հավերը խլեց նրանցից ու նետեց հեռվում թազնած շներին։

— Բա՜րև ձեզ, բեխեցինե՛ր,— չարացած, նեղացած ու անսովոր բարձր ողջունեց նա։— Շնորհակա՞լ եմ փետրած հավերի համար։ Այդպիսի թանկագին պտտվի չի արժանացել Հայաստան մտած ոչ մի սելջուկ սուլթան, մոնղոլ խան, պարսիկ շահ կամ թուրք փաշա։ Գո՞հ եմ... Բայց, բարի եղեք ասել, թե ինչո՞ւ եք կտուրներին կրակ վառել։ Հեթանո՞ս եք։

— Ինչ ուզում ես հաշվիր,— չարացած պատասխանեց ծերունիներից մեկը։— Միտքներս իմացիր՝ այրվում ենք այդ կրակների մեջ գցած փայտերի պես։

— Հապա հավե՞րը։ Ծաղրո՞ւմ եք ինձ,— գոչեց Մխիթարը։

— Նույնպես իմացիր, որ մենք նման ենք այդ փետրահան հավերին։

Մխիթարը հոնքերը կնճռեց, ոտքը հանեց ասպանդակից, ձիուց իջավ։ Ճոճվող քայլերով մոտեցավ շունչը պահած ամբոխին։ Կանգնեց նրա դիմաց, հևաց ու խպոտ հարցրեց.

— Ո՞ւմ է պատկանում այս գյուղը։

Պատասխանն ուշացավ։ Մխիթարի արյունը գլխին խփեց։

— Հարցնում եմ՝ ո՞ւմ եք պատկանում դուք, պապանձվե՞լ եք, ի՞նչ է։

— Մենք Տեր-Ավետիսի ժողովուրդն ենք,— պատասխանեցին մի քանիսը։

— Խաբում եք,— որոտաց Մխիթարը,— Տեր-Ավետիսը գյուղ չունի։

— Ունի՛, ողորմա՜ծ իշխան, ոտքի՛դ մատաղ, ունի՛... Մեր գյուղը ճիշտ է, նրա հայրենիքը[1] չէ, բայց իրենն է։ Կինը՝ Վարդ-խաթունն է օժիտ բերել։

[1] Այստեղ՝ հայրենական ժառանգություն։

— Հետո՞,— ակամա դուրս թռավ սպարապետի բերանից։

— Հետո ի՞նչ ասենք։ Կրակն ընկած վառվում ենք, մեռնում օձի բերանում։ Այս տարվա հունձը պրծանք։ Թեև աստված լիաբուռն չտվեց, էլի գոհ էինք։ Բայց եղածը Վարդ-խաթունի վերակացուներն առան։ Հիմա մեր տաշտերը դատարկ են, ջրաղացները՝ խափան. մի ծակ ցորեն չունենք։ Տեսանք, որ դու ես գալիս՝ վճռեցինք բողոքել։ Սովից կկոտորվենք, օգնի՛ր։

Ամբոխի առջև կանգնած էին մերկ մանուկներ՝ ահաբեկված, հացի կարոտ հայացքներով։ Նրանց թիկունքին ձեռքները խաչել էին կանայք՝ դեմքներին ծանր վիշտ։ Տղամարդկանց մեծ մասը բոբիկ էր, նիհար սրունքներով, ցցված այտոսկրներով։ Կարծես ուրվականներ լինեին։

«Անօրինություններ են անում իմ թիկունքում, ես՝ անտեղյակ»,— չարությամբ մտածեց Մխիթարը։ Նստեց ձորալանջի քարերին։ Գլուխը կախեց. չուզեց տեսնել տխուր պատկերը։ Ծերունիները համարձակ կանգնեցին նրա առջև։ Մովսեսն աչքերը փակել էր։ Ամեն տեղ նույն թշվառությունը, նույն սոված, կիսամերկ մարդիկ։ Վերջն ո՞ւր է... Չէր հասկանում։

— Կուզես հերսոտվի մեզ վրա, մեր գլխի տեր Մխիթա՛ր,— խոսեց ծերունիներից մեկը։— Կուզես հրամայիր՝ լցվենք մարապը, վառիր մեզ. համ ատամից կպրծնես, համ ատամացավից։ Անտեր, անբուն շուն ենք արդեն։ Առաջներս ձմեռ է, մենք քաղցած ու մերկ...

— Կկոտորվե՞նք...— ճղճղաց մի կին ու առաջ եկավ։— Մարդուս տարար Վարանդայում փչացրիր, Մխիթա՛ր։ Մանրերս մնացին մոխրում։ Վարդ-խաթունի վերակացուները շան թակ տվին ինձ, հացս տարան։ Անպատվեցին աստծու չստեղծած խոսքերով։ Էլի ուզեցին։ Ճար չունեի, մանր մոխրակերներս վերցրի, գնացի կանգնեցի վերակացուների կշեռքին։ Քաշեցե՛ք, ասացի, քանի՞ փութ եք ուզում, վերցրեք, թե մեր ջանները հերիք չի, կգնամ հորս էլ գերեզմանից կհանեմ, կբերեմ։ Էդ էլ դրեք կշեռքին, տարեք որ պրծնենք։ Հոհոացին, չվերցրին։ Ցորեն են ուզում, մենք մարդ ենք՝ չեն տանում, ինչերին ենք պետք։

Գյուղացիները սիրտ առան համարձակ կնոջ ասածներից, խիտ-խիտ օղակեցին Մխիթարին. խոսեցին՝ ձեռքերի, ոտքերի շարժումներով, ոմանք քաշում էին Մխիթարի թևերից, գոռում, աղաղակում։

— Էս գիշեր գլխներիս սև պատեց,— գոռում էր մեկը։— Հավախոսին հանգստարանում կրակ նկատեցինք։ Երկյուղի եկանք։ Խմբով գնացինք և ի՞նչ տեսնաք։ Իմ հարևան Առաքելն էր՝ կնոջ հետ։ Գերեզմանի

փոս են փորել, երեխաներին դրել մեջը՝ քնացրել, որ հողեն, սպանեն։ Իրենք էլ մտել էին մի ուրիշ գերեզման, որ նավթ թափեն վրաները, վառեն իրենց։ Չթողինք։ Բա՞։ Ի՞նչ անեին, երեխեքն աչքերի առաջ սովից մեռնում էին։

— Մենք էլ ենք գերեզման որոնում։ Չենք դիմանում այսքան ծանրաբեռ հարկապահանջությանը,— գոչեցին այս ու այն կողմից։

Մխիթարը կծկվել էր, ձեռքով ծածկել դեմքը։ Լա՞ց է լինում, ի՞նչ է։

— Կամ տերություն արեք, կամ հրես հավաքված գնում ենք...

— Ո՞ւր,— ցնցվեց Մխիթարը։

— Ուր ապրուստ կճարվի։ Որտեղ հաց՝ էնտեղ կաց։ Մեխլու կդառնանք, կջարդվենք, կհեռանանք։

— Հա՞,— ծառս եղավ Մխիթարը։— Այդպես փախավ նաև իմ հայրը։ Փախավ սովից, անարդարությունից։ Հաց ու արդարություն գտա՞վ կարծում եք. հա՛յ-հա՛յ... Սոված էր, սոված էլ մեռավ օտարության մեջ։ Ո՞ւր եք գնում, թշվառնե՛ր... Ո՞ւր է Մեխլուն, չկա՛... Սուտ էր... Որտե՞ղ կգտնեք արդարը, լավը, բարին։ Չկա՞ն։ Չեն եղել։ Տարեք ձեր խաչը, մինչև կբացվի արդարության օրը։ Ցրվեցեք ձեր տները,— փոքր-ինչ հանդարտ շարունակեց նա։— Ով համարձակվի հեռանալ մեր աշխարհից, գլխատել կտամ։ (Խուլ հառաչանքներ լսվեցին)։ Կկախեմ զավակների հետ, իմացե՛ք։ Ապա իմացեք նաև, որ իմ հողում ոչ ոք չպիտի մեռնի սովից։ Ես ձեզ հաց կտամ, կօգնեմ։

Չհավատացին։ Դա ավելի տխրեցրեց սպարապետին։ Հրամայեց մարդ ու գրաստ առանձնացնել՝ Հալիձորից ցորեն բերելու համար։ Դա ազդեց։ Սակայն մեկը բռնեց նրա գոտին։ Համառ, չարացած ծերունի էր դա՝ խոր ընկած, բայց դեռ կենդանի աչքերով, բահ մորուքով։

— Էլ ինչի՞ ես Հալիձորից հաց բերել տալիս, տե՛ր մեր ողորմած։ Մենք բեռ չենք ուզում դառնալ ոչ ոքի վրա։ Հաց ունես՝ տուր զորքիդ։ Մեր դատածի կեսը որ մեզ տան, կապրենք՝ աստծուն փառք տալուց առաջ, քեզ փառք տալով։— Նա ձեռքը մեկնեց եկեղեցու կողմը։— Հրե՛ն, մեր հացն այնտեղ է։ Վարդ-խաթունի վերակացուները հավաքել, կուտակել են։ Երեք հարյուր բեռ է։ Կտանեն Ագուլիսում կծախեն, Վարդ-խաթունի համար ոսկեղեն կառնեն. ասում են՝ Վարդը ոսկեղենը նվիրել է զորքին, անզարդ մնացել։ Մերը մեզ տուր, թե կարող ես։ Քոնը՝ քեզ։

Մխիթարը գնաց դեպի եկեղեցին։ Ամբոխը հետևեց նրան։ Եկեղեցու առջև մրափել էին Վարդ-խաթունի վերակացուները։ Նրանց արթնացրին։ Մխիթարին տեսնելով, սրանց լեզուները կապ ընկան։

— Չքվեցե՛ք,— նրանց վրա գոռաց գահերեցը։

Եկեղեցին բաց արին։ Մխիթարը հրամայեց հանել ցորենով լիքը

չվալները։ Շինականները կարկամեցին, նայեցին միմյանց, սիրտ չարին անցնել եկեղեցու շեմքը։

— Տարե՛ք։ Ձեր հացն է, տարե՛ք, ապրեցեք, հրամայո՛ւմ եմ,— ասաց Մխիթարը։— Այսօրվանից դուք Վարդ-խաթունին չեք պատկանում այլևս։ Այսօրվանից դուք ազատ գյուղ եք, տարե՛ք...

Գյուղացիները մտան եկեղեցի, ընկան չվալների վրա։ Վերակացուները փախան։ Մխիթարը շուռ եկավ, վազեց դեպի աղբյուրը, թռավ ձիու թամբին ու սլացավ ձորի խորքով։ Մռայլ էր՝ ճակատամարտում պարտված, ճողոպրող զորավարի պես։ Ձին գնում էր թափով, երբեմն վիզը թեքում էր դեպի հովտի մարգագետինը, որտեղ զամբիկներ էին արածում։

Աշնան ուրախ օր էր։ Ձորերը լիքն էին ծիածանի գույներով։ Ամեն տեղից մի զվարթ հրապույր էր հառնում։ Բայց այդ բոլորին անմաս էր Մխիթարը։ Բեխ գյուղում պատահած դեպքը հանգիստ չէր տալիս։ Մինչ այդ կարծում էր, թե ամեն բան իր տեղն է լեռնաշխարհում։ Բայց այդ օրն զգաց, որ մի խոր դժգոհություն է թաքնված այդ հանդարտության տակ։ Մելիքները հլու-հնազանդ կատարում են իր հրամանները, զորապետները՝ նույնպես։ Բայց զգում էր, որ բոլորը չեն, որ անկեղծ են։ Երբեմն նրանցից ոմանց աչքերում կասկածելի սառնություն էր տեսնում։ Ի՞նչ են ուզում այդ սևամորուք, կոշտ ու կոպիտ մարդիկ, որոնց ոտքերը ծռվել են անդադար ձիու վրա լինելուց, որոնք պատերազմների հոտից վայրենացել են, գազազել։ Ամենից շատ դառնացել էր Տեր-Ավետիսի վրա։ Ինչո՞ւ չի սանձել կնոջը, որ Հայոց ժողովի թիկունքում սովամահության է մատնել մի ամբողջ գյուղ։ Եվ մի՞թե միայն Բեխն է այդ վիճակում։

Վճռեց ստուգել բոլոր գավառները։ Էլի՞ սոված գյուղեր կան, թե ոչ։

* * *

Ժանգառքն ընկավ։ Երևաց Պղինձ Արթինի դղյակը՝ թեև գորշ, բայց հրապուրիչ։ Սլացիկ բարդիներ էին թրթռում նրա շուրջը։ Մխիթարը ձիուն շտապեցրեց։ Հոգնած էր, մարմինը ձգում էր հանգստի։ Առանց զգուշացնելու նա բաց արեց զինագործների խրճիթի դուռը։ Խրճիթը լուսավորված էր ձեթի ճրագով։ Ցածրիկ սեղանի մոտ նստած էին Վրթանեսն ու Վոլոդիմիրը։ Վերջինիս կինը փայտե շերեփով թանապուր էր լցնում կավե պնակները։ Վրթանեսի ծնկներին խլրտում էր շեկ, գանգուր մազերով մի երեխա՝ քիթ-մռութը թանոտ։ Տանտերերը սաստիկ

զարմացան անսպասելի հյուրի հայտնվելուց։ Վրթանեսը երեխան ցած դրեց ծնկներից։

— Բարև տանտերերի՛ն,— զվարթ ողջունեց սպասպետը։

— Մեր գլխի վրա, համեցիր, տե՛ր գահերեց,— արագ ասաց Վրթանեսն ու գլուխ տվեց։

— Է՛հ, է՛հ, խանգարեցի ձեր հացը, ներո՞ղ եղեք,— ասաց Մխիթարը։ Դարձավ Խլեբի կնոջը, որը շերեփը ձեռքին մոլորվել էր։— Բարի երեկո, տանտիկի՛ն։ Թող շերեփդ միշտ լիքը լինի, ախորժակներդ անխափան։— Նա գետնից բարձրացրեց երեխային։— Հը՞, քաջս, դու քո բաժին թանապուրից ինձ կտա՞ս, հը, կտա՞ս, թե ոչ։

— Էլ ցկա՛,— համարձակ պատասխանեց երեխան։

— Դո՞ւ ես կերել, թե՞ կատուն։

Երեխան քրքջաց զվարթ, զնգուն ձայնով։ Մխիթարը կսմթեց նրա փափուկ այտը։ Երեխան շրթունքները ուռեցրեց ու փչեց նրա դեմքին։

— Վա՛յ, չարաճճի՛, կրակի կտոր է երևում,— դեմքը շուռ տվեց Մխիթարը։

— Դրան ցա՛ծ դիր, տե՛ր Մխիթար,— խորհուրդ տվեց հայրը։— Այնպիսի գժություններ կանի, որ...

Մխիթարը երեխային հանձնեց մորը։

— Աստված պահի։ Չտեսնի այն դառնությունները, ինչ մենք ենք տեսել,— ասաց նա։

— Ամե՛ն,— պատասխանեցին երեխայի ծնողները։

Կանչեցին Պղինձ Արթինին։ Սա սրտի խորքում վիրավորվեց, որ գահերեցն իր տանը չի իջել։ Ներս բերին նաև Թիֆլիսեցի փախստականներին։ Նստոտեցին՝ ով ինչի վրա կարող էր։ Արթինը Մխիթարին անհամարձակ հրավիրեց իր տունը, բայց սա ձեռքը թափ տվեց։ «Էլի փորումը սատանա կա»,— ահով մտածեց պղնձատեր խոջան։

Մխիթարը զինագործների հետ զրուցում էր մտերմաբար, իսկ Արթինի հետ իշխանավարի էր, նրան ասածները հրամաններ էին։ Դա խոցում էր Արթինին։ Գահերեց է, բայց երես է տալիս ռամիկ մարդկանց, ինչ-որ փախստականների։ Ինքը Կապանի պղնձի ելքերի ու բովերի տերն է, ամենահարուստ մարդը երկրում։ Ուրիշները չոքեչոք են գալիս իր դուռը։ Իսկ այս Մխիթարը... Օ՜, տե՛ր աստված։ Երկրի ապավեն գնդի հարյուրապետները խմում են հասարակ զինվորների հետ. գահերեցը ներում է նրանց, երես տալիս։ Հարբած զինվորները Շընհերում ջարդել են կուսանոցի դռները... Ասում են, թե երբ այդ առթիվ գանգատվել են Մխիթարին, սա միայն ժպտացել է։ Գարեգին բայր սուրբին կախելուց հետո հալածանքների է ենթարկում հոգևոր հայրերին։ Նույնիսկ չի գնացել Հովակիմ եպիսկոպոսի թաղմանը։ Արթինի բարեկամ մի վաճառական, որ եղել է Մխիթարի տանը, երդվել էր, թե ինքը ականատես է եղել Մխիթարի ու մի կռապաշտի համբուրվելուն։ «Աշխարհի վերջն է,— երկյուղով ասել է վաճառականը,— ցուրեցիները և թոնդրակյանները կքանդեն եկեղեցիները, մելիքներին ու վաճառականներին կվառեն ձյութի կրակում»։

«Ինչո՞ւ այսպես փոխվեց ամեն ինչ»,— երկյուղով մտածեց Պղինձ Արթինը։ Ահ զգաց։ Մխիթարը գուշակում էր մարդկանց մտքերն անգամ։

Թիֆլիսեցիներին թողնելով Վրթանեսի ու Խլեբի տանը, Մխիթարը հեռացավ Պղինձ Արթինի ապարանքից։ Գիշեր էր, երբ դուրս եկավ այգիների միջից։ Լույսը բացվեց Կավարտի ձորում։ Այնտեղ զգացվում էր այրված ծծմբի հոտ, ջրերը ժանգագույն էին, քարերին՝ կարմիր կրի շերտեր։ Մխիթարն ու Մովսեսը գնում էին կողք-կողքի։ Խոսում էին պղնձի արդյունահանության մասին։

— Այս լեռներն ամբողջովին պղինձ են,— ասում էր Մովսեսը։— Եթե հնար լիներ ամեն ձորում ելքեր ու բովեր ունենալ՝ տարեկան հարյուր հազար փութ պղինձ կծախեինք։ Դրա գումարով թեկուզ հիսուն հազար մշտական զորք պահիր...

— Կանե՛նք,— հառաչեց Մխիթարը։— Թուրքի ահը թող վերանա, այդ էլ կանենք։

— Մեր պղինձն ընտրովի է. Վենետիկում նրանից արձաններ են շինում։

Մխիթարը մռայլ ափսոսանքով էր նայում պղնձե ժայռերին։ Քայլում են անբավ հարստության վրայով՝ նրանից անմաս։ Ե՞րբ խաղաղ ապրելու հնարավորություն կունենան։ Ա՜խ, աստվա՜ծ...

Հանկարծ ձիերը խրտնեցին։ Մովսեսը կախվեց թամբից, հազիվ պահեց իրեն, որ չընկնի։

— Ի՞նչ սատանա խրտնեցրեց ձիերին,— հարցրեց երկյուղած։

— Առաջ նայիր,— մռայլ պատասխանեց գահերեցը։

Ճանապարհի փոշու մեջ սողում էր մի տարօրինակ արարած։

— Տե՛ր Հիսուս-Քրիստոս,— երկյուղած շշնջաց Մովսեսը։

Մխիթարն իջավ ձիուց։ Իջան նաև Մովսեսն ու նրանց ուղեկցող թիկնապահները։ Քարքարոտ ճանապարհով դանդաղ սողում էր մի այլանդակված մարդ, ավելի շուտ՝ մի տձև մսագունդ։ Մոտեցան նրան, բոլորի մարմնով սարսուռ անցավ։ Մսագունդը տղամարդ էր՝ ոտքերը կտրած։ Հին սպիները սևացել էին կրիայի մեջքի պես, ծնկների կլոր մասերում մի մատ հաստությամբ կեղև էր բռնել, ինչպես տարիներ շարունակ լուծ քաշած գոմշի ուսը։ Մի ձեռքի մատները կիսախուփ էին՝

գոսացած, մերկ մարմինը պատած էր վերքերով, սպիներով։ Նրա մազերը թաղիք էին դարձել, և դժվար էր որոշել՝ մոխրագո՞ւյն էին, սպիտա՞կ, թե՞ կավագույն։ Թշվառի դեմքն ու փորն ուռած էին. միայն մի քրքրված լաթ էր փաթաթված գոտուց ներքև։ Սողալիս նա փնչում էր։

— Տե՜ր Հիսուս-Քրիստոս, տե՜ր գթածին աստված,— նորից երկյուղած բացականչեց Մովսեսը։— Է՜յ, մա՜րդ արարած, կանգ առ մի պահ։

Մսագունդը շարունակում էր սողալ։ Մովսեսը կռացավ և զգուշությամբ բռնեց նրա մերկ ուսը։

— Եղբա՜յր, կանգ առ մի պահ և լսիր ինձ,— խնդրեց նա։

— Հե՜-հե-հուո՜ւո՜ւ...— մռնչաց խեղանդամը։

— Ախր դու այդպես ո՞ւր ես գնում,— Մովսեսը ետ քաշվեց։

— Սպանելո՜ւ... խեղդելո՜ւ...

— Ո՞ւմ։

— Զարի՜ն, գազանին, որ լափեց ոտքերս, սի՜րտս... Հեռու-ո՜ւո՜ւ... Կուտե՜մ, կկծե՜մ։ Զկա՜, չէ՜, մարդը չկա՝ աստծո մարդը։ Կա գազանը, և աստված էլ գազանների պահապանն է։— Նա նստեց կտրված ոտքերի վրա ու ձեռքով ետ տվեց ճակատին թափված մազերը։ Նեղ, հազիվ երևվացող աչքերը հառեց դիմացիններին վրա։— Գնում եք հոշոտելո՞ւ։ Գնացե՜ք։ Հրե՜ն, կան. դեռ բոլորին չեն հոշոտել։ Կավարտի ելքերում լեշեր կան, որ դեռ շարժվում են։ Պղինձ Արթինը դեռ բոլորին չի լափել, պրծել, ձեզ էլ բաժին կա, գնացե՜ք...

— Խելագա՞ր է,— հարցրեց Մխիթարը երկյուղած։

— Ո՜չ,— շշուկով պատասխանեց Մովսեսը։— Ես արդեն գլխի եմ ընկնում բանը։ Է՜յ, մարդ, դու Կավարտի պղնձի ելքերի՞ց ես։

Մարդն աչքերը չռեց։ Ասես օձեր էին նայում ակնախոռոչներից։

— Հի՜, հի՜, հի՜...— ուռած շրթունքները ծռմռեց նա։— Ելքերի՞ց։ Ելք չկա՜։ Այնտեղ դժոխք է, սանդարամե՜տ։ Դժոխքից ելք կա՞։ Ասում են, թե ռամիկի որդի Մխիթարն է ելքը բերելու։ Բայց ո՞ւր է։ Ո՞վ է սպանել Մխիթարին, մեր ցավերը մխիթարողին։ Մելիք Մուսին ու Պղինձ Արթինը սպանել են արևը, լուսի՜նը, ջո՜ւրը, հողը մորթել են, թողել միայն պղնձի երակը, որ ծծեն, մեր արյան հետ ծծե՜ն... Մխիթարին նրանք են մորթել, որ մենք ելքերի մեջ ելք չգտնենք, փտե՜նք։ Գնում եմ Պղինձ Արթինին խեղդելու։ Ճամփա՜...— Նա ցանկացավ նորից սողալ, բայց Մովսեսը բռնեց նրա թևը։

— Սպասիր, եղբա՜ր, այդ ո՞վ է ասել, թե Մխիթարին սպանել են։

— Սադայե՜լը։ Ցուլի կիզկիզ խարազանը ձեռքին սադայե՜լը։ Խարազա՜նը... Ո՜ւ... Չե՞ք ճաշակել այդ խարազանը. արյունից հաստացել է։ Սադայելը խարազան է ուտեցնում մեզ։ Նա է ասել, որ Մխիթարը

չկա։ Իսկ մենք սպասում էինք ռամիկի որդուն, նոր Հրուշանին։ Սպանեցի՜ն... Մեր հույսը մորթեցին...

Նա հեկեկաց։ Զինվորները զարհուրանքով էին նայում այդ թշվառ արարածին։ Նա էլի խոսեց՝ բռունցքով հարվածելով կրծքին։ Խռպոտվեց։ Մխիթարը կռացավ նրա վրա։

— Ես եմ Մխիթարը, եղբա՜ր, ուշքի՜ եկ, ասա՝ ո՞վ ես դու։

— Սո՜ւտ է,— առողջ ձեռքը թափահարեց խեղանդամը։— Մխիթարը չկա՜։ Հրուշանի պես խաչել են Խուստուպի ժայռերում։ Թե չէ՝ արևը կգար, արևը... Թե չէ՝ մեզ չէին ուտի Պղինձն ու Սադայելը։ Տե՜ր, դու քո կողքին տեղ տուր հայոց Մխիթարին։

Երկար, համբերությամբ սպարապետը բացատրեց, որ ինքը Մխիթարն է։ Զինվորներն էլ հաստատեցին այդ։ Խեղանդամի աչքերը չռվեցին, և նա իր գլուխը հպեց սպարապետի կրծքին։

— Կա՜ց, ես լսել եմ Մխիթարի սրտի ձայնը,— ասաց,— ես նրան ճանաչում եմ սրտից, սո՜ւս, հիմա...

Նա ականջը հպած պահեց Մխիթարի ձախ կրծքին՝ ձեռքը օդում տնկած։ Հետզհետե նրա մազակալած դեմքին ժպիտ երևաց։

— Նա՜ է,— գոռաց ու առողջ ձեռքով փաթաթվեց Մխիթարին։— Դո՜ւ ես, փրկի՜չ մեր... ես ամեն օր լսել եմ քո սրտի զարկերը, սպասել քեզ, որ գաս՝ մեզ հանես գերեզմանից։ Է՜յ, մարդի՜կ, խնայեցեք, պահեցեք մեր Մխիթարին։— Նա հեկեկաց անարցունք, բռունցքը խփեց քարին։— Հրուշանը կա՜, չի՜ մեռել, չէ՜... Կպատռվի Խուստուպ լեռը, հուրը կբխի նրա միջից ու կելնի Վահագնը՝ Հրուշանի կերպարանքով։ Կելնի և ինձ՝ ստրուկ Հովհաննեսիս կասի. «Եղիր ազատ, ինչպես կամքն է քո»։

Զինվորները նրան փաթաթեցին այծենակաճի մեջ, դրին ձիու վրա։ Խեղանդամը երբեմն քրքջում էր տարօրինակ, բարձրաձայն, երբեմն լաց լինում։ Զարհուրելի բաներ էր պատմում պղնձի ելքերում բանող մշակների մասին։

— Լույս չունեն, է՜,— գոչում էր խելագար։— Տասներեք տարի առաջ ինձ ծախեցին Պղինձ Արթինին։ Մելիքը ծախեց... Գցեցին հորը ու էլ չհանեցին։ Պղինձ էի քանդում, որ մոմակալներ շինեն, լույս տան մարդկանց, բայց ինքս լույսի կարոտ, լույսից զրկված էի։ Ոտքերս կորցրի ելքերի հորերում...

Հասան Կավարտ՝ պղնձի ելքերը։ Տեղ-տեղ մասրենու գաճաճ թփերով ու չորացած ցողուններով պատած ժայռերի հիմքերում մթին խորշեր էին երևում։ Դրանք պղնձի ելքերը տանող ստորգետնյա անցքերն էին՝ սև ու խոնավ։

Մի ժայռի տակ անտաշ քարերից շինած էր մի փոքրիկ տնակ։ Նրա առջև կույտ-կույտ թափված էր պղնձահանքը։ Խրճիթից լսվում էր մեկի աղեկտուր ճիչը։ Սպարապետը յուրայիններին նշան արեց ձայն չհանել. իջավ ձիուց, արագ գնաց դեպի տնակը, դուռը բաց արեց։ Ցլակերպ մի տղամարդ՝ մեջքը դեպի դուռը, մտրակով անխնա հարվածում էր իր ոտքերի տակ փռված կիսամերկ մի մարդու։

— Սատկա՞ծ էիր, որ այն սողացողին փախցրիր, բաց թողիր, հը՞։ Ես քու մոր գերեզմանը... Ո՞ւր գնաց սողունը։ Էշի ցեղ, դե կե՛ր, կե՛ր...

Թախտին նստած էր մերկ սրունքներով մի ջահել կին։ Սա լկտի տեսք ուներ, ագահ աչքեր. չոր թուզ էր խժռում և երբեմն քրքջում գետնին փռված թշվառի ճիչերի վրա։ Հանկարծ նա նայեց դռան կողմը։ Մխիթարին տեսնելով՝ նախ զարմանքից արագ թարթեց սիրունիկ աչքերը, ապա ոզնու պես փշեր արեց ու, քաշվելով մի անկյուն՝ սուր ծղրտաց։

Ցլակերպ մարդը մտրակը գցեց ձեռքից և, ըստ երևույթին վտանգ զգալով՝ շուռ եկավ։ Մխիթարին թվաց, թե դա դիվային հրեշ է։ Այդ մարդը վիթխարի գլուխ ուներ. կեռ, դեպի ականջը ծռված քիթը կարմիր էր, աչքերը լիքն էին արյունով։ Նրա մեծ բերանի անկյուններում գիշակերի ժպիտ կար, իսկ խոշոր, գայլի ժանիքներ հիշեցնող ատամները դեղին էին։ Մի երկվայրկյան ցասկոտ նայելով անկոչ հյուրին՝ ոչ այն է բարկությամբ, ոչ այն է ահից՝ նա մռնչաց.

— Ո՞վ ես։

— Սառայե՛լը,— Մխիթարի ոտքերի մոտից ճչաց խեղանդամը։— Հեռո՛ւ դրանից, ամա՛ն... Սաղայելը դա է, Մխիթա՛ր, հիմա քեզ էլ ոտնատակ կտա, հեռո՛ւ...

Հսկան գետնին գցած մտրակը հափշտակեց, բայց այդ պահին Փոքր Գորգին նիզակը դեմ արեց նրա բաց, մազախիտ կրծքին։

— Ճանաչի՛ր տիրոջդ, շո՛ւն։

Մտրակը նորից ընկավ հսկայի ձեռքից։ Նա ճանաչեց Մխիթարին, դանդաղ ծունկի եջավ ու, ձեռքերն առաջ պարզելով՝ խռնչաց.

— Մի՛ պատժիր ինձ, տե՛ր գահերեց զորավար։ Ես միայն կատարում եմ Պղինձ Արթինի վերակացուի դժոխային պաշտոնը։

— Մարդկանց խոշտանգելո՞վ,— կատաղեց Մխիթարը։

— Այդպես է տիրոջս հրամանը։

Մխիթարը հեռացավ շեմքից։ Երկու զինվոր սկսեցին ուշքի բերել ծեծվածին։ Ջահել կինը գող կատվի պես ցատկեց պատուհանի միջով ու փախավ... Վերակացուն չոքեչոք հետևեց Մխիթարին։ Թեև չոքած էր, բայց նրա գլուխը հավասարվում էր կողքից գնացող զինվորի ուսին։

Խեղանդամը վերցրեց վերակացուի ծանր մտրակը և սկսեց ուժգին հարվածել իր հոգեառի գլխին, մեջքին, ոտքերին...

— Սաղայե՛լ... Օ՛, չա՛ր դև։ Հրուշանի պատիժը եկա՞վ...

Երևացին մի խումբ ջորիներ, յուրաքանչյուրի վրա մի զույգ կողով՝ պղնձաքարը ելքերից բովերը տանելու համար։ Գահերեց զորավարին ու զինվորներին տեսնելով՝ ջորեպանները երեսնիվայր փռվեցին գետնին։ Մխիթարը չարությունից կապտեց, գոռաց ոչ իր ձայնով.

— Վե՛ր կացեք, իմ առաջ միայն թշնամիներն են սողում։

Երբ բարկությունը մեղմվել էր, վերակացուին հրամայեց իրեն ցույց տալ պղնձի ելքերը։ Վերակացուն գլուխը խփեց գետնին։

— Անձիդ համար վտանգավոր է, տե՛ր, չեմ կարող...

Բայց Մխիթարն արդեն մտել էր ստորգետնյա անցքը։ Ջորեպանները ջահեր վառեցին ու վազեցին նրա ետևից։ Անցքի խոնավ պատերը ներկվեցին բոցի գույնով։ Խորշում օդը գաղջ էր։ Պատերից ջրի ծանր կաթիլներ էին ընկնում։ Վերակացուն, մարմինը տասը տեղից կոտրատելով՝ Մխիթարին առաջնորդում էր, երբեմն զգուշացնելով քարակույտերից ու անհամար դերբուկներից։ Երկար քայլելուց հետո կանգ առան։ Հանքախորշն այդտեղ լայն էր ու բարձր։ Մխիթարը տնքոցների ձայն լսեց, շղթաներ զնգացին։

— Ավելի՛ լույս,— հրամայեց նա՝ կիսախավարում բան չտեսնելով։

Նոր ջահեր վառեցին։ Մխիթարի աչքին պարզվեց մի ծանր տեսարան։ Քսան-քսանհինգ կիսամերկ մարդիկ, որոնք ավելի շատ ուրվականների էին նման, ձիգ տալով գետնի խորքից հանում էին հանքաքարի ծանր կողովները։ Նրանք ընկնում էին, բարձրանում, լարում ոսկրոտ մարմիններն ու կողովները հանելով՝ պղնձի քարը թափում։ Մխիթարը նկատեց, որ դրանք բոլորն էլ շղթաներով գամված են ժայռին։ Շղթայված էին նաև նրանց ձեռքերը, միայն այնպես, որ կարողանան ծանր կողովները հանել հորից։ Մխիթարը մոտեցավ նրանց։ Թշվառները միահամուռ սկսեցին երգել։ Դա սաստիկ տարօրինակ թվաց սպարապետին։ Խորշը դղրդում էր հանքահատների խռպոտ, չարացած երգից, որի բառերից գրեթե ոչինչ չէին հասկանում ո՛չ Մխիթարը, ո՛չ Մովսեսը, ո՛չ էլ զինվորները։

— Կտրե՛ք։— Հրամայեց Մխիթարը։— Ինչի՞ համար եք երգում։

Շղթայվածները չոռած աչքերով նայեցին նրան։ Մխիթարը կրկնեց իր հարցը։

— Բախտավորությունի՞ց, — պատասխանեց, ավելի շուտ սրտի դառնությունը պոռթկացրեց հանքահատներից մեկը,— այսպես է հրամայված։ Եթե դու էլ ճաշակես պարոն Գեղեոնի քաղցր հարվածները՝

կերգես մեզանից ոչ պակաս։ Ինչպես չերգենք։ Չես տեսնո՞ւմ մեր բախտավորությո՞ւնը, այս դրա՞խտը...

Մխիթարը թունոտ նայեց վերակացուին։

— Այնտե՞ղ էլ մարդիկ կան,— հարցրեց՝ ձեռքը մթին հորի կողմը մեկնելով։

— Կա՛ն, քարն այնտեղից են հանում,— կարկամելով պատասխանեց վերակացուն։

— Իջնենք ներքև։

Վերակացուի ծնոտը դողաց, լսվեց ատամների կափկափոցը, Ընկավ Մխիթարի ոտքերը, աղերսեց.

— Մի՛ գնա, այնտեղ սաստիկ վտանգավոր է, ողորմա՛ծ տեր...

Մովսեսը, Փոքր Գորգին ու նրանց հետ անցքը մտած զինվորները ևս սկսեցին համոզել Մխիթարին, որ չիջնի ստորերկրյա հորը։ Բայց Մխիթարը ձեռքը թափ տվեց ու մտավ ներքևից հանած դատարկ կողովը։

— Իջեցրե՛ք,— հրամայեց նա։

Կողով մտան Գորգին, վերակացուն ու երեք զինվոր։ Շղթայակապներից մեկն այնպես քրքջաց, որ զարհուրեց նույնիսկ Փոքր Գորգին։ Թվաց, թե իրենք մտել են դժոխքի խորքերը։ Կիսախավարի մեջ շղթայակապները սատանաներ էին թվում, որոնք ասես դուրս էին եկել անդրշիրիմյան որջերից։

Ճոպանից կախված ահագին կողովն իջավ դանդաղ։ Գորգին աչքերը փակեց։ Խավար էր. ստեպ-ստեպ անորոշ ձայներ էին լսվում, որ ասես գերեզմանից էին գալիս։ Կողովը կանգ առավ։ Վերակացուն մի բան գոռաց։ Ձեթի ճրագները ձեռքներին նրանց մոտեցան երկու մարդ։ Նրանք վայրենիների էին նմանվում, երեսների ու գլխների մազերը հասել էին մինչև պորտերը, որով և ծածկում էին իրենց մերկությունը։ Երևացին էլի մի երկու տասնյակ արարածներ։ Սրանք սուր քլունգներ ունեին ձեռքներին։ Մեկի ուսը ջարդված էր, արյունը թափվում էր քարերին։ Բոլորն ակնապիշ նայեցին «լույս աշխարհից» եկածներին։ Երբ Մխիթարը մոտեցավ, նրանք ահաբեկ ճիչ արձակեցին և շղթաները ընդգացնելով փախան, անհետացան մթին խորշերում։

— Դժո՞խք է,— հարցրեց Մխիթարը վերակացուին։

— Բոլորը մահվան են դատապարտված եղել,— բացատրեց վերակացուն։— Սրանց իմ տերն է գնել։ Թող արևշատություն կամենան նրան, որ դեռ կենդանի են։

— Ո՞վ է մահվան դատապարտել։

— Եկեղեցին, մելիքները։ Հեթանոսներ են սրանք, տե՛ր գահերեց։

Մեխլուի ժառանգներն են՝ անօրեն ու անաստված։ Հայհոյել են խաչը, փախել վանքի հողերից, մելիքներից։ Բռնել են ու վաճառել իմ տիրոջը՝ Պղինձ Արթինին։

— Շա՞տ են։

— Երկու հարյուր հոգի դեռ կենդանի են։

— Իսկ մեռածնե՞րը։

— Շա՜տ... այստեղ բոլորը մեռնում են։ Այստեղից ոչ ոք դուրս չի գալիս։

— Բոլորին հավաքիր այստեղ։

Վերակացուն ձեռքերը խողովակ արեց, դրեց բերանին ու կոնչաց... Ապա նորից ու նորից կոնչաց։ Վերջապես խավարի միջից դուրս եկան հանքահատները՝ ահից ցամաքած, գայլից խրտնած ոչխարի հոտի պես։

Մխիթարի գանգի մեջ ասես ասեղներ ցցվեցին։ Երբեք այդպիսի զարհուրելի պատկեր չէր տեսել։ Մահվան դատապարտվածների ճակատներին աղվեսադրոշմ էր խարանած, բոլորի ոտնգները պատռված էին։

— Դու ո՞վ ես,— մատը մեկնելով հենց իր դիմացը կանգնածին՝ հարցրեց Մխիթարը՝ հազիվ շնչելով։

Սա ինչ-որ բլբլաց։

— Դրա լեզուն կտրած է, տե՛ր գահերեց,— բացատրեց վերակացուն։— Ութ տարի առաջ Գարեգին հայր սուրբն է կտրել իր ձեռքով։ Զարմանում եմ, թե ինչպես է, որ դեռ չի մեռել, այստեղ ընկնողները կարճ են ապրում։

— Բոլորին բարձրացրեք վերև,— հրամայեց Մխիթարը։

— Բարեգո՜ւթ տեր,— նրա առաջ չոքեց վերակացուն։— Իմ տերը սրանց փոխարեն ինձ կնետի այս անդրշիրիմյան աշխարհը, մե՛ղք արի, մի՛ արա։ Գթա՜, երեխայի տեր եմ...

— Բարձրացրու վե՛ր, բոլորի՛ն,— իրենից դուրս եկավ Մխիթարը։ Սպասեց, մինչև բոլոր հանքահատներին բարձրացրին վերև։ Վերջում ինքն ու վերակացուն մտան կողով։ Դուրս եկան անցքից։ Մխիթարի աչքերը շաղվեցին, գլուխը պտտվեց։ Ջուր պահանջեց, իսկ երբ սթափվեց, դողաց ողջ մարմնով։ Գետնի տակից հանած թշվառները սողում էին տնակի առջև՝ փոշու ու ցեխի մեջ, համբուրում քարերը, աղիողորմ լաց լինում։ Մխիթարը չկարողացավ նայել այդ սրտաճմլիկ տեսարանին։ Դեմքը շրջեց։

— Փրկի՛չը...— ծվծվում էր խեղանդամը՝ մերթ այս, մերթ այն հանքահատին մոտենալով ու համբուրելով։— Որ ասում էի կգա փրկիչը։— Ու քրքջում էր անզուսպ, ինքնագոհ։

Մխիթարը հրամայեց բոլոր հանքահատներին տանել Պղինձ Արթինի դղյակը։

— Պղինձ Արթինին հայտնեցեք, որ ես տասը օր հետո կլինեմ նրա տանը,— ասաց նա։— Հրամանս այս է՝ դարմանել, կերակրել ու կազդուրել բոլորին։ Կգամ, եթե մեկի քիթն արնոտած տեսնեմ, վայը տարել է Պղինձ Արթինին։ Գնացե՛ք։

Վերակացուի վզին քար կապեցին ու նետեցին լքած հորերից մեկը։ Խեղանդամը պտտվում էր հորի շուրջն ու քարեր նետում ներքև, անզուսպ ուրախությամբ քրքջալով։

* * *

Տասն օր շարունակ Մխիթար սպարապետը շրջագայում էր գավառներում։ Հանկարծակի երևում էր գյուղերում. մարտական տագնապի ազդանշան էր տալիս և սպասում, թե ինչքան ժամանակում է հավաքվում գյուղի զինվորական ջոկատը։ Ահեղ ու դաժան էր նա։ Երկու գյուղում անխնա ծեծել տվեց տանուտերերին ու տասնապետներին՝ ջոկատները ժամանակին գումարել չկարողանալու համար։ Մի ուրիշ տեղ խրախուսեց ճարպիկ մի տասնապետի և իր այծենակաճը նվիրեց նրան։

Թեև տանուտերներն ու մելիքները խնդրում էին, որ նա շնորհ անի մտնել իրենց տները, բայց Մխիթարը չկտրեց ոչ մեկի հացը։ Կերակրվում էր իր թիկնապահների համեստ պաշարով։

Նրա հանկարծակի երևալը գավառներում նորից մարդկանց զգացնել տվեց, որ պատերազմի վտանգը տակավին չի անցել, և Թուրքերը պատրաստվում են խուժել իրենց աշխարհը։

Հալիձոր վերադառնալու ճանապարհին Մխիթարը հիշեց Կավարտի պղնձի ելքերում տեսածն ու փշաքաղվեց։ Բարկության արյունը նորից եռաց երակներում, ճանապարհը ծռեց, մտավ Պղինձ Արթինի դղյակը։ Նրան դիմավորեցին զինագործները։

— Ո՞ւր է տանտերը, ինչո՞ւ չի գալիս իմ ոտքը,— հարցրեց Մխիթարը։

— Տանտերն այստեղ չէ, տե՛ր գահերեց զորավար,— պատասխանեց Վրթանեսը։

— Փախե՞լ է,— Մխիթարը գունատվեց։

— Այո՛, տե՛ր իմ, երբ դու այստեղ ուղարկեցիր ելքերի մշակներին, Արթինը ահից գլուխը ծեծեց։ Դիշերը կնոջն ու երեխաներին վերցրեց ու փախավ...

— Ո՞ւր։

— Հեռու չէ՝ Հալիձոր, սարսափում է քեզանից։

Մխիթարը երկար լուռ մնաց։ Միայն շրթունքներն էր շարությամբ ծամում։ Հրամայեց իր մոտ բերել հանքահատներին։ Սրանք եկան։ Կազդուրվել էին։ Բոլորի հագին մահուդե արխալուղներ ու գոմշի կաշվե տրեխներ կային։

— Հը՞,— ժպիտը զսպելով հարցրեց Մխիթարը։

— Մեռել էինք, հարություն առանք,— գոչեցին հանքահատները։— Աստված ողորմի ձեր անցավորաց։ Տեսնո՞ւմ ես, մարդակերպ ենք դարձել։

— Էդ է՛ր պակաս,— ծիծաղեց Մխիթարը,— Պղինձ Արթինի կաշին դեռ կքերթեմ։ Այնպես պատժեմ, որ հոր հարսանիքը միտը գա։ Իսկ հիմա, ահա թե ինչ, եղբայրնե՛ր։ Դուք հիմա ազատ եք՝ ձեր գլխի ու կամքի տերը։ Դուք այլևս ստրուկ չեք, հասկանո՞ւմ եք։

— Արև՛դ երկար,— միաբերան գոչեցին հանքահատները։

— Բայց մեզ պղինձ է հարկավոր, ինքներդ գիտեք։ Ես ձեզ խընդրում եմ վերադառնալ Կավարտ՝ պղինձ հանելու։ Կավարտում ձեզ համար տներ կշինեն, առավոտյան կմտնեք պղնձի ելքերը, կեսօրին դուրս կգաք։ Ձեզ կկերակրեն կուշտ։ Ամեն շաբաթ ռոճիկ կստանաք։ Ես ձեր բոլորիդ հող կտամ Կավարտի ձորերում և կթույլատրեմ ամուսնանալ։ Միայն թե պղինձ հանեք գետնի տակից։ Համաձա՞յն եք։

— Աչքների՞ս վրա,— նորից միահամուռ պատասխանեցին հանքահատները։

— Դուք ձեզնից մեկին ձեր համքարության ավագ ընտրեցեք, դատավոր էլ ջոկեցեք, որ ձեր համայնքի գործերը վարեն։ Իսկ եթե վեճեր լինեն՝ եկեք ինձ մոտ։ Դարձյա՞լ համաձայն եք։

— Համաձա՞յն ենք։

Հանքահատները մի դատավոր և մի ավագ ընտրեցին։ Երկար ժամանակ Մխիթարը մնաց նրանց հետ, խոսեցին, պայմանավորվեցին, թե ինչպես պիտի պղնձաքարը հանձնեն բովերի տերերին, ինչքան պիտի ստանան յուրաքանչյուր փթի համար։ Լոռուց փախածներից մեկն այդ բանում գլուխ ուներ և իր խորհուրդներով օգնեց Մխիթարին։

Միայն լուսաբացին մոտ Մխիթարը հանքահատներին ուղարկեց Կավարտ, իսկ ինքը վերադարձավ Հալիձոր՝ Պղինձ Արթինին պատժելու վճռով։ Պարսպի վրայից տեսան նրան։ Փող փչեցին։ Վազեվազ եկավ Թովմա հարյուրապետը (գիշերվա պահպանության պետն էր)։ Մխիթարը դեմքը խոժոռեց։ Դարձյալ այդ Թովման։ Ո՛չ կարողանում է նրան հեռացնել Հալիձորից (հավատարմության պատճառով), ո՛չ էլ հանդարտ ու անխռով նայել նրա աչքերին։ Նախանձի որդը կրծում էր սիրտը։ Հին

վերքը սպիանում էր թեև, բայց հենց որ տեսնում էր Թովմային կամ Գոհարին, նորից էր բացվում, ու ցավը դառնում էր խոցող։ Թովմայի ողջույնին պատասխանեց կես բերան, մի երկու կցկտուր հարց տվեց ու ձին քշեց դեպի Հայոց ժողովի ապարանքը։

Այնտեղ էին Բայանդուր իշխանը, Տեր-Ավետիսը, մելիք Բաղրը։ Երեքն էլ խոնարհ գլուխ տվին շքամուտքի մոտ։ Մխիթարը չպատասխանեց նրանց բարևին, չնայեց երեսներին, արագ բարձրացավ աստիճանները...

Մտնելով Հայոց ժողովի ավագանու փոքրիկ սրահը, նա ետ քաշեց պատուհանի վարագույրը, նայեց լեռների գլխից բարձրացող արևին ու շեշտակի շուռ գալով՝ հայացքը սևեռեց իր ետևից ներս մտած զորապետներին։

— Այսօրվանից Կավարտի պղնձի ելքերը պատկանում են Հայոց ժողովին, իմացե՛ք, իշխանն ե՛ր,— ասաց դանդաղ, չարացած։— Այնտեղ Պղինձ Արթինն այնպիսի անօրինություններ է արել, որ մարդակեր Լենկթեմուրի նախանձը կշարժեր անգամ։

Կանչեցին Մովսեսին ու հրամանաթուղթ գրեցին Կավարտի հանքերի առթիվ։ Զորապետներին դա դուր եկավ։ Երկրի հարստության կեսն այդ Պղինձ Արթինն էր քամում։

— Մխիթարը նայեց Տեր-Ավետիսին։

— Դու սեփական գյուղ ունես, ես անտեղյակ, եղբա՛յր իմ,— ասաց հեգնանքով։

— Իմը չէ, այլ իմ կնոջը,— պատասխանեց Տեր-Ավետիսը։— Ես երկու սեփական բան ունեմ միայն՝ իմ դժբախտ հայրենիքն ու քո նկատմամբ ունեցած իմ հավատարմությունը։

Մխիթարն աչքերը թարթեց։ Զգաց, որ Տեր-Ավետիսին հայտնի է նրա գյուղում կատարվածը. նեղացել է։ Ինչո՞ւ։ Մխիթարը հրամայեց կանչել Վարդ-խաթունին։ Նորից զգաց, որ դա դուր չեկավ Տեր-Ավետիսին։ Հրամանը փոխեց։ Վարդ-խաթունի հետ ինքը կխոսի մենակ, առանց ուրիշների ներկայության։

— Բեխ գյուղում մարդիկ սովամահ են լինում, իսկ դու հավաքել ես նրանց վերջին ապրուստը,— հանդիմանեց Տեր-Ավետիսին։

— Գիտեմ։ Ես պատժել եմ այդ գյուղի տանուտերին,— պատասխանեց Տեր-Ավետիսը։— Նա հիմա կախված է գյուղի հրապարակում։

— Որովհետև չափից դուրս անգո՞ւթ էր վարվել գյուղացիների հետ,— հարցրեց Մխիթարը։

— Որովհետև կորստյան էր մատնել այն, ինչ ինձ էր պատկանում։

— Անխի՜ղճ,— բացականչեց Մխիթարն ու ծանր նստեց գահավորակին։

— Ես եմ իմ ունեցվածքի տերը, և ոչ ոք իրավունք չունի խառնվելու իմ տան գործերին,— հայացքը պատուհանից դուրս նետելով՝ դժգոհ ասաց Տեր-Ավետիսը։

— Հայ մարդիկ են սովամահ լինում, ո՞ւր է խիղճդ, Ավետի՜ս։— Ընկճված հարցրեց Մխիթարը։

Տեր-Ավետիսը քմծիծաղեց։ Բայանդուրն ու Բաղրն զգում էին, որ նրանց միջև սև կատու է անցնում, և դա կարող էր չարիքներ ծնել։ Բայց սիրտ չէին անում խոսել։ Գիտեին, որ երկուսն էլ համառ էին, իրասածի։

— Իմ խիղճը մաքուր է,— հանդարտ խոսեց Տեր-Ավետիսը։— Ձեռքիս արյուն կա, ճշմարիտ է։ Բայց դա միայն մեր թշնամիների արյունն է, և աստված կների ինձ։ Ձների էլ՝ գոհ կլինեմ, որովհետև ես արդար եմ ժողովրդի առջև։ Եվ դրա համար էլ անգամ աստծուց իրավունք ունեմ պահանջելու, որ նա չխառնվի իմ տան գործերին։ Այսուհետև ևս ես անաչառ կծառայեմ հայ ժողովրդին, որպեսզի կարողացած լինեմ նրա վերջին փշրանքներն ազատել կորստից...

Ոչ ոք խոսք չգտավ։ Մխիթարն աչքերն էր թարթում միայն։ Տեր-Ավետիսն ամենից շատ նեղացել էր, որ Մխիթարն առանց իրեն իմաց տալու՝ կնոջ օժիտ գյուղն ազատել էր... Ոչինչ նշան չէր հրապուրում. հարստության ու փառքի կարոտ չէր նա, միայն չվիրավորեին իր ինքնասիրությունը, չոտնահարեին իր իրավունքները։

— Կամքը քոնն է,— նեղացած գոչեց Մխիթարը։— Բայց իմացիր և իմաց տուր իմ քույր Վարդ-խաթունին, որ Բեխ գյուղն արդեն պատկանում է Հայոց ժողովին։

— Գիտեմ, նա էլ գիտի։ Հրամանդ լսել ենք։

Զորապետները նշանակալից դժգոհությամբ նայեցին միմյանց։ «Այս ո՞ւր է քշում Մխիթարը,— դառնորեն մտածեց Բաղրը։— Վաղն էլ իմ գյուղերը կխլի, կտա Հայոց ժողովին»։ Նա թուքն աղմուկով կուլ տվեց, ու թվաց, թե առջևը Մխիթարը չէ, այլ մի օտար մարդ։ Բոլորը լուռ էին։ Լուռ էր նաև Մխիթարը։ Նստել էր անշարժ, ծանր հայացքը գետնին։ Միայն երբեմն թրթռում էր քունքի երակը։ Զգում էր, որ յուրայինները լուռ դժգոհում են իրենից։ Դա ավելի էր բարկացնում նրան։ Ինչո՞ւ են լռում. ինչո՞ւ չեն հայտնում իրենց բողոքը. ինչո՞ւ չեն թափում սրտերում կուտակված մաղձը։

— Դե՜,— վերջապես գլուխը բարձրացրեց նա։— Ինչո՞ւ եք բերաններդ ջուր առել։ Խոսեք, է՜... Միևնույն է, հասկանում եմ, թե ով ինչ է մտածում։ Բեխ գյուղն ապստամբել էր. կտուրներին կրակներ էին վա-

ռել օրը ցերեկով, այսինքն՝ կրակվում ենք, ապստամբում։ Փետրած հավեր նետեցին առաջս։ Անպատվություն անասելի, հասկանո՞ւմ եք։ Մեխլու վարդապետի օրերն էին հիշեցնում։ Մեր դեմ օսմանյան վանգն է։ Հարցնում եմ, սոված շինականը կգնա՞ թշնամու վրա։ Չի գնա։ Ինչո՞ւ գնա, երբ մենք նրա երեխայի բերանից խլում ենք նրա վերջին պատառը։ Պղինձ Արթինի ելքերը լիքն էին մարդկային կմախքներով։ Տեղյա՞կ եք, երևելի՜ իշխաններ։ Ո՛չ։ Մթին ելքերում մարդիկ մնում են մինչև հոգիները տալը...

Մխիթարը ցասկոտ նայեց յուրայիններին։ Թվում էր՝ ծանր բառերով չի թափում սրտի դառնությունը։

— Արթինը վաղուց պիտի պատժվեր,— խոսեց Բայանդուր իշխանը։

— Վանքերը մարդ են վաճառում, գիտե՞ք,— շարունակեց սպարապետը։— Արթինը փողով առնում է թշվառներին, հավիտյան նետում ելքերի հորերը։

Տեր-Ավետիսը զարմացած նայեց Մխիթարին։ Դառնություն կար այդ հայացքի մեջ։

— Աշխարհը մի ձեռքով չես փոխի,— ասաց մռայլ։— Բայց Արթինին խստագույն պիտի պատժել։

Մխիթարը հրամայեց բերել Պղինձ Արթինին։ Բոլորը գուշակեցին, որ հիմա երկրի ամենահարուստ մարդու երգը կերգվի։ Ուրախացան։ Տանել չէին կարողանում հարստությունից հղփացած-փարթամացած այդ խոջային։ Իրենք սուր ու բազուկ են մաշել թշնամիների դեմ, իսկ նա կաքավով փլավ է ուտում իր դղյակի մեջ ու ոսկու դեզեր կուտակում։

Սպասեցին լարված։ Տեր-Ավետիսը լուռ էր, կարծես անխռով։ Ոչ ոք չէր կռահում, թե նրան ինչ է մտատանջում։ «Օսմանցիներն այսօրոք չէր կռահում, թե նրան ինչ է մտատանջում։ «Օսմանցիներն այսոր

վրա։ Իսկ ո՞վ պիտի պղինձ հանի գետնի տակից, ձուլի, թնդանոթ պատրաստի, մեծ տուրք տա։ Ինքն ի՞նչ երեսով նայի դաժան, բայց արդար կնոջը, իրեն խնդրելու եկած Գոհարին՝ այդ էգ վագրին, որից ոչ կարողանում է հեռանալ, ոչ մոտենալ...

— Տա՛ր,— խուլ հրամայեց Մխիթարը դահճին։— Ուշքի բեր, երեսուն հարված տուր, հետո ման ածիր փողոցներում, թող բոլորը թքեն երեսին։ Իսկ երբ մի փոքր կազդուրվի, բեր ինձ մոտ։

Պղինձ Արթինին տարան։

Գնացին նաև զորապետները։ Մխիթարը Գորգուն ասաց.

— Դահճին հրամայիր, թող հարվածները թույլ լինեն. կսպանի շունը։ Եվ թող ման չածի քաղաքում։

Մովսեսը մեղմ ժպտաց ու աննկատելի դուրս եկավ։ Գոհ էր սպարապետի ներողամտությունից։ Բոլորին գլխատել չես կարող, պարզ է։ Մի՞թե Արթինից պակաս դաժան են մյուսները՝ Բարխուդարը, Սիսականի Շաֆռազը, պարոն-տեր Մուսին, թեկուզ հենց հարստության աչք չունեցող Տեր-Ավետիսը։ Այդպես եղել է, այդպես էլ կգնա։ Մի Մխիթարն ի՞նչ կարող է անել սրբագործված կարգի դեմ։ Ոչի՞նչ... Եվ լավ կլինի, որ չտեսնելու տա, չտեսնի՞... Ու հիշեց հին բանաստեղծի խոսքերը.

«—Մեկն ի պապանց պարոնորդի,
Մեկն ի հարանց մուրող լինի»։

Ուրիշ ի՞նչ ճշմարտություն է որոնում Մխիթարը։ Արդարությո՞ւն... Միայն երազանք է։ Ո՞վ կտա։ Ո՞վ կթողնի, որ տան։

***

Տեր-Ավետիսն իր տունը մտավ չարացած, գրգռված։ Ոչ ոքից խորհուրդ չի հարցնում Մխիթարը, բանի տեղ չի դնում ավագանուն։ Ինքնագլուխ վճիռներ է կայացնում, պատժում, ներում, հրամայում։ Կինը դիմավորեց նրան ու երեսին ֆշշացրեց.

— Իմ գյուղն է խլել քո պաշտելի տերը, և դու լռո՞ւմ ես վախեցած երեխայի պես, հա՞։

— Ձայնդ կտրի՛ր, չեմ ուզում, մի՛ խոսիր,— ձեռքերը թափահարեց Տեր-Ավետիսը։

— Ինչո՞ւ կտրեմ,— չզիջեց կինը։— Լռեմ, որ գլխիս նստի՞ սոված ռամիկի զավակը, որ վաղն էլ իմ մնացած ժառանգությունի՞ց զրկի, օրվա հացի կարո՞տ թողնի ինձ։ Հը՞մ... Այդ մեկը չի՛ լինի, չէ՛։ Դուք էլ ձեզ տղամարդ եք համարում, էլի։ Ո՞ւմ եք հպատակ, արևնի՞դ խա-

վարեմ։ Հապա ցույց տուր տեսնեմ, թե ո՞ր երկրում է ռամիկն իշխան դարձել, հրամայող դարձել։

— Լռի՛ր, լռի՛ր,— նորից ձեռքերը թափահարեց ամուսինը։— Գուցե իրավացի ես, արդար։ Բայց ժամանա՞կը չէ, հասկացի՛ր (ցնցվեց իր ասածներից։ Իսկ ի՞նչ ժամանակի է սպասում)։ Լռի՛ր,— ավելի վրդովվեց նա։— Ընտանեկան կռիվների ժամանակը չէ (ուրախացավ, որ պատճառ գտավ)։ Դա կկործանի մեր գործը։ Լռի՛ր։

Բայց Վարդ-խաթունը չէր կարողանում լռել։ Ծանր վիրավորվել էր գահերեց զորավարի արարքից։ Զգում էր, որ իր մեջ մի սուր թշնամություն է ծագում դեպի նա։ Ինչո՞վ կվերջանա այդ թշնամությունը՝ ասածուն էր հայտնի միայն։

Մի շաբաթ հետո Մխիթարը ընդունեց Պղինձ Արթինին։

— Չլինեմ, չտեսնեմ, որ կրկնվի անցածը,— ասաց՝ դաժան տեսք ընդունելով։— Մեղքդ մեծ է։ Ուրիշ անգամ ներում չի լինի։

— Այո՛, իմ գլխի՛ տեր,— հառաչեց Արթինը։— Իմ մեղքը թողություն գտնելու չափից առավել մեծ է։

— Գնա տունդ։ Անշեղորեն կատարիր կամքս և այն ժամանակ միայն պատիվների կարժանանաս։

Պղինձ Արթինը հազար անգամ շնորհակալ եղավ նրան ու գնաց։ Երբ հեռանում էր Հալիձորից, անզուսպ հեկեկաց մենակության մեջ։ Ոչ մի պարսիկ խան իրեն այդպես չէր անպատվել, ինչպես արեց արյունակիցը։ Նրա սրտում մի խորին ատելություն լցվեց դեպի Մխիթարը։ Վրեժի բոցեր արձակեցին նրա աչքերը... «Արդարությո՞ւն ես որոնում, Մխիթա՛ր։ Իզո՞ւր։ Ավելացնում ես թշնամիներիդ։ Զգո՞ւյշ...»,— շարախինդ մտածում էր նա։

Այնինչ Մխիթարն ուրախ էր, որ գործը հաշտությամբ կապեց։

ԻՆՉՈՒ Է ԳԱԼԻՍ ԳԱՐՈՒՆԸ

1729 թվականի գարունը վաղահաս էր։

Մարտի սկզբին ձորերում ու հովիտներում նստած ձյունը հալվեց, հողը ծածկվեց կանաչով. գետերը վարարեցին, ճանապարհները կոշտացան։ Բայց գարունն ուրախություն չբերեց հայ ժողովրդին։ Կռունկ ու ծիծեռնակներ բերեց նա, արտերը զվարթ ծփացին։ Սակայն գարնան քամին իր հետ բերեց նաև արևմտյան գավառներում այրվող շեների ծուխը, թուրքական բանակների գարշահոտը։

Թող ձմեռը երկարեր, թող ճանապարհները փակ մնային, միայն թե երբեք այլևս չտեսնեին օսմանցիների սև զանգվածները, որ նիզակների անտառներով, հեղեղի պես կգան խաղաղ ծխացող շեների ու մըշտական տագնապի մեջ ապրող քաղաքների վրա։

Ո՞ւմ է հարկավոր այն գարունը, որ բերում էր մահ ու ավերածություն։

Մխիթար գահերեց զորավարի հրամանով Հալիձոր եկան բոլոր մելիքներն ու զորապետներն իրենց ընտանիքներով։ Ձմեռվա հանգստից հետո Հալիձորն աշխուժացավ։ Մելիքների գնդերը տեղավորվեցին իշխանատներում, շուկաներում, պարիսպների մոտ գտնվող զորանոցներում, իսկ ընտանիքները բնակվեցին Հայոց ժողովի ապարանքում։ Այս ամենը Մխիթարը կատարեց կանխամտածված։ Իր մոտ պահելով մելիքների ընտանիքները, նա նրանց պահում էր հնազանդ և կանխում հնարավոր դավաճանությունը։

Մխիթարը Հալիձոր չէր կանչել միայն Ագուլիսի պարոն-տեր մելիք Մուսուն, Սիսական մելիք Շաֆռազին, ինչպես և Ջրաբերդի ու Գյուլիստանի տերերին։ Սրանք իրենց զորքով պետք է հսկեին լեռնաշխարհի սահմանները։ Կասկածում էր միայն Ագուլիսի տիրոջը, որին զսպելու համար վճռեց Ագուլիս ուղարկել Թովմա հարյուրապետին։ Իր վճիռն ուրախացրեց իրեն։ Թովման լավ մարզված զորք ուներ, հավատարիմ էր, զսպված կպահեր մելիք Մուսուն։ Բացի այդ, կամենում էր նրան էլ Գոհարին էլ հեռու պահել Հալիձորից՝ ավելորդ տառապանքներից ու անախորժություններից խուսափելու համար։

Թովման իր գնդի ու գեղեցկուհի կնոջ հետ պատրաստվեց մեկնել Ագուլիս։

* * *

Ամբողջ օրը Հալիձորի փողոցներից ու նրբանցքներից վաղ գարնան գոլ էր բարձրանում։ Հալվում էին աղբակույտերի տակ մնացած սառույցի վերջին փշրանքները և, կեղտաջուր դարձած՝ հոսում դեպի քաղաքի դարպասը։

Այդ նրբանցքներից մեկով, մեն-մենակ դեպի Երկրի ապավեն գնդի զորանոցն էր գնում հազարապետ Տեր-Ավետիսը։ Իբրև միացյալ զորքի գլխավոր զորապետ, նա հաճախ էր լինում գնդերում։ Մանավանդ տանել չէր կարողանում կնոջ անվերջ տրտունջները, աշխատում էր հեռու լինել դրանից՝ մենակ իր խոհերի հետ։

Հանդիպող հալիձորցիները գդակները հանում էին ու հարգալից բարևում նրան։ Հազիվ պատասխանելով նրանց ողջույններին՝ Տեր-Ավետիսը քայլում էր ծանր, գլուխը բարձր, հայացքը հեռուներին։ Թեթև զնգում էր նրա ծանր թուրը, որի պատյանի արծաթը շլացուցիչ փայլում էր երբեմն։ Շրջապատում ոչինչ չէր հետաքրքրում Տեր-Ավետիսին։ Նույնիսկ չէր զգում գարնանամուտի արբեցնող օդը։ Նա տխուր էր ու դառնացած, սրտում մի կծու բան կար, որ քարի պես նստել էր խղճի վրա և օր-օրի մեծանում, ծանրանում էր։ Նրան անհանգստացնում էր երկրի ու ժողովրդի բախտը։

Մինչև ե՞րբ կարող են իրենց փոքրաթիվ ուժերով դիմանալ այն վտանգներին, որ անվերջ փլվում են հայ ժողովրդի գլխին։ Կդիմանա՞ն արդյոք։ Հազարապետն սկսել էր կասկածել։ Մենավոր ծառն ահեղ փոթորկին դիմանում է մի օր, երկու օր, հետո ի վերջո խորտակվում է։ Իրենք հիմա նման են փոթորկի բերանն ընկած մենավոր ծառի։ Մինչև վերջին մարդը կկռվեն թուրքի դեմ։ Կհաղթեն մի ճակատամարտում, երկուսում, տասն անգամ կհաղթեն։ Իսկ հետո՞։ Թշնամին նոր բանակներ է դրել Թավրիզում, Գանձակում, Նախիջևանում։ Իսկ իրենք ի՞նչ ունեն։ Նա դառնորեն քմծիծաղեց։ Հետզհետե համոզվում էր, որ դիմադրելը կարող է ողբերգական վախճան ունենալ։ Մի՞թե չի կարելի սուլթանին հպատակվելով խուսափել համազգային աղետից։ Մուրադ-Ասլանը խոստանում էր չավերել իրենց երկիրը, եթե իրենք հպատակվեն։ Նույնը խոստանում էր նաև փաշան։ Կկատարե՞ն իրենց խոստումը։

Մխիթարը համոզված էր, որ իրենց փրկությունը միայն ազգովի դիմադրելու մեջ է։ Բայց մինչև ե՞րբ դիմադրես։ Դրանով չե՞ս սպառի հայ ժողովրդի այն վերջին հատվածները ևս, որ կպած են մնացել իրենց բարձր լեռներին։ Անմտություն չէ՞, արդյոք, դիմադրելը։ Իսկ ինչո՞ւ չգնալ սուլթանի ոտքը՝ հպատակվելու, ժողովրդին փրկելու համար զոհել թեկուզ սեփական կալվածքները, թեկուզ մի քանի ազնվական տոհմեր, հարկատու լինել նրան։

Թավրիզից վերադառնալուց հետո այս մտքերն անվերջ տանջում էին Տեր-Ավետիսին։ Բայց ո՛չ մի կերպ նա չէր կարողանում հստակ որոշել իր անելիքը, գտնել այն հնարը, որով ժողովուրդը փրկվեր բնաջնջումից։

Նա հիշեց ուրացող Մուրադ-Ասլանին։ Ցնցվեց։ Թքեց ցեխի մեջ։ «Մի՞թե ես սկսել եմ շեղվել ուղիղ ճանապարհից»,— ինքն իրեն խորհրդածեց նա ու նորից սոսկաց։ Մտովի վիճեց Մխիթարի, Բայանդուր իշխանի, մյուս մխիթարականների հետ։ «Ո՛չ, սիրելինե՛րս, ես ո՛չ երկչոտ եմ, ո՛չ անձնապաշտ։ Ես իմ գլուխը դրել եմ հայ ժողովրդի զոհա-

սեղանին։ Ես ո՞չ գահերեց զորավար եմ ուզում դառնալ, որին ինձ մղում է իմ փառասեր կինը, և ո՞չ հարստության եմ ձգտում։ Ես ուզում եմ օգնել, փրկել իմ ժողովրդին, որ արդեն կուլ գնալու, կորչելու ճանապարհին է»։

Ծանր մտքերից Տեր-Ավետիսն սթափվեց զորանոցների մոտ։ Իր պատվին տված փողահարության ձայնն ասես սղոցեց գանգը։ Նա հանեց սրագագաթ գլխարկը և լայն խաչ քաշեց երեսին. մի բան, որ վերջերս էր սկսել անել։ Գնդերի հարյուրապետները վազեցին նրան ընդառաջ։ Բարև բռնեցին։

— Ինչպե՞ս է զորքը,— հարցրեց Տեր-Ավետիսը ցրված։

— Մի՛շտ հրամանիդ պատրաստ,— հպարտ պատասխանեց իր օգնականներից մեկը՝ Բաղաբերդի Ադամ զորապետը՝ հաղթանդամ, ժայռաբեկոր մի մարդ։

— Տագնապի ազդանշան տուր։

Վերկացի թմբուկները ճչացին միանգամից։ Մոտակա շեներից, քաղաքի պարիսպների տակ հապճեպ շինված հողատներից ու ձիերի ախոռներից զորքը թափվեց նեղ, բայց երկար հրապարակը։ Զինվորները վազվզում էին, ուղղում զգեստները, վառոդի ամանները կախում ուսերից, նիզակները ցցում։ Թրերի ծայրերը զնգում էին քարերին դիպչելով։ Ախոռներից հանած ձիերն անզուսպ խրխնջացին՝ գարնան օդից խենթացած։

Գնդերը կազմվեցին-կարգվեցին խիտ-խիտ, ռազմակարգով։ Ամեն ինչ կատարվեց սպասածից արագ։ Դա դուր եկավ Տեր-Ավետիսին։ Խորդրած փափախների տակից զինվորները խոժոռ, բայց զորավարի կեսբերան հրամանին պատրաստ՝ սպասում էին... Հին, արդեն մորուքները ճերմակող զինվորների կողքին կանգնած էին նաև երիտասարդներ, ձյութի պես սև մազմորուքով։ Կային այնպիսիները, որոնց այտերը հազիվ էին ներկվել սևաթույր աղվամազով։

Համհարզը բերեց Տեր-Ավետիսի ձին։ Սև նժույգը չէր հնազանդվում. առջևի ոտքերով դոփում էր գետինը, ծառս լինում, հրեղեն աչքերով նայում շարքերում կանգնած ձիերին ու վրնջում արծաթահունչ ձայնով։ Նրա չորս ոտքերը մինչև ծնկները ճերմակ էին։ Ճակատին սպիտակ պիծակ կար՝ ի նշան իր տիրոջ ռազմական փառավոր աստղի։ Պոչը երկար էր՝ ագռավի պես սևափայլ։ Նրա կրակագույն բաշն աղեղնաձև կեռվել էր. ոսկեկար քմփուշը հասնում էր մինչև ծնկները։ Ձին մոտեցրին Տեր-Ավետիսին։ Տիրոջը ճանաչելով՝ նա այնպես ծառս եղավ, որ համհարզը կախվեց սանձից։

— Հանդարտվի՛ր,— Տեր-Ավետիսը շոյեց նժույգի բաշը։

Ձին դունչը դրեց տիրոջ ուսին, հնազանդվեց։ Տեր-Ավետիսը մի բուռ չամիչ լցրեց նրա բերանն ու անսպասելի թռավ թամբին։ Համհարզը հեռացավ։ Ձին՝ սլացքի պատրաստ, կանգնեց ետևի ոտքերի վրա, բայց տերը նրան սեպեց տեղը։ Հիացմունքի հառաչանք անցավ զորքի միջով։

— Սկի՛ չի պառավում մեր հազարապետը,— իր կողքի երիտասարդ հեծյալին ասաց մի տարեց զինվոր՝ թավ հոնքերը վեր ձգելով։— Երեսուն տարի առաջ էլ էր այդպես թռչում ձիու թամբին, երբ հանգուցյալ Իսրայել Օրուն ման էր ածում Սյունիքում։

— Էլի՞ այդ ձին էր,— անհամարձակ հարցրեց երիտասարդը։

— Խելա՜ռ,— շարտեց տարեցը։— Տեր-Ավետիսին ձի կդիմանա՞։

Տեր-Ավետիսը մոտեցավ զորասյունների կենտրոնին։ Ձեռքով կիսաշրջան բոլորելու նշան արեց։ Զորասյան թևերը մոտեցան և մի մեծ կիսաշրջան կազմեցին նրա շուրջը։

— Կո՞ւշտ են ձեր ձիերը, քաջե՛ր,— որոտընդոստ ձայնով հարցրեց Տեր-Ավետիսը։

— Թևավո՜ր...— դղրդաց հրապարակը։

— Իսկ արի՞ եք դուք։

— Մատա՜ղ ենք հայոց հողին։

— Մատա՜ղ։

Տեր-Ավետիսը փքվեց. սիրտը լցվեց մի մեծ, անընդգրկելի հպարտությամբ։ Թվաց, որ մենակ ինքը, ահա այս գնդով, դեմ կկանգնի ամբողջ օսմանյան բանակին։ Շարժվեց շարքերի երկայնքով։ Երբ հասավ Զագեձորի գնդին, աչքերը լցվեցին հանկարծակի բռնկված հուզմունքից։ Զագեձորի քաջերի հետ էր նա վաստակել իր ռազմական փառքը, նրանց հետ էր մխրճվել թշնամիների շարքերը, նրանց հետ հաղթել և ուրախացել։ Նա զգաց, որ մի խորին կարոտ կա այդ թխամորուս քաջերի դեմքին։ Հեռու գավառներում թողած իրենց ընտանիքների կարոտն էր դա, որ անդառնալի դրոշմվել էր լեռնային քամիներից խանձված նրանց դեմքերի վրա։

— Ողջո՜ւյն քաջարի ձագեձորցիներին,— հուզմունքը կուլ տալով՝ գոչեց Տեր-Ավետիսը։

— Ապրի՜ Հայոց աշխարհը,— միաբերան պատասխանեցին կըտրիճները։

— Կո՞ւշտ են ձեր ձիերը, քաջե՛ր։

— Թևավո՜ր...

— Իսկ արի՞ եք դուք։

— Մատա՜ղ ենք հայոց հողին։

Բոլոր գնդերին այդպես՝ ընդունված կարգով զորավարական ող-

ջույն տալուց հետո, Տեր-Ավետիսը իջավ ձիուց ու սկսեց զրուցել զինվորների հետ։

Մանկական պարզությամբ հրճվեց, երբ մի կարճահասակ զինվոր նրան ցույց տվեց, թե ինչպես է կարողանում քնեցնել ընկերոջը։ Մի ուրիշը երկար մախաթը այնպես էր անցկացնում շրթունքի միջով, որ ո՛չ ցավ էր զգում, ո՛չ արյուն էր գալիս։ Հազարապետը ուրախ հրճվում էր զինվորների հետ։ Բայց դա դառն ուրախություն էր։ Ծանր վիշտը չէր հեռանում նրա սրտից։

Բոլորը, իր հարյուրապետները, կտրիճ ու սրամիտ Ադամ զորապետը, խելացի, կոկ հագնված Ղիջին, հմայող կոլոտ զինվորը, բոլորը, բոլորը դատապարտված են ոչնչացման, կկռվեն, կընկնեն, իրենց կյանքը կկնքեն փառքով։ Բայց իրենց ընկնելն ի՞նչ... Զորք չի մնա, թուրքերը կմտնեն երկիրը, կհոշոտեն բոլորին։ Կոչնչանա ժողովուրդը, և աշխարհի վրայից կջնջվի հայոց տունը, լեզուն, ժողովուրդը հայոց...

Պետք է նոր ելք որոնել։ Պետք է խորամանկել, խաբել թշնամուն։ Մի երկու յուղոտ պատառ գցել նրա բերանը, թեկուզ մի երկու քաղաք զոհ տալ, ստորանալ, պատվազուրկ լինել, բայց անհետ կորստից փրկել ազգը հայոց։

Տեր-Ավետիսն այդ օրն ամբողջովին անցկացրեց զինվորների հետ։ Հաջորդ օրը՝ նույնպես։

Անտառը վերջացավ։ Զորագունդը բարձրացավ սարի լերկ կատարը։ Ցյունն այդտեղ նոր էր սկսել հալվել. հոգնած, քրտինքով ողողված ձիերը դժվարությամբ էին հաղթահարում անդունդների եզրերով ոլորվող ճանապարհը։ Զորագնդի առջևից, կողք-կողքի գնում էին ամուսինները՝ Թովմա հարյուրապետն ու Գոհարը։ Սարի գլխից երևաց Երասխի նեղ հովիտը։

— Շուտո՞վ տեղ կհասնենք,— հարցրեց Գոհարը։

— Երեկոյան, սիրելիս,— պատասխանեց ամուսինը։— Մրսո՞ւմ ես։ Վերցրու իմ թիկնոցը։— Նա քնքշանքով նայեց կնոջը։— Ա՛ռ, ա՛ռ, օդն այստեղ սառն է։— Նա իր վրայից պոկեց թիկնոցն ու փորձեց գցել կնոջ ուսերին։

— Չի՛ հարկավոր,— ծածկված տհաճությամբ նրա ձեռքը ետ հրեց կինը։— Չեմ մրսում, պարզապես ուզում եմ տեղ հասնել, տեսնել, թե այդ ի՞նչ խաս քաղաք է Ագուլիսը։ Մարաղայի օրերին չհասցրի։

Զորագունդը դանդաղ հետևում էր նրանց. ձիերը փնչացնում էին՝ քրտինքի գորշ փրփուրներ շաղ տալով։

Իջան Երասխի կիրճը։ Արևը շորացրեց ձիերի քրտինքը։ Ցյունոտ գագաթները մնացին ետևում։ Սկզբում երևացին սևահողին շաղ եկած ձնծաղիկների անհամար աստղերը, հետո ներքևում բողբոջած մասրենու թփերի տակից ժպտացին երկարացողուն մայր մանուշակները՝ լուսաբացի հորիզոնի պես կապույտ։ Իսկ ավելի ցած, լիքն առվակների եզրերին, լացող ուռենիների տակ բուրում էր նորելուկ դաղձը։ Որքան իջնում էին, արևն այնքան ուժգին էր տաքացնում։ Պղտոր շրերով լցված ձորերը դղրդում էին։

Արաքսի կիրճը խայտում էր վաղ գարնան հրաշքներով։

Ահա և Ագուլիսը։

Նախ երևաց ծաղկած սալորենիների, նշենիների ու դեղձենիների զանգվածը, ապա նրանց միջից ցցված եկեղեցիների ու վանքերի սև-կեհուռ գմբեթները, հետո տները՝ լայն ու երկար պատշգամբներով, քանդակազարդ սյուներով։

Մեծ դռան մոտ ագուլիսցիները կանգնեցրին Թովմայի զորագունդը։ Գոհարը հոնքերը կիտեց, սեղմեց գեղեցիկ շրթունքները։ Վիրավորվեց, որ ագուլիսցիները չճանաչեցին իր ամուսնու դրոշը՝ վրան արծիվ ու հոշոտվող եղնիկ, որ ինքն էր ասեղնագործել՝ իր հոշոտված բախտն ակնարկելով։

— Պետք է ձեր գալու մասին տեղյակ պահենք մեր պարոն-տերին,— ասացին սառնաղեմ ու սառնաձայն ագուլիսցիները։

— Իսկ մենք թո՞ւրք ենք, թե՞ պարսիկ, որ խանձվենք արևի տակ,— չմամբերեց, գոչեց Գոհարը։

— Կարգ է,— կոպիտ պատասխանեցին նրան։

Երկու ժամից ավելի սպասեցին արևի տակ։ Թովման այնպես էր վիրավորվել, որ կուզեր մելիք Մուսին չընդունի իրեն։ Ետ կգնա, կբողոքի Մխիթարին։ Դուցե Մխիթարը գա՝ անհյուրընկալ մելիքին պատժելու։

Բայց շուտով թույլ տվին, որ նա քաղաք մտնի իր գնդով։ Գոհարը ձին այնպես թռցրեց դարպասի միջով, որ քիչ մնաց կոխկրտեր զինվորներին։ Զարթուն խնդաց նրանց վրա, շտկվեց, ձգվեց թամբին ու, ձին խաղացնելով՝ մտավ քաղաք։ Պատշգամբներից, պատուհաններից ու այգիներից հարյուրավոր հետաքրքիր աչքեր նայում էին սալահատակը դղրդացնող պղնձաքարցիներին։ Առավել հետաքրքրվում էին սակեկաք շիքիլներով, առանց քթակալների, կրծքերի վերին մասերը բաց կանայք։

Գոհարին դուր եկան Ագուլիսի տների մեծագիր պատուհանները,

մանավանդ թաղարների մեջ դրած ծաղկաթփերը, նարինջի խոշոր ծառերը, որ արդեն տներից հանել, դրել էին պատշգամբներում։

Մելիք Մուսու ապարանքը գտնվում էր ձորափին, այնտեղ, ուր Ագուլիսի ակնեղենի ու շոր մրգերի նշանավոր ծածկած շուկան էր՝ հիսուն սյունի վրա։ Մելիքը Թովմային ու նրա կնոջը դիմավորեց իր ապարանքի գույնզգույն ապակիներով պատշգամբում։

— Ես ամենաբախտավոր մարդն եմ, որ ինձ հյուր են եկել իմ եղբայր մելիք Բարխուդար մեծի դուստրը, շնաշխարհիկ Գոհարը և նրա քաջաբազուկ ամուսինը՝ Թովմա հարյուրապետը,— ժպտադեմ ասաց պարոն-տերը՝ մոնղոլական զոլավոր խալաթի փեշերը գոտու արանքը խրելով։— Համեցե՛ք, զավակնե՛րս, իմ տունը մատաղ ձեզ...

Երկու մանկամարդ աղախին մտան Գոհարի թևերն ու նրան տարան հարդարանքի սենյակը։ Մելիքն իր հարյուրապետներին հրամայեց՝ տներում տեղավորել Թովմայի զինվորներին, բայց Թովման խնդրեց իր գնդի համար մի առանձին տեղ հատկացնել։

— Իմ խենթերը տներում ապրելու սովոր չեն, տե՛ր պարոն-տեր,— ասաց նա։— Նրանք այնտեղ կծուլանան։ Ավելի հարմար է բաց տեղ տաս մեզ, երկնքի տակ, սովոր ենք։

— Կամքը քոնն է, զավա՛կս,— ճաղատ գլուխն օրորեց պարոն-տերը։

Թովմայի գունդը տեղավորեցին քաղաքից մի փոքր դուրս գտնվող Թովմա առաքյալի վանքի բակում։ Հարյուրապետը մնաց մելիքի մոտ ընթրիքի։ Նա վճռել էր կնոջ հետ տեղափոխվել վանք, ապրել վրանում։

Հարդարանքի սենյակը շլացուցիչ տպավորություն թողեց Գոհարի վրա։ Նա հազիվ զսպեց զարմանքի ճիչը, բայց և կարողացավ ազատհամարձակ քայլերով դիմել դեպի լվացարան, որ աղախինները չնկատեն իր շտեսությունը։ Սենյակում հատակից մինչև առաստաղը հասնող հայելիներ կային. դրանց մեջ թրթռում էին յուղային լապտերների լույսերը։

Աղախինը բացեց ջրի ծորակը, Գոհարը լվացվեց։ Նրան սրբիչ տվին։ Գոհարն աչքի տակով նայեց պատի կլոր ժամացույցին։ Սրա միջից լսվում էր մուրճի մեղմ, համաչափ հարվածների ձայնը։ Հայելիներից մեկի առջև, մարմարե սեղանին դրված էին օծանելիքների սրվակներ, մեծ ու մանր ոսկե ու փղոսկրե տուփեր՝ մեջները քորոցներ, ծամակալներ, սանրեր։ Գոհարը կարգի բերեց զգեստները, հոտ քաշեց օծանելիքներից ու, ընտրելով հաճելին՝ ցանեց իր զգեստներին։ Երբ շուռ եկավ, փղոսկրե զարդերով պատած դռների մոտ կանգնած տեսավ երեք օրիորդ իրար նման ու գրեթե իրար հասակի։

— Մեր մայրը խնդրում է քեզ շնորհ անել և իրեն ուրախացնել քո ցանկալի այցելությամբ,— ասացին նրանք, գլուխ տվին ու մոտեցան Գոհարի ձեռքը համբուրելու։

— Ա՛խ, ի՞նչ եք անում, սիրելինե՛րս, չի՛ հարկավոր,— հուզվեց Գոհարը և ձեռքերը փախցրեց։— Չի՛ հարկավոր, անուշիկնե՛րս։

— Մենք վաղուց ենք լսել քո անունը,— խոսեցին աղջիկները։— Ագուլիսի տիկիններն ու աղջիկները պաշտում են քեզ, Գոհա՛ր տիկին։ Լսել ենք, թե ի՛նչ հս արել Մարաղայի դաշտում։ Տեսանք նաև, թե ինչպես էիր ձի նստել։

— Իսկ դուք չե՞ք կարող ձի նստել,— հարցրեց Գոհարը շոյված։

— Ա՛խ, ո՛չ։

— Եթե կամենաք՝ կսովորեցնեմ,— ասաց Գոհարն ու աղջիկների ուղեկցությամբ գնաց։ Քայլում էր վեհ, արժանապատիվ։ Նա մի գլուխ բարձր էր մելիքի աղջիկներից։

Նրան տարան շքեղ կահավորված միջանցքներով, զարդասենյակներով։ Այդ տանն ամեն ինչ արտակարգ փայլ ուներ։ Հատակներին փռած գորգերն ասես կենդանի ծաղիկներից էին, և մեղք էր ոտք դնել նրանց վրա։ Յուրաքանչյուր սենյակ մի առանձին գույն ուներ։ Այդ գույնին համապատասխան էին սենյակում եղած կահավորանքը, գորգերը։ Որքան էլ Գոհարը ջանում էր բանի տեղ չդնել մելիքի տան գայթակղող շքեղությունը, բայց և այնպես հայացքով լափում էր յուրաքանչյուր իր, ու նախանձի ալիքը բարձրանում էր նրա փառասեր սրտում։

Աղախինները քաշեցին ոսկեծոպ վարագույրները ու բաց արին մի դուռ։ Ներսից մեղմածոր երաժշտության ձայն լսվեց։ Մի սև արարած փաթաթվեց Գոհարի ծնկներին։ Սա հազիվ զսպեց ճիչը... Աղախինը խփեց սև կապիկի դնչին ու նետեց մի կողմ։

— Մայրս այս կապիկին շատ է սիրում,— շփոթված բացատրեց մելիքի աղջիկներից մեկը։— Զարաճճի մեկն է Ալի՛քը։ Այնպիսի գժություններ է անում, որ... Հայրս է բերել Հնդկաց աշխարհից։ Բայց վնաս տվող չէ։ Հո չվախեցա՞ր, թանկագի՛ն տիկին։

— Ես պատժում եմ բոլոր նրանց, ովքեր կտրում են իմ ճանապարհը,— բարկությամբ ասաց Գոհարը։ Աղջիկներն իրար նայեցին ամոթով։ Գոհարն անցավ շեմքը, կանգնեց գորգի ծաղիկներին, մի հայացքով ընդգրկեց շքեղությունից պայթող ընդարձակ սրահը, որ բռնված էր մոմեղենի, խնկի և կնդրուկի բույրով։ Նայեց դիմացը՝ բարձր տախտամածի նստարարձերին տեղավորված կանանց և ասաց.

— Բարի՞ երեկո ագուլիսցի տիկիններին։ Դրսից խաղաղություն...

— Ներսից ուրախություն,— պատասխանեց կանանց կիսաշրջանի

մեջտեղը մի բարձ վերև նստած մելիքի կինը՝ պարարտամարմին Հայկանդուխտ տիկինը։— Համեցի՛ր, թանկագին Գոհար տիկին, մո՛տ եկ։

Բոլորը, բացի նրանից, վեր կացան։ Շորորուն քայլերով Գոհարը գնաց, գլխի թեթևակի շարժումով բարևեց տիկիններին, ապա համբուրեց Հայկանդուխտ տիկնոջ ձեռքը։ Տիկինը գրկեց նրան։

— Թեպետ ճոխ է իմ տունը, բայց քեզ նման հյուրի գալով ավելի ճոխացավ, Գոհա՛ր,— ասաց հուզված։— Թեպետ ես արժանի եմ լավ հյուրի, բայց քո գալով ավելի արժանի դարձա։ Ես երկրի վրա ոչ մի կին չեմ տեսել ավելի շնորհալի ու գեղանի և միաժամանակ ավելի քաջ, քան դու ես։ Նստի՛ր ինձ մոտ, աղջի՛կս, և մասնակից եղիր մեր ուրախությանը, որ իմ մեծ դստեր անվանակոչության առթիվ կատարում ենք Ագուլիսի մեծատոհմիկ տիկինների հետ։ Բարի՛ն եկար...

Նա հյուրին նստեցրեց իր աջ կողքին՝ փետուրե բարձի վրա։ Գոհարը աչքերը թեթևակի կկոցեց (լույսը շլացուցիչ էր), նայեց տիկիններին։ Բոլորը նստած էին վեհ ու հանդիսավոր։ Տարեց տիկինները երկնագույն արխալուղ ունեին, մավ հալավներ, որոնց փեշերը ծալել էին ծընկների տակ։ Նրանց գլուխները զարդարված էին ոսկեկար չիքիներով՝ պալտիներին տասներկուական ոսկի դրամներ, թեթև շղարշներ էին իջնում նրանց գլուխներից ու թիկունքներին ալիքավորվելով՝ փրփուրի պես ուռչում գորգի ծաղիկների վրա։ Նրանց կրծքներին շողում էին անհամար ադամանդե կոճակներ, թևերի ոսկե զանգուլակներին ախորժալի ձայներ էին հանում, երբ մեկն ու մեկը շարժում էր ձեռքը։

Երիտասարդ կանայք ավելի պարզ էին հագնված։ Նրանց գլուխները բաց էին, մազերը, որ այդ կողմերի հարսները ծամ չէին անում, անփութորեն թափված էին շղարշով պատած նրանց կլորիկ ուսերին։ (Մերկ ուսերով կին առաջին անգամ էր տեսնում Գոհարը)։ Առատ լույսի տակ կարծես ճառագայթում էին նրանց երկար պարանոցները, որոնց վրա հազիվ նշմարելի ստվեր էին նետում ականջների բազմաձև գինդերը։

— Անշուշտ հոգնել ես ճանապարհին, աղավնյա՛կս,— մտերմաբար խոսեց Հայկանդուխտ տիկինը՝ զգուշությամբ բռնելով Գոհարի ձեռքը։

— Սովոր եմ,— պատասխանեց Գոհարը։

— Ապրի՛ գլխատերդ։

Գոհարը նայեց առաջ։ Այնտեղ, խոշոր պատուհանների արանքում ցածրիկ թախտին անշարժ նստած էին երկու պատանի գուսան։

Մի աղախին գլխից բարձր պահած արծաթե սկուտեղ բերեց և դրեց Գոհարի առջև։ Սկուտեղի վրա անուշահոտ գինու մի փոքրիկ սրվակ էր դրված, կողքին՝ ոսկե բաժակ՝ բացված զանգակածաղկի նման։ Արծաթե փոքրիկ ափսեների մեջ զանազան մրգեր էին՝ գինու մազայի համար։

Հայկանդուխտ տիկինը գինի լցրեց հյուրի գավաթը։

— Անուշ արա, աղավնյա՛կս,— ասաց մայրաբար։— Գողթնի գինին հաճելի է ու օգտակար։

Գոհարը վերցրեց գավաթը։

— Անվանակոչին արևշատությո՛ւն,— լեռների քամուց փոքր-ինչ կոշտացած ձայնով ասաց նա։ Դիմացը նստած աղջիկներից մեկը վեր կացավ և, հոլանի ձեռքերը մատաղ կրծքին խաչելով՝ խոնարհում արեց։

— Հեղինես է,— հպարտ ասաց Հայկանդուխտ տիկինը։— Ծովի չափ խելք ունի և գառան համեստություն։ Տասնչորս տարին է բոլորում այսօր։

— Ապրի բախտավոր, չարից ու ցավից հեռու,— մաղթեց Գոհարը։

— Բերանդ տաճա՛ր,— արձագանքեցին տիկինները։

Գուսանները հնչեցրին իրենց նվագարանները։ Թրթռուն մեղեդին սփռվեց սրահում։ Մանկամարդ հարսներից մեկը վերցրեց իր մոտ, բարձին դրած դաֆն ու բարակ մատներով սկսեց մեղմ հարվածել։ Հեղինեն խոնարհած գլուխը բարձրացրեց ու, զգուշությամբ քայլելով գորգի ծաղիկների վրայով՝ սկսեց պարել...

Գոհարը նայեց թիթեռնիկի պես ճախրող այդ լուսեղեն էակին ու սոսկաց. «Աստվա՛ծ իմ, ինչ կլինի այս քնքուշ արարածի վիճակը, եթե թուրքերը մտնեն այս քաղաքը։ Ո՞վ իմանա, ո՞ր բռի ասկյարին բաժին կընկնի սա, և կտրորվի ճանապարհին ընկած շուշանի պես»։ Նա լցրեց մի գավաթ ևս, բարձրացրեց ու գոչեց.

— Տիկիննե՛ր և դստրիկներ։ Լսեցե՛ք։ Խմենք մեր քաջարի տղամարդկանց արևշատությո՛ն։ Դուք ձեր քնքշությամբ արիացրեք նրանց սրտերը, որ ոչ մի թշնամի իր կեղտոտ թաթը չկպցնի ձեր շղարշներին։ Միաբանության սուրբ ուխտին հավատարիմ պահեցեք ձեր տղամարդկանց, եթե չեք ուզում, որ թուրքերը ձեզ մերկացնեն ու, քարշ տալով իրենց վայրենի բանակի միջով՝ անպատվեն։

Տիկիններից ոմանք հառաչեցին։ Նվագը դադարեց, պաքող աղջիկն ահով նստեց իր տեղը։

— Այո՛, այո՛, մի՛ մոռանաք, որ թուրքը հեռու չէ։ Ոչ մի բարություն մի՛ սպասեք նրանից։— Կայծակեց Գոհարը։— Անխուսափելի ականջով ու արթուն աչքով հետևեցեք, հսկեցեք ձեր տղամարդկանց, որ նրանք չշեղվեն հավատարմության ճշմարիտ ճանապարհից և միակամ ու միաբան լինեն Հայոց ժողովի ու Մխիթար գահերեց զորավարի հետ։ Ուրեմն խմենք այն հայ քաջերի կենացը, որոնք իրենց ընտանիքի և հայրենիքի պատիվը հազարապատիկ բարձր են գնահատում սեփական շահից ու անձից։

— Ամե՛ն,— սրտանց ասացին տիկինները։

— Խմենք ու երդվենք՝ մեր դոներն ու սրտերը փակ պահել նրանց առջև, ովքեր կուրանան հայրենիքը և կդավաճանեն ազգին հայոց։— Գոհարը խմեց, ապա շեշտակի նայեց ագուլիսցի տիկնանց ու ձգվեց արժանավայել։

Երկար ժամանակ ծանր լռություն տիրեց։ Գոհարը գլուխը բարձր բռնած նայում էր գունավոր ապակիներով պատուհաններին, որոնց վրա հայ նաղաշները նուրբ գույներով նկարել էին հեքիաթային թռչուններ ու մայր մանուշակների փնջեր։ Այդ ծաղիկները կարծես շնչում էին, ու ահա ուր որ է կպոկվեն ապակիներից ու շաղ կգան սրահի հատակին։ Դրանք Գոհարին հիշեցրին Տրտու գետի ափերը, երբ ինքն առաջին անգամ թպրտաց Մխիթարի գրկում, և երբ Մխիթարը նրա կրծքին ամրացրեց իր առաջին նվերը՝ ժայռի ճեղքից պոկած մայր մանուշակը։ Գոհարը փակեց աչքերը, մի վայրկյան ընկավ հուշերի հրապուրիչ ծովը և հանկարծ սթափվեց, հևաց՝ լիքը կուրծքը վերուվար անելով։

— Նվագեցեք, գուսա՛ն եղբայրներ,— ասաց նա։— Ես ճախրե՛լ եմ ուզում, գինովանա՛լ, մոռանա՛լ, հավիտյանս մոռանալ եմ ուզում նրան... աշխա՛րհը, վի՛շտս, թուրքի վտանգը։

Գուսանները նվագեցին, Գոհարը կուրծքն ուռցրեց, գլուխը թափ տվեց ու գնաց՝ իր մրրկածուփ պարով զարմացնելու ամենքին։ Նրա կարմ կապայի տակից երբեմն փայլատակում էր դաշույնի ոսկեզօծ պատյանը։

Նա ուրախանում էր Ագուլիսի մեծատոհմ տիկինների հետ։

Այնինչ դրսում գիշերն իր սև հյուսերն էր սփռում Արաքսի կիրճի մեջ։

***

Գոհարը մնաց մելիք Մուսու տանը։ Նրան անչափ դուր էին եկել մելիքի աղջիկները, մանավանդ բարեհամբույր ու հեզ Հեղինեն։ Ամբողջ օրը Գոհարը նրանց հետ էր լինում։ Քնում էր Հեղինեի սենյակում։ Ագուլիս գալու հինգերորդ օրը Գոհարին հայտնեցին, որ նրան տեսնել է կամենում Նաղաշ Հակոբը։ Գոհարը չմերժեց նկարչի խնդրանքը, թեև նրան մեկ-երկու անգամ էր տեսել միայն և մտերիմ չէր հետը։ Նաղաշը նրան ներկայացավ իր նկարչական մախաղով, երկու պատանի աշակերտներով։ Պատշաճ ողջունեց ու ասաց.

— Քո անունը սիրելի է դարձել մեր աշխարհում, Գոհա՛ր տիկին։ Եվ ահա, մեր տեր գահերեց զորավարի խնդրանքով, ես եկել եմ քո պատկերը քաշելու, և հույս ունեմ, որ մերժում չեմ ստանա։

Գոհարը փքվեց, բայց չանաց ցույց չտալ սրտի ուրախությունը։

— Մխիթարի պատվերո՞վ, ասում ես,— հարցրեց նա։

— Այո,— պատասխանեց Նաղաշը։— Ես սիրով կկատարեմ մեր տիրոջ պատվերը։ Եվ նա ճշմարիտն է մտածել։ Դու արժանի ես դրան։

Գոհարի համար անսպասելի էր Մխիթարի ցանկությունը։ «Չի մոռացել,— մտածեց նա։— Սիրում է գուցե առաջվանից ջերմ։ Կամենում է իր տանը, իր հետ ունենալ պատկերս։ Մխիթարվել նրանով։ Թող լինի, ուրեմն, նրա ցանկությունը»։ Նա խոր հոգոց հանեց, տխրեց ու թավշե ձայնով դիմեց նկարչին։

— Մի՞թե ես արժանի եմ քո վրձնին, Նաղա՛շ Հակոբ։ Մեծամեծ տիկիններ կան մեր աշխարհում, իշխանուհիներ կան, իսկ ես մի ռամիկ հարյուրապետի կին եմ և հազիվ թե կարողանամ վարձահատույց լինել քեզ՝ քո մեծ գործի համար։

— Կամենում եմ առարկել մի փոքր,— Գոհարի արտահայտիչ աչքերով, դեմքի շեշտված գծերով հմայված՝ պատասխանեց Նաղաշը։— Միայն գահերեցի պատվերը չէ, որ ինձ մղեց այս գործին։ Դու կատարել ես այն, ինչ քչերին է հաջողվել մեր աշխարհում։ Քո երախտիքն անչափելի է։ Դու մեր հայրենիքի զինվորն ես, և դա մեծապես ոգևորում է ինձ։ Մարդն իր գործով է մեծանուն, ռամիկ լինի նա, արքա, կին, թե տղամարդ։ Ես կամենում եմ քո պատկերը թողնել գալիք սերունդներին, որ հայ աղջիկներն ու տիկնայք տեսնեն հայրենասիրության այն կրակը, որ կա քո մեջ, այն սիրտը, որ դու տվել ես մեր ժողովրդին։

— «Թե՞ Մխիթարին»,— հառաջանքը կուլ տալով՝ մտածեց Գոհարը։ Նրա համար մեծ ուրախություն էր, որ Մխիթարն իրեն է ընտրել նկարելու, իր պատկերն է ուզում թողնել «գալիք սերունդներին»։ Նա նորից հեռացավ դեպի հուշերի գիրկը։ Այնինչ Նաղաշ Հակոբը բաց էր արել կաշվե մախաղը և պատրաստվում էր սկսել նկարը։ Գոհարը սթափվեց ու նայեց նրան։

Միջահասակ, բարեկազմ տղամարդ էր Նաղաշ Հակոբը։ Դեմքը սափրած էր. գլխի մազերը խիտ էին, անհնազանդ, քունքերը ճերմակել էին արդեն, իսկ խոշոր, փոքր-ինչ խաժ աչքերը լիքն էին իմաստուն խորհուրդներով, որոնք ասես հենց մի հայացքով թափանցում էին դիմացինի հոգու խորքերը, գտնում, տեսնում այն, ինչ անմատչելի էր ուրիշներին։

— Համաձայն եմ,— վերջապես ասաց Գոհարը։

Այդ օրը Նաղաշ Հակոբն սկսեց նկարել նրան։

* * *

Երբեք այդքան ժողովուրդ ու զորք չէր եղել Ջրաբերդում։

Մի շաբաթ էր, ինչ Հալիձորից Ջրաբերդ էին եկել գահերեց զորավար Մխիթարն ու Տեր-Ավետիս հազարապետը։ Գահերեց ընտրվելուց հետո դա Մխիթարի առաջին այցն էր հայոց հյուսիսային գավառները։ Նա եկել էր շրջագայելու Գյուլիստանի, Ջրաբերդի ու Խաչենի գավառներում, ստուգելու գործերի վիճակը, մոտիկից ծանոթանալու Գանձակում նստած օսմանյան բանակի ուժերին, իմանալու նրանց մտադրությունները։

Նրա Ջրաբերդ գալու լուրն իմանալով՝ շրջակա գյուղերից ու ամրոցներից այնտեղ էին շտապում գյուղացիների խմբեր՝ իրենց գանգատներով, տրտունջներով, հազար ու մի խնդրանքներով։

Ամպամած օր էր։ Գիշերը հորդ անձրև էր եկել։ Երկինքը ծածկված էր սև թուխպերով, որ կարծես իջել, նստել էր լեռնագագաթներին։ Լուսաբացից դեռ շատ առաջ գանգատավորները խռնվել էին Գանձասարի նեղ հրապարակում։ Մխիթարի թիկնապահ զինվորները կարգ էին պահպանում, հանդարտեցնում մարդկանց։

— Համբերեցե՛ք, շինականնե՛ր։ Հիմա գահերեցը կգա ու կլսի ձեր գանգատները,— ասում էին նրանք։— Բոլորիդ համար արդար վճիռ կլինի։

Ջորքն ու ժողովուրդը կուտակվում էր նրբանցքներում, հրապարակին կից տների կտուրներին։ Մելիքի տան կողմից փողերի ձայն լսվեց, ու երևաց Հայոց ժողովի դրոշը։ Հզորանձայն մի մունետիկ կանչեց.

— Հավաքվեցե՛ք հրապարակ, ժողովո՛ւրդ հայոց։ Գործ կա՝ հույժ կարևոր։

Ժողովուրդն անհանգստացավ։

— Էլի՞ պատերազմ։

— Թուրքի սերասկյար փաշայից դեսպան է եկել,— պատասխանեց մունետիկը։

— Ուղիղ Ջրաբե՞րդ։

— Եկել էր Հալիձոր, բայց այնտեղից բերել են գահերեցի մոտ։

— Էհե՛, ինչո՞ւ է եկել։

Հովհաննես-Ավան իշխանի ապարանքից դուրս եկան մելիքները, զորապետները և Մխիթարը։ Սրանք հանդիսավոր եկան, բարձրացան հրապարակին կից ցածրիկ տան կտուրը։ Մխիթարը ողջունեց զորքին ու ժողովրդին։ Այդ օրը նա ավելի բարձրահասակ ու վեհ էր երևում։ Թվում էր, թե ոչինչ չի ընկճում այդ մարդուն։ Նրա աջ կողմին կանգնեց Տեր-Ավետիսը՝ մռայլ ու մտահոգ, ձախ կողմին՝ Հովհաննես-Ավան իշխանը՝ երկար բեղերով, կուրծքն ուռցրած։ Ապա ավագության կարգով շարվեցին Ջրաբերդում գտնվող մելիքները։

— Ականջ արեք, հայե՛ր,— հստակ ձայնով խոսեց Մխիթարը։— Հիմա մենք կլսենք Քյոփուրլու Աբդուլլահ փաշայի դեսպանին։

Փողեր փչեցին։ Եսայի հարյուրապետը, որ դեսպանին Հալիձորից բերել էր Ջրաբերդ, թուրքերին բարձրացրեց կտուրը։ Սրանք հագել էին լայնափողք, մուգ կարմիր վարտիքներ՝ նստելատեղներին կաշվե կարկատաններ։ Կարճաթև բաճկոններն ամուր գրկել էին նրանց մեջքերը։ Նրանք տափակ գդակներ ունեին, որոնց ջագաթներին ցցված էին մի-մի եզան պոչ։ Նրանց բաճկոններին ասեղնագործված էին կարմիր կիսալուսիններ։ Կլոր դեմքերն ածիլված էին ու յուղած։ Դեսպանը մի այն թեթևակի գլուխ տվեց գահերեց զորավարին և կանգնեց դռռոզ, մի ծուռ ու արհամարհող ժպիտ հասա շրթունքների վրա։

— Օհո՛... մեծ աղբանոցի աքլոր է երևում,— ասացին ներքևից։

— Վիզը ոնց որ շաղացի քար։ Հի՛, հի՛...

Մխիթարը դարձավ դեսպանին.

— Ասա քո միտքը։ Ահա քեզ պատասխանող ժողովուրդը։

Դեսպանի հետ եկած թարգմանը մի քայլ առաջ գնաց ու, մեջքից երկուսակվելով՝ թարգմանեց գահերեցի ասածները։ Դեսպանը խոժոռ նայեց ժողովրդին։

— Ես հաղթական Քյոփուրլու Աբդուլլահ փաշայի անդարձ հրամանն եմ բերել ձեզ, էրմենինե՛ր,— ասաց ծզրտացով, ապա, ծոցից մի թուղթ հանելով՝ մեկնեց Մխիթարին։— Փաշան պահանջում է, որ զուբ՝ սուլթանի հպատակ էրմենինե՛րդ, գաք նրա ոտքը և համբուրեք նրա կոշիկի ծայրը։

Ամբոխը որոտաց միանգամից։ Բողոքի թնդյունը ալիք-ալիք գնաց դեպի հեռուները և դարձավ համատարած գոչյուն՝ չար, սպառնալի։ Դեսպանն ավելի հպարտ կեցվածք ընդունեց, իսկ թարգմանը ցնցվեց ահից։

Տեր-Ավետիսը շանթող հայացքով նայեց ամբոխին. «Մեծով ու փոքրով գժվել են,— ատամները կրճտացնելով մտածեց նա։— Իրենց նետում են մերկ սրերի վրա։ Այնինչ պետք է լեզու գտնել թշնամու հետ, զսպել նրա բարկությունը, անմխիթարնե՛ր»։

Մխիթարը փաշայի թուղթը (մեջը միայն հայհոյանքներ ու սպառնալիքներ էին գրված) տվեց Եսայուն ու դարձավ թուրքին.

— Ուրիշ ի՞նչ է ուզում փաշան։

— Ուզում է, որ ցրես քո հավաքած զորքը։ Այս մեկ։ Յոթը տարնեց Տեր-Ավետիսը՝ մռայլ ու մտահոգ, ձախ կողմին՝ Հովհաննես-Ավան իշխանը՝ երկար բեղերով, կուրծքն ուռցրած։ Ապա ավագության կարգով շարվեցին Ջրաբերդում գտնվող մելիքները։

— Ականջ արեք, հայե՛ր,— հստակ ձայնով խոսեց Մխիթարը։— Հիմա մենք կլսենք Քյոփուրլու Աբդուլլահ փաշայի դեսպանին։

Փողեր փչեցին։ Եսայի հարյուրապետը, որ դեսպանին Հալիձորից բերել էր Ջրաբերդ, թուրքերին բարձրացրեց կտուրը։ Սրանք հագել էին լայնափողք, մուգ կարմիր վարտիքներ՝ նստելատեղներին կաշվե կարկատաններ։ Կարճաթև բաճկոններն ամուր գրկել էին նրանց մեջքերը։ Նրանք տափակ գդակներ ունեին, որոնց ջագաթներին ցցված էին մի-մի եզան պոչ։ Նրանց բաճկոններին ասեղնագործված էին կարմիր կիսալուսիններ։ Կլոր դեմքերն ածիլված էին ու յուղած։ Դեսպանը մի այն թեթևակի գլուխ տվեց գահերեց զորավարին և կանգնեց դռռոզ, մի ծուռ ու արհամարհող ժպիտ հասա շրթունքների վրա։

— Օհո՛... մեծ աղբանոցի աքլոր է երևում,— ասացին ներքևից։

— Վիզը ոնց որ շաղացի քար։ Հի՛, հի՛...

Մխիթարը դարձավ դեսպանին.

— Ասա քո միտքը։ Ահա քեզ պատասխանող ժողովուրդը։

Դեսպանի հետ եկած թարգմանը մի քայլ առաջ գնաց ու, մեջքից երկուսակվելով՝ թարգմանեց գահերեցի ասածները։ Դեսպանը խոժոռ նայեց ժողովրդին։

— Ես հաղթական Քյոփուրլու Աբդուլլահ փաշայի անդարձ հրամանն եմ բերել ձեզ, էրմենինե՛ր,— ասաց ծզրտացով, ապա, ծոցից մի թուղթ հանելով՝ մեկնեց Մխիթարին։— Փաշան պահանջում է, որ զուբ՝ սուլթանի հպատակ էրմենինե՛րդ, գաք նրա ոտքը և համբուրեք նրա կոշիկի ծայրը։

Ամբոխը որոտաց միանգամից։ Բողոքի թնդյունը ալիք-ալիք գնաց դեպի հեռուները և դարձավ համատարած գոչյուն՝ չար, սպառնալի։ Դեսպանն ավելի հպարտ կեցվածք ընդունեց, իսկ թարգմանը ցնցվեց ահից։

Տեր-Ավետիսը շանթող հայացքով նայեց ամբոխին. «Մեծով ու փոքրով գժվել են,— ատամները կրճտացնելով մտածեց նա։— Իրենց նետում են մերկ սրերի վրա։ Այնինչ պետք է լեզու գտնել թշնամու հետ, զսպել նրա բարկությունը, անմխիթարնե՛ր»։

Մխիթարը փաշայի թուղթը (մեջը միայն հայհոյանքներ ու սպառնալիքներ էին գրված) տվեց Եսայուն ու դարձավ թուրքին.

— Ուրիշ ի՞նչ է ուզում փաշան։

— Ուզում է, որ ցրես քո հավաքած զորքը։ Այս մեկ։ Յոթը տար-

վա հարկ վճարես սուլթանին։ Այս երկու։ Քո երկրով ճանապարհ տաս տիեզերքի կենտրոն սուլթանի անպարտելի զորքերին, որ անարգել գնան դեպի Բաքու և Դերբենդ՝ սարը Մոսկոֆի գյավուրներին պատժելու։ Այս էլ երեք։ Կամ կատարիր այս հրամանները, կամ մենք կգանք ձեր աշխարհը և ոչ մի կենդանի արարած չենք թողնի ձեր բներում։

Ամբոխն ու զորքը նորից խենթացավ։

— Կտրիր դրա լեզուն, տե՛ր Մխիթար,— մոտիկից լսվեց Սատուրի սպառնագին ձայնը,— յոթը տարվա հա՛րկ են ուզում։ Ախորժակների՛ն նայեցեք...

— Մեզ տուր, մենք այդ գայլի դատաստանը տեսնենք։

— Ո՛չ մի հարկ, ո՛չ մի զիջում։

Ժողովուրդը ալեկոծվում էր։ Տեր-Ավետիսը բարկությունից ծամում էր շրթունքները։ Ամբոխի միջից մի ցեխոտ տրեխ թռավ ու կպավ դեսպանի դեմքին։ Տեր-Ավետիսը Մխիթարին ասաց.

— Զսպիր այդ գազաններին։

— Կարող ես՝ ինքդ զսպիր,— դժգոհ պատասխանեց Մխիթարը։

— Կրակի հետ են խաղում անմիտները։

Բայց Տեր-Ավետիսի վերջին խոսքերը Մխիթարը չլսեց։ Նա մոտեցել էր դեսպանին։

— Լսո՞ւմ ես, աղա՛ դեսպան։— Ձեռքը մեկնեց ժողովրդի զանգվածին։— Կամքը նրանն է։ Գնա եկածդ ճանապարհով։ Մենք հարկ չունենք ձեզ տալու, ոչ էլ ճանապարհ կտանք՝ ռուսների վրա գնալու համար։ Քո փաշային ասա մեր պահանջը՝ հեռու մնա մեր աշխարհից, քաշվի նախիջևանից ու Երևանից, այն ժամանակ կլինենք խաղաղ հարևաններ։

Մելիքներն արագ իջան կտուրից։ Մի հարյուրյակ շրջապատեց դեսպանին, որ գազազած ամբոխը նրան չբզկտի։

Մի շաբաթ հետո թուրք դեսպանին հասցրին Արաքսի ափը։ Իջան ձիերից։ Նրանց ուղեկցող Եսային դեսպանին ասաց.

— Մենք քեզ ու քո թարգմանին ապահով հասցրինք մեր աշխարհի սահմանը, տե՛ր դեսպան։ Այժմ դու կարող ես անցնել գետն ու գնալ քո փաշայի մոտ։

— Կգնամ՝ գալու համար,— շպրտեց դեսպանը։

— Մեզ մոտ շատ փոսեր կան, որ ձեր գլուխները հորենք,— հանդարտ ասաց Եսային։ Նա ծոցից հանեց Մխիթարին գրած փաշայի նամակն ու դեսպանին հրամայեց բերանը բաց անել։ Սա ապշահար նայեց նրան։

— Բերանդ բա՛ց,— հրամայեց Եսային։

— Այդ ինչի՞ համար,— այլայլվեց դեսպանը։

— Որ իմ պատասխանը լավ լսես, կուլ տաս ու տանես քո փաշային։ Բա՛ց։

Թուրքը հրաժարվեց։ Եսային աչքով արեց իր զինվորներին։ Ծատուրն ու Սեմեոնը բռնեցին դեսպանի ձեռքերը, ետ տարան, թիկունքի վրա միացրին իրար ու, ծնկները նրա մեջքին հենելով՝ ձգեցին։ Թուրքի ոսկորները խշշացին։

— Ամա՛ն,— բառաչեց նա։— Թողե՛ք, բերանս բաց է։

Եսային փաշայի թուղթը կոլոլեց, կոխեց նրա բերանը։

— Կե՛ր։

Թուրքը թուղթը ծամեց ու կուլ տվեց։ Զինվորները հոհոացին։

— Հիմի չքվիր,— ասաց Եսային։— Ինչ որ կերար, այն էլ կտանես քո փաշային։ Դա է մեր պատասխանը։

***

Մարաղայի ճակատամարտում ընկած եղբորը՝ Պակի զորապետին փոխարինում էր մելիք Բարխուդարի մեծ որդին՝ Միհրան հարյուրապետը։ Դավիթ-Բեկը նրան նշանակել էր Հալիձորի կայազորի պետ ու բերդակալ զորքի հրամանատար։ Եվ նա գոհ էր։ Սակայն Մխիթարին դուր չեկավ այդ կասկածամիտ ու քաշված, բերանը փակ մարդը։ Զրաբերդից վերադառնալուց հետո նա նրան հանեց իր պաշտոնից և ուղարկեց Հալիձորի աշխարհազորային ջոկատը, իբրև հարյուրապետ։ Այդ բանը սաստիկ վիրավորեց առանց այն էլ Մխիթարի դեմ վաղուց թշնամաբար տրամադրված Միհրանին։ Նա ատամները կրճտացրեց Մխիթարի դեմ։ Բնականից շար ու նենգոտ այդ մարդը իրեն սաստիկ ստորացած էր զգում, սակայն երեսանց ժպտում էր գահերեց զորավարին ու գոհ ձևացնում իրեն։ Նա կատաղում էր, մանավանդ, երբ տեսնում էր, թե Մխիթարն ինչպիսի պատիվներ է շնորհում իր հակառակորդ ճրո մելիք Թուրինջի որդի Թովմա հարյուրապետին, դեսպանության ընդունելություններին ու ավագանու խորհուրդներին մասնակից էր անում նրան ու մուրացկան հարյուրապետ Եսայուն, հարգ ու պատիվ տալիս Վրթանեսին, ռուս Վոլոդիմիր Խլերին. իսկ իրեն աչքով աչք չունի տեսնելու։ Երբեք չէր մոռանում այն վիրավորանքը, որ Մխիթարը տարիներ առաջ հասցրեց իրենց տոհմին՝ իրեն ու հորը հրապարակով ծեծել տալով և իրենց բռնի կերպով խնամիացնելով իրենց ծնկների տակից փախած ռամիկ մելիք Թուրինջի հետ։

Միհրանն այժմ առաջվանից ավելի խոր էր ատում Մխիթարին։ Եր-

բեմն նրան թվում էր, թե դա զգում է նաև Մխիթարը, և այդ նույնիսկ հաճույք էր պատճառում նրան։ «Իմացի՛ր, ռամիկի զավակ, ես երբեք բարեկամ չեմ լինի քեզ»,— մտքում ասում էր նա, երբ մեկ-մեկ Մխիթարը գալիս էր նրա ջոկատին այցի։

Մի անգամ էլ այդ մասին խոսք բաց արեց Տեր-Ավետիսի մոտ։ Մխիթարը Հալիձորում չէր։ Տեր-Ավետիսը նրան կանչել էր ինչ-որ գործով։ Մենակ էին։ Տեր-Ավետիսը մռայլ էր, բարկացած։ Բայց Միհրանին նստեցրեց իր կողքին և նույնիսկ իր ձեռքով սուրճ լցրեց նրա համար։ Ջինական լամպը պղտոր գույներով էր ներկել Տեր-Ավետիսի դեմքը, աչքերն ասես այրվում էին։ Դրսում ոռնում էր գարնան քամին։

Միհրանն անսպասելի կռացավ դեպի հյուրընկալը։

— Ես անպատված եմ, տե՛ր հազարապետ։ Ինձ ոտնատակի ցեխ է շինել նա։

— Ո՞վ,— խստությամբ հարցրեց Տեր-Ավետիսը։

— Էլ ո՞վ։ Ռամիկի որդին։ Գահերե՛ցը։ Մեր տե՛րը, մեզ իշխո՛ղը, հրամայողը,— փրփրեց Միհրանը և այնպես ձգեց բաճկոնի օձիքը, որ ոսկրե կլոր կոճակները շաղ եկան։— Ես կխենթանամ, եթե այսպես շարունակվի։ Ե՛ս, ե՛ս...

— Սը՛ս...— խորհրդավոր ձայնով նրան սաստեց Տեր-Ավետիսը։— Ինչպե՞ս ես համարձակվում։ Գլուխդ ծանրությո՞ւն է անում ուսերիդ։

— Հա՛, հա՛,— խեղդվեց Միհրանը։— Թող կտրի, այդ է կամենում տկլորի զավակը։ Հիմա չկտրի էլ, էգուց թոցնել կտա։ Կհանդուրժի՞ որ Այսպիսի անպատվություն ո՞վ կտանի։ Ինձ նետեց անտառի արջերի բերանը։ Մի գյադա Թովմայի թոզն էլ շարժեմ...

Տեր-Ավետիսը երկար քրքջաց, որից ցնցվում էին նրա հզոր ուսերը։

— Է՛, հե՛...— ձեռքն օրորեց նա։— Դու որտե՞ղ, Թովման որտե՞ղ... կամ այն Եսայի է, թե ինչ զահրումար։ Նրանք երկրի ապավեններն են, իսկ դու ի՞նչ ես, որ...

— Ես խո՞զ եմ,— բռունցքը կրծքին խփեց Միհրանը։— Ես ստրուկ եմ, որ հանդուրժում եմ։

Տեր-Ավետիսը վեր կացավ, այնպիսի ոչնչացնող հայացքով նայեց խղճուկ, ինքն իրեն ուտող Միհրանին, որ սա սոսկաց։

— Լեզուդ արմատից կպոկեմ, եթե մի անգամ էլ համարձակվես հաչալ գահերեց գորավարի դեմ,— ահեղ ձայնով ասաց նա։— Դու քո թշվառ հոգին բա՛ր թր ես դասում մեր աշխարհի բախտից։ Այդպե՞ս է։ Ես իմ ատամներով կկրծեմ բոլոր նրանց կռկորդները, ովքեր ծուռ նայեն մեր արյունոտ հայրենիքին։ Այո՛, այո՛։ Վե՛ր կաց, քոսո՛տ ազվես, ոտքիս։ Այդպես... Երկիրն է վտանգի տակ, հայոց ազգը։ Իսկ դու քո

հին դարմա՞նն ես քամուն տալիս։ Թուրքը, հրե՞ն, մորեխի պես գալիս է լափելու մեր աշխարհը։ Ելք պիտի որոնել, ե՞լք...— Նա ոտքերը ջղաձգորեն խփեց գետնին։— Ե՞լք,— գոռաց՝ իրենից դուրս եկած։— Ո՞չ իմ ու քո։ Ո՞չ ռամիկ ու իշխան, ո՞չ կին, ո՞չ զավակ, ո՞չ պատիվ, ո՞չ վիրավորանք... Ամեն ինչ պետք է կուլ տալ, որ կուլ չգնա ազգն հայոց։— Նա հեռաց, սկսեց շնչել ծանր։ Ռունգները լայն բացվեցին։

— Միակ ելքը Թուրքին հպատակվելն է,— անսպասելի ասաց Միհրանը։

Տեր-Ավետիսը հափշտակեց նրա ձեռքը։ Հյուրի դաստակը քիչ մնաց ճաքի։

— Ո՞վ ասաց, որ միակ ելքը դա է,— տաք շնչելով նրա երեսին՝ ատամների արանքից հարցրեց նա։

— Ինքս եմ համոզվել։ Կամ պետք է հպատակվենք սուլթանին, կամ կկորչենք... Ինքդ ես լսել, թե ինչ է ասել Ջրաբերդ եկած փաշայի դեսպանը. «Մենք կգանք ձեր աշխարհը և ոչ մի կենդանի արարած չենք թողնի ձեր բներում»։ Լսե՛լ ես, տե՛ր հազարապետ։

— Լսել եմ,— խռպոտվեց Տեր-Ավետիսը։

— Թուրքին հպատակվելու խորհուրդ տվեց նաև Էջմիածնի կաթողիկոսը։ Իսկ դուք փաշայի դեսպանին անպատվեցիք. երեսին լխկած տրեխ խփեցիք։ Դեսպանին ուղեկցող մուրացկան Եսային Արաքսի ափին ստիպել է, որ նա ուտի փաշայի նամակը։ Անպատվել է վերջին ստահակի պես։ Աշխարհների տիրակալ սուլթանը կհանդուրժի՞ այդ։ Թովի ավազի չափ զորք կուղարկի մեզ վրա, այնպես կկորչենք, որ մոխիրներս էլ չի մնա, որ մի շուն թաղնի վրան։

«Մենակ ես չեմ այդպես մտածում,— ինքն իրեն ասում էր Տեր-Ավետիսը։— Ելքը՞։ Այո, փրկությունը հպատակության մեջ է։ Կհպատակվենք։ Ժողովրդի մի մասը կկորչի, ասիր կգնա, ճշմարիտ է, բայց մեծ մասը կմնա։ Չի մարի հայոց տան ճրագը»։ Նա ցանկացավ Միհրանին ասել, որ ինքն էլ է այդպես մտածում, որ ինքը պատրաստ է նույնիսկ իսլամի հավատն ընդունել՝ ազգը փրկելու համար, բայց զրոպես իրեն ու, ձեռքը դեպի դուռը պարզելով՝ հրամայեց.

— Հեռացի՛ր քո դիվական մտքերի հետ։ Բերանդ միջից երկու չանե՛ս, թե չէ կտոր-կտոր կանեմ քեզ էլ, քո զավակներին էլ։ Հեռացի՛ր, գլուխս մթնում է, աչքերիս արյան ծովեր են երևում, անմեղների՛, թշվառների՛ դիակներ...

Նա երկու ձեռքով ծածկեց դեմքը, իսկ երբ աչքերը բաց արեց, Միհրանն այլևս չկար։

Դրսում մոլեգնում էր գարնանային տաք քամին։

***

Ոսկեգույն նժույգը, գլուխը համաչափ օրորելով, բարձրանում էր արահետն ի վեր։ Փոքր Գորգին գնում էր Ազա գյուղը՝ մարդու տված քրոջը տեսության։ Ուրախ նայում էր փարթամ կանաչած անտառին, ծփացող խոտին, ծաղիկներին, և սիրտը ձգվում էր դեպի դաշտերը։ Վերջնես լավ սրած գերանդին և հնձես այս փարթամ սիզախոտը, թավալվես նրա մեջ ու գիշերը երկար նայես աստղերին՝ ականջդ անտառի ծղրիդների ձայնին։

Հիշում էր հորը։ Գնում էին արտը հնձելու։ Հայրը բանում էր ծեգից մինչև մութն ընկնելը։ Եվ երբ արտի վերջին խուրձը բարձում էին ձիուն ու դուրս գալիս տխրած արտից, հայրը երկյուղածորեն շոքում էր արտի եզերքին ու համբուրում հողը։

— Հալալ արա քո տվածը, ախպե՛ր։

Եվ Գորգուն պատվիրում էր անել նույնը՝ համբուրել իրենց հաց տվող հողը։

— Թող չնեղանա մեզ կերակրողը։

Ձին գնում էր դանդաղ։ Թամբի խուրջինում Փոքր Գորգին նվերներ էր տանում քրոջը, փեսային խնամիներին։ Որքա՜ն կուրախանա Մարոն, որ տեսնի իրեն։ Եվ այն բանից, որ ինքը ուրախություն կպատճառի քրոջը, խնամիներին, հաճելի խուտուտ էր գալիս Գորգու սիրտը։

Նա արագացրեց ձիու քայլերը։ Երեկոյան կհասնի Ծավի ձորը, կմնա ծանոթ բրուտի մոտ, լուսաբացին կշարունակի ճանապարհը։

Երկու օր հետո մոտեցավ Ազա գյուղին։ Բարդիների արանքում ցցվել էր եկեղեցու գմբեթը։ Երևաց Արաքսը, որ, ծանր ալիքները ափերին զարնելով՝ գնում էր ջրերի դեղնակարմիր զանգվածով։ Գետափին խոյաքարերով ու խաչարձաններով հին գերեզմանատունն էր։ Գետի ալիքներից պոկվող ջրի ցայտերը երբեմն զարնվում էին թեքված մի խաչարձանի ու լվանում նրա դարավոր փոշին։

Գյուղի ծայրին հանդիպած սայլվորներից Գորգին իմացավ խնամի Գիշու տան տեղը։ Սայլվորները գլուխ տվին նրան։ Սա թեև զարմացավ, բայց շոյվեց, հիացավ իր շքեղ հագուստներով, որ Հալիձորից դուրս գալուց առաջ նվիրել էր Մխիթարը։ «Խնամոնց ես գնում, հագնվիր մարդավայել»,— ասել էր գահերեցը։

Հասավ խնամոնց տուն։ Անցավ ծռված ցանկապատի մոտով, որի մեջ տնկվել էր հսկա մի թթենի։ Բակում մի պառավ շուն կտրեց նրա ճանապարհը և, չգիտես վախի՞ց, թե պատկառանքից՝ չհաչաց։ Իրավ ձիուց, կամեցավ ձայն տալ, բայց հենց այդ պահին այգուց դուրս պրծավ քույրը... Խեղճը վազելիս սայթաքում էր։ Գոգնոցի տուտը բաց թողեց, որի միջից թափվեց կանաչ կոտեմն ու գինձը։

— Եղբա՛յր, Գորգի՜,— ճչաց Մարոն։ Նա թափով ընկավ եղբոր գիրկը ու գլուխը դրեց նրա լայն կրծքին։

— Մարո՜... Մարո՜...— միայն կարողանում էր ասել Գորգին։

Դարպասի մեջ երևաց խնամի Գիշին. Գորգին նրան հիշում էր իրենց գյուղից, երբ սա այնտեղ գինի էր վաճառում։ Նա քրոջը բաց թողեց ու մոտեցավ դեպի իրեն եկող գինեվաճառին։

— Էհե՜... խնամի՞,— ուրախ գոչեց գինեվաճառը։— Ա՛յ բարո՜վ, հազար բարի ես եկել։ Տնաշե՜ն, բա չես ասում, մի գնամ խնամիներիս տեսության։ Դե, աստծո՜ւն փառք, մայրդ ո՞նց է։ Դու ո՞նց ես։

— Խոնարհ բարևներ է անում մայրս, խնամի՛։

Նրանք իրար ձեռք տվին։ Մարոն մնացել էր տեղը սառած-կանգնած։ Անսպասելի բախտավորությունից մոռացել էր անելիքը և միայն պիշ-պիշ եղբորն էր նայում։

— Աչքդ լո՛ւյս, հա՛րս ջան։ Եղբայրդ եկավ,— ասաց կեսրարը։— Օջախներդ շեն լինի, խնամի՛։ Մի Մարո է, մի՝ Ազա։ Գյուղում մատով են ցույց տալիս քրոջդ։

Գորգին փքվեց։ Մի ձեռքով գրկեց քրոջ ուսն ու գնացին դեպի միհարկանի, ընդարձակ տան պատշգամբը։ Լնգլնգալով եկավ Մարոյի փոքրամարմին սկեսուրը, հազիվ մի բուռ պառավ, գրկեց Գորգուն, համբուրեց։

— Օրհնվի՜ ճանապարհդ,— մաղթեց՝ կարծես ասեղի ծակից դուրս եկող ձայնով։— Խեղճ հարսս իրիկունը՝ իրիկուն էր լաց լինում, առավոտը՝ առավոտ։ Կարոտդ էր քաշում։ Աչք ցամաքեցնող լինես։ Երեխին ուրախացրիր։

Խնամի Գիշին ոտքով դեն հրեց առաջն ընկած շանը ու հյուրին տարավ դեպի պատշգամբի թախտը։ Մարոն թախտին գորգ փռեց, երկու նստաբարձ դրեց։ Գորգին հիանում էր նրանով։ Մարոն փարթամ հասակ էր նետել, լցվել։ Բայց աչքերն առաջվա պես խոնարհ էին՝ թախծով մշուշված։ Հյուրն ու Գիշին նստեցին։

— Ո՞ւր է մեր փեսան, տանը չի՞,— հարցրեց Գորգին՝ մի բան ասած լինելու համար։

— Չէ։ Որդիս գնացել է Մեղրի, էս շաբաթվա վերջում կգա։ Ախր այնտեղ էլ մե՛նք աղջիկ ունենք մարդու տված։ Տղա է բերել։

— Աչքներդ լո՛ւյս։

— Շե՛ն կենաս։— Գիշին դարձավ պառավին ու հարսին։— Աղջի, հացի հոգս արեք, է՛։ Թոնիր վառեցեք։ Ի՞նչ եք ճուտումների խաղում։

Դե, հա՜... Դո՛ւ, խնամի ջան, նստիր, ես գնամ գառ մորթեմ։— Ասաց ու վեր կացավ։

— Չի՛ հարկավոր, խնամի, ախր ինչի՞...

Գիչին ձեռքը թափահարեց։

— Դե՛, դե՛։ Ես քեզանից մի տասը շապիկ ավելի մաշած մարդ եմ։ Գիտեմ՝ ինչ եմ անում։ Թե մենակ տխուր է, արի գառը միասին մորթենք։

Գառ մորթեցին։ Շունը լափեց լերդացած արյունը, գառան աղիքները քարշ տվեց ցանկապատի տակ։ Գիչին գառան ետևի ոտքերի ջիլերի արանքը շամփուր հագցրեց ու գառը կախեց վառած, կրակը շիջած թոնիրը, փակեց կավե թոնրակալով, եզրերը ծեփեց ու, ցեխից ընկույզի մեծությամբ մի քանի գունդ սարքերով՝ դրեց վրան։

— Աչքներդ թոնրի վրա պահեք, ա՛յ խիզան,— պատվիրեց նա կանանց։— Հենց որ ցեխի գնդերը չորանան, ինձ իմաց տվեք։ Մենք գնում ենք մառան՝ գինու։

Արաքսից այն կողմ երևացող լեռները շիկնեցին, մայրամուտի նեղ շերտը թրթռաց նրանց գագաթներին ու մարեց։ Արևը կիսով չափ հենվել էր Փոքր Մասիսին ու, իր մանուշակագույն ծոպերը քաշելով՝ գնում էր հանգչելու երկնքի հեռավոր խորքերում։ Արաքսը մի պահ փայլատակեց և ապա սքողվեց կապույտ մշուշով։ Միայն երբեմն լսվում էր նրա շառաչը։ Երկու արագիլ թևերը ծափծափելով իջան բարդու կատարին։

Պատշգամբում ճրագ վառեցին։ Գիչին խորոված գառը հանեց թոնրից։ Եկան մոտիկ հարևանները, բարեկամները։ Նրանք ձեռք էին տալիս Գորգուն ու աչքալուսանքի խոսքեր ասում տնեցիներին։ Ապա նստում էին թախտին, և սկսվում էր անհամար հարցուփորձը։

Գիչին ոսկեգույն գինի էր լցնում գավաթները, բոլորն իրենց գավաթները նախ խփում էին պատվական հյուրի գավաթին, ապա յուրաքանչյուրը մի բան ասելով՝ խմում դանդաղ, ծծելով։ Ամենից շատ խմում էր Գիչին։ Երբ խոսք բացվեց Թուրքերի մասին, նա նայեց երկնքին ու գոչեց.

— Աստվա՜ծ, դո՛ւ Թուրքի սիրտը կարոտ գցես, որ եկած ճանապարհով ետ դառնա իր տունը, իր աշխարհը։ Ի՞նչ է կորցրել այստեղ, որ չի գտնում։ Ախր նրա ճամփին էլ է աչք քոռանում։ Դու նրան հեռու պահիր մեր տուն ու դռնից։

— Ամե՜ն,— հառաչում էին ազացիները։

Մինչև կեսգիշեր կերուխում արին։

Առավոտյան, երբ Գիչին խնամու ձին տարել էր ջրելու, Գորգին

կանչեց Մարոյին ու նրա կեսուրին և բաց արեց խուրջինի տոգած աչքերը։ Նվերներ շատ էր բերել։ Քույրը բերկրանքից հալվում էր։ Պառավն անվեղջ օրհնում էր նրան։ Եկավ Գիչին։ Ձին կապեց, կեր տվեց ու փեշերը թափ տալով՝ հյուրի հետ նստեց հացի։ Ուրախացավ, երբ հարսը նրա ծնկներին դրեց նրա համար Գորգու բերած արխալուղացուն ու բուխարայի մորթին։ Գիչին հուզվեց։

— Բաժինդ աստված շատ անի, որդի՛։

Սեղան նստեցին միայն տղամարդիկ։ Փայտե մի ահագին պնակ լիքն էր մսաջրով, մյուս պնակում միսն էր՝ գոլորշու շղարշը վրան։ Գիչին լավաշ բրդեց մսաջրի մեջ, խառնեց, վրան աղած տաքդեղ ու սրխտորաջուր լցրեց և աչքով արեց՝ հյուրին։

— Դե, սկսիր, տեսնեմ կարգին ուտել գիտե՞ս, թե ձախծամ ես։ Դե, գնացի՜նք։— Եվ սկսեց ուտել մեծ պատառներով՝ յուղը ծլլացնելով ծնոտին, շապիկի դեղնած օձիքին։

— Ի՞նչ են ասում Հալիձորում,— հարցրեց Գիչին։

— Ինչի՞ մասին։

— Թուրքի։

— Ի՞նչ պիտի ասեն։ Կռիվ կլինի՝ կկռվենք։

— Լինելը ո՞րն է, կռիվը քթներիս տակն է։ Վախենում եմ սուլթանը էս մեր քերծերին էլ հասնի, ու ոտքի տակ կորչենք։

— Մխիթարը սիրում է վախկոտներին կախել, խնամի՛,— կատակեց Գորգին։

— Քեզանից լավ գիտեմ։ Կատակ մի՛ անի։ Ես բան եմ հարցնում, իսկ դո՞ւ... Ես քո ասած վախով չէ, որ վախենում եմ։ Սուլթանի աչքը մեր վերջին է, հայի արմատը կտրել է ուզում։ Ա՛յ, վախը սրանից է։ Մխիթարին մոտ մարդ ես, ասա, եթե կարողանում է, թող Թուրքի հետ լեզու գտնի, մեր աշխարհից հեռու պահի, որ չգա։

— Թող գա, մեկ է, կջարդենք քիթմռութը։

— Մի՛ ասա, որդի,— հառաչեց Գիչին։— Ամեն օր գետը գերան չի բերի։

Եկավ Գիչու հարևանը, գլուխ տվեց տանտիրոջն ու նրա հյուրին, ոտքի վրա մի բաժակ օղի խմեց։ Խնդրեց, որ Գիչին ու նրա խնամին այդ օրը ճաշին գան իրեն հյուր։ Հին սովորություն էր։ Հեռվից հյուր եկած օտարականին գյուղացիները հերթով հյուր էին տանում ու մանր-մունր նվերներ տալիս։ Այդ սովորությունը հիշելով՝ Գորգին անհանգստացավ։ Ինքը միայն մի երկու օր է մնալու գյուղում, ո՞ր մեկին մերժի, որ չնեղանան։

***

Մխիթարի դիվան սենյակում երկու մոմ ու մի կանթեղ էր վառվում։ Մխիթարը մտահոգ կանգնած էր պատի տակ։ Նրա մոտ էին Բայանդուր իշխանը, Տեր-Ավետիսն ու էլի մի քանի զորապետներ։ Նրանց առջև հուսահատ կանգնած էր Ջրաբերդից եկած սուրհանդակ քյոխվա Ջալաբին։ Սա ցեխոտ էր, հոգնած, երևում էր, որ քիչ առաջ է իջել։

Ծանր լուր էր բերել սուրհանդակը։ Հովհաննես-Ավան իշխանը պարտվել էր Գյուլիստանի ճակատամարտում։ Դա եղել էր մի քանի օր առաջ։ Թուրքական բանակը համալրում ստանալով՝ Գանձակից անսպասելի մտել էր Արցախ։ Հովհաննես-Ավան իշխանը կարողացել էր համախմբել իր ուժերը, թուրքերի հարձակման մասին լուր տալ Մխիթարին։

Միևնույն ժամանակ դեպի Սյունիք էին շարժվել նաև Նախիջևանում ու Օձնասարի տակ նստած թուրքական բանակները։ Թեև վերջիններս ակտիվ գործողություն չկսեցին սյունեցիների դեմ, սակայն Մխիթարին ստիպեցին պատերազմել երկու ճակատով։

Մխիթարը հրամայել էր Ջագեձորի ու Ջավնդուրի գնդերն ուղարկել Արցախ՝ Հովհաննես-Ավան իշխանին օգնության։ Այդ գնդերը դեռևս դուրս չէին եկել իրենց գավառներից, երբ եկավ քյոխվա Ջալաբին ու բերեց արցախցիների պարտության լուրը։

Այլևս իզուր էր օգնության ջանքերը։ Արցախն ընկել էր։ Այսօր, վաղը Աբդուլլահ փաշան կարշավի Սյունիքի վրա։

— Ուրեմն աղե՞տ եղավ, Ջալաբի՛,— հարցրեց Մխիթարը։

— Աղետից էլ վատ,— հառաչեց Ջալաբին։— Արցախն ընկած է այլևս։ Թուրքը մտավ Գանձասար։ Էլ Արցախ չկա՛...

Մխիթարը ցասկոտ նայեց շարաղետ լուրը բերողին։ Գոռաց անհարկի.

— Իսկ դուք մեռա՞ծ էիք, կոտորվե՞լ էիք, հը՞։

— Կռվեցինք,— հպարտ պատասխանեց Ջալաբին։— Ինքդ գիտես, որ թուրքը մեզանից հարյուր անգամ շատ էր։ Գանձակում շնթռկած Զոբան Հաշում և Ումար փաշաները մի գիշերում կոտորեցին Գանձակի բոլոր տղամարդկանց։ Թիկունքներն ապահովեցին և եկան մեր սղնախների վրա։ Առաջին օրը մեծ ջարդ տվինք։ Փաշաները նոր ուժեր բերին իսկույն։ Ղըրխ-Ջեշմիշ ու Ենգիշար աղասիները քառասուն հազար զինվորով ընկան մեզ վրա։ Երկու օրվա կռիվներում նրանց զորքի կեսը կոտորեցինք, բայց նրանք էլի նոր զորքեր բերին։ Զորս ճյուղով մտան Արցախ։ Մեծ ճակատամարտը եղավ Գանձասարի տակ։ Մերոնցից տասից ինն ընկան։ Օգնություն չկար, թուրքի ուժը մեծ էր։ Եվ կատարվեց չարի կամքը։ Հիմա Արցախը հոշոտվում է։

«Ահա և խելագար դիմադրության վերջը,— դառը մտածեց Տեր-Ավետիսը։— Արցախը հոշոտվում է։ Երեկ Երևանը, Լոռին, Նախիջևանը, այսօր Արցախը, վաղը հերթը մերն է։ Դիմադրե՞լ...»։

— Ի՞նչ եղավ Հովհաննես-Ավան իշխանը,— հարցրեց նա Ջալաբուն։

— Հազիվ փրկվեց գերությունից։ Գնաց ռուսաց երկիրը։ Հետը տարավ Թարխան հարյուրապետին, իր գնդի մնացորդները և իր գյուղերից երկու հարյուր ընտանիք։

— Դավաճանությո՞ւն...— գոչեց Մխիթարը։— Հովհաննես-Ավան իշխանը դավաճանեց... Փախչում էր, թող գար Սյունիք, զորքի մնացորդները վերցներ ու գար։ Վատթար ճանապարհ բռնեց։

«Ի՞նչ դավաճանություն,— մտքում բարկացավ Տեր-Ավետիսը։— Անմտություն է մի բուռ զորքով դեմ կանգնել ահռելի բանակներին»։

— Խե՛ղճ, մոլորվա՞ծ հայ ժողովուրդ,— շարունակում էր մորմոքվել Մխիթարը։

Տեր-Ավետիսը, մի աչքը թեթև կկոցելով՝ ասաց.

— Հիմա մնացինք բոլորովին մենակ,— նրա շրթունքներին մի անհասկանալի ժպիտ խաղաց։ Հիշեց սուրբ գրքի խոսքերը. «Մոտեցել է ժամը մատնության»։ Հիշեց ու զարհուրեց։

— Պետք է մենք ևս հեռանայինք ռուսաց կողմերը,— հանդարտ շարունակեց նա։— Կգնայինք՝ ժողովրդին պատվիրելով հնազանդվել թուրքին, հպատակվել։ Գլխովի չէինք կոտորվի։ Կհամբերեինք, մինչև աստված բարին կամենար մեզ։ Հիմա կորստյան մատնեցինք ազգն հայոց։

— Մի կռավի,— ձեռքը նրա վրա թափ տվեց Մխիթարը,— սազական չէ այդպիսի բան լսել քո բերանից։ Ով դիմադրել գիտի, նա կապրի։ Այդպես ենք ապրել հազար տարի։ Կռվել իմացողը չի կորչի։ Կկորչի անարին։ Մենք դեռ ուժ ունենք. զորք ու զենք ունենք։ Մենք դեռ կարող ենք թուրքի ատամները փշրել ու ախորժակը կտրել Սյունիքից։ Պատրաստ կացեք, և թող աստված ձեր սրտից չհանի արիությունը։

Զորապետները երկար խորհում էին, թե էլ ինչ կարելի է անել՝ անխուսափելի աղետի առաջն առնելու համար։ Այժմ պարզ էր, որ պատերազմն արդեն շեմին է։ Ուշ գիշեր էր, երբ նրանք ցրվեցին։

***

Մխիթարի մոտից Տեր-Ավետիսը վերադարձավ հուսահատված։ Ամբողջովին համակված էր անփարատելի տագնապով։ Արցախի անկումը

նրան ստիպում էր դիմել վճռական քայլերի։ Ինչ գնով էլ լինի, պիտի փրկել ժողովրդին։ Հասկանում էր, որ ստեղծված պայմաններում դիմադրությունն այլևս կորստաբեր է։ Դրանում վերջնականապես նրան համոզեց Արցախի անկումը։ Պիտի փրկել ժողովուրդը՝ թեկուզ կորցնելով սեփական անձը, կնոջը, զավակներին, հավատը, այն փառքն ու բարի անունը, որ վաստակել էր ամբողջ երեսուն տարի մղած արյունահեղ ճակատամարտերի մեջ՝ դեպի մարտ տանելով իր հավատարիմ մարդկանց։ Բայց ինչպե՞ս անել առաջին քայլը։ Մխիթարը չի համաձայնվի հպատակվել սուլթանին։ Ինքն էլ երբեք ձեռք չի բարձրացնի նրա վրա։ Աստվա՞ծ չանի... Նրա արյան մեղքի տակ չի ընկնի։ Ի՞նչ անել ուրեմն, ինչպե՞ս հեռացնել աղետը, որ կարկտաբեր ամպի պես ժամ առ ժամ մոտենում է հայրենի տանը...

Հարևան աշխարհներում կատարվող ամեն բան հայտնի էր Տեր-Ավետիսին։ Թավրիզում վաղուց արդեն տեր ու իշխան էր Քյոփուլու Աբդուլլահ փաշան։ Շահ Թահմազի պալատում նստած, նա խեղդում է ողջ Պարսկաստանը։ Այն պարսիկ խաները, որոնք համատեղ գործելու երդում էին տվել Դավիթ-Բեկին, այժմ հպատակվել էին Աբդուլլահ փաշային։ Պարտվել են Վրաստանը, Գանձակը, Արցախը։ Շամախին ընկել է, և թուրքերը այնտեղից ուր որ է կշարժվեն Կասպից ծովի ափին եղած ռուսական կայազորների վրա...

Մեծ Սյունիքը մնացել է վիթխարի հրդեհների արանքում...

Երկա՞ր կմնա։

Այս ծանր մտքերի մեջ Տեր-Ավետիսը մտավ տուն։ Կնոջ հարկաբաժնում դեռ վառ էին մի քանի ճրագ։ Կինը չէր քնել։ Քանի օր է, ինչ չի հանդիպում նրան։ Անվերջ զորքի հետ է, զորանոցների մեջ, ձիերի ախոռներում։ Նա ցանկացավ գնալ կնոջ մոտ, մի պահ մոռանալ ծանր մտքերը, նախկին զվարթությամբ խոսել Վարդ-խաթունի հետ, խրատներ տալ ծանրաշարժ ու հաստամարմին որդուն, բայց դառը մտքերը նրան տարան դեպի իր առանձնասենյակը, որտեղ նա իրեն ազատ էր զգում իր մտքերի ու ցավերի հետ։

Ծառան բաց արեց դուռը։ Տեր-Ավետիսը մտավ խնկի հոտով հագեցած սենյակն ու զարմանքից մնաց մեխված։ Խնկենու կանթեղի մոտ, ձեռքերը կրծքին ծալած կանգնած էր Միհրան հարյուրապետը. տանտիրոջը տեսնելով, սա խոր գլուխ տվեց։

— Ինչո՞ւ ես թաքնվել այստեղ,— խոժոռ հարցրեց Տեր-Ավետիսը։

— Ես հյուր եմ եկել քեզ, ողորմա՛ծ տեր,— հանգիստ պատասխանեց Միհրանն ու նորից գլուխ տվեց։

— Ուզում ես ասեմ, որ հյուրն աստծո՞ւնն է և տանտերը հյուրի

էլն է՞,— չարախոսեց Տեր-Ավետիսը։— Սատանան է քեզ ուղարկել այստեղ։ «Հյո՛ւր եմ»։— Տեր-Ավետիսը զզվանքով նայեց հարյուրապետի շողոքորթ դեմքին, մանր ու հանդուգն աչքերին, և նրա նկատմամբ ունեցած ատելությունը հասավ կատաղության։ Բայց հիշելով, թե ինչ մտքեր ունի մելիք Բարխուդարի մեծ որդին՝ գտավ, որ նա իր ձեռքին հուսալի գործիք է, կատաղությունը կուլ տվեց և մեղմ ասաց.

— Բարի էրեկո, Միհրա՛ն հարյուրապետ, նստիր, ի՞նչ կա։

— Ի՞նչ լինելը քեզնից եմ սպասում,— ժպտաց Միհրանը։— Գահերեցի մոտից դու ես գալիս։

— Հորիցդ կարող էիր իմանալ։

— Հորի՞ց ս,— քմծիծաղեց հարյուրապետը։— Ամենից մեծ մոլորվածը նա է։ Հույս ունի, որ հայոց թագավորություն կստեղծեն, և ինքն էլ թագավոր կդառնա, հի՛, հի՛...

— Հավատո՞ւմ է։

— Այն էլ ո՞նց... «Թուրքը կվերացնի մելիքությունները,— ասում է մոլորվածը։— Մեր հողերը կզավթի, մեզ կոչնչացնի. չարյաց փոքրագույնն, ասում է, էլի մեր հայրենի իշխանությունն է»։ Նրան բացորոշ բան չպիտի ասել։

«Այս եղան գլո՞ւխն էլ է ինձ դավադիր համարում. իր դավակի՞ցը հաշվում,— ինքն իրեն հարցրեց Տեր-Ավետիսն ու ցնցվեց։— Ե՞րբ դավադիր դարձա։ Ո՞վ ասաց»։ Նա ծանր նստեց թախտին, աշխատեց որքան կարելի է հանգիստ ձևանալ։ Թեև նա նորից հյուրին հրավիրեց նստել, բայց Միհրանը հարմար գտավ ոտքի վրա մնալ։

— Ի՞նչ որոշեցիք,— վերջապես սիրտ արեց հարձնել հյուրը։

— Ինչի՞ մասին,— դաժան հարցրեց Տեր-Ավետիսը։

— Արցախն ընկել է։

— Հետո ի՞նչ։

— Հերթը մերն է։

— Ի՞նչ անենք, որ մերն է։ Թող կատարվի վերին խնամակալի տնօրինությունը։

— Կկոտորվենք մինչև հետին ծառան։— Միհրանը չոքեց Տեր-Ավետիսի առջև։— Լսիր, տե՛ր հազարապետ, մեր վերջին հույսը դու ես։ Դու միայն կարող ես փրկել մեզ։ Հասկացրու այդ ռամիկին, որ քանի ուշ չէ՝ գնա ու հպատակվի սուլթանին։ Փաշան դրան է սպասում...

— Ի՞նչ իմացար,— խզված հարցրեց Տեր-Ավետիսը։

— Հը՞,— շփոթվեց Միհրանը։— Իմացա, հաստատ է։

Տեր-Ավետիսն իր մագիլներով կառչեց նրա օձիքից։

— Խոստովանի՛ր, որտեղի՞ց իմացար, որ փաշան սպասում է...

— Բա՛ց թող, հիմա կասեմ։ Խեղդվում եմ։ Թո՛ղ։ Ագուլիսի մելիք Մուսու մարդն այստեղ է՝ քո տանը, թող կանչեմ։

Տեր-Ավետիսը նրան շպրտեց։ Միհրանը գլուխը հազիվ փախցրեց, որ չզարնվի պատին։ Նա թևքով սրբեց ճակատին դուրս տված սառը քրտինքն ու հարցրեց։

— Բերե՞մ։

Տեր-Ավետիսը չշրջվեց։ Միհրանը դուրս եկավ ու վերադարձավ սևազգեստ մի քահանայի հետ։ Քահանան շեմքից ասաց.

— Խաղաղությո՛ւն տանն այսմիկ...

Տեր-Ավետիսը մի պահ քննախույզ նայեց նրան, ու աչքերը կլորացան։ Վեր կացավ, դանդաղ մոտեցավ քահանային և անսպասելի քրքջաց... Միհրանին թվաց, թե նա խելագարվեց, ցանկացավ խաչ հանել երեսին, բայց ձեռքը չբարձրացավ, մատներն ասես քարացել էին։

— Ի՞նչ բնի թռչուն ես,— քահանային դիմեց հազարապետը։

Քահանան անտարբեր պատասխանեց.

— Ես Ագուլիսից եկած հավք եմ, ողորմած տեր։

— Հա՞-հա՛...— նորից քրքջաց Տեր-Ավետիսը։— Այդ ինչպե՞ս է, որ դու քո ագռավի սև թևերով հասել ես այստեղ, և մեր արծիվները չեն նկատել։

— Ուզում եմ ես էլ արծիվ դառնալ։

— Դրա համար արծվի սիրտ ու արծվի թևեր պետք է ունենալ։

— Ես դրանք ունեմ, տե՛ր հազարապետ։

— Ունեիր գուցե,— Տեր-Ավետիսը սուր նայեց իր առջև կանգնած այդ ատելի մարդուն։— Գուցե ունեի՛ր... Բայց քո թևերը կտրել են քո թուրք տերերը։ Ես ինքս եմ Քյոփուրլու Աբդուլլահ փաշայի բանակում տեսել քո այն փափուկ թևերը, որոնցով փաշան իր հետույքն էր սրբում։

Քահանան զարհուրանքով նայեց Տեր-Ավետիսի ահեղ կերպարանքին։ Հասկացավ, որ նա հենց առաջին հայացքից է ճանաչել իրեն։ Իզուր ջանքեր պետք է թափեր՝ ծածկվելու համար։ Ուստի ձեռքերը ծալեց կրծքին։

— Իմ վիզը քո թրի առջև մազից էլ բարակ է, տե՛ր հազարապետ, արա՝ ինչ կամենում ես, բայց և լսիր ինձ։

— Հի՛, հի՛, հի՛...— սպանիչ ծաղրով քրքջաց Տեր-Ավետիսը։— Քահանա՛... Ագուլիսի՛ց... Հա՛, համեցի՛ր, տե՛ր հայր։ Աղվե՛ս։— Գոռաց նա։— Զգիտեի՞ր, որ ոչ մի թուրքական աղվես չի կարող խաբել ինձ։ Հը՞, Մուրադ-Ասլան, կարծում էիր՝ չէի՞ ճանաչի։— Նա բռնեց ուրացողի մորուքն ու ոլորեց։ Կեղծ մորուքը մնաց նրա բռան մեջ։ Նա դրանով խփեց Մուրադ-Ասլանի լերկ, ասես հավի ճարպով օծված երեսին ու

ատամների արանքից շպրտեց։— Եկել ես կռավե՞ս Հայոց աշխարհի վրա, ագռա՛վ։ Հերիք չի՞, որ հոգիդ ծախել ես։ Երևանի ու Նախիջևանի հայության արյունը չի՞ հագեցրել քեզ, հը՞։

Զարմանքից Միհրան հարյուրապետն աչքերն արագ թարթում էր։ Կարծես դառը ծուխ էր լցվում նրանց մեջ։ Նա չէր ըմբռնում, թե ի՞նչ է կատարվում Տեր-Ավետիսի հետ։ «Ինչո՞ւ այդպես հեշտությամբ պոկվեց քահանայի մորուքը՝ առանց ցավ պատճառելու կամ մի պուտ արյուն դուրս գալու մելիք Մուսու առաքած «Թադեի վանքի սուրբ ուխտի միաբան Ղազարոս քահանայի» դեմքին։

— Եթե չճանաչեիր էլ, ապա ես ինքս կհայտնեի, թե ով եմ ես, տե՛ր հազարապետ,— արդեն առանց իրեն կորցնելու խոսեց կեղծ քահանան։— Այո՛, ես Մուրադ-Ասլանն եմ. մենք հին ծանոթներ ենք։ Հանդարտվի՛ր, արի մարդ։ Սառը գլխով դատիր և լսիր նախախնամության խոհեմ ու օգտակար ձայնը։

Տեր-Ավետիսը նստեց և ձեռքի շարժումով հրավիրեց, որ նստի նաև հյուրը։ Միհրանն ականջն ածելի արեց։ Երկար ժամանակ ոչ ոք չէր խոսում։ Տեր-Ավետիսը գլուխն առել էր ափերի մեջ ու աչքերը կիսախուփ՝ տառապում էր։ Միհրանն արդեն չէր շնչում։ Հանգիստ էր միայն Մուրադ-Ասլանը։

— Դո՛ւրս տուր, տեսնեմ ի՞նչ է կամենում քո տերը,— վերջապես խոսեց Տեր-Ավետիսն ու մեջքն ուղղեց։

— Նա իր ողջույնն է ուղարկում հայոց մեծին ու փոքրին։

— Ուրի՞շ,— ատամները կրճտացրեց Տեր-Ավետիսը։— Ես լավ գիտեմ նրա ողջույնի գինը։

— Աբդուլլահ փաշան համբերությամբ սպասում է, որ դուք՝ Սյունիքի տերերդ, գնաք նրա դուռը, հպատակվեք սուլթանին։

— Ո՞րն է վարձը։

— Հավիտենական բարեկամություն ձեր և ողորմած սուլթանի միջև։ Փաշան կերդվի Ղուրանի վրա, չի դիպչի ձեզնից որևէ մեկի մազին։ Կխնայի ժողովրդին։

— Այլապե՞ս...

— Այլապես բոլորդ կմատնվեք մահվան։ Փաշան կգա ձեր երկիրը։ Նրա ձեռքերը հիմա ազատ են։ Արցախն ընկել է, Շամախին ու Գանձակը սուլթանինն են, Նախիջևանն ու Երևանը՝ նույնպես։ Դուք օղակի մեջ եք։

Ուրիշ ոչ մի հարց այլևս չտվեց Տեր-Ավետիսը։ Չխոսեց նաև Մուրադ-Ասլանը։ Միհրան բեկը հազիվ էր զսպում բարկությունը։ «Ինչո՞ւ չես համաձայնվում, թշվառակա՛ն... Ո՞ւմ վրա ես դրել հույսդ»։

Տեր-Ավետիսը վեր կացավ, հատակից վերցրեց Մուրադ-Ասլանի ճմրթված կեղծ մորուքն ու նետեց նրա ծնկներին։

— Նորից քահանա դարձիր,— ասաց նա։— Մնա Միհրան հարյուրապետի մոտ։ Նա քեզ այնպես կթաքցնի, որ մկներն անգամ հոտդ չեն առնի։ Սպասիր իմ հրամանին։ Գնացեք։

Հյուրերը գլուխ տվին նրան ու հեռացան։ Մի շաբաթ հետո Տեր-Ավետիսը Մուրադ-Ասլանին ճանապարհեց։ Նույնիսկ Միհրանը չիմացավ, թե ինչ են պայմանավորվել նրանք։

ԽՈՐՏԱԿՎՈՒՄ ԵՆ ԱՌԱՋԻՆ ԴՌՆԵՐԸ

Եկավ վերադարձի օրը։

Մի երեկո Փոքր Գորգին խնամի Գիչուն ասաց, որ ինքն առավոտյան մեկնելու է։ Խնամին տխրեց, նույնիսկ մի փոքր վիրավորվեց։

— Չես սպասում էլի՞, որ փեսադ գա, տեսնես, նոր գնաս։

— Մի՛ նեղանա, խնամի՛, զինվորի գործ է, պիտի գնամ,— պատասխանեց Գորգին։

Քույրը ջուր տաքացրեց՝ եղբոր ու կեսրարի ոտքերը լվանալու համար։ Ընթրիքից հետո Գիչին տրեխները հանեց, մեջի հողը թափ տվեց թոնրի եզրին (որ արտի բարիքը հասնի մինչև թոնրի շուրջը) և, շուռ տված տակառի վրա նստելով՝ ոտքերը դրեց տաք ջրով լի փայտե կոնքի մեջ.

Ոտքերը լվանալուց հետո Գորգին քրոջը պատվիրեց իր համար տեղ գցել կտրին, խոտի կիսատ դեզի վրա։ Պատշգամբում տաք էր, ու մոծակներ կային։ Գիչին արդեն մեկնվել էր թախտին, շուլալվել վերմակի մեջ ու խոմփացնում էր... Բրդոտ կատուն կծկվել էր նրա կրծքին և զարմացած նայում էր ծերունու երկար բեղերին, որոնք խոմփոցի հետ վերուվար էին անում։

Կտուրի վրա քույրն անհամարձակ բռնեց եղբոր գոտին։

— Էգուց գնում ես էլի՞, Գորգի՛,— փշրված ձայնով հարցրեց նա։

— Հա, Մարո՛ ջան, գնում եմ։

— Էլի աչքս ճանապարհիդ պիտի մնա։ Բա մեկ էլ ե՞րբ կգաս։— Մարոն գոգնոցի ծայրերը կպցրեց աչքերին։

— Ո՞վ իմանա, մի օր էլ մայրիկի հետ կգամ։

— Երանի՜ շուտ գաս...— Քույրը գրկեց եղբորն ու լաց եղավ։— Սիրտս բարի բան չի գուշակում, Գորգի։ Ա՜խ, ա՜խ... Ինչ կլինի՝ էլ զինվորության չգնաս։ Քոռանա՜մ ես։ Բա ե՞րբ ենք քու կանաչ-կարմիրը կապելու։

— Կկապենք, Մարո՛ ջան, մի վռազի։

Քույրը գնաց։ Գորգու սիրտը լցվեց թախիծով։ Հանկարծ ասես մանկացավ, ուզեց ճչալ, վազել քրոջ ետևից ու ասել, որ ինքը զզվել է զինվորությունից, որ ուզում է խոտ հարել, արտ ջրել, բայց միայն մի քայլ արեց ու, ետ գալով՝ պառկեց խոտի վրա, վերմակը դեն նետեց ու ձեռքերը գլխի տակ ծալելով՝ ընկավ մտքերի աշխարհը... Երկնքում միայն հատուկենտ աստղեր էին երևում։ Հեռվում, Մասիսների կողմի հորիզոնը երբեմն շառագունում էր կայծակների հեռավոր լույսից։ Արաքսը մրափել էր եղեգնյա անկողնում։ Շները կենտահաչ էին տալիս։ Գյուղի ծայրին լսվեց ուշացած ջրվորի երգը, ապա մարեց գիշերային խաղաղության մեջ։

Փոքր Գորգուն թվում էր, թե հեռվից իրեն են հետևում մի զույգ աչքեր։ Այիշե՞ն է, թե աստղերն են այդպես տխուր նայում իրեն։ Չոր խոտի բուրմունքը թմրեցրեց նրան, և քունը փակեց աչքերը։

Արաքսի կողմից, այնտեղ, ուր եղեգնուտին կպած գյուղի վերջին տներն էին, մի շուն կլանչեց։ Միանգամից հաչացին գյուղի բոլոր շները։ Գետափից լսվեց մեկի վայնասունը։ Երկինքը միանգամից լուսավորվեց հանկարծակի բռնկված հրդեհից։

Փոքր Գորգին արթնացավ։ Մութ փողոցով ձիավորներ սլացան։ «Ո՞վքեր էին»,— ինքն իրեն հարցրեց Գորգին ու վազեց դեպի կտրի ծայրը... Երկինքը նորից լուսավորվեց։ Խավարի մեջ լսվում էին զարհուրելի ճիչեր։ Գետի կողմից հրացան կրակեցին։ «Թուրքերն են»,— մտածեց Գորգին ու կտրից ցած թռավ։ Պատշգամբում քույրն ընկավ նրա ոտքերը։

— Զուլում է, Գորգի՛,— ճչաց գալարվելով։

— Վե՛ր կաց,— գոչեց եղբայրը։— Չենք վերցրու, շո՛ւտ։

Երկաթե եռաժանին ձեռքին գոմից դուրս եկավ Գիչին։ Նա թուր էլ ուներ մեջքին, գլխաբաց էր, վայրենի տեսքով։

— Թաքնվեցե՛ք,— հրամայեց նա հարսին ու պառավին և Գորգու հետ գնաց դեպի դարպասը։

Հրդեհներն այժմ բռնկվել էին գյուղի բոլոր կողմերից։ Փողոցով շտապ անցնում էին վառվող ջահերը ձեռքներին ձիավոր թուրքեր։ Նրանք ջահերը նետում էին խոտի դեզերի վրա, տների մեջ։ Ուրիշները խուժում էին տները, մառանները, գոմերը...

— Պատերազմն սկսվեց, որդի,— կարծես անտարբեր ասաց Գիչին։— Դու փախիր, հասիր Հալիձոր։

— Իսկ դո՞ւք,— սարսափեց Գորգին։

— Մերը պրծա՜վ... Մենք կորած ենք։— Գիչին տնքաց։— Քրոջդ վերցրու և փախիր, խեղճ եք...

Գորգին շտապ թամբեց ձին, զրահն ու սաղավարտը հագավ, թռավ թամբի վրա ու դուրս եկավ փողոց։ Մի ձիավոր թուրք վառած ջահը ձեռքին մոտեցավ Գիչու տանը։ Փշատի ծառի տակից դուրս պրծավ Գիչին ու եռաժանին խրեց թուրքի կողը... Թուրքի ձին ծառս եղավ, սակայն Գորգին հասցրեց բռնել նրա սանձը։

— Ձին հեծիր, շո՜ւտ,— շտապեցրեց խնամուն։

Գիչին հեծավ թուրքի ձին, հանեց թուրը։ Հինգ-վեց ձիավոր աղաղակելով թափվեցին նրանց վրա։

— Խաչն օգնակա՜ն...— գոչեց ծերունին։ Գորգին տեսավ, թե ինչպես նա կտրեց մի թուրքի ուս։ «Բազուկի մեջ դեռ ուժ կա»,— մտածեց ու հարվածեց... Երկու թուրք ևս ընկան։ Մյուսները ետ-ետ գնացին, բայց Գիչին նետվեց նրանց վրա՝ իր տունը, կնոջն ու հարսին պաշտպանելու։

Ամեն կողմից զարհուրելի ճիչեր էին լսվում։ Թուրքական բանակը խուժում էր գյուղ։ Տները վառվում էին։ Կրակի մեջ մնացած անասունները բառաչում էին աղեկտուր։ Թուրքերը մտնում էին տները, կոտորում իրենց օջախները պաշտպանող տղամարդկանց, մանուկների օրորոցները նետում կրակը և ջարդելով, փշրելով՝ ավերում էին Աղան...

Զարհուրելի կոտորած էր։ Կանանց քարշ էին տալիս փողոց, մերկացնում, կապում իրար ու նետում կրակը։ Հղի կանանց խողխողում էին վայրենի քրքիջներով, աղջիկներին ու տղա-մանուկներին հավաքում-կապոտում էին ձիերից, եսիր անում։

Գիչին ու Գորգին կռվում էին դարպասի մոտ։ Հիսունից ավելի հետևակ թուրքեր աշխատում էին խուժել բակ։ Նիզակներով նետվում էին պաշտպանվողների վրա։

— Խփի՛ր, խնամի,— խելագարի պես գոռում էր Գիչին։

Թուրքերը քանդեցին բանջարանոցի ցանկապատն ու խուժեցին բակ... Գորգին ձին թոցրեց նրանց վրա՝ քրոջը պաշտպանելու հույսով, բայց մի ուրիշ խումբ շրջապատեց նրան... Գիչին չկարողացավ օգնության հասնել, նրան դեմ էին արել պատին։ Նա հասցրեց ձիու թամբից ցատկել մարագի կտուրը։ Քարեր նետեց դարպասը ջարդող թուրքերի գլխին։ Սրանք վայնասունով ետ փախան։

Թմբուկի ձայն լսվեց։ Փողոցի միջով դանդաղ ու հանդիսավոր անցնում էր ձիավորների մի մեծ խումբ։ Նրա առաջից գնում էր շքեղ զգեստներով փաշան՝ շրջապատի կոտորածին անտարբեր։ Գիչին ցանկացավ

քարով զարկել նրան, բայց մի բան մտածելով արագ իջավ կտրից, շոքեց ճանապարհի մեջտեղը, ձեռքերը երկինք պարզեց ու աղաղակեց.

— Խնայիր աստծո արարածներին, ո՜վ բարեգութ փաշա։ Ահա մենք գյուղովի հպատակվում ենք ձեր սուլթանին։ Խնայի՛ր...

Փաշան նույնիսկ չնայեց նրան։ Գիչին շարունակում էր բարձրաձայն գութ աղերսել։ Բայց մեկը նիզակը խրեց նրա թիկունքը... Գիչին գալարվեց ձիերի սմբակների տակ...

Գորգու ձին սպանվեց։ Սակայն իրեն չկորցնելով՝ նա օրհասական մենամարտ էր մղում իր վրա եկող ենիչերիների դեմ։ Ճնշող ուժի տակ ետ-ետ գնալով՝ ընկավ փողոցի առուն, բայց և իսկույն դուրս եկավ ու շարունակեց թշնամիներին ետ վանելով՝ խորանալ փողոցում։ Նրան փրկում էին զրահն ու ամուր սաղավարտը։

Շքերթով անցնող փաշան նկատեց նրա խիզախությունը և ժպտաց.

— Ողջ բռնեցեք այդ քաջին, զորական է,— հրամայեց նա։

Նրա թիկնապահներից մի քանիսը օղապարաններ հանեցին ու գնացին Գորգու վրա։ Օղապարանը սուլելով փաթաթվեց Գորգու գլխին։ Նա հասցրեց թրով կտրել պարանը, բայց մի ուրիշը նորից ընկավ շլինքը... «Եսիր են անում ինձ»,— կայծակեց նրա գլխում և դրանից ավելի գազազեց։ Սակայն արդեն ուշ էր...

— Յավա՜շ... Ջսպանե՛ք։— Լսվեց փաշայի հրամանը։

Գորգին չհասցրեց վերջին անգամ նայելու խնամու տան կողմը, որտեղ թողել էր քրոջը, նրա բարի սկեսուրին։ Օղապարանը սեղմեց կոկորդը, աչքերը մթնեցին։ Միայն զգաց, որ իրեն քարշ են տալիս ճանապարհի վրայով...

***

Լույսը բացվեց։

Աղան նմանում էր ծղոտով վառված թոնրի։ Հրդեհը լափում էր տները, մարագները, խաղողի վազերը, անհամար դիակները։ Թուրքերը բոցի ու ծխի միջից հապշտապ դուրս էին քշում կովերի ու ոչխարների հոտեր, հանում էին ցորենի ջվալներ, գորգեր, կարպետներ, պղինձներ, եսիր մանուկներ։ Շտապում էին կրակից փրկել իրենց ավարը։

Գյուղից դուրս, Արաքսի բարձր ափին կանգնել էր Պեքիր փաշան և ինքնագոհ նայում էր այրվող գյուղին։ Երբեմն միայն ոտքերը գետին էր խփում.

— Ամեն ինչ այրեցին շեյթանի զավակները։ Հրաման չէր։ Այդքան հարստություն կրակին տվին... Խոզե՛ր, անհավատնե՛ր...

Նա քիթը բռնեց ողջակեզ լինող դիակների խանձահոտից։ Նրա համար վրան էին խփել գետափին, ճյուղատարած թթենու շվաքում։ Վրանի առջև, գորգի վրա նստել էր մի մանկահասակ կին՝ ոսկեդեղձան մազերով ու զարմանալի ճերմակ դեմքով։ Նա շուտ-շուտ ձեռքի տուփից հանում էր օծանելիքի սրվակը և պահում քթին՝ գյուղից եկող ծանր խանձահոտը վանելու համար։

Վրանից քիչ ցած՝ ծիրանու բնին կապված էր գերի Գորգին։ Թեև խեղդվում էր ամուր շվանների մեջ, սակայն իրեն պահում էր հանդուգն ու անընկճելի։ Երբեմն միայն նայում էր գորգին նստած գեղեցկուհուն։ Սրա ոտքերի մոտ նստել էր սեամորթ աղախինը։

Թմբի վրա մի կոպիտ գահավորակ դրին, և փաշան նստեց։ Զորքը դուրս եկավ գյուղից. գունդ առ գունդ անցավ փաշայի առջևով։ Զինվորները ծանրաբեռնված էին ավարով, հետևները գերի մանուկներ ու աղջիկներ էին տանում։ Մոտենալով փաշային, յուրաքանչյուր զինվոր իր ավարի ամենաթանկարժեք մասը նետում էր փաշայի ոտքերի տակ։ Մանուկներից երեքից մեկը հանձնում էին փաշայի մարդկանց։ Մյուսներին տանում էին բանակի ետևից թրև եկող ստրկավաճառներին ծախելու։

Փաշայի ոտքերի տակ դարսվեցին մետաքսի թոփեր, գունավոր կաշիներ, զգեստներ, մորթիներ, պղնձեղեն։ Ոսկեղեն զարդերն ու արծաթեղենը գցում էին մի մեծ պղնձի մեջ։ Գորգին շունչը պահած հետևում էր այդ արարողությանը։ Նա տեսավ, թե ինչպես մի ասկյար փաշայի ոտքի տակ փռեց այն մետաքսե կապույտ կտորը, որ ինքն էր նվեր բերել Մարոյին։ Մի ուրիշը փաշային նվիրեց Գիշու համար իր բերած Բուխարայի մորթին...

Գորգին փորձեց ծառս լինել տեղը, բայց կապերն արգելեցին։

— Քո՛ւյրիկս...— անհույս մռնչաց նա՝ պատկերացնելով, թե ինչպես բախտ է վիճակվել Մարոյին։ Նա փակեց աչքերն ու դառնորեն հեկեկաց... Երբ աչքերը բաց արեց, կողքին պպզած էր գեղեցկուհի տիկնոջ սեամորթ աղախինը։

— Իմ խանումը ուզում է իմանալ՝ եսիրը քրիստոնյա՞ է, արդյո՞ք,— նայելով շորս կողմը՝ կամաց հարցրեց սեամորթը։

— Այո՛, քրիստոնյա եմ՝ ոչ բարով,— ակամա պատասխանեց Գորգին։

— Իմ խանումն էլ քրիստոնյա է, ուռուս։ Լա՛վ է, դու ձայն մի՛ հանի, եսիր։ Որ հնազանդ չլինես, քեզ կսպանեն, մե՛ղք ես։— Նա մատը դրեց բերանին և ինչպես հանկարծ եկել էր, այնպես էլ չքացավ։

Սրբազան ավարի իր բաժինն ստանալուց հետո, փաշան իջավ բլրից։ Գեղեցկուհին մտավ վրան։ Փաշան կանգնեց խոտերի վրա մնացած գորգին։ Ծալովի գահավորակը դրին նրա մոտ։ Փաշան նստեց, հրամայեց մոտ բերել եսիր տասնապետին։ Գորգուն նետեցին նրա ոտքերի տակ։

— Ես տեսա, թե ինչպիսի քաջությամբ էիր դու կռվում իմ ենիչերիների դեմ, գյավո՛ւր։ Ես վճռեցի խնայել քո կյանքը։ Ինչո՞ւ էիր համառում, երբ օրհասդ էր,— հարցրեց փաշան՝ ուշադիր զննելով իր եսիրին։

— Ես պաշտպանում էի իմ քրոջը,— պատասխանեց Գորգին։

— Աֆարի՜մ,— ժպտաց փաշան։— Այդ տեսակ քաջին ես սիրում եմ, ալլահն է վկա։ Դու կլինես իմ ձիապանն ու պատիվներ կստանաս, եթե խոհեմ լինես։

— Ես ուզում եմ մեռնել,— հանդարտ պատասխանեց Գորգին։

— Ինչո՞ւ,— զարմացավ փաշան։— Գյավուր քրիստոնյաները հոգի չունեն, որ գնան հանդերձյալ աշխարհը։ Գյավուրի համար փակ են դրախտի դռները։ Ուրեմն ինչո՞ւ մեռնել՝ այս աշխարհի վայելքները թողած։ Զարմանալի՜ է։

Փաշային շարբաթ մատուցեցին։ Սա խմեց՝ աչքերը կկոցելով։

— Որտե՞ղ է ձեր Մուխիթար փաշայի զորքը,— հարցրեց նա։

— Հալիձորում։

— Հեռո՞ւ է...

— Ո՛չ։ Ճանապարհն անցնում է Մարաղայի գաշտով...— պատասխանեց Գորգին։

— Լեզո՞ւ ունես,— ծաղրեց փաշան։— Մարաղան եք աչքներս խոթում. հի՛, հի՛, հի՛... Շա՞տ զորք ունի Մուխիթարը։

— Անտառի տերևի չափ։

— Կրակ կա, որ ամբողջ անտառ է վառում։ Այսօր իմ հոր մահվան տարեդարձն է, գյավո՛ւր։ Այսօր ես վճռել եմ արյուն չանել։ Երեկվա ու այս գիշերվա թափածն էլ հերիք է, որ մարգարեի հրեշտակները հանգուցյալ հորս հոգին անուշահոտ յուղերով օծեն։ Վաղը դու ինձ կառաջնորդես Հալիձոր։ Վաղը քեզ կթլպատեն և մահմեդական կդարձնեն։ Այս է իմ կամքը,— նա մտավ վրան։

Գորգուն նորից կապեցին ծառին։ Փաշայի նոքարներից մեկը լակամանի մեջ պղտոր ջուր դրեց նրա առջև։

— Լակիր, որ ծարավից չմեռնես,— ֆշշացրեց նոքարն ու ձիու մի հոտած պոչ գցեց նրա ծնկներին։— Ուտելիքդ էլ դա է։ Գոհություն մաղթիր Մուհամմեդին, որ ողջ ես։ Վաղը քեզ կթլպատեն ու կդարձնեն Մուհամմեդի հավատին։

— Ես թքել եմ քո Մուհամմեդի մորուքին,— շպրտեց Գորգին։

Նոքարի աչքերը չովեցին. բերանը բացուխուփ արեց։

— Յա՜ Աբուբեքիր, յա՜ Ալի։— Նա բռնեց Գորգու կոկորդը։

Բայց այդ պահին վրանից դուրս պրծավ սևամորթ կինը և բարկացավ նոքարի վրա։

— Ամենազոր ու ամենաարդար փաշան վայելում է իմ պստիկ խանումի սերը և արգելում է իր վայելքի պահին անկարգություններ անել, Բահրա՜մ նոքար, հեռացի՛ր։ Մի պղտորիր իմ տիրոջ վայելքի արդար պահը, որ չես կարող զուլալել քո արյամբ անգամ։ Հեռացի՛ր։

Նոքարն, ատամները կրճտացնելով՝ գնաց։ Գորգին սուր քրքջաց նրա ետևից։

Սևամորթ կինը նստեց վրանի առջև՝ հսկելու, որպեսզի «ամենազոր և ամենաարդար փաշան» հանգիստ վայելի «պստիկ խանումի» սերը...

***

Երեկոն իջնում էր Ագուլիսի վրա։ Քաղաքը խաղաղ ծխում էր։

Դաշտ գյուղի կողմից, այգիներում ուշացած մշակների վրա փոշի ցրելով՝ ձիու վրա քաղաք մտավ Փոքր Գորգին։ Նրան տեսնելով, քաղաքացիները տագնապ զգացին։

Հասնելով պարոն-տեր մելիք Մուսու ապարանքին՝ Գորգին թամբի վրայից ցատկեց սանդուղքի աստիճաններին և, վախեցնելով պարոն-տիրոջ աղջիկներին՝ վազեց շքեղ զարդարված միջանցքներով։ Մելիքի տանն իրարանցում ընկավ։ Միջանցքներից մեկում Գորգին ճակատ առ ճակատ հանդիպեց մելիք Մուսուն։

— Ո՞ւր ես զոռում,— չարացավ մելիքը՝ աչքերը ոլորելով փոշրթաթախ տասնապետի վրա։— Ո՞վ քեզ թույլ տվեց, վայրենի՜...

Ինչ-որ սենյակից դուրս եկան քաղաքի վաճառականները, որոնցից միայն մետաքսի գործատների տեր խոջա Խաչիկին ճանաչեց Գորգին։ Բարձրահասակ, փոշոտ, առանց գլխարկի ու զենքերի տասնապետին տեսնելով՝ վաճառականներն զգացին, որ մի ծանր բան է պատահել։

— Ո՞վ քեզ իրավունք տվեց,— նորից չարացավ մելիքը։

— Թուրքերը մոտենում են քաղաքիդ, տե՛ր մելիք,— ոչ պակաս բարկությամբ գոչեց Գորգին։

Մելիք Մուսու աչքերը կլորացան, վաճառականներն խսկույն շրջապատեցին տասնապետին։ Նրան տարան մելիքի ընդունարանը, որտեղ քիչ առաջ խաղաղ զրուցում էին իրենց առևտրական գործերից։

— Ջարագուշակ ագռա՞վ ես,— սոսկումից կտրված, խզված ձայնով հարցրեց պարոն-տերը։

— Ազա գյուղում էի,— պատմեց Գորգին։— Գնացել էի քրոջս տեսության։ Երեկ գիշեր թուրքական Պեքիր փաշայի տասը հազարանոց բանակը անցել է Արաքսն ու մտել մեր աշխարհը։ Ազան այժմ մոխրակույտ է։ Տղամարդկանց կոտորեցին, կանանց ու երեխաներին եսիր տարան։ Պեքիր փաշան բանակ է խփել Արաքսի ափին՝ Ազայի մոտ, սպասում է մեծ բանակի ժամանելուն, որ գա Ագուլիսի վրա... Աղետ է, պարո՛ն խոջաներ, ճարներդ տեսեք։ Լսեցեք իմ խոսքը, ես Մխիթար գահերեց զորավարի համհարզ Փոքր Գորգի տասնապետն եմ։

Մի պահ ոչ ոք չկարողացավ բան ասել։ Կարկամել էին։ Մելիք Մուսու ձեռքերը դողում էին. շնչում էր ծանր, հևալով։ Անթարթ հայացքը տասնապետին հառած՝ չգիտեր ինչ ասեր։

— Արի եղեք, խոջանե՛ր, ձեր քաղաքը զորք ու պարիսպներ ունի,— լսվեց Գոհարի ձայնը։

Բոլորը շուռ եկան նրա կողմը։ Գոհարը վեհ էր ու հանգիստ։ Մելիք Մուսին չարությամբ նայեց նրան։ Այդ զարմանալի կնոջ ներկայությունն իր տանը անախորժություն էր պատճառում մելիքին և նրան պահում մշտական անհանգստության մեջ։

— Ուրախ եմ, որ արիությունը չի լքում քեզ, սիրելիդ իմ Գոհա՛ր,— ատելությունը զսպելով՝ ասաց Մուսին։— Բայց լավ կանես, որ գնաս քո աղոթքին, զանգերը կանչում են։ Իսկ մեր ժամը հարամվեց։

— Ինձ զենք ու զգեստ տվեք,— խնդրեց Փոքր Գորգին։— Ես գնում եմ Հալիձոր։

Նրան զենք ու զգեստ տվին։ Հագավ արագ։ Ոտքի վրա մի բան կերավ ու մելիքի աղջիկների մոտ գտնելով Գոհարին՝ հարցրեց.

— Ո՞րտեղ է Թովման։

— Նա իր զորագնդով տեղավորված է Թովմա առաքյալի վանքում,— պատասխանեց Գոհարն, ու նրա աչքերը լցվեցին։— Ախ, Գորգի, այդ ի՜նչ օրի են գցել քեզ։

Մելիքի աղջիկները հեկեկացին։

— Ես ի՜նչ...— դառն հառաչեց Գորգին։— Փա՜ռք աստծո, ես դեռ կենդանի եմ։ Ազա գյուղը սրի մատնեցին։ Քույրիկի՜ս...— նրա ձայնը խեղդվեց, բայց կարողացավ կուտակված լացը զսպել։

— Ա՜խ, անբախտ աղջիկ,— հառաչեց Գոհարը։— Իսկ դու ինչպե՞ս ազատվեցիր։

— Հրաշք էր,— տնքաց Գորգին։— Ինձ եսիր էին վերցրել։ Աստ-

ծուց էր, երևի, որ Պեքիր փաշան այդ օրը սեր էր վայելում իր «պստիկ խանումի» հետ։ Ինձ կապել, գցել էին նրա վրանի մոտ։ Գիշերը փաշայի «պստիկ խանումի» սևամորթ աղախինը կտրեց իմ կապանքներն ու, դեռ փաշայի ձիերից մեկի սանձն էլ ինձ տալով՝ փախցրեց...

— Սևամո՞րթը,— զարմացավ Գոհարը։

— Այո։ Նրա տիրուհին՝ «պստիկ խանումը», ռուս է։ Աղախինն ասաց, թե իր տիրուհին ուխտել է քառասուն քրիստոնյա եսիր ազատել իր տիրոջ ձեռքից։ Քառասուներորդը ես էի։ Այս անգամ էլ բախտս բանեց։ Դե, ես գնամ։ Ի՞նչ ասեմ Մխիթարին։

Գոհարը թեթևակի ցնցվեց, շիկնեց մանկամարդ հարսի պես, աչքերը նորից տամկացան։ Հառաչեց ու երազկոտ ասաց.

— Թող իմ երջանկության միակ աստղն իմանա, որ նա միշտ իմ սրտի մեջ է, և ես նրան չեմ մոռանա գերեզմանում անգամ։— Նա երկար լռեց և ապա, բռնելով իր բարեկամի ուսերը՝ ավելացրեց։— Ասա Մխիթարին, որ մեզ մենակ չթողնի... Այստեղ մարդիկ կան, որ մեզ կարող են մատնել Թուրքի ձեռքը։ Գնա ու բեր Մխիթարին, Գորգի՛... Ես վախենում եմ, որ այլևս չտեսնեմ նրան... Գնա, բայց ո՛չ, սպասիր, նախ գնա ամուսնուս մոտ, խոսիր հետը, հետո մեկնիր, տերը քեզ պահապան։

Գորգին գնաց։ Գոհարը երկար լուռ մնաց։ Մեկը գրկեց նրա մեջքը։ Շուռ եկավ, Հեղինեն էր՝ մելիքի դուստրը՝ լուսեղեն, ինչպես ապրիլին ծաղկած նշենին։

— Թուրքը մեզ ետի՞ր կանի...— հեծկլտաց աղջիկը։

Գոհարի սրտին ասես կրակ դրին։ Գրկեց աղջկա բարալիկ մեջքը։ Մյուս երկու աղջիկներն էլ հեծկլտացին։

— Լաց մի՛ լինեք, սիրելիներս,— ասաց Գոհարը։— Աստված մեծ է կպաշտպանվենք։ Մխիթարը մեզ անօգնական չի թողնի։ Կգա՛։

Նա բռնեց Հեղինեի ձեռքն ու դուրս եկավ։ Նա շարունակում էր ապրել Հեղինեի հետ՝ նրա սենյակում։ Միայն շաբաթը մեկ-երկու անգամ գնում էր վանք՝ այնտեղ գտնվող ամուսնուն և զորքին տեսության։ Մի պարզ, անկաշկանդ սիրով կապվել էր Հեղինեի հետ։ Նույնիսկ նրան պատմել էր իր սրտի գաղտնիքը, նրա հետ արտագրել էր Նաղաշ Հովնաթանի երգերը և գիշերները, երբեմն երկուսով նստում էին կիսախավար սենյակում ու երգում մեղմ։ Աղջիկը չէր նկատում տիկնոջ արտասուքները, որ նա հեղում էր՝ իր կորած սերը հիշելով...

Արդեն ուշ գիշեր էր, երբ նրանք պառկեցին։ Գոհարը հանվեց, հայելու մեջ երկար նայեց իրեն, հիշեց Տրտու գետի ափերին Մխիթարի հետ անցկացրած անհոգ օրերը և պառկեց անկողնու մեջ՝ միայն մի

շղարշով ծածկելով չքնաղ մարմինը։ Հեղինեն հմայված նայում էր նրան։ Գոհարը նմանվում էր ամպերի վրա հանգչող հավերժահարսի...

Պատուհանի վերևից երևում էր երկնքի մի պատառը՝ մի զույգ պայծառ աստղ վրան։ Աստղերը երբեմն ժպտում էին, երբեմն ծածկվում ամպի սև ծվենի տակ։ Տագնապներով լի գիշեր էր. ի՞նչ կբերի առավոտը։ Միայն աստծուն էր հայտնի...

Գոհարը նոր էր փակել աչքերը, երբ Հեղինեն արթնացրեց նրան։

— Դավադրություն,— ոչ իր ձայնով հայտնեց աղջիկը։

— Ի՞նչ, ո՞վքեր են,— ցնցվեց Գոհարը։

— Սը՛ս... խոջաները։ Վե՛ր կաց։

Գոհարն իսկույն հագնվեց։ Ահից սրսփացող Հեղինեն նրան տարավ իրենց ննջարանին կից մի դատարկ սենյակ, ապա այնտեղից մտցրեց հին զգեստների հոտից ծանրացած մի խորշ։ Դրա պատի ճեղքից լույսի մի նեղ շերտ էր երևում։ Երկուսով կպան պատին։ Լսվում էր մեկի ցածր ձայնը։

— Միակ միջոցն այն է, որ գնանք, ընկնենք փաշայի ոտքը, հպատակվենք սուլթանին։ Սուլթանը վաճառական մարդկանց չի վնասում։ Ոսկի կտանք, հարստություն կտանք, քաղաքը խաղաղությամբ կհանձնենք փաշային ու կփրկենք ավերումից։

Մեկ ուրիշն ինչ-որ բան ասաց, որ սակայն Գոհարը չկարողացավ որսալ։ Նորից լսվեց առաջին ձայնը։

— Ես ինքս կգնամ փաշայի ոտքը։ Աբդուլլահի մոտ է մեր բարեկամ Մուրադ-Ասլան հայը, նա կօգնի մեզ։

— Պիտի շտապել, քանի դեռ ուշ չէ,— լսվեց մելիք մուսու ձայնը։

— Քաղաքի բանալիները տուր, տե՛ր պարոն-տեր,— դարձյալ խոսեց առաջինը։— Շտապիր, հիմա լուրը կտանեն Մխիթարին, կգա, գլխատցավանք կլինի։

— Ինչ-որ բան ասացին սաստիկ ցածր։ Գոհարը միայն կարողացավ որսալ կցկտուր բառեր։

— Շրջապատել վանքը... այդ Թովմային... Իսկ փաշայի համար լավ նվեր կլինի Գոհարը։

— Դավադիրնե՛ր,— լսվեց մեկի բարձր ձայնը։— Ես կամակից չեմ ձեզ։ Ես կհայտնեմ...

Սակայն նրա ձայնը խեղդվեց իսկույն։

Գոհարի աչքերը մթնեցին։ Պատից պոկ եկավ ու Հեղինեի ձեռքը բռնած՝ խարխափելով վերադարձավ ննջարան։ Հեղինեն փաթաթվեց նրան։

— Փախի՛ր, փախի՛ր. հիմա նրանք կգան քո ետևից... Ա՜խ, աստվա՜ծ։— Հեծկլտաց աղջիկը։— Եվ ինչպե՞ս իմացա... Այն բարակ կանացի ձայնով մարդը ակնեղենի վաճառական է։ Չէի քնել, իմացա, որ դեր եկավ հորս մոտ։ Նա մի զզվելի տղա ունի, ինձ ուզում են պսակել նրա հետ։ Կարծեցի թե դրա համար է եկել, քեզնից թաքուն դուրս եկա, մտա այն խցիկն ու ականջ դրի... Մայրս շատ անգամ է այնտեղից լսել հորս գաղտնի զրույցները... Վո՛ւյ... աստվա՜ծ, մեզ ծախում են թուրքերին...

— Ձայն մի՛ հանիր,— խնդրեց Գոհարը։— Ցույց տուր, թե որտեղով կարող եմ փախչել։

Նա զենքերը կապեց։ Ամուր համբուրեց Հեղինեին և, պատուհանը բաց անելով՝ անաղմուկ իջավ պարտեզ։ Գրկեց Հեղինեին, զգուշությամբ իջեցրեց պատուհանից։ Աղջիկն ահից թուլացել էր, ոտքերը հազիվ էին շարժվում։ Հասան այգու պարսպին։

— Մտիր ջրածակն ու դուրս եկ,— ասաց Հեղինեն ու ետ փախավ։

***

Հենց այդ նույն պահին մի թիկնապահի ուղեկցությամբ մելիք Մուսու ապարանքը մտավ Թովմա հարյուրապետը։ Դավադրությանն անտեղյակ, նա եկել էր պարոն-տերի հետ խորհրդակցելու՝ քաղաքի պաշտպանության առթիվ։ Գորգին թուրքերի մոտենալու լուրը հասցրել էր նրան։ Այն բանից, որ դարպասն իսկույն բաց արին նրա առջև, նա հասկացավ, որ մելիքն արթուն է։ Ձին ու թիկնապահին թողնելով սանդուղքների տակ, Թովման արագ բարձրացավ վեր ու մտավ կիսախավար միջանցքը։ Գլխին բութ գործիքի ուժգին հարված զգաց։ Երերաց, ընկավ, փորձեց կանգնել, բայց ձեռքերը ոլորեցին։ Կարծես երազի մեջ լսեց մելիք Մուսու դիվական ձայնը։

— Տարեք բանտ։

Թովման ուշքի եկավ խավար նկուղում։ Ձեռքերի ու ոտքերի շղթաները զնգացնելով՝ նա առաջ գնաց ու զարհուրած կանգնեց գնդանի մեջտեղը։ Դուռն ամուր փակեցին։ Մեկը բռնեց նրա ծունկը։

— Թովմա՛, թանկագի՛նս... Քե՞զ էլ թակարդ գցեցին։

Խոջա Խաչիկն էր։ Թովման նրան ճանաչեց ձայնից։

— Ինչպե՞ս եղավ, խոջա՛,— թունավոր հարցրեց Թովման։

— Աղվե՛ս, աղվե՛ս... Խաբեց։ Կանչել տվեց թե՝ արի քաղաքի պաշտպանության մասին խորհենք։ Եկա քեզ հարցրի։ Ասացին՝ հիմա կգաս։ Որոշեցին քաղաքը հանձնել թուրքին։ Ես ընդդիմացա, սպառնացին։ Գլխիս խփեցին ու շղթայեցին։ Ա՜, ա՜խ... «Մխիթարի շո՞ւնն ես»,—

ասացին։ Մենակ Մուսին չէ։ Քաղաքի բոլոր խոջաները դավադիրներն են... Վա՜յ, հազար վայ թշվառ քաղաքիս...

Խոջա Խաչիկը հեկեկաց։ Թովման քարացած նայում էր խավարի աչքին...

***

Մթության մեջ խարխափելով՝ Գոհարը հասավ Թովմա առաքյալի վանքի դարպասին։ Բռունցքներով հարվածեց ծանր դռանը։

— Բա՛ց արեք, ես Գոհարն եմ...— հևաց նա։— Թշնամին մոտենում է։ Բա՛ց արեք։

Դռնապահ զինվորները բաց արին դարպասներն ու տիկնոջը ներս թողին...

— Արթնացե՛ք,— ծղրտաց Գոհարը։

Զինվորները դուրս թափվեցին խցիկներից, ախոռներից, վրաններից։ Ոմանք կիսամերկ էին, բորիկ, բայց զենքերով։ Մեկը թափահարեց Գոհարի ուսը։

— Ի՞նչ է պատահել։

Գոհարը հազիվ ճանաչեց Փոքր Գորգուն։

— Ո՞ւր է ամուսինս, կանչեցեք,— ճչաց նա։

— Նա հենց քիչ առաջ գնաց մելիք Մուսու մոտ։

— Կորա՜ծ է...— ծղրտաց Գոհարը և ձեռքով հարվածեց գլխին։— Մելիք Մուսին դավաճանեց, ամուսինս կորա՜վ... Մենք մատնված ենք։ Զինվեցեք։ Վանքի դուռն ամրացրեք, ելեք պարիսպները։

Զինվորները կարկամեցին անսպասելի դավաճանության լուրն իմանալով։ Մատնության չէին սպասում։ Բայց արդեն դա կատարվել էր։ Նրանք, վանքի գավթում եղած գերեզմանաքարերը պոկելով՝ գլորեցին և դեմ արին դարպասներին։ Հրացանակիր զինվորները բարձրացան պարիսպների գլուխը։ Խավարի մեջ լսվում էր միայն տասնապետների կարճ հրամանները, զենքերի զնգոց։ Դրսում փողեր հնչեցին։ Գոհարն ու Գորգին բարձրացան մարտական աշտարակը։ Մեկը ներքևից կանչեց.

— Է՛յ, պղնձաքարցի՛ խելառներ, լսեցեք, թե ինչ է հրամայում մեր տերը։

— Ձեր տերը շունն է,— ծղրտաց Գոհարը։

— Համբերիր, մելի՛ք Բարխուդարի դուստր,— ներքևից կանչեց մելիք Մուսին։— Լսիր իմ բարի խոսքը։ Այդ գժերին համոզիր, որ զենքերը վար դնեն ու դուրս գան վանքից։ Երդվում եմ ավետարանով, որ բոլո-

բիդ, այդ թվում նաև ինձ մոտ բանտարկված Թովմա ամուսնուդ, բաց կթողնեմ։ Ուր կամենում եք՝ գնացեք։

— Չհավատա՞ք...— այգիների միջից ծղրտաց մի կանացի ձայն։— Ուզում են խաբել ձեզ։ Չհավատա՞ս, Գոհա՞ր։ Նա ձեզ բոլորիդ կհանձնի Թուրքին։

Գոհարը ճանաչեց Հեղինեի ձայնը։

— Մինչև առավոտ ձեզ ժամանակ,— նորից գոչեցին ներքևից,— կամ հանձնվեք ու հեռացեք մեր քաղաքից, կամ բոլորիդ սրի կտանք։ Թովմային կվառենք։

Պարիսպների վրայից դավադիրներին քարկոծեցին։ Սրանք քաշվեցին այգիներն ու հետևեցին, որ ոչ ոք չիջնի պարիսպներից։ Պաշարված զինվորները հասկացան, որ մելիք Մուսին իրենց կենդանի բաց չի թողնի Ագուլիսից։

Ծանր ձեռնափայտին հենված եկավ վանքի զառամ եպիսկոպոսը, մի չորուցամաք ծերունի, որ ասես անդրշիրիմյան աշխարհից էր եկել։ Նրա հետ էր վանքի միաբանությունը՝ երեք վարդապետ ու մի քանի աբեղա։ Եպիսկոպոսը դողդոջ ձեռքով խաչակնքեց վանքի բակում հավաքված, մոլոր կանգնած զինվորներին ու հազիվ լսելի ձայնով ասաց.

— Հովիվ քաջ, հովիվ բարի և հավիտենական, նայիր և այցի եկ քո բանավոր հոտին, որ ժողովվել է քո տանը և սպասում է քո գթությանը։— Նա դարձավ Գոհարին, ուժը ներածին չափ ձայնը բարձրացրեց։— Մի՛ երկնչիր, դո՛ւստր իմ, որ փառավորել ես քո անունը Մարաղայի գործում։ Ահա քեզ հետ ենք մենք. քաջալերիր քո մարդկանց և ահը քո սրտից վանելով՝ գտնիր փրկության ելքը...

— Բայց մինչև մենք գտնենք այդ ելքը, շուն Մուսին քաղաքը կհանձնի Թուրքերին,— զարմանալի հանդարտ ասաց Գոհարը։

Ծերունին գլուխը տարուբերեց։

— Կերոն բերեք,— գոչեց նա։— Ես մելիքին ետ կպահեմ դավաճանության շավղից։

— Իզուր է,— հառաչեց Փոքր Գորգին։— Նա արդեն ծախել է մեզ։

Ծերունի սրբազանը գնաց՝ իր մարդկանցով շրջապատված։ Կերոնի թույլ լույսն արյունով էր ասես ներկում նրա ճանապարհը։ Զինվորներն ու վանականները պարաններով նրան իջեցրին պարսպից։ Այգիների մեջ մի պահ իրարանցում ընկավ։ Լսվեց սրբազանի ահեղ անեծքը, և ամեն ինչ նորից լռեց...

Այլևս չէր երևում կերոնի արնագույն լույսը...

Գոհարը Գորգու և գնդի տասնապետների հետ նայեց վանքի պարիսպներն ու մարտական աշտարակները, քաջալերեց զինվորներին և, երբ իջան պարսպից՝ ասաց.

— Այժմ ես եմ ձեր զորապետը։ Մենք դավաճան քաղաքից դուրս գալու ելք կգտնենք։

— Պատրաստ ենք հրամանիդ,— միաբերան ասացին տասնապետները։

Գոհարը մտավ տաճար։ Այնտեղ ծնկաչոք աղոթում էին վանականները։

— Վեր կացեք, հոգևո՛ր հայրեր,— նրա ձայնը զնգաց տաճարի կամարների տակ։— Աղոթքով չէ, որ պիտի խույս տանք անօրենի սրից։ Ցույց տվեք ձեր վանքի գաղտնի ելքը։

Ինչպես հայոց շատ վանքեր, այնպես էլ Թովմայի վանքը գաղտնի ելք ուներ։ Դա ուրախացրեց Գոհարին։ Սակայն շուտով պարզվեց, որ մելիքի մարդիկ բռնել են այդ ելքի բերանը։ Մինչ այս, մինչ այն լույսը բացվեց։ Վանքը երեք կողմից շրջապատված էր. միայն ձորահայաց կողմն էր ազատ, որտեղ մի խոր անդունդ էր բացվում պարսպի տակից։ Այգիներից սկսեցին կրակել։ Նորից երևաց մելիք Մուսին, նորից պահանջեց որ հանձնվեն։ Պարիսպների վրայից կրակեցին։ Պահանջեցին վերադարձնել եպիսկոպոսին, սակայն մելիքը ցույց տվեց եպիսկոպոսի կտրած գլուխը միայն։

Ողջ օրն անցավ տագնապի մեջ։ Ագուլիսցիները, սակայն, չէին գրոհում ամրապարիսպ վանքը։ Գիտեին, որ հեշտությամբ չէին կարող առնել, ուստի սպասում էին թուրքերի ժամանելուն։

Մութն ընկավ։ Գոհարը վճռեց քանդել ձորահայաց պարիսպը և թոկերի միջոցով իջնել ձորը... Վանականներին հրամայեց անդադար խփել զանգերը։ Պարիսպներից գնդակների ու քարերի տարափ տեղացին այգիներում նստած պաշարողների վրա։ Դիտմամբ աղմուկ բարձրացրին՝ դավաճանների ուշադրությունը շեղելու համար։ Մի խումբ զինվորների հետ Փոքր Գորգին քանդում էր պարիսպը։ Այնինչ ագուլիսցիները շարունակում էին ծանակել պաշարվածներին։

— Է՛յ, բռի պղնձաքարցինե՛ր, ձեր գեղեցկուհի տիկնոջը տվեք մեզ, և մենք ձեզ բաց կթողնենք ողջ-առողջ,— գոչում էին նրանք։

— Իսկ դուք իշի պոչ չե՞ք ուզում, որ կախեք ձեր կնանոց քթերից,— պատասխանում էին վերևից։

— Կկոտորվեք, անմիտնե՛ր։ Ձեր սիրունիկ Գոհարին մենք կնվիրենք փաշային, և դուք կփրկվեք։

— Սպասե՞ք, մենք այնպես ավերենք ձեր այս օձաբուն քաղաքը, որ միայն նրա սև անունը մնա։ Սպասե՞ք...

***

Վանքի մոտից մելիք Մուսին տուն վերադարձավ կատաղած։ Հրամայեց պայտար կանչել։ Բանտից հանեցին Թովմային ու խոջա Խաչիկին։ Թովման քայլում էր գլուխը բարձր. սոսկալի խոշտանգումները չէին ընկճել նրան։ Մինչև գոտին մերկ էր։ Մեջքը կապույտ էր լեղակի պես։ Ծեծել էին անխնա։ Ձախ ձեռքն անզոր կախվել էր (ոսկորները փշրել էին)։ Կուրծքը ծվատված էր, վերքերից դեռ արյուն էր հոսում։ Ներունի խոջա Խաչիկը ոտքի վրա կանգնել չէր կարողանում։ Այդ պատվարժան մարդուն բոլորովին մերկացրել էին, մատները ջարդել, ականջներից մեկը կտրել։

Դատապարտվածների զարհուրելի վիճակը ցնցեց նույնիսկ դավաճան վաճառականներից ոմանց։ Ապարանքի ընդարձակ բակը շրջապատած մելիքի զինվորները մոայլվեցին։ Շատերն էին Թովմային տեսել Մարաղայի ճակատամարտում. ափսոսում էին նրան։ Անհողդողդ էր միայն մելիք Մուսին։ Նա վճռել էր խստագույնս պատժել հարյուրապետին ու խոջային՝ փաշայի մոտ արդարանալու հույսով։ Մեծագոմար նվերներ կտա Աբդուլլահին, գերիներ կտա, քաղաքի բանալիները կուղարկի նրան և դրանով կմեղմի նրա բարկությունը, քաղաքը կփրկի ավերածությունից։

Խոշտանգվածներին տեսնելով՝ պայտարը հասկացավ, թե իրեն ինչու են կանչել։ Գունատվեց։ Գործիքների տոպրակը վայր դրեց ու սկսեց երեսին խաչ հանել։

Խոջա Խաչիկին չոքեցրին մելիքի առջև։ Թովման ոտքերը լայն դրեց՝ չընկնելու համար, սուր հայացքը մեխեց մելիքի վրա։ Մելիքը նրա հայացքից ահ զգաց։

— Լսիր, Թովմա՛ հարյուրապետ,— խոսեց նա։— Խոհեմություն արա, գնա ու քո ավազակներին համոզիր, որ զենքերը վայր դնեն ու հանձնվեն իր գթությանը։

— Ես միայն մի մարդու հրամանին եմ հլու՝ դա Մխիթար գահերեց զորավարն է,— պատասխանեց Թովման՝ հազիվ բաց անելով ուռած, արյունոտ շրթունքները։

— Այստեղ ես եմ տերը,— փրփրեց մելիքը։— Կամ կատարիր հրամանս և փրկիր քեզ ու կնոջդ, կամ մեծ կտրդ ականջդ կթողնեմ։

— Արա՝ ինչ ուզում ես, դավաճա՛ն,— հանդարտ պատասխանեց Թովման։— Ես ափսոսում եմ, որ իմ այստեղ գալու առաջին օրը չկախեցի քեզ, շո՛ւն։

— Համարձակվո՞ւմ ես,— գազազեց մելիքը։

— Բայց կկախվես։ Ո՞ր դավաճանն է խուսափել կաղախանի թոկից։

— Պայտա՛ր...— մոլեգնեց մելիք Մուսին։— Պայտա՛ր, պայտել շանը։

Պայտարը փովեց նրա առջև։

— Մեղա՛, Քրիստոսի սիրուն, տե՛ր մելիք,— աղաղակեց նա։— Ես չեմ կարող, չէ՛։— Ու լաց եղավ։

Մելիքի ակնարկով պայտարին դարպասից դուրս նետեցին։ Դահիճ բերել տվին։ Կարմիր հագած դահիճը Թովմային տապալեց գետնին, ոտքերը տնկեց, մի պայտ դրեց մերկ կրնկին ու, մեխի անցքը հազիվ գտնելով՝ մուրճով խփեց...

Դահճի օգնականն ու երեք ծառա հազիվ էին իրենց ծանրության տակ պահում Թովմային։ Սա անմռունչ գալարվում էր, փորձում պոկվել դահիճների ճիրաններից։ Բայց ապարդյուն։ Շուտով նա ուշաթափվեց... Հերթը հասավ խոջա Խաչիկին։ Կիսաուշաթափ էր. ուշքի եկավ, երբ առաջին մեխը խփեցին կրնկին։ Մորթվող եզան պես բառաչեց, սկսեց լիզել գետինը։

Պատշգամբում, իր երեք աղջիկների հետ երևաց մելիքի կինը՝ Հայկանդուխտ տիկինը։ Նա այնպես ծղրտաց, որ մելիք Մուսին ցնցվեց։

— Անեծք դրիր տանս վրա, դավաճա՛ն,— աղաղակեց տիկինը։ Նրա ճերմակ գլուխը բաց էր, կուրծքը՝ նույնպես։ Նա եղունգներով ճանկռոտում էր դեմքը։ Աղջիկներն անզուսպ հեկեկում էին։

Մելիքը կատաղած նայեց նրան։

— Հեռացի՛ր, անգղ ավերակի...— գոռաց խեղդվելով։

— Ավերակ ես շինում հայոց տունը, ուրացո՛ղ...— քաղաքի վրա թռավ դժբախտ կնոջ ճիչը։— Օձ ես շլինքներիս, Հո՛ւդա...

— Հեռացրե՛ք դրանց,— հրամայեց մելիքը։ Նայեց մահապարտներին. ցնցվեց սեփական ոճրից, բայց չզղջաց։ «Էլ ինչպե՛ս փրկեմ քաղաքս,— մտածեց դառնաղի։— Ո՞ր մեկին հասկացնեմ, որ միջոցը միայն այս է»։

Ծառաները վազեցին դեպի պատշգամբը։ Հայկանդուխտ տիկինը ձեռքերը կարկառեց դեպի Թովմա առաքյալի վանքը և խոպոտ, բայց զարհուրելի ձայնով աղաղակեց.

— Անիծում եմ ուրացող մելիք Մուսուն։ Թող նրա մարմինը շների բաժին դառնա։ Լսիր ձայնս, ո՜վ սուրբ առաքյալ...

Ծառաները փորձեցին բռնել նրան, բայց տիկինը կայծակի արագությամբ հասավ պատշգամբի եզրին, շուռ եկավ, խելագար հայացքով նայեց ամուսնուն և անդրշիրիմյան ձայնով կռավեց.

— Իմ ու այդ անմեղ նահատակների մեղքը վզիդ, դահի՜ճ...

Եվ մինչև ծառաները կրոնեին նրան, նա բարձրացավ պատշգամբի բազրիքն ու իրեն նետեց ձորը... Աղջիկները ճիչով նետվեցին իրենց մոր ետևից, բայց ծառաները հասցրին բռնել նրանց ու ետ մղել։

— Վա՜խ, վա՜խ...— հառաչեցին զարհուրելի տեսարանին ականատեսներից շատերը։

Մելիք Մուսու գույնը դարձավ ածուխ։ Ջղաձգորեն ցնցվում էին նրա կապույտ շրթունքները։ Ձեռքի մուրճը դողում էր։ Բոլորն սպասում էին, որ նա հիմա կխենթանա։ «Տվի՜... Քաղաքս փրկելու առաջին զոհը ես տվի,— կայծակում էր այս միտքը նրա գլխում։— Թող ամենքը տեսնեն, որ չեմ խնայում սեփականս։ Թող ինքը՝ փաշան տեսնի, կշտանա գազանը»։ Անփարատ ցավից ու կատաղությունից նա մուրճն ամբողջ թափով իջեցրեց իր ոտքերի տակ փռված խոշայի ճակատին։

— Մա՜հ ամենքին, մա՜հ...— բղավեց գժված։— Թող կշտանա անկուշտը։ Թող տանի՜... Կկոտորե՜մ, կջնջեմ բոլորիդ։ Չհամարձակվե՛ք հակառակել ինձ, ի՜նձ... էլի զոհ կտամ, կտամ, որ Ագուլիսն ապրի։

* * *

Գիշերվա կեսին Գոհարին հայտնեցին, որ փախուստի անցքը պատրաստ է։ Երկար պարանների միջոցով պղնձաքարցիներն սկսեցին իջնել ամայի ձորը...

Լուսաբացը հազիվ էր շոշափել Սյունյաց լեռների կատարները, արևի տաք ասեղները հատիկ-հատիկ քաղում էին խոտերի ու ծաղիկների ցողը, երբ Գոհարի զորախումբը կանգ առավ լեռան գլխին։ Այնտեղից երևում էր Արաքսը, որի վրայից դեպի երկնքի խորքերն էր քաշվում մշուշի կապտաճերմակ քողը։

Գիշերային արտակարգ արագ փախուստից հոգնած զինվորները թափվեցին թաց խոտերի վրա։ Բոլորը նայում էին դավաճան Ագուլիսի կողմը, որի միայն արևմտյան թաղն էր երևում՝ Աստվածածնի ու Բարդուղիմեոսի եկեղեցիների ոսկեզօծ գմբեթներով։ Իր զինվորների մեջ անձայն ու անշարժ կանգնած էր Գոհարը։ Նա գլխից հանել էր սաղավարտը, և նրա փարթամ խոպոպները ծփում էին ճերմակ դեմքի շուրջը։ Թվում էր, թե մի հրաշակերտ աստվածուհի է նա, որի ոտքերի տակ թափվել, մնացել էին հեռու-հեռավոր տեղերից նրան երկրպագելու եկած ասպետներ։ Բայց աստվածուհին խոսեց մարդկային ձայնով.

— Լսի՛ր, Թովմա՜, եթե կենդանի ես, լսի՛ր, իսկ եթե չկաս այլևս, ապա թող հողն իմ խոսքերը հասցնի քեզ։ Երդվում եմ այս սրբազան լուսաբացով, որ ես կհանեմ քո վրեժը։ Կհանե՜մ...— նրա խոշոր, հոգնած աչքերից արցունքի մի քանի կաթիլ ընկան լեռնային աստղածաղիկների բաժակների մեջ...

Արևը հասավ Արաքսին։ Լեռան գլխին խոնված զինվորները խոժոռ նայում էին գետահովտին։ Ագուլիս բերող ճանապարհով սողում էր մի սև, անվերջանալի զանգված...

— Թուրքերը մոտենում են Ագուլիսին,— ծանր ասաց Գոհարն ու սաղավարտը դրեց։— Գնանք, եղբայրնե՛ր, մենք դեռ կվերադառնանք այս մատնված քաղաքը...

Զինվորները վեր կացան։

Իսկ արևը ելնում էր դեպի հայոց լեռները՝ աշխարհի ոճիրներին անտարբեր, վեհ, արքայական շուքով...

* * *

Մելիք Մուսին անվերջ սուգ ու շիվան անող երեք աղջիկներին ու երկու մանուկ որդիներին փակել տվեց ապարանքի հեռավոր սենյակներից մեկում, պահակներ կարգեց նրանց վրա և հրամայեց առանց իր գիտության թույլ չտալ դուրս գալ նույնիսկ միջանցք։ Շուտով քաղաքացիները Արաքսի կողմից մոտեցող փոշու սև ամպեր նկատեցին։ Հետզհետե բարձրանալով, թանձրանալով այդ սև ամպերը բռնում էին երկնքի երեսը։

Թուրքաց բանակը մոտենում էր Ագուլիսին։

Մելիք Մուսին քաղաքի մեծահարուստ վաճառականների հետ շտապեց թուրքերին ընդառաջ. բոլորը գլխաբաց էին, օձիքներն արձակ (ի նշան կամովի հպատակության)։ Նրանց ծառաները խոշոր սկուտեղների վրա թանկագին նվերներ էին տանում փաշային։ Երկու հոգի առաջ էին մղում խոշտանգված, բայց դեռ արիությունը չկորցրած Թովմա հարյուրապետին։ Մելիքի ծառաները փաշային նվեր էին տանում նաև տասներկու ընտիր նժույգ՝ քմփուշները ոսկեկար, թամբերն արծաթապատ։ Նրանցից յուրաքանչյուրի թամբին կապած էր մի-մի արծաթե խազակոթով հրացան։

Դուրս գալով քաղաքից՝ վաճառականները խճապատ ճանապարհով իջան Դաշտ գյուղը։ Թուրքական բանակը գալիս էր դանդաղ, ալիք տված, ինչպես Արաքսը՝ գարնանը։ Գնդերը ոտնակոխ էին անում խաղողի գանգրաբնձյուղ որթերը, շերամաթթենու նոր շիվերը, բամբակենու մարգերը։

Խոջաները հառաչեցին։ Երբեք այդպիսի մեծ բանակ չէր տեսել Ագուլիսը։ Թուրքաց առաջակալ գնդի ձիերը միագույն էին՝ բոլորը սև։ Բանակի վրա տատանվում էր նիզակներին հագցրած կտրած գլուխների անտառը, որից գարշահոտություն էր սփռվում առավոտյան ջինջ օդում։

— Ձեր գլուխներն էլ կցցվեն այդ նիզակներին, սպասեցե՛ք, դավաճանե՛ր,— ուժերը հավաքելով՝ գոռաց Թովմա հարյուրապետը։

Նրան լռեցրին։

Սևաձի գնդի առջևից, կարմիր, դեղին ու սև դրոշակների հովանոցակ, գալիս էր ճերմակ չի հեծած Քյոփուրլու Աբդուլլահ փաշան։ Սերասկյարին ուղեկցում էին տասնմեկ փաշա, բանակի մեծ մոլլան և Մուրադ-Ասլանը։ Ագուլիսցիները քայլերն արագացրին։ Հասնելով փաշաներին, նրանք փռվեցին ճանապարհի փոշու մեջ և աղաղակեցին.

— Բարո՞վ եկար, տե՛ր մեր ողորմած Աբդուլլահ փաշա։ Ահա մենք եկել ենք՝ մեր սրտերի վրայով քեզ տանելու մեր տուն, ծառա լինելու քեզ։

Աբդուլլահը ձին պահեց ուղիղ մելիք Մուսու գլխավերևը և մոտ կանչեց Մուրադ-Ասլանին։

— Ո՞րն է մելիք Մուսին,— հարցրեց՝ քմծիծաղը շրթունքների անկյուններում։

— Քո մաքուր ոտքերի տակ փռվածը,— պատասխանեց Մուրադ-Ասլանը։

— Թող վեր կենա։

Մելիք Մուսին վեր կացավ։

— Կարգ ու կանոն կա՞ քո քաղաքում, արժանապատի՛վ մելիք Մուսի,— հարցրեց փաշան։

— Ամեն բան իր տեղն է, ամենահա՛ղթ ու ամենաողորմած տեր,— պատասխանեց Մուսին։— Մենք մեր մեծով ու փոքրով սպասում ենք քեզ, որ քո ոտքը հանգստանա մեր գլխների վրա։ Մենք պատժեցինք մեր մեջ եղած խռովարարներին և ահա մեր քաղաքը հոժարակամ հանձնում ենք քեզ։

Վաճառականները նվերներով ծանրացած սկուտեղները մեկնեցին փաշային։ Մի սկուտեղի վրա բերել էին նաև խոջա Խաչիկի ու ծերունի եպիսկոպոսի գլուխները...

— Սրանք այն ամբարիշտների գլուխներն են, որոնք ընդդիմադրեցին մեզ, երբ մենք մեր քաղաքի բանալիները կամենում էինք ուղարկել քեզ, փաշա՛,— բացատրեց Մուսին։— Բայց ամբարիշտները գտան իրենց արժանի պատիժը։

— Մաշալլա՛հ...— բեղերը շոյեց Աբդուլլահը։— Իսկ նա ի՞նչ կապած շուն է,— մտրակը մեկնեց շղթայված Թովմայի կողմը։

— Նա Մխիթարի ամենասիրած զորապետներից է,— գլուխ տվեց մելիքը։— Ըմբոստ արարած է։ Հանձնում ենք քո դատաստանին։

— Բարի՞,— ժպտաց փաշան։— Թող մեր մոլլաներն այդ քաջին դարձնեն Մուհամմեդին ծառա։ Տվեք նրանց։

Նվերները հանձնեցին։ Խոջաները բռնեցին փաշաների ձիերի սանձերը և նրանց տարան քաղաք։ Քաղաքի դռներից մինչև մելիք Մուսու ապարանքը ձգվող փողոցը ծածկված էր գորգերով։ Նրա երկու կողմերին գետնատարած փռվել էին Ագուլիսի տղամարդիկ և զենքերը կույտ-կույտ արած զորքը։ Տների դարպասները փակ էին, պատուհանները վարագույրներով ծածկված։

Թուրք զինվորներն իրարից խլեցին փողոցներում փռած գորգերը։ Բայց փաշայի նոքարները ծեծեցին նրանց և գորգերն առան։ Շատ քաղաքներ ու գյուղեր ավերած, թալանած թուրք ասկյարները գիշատիչ հայացքներով էին նայում գեղեցիկ Ագուլիսին, որի հարստության մասին առասպելներ էին լսել։ Նրանք բարկանում էին, թե ինչու սերասկյարը չի հրամայում սկսել սրբազան թալանը։ Հարյուրապետները հազիվ էին զսպում նրանց վայրենի ախորժակը։

Մելիք Մուսին թուրք փաշաներին հասցրեց իր ապարանքը։ Աբդուլլահը մելիքի ներկայությամբ զորապետներին հրամայեց զսպել զորքին, արգելել անկարգություններ անել, կողոպտել կամ նեղություն տալ ագուլիսցիներին։

Վաճառականները ճոխ խնջույք տվին փաշայի պատվին։ Վճարեցին փաշայի պահանջած տուգանքը և հանձն առան լիուլի հոգալ զորքի բոլոր կարիքները, քանի դեռ նա գտնվում է Ագուլիսում։

— Մենք սիրով կկատարենք քո կամքը, արդարագո՛ւյն փաշա, միայն թե չավերես արդեն սուլթանին պատկանող մեր քաղաքը,— խնդրեցին նրանք։

— Ես գիտեմ, որ գտնվում եմ իմ բարեկամների տանը, և նրանց պատիվը թանկ է ինձ համար,— հանգստացրեց Աբդուլլահ փաշան։— Հանգիստ եղեք, ձեր ապահովությունը երաշխավորում եմ իմ գլխով։

Ողջ գիշեր անցկացրին կերուխումի մեջ։ Փաշաները խրախճանում էին վայրենի բավականությամբ։ Մելիք Մուսու բոլոր աղախիններին բռնաբարեցին։ Հայ վաճառականները չնկատելու տվին դա։ Նկատելու չտվին նաև, թե ինչպես էին փաշաներն ու բանակի մեծ մոլլան սեղանի վրա եղած արծաթե պնակները, դանակ-պատառաքաղներն ու թասերը թաքցնում իրենց գրպաններում։

***

Լուսաբացի կապտավուն մշուշը ցրվում էր։ Բացվում էր Հալիձորի առավոտը։ Կիրճի վրա ճախրում էր արթնացած արծիվը։ Լեռան լանջից, որտեղ անտառը նոսր էր, ծորում էր շինականի տխուր հորովելը... Իր սենյակի ձորահայաց պատշգամբում կանգնած տիկին Սաթենիկը թախծոտ նայում էր ձորն ի վեր կեռմեռվող ճանապարհին։

Մի շաբաթ առաջ որդին՝ Ահարոնը հոր հրամանով մեկնել էր Երնջակ գավառը՝ Երնջակ բերդի կայազորի հրամանատար հարյուրապետի մոտ, որ հինգ հարյուրյակ զորք ուներ։ Նրան հրամայված էր ամրացնել Երնջակը, պարիսպները վերանորոգել և հետևել թուրքական բանակի շարժումներին, որ դեռևս ծանր նստած էր Նախիջևանում ու Օձնասարի շուրջը գտնվող՝ բնակիչներից դատարկված հայոց գյուղերում։ Հայրը որդուն խստիվ պատվիրել էր միայն մեկ օր մնալ Երնջակում և հարյուրապետի հավաքած տեղեկություններն իմանալով՝ իսկույն վերադառնալ Հալիձոր։ Սակայն արդեն մի շաբաթ էր անցել, իսկ Ահարոնը չկար։ Մխիթարը զայրացել էր սաստիկ։

— Կամակոր ու անհնազանդ եք մայր ու որդի,— ասել էր տիկնոջը։— Ինչո՞ւ է փսլնքոտը շընթռկել այնտեղ։ Ինչո՞ւ չի գալիս։ Ես նրա ականջները կկտրեմ։ Սպասի՛ր...

Տիկինը թաքուն մարդ էր ուղարկել Երնջակ՝ որդուն շտապ տուն կանչելու և ահա անհամբեր սպասում էր նրա դարձին։ Գիտեր, որ ամուսինը չի ների որդու արարքը, կպատժի, նույնիսկ ոտքերի տակ կգցի։ Վերջերս նա դաժան ու կոպիտ էր դարձել, սաստիկ շարանում, հայհոյում էր նույնիսկ ընչին բանի համար։ Զորապետներին օր չէր տալիս, չէր թողնում զորանոցներից տուն գնան։ Բոլորի հետ խոսում էր միայն հրամայելով և ոչ ոքի կիսաբերան խորհուրդն անգամ լսել չէր կամենում։

«Ա՜խ, տե՜ր աստված, ի՞նչ կլինի սրա վերջը,— դառնորեն մտածում էր տիկինը՝ ճերմակ մատները կոտրատելով։ Ճանապարհն ամայի էր։ Ոչ մի ձիավոր չէր երևում։ Իսկ Մխիթարն ուր որ է տուն կգա և նորից կգոռա՝ որդու դեմ կատաղած։

Պատշգամբի դուռը կամաց բացվեց։ Տիկինը շրջվեց և դռան արանքում կանգնած տեսավ Ծամամին։

— Ահարոնը եկավ,— անտարբեր, նույնիսկ տհաճությամբ հայտնեց աղջիկը։

— Փա՜ռք աստծո,— թեթևացած հոգոց հանեց տիկինը։— Ո՞ւր է, ինչո՞ւ չի գալիս ինձ տեսության։

— Շորերն է փոխում։ Ցեխոտ է, խմած-հարբած... Դեմքին նայել չի լինում...

— Մի՞թե,— անհանգստացավ տիկինը։— Խմա՞ծ է։ Երբվանի՞ց է խմում։

— Չգիտեմ։ Մի անգամ էլ էր հարբել, երբ գնացել էինք Նավսի կողմերը որսի։— Ծամամը հայացքը կախեց։

Տիկինը նրա աչքերում մեծ վիշտ տեսավ։ Զգում էր, որ ինչ-որ ծանր բան է կատարվել այդ ուրախ, չընկճվող, միշտ համարձակ աղջկա հետ։ Բայց ի՞նչ։ Տիկինը չէր փորձում իմանալ։ Միևնույն է։ Ծամամը չի ասի։ Եթե ասելու բան լիներ, ինքն իրեն կասեր։

— Գնանք,— ասաց տիկինն ու գրեթե վազեց որդու սենյակը։

Ահարոնը կանգնել էր սենյակի մեջտեղը ու գոռում էր ծառայի վրա, որը չէր կարողանում հագուստի սնդուկում գտնել նրա ցանկացած շապիկը։

— Ես քո ատամները կջարդեմ, քավթա՛ռ,— գոչում էր Ահարոնը։— Դու քոռացե՞լ ես, ի՞նչ է։

Տեսնելով ներս մտած մորն ու Ծամամին, նա թթվեց, շրթունքներն ամուր սեղմեց ու հոնքերի տակից չարացած նայեց մորը։ Նա գունատ էր։ Գեղեցիկ շրթունքները կապտել էին, դեմքը մազակալած էր, հայացքը՝ պղտոր։

— Նո՞ր եկար,— չցանկանալով բորբոքել առանց այն էլ գրգռված որդուն՝ հարցրեց մայրը։

— Հենց նոր։— Ակամա պատասխանեց որդին։— Ի՞նչ կա։

— Հոգնած ես երևում, զավա՜կս,— նրա մազերը շոյեց մայրը, գինու սուր հոտ զգաց, զզվեց, բայց նկատել չտվեց։

— Այնպես էիր կանչել ինձ, որ կարծես, թե տանը մեռել կա,— չարությամբ խոսեց որդին։— Ձիերիցս մեկը ճաքեց ճանապարհին։ Քշում էի խելագարի պես։ Իսկ այստեղ ոչ ոք դեռ չի մեռել։ Ինչո՞ւ կանչեցիր։

— Իսկ քեզ համար այնտեղ լա՞վ էր,— հարցրեց մայրը։

— Հիանալի։ Օր ու գիշեր խնջույք էր։ Խմում էինք ծարավ ուղտերի պես։ Հի՜, հի՜, հի՜... Շոռոթից գուսաններ էին բերել տալիս։

— Հորդ բան չասես, ի սե՜ր աստծո...— երկյուղած զգուշացրեց մայրը։— Տե՜ր աստված, ինչո՞ւ ես ամեն կողմից պատժում մեզ։ Դու լավ չես անում, որ խմում ես, զավա՜կս։ Աստված չանի, որ հայրդ իմանա... Առանց այն էլ կատաղած է քո դեմ։ Լվացվիր, սափրվիր ու քնիր։ Քնիր, որ գույնդ տեղը գա, թող հայրդ քեզ այդ վիճակում չտեսնի։ Ես հիմա սափրիչ կուղարկեմ։

Մայրը որդուն համոզեց պառկել և Ծամամի հետ գնաց։ Մարդ ուղարկեց սափրիչի ետևից, ծառային խստորեն պատվիրեց չհեռանալ որդու սենյակի մոտից և ոչ ոքի ներս չթողնել։

***

Մխիթարը չհասցրեց տեսնել որդուն, խրատել՝ երնջակում ուշանալու համար, նոր էր տուն մտել, երբ նրան հայտնեցին, որ Ագուլիսից եկել են Գոհարն ու Փոքր Գորգին։ Ծանր մի բան գուշակելով՝ նա նետվեց միջանցք։ Գոհարն ու Գորգին սգավոր կանգնել էին կողք-կողքի։

— Մելիք Մուսին դավաճանեց։ Ագուլիս քաղաքը հանձնեց Աբդուլահ փաշային,— դանդաղ, նեղացած ու բարկացած սկսեց Գոհարը։— Ամուսնուս ձերբակալեց նենգությամբ։ Մենք հազիվ ճողոպրեցինք...

— Ե՞րբ,— թուքը կուլ տվեց Մխիթարը։

— Երկու օր առաջ, այժմ թուրքն Ագուլիսումն է։

Մխիթարը քարացել էր, նույնիսկ աչքերը չէր թարթում, չէր շնչում ասես։ Ակնապիշ նայում էր Գոհարին։ Իսկ սրա երեսին ծանր վիշտ կար։ «Սկսվե՞ց,— մտածեց Մխիթարը,— դավադրության կծիկը բացվում է։ Ո՞ւր կտանի այս ամենը... Նորից սխալվեցի։ Մելիք Մուսուն պետք է գլխատեի, երբ ձեռքիս մեջ էր»։— Ուշ սթափվեց ծանր լուրի պատճառած հարվածից։ Գոհարին խնդրեց գնալ իր կնոջ մոտ, իսկ Փոքր Գորգուն հրամայեց տագնապով կանչել զորապետներին։

Ոչ մի կերպ նա իրեն ներել չէր կարողանում մելիք Մուսուն կենդանի թողնելու համար։ Չէ՞ որ սիրտն զգում էր, թե կդավաճանի նա։ Այո, զգում էր, բայց ինչո՞ւ զիջեց։ Ինչո՞ւ վախեցավ միաբանությանը հարված տալուց, մելիք Մուսու Շամախում գտնվող հորեղբորից։ Պետք է ոչնչացներ նրան, չզիջեր։ Բայց այս ամենից ավելի մի ուրիշ ցավ էր կրծում նրա սիրտը։ Անշուշտ, մելիք Մուսին մենակ չէ։ Ապա ինչո՞ւ ագուլիսցի խոջաները չկանխեցին դավադրությունը։ Ո՛չ, այս թշվառ ժողովուրդը պատժված է երկնքից և իրավունք չունի ազատ ապրելու,— դառնորեն մտածում էր նա։

Մելիքներն ու զորապետները եկան։ Լույսն արդեն բացվում էր։

— Պատրաստվեցեք շարժվել դեպի Մեղրի,— ասաց Մխիթարը։— Ագուլիսն ընկել է։ Թուրքերը խուժել են մեր աշխարհը...

— Չեն խուժել, տե՛ր գահերեց, նրանց հրավիրել են մեր տունը։ Մեզ դավաճանել են,— չարությամբ ասաց մելիք Բարխուդարը։

— Դուք չէի՞ք արդյոք, որ ինձ ստիպեցիք ներել դավաճանին, երբ նա իմ ճանկերի մեջ էր,— գոռաց Մխիթարը։— Ահա և ներողամիտ լինելու վարձը։

***

Կատարվեց անխուսափելին։

Գիշերը Ագուլիսի ծածկած շուկայի կողմից մելիք Մուսին կանացի ճիչ լսեց։ Նոր էր եկել Աբդուլլահ փաշայի մոտից և պատրաստվում էր քնելու։ Կասկածելի ձայնի վրա նա դուրս եկավ պատշգամբ։ Քաղաքի կենտրոնում, շուկայի մոտ սոսկալի իրարանցում էր։ Շուկան այրվում էր, այրվում էին նրան կից տները ևս։ Քաղաքը լուսավորվել էր բոցերից։ Վերևի թաղերից մորթվող մարդկանց բառաչներ լսվեց, և շուտով ողջ ձորը դղրդաց աղետի մատնված մարդկանց վայնասունով...

Սկսվեց Ագուլիսի կողոպուտը...

Ենիչերիները խմբերով խուժում էին տները, ծծկերներին նետում պատուհաններից, տղամարդկանց կոտորում։ Հափշտակում էին ամեն ինչ՝ գորգեր, վենետիկյան ժամացույցներ, բարձեր, անգամ հետին դռնապանի զգեստներն ու փայտե գդալը։

Մորթվող մարդկանց, քարերին ջախջախվող մանուկների, բռնաբարվող աղջիկների ու կանանց վայնասունը ցնցում էր քաղաքը։ Բակերում ու փողոցներում խելագար վազվզում էին մերկ կանայք։

Մելիք Մուսին զարհուրեց։ Թեև կանխավ գիտեր, որ բռնակալն ի վերջո ցույց կտա իր դեմքը, բայց այդպիսի ավերածություն չէր սպասում։ Մանավանդ փաշան խոստացել էր հոգալ քաղաքի ապահովությունը։ Դուրս վազելով իր սենյակից՝ նա գնաց դեպի սերասկյարի հարկաբաժինը։ Երեք ենիչերի կտրեցին նրա ճանապարհը, բայց գազազած մելիքը խուժեց փաշայի ննջարանը։

— Արթնացի՛ր, տե՛ր սերասկյար,— որոտաց նա՝ ամեն զգուշություն մոռացած։

Փաշան, որ քնած էր զգեստներով, ծառս եղավ տեղը։

— Ի՞նչ է պատահել, մելի՛ք, ինչո՞ւ ես դողահար,— հարցրեց խուժոռ։

— Երդմնազանց մի՛ լինիր, մեծ փաշա։ Զորքդ սկսել է կոտորել քաղաքը։

— Մի՞թե,— կեղծ զարմանքով բացականչեց փաշան։— Արգելել էի։

— Ականջ դիր քաղաքի վայնասունին,— չզիջեց մելիքը։— Արգե-

լիր իսկույն։ Իմացիր, հաղթող փաշա, եթե Ագուլիսն ավերես, ապա ոչ մի քաղաքի ու գյուղի դուռ չի բացվի քո առջև։ Աղետը դաս կլինի ամենքին։ Մեծով ու փոքրով կելնեն քո դեմ։ Ասկ Ագուլիսի անկումը դեռ Սյունիքի անկումը չէ։

Փաշան կուզեր հիմնահատակ կործանել Ագուլիսը, բայց դեռ առջևում ծանր մարտեր ունի, քաղաքներ ու բերդեր կան գրավելու։ Իրոք, Ագուլիսի կոտորածը միանգամայն կթշնամացնի հպատակվելու հակված հայ մեծամեծներին, համբերությունից կհանի ժողովրդին։

Փաշան մելիքի տանը բնակվող բանակի պետերին հրամայեց՝ իսկույն դադարեցնել կողոպուտն ու անկարգությունները։ Ապա հրամանը կատարելու համար քաղաքում ցրեց իր թիկնապահ գունդը։

Մեծ ջանքերով միայն կարողացան կասեցնել կոտորածը։ Մելիք Մուսին արտասվում էր դառնաղի, բայց և մխիթարվում էր, որ կարողացավ փրկել քաղաքը։ «Կպահեմ, կազատեմ քաղաքս»,— ինքնագոհ խորհրդածում էր նա։

Առավոտյան, երբ դուրս եկավ քաղաք, փողոցներում ու բակերում դիակներ նկատեց։ Զորս տուն այրվել էր։ «Մեկը տվինք՝ հարյուրը պահելու համար,— մտածեց նա։— Այժմ պետք է փաշային համոզել, որ նա հեռանա քաղաքից, չքվի»։

Նախաճաշին Աբդուլլահը մխիթարեց մելիքին ու գլուխը ցավակցաբար օրորեց.

— Ալլա՜հն է վկա, որ ես կպատժեմ անկարգներին,— երդվեց նա։— Ժամանակին հասար, բարեկա՜մ, թե չէ կարող էր ուշ լինել...

— Քաղաքներ ու գյուղեր ավերելով՝ կգազազեցնես ժողովրդին, ողորմա՜ծ փաշա,— ասաց Մուսին։— Էլ ո՞վ կհավատա ինձ ու քեզ, ո՞վ իր քաղաքը կամ գյուղը սիրահոժար կհանձնի քեզ։ Խուսափիր ավերածություններից, փաշա՛, եթե կամենում ես նվաճել Սյունիքը։

— Ցավում եմ այս գիշերվա կատարվածի համար, եղբա՛յր իմ,— կեղծավորեց փաշան։— Բայց ալլահին փառք, որ շուտ կանխեցինք աղետը, որ քեզ ու քո տանը ձեռք չեն տվել անհնազանդները, զավակները։ Քո հարստությունից մի թել չի պակասի։ Երդվում եմ մարգարեի նամազի անոթով, որ քո քաղաքին քաղցր աչքով կնայեմ։

Փաշան իր այս երդումը կատարեց։ Մելիք Մուսին գոհ էր, որ կարողացավ փրկել իր ունեցվածքն ու քաղաքը։ Գոհ էին մյուս վաճառականները ևս։

Նույն օրվա կեսօրին թուրքերը դուրս եկան քաղաքից ու բանակ

դրին Արաքսի ափին՝ բաց դաշտում։ Երկյուղ կրեցին Մխիթարից։ Կգա և քաղաքը կպաշարի։ Այդ խորհուրդը փաշային տվեց մելիք Մուսին։ Դրանով նա կամենում էր նաև քաղաքից հեռացնել զորքը, բնակչությանը նոր կոտորածից զերծ պահելու համար։

Թուրքերն իրենց հետ տարան գիշերը հափշտակած կողոպուտն ու չունևոր ընտանիքներից վերցրած բազմաթիվ գերիներ։

Վերջում քաղաքից դուրս եկան փաշան ու մոլլաների ոհմակը։ Մեծ մոլլան գոտուց կապել էր Թովմա հարյուրապետի շլինքին դրած պարանը։ Ուռած, տառապանքից խամրած Թովման չէր կարողանում նայել փողոցներում ցրված դիակներին։ Աչքերը փակում էր, շրթունքները անեծքի խոսքեր էին շշնջում միայն։ Երբ հասան գերի աղջիկների խմբերին, Թովման մի կերպ բերանը բաց արեց ու կանչեց.

— Քույրիկնե՛ր, աստծու սիրո՜ւն, ասացեք, ո՞ւր է պղնձաքարցի Գոհարը։

— Նա փախել է, ազատվել է իր զինվորների հետ,— պատասխանեցին նրան։

Թովմայի այլանդակված դեմքին մի դառը ժպիտ գծագրվեց։ Խոր հոգոց հանելով՝ ինքն իրեն ասաց։ «Այժմ պատրաստ եմ սիրով տանելու նահատակի խաչը։ Գոհարս ազատված է, Գոհա՜ր...»։ Նա լաց եղավ։

Կանգ առան Արաքսի ափին։ Թովման հասկանում էր, որ իր վերջը եկել է և դրանից նա, ասես հրաշքով, վերականգնեց իր կորցրած ուժերը։ Մեծ մոլլան նստեց գետափին, ծառերի տակ՝ ագուլիսյան խաս գորգի վրա։ Նրա ծնկներին կիսաուշաթափ ընկած էր մի մանկամարդ աղջիկ՝ ոսկեգեղձան մազերով, բաց կրծքով, միայն մի թափանցիկ շապիկ հագին։ Թովման երեսը շուռ տվեց թշվառ աղջկանից։ Մոլլան աղջկան ծածկեց մետաքսե վերմակով (դարձյալ Ագուլիսի կանանց ձեռագործ) ու իր դեմքը թթվեցնելով՝ խոսեց.

— Լսիր, գյավո՛ւր, վերջին անգամ եմ ասում՝ կամ հենց այս պահին փոխիր քո սուտ հավատն ու դարձիր մեր կրոնի, կամ հիմա կսատկես։

— Իմ աստվածն իմ ժողովուրդն է։ Ես չեմ դավի նրան,— պատասխանեց Թովման։

Վրանի շուրջը խռնված թուրքերը մոմոացին։

— Տարե՛ք,— հրամայեց մեծ մոլլան ու կռացավ աղջկա վրա։

Թովմային տարան։ Դաշույններով խոցոտեցին նրա մերկ մարմինը։ Ապա սուր-սուր խիճ փռեցին գետնին և նրան տապալելով՝ գցեցին խճի վրա, հրախառն մոխիր լցրին նրա կրծքին։ Բայց ապարդյուն. Թով-

ման համառում էր։ Նրան կապոտեցին ծառից, խոցոտեցին, վերքերի մեջ աղ լցրին։

Երբ տեսան, որ նա հաստատուն է իր հավատին, թրով կտրեցին ձեռքերը, վայր գցեցին ու քարերով սպանեցին։

ՀՐԴԵՀԸ ՏԱՆ ՄԵՋ

Թուրքական բանակն Ագուլիսի դաշտից շարժվեց դեպի Սյունիքի խորքերը։ Գնում էր դանդաղ, զգույշ։ Շաբաթներով խրվում էր լեռնանցքների նեղուցներում, իրար կտրտող խճճված կիրճերում։ Հայերը մանր ջոկատներով փակում էին կիրճերի անցքերը։ Թուրքերն օրեր էին կորցնում, մինչև կարողանում էին հաղթահարել նրանց համառ դիմադրությունը։ Սաստիկ դիմադրության էին հանդիպում, մանավանդ, լեռան ծերպերին կուտակված գյուղերում, որոնցից յուրաքանչյուրը մի-մի բերդի էր նման։ Ճանապարհներ չկային։ Ստիպված եղան ծանր թնդանոթները թողնել Արաքսի ափին։ Աբդուլլահ փաշան կատաղել էր։

— Այս ի՜նչ անիծված երկիր է,— գոչում էր նա միշտ իր հետ գնացող մելիք Մուսու վրա։— Ո՛չ ճանապարհ կա, ո՛չ թեկուզ մի թիզ հարթավայր։

— Համբերի՛ր, ողորմա՛ծ փաշա,— հույս էր տալիս մելիք Մուսին,— Հալիձորը հեռու չէ, պետք է առնել Հալիձորը։ Միայն այն ժամանակ կգլխատվի այս լեռնաշխարհը։ Հայերի զորքը սակավաթիվ է։ Հենց որ առար Հալիձորը, մելիքները կլքեն գահերեց զորավարին ու կգան քո ոտքը։

Զորքը տրտնջում էր, ձիերը չէին դիմանում, ընկնում էին տասնյակներով։ Մեծ զոհերի գնով գրաված գյուղերում ուտելիք ու կեր չէին գտնում. միայն սոված շների ու կատուների էին հանդիպում։ Բարկությունից թուրքերն ավերում էին տները, կտրտում խաղողի ու խնձորի այգիները, արտերը հրդեհում։

Ցերեկը դեռ տանելի էր։ Բայց հենց որ վրա էր հասնում կույր գիշերը, լեռների ու ձորերի ծալքերից խփում էին հայերը։ Եվ որտեղի՞ց էին լույս ընկնում այդ հայերը։ Անսպասելի գրոհով հանկարծակի մխրճվում էին նեղ ձորերում երկարած բանակի մեջ ու կոտորած անում։ Թվում էր՝ ծնվում են խավարից ու անհետանում՝ հենց որ լուսանում էր։ Բանակի առաջակալ ջոկատները ոչնչանում էին անհետք։

— Սրանք իմ զորքը կուտե՞ն...— գոռում էր փաշան։

— Մի՛ վհատվիր,— գլուխ էր տալիս Մուսին։— Եթե դու որոշել ես մեկընդմիշտ կոտորել Մխիթարի դիմադրական ուժը, ապա պետք է առնես Հալիձորը։

Հուլիսին թուրքերը պաշարեցին Մեղրի գյուղաքաղաքը։ Սակայն տասը օրվա անընդմեջ գրոհները արդյունք չտվին։ Գյուղաքաղաքի անառիկ դիրքն օգնում էր պաշարվածներին։ Նրանք պարիսպների վրայից ծաղրում էին թուրքերին, խփում թնդանոթներով, վառած լաթեր նետում։ Փաշան փորձեց խաբել մեղրեցիներին։ Երկու մոլլա ուղարկեց նրանց հետ բանակցելու։

Մոլլաները Ղուրանի վրա երդվեցին, որ ոչ մի վնաս չեն տա գյուղաքաղաքին, եթե պաշարվածները զենքը վայր դնեն ու հնազանդվեն սերասկյարին։ Մեղրեցի Կոստանդին զորապետը, մոլլաներից խլեց Ղուրանն ու նրանց աչքի առաջ նետեց աղբանոց, մոլլաներին կախեցին պարսպից։

Մելիք Մուսու խորհրդով Աբդուլլահ փաշան տասը հազարանոց մի զորագունդ թողեց Մեղրու տակ և Արաքսի ափով բանակը տարավ դեպի Հալիձոր։

Հալիձորը պատրաստ էր դիմադրելու։

Մխիթարը Արաքսի ափից սկսած բոլոր ամրոցներում ու բերդերում փոքրիկ կայազորներ դրեց, ապահովեց ուտեստով ու հրամայեց՝ դուրս չգալ բերդերից ու հնարավորին չափ շատ թուրքական զորք մեխել նրանց պատերի տակ։ Նա վճռել էր բաց դաշտում ճակատամարտ չտալ Աբդուլլահին, այլ բաժան-բաժան անելով նրա բանակը, քաշել երկրի խորքն ու սկսել լեռնային մի տևական պայքար։ Բոլոր տղամարդիկ մտան աշխարհազորային գնդերը։ Զենք էին վերցնում նույնիսկ այնպիսիները, որոնք իրենց կյանքում հավ էլ չէին մորթել։ Զինվում էին եռաժանիով, խաչերկաթով, բահերով, ծանր մահակներով։

— Գնանք երկրին ապավեն,— ասում էին միմյանց։— Գնանք՝ կամ ապրելու, կամ մեռնելով՝ հավիտյան ազատվենք աստծո ուղարկած պատժից։

Կանայք մանր երեխաներին կապեցին շալակներին ու հնձեցին հասած արտերը։ Դատարկվեցին մետաքսի ու կտավի գործատները, պղնձի ելքերը, դարբնոցների քուրաները մարեցին, բրուտանիվները կանգ առան։ Բոլորը գնացին կռվի։

Հալիձոր եկավ նաև Պղնձաքարի ծերունի մելիք Թուրինջը՝ ետևից երկու հարյուր շինական։ Մտնելով քաղաք, որոնեց որդուն։ Նրան ասացին, որ Թովման նահատակվել է գերության մեջ։ Ծերունին լաց չեղավ.

գնաց եկեղեցի, փովեց սալահատակին ու երկար աղոթեց որդու հոգու համար։ Ապա մոտը եղած դրամը բաժանեց մուրացկաններին ու գնաց հարսին որոնելու։

Արաքսի կողմերից ամեն օր սուրհանդակներ էին հասնում Հալիձոր։ Նրանք թուրքերի շարժման մասին մանրամասն տեղեկություններ էին բերում Մխիթարին։ Մխիթարն աշխարհազորային գնդեր էր ուղարկել Ողջի գետի ձորը՝ նեղ անցքերը բռնելու, մանր հարձակումներով կասեցնելու թշնամու առաջխաղացումը։

Մելիք Թուրինջը հարսի գունդը գտավ Ողջի ձորի բերանում։ Գոհարն ընկավ կեսարի գիրկը։

— Եկել ես որդուդ վրե՞ժը հանելու, հա՛յր,— հարցրեց՝ խղճահարված նայելով ուժից ընկած ծերունուն։

— Բոլորի՞նը, աղջի՛կս, բոլորի վրեժն առնելու եմ եկել,— տնքաց ծերունին։— Եկել եմ քեզ թիկունք։

Հարս ու կեսրար այլևս չխոսեցին Թովմայի մասին։ Ծերունին ահով էր նայում հարսին։ Զենքերի ու տարօրինակ զգեստների մեջ Գոհարն ավազակապետի էր նմանում։ Նրա դեմքն այրվել էր արևից ու լեռնային քամիներից, ձեռքերը կոշտացել էին, աչքերում դաժանություն կար։ «Տե՛ր աստված, այս ի՞նչ օրի հասցրիր մեզ»,— մտածում էր ծերունին, տեսնելով, թե ինչպես է հարսը տղամարդկանց հրամաններ տալիս, կարգադրություններ անում։

Գոհարի գունդը տեղավորված էր ձորալանջին, մոշի ու մասրենու խիտ թփուտների մեջ։ Իրիկնահացի համար կրակներ էին վառել, մի-մի էին խորովում։ Հենց որ մութն ընկավ, Գոհարը հրամայեց պատրաստվել երթի։ Նա հեծավ իր սևաթույր նժույգը, նայեց կեսրարի մատակին ու ժպտաց։

— Է՛... Հայրի՛կ, այդ խեղճուկրակին ինչո՞ւ ես բերել։

— Հը՞։ Դե, ի՞նչ իմանամ,— շփոթվեց ծերունին։— Լավերն ուղարկել եմ Հալիձոր՝ սա էր մնացել։

— Ցավ չէ,— ժպտաց հարսը։— Թուրքերից կխլենք։ Միայն չսարսափես նրանցից, հա՛... Մեզ մոտ վախկոտներին կախում են։

Լեռնային կածաններով զորագունդն իջավ դեպի Արաքս։ Գնում էին գրեթե խարխափելով։ Շուտով հասան մի անմարդաբնակ գյուղ։ Կանգ առան։ Նախօրոք ուղարկած լրտեսները եկան ու Գոհարին հայտնեցին, որ թուրքական մի մեծ զորագունդ բանակել է Ողջի գետի ափին՝ շերամորդի թթաստանի մեջ։

— Մելիք Մուսին նրանց հե՞տ է,— հարցրեց Գոհարը։

— Ո՛չ, տիրուհի։ Դավաճանը փաշայի մոտ է՝ Զավնդուրի կողմերին։

— Հը՞մ... Ձեռքս կընկնի, անշուշտ...

Կարճ դադարից հետո իջան ցած։ Լուսինը դուրս եկավ Եղավարդի լեռան ճեղքից ու կարագի գույնով ներկեց ձորերը։ Հասնելով ձորաբերանին՝ գունդը կանգ առավ։ Ցածում՝ Ողջի գետի ափին դեռ մարմրում էին թուրքական բանակի խարույկները։ Գոհարն իր տասնապետներին ասաց.

— Հարձակվում ենք հանկարծակի, թափով։ Խուճապ կգցենք թշնամու բանակում և կսկսենք գործը։ Իմացեք, գետի մյուս կողմին դարանած է Եսայու և Զարմանդի գունդը։ Գրոհի ազդանշանը նրանք են տալու՝ բվի երեք կռավոց։ Զմոռանաք։

Տասնապետները գնացին։ Գոհարը նստեց մի քարի՝ մերկ թուրը ծնկներին։ Հոգնած էր, զրահը սեղմում էր լիքը կուրծքը, սաղավարտը ճնշում էր գլուխը, ոտքերը թույլ նվում էին... Բայց աշխատում էր վանել հոգնածությունը։ Սրտում ուրիշ կրակ էր մխում։ Նեղացած էր Մխիթարից։ Օտարի պես չոր ու անտարբեր է դարձել, նույնիսկ չեկավ իրեն մխիթարելու՝ ամուսնու մահվան առթիվ։ Զգում էր, որ սպարապետը խուսափում է իրենից, իսկ ինքն այնպե՞ս մենակ է զգում իրեն, այնպե՞ս է ցանկանում խոսել նրա հետ, դատարկել դառնացած սիրտը։ Ա՜խ, տե՛ր աստված, մինչև ե՞րբ պիտի շարունակվի այս տառապանքը։ «Մա՛հը, մահը միայն վերջ կտա իմ տանջանքներին»,— հաճախ ինքն իրեն կրկնում էր Գոհարը և ճակատամարտի մեջ որոնում այդ մահը...

Գետափի կրակները հանգան։ Լուսինն արդեն թեքվել էր Գեղվա լեռան վրա։ Գիշերային սառնությունն զգացնել տվեց իրեն ու թմրարար քուն բերեց... Քունն ընկճում էր Գոհարին, երբ դիմացը լեռնալանջից բվի կռնչոց լսվեց։ Գոհարը քարից վեր կացավ։ Կռնչոցը նորից կրկնվեց։ Գոհարը բարձրացավ ձիու սառը թամբին։ Իսկ երբ լսվեց բվի երրորդ կռնչոցը, նա թուրը ճոճեց օդում։

— Իմ ետևի՞ց...— կամաց հրամայեց նա ու ձին թոցրեց դեպի մարող կրակները... Մի քանի րոպե հետո նա արդեն գետափին էր։

Թուրքերի բանակում իրարանցում ընկավ։

— Գյավուրնե՞րը...— գոռացին պահապանները։

Կրակների մոտ մրափած ասկյարները վեր թռան ու նետվեցին դեպի անհանգստացած ձիերը։ Գոհարի առջևից մի սև կերպարանք փախավ։ «Հանուն Թովմայիս...»,— մտքում ասաց Գոհարն ու թուրն իջեցրեց փախչողի գլխին։

— Յա՜ Օսման... Յա՜ Աբուբեքիր[1],— բղավեցին Թուրքերն ու նետվեցին դեպի ձիերը։

Բայց նրանցից քչերին հաջողվեց ձի հեծնել։ Գիշերային հանկարծակի հարձակումը շփոթմունք էր առաջացրել։ Չէին կարողանում մարտակարգ ստեղծել։ Հայերը խփում էին երեք կողմից։ Մելիք Թուրինջի հետևակ շինականները խոցում էին նիզակներով, եռաժանիներով, հարվածում երկար, սուր բահերով... Թուրքերի մի մեծ խումբ կարողացավ մարտակարգ կազմել։ Սակայն գետի մյուս ափից նրանց վրա ընկան Եսայու և Զարմանդի աշխարհազորայինները և ցրեցին իսկույն։

Թուրքերի ճամբարը մխրճվելով՝ հայերն սկսեցին կոտորել։ Նրանց մանր ջոկատները հարվածում էին անսպասելի, նույնպես անսպասելի ետ էին քաշվում և նորից հարվածում... Գիշերային մարտից ծեծկռտված Թուրքերը չդիմացան, լքեցին իրենց ճամբարն ու խուճապով նահանջեցին դեպի Արաքսի կողմերը։ Հայերը մի փոքր ևս հետապնդեցին նրանց, և միայն լուսաբացին դադարեցրին մարտը։ Ետ դառան, հավաքեցին Թուրքերի թողած վրանները, զենքը, ձիերը։ Գոհարը հրամայեց ոչ մի գերու կենդանի չթողնել։ Սրահար արին նույնիսկ վիրավորներին։ Շինականներն «ա՜խ» արին։

Աշխարհազորականներն շտապ վերջացրին գործն ու բարձրացան լեռները։ Թուրքերից խլած աշխետ ձիու մեջքին սնգանգում էր ծերունի Թուրինջը։ Հիացած նայում էր հարսին։ «Մելիքությունը սրան է սազում,— մտքում ասում էր նա։— Ես ի՜նչ մելիքացու եմ»։

Երբ արևը ծագեց, աշխարհազորայիններն արդեն հասել էին Գեղանուշի անտառոտ լեռները։ Գոհարը հրամայեց դադար առնել։ Սպասում էր Մխիթարի նոր հրամանին։

* * *

Բայց Մխիթարն ինքը եկավ Հալիձորից։ Նա իր հետ բերել էր գրեթե ողջ զորքը։ Հալիձորը թողել էր Տեր-Ավետիսի տնօրինության, նրան հանձնելով ընդամենը հազար զինվոր և քաղաքի զինված բնակչությունը։ Վստահ լինելով Հալիձորի ամրությանը, Մխիթարը հեռացել էր այնտեղից, նպատակ ունենալով կիրճերում ու անտառներում կասեցնել Աբդուլլահի բանակը, կռիվը ձգձգել, մինչև վրա հասնի լեռնաշխարհի ծանր ձմեռը։ Ձմեռը Աբդուլլահը դրսից օգնություն չի կարող ստանալ, և ինքը բոլորովին կմաշի նրա բանակը։ Մխիթարի հետ էին մելիք Բարխուդարը, Դիզակից Սյունիք փախած մելիք Եգանը, Շաֆռազը, ինչպես և Բայանդուր իշխանն իրենց գնդերով։

Կեսօրն անց էր, երբ գահերեց զորավարի բանակը հասավ Գեղանուշի լեռան ստորոտը։ Մխիթարը, չշնորհավորեց ո՛չ Եսայուն, ո՛չ Զարմանդին, ո՛չ էլ նրա մի քաղցր հայացքին սպասող Գոհարին։ Զորքը հազիվ էր մի փոքր շունչ քաշել, հազիվ էին կերակրել ձիերը, երբ նա իր հետ բերած գնդերին հրամայեց շարժվել։ Հեծնելով ձին, նա դարձավ աշխարհազորայիններին.

— Ի՞նչ ասեմ, եղբայրնե՛ր։ Ինքներդ եք տեսնում, որ նորից մեր տունն է մտել գազանը։ Բայց թող ձեզ չվախեցնի նրա վայրենի մռընչոցը։ Հիշեցեք, որ դուք հայ եք ու հին, ինչպես այս լեռները։ Նաև հիշեցեք, որ մենք ապրել ենք դիմադրելու կարողությամբ։ Ով թշնամուն դիմադրել գիտի, նա կապրի։ Նորից մենք ելել ենք մեր աշխարհին պաշտպան՝ հաղթության հավատի վահանով։ Ազգովի կանգնել ենք վտանգի դեմ և ազգովի էլ կապրենք։ Ձեզ օրինակ երեկվա ձեր կատարածը։ Ձեր առջևից փախել է ձեզանից տասնապատիկ առավել բազմաքանակ բանակը։ Շարունակեցեք, ուրեմն, ցերեկը դարանամուտ լինել, ապա գիշերային մարտերով պահպանել Հալիձորի մատույցները։ Քաջալերվեցեք։ Մեր զենքից բացի, մենք ուրիշ պահապան չունենք։ Աստված ընդ ձեզ։

Նա, ձեռքը թափահարելով՝ հրաժեշտ տվեց աշխարհազորային գընդերին ու իր հետ բերած բանակով մեկնեց դեպի Զավնդուր գավառը։

Խավարն ընկավ, բայց դա չկասեցրեց Մխիթարի արագ երթը։ Նա իջնում էր դեպի Աբդուլլահի հիմնական բանակը, որ նստած էր Զավընդուրի նեղ հովտում։ Շուտով թուրքաց բանակն ուղարկված լրտեսները վերադարձան և հայտնեցին, որ Աբդուլլահի հիսուն հազարանոց բանակը ծայրից ծայր բռնել է Զավնդուրի հովիտը։ Փաշան մտադիր է շարժվել դեպի գետի հոսանքն ի վեր։ Մխիթարը զորավարներին հավաքեց ու հենց ձիու վրայից հայտնեց իր միտքը։

— Երկու հազար հինգ հարյուր ձիավոր վերցնում եմ ինքս,— ասաց նա։— Եղավարդի լեռներով կիջնեմ Արաքսի հովիտը, կշրջվեմ դեպի Աբդուլլահի բանակն ու աջ թևից կհարվածեմ նրա միջոցին։ Դուք Բայանդուր իշխանի գլխավորությամբ, գնացեք ձորն ի վար, վառեցեք—պատրաստեցեք ձեզ և թուրքին խփեցեք ճակատից։ Արգելում եմ ցերեկով բախվել նրա հետ։ Հարվածեցեք միայն գիշերը։ Ցերեկը թաքնվեցեք անտառներում ու կիրճերում։ Փա՜ռք աստծուն, թաքստոցներ՝ որքան ուզեք կան։ Խփեցեք գիշերով տարբեր տեղերից։ Կարճ հարվածից հետո իսկույն ետ քաշվեցեք՝ նորից հարվածելու համար։ Փաշան իր այդքան

[1] Մուհամմեդի հաջորդները՝ ըստ մահմեդական սյունի աղանդի։

բազմամարդ զորքը չի կարող համախումբ պահել։ Նրա գնդերը խրվել են կիրճերում։ Ճանապարհները քանդեցեք, կամուրջներն ավերեցեք։ Անդադար կապ պաշտպանեցեք գետի մյուս կողմին կովող Եսայու և Գոհարի աշխարհազորայինների հետ։ Աչքից չգցեք ռամիկներին, մենակ չթողնեք, թե չէ ձեռքիցս չեք պրծնի։

Խոր շունչ քաշեց, կարոտով նայեց իրեն անծպտուն ունկնդիր զորապետներին։ Հառաչեց աննկատելի։ Վերադարձին ո՞րի մահվան բոթը կլսի։ Մի վայրկյան աչքերը փակեց և ապա շարունակեց նորոգված ձայնով.

— Մեր նպատակն այս է՝ թշնամուն թույլ չտալ մոտենալ Հալիձորի պատերին, մինչև ձմռան գալը նրան խեղդած պահել ձորերում։ Այդ դեպքում Աբդուլլահին կկտրենք իր թիկունքից ու կխփենք՝ մենք նրա մեջքից, Տեր-Ավետիսը՝ քաղաքից։ Այս ձևով կոչնչացնենք գոռոզ Աբդուլլահի բանակը։ Մնացեք բարյա՛վ...

— Գնաս բարո՛վ, գահերե՛ց։ Ց՝նոր տեսություն,— հուզված պատասխանեցին զորապետները։

Մխիթարը գնաց։ Զորապետները հասկացան, որ նա մեծ բանակի դեմ կռվելու միակ և ճշմարիտ ձևն է ընտրել։ Կռվի այդ ձևը փորձված էր դեռևս Դավիթ-Բեկի ժամանակներից։

Մխիթարն իր այրուձին սլացքով տարավ դեպի Եղավարդի մթին լեռները։ Բայց երբ արդեն բավականին հեռացել էր բուն բանակից՝ շեշտակի շուռ եկավ աջ ու չվեց դեպի Մեղրու կողմերը։ Երկրի ապավեն գնդի մարտիկները զարմացան նրա այդ անսպասելի արարքից։ Չէ՞ որ պիտի գնային դեպի Աբդուլլահի բանակը։ Ապա ո՞ւր են թեքվել, ո՞ւր է տանում իրենց Մխիթարը։

Գետն անցնելուց հետո Մխիթարը հրամայեց արագացնել երթը։

Սկսվեց մի խելագար արշավ։

* * *

Եսային ու Զարմանդն իրենց գունդը տարան Գայլակալ մեծ գյուղը, որ ժայռեղեն մի թերակղզու վրայից իշխում էր Ողջի գետի մատույցներին։ Գյուղն ամայի էր։ Թոնիրների անուշ բուրման փոխարեն, նա լցված էր լռության ողբով։ Այդ գյուղի բնակիչները ևս չվել էին դեպի Ծղուկի լեռները։ Կանգ առան ընկուզենիներով ծածկված խորունկ ձորում։ Ներքևում Ողջին էր։ Սպասեցին թշնամու երևալուն։

Մութն ընկավ. երկինքը տեղ-տեղ ամպամած էր։ Հեզ լիալուսինը երբեմն դուրս էր գալիս ամպի տակից, ամոթխած հարսի նման մի պահ

ժպտում աշխարհին, և ապա, ասես, վախենալով անպարկեշտ հայացքներից՝ նորից թաքնվում ամպերի տակ՝ ոսկեզօծելով նրանց ցրիվ ծվենները։

Խաղաղ ու սքանչելի գիշեր էր։

Լուռ էր Սյունյաց աշխարհը, լուռ էին՝ Գայլակալ գյուղը, ընկուզենիների տակի ջրաղացը, անտառը։ Ամռան թմրեցուցիչ գիշերվա լռությունը խախտում էր միայն դեպի կիրճը գահավիժող գետակը, որ, ժայռերին զարնվելով՝ հառաչում էր անվերջ...

Լուսադեմին Եսային գնդի տնտեսին հրամայեց ուտելիք բաժանել զինվորներին։

— Ափսո՞ս գինի չկա,— հառաչեց Սեմեոնը՝ իր բաժին հաց ու պանիրը և մի բուռ խաշած բակլան դնելով ծնկներին։— Ամա կխմեի, հա՞...

— Հա՛, էլի՛,— նրան չանչ արեց Զարմանդը։— Բա սիրտդ յախնի-փլավ չի ուզո՞ւմ։

— Ինչո՞ւ ոչ,— հառաչեց Սեմեոնը։— Զատկի փլավը միտս ընկավ։

— Հրե՛ն, թուրքը գալիս է քեզ մի էն տեսակ զատկի փլավ ցույց տա, որ համը չմոռանաս հավիտյան։

— Գալիս է, թող գա,— նեղացավ Սեմեոնը։— Ի՞նչս եմ կորցնելու, էս չորացած մարմի՞նս։ Թող կորչի։ Բայց, հրեղ քեզ եսիր կանեն։ Ոնց որ խմորի գունդ լինես։ Թուրքի համար գիժ տղերք կբերես, հա՞...

Քնից նոր արթնացած, դեռ ճմլկոտացող շինականները հռհռացին։

— Բերանդ աղբով մի՛ բաց անի, ուզո՞ւն ախմախ, սուրբ լույս է,— վիրավորվեց Զարմանդը։— Եթե ամեն տղամարդ քեզ նման հաչա, բոլոր հայ կնանիք եսիր կընկնեն։

— Մի՛ դիվոտիր, քույրս,— մեղմ ասաց Սեմեոնը։— Ախր մի բերան էլ ա կատակ անենք, թե չէ մարդ ճաքում ա ամեն օր արյուն անելուց։

Պանիր-հացն ու բակլան կերան, մնացորդներն ածեցին գրպանները ու թիկն տալով քարերին՝ սպասեցին։ Թշնամին չէր երևում. ոմանք նորից փակեցին աչքերը՝ ննջելու հույսով։ Մյուսները մտան ժայռերի ճեղքերը, կուչ եկան ընկուզենիների ոլորուն, հողից ելած արմատների արանքում ու տապ արին։ Ո՛չ կատակ անելու սիրտ ունեին, ո՛չ զրուցելու։ Սպասում էին լարված, աշխարհից ու առօրյա հոգսերից վերացած։

Եսային թիկնեց Զարմանդի կողքին, նիզակը հենեց ծառի բնին։ Առաջին անգամ ցանկություն ունեցավ մոտ լինել Զարմանդին, գլուխը դնել նրա ծնկներին ու նայել նրա ցորնագույն դեմքին... Ինչի՞ց էր այդ ցանկությունը, չէր կարողանում որոշել։ Զարմանում էր, թե ինչպես դա հանկարծ ծնվեց իր մեջ։ Առաջին անգամ Զարմանդին նայեց իբրև կնոջ, որը բացի կռվելուց, ճղճղալուց, մի ուրիշ քաղցրություն էլ ունի։ Խըղ-

ճաց նրան՝ ձեռքերը ճաքճքած, արևից այրված այդ կնոջը, որ ահա գլուխը թեքել է կրծքին ու ննջում է... Առաջին անգամ զգաց, որ նրանից մի անուշ բուրմունք է գալիս։ Ի՞նչ բուրմունք է դա։ Մի՞թե նա իր ծոցում չորացած սուսամբար է պահում։ Եսայու սիրտը թրթռաց, և նա իրեն հազիվ զսպեց, որ չկռանա, չհամբուրի իր ընկերուհու ծունկը։

Արևի ցնցուղը կպավ սարերի կատարներին։ Թփուտում ճկացին դեղնարորիկները։ Անուշ բուրեց վայրի մրկենին։ Ժայռից կախված մասրենու թուփը թեթևակի օրորվեց, ցող թափեց նրա տակ ննջող զինվորի փափախին։ Եսային երկար նայեց մասրենուն։ Թփի արմատները խրվել էին ժայռի կուրծքը։ Պարանի պես մի երկար, ոլորուն արմատ ժայռի լանջով իջել էր մինչև հողն ու մտել նրա մեջ։ Դա էր այն սննդաբեր երակը, որ թուփը դալար էր, ու ծաղիկներն այնքան սպիտակ, որ ասես վառած մոմեր էին՝ կանաչ մոմակալների վրա։

Եսային մերթ նայում էր մասրենու արմատին, մերթ նրա ս.ակ լուռ, անշարժ նստած Սեմեոնին։ Սրա վզի ծուռումուռ, գորշ ջիլերն էլ կարծես մասրենու արմատներ լինեին։ Մի դաժան բան կար իր ողջ կյանքում անտուն, թափառական Սեմեոնի դեմքին, որը և՛ ահավոր էր դարձնում նրան, և՛ խղճալի։ «Արդեն հինգ տարի է, ինչ այս դժբախտ մարդը կըռվում է,— մտածեց Եսային։— Բայց ի՞նչ է վաստակել։ Միայն երկու վերք ու Մխիթարի գովասանքները։ Հողապատառ են տվել, չի վերցրել, ո՞վ մշակի, ե՞րբ մշակի։ Եվ ինչո՞ւ է կռվում այս քամու պես անհանգիստ մարդը։ Իսկ ինքն ինչո՞ւ է կռվում։ Ինչո՞ւ են կռվում թուրքերը, պարսիկները։ Քի՞չ է աշխարհի հողը։ Հրե՜ն, արևի մի ծագից մինչև մյուս ծագը հող է։ Բոլորի ապրուստին հերիք կանի։ Թող, ուրեմն, ապրեն հողի բարիքներով, առանց միմյանց սպանելու։ Ինչո՞ւ է այս զարհուրելի սպանդը։ Նույնիսկ գեղեցկուհի Գոհարն է եկել կռվելու։ Նա ինչո՞ւ է եկել. հայրենիքի համա՞ր։ Ո՞ւր է այդ հայրենիքը։ Ո՞վ է թողնում, որ հայը հայրենիք ունենա։ Հա՜յը... Ի՜նչ անբախտ ազգ է այս. հայը։ Քարերի վրա է ապրում, բայց դա էլ են ուզում խլել։ Եվ ինչո՞ւ ուրիշներն իրավունք ունեն հայրենիք ունենալու, բայց հայը՝ ոչ։ Մովսես աբեղան ասում էր, թե մենք էլ ենք ունեցել մեր մեծ հայրենիքը։ Ո՞ւր է, ո՞վ է խլել, ինչո՞ւ են խլել, ինչո՞ւ խլել են, հապա ինչո՞ւ չեն ետ տալիս...»,— մտածում էր Եսային, բայց չէր կարողանում պատասխան գտնել։

Արևը հասավ անտառին։ Ջրաղացներից ներքև՝ սարալանջին բռնկվեցին գարու ցրված արտերը։ Նրանց մի մասը հնձած էր, ու դեզերը ժանգոտել էին։ Ո՞վ պիտի հնձի մյուս մասը։

Զինվորները արթնացան, խոնվեցին Եսայու և Զարմանդի շուրջը։ Եկավ նաև մի աչքը կույր գուսան Հեթումը։ Եսային հիշեց, թե տարիներ առաջ ինքն ինչպես էր գոռգոռում նրա վրա, երբ սա սրտակեղեք երգ էր երգում խոզարածների մոտ։ Այն ժամանակ կարծում էր, թե այլևս կռիվ չի լինի։ Զղջաց, սիրտը ճմլվեց։

Գուսանը կաշվե տոպրակից հանեց կարկատած սազն ու սկսեց ծլնգացնել։ Նրա նվագը խորթ հնչեց։ Ի՜նչ նվագ այս դաժան օրերին։ Բայց և այնպես ականջ դրին։ Մի տակավին երիտասարդ գաղթական ձեռքի եռաժանին դեն նետեց, գուսանից խլեց նրա սազն ու, եռանդով նվագելով՝ երգեց չարացած, բողոքով.

Նստեմ, աղաչեմ աստծուն,
Որ ինձի տա աղավնու թև,
Թռչեմ, լուսածեգին հասնեմ
Իմ յարոչ երդիկն ի վերև,
Իջնեմ ու պագիկ առնեմ
Դնչիկից ներքև ու վերև...

— Ա՜խ, կրակված սրտիկիդ մեռնեմ, ասի՞ր տարած բալա։— Կորած աղջկան հիշելով՝ խոր հառաչեց Զարմանդը ու լաց եղավ։ Գորգին մորը պատմել էր Մարոյի հետ կատարվածը։ «Զիմացա՝ սպանվե՞ց, թե՞ ասիր տարան»,— ասել էր նա։

— Մի՜նն էլ, մի՜նն էլ, զարի՜բ Պարգև,— խնդրեցին սյունեցիները։

Զարմանդը սրբեց աչքերը։

— Բարակ սիրտ ունես, Զարմա՜նդ,— գլուխն օրորեց Սեմեոնը։

— Ա՜խ, ի՜նչ անեմ, Մարոյիս կորցրի, թառլանի՜ս,— ծնկները տրորեց Զարմանդը։— Սա էլ ջահել է, տնից-տեղից վերան, պանդուխտ։ Սև դառնա պանդուխտ անողի օրը...

— Ջահել են, հա՜...— հուզվեց նաև Սեմեոնը։— Դե, էլ ո՞վ ցավ չունի մեզանում, քո՛ւյրս։ Աստված տղիդ պահի։ Դու դեռ մեկն ունես, բա ե՞ս... Հրես ժողովրդով, տեղով-ցեղով եկել ենք, որ հավալասան թռչունի պես կրակին զարկենք մեր սրտերը։ Թող արյունս գնա, միայն երկիրն ապրի, երկի՜րը...

Ուրիշներն էլ երգեցին։ Տխուր, թախծոտ էր շինականների երգը, որի մեջ սակայն մի մեծ բողոք կար, մի դաժան հառաչանք, որից մարդ և՛ թևաթափ էր լինում, և՛ լցվում ցասումով...

Շինականների երգը կտրվեց։ Ողջի գետի ափերն ուղարկած հետախույզները մի թուրք գերի բերին։ Եսային նույնիսկ չնայեց նրան։ Թրթռվեց՝ թանձր հոնքերը կիտելով։ Օրն այնքա՜ն խաղաղ էր, ու երգն այն-

պե՞ս սրտառուչ, որ կարծես աշխարհում ոչ ոք ոչ ոքի թշնամի չէ, և հիմա իրենք վեր կկենան ու կսկսեն հնձել կիսատ թողած արտերը։ Գերուն գցեցին Եսայու ոտքերի տակ։ Հարյուրապետը սևեռուն նայեց հետախույզներին։

— Գիշերս բռնեցինք,— պատմեցին սրանք։— Գետափով հասանք մինչև թուրքի բանակը և բռնեցինք։

Եսային նայեց գերուն։ Սա ճարպոտ դեմք ու խոշոր քիթ ուներ։ Աչքերին նայել չէր լինում։ Լցված էին արյունով։ Երեսն ու գլուխը մաքուր ածիլված էր ու փայլում էր դեղին դդումի պես։ Նրա գոտուց կախված էր այծենի մի փոքր տոպրակ, որի մեջ ջուր էր պահում։ Թուրքը կարմիր կտորից մի ուրիշ տոպրակ էլ ուներ։ Եսային նրա վրայից պոկեց այդ տոպրակն ու ձեռքը կոխեց մեջը. այնտեղից հանեց երևանյան սաներեր, պարսկական ոսկե դրամ, ագուլիսյան արծաթե ոսկեջրած գդալներ, ականջի օղեր, որոնց վրա մնացել էին ականջաբլթակների մսի կտորներ՝ չորացած, սմքած։ Եսայու արյունը գլխին խփեց։ Ոտքով մի ուժգին հարված հասցրեց գերու մռութին։

— Գոնե բլթակը չկտրեիր, գազա՛ն,— գոչեց վայրենի կատաղությամբ։ Թուրքը թևքով սրբեց երեսի արյունը։

Զարմանդը Եսայուց խլեց ականջօղերը. մոտեցրեց աչքերին։ Ծանր հոգոց հանեց... Ո՞վ գիտե՝ Մարոյինն են։ Ցնցվեց. օղերը խփեց թուրքի մռութին։

— Դա՛յլ, գազա՛ն...— մռնչաց խեղդվելով։ Հետո լաց եղավ կրկին։

— Ո՞վ ես,— թուրքին հարցրեց Եսային։

— Կարող ես հարցնել, բայց պատասխանի մի սպասիր,— նետեց թուրքը։

Թուրքին գլխիվայր կախեցին ծառից։ Սեծեցին։ Սա չդիմացավ, աղաղակեց.

— Կասեմ ուզածներդ, բաց թողեք...

Թուրքը պատմեց, որ Աբդուլլահը վճռել է շուտով վերցնել Հալիձոր քաղաքն ու՝ կոտորել բոլոր հայերին։ Հայտնեց, թե որքան զորք կա իրենց բանակում և երբ են բարձրանալու Ողջի ձորով։

— Ուրեմն դուք մեզ ուզում եք կոտորել, վերջացնել, էլի՞,— ցավից կծկվելով՝ հարցրեց Զարմանդը։— Սև քա՞ր եք ուզում դնել մեր ազգի վրա։

— Դուք գյավուր եք,— պատասխանեց թուրքը,— դրա պատճառով էլ դուք ապրելու իրավունք չունեք։ Սարսափելի հարձակման պիտի ենթարկվի նա, ով իսլամություն չի ընդունում։ Դրա համար էլ մենք կոտորում ենք ձեզ, որ ալլահի դրախտի դռները բաց լինեն մեր առջև...

— Հիմա մենք քեզ համար բաց կանենք այդ դրախտի դռները։ Գնա քեֆ քաշի,— հանդարտ ասաց Եսային և թուրքին քարշ տվեց դեպի ժայռի պռունկը։

Շինականներից ոմանք երեսները թեքեցին։ Գուսան Հեթումն արագ հեռացավ։ Զարմանդը հառաչեց։ Թուրքին ժայռի պռնկին կանգնեցնելով՝ Եսային ետ գնաց ու նիզակով շեշտակի հարվածեց նրան։ Թուրքը խոցված ընկավ... Եսային շուռ եկավ, նայեց յուրայիններին, գունատվեց։

— Խղճո՞ւմ եք, հա՞,— գոչեց խեղդվելով։— Կորչելու ազգ եք։ Թշնամուն կարգին ատել չգիտեք։ Իսկ սրա պարկի օղերը տեսա՞ք։ Կանանց ականջների բլթակներն էր կտրել։ Հապա ինչո՞ւ այս շունը չի խղճացել, երբ բռնաբարել է աղջիկներին, մանուկներ մորթել, ականջներ կտրել։ Բաց թողնենք, հա՞։ Թողնենք, որ սուրը մխի իմ կուրծքը՞, գնա՝ թոռնիկիս օրորոցն արյունով լցնի՞։ Հա՞։ Ես ձեզ կսովորեցնեմ, թե ինչպես դատաստան տեսնել ձեր օջախների ծուխը մարողների հետ։ Ով թշնամուն խղճում է, նա իր ձեռքով իր որդու կոկորդն է կտրում։

Նա ժայռի պռնկին տարածված թուրքին գլորեց ձորը...

— Գնա՞,— ցասումով, խղճահարությամբ և, ասես ինչ-որ մեկի դեմ բարկացած՝ գոռաց նա։— Քո տան շեմքին չեմ քեզ սպանում՝ քո օջախի մոտ, քո արտի եզրին։ Մահ ես բերել, մահ էլ ստացիր։

Նա շուռ եկավ, փնչալով նստեց պապանձված ընկերների մոտ. նրա ձեռքերը դողում էին, աչքերը լիքն էին խղճահարությամբ։ «Սպանող ազգ չենք,— խոսեց մտքում։— Եթե սպանող լինեինք, այս օրին չէինք հասնի»։ Երկար ժամանակ նա չէր կարողանում հանգստանալ։ Գլխում մըզձավանջ էր։ Երբեմն նայում էր ժայռի կողմը, որտեղ քիչ առաջ ընկած էր թուրքը։ Հազիվ էր զսպում հեկեկանքը։ Մազ էր մնում ծառս լիներ տեղն ու գլուխը ծեծեր։ Ո՞վ իրեն մարդասպան դարձրեց, ո՞վ։ Ինչո՞ւ։ Մշակ, խաղաղ մարդ էր։ Գազան դարձավ։ Ա՜խ, տե՜ր աստված...

Մայրամուտին ծիրանագույն երկնքի վրա փոշու վիթխարի սյուներ երևացին։ Առաջինն այդ նկատեց Եսային։ «Գալիս են,— մռայլ խորհեց նա. աչքերը չռվեցին, ասես ուզում էին դուրս թռչել ակնախոռոչներից։— Գալիս են մեր այս մի թիզ ժայռերն էլ խլե՞ն։ Գալիս են թոռնիկիս մորթե՞ն, հարսիս ականջաբլթակները կտրե՞ն։ Սպանե՞ն ինձ, Սեմեոնին, Զարմանդին... Հա՞, հա՞... Դե, որ այդպես է, եկեք... Եկեք, է՞... Կտեսնեք...»։ Նրան թվաց, թե իր մտքերն ասաց բարձրաձայն. զարմացած նայեց Ծատուրին։ Լսե՞ց, ի՞նչ կասի։ Բայց Ծատուրը կպել էր քարին ու բերանը բաց նայում էր բարձրացող փոշուն։ Կարծես Ծատուրը ձուլվել էր մամռոտ քարին, քար դառել։ Քիչ առաջ խղճում էր թուրքին, իսկ

հիմա կրակի գունդ է, ուր որ է կթռչի թուրքերի բանակի դեմ։ Եսային խղճաց իր վաղեմի ընկերոջը։ Այնպես խղճաց, որ քթի մուխը ելավ։ Վերջը մի բանի տեր կդառնա՞, այդ տկլորը, միշտ մենակ ու քաղցած Ծատուրը։ Տեղ-տուն կունենա՞, թե հենց այդ գիշեր կընկնի թուրքի յաթաղանից, ու մեկն էլ չի լինի, որ մի բուռ հող գցի վրան։ Հրեն, է՛, գալիս է ամենակուլ թշնամին՝ անխիղճ, լափող, ավերող, արյան ծարավ։

— Պատրաստվեցե՞ք,— գոչեց նա։

Փոշու ամպը դանդաղ մոտենում էր։ Նրա տակը խլրտում էր այլասեռ ու այլալեզու բանակի և ձիերի թանձր զանգվածը։ Գաղթական Պարգևը զարմացած հարցրեց.

— Այդ ի՞նչ է, քեռի Եսայի։

— Թուրքը գալիս է,— պատասխանեց Եսային։

— Թո՞ւրքը,— թուքը կուլ տվեց տղան։— Թուրքը թևավո՞ր է։

— Ո՛չ, նրանք էլ են մեզ նման սողում։ Թևավորները նրանց ուղեկցող գիշատիչ թռչուններն են։ Թուրքի ոտքի տակ հողը չորանում է։ Նրանց վիրավորները սատկում են ձիերի վրա, մնում են ճանապարհին՝ գայլի ու գազանի կեր։ Թուրքերը նրանց չեն թաղում։ Ո՛ր երկնքում ագռավների երամներ տեսնես, իմացիր, որ թուրքը գալիս է։

— Վա՛խ, վա՛խ...— զարմացավ տղան, որ առաջին անգամն էր պատերազմի եկել։— Այդքան էլ զո՞րք կլինի, ոնց որ մորեխ։

— Մորեխին էլ է վերջ լինում,— մռայլ ասաց Եսային։

— Զարհուրելի է,— քրթմնջաց Պարգևը։

Թաքստոցներից հայերը հետևում էին ձորում սողացող թուրքական բանակին։ Մութը վրա հասավ։ Բանակը սեղմվեց, կծկվեց նեղ հովտում։ Ժամանակն է։ Պետք է իջնել լեռան վրայից։ Իջնել՝ թուրքաց բանակին հարվածելու, նրա մարմինը ծակծկելու, ետ գնալու, նորից հարվածելու համար։

Բանակն սկսեց խժռել ճանապարհին թալանած ուտեստը։ Ապա դանդաղ մրափեց՝ ինքնագոհ ու ինքնավստահ՝ փքված այն մեծությունից ու այն սարսափից, որ տարածել էր շուրջը, ամեն տեղ, ամենուրեք։ Խորոված մսի, խաշլամայի, քրտինքի ու թրիքի ծանր հոտը ապականեց օդը։ Գետի զուլալ ջրերը պղտորվեցին մորթված անասունների արյունից, փորոտիքից։ Անտեր, վայրենացած շները, գայլերն ու շնագայլերը, որ թափառում էին բանակի ետևից, զգույշ, փորների վրա սողալով մոտեմոտ արին գետի երկայնքով փռված բանակին։

Մթության հետ իրենց դարաններից դուրս սողացին հայոց աշխարհազորային գնդերը։ Դուրս եկան նաև Բայանդուր իշխանի, մելիք Բարխուդարի, Բալի զորապետի, մելիք Եգանի գնդերը և դեպի բանակը սողացին գայլերի հետ, գայլերի պես զգույշ, դաղտագաղտ։ Բանակի քունը հսկող պահակներից շատերը նույնիսկ չէին հասցնում զգալ, թե ինչ կատարվեց իրենց հետ։ Հայերը հանկարծակի բուսնում էին նրանց ոտքերի տակից ու մի ակնթարթում խեղդում, մորթում։

Ջրաղացների ձորով իջնելով՝ Եսային իր մարդկանց տարավ գետափի թփերի ու քարերի արանքով։ Բարձրում, հենց բանակի գլխի վրա, անտառի մեջ կրակ բռնկվեց և իսկույն մարեց։ Այդ Բայանդուր իշխանն էր ընդհանուր հարձակման ազդանշան տալիս։

Եսային թուրը հանեց ու ընկավ թշնամու վրա. հարվածեց այծենակաճի միջից դուրս պրծած, քնաթաթախ մի թուրքի։ Սա ընկավ բառաչելով։ Աղաղակ բարձրացավ. բանակի ներսում փողեր փչեցին։ Բայց մինչև թշնամին գլխի կընկներ, թե հարվածը որտեղից է, հայերը ետ քաշվեցին՝ մի այլ կողմից խփելու։ Մթության մեջ թուրքերը չէին կարողանում որոշել՝ ո՛րն է թշնամին, ո՛րը յուրայինը։

Ողջ գիշեր ձորը դղրդում էր հարձակվողների աղաղակներից, ձիերի սուր խրխնջոցից, սպանվողների ոռնոցից։ Իսկ երբ լուսացավ, հայերի հետքն անգամ չկար...

— Որտեղի՞ց են բուսնում այս հայերը։ Ո՞ւր են չքանում. սատանա՞ են, թե՞ մարդ,— բարկությունից ճչում էր Աբդուլլահ փաշան։

Մելիք Մուսին փորձում էր հանգստացնել նրան։

— Մահամերձի վերջին ճիգն է, հզո՛ր փաշա,— ասում էր՝ գլուխը կախ, ձեռքերը փորին խաչած։— Շուտով կհալվեն գարնան ձյունի պես։

— Հալվում է իմ բանակը,— փրփրում էր փաշան,— դիակներին նայի՛ր։

— Պետք է շտապել, արևերե՛ս փաշա։ Վերցրու Հալիձորը, և կընկնի այս երկիրը։

Ինչպե՞ս շտապեր փաշան, տնփաստան չէր, որ ձիերը չափ գցած գնային։ Այս վայրենի լեռնաշխարհում ո՛չ ճանապարհ կա, ո՛չ կամուրջ։ Ծանր բանակը մի օրում հազիվ քառորդ օրվա ճանապարհ է կտրում, ցրիվ գալիս նեղ կիրճերում, մագլցում ձորալանջերը, թելի պես ձգվում անդունդների եզրերին։ Իսկ Հալիձորը դեռ հեռու էր, ու ամեն ձորում, ամեն ժայռի խոռոչում, թփի տակ դարանած են այդ անտեսանելի հայերը։ Առաջակալ ջոկատները հաճախ կորչում են գլխովի։ Հետախուզության ուղարկածները ետ չէին գալիս, բանակի պոչն անվերջ հարվածի տակ էր։ Խփում էին, քրքրում, շփոթ առաջացնում ու կորչում. կարծես անցնում էին գետնի տակ։ Ոչ ոք սիրտ չէր անում, թեկուզ պպզելու համար, մի հիսուն քայլ հեռանալ բանակից։ Վերևից մի գնդակ, մի քար էր թռչում ու ջախջախում սրա կամ նրա գլուխը...

Բայց և այնպես թուրքական բանակը ծանր ու դանդաղ առաջանում էր դեպի Հալիձոր՝ ետևից կրծած ոսկորների կույտեր ու դիակներ թողնելով։

* * *

Մեղրի գյուղաքաղաքը պաշարած Պեքիր փաշայի օրերն անցնում էին անհոգ խրախճանքներով։ Տասը հազարանոց նրա բանակը երեք կողմից ամուր աքցանի մեջ էր առել Մեղրին (չորրորդ կողմը դիք ժայռեր էին՝ անանց ու անուղի), նստել այգիներում ու բանջարանոցներում։ Պաշարված մեղրեցիները գրեթե չէին անհանգստացնում նրան։ Երբեմն միայն թնդանոթից մեկ-երկու ռումբ էին արձակում բանակի վրա և տապ անում։ Զինամթերքը խնայում էին։ Դրսից որևէ վտանգ չէր սպառնում փաշային։ Սերասկյարը մեծ բանակի հետ գնացել, խրվել էր Սյունիքի խորքերում։ Հայերը ծանր ու անհավասար կռիվ էին մղում նրա դեմ և, երևի, չէին էլ մտաբերում պաշարված Մեղրին։

Պեքիր փաշայի զինվորները ցերեկը թութ ու ծիրան էին լափում Մեղրու այգիներում, լողանում Արաքսի մեջ, իսկ գիշերը մրափում էին մեռելների պես։ Ուշում էին պարապությունից, շատ միս ու միրգ ուտելուց։ Ագուլիսից գերի բերած կանանց վաճառում էին միմյանց։ Կանանցից շատերը մեռել էին՝ բարբարոսների վայրագություններին չդիմանալով։ Կենդանի մնացածների համար ասկյարներն իրար կոկորդ էին բռնում։

Շուտով բանակում երևացին Պարսից կողմերից Արաքսն անցած պոռնիկ կանայք։ Գալիս էին խմբերով և մի կտոր եփած մսի կամ մի բուռ խաշած բրնձի համար հանձնվում թուրքերին։ Նույնիսկ մի երկու հայ փերեզակ սիրտ արին մտնել թուրքական բանակը և մանր-մունր բաներ ծախել։ Հրեաները գերի մանուկներ էին գնում՝ Ստամբուլում վաճառելու համար։

Այս ամենին անտարբեր էր Պեքիր փաշան։ Իր շքեղ վրանում նստած, ծնկներին մի դեռատի աղջիկ, նա սառը շերբեթ էր խմում և ականջ դնում վրանի մուտքի մոտ չոքած դերվիշի երգերին։

Զորքը ուտեստի պակասություն չէր քաշում։ Վրանները լիքն էին ավարով, ոչխարի ու խոշոր անասունների հոտերն արածում էին այգիներում, ձիերը կուշտ էին։ Սպասում էին, մինչև սերասկյարն առնի հայերի մայրաքաղաքը, որպեսզի գնան դեպի Կասպից ծովը, դեպի Մոսկոֆի թագավորի երկրները։

— Սարը Մոսկոֆի աշխարհում դուք այնքան գանձ ու գերի կվերցնեք, որ ձեր յոթը սերունդները կողքի ընկած ուտելով չեն սպառի,— զինվորներին հավատացնում էին մոլլաները։

Օգոստոսյան թանձր շոգը չէր մեղմանում նույնիսկ այն ժամանակ, երբ արևը թեքվում էր։ Գիշերը ևս տոթ էր. զով չէր լինում, ծառերը չէին խշշում։

Այդ օրը ևս անցավ շոգի խեղդոցում։ Զինվորները մերկացել էին, մնացել սպիտակ հալավ-ոտաշորի մեջ։

Երեկոյան բանակը դանդաղ մրափեց։ Պահապան զինվորները խեղդվում էին շոգից, չարանում մոծակների խայթոցներից, վազում էին գետափ, խմում տաք ջուրը, նորից ծարավում։

Գիշերվա կեսն էր. ձիերն անսպասելի վրնջացին, անհանգստացան, սկսեցին առջևի ոտքերով փորել գետինը, կապերը ձիգ տալ. նույնիսկ պառավ որձաձիերը գլուխները տնկեցին ու խրխնջացին զիլ... Պահակներն զգուշացան։ Այգիներով խեղդված ձորի լանջով իջնող սև զանգվածներ նկատեցին։ Զո՞րք է, թե ինչ։ Քնածներից ոմանք արթնացան։ Ձիերը գազազեցին։ Աղմուկի վրա վրանից դուրս եկավ Պեքիր փաշան։

— Ի՞նչ անհանգստություն է,— հարցրեց մթության մեջ խռնված զինվորներին։

— Կարծես լեռան լանջից նախիր է իջնում,— պատասխանեցին նրան։

Փաշան ուշադիր նայեց լեռան կողմը։ Մի քանիսը վազեցին դեպի սև զանգվածը և շուտով ետ եկան։

— Տկլոր ձիերի երամակներ են, փաշա՛,— հայտնեցին Պեքիրին։

— Ի՞նչ ձիեր։

— Անթամբ, անտեր ձիեր։ Երևի սարերից իջնում են գետը՝ ջրի։

Ջահեր վառեցին։ Այո՛, լեռնալանջերից դեպի բանակատեղ էին տանում խրտնած ձիերի մեծ ու փոքր երամակներ։ Ձիերը սլանում էին կատաղի արագությամբ, վրնջում, կոխկրտում միմյանց։ Խրտնել էին ինչ-որ արտառոց վտանգից։ Մի քանի վայրկյան հետո ձիերի ահաբեկված երամակները խրվեցին բանակի մեջ...

— Մատակներ են, կտրեցեք դրանց ճանապարհը,— գոչեց Պեքիր փաշան։— Բռնեցեք օղապարաններով, շո՛ւտ, մեր ձիերը կկատաղեն հիմա։

Զինվորները վազեցին մատակների խելագար սլացքը կասեցնելու, բայց ուշ էր։ Հալածված երամակներն իսկույն խառնվեցին զորքին։ Թուրքական բանակի մի քանի հազար որձաձիերը մոլեգնեցին մատակների հոտից, կտրեցին կապերն ու անասնական խենթությամբ ընկան նրանց

ետևից։ Խավարի մեջ դժոխային իրարանցում ընկավ։ Հազարավոր որձաձիերն ու մատակներն սկսեցին կոխկրտել, ավերել վրանները, սմբակահար անել տակավին քնած զինվորներին։ Մատակներն ահաբեկ վրընջոցով ձորի մի կողմից մյուսն էին թռչում՝ իրենց ետևից գրգռելով որձաձիերին։ Ոչ ոք չէր կարողանում գտնել իր զենքը, բռնել իր ձիուն։ Աշխատում էին գլուխներն ազատել վայրենացած անասուններից։ Շատերը ձիերի ոտքերի տակ ընկնելու ահից բարձրացան ծառերը, թաքնվեցին առուներում, քարերի արանքում։

Պեքիր փաշան գլխի էր ընկել կատարվածը և մազերը փետում էր։ Մատակ ձիերի երամակները, անշուշտ, հայերն են քշել իր զորքի մեջ՝ իրենց որձաձիերին կատաղեցնելու, բանակն ավերելու համար։ Նա համոզված էր նաև, որ այդ խորամանկ խաղը սարքողները դարանած են մոտակայքում և ուր որ է կհարձակվեն իրենց վրա։ Նա գալարափողը հանեց՝ մարտական ազդանշան տալու համար, բայց հենց այդ պահին երեք ձի սլացքով զարնվեցին նրա վրանին։ Վրանը պոկվեց, այնտեղից կանացի աղեկտուր ճիչ լսվեց։ Փաշան թրով հարվածեց կողքից սլացող ձիուն։ Սա ընկավ, նորից բարձրացավ ու անհետացավ մթության մեջ։

— Ձիերը հեռացրե՛ք, կոտորեցե՛ք,— փրփուրը բերնին գոչում էր փաշան։— Գտեք իմ ձին, որտե՞ղ է։

Բայց նրա արաբական նժույգը ևս պոկել էր ցիցը և, խառնվելով մյուսներին՝ ո՞վ գիտե որտեղ էր հալածում սարերում ազատ մեծացած լեռնային մատակին։ Թուրքերը փորձեցին նիզակափակ անել բանակն ավերող հազարավոր խենթացած ձիերին, բայց ոչինչ չստացվեց։ Կուշտ կերած, երկար ժամանակ հանգստացած որձաձիերը գազազել էին. ոչ մի ուժ չէր կարող զսպել նրանց։

Պեքիր փաշայի ահն անտեղի չէր։ Շուտով նեղ հովիտը երկուստեք փակող լեռնալանջից սկսեցին շեշտակի իջնել հայոց գնդերը։ Նույն պահին բացվեցին նաև գյուղաքաղաքի դարպասները, և պաշարվածները դղրդացնող աղաղակներով խփեցին թշնամուն։

— Հայերը հարձակվում են,— մի կերպ գտնելով փաշային՝ հայտնեցին նրա թիկնապահները։

— Ի՞նչ հայեր, որտեղի՞ց,— կապտեց փաշան, թեև քիչ առաջ ինքն էր գուշակում դա։

— Լեռան լանջերից իջնում են։ Կանոնավոր զորք է, տե՛ր փաշա,— աղաղակեցին թուրքերը։— Մատակների երամակներն էլ նրանք են բայ թողել ճամբար։ Պաշարվածները դուրս են եկել քաղաքից։ Աջ թևում սոսկալի կոտորած է։ Բանակը խառնվեց, շեյթա՛ն, շեյթա՛ն...

— Ձի՛ս,— ակամա բղավեց Պեքիր փաշան։

— Հետիոտն ենք մնացել։

Թուրքերը հասկացան, թե ինչ խորամանկ խաղ են խաղացել իրենց գլխին հայերը։ Նրանց շփոթությունը սաստկացավ, երբ, չգիտես որտեղից, գոռացին, թե հարձակվողները Մխիթարի գնդերն են։

— Աբդուլլահը պարտվել է, մուսուլմանն ե՛ր։ Ազատվեցեք Մխիթարից...

Դեռևս խուճապի չմատնվածները փորձեցին ռազմակարգ կազմել, բայց բան չստացվեց։ Գազազած ձիերը շարունակում էին ավերել ճամբարը։

Սկսվեց փախուստը...

— Առավե՛լ...— ձիու վրայից գոչում էր Մխիթարը։

Թուրքերը նետվեցին դեպի փրկության միակ ելքը՝ Արաքսի անցքը։ Մարդկային զանգվածը խառնվեց գետված ձիերին ու իրար կոխկրտելով, ոտնատակ տալով՝ հոսեց դեպի Արաքս... Հայերը հասնում, կոտորում էին ձիերն ու զենքերը կորցրած թուրքերին։

Փոքր Գորգու առջևից դուրս պրծավ մի հաստամարմին թուրք, ընկավ խաղողի թփերի արանքը, նորից բարձրացավ ու վազեց։ Գորգին աղոտ կերպով նշմարեց նրա սաղավարտը. թուրը ետ տարավ, խփեց, բայց վրիպեց։ Թուրքը շրջեց։ Գորգու աչքին ընկավ իր վրա ուղղված ատրճանակի փայլը. իսկույն անցավ ձիու փորատակը։ Ձին ընկավ կողքի վրա, Գորգին թռավ թուրքի մեջքին ու մատները խրեց նրա կոկորդը։ Նրան օգնության հասան երկու ուրիշ զինվոր և թուրքին կապոտեցին...

Գիշերային կոտորածից փրկվեցին միայն այն թուրքերը, որոնք կարողացել էին կտրել Արաքսի փրփուրները ու իրենց գցել Պարսից ափը։ Սակայն դրանց թիվը քիչ էր։ Մեղրագետի նեղ ափերը ծածկված էին անհամար դիակներով։ Մի քանի հարյուր թուրք գերի էին հանձնվել։ Վիրավորները ոռնում էին, հեծկլտում։ Փորոտիքները թափած ձիերը գլուխները խփում էին գետնին, ոտքերը ջղաձգորեն ցնցում, մինչև խոր հառաչանքով փչում էին շունչները։

— Որտե՞ղ պիտի թաղենք այսքան սատկածներին,— միմյանց հարցնում էին հայ զինվորները։

Փոքր Գորգին ցմփոր գերուն պարանով կապել էր գոտուց և քարշ էր տալիս ետևից։ Գերին անզորությունից կրճտացնում էր ատամները։ Նա դամասկոսյան պողպատե կապույտ զրահ ուներ, մեջքը պատած էր ցանցով։ Կապույտ էին նրա ցից սաղավարտը, արմնկակալներն ու ծնկակալները։

— Էդ ի՞նչ ես բռնել, Գորգի՛,— ուրախ հարցրին Երկրի ապավեն գնդի զինվորները։

— Թշնամի է, ընկավ ճանկս, բռնեցի,— անփույթ պատասխանեց Գորգին։

Խաղողի վազի միջից գլուխը բարձրացրեց լեզաճաք եղած ագուլիսցի մի կին, ուշադիր նայեց Գորգու բռնած Թուրքին և, չքաշվելով, որ կիսամերկ էր, ծառս եղավ դեպի Թուրքը, ոսկրոտ մատներով կպավ նրա կոկորդին ու ծղրտաց.

— Աղջիկս տուր, Թորք, Թո՜րք, աղջի՜կս։ Է՜յ, հայե՛ր, խեղդեցեք այս շանը։ Սա սևանուն Պեքիր փաշան է։ Աղջկաս լափողը սա է, ա՜խ...— Նա ուշաթափ ընկավ։

Փոքր Գորգին ուշադիր նայեց իր գերուն, և հետզհետե մի հեգնական ժպիտ գծագրվեց նրա դեմքին։

— Թակա՞րդ ընկար, Պեքի՛ր փաշա,— խայթեց նա։— Դե, գլուխդ ծեծիր, է՜, բանակդ գնաց...

Թուրքերի դիակները թաղեցին։ Ձիերը բռնեցին, հարուստ ավարը հավաքեցին։

Մխիթարն իր հետ վերցրեց Կոստանդին զորապետին ու նրա զորքը և, Մեղրիում միայն մի ջոկատ թողնելով՝ չվեց դեպի Հալիձոր։

***

Սեպտեմբերի երեքին օսմանյան բանակը հասավ Հալիձորին։

Չնայած մինչև հայոց նորաստեղծ մայրաքաղաք հասնելը Թուրքերը կորցրել էին իրենց բանակի կեսը, այնուամենայնիվ, նրա մեջ յոթանասուն հազար մարդ կար և մի ահարկու ուժ էր դեռևս։ Երկար ամիսներ շարունակ Թուրքական բանակը քրքրող հայոց փոքրաթիվ զորքերը ստիպված եղան ապաստան գտնել մայր քաղաքում։ Վերջին անգամ Մխիթարը Թուրքերին ճակատամարտ տվեց Ողջի գետի հովտում՝ Մեծ Սղնախի մոտ ու քաշվեց դեպի Գեղվա կիրճը։ Զորապետների ու մելիքների հապճեպ խորհուրդ գումարելով՝ նա մեկնեց կանխավ մտածած իր վճիռը։

— Ես Տեր-Ավետիսի գնդի հետ մնում եմ Հալիձորում,— հանդարտ, առանց տագնապի հայտնեց նա։— Մենք Հալիձորը կպահենք թեկուզ երեք տարի։ Դու, Բայանդո՛ւր իշխան, մելիք Բարխուդարի ու մելիք Շաֆռազի հետ քաշվեցեք դեպի Ծղուկ գավառը, ձեր ետևից փաշան զորագնդեր կուղարկի, նրանց թակարդի մեջ առեք Որոտանի կիրճում և ոչնչացրեք։ Ապա ձեզ հետ վերցրեք Վայոց ձորի, Շահապունիքի ու Որոտնա բերդի կայազորները և բռնեցեք Հալիձորը պաշարած Թուրքերի պոչը։ Ստիպեցեք նրան երկու ճակատով կռվել մեր դեմ։

Այդ վճիռն այն ծրագրի սկիզբն էր, որով Հայոց գահերեց զորավարը վճռել էր երկարատև կռիվներով, ի վերջո, պարտության մատնել Աբդուլլահ փաշային ու նրան դուրս վռնդել երկրից։

Զորապետները հավանեցին նրա վճիռը։ Պետք է թիկունքից հանգիստ շտալ Հալիձորը պաշարած Աբդուլլահ փաշային, կարել նրան օգնություն ուղարկելու ճանապարհները, անվերջ հարձակումներով նեղել նրան, մինչև վրա կհասնի Սյունիքի ցրտակապան ձմեռը։

Բայանդուր իշխանը, մելիք Բարխուդարն ու մելիք Շաֆռազն իրենց զորքերով բարձրացան դեպի Քաջարան՝ այնտեղից Ծղուկ մեկնելու։ Մխիթարը փակվեց Հալիձորում։

Հալիձորցիները տարակույս չունեին, որ անմատչելի լեռների վրա գտնվող իրենց բերդաքաղաքն անառիկ կմնա, թեկուզ մի քանի տարի շարունակ, որ ոչ մի ուժով Թուրքերը չեն կարող կոտրել նրա դիմադրությունը։ Քաղաքն ապահովված էր պարենով, զինամթերք կար, զորք ուներ, իսկ նրա պաշտպանությունը գտնվում էր Մխիթար գահերեց զորավարի նման մի հմուտ և աներկյուղ մարդու ձեռքում։

Սակայն Մխիթարն իր հաշիվներում մի փոքր սխալվել էր։ Աբդուլլահը զորք չուղարկեց դեպի Ծղուկ հեռացող Բայանդուր իշխանին հետապնդելու։ Ճաշակած լինելով Սյունիքի դժվարամատչելի լեռներում մղած ծանր պատերազմների դառնությունները՝ նա չմասնատեց իր բանակը։ Վճռեց մի հարվածով վերջ տալ Հալիձորին ու նոր միայն հետապնդել փոքրաթիվ գնդերով դեպի հյուսիս հեռացող հայերին։

Հալիձորը պաշարվեց երեք կողմից։ Չորրորդ կողմն անմատչելի ժայռեր էին։ Օսմանյան բանակը բռնեց քաղաքից ցած գտնվող ձորերն ու լեռնահովիտները։ Մխիթարը սուրհանդակ ուղարկեց Տաթև՝ Բայանդուր իշխանին հրամայելով շտապ հավաքել զորքն ու գալ քաղաքը պաշարած Թուրքերի վրա։

Բայց նրա այս ծրագիրը գլուխ չեկավ։

Նոր էր Բայանդուր իշխանն իր հավաքած բանակով դուրս եկել Տաթևից, երբ նրան լուր բերին, թե Թուրքական մի մեծ բանակ Արարատյան դաշտի կողմից մտնում է Վայոց ձոր։ Բայանդուրը դրան չէր սպասում։ Նրա կնճռոտ ճակատը մթագնեց, հոնքերը խտացան հոգնած աչքերի վրա։ «Մի՞թե աստված երես է թեքում մեզանից»,— ծանր մտածեց իշխանն ու իջավ ձիուց։

Զորապետները շրջապատեցին նրան։ Նոր վտանգ էր մոտենում։ Ի՞նչ անել։ Ի՞նչ վճիռ պիտի կայացնի մամռոտ քարին նստած, աչքերն արագ թարթող այս տարեց զորապետը։ Մելիքները չգիտեին ինչ խորհուրդ տալ նրան։ Վերջապես, Բայանդուրը վեր կացավ քարից։

— Հեծեք ձիերը,— հրամայեց ինքնավստահ։— Մի խնայեք երիվարներիդ։ Երկու օր հետո պիտի լինենք Վայոց ձորում։ Եթե մինչև մեր հասնելը թուրքերը դուրս գան Վայոց ձորից ու հասնեն Ակունքի սարահարթը, ապա անհնարին կլինի կասեցնել նրանց։ Գնանք, աստված օգնական...

— Հապա Հալիձո՞րը, տե՛ր իշխան,— մռայլ հարցրեց մելիք Բարխուդարը։ Թողնենք պաշարվա՞ծ։

— Թողնենք,— պատասխանեց Բայանդուրը։— Հալիձորն ամուր է, կդիմանա։ Մխիթարը Հալիձորը չի տա թուրքին։

Իշխանը հեծավ ձին ու սրընթաց արշավանքով շեշտակի աճապարեց դեպի Սիսականի անտառազուրկ, բարձր ու քարավեժ լեռները, դեպի Որոտանի ակունքները՝ ջերմուկների վրայով Վայոց ձորն իջնելու համար...

Գյուղերում զարմանում էին՝ հայոց այրուձիի խելահեղ վազքը տեսնելով։ Ձիերը ճաքում էին, ընկնում, նորերն էին հեծնում։ Իշխանն սպառնում էր ետ մնացողներին։ Դեպի Վայոց ձոր՝ շտապ, թռիչքով։ Հինգ օրվա ճանապարհը երկու օրում պետք է կտրել։ Ուշացումը մահ է։

* * *

Աշնանամուտի թանձր մառախուղը ցրվեց։ Ժայռերից վեր երևաց պաշարված Հալիձորը։

Հաճելի առավոտ էր։ Սյունյաց աշխարհն ի ցույց էր հանել իր երփներանգ պճնությունները և դրանով, ասես, կամենում էր հմայել թուրքերին, մեղմել նրանց անողորմ սրտերը։ Օսմանյան զորքը կուտակ-կուտակ բռնել էր սարալանջերը, խցկել ձորաբերանները, ապականել լեռնային փոքրիկ սարահարթերի կանաչը։

Ամբողջ մի շաբաթ մաղել էր լեռնային անձրևը, իսկ երբ մառախուղը ցրվեց, խոնավությունից տառապած թուրքերն աշխուժացան։ Խարույկների վրա չորացրին զգեստները, մաքրեցին ջորիների վրա բերած լեռնային թեթև թնդանոթները։ Մի տարօրինակ հանդարտություն էր իջել բանակի վրա։ Թվում էր, թե դրանք ոչ թե գյուղեր ու քաղաքներ կործանող ոհմակներ են, այլ խաղաղ քոչվորներ, որ մի պահ դադար են առել՝ ունկնդրելու լուսաբացին գեղգեղող հավքերին, հմայվելու բացվող առավոտվա գույներով։

Քաղաքի տակ եղած մեծ ու մանր ձորերը լիքն էին զորքով։ Լեռնային փոքրիկ տափարակների վրա երևում էին փաշայական սրագագաթ վրանները, որոնց գլխին տնկված էին ձարի փնջով գնդածայր մականներ, ռազմական դրոշներ։ Փաշաների ու եվրոպացի ռազմական խորհրդատուների բազմությամբ շրջապատված, Աբդուլլահ փաշան կանգնել էր գետի ձախ ափին, մի բարձր, անտառազուրկ բլրի և աչքերը կկոցած նայում էր Հալիձորի պարիսպներին։ Ոչ ոք չէր խոսում։ Եվրոպացի խորհրդատուները դեղնավուն ակնոցների միջից զարմացած նայում էին կարծես ժայռերից կերտած պարիսպներին ու սպասում, թե ինչ կհարցնի իրենց փաշան։

Հալիձորը հաստատուն կազմել էր գլխապտույտ թեքություն ունեցող լեռան վրա և իր քարեղեն ատամներով ու մարտական աշտարակներով ասես սպառնում էր թշնամուն, ծաղրում նրան։ Պարիսպների վրա մարդ չէր երևում։ Թվում էր՝ քաղաքն ամայի է, մեռած։ Միայն երբեմն աշտարակները ծխում էին, և լսվում էր թնդանոթի խուլ դղրդյուն...

Փաշան ձեռքը մեկնեց անգլիացի գնդապետին։ Սա իր երկարափող հեռադիտակը հանձնեց նրան և գլուխ տալով՝ մնաց։ Աբդուլլահն այժմ ավելի մոտիկ էր տեսնում զառիվերը, հաստաբետ պարիսպները, թընդանոթներով զինված աշտարակները։ Նա հեռադիտակն աչքից հեռացրեց, նստեց իր մոտ դրած դաշտային ծալովի աթոռին, փափուկ մատներով շփեց հեռադիտակի ապակին ու ասես ինքն իր համար ասաց.

— Անառիկ է։

— Արդարն ասացիր,— գլուխ տվեց անգլիացին։— Բայց օսմանյան կիսալուսինն այսպիսի շատ ամրությունների վրա է շողում։

Փաշան նշանակություն չտվեց նրա ասածներին։ Շուռ եկավ ու հարցական նայեց իր զորապետներին։

— Թույլ տուր, տե՛ր սերասկյար,— խոսեց հեծելազորի հրամանատար Ղոչ Ալի փաշան։— Թույլ տուր՝ ես գրոհով վերցնեմ հայերի այս բույնը։

Աբդուլլահը գլուխը բարձրացրեց։ Ղոչ Ալին հաճելի դեմքով, բարի և ժպտուն աչքերով մի բարձրահասակ ու լայնաթիկունք տղամարդ էր։ Բայց ո՞ր թուրքին չէր հայտնի նրա հանդգնությունը և անզուսպ ագահությունը։ Ամեն տեղ նա էր առաջինը մարտի նետվում, որպեսզի գրաված քաղաքի ամենայուղոտ պատառներն ինքը թոցնի։ Աբդուլլահը ժըպտաց։

— Ինձ հայտնի է քո անվեհերությունը, սիրելիդ իմ Ղոչ Ալի, սակայն քո հեծելազորն անկարող է մագլցել այս ժայռերը։

— Իմ սիփահիները հմուտ քարագնացներ են նաև, տե՛ր սերասկյար,— չզիջեց Ղոչ Ալին։— Նրանք գիտեն անառիկ ամրոցներ կործանել։

— Տեսնենք, տեսնենք,— գլուխն օրորեց սերասկյարը ու հայացքով գտավ մելիք Մուսուն։ Սա իսկույն առաջ եկավ, կանգնեց խոնարհ։

— Որքա՞ն զորք կա Հալիձորում։

— Քիչ, տե՛ր սերասկյար,— պատասխանեց մելիքը։— Քո ահից Մխիթարի զորքի մեծ մասը ցրվել է։ Բայանդուր իշխանը, մելիք Բարխուդարն ու մելիք Շաֆռազը գլուխներն առել, կորել են։ Քաղաքում մնացել են Մխիթարն ու Տեր-Ավետիսը, որոնք, սակայն, հազիվ երկուերեք հազար մարդ ունեն։ Բայց թնդանոթները շատ են։ Վառոդ պատրաստող վարպետներ կան Հալիձորում։

Փաշան հեռադիտակը նորից դրեց աչքերին։ Երկար նայեց քաղաքին։ Նորից դիմեց մելիքին.

— Կարո՞ղ ես գնալ Մխիթար փաշայի մոտ, համոզել, որ անձնատուր լինի։

Մելիքը գունատվեց։

— Կգնամ, տե՛ր փաշա։ Միայն ետ չեմ գա։ Մխիթարն ինձ կկախի խսկույնևեթ։ Ես նրա ատելին եմ։

Փաշան ընկավ մտածմունքի մեջ։ Հիշեց Մուրադ-Ասլանի խոսքերը. «Տեր-Ավետիս հազարապետը համակիր է մեզ. նրա ձեռքով շատ բան կարելի է անել»։ Կանչեց Մուրադ-Ասլանին։ Նա խսկույն հանձն առավ բանագնաց լինել։ Համոզված էր, որ եթե Մխիթարին համոզել չկարողանա, ապա իր հին ծանոթ Տեր-Ավետիսը կլսի իր խորհուրդը։ Համենայն դեպս պառակտում սերմանելու հույս կար։ Տեր-Ավետիսը չի համառի։ Համառելու տե՞ղ էր մնացել։ Հալիձորը պաշարված էր ահռելի բանակով։

Մի թուրք տասնապետ դրին Մուրադ-Ասլանի հետ։ Փաշան նամակ գրեց Տեր-Ավետիսին՝ խոստանալով չավերել քաղաքը, ոչ մի գերի չվերցնել ու նրան գահերեց զորավար կարգել, եթե նա մեջտեղից վերացնի Մխիթարին և առանց արյունահեղության քաղաքը հանձնի իրեն։

Մուրադ-Ասլանը քահանայի զգեստ հագավ։ Թուրք տասնապետի հետ նա անցավ ձորը, սպիտակ դրոշ պարզեց ու դժվարությամբ մագլցեց վեր։ Երբ հասան քաղաքի պարիսպներին, Մուրադ-Ասլանը կանչեց.

— Է՛յ, հալիձորցինե՛ր, մեզ բարձրացրեք վերև, Մխիթարին ասելիք ունենք։

— Իսկ դու դեռ չե՞ս ուրացել, տե՛ր հայր,— հարցրին վերևից։

— Ինչի՞ ուրանամ։ Փաշան խաղաղ, հնազանդ մարդկանց չի ստիպում թուրքանալ։ Դե, շո՛ւտ արեք, ելարան կախեցեք։ Մենք փաշայի պատգամաբերներն ենք։

— Հիմա՛, հիմա։

Վերևից պարանե ելարան կախեցին։ Հենց որ պատգամաբերները հասան պարսպի ատամներին, նրանց գլխներին պարկեր հագցրին ու

մացրին մի նեղ խուց։ Այդտեղ բաց արին նրանց աչքերը։ Ձեռքերը կապքերին կանթած Եսային թունավոր նայեց քահանային։

— Ի՞նչ է անում մելիք Մուսին, տե՛ր հայր։ Դարձյա՞լ լիզում է փաշայի ոտքը։

— Ապրում է փառքով,— պատասխանեց ծպտված Մուրադ-Ասլանը և սրտում ահ զգաց այդ հանդուգն հարյուրապետից։— Մելիքը խոհեմությամբ հպատակվել է փաշային։ Լավ կանեք, որ դուք էլ հպատակվեք։

— Ա՞յդ է կամենում քո տերը։

— Ինձ տարեք ձեր գահերեց զորավարի մոտ,— պահանջեց Մուրադ-Ասլանը։

— Ախորժակիդ քացախ...— քրքջաց Եսային։— Գահերեցը շախմատ է խաղում Մովսես աբեղայի հետ. թագավոր էլ գա, թերատ չի թողնի խաղը։ Դու ասելիքդ դուրս տուր։

— Ես փաշայի կամքը կհայտնեմ նրան կամ Տեր-Ավետիսին։ Ուրեմն տարեք Տեր-Ավետիսի մոտ։

— Է՛, հե՛... Սրա՞ն տեսեք,— չարացավ Եսային։— Կեղտոտ քահանա հալվը Տեր-Ավետիսին է տեսնել ուզում։ Միտքդ դուրս տուր։ Աստ, տեսնեմ, ի՞նչ ես հանձն առել՝ երեսուն արծաթ ստանալու համար,— նա բուունցքը դեմ արեց քահանայի քթին։ Սա ոռսկաց։

— Անձնատուր եղեք, այլապես փաշան հիմնախիլ կանի Հալիձորը,— ակամա դուրս թռավ ուրացողի բերանից։ Նա ու տասնապետն սկսեցին սպառնալ, պահանջել, որ կատարվի իրենց խնդիրը՝ իրենց ներկայացնեն կամ Մխիթարին, կամ Տեր-Ավետիսին։ Բայց Եսային միայն ծիծաղում էր։

Վերջապես նրա համբերությունը հատեց։ Բանբերներին դուրս արեց։ Մուրադ-Ասլանը վազեց դեպի պարսպի ելարանը, բայց Եսային բռնեց նրա օձիքը։

— Մի պահ սպասիր, օձվա՛ծ,— մեղմ ասաց նա։— Ախր ես չիմացա քո անունը։

— Տեր Մամբրե,— խսկույն պատասխանեց դավաճանը և մի վատ բան կռահելով՝ հարցրեց։— Իսկ իմ անունը քո ինչի՞ն է պետք։

— Որպեսզի մեր պատմությունը գրող տիկին Սաթենիկին հայտնեմ, և նա սերունդների նզովքի համար դավաճան մելիք Մուսու կողքին գրի նաև քո սուտ անունը, Մամբրե՛ շուն։

Մուրադ-Ասլանի ծնոտը դողաց. աչքերը չովեցին։ Նա արագ շուռ եկավ, որ բռնի ելարանի պարանը, սակայն երկու զինվոր ոլորեցին նրա թևերն ու վզին մի մոմած պարան անցկացրին։ Թուրք տասնապետին

թողին, որ իջնի պարսպից։ Ելարանը վեր քաշեցին։ Մուրադ-Ասլանի կրծքին մի կատու կապեցին ու նրա հետ կախեցին։ Կատուն ճանկռոտում էր նրա դեմքը, ծվատում կուրծքը։

Շինական զինվորներն ու հալիձորցիները հոհոում էին, զվարճանում տարօրինակ տեսարանով։

— Այ, հիմա որ իսկականից կարգվեց տեր հայրը,— գոռում էին նրանք։

— Ես դրա կարգված օրն անիծեմ,— հայհոյում, թքում էր Սեմեոնը։

Պարսպի վրա երևաց Տեր-Ավետիսը։

— Այս ի՞նչ հոհոոց է,— խստությամբ հարցրեց նա։

— Բան չկա, տե՛ր հազարապետ,— ուրախ պատասխանեց Եսային։— Տղերքը մի քիչ զվարճացան։ Փաշան էր մարդ ուղարկել՝ մի հայ քահանայի ու մի թուրքի։

— Հետո՞,— սրվեց Տեր-Ավետիսը։

— Քաղաքի բանալիներն էր ուզում։

— Տվի՞ր,— կատակով հարցրեց Տեր-Ավետիսը։

— Այո։ Թուրքին բաց թողի, իսկ քահանային կատվի հետ կախեցի։ Հրեն, իրար խտտած օրորվում են։

Տեր-Ավետիսը ժպտաց։ Բայց երբ կռացավ և ուշադիր նայեց օղակի միջից ցցված քահանայի դեմքին՝ ժպիտը թռավ։ Շեշտակի շուռ եկավ ու բռնեց Եսայու օձիքը։

— Ո՞ր իրավունքով ես ինքնագլուխ դատաստան տեսել պատգամաքերի հետ, թշվառակա՛ն...— որոտաց նա ու Եսայուն հրեց։

Զինվորները սոկվեցին։ Ոչ ոք չէր սպասում, որ այնքա՞ն սիրելի Տեր-Ավետիսը մի դավաճան քահանայի պատճառով կարող էր այդպես ափաշկարա անպատվել իրենց հարյուրապետին։ Սաստիկ զարմացած էր նաև Եսային։

Տեր-Ավետիսը հրամայեց քահանայի մարմինն իր տուն տանել։ Դիշերը երկար զննեց դիակը։ Համոզվելով, որ դա իրոք Մուրադ-Ասլանն է, նա խուզարկեց նրա զգեստներն ու գտավ փաշայի նամակը։

***

Իրեն այնքան ծառայություններ մատուցած Մուրադ-Ասլանի մահը դազազեցրեց Աբդուլլահ փաշային։

— Ես ձեր գանգերից բլուրներ կշինեմ, հայե՛ր...— որոտում էր նա։— Գրոհի՛։ Առավոտյան սկսում ենք գրոհը։

Եվրոպացի խորհրդատուների ցուցումներով հյուսն վարպետները անտառում ելարաններ ու պարիսպներ քանդող մի վիթխարի մեքենա էին շինել։ Նեղ ձորն սկսեցին լցնել քարերով ու հողով, որպեսզի վիմակործան մեքենան անցկացնեն ձորի մյուս կողմը։ Ղոչ Ալի փաշան քարագնացների գունդ պատրաստեց՝ պարիսպները ելնելու համար։

Զյունի պես ճերմակ ձի հեծած Աբդուլլահը շտապեցնում էր բոլորին, բարկանում փաշաների վրա, ասկյարներին հարվածում մտրակով։ Վճռել էր գրոհով առնել Հալիձորը, թեկուզ նրա պարիսպների տակ կորցներ զորքի մեծ մասը։ Ստամբուլից եկած սուրհանդակները շտապեցնում էին նրան։ Սուլթան Ահմեդն անհանգիստ էր «Տիեզերքի ջահն» ու «աստծո ստվերը» պահանջում էր շտապ վերջացնել հայերի ջախջախումը։

Շտապում էր նաև Աբդուլլահ փաշան։ Բայց ինչպես վերջացնես այս լեռնական դևերին։ Դիմադրում են ամեն քարի ու ձորի արանքում։ Երկիրն անառիկ է։ Երբ նայում էր Խուստուպի, Կապույտջիղի կամ Արամազդի կողմերը՝ հուսահատվում էր։ Ո՞ր աշխարհի զորքերը կկարողանան բարձրանալ այս լեռները, ուր ո՛չ ճանապարհ կար, ո՛չ մի փոքր հարթություն։ Այս հայերը տասը-քսան հոգով դիմադրում են մի ամբողջ հազարյակի։ Խփում են հանկարծակի, անհետանում և դեռ աչքդ չթարթած՝ նորից երևում։ Ասես բուսում են հողի տակից։

Դևաբնակ է այս երկիրը։

Բայց մի՞թե դիմադրեց միայն հայերի Սյունիքը։ Քի՞չ զորք, արդյոք կորցրեց ինքը՝ մինչև կարողացավ առնել Երևանը, Արցախը, անցնել Արաքսի կիրճը, հասնել Հալիձոր։

Հարյուր հիսուն հազար զինվոր ուներ, երբ սկսեց իր արշավանքը։ Դրանից յոթանասուն հազար մարդ է մնացել միայն։ Մյուսներն ընկան Հայոց աշխարհի կիրճերում ու ձորերում։

Ահա թե ինչ գնով Աբդուլլահը կարողացավ հասնել Հալիձոր։ Այժմ նա մեխվել էր նրա տակ։ Ահ էր պատճառում նրան Հալիձորը, և նա շտապում էր, քանի դեռ Մխիթարին օգնության չէին եկել Սիսականի կողմերին գտնվող հայոց գնդերը, չէին կպել իր թիկունքին։

Պետք է շտապել։ Եվ թուրքերը եռանդուն պատրաստություն էին տեսնում վճռական գրոհի համար։

Քնած չէին նաև պաշարվածները։ Մխիթարի հրամանով քաղաքում մեծ ու փոքր ոտքի վրա էին։ Սաթենիկ տիկնոջ գլխավորությամբ կանայք օր ու գիշեր ձյութ էին հալում՝ պարիսպներից թշնամու վրա թափելու համար։ Երկանքներով աղ էին մանրացնում, որ մաղեն ասկյարների գլխին։ Փայտե ածուխի կույտեր էին դրել պարիսպների տակ։ Կվառեն ու խանձակոթերը կնետեն գրոհողների վրա։ Տղամարդիկ հին շեն-

քերը քանդում էին, քարերը կրում-դարսում պարիսպների վրա։ Քաղաքում եղած բոլոր պղնձե կաթսաները հավաքեցին՝ ջուր եռացնելու համար։ Պարիսպների երկարությամբ ձգվել էին կրի, ածխափոշու, ավազի ու մանրած աղի կույտեր, փայտի ու չոր խոտի դեզեր։ Ռուս դրագուններն ամեն կերպ օգնում էին հայերին՝ քաղաքն անառիկ դարձնելու համար։ Եվ այս ամենը ղեկավարում էր Մխիթարը։ Ուր երևում էր նա, ոգևորություն էր առաջացնում։

— Մեր քաղաքը չենք տա Թուրքին, տե՛ր գահերեց,— ասում էին եռանդուն հալիձորցիները։

— Չենք տա, Աբդուլլահը մեջքը կկոտրի մեր քաղաքի տակ,— հաստատում էր Մխիթարը և արթուն հետևում պաշտպանության գործին։

Դեռևս Թուրքերը Հալիձորին չէին մոտեցել, երբ Մխիթարի հրամանով Վրթանես զինագործն ու Վոլոդիմիր Խլեբը Հալիձոր էին տեղափոխել իրենց արհեստանոցը, պղնձի ու ծծմբի պաշարները։ Նրանք բերել էին նաև իրենց օգնականներին, պղնձի ելքերում ու բովերում բանող մշակներին։ Այժմ նրանք ռուս զինվորների հետ նորոգում էին Թուրքերից խլած զենքը, քարանետ գործիքները, վառոդ էին պատրաստում։

Իր ընտանիքով Հալիձոր էր տեղափոխվել նաև Պղինձ Արթինը։ Երբեմն նա բարձրանում էր բերդի մեծ աշտարակն ու երկար նայում իր ավերված դղյակի կողմը, ձորը բռնած Թուրքաց բանակին։ Վախից նա բոլորովին կորցրել էր իրեն։ Գիշերը գրկում էր ոսկու տոպրակներն ու գլուխը ծեծում... Ինչո՞ւ ժամանակին չառավ իր գանձերն ու ընտանիքը և չփախավ Եվրոպա, որտեղ իր ազգականները առևտրական մեծ տներ ունեին Վենետիկում, Ամստերդամում, Մարսելում։ Խուսափում էր Մխիթարին հանդիպելուց. այնինչ գրեթե ամեն օր գնում էր Տեր-Ավետիսին այցի։

— Վերջն ի՞նչ պիտի լինի, այ ոտքիդ մատա՞ղ,— հարցնում էր նա հաղարապետին։

— Ինչի՞ վերջը,— թունոտ ժպտում էր հաղարապետը։

— Պաշարման։ Այդքան զորության դիմանալ կլինի՞։ Ա՛խ, ա՛խ։

— Չգիտե՞ս, թե ո՞րն է բտած խոզի վերջը,— քրքջում էր Տեր-Ավետիսը։— Թուրքերը քեզ կմորթեն ու գանձերդ կտանեն։ Նույնիսկ զավակներիդ չես փրկի գանձով։

— Ճարը տես,— աղերսում էր Պղինձ Արթինը։— Մխիթարը մոլորված է։ Նա մեզ կորստյան է մատնում։ Մի ճար արա, աստծո՛ւ սիրուն, փրկության դուռ գտիր։ Թուրքերի հետ հաշտության միջոց գտիր։ Գանձերս գրավ դիր, միայն թե մեզ փրկիր կոտորածից։

Տեր-Ավետիսին նույնն էին ասում նաև Միհրան հարյուրապետը, քաղաքի մեծահարուստներից ոմանք, թուրքական բանակից մելիք Մուսու ուղարկած լրտեսները, իր հարյուրապետներից շատերը։

Եվ այդ մասին Տեր-Ավետիսը ոչինչ չէր ասում գահերեց զորավարին։ Նրա և Մխիթարի միջև մեծանում էր սառը մի անդունդ։

Մովսես աբեղան իր բոլոր գրքերը խնամքով դարսել էր կաշվե պարկերում, թաքցրել մի քարաժայռի ճեղքում և իր աշակերտների հետ միացել Հալիձորի պաշտպաններին։

Կարճ գոյություն ունեցավ Հալիձորում նրա հիմնադրած դպրոցը։ Ուշիմ աշակերտներ էր հավաքել նա, դպիրներ գտել ու եռանդուն սկսել իր գործը, երբ վերսկսվեց պատերազմը։

— Գրչի տեղ այժմ ստիպված ենք զենք վերցնել, սիրելիներս,— ասաց նա իր աշակերտներին։— Հայ ժողովրդի ճակատագիրն է դա։ Մեր նախնիները մեր երկիրը պահել են սրի շառաչով ու դպրության լույսով։ Ուրեմն այս անգամ էլ գրչի հետ սուր բռնենք ու պաշտպան կանգնենք մեր քաղցր հայրենիքին։

Զբաղված լինելով իր դպրոցի գործերով, Մովսեսը ինքնամփոփ էր դարձել ու սակավախոս։ Մենակության էր ձգտում նրա հոգին և նահատակության էր ձգտում նաև։ Անվերջ հիշում էր Արուսյակին, նրա անշուք քողոտիկը, նրա մենավոր գերեզմանը, որ թողեց Հրազդանի ափին։ Մի սև հողաթումբ էլ տեսնում էր իր համար, մի տխուր գերեզման, որ հրապուրելով կանչում էր նրան։ Հաճախ էր հանդիպում Մխիթարին։ Լուռ նայում էր նրան, հիանում նրա եռանդով ու աննկունությամբ, մտովի գովում նրա ձեռնարկումները և կարեցածին խորհուրդներ տալիս։

— Տրտունջներ կան քաղաքում, տե՛ր գահերեց զորավար,— մի անգամ ասաց նա Մխիթարին, երբ երկուսով մենակ էին պարիսպների վրա։

— Գուշակո՞ւմ ես,— մռայլվեց Մխիթարը։

— Գուշակում եմ, այո,— պատասխանեց աբեղան։— Ժողովուրդն ու զորքը պատրաստ է սիրահոժար նահատակվելու իր քաղաքի համար, բայց տրտունջներ կան, ես դա զգում եմ հայացքներից, շշուկներից։ Զգում եմ։ Զգո՞ւյշ եղիր, տե՛ր գահերեց, ոմանք հակված են Թուրքերից հաշտություն խնդրել։

— Ովքե՞ր,— մռայլվեց Մխիթարը։

— Անունադիր չգիտեմ, բայց զգում եմ։ Երկար պաշարված մնալը կավելացնի տրտնջացողների թիվը, պառակտման առիթ կլինի. գործիր զգույշ...

— Կտանենք աստծու տնօրինությունը, Մովսե՛ս։ Տրտունջներ կլի-

նեն, բայց հուսակորույս մի՛ լինի, մենք այս անգամ էլ թշնամուն կվանենք մեր աշխարհից։

Հնարավոր դավադրության մասին Մխիթարին զգուշացնում էր նաև Նաղաշ Հակոբը։

— Մի՛ հավատա կեղծավոր ժպիտներին, տե՛ր գահերեց,— ասում էր նա՝ առիթը բաց չթողնելով։— Մարդիկ կան մեզանում, որոնք իրենց մորթու համար սեփական զավակը կզոհեն։ Ագուլիսի օրինակը գայթակղիչ է։ Մելիքներից ու քաղաքացիներից ոմանք հավանում են մելիք Մուսու բռնած գործը։ «Մենք էլ հպատակվենք Թուրքին, որ մեր քաղաքը փրկենք»,— ասում են։

— Իմ ականջին ևս հասել են այդ փսփսոցները,— պատասխանում էր Մխիթարը։

— Բայց դյուրահավատները մոռանում են, որ Աբդուլլահը Ագուլիսը հիմնահատակ չավերեց, որովհետև դեռ կանգուն է Հալիձորը, Սյունիքը։ Հենց որ, աստված չանի, Հալիձորն ընկնի, ու կոտրվի մեր դիմադրությունը, թշնամին կավերի երկիրը, Ագուլիսը մոխիրների կույտ կանի։ Թուրքը ոչինչ չի ափսոսում, ոչինչ չի զիջի մեզ։

— Ես հավատում եմ հայ ժողովրդի ուժին, Նաղա՛շ,— ասում էր Մխիթարը։— Նա կդիմանա այս արհավիրքին ևս։ Մի խումբ վատամարդիները չեն, որ որոշելու են նրա բախտը։

— Այդպես է։ Ժողովուրդը պատրաստ է մեծ զոհողություններով պահել իր ազատությունը, իր աշխարհը։

Նաղաշ Հակոբին քչերն էին ճանաչում Հալիձորում։ Հասարակ շինականի զգեստներով, թրով ու նիզակով զինված այդ մարդը գրեթե մենակ էր։ Ոչ ոքի հետ չէր խոսում, չէր մոտենում գիշերային խարույկներին ու ամեն լուսաբացի հասակով մեկ կանգնում էր մայր աշտարակի գլխին ու հիացմունքով նայում լեռնաշխարհի լուսաբացին։

Զենքերից բացի, նա ոչինչ չուներ այլևս։ Իր նկարչական սարքը, Արարատյան դաշտից բերած ներկերն ու աշակերտներին թողել էր Ագուլիսում։ Ոչ մի լուր չունենալով այնքան սիրած աշակերտների մասին, տառապում էր նա։ Ինքը ևս գերությունից փրկվել էր պատահաբար։ Գոհարի պատկերն ավարտելուց հետո, Ագուլիսի անկումից մի քանի օր առաջ, մեկնել էր Շոռոթ՝ հոր թողած թղթերը հավաքելու, նրա գրագարանը Հալիձոր տեղափոխելու համար և այդպիսով փրկվել էր Թուրքերի ձեռքից։

Հալիձոր էր եկել մենակ, ընկճված ագուլիսցիների ազգադավ արարքից։ Կործանվեցին նրա երազանքները։ Ավերվեց այն գործը, որի հիմքը նոր էր դրել։ Մնաց նաև Եվրոպա գնալը, Ամստերդամից հայկական

տպարանը Հայաստան տեղափոխելու նպատակը, որ այնպես խնդրում էր հանգուցյալ Դավիթ-Բեկը, որ մտադիր էր անել ինքն այդ աշնան։

Այժմ Նաղաշ Հակոբը սովորական զինվոր էր, սովորական զենքերով ու զգեստներով, բայց մի մեծ սրտով, թռիչքի, հրաշքներ ստեղծելու մարած երազանքներով։

Բազմիցս Մխիթարը նրան արգելել էր բարձրանալ պարիսպները, քաշվել մի անկյուն ու խնայել իրեն, բայց ամեն անգամ նկարիչը ասել էր նույնը.

— Նկարիչ լինելուց առաջ ես մարդ եմ, տե՛ր գահերեց զորավար։ Իսկ մարդու առաջին պարտքն է. հափշտակիչներից, թշնամիներից պաշտպանել, փրկել իր հայրենիքը։ Ուրեմն ինձ մի զրկիր իմ արդար իրավունքից։— Եվ նա շարունակում էր եռանդուն մասնակցել քաղաքի պաշտպանությանը։

Մխիթարը տագնապի մեջ էր։ Արդեն երկու շաբաթ էր, ինչ Բայանդուր իշխանից լուր չուներ։ Հալիձորի տակ կուտակ-կուտակ եղած թուրքերն անարգել պատրաստվում էին գրոհի։ Ինչո՞ւ, ուրեմն, չի երևում Բայանդուրը։ Չէ՞ որ նա արդեն պետք է հավաքած լինի միջնաշխարհի գնդերը։ Ինչո՞ւ, ուրեմն, չի երևում, չի գրոհում թշնամու վրա։ Չէ՞ որ այդպես էր նրա հրամանը։ Գոնե մի լուր ուղարկեր, թե ինչ է անում։

Բայց որտեղի՞ց Մխիթարն իմանար, որ Բայանդուր իշխանը մեկնել է Վայոց ձորով Սյունիք մտած օսմանյան մի նոր բանակի դիմադիր։ Իշխանի առաքած սուրհանդակներին որսում էին թուրքաց բանակում գտնվող մելիք Մուսու մարդիկ...

Նույն տագնապալի վիճակում էր նաև Գոհարը։ Պղնձաքարցիների զորաջոկատի հետ նա պաշտպան էր կանգնել քաղաքի հյուսիսային պարիսպների վրա։ Ծերունի կեսարը թեև անվերջ խնդրում էր, որ նա չերևա պարիսպների գլխին, բայց Գոհարը չէր լսում նրան։ Զինված գլխովի, նա քաջալերում էր իր մարդկանց, բայց և դառնությամբ էր տեսնում, թե ինչպես են թուրքերը կտրտում անտառները, ելարաններ ու վիմակործան մեքենաներ շինում, նեղ ձորը լցնում հողով ու քարով՝ կամուրջ կապելու և նրա վրայով դյուրին կերպով հարձակվելու քաղաքի վրա։ Ոչ ոք չէր խանգարում նրանց, չէր անհանգստացնում։ Որտե՞ղ է, վերջապես, հայրը, Բայանդուր իշխանը, ինչո՞ւ չեն երևում։ Մի՞թե հայրը լքեց իրեն, Մխիթարին։

Վերջին մտքից զարհուրում էր նա։ Երբեմն հանդիպում էր եղբորը՝ Մհերանին։ Թուխ, նեղ երեսով, միշտ գժգոհ ու չարաթույն հայացքով Մհերանը հեգնախառն ժպիտով էր դիմավորում քրոջը։

— Քաշվեիր քո ավազակաբույնը, մնայիր այնտեղ, ինչո՞ւ ես քիթդ խոթել այստեղ,— ասաց Միհրանը, երբ մի անգամ ևս հանդիպեց քրոջը։

— Դու քո գլխի ճարը տես,— չզիջեց քույրը։

— Ես իմը գիտեմ, իսկ ահա դու քո գահերեցի հետ կկորչես։ Կկորչի քաղաքն այս, և Սյունիքը կկործանվի, անմիտնե՛ր։ Քո այդ Մխիթարին հասկացրու, որ հաշտություն խնդրի Թուրքերից։ Չի՞ տեսնում, միթե, որ մատնված ենք կորստյան։

— Լռի՛ր, խռովարար,— կապտեց Գոհարը՝ զզվելով եղբոր նենգ ժպիտից։

— Լռեմ, որ գլուխներս ուտի՞ քո Մխիթարը,— ֆշշացրեց հարյուրապետը։— Հորս ու Բայանդուր իշխանի՞ն եք սպասում։ Հա՛, հա՛, անմիտնե՛ր։ Նրանք չկա՞ն, լքել են մեզ, նրանք հեռացել են Սյունիքից, գլուխներն ազատել։ Օգնության կգան, հապա ո՞նց... հի՛, հի՛։

Ու գնաց շարանենգ քրքջալով։

Գոհարի գլուխը պտտվեց։ Մի վայրկյան եղավ, որ կամեցավ սուրը մերկացնել ու նետվել եղբոր վրա, բայց ոտքերը չշարժվեցին։ Եղբայրասպա՞ն դառնալ։ Ո՛չ, այդքան կորով չուներ Գոհարը։ Սակայն գրեթե նույնը լսեց նաև եղբոր կնոջից։ Հավաքվել էին Վարդ-խաթունի տանը։ Հարսն ասաց.

— Բայանդուր իշխանը չի երևում, աստված չանի, որ նրան մի բան պատահած լինի։

Գոհարը շեշտակի նայեց նրան։ «Ուրեմն բան գիտի. դժբախտություն է եղել»։

— Այո, զարմանալի է, թե ինչո՞ւ չեն երևում Բայանդուրը, մելիք Բարխուդարը, Շաֆռազը,— բազմանշանակ ավելացրեց Վարդ-խաթունը։

Նրանց խոսքերը յուրովի վշտացրին Գոհարին։ Նրա համար թանկ էր իր հոր պատիվը, անունը։ Դավաճանություն կլինի, եթե հայրը, իրոք, լքած լինի Մխիթարին։ Բայց և՛ հավատում, և՛ չէր ուզում հավատալ դրան։ Շշուկները շատացան, տարածվեցին քաղաքում։ Եվ հավատացողներ կային։ Այնինչ դարձյալ լուր չկար Բայանդուր իշխանից։ Իսկ շարագուշակ շշուկները հասնում էին Մխիթարի ականջին.

Մի անգամ նա Տեր-Ավետիսին հարցրեց.

— Լսե՞լ ես, թաքուն շշուկներով լիքն է քաղաքը։

— Լսել եմ,— պատասխանեց Տեր-Ավետիսը։

— Ի՞նչ են ասում։

— Մարդի՛կ են...— ձայնն իջեցրեց հազարապետը։— Թուրքի ուժը մեծ է։ Ոմանք հույսները կորցրել են։

— Եվ պատրաստ են թուրքին հանձնվելո՞ւ։

— Թաքուն չէ, կան և այդպիսիները։ Գնալով բազմանում են տրրտունջացողները։ Մանավանդ զորքի մեծ մասը գնաց, կորավ կարծես։ Ինչո՞ւ չի Բայանդուր իշխանը կատարում հրամանդ։ Ո՞ւր է, ինչո՞ւ չի գալիս Թուրքի վրա, քաղաքիս օգնական։ Ասում են՝ թողել, հեռացել է Հայոց աշխարհից։

— Ասողը խռովարար է,— նետեց Մխիթարը։ Նրա հոնքերը խոնարհեցան, շրթունքները սեղմվեցին։— Այդօրինակ լուրեր տարածողին պետք է կախել։ Կախե՞լ ես, հազարապե՛տ։

— Ասողները մեկը չէ, երկուսը չեն։

— Ուրեմն՝ բոլորին պիտի կախել։— Հերսոտվեց Մխիթարը։ Սակայն միաժամանակ ահ զգաց։ Ո՞ւմ կախես։ Մեկն ահա իր դեմ մռայլմթնած կանգնած իր հին բարեկամ Տեր-Ավետիսը։ Գուցե սա՞ էլ է թշնամու հետ հաշտվելուն համակիր։ Կարո՞ղ ես կախել, սպանել։ Սրան վերջացրիր, ապա մյուսները, զորապետները, հարյուրապետները, զորքը, քաղաքը ողջ։ Եվ առաջին անգամ Մխիթար գահերեց զորավարն իրեն սաստիկ նեղված ու մենակ զգաց։ Քաղաքում տարածվող շշուկների մեջ նա մի ծանր դավ էր տեսնում։ Ի՞նչ անի, ո՞ւմ մեկնի իր տարակուսանքները։ Տեր-Ավետիսի՞ն։ Կհասկանա՞ իրեն այս մարդը, որի հետ կռիվների մի երկար ճանապարհ են անցել։ Մխիթարն զգում էր, որ իր վաղեմի զինակիցը կորցնում է հաղթանակի հույսը, տատանվում, որ մի անտանելի վիշտ է կրծում նրա աննկուն հոգին։

— Գիտեմ,— վերջապես խոսեց նա։— Գիտեմ, Ավետի՛ս, որ ոմանք չեն հավատում մեր ուժին, թեքված են Թուրքին հպատակվելուն։ Բայց դա կործանում կլինի ազգին հայոց, թող իմանան մոլորվածները։ Մենք ուժ ունենք տակավին և դիմադիր կլինենք թշնամուն։ Ապա պառակտիչներ են, ովքեր պնդում են, թե Բայանդուր իշխանը, Բարխուդարն ու Շաֆռազը լքել են մեզ։ Հենց այս գիշեր սուրհանդակ եկավ Բայանդուրից։

— Ճշմարի՞տ,— հանկարծակիի գալով՝ իր մտքերից սթափվեց հազարապետը։

— Այո, Բայանդուրը Սիսականումն է։ Ահագին զորք է հավաքել և մի քանի օրից այստեղ կլինի...

— Դա արդեն ցանկալի լուր է,— գրեթե բացականչեց Տեր-Ավետիսը։

Մխիթարն ինչ-որ շինծու բան զգաց նրա ուրախության մեջ։ Մրտքում դիվական մի վճիռ որոճաց՝ վերջ տալ Տեր-Ավետիսին։ Սակայն ցնցվեց դրանից։ Քաղաքում եղած զորքի մի մասը հազարապետի սեփականն է. հլու են նրան։ Խռովություն կբարձրանա իր դեմ, և ինքը

կվորցնի ոչ միայն իր կյանքը, այլև այն գործը, որին նվիրված է անդարձ...

Բայանդուր իշխանի շուտափույթ գալու լուրը տարածվեց քաղաքում։ Պաշարվածները ոգևորվեցին։ Տխուր էր միայն Մխիթարը։ Չէ՞ որ այդ ուրախության պատճառն իր հորինած սուտն էր։ Բայանդուր իշխանից առաջվա պես լուր չկար։

* * *

Աշնանային հաճելի լուսաբաց էր։ Թեթև թարմությամբ էր լցված երկնքի խորքերը մտած լեռնաշխարհը։ Մուղանի տափաստանի կողմից ծագած արևը հրդեհեց Սյունիքի բարձրակատար լեռները։ Ամպի ճերմակ ծվեների պես փայլատակեցին հավերժական ձյունապատառները։ Ձորերում հետզհետե սկսեց ցրվել կապտավուն մշուշը։

Լուսաբացին թուրքերը սկսեցին գրոհել Հալիձորը։

Թնդանոթներից արձակած ռումբերն ընկան տների վրա, աշտարակների մեջ, զարնվեցին պարիսպների գրանիտե ատամներին։ Լսվեցին առաջին վիրավորների տնքոցները։

Թուրքական բանակի զանգվածները սև քաշաթխպի նման ծանրծանր սողացին դեպի պարիսպները։ Քարագնաց ասկյարները իրենց հետ բերում էին փայտե հարյուրավոր ելարաններ։

Իր ամբողջ զեն ու զարդը հագած Մխիթարը, Փոքր Գորգու ուղեկցությամբ, բարձրացավ պարիսպների գլուխը։ Առաջինը նրան նկատեց Եսային։ Սրագագաթ գլխարկը փոքր-ինչ ետ թեքած, կուրծքը բաց ռամիկ հարյուրապետը ողջունեց գահերեցին, ձեռքը մեկնեց ցածում խլրտացող թուրքական բանակի կողմը։

— Եկել են գերեզման որոնելու, տե՛ր գահերեց։

— Տվեք ուզածները,— ասաց Մխիթարը։

— Հապա էլ ի՞նչ. Մարաղայից մինչև այստեղ սրանց ոսկորներն են,— ոգևորվեց Եսային։— Ազգովի ելել ենք մեր տանը պաշտպան։

«Մի՞թե իրոք ազգովի ենք ելել մեր տանը պաշտպան,— պարսպի երկայնքով քայլելիս՝ մտածեց Մխիթարը։— Նույնն ե՞ն, արդյոք, խորհում մյուսները ևս՝ Տեր-Ավետիսը, Պղինձ Արթինը, հարյուրապետներից շատերը։ Չէ՞ որ թուրքի հետ մեզ վրա է եկել մեր ազգակից մելիք Մուսին։ Ուրիշները ևս չե՞ն ընդօրինակի նրան...»։

Խորհում էր Մխիթարը՝ չնկատելով իրեն ակնած յուրայինների հայացքները, ողջույնները։

Պարիսպներից գնդակների տարափ տեղացին. կրակեցին ատրճանակներից. վայր ընկնող թուրքերը ոտնատակ եղան վեր ելնող մարդկային հոսանքից։ Գրոհողներն այնքան բազմամարդ էին, որ պաշարվածներին թվում էր, թե իրենց արձակած գնդակները չեն հասնում նրանց։ Մի քանի հարյուր թուրք կպել էին անգղանման, անճոռնի վիմակործան մեքենային և հարայհրոցով բարձրացնում էին թեք լանջով։

Ձորքն ու քաղաքի բնակչությունն ամբողջովին գտնվում էր պարիսպների վրա։ Ջինագործներն ու դրագունները նույնպես եկել էին դիրքերը։ Վոլոդիմիր Խլեբը ռումբ էր դնում իրենց պատրաստած թնդանոթի մեջ։ Վրթանեսը նշան էր բռնում և կրակում... Ռումբը շաչում էր երկար... Ձորի մյուս կողմին, լերկ բլուրների վրա տնկված մի շքեղ վրան ճխլվեց։

— Աչքդ սիրե՛մ, Վրթանե՛ս եղբայր,— ուրախությունից գոչեցին մոտիկ գտնվող հրացանաձիգները։— Մե՛կ էլ, մե՛կ էլ։

Պարիսպներից գնդակահար էին անում ներքևում սողացող մարդկային գորշ զանգվածը։ Մատուրը հայհոյում էր թուրքերեն և փթանոց քարեր շպրտում ցած։ Նա արխալուղը հանել էր, գլխարկը դեն գցել ու հոլի պես պտտվելով՝ կուտակներից քարեր էր վերցնում ու թքելով նետում...

— Ես ձեր արևը կխավարեմ,— աղաղակում էր ինքնամոռաց։

— Дружнооо!— Ոգևորում էին դրագունները։— Մատկի բասուրմանը։

Մխիթարը Վեցկի Մարգարից վերցրեց նրա հրացանը, լցրեց ու արձակեց։ Թուրքերի զանգվածի մեջ մի դրոշակ ընկավ... Մի գնդակ էլ արձակեց Մխիթարը, ապա շուռ եկավ դեպի պաշարվածները։

— Է՛յ, եղբայրնե՛ր, լսեցեք,— ոգևորիչ ձայնով կանչեց նա։— Մենք մի կյանք ունենք ու մի աշխարհ։ Մեր կյանքերը զոհենք, որ ապրի Հայոց աշխարհը։

— Կապրի՞,— բղավեցին Եսայու աշխարհազորայինները։

— Ուրեմն զարկեցեք անխնա՞,— պարիսպների վրա զրնգաց Մխիթարի ձայնը։— Հալիձորը չենք տա մեր արյան թշնամուն։ Պահենք Հալիձորը, Դավիթ-Բեկի նշխարները։

— Կպահե՞նք,— նորից միահամուռ պատասխանեցին նրան։

Եվ մոլեգնեցին՝ իրենցից դուրս, ինքնամոռաց քաջությամբ։

Կանայք հալած ձյութ թափեցին պարսպից։ Պատանիները չոր խոտի խրձեր էին վառում ու նետում գրոհող թուրքերի գլխին։ Հենց որ տեսնում էին Մխիթարին, ոգևորվում էին կրկնապատիկ։

Ներքևից գոռում էին, սպառնում, հայհոյում։ Քարագնաց ասկյարների մի խոշոր բազմություն կարողացավ մագլցել ձորի բերանը փակած

ժայռն ի վեր և հասնել ցաքի թփերով պատած մի հարթության։ Նրանք պպզեցին ու սկսեցին կրակել հրացաններից։ Դատարկ հրացանները տալիս էին զինակիցներին, լցվածները վերցնում։ Մխիթարը ականատես էր իր մարդկանց ոգևորությանը։ Նա տեսավ, թե ինչպես պարսպի վրայից մի կին ընկավ՝ եռացրած ջրով լի կաթսան ձեռքին։ Մի շիկամորուս գրագուն ձեռքից բաց թողեց հրացանն ու շոքեց պարսպի ատամների արանքում։ Մխիթարն աչքերը փակեց։ Գահավիժող կնոջ ճիչը խրվեց սրտում։ «Այսպես կպահենք Հալիձորը»,— մտածեց և գնաց դեպի քաղաքի դարպասը։ Պետք է ստուգել դուռը, արդյոք ամո՞ւր է։

Նսային պատի վրայով վազեց դեպի թնդանոթաձիգները։ Հևալով բռնեց Վրթանես զինագործի ուսը։

— Տեսնո՞ւմ ես այն ժայռի վրայի փոքրիկ մացառուտը։

— Տեսնում եմ,— հանդարտ պատասխանեց զինագործը։

— Այնտեղ հրացանակիրներ կան, խփիր, ցրի՛ր։

— Տեսնենք,— նորից զարմանալի հանդարտությամբ ասաց Վրթանեսն ու թնդանոթի փողը դանդաղ շրջեց։ Թնդանոթը թեթև ծուխ արձակեց, ետ գնաց։ Ռումբն ընկավ մացառուտը։

— Էլի՛, էլի՛,— խենթացավ Նսային։

Ոչ մի կերպ թուրքերը չկարողացան մոտենալ քաղաքի պարիսպներին։ Լեռնալանջերին, ձորերում ու մացառուտներում բազմաթիվ դիակներ էին ընկած։

Միայն կեսօրին թշնամուն հաջողվեց վիմակոծան մեքենան բարձրացնել ձորից ու հրել դեպի պարիսպը։ Աշտարակում կանգնած Մխիթարի մոայլ դեմքն ավելի մթնեց։ Նա լավ գիտեր, թե ինչ ավերածություն կարող է պատճառել այդ հրեշավոր մեքենան։ Դա չէր այրվում, ծածկված էր լավ թրջված թաղիքի շերտով, վրան թափած կրակը թշշում էր միայն ու սահում։

Բայց նրա զարմանքը շատ եղավ, երբ ահռելի դղրդոցով մի ծանր բան ընկավ վիմակոծան մեքենայի վրա ու ջարդուփշուր արեց հենց պարսպի տակ։ Նրան հետևող թուրքերի ալիքը ետ մղվեց։ Պաշարվածները ցնծացին։

— Ո՞վ է մտածել այդ անսպասելի միջոցը,— հարցրեց Մխիթարը յուրայիններին։

— Մովսես աբեղան,— պատասխանեց Փոքր Գորգին։— Կավարտի մետաղագործների ու իր աշակերտների հետ նա է գիշերը հանել Սուրբ Մինաս եկեղեցու հարյուր փթանոց զանգը և փայտե ճախարակների օգնությամբ բարձրացրել պարսպի գլուխը։

— Բայց չէ՞ որ նա աբեղա է, տե՛ր գահերեց,— տարակուսեց Փոքր Գորգին։

— Նա վաղուց է հեռացել վանքից։ Այդպիսի քաջի ու գիտունի համար չէ վանքն ու աբեղայի զգեստը։ Գնա, հրամանս հայտնիր Մովսեսին։

Վիմակոծան մեքենայի ջախջախումը նոր ոգևորություն առաջացրեց պաշարվածների մեջ։

— Որ ձեր Մուհամմեդն էլ գա, մեր քաղաքը չի առնի, ա՛յ թուրքեր,— գոռում էին պարսպի վրայից։

— Ձենք տա,— արձագանքում էին ռուս զինվորները։

* * *

Մութն ընկավ։ Թուրքերը ետ քաշվեցին՝ պարիսպների տակ մի քանի հարյուր դիակ թողնելով։ Զոհեր ունեին նաև հայերը։ Զինվորներից ընկել էին վաթսուն հոգի, սպանվել էին մի այդքան էլ քաղաքացի և վեց հրացանաձիգ ռուս։ Նրանց թաղեցին եկեղեցու բակում, միևնույն գերեզմանի մեջ։

Մխիթարը գոհ էր առաջին օրվա հաղթանակից։ Այսպես կդիմանան մինչև Բայանդուր իշխանի գալը, մինչև ձմեռ։

Բայց այդպես չէին մտածում թուրքերի հետ հաշտվելու կողմնակիցները և մանավանդ Միհրան հարյուրապետը։ Գիշերը սա գնաց Տեր-Ավետիսին այցի։

— Եթե ամեն օր թուրքերը գրոհեն, ու մենք այսօրվա չափ կորուստ ունենանք, ապա մի ամիս հետո այլևս մարդ չի լինի քաղաքում,— ասաց նա Տեր-Ավետիսին։

— Հրամայված է դիմանալ, մինչև հայրդ ու Բայանդուրը հասնեն։— խոժոռ խոսեց Տեր-Ավետիսը։

— Կարծում ես նրանք կգա՞ն։ Գան էլ՝ կարո՞ղ են վախեցնել Աբդուլլահ փաշային։

— Հույս ունեմ։

— Իզո՞ւր,— գլուխն օրորեց Միհրանը։— Ցոթը տարի հույսով ենք կերակրվում, բայց էլի էն սանդն է, էն ջուրը։

— Դա քո և իմ իմանալու բանը չէ. կա գահերեց զորավար, թող ելքը գտնի նա։

— Գահերե՛ց,— տնազ արեց Միհրանը։— Ռամիկ ասա, տե՛ր հազարապետ։ Իրա ի՞նչ հոգն է, թե դու կամ ես կկորցնենք մեր հողերը, մեր գյուղերը, թե որձակոտոր կլինեն մեր տոհմերը։ Փառքի ետեից ըն-

կած բախտախնդիր է նա։ Մի՞թե նրան պիտի վստահենք մեր աշխարհը, տե՛ր հազարապետ։

— Լռի՛ր, չե՛մ ուզում. մի՛ խոսիր,— Տեր-Ավետիսը ձեռքը թափ տվեց։ Տրամադիր չէ՞ր խոսելու։ Ո՛չ, նա հասկանում էր Միհրանին։ Նույնը կրկնում էին նաև Պղինձ Արթինը, գյուղերի ու ընդարձակ հողերի տեր հարյուրապետները։ Նույն բանը տանջում էր և իրեն։ Բայց արժանապատվությունից ցածր էր համարում նրանց առջև բաց անել իր կասկածի կծիկը։ Նա ևս կորցնում էր դիմադրությամբ երկիրը փրկելու հույսը...

Թեկուզ Բայանդուր իշխանը տասը հազարանոց բանակ կազմի ու բերի, միևնույն է, թուրքերին հաղթահարելն անհնարին է։ Թեկուզ Հալիձորի տակ մի ճակատամարտ էլ շահեն, հետո՞։ Հետո որտեղի՞ց պիտի զորք հավաքեն։ Ինչո՞ւ խաբել այս անօգնական ժողովրդին և կորստյան մատնել մինչև վերջին ջրաղացպանը։

Հալիձորն ու Սյունիքը փրկելու մի յուրահատուկ պլան էր հետզհետե ծնվում, մարմին առնում Տեր-Ավետիսի գլխում Բայց և վաղաժամ էր համարում մեկնել իր միտքը։

* * *

Այդ նույն պահին իր վրանում, ծալովի աթոռի վրա փլվել էր Արդուլլահ փաշան։ Նրա առջև խոնարհ երկուտակվել էին փաշաները, եվրոպացի խորհրդատուները, բանակի մեծ մոլլան ու մելիք Մուսին։

— Ընկածներին թաղեցինք,— դանդաղ զեկուցում էր մեծ մոլլան։— Նրանց մեջ էին ութ աղասի ու երկու փաշա։ Ընկան ալլահի հավատի համար։

— Ալլահը թող լուսավորի նրանց հոգիները,— ծամծմեց փաշան։

— Արաքսի կիրճում հայերը խլել են մեզ զինամթերք ու պարեն բերող գումակը,— շարունակեց մեծ մոլլան։

— Հը՛մ...— մոլտաց փաշան։— Մեկի տեղ հազարը կհանեմ այդ հայերի մեջքից։ Ուրի՞շ։

— Պարսից Թահմազ Ղուլի Նադիր խանը Խորասանում զորք է հավաքել և նեղում է Միր Մահմուդին (սերասկյարը լսողությունը սրեց)։ Ստամբուլից շտապեցնում են։ Թավրիզի քո տեղապահն անհանգստանում է։ Նադիրը կարող է գալ Թավրիզի վրա։

— Մի՞թե,— փնչացրեց Արդուլլահը։

— Մուխիթար փաշայի զորապետ Բայանդուր խանը գնացել է Վայոց ձոր՝ մեզ օգնության եկող բանակի ճանապարհը կտրելու։

— Ճակատամարտ եղե՞լ է։

— Ոչ դեռ։ Խորամանկ հայ խանը ետ-ետ է քաշվում՝ Վայոց ձորի բանակը թակարդ գցելու համար։

— Իր կամքն է, եթե կարողանա,— քմծիծաղեց Արդուլլահը,— խորամանկ զորավար է Բայանդուր խանը։ Ասում են՝ ուռուսների մոտից է։ Մուխիթարն էլ է խորամանկ։ Բայանդուրին թողել է դրսում, որ ոչ հավաքի ու գա կպչի մեր թիկունքին, մեզ վրա եկող ճանապարհները փակի, մեզ խեղդի այս վայրենի ձորում։— Նա ծառս եղավ տեղը և ծանր գնաց դեպի լայնեզր գլխարկներով, նեղ, սափրած դեմքերով եվրոպացիները։— Ի՞նչ կասեք, երևելի զորավարներ։ Ձեր Քրիստոսը հա՞յ է, թե՞ թուրք (քրքջաց)։ Ինչպե՞ս առնենք Հալիձորը, հը՞, խոսեք, է՞...

Եվրոպացի խորհրդատուները խոր գլուխ տվին։ Անգլիացի գնդապետը ցանկացավ բերանը բաց անել, սակայն փաշան ձեռքը թրի պես մեկնեց դեպի Հալիձոր։

— Առնե՛լ,— գոչեց նա։— Ինքդ, գնդապե՛տ, առաջնորդիր գրոհող գնդերը։ Լսո՞ւմ ես, սուլթանի գանձարանով ես հարստանում անտեղ։ Որտե՞ղ է ձեր խելքը, խորամանկությունը։ Ո՞րն է ձեր եվրոպական խորհուրդը։

— Բայց, պայծառափայլ փաշա...— կմկմաց գնդապետը։ Սակայն փաշան ձեռքը թափ տվեց։

— Յոթ օր ձեզ ժամանակ։ Կամ Հալիձորը, կամ գլուխներդ,— որոտաց փաշան ու շուռ գալով մտավ իր վրանի սեղանատուն հարկաբաժինը։

Փաշաները հետևեցին նրան։ Գնացին նաև եվրոպացիները՝ սերասկյարի ճոխ սեղանից բաժին ունենալու հույսով...

ՕՐՀՆՅԱ՛ ԱՆՁՆ ԻՄ, ՏԵ՛Ր...

Չնայած թանձրամութ գիշեր էր, բայց թուրքերը շարունակում էին ռմբակոծել Հալիձորը։ Հանկարծ լսվում էր մի խուլ դղրդոց, որին իսկույն հաջորդում էին մարդկային ճիչեր։ Զինվորներն ու քաղաքացիները վազում էին ավերված տան կողմը՝ փլատակների տակից վիրավորներին ու դիակները հանելու։

Սաթենիկ տիկինը հակվել էր փոքրիկ սեղանին ու շարունակում էր հյուսել իր պատմությունը։ Նա շտապում էր։ Ցնցվում էր հաճախակի որոտմունքից. ահով նայում էր կից սենյակի կողմը, որտեղ քնած էր փոքրիկ Դավիթը։

Նա մենակ էր։ Ահարոնն իր մի խումբ պատանիների հետ գտնվում էր պարիսպների վրա։ Իսկ ամուսինը գրեթե տանը չէր լինում։ Կռվում էին։ Տանը չէր նաև Ծամամը. գնացել էր օգնելու բուժակներին ու վիրակապ կանանց, որոնք եկեղեցում դարմանում էին վիրավորներին։ Ինքն էլ այնտեղ էր ողջ ցերեկը։ Բայց այժմ մի կարճ պահով եկել էր վերջին շաբաթվա դեպքերը շարադրելու իր մատյանում։

Սենյակը տխուր էր, թափուր ու սառը։ Տիկնոջ ձեռքը դողում էր։ Սիրտը լցված էր, բայց չէր արտասվում։ Սակայն միտքը գործում էր զարմանալի հստակ, և նա գրում էր.

«Արդ, ես հոգնեցի արյունահեղ դեպքերի ու աշխարհաքանդումների վիպասանությունից։ Այս պահին թուրքը պաշարել է քաղաքը մեր և գազազում է մեր արյանը ծարավ։ Մելանն ինձ հարազատներիս արյունն է թվում, փետուր գրիչս՝ սրտիս ուղղած նիզակ։ Թեև ես հոգնել եմ տիվ ու գիշեր դառն պատմություններ հյուսելուց, բայց շտապում եմ, որովհետև ահ ունեմ, թե պարտքով կմնամ մարդկանց ու աշխարհի առջև...

«Ավա՜ղ պատմությանս ջանքերին և եղո՜ւկ սկսմանս, որովհետև խնդությամբ չեմ կարողանում շարադրել վեպս, այլ լցված եմ սգով ու ահով. հոգնած եմ անթիվ ցավերից ու թանձրատարափ ողբերից։ Պակասում է ուժը Սյունյաց տան։ Չկա թշնամիներին սանձող Դավիթ-Բեկը, որ բոլորի սիրտը հանգուցանում էր իր կողմը։ Զարահնար մտքով լքեց ու դավաճանեց Ագուլիսի պարոն-տեր մելիք Մուսին. սկսվեց քայքայվել, տրոհվել ամեն կարգ իշխանության մեջ։ Բարին սկսեց ի փախուստ դառնալ, եկավ չարն ու խռովությունը։ Երևաց թշնամին արդարության և հակառակն ճշմարտության, այն բանսարկուն, որ հանապազ փեռեկտում է մեր միաբանությունը։ Խափանվեց նորոգումն մեծավիճակ տանն հայոց։ Աստված թող ողորմի ոտնահար ու վշտաբեռ ազգիս հայոց։ Տե՛ր, դու արփիացրու հայազունս, որ սպասում են քո աջակից ձեռքին»։

Դուռը բացվեց։ Սեղանին դրած երկճյուղ աշտանակի բոցը թրթռաց։ Շեմքին երևաց Ծամամը։ Աղջիկը գունատ էր, սարսափած։ Դուռը մի կերպ ծածկելով՝ նա մեջքով հենվեց նրան ու գլուխը կախեց։ Տիկինը, դժբախտություն գուշակելով՝ վեր կացավ։

— Վիրավո՞ր ես,— հարցրեց դողդոջ։

Ծամամն ընկավ նրա գիրկը և ձեռքերը նրա կրծքի վրա սահեցնելով՝ դանդաղ չոքեց։ Տիկնոջ աչքերը մթնեցին, ուշքը հազիվ պահեց։ Բազմաթիվ ծանր մտքեր անցան նրա գլխով։ Որդի՞ն... Մխիթա՞րը. ո՞ր սիրելին արդյոք։ Նա գետնից պոկեց թուլացած աղջկան։

— Ասա, ի՞նչ սև լուր ես բերել։

Ծամամը գլուխը թափահարեց։

— Սև լուր չկա, մայրի՛կ-տիկին,— պատասխանեց ու հեկեկաց։

Տիկինը նրան նստեցրեց աթոռին ու պահանջեց անմիջապես հայտնել, թե ինչ է պատահել։ Ծամամը երեսը շուռ էր տալիս, դեմքը ծածկում ձեռքերով, ոտքերը թփթփացնում ցավագին և հեկեկում անզուսպ, վիրավորված, մեծ վշտով։ Տիկնոջ սպառնալի պահանջներին զիջելով՝ նա հազիվ կարողացավ անջատել շրթունքները։

— Ես հղի եմ,— ասաց, ու անզոր փռվեց գետնին։

Սենյակը պտտվեց Սաթենիկ տիկնոջ գլխին։ Կարծես թանկագին մի բան պոկվեց նրա կրծքից։ Նա շտկվեց, ահեղ հայացքով նայեց գետնատարած աղջկան և, անզուսպ բարկությամբ բռնելով նրա ուսերը՝ բարձրացրեց ու մի՞շառաչուն ապտակ հասցրեց նրան.

— Ումի՞ց է, ո՞ր սրիկայից։ Ասա, կխեղդեմ։

Դուռը շրխկոցով բացվեց, ու ներս ընկավ Ահարոնը։

— Մա՛յր,— ցասումով գոչեց նա։— Բաց թող աղջկան, մա՛յր։ Նա մեղք չունի։ Մեղավորը ես եմ...

Տիկին Սաթենիկը ուշաթափվեց... Ահարոնը հափշտակեց ջրամանը։ Ծամամը երկու ձեռքով խփեց գլխին, բայց Ահարոնն իր ափով խեղդեց նրա ճիչը։

— Ձայն մի հանիր,— հրամայեց անշփոթ։— Դուռը փակի՛ր, ոչ ոք չպիտի իմանա եղածը։ Արի ուշքի բերենք մայրիկին։

Կես ժամ. հետո մեռելի գույն ստացած տիկինը փլվել էր թախտին և պղտոր հայացքով նայում էր իր առջև չոքած որդուն և Ծամամին։ Խորին կսկիծ կար նրա դեմքին, որն ասես երբեք չի մարելու։

— Արա ինչ ուզում ես, մա՛յր իմ, ես սիրում եմ Ծամամին։ Ես իմ կինը պիտի դառնա,— հազիվ լսելի ձայնով ասաց Ահարոնը։

— Անողո՞րմ աստված,— մորմոքվեց տիկինը։— Ո՞ր մեղքիս համար ես այդպես պատժում ինձ։— Նա լաց եղավ՝ անզոր, անօգնական։— Այս դժբախտ օրերի՞ն... Երբ մահն է բախում մեր դուռը։ Տե՛ր խղճա՛, գթա՛...

— Օրհնիր մեզ, մա՛յր,— մռայլ պահանջեց Ահարոնը։— Իմ տղաներն ինձ են սպասում։ Ախուվախի ժամանակը չէ, վերջացրու։

Տանու երեցին գտան պարիսպների վրա ու բերին տիկնոջ սենյակը։ Սաթենիկը նրան հրամայեց որդուն ու Ծամամին տանել եկեղեցի և պսակել իսկույն։ Երեցին թվաց, թե տիկինը կատակ է անում։ Բայց Ահարոնը բռնեց նրա թևը։

— Գնանք, ժամանակ չկա, ուր որ է կլուսանա,— մյուս ձեռքով բռնեց Ծամամի դաստակը ու քաշեց դեպի դուռը։ Բայց դեռ դռներին

չհասած, նրանց մեջ երևաց Մխիթարը։ Վեհ էր, հայացքի մեջ չարություն չկար. տագնապ չկար նաև. միայն զգեստներն էին փոշոտ, ու հոգնածություն կար դեմքին, կնճռված ճակատի վրա։

— Ե՞րբ եղավ, ե՞րբ մեծացան,— հանդարտ, ասես ինքն իրեն խոսեց նա։— Երեկ բարուրի մեջ էիր, Ահարո՛ն, չնկատեցի, թե ինչպես բարուրի տեղ զրահ հագար... Ժամանակ կա՞ր, որ նկատեի, զավա՛կս... Լսո՞ւմ եք, դրսում թշնամին է՝ նենգ, աշխարհաքանդիչ։— Դարձավ կնոջը։— Մի՛ շփոթվիր, Սաթենի՛կ, պատերազմ է, բայց կյանքն իր ճանապարհով է գնում։ Ո՞վ կարող է շեղել...— Հայացքը գցեց իրար կից կանգնած Ահարոնին ու Ծամամին։ Սրանք ծունկի իջան։— Օրհնում եմ ձեր պսակը,— դողդոջ շարունակեց Մխիթարը։— Աստված է վկա մեր օրին, սակայն արի եղիր, Ահարո՛ն։ Կանգնիչ եղիր մեր աշխարհին։ Գնացեք եկեղեցի, թող կատարվի կատարվելիքը։

Ահարոնը համբուրեց հոր ձեռքը։ Ծամամը հազիվ էր ուշքը պահում գլխին։ Տիկինն արտասվում էր։

— Մի՛, մի՛ լաց, տիկինս,— առաջ եկավ Մխիթարը։— Որդուդ պսակն է, ուրախացիր, ցնծա։ Իսկ թե վաղը ինչ կլինի՝ երկնայինին է հայտնի միայն։

Ահարոնը բռնեց Ծամամի թևն ու երեցի հետ դուրս եկան։

— Տե՛ր աստված, այս ինչ սերունդ է աշխարհ եկել,— նրանց ետևից նայելով շշնջաց սարսափահար տիկինը և, օրհնության խոսքեր ասելով՝ թուլացած նստեց։ Նրա դեմ նստեց նաև Մխիթարը։ Երկուսն էլ լուռ էին միաժամանակ։

— Ի՞նչ ես խորհում, Սաթենի՛կ— վերջապես լռությունը խզեց Մխիթարը։

Տիկինը գլուխը բարձրացրեց։ Նրա հայացքը ծանր էր, հանդիմանությամբ շեշտված։ Բայց և ափսոսանք և կարեկից մի ջերմություն կար այդ հայացքի մեջ, որից Մխիթարը խղճի խայթ զգաց։ Սակայն տարավ կնոջ հայացքի դառնությունը։

— Ի՞նչ կարող եմ խորհել, երբ թշնամին է բախում մեր դուռը,— դանդաղ խոսեց տիկինը։— Ծանր օրեր բաժին ընկան մեզ, և տակավին հայտնի չէ ելքը։ Անշուշտ ականջիդ հասել է քո զինակիցներից ոմանց տրտնջոցը։

— Հասել է, այո, և տրտնջացողները քիչ չեն։

— Շտապեցրու Բայանդուր իշխանի գալը, Մխիթա՛ր։ Պետք է կանխել հնարավոր երկպառակտումը։ Դա սպասելի է։

— Հիրավի,— Մխիթարի դեմքը թթվեց։— Սակայն ինչո՞վ շտապեմ։ Բայանդուրը Վայոց ձորումն է։ Թուրքական մի խոշոր բանակ ևս մտել է մեր աշխարհը։ Բայանդուրը հիմա կռիվներ է մղում նրա դեմ։ Աստված օգնի, որ հաջողությամբ գլուխ բերի գործը։ Սակայն Բայանդուրի չգալը չէ տրտունջների պատճառը։ Ուրիշ բան կա, տիկի՛նս, ուրիշ մեծ պատճառ։

— Պատժիր տրտնջացողներին։— Տիկնոջ աչքերը փայլատակեցին։

— Ո՞ր մեկին պատժես,— ձեռքերը տարածեց Մխիթարը։— Եվ ինչպե՞ս պատժես։ Յոթը տարվա կռիվները մաշել են մեզ. մարդիկ սկսել են կորցնել իրենց հավատը. երկիրն ու ժողովուրդը փրկելու ուրիշ ելք են որոնում։ Եվ ապա, ո՞վ եմ ես Սաթենի՛կ։ Ի՞նչ իրավունք ունեմ այս աշխարհի վրա. նա պատկանում է նրա օրինական տերերին։ Իմ երեկվա զինակիցներից շատերն այսօր ուզում են, որ ես հեռանամ Հայաստան աշխարհից։ Ես, որ ձագեձորցի մի խղճուկ ռամիկի որդի եմ, մի մարդ, որի հորը ճիպոտների տակ մաշելով դրկեցին հայրենի տնից։ Իմ ռամիկ հայրը Սյունիքից փախչելով՝ Գանձակում վաճառեց իր անձը, որպեսզի իր զավակներին փրկի սովամահությունից։ Ես այդ ստրուկի որդին եմ։ Ինչո՞ւ ուսերիցս նետեցի ստրուկի լուծը, ինչո՞ւ գահերեց դարձա։ Զգիտեի՞, որ ես ո՛չ տուն ունեմ, ո՛չ մի հողատարածք այս բովանդակ աշխարհում։ Ինչո՞ւ։ Սաթենի՛կ, պատասխան տուր։ Եղինջ էի, ուրեմն, ինչո՞ւ մտա ազնիվների ծաղկանոցը։

— Արդարը չես խոսում, Մխիթա՛ր,— հառաչեց Սաթենիկը։— Դու արյունով ու քաջությամբ ես բարձրացրել քո անունը։ Հայոց ժողովրդի սերն ես վայելում դու և իրավունք չունես նվաստացուցիչ խոսքերով պախարակել քո անձը։

— Նվաստը նվաստության է արժանի,— տեղը կանգնելով՝ բարկացած ասաց Մխիթարը։— Ազնվական արյուն ունեցող ստահակները չեն հասկանում, որ փառասիրության և հարստության ձգտումը չէ տեր եղել իմ զգացմունքներին, ես իմ կյանքը նվեր եմ բերել մեր աշխարհի ու մեր մենակ թողնված ժողովրդի փրկության համար։ Հասկանո՞ւմ են այս, հազիվ թե։ Ես կռվում եմ՝ իմանալով, որ ի վերջո ինձ էլ հորս նման կվռնդեն մեր աշխարհից, նենգաբար կվերացնեն ինձ։

— Տե՛ր աստված, ո՞ր ցավին դիմակայուն լինեն փխրուն հոգիները մեր,— հառաչեց Սաթենիկը։

— Գիտե՛մ...— շարունակեց Մխիթարը։— Սակայն բնավ չեմ դառնա իմ բռնած ճանապարհից։ Միայն ափսոսում եմ, որ քեզ էլ, Սաթենի՛կ, տառապանք պատճառեցի երկար ու ձիգ տարիներ։ Դու երկրպագվելու էիր արժանի, բայց ես ոտնահարեցի քո սրբազան զգացմունքները։ Դու սիրո էիր արժանի, բայց չստացար։

Սաթենիկը հեկեկաց։

— Արգելում եմ այդպես խոսել, Մխիթա՛ր. ես կատարել եմ ազգությունը, և իմ խիղճը հանգիստ է ու մաքուր քո և աստծու առջև։ Մի՛ քրքրիր հոգիդ և արիացիր։ Այս ճակատագրական օրերին մեզ միայն մի բան պետք է առաջնորդ լինի՝ երկրի ու ժողովրդի շահը։ Գնա, ուրեմն, կատարիր քո պարտքը, ինչպես վայել է մի ազգի արժանավոր զավակին։

Կից սենյակի դուռը բացվեց, և շեմքին երևաց փոքրիկ Դավիթը։ Մանուկը կիսամերկ էր, քնատ։ Փոքրիկ բռունցքներով ճմրթում էր խոշոր աչքերը։ Մազերը գզգզված էին, ճակատի վրա խոնված։

— Մայրիկ, թուրքերը փախա՞ն,— հարցրեց փոքր-ինչ խզված ձայնով։

Մայրը գլուխը շուռ տվեց, որպեսզի որդին չտեսնի իր լացած աչքերը։

— Կփախչեն, Դավի՛թս,— դեպի երեխան նետվեց Մխիթարը։— Չլինի՞ վախենում ես։— Նա որդուն գրկեց։ Դավիթը մերկ թևերը փաթաթեց հոր պարանոցին։ Դրանից հայրն անսահման բերկրանք զգաց։

— Չեմ վախենում,— ասաց երեխան,— գիտեմ, որ դու և Ահարոնը կփախցնեք թուրքին։

— Այո, անշուշտ, իսկ երբ դու մեծանաս, մեծ զորավար կդառնաս, ձիու վրա, թրով, զրահով կվանես մեր աշխարհի թշնամիներին։ Այդպե՞ս է։

— Ըհը՛,— Դավիթը համբուրեց հորը։

Դա սաստիկ հուզեց Մխիթարին։ Որդուն դնելով մոր գիրկը՝ նա արագ դուրս եկավ։ Պետք է գնալ զորքի մեջ, բացի այդ, վախենում էր երկար մնալ ընտանեկան հարկի տակ, կհուզվի անհարկի։ Այնինչ, այժմ միայն սառնասրտություն էր պետք, դաժան, սառնասրտություն, զոհողություն՝ անձի, կնոջ, զավակի։

Դրսում նրան սպասում էր Փոքր Գորգին։ Խավար գիշեր էր։ Երկնքում ճրագող հատուկենտ աստղեր կային միայն։ Մութ էր շրջապատը։ Մութ էին քաղաքի մարտական աշտարակները, տների պատուհանները, նեղ, ոլորուն փողոցները։ Իսկ մի՞թե մթագնած չէր Մխիթարի հոգին։ Մանր մի նախապաշարում էր համակել հայոց զորքի գահերեց զորավարին։ Ինչի՞ց էր։ Չէր կարողանում պարզել։ Այն բանի՞ց, որ թշնամու ահռելի բանակը չոքել էր հայրենի քաղաքի պատերի տակ, թե՞ այն շշուկներից, որ համառորեն պտտվում էին Հալիձորում։ Երկուսն էլ ապտնապում էին նրա հոգին։ Բայց թշնամուց առավել նրան անհանգստացնում էին չարահնար շշուկները։ Երբեք այդպես չէր եղել։ Մաշեցին, հալեցին թուրքերի վիթխարի բանակը, նրա կեսը հազիվ մնաց, և նորից

կմաշեն, կոչնչացնեն նրան։ Իսկ ինչպե՞ս փակես հուսալքվածների բերանը։ Օր-օրի ավելանում են, դառնում սպառնալի։

Մխիթարն ու Գորգին բարձրացան մայր աշտարակի սանդուղքի աստիճաններով։ Պահապան զինվորները հարգանքով ճանապարհ տվին գահերեցին։ Թնդանոթի մոտ քնել էր Վրթանեսը։ Վոլոդիմիր խլերը ցանկացավ արթնացնել նրան, բայց Մխիթարը նշան արեց, որ չխանգարի զինագործի քունը։ Անցավ անաղմուկ։ Կանգ առավ պարսպի ատամների մոտ։ Նրանց արանքում մեջքի վրա քնել էր որդին՝ Ահարոնը։ Գլուխը ետ էր գցել, ճակատին մարմրում էին աստղերի հազիվ նշմարելի ցոլքերը։ Որդին եկեղեցուց, պսակից հետո, անմիջապես եկել էր իր պատանիների մոտ։ Տեր-Ավետիսի որդին արթուն էր, նիզակով, հրազենով։ Շփոթվեց գահերեցին տեսնելով։ Սպասեց նրա մի խոսքին։ Բայց Մխիթարն անցավ։

Պարսպի ծալքում կուտակվել էին պղնձաքարցի ռամիկները։ Մեկը մի բան էր պատմում ընկերներին։ Մխիթարը մոտեցավ ընդհուպ։ Քարակույտի վրա նստած էր Գոհարը։ Հրացանը ծնկներին, սաղավարտով ու զրահով այդ կինը երևույթ թվաց Մխիթարին։ Սա ցնցվեց. խղճի գառն խայթ զգաց նորից, ինչպես քիչ առաջ իր տանը՝ սեփական կնոջ մոտ։ «Քանի՞ սրտեր են փշրվում և հանուն ինչի՞»,— մտածեց նա դառնությամբ։ Նորին մի հարազատություն զգաց դեպի պղնձաքարցիները։ Երբեմնի անհող ու անտուն այս թշվառները հայրենի իշխանության օրոք միայն հողապատառի ու տան տեր դարձան։ Իսկ ահա ավերիչ ոսոխը եկել, սրանց տունն ու հողը խլել է կամենում։ Մի՞թե չարժե այս տարաբախտների համար զոհել սեփական կյանքը, փառքը, ընտանիքը։

Նրանց հետ ևս խոսքի չբռնվեց Մխիթարը։ Ի՞նչ խոսեր, չէ՞ որ բոլորին պարզ էր ամեն ինչ։ Ահա Հայոց աշխարհի վտանգված բախտը և ահա հայոց բախտի թշնամին։ Կվանե՞ս թշնամուն՝ կապրես, չե՞ս վանի՝ կկորչես անհետ։

Ողջ գիշեր Մխիթարը պտտվեց քաղաքում։

* * *

Լուսաբացին թուրքերը սկսեցին նորից գրոհել Հալիձորը։

Այս անգամ նրանց հաջողվեց բազմաթիվ ելարաններ դեմ անել պարիսպներին։ Մերկ թրերը բերաններում՝ նրանք կպան ելարաններին ու սկսեցին բարձրանալ վեր։ Գահավիժում էին քարերի հարվածներից, խաշվում գլխներին թափվող եռացող ջրից, հալած ձյութից, կորչում

կրափոշու և ավազի ամպի մեջ, բայց և այնպես շատերին հաջողվում էր բարձրանալ վերև։

Լեռնալանջի անտառներն ասես տեղահան էին եղել։ Այնտեղից Թուրքերը հարյուրավոր նոր ելարաններ էին թոցնում-բերում դեպի պարիսպները։ Թնդանոթների որոտը, հազարավոր հրացանների ճայթոցները, բանակների վայրենի գոռոցն այնպես էր թնդացնում ձորը, որ պաշարվածները հազիվ էին լսում միմյանց ձայն։ Ներքևից արձակած արճճի գնդակները կարկուտի պես տեղում էին հալիձորցիների վրա։

Գրոհն ավելի համառ էր մայր աշտարակի մոտ, որտեղ պարիսպը համեմատաբար ցածր էր։ Այդ աշտարակը պաշտպանում էր Գոհարի գունդը։ Թուրքերի մի մեծ խմբի հաջողվեց հասնել պարսպի գլուխը։ Հայերը փորձեցին փակել նրանց ճանապարհը, բայց բերդակռիվներում փորձված Թուրքերը հեշտությամբ կոտորում էին աշխարհազորի ռամիկներին։

Տղամարդու զգեստներ հագած Գոհարն այլայլվեց։ Իր մարդիկ հրնձվում էին անխնա...

— Օգնությո՜ւն,— ծղրտաց նա ու նետվեց յուրայինների մեջ։ Սուրը մխրճվեմ մի Թուրքի կող։ Մի ուրիշ Թուրք վայրենի մոլուցքով թռավ դեպի նա։ Սակայն նրա վրա խոյացավ մելիք Թուրինջն ու մոլեգին հարվածեց... Թուրքն ընկավ պարսպից։ Բայց հարվածի թափից նրա հետ պարսպից ընկավ նաև ծերունին... Գոհարը սոսկաց։

Նա դեռ չէր սթափվել կատարվածի ահեղ տպավորությունից, երբ պարսպի վրա երևացին Վրթանես վարպետն ու Վոլոդիմիր Խլեբը՝ մի տասնյակ ռուսների ու հանքագործների հետ։ Կարծես կայծակ պայթեց Թուրքերի արանքում։

— Մի ընկճվեք, հա՛յ եղբայրներ,— բղավեց Վոլոդիմիրն ու մխրճվեց Թուրքերի արանքը։

Գոտեմարտը կարճ տևեց։ Ելարանները ջարդեցին, նրանց կպած Թուրքերը թափվեցին։ Պարսպի վրա եղած հատուկենտ Թուրքերին կոտորեցին և նետեցին ցած։ Գոհարին օգնության եկան նաև հալիձորցի շատ կանայք։ Նրանք նոր ելարաններ բերելու փորձ անողների վրա թափեցին տաք կրաշաղախ, շիկացած աղափոշի, եռացած ջուր։ Թուրքերը պարսպի տակից ետ փախան։ Վերևում քրքջացին։

— Է՛յ, Ստամբուլի՛ շներ, բոլորիդ արևը կխավարենք, քանի ուշ է, գնացեք ձեր եկած ճանապարհով։

Աշտարակի բարձր դիտանոցից Մխիթարը հետևում էր պաշտպանական մարտերին, երբեմն իր ձեռքի տակ եղած ջոկատներից մեկն ու մեկին ուղարկում էր պարիսպները պաշտպանող խմբերին օգնության

երբեմն ինքն էր առաջնորդում այդ ջոկատներին՝ իր ձեռքով սրահարելով պարիսպների գլուխը հասած Թուրքերին։ Նրա ներկայությունը ուժ էր տալիս պաշարվածներին, և սրանք մարտնչում էին քաջաբար։

* * *

Տեր-Ավետիսը ևս ամբողջ օրն անցկացրեց պարիսպների վրա։ Պարիսպներից իջավ այն ժամանակ, երբ մութն ընկավ, և մարտը դադարեց։ Գնաց եկեղեցի։ Սիրտն աղոթքի էր ձգտում։ Խուսափեց Մխիթարին հանդիպելուց։ Եկեղեցում ծեր հոգևորականները պաշտոն էին մատուցանում՝ երկնքի օգնությունը հայցելով։ Տեր-Ավետիսը քմծիծաղեց ճերմակող բեղերի արանքում։ «Որտեղի՞ց օգնություն գա,— մտքում հարցրեց նա։— Աստված ինքն է իր ձեռքով մեզ մատնել անօրենի սրին»։ Նա դեռ աղոթքի չէր շոքել, երբ եկեղեցի մտավ ամբողջովին զինավառ, հարյուրապետական զգեստներով Մովսեսը։ Սա գնաց, համարձակ կանգնեց սեղանի առջև և ձեռքով նշան արեց, որ քահանաները պաշտոնն ընդհատեն։ Հոգևոր հայրերը զարմացած նայեցին նրան։

— Լսեցեք, տե՛ր հայրեր,— գոչեց Մովսեսը։— Մեր աստվածը չի խոռվի ձեզանից, եթե դուք միառժամ թողնեք նրա տունը և ձեր հոգևոր պաշտոնը կատարեք քաղաքի պարիսպների վրա։ Ուրեմն դուրս եկեք եկեղեցուց և միացեք զորքին ու ժողովրդին. ոգևորեցեք նրանց և ինքներդ կռվելու օրինակներ տվեք։ Պահն օրհասական է։

«Պահն օրհասական է»,— նրա ասածները կրկնեց Տեր-Ավետիսը, և սրտում եղած դառնությունը հասավ կոկորդին։ Առաջին անգամ նա աղոթեց ջերմությամբ, մոմեր վառեց Աստվածամոր պատկերի առջև և դուրս եկավ Մովսեսի ու քահանաների ետևից։

Նեղ փողոցներով անցնելը գրեթե անհնար էր։ Շատ տներ փլվել էին ռումբերի հարվածներից։ Փլատակների տակից երբեմն երևում էին ցցված ձեռք, ոտք կամ մանկան ջարդված գլուխ։ Տեր-Ավետիսն աչքերը փակում էր։ Բայց դիակներն այնքան շատ էին, որ բոլորին չտեսնելու համար պետք էր կուրանալ։ Պարիսպների կողմից կանայք ծանր վիրավորներ էին բերում։ Վիրավորները տնքում էին, հեծկլտում, աղերսում, որ իրենց քնաբեր դեղ տան՝ հավիտյան չարթնանալու համար։ Բայց կանայք շտապում էին նրանց հասցնել եկեղեցի, որպեսզի այդ դժբախտները շունչները փչեն աստծո տանը։

«Խաբվեցի՞նք,— մտածում էր Տեր-Ավետիսը դառնացած,— կործանիչ ուղի բռնեցինք։ Կրակի մատնեցինք ժողովրդին։ Պետք չէր դիմադրել։

Հենց սկզբից պիտի ենթարկվեինք սուլթանին, կատարեինք նրա կամքը՝ այս մի բուռ ժողովրդին պահպանելու համար։

Կողքի կիսավեր տնից դուրս թռավ մի կին։ Նա գրկին սեղմել էր իր արնաշաղախ մանկանը, որի թաթիկներն անզոր կախ էին ընկել, իսկ աչքերը փակ էին։ Կինը ծղրտաց.

— Սրա մեղքը քո շլնքին, չարահնա՜ր աստված։ Անիծվես դո՛ւ էլ, քո խաչն էլ։ Կորստյան մատնեցիք մեզ...

Տեր-Ավետիսը երերաց։ Կարծես իր առջև ոչ թե որդեկորույս մի կին էր, այլ իր բզկտված հոգեվարքը ապրող հայրենիքը՝ թշվառ, անօգնական Հայաստանը։ Նա երեսը շուռ տվեց։ Քայլեց զայրացած, կործանված հույսով։ Վճռված է։ Այլևս համբերել չի կարելի։ Հապաղելը հանցանք է՝ մեծ, անփարատելի։ Ոչնչանում են գլխովի։ Պետք է բախել հույսի վերջին դուռը։ Պետք է Ագուլիսի օրինակով փրկել Հալիձորը։ Ոչ մի տեղից օգնություն չկա... Չի էլ լինի։ Ինչո՞ւ կորստյան մատնել ժողովրդին։ Թող կորչեն միայն իրենք՝ ինքը, Մխիթարը, իրենց կանայք, զավակները, մելիքները, բայց թող ժողովուրդը մնա, ժողովո՞ւրդը... Մի՞թե այդպես չարեց մելիք Մուսին. մեկը տվեց, տասը պահեց։

Նա դառը հեկեկաց։ Ապա, վազեվազ հասնելով պարսպի գլուխը որոտընդոստ գոռաց.

— Խփեցե՜ք, հայե՛ր։ Ջարդեցե՜ք։ Թող թուրքն իմանա, որ դժվար է ծունկի բերել մեզ, թող սարսափի մեզանից, թող ոչխար չկարծի մեզ։ Խփեցե՜ք...

Նա գնաց պարսպի երկայնքով՝ անհամար գնդակների տարափի տակ։ Որքա՜ն կուզեր, որ մի գնդակ խրվեր սիրտը, կուրծքը, որ ընկներ իր հարազատ զինվորների կողքին, որոնք ահա կույտ-կույտ թափվել էին պարիսպների տակ, փոսերում, փողոցներում։

***

Թուրքերն անգադար գրոհում էին։ Քաղաքը պաշտպանող մարդկանց կեսից ավելին ընկել էր արդեն, բայց հալիձորցիները դիմադրում էին անընկճում։ Գահերեց զորավար Մխիթարը չէր մտնում իր տունը։ Ցերեկը պարիսպների վրա էր, գիշերը՝ պաշարվածների հետ։ Թուրքերը երեք անգամ հասան մայր աշտարակի պարիսպների գլուխը, բայց երեք անգամն էլ ջարդվեցին։ Զրահակիր Մխիթարն իր թիկնապահ ջոկատի հետ մխրճվում էր նրանց մեջ և ոչնչացնում պարիսպների վրա։ Ոչ մի կողմից թշնամին չէր կարողանում խցկվել քաղաքը։ Վիմակործան նոր

մեքենա շինեցին նրանք և նորից մոտեցրին պարսպին։ Բայց Մխիթարի մարդիկ կործանեցին այդ մեքենան ևս։

— Մեռնենք մեր քաղաքի պարիսպների վրա, քան թե գերության մատնենք մեր անձն ու աշխարհը,— իր մարդկանց ասում էր Մխիթարը։ Եվ մարդիկ զոհվում էին տասնյակներով, հարյուրներով, բայց պահում էին իրենց քաղաքը։

Պաշարման քսանութերորդ օրվա գիշերը Վայոց ձորից սուրհանդակ եկավ։ Դա հալիձորցի մի լարախաղաց էր։ Անտառի միջով նա կարողացել էր հասնել քաղաքի արևմտյան ժայռերին ու թոկ նետելով պաշարվածների կողմը՝ նրանից կախվելով՝ մտել քաղաք։ Նրան իսկույն տարան Մխիթարի մոտ։

— Բարի՞ է,— տառապած հարցրեց գահերեց զորավարը։

— Աստված գիտե,— պատասխանեց սուրհանդակը։— Բայանդուր իշխանը ողջունում է բոլորիդ։ Ողջունում են նաև մելիք Բարխուդարն ու Շաֆռազը, զորքը ողջ։

— Որտե՞ղ է Բայանդուրի զորքը,— չհամբերեց, հարցրեց աշտարակի մեջ, գահերեցի դիտակետում գտնվող Տեր-Ավետիսը։

— Վայոց ձորում,— պատասխանեց սուրհանդակը։

— Կարմրախայտ ուտելո՞ւ է գնացել, հա՞,— չարացավ Տեր-Ավետիսը։— Ինչպե՞ս չէ։ Արփենի գետը լիքն է կարմրախայտով։

— Անտեղի ես կշտամբում նրան, տե՛ր հազարապետ,— քաշվելով ասաց սուրհանդակը։— Ծղուկ գավառում Բայանդուրը շատ մարդ հավաքեց, որ գա ձեզ օգնության։ Բայց աստված չկամեցավ։ Լուր ստացավ, որ թուրքական մի մեծ բանակ մտել է Վայոց ձոր. գնաց նրա վրա։ Արենի գյուղի մոտ մի անհաջող ճակատամարտ տվինք։ Թուրքերը մեզ նեղեցին, ետ քաշվեցինք դեպի Գնդեվանք։ Սոթող գավառից մեզ օգնության եկավ Մեծ Մազրայի տերը։ Բայանդուր իշխանը հույս ունի, որ շուտով թշնամուն կխեղդի Վայոց ձորում ու կգա ձեզ օգնության։ Միայն թե դուք ամուր պահեցեք քաղաքս և մանավանդ չխաբվեք թուրքի կեղծ ու պատիր խոսքերին։ Բայանդուր իշխանը կգա։

— Եթե իր գլուխն ու զորքը չթողնի Վայոց ձորում,— չարախինդ ասաց Տեր-Ավետիսը։

Մխիթարն աննկատելի ցնցվեց։ Տեր-Ավետիսը կարծես խոսում էր ոչ իր, այլ մեկ ուրիշի բերանով։ Ի՞նչ է ակնարկում հազարապետը. ի՞նչ է կամենում. ինչո՞ւ է այդպես չարացած։ Նրա դեմքը դաժան էր, աչքերը կորցրել էին իրենց վաղեմի փայլը, ձայնն օտարոտի էր։ «Մի՞թե սրանից է սկսվում տրտունջների կծիկը»,— մտածեց գահերեց զորավարը և նորից ցնցվեց։ «Եթե այո, ապա կկործանվի Հալիձորը»։ Մխիթարին հան-

կարծ թվաց, թե ինքը որոգայթի մեջ է։ Զգաց, որ սխալ է կատարել՝ Հալիձորից հեռացնելով Երկրի ապավեն գունդը, մելիք Բարխուդարին ու Շաֆոազին, Բայանդուր իշխանին, մելիք Եգանին։ Ապա նոր միայն հիշեց, որ Հալիձորում զորապետներ են ոչ իրեն կողմնակից մարդիկ՝ Միհրան հարյուրապետը, Պղինձ Արթինը, թեկուզ հենց Տեր-Ավետիսն իր գնդով։

Տեր-Ավետիսը շարունակում էր տրտնջալ, պարսավել Բայանդուր իշխանին, նույնիսկ անպարկեշտ խոսքեր նետեց նրա հասցեին։ Մխիթարի ակնարկով սուրհանդակը դուրս եկավ։ Դիտանոց խցում մնացին միայն երկուսով՝ գահերեց զորավարն ու հազարապետը։

— Դու իզուր ես կշտամբում Բայանդուրին, Ավետի՛ս,— վերջապես ասաց Մխիթարը։— Նա իմ հրամանն է կատարում՝ Աբդուլլահին օգնության եկող զորքի դեմ պատերազմելով։ Կավարտի Վայոց ձորի բանը և կգա մեզ օգնության։

— Զուր հույսե՞ր,— մռնչաց Տեր-Ավետիսը,— Վայոց ձոր մտած թուրքական բանակը մեծ է։ Բայանդուրից հույսդ կտրիր։ Եղած զորքն էլ կկորչի Վայոց ձորում։ Դու քո քաղաքին նայիր, տե՛ր գահերեց։ Պաշտպաններիս թիվը պակասել է եռակի, իսկ թշնամին քաշվելու միտք չունի։ Մինչև ե՞րբ կարելի է դիմանալ։

— Մինչև մեր շունչը վերջին,— բարկությունից հևաց Մխիթարը։

— Մինչև կորուստը՞ ազգինի հայոց։

— Թեկուզ այդպես։

— Ո՛չ,— անսպասելի ձայնը բարձրացրեց Տեր-Ավետիսը։— Դա փրկություն չէ։ Դա ելք չէ։ Դա կորստյան մատնել է ժողովրդին։— Նրա աչքերում արցունք երևաց։ Մխիթարն ափսոսանքով զգաց, որ իր վաղեմի զինակիցը կորցնում է իր երբեմնի հավատը դեպի իրենց ուժը և դրա հետ էլ կորցնում է իր արիությունը։

— Լսիր, Մխիթա՛ր, սիրելի՛ս,— անսպասելի ընկճված ձայնով խոսեց Տեր-Ավետիսը։— Այս անգամ լսիր ինձ։ Մենք անզոր ենք ընկճել թշնամու ուժը։

— Այդպես խոսում է միայն վախկոտը,— ցասումով նետեց Մխիթարը։

— Ինչ ուզում ես համարիր ինձ, Մխիթա՛ր, թքիր երեսիս, բայց խորհիր մեր բարին։

— Մե՞ր, թե՞ մեր աշխարհի։

— Մեր աշխարհի։ Նա ոտնակոխ է լինում։ Արի հաշտություն խընդրենք փաշայից. տուգանք տանք, հարկ տանք, պատանդ տանք, միայն

հեռացնենք նրան Սյունիքից։ Տանք Հալիձորը թեկուզ, որդիներիս պատանդ տանք, ինքներս մեր գլուխները թեքենք, հպատակվենք։

— Խելագա՞ր ես, հազարապե՛տ,— Մխիթարի հայացքը վայրենի էր. ձեռքն ակամա գնաց դեպի թուրը։

— Խելագարը մեր բռնած գործն է,— չզիջեց Տեր-Ավետիսը։— Ես իմ պարտքն եմ համարում ասել մտքինս, ասել այն, ինչ խնդրում են շատերը։ Արի հպատակվենք թուրքին, գնանք փաշայի ոտքը, կանխենք կոտորածը...

Տեր-Ավետիսը խոսում էր աղաչանոք, սակայն Մխիթարն այլևս չէր լսում նրան։ Նրա աչքերը մթնել էին բարկության կրակներից։ Ձեռքը դողում էր թրի դաստակի վրա։ Մի պահ ևս, և կմերկացնի թուրը։ Բայց մի այրող, արթուն միտք ետ էր քաշում նրա ձեռքը։ Ո՞ւմ վրա թուր հանի, Տեր-Ավետիսի՞, որի հետ երկար ու ձիգ տարիներ մարտնչել են թշնամիների դեմ՝ բազուկ-բազկի, միակամ ու միախորհուրդ։ Հիշեց Գազանգայլի լեռների ճակատամարտը, երբ ինքը, մխրճվելով փախստական պարսիկների մեջ՝ շրջապատվեց նրանցից և կընկներ սրահար, եթե իր աղաղակի վրա չհասներ Տեր-Ավետիսն ու չփրկեր իրեն։ Հիշեց Վարանդան, Մարաղան, այն մարտերը, որ մղել էր Տեր-Ավետիսի հետ միասին։ Հիշեց վաղեմի ընկերությունը։ Շատ բան հիշեց և ձեռքը հետզհետե թուլանալով՝ պոկվեց թրի դաստակից։

— Խորհիր, Մխիթա՛ր,— անսպասելի հեկեկաց Տեր-Ավետիսը,— մեր քաղաքի ու մեր ժողովրդի մեղքը վզիդ, եթե չլսես շահավետը։

— Լռի՛ր, չե՛մ ուզում,— ձեռքերը դեմքի առջև թափահարեց Մխիթարը։— Երևում է, որ դու զառանցում ես։ Գնա տուն, հենց հիմա, այս պահին։ Անհապաղ հեռացի՛ր, փակվիր քո հարկի մեջ, հիվանդ ձևացիր և այլևս մի խառնվիր իմ գործին։ Լսո՞ւմ ես։ Հրամայում եմ՝ հեռացիր։

— Հեռանամ,— խորտակված ձայնով ասաց Տեր-Ավետիսը։— Միայն կրկնում եմ, այսպես կկոտորվենք ազգովի, և բոլորիս մեղքը շլինքդ կընկնի։

Նա ետ-ետ գնալով՝ դուրս եկավ գահերեց զորավարի խցից։ Մխիթարը մնաց մենակ։ Մի պահ զղջաց, որ այդպես անպատվելով դուրս քշեց ընկերոջը, հաջորդ պահին վճռեց մարդ ուղարկել ու սրախողխող անել հազարապետին։ Բայց զղջաց նաև այս անգամ։

Ներս ընկավ Փորր Գորգին։

— Թուրքերը հարավային աշտարակի մոտ ելել են պարիսպը, տե՛ր գահերեց։ Այնտեղ վիճակը աղետալի է։

— Ի՞նչ եղավ Տեր-Ավետիսը,— ցրված, դառնացած հարցրեց Մխիթարը։

— Գնաց դեպի իր տունը։ Կարծես վիրավոր էր. օրորվում էր քայլելիս։

Մխիթարը դուրս թռավ խցիկից։

— Հետևեցե՛ք ինձ,— հրամայեց իր թիկնապահներին ու սրամերկ նետվեց դեպի քաղաքի հարավային աշտարակը։

— Զարկեցե՛ք...— ամբողջ օրը պարիսպների վրա հնչում էր նրա կոչը։— Մա՛հ թուրքին, թուրքի՛ն...

Հալիձորը պաշտպանվում էր անձնազոհ ու անձնամոռաց։

***

Անցավ մի շաբաթ։ Եվս մի շաբաթ էլ անցավ։ Մխիթարի աչքը Հալիձոր բերող ճանապարհին էր։ Սակայն Բայանդուր իշխանը չէր երևում։ Նրա հղած վերջին սուրհանդակը լուր էր բերել, թե Բայանդուրը ծանր կռիվներով մաշում է Վայոց ձոր մտած օսմանյան բանակը, բայց դեռ լիովին չի հաղթահարել նրան։

Սանր օրեր էին սկսվել Հալիձորի համար։

Պաշտպանվողների շարքերը նվազել էին սաստիկ։ Թեև Աբդուլլահ փաշան մեծ՝ կորուստ էր կրել, բայց դեռ նրա բանակն ահագին էր, և թուրքերը քաղաքի վրա գրոհում էին սաստկացող ուժով։

Քաղաքում այժմ պարիսպների վրա էին բոլորը՝ Եսայու և Զարմանդի աշխարհազորային շինականները, Գոհարը, Նաղաշ Հակոբը, Մովսեսը, Ահարոնն իր պատանիներով, Կավարտի պղնձագործները, ռուս դրագունները և քաղաքացիները ողջ՝ մեծից փոքր։ Գիշերը հազիվ էին հասցնում թաղել զոհվածներին, դարմանել վիրավորներին։ Լույսը բացվելուն պես թուրքերը զարնվում էին պարիսպներին, և սկսվում էր այն, ինչ երեկ էր, մյուս օրը, շաբաթներ առաջ։

Քաղաքից փախստականներ եղան։ Սկզբում պաշտպաններին լքեցին հատուկենտ հալիձորցիներ, ապա շուտով փախան նաև զինվորներ, տասնապետներ, հարյուրապետներ։ Որքան էլ սաստիկ էր հսկողությունը, բայց առավոտները պարսպի ատամներից կախ ընկած պարաններ էին գտնում, որոնց օգնությամբ անարիներն իջել էին օսմանցիների բանակը։

Եսայու մարդիկ բռնեցին Տեր-Ավետիսի գնդի երկու հարյուրապետի, որոնք փորձում էին ճողոպրել։ Մխիթարը հրամայեց կախել նրանց։ Հրապարակում կախեցին նաև հալիձորցի երկու վաճառականի։

Բայց այս միջոցառումները ևս չօգնեցին։ Սպարապետը տեսնում էր, որ օր-օրի թուլանում է իր մարդկանց երբեմնի անկուն կամքը։ Տրրտունջներն ավելանում էին.

— Թող գահերեցը հեռանա մեր քաղաքից. մենք ինքներս կտեսնենք մեր գլխների ճարը։

Հաճախ էր այսպես խոսքեր լսում Մխիթարը։ Լսում էր դառնությամբ, բայց ոչինչ չէր ընկճում նրան։

— Կզոջաք, անմիտնե՛ր,— մտմտում էր նա։— Ոչինչ թշնամուն չի ստիպի հեռանալ մեր աշխարհից, բացի դիմադրելու կարողությունից, զենքից բացի։

Մի անգամ Գոհարը նրան ասաց.

— Ինչո՞ւ Տեր-Ավետիսը չի երևում պարիսպների վրա։

— Նա հիվանդ է,— պատասխանեց Մխիթարը։

— Հիվա՞նդ, թե՞ դասալիք։

— Ի՞նչ է կամեցածդ,— սուր հարցրեց Մխիթարը։

— Վերջացրու Տեր-Ավետիսին, Մխիթա՛ր, չարյաց աղբյուրը նա է։

— Երբե՛ք,— բարկացավ Մխիթարը։— Արգելում եմ այդպես խոսել նրա մասին։ Նա հուսալքված, մոլորված է, բայց դավաճան՝ երբեք։

— Տա աստված, որ ես սխալված լինեմ։

***

Իր հարկաբաժնում փակված Տեր-Ավետիսը դադար չուներ։ Ոչ քունն էր մոտ գալիս նրան, ոչ կարողանում էր որևէ գործի ձեռնարկու լինել։ Նիհարել էր. այտոսկրները ցցվել էին, մորուքը գզգզվել. աչքերում երբեմն խելագար կայծեր էին շողում։ Ամեն օր նրա մարդիկ նրան հաղորդում էին քաղաքում կատարված դեպքերի մանրամասնությունները։

— Կորչո՞ւմ ենք,— ցասումով մռնչում էր նա։— Դիմադրությունը ելք չէ, հասկացրեք անմիտներին։ Ուրիշ ելք որոնեցեք։— Եվ հեկեկում էր դառնաղի։

Եվ ահա մի երեկո նրա կացարանը խուժեցին Միհրան բեկը, Պղինձ Արթինը, Հալիձորի պարոն-տերը, վաճառականները և իր գնդի երեք հարյուրապետ։ Տեր-Ավետիսը զարհուրեց։ Մի՞թե դրանց Մխիթարն է ուղարկել՝ իրեն ոչնչացնելու։ Ահից նրա լեզուն կապվեց, կոկորդը ցամաքեց։

— Ձեռքից գնում ենք, տե՛ր հազարապետ,— գոչեց Միհրան հարյուրապետը։— Տերություն պիտի անե՞ս մեզ, վերջապես, թե՞ թողնես, որ վերջանանք։

— Ձեր տերը Մխիթար գահերեց զորավարն է,— ահը վանելով՝ մռնչաց Տեր-Ավետիսը։— Գնացեք նրա խորհրդին։

— Մենք այլևս չենք ճանաչում Մխիթարին,— գոչեցին խռովարարները։— Մեր իշխանը դու ես. մենք ռամիկի զավակ տեր չենք ուզում։ Նա մեզ կործանման է տանում։ Ո՞վ է նա։ Ի՞նչ նրա հոգն է, թե մենք բոլորս կզրկվենք մեր հայրենի ժառանգությունից, մեր ունեցվածքից։ Եկել ենք առաջարկելու քեզ, որ հենց հիմա գնաս փաշայի մոտ՝ գթություն հայցես, հպատակվես նրան։ Շտապիր, քանի դեռ փաշան զենքի ուժով չի գրավի քաղաքս։

Տեր-Ավետիսը չէր նայում նրանց։ Գայլի պես պպզել էր թախտին ու ասես հիմա կցատկի, կհոշոտի խռովարարներին։ Այնինչ սրանք գոռում էին, սպառնում, պահանջում անհապաղ հպատակվել փաշային։ Վերջապես Տեր-Ավետիսը ծառս եղավ տեղը և ոչ իր ձայնով բղավեց.

— Ժամը հասե՞լ է։

Պողպատե մատներով նա բռնեց իր օձիքը։ Կապայի կոճակները պոկվեցին, կուրծքը բացվեց։

— Հասել է ժա՜մը։ Մենք մեզ վրա ենք առնում դարերի անեծքը, որ ապրեցնենք ժողովուրդը, ազգը հայոց, Հայաստան աշխարհը...

Վանդակ ընկած գազանի պես նա իրեն պատեպատ խփեց, ոտքերը դոփեց՝ անդադար գոռալով։ Դավադիրները սոսկումով էին նայում նրան։ Վերջապես հազարապետն ընկավ թախտին ու գինի պահանջեց։ Խմեց, և ապա դատարկ գավաթը ուժգնաբար զարկեց սենյակի անկյունում կախված Քրիստոսի պատկերին։

— Ա՛ռ,— վայրենի կատաղությամբ մռնչաց նա։— Այս էի՞ր ուզում։ Սա՞ է քո կամքը՝ նահատակվենք ազգովի՞։ Ո՛չ, չհուդի բիճ, ո՛չ։ Հերիք է, ինչքան լափեցիր մեր մարմինը։ Էլ չենք տա, չէ՜... կապրենք առանց քեզ, չենք կորչի։

Շուտով նրա մոլեգնությունը տեղի տվեց անսպասելի մի հանդարտության։ Նրա աչքերը խոնավացան։ Նա կծկվեց, ասես քիչ առաջվա գազանը չէր։

— Գնացեք փաշայի ոտքը,— ասաց անտարբեր։— Ասացեք՝ հպատակվում ենք զորքով ու ժողովրդով, մեծով ու փոքրով, քահանայով ու աշխարհականով։ Ասացեք, որ աքլորականչին քաղաքի դռները բաց կանեմ նրա առջև։ Պայմանն այս է՝ ձեռք չտալ մեր քաղաքին ու ժողովրդին, չասպատակել գավառները։ Մենք նրան ճանապարհ կտանք, թող գնա՝ ուր կամենում է։ Մենք նրան հարկ կտանք։ Ապա երդվում ենք՝ այլևս զենք չբարձրացնել սուլթանի դեմ։ Թող պայմանը գրի, ստորագրի, իր ձեռքով կնքի, երդվի Ղուրանի վրա՝ իր մեծամեծների առջև։ Գնացեք։ Ուրիշ ճար չկա։ Չկա՜...

Միհրան հարյուրապետին, Պղինձ Արթինին ու երեք երևելի վաճառականների գաղտնի իջեցրին պարսպից։ Գիշերային խավարն այնպես թանձր էր, որ ասես իր ծանրության տակ խեղդում էր լեռնաշխարհը։ Տեր-Ավետիսն իր կնոջը, փոքրիկ Փարսադանին, Միհրան հարյուրապետի ու Պղինձ Արթինի ընտանիքները փակեց հեռավոր մի սենյակում, պահապաններ դրեց ու զինավառ դուրս եկավ իր տնից։ Հալիձորի վրա իջել էր զարմանալի մի անդորր։

* * *

Գոհարը չէր կարողանում մոռանալ կեսարին։ Աչքից չէր հեռանում նրա կոր թիկունքը, որ տեսավ վերջին անգամ, երբ հարվածի թափից ընկավ... Երբեմն պարսպից ահով նայում էր ցած ու ինքն իրեն ասում. «Հանգչիր այդտեղ, բարի ծերուկ։ Ես քո մարմինը կամփոփեմ մի բարձր տեղ, խաչքար կկանգնեցնեմ վրադ ու ամեն տարի զոհ կմատուցանեմ քեզ՝ արցունք հեղելով քո շիրմի վրա»։

Գոհարն իրեն անօգնական ու անտեր էր զգում այլևս։ Չկա ամուսինը, որին թեև չէր սիրել, բայց հպատակվել է ավանդական կարգով՝ գոհ այն բանից, որ ինքն իր դժբախտությամբ կարողացավ իր հոր տունը հաշտեցնել պղնձաքարցիների հետ։ Չկար կեսարը, որ այնպե՜ս հոգատար ու սիրալիր էր իր հանդեպ։ Մխիթարը պարիսպների վրա է և, ո՞վ գիտե, վաղը նորից կտեսնի՞ նրան, թե այլևս բախտ չի ունենա արժանանալ նրա կարոտած հայացքին։ Չկա հայրը, իսկ մեծ եղբորը, որ այստեղ է՝ Հալիձորում, տեսնել անգամ չի կամենում։ Դեռ մանուկ օրերից է նա ատել զեհիկ ու անձնասեր Միհրանին։ Գիտեր, որ նա հարազատ որդուն անգամ կարող է ծախել, միայն թե հասնի իր կամեցածին։ Իսկ երբ հիշում էր Պակի եղբորը, կոկորդը քերվում էր, արցունք էր երևում աչքերում և մեղմ աղոթում էր նրա հոգու համար։

Ոչ մի մխիթարանք չուներ Գոհարը։ Այնպե՜ս պայծառ էր աշխարհը նրա համար տարիներ առաջ, այնպե՜ս ուրախ էր նա, իսկ այժմ այդ պայծառությանը փոխարինել է անփարատելի մի խավար, ուրախության տեղ սուգ է մտել նրա սիրտը. նա դարձել է դաժան, կոշտ, քչախոս, երբեմն մելամաղձոտ։

Գիշերը վաղուց էր կիսվել. մոտենում էր լուսաբացի պահը։

Եկեղեցու բակում զինվորները կրակ էին վառել, նստել քարերին։

Այդտեղ էին Վոլոդիմիր Խլեբը, Վրթանես վարպետը, երկու ռուս դրագուն, Եսային, Ծատուրը և շար, միշտ գրգռված Զարմանդը։ Սա հրախառն մոխրից խորոված բակլա էր հանում կոշտացած մատներով և տալիս իր ընկերներին։ Մի քանի բակլա դնելով Գոհարի ծնկանը, Զարմանդն ասաց.

— Կեր, որ ուժերդ չգնան։ Լույսը կգա, լույսի հետ էլ կռիվ-կոտորածը։ Ա՜խ, ա՜խ, քոռանամ...

Եկեղեցու ներսից լսվում էր վիրավորների հառաչը։ Կանայք այնտեղից հանում էին արդեն շունչն ավանդած զինվորին, տանում թաղելու։ Մեռելի գույնով մի երեց խունկ էր ծխում և երերուն քայլում դիակի ետևից։ Այդ պահերին Գոհարի բարկությունը հասնում էր կոկորդին, ու նա քիչ էր մնում ճչար, անեծքի ահեղ խոսքեր նետեր աստծո հասցեին, որ այդքան խուլ է իրենց կրած տառապանքների նկատմամբ։

Հաճախ քաղաքի որևէ մասից լսվում էր մի խուլ որոտ։ Թշնամու արձակած ռումբերը կործանում էին կանգուն մնացած տները։ Կրակի մոտ բոլորած մարդիկ այլևս անտարբեր էին թե՛ մեռած զինվորին թաղելու տանող երեցի սաղմոսերգին, թե՛ փլվող տան դղրդոցին։

— Բայանդուր իշխանն ուշացավ,— հառաչեց Ծատուրը։— Ի՞նչ պատահեց արդյոք։

— Վայոց ձորում ծանր կռիվներ է մղում տաճկաց բանակի դեմ,— պատասխանեց Եսային։

— Ո՞վ ասաց,— սրվեց Գոհարը։

— Սուրհանդակ է եկել։ Հորդ զինվորներից էր, Գոհա՜ր։

Գոհարը բակլան կուլ տվեց առանց ծամելու։ Լսած նորությունն անհանգստացրեց նրան։ Սիրտը մի ծանր բան գուշակեց. կարոտեց հորը։ Իսկ նա կգա՞ Վայոց ձորից, թե կընկնի ճակատամարտում... Վերջերս Գոհարը մի առանձին սիրով էր կապվել հոր հետ. նրա մեջ էր գտնում իր սփոփանքը։

Կրակին մոտեցավ Ահարոնը։

— Թուրքերը կծկվել են, ձայները կտրել,— ուրախ ասաց նա, լոքեց Գոհարի ու Զարմանդի արանքում, ձեռքերը դեմ արեց շիջող կրակին։— Ցուրտ է, գուցե դրանից են լռել անօրենները։

— Աստված նրանց հավիտյան լռեցնի, հա՜,— տեղն օրորվեց Զարմանդը։— Օձի պես ցրտից կծիկ են կտրում, բայց հենց որ տաքանում են՝ ֆշշացնում են նորից։

— Մենք էլ նրանց գլուխները կշարդենք,— ժպտաց Ահարոնը։

— Կշարդե՞նք,— Զարմանդը հառաչեց։— Մերոնց շատը գնաց։ Մնացածն էլ երեք-չորս օրվա բաժին է։

Լռեցին։ Գոհարը կողքից նայում էր Ահարոնին, որի գեմքը լուսավորված էր կրակի ցոլքից. «Տե՜ր աստված, որքա՜ն նման է հորը,— մտածում էր նա,— նույն քիթը, կրակոտ, գրավիչ աչքերը, նույն բերանը։ Եվ հոր պես էլ խիզախ է»։

Վոլոդիմիր Խլեբը վեր կացավ, գնաց կնոջն ու զավակին տեսության։ Ո՞վ գիտե, վաղն ինչ կարող է լինել։ Մեկ էլ կտեսնի՞ նրանց։ Վրթանեսը թիկնեց պատին։ Զարմանդն ու Եսային գնացին դեպի պարիսպները։ Չլինի՝ պահակները քնով անցնեն, և թուրքերը ելարաններ դնեն ու հանկարծակի խուժեն քաղաք։ Ամեն ինչ սպասելի էր։

Մոտիկ մի տեղից կանչեց աքաղաղը։ Ահարոնը ծիծաղեց։

— Ա՜յ քեզ բան... Ո՞նց է ողջ մնացել կարմրակատարը։ Հրաշք է։

Գոհարը զարմացած նայեց նրան։ Ինչո՞ւ է ծիծաղում, երբ աշխարհը լիքն է դառնությամբ ու արյունով։ Տարօրինա՜կ է... Սակայն նա որտեղի՞ց իմանար Ահարոնի ուրախության պատճառը, այն, որ Ահարոնը հենց նոր էր հանդիպել երիտասարդ կնոջը, համբուրել նրան, ու պատանու սիրտը լիքն էր սիրո բերկրանքով, երգով, գարնան զնգոցներով։

Աքաղաղը նորից կանչեց, բայց ուրիշները չարձագանքեցին։ Գոհարը սարսռաց։ Ինչ-որ սղետալի բան կար և՛ Ահարոնի ծիծաղի, և՛ աքաղաղի կանչի մեջ։ Կարծես քու էր կռավում ավերակների վրայից։ Ահարոնն ուրախ պատմում էր, թե ինչպես էին երեկ իր «կաթնակերները» ջարդում թուրքերի ելարանները, բայց Գոհարն այլևս չէր լսում նրան։

***

Այդ պահին Հայոց ժողովի սպարանքից ոչ հեռու, հնադարյան մատուռի մեջ, օսմանյան բանակն ուղարկած իր մարդկանց էր սպասում Տեր-Ավետիս հազարապետը։ Ուր որ է լույսը կբացվի, բայց դեռ նրանք չեն վերադարձել, և դա սաստիկ անհանգստացնում էր հազարապետին։ Մի՞թե Աբդուլլահը չընդունեց իր առաջարկը, մերժեց և գլխատել տվեց իր մարդկանց։ Մի՞թե իր մարդիկ բռնվեցին վերադարձի ճանապարհին։ Ինչևէ, թող պարզվի եղածը, կատարվի կատարվելիքը։ Այլապես սիրտ է պայթում։

Բայց անտեղի էին Տեր-Ավետիսի տարակույսները։

Ահա մատուռի մոտ ստվերներ երևացին։ Մի պահ կորան պատի տակ և ցցվեցին իր առջև։ Մեկը բռնեց հազարապետի ուսերը։

— Փաշան հաճեցավ, հավանեցավ մեր առաջարկը, տե՛ր հազարապետ։ Առաջագույն սիրով և մեծարանքով ընկալեց մեզ։

Տեր-Ավետիսը ճանաչեց Միհրան հարյուրապետի ձայնը։

— Երդմնագիր տվե՞ց,— կապ ընկնելով հարցրեց նա։

— Ահա, վերցրու,— Միհրանը նրա բուռը խոթեց երդմնագիրը։— Երդվեց իր բոլոր փաշաների, եվրոպացի խորհրդականների, մելիք Մուսու և մեծ մոլլայի ներկայությամբ, Ղուրանի վրա։ Մեր քաղաքին վնաս չի պատճառի բնավ, ժողովրդին՝ նույնպես։ Շտապիր քաղաքի դարպասները բաց անել. փաշան պատրաստ սպասում է։

Տեր-Ավետիսը աչքերը փակ աղոթում էր։ Մատուռի մեջ թանձր խավար էր, և ոչ ոք դավաճաններից չէր նկատում, թե ինչպես էին դողում նրա ձեռքերը, շրթունքները, արցունքներն ինչպես էին հոսում մորուքի վրայով։ Նա կանչեց դրսում դարանած իր զինվորներից մեկին։

— Վազիր Մխիթարի մոտ,— հրամայեց՝ ծնոտի դողը հազիվ զսպելով։— Ասա՝ թող փախչի, գլուխն ազատի, շո՛ւտ։

Ապա Միհրան հարյուրապետի, Պղինձ Արթինի և մյուս դավադիրների հետ դուրս եկավ մատուռից ու մթության մեջ դիմեց դեպի քաղաքի դարպասները...

Ռուս դրագունների մոտից Մխիթարը գնում էր դեպի իր ապարանքը։ Նրան հետևում էին Փոքր Գորգին, տասներկու թիկնապահ ու զինակիրներ։ Ջահ չէին վառել՝ քնած զինվորներին չարթնացնելու համար։ Մխիթարը ծանր մտատանջության մեջ էր։ Երկարատև կռիվների ժամանակ ընկել էին քաղաքը պաշտպանողներից երեքից երկուսը։ Բայանդուր իշխանից նոր լուր չկար, և տագնապ էր Հալիձորում։

Նեղ փողոցում մեկը փաթաթվեց նրա ոտքերին։ Մխիթարը սարսռաց. մեռե՞լ է, թե դավադիրի մեկը։

— Դավադրություն, տե՛ր գահերեց զորավար,— աղաղակեց մարդն ու ոտքի ելավ։— Փախի՛ր, ազատիր անձդ։ Տեր-Ավետիսն ու Միհրան հարյուրապետը դավաճանեցին դժբախտ քաղաքիս։ Նրանք հիմա դարպասները բաց են անում թուրքի առջև...

— Ցնդա՞ծ ես,— մռնչաց Մխիթարը։

— Ո՛չ, դժբախտաբար։ Շտապի՛ր, փրկվի՛ր, ուշանում ես...

Մխիթարը նրան հրեց, մարդն ընկավ անծպտուն։ Դա Տեր-Ավետիսի առաքած զինվորն էր։

— Ուշացա, դավեց տմարդին, դավե՞ց,— գոչեց Մխիթարն ու, Փոքր Գորգուց խլելով գալարափողը՝ փչեց կցկտուր, տագնապով, ապա սրամերկ նետվեց դեպի քաղաքի դարպասները...

***

Ահարոնը շարունակում էր ուրախ զրույցը։ Կրակին էին մոտենում քնից արթնացած զինվորներ, քաղաքացիներ, պատանիներ։ «Բարի լույս» էին մաղթում, ապա մեկնում դեպի պարիսպները։ Գոհարի տագնապը սաստկանում էր, սիրտը թպրտում էր շար նախագուշակությունից։

Հանկարծ դարպասի կողմից խուլ աղմուկ լսվեց։ Կարծես այնտեղ պատ փլվեց։ Եկեղեցու պատին թիկնած Վրթանեսը ծառս եղավ։ Գոհարը բռնեց թպրտացող սիրտը։ Աղմուկն ավելի սաստկացավ։ Գալարափողը տագնապի ազդանշան տվեց։ Արդեն որոշակի ձայներ էին լսվում։

— Դա՛վ, դա՛վ,— մոտիկից լսվեց գուսան Հեթումի գոռոցը։— Դարպասները բաց են արել, թուրքերը մտնում են քաղաք, հե՛յ... Վեր կացեք։

Քաղաքը դղրդաց միանգամից։

— Դեպի դարպա՛սը,— թուրը հանելով գոչեց Ահարոնը։

Մխիթարը զորքի մնացորդներն ու Հալիձորի աշխարհազորը տարավ դեպի քաղաքի դուռը։ Բայց թուրքերն արդեն քաղաք էին խուժում զանգված առ զանգված։ Աստղերի աղոտ լույսի տակ ցուրտ շողում էին նրանց յաթաղանները, նիզակների անտառը։ Հայերը զարնվեցին թուրքերի կենդանի հեղեղին, բայց և ընկրկեցին իսկույն։ Մայր աշտարակի կողմից մեկը դաղարի և հնազանդության ազդանշան էր տալիս փողհարությամբ։ Մխիթարը հասկացավ, որ դա Տեր-Ավետիսի ազդանշանն է։ Նա մոլեգնեց առավել ու ետ մղեց թուրքերի առաջին շարքերը։ Հարմար պահ գտավ։ Փոքր Գորգուն հրամայեց վառոդ դնել քաղաքի հարավային պարսպի տակն ու պայթեցնել։

— Անց բաց արա դեպի Գեղվա ձորը։ Միջոց տուր, թող ժողովուրդը հեռանա քաղաքից։ Շտապիր։

Փոքր Գորգին գնաց նրա հրամանը կատարելու։ Մխիթարը կռվում էր քաջաբար՝ իմանալով, որ այլևս անկարող է թշնամու հեղեղը ետ մղել։ Զարնվելով թշնամու սաստկացող գրոհներին, հայերը սեղմվում էին դեպի քաղաքի հարավային եզերքը։ Մեկը մյուսի ետևից ընկնում էին նրանք...

Ընդհանուր իրարանցման մեջ Ահարոնը կարողացավ իր պատանիներից միայն մի քանի հոգի գտնել։ Նրանց գլուխն անցնելով՝ նա վազեց դեպի տուն՝ մորը, Ծամամին ու եղբորը փրկելու հույսով։ Նրա հետ էին նաև Գոհարը, Ծատուրը, Հեթում գուսանը։ Նեղ նրբանցքում թուրքերի մի հեծյալ խումբ տրեց նրանց ճանապարհը։ Հասցրին բաց դար-

պասով ընկնել մի բակ, բարձրացան մի տափակ կտուր։ Պետք է ցատկել կտրից, անցնել փլված մատուռի ետևը ու այնտեղից մտնել Հայոց ժողովի ապարանքի բակը։ Այդպես էլ արին։ Սակայն ուշ էր արդեն։ Թշնամին գրավել էր Հայոց ժողովի ապարանքը։

— Մա՜յրս...— բղավեց Ահարոնը։ Գոհարը փակեց նրա բերանը։ Տղան փորձեց թռչել պատի վրայով, սակայն Ծատուրն ու գուսանը նրան զսպեցին։ Առանց շփոթվելու Հեթումն ասաց.

— Հետևեցեք ինձ, ես կփրկեմ ձեզ...

Մթության մեջ նա նրանց տարավ բակերով, փլվածքների արանքով։ Նրանց ականջները դղրդում էին զարհուրելի ձայներից։

Թուրքերն սկսել էին կոտորել Հալիձորի բնակչությանը։

Քայլ առ քայլ սեղմվելով՝ Մխիթարը նահանջում էր դեպի Հայոց ժողովի ապարանքը՝ կնոջն ու զավակներին փրկելու հույսով։ Սակայն նրա թիկունքը դուրս եկած ենիչերիները փակեցին նրա ճանապարհը։ Իր մի բուռն մարդկանց հետ Մխիթարն ընկավ օղակի մեջ։ Նրա թիկնապահները կործանեցին մոտիկ դարպասը և գահերեց զորավարին հրեցին մի նեղ բակ։

Այդ պահին լսվեց պայթյունի խուլ որոտ։ Մխիթարը հասկացավ, որ Փոքր Գորգին խորտակեց պարիսպը։ Նեղ բակից նրանք ընկան մի ծուռ փողոց, շեշտակի հարվածելով ետ մղեցին թուրքերի մի մեծ ոհմակ, որն արդեն սկսել էր թալանել քաղաքը։ Մխիթարը փորձեց պարիսպի տակով մոտենալ իր տանը, սակայն հրդեհի բոցերն արդեն լափում էին Հայոց ժողովի ապարանքը։

— Սաթենի՜կս, զավակնե՜րս...— գլուխը բռնեց նա ու անզոր կատաղությունից հեկեկաց։

Թիկնապահները նրան կիսագրկած մղեցին դեպի քաղաքի հարավային մասը...

Տիկին Սաթենիկը հասցրեց իր հետ վերցնել փոքրիկ Դավթին ու իր պատմության անավարտ մատյանը։ Միջանցքում նրան ընդառաջ վազեց Ծամամը։

— Կորա՜նք...— հեծկլտաց տիկինը։

Նրանք ընկան բակ, վազեցին դեպի մատուռը՝ այնտեղ թաքնվելու, բայց թուրքերի մի ոհմակ ոռնոցով ընկավ նրանց ետևից։ Թրերը շողացին։ Ծամամը ծկլթաց.

— Չհամարձակվե՜ք, ձեր առաջ Մխիթար գահերեց զորավարի կինն է։

Նրա ձայնը կտրվեց։ Միայն զգաց, թե ինչպես մի տաք հոսանք անցավ փորի միջով։ Երկու ձեռքով բռնեց կիսով չափ իր մարմինը մտած թուրը։

— Անխի՜ղճ...— հազիվ կարողացավ արտասանել նա ու ընկավ...

Այն պահին, երբ օսմանյան բանակը քաղաքի դարպասներով ալիք-ալիք մտնում էր Հալիձոր, նրա հարավային պարսպի ճեղքվածքի միջով դուրս էին մղվում քաղաքի բնակչությունը, զորքի մնացորդները։ Բոլորից վերջում իրենց ձորը գցեցին Մխիթարն ու նրա թիկնապահները։

«ԳՆԱՑԻ ԽՈՏՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ...»

Լուսացավ։

Թեև Հալիձորը սևացել էր մարդկային զանգվածներից, բայց դարձյալ նորանոր զորքեր էին մտնում կրնկահան բաց դռներից։ Մի թուրք ձիավոր երևաց դարպասների մոտ, գալարափողը դրեց բերանին, զիլ փչեց, ապա հուժկու ձայնով գոռաց.

— Ուշադրությո՜ւն և հնազանդություն։

Քաղաք մտավ Քյոփուրլու Աբդուլլահ փաշան։ Նա շրջապատված էր իր զորապետներով, մոլլաներով, եվրոպացի խորհրդականներով։ Բազմագույն դրոշների անտառը ծփում էր նրա գլխին։ Նրա նժույգը վրընջում էր՝ ձիգ տալով ոսկով ու ադամանդով ծանրացած սանձը։ Ձիու ճակատակալին պլպլում էր քանդակազարդ փղոսկրե կիսալուսինը, որի վրա վառվում էին մարջանի, բուստի ու եգիպտական հասպիսի հատիկները։ Փաշան ձախ ձեռքով բռնել էր նժույգի սանձը, աջով արծաթակոթ մականը, որի ծայրին ձիու պոչի մազից հյուսված երեք փունջ կար՝ ի նշան բարձրագույն իշխանության ու ազնվական տոհմի։ Մյուս փաշաների մականները միափունջ էին։

Հրապարակում խռնված թուրքական զորքը երկփեղկվեց։ Եկեղեցու մոտ երևաց Հայոց ժողովի դրոշը։ Փաշան ձին պահեց։ Ենիչերիների մի մեծ խմբով շրջապատված, հետիոտն գալիս էր Տեր-Ավետիսը։ Նրան ուղեկցում էին Միհրան հարյուրապետն ու Պղինձ Արթինը։ Ապա գալիս էին հալիձորցի վաճառականները։ Բոլորն անզեն էին։ Միայն Տեր-Ավետիսն էր թուր կրում։ Միհրանը Հայոց ժողովի դրոշը նետեց Աբդուլլահ փաշայի ձիու ոտքերի տակ։ Դրոշի մետաքսը դանդաղ սուզվեց արյան լճակի մեջ։ Տեր-Ավետիսը չոքեց ու Հալիձորի բանալիները մեկնեց փաշային։

— Ընդունիր մեր խոնարհ հպատակությունը, ողորմա՜ծ փաշա,—

ընկճված, ոչ իր ձայնով աղերսեց նա,— այսուհետև Հալիձորն ու ամբողջ Սյունիքը քոնն է։ Խնայիր մեզ և հրամայիր դադարեցնեն կոտորածը։

— Մի՞թե դեռ Հալիձորում թեկուզ մի ողջ հայ է մնացել,— շուռ գալով դեպի իր զորապետները՝ բարկությամբ հարցրեց Աբդուլլահը։— Այս քաղաքը հիմնեց Դավիթ-Բեկը, որ ե՛ս ավերեմ։ Ոչ մի կենդանի արարած չպիտի մնա այստեղ։

Նա ձին թոցրեց Տեր-Ավետիսի վրայով ու գնաց առաջ։

Տեր-Ավետիսը ծառս եղավ տեղը, մոնչաց, բայց նրա երբեմնի շփոթեցնող մոնչոցն այլևս չահաբեկեց ոչ ոքի։ Նրան ուղեկցող ենիչերիները ծայր աստիճան ծաղրանքով նրան տարան Հայոց ժողովի ապարանքի բակը, որտեղ, ծառերի տակ, տնկում էին Աբդուլլահ փաշայի շքեղ վրանը։ Քայլում էին դիակների ու արյան լճերի վրայով...

* * *

Կեսօր էր։

Այլևս չէր լսվում մորթվող մանուկների ու խոշտանգվող կանանց ճիչերը։ Հալիձորի հարյուրավոր բնակիչներ, որոնք չէին հասցրել փախչել քաղաքից, ընկել էին իրենց տներում, բակերում։ Շատ մանուկներ սրախողխող էին եղել օրորոցներում։ Աղջիկներին ու պատանիներին ասիր էին արել։ Մեծ հրապարակում կտրած գլուխների մի մեծ բլուր էր գոյացել։ Ամենուրեք թափված էին անգլուխ դիակներ՝ մերկ, զարհուրելի։ Աշնանային արևից շողում էին արյան լճակները։

Կոկորդները պատռելով, փաշայի մունետիկները հավաքի էին կոչում զինվորներին, որոնք դեռևս պլոկում էին փլատակների տակից հանած դիակները, պոկում եկեղեցիների արծաթե խաչերը, բակերը փորում՝ թաքցրած գանձեր գտնելու հույսով։

Շուտով թուրքերը շրջապատեցին հրապարակը։ Փաշաները եկան ու կանգնեցին մի բարձր տեղ։ Աբդուլլահի գլխին ամպհովանի բռնեցին։

— Սկսեք,— հրամայեց սերասկյարը՝ խոր ու հարմար նստելով գահավորակին։

Կանաչ չալմաներով և սպիտակ զգեստներով մոլլաների մի մեծ խումբ մտավ հրապարակ. նրանցից ոմանք փոքրիկ թմբուկներ ու ծնծղաներ ունեին։ Մեծ մոլլան կոնչաց.

— Զոհերը բերեք։ Ալլահն իր բաժինն է ուզում մեր հաղթանակից։

Հրապարակում մեկնած կառափի գերաններին մոտեցան երեք դահիճ։ Նրանց լայներախ կացինները պլպլում էին։ Եկեղեցու դուռը բացարին ու այնտեղից դեպի հրապարակ քշեցին հայ գերիներին, ողջ մնացած մի քանի ռուս դրագուններին։ Բոլորը կիսամերկ էին, շղթայված ու բոկոտն։ Շատերը մահացու վիրավոր էին ու հազիվ էին շարժվում։ Բոլորի առջևից ծանր ու հանդիսավոր գալիս էր Վրթանես զինագործը, նրանից հետո Վոլոդիմիր Խլեբը՝ ուսին իր չորս տարեկան մանուկը։ Առյան մեջ շաղախված Սեմեոնն ու Վեցկի Մարգարը հազիվ էին ոտքի վրա պահում կրծքից ծանր վերք ստացած Եսայուն։

Վոլոդիմիրի ուսի մանուկը աղեկտուր ճչաց։ Նույնիսկ թուրք զինվորներից ոմանք «ախ» արին։ Հրապարակը պապանձվեց մի պահ։ Մոլլաներն ավելի եռանդով սկսեցին աղաղակել, հնչեցնել թմբուկներն ու ծնծղաները։

— Զոհն արդա՞ր է, զոհն ալլահի՞ն է,— կռավում էր մեծ մոլլան։

Դահիճները մոտեցան գերիներին։ Մեկը բռնեց Վրթանես զինագործի թևը։ Սա թափ տվեց նրան, հեռու վանեց։

— Ես ինքս կգամ,— ասաց նա ու շուռ եկավ դեպի Վոլոդիմիրը։— Մնաս բարո՞վ, Վոլոդիմի՛ր եղբայր։ Կհանդիպենք երկնքում,— ապա գնաց ու չոքելով՝ գլուխը դրեց գերանին։ Կացինը չխկաց, և նրա գլուխը գլորվեց։ Մոլլաները հափշտակեցին դեռևս բերանը բացուխուփ անող գլուխն ու տարան...

— Հերթը իմն է,— ճչաց Վոլոդիմիր Խլեբն ու նետվեց առաջ։ Բայց հայերն ու ռուս դրագունները բռնեցին նրան։ Մի քանի ձեռք մեկնվեցին դեպի մանուկը։

— Չեմ տա զավակիս,— գոռում էր Վոլոդիմիրը։— Թող նա էլ զոհվի ինձ հետ, կթուրքացնե՞ն...

Գերիների մեջ քաշկռտուք ընկավ։ Սրանք ջանում էին իրենց բախտակից ընկերոջից խլել երեխային, սակայն սա չէր տալիս և երեխայինամուր սեղմել էր գրկին։ Դահիճները շփոթվեցին։

— Ի՞նչ գզվռտոց է,— հարցրեց Աբդուլլահ փաշան յուրայիններին։

— Այնտեղ ռուսներից մեկը հետը երեխա ունի,— պատասխանեց մելիք Մուսին։

— Երեխա՞։

— Այո, գերիները ցանկանում են փրկել երեխային, սակայն հայրը չի թողնում։

— Հետաքրքիր է, երեխան չի՞ ուշաթափվի, կդիմանա՞ մինչև գլուխը կտրեն։ Բերեք,— հրամայեց սերասկյարը։

— Անխղճություն է երեխային մորթել,— կամաց ասաց մելիք Մուսին։

— Օ՜... ո՜չ, ընդհակառակը,— նրան դարձավ Թուրք փաշաներից մեկը։— Ես դեռ այսպիսի հետաքրքիր տեսարանի չեմ արժանացել։

Վոլոդիմիր Խլեբը պոկվեց ընկերներից ու երեխայի հետ նետվեց դեպի գերանները։ Հայերը վայնասուն բարձրացրին։

— Գութ ունեցեք, գազանե՜ր... Խնայեցեք երեխային, վերև աստված կա։

— Առաջ մեզ գլխատեցեք, հետո նրան։

Ասկյարները թրերով ու նիզակներով հարվածեցին նրանց գլխներին, ատամները ջարդեցին, ծակծկեցին։ Գերիները նետվում էին առաջ, ընկնում, վեր կենում, բայց ասկյարները զսպում էին նրանց։ Վոլոդիմիր Խլեբը գերանի մոտ գոչեց.

— Մնաս բարո՜վ, Ռուս...

Դահիճը խղճաց նրան։ Նախ կտրեց նրա գլուխը, ապա կացնով թեթև, ասես կատակի համար, խփեց երեխայի շլինքին։ Փոքրիկ, շեկլիկ գլուխը գլորվեց։ Հայ և ռուս գերիներն այնպիսի վայնասուն բարձրացրին, որ քարերն անգամ դղրդացին։

Եսային ճոճվեց, պոկվեց ընկերներից ու անսպասելի հաստատուն քայլերով մոտեցավ գերաններին։ Նա թևքով սրբեց աչքերը լցվող արյունը, նայեց հայոց լեռներին ու գոչեց.

— Կեցցե՜ Մխիթար գահերեց զորավարը...

— Կեցցե՜,— որոտացին գերիները՝ ոգևորված, դաժան ձայներով։

Դահիճը Եսայուն նետեց գերանի վրա։

— Համառ մարդիկ են այս հայերը,— իր հարևան փաշային ասաց անգլիացի գնդապետը։

— Բայց ես սրանց նման գեղեցիկ մեռնողներ չեմ տեսել ոչ մի երկրում,— պատասխանեց Թուրք փաշան։

Դահիճները շարունակում էին իրենց գործը։ Կտրած գլուխները նետում էին մի կողմ։ Գետինը կարմրում էր արյունից։ Աբդուլլահ փաշային հայտնեցին, որ մահապարտների մեջ մի հմուտ նկարիչ կա։

— Ո՞վ է,— հետաքրքրվեց փաշան։

— Երկնային շնորհքով օժտված է գյավուրը,— պատասխանեցին նրան։— Նաղաշ Հակոբ է նրա անունը։ Այդ Նաղաշը կտավի վրա կենդանացնում է ծաղկին, որ ձմռանն էլ բուրում է սենյակի մեջ։ Նա մարդկանց այնպիսի պատկերներ է քաշում, որոնք խոսում, խորհում են նրանց մահից շատ հետո էլ։

— Բերեք, ուզում եմ տեսնել նրան։

Նաղաշ Հակոբին անջատեցին գերիների խմբից ու կանգնեցրին սերասկյարի առջև։ Սա կանգնեց ուղիղ, վեհ, ինչպես հաստաբեստ վեմը, հայացքը դարձրեց դեպի լեռները և մնաց անխոով։

— Ասում են՝ դու նկարող վարպետ ես ու կարող ես անմահացնել մարդուն։ Ուրեմն ինչո՞ւ ես սուր առել ձեռքդ,— դառնալով նրան՝ հարցրեց փաշան։

— Որպեսզի մարդն ապրի բանական, չունենա քո յաթաղանի ահը։ Որպեսզի մարդն իր բաժին կյանքը խաղաղ անցկացնի արևի լույսի տակ։ Ես սուր եմ հանել մահվան ու մարդասպանի դեմ։ Ով մարդուն է սպանում, նա սպանում է գեղեցիկը, ծաղիկը, արևը, հողը, նա պղտորում է երկնքի լազուրը։

Փաշան կրծեց շրթունքներն ու շփեց հինայած մորուքը։

— Կամենո՞ւմ ես ապրել, արդյոք, Նաղա՜շ։

— Զարմանում եմ հարցիդ վրա,— քմծիծաղեց Նաղաշ Հակոբը։— Եթե քեզ նման սպանողն ու ավերող-ապականողը ապրել է կամենում, ապա ինչո՞ւ չկամենա կենդանացնողն ու ստեղծողը։

— Բարի՜...— մոլտաց սերասկյարը։— Նայիր, Նաղա՜շ, այն դահճի կացնից քեզ կազատեմ, եթե ծառա դառնաս ինձ, քաշես իմ պատկերը և պատկերն այն քաջերի, որոնք նվաճեցին այս քաղաքը։

— Կքաշեմ, փաշա՜։ Այնպես կնկարեմ քեզ, որ նայողը միայն անիծի, տեսնի մարդախոշոր գազանին։ Ավելի հեշտ է նկարել մարդասպանին, քան ծառ տնկող, վար անող շինականին։ Կնկարեմ։

— Հեռացրե՜ք սրան,— փրփրեց փաշան։

Նաղաշ Հակոբին գլխատեցին։

Ռուս դրագուններից մեկը, որին տանում էին կառափելու, կտրեց ձեռքերը կապած պարանն ու նրանով սկսեց խփել դահիճներին։ Նա մոլեգնեց այնքան, որ խլեց դահճի կացինն ու ահավոր ուժով խփեց նրա թիկունքին։

— Бей басурмана, бей,— գոչեցին ողջ մնացած ռուսները։

— Ջարդի՜ր,— որոտացին հայ գերիները։

Թուրքերի մի զորաջոկատ նետվեց դեպի մոլեգնած դրագունը։ Նրան խոշտանգում էին նիզակներով, թրերով։ Նա արյունոտվեց ամբողջովին և ընկավ կացինը ձեռքին։ Բայց հասցրել էր սպանել Թուրք դահճին և երկու ասկյարի։

Հրապարակում կտրված գլուխների բլուր բարձրացավ։ Մոլլաները ցատկոտում էին նրա շուրջը՝ անդադար աղաղակելով, թմբուկներ զարկելով։

***

Երեկոն մանուշակագույն շղարշով պարուրում էր լեռները, երբ Ողջի գետի ձախ ափին, անտառապատ մի լեռան կատարի կանգ առան Հալիձորի կոտորածից ազատված մի խումբ փախստականներ։ Գուսան Հեթումը սրբեց քրտնած դեմքն ու ծանր հոգոց հանեց։

— Կարելի է համարել, որ փրկվեցինք։

Գոհարը մեջքը հենեց հաստաբեստ կաղնուն ու նրա մերկ ճյուղերի արանքից նայեց մթնում կուլ գնացող Հալիձորին։ Նրա մոտ կանգնած էր Ահարոնը՝ շար ու գաղազած, պատառոտված զգեստներով։ Նրա բռունցքներն ամուր սեղմված էին, աչքերում արյուն կար։ Քիչ հեռու, մի մամոռոտ քարի ծանր նստել էին Ծատուրն ու մի քանի հալիձորցիներ։

— Գնացին ի երկի՜նս...— երբեմն հառաչում էր Ծատուրը։— Գնացին Մխիթարը, Սեմեոնը, Եսային, Զարմանդը, Վոլոդիմիրը, Վեցկի Մարգարը։ Բոլորը գնացին։ Ագռավ կռավեց Հալիձորի վրա։ Ջորանա աստծու ձեռքը։

Մութը բոլորովին կոխեց աշխարհը։ Ահարոնը երկար նայեց Հալիձորի կողմն ու սրտակեղեք ձայնով աղաղակեց.

— Մայրի՜կ...— և թավալվեց խոտերի վրա։

Երկար ջանքերից հետո միայն կարողացան նրան մի փոքր հանգստացնել ու համոզել, որ հարկավոր է շուտ հեռանալ այս կողմերից։

***

Միևնույն պահին հալիձորցիների մի մեծ բազմություն կանգ էր առել Խուստուպ լեռան անտառապատ լանջին։ Դրանք կործանված քաղաքից փրկված մարդիկ էին, զինվորներ ու աշխարհազորի շինականներ։ Բոլորը վշտահար էին ու տառապած։ Տառապած էր նաև նրանց օղակում կանգնած Մխիթարը։ Ոչ ոք չէր խոսում։ Երբեմն միայն դառն հեծկլտում էր մի որդեկորույս կին և հեկեկանքը խեղդում բերանին սեղմած ափերի մեջ։

Ջորից փախստականների նոր խմբեր էին բարձրանում դեպի լեռան գագաթը։ Մխիթարը սրտատրոփ նայում էր նրանց։ Նրանց մեջ չե՞ն, արդյոք, Սաթենիկը, Ահարոնը, Դավիթը, Ծամամը, յուրայինները։ Բայց սիրելիները չկային։ Ահեղ վշտից ծնկները թուլանում էին, գլուխը պտտվում, բայց շարունակում էր նայել ձորն ի վեր ելնող փախստականների խմբերին։ Այդպես նա մնաց ամբողջ գիշեր։ Լուսաբացին կտրվեց

Հալիձորից փրկվածների տուտը։ Հարազատները չկային։ Ծագող արևը նրան մորթված մանուկ թվաց, ձորերի խորխորատները՝ գերեզմանների բաց երախներ։

Հարկավոր էր շտապ հեռանալ։ Մխիթարը կոտորածից փրկված հարյուրապետներին հրամայեց եղած զինվորներից ու աշխարհազորայիններից տասնյակներ ու հարյուրյակներ կազմել։ Պարզվեց, որ մի քանի հարյուր տղամարդ և հազարի չափ կին ու երեխա էին ազատվել Հալիձորի կոտորածից։

— Դե, ի՜նչ, եղբայրնե՛ր,— դիմեց նա շարք-շարք խմբված մարդկանց։— Կատարվեց սատանայի կամքը։ Մեր զինակիցները կործանման մատնեցին Հալիձորը։ Բայց մենք նորից կվերադառնանք մեր քաղաքը և անողորմ կլինենք նրա մատնիչների հետ։ Հալիձորն ընկած է, բայց կանգուն է Սյունիքը։ Իսկական կռիվը դեռ նոր պիտի սկսվի։ Թուրքերը մի անգամ ևս կզգան մեր բարկության ուժը։

Մխիթարը հալիձորցի կանանց ու երեխաներին ուղարկեց Պղնձաքարի ամրոցը, ապա, իր հետ վերցնելով զինված տղամարդկանց փոքրաթիվ գունդը, Կապույտջիղի լանջերով հեռացավ դեպի Վայոց ձոր։ Պետք է հասնել Բայանդուր իշխանին, կանգնել զորքի գլուխը, նոր աշխարհազորի կոչ անել և ձմեռը պաշարել Հալիձորը։

Պետք է ամեն ինչ սկսել նորից։

Երբ անցել էին Կապույտջիղի ձյունե թափանցիկ շապիկ հագած լանջը և կախվել դեպի Որոտանի կիրճը, Տաթևի մոտերքում հանդիպեցին փախստական Ահարոնին, Գոհարին և սրանց ընկերներին։

Մի պահ Մխիթարն ուրախությունից խենթացավ. անհագուրդ համբուրեց որդուն, թվաց թե կինը, Ծամամն ու Դավիթը ևս նրա հետ են։ Բայց այդ ուրախությունն անցողիկ էր։ Ընտանիքից փրկվել էր միայն Ահարոնը։

***

Խաղաղ ու անամպ առավոտ էր։ Հալիձորի ավերակներից այլևս ծուխ չէր բարձրանում։ Ագռավների կռավոցը կտրվել էր։ Դիակները հորել էին։ Թուրքական զորքը տեղավորվել էր կանգուն մնացած տներում։

Աբդուլլահ փաշան ընկղմվել էր իր վրանի առջև դրված փափուկ բազմոցում և հոգնած հայացքով նայում էր կիրճին։ Նրա առջև խոնարհ կանգնած էին Տեր-Ավետիսը, մելիք Մուսին, Միհրան հարյուրապետն ու Պղինձ Աբթին։ Մելիք Մուսին նայում էր փաշայի փափուկ ձեռքերին։ Տեր-Ավետիսը հայացքը խոնարհել էր՝ սրտում կուտակված

մեծ դառնությունը փաշայից թաքցնելու համար։ Փաշայի ոտքերի տակ դրված էր արաբական կարճոտ սեղան, որի վրա բարձրանում էր դեղին ոսկու կույտը։ Սեղանի մոտ արծաթով լիքը կաշվե պարկեր էին թափած։ Փաշան հայացքը հեռացրեց կիրճից։

— Ես կատարում եմ իմ խոստումը, հայե՛ր,— ասաց հատ-հատ։— Որդուվար ու Ագուլիս քաղաքները նվիրում՝ եմ քեզ, պատվարժան մելիք Մուսի։ Մեծ են քո ծառայությունները աստծու սիրած սուլթանին (մելիք Մուսին գլուխ տվեց)։ Դու, խոջա՛ Արթին, շարունակիր պղինձ հանել մեր բանակի համար։ Դու, Միհրա՛ն հարյուրապետ, կարող ես գնալ քո գավառը։ Հորդ քշիր այնտեղից ու դարձիր նրա տերը։ Ես քեզ յոթ հարյուր ձիավոր կտամ...

Միհրանն այլայլվեց։ Ինչպե՞ս պետք է յոթ հարյուր ձիավորը պահի խնձորեսկում, երբ դեռ հայրը ողջ է և երկու հազար կտրիճ ունի հետը։ Նա հառաչանքը կուլ տվեց։ Անճար էր։ Ո՞ւմ բողոքի։ Տեր-Ավետիսն ականջի ծայրով լսում էր փաշայի ասածները։

— Սուլթանը չի մոռանա քո ծառայությունները ևս, Տեր-Ավետիս հազարապե՛տ,— նրան դառնալով ասաց փաշան։— Կարծում եմ՝ ժամանակն է, որ դու ցած դնես թուրդ և ձեռդ առնես քահանայական խաչդ։ Եթե կամենաս, ապա կնստես Տաթևի եպիսկոպոսական աթոռին։

Տեր-Ավետիսի հույսերը փշրվեցին։

— Իսկ ո՞ւմ է մնում Սյունիքը,— հայացքը բարձրացնելով հարցրեց նա։

— Հաղթողի՞ն,— անողորմ պատասխանեց փաշան։— Այս երկրում, սուլթանի իշխանությունից բացի, ուրիշ տեր լինել չի կարող։ Գոհ եղիր ու համբուրիր քեզ ողորմություն տվող ձեռքը։ Ես սիրում եմ, երբ թագավորները խոնարհվում են իմ առջև և կտրիճները հնազանդվում իմ կամքին։ Ոչ ոք չպիտի համարձակվի չափվել ինձ հետ ո՛չ խելքով, ո՛չ մանավանդ՝ զենքով։ Այն գլուխը, տիեզերքի տեր սուլթանի գլխից բացի, որ չի խոնարհվում իմ առջև՝ կտրվում է։

Տեր-Ավետիսն ընկավ նրա ոտքերը։

— Համաձայն եմ, միայն խնայիր ժողովրդին, ողորմա՛ծ տեր,— գլուխը գետնին խփելով՝ աղաղակեց նա։

— Այդ էլ կախված է ձեր խոհեմությունից,— ասաց փաշան ու վեր կացավ։— Այժմ դուք իմ թանկագին հյուրերն եք։ Գնանք, իմ խոհարարը համադամ կերակուրներով կհագեցնի մեր քաղցը։ Համեցեք։

Նա քայլեց դեպի Հայոց ժողովի ապարանքի շքամուտքը։ Բակում մոլլաները վառում էին եկեղեցիներից հանած գրքերը, նկարները, կաթողիկոսական ու թագավորական հին թղթեր։ Փաշան զրուցում էր Միհրան հարյուրապետի և մելիք Մուսու հետ։ Սիրալիր էր։ Իհարկե, նա զզվում էր իր այդ նոր հպատակներից, ուրախ կլիներ, եթե նրանց էլ գլխատել տար։ Բայց խորամանկ թուրքը գիտեր հեռուն տեսնել։ Հալիձորն ընկել էր, ճշմարիտ է։ Բայց Հալիձորի անկումը դեռևս Սյունիքի կործանումը չէ։ Դեռևս կա Մխիթար զորավարը, որ մի կանոնավոր բանակ ունի, կա լեռների ծերպերում ապաստանած ժողովուրդը։ Փաշան լավ էր հասկանում, որ բնավ չի ընկճի հայերի դիմադրությունը։ Այժմ պետք էր սիրաշահել հայերին, խորամանկել։ Թավրիզից տագնապալի լուրեր էին բերում նրան։ Պարսիկները գլուխ են բարձրացրել։ Թահմազ Ղուլի Նադիր խանը դարձել է սպառնալի ուժ։ Անհապաղ պետք է մեկնել Պարսկաստան՝ թիկունքում հայ հավատարիմներ ունենալով։ Իսկ այդ հավատարիմներն ահա այս դավաճաններն են։

Նրանք մտան սրահներից մեկը։ Հատակին արյան հետքեր կային։ Մի հին մագաղաթե մատյան մխում էր պատուհանի տակ։ Փաշան հյուրերին հրավիրեց նստել։ Դռների մոտ մոլոր կանգնած մնաց Տեր-Ավետիսը։

— Մո՛տ եկ, եղբայր,— ուրախ, ոգևորող ձայնով նրան հրավիրեց փաշան։— Մոռանանք եղածը, և մեզ հանձնենք ուրախության գրկին։ Դուք էլ մոտ եկեք, փաշանե՛ր։ Նվագածուներ բերեք, ես զվարճանալ եմ ուզում։

Իր կողքին նստեցնե՞ ով Տեր-Ավետիսին՝ փաշան շշնջաց.

— Հենց որ Մուխիթարի գլուխը բերես ինձ, ես քեզ Սյունիքի տեր կհռչակեմ։ Միայն Մուխիթարի մահվան մեջ որոնիր քո երկրի ու քո ցեղի փրկությունը։

Մի աննկատելի ժպիտ սահեց Տեր-Ավետիսի անգույն շրթունքների վրայով։ «Ո՞վ է այն քաջը, որ կարողանա կտրել Մխիթարի գլուխը,— մտածեց նա։— Լինելու բան չէ։ Ուրեմն պետք է համոզել Մխիթարին, որ շտապ հեռանա Սյունիքից. հեռանա՝ արյան ծովերի մեջ ժողովրդի մնացորդը չխեղդելու համար»։

Թեև նա արդեն տեսնում էր, որ ինքը խաբվել է, թեև կործանվել է Հալիձորը, բայց տակավին հավատում էր, որ այդ ծանր զոհաբերությամբ ինքը փրկեց աշխարհը։ Հալիձորը տվեց, որ գավառներն ապրեն։ Եվ կապրեն։ Փաշան Միհրան հարյուրապետին նվիրեց հոր գավառը, մելիք Մուսուն հանձնեց Ագուլիսն ու Որդուվարը։ Դրանք զերծ կմնան կոտորածից։ Մնում է, որ ինքը փաշային համոզի՝ կոտորած չանի նաև մյուս գավառներում և բավականանա Հալիձորով և իրենց անսուտ հպատակությամբ։ Ապա պետք է ստիպել Մխիթարին, որ հեռանա Սյունիքից

և թողնի, որ իրենք մի կերպ պահեն ժողովուրդը, նրան նորից չնետեն մահու բերան։

Խնջույքի ընթացքում այդ մասին էր միայն խոսում նա փաշայի հետ։ Սա խոստացավ այլևս ասպատակություններ չկատարել Սյունիքում, բայց առաջվա պես պահանջում էր, որ հայերը ձերբակալեն Մխիթարին կամ գլխատեն նրան։

— Միայն այդ ժամանակ ես կհամարեմ, որ ձեր հավատարմությունն անկեղծ է ու կխնայեմ հայ ժողովրդին։

***

Բացվում էր Հալիձորի անկման երրորդ առավոտը։

Մեծ հրապարակում, ուր դեռ ընկած էին կառափի արյունոտ գերանները, երևացին թուրքական բանակի մոլլաները։ Թմբուկ զարկեցին։ Շուտով ամեն կողմից հավաքվեցին ավարտից ու արյունից հղփացած ասկյարները։ Մեծ մոլլան Ղուրանից ինչ-որ քասիդ կարդալով՝ հավատացյալների ամբոխն առաջնորդեց դեպի Հալիձորի մայր եկեղեցին։

— Ի՞նչ են ուզում անել մարգարեի հետնորդները,— իրար հարցնում էին ասկյարները։

— Այսօր սրբազան կրակի օրն է, մի՞թե մոռացել եք, մուսուլմաննե՛ր,— պատասխանում էին հին զինվորները։— Ալլահը էլի զոհ է ուզում՝ մեզ պարգևած հաղթության համար։

Մոլլաները հասան եկեղեցի, ծանր կողպեքը բաց արին ու կանգնեցին բակի երկայնքով։ Զինվորները մտան տաճար և դուրս քշեցին այնտեղ փակված հոգևորականներին։ Առաջինը դուրս եկավ ձեռքերը կրծքին խաչած Մովսեսը։ Ոտքը եկեղեցու շեմքից դուրս դնելով, նա աղաղակեց.

— Օրհնյա՞ անձն իմ, տե՛ր։

Նույնը կրկնեց նրա ետևից եկող հոգևորականների խումբը։

Նրանցից հետո եկեղեցուց դուրս բերեցին Սաթենիկին, Զարմանդին, Վոլոդիմիր Խլերի կնոջը և էլի մի քանի տասնյակ տիկնանց։ Զարմանդը մի ձեռքով ամուր բռնել էր Սաթենիկ տիկնոջ թևը, մյուսով սեղմել փոքրիկ Դավթի դաստակը։ Սաթենիկ տիկնոջ մագաղաթե դեմքը խաղաղ էր, և այնպիսի ուժ ու համարձակ գծեր կային նրա վրա, որ մարդ ակամայից կամենում էր անպայման հնազանդվել նրան։ Փոքր Դավիթը կրծքին էր սեղմել իր ափի մեծության կաշեկազմ մի ավետարան։

Մոլլաների ոհմակը շրջապատեց մահապարտներին։ Թոլորից մի գլխով բարձր Մովսեսը հանկարծ հուժկու ձայնով երգեց.

«Օրհնյա՞ անձն իմ. տե՛ր,
Տե՛ր, սիրիր արդարս,
Տե՛ր, պահի պանդուխտս,
Որբս և այրիս ընդունիր, տե՛ր...»։

Նրան ձայնակցեցին մյուսները ևս։ Նույնիսկ փոքրիկ Դավիթը բաց արեց բերանն ու մոր հետ երգեց.

«Ճառագայթ փառաց,
Ճանապարհ ի ցույց
Ճեպեմ ի երկինս...»։

Մոլլաները հարվածում էին նրանց, զինվորները ծակծկում էին սրերով ու նիզակներով՝ աշխատելով խեղդել նրանց բարձրագոչ երգը։ Բայց գերիները չէին լռում։ Արյուն էին թքում, կուրանում, ընկնում, սակայն երգում էին՝ իմանալով, որ գնում են դեպի մահ։ Նրանց խոշտանգելով հացրին հրապարակ։ Մոլլաները փայտ ու խոռվ բերին, հանեցին մոտակա տների դռները, պարտեզների փայտե ցանկապատերը։ Գերիներին կապոտեցին պարաններով ու չվաններով։ Զարմանդը կապայի փեշով ծածկել էր Դավթի երեսը, որ երեխան չտեսնի եղեռնը։ Մովսեսի ձայնը խզվել էր, բայց դարձյալ աղոթքի խոսքեր էր շշնջում։

Թուրքերը նիզակների անողոք հարվածներով սկսեցին գետին տապալել իրար կապված, կենդանի գունդ դարձած հայերին։ Եկավ փաշայի ձիավոր սուրհանդակը և մեծ մոլլային հայտնեց, որ փաշայի հրամանով ինքը եկել է գերիների մեջ եղած կանանց տանելու։ Կանանց բաժանեցին հոգևորականներից։ Զարմանդը Դավթին դրեց իր ուսերին ու ձիավորի առաջն ընկած գնաց՝ Սաթենիկ տիկնոջը հուսադրելով։

Երբ արդեն տապալել էին վերջին գերի քահանային, թուրքերը փայտ դարսեցին նրանց վրա։ Այլևս չէր լսվում թշվառների հառաչանքները։ Փայտի դեզի վրա նավթ լցրին ու չորս կողմից կրակ տվին։ Դեզը նախ կորավ սև ծխի մեջ, ապա մանուշակագույն կրակի բոցերը երկինք ելան։ Փայտերը ճարճատեցին, անհամար կայծեր շաղ տվին հրապարակի վրա։ Զինվորների ամբոխը ետ-ետ գնաց։ Մոլլաները միմյանց ձեռք բռնելով՝ շրջան կազմեցին և սկսեցին ցատկոտել խարույկի շուրջը։

***

Այն սենյակը, ուր փակված էին Վարդ-խաթունը և Միհրանի ու Պղինձ Արթինի կանայք, մի նեղ պատուհան ուներ միայն, որ նայում էր

քաղաքի հրապարակին։ Տիկիններն արդեն գիտեին, որ թուրքերն առել են քաղաքը, սակայն տեղյակ չէին, թե ինչ է կատարվել յուրայինների հետ։ Երեք օրվա ընթացքում ամուսինները այցի չեկան նրանց։ Իսկ նրանց վրա պահապան նշանակած թուրքերը թույլ չէին տալիս, որ նրանք միջանցք դուրս գան նույնիսկ։

Տագնապի, խռովքի մեջ տանջվող պատանի Գիգանը վիզը երկարել էր պատուհանի առաջ և շունչը քաշած նայում էր դուրս՝ այնտեղ կատարվող դեպքերից մի բան կռահելու։ «Ի՞նչ եղավ Ահարոնը»,— անվերջ մտածում էր նա։ Երբ թուրքերը քաղաք խուժեցին, Ահարոնն իր հետ չէր։ Իրենք նետվեցին թուրքերի վրա... «Կաթնակերաց» գնդի պատանիների մեծ մասն ընկավ։ Երևի ինքն էլ ընկներ, եթե հոր ուղարկած մարդիկ չբռնեին նրան ու զոռով չբերեին այստեղ։ Ո՞ւր մնացին մյուս ընկերները, բոլո՞ր ընկան, թե ազատվողներ եղան ահավոր սպանդից։

Անորոշությունից ավելի էր տառապում նա։ գոնե մի բան իմանար դրսում կատարվածից։ Ավելի շատ մտահոգ էր Ահարոնի համար։ Սիրտը մղկտում էր, երբ մտածում էր, որ նա էլ կարող է ընկած լինել... Նա բազմիցս փորձել էր դուրս գալ իրենց արգելարանից, բայց նրանց հսկող զինվորները թույլ չէին տվել։

Եվ ահա առավոտից սկսած նա չէր հեռանում պատուհանից, լարված նայում էր հրապարակին, հույս ունենալով, թե կարող է մի բան իմանալ ընկերների մասին։

Վարդ-խաթունը նստել էր սալահատակին ու փոքրիկ որդու՝ Փարսադանի գլուխը ծնկներին՝ նրան համոզում էր քնել... Նրա աջ կողմին, նույնպես մերկ սալահատակին նստել էին Միհրան հարյուրապետի և Պղինձ Արթինի կանայք՝ իրենց մեծ ու փոքր զավակներով, աղախիններով, ազգակցուհիներով։ Բոլորը լուռ էին։ Պղինձ Արթինի գեղեցկուհին երբեմն ցնցվում էր՝ երկար հեծկլտոցից։ Միհրան հարյուրապետի կինը մաստակ էր ծամում՝ չպչպոցով զզվեցնելով Վարդ-խաթունին։ Այդ չեկ դեմքով ու շեկ մազերով կինը, ասես, բոլորովին անտարբեր էր շրջակայքի դեպքերին։

— Տե՛ր աստված, սիրտ է պատռվում, բա չիմանա՞նք, թե ինչ է կատարվում դրսում,— լռությունը խզեց Պղինձ Արթինի կինը։— Գոնե մերոնք մի կես բերան լուր տան։ Զքացել են՝ մեզ բանտում թողնելով։

— Ավերակների՞ց լուր բերեն,— ճղճղաց Վարդ-խաթունը։— էլ ի՞նչ լուր, թուրքը քաղաքն առել պրծել է։ Մոխիր մաղեցեք գլխներիդ։

Գիգանը պատուհանի մոտից ճչաց.

— Այրո՞ւմ են...

Կանայք, բացի մաստակ ծամողից, վազեցին դեպի պատուհանը։

— Ի՞նչ են այրում, ո՞ւր է,— զարհուրած հարցրեց Վարդը։

— Մերոնց, հոգևոր հայրերին։ Լցրել են փայտերի տակ, և հրե՛ն, վառում են։ Նայեցե՛ք...

Սարսափից դեղնած կանայք կպան պատուհաններին։ Ապակու մեջով երևում էին հրապարակի վիթխարի խարույկը, նրա շուրջը ցատկոտող մոլլաները՝ Պղինձ Արթինի կինը չդիմացավ։ Երկ պատը չանկռտելով՝ շոքեց սալահատակին ու լաց եղավ... Երեխաները վայնասուն բարձրացրին։ Պահապան զինվորը թխթխկացրեց փակ դուռն ու սպառնաց, որ ձայները կտրեն։ Երեխաները պապանձվեցին։ Վարդ-խաթունը գունդուկծիկ դարձած՝ շարունակում էր նայել դուրս։ Հանկարծ նա իրար խառնվեց ու հապշտապ ասաց.

— Կանանց եսիր են արել, ամա՛ն... Սաթենիկին, Զարմանդին, նայեցեք... Զուլո՛ւմ է։ Այդ ի՞նչ օրի են գցել խեղճերին, տե՛ր Հիսուս-Քրիստոս։— Նա փորձեց բաց անել պատուհանը, բայց փեղկն ամուր էր։ Նրա սրտում միանգամից փլվեց, վերացավ այն դառնությունն ու դժգոհությունը, որ ուներ դեպի Մխիթարի կինը։ Վերականգնվեց վաղեմի հարգանքը, որ տածում էր միաժամանակ դեպի այդ դժբախտ, բայց միշտ հավասարակշռված ու բարեսիրտ կինը։ Ամբողջ ուժով նա ցնցում էր պատուհանի փեղկը, բռունցքով հարվածեց ապակուն։ Ձեռքն արյունոտվեց. ցավ չզգաց, գլուխը խոթեց պատուհանի բացվածքը։

— Սաթենի՛կ,— աղաղակեց նա։— Սաթենի՛կ, սիրելի՛ս...

Թուրք զինվորների առջևից վեհաշուք քայլող Սաթենիկը նայեց Վարդ-խաթունին ու երեսը շուռ տվեց։ Զինվորները մտրակով խփեցին նրան։ Վարդը սուր ծղրտաց։

— Ո՞ւր են տանում քեզ, Սաթենի՛կ։

— Հարցրու քո դավաճան ամուսնուն,— կոշտ, տղամարդկային ձայնով պատասխանեց Դավթին ուսին դրած՝ Զարմանդը։— Ամուսինդ ծախեց մեզ. նա բաց արեց Հալիձորի դռներն ու հանձնեց թուրքին։ Աչքդ լո՛ւս...

— Ամա՛ն...— ծղրտաց Վարդ-խաթունն ու մեջքի վրա փռվեց հատակին։ Գիգանը թռավ դեպի մայրը։ Վարդ-խաթունը մի երկվայրկյան մորթած հավի պես թպրտաց հատակին, ապա որդուն դեն հրեց, թռավ դեպի դուռն ու սկսեց բռունցքներով, ոտքերով հարվածել։

— Բա՛ց արեք,— գոռում էր նա իրեն կորցրած,— բա՛ց արեք, շուտ։ Ես ամուսնուս եմ ուզում տեսնել, ինձ տարեք Աբդուլլահ փաշայի մոտ...

— Խի՛, խի՛, խի՛...— դռան մյուս կողմից քրքջաց պահապանը։— Փաշայի՞ն ես ուզում, խանո՛ւմ։ Համբերիր, նա սրբազան նամազի է։

Վարդ-խաթունն ուշաթափվեց։

Շուտով Միհրան հարյուրապետի և Պղինձ Արթինի ուղարկած երկու հայ կին ու մի թուրք եկան ու նրանց ընտանիքները տարան։ Նեղ սենյակում փակված մնաց միայն Վարդը՝ երեխաների հետ։

***

Երեկոյան Տեր-Ավետիսն այցելեց հարազատներին։ Աբդուլլահի մոտից նա դուրս եկավ ծայր աստիճան բորբոքված։ Ուշքը հազիվ էր պահում. քայլերն անվստահ էին. աչքերի առջև մշուշ էր։ Ոչ մի կերպ չկարողացավ համոզել Աբդուլլահ փաշային, որ սա արձակի Հալիձորում գերած երկու հազար դեռատի աղջիկներին ու տղա մանուկներին։ «Տղա մանուկները պետք է թլպատվեն ու ենիչերի գրվեն,— ասել էր փաշան,— իսկ աղջիկներին կուղարկեմ Ստամբուլ՝ սուլթանին նվեր»։ Չօգնեց ո՛չ աղերսանքը, ո՛չ էլ այն պայմանագիրը, որ Հալիձոր մտնելուց առաջ ստորագրել ու կնքել էր փաշան։ Երբ Տեր-Ավետիսն այդ մասին հիշեցրեց փաշային, վերջինս քրքջաց։ «Պայմանագրերն ու երդումներն իմ թրի ծայրին են»,— ասաց լկտիաբար։

Տեր-Ավետիսն ավելի խոր էր զգում, որ ինքը խաբված է։ Զղջումը մոտենում էր։

Չիմացավ, թե ինչպես մտավ այն սենյակը, որտեղ փակել էր կնոջն ու զավակներին։ Այրող մտքերից սթափվելով՝ նա գլուխը բարձրացրեց ու տառապած հայացքը ման ածեց միայն մի կանթեղով լուսավորված սենյակում։ Խորքի պատի տակ, անկյունում, գող կատվի մոտենալն զգացող թխսամոր պես, իր երկու զավակներին թևերի տակ առած կանգնել էր Վարդ-խաթունը։ Այնպես էր կանգնել, կարծես թափ էր վերցնում՝ հարձակվելու իր ձագուկներին հափշտակել ցանկացող գազանի վրա։

— Վա՛րդ,— աշխատելով անվրդով ձևանալ՝ խոսեց Տեր-Ավետիսը և գնաց դեպի կինն ու զավակները։

— Հեռո՛ւ կաց, ուրացող,— ֆշշացրեց Վարդը։— Չմոտենա՛ս...

— Ուշքի՛ եկ, Վա՛րդ,— փշրված ձայնով աղերսեց Տեր-Ավետիսը։— Սառը գլխով դատիր ինձ, ես ուրացող չեմ։

— Ուրացո՛ղ ես, դավաճա՛ն ես,— խեղդվեց Վարդ-խաթունը։— Ինչո՞ւ տվիր Հալիձորը, դահի՛ճ, պի՛ղծ։

— Տվի, որ հայ ժողովուրդն ապրի։

— Եվ կարծում ես փրկի՞չ դառար հայ ժողովրդին, թշվառակա՛ն,— հեգնեց կինը և զավակներին բաց թողնելով՝ խոյացավ դեպի ամուսինը։— Ի՞նչ պատասխան պիտի տաս Մխիթարին, աղգադա՛վ։ Մխիթարին չէ, ինձ ի՞նչ պատասխան ունես տալու, ի՞նձ, որ այս քաղաքի տիրոջ ժառանգն եմ։ Ապա զավակներիդ ի՞նչ պատասխան ունես։ Ա՛ռ, ա՛ռ...

Վարդ-խաթունը երկու շեշտակի ապտակ իջեցրեց ամուսնու երեսին։ Տեր-Ավետիսի աչքերը շիկացան, մոլեգնեց, ետ-ետ գնաց փշրված սրտով։

— Մի՛ նախատիր ինձ,— ասաց խղճահար։— Կործանվողը, անճարը ձեռքն օձին է գցում։ Մենակ դու չես։ Շատերը չեն հասկանում ինձ։

Վարդ-խաթունն արտասվում էր խորտակված հոգով։ Փոքրիկ Փարսուդանը ձեռքը գլխի տակ դրած քնել էր հատակին։ Մանր մտքեր էին անցնում Տեր-Ավետիսի գլխով։ Մերթ նրա աչքերին երևում էր այդ օրվա խարույկը, մերթ մարդկային գանդերի բլուրը, մերթ Աբդուլլահ փաշան՝ հինայած մազերով, վագրի հայացքով։ Ահա ինքը չոքել է նրա առջև և աղերսում է խնայել հոգևորականներին ու կրակի չմատնել նրանց։ Օ՜... փաշայի վագրի աչքերը, սեխանման գլո՜ւխը... Քանի՜ այդպիսի գլուխ է թոցրել ինքը։ Իսկ այսօր չոքել էր այդ գլխի տիրոջ առջև և գութ էր աղերսում։ Ապա Սաթենիկ տիկնոջ ոչնչացնող հայա՜ցքը։ Ապա մանուկ Դավթի ճի՜չը, երբ փաշան իր սուր եղունգով շփեց նրա ճերմակ վիզն ու ասաց. «Որքա՜ն գեղեցիկ ու փափուկ է այս մանկան մորթին։ Քիչ է մնում մարդ հիմարություն անի ու ափսոսա կտրել այսպիսի վիզը»։ Բայց և այնպես փաշան իրեն թույլ տվեց այդ «հիմարությունը»։ Նա ղիջեց Տեր-Ավետիսի թախանձանքներին և Սաթենիկ տիկնոջն ու նրա որդուն գլխատելու կանչած դահճին ետ ուղարկեց։ Սպանիչն այն էր, որ Սաթենիկ տիկինը բնավ չուրախացավ այդ ներումից։ Ընդհակառակը, նա խնդրում էր, որ նահատակեն իրեն ու որդուն։ Երևի կռահում էր, որ մի ավելի սարսափելի բան պիտի կատարվի։ Փաշայի հրամանով մոլլաները տիկնոջ աչքի առաջ թլպատեցին Դավթին ու հանձնեցին մանուկներ ժողովող ենիչերիներին։

Մղձավանջը սպանում էր Տեր-Ավետիսին։ Սփոփանքի փոխարեն այրող ատելության հանդիպեց յուրայիններից, և աշխարհը նրա համար դարձավ սառը գերեզման։

***

Հնձած արտերի մեջ քրքջալով խաղում էր աշնանային քամին։ Արտույտները կտցում էին մոռացված հասկի վերջին ցորենն ու ճկճկում հաճույքից։ Սարերի վրա արև էր, ձորերում՝ քաշաթուխպ, որ ոչխարի

հոտերի պես բլրակների վրայով դանդաղ սողում էր դեպի Որոտանի կապույտ ջրերը։

Թեև ձորերը լիքն էին քաշաթխպով, բայց վերևները պարզ էր՝ աշնանային թեթև սառնությամբ կապույտ։

Հաճելի արև էր, հաճելի օր։

Ամենուրեք ձորեր էին՝ կտրտված ձորակներով, ժայռերի ծուռումուռ ողնաշարներով, մեկը մյուսից խոր ու ահռելի, արտառոց, բայց և արտակարգ հմայիչ։ Մի ձորին հաջորդում էր մյուսը, մեծ լեռանն՝ ավելի մեծը՝ Արցախի հովիտներից մինչև Սևան, Սևանից Վայոց ձոր ու Սիսական, ապա Արաքսի քարավազները։

Ամենուրեք ձորեր էին։ Ձորեր՝ խոր ու մթին, ձորեր՝ կապույտ մշուշներով, գետերի խորհրդավոր խշշոցով...

Այդպես էր Սյունյաց լեռնահոլով աշխարհը։

Եվ այդ անթիվ ձորերով, սարերի սեռերով Վայոց ձորից Սիսական էր դառնում Բայանդուր իշխանի բանակը։

Այրուձին գնում էր արագ, աշխույժ։ Ծանր բեռներ չունեին ու թրոչում էին ձյունաբարդ լեռներից դեպի տափաստանները խաղացող քամու թեթևությամբ։ Բանակի ետևից պոկված փոշին քրքրվում էր քամու բերնին ու նստում հնձած արտերի, քարակարկառների ու գունատ բլուրների վրա։

Հեծելազորի առջևից գնում էին Բայանդուր իշխանը և մելիք Բարխուդարը։ Բուժակների հսկողությամբ, արագավազ ուղտի վրա (թուրքերից էին խլել) տանում էին վիրավոր մելիք Շաֆռազին։ Ձորապետները խոսում էին բարձրաձայն։

— Վայոց ձորի ջարդն էլի՞ խրատ չպիտի դառնա թուրքին,— ասաց Բայանդուր իշխանը։— Քրքրելով հալեցինք, հիմա լուրը հասավ սուլթանին. թող կատաղի։ Վաղը Հալիձորը պաշարածների թիկունքին կնստենք, և Աբդուլլահը գլուխը թաքցնելու մի ծակ էլ չի գտնի։

— Միայն թե Մխիթարը մի լավ ծակծկած լինի Աբդուլլահին,— ասաց մելիք Բարխուդարը։

Լռեցին։ Երկու զորավարների միտքը Հալիձորումն էր։ Երկու օր հետո կհասնեն Հալիձոր և կհարվածեն քաղաքը պաշարած թշնամուն։ Նպատակը պարզ էր՝ մասնատել Աբդուլլահի զորքը. մի մասն իրենց դեմ, մյուսը՝ քաղաքի։ Բնավ չէին կասկածում, որ կշահեն այս մի ճակատամարտը ևս։ Կօգնի ժամանող ձմեռը։ Հետո թուրքերը մինչև գարուն սիրտ չեն անի անցնել Արաքսը։ Ահա ձյունը շապիկ է հագցրել սարերին. շուտով կիջնի ձորերը, և ճանապարհները կփակվեն։

✿✿✿

Քամին խաղաց, գզգզեց սև քաշաթուխպի քուլաները, և հալիձորցի փախստականների առջև պարզվեցին Որոտանի կապույտ ջրերը։

Մխիթարը գլուխը բարձրացրեց. հասել էին Սիսական։ Դեմը՝ ժայռերին կպած գյուղն էր՝ Սիսակա վանքի շուրջը խոնված տներով։ Մխիթարը կանգ առավ։ Կանգ առան նաև փախստականների խմբերը։ Հոգնաբեկ մարդիկ նստեցին գետափին։ Նստեց՝ նաև Մխիթարը։ Տառապանքից գլուխը հակվում էր ինքն իրեն։

Ամբողջ ճանապարհին բառ չփոխանակելով յուրայինների հետ՝ խորհրդածել, քննել էր կատարված աղետի պատճառը։ Ի՞նչ էր մտածում և ի՞նչ ստացվեց։ Հաղթության հույս ուներ, բայց ընկավ մատնիչի ծուղակը. կորցրեց կնոջը, զավակին։ Կորցրեց Հալիձորը։ Իսկ ինչպե՞ս մոռ էր թվում հաղթանակը...

Հալիձորը մատնվելու գիշերը քաղաք հասավ Ստամբուլից իր հայ բարեկամների ուղարկած բանբերը։ Սուլթանը սաստիկ բարկացել էր Արդուլլահի դեմ, որ նորից խճճվել է Սյունիքում։ Պարսիկները մեծ ուժեր են հավաքել Խորասանում։ Ռուսաց դեսպան Նեպլյուևը սուլթանից համառորեն պահանջում է, որ զորքը հեռացնի Հայաստանից։ Սուլթանի պալատում համառորեն խոսում են Սյունիքից հրաժարվելու, հայերի հետ հաշտություն կնքելու օգտին։ Նեպլյուևը կարողացել է մեծ վեզիրին համոզել, որ ճանաչեն Արևելյան Հայաստանի անկախությունը։ Մնում էր համոզել նաև տատանվող ու դյուրահավատ սուլթանին։ Բացվում էր ցանկալի դուռը։ Մոտենում էր հաճելի պահը։ Սպասում էր Բայանդուր իշխանի ժամանելուն, որպեսզի ձմեռը Հալիձորի տակ շահեն ճակատագրական մարտը, որով և թուրքերի ոտքը կկտրեին Սյունիքից։ Ամեն ինչ ընթանում էր ծրագրածին պես, բայց կատարվեց անսպասելին։

Մխիթարն իրեն չէր ներում անհարկի ներողամտության համար։ Ինչո՞ւ խնայեց Տեր-Ավետիսին։ Ինչո՞ւ չձերբակալեց նրան, երբ նա թուրքերի հետ հաշտություն էր պահանջում։ Ինչո՞ւ չոչնչացրեց դավադիրների ոհմակը։ Այս հարցերը մեկը մյուսի ետևից ծնվում էին նրա գլխում և մնում անպատասխան։ Ջղջում էր, բայց ուշ էր արդեն։ Այդ պահերին նրա մտապատկերում պարզ գծվում էր Դավիթ-Բեկի դաժան հայացքը։ «Զորավարը պարտավոր է կտրել թեկուզ իր աջը, եթե նա լքում, դավաճանում է իրեն»։ Մի՞թե այդպես չէր խրատում երանելի Դավիթ-Բեկը։ Այդ էր, այո՛, նրա գործելակերպը։

Մտքերի մեջ տառապող Մխիթարը չնկատեց, որ իրենց էր մոտենում հայոց այրուձին։

— Բանա՞կը, Բայանդուր իշխանը եկա՞վ,— գոչեցին հալիձորցիներն ու նետվեցին դեպի այրուձին։

Փախստականների ամբոխը տեսնելով՝ Բայանդուր իշխանը մի ծանր բան գուշակեց։ Ի՞նչ է նշանակում այս անակնկալը։ Հալիձորցիներն ի՞նչ ունեին այստեղ, այն էլ հետիոտն, խառնաշփոթ։ Ինչո՞ւ են հեռացել Հալիձորից։ Նա ձին թոցրեց առաջ և, փախստականների մեջ գահերեց զորավարին տեսնելով՝ գունաթափվեց։ Նա Մխիթարի դեմքին կարդաց սոսկալին։ Գրեթե ընկավ ձիուց։ Հետիոտն դարձան նաև մյուսները։ Հեծելազորը պապանձվեց։ Նույնիսկ արագավազ ուղտի մեջքին կապված վիրավոր մելիք Շաֆռազը բարձրացրեց գլուխն ու զարմացած նայեց փախստականներին։

— Տեր գահերեց Մխիթար, մի՞թե, այո՞...— շաղված քայլերով դեպի արձանացած գահերեց զորավարը՝ կարկամ հարցրեց իշխանը։

— Այո, Հալիձորն ընկավ թուրքի ձեռքը,— անզուսպ պոռթկումով աղաղակեց Ահարոնը։

— Ի՞նչ, ի՞նչ,— միաբերան գոռացին իշխանն ու մելիք Բարխուդարը և, երկու քայլ անելով՝ մեխվեցին։

— Ոչ թե ընկավ, այլ տվեցին,— Ահարոնին ուղղեց Գոհարը։— Տեր-Ավետիսը մատնեց։— Նա հայացքով գտավ գունատ հորը։— Եվ քո որդին, հա՛յր, Պղինձ Արթինն էլ հետևերը։ Քաղաքը տվին։— Նա ձայնը բարձրացրեց։— Հալիձորը տվին թուրքին, ծախեցի՛ն... Հիմա գնացեք, վայ տվեք ավերակների, դիակների կույտերի վրա։ Ավերվում է քաղցր ու վայելուչ աշխարհը մեր, որ լի է սուրբ նշխարներով։ Վա՛յ մեզ։

Մխիթարի ոռնգները լայնացան, դեմքը լցվեց արյունով, շունչը կտրվում էր։ Ոչ մի բառ չկարողացավ ասել, հազիվ էր լսում Գոհարի ձայնը։

— Թուրքերը գրոհում էին անվերջ։ Բայց ջախջախում էինք միահամուռ։ Հազարավոր թուրքեր էին ընկել Հալիձորի պատերի տակ։ Մեր ոնցից ընկճվող չկար։ Կռվում էին՝ հավատալով, որ կդիմանան, մինչև դուք գաք։ Թեկուզ երեք տարի պաշարեին, կդիմանայինք։ Բայց անցած շաբաթ օրվա լուսաբացին մատնիչները բաց արին քաղաքի դռները... Կոտորած եղավ։ Մենք հազիվ պրծանք...

Այրուձին ծանր հառաչեց։ Կատարվել էր այն, ինչին բնավ չէին սպասում։ Ի՞նչ էին մտածում, ինչ ստացվեց։ Մելիք Բարխուդարը ծեծեց ծերունազարդ գլուխը։

— Պիտի խեղդեի՞ շանը, խեղդեի՞...— կտրվում էր նա։— Օձ մեծացրի տանս։ Տոհմիս վրա սև գիր գրեց դավաճանը։ Ա՛խ, ա՛խ...

— Բայց ի՞նչն ստիպեց Տեր-Ավետիսին,— զարմացավ Բայանդուր իշխանը։— Ո՞վ կսպասեր...— և նա դառնորեն օրորեց ճերմակ գլուխը։

Այլևս շտապելու հարկ չկար։ Գիշերը մնացին այդտեղ։ Մխիթարը լրտեսներ ուղարկեց Հալիձոր։ Իսկ առավոտյան հալիձորցիների ու բանակի հետ չվեց դեպի Պղնձաքար։ Որոշեց ամրանալ այնտեղ, նորից ուժ հավաքել, մեծացնել իր բանակը՝ թշնամուն դիմադրելու հաստատուն վճռով։

* * *

Լույսը նոր էր բացվել, երբ Տեր-Ավետիսին կանչեցին փաշայի մոտ։ Ողջ գիշեր աչք չկպցրած հազարապետը ծանր վեր կացավ սալահատակից։ Նրա աչքերը խամրել էին, քիթը սրվել։ Երբ ցանկանում էր դուրս գալ, հրավիրակն ասաց.

— Փաշան խնդրել է, որ էրմենի քեշիշն իր հետ բերի նաև իր խանումին ու զավակներին։ Նա ցանկանում է նվերներով խիլայել նրանց։

Տեր-Ավետիսը սարսափած նայեց կնոջը։ Բայց սա բնավ չհակառակեց փաշայի հրամանին։ Բռնեց քնից նոր արթնացած Փարսադանի ձեռքն ու գնաց՝ հրավիրակի, ամուսնու և որդիների հետ։

Հայոց ժողովի բակում անսովոր իրարանցում էր։ Ավարի ծանր նաֆռաշները շտապ բեռնում էին ուղտերին ու ջորիներին։ Վրանները պոկել էին։ Սիփահիների հեծելազորը կազմ ու պատրաստ կանգնած էր հրապարակում։

Ընկուզենու հովանու տակ, ծալովի աթոռին նստած էր Աբդուլլահ փաշան։ Նրա դիմացը կանգնած էին Ղոչ Ալի, Ղըրխ Ջեշմիշ փաշաները, մելիք Մուսին, Միհրան հարյուրապետը ու մի քանի մոլլա։ Բոլորը զինված էին զրահներով։ Սերասկյարի թիկունքում կիսալուսնաձև բոլորել էին մյուս փաշաները, մեծ մոլլան, եվրոպացի խորհրդատուները։ Սրանք ևս զինված էին, ճամփորդական զգեստներով։ Փաշաների նոքարները հազիվ էին զսպում երթի պատրաստ նժույգներին։ «Չքվում են»,— արագ մտածեց Տեր-Ավետիսը, և ուրախությունից մի սրընթաց ոգևորություն մտավ նրա սիրտը։ «Կկորչեն, կպրծնենք»։ Մոտեցավ։ Երբ մի քանի քայլ էր մնացել մինչև սերասկյարը, որդիներին հրեց ու նրանց հետ տարածվեց գետնին։

— Վե՛ր կաց, պաշտելի՛ հազարապետ,— սիրալիր ասաց Աբդուլլահը։— Վե՛ր կաց։ Այսօր մեր եղբայրական հրաժեշտի օրն է։ Ես ցանկացա տեսնել քեզ, քո ազնիվ տիկնոջն ու քո զավակներին։ Ուրախ եմ,

անչա՜փ ուրախ եմ,— նա մի թռուցիկ հայացք նետեց Վարդ-խաթունին և, նայելով արդեն կանգնած հազարապետին՝ շարունակեց.

— Ահա ես թողնում եմ ձեր աշխարհը, հայե՛ր։ Ցնծացեք, որովհետև սուլթաններից ամենաբարեգութ սուլթանը քաղցր աչքով է նայում ձեզ վրա և աստվածային շնորհ է արել ամբարիշտ ու խռովարար Մուխիթարից ձեր քաղաքն ազատելով։ Ձեր կյանքն ու զավակներին պաշտպանելու համար սուլթանը հրամայել է Հալիձորում թողնել Ղոչ Ալի և Ղըրխ Ջեշմիշ փաշաներին՝ իրենց քսանհինգ հազարանոց զորքի հետ։

Տեր-Ավետիսի աչքերը մթնեցին։ Վերջնականապես հասկացավ, որ ինքն ամեն բան տանուլ է տվել անվերադարձ, հետին թշվառականի պես։

— Սիրեցեք և հնազանդվեցեք փաշաներին, հայե՛ր,— շարունակեց սերասկյարը։— Կերակրեցեք, հագցրեք, ինչպես ձեր եղբայրներին։ Ապա ձեր պարտքն է ձեր երկրից դուրս վանել անտոհմ ռամիկ Մուխիթարին և հավիտենական խաղաղություն ստեղծել տիեզերքի գործերի կարգադրիչ սուլթանին պատկանող այս աշխարհում։ Իմացեք, հա՛յեր, մեր զորքն այս քաղաքից դուրս կգա միայն այն ժամանակ, երբ այլևս չի լինի Մուխիթար փաշան, և ապա իմացեք, որ ձեր աշխարհի գահերեց փաշան կլինի այն հայը, ով Մուխիթարի գլուխը կբերի ինձ։

Փաշան լռեց մի երկվայրկյան, շփեց կախ ընկած ծնոտը, վեր կացավ և, ուղիղ նայելով Տեր-Ավետիսի անկենդան աչքերին, շարունակեց.

— Ես կամենում եմ քեզ մի փոքր ուրախացնել, Տեր-Ավետիս եղբայր։ Ես գիտեմ, որ քո ազնվատոհմ տիկինն ու քո հնազանդ զավակները վաղուց փափագում են տեսնել Բոսֆորի աստվածային ափերն ու Այա Սոֆիայի երկնամերձ տաճարը։ Ես իմ պարտքն եմ համարում բարություն անել, նրանց վերցնել ինձ հետ՝ Ստամբուլ ուղարկելու համար։

— Գազա՜ն,— ծղրտաց Վարդ-խաթունն ու փովեց գետնին։

Տեր-Ավետիսը թավալվեց փաշայի ոտքերի տակ։

— Գթա՜, խղճա՜, ալլահի՜ սիրուն,— ողորմագին աղերսեց նա։— Թող զավակներս մնան, կինս մնա... Մի մորթազերծ անի քեզ ծառայած թշվառին։

— Քո զավակներն ու կինը Ստամբուլից ետ կգան միայն այն ժամանակ, երբ չի լինի Մուխիթար փաշան։— Բարձր հայտարարեց Աբդուլլահը և, անցնելով գետնին տապալված Տեր-Ավետիսի վրայով, գնաց դեպի իր նժույգը։

Նոքարները գետնից հափշտակեցին ուշաթափ Վարդ-խաթունին։ Գիգանը փորձեց դիմադրել նրանց, պաշտպանել մորը, բայց նրա ծոծրակին մի շշմեցնող հարված տվին և, պարաններով կապոտելով՝ տարան։

— Հայրի՛կ, փրկի՛ր մեզ, հայրի՛կ...— մի նոքարի գրկում թպրտալով ճչում էր փոքրիկ Փարսադանը։

Այնինչ գետնին տարածված Տեր-Ավետիսը միայն փետում էր մազերը, լիզում արյունոտված հողը, զգեստները պատառոտում։ Ահեղ զղջումը հասել էր։ Այդ պահին նա իսպառ կորցրեց անընկճում զորավարի ոգին ու դարձավ մի թշվառական։

Այդպես կենդանի մեռավ Սյունիքի խիզախ զորապետներից մեկը։

Ծերունական ճռճվող քայլերով նա գնաց դեպի Հայոց ժողովի ապարանքը, որի սանդուղքներով մի ժամանակ բարձրանում էր իբրև հզոր հաղթող՝ գոհ իր բախտից ու ռազմական չխավարող փառքից։ Աստիճանների վրա թուրք ասկյարները նրան ետ շպրտեցին։ Ինչ-որ տեղ դուրս եկավ մելիք Մուսու ծառան և նրա ոտքերի տակ նետեց նրա խուրջինը։ Դա էր միակ այն հարստությունը, որ մնացել էր նրան։

Տեր-Ավետիսն իր վրայից պոկեց զորավարի այն զգեստները, որոնց մեջ երկար տարիներ շարունակ ահուսարսափ էր պատճառել հայ ժողովրդի թշնամիներին։ Ապա խուրջինից հանեց երեսուն տարվա հնություն ունեցող քահանայական իր հնամաշ սքեմը, հագավ և դարձավ մի տխուր ու խղճալի արարած։ Նա ձեռքերը կարկառեց դեպի Հալիձորի մայր եկեղեցին ու արցունք հեղելով գոչեց.

— Ահավասիկ դավաճանը, արա քո դատաստանը, տե՛ր իմ, աստվա՜ծ իմ...

Ծանր զղջումն աչքերի մեջ, նա նայեց կիսավեր Հալիձորին, տեսավ հեռացող թուրքերին, որոնք քշում էին շղթաներով ու պարաններով կապկրպված հայ գերիներին։ Նրանց մեջ նա նկատեց նաև Զարմանդին ու Սաթենիկ տիկնոջը։ Խղճի թունավոր խայթը խոցեց մինչև նրա սրտի խորքերը։

Հալիձորում մնացած թուրքերն ուրախության աղաղակով ճանապարհում էին Քյոփուրլու Աբդուլլահ փաշային։ Ոչ ոք ուշադրություն չէր դարձնում փառքից և իշխանությունից գլորված Տեր-Ավետիսին։

Երբ արդեն հեռացող զորքի պոչը կտրվել էր քաղաքից, Տեր-Ավետիսը մի ծուռ գավազան ձեռքին մոտեցավ դարպասներին։ Թուրք պահապանները նրան չարգելեցին քաղաքից դուրս գալ։ Նրա ետևից ամուր փակվեցին Հալիձորի դռները։

Երեկոյան, երբ մայր էր մտնում հայոց արևը, և մութը ծրարում էր լեռնաշխարհը, Տեր-Ավետիսն արդեն հասել էր Խուստուպ լեռան բարձունքին։ Նա գլուխը բարձրացրեց, սրբեց աչքերի մշուշը, ծանր հոգոց հանեց ու նայեց լեռնաշխարհին։ Նա տեսավ այն վայրերը, որտեղ մի ժամանակ ինքը քաջության փառքով էր պսակել իր ճակատը։ Երևում էին

այն գյուղերն ու ամրոցները, որտեղ նրա առջև գորգեր էին փռում և զոհ մատուցում։ Երևում էին այն ճանապարհները, որոնց վրայով նա անցել էր, գլուխը բարձր ու հպարտ, ինչպես արծիվն իր թագավորության մեջ։

Այժմ չկա այդ փառքը. ամեն ինչ թաղված էր իր անունին ուղղված անեծքի զարհուրելի քողով։

— Մեղա՜ քեզ, տե՛ր...— բազկատարած շշնջաց Տեր-Ավետիսն ու, ասես վախենալով ավերակ գյուղերից, իր ձեռքով մատնած մարդկանց զարհուրելի անեծքներից, շուռ եկավ ու փախավ դեպի ձորը...

Ձորում մի հնամենի մատուռ կար։ Այդ մատուռի մոտ մի ժամանակ ինքն ու Մխիթարը խրախճացել էին, երբ վերադառնում էին Մարաղայի փառահեղ հաղթանակից։ Այն ժամանակ ինքն իր ձեռքով մատուռի պատին փակցրեց Տիրամոր նկարը և գինու գավաթը ձեռքին՝ փառավորեց նրա երկնային թագավորությունը։

Նա շոքեշոք մտավ մատուռ։ Երկու մոմ աղոտ լույս էին սփռում գորշ պատերի վրա։ Ահեղ հայացքով իրեն էին նայում Տիրամոր աչքերը։

Միականի գուսան Հեթումը շոքել էր Տիրամոր նկարի առջև և աղոթում էր։ Տեր-Ավետիսը սարսռաց։ Թվաց, թե այդ ծերունին ինքը՝ Քրիստոսն է, որ եկել է վերջին դատաստանի, և դրա առաջին զոհն ինքը պետք է լինի։ Նա ընկրկեց դեպի դուռը, բայց գուսանի ձայնը սաստեց նրան։

— Մի՛ երկնչիր, ուրացո՛ղ։ Մո՛տ եկ, համբուրիր այս սուրբ պատկերը, որ մի ժամանակ ինքդ ես կախել քո ձեռքով։

Ծերունին կանգնեց, ծանր քայլերով մոտեցավ նրան ու, բռնելով նրա մորուքը, որոտաց.

— Մատնի՛չ, հայոց աշխարհը քեզ չի՛ ների, չէ՛...

Նա թքեց իր ծանր արարքի գիտակցությունից, զղջման ու ստորացման խայթից ոչնչացած, մի բուռ դարձած քահանայի երեսին ու դուրս եկավ։

Տեր-Ավետիսը շորեքթաթ մոտեցավ Տիրամոր նկարին և ձեռքերը տարածելով՝ աղաղակեց.

— Երկնավո՛ր մայր, ահա ընկել եմ քո ոտքերը և հայցում եմ քո անոխակալ գթությունը։ Ես իմ մեղքերով բարկացրի քեզ։ Աղաչում եմ, ներիր հանցանքն իմ, ո՛վ ողորմած կույս... Անօրեններն ինձ մոլորեցրին և կոչեցին թափել անմեղ արյուն։ Խաբվեցի վատանուն Սաբյուռոսին, գնացի խոտոր ճանապարհով ու կատարեցի նրանց չար խորհուրդը։

Սուրբ Աստվածամա՛յր, ես ապավինում եմ քեզ և պաղատում՝ փրկես իմ հոգին՝ իմ չարությամբ հեղած արյունից։ Մեղա՜, սո՛ւրբ կույս, մեղա՜... Մանասեի ձայնով աղաչում եմ քեզ, մեղա՜...

ԱՄԵՆ ԻՆՉ ՍԿՍՎՈՒՄ Է ՆՈՐԻՑ

Պղնձաքարի ամրոցում օրն ի բուն եռուզեռ էր։

Այնտեղ էին գալիս Հալիձորի կոտորածից փրկված, անտառներում ապաստան գտած զինվորներ, քաղաքացիներ։ Գալիս էին լեռնաշխարհի հեռավոր և մոտակա գյուղերից դաշտային աշխատանքներն ավարտած շինականներ, ապաքինված զինվորներ, իրենց զինվորացու համարող պատանիներ։

Մխիթարը մելիքներին ու զորապետներին ուղարկեց գավառները՝ նոր զորք գումարելու։ Բայանդուր իշխանը հասավ մինչև Տայք ու Ղազախ, մելիք Եգանը թափանցեց թուրքերի ձեռքն ընկած, բայց տակավին չընկճված Արցախի լեռների ծալքերը, Սատուրն ու Փոքր Գորգին Բջնի և Կոտայից գավառները՝ կամավորներ հավաքագրելու համար։

Շուտով նրանք հայ կամավորների մեծ ու փոքր խմբերով վերադարձան Պղնձաքար։

Ամեն ինչ սկսվում էր գրեթե նորից։ Մինչև մոտալուտ ձմեռը պետք է համալրել բանակը, զինել, վարժել կամավորներին։

Աբդուլլահ փաշայի հեռանալուց հետո Ղոչ Ալի և Ղըրխ Ջեշմիշ փաշաները Միհրան հարյուրապետի ու մելիք Մուսու հետ դուրս եկան Հալիձորից և ասպատակեցին մոտակա գյուղերը։ Սակայն գրեթե ոչինչ չընկավ նրանց ձեռքը։ Հայերն իրենց անասունները և ուտեստի պաշարները թաքցրել էին լեռների անմատչելի խոռոչներում, ժայռերի մեջ փորած հորերում և ամենուրեք զենքով էին դիմավորում ասպատակողներին։

Թուրքերը նույնիսկ հասան մինչև Ջագեձոր ամրոցը, բայց Մխիթարի հավատարիմ ամրոցապահ Բանդուր-Ջաքարիան, Գորիս ավանի բնակչության գլուխն անցած, այնպիսի դիմադրություն ցույց տվեց նրանց, որ փաշաները շտապ ետ դարձան։ Ճանապարհին նրանք հարձակվեցին Որոտնաբերդի ու Շինուհայր ավանի վրա, սակայն այստեղից էլ քաշվեցին ձեռնունայն։

Միհրանն ու մելիք Մուսին թուրք փաշաներին համոզում էին ամբողջ բանակով դուրս գալ Հալիձորից ու հարձակվել Պղնձաքարի վրա, ցրել Մխիթարի նոր կազմվող բանակը, բայց փաշաներն զգուշանում

էին։ Դառը փորձից գիտեին, որ լեռնային կիրճերում ու ձորերում վտանգավոր էր բախվել հայերի հետ։ Ուստի բարվոք համարեցին հանդիստ ձմեռել Հալիձորում, մինչև Աբդուլլահ փաշան Պարսկաստանում վերջացնի իր գործերը և մեծ բանակով նորից գա Սյունիք։

— Շտապելու ոչինչ չունենք,— ասում էին նրանք հայ դավաճաններին։— Հալիձորում ուտեստի ու կերի պաշարներ կան, իսկ Մուխիթարը միայն իր վերջին ատամները կջարդի, եթե գա այս անառիկ բերդի վրա։ Սպասենք մինչև գարուն։

Շուտով ձյունը սարերից իջավ լեռնահովիտները, բռնեց ճանապարհները, կամուրջները կապեց, արահետները կշկռեց, ու քամին ոռնաց՝ գառը, ծակող շնչով։ Սկսվեց Հայոց աշխարհի դառնաշունչ ձմեռը։

Լեռնաշխարհն ասես մրափեց հավիտենական քնով։

Բայց արթուն էին թե՛ Հալիձորում և թե՛ Պղնձաքարի ճամբարում։

Թուրք փաշաներն ու հայ դավաճաններն սկսեցին մի թաքուն, խորամանկ պատերազմ հայերի դեմ։ Նրանք վարձու լրտեսներ էին ուղարկում Պղնձաքար՝ Մխիթարի բանակում համախոհներ գտնելու և նրանց միջոցով դավ նյութելու հայոց միաբանության դեմ։ Բայց լրտեսները միանում էին Մխիթարի զորքին. նրանցից ոչ ոք չէր վերադառնում Հալիձոր։

Մի երեկո Բայանդուր իշխանը Մխիթարին ասաց.

— Տեր-Ավետիսին տեսնողներ են եղել Սևանի վանքերում, քահանայի զգեստով է, շոքում է խաչքարերի առջև ու լալագին աղոթում։

— Ո՞ւմ հոգու համար,— հարցրեց գահերեց զորավարը։

— Մեղքերն է քավել ուզում։

— Քավե՞լ է։

— Ո՞վ իմանա,— ուսերը ձգեց Բայանդուր իշխանը։— Մի շղթա ունի ձեռքին, ասում են։ Դրանով անվերջ հարվածում է կուրծքը։ Մսերի վրա սպիտակ տեղ չկա, ամբողջովին կապույտ է։ Ցանկացա մարդ ուղարկել ետևից, որ վերջացնեն...

— Պիտի վերջացնել,— չար ասաց մելիք Բարխուդարը։

— Չի հարկավոր,— տխուր նկատեց Մխիթարը։— Տեր-Ավետիսն արդեն մեռած է թե՛ մեր և թե՛ մեր թշնամիների համար։ Նա էլ իր խելքով էր ուզում փրկել Հայոց աշխարհը։ Բայց մոլորվեց, գնաց կործանիչ ճանապարհով։ Ափսոս էր մարդը...

Բոլորը մի պահ տխրեցին։ Հիշեցին Տեր-Ավետիսին, երբ սա նժույգի ականջը մտած՝ նետվում էր թշնամու վրա, իր հզոր ձայնով ոգևորում ամենքին։ Ի՞նչը ծռեց նրան։ Ի՞նչը նրան ստիպեց բաց անել Հալիձորի դռները և քաղաքը հանձնել թշնամուն։ Ինչպե՞ս նա չհասկացավ,

որ խաբվում է, որ միայն դիմադրելով, թշնամու ատամները փշրելով կարելի է փրկել երկիրը։

Բայց ահա մի օր Պղնձաքարում երևաց ինքը՝ Տեր-Ավետիսը։

Անդադար ձյուն էր գալիս։ Երկինքն ասես իջել էր լեռնաշխարհի վրա։ Թվում էր, թե ձեռքդ տնկես, կմտնի նրա սառը կուրծքը։ Քամի չկար։ Ձյան անհամար աստղերն անփույթ վերուվար էին անում ու դանդաղ նստում աթարի դեզերին, կտուրներին, սառած դաշտերին։

Տեր-Ավետիսը երևաց հանկարծակի։ Նա գլխաբաց էր, տրեխներով։ Մի քրքրված վարտիք հազիվ էր ծածկում ծնկները։ Քահանայական ֆարաջան պատառոտված էր, հզոր կրծքի վրա կախվել էր մի թևը ջարդված լանջախաչը։ Ձեռքին բռնած ծանր շղթայով նա ստեպ-ստեպ հարվածում էր ինքն իրեն։ Նա քայլում էր ծանր, խոշոր, սուր աչքերը մանածելով շորս բոլորը։ Ձյունն իջնում էր նրա ալեխառն մազերին, կապտած, կիսամերկ ուսերին, մորուքին։

Սկզբում զինվորներն ուշադրություն չդարձրին այդ տարօրինակ մարդու վրա. նրան մուրացկանի տեղ դրին։ Բայց տեսնելով նրա ձեռքի ծանր շղթան, որով նա ստեպ-ստեպ հարվածում էր իրեն, երկյուղած մոտեցան նրան։

— Դու ո՞վ ես,— հարցրին անհամբեր։

— Դավաճա՜նը,— դղրդացող ձայնով արտասանեց Տեր-Ավետիսը։— Ճամփա տվեք դավաճանին, է՛յ, արդարնե՛ր, ճամփա՜...

— Խելագար է,— եզրակացրին ոմանք։ Բայց Երկրի ապավեն գնդի զինվորները իսկույն ճանաչեցին նրան։ Մատուրը երկյուղածությամբ մոտեցավ երբեմնի քաջակորով հազարապետին և, մի պահ տնտղելով նրան, հարցրեց.

— Տե՛ր հազարապետ, մի՞թե այդ դու ես։

— Ե՛ս,— հառաչեց Տեր-Ավետիսը։— Հա՛, հա՛։ Ճանաչեցի՞ք։ Լավ է։ Ճանաչեցեք դավաճանին։ Դե, ինչո՞ւ եք լռել, քարեր վերցրեք, սատկացրեք դավաճանին։ Որովհետև ասված է. «Որով և մեղանչե ոք, նովիմբ և տանջեսցի»։ Ես արժանի եմ դրան։ Ես չե՞մ սովորեցրել, թե ինչպես ջնջել դավաճանի գլուխը։ Դե, սկսեցեք, է՛... Ի՞նչ եք կարկամել, հայեր։

Զինվորների ու շինականների մի մեծ բազմություն շրջապատեց նրան։ Երիտասարդները հրհրում էին միմյանց առաջ ընկնելով՝ Տեր-Ավետիս հազարապետին լավ տեսնելու համար։ Երեխաները թառեցին կտուրներին, նույնիսկ կանայք բարձրացան պատերի վրա։ Բոլորն ուզում էին տեսնել երեկվա հզոր հաղթողին և այսօրվա դավաճանին։

Ամբոխով շրջապատված, Տեր-Ավետիսը հասավ այն տանը, ուր ապրում էր Մխիթարը։ Պահապան զինվորները նիզակներով փակեցին ամբոխի ճանապարհը։ Տեր-Ավետիսը բաց կուրծքը դեմ արեց մի զինվորի նիզակի։

— Նիզակդ խրիր կուրծքս, զինվո՛ր, խրիր. միայն թող մեկ անգամ էլ տեսնեմ Մխիթարին, հետո...

Բակ դուրս եկավ տաք մույկեր հագած, երկար մուշտակն ուսերին Մխիթարը։ Խոժոռ նայեց վաղեմի ընկերոջն ու երեսը շուռ տվեց։

— Տե՛ր աստված, նա է,— լսեց իր թիկունքում կանգնած մելիք Բարխուդարի ձայնը։

— Այո՛, նա է,— հաստատեցին մյուսները ևս։

Տեր-Ավետիսը նայեց մարտական ընկերներին, շաղված հայացքը գցեց Մխիթարին ու ամբարված դառնությամբ ասաց.

— Լսի՛ր, Մխիթար, լսեցե՛ք, զորապետներ։ Ես չեմ եկել ձեզանից ներումն ու թողություն հայցելու։ Քա՜վ լիցի... Ես եկել եմ, որ դուք ինձ պատժեք ժողովրդի ու զորքի առջև։ Պատժեցեք՝ Հալիձորի, հալիձորցիների արյան, գերի քշված իմ կնոջ ու զավակների, քո անբախտ կնոջ ու թլպատված զավակիդ համար, Մխիթա՛ր։ Այն բոլոր չարիքների համար, որ ես՝ տխմարագույնս մահկանացուների մեջ, պատճառեցի ձեզ, եղբայրնե՛ր։ Բայց ես եկել եմ ասելու, որ դուք ինձ դավաճան մի՛ համարեք։ Մի՛...— նրա ձայնը խզվեց։— Ես ցանկացա փրկել մեր տարաբախտ ժողովրդին՝ թեկուզ զավակներիս ու իմ կյանքի գնով... Բայց խաբվեցի։ Անօրեն իսլամի զավակները խաբեցին ինձ, և հիմա չկա Հալիձորը...

Նա շուռ եկավ դեպի իր թիկունքում ծռվացած ամբոխը։

— Չհավատա՛ք թուրքին, հայե՛ր...— աղաղակեց աղեխարշ ձայնով։ Չհավատաք այսօր, վաղը և հավիտենից հավիտյան...

Նա հեկեկաց։ Զորքի վրա ասես սառը ջուր մաղեցին։ Պակաս հուզված չէր նաև Մխիթարը։

— Պատժիր ինձ, Մխիթա՛ր,— նորից գոչեց Տեր-Ավետիսը։— Պատժիր այնպես, ինչպես մի ժամանակ ես ու դու էինք պատժում դավաճաններին։ Սատկացրու ինձ՝ առանց խղճահարության, միայն իմ վրայից վերցրու դավաճանի անունը։ Ես մոլորված եմ, խաբված։ Որովհետև ասված է. «Ամեն կատարյալ շինվածք սկիզբն է ավերման»։ Խորտակվել է իմ հոգու շենքը։ Դե, դահիճ կանչիր։

— Ավելորդ է,— գլուխը տարուբերեց Մխիթարը։— Աստված արդեն պատժել է քեզ, քո երբեմնի արթուն խելքն առնելով։ Գնա՛, Տեր-Ավետիս, ես չեմ կամենում ձեռքերս թաթախել քո արյան մեջ։ Գնա, հեռացիր մեր աշխարհից և քո ներկայությամբ մի նոր դառնություն ևս մի բարդիր մեր սրտերին։ Հեռացի՛ր։

Մխիթարն իր ուսերից պոկեց մուշտակն ու նետեց նրա վրա։ Ապա շուռ եկավ ու հեռացավ արագ... Տեր-Ավետիսը չոքեց ձյան մեջ ու գոչեց.

— Տեր, ուղղե՛ա զգնացս իմ։

Նա ճաքճքված ձեռքերով ծածկեց դեմքը, հեկեկաց և ընդոստ վերկենալով գնաց։

Մուշտակը մնաց ձյան վրա։ Տեր-Ավետիսը գնում էր ամբոխի պապանձված շարքերի արանքով ու երբեմն շղթայով հարվածում ուսերին։

Շուտով նա իջավ ձորն ու անհետացավ ձյունեղեն մշուշի մեջ...

***

Օսմանյան բանակը ծանր ու հաստատուն նստել էր Հալիձորում։ Թուրքերը դիակներից մաքրել էին կանգուն մնացած տները, իշևանատներն ու եկեղեցիները և ձիերով ու ավարով տեղավորվել նրանց մեջ։ Չկարողանալով գրավել շրջակայքում եղած ամրոցներն ու ընկճել նրանց փոքրաթիվ կայազորները, Ղոչ Ալի և Ղըրխ Չեշմիշ փաշաներն իրենց բանակով փակվեցին ամուր բերդաքաղաքի մեջ ու սկսեցին հանդարտ լափել քաղաքում եղած պաշարները։

Ձյունը նստել էր աշտարակների ու պարիսպների աամամներին, խցանել նեղ փողոցները։ Ագռավները կռավում էին ավերակների վրա, շները գզվռտվում աղբակույտերի մեջ։

Բայց ահա մի առավոտ թուրքերը խոնվեցին պարիսպների վրա և իրար ձայն տալով՝ մնացին շշմած։ Թաղիքե ծանր կաճյակները թափթփացնելով՝ մեծ աշտարակը բարձրացան փաշաները ու նայեցին ներքև։ Այնտեղ՝ մերկացած անտառում, բլուրներն ու ձորերը պատած էին անհամար զորքով։

— Սա ի՞նչ բան է,— թուքը կուլ տալով հարցրեց Ղըրխ Չեշմիշ փաշան՝ շեշտակի նայելով իր մոտ կանգնած Միհրանին։

— Մխիթարի զորքն է,— կմկմաց Միհրանը։

— Ո՞րտեղից այսքան զորք,— կապտեց փաշան։

— Երևի կարողացել է հավաքել։

Փաշաները հասկացան, որ Մխիթարը թաքցրել է իր ուժերը, ապա համալրել դրանք և ահա գունդ առ գունդ եկել, օղակել է քաղաքը։ Հայերը հանդարտ տեղավորվում էին ձորերում, անտառներում, խրամատներ էին փորում, գետնատներ կառուցում։ Ամեն ինչից երևում էր, որ նրանք մտադիր են երկարատև պաշարում սկսել։

— Շեյթա՜ն...— փրփրեցին փաշաները։— Խորամանկ է Մուխիթաթ փաշան։ Բայց դա հոգեվարքը ապրողի վերջին ճիգն է։ Շունչը հազիվ պահի մինչև գարուն։

Թուրքերը հոհոացին։ Կուշտ կերած, անբանությունից ուռած զինվորները սկսեցին հայհոյել, գոռալ, քրքջալ հայերի դեմ։ Վստահ էին քաղաքի անառիկության և իրենց բազմության վրա։

Բայց և այնպես օսմանյան բանակի հանգիստը խախտվեց։ Ստիպված էին գիշեր-ցերեկ պահակություն անել պարսպի սառն ատամների արանքում։ Մի երկու անգամ մանր ջոկատներով դուրս եկան հայերին խփելու և թերևս գերիներ ճանկելու հույսով, բայց ապարդյուն։ Խրվեցին ձյան մեջ, գլորվեցին թեք լանջերով և հայերի հրացանային կրակին չհասած՝ ետ քաշվեցին։

Նոր ձյուն եկավ, ամուր կապերով կշկոեց լեռնաշխարհը։ Հայերը գետնատներ շինեցին ձորալանջերին, ժայռերի տակ, ծառերի արանքում, մտան մեջները, ամուր նստեցին քաղաքի շուրջը։ Նրանք գիտեին, որ ձմեռը կերկարի, և թուրքերը կսկսեն նեղվել ուտեստի պակասությունից։

Օրերն սկսեցին անցնել միապաղաղ ու ձանձրալի։

Շուտով պաշարված թուրքերի համար կատարվեց մի անսպասելի բան։

Մի գիշեր պայթեց եկեղեցու մոտ գտնվող վառոդի ամբարը։

Անդադար ձյուն էր գալիս։ Երկինքն այնպես էր մթնել ու ցածրացել, որ կարծես հիմա փուլ կգա։ Պայթյունը դղրդացրեց ձորերը, կրակը միանգամից ժայթքեց մինչև երկնքի խորքերը, հրեղեն զիգզագներ անելով խավարի մեջ՝ տարածվեց, կլանեց նաև մոտակա ախոռները, մթերանոցները։ Թուրքերն աղաղակներով դուրս թռան իրենց կացարաններից, վազեցին դեպի հրդեհը... Սկզբում չէին հասկանում, թե ինչ է կատարվել։ Մտածեցին, թե հայերը անցք են փորել քաղաքի տակ, ական դրել ու պայթեցրել պարիսպը։ Փաշաները Մուսու և Միհրանի հետ վազեցին դեպի խուճապի մատնված գնդերը...

— Ի՞նչ է պատահել,— գոռացին ահաբեկ։

— Վառոդի ամբարը պայթեց,— պատասխանեցին նրանց։

— Ո՞վ, ո՞վ արեց։

Ղոչ Ալի փաշան թրով կտրեց քաղաքի ղափուջի բաշու[1] գլուխը։

— Հանգցրեք հրդեհը,— մոլեգին գոռում էր նա։

Սակայն թուրքերը դեռ մի կարգին բան չէին հասկացել կատարվածից, երբ հրդեհի մի վիթխարի սյուն էլ տնկվեց շուկայի մոտ։ Թափվող ձյան փաթիլները կրակի գույն ստացան։ Թվաց, թե ոսկու անձրև է տեղում։

— Շեյթա՜ն, շեյթա՜ն...— ոռնացին իրար վրա կուտակված մոլլաները։

— Մթերանոցներն այրվում են,— գուժեցին շուկայի կողմից։

— Օգնեցեք, հե՜յ... Ալլա՜հ, ամա՜ն...

Թուրքերը նետվեցին դեպի մթերանոցները։ Բայց արդեն ուշ էր։ Հրդեհը բռնել էր ալյուրով, ցորենով, բրնձով ու գարիով լիքը ամբարները և մոլեգնում էր վայրկյան առ վայրկյան։ Ձեթի կարասները պայթում էին, ձմեռվա համար շոգեխաշ արած ոչխարի ու տավարի միսն այրվում էր։ Աղանձվող ցորենի ու բրնձի ծանր ծուխ էր փռվել քաղաքի վրա։

Ոչ ոք սիրտ չէր անում մոտենալ վառվող մթերանոցներին։ Հրդեհն արյան գույնով էր ներկել ձյունը, որ արագ սևանում էր մրից ու հանգչող կայծերի տարափից։ Գազազած թուրքերը նետվեցին դեպի ավերակները, եկեղեցիները, բայց որտե՞ղ կարող էին գտնել չարագործին, ո՞վ էր նա՝ մա՞րդ, թե՞ երկնային պատիժ։ Շատերը հավատացած էին, որ հրդեհները հողածին չարագործի արարք չէ, այլ երկնքից ուղարկված աղետ։ Մոլլաները եռանդագին խփեցին իրենց կլոր թմբուկները՝ չարոգիների բարկությունը մեղմելու համար։

Հրդեհը հանգավ առավոտյան։ Այրվել էր վառոդի ողջ պաշարը, մթերքի մեծ մասը ոչնչացել էր։ Փաշաները անհույս գազազում էին, թափառում սև մրով ներկված փողոցներում։ Զինվորներին ծանր հուսահատություն էր պատել։

Երկու օր հետո, գիշերը այրվեց ձիերի համար կուտակած խոտի դեզը։ Երրորդ օրը լուսաբացին հայտնի դարձավ, որ գիշերը անհայտ չարագործը մտել է ձիերի ախոռն ու դաշույնով կտրել ձիերի ոտքերի ջիլերը։

Սա դեռ բոլորը չէր։ Մի շաբաթվա ընթացքում դարձյալ անհայտ չարագործները քնած տեղերը մորթեցին մի քանի ասկյար ու երեք հարյուրապետ։ Զինվորները գազազեցին։ Վառոդը պայթել էր, մթերքի մեծ մասը ոչնչացել, ոչ ոք չէր հավատում, որ գիշերն իր կոկորդն էլ չենք կտրի չարագործները։ Եղան մարդիկ, որոնք համոզում էին, թե այդ քաղաքը դևաբնակ է, պետք է շտապ հեռանալ, այլապես մինչև ձյունները հալվելը ոչ ոք կենդանի չի մնա։

Փաշաների ու հայ դավաճանների ջանքերով զորքը մի փոքր խաղաղվեց։ Սակայն մի գիշեր անսպասելի վառվեց Երկրի ապավեն գնդի

[1] Քաղաքի պարետ, դռնապահների պետ։

զորանոցը։ Թուրքերը հազիվ կարողացան դուրս նետվել այնտեղից՝ հրդեհին թողնելով իրենց զենքը։ Նորից իրարանցում ընկավ, նորից հուսահատվեցին։

Գիշերային թոհուբոհի ժամանակ ոչ ոք չնկատեց, թե ինչպես մի սև ուրվական պարանով կախվեց քաղաքի արևմտյան պարսպից ու արագ իջավ ձորը։ Մի փոքր հեռանալով քաղաքից, ուրվականը կանգ առավ անտառում և, նայելով հրդեհին, հաճույքով քրքջաց...

Այդ ուրվականը Տեր-Ավետիսն էր։

***

Հայոց զորքը շարունակում էր ավելանալ։ Աշխարհազորային նորանոր ջոկատներ էին գալիս հեռու և մոտակա գյուղերից։ Նրանք անցնում էին սառցակալած սարեր, բռնում ձյան տակ թաղված ձորերի կածաններն ու հասնում գահերեց զորավարի ռազմական ճամբարը։

Զինվորներն շտապ նրանց տանում էին իրենց տաք գետնատները, մոտեցնում կրակներին։ Ցրտահարվածներին դնում էին ձիու աղբի տաք կույտերի մեջ, մասրաթթու և հոնի օղի տալիս, կազդուրում։ Նորեկները հանում էին մեջը դարման լցրած, սառած տրեխները, չորացնում իրար վրա հագած մի քանի երկարաճիտք գուլպաները և պատմում, թե ինչպիսի տառապանքներով են կտրել սարերն ու հասել Հալիձոր։ Շատերը խրվել էին ձյան հյուսքերի մեջ ու կորել։

Մխիթարը նորեկներին տեղավորում էր, երկար զրուցում նրանց հետ, հարցուփորձ անում։ Կամենում էր իմանալ, արդյոք մեկնումեկը տեղեկություն չունի՞ Հալիձորից տարած հայ գերիների մասին։ Ո՞ւր են տարել նրանց, որտե՞ղ պիտի վաճառեն։ Բայց բոլոր նորեկները միևնույն պատասխանն էին տալիս. «Լսել ենք, որ գերիներին քշել են Թավրիզ»։ Ուրիշ ոչինչ։ Թեև գերի քշված կնոջ ու զավակի մասին ոչ ոքի հետ Մխիթարը չէր խոսում և Ահարոնին խստագույնս արգելել էր այդ առթիվ որևէ մեկի մոտ տրտնջալ, սակայն նրա սրտում մի անբուժելի վերք էր առաջացել, որ գնալով ավելի էր խորանում ու դառնում վտանգավոր։

Ոչ մի վայրկյան նրա մտքից չէր հեռանում Սաթենիկը։ Ամբողջ տասնինը տարի տառապեց այդ կինը, ոչ մի պայծառ օր չտեսավ, լուռ տարավ իր կոպտությունները, չկշտամբեց, չդադարեց իրեն սիրելուց։ Եվ ինչո՞ւ գերության ծանր շղթաները բաժին ընկան նրան և ոչ թե իրեն։ Ավելի լավ կլիներ, նա էլ իր որդու հետ, ուրիշների նման, ընկներ Հալիձորում, նահատակի անվամբ կնքեր իր դժբախտ կյանքը, քան ճաշակեր գերության դառնությունը։

Թեև գահերեց զորավարն ամեն ջանք գործ էր դնում, որպեսզի թաքուն պահի իր խորունկ վիշտը, բայց շրջապատողներն զգում էին նրա լուռ տառապանքը, լսում նրա թաքուն հառաչանքները։ Մի անգամ էլ (մի բան, որ բնավ չէր ցանկանում Մխիթարը) այդ մասին ակնարկ արեց Գոհարը։

Մխիթարը գնացել էր նրա գունդը (նոր էին կազմել աշխարհազորայիններից)։ Զինվորների կացարանները նայելուց հետո, երբ Մխիթարը վերադառնում էր դեպի իր գետնատունը, նրան մի փոքր տեղ ուղեկցող Գոհարն ասաց.

— Դու քեզ կորովի՞ չես պահում, Մխիթա՛ր։

— Զգո՞ւմ ես,— հառաչեց Մխիթարը։

— Աչքերիդ փայլը մարել է, քայլում ես ոչ առաջվա պես հաստատուն։

— Երևի...

— Վիշտդ մի դնի բոլորին ի տես,— խորհուրդ տվեց Գոհարը։— Ողջ բանակը քեզ է նայում։ Մարդ ուղարկիր Պարսկաստան, թող գնա հայ գերիների հետքերով, փորձի գտնել Սաթենիկին ու որդուդ։ Կարելի՞ է գտնել ու գնել։ Ես լսել եմ, որ գերիներին վաճառում են Մակվա գերավաճառանոցներում։ Փորձիր։

— Կարծում ես Աբդուլլահ փաշան խնայա՞ծ կլինի կնոջս ու որդուս,— տնքաց Մխիթարը։

— Համենայն դեպս, փորձիր, ավելորդ չէ։

Երկար այդ մասին մտածելուց հետո, Մխիթարը ծածուկ իր մոտ կանչեց գուսան Հեթումին ու, բավական գումար տալով նրան, ուղարկեց Պարսկաստան՝ կնոջն ու որդուն որոնելու։

Մի անգամ Ահարոնը, հորը սաստիկ վշտացած ու ընկճված տեսնելով՝ փաթաթվեց նրա վզովն ու խնդրեց.

— Թույլ տուր գնամ մորս ու եղբորս որոնելու, հա՛յր։

— Ո՛չ,— գլուխը թափահարեց հայրը և արցունքները կուլ տվեց։— Այժմ բովանդակ աշխարհում դու ես իմ միակ մխիթարանքը։ Այլևս մենք իրարից չենք բաժանվի։

***

Թանձր մառախուղ էր նստել Թավրիզի վրա։

Մինարեների բռունցքաձև գագաթներից ծղրտում էին օսմանյան բանակի մոլլաները։ Հավատացյալ մուսուլմանները խմբերով գնում էին մզկիթները՝ առավոտյան աղոթքի։

Շահ Թահմազի պալատում անսովոր իրարանցում էր։ Պարսից ճարտարապետության այդ սքանչելի բակերում և անթիվ, անհամար սրահներում, ուր մի երկու տարի առաջ ապրում էր Սեֆյան հարստության վերջին ժառանգ, դժբախտ շահ Թահմազը և որի օրոք արևելյան մի քաղցր անդորրություն ու մեղկություն էր տիրում այդտեղ, այժմ վխտում էին գույնզգույն զգեստներով փաշաներ, աղասկյարներ, հնդուհավի պես գույնզգույն զգեստներով փաշաներ, աղաներ, սյունի աղանդի մոլլաներ։

Փաշաներն իրենց ձիերը տեղավորել էին հայելապատ սրահներում, շիա վարդապետության և պարսից հին գրականությամբ հարուստ գրատներում, բաղնիքներում ու պալատական շիա մեշիտում։ Ամեն տեղ զզվելի ապականություն էր, որ չէր ծածկում նույնիսկ ձյունը։

Առավոտ էր։ Թուրք սիփահիները սրահներից հանում էին իրենց կուշտ կերած ձիերը, մի փոքր խաղացնում ձյունների մեջ ու շտապ թամբում։ Ամեն ինչից երևում էր, որ նրանք պատրաստվում են տեղ գնալ։

Շահ Թահմազի դիվան սարայում իր բոլոր զեն ու զարդի մեջ կանգնած էր Աբդուլլահ փաշան։ Նրա առջև շոքած էր մի բարձրահասակ շոուշ[1], որի զգեստների վրայի ձյունը հալվում էր ու կաթկթում գորգի ծաղիկներին։

— Դու ծանր լուր բերիր, համբա՜կ,— որոտաց փաշան։

Շոուշը ճակատը խփեց գետնին և օգնություն աղերսող հայացքով նայեց մի քիչ դենը անշարժ կանգնած փաշաներին ու մեծ մոլլային։

— Ալլահի կամքն էր երևի, օ՜, մեր բախտի կարգադրիչ,— աղաղակեց նա։

— Որտեղի՞ց Մուխիթար փաշան զորք հավաքեց,— ձայնը փոքր-ինչ մեղմացրեց Աբդուլլահը։

— Շեյթանն է տեղյակ,— ձեռքերը տարածեց շոուշը։— Որքան էլ սպառում ենք այդ հայերին, էլի բուսնում են։ Մեծ բանակով Մուխիթար փաշան պաշարել է Հալիձորը։ Մթերքի պաշարների մի մասն այրվել է, մյուս մասն սպառվել։ Վառոդ չկա, հաց չկա։ Հալիձորում տագնապ է։ Փորձեցինք դուրս գալ քաղաքից ու ետ շպրտել հայերին, բան չստացվեց։ Գյավուրները կռվում են դևերի պես։ Ծանր է մեր վիճակը, ողորմա՜ծ սերասկյար, Ղոչ Ալի և Ղըրխ Չեշմիշ փաշաները ծնկածալ աղաչանոք օգնություն են խնդրում...

«Օգնությո՜ւն...— մտքում դառնացավ սերասկյարը։— Ինքս եմ այժմ օգնության կարոտ։ Բանակս հալվեց Հայաստանի կիրճերում։ Կոտորվեցինք։ Իսկ պարսիկներն արդեն նեղում են մեզ։ Թահմազ Ղուլի Նադիր

[1] Սուրհանդակ։

խանը պաշարել է Բաղդադը։ Որի՞ն օգնության հասնեմ, Բաղդադի փաշայի՞ն, թե՞ Հալիձորին»։

Շոուշը շարունակում էր օգնություն աղերսել, ճակատը խփում էր գետնին, մազերը բռնում, բայց Աբդուլլահը կարծես չէր էլ լսում նրան։ Ոչ մի կերպ չէր կարող օգնության գնալ Հալիձորում պաշարված իր զորքին։ Սուլթանը հրամայել է շտապ գնալ պարսիկների պաշարած Բաղդադը փրկելու։ Բաղդադը հարուստ է, Պարսկաստանի հարավային դուռն է նա։ Վճռված է։

Փաշան աչքերը ոլորեց շոուշի վրա։

— Վե՜ր կաց։ Այդ երբվանի՞ց եք սկսել սոսկալ էրմենիներից։ Վեր կաց և իսկույն դարձիր Սյունիք։ Հրամանս այս է՝ Մուխիթար փաշային մեխած պահել Հալիձորի տակ։ Եթե Հալիձորը հանձնեք, ապա կկախեմ բոլորիդ։ Գնա, ասա քո փաշաներին, որ օգնության կգամ, հենց որ գարունը բացվի, ճանապարհները կոշտանան։

Ետ-ետ գնալով՝ շոուշը դուրս եկավ սրահից։ Աբդուլլահ փաշան նստեց, ընկավ ծանր մտատանջության մեջ։ Էլի այդ հայերն են իր ոտքը կապ դրել։ Ո՞վ է օգնում նրանց. որտեղի՞ց է նրանց ուժը, չէր կարողանում կռահել։ Ոչ մի աշխարհում այդպիսի համառ դիմադրության չէր հանդիպել։ Նրա առջև կործանվել են եգիպտական մամլյուկների գնդերը, Եվրոպայի շատ մեծ քաղաքներ ու աշխարհներ են ծունկի եկել նրա առջև, իսկ այդ հայերը հնազանդվել չգիտեն, դիմադրում են չփշրվող որձաքարի պես։

Փաշան շեշտակի նայեց մեծ մոլլային։

— Վերջացրի՞ր գերիներին։

— Բոլորը վաճառված են, փաշա՜։ Արու մանուկներին ուղարկեցի Ստամբուլ՝ ենիչերիության,— պատասխանեց մեծ մոլլան։

— Որտե՞ղ է Մուխիթար փաշայի կինը։

— Պահում ենք քո հրամանով։

— Բեր։

Սաթենիկ տիկինը սրահ մտավ ծանր, ոտքերը հազիվ փոխելով, բայց վեհ ու արժանապատիվ։ Թեթև ճերմակով ձյունված գլուխը բարձր էր, հայացքը՝ սառն ու հանդարտ։ Կարծես հազարամյա խաչքար էր, որ իր պատվանդանից պոկված, դանդաղ ու սպառնագին շարժվում էր դեպի թուրք փաշան։ Նրա հանդարտ տեսքը, և, մանավանդ, վշտոտ, բայց և աներկյուղ հանդիսավորությունը զարմացրեց փաշաներին։ Ոմանք նույնիսկ երկյուղ զգացին։ Կենդանի՞ արարած ներս մտավ, թե՞ երկնային վրիժառու ոգի հայտնվեց մարմին առած։

Տիկինը կանգ առավ ու խոր ընկած, անթարթ հայացքով խոցվեց Աբդուլլահի աչքերում։ Սերասկյարն ասաց.

— Ես տեսնում եմ, որ հայոց գահերեց զորավարի տիկինը թուլակամներից չէ։

— Թուլակամները փոքր ոգի ունեն,— ծանր պատասխանեց տիկինը։

— Նույնիսկ այն դեպքո՞ւմ, երբ գնում են դեպի մահը։

— Մեծ հոգուն մեծ մահ է բաժին։

Փաշան քմծիծաղեց, թեք նայեց յուրայիններին ու շարունակեց.

— Դու, տիկի՛ն, մայր ես, քո որդին իմ գերին է։ Արդյոք չէի՞ր կամենա, որ նա ազատվի մահից։

— Նա արդեն ազատված է,— տիկինը ցնցվեց, աչքերը կլորացան։ Փաշաները հարցական նայեցին միմյանց։ Աբդուլլահը մռայլվեց մի երկվայրկյան։ Տիկինը շարունակեց։— Իմ որդու հոգին ազատ է։ Դու չկարողացար սպանել նրա հոգին, փաշա՛։ Չկարողացար, չէ՞... Չես կարող ցած բերել երկնքի խորքերում ճախրող արծվին, դարձնել գետերի ընթացքը, սպանել հոգին։ Քո բանակում մարդիկ գտնվեցին, որոնք երկու ոսկով կատարեցին իմ կամքը՝ ազատեցին որդուս։

— Փախցրե՞լ են,— շանթող հայացքը մեծ մոլլային գցելով ֆշշացրեց փաշան։

— Ո՛չ, տեր մեր,— գլուխը խոնարհեց մեծ մոլլան։— Այդ խելագար կինը սպանել է տվել իր որդուն։ Երկու ոսկի է տվել մի ասկյարի, և սա խեղդել է երեխային։

— Մորթե՛լ ասկյարին, մորթե՛լ,— կատաղեց փաշան։

— Նա արդեն սպանված է,— պատասխանեց մոլլան։

Փաշան ահով նայեց Սաթենիկին։ Սա հանդարտ էր, արտաքինից անխռով։ Միայն թեթևակի օրորվում էր կանգնած տեղը։

— Որդեսպա՛ն,— մռնչաց փաշան։— Ալլա՛հն է վկա, որ այդպիսի դաժան մայր չեմ տեսել աշխարհների մեջ։ Ինչո՞ւ որդուդ մատնեցիր մահվան։

— Ես նրան փրկեցի հավիտենական տառապանքից,— ասես ինքն իր համար խոսեց Սաթենիկը։— Դուք նրան թլպատեցիք՝ ենիչերի դարձնելու, որ հետո անմեղ մանուկներ ու մայրեր կոտորի։ Այդպիսի որդի ես չեմ ուզում։ Նա փրկվե՛ց։ Այժմ երկնքումն է նրա փոքրիկ հոգին։

— Ես կհանեմ հայի ոգին, որ դուք այլևս խելագար մոլուցքով չկրեք իմ ճանապարհը։ Ես ոչ մի հայ կենդանի չեմ թողնի։ Բոլորին կլափեմ, մահմեդական կդարձնեմ։ Ե՛ս, ե՛ս...— փաշան կապտեց։

— Ձեռքերդ կարմ են,— նկատեց տիկինը։

— Դեռ հույս ունե՞ք, հա՞։ Էլի գլավուր ուռուսների վրա է հույսներդ։

— Հույսով ապրել ենք դարեր,— նորից հանդարտ պատասխանեց Սաթենիկը։— Ապրել ենք մեր բազկի ուժով։ Կապրենք նաև ռուսի օգնությամբ։ Նա կգա։ Այսօր չեկավ, վաղը, մյուս օրը կգա։ Սա է ճանապարհը հայոց։

— Ռուսը կգա Հայաստան աշխարհի ավերակների վրա։

Փաշան երկար լռեց, ապա մի փոքր մեղմ շարունակեց.

— Լսիր, Մուխիթար փաշայի կին, խելք ունեցիր։ Ես քեզ կազատեմ, կներեմ բոլոր այն չարիքները, որ մեզ է պատճառել քո ամուսինը, միայն թե դու գրիր, համոզիր նրան, որ զենքը վայր դնի ու գա ինձ հպատակության։ Գրիր՝ թող գա։ Այն դեպքում ես այլևս չեմ մտնի ձեր լեռները, գութ կունենամ դեպի ձեզ, գրիր։

— Երբե՛ք,— տիկնոջ ձայնը դողաց։— Ես կանիծեմ իմ ամուսնուն, եթե նա գա ու հպատակվի քեզ։

— Բայց մենք կկտրենք քո գլուխը։

— Կտրիր։

— Քեզ կմերկացնեմ ու քարշ կտամ փողոցներով։

— Թող լինի։

— Օ՜... ալլա՛հ,— գլուխը թափահարեց փաշան։— Այս ի՜նչ տեսակ ժողովուրդ են այս հայերը։ Դուրս տարեք այս կնոջը, նա կախարդում է։ Մահու տվեք։ Շո՛ւտ։

Սաթենիկ տիկնոջը տարան։ Բակում խռնված մոլլաները ոռնացին։ Տիկնոջը նետեցին նրանց պարզած ձեռքերի վրա։

— Ալլահին զոհ, զո՛հ...— ճղճղաց մեծ մոլլան։

Տիկնոջ վրայից պոկեցին նրա վերջին ցնցոտիները։ Նրա ծոցից վայր ընկավ իր պատմության մատյանը։ Մի թուրք գիրքը նետեց բակում բորբոքվող կրակը... Տիկինն աչքերը փակեց։

Գազազած ամբոխը մռնչում էր վայրենի կատաղությամբ։ Մոլլաները գրգռում էին նրանց։

— Այս գյավուրը հայհոյել է մեր սուրբ հավատը,— գոչում էին նրանք։

— Ո՛ւ...— ոռնում էին զինվորները։

Սաթենիկ տիկնոջ մարմինը ձեռքից ձեռք նետելով՝ հասցրին հրապարակ։ Ամբողջովին ճերմակ հագած, տասներկու ծալ կանաչ շալմայով մի մոլլա թափահարեց նրան ու գոռաց.

— Վերջին անգամ եմ ասում, ընդունիր իսլամը, և դու կդառնաս տիեզերքի կենտրոն սուլթան Ահմեդի սիրելին։

Ահավոր խոշտանգումներից թուլացած տիկինը հազիվ էր մնում ոտքի վրա։ Նա հավաքեց իր ուժերը, կում արեց ու թքեց մոլլայի երեսին։

Թուրքերը տիկնոջը կանգնեցրին նախօրոք պատրաստած մի փոսում։ «Մնաք բարո՜վ, Մխիթա՛ր, Ահարո՜ն,— աչքերը փակ մտածում էր Սաթենիկը՝ մտովի հրաժեշտ տալով ամուսնուն ու որդուն։— Ես ներում եմ քո բոլոր մոլորությունները, Մխիթա՛ր, քանի որ դու չսիրելով ինձ, սիրեցիր ամենավեհագույնն ու սուրբը՝ մեր հայրենիքը։ Մնաս բարո՜վ, որդյա՛կ իմ Ահարոն։ Ջարությամբ ոչինչ մի մտածեք իմ մասին և կանգնիչ եղեք սգազգեստ տանն Հայոց։ Թող օրհնվի ձեր կյանքի մնացած ճանապարհը։ Ամեն»։

Հողը հասավ մինչև նրա պարանոցը, և նրա ուշքը գնաց։ Աղավաղվեցին սիրելիների քաղցր դեմքերը, և միայն մշուշի մեջ տեսնում էր երկինք ճախրող որդուն՝ Դավթին, որ փոքրիկ թաթիկներով իրեն կանչում էր իր ետևից։

Քիչ հետո ամեն ինչ ծածկվեց անթափանց խավարով...

***

Եկեղեցու գմբեթին թառեցին երկու վայրի աղավնի։ Ջմեռային պայծառ առավոտ էր։ Ողջ գիշեր ձյուն էր եկել, նստել հնի վրա՝ ճերմակով կարկատել տեղ-տեղ բացված գետինն ու ավերակների կույտերը։ Արևը հրճվանքով խայտում էր։ Աղավնիներն աշխույժ ցատկոտեցին եկեղեցու գմբեթին նստած թարմ ձյան մեջ, նայեցին արևին, որի ջերմության մեջ զգացվում էր գարնան հեռավոր շունչը և կտուց-կտուց սկսեցին ղունղունալ...

Ներքևից մի գնդակ սլացավ։ Աղավնիներից մեկն ընկավ, մյուսը խրվեց երկնքի խորքերում...

Մի քանի տասնյակ ասկյար միանգամից նետվեցին դեպի սպանված աղավնին։ Մի բարձրահասակ ենիչերի գայլի վազքով ճեղքեց ծընկահար ձյունն ու ընկավ թևերը տարածած աղավնու վրա։ Մյուսները թափվեցին նրա գլխին։

Սկսվեց մի կատաղի գզվռտոց։ Յուրաքանչյուրն աշխատում էր ինքը հափշտակել աղավնին։ Բարձրահասակ ենիչերուն պոկեցին գետնից, զգեստները պատառոտեցին։ Սա ատամները խրել էր աղավնու տաք մեջքն ու ձեռքերով պաշտպանվում էր՝ ծանր հարվածներ տեղալով աջ ու ձախ։ Նրան էլ էին հարվածում։ Մեկը դաշույնով ճեղքեց նրա գլուխը։ Տասնյակ ձեռքեր միանգամից պարզվեցին դեպի նրա բերանը, և աղավնին պոկեցին նրա ատամների հետ միասին։

Փոքրիկ թռչունի մարմինն իսկույն ծվատվեց։ Իրար տրորելով՝ բոլորը քաշկոտվում էին ձյան մեջ։ Ուժեղները խփում էին թույլերին, մի

ակնթարթում գետնին տապալում նրան, ում ձեռքն էր ընկնում աղավնին։

Աղավնու մարմնից ոչինչ չմնաց։ Զինվորների քաղցած ոհմակը ոռնաց։ Հույսով նայեցին երկնքին, բայց ամենաշռայլ ալլահը ոչինչ չէր խոստանում այլևս։

Պաշարված Հալիձորում սոսկալի սով էր։

Վաղուց արդեն սպառվել էր ուտեստի այն խղճուկ պաշարը, որ ազատվել էր հրդեհից։ Ջորքը լափել էր սիփահի-գնդի բոլոր ձիերը, կերել էին քաղաքում մնացած շները, կատուները, կոտորել էին բոլոր ագռավները։ Ավելի ճարպիկները մկներ էին որսում ու խժռում տաք-տաք, դեռ կենդանի։ Եփել կերել էին բոլոր թամբերը, ձիերի կաշիները, ձիասարքերի կաշվե մասերը։

Այսպես ապրել էին ամբողջ երեք ամիս։ Այլևս ուտելու ոչինչ չկար։ Սովը անողորմ հնձում էր։ Ամեն օր հարյուրավոր մեռածներ էին նետում վիհը։ Ղոչ Ալի և Ղրբխ Ջեշմիշ փաշաներն ահուսարսափի մեջ էին։ Ջորքի կեսից ավելի սովամահ էր եղել արդեն, մյուս մասն էլ ուրվականների պես թափառում էր ավերակներում՝ հին տրեխներ, մորթիներ գտնելու հույսով։ Այնինչ Աբդուլլահ փաշայից ոչ մի օգնություն չկար, և դեռ ձմռան վերջը հեռու էր։

Թավրիզ ուղարկած վերջին շուրջը լուր էր բերել, թե սերասկյարը զորքով մեկնել է Բաղդադի կողմերը՝ հրամայելով ամուր մնալ Հալիձորում մինչև գարուն, մինչև ճանապարհները բացվեն և ինքը, Բաղդադում պարսիկների դեմ գործը հաջող վերջացնելուց հետո, գա օգնություն։

Փաշաները հուսահատվել էին։ Պակաս հուսահատված չէին նաև մելիք Մուսին և Միհրան հարյուրապետը։ Սրանք ավելի լավ էին տեսնում այն վտանգը, որ մոտենում էր իրենց։ Ամեն կերպ աշխատում էին հուսադրել փաշաներին, արի պահել նրանց։

Այն օրը, երբ ասկյարներն իրար ոչնչացնում էին սպանված աղավնու համար, փաշաները մորթել էին տվել իրենց վերջին ձին։ Երբ ձիու միսն արդեն եփել էր, մանր կտրտեցին ու փաշաներն իրենք իրենց ձեռքով բաժանեցին զինվորներին։

Վերջին ձին էլ գնաց։ Այլևս ուտելու ոչինչ չկար։ Բանակի մեծ մոլլան նիհարել, ուրվական էր դարձել։ Նա հազիվ էր կարողանում տեղից շարժվել։ Գլուխը պտտվում էր։ Աղոթք չէր անում, սպասում էր ծանր մահվան։

— Ալլահի պատիժն է,— գլուխը տարուբերելով ասում էր նա։— Ալլահն անքննելի է, կամքն արդար... Աստված նա է, ուրիշ աստված չկա ալլահից բացի։— Բայց նրան ոչ ոք չէր լսում։

Մի երեկո փաշաներին այցի եկավ նոր նշանակված ղափուջի բաշին. գլուխ տվեց ու, ծոցից մի փաթեթ հանելով, մեկնեց նրանց։

— Խանձված ցորեն է,— ասաց հառաչելով,— գտա փլատակների մեջ։ Համեցեք, տե՛ր փաշաներ, մի-մի բուռ կհասնի յուրաքանչյուրիդ։— Նա փաթեթը բաց արեց։ Բոլորի ագահ հայացքներն ընկան խանձված ցորենի վրա։ Առաջինը մոլլան ձեռքը մեկնեց աղանձին։

— Ալլահը ողորմած է,— լփլփացրեց նա ու աղանձը լցրեց բերանը։

— Որտեղ ոտք ենք դնում, ավերում ենք,— ծանր ասաց Ղըրխ Ջեշմիշ փաշան։— Եթե բնակչությունը պահեինք, այսպես չէր լինի, կկերակրեին մեզ, ուտեստը չէր ոչնչանա։ Այս օրին ընկանք նաև Երևանում։

— Ամեն ինչ ալլահի ձեռքին է,— նորից ճպպացրեց մոլլան։

— Այդ գիշեր սիփահիներից վեց հոգի մորթել են իրենց ընկերոջն ու կերել,— ահով հայտնեց ղափուջի բաշին։

— Օ՜, ալլա՜հ,— զարհուրեց մոլլան։

— Բայց սա առաջին դեպքը չէ,— շարունակեց ղափուջի բաշին։— Ամեն գիշեր մարդ են մորթում։ Մի ենիչերի սպանել է երկու կատաղած զինվորի. մարդկային միս ուտելուց էին կատաղել, կծում էին, ոռնում գայլի պես։

Աղանձը սառեց Ղոչ Ալի փաշայի բերանում։ Զգաց, որ մոտենում է զարհուրելին՝ վերջը։ Վաղը ոչ մի պատառ չեն գտնի, որ տան զինվորներին։ Իրար կուտեն։ Ավելի սոսկում էին հայերը։ Մելիք Մուսու մարմինը դող ընկավ։ Այս գիշեր փաշաները չե՞ն մորթի, արդյոք, իրեն։ Նա ահուդողով էր նայում ոսկրացած, գազանի աչքերով իր բարերարներին։ Այո, իրար կուտեն։ Կկատաղեն։ Ի՞նչ անել։ Կարծես նրա հարցին պատասխանելու համար, մոլլան ասաց.

— Մեր տերը մեզ պատվիրել է պահպանել հավատացյալների կյանքը, չթողնել, որ կորչեն, անտեղի։ Փաշանե՛ր, գտեք ալլահի զավակներին փրկելու ելքը, թե չէ ալլահը կվառի ձեր հոգիները։ Գտե՛ք... Նրա աչքերը փայլատակեցին, ծնոտը դողաց։ Այդպես նա սոսկալի էր։

— Լավ կլինի, որ դուրս գանք քաղաքից, հարձակվենք հայերի վրա և մեզ համար փրկության ճանապարհ գտնենք,— խորհուրդ տվեց ղափուջի բաշին։

— Կկոտորվենք գլխովի,— հառաչեց Ղըրխ Ջեշմիշ փաշան,— հայերի օղակն ամուր է։

— Իսկ այստեղ մնալով իրար միս կուտենք, կվերջանանք,— սպառնագին ճչաց մոլլան։— Այո, քաղաքից դուրս գալը ելք է։ Կխփենք գյավուրներին, գնացողը կգնա, մնացողը... Գլուխներս կազատենք։ Ալլահի կամքն է, փաշանե՛ր, կատարեցեք...

Բոլորն էին կամենում ելք գտնել սովամահ լինելուց։ Ղափուջի բաշու առաջարկը խելացի գտան, բայց ինչպե՞ս պատռեն հայերի օղակը։

— Եթե չցրենք Մխիթարի զորքը, կկորչենք մինչև վերջին նոքաբը,— ասաց մելիք Մուսին։

— Այո, այդպես է,— ավելացրեց Միհրան հարյուրապետը։— Կարելի է ճեղքել հայերի պատնեշը։ Ես կառաջնորդեմ ձեզ, փաշանե՛ր։ Գիշերով հարձակվենք ձորի ուղղությամբ, շեշտակի հարվածենք քնած հայերին և դուրս գանք օղակից։ Անշուշտ կոտորած կլինի, բայց և ինքներս կազատվենք մահվան ճիրաններից։

Թուրքերին դուր եկավ հայերի համարձակ խորհուրդը, ուրիշ ելք չունեին։ Կամ պետք է դուրս գալ պաշարված քաղաքից, ճեղքել հայերի շղթան ու ազատել իրենց գլուխները, կամ կկոտորվեն սոսկալի սովից, ու երեք օր հետո ոչ ոք կենդանի չի մնա։

Լուսացավ։ Փաշաները, մեծ մոլլան ու հայ դավաճանները դուրս եկան Հայոց ժողովի ապարանքից։ Դրոշակները պարզեցին ու գնացին հրապարակ։ Զորքը հավաքվեց։ Սոսկալի էր ասկյարների տեսքը։ Քաղցած, գազազած ու նիհարած զորքը սպառնագին նայում էր իր տերերին։ Թվում էր, թե հիմա կհարձակվեն նրանց վրա ու կհոշոտեն։ Մոլլան ուժ գտավ ու բղավեց.

— Ալլահի կամքն է, որ դուրս գանք այս անիծյալ քաղաքից ու խփենք անօրեններին, ո՜վ հավատացյալներ, ո՜վ Մուհամմեդի զավակներ։ Հայերի ճամբարը լիքն է ուտելիքով։

— Յա՜, Աբուբեքիր,— որոտաց զորքը։ Մոլլայի ձայնը խեղդվեց։

— Յա՜, Օսման,— բղավում էին քաղցած կոկորդները։

— Լցվեցեք արիությամբ, ու կփրկվենք կորստից,— գոռաց Ղըրխ Ջեշմիշ փաշան։

Մինչև երեկո թուրքերը տենդագին պատրաստություն տեսան, քաղցած զորքը պատրաստ էր նետվելու թեկուզ կրակի մեջ, միայն թե ուտելու բան կարողանար ճանկել, կշտացնել իր անտակ որկորը։ Զինվեցին, քաջալերեցին միմյանց և մթության քողի տակ գունդ առ գունդ մոտեցան քաղաքի փակ դարպասներին։

***

Մութը լիովին կոխեց աշխարհը։

Փաշաներն ու հայ դավաճանները հետիոտն մտան զորքի մեջ։ Բոլորը լուռ էին, սոսկված։ Սովից հյուծված, մարդկային կերպարանքները

կորցրած այդ ամբոխն այլևս զորք չէր, այլ ուրվականների մի անկանոն խուժան։

Հուսահատ փաշաները տխուր նայեցին զորքին, որի կեսից ավելին կոտորվել էր սովից։ Հասկացան, որ կորստյան են տանում նաև մյուս կեսը։ Բայց պետք է գնալ, գոնե կազատեն իրենց գլուխները։

Ղափուշի բաշին բաց արեց ծանր դարպասը ու սուրը մերկացրած նետվեց առաջ։ Նրան հետևեցին սիփահիների գնդի մնացորդները։ Փաշաները ևս մերկացրին սրերը։ Ձյունը հասնում էր մինչև նրանց ծունկները։ Մթության մեջ վատ էին տեսնում շրջակայքը։ Նրանց դեպի ձորի խորքն էին առաջնորդում Մելիք Մուսին և Միհրան հարյուրապետը։

Անաղմուկ անցան նեղ տափարակն ու իջան ձորը։ Շրջապատում մեռելային լռություն էր։ Ո՞ւր է Մխիթարի զորքը, հեռացե՞լ է, թե՞ մրափած է ձմեռային ծանր քնով։ Սկսեցին վազել՝ ձորից շտապ դուրս գալու նպատակով։ Բայց հազիվ մի երկու հարյուր քայլ էին հեռացել քաղաքից, երբ շեփորների դղրդոց լսեցին։ Աջ կողմի անտառներից հայերն արագ իջան ու հարվածեցին թուրքերի ամբոխին։ Խփեցին ձախից ևս։ Թուրքերը պատասխան չտվին։ Ժամանակ չկար. վազում էին խելագար թափով, կոխկրտում էին ընկածներին. ընկնում էին ոչ միայն հայերի նիզակներից ու հրացանների գնդակներից, այլև թուլությունից։ Ավելի հյուծվածները գլորվում էին ձյան մեջ, ուժ ունեցողները կոխկրտում էին նրանց, վազում դեպի ձորաբերանը, յուրաքանչյուրը կամենում էր իր գլուխն ազատել։

Ձորի խորքում փախստականների ճանապարհը կտրեցին։

Թուրքերը վայնասուն բարձրացրին, Հասկացան, որ հայերը հասցրին օղակել իրենց։ Հայերը սրամերկ ընկան խոնված, մարտակարգ չունեցող թուրքերի վրա... Դիմադրությունն անտեղի էր։ Ղըրխ Ջեշմիշ փաշան թուրը նետեց ձյան մեջ ու գոչեց աղերսող ձայնով.

— Եկել ենք հանձնվելու Մուխիթար փաշայի բարեգթությանը, հայե՛ր, խնայեցե՛ք սովալլուկներիս...

Նույնն աղաղակեցին հուսահատ ու դիմադրության անզոր զինվորները.

— Չխնայե՛ք, կոտորեցեք բոլորին,— հայերի միջից լսվեց Գոհարի ձայնը։

Սակայն վրա հասավ Բայանդուր իշխանն ու զսպեց գազազած զինվորներին, որ արդեն սկսել էին կոտորածը։

— Զենքերդ ցա՛ծ դրեք,— հրամայեց նա թուրքերին ու ձին քշեց փաշաների վրա։ Թուրքերը զենքերը նետեցին։ Ղըրխ Ջեշմիշ փաշան բռնեց Բայանդուրի ձիու սանձը։

— Խնայիր աստծո արարածներին, տե՛ր զորավար, եկել ենք ձեր գթությանը հանձնվելու։

Բայանդուր իշխանը հրամայեց փաշաներին ու մոլլային կապոտել և տանել գահերեց զորավարին։ Ապա գնաց այնտեղ, ուր Երկրի ապավեն գնդի մարդիկ սկսել էին զարհուրելի ջարդը։ Քիչ ջանքեր չսպառեց մինչև զսպեց գազազած զորքին ու դադարեցրեց կոտորածը։

— Գտեք մելիք Մուսուն ու Միհրան հարյուրապետին,— հրամայեց նա յուրայիններին։

Թշնամու թիկունքը հեծած Ծատուրն իր աշխարհազորային գնդով կոտորում էր հուսահատ դիմադրություն ցույց տվող թուրքերին։ Իրար ետևից երեք ձիավոր հասան նրան ու բերին Բայանդուր իշխանի հրամանը։ «Դադարեցնել կոտորածը և գերիներին հավաքել քարայրների մեջ, մինչև Մխիթարի հրամանը»։ Բայց Ծատուրը բանի տեղ չդրեց իշխանի հրամանները։ Նա գրգռում էր իր մարդկանց։ Շինականները կոտորում էին անխնա։ Ծատուրի առջև ընկած մի թուրք թավալվում էր ձյան մեջ ու բառաչում.

— Մի՛ սպանիր, աստծո՛ մարդ։ Ալլահն է վկա, որ ես ոչ մի հայի արյուն չեմ թափել։ Ես ծովափին խրճիթ ունեմ։ Ես պառավ մայր ու չորս երեխա ունեմ։ Բարեգո՛ւթ եղեք։ Ձավակներս կկոտորվեն քաղցից։ Խնայեցե՛ք...

Թուրքի աղերսանքը թուլացրեց Ծատուրի ձեռքերը։ Ասես լսեց սովից մեռնող մանուկների ճիչերը ու թուրքի պառավ մոր ձայնը. «Խնայեցե՛ք որդուս»։ Նրա կոկորդը լցվեց։

— Կացե՛ք,— որոտաց խեղդվելով։— Դադա՛ր... Ա՛խ, աստված, ինչո՞ւ ես աշխարհը տանջարան շինել, մարդու սիրտը ցավերի բուն դարձրել։— Նա թուրը ճոճեց յուրայինների վրա։— Դադա՛ր. կկոտորեմ, շա՛ն որդիներ։ Գերի վերցրեք, տարեք քարայրները։ Կրակ արեք, հաց տվեք սրանց։ Ա՛խ, աստվա՛ծ։— Նա հոգնած ու թուլացած նստեց ձյունե փափախը վրան մի քարի ու հառաչեց։

Հայոց բանակի ճամբարում արտակարգ իրարանցում էր։ Զինվորները գոռում էին թուրք գերիների վրա, ատամներ կրճտացնում, բայց և այնպես հաց ու պանիր էին տալիս ու նայում, թե Մուհամմեդի զավակներն ինչպես են լափում քրիստոնյայի «անսուրբ» հացը։

Ձիերով բլրից իջնում էին զորապետները։ Մխիթարը խոժոռ էր։ Շրթունքներն ամուր սեղմած էին, աչքերը որոնող։ Ձիու սանձը այնպես

էր քաշել, որ սրա գլուխը կպչում էր իր կրծքին։ Նրա ետևից գալիս էին մելիք Բարխուդարը, մելիք Եգանը, Գոհարն ու Ահարոնը։ Գոհարն աչքերը փակում էր հյուծված, կմախքացած թուրքերի անմարդկային տեսքից խղճահար։

Բայանդուր իշխանն առաջը գցած բերեց թուրք փաշաներին ու մելիք Մուսուն։

Փաշաներն իրենց պահում էին արժանավայել, թեև հյուծված էին, բայց քայլում էին կարելույն չափ հպարտ։ Մելիք Մուսին կորցրել էր արիության վերջին փշուրը։ Ոտքի վրա չէր կարողանում մնալ։ Նրան բերում էին երկու հայ զինվոր։ Գահերեց զորավարը ձին պահեց։ Ղրրխ Չեշմիշ փաշան շոքեց նրա առջև։

— Հանձնվում ենք քո գթությանը, ով բարեգութ Մուխիթար փաշա։ Մեզ ուղարկի մեր աշխարհը, և մենք այլևս չենք գա քո լեռների վրա։ Երդվում ենք Մուհամմեդի մոր ծիրանի գոտիով, չենք գա։

Մխիթարը դարձավ Բայանդուրին։

— Գերիների մեջ ես չեմ տեսնում Միհրան հարյուրապետին։

— Նա փախել է, տե՛ր գահերեց զորավար,— պատասխանեց Բայանդուրը։

Մխիթարը շրթունքները ծամծմեց ու ձիու գլուխը շուռ տալով՝ գնաց դեպի Հալիձորի բաց դռները... Ձին անցնում էր դիակների վրայով։

Մտան ավերված Հալիձորը։ Միայն Ահարոնը նկատեց, թե ինչպես հայրը ցնցվեց, ու նրա աչքերից երկու կաթիլ արցունք ընկավ։

Քաղաքը գերեզմանատան պես լուռ էր ու խորհրդավոր։ Ոչ մի կենդանի արարած չկար այնտեղ։ Կիսավեր տներին ձյուն էր նստել։ Փողոցները լիքն էին ուռած դիակներով, կրծած ոսկորներով, աղտեղությամբ։ Պարիսպների վրա սառել էին թնդանոթները։

Մխիթարը կանգ առավ հրապարակում։ Կապույտջիղի կողմից պոկված մեղմ քամին զգույշ խշշացրեց մերկ անտառը։ Ձյունապոշու ճերմակ քողը թրթռաց ավերակների վրա։ Մխիթարը հրամայեց բերել մելիք Մուսուն։ Սրան քարշ տվին կառափի գերանների մոտ։ Մելիքն ընկավ ձյան մեջ, ապա վեր կացավ, մի ոտքով շոքեց ու զարմանալի հստակ ձայնով ասաց.

— Մեծ եղիր, Մխիթա՛ր, այս անգամ էլ խնայիր ինձ։ Ես հասկացա, որ քեզ հաղթել չի լինի, որ դու ճշմարիտ ես։։ Այսուհետև հավատարիմ կլինեմ քեզ ու հայոց ուխտին։ Խնայի՛ր...

Մի դաժան ժպիտ սահեց Մխիթարի գունատ դեմքի վրայով։ Մելիք Մուսին դողաց, ծունկը ծալվեց ու դանդաղ խրվեց ձյան մեջ։ Նա ուզում էր համբուրել Մխիթարի ձիու ոտքը, երբ գլխին զարհուրելի այրուցք

զգաց։ Նա նույնիսկ չմտացավ, թե ինչպես շիկացած, կապ-կարմիր բահ դրին իր գլխին։ Բահի տակից թեթև ծուխ բարձրացավ։

Դավաճանի դիակը նետեցին աղբակույտի վրա։

Քամին սաստկացավ։ Սկսվեց լեռնային մրրիկը։

***

Գերի փաշաները հանգիստ չէին տալիս գահերեց զորավարին։ Բայանդուր իշխանի միջոցով նրանք անվերջ խնդրում էին իրենց ազատել գերությունից։ Մեծագումար գերեգին էին խոստանում։ «Ասացեք Մուխիթար փաշային, տե՛ր իշխան, որ մենք Աբդուլլահին կհամոզենք մոռանալ Սյունիքի ճանապարհը։ Մենք Մուխիթարի կնոջն ու որդուն կազատենք գերությունից, մեծամեծ պատիվներով կուղարկենք Հալիձոր։ Միայն թող մեզ արձակի»։

Բայանդուրի միջոցով ուղարկված այս խոստումները Մխիթարը լսում էր լուռ, ոչ մի պատասխան չէր տալիս, բայց չէր էլ արգելում, որ փաշաների խնդրանքը հասցնեն իրեն։ Նա սպասում էր գուսան Հեթումի վերադարձին։ Թեև համոզված էր, որ այլևս երբեք չի տեսնելու սիրելիներին, բայց և այնպես սրտի հեռավոր խորքերից մեկում հույսի մի՛ փոքր կայծ էր մնացել։ Գերի փաշաներին կփոխանակի կնոջ ու որդու հետ, միայն թե նրանք ողջ լինեն դեռևս։

Ավերված Հալիձորն սկսեց վերակենդանանալ։ Դիակներից ու աղտեղությունից մաքրեցին։ Հայոց ժողովի ապարանքը, եկեղեցիների զանգերը կախեցին, ու շատ տներից նորից ծուխ բարձրացավ։ Շուտով հայտնվեցին հալիձորցիների մանր խմբեր։ Դրանք այն քաղաքացիներն էին, որոնք մի կերպ կարողացել էին խույս տալ կոտորածից ու թաքնվել լեռների ծործորներում։ Նրանք գալիս էին՝ փոքր երեխաներ ու խղճուկ անկողիններ շալակներին։ Փողոցներում մանուկների ձայն լսվեց։ Մի ներկարար ետևից ձգելով բերում էր ծանրած կովը, որի զիլ բառաչը տարօրինակ խորթ հնչեց ավերակներում։

Կոտորածից փրկվածները մաքրեցին իրենց թալանված տները, անտառից փայտ բերին, կրակ վառեցին բուխարիներում։ Ապա գաղտնի հորերից հանեցին թաքցրած իրեր, ցորենի սերմացու, ալյուրի պարկեր։

Մի առավոտ Մխիթարը նոր թխած լավաշի բույր զգաց։ Սիրտը հուզմունքից տակնուվրա եղավ, և մի ծանր հառաչանք պոկվեց կրծքից։

Մխիթարը զինվորներ ուղարկեց Պղնձաքար՝ այնտեղ ապաստան գտած հալիձորցիներին բերելու։

— Ինչքան էլ ավերում, սպանում են, էլի ապրում է Հայոց աշխարհը,— Հալիձորի կենդանանալը տեսնելով՝ ուրախ ասում էին զինվորները։

Մի առավոտ, երբ Մխիթարը պատրաստվում էր ընդունելու մելիքներին ու զորապետներին, նրա սենյակը մտավ Ահարոնը։ Առաջին անգամ հայրը նկատեց, որ որդին այլևս առաջվա այն չարաճճի պատանին չէ, այլ իր դիմացը կանգնած է մի կատարյալ տղամարդ՝ իր պես բարձրահասակ, թուխ դեմքով և միաժամանակ մոր խելացի աչքերով ու դեմքի նուրբ, հանդիսավոր գծերով։

Հորը գլուխ տալով՝ որդին ասաց.

— Գուսան Հեթումը վերադարձել է Պարսկաստանից։

Մխիթարը վազեց դեպի որդին, բայց և իսկույն մեխվեց տեղը։ Որդին մռայլ էր. նրա խոնարհած կոպերին արցունքներ կային։ Ամեն ինչ պարզ էր։ Գուսանը վերադարձել էր ձեռնունայն։ Մխիթարի սրտում հանգավ հույսի վերջին կայծը, և նա զգաց, որ իր հետ մի ծանր բան է կատարվում։ Սերացավ միանգամից, դեռ քառասուն տարեկան չդարձած։ Նա ընկավ որդու գիրկն ու հեկեկաց՝ սփոփանքի կարոտ, անմխիթար...

— Ամեն ինչ կորցրինք, զավա՜կս,— հեկեկաց,— կորցրինք քո մորը, եղբորդ։ Քո, քո Ծամամին։ Ա՜խ, տե՜ր աստված...

Որդին համբուրեց հոր ձեռքը։

— Բայց երկիրը պահեցինք,— որդու գրկից պոկ գալով՝ դառնությամբ, ցասումով ու անզուսպ բողոքով գոչեց Մխիթարը։— Պահեցինք՝ հարազատների արյան գնով։ Մխիթարվենք ողջ մնացած երկրով, զավա՜կս։ Արիանանք։ Կանչիր գուսանին։

Հեթումի հետ ներս մտան մելիքներն ու զորապետները։ Նրանց հետ էր նաև Գոհարը՝ վեհ ու անընմբռնելի։ Մտան լուռ ու խոնարհ։ Գլուխ տվին սովորականից ավելի ջերմությամբ։ Գահերեցը շեշտակի նայեց նրանց ու հասկացավ, որ բոլորը գիտեն եղածը։ Էլ ի՞նչ։ Եղածը՝ եղել։ պրծել է։ Պիտի լիներ ուրեմն։ Աստծո կամքն էր։ Որտե՞ղ թաքցնես գլուխդ արարչի տնօրինությունից։

— Պատմիր, Հեթում,— խնդրեց նա։

— Նահատակվել են,— գլուխ տվեց գուսանը,— ստիպել են, որ ուրանան հավատները, չեն ուրացել։

— Երկո՞ւսն էլ։— Մխիթարի աչքերը մթագնեցին։ Միայն տեսնում էր կնոջ սրբապատկեր հիշեցնող դեմքը։

— Երկուսն էլ։ Աստծո կամեցածն էր։ Թաղված են միասին, Թավրիզի հայոց եկեղեցու բակում։ Գնացի քո հրամանով...

— Մի շարունակի, չեմ ուզում,— խեղդվեց, ձեռքը թափ տվեց Մխիթարը։

Սենյակում ծանր լռություն տիրեց։ Մխիթարը գնաց, փլվեց բազմոցին։ Նորից ճիգ գործ դրեց արի լինելու։ Բայց մտքից չէր հեռանում կնոջ դեմքը, որդին, որ ամեն անգամ թռչում էր իր ուսերին, երբ ինքը տուն էր գալիս, խաղում իր զենքերի հետ։ Հիշեց հարազատներին՝ կորած հորը, մորը, աներձագին, որին ինքը գլխատել տվեց։ Հիշեց Դավիթ-Բեկին, իմաստուն Մովսեսին, անձնվեր ու մաքուր Եսայուն, Թովմային, Զարմանդին։ Բոլորին, բոլորին հիշեց։ Նրա մտքի առջևից սլացան, անցան սիրելիների, անձկալիների թանկագին դեմքերը, որոնք կարծես այժմ էլ վշտակից էին իրեն և մխիթարում էին բոլոր այն կորուստների համար, որ կրեց ինքն ու բովանդակ Հայաստան աշխարհը։

Հիշեց խաբված, մոլորված Տեր-Ավետիսին։ «Չհավատա՞ք թուրքին»,— ասաց ու հեռացավ։ Որտե՞ղ է, ո՞ր քարի տակ։ Որքա՞ն կուզեր մեկ անգամ էլ տեսնել նրան։

— Չհավատա՞ք թուրքին,— ակամայից բացականչեց նա Տեր-Ավետիսի վերջին խոսքերն ու սթափվեց։ Զառանցո՞ւմ է, ի՞նչ է։ Նա գլուխը բարձրացրեց ու վաղեմի վստահությամբ նայեց յուրայիններին։

— Գլուխներդ բարձր պահեք, եղբայրնե՛ր։— Վեր կացավ, ուսերը շտկեց։— Հալիձորը նորից մերն է։ Թուրքը վերստին պարտվեց։ Դիմադրեցինք՝ ապրեցինք։ Մեր ուժն ու ապրելը դրա մեջ է՝ դիմադրել, թեկուզ հազար տարի։ Հազար տարի դիմադրելով ենք ապրել։ Դա է ճանապարհը հայոց։

Լռեց մի փոքր, պատուհանից նայեց դուրս, ուրախացավ ավերակներից բարձրացող ծխերը տեսնելով։ Խոսեց նորից.

— Երկու օր ձեզ ժամանակ։ Երկու օր հետո կմեկնենք Մեղրի, այնտեղից Որդուվար, Ագուլիս, ապա Նախիջևան։ Աբդուլլահը Թավրիզում չէ։ Թուրքերի կեռ լուսինը ծռվում է։ Նրանք Ագուլիսում մի փոքր կայազոր ունեն միայն։ Նախիջևանում ևս։ Զմեռ է, օգնության հույս չունեն։ Կխփենք, կառնենք։ Ի՞նչ կասեք։

— Հրամա՜նդ,— միաբերան պատասխանեցին զորապետները։

— Փաշաներին կախեցեք,— շարունակեց սպարապետը։— Ձենք հավատում ձեր կեղծավոր խոսքերին։ Այդպես էլ ասեք նրանց։ Մնացած գերիներին ևս... փարախներում, քարանձավներում։ Մինչև այս երեկո ոչ մեկը կենդանի չպիտի մնա։ Գնացեք։ Ոռճիկ բաժանեցեք զինվորներին։

Մի երեկո Մխիթարն անսպասելի մտավ Գոհարի կացարանը։

Կին զորապետը մենակ էր, վրան զենքեր չկային և շողում էր կանացի իր ողջ փարթամությամբ ու հմայքներով։

Դռան ձայնի վրա շուռ գալով և տեսնելով Մխիթարին՝ Գոհարն անզսպելի մղում զգաց դեպի այն մարդը, որի համար էր միայն բաբախում իր սիրտը։ Նրա աչքերը լայնացան, շրթունքները դողացին։ Նա մի քայլ արեց դեպի Մխիթարը՝ անցած օրերի պես նրա գիրկը նետվելու համար, բայց հաջորդ վայրկյանին տիրապետեց իրեն ու այրի կնոջ սառնությամբ պատասխանելով հյուրի ողջույնին՝ մնաց անշարժ։

— Ներող եղիր, որ իմ անժամանակ այցով խանգարեցի քո անդորրը, Գոհա՛ր։ Բայց ես միայն մի վայրկյանով։— Նա զգաց, որ իր ձայնն անբնական հնչեց. կեղծ իրեն, բայց չէր ուզում մնալ տիկնոջ մոտ։ Զգուշանալով, որ Գոհարը կհրավիրի իրեն նստել՝ շտապեց ավարտել ասելիքը։ Ինչո՞ւ մնա, ինչո՞ւ բորբոքի իր մեծ վշտի տակ անթեղած այն կրակը, որ կարող էր նորից բռնկվել Գոհարի աչքերի մի մտերիմ փայլից անգամ։ Ուստի փութաց շուտ հեռանալ։

— Ես եկել եմ խնդրելու, Գոհա՛ր, որ դու քո գունդը հանձնես որդուս և մնաս Հալիձորում։

— Որևէ բանով մեղապա՞րտ եմ քո առջև,— հոնքերը կիտելով՝ նեզացած հարցրեց Գոհարը։

— Ո՛չ, երբեք,— հայացքը փախցրեց Մխիթարը։— Հալիձորը կարոտ է խնամող ձեռքի։ Դու կմնաս՝ օգնելու տնավեր քաղաքացիներին։ Իսկ մենք ծանր արշավանքի ենք գնում։ Ջմեռ է, ձյուն։ Ես չեմ կամենում, որ դու մասնակից լինես այդ դժվարին արշավանքին։

— Ուրեմն դու բանտարկո՞ւմ ես ինձ Հալիձորում։

— Հիմար բաներ մի՛ ասա,— կտրեց Մխիթարը։— Բանակում քո ներկայությունն ավելորդ հոգս է ինձ համար։ Առանց այն էլ... Բավական է, որքան կորցրի սիրելիներիս, հարազատներիս։ Այլևս չեմ ուզում, հերիք է,— նրա ձայնը դողաց։— Թող որ խղճի մտոք մեր բանը տեսնենք։ Այդպես։ Մի պատահական գնդակ կարող է կտրել այն միակ երակը, որ ինձ կապում է կյանքի հետ։ Վճռված է։ Մնա այստեղ ու սպասիր իմ վերադարձին...

Մխիթարն արագ դուրս եկավ՝ մոռանալով անգամ «բարի գիշեր» մաղթել։ Գոհարը մի քանի անվստահ քայլ արեց նրա ետևից ու փշրված սրտով կանգ առավ։

Առավոտյան Հալիձորից դուրս եկավ հայոց զորքը։ Նրան ճանապարհելու էին եկել սակավաթիվ քաղաքացիներ ու Գոհարը։

ԼՈՒՍԱԲԱՑԻՆ ՄՈՐԹՎԱԾ ԱՐԵՎԸ

—ՈՒ ղիղ եմ ետևից արի, տե՛ր գահերեց,— գոռում էր Փոքր Գորգին։— Չշեղվես։ Անդունդի եզրին ենք։

Մխիթարը հազիվ էր նշմարում ընդամենը երկու քայլ իրենից առաջ ձյունամրրիկի մեջ կորած համհարզի ձին։ Սաստկաշունչ բուք էր։ Ձյունափոշին լցվում էր նրա ռունգները, ականջները, բաշլուղի արանքից մրտնում օձիքը։ Արահետը կորել էր։ Գնում էին իծաշարուկ. լեռան կատարից մինչև ձորի խորքը ձգված։

Կարելի էր Ողջի գետի հոսանքով իջնել մինչև Արաքս, ապա թեքվել աջ ու գնալ դեպի նպատակը՝ Ագուլիս։ Բայց Մխիթարն ընտրեց ամենակարճ ճանապարհը՝ անսպասելի կերպով Ագուլիս հասնելու համար։

Երբեմն, մի կարճ պահ միայն, քամին ընկնում էր. շրջապատը պարզվում, և մարդկանց թվում էր, թե իրենք գնում են երկնքի խորքերով։ Բայց խափս տվող քամին նորից էր ոռնում։ Ձիերը լարվում էին. շոքում, դունչները հենում սառած գետնին, ատամներն արյունոտելով հաղթահարում զառիվերը։ Նրանք քրտնել էին, գազազել՝ ծանր վերելքից։ Հենց որ մի պահ կանգ էին առնում՝ նրանց մարմինը պատվում էր եղյամով։

— Դադարը վտանգավոր է, տե՛ր գահերեց,— անհանգստանում էր Գորգին։— Գնանք, հողմը սաստկանում է։

Եվ գնում էին՝ շեփորներով ազդանշան տալով միմյանց. մի կերպ ձիերն անց էին կացնում անհնարին կապերով։

Հալիձորից դուրս գալու երկրորդ օրվա երեկոյան միայն կարողացան անցնել լեռնաշղթան ու իջնել Մեղրագետի ձորը։ Այդտեղ բուքը մեղմ էր, ճանապարհը փոքր-ինչ դյուրին։ Մտան ձորի ծալքերը. կրակ վառեցին, այծենակաճներով ծածկեցին քրտնած ձիերին։

Լուսադեմին իջան Ագուլիսի վրա։ Քաղաքում եղած թուրքական փոքրիկ կայազորը չդիմադրեց։ Քաղաքի դարպասները բաց արին Մխիթարի առջև։ Թուրքերի Ենգիշար աղասին աղուհացով դիմավորեց Մխիթարին ու խնդրեց իրեն թույլ տալ հեռանալ քաղաքից։ Ագուլիսի հայերը երդվեցին, որ Ենգիշար աղասին խղճմտանքով մարդ է, չի նեղել իրենց։ Մխիթարը թուրքերին զինաթափ արեց ու հրամայեց հեռանալ իսկույն։

Առանց դիմադրության հանձնվեցին նաև Երնջակի ու Որդուվարի կայազորների փոքր ջոկատները։ Մխիթարը նրանց ևս մեծահոգությամբ թույլ տվեց անցնել Արաքսը։

Նախիջևանում եղած թուրքական զորքի մեջ տագնապ ընկավ։ Օր առ

օր սպասում էին Մխիթարի երևալուն։ Մարդ ուղարկեցին Թավրիզ՝ սեբաստիայից օգնություն խնդրելու, բայց Աբդուլլահն արդեն մեկնել էր Խորասանի կողմերը։ Թավրիզում եղած թուրքերը ևս տագնապի մեջ էին։ Հույս չունեին, որ երկար կմնան այդտեղ։ Մխիթարի մասին հրաշքներ էին պատմում։ Հավատացնում էին, թե նա հարյուր հազար զորք ունի և շուտով կարշավի նաև Թավրիզի վրա՝ իր կնոջ ու զավակի վրեժն առնելու։

Նոր էր Թավրիզ ուղարկած սուրհանդակը հուսահատ վերադարձել Նախիջևան, երբ քաղաքի պատերի տակ երևաց հայոց զորքը։ Թուրքերի շփոթությունը սաստկացավ։ Քաղաքում լուր տարածվեց, որ հայերն առել են Երևանը, և նրանց օգնության է հասել ռուսական մի մեծ բանակ։

Փետրվարի քսաներկուսին, Նախիջևան հասնելու օրը, Մխիթարը թուրքերից պահանջեց քաղաքը հանձնել՝ խոստանալով թույլ տալ, որ կայազորը հեռանա իր կամեցած ուղղությամբ։ Թուրքերը մերժեցին նրա առաջարկը, վճռեցին դիմադրել։ Սակայն թնդանոթներից չկարողացան կրակել։ Քաղաքի բնակիչները ջուր էին լցրել վառոդի պաշարների վրա։ Նրանք գիշերով ակն գրին հոգե պարսպի տակ ու պայթեցրին։

Առաջինը բացված անցքի միջով քաղաք մտավ Մխիթարը։ Թուրքերը ստիպված եղան անձնատուր լինել՝ իրենց հանձնելով հաղթողի գթասրտությանը։ Մխիթարը դաժան վարվեց նրանց հետ։ Բոլորին զինաթափ անելով, հանձնեց նախիջևանցիներին, որոնք կոտորեցին իրենց խոշտանգողներին։

Նախիջևանի քերդի բարձր աշտարակի վրա շողաց Հայոց ժողովի դրոշը։ Նախիջևանցիները յոթ օր շարունակ ուրախության տոն կատարեցին։ Մխիթարի զինվորներին տեղավորեցին իրենց տներում, կերակրեցին, կարկատեցին նրանց զգեստները, կոշիկները։ Շրջակա գյուղերից հայերը քարավաններով ուտելիք էին բերում հայոց զորքի համար։

Գոհ իր ձմեռային արշավանքից՝ Մխիթարը վճռեց մի փոքր դադարից հետո գնալ Երևանի վրա։ Քաղաքի մեծ հրապարակում հանդիսավոր ժողով գումարեց։ Նվերներ բաժանեց զորքին, գյուղեր ընծայեց իր հարյուրապետներին, տասնապետներին, մարտերում աչքի ընկած զինվորներին անգամ։ Ագուլիս քաղաքի պարոն-տեր նշանակեց Խնձորեսկի մելիք Բարխուդարին։

— Քո ծառայություններն անգնահատելի են, մելի՛ք Բարխուդար,— ասաց նա զորքի և ժողովրդի առջև։— Դու հավատարիմ եղար Դավիթ-Բեկին ու ինձ։ Թող սերնդից-սերունդ քոնը լինի Ագուլիսը, և դու նրա վրայից իսպառ ջնջիր դավաճանի խայտառակ անունը։

Անսպասելի պատվից գլուխը կորցրած Բարխուդարը հեկեկաց։ Նրա

սրտից իսպառ վերացավ այն ատելությունը, որ ուներ դեպի Մխիթարը։ Այդ խորամանկ ու դաժան մելիքը լավ էր հասկանում, որ օտար տիրապետողները կզրկեն իրեն իր նախնավանդ մելիքությունից, և միայն հայրենի իշխանությունը կպաշտպանի իրեն ու երկրի անկախությունը։ Այժմ նա անչափ գոհ էր իրենից, որ հավատարիմ մնաց հայոց մելիքների միաբանությանը, չգնաց Մխիթարի հետ։

Ճահուկ և Շահապունիք գավառները Մխիթարը նվիրեց Սիսականի մելիք Շաֆռազին, որի տիրապետությանը սահմանակից էին հայոց հինավուրց այդ գավառները։ Նախիջևան քաղաքի պարոն-տեր նշանակեց մեղրեցի Կոստանդին զորապետին։ Բայանդուր իշխանին սպարապետ կարգեց հայոց բոլոր զորքերի վրա՝ նրան սեփականություն տալով Հալիձոր քաղաքն ու շրջակա գյուղերը։

Մելիքները գոհ էին գահերեց զորավարից։ Ոմանք նույնիսկ զարմանում էին նրա շռայլության վրա։ Բայց Մխիթարը գիտեր, թե ինչ էր անում։ Հարկավոր էր ամրապնդել մելիքների դիրքերը, հզորացնել նրանց։ Չէ՞ որ դեռևս երկար ու դժվարին ճանապարհներ ունեին անցնելու։ Պետք է ազատեն Երևանը, թուրքերին դուրս մղեն Արցախից, իսպառ վերացնեն օսմանյան բռնակալության սպառնալիքը։

Շատ բան էր մնում անելու, դրա համար միաբանություն ու զորք էր հարկավոր։ Իսկ զորքն ու միաբանությունը մելիքների ձեռքին էր։ Մխիթարը հասկանում էր, որ ժամանակը չէր իրագործելու երկրի մանրամունր իշխանությունները վերացնելու իր վաղեմի փափագը։ Այսօր իրադրությունը ուրիշ պահանջ էր թելադրում։ Պետք է սիրաշահել ամենափոքր տանուտերին, անգամ որ զորավիգ է կանգնում իրեն, զորքին երկրին։

Երեք շաբաթ Նախիջևանում մնալով՝ Մխիթարը պատրաստություն տեսավ Երևանի վրա արշավելու համար։ Զորքը հանգստացել էր, նոր ջոկատներ էին միացել նրան։ Սակայն շուտով լուր ընկավ, որ Աբդուլլահ փաշան վերադարձել է Թավրիզ։ Այլևս անհնարին էր գնալ Երևանի վրա։ Աբդուլլահը կարող էր օգտագործել իր բացակայությունն ու առպատակել Սյունիքը։ Ստիպված եղավ հրաժարվել Երևանն ազատագրելու մտքից, այդ բանը թողնելով ավելի հարմար ժամանակի։

Քաղաքի բնակչությունը զինեց, դրեց Կոստանդին զորապետի հրամանի տակ ու պատվիրեց ամրացնել քաղաքի պարիսպը, նոր աշտարակներ կառուցել թնդանոթների համար։

Ժամանակն էր մեկնելու։ Երբ հրաժեշտ էր տալիս Կոստանդինին, Մխիթարն ասաց.

— Ականջդ սուր պահիր, ու աչքդ բաց։ Հնարավոր է, որ թուրքերը գան քեզ վրա։ Կյանքդ տուր, բայց քաղաքը՝ երբեք։ Դու երեք հազար մարդ ունես քո հրամանին. քաղաքն ամուր է, և թուրքն էլ առաջվա սարսափելին չէ։ Զգույշ եղիր։— Նա համբուրեց Կոստանդինին ու ձի հեծավ։

Հայոց զորքը Նախիջևանից դուրս եկավ ոգևորված։ Զմեռային արշավանքը բարեհաջող էր։ Սյունիքում այլևս թշնամու ոչ մի զինվոր չկար։ Հինգ հարյուր ուղտի վրա տանում էին թուրքերից խլած ավարը՝ զենք, հանդերձանք, մետաքս, դաբաղած կաշի, մեծ քանակությամբ ոսկի ու արծաթ։ Վերադարձի ճանապարհին Մխիթարը մեկ օր մնաց Ագուլիսում։ Քաղաքի հասարակ ժողովուրդն ուրախացավ, որ իրենց պարոն տերն այսուհետև լինելու է մելիք Բարխուդարը։ Սա իր հարյուրապետ եղբորորդուն իրեն տեղապահ նշանակեց ու թողեց Ագուլիսում, իսկ ինքը Մխիթարի հետ մեկնեց։

Մխիթարը վճռեց արշավել Արցախ՝ թուրքերին այնտեղից հեռացնելու համար։ Նա իր զորքը բաժանեց երեք մասի։ Յոթ հազարանոց մի զորագունդ հանձնեց Բայանդուր իշխանին ու հրամայեց Քաջարանի և Ծղուկ գավառի վրայով մեկնել Քաշաթաղ, բանակել Տրտու գետի վերին հոսանքի ձորերում։ Մի ուրիշ զորագունդ հանձնելով մելիք Եգանին՝ հանձնարարեց մեկնել Որոտն բերդը, վերցնել այնտեղ եղած կայազորն ու գնալ, բանակել Հաբանդ գավառի խոժոռաբերդում։ Իր մոտ պահեց միայն Երկրի ապավին գունդը, Ահարոնի գունդն ու Ծատուրի աշխարհազորային ոչ մեծ ջոկատը։

— Ես շուտով կգամ խոժոռաբերդ ու այնտեղից երկու ուղղությամբ կմտնենք Արցախ,— ասաց նա զորապետներին։— Մարդիկ ուղարկեցեք Արցախի գյուղերը, թող պատրաստվեն ապստամբելու։ Այս ամառ պետք է թուրքերին դուրս մղենք Արցախից։ Աստված ձեզ հետ. բարի՞ գնացեք...

Բայանդուրին ու մելիք Եգանին ճանապարհելուց հետո, նա Արաքսի ափով մեկնեց դեպի Հաբանդ գավառը. մտադիր էր բնակել Խնձորեսկ ավանում։ Ծանր-ծանր օրորվող ուղտերը տրորում էին ուռած շիկահողը։ Ջանգակները ծլնդում էին քաղցրաձայն։ Կարմիր-կավագույն ջրերով Արաքսը որոտում էր ճանապարհի երկարությամբ ի վար։

Մխիթարն ինչ-որ հաճելի բան էր զգում։ Հաղթանակի բերկրա՞նքն էր դա, թե՞ Արաքսի կիրճում պճնված գարունն էր ջերմությամբ լցրել նրա վշտաբեկ հոգին։ Հալիձորի անկումից հետո շատերին թվում էր, թե նա ամեն ինչ կորցրեց անդարձ։

Բայց ահա նորից գարուն է լեռնաշխարհում, և այլևս ոչ մի թշնամի զինվոր չկա Սյունիքում։ Մխիթարն սպասում էր Աբդուլլահ փաշայի խաղաղության դեսպանին և համոզված էր, որ նա կգա։ Այդ մասին ակնարկներ էին արել Ստամբուլից եկած սուրհանդակները։ Սուլթանը դժգոհ է, որ խճճվել է Սյունիքի գործերում։ Իսկ Սյունիքն ազատ է նորից՝ Ճահուկ-Շահապունիքից մինչև Գեղամա ծովակի ափերը, Արաքսից մինչև Քաշաթաղքի մթին ծմակները։

Մխիթարը գնում էր դանդաղ։ Սիրտն ուռչում էր, երբ տեսնում էր սարահարթերը հերկող շինականներին, գետափին բամբակ ցանող մարդկանց, բարդիների վրա իրենց բները կարկատող արագիլներին։ Ինչպիսի՜ ծանր զոհողությամբ ձեռք բերվեց այս ամենը։ Եվ հաճելի է տեսնել, որ իզուր չի անցել այն արյունը, որ ութ տարի շարունակ թափվեց Դավիթ-Բեկը, ինքը, ժողովուրդը հայոց։

Գյուղերում կանգ էին առնում։ Դրամ էին բաժանում տնանկներին։ Մելիք Բարխուդարը մարդ ուղարկեց Խնձորեսկ՝ լծկան ու սերմացու բերելու՝ դաշտի թալանված գյուղացիների համար։ Նրա արտակարգ ջուայլությունը դուր էր գալիս Մխիթարին, ուրախանում էր, որ կարողացավ շահել երբեմնի այդ դաժան ու ապստամբ մելիքի սիրտը։ Իսկ մելիքը հրճվում էր Սյունիքի ամենահարուստ պատառի՝ Ագուլիսի տերը լինելով։ Երբեմն նա խոսք էր բաց անում իր դավաճան որդու՝ Միհրան հարյուրապետի մասին, երդվում էր, որ ինքը մորթազերծ կանի նրան, հենց որ ձեռքն ընկնի։

— Դու եղբայրներ ու եղբորորդիներ ունես, ուրախացիր նրանցով,— ասում էր Մխիթարը։

Գիշերը մնացին Հարանց մեծ դաշտում։ Մյուս օրը կեսօրին կհասնեն Խնձորեսկ։ Մխիթարը չմտավ իր վրանը։ Աստղոտ գարնանային գիշեր էր։ Զարմանալի շատ էին աստղերը Սյունյաց երկնակամարում։ Վառ էին, մեկը մյուսից լուսատու։ Կարոտեց Սաթենիկին։ Լաց եղավ անձայն։ Փոքր Գորգուն պատվիրեց գինի տալ։ Խմեց որդու հետ։ Անվերջ համբուրում էր Ահարոնին ու արտասվում։ Բայց ոչինչ չէր ասում, լռում էր համառորեն։

Երբ որդին քնել էր արդեն, Փոքր Գորգուն ուղարկեց Հալիձոր։

— Գոհարին ասա, թող գա իր հոր տունը՝ Խնձորեսկ։ Շաբաթ օրը ես կսպասեմ նրան։ Ասելիք ունեմ։— Զզջաց, որ Գոհարին հեռացրել է բանակից։ Ինչո՞ւ հեռու պահել ուրախության և մխիթարության այն միակ աղբյուրը, որ մնացել էր նրան բովանդակ աշխարհում...

* * *

Խնձորեսկցիները մեծով ու փոքրով եկան գահերեց զորավարին ընդառաջ։

Օրը տաք էր, գարնանային հմայքներով լեցուն։

Մխիթարին ու մելիքին դիմավորելու էին եկել նաև Բարխուդարի զառամած մայրը, նահատակված Պակի զորապետի կինը ու երեք աղջիկները, մելիքի եղբայրներն ու սրանց զավակները։ Քահանաները խունկ էին ծխում. գյուղացիները թխկենու կանաչ ոստեր թափեցին Մխիթարի ճանապարհին։ Ծերունիները գինի ու հաց մատուցեցին Մխիթարին։ Զորավարի սիրտը լցված էր մի մեծ, անգրկելի ուրախությամբ և մի նուրբ ու քաղցր թախիծով, որ կարծես հենց այդ մեծ ուրախությունից էր ծնվում։ Նա նոր թխած լավաշը թաթախեց գինու մեջ ու կերավ։

— Հյուր կընդունե՞ք ինձ, խնձորեսկցինե՛ր,— հարցրեց ուրախ։

— Մեր գլխի ու մեր աչքի վրա,— գոռացին ամեն կողմից։

Զուռնա նվագեցին։ Նժույգները կրակվեցին։ Ուղտերը անհանգստացան։ Սովոր չէին հայոց զուռնայի ականջ ծակող ձայնին։ Մի քանի հարյուր ձիավոր մական խաղալով առաջ ընկան։ Մելիք Բարխուդարը բռնեց գահերեց զորավարի ձիու սանձը և տարավ դեպի ժայռերի վրա թառած իր ամրոցը։ Մատաղի ոչխարներ մորթեցին։ Յուրաքանչյուր ոչխարի մի բուդն ու սիրտն ուղարկում էին ամրոց՝ Մխիթարի զինվորներին։

Երեկոյան թեթև գինով Մխիթարը դուրս եկավ ամրոցի քարե պատշգամբը։ Նրա հետ էին մելիք Բարխուդարը, Ահարոնը, որ հորից չէր հեռանում, աշխարհազորային գնդի հրամանատար Սատուրը և էլի մի քանի հարյուրապետներ։ Պատշգամբը կախված էր անդունդի վրա։ Ներքևում Խնձորեսկն էր, սակայն չէին երևում նրա տները։ Բոլորը ժայռերի մեջ էին՝ իրար վրա, իրար հեծած, խառնափնթոր ու հին՝ հազարամյա մրոտած երդիկներով։ Շների հաչոցն ու մարդկային ձայները ասես գալիս էին գետնի տակից։ Գյուղը կիրճի մեջ էր՝ իսկ ամրոցն այնքան բարձր, որ թվում էր՝ ձեռքդ մեկնես՝ կբռնես լուսնի եղջյուրը։

— Հրաշք է Խնձորեսկը,— բացականչեց Ահարոնը։

— Այո, զավա՛կս,— ասաց Բարխուդարը,— մեր գյուղն ամբողջովին ժայռի մեջ է։ Ամուր կոճղ է։ Իմ հայրը երեսուն տարի մելիքություն է արել այս գյուղում և երեսուն տարվա ընթացքում ոչ մի շահի ու խանի հարկատու չի եղել։ Ինքն իրեն թագավոր է հայտարարել ու դիմացել։

— Ազատ ապրելու սովոր մարդիկ ենք,— ասաց Մխիթարը։

— Աստված շատ չհամարի։

Մխիթարը երկար նայեց գյուղի ճրագներին, որ երբեմն վառվում էին, երբեմն մարում իսկույն։ Կախարդող ուժ ուներ Կիրճի մեջ կորած, երեք հազար ծուխ ունեցող Խնձորեսկը։ Կարծես առասպելական հսկաներ էին ապրում այդտեղ։

— Այստեղից էլ կգնանք Արցախի վրա,— շուռ գալով դեպի յուրայինները՝ ասաց Մխիթարը։— Այժմ Խնձորեսկը մեր ուժի հիմքն է։

Ետ դարձան, մտան սրահ։ Այնտեղ կանգնած էր Բանդուր-Զաքարիան։ Ահարոնը թռավ դեպի ծերունին։ Մխիթարը հոնքերը կիտեց։ «Ինչո՞ւ է եկել»։

— Պապի՜կ,— մանկական երբեմնի խանդավառությամբ գոչեց Ահարոնն ու փաթաթվեց Բանդուր-Զաքարիային։— Ինչպե՞ս է Զագեձորը, Զաքարիա՛ պապ։

— Բոլորը ձեր կարոտն են քաշում,— նեղացած պատասխանեց ծերունի ամրոցապահը, այնպես, որ Մխիթարը ևս լսի։— Գնացել եք ու ձեր տունը մոռացել։ Ա՜խ, ա՜խ...— Նա թևքով սրբեց կնճիռների ցանցով օղակված աչքերը և երերուն քայլերով մոտեցավ Մխիթարին։

— Սաթենի՜կս, Դավի՜թս...— հանկարծ անզուսպ հեկեկաց Բանդուր-Զաքարիան։— Գնացին սիրելիներս, աչքերիս լույսը խավարի...

Մխիթարը ցնցվեց։ Թեթև կեղևակալած վերքը բացվեց նորից ու կոկորդը լցվեց։ Թույլ տվեց, որ ծերունին համբուրի իրեն, լաց լինի իր գրկի մեջ։ Նրա մորուքից ծխահոտ էր գալիս, երևում էր, որ ամբողջ ձմեռ բուխարիկից չի պոկվել։ Ներացել էր, բոլորովին չորացել։ Մխիթարը ծերունուն նստեցրեց, գինի տվեց։ Զուզեց հարցնել Զագեձորի մասին։ Զագեձորն արդեն խորթ ու օտար էր իր համար։ Ո՞վ ունի այնտեղ, որ հարազատություն զգա։ Ինչո՞ւ գնա Զագեձոր։ Գնա՝ որ ամեն օր թափո՞ւր տեսնի կնոջ սենյակներն ու որդու օրորոցը։ Ո՛չ, այլևս նա տուն չունի, գլուխ դնելու տեղ չունի։ Նրա տունը բաց երկինքն է, բարձր՝ ձիու թամբը, օջախը՝ համայն աշխարհը Հայոց։

— Դու այլևս չես վերադառնա Զագեձոր, Զաքարիա՛,— ասաց հուզմունքը զսպելով։— Ես չեմ ուզում ապրել այնտեղ, որտեղից միայն մեռելի հոտ է գալիս։— Նա դարձավ Սատուր հարյուրապետին։— Է՛յ, Սատո՛ւր եղբայր։ Գինի լցրու։ Լսի՛ր։ Դու անտուն, դաշտի քամու պես անտո՛ւր եղբայր։ Գինի լցրու։ Լսի՛ր։ Դու անտուն, դաշտի քամու պես անտեր մարդ ես։ Քո տունն այժմ Զագեձորի ամրոցն է, նրա գյուղերը քոնն են։ Այդ բոլորը ես քեզ եմ նվիրում։ Արցախից կդառնանք, կգնաս քո վաստակը վայելելու։ Դու արժանի ես դրան։

Բոլորը զարմացան։ Ինչպե՞ս այդքան հեշտությամբ Մխիթարն իր ամրոցը և գյուղերը նվիրեց մի տնանկ հարյուրապետի։ Սատուրը շոքեշոք մոտեցավ նրան։

— Չե՛մ ուզում, տե՛ր գահերեց զորավար,— աղաղակեց նա։— Ես միայն սեփական մի գլուխ ունեմ, այն էլ դրել եմ քո ծառայության, մատաղ արել Հայոց աշխարհին։ Չի՛ հարկավոր. չե՛մ ուզում։

Բայց Մխիթարն իր ձեռքով հրովարտակ գրեց ու Զագեձորը և նրան հարակից գյուղերը նվիրեց Ծատուր հարյուրապետին։

Խրախճացան մինչև կեսգիշեր։ Բայց դա Մխիթարի համար վշտի խրախճանք էր միայն։ Երբեմն նա գլուխն առնում էր ափերի մեջ, հեկեկում։ Անվերջ համբուրում էր որդուն, քնքուշ խոսքեր ասում նրան, պահանջելով, որ նա լաց չլինի։ Գուսաններն ահուսարսափի մեջ էին։ Ինչ նվագում էին, երգում էին, դուր չէր գալիս վշտից խենթացած, հայհոյող, գավաթներ փշրող զորավարին։ Ողբալի, սիրտ կեղեքող երգ էր պահանջում նա։ Զարհուրելի վշտացած էր նաև մելիք Բարխուդարը։ Խմում էր, բայց գինին չէր եռում երակների մեջ։

— Ես պատառ-պատառ կանեմ շան ծիծ կերածին,— երբեմն բռունցքը սեղանին էր խփում նա։— Տոհմիս վրա սև անուն դրեց, ուրացա՛վ... Ա՛խ, Միհրա՛ն, թե ձեռքս ես ընկել, մեծ կտորդ ականջդ կանեմ, սպասի՛ր...

Ու լաց էր լինում։

Մխիթարը վեր կացավ, Բարխուդարի ուղեկցությամբ, օրորվելով գնաց իրեն հատկացված սենյակը։ Ընկավ փափուկ անկողնու վրա։ Փորձեց հանել կոշիկները, չկարողացավ։ Բանդուր-Զաքարիան կռացավ, որ օգնի, բայց գահերեց զորավարը ոտքը ետ խլեց։

— Ամաչի՛ր,— գոռաց չարությամբ։— Դու հորիցս մեծ ես, ես ինքս կհանեմ։ Դաշույնս տուր՝ ճիտքը պատռեմ։ Լսիր, Բանդո՛ւր-Զաքարիա, հա՛յր իմ, հա՛յր, լսիր։ Տարան, տարան, է՛,— բռունցքները խփեց կրծքին։— Դավիթս՝ անուշ, ազիզ։ Սաթենի՛կս... Ա՛խ, բոլորին կորցրի, բոլորի՛ն... Գոհա՛ր։ Ա՛խ, Գոհարս, ո՞ւմ համար եմ ապրում այլևս...

Կոշիկը չկարողացավ հանել, մեկնվեց անկողնու մետաքսին և խկույն քնեց։ Երեսը ձեռքերով փակած արտասվում էր մելիք Բարխուդարը։ Հասկանում էր. աղջկան՝ Գոհարին անբախտացնողը Մխիթարն էր, նա, որ սիրում էր Գոհարին, բայց զոռով տվեց ուրիշի՝ երկրի շահերի համար։ Նա հեռացավ դառնացած, լցված սրտով։ Զգում էր, որ առավել, քան որևէ մեկին, սիրում է այդ տարօրինակ մարդուն։

Գնաց նաև Ահարոնը։ Բանդուր-Զաքարիան նստեց իր տիրոջ ոտքերի տակ ու կծկվեց, ինչպես անում էր շատ տարիներ առաջ, երբ ծառայում էր պատանի Մխիթարին՝ հայոց նորաստեղծ պետության պայծառ աստղին։

Դրսում, անդունդները խցկած ու լեռները ծրարած խավարը թանձրանում էր, դառնում սև կուպր։

Մխիթարը ուշ արթնացավ։

Գլուխը չէր ցավում։ Աչքերի տակ նկատելի ուռուցքներ էին երևում, և բերանը դառն էր։ Զարմացավ, որ զգեստները հագին էր քնել։ Ձնեռեց իրեն երեկվա կերուխումի համար։ Խղճահարվեց Բանդուր-Զաքարիային արթուն տեսնելով։

— Չէիր կարո՞ղ ինքդ էլ քնել,— մեղմ հանդիմանեց նա։

— Եթե քո տանը լիներիր, կքնեի,— դժգոհ պատասխանեց ծերունին։— Հաղթությամբ ու ավարով ես եկել, աստված էլի՛ տա, բայց մի մտիր քո տունը, տնաշե՛ն, քո սգավոր մարդկանց մխիթարիր, մի քաղցր խոսք ասա։ Աչքները ճանապարհին է։ Չգիտեմ, թե ինչո՞վ է այս ժայռաբունը հրապուրել քեզ։

— Վերջացրո՛ւ,— ատամների արանքից նետեց Մխիթարն ու ընդոստ վեր կացավ։— Ոչ ոք իմ երկրում չպիտի հակառակվի իմ կամքին, հասկացի՛ր։ Վե՛ր։

Եկավ Ահարոնը՝ հորը բարի լույս մաղթելու և ձեռքը համբուրելու։

— Առաջ Բանդուր-Զաքարիայի ձեռքը համբուրիր,— ասաց Մխիթարը։— Նա ինձ համար հայր է, քեզ համար՝ պապ։ Հիշիր մշտապես։

Բանդուր-Զաքարիան նախ զարմացավ Մխիթարի այդ անսպասելի քնքշությունից, ապա այնպես հուզվեց, որ Ահարոնին օրհնելիս աչքերը լցվեցին։ Իսկույն հաշտվեց կատարվածի հետ։ «Դե, ի՞նչ անենք, այստեղ է մնում, թող մնա, իր աշխարհը չի՞»։

Մխիթարը դուրս եկավ բակի պատշգամբը։

Առավոտվա օդի մեջ զգացվում էր ծաղկած կեռասենիների ու փոշոտված փշատենիների բույրը։ Մխիթարը խոր շնչեց գարնանային օդը։ Նոր թխած լավաշի հոտ զգաց։ Հիշեց մոր թխած լավաշները, որ բերում էր ծոցում ու տաք-տաք կոխում իր բուրը։

Մելիք Բարխուդարի երեք աղջիկ թոռները (սպանված Պակի հարյուրապետի աղջիկներն էին) կանգնեցին մոտը։ Մեծը հազիվ տասնչորս տարեկան լիներ։ Թուխլիկ էր, խրտնած, վախեցած աչքերով։ Երեքն էլ միանման զգեստ ունեին, միանման ծամեր՝ յուղած ու խնամքով սանրած։ Մեծը ջրի ծորակ ուներ ձեռքին, միջնեկը՝ կանաչ օճառ, մյուսը, որ հազիվ ինը տարեկան լիներ՝ սրբիչ։ Սա ակնապիշ նայում էր հյուրին, իսկ մեծը հայացքը խոնարհել էր, թարթիչների ստվերը գցել այտի խալին։

— Անունդ ի՞նչ է,— զվարթ հարցրեց Մխիթարը մեծ աղջկան, ու ափերը կից անելով՝ պարզեց, որ նա ջուր լցնի։

— Գոհար։— Խիստ ամաչելով պատասխանեց աղջիկը։

— Գոհա՜ր,— զարմացավ Մխիթարը։— Տխրեց։ Ինչո՞ւ է ուշանում Գոհարը։ Մի՞թե չի ցանկանում գալ իր կանչին։ Իսկ ինքն այնպե՞ս է կամենում տեսնել նրան, այնպե՞ս է կարոտել։ Դիմացը նկատեց Բարխուդարին։

— Այս քո տանը քանի՞ Գոհար կա, եղբա՜ր Բարխուդար,— հարցրեց բռնազբոս ժպտալով։

— Երկուսը,— պատասխանեց մելիքը։— Հանգուցյալ Պակին (նա հառաչեց) շատ էր սիրում քրոջը՝ Գոհարին։ Առաջնեկի անունը նրա պատվին դրեց։ Աստված հոգին լուսավորի...

— Ամե՜ն,— սրբիչը երեսին քսելով՝ արձագանքեց Մխիթարը։— Հավատարիմ մարդ էր Պակին։— Երեսը սրբելիս աչքի պոչով նայում էր փոքրիկ Գոհարին։ Մատաղահաս աղջկա աչքերից ասես լույս էր ծաթում։ Դեմքին երևում էին ուժեղ կամքի տակավին չձևավորված գծեր, լեռնական աղջկա հանդգնություն։ Դա դուր եկավ Մխիթարին։ Մի-մի ոսկի տվեց աղջիկներին, համբուրեց նրանց ճակատը և թեթևացած քայլերով մտավ տուն։

Նախաճաշին զորապետներից ու հարյուրապետներից բացի մասնակցում էին նաև մելիք Բարխուդարի եղբայրները, նրանց որդիները, գյուղի մեծամեծերը։ Բոլորը վեր կացան, գլուխ տվին թանկագին հյուրին։

Նախաճաշից հետո Մխիթարը մեն-մենակ ընդունեց հեռուներում գտնվող զորապետների ուղարկած սուրհանդակները։ Կոստանդին զորապետը հայտնում էր, որ Նախիջևանում գործերը լավ են։ Պարիսպները ամրացրել են, վառոդ շինող վարպետներ են գտել, ժողովուրդը լի է իրենց քաղաքը պաշտպանելու վճռականությամբ։ Թեև թուրքն անշարժ է Երևանում և Արաքսից այն կողմերին, բայց քաղաքացիները զինվել են մեծով ու փոքրով։ Նաև լուրեր կան, որ Աբդուլլահը մտադիր է հեռանալ Թավրիզից։ Կոստանդինը հայտնում էր, որ Նախիջևանում երևացել է Տեր-Ավետիսն ու մի օր մնալով՝ գնացել Աստապատի Վարդանանց վանքը։

Վերին Քաշաթաղքից Բայանդուր իշխանը հայտնում էր, թե ինքն իր գալու մասին լուր է տվել արցախցիներին, և նրանցից խմբերով զինված մարդիկ են գալիս ու միանում իր բանակին։ Բայանդուրը հայտնում էր, որ Արցախում անհամբեր սպասում են գահերեց զորավարի երևալուն, որպեսզի ապստամբեն թուրքերի դեմ։ «Շտապի՛ր, տե՛ր գահերեց»,— խնդրում էր նա։

Մխիթարը Կոստանդինին հրաման ուղարկեց աշալուրջ հսկել, թե որ ուղղությամբ է Թավրիզից հեռանալու Աբդուլլահը և իսկույն տեղյակ

պահել իրեն։ Բայանդուրին ու մելիք Ծգանին պատվիրեց սպասել իր գալուն և ժամանակից շուտ չմտնել Արցախ։

Սպասում էր Գոհարին։ Սակայն նա ուշանում էր։

Մխիթարը հազար ու մի կասկած էր անում։ Խռո՞վ է, ատո՞ւմ է իրեն Գոհարը, թե՞ կամենում է տառապանք պատճառելով՝ վրեժխնդիր լինել։

***

Մխիթարի համբերությունն սպառվեց։ Այլևս չուզեց սպասել Գոհարին։ Հրամայեց պատրաստվել՝ Արցախի կողմերը մեկնելու։

Զորքի մեկնելու առթիվ խնջույք կազմակերպեցին։ Բարխուդարի ամրոցը դղրդաց զուռնաչիների նվագից, գուսանների երգից։ Դինի բաժանեցին նաև զինվորներին։ Բոլորն ուրախ էին։ Մռայլ ու չար էր միայն գահերեց զորավարը, կատաղել էր Գոհարի դեմ, մերժել է իր հրավերը, հերիք չէ, պատասխան էլ չի ուղարկում։

Խնջույքից հետո նա արձակեց զորապետներին, հրաժեշտ տվեց խնձորեսկցիներին ու գնաց իր օթևանը։ Անդուր մենակություն ու ցուրտ սառնություն զգաց։ Ցնցվեց։ Կարծես կից սենյակից լսեց Սաթենիկի ձայնը։ Նա կամեցավ բաց անել դուռը, բայց սթափվեց պատրանքից։ Սակայն պատրանքը կրկնվեց ու կիսամթան մեջ տեսավ կնոջ խոշտանգված դեմքը։ Ձեռքերը պարզեց դեպի կինը, նույնիսկ երկու քայլ արեց դեպի նա, բայց սթափվեց. կանգ առավ։ Երեսը փակեց ձեռքերով, ապա ահով շուռ եկավ դեպի դուռն ու երեք անգամ ծափ տվեց։ Շեմքին երևաց Բանդուր-Զաքարիան։

— Կգնանք, Զաքարիա՜ հայրիկ. Արցախից վերադառնամ՝ կգնանք Զագեձոր։ Դու մի՜ նախատիր ինձ։ Ես դժբախտ եմ, ամեն ինչ կորցրած, հետին մուրացկան եմ այլևս։ Շուրջս խավար է, հոգիս էլ։ Լույս եմ ուզում, լո՜ւյս...

Ներսունին գնաց ու ետ եկավ Ահարոնի հետ։ Կերոններ վառեցին։

— Էլի՜, էլի՜ լույս,— պահանջեց Մխիթարը։— Ձե՞ք տեսնում, խավար է, ամեն ինչ, ամեն տեղ խավար։ Էլի լույս տվեք։

Ահարոնը վախեցած նայեց հորը։ Ի՞նչ է պատահել նրա հետ։ Մի՞թե այդ պողպատե կամք ունեցող մարդը չի կարողանում մոռանալ վիշտը՝ մորը, Դավթին։ Ինչո՞ւ է ուսերը կախ գցել, երբ արդեն կատարվել է այն, ինչի ձգտում էր, ինչի համար զոհեց հարազատներին, սիրելիներից շատերին։ Նա նոր ճրագներ ու կերոններ բերեց։ Սենյակը հեղեղվեց լույսով։

— Գնացեք,— ձեռքերը թափահարեց Մխիթարը,— գնացեք ու հանգրստացեք։ Առավոտը մեկնելու ենք՝ ես ու Ահարոնը, զորքի հետ դեպի Արցախ, իսկ դու, Զաքարիա հայրիկ, Զագեձոր։ Գնացե՛ք։

Բանդուր-Զաքարիան բաց արեց Մխիթարի անկողինը։ Սա հանվեց ու պառկեց։ Սերունին ու Ահարոնը սկսեցին հանգցնել կերոնները։ Մխիթարը խնդրեց, որ մի ճրագ թողնեն վառ։

— Քունս չի տանում։ Թող մի քիչ լույս մնա։— Նա շուլալվեց վերմակի մեջ։ Որդին ու ծերունին կամաց դուրս եկան և դուռը ծածկեցին նրա վրա։

Թեև սենյակը տաք էր, բայց Մխիթարը սառնություն էր զգում։ Քունը համառորեն մոտ չէր գալիս։ Աչքին նորից էին երևում Սաթենիկն ու Դավիթը։ «Ինչո՞ւ խեղդել տվիր որդուս,— մտովի հանդիմանեց կնոջը։— Թող ապրեր Դավիթս։ Ա՛խ, զավա՛կս...»։ Հիշեց Տեր-Ավետիսին։ Որոշեց վաղը մարդ ուղարկել նրան փնտրելու և բերելու իր մոտ, բանակ։ «Եթե կամենա, ես նրան նորից պատվի կարժանացնեմ»։

Վերմակը քաշեց գլխին, մտքերի մղձավանջում անվերջ տեսնում էր Սաթենիկին։ Ի՞նչ է ուզում այդ անբախտ կնոջ հոգին։ Ինչո՞ւ չի հանգիստ տալիս իրեն։ Պարսավո՞ւմ է, որ ինքը մարդ է ուղարկել Գոհարի ետևից։ Ո՛չ։ Ինքը Գոհարի հետ չի ամուսնանա. երբեք։ Բայց կամենում է տեսնել նրան. ասել, որ հույսը կտրի իրենից։ Չի անարգի Սաթենիկի հիշատակը, անունը...

Նա զգաց, որ դուռը անձայն բացվեց, ու մեկը ներս մտավ։ Գոհա՞ր է։ Էլ ո՞վ կլինի։ Վերմակը դեն նետեց, արագ նստեց անկողնու մեջ։ Անկյունում առկայծող ճրագի թույլ լույսի տակ հինգ-վեց սրամերկ մարդ նկատեց։ Զարմացավ։

— Ո՞վքեր եք,— հարցրեց և խսկույն պոկեց գլխավերևը կախած սուրը։

Առաջին հարվածը խփեց գրեթե անգիտակ, դեռևս չըմբռնելով, թե ինչ է կատարվում։ Հետո թռավ, բարձրացավ թախտը՝ իր վրա նետված դավադիրներից պաշտպանվելու համար։

Վեց հոգի սրերով գրոհեցին նրա վրա...

Նրանց ետ մղեց։ Կարողացավ պատից պոկել նաև կումբավոր վահանը։

— Արթնացե՛ք, դավադրությո՛ւն...— գոռաց և զգաց, որ կորցնում է այն, ինչ ձեռք էր բերել տարիների արյունով։

Դա ուժ տվեց, արիությունը շլքեց նրան։ Վահանի կումբով ծանր հարվածեց սպիտակ բաշլուղով գլուխը փաթաթած մեկին, բաշլուղը պոկվեց սրա գլխից։ Մխիթարը ճանաչեց նրան։ Դա Միհրան հարյուրապետն էր։ Թուրը շեշտակի ետ տարավ, բայց հանկարծ կպավ Միհրանի դավակիցներից մեկին։ Թրատեց երկու հոգու ևս։ Սակայն չէր կարողանում վանել մյուսներին, գնալ դեպի դուռը...

— Օգնեցե՛ք...— գոռաց նորից։

Միջանցքից լսվեց որդու ձայնը.

— Պինդ կաց, հա՛յր, եկա՛։

Դռան ետևին թաքնված մի դավադիր սուրը խրեց Ահարոնի մեջքը։ Սա ընկավ երեսնիվայր։ Մխիթարը չնկատեց որդու տապալվելը։ Որդու ձայնը զորություն տվեց։ Վահանով պաշտպանվելով՝ ետ քշեց իր վրա նետվող Միհրանին ու նրա երեք ընկերներին։ Տապալեց մեկին ևս, մյուսի ձեռքից գցեց թուրը։ Բայց նոր դավադիրներ խուժեցին սենյակ։ Թրերն այժմ հարվածում էին իրար ետևից։ Հազիվ էր ետ մղում վահանով։ Ականջը կտրվեց։ Վիրավորվեց նաև վահան բռնած ձեռքը։ Խփեց մեկին ևս։ Գնաց ուղիղ Միհրանի վրա։ Բայց սա վահանափակ պաշտպանվում էր ու աշխատում Մխիթարին սեղմել պատին։

— Քաջացիր, Մխիթա՛ր,— այս անգամ լսեց Բանդուր-Զաքարիայի ձայնը։

Սակայն սրան ևս գլորեցին դռների ետևում թաքնված դավադիրները։

«Պետք է դուրս պրծնել սենյակից։ Ո՞ւր է Ահարոնը»։— Մխիթարը կարողացավ ետ վանել Միհրանին։ Մեկին ևս տապալեց։ Արդեն մոտեկարողացավ ետ վանել Միհրանին։ Մեկին ևս տապալեց։ Արդեն մոտենում էր դռներին։ Նկատեց ոտքերի տակ ընկած որդուն։ Աչքերը մթնեցին։ Կորցրեց իրեն։ Եվ մինչ ուշքի կգար՝ ձախ ուսին ծանր հարված զգաց։ Սթափվեց, շրջեց որդու դիակի մոտ և այնպես խփեց իր վրա խոյացողին, որ սրա թևն ընկավ։

—Զավա՛կս...— մռնչաց Մխիթարը։

Ուշքը գնում էր։ Վահանն ընկել էր ձեռքից։ Հազիվ էր մնում շրջած։

Դռների մեջ մոլեգնեց սուրը ձեռքին, միայն սպիտակեղենով մելիք Բարխուդարը։

— Ձեռքդ հեռու պահիր Մխիթարից, տիրասպա՛ն,— գոռաց մելիքն ու նետվեց որդու վրա։

— Հեռացի՛ր, հայր,— ոտքը տապալված Մխիթարի մեջքին դնելով՝ բղավեց Միհրանը։— Հեռացի՛ր, չեմ խնայի։

— Դավաճա՛ն, ուրացող,— աղաղակեց մելիքն ու խոյացավ որդու վրա։

Սակայն որդին հասցրեց հարվածել հորը։ Սա ընկավ Մխիթարի մոտ։

— Վա՜յ քեզ, թշվառ Հայաստան,— բղավեց մահամերձ։

Մխիթարը վեր թռավ, թուրը դեռ ձեռքին էր։ Բայց ձեռքը չգնաց... Չէր զգում մեջքին, կողերին, ուսերին իջնող հարվածները։ Շուրջը իրարանցում է, միջանցքում կոտորում են իրար։ Ովքե՞ր են, թուրքե՞րը։ Ի՞նչ է եղել։ Ինչո՞ւ է ուշքը գնում... Փորձեց մի քայլ էլ անել, բայց դանդաղ ընկավ որդու դիակի վրա՝ մելիք Բարխուդարի կողքին։

— Վերջացրու Միհրա՛ն,— գոչեց մեկը։

Դա այն վերջին ձայնն էր, որ լսեց Մխիթարը։ Հետո շեշտակի գահավիժեց մի մթին, ահարկու անդունդ... Կոկորդում ինչ-որ սառը բան զգաց, սիրտը խառնեց, կարծես օձ սահեց վզի վրայով։ Մի կարճ պահ ևս, և ամեն ինչ թաղվեց հավիտենական մոռացության մեջ...

Մելիք Բարխուդարի ամրոցի միջանցքներում ու պատշգամբներում իրար վրա, իրար կողքի թափված էին բազմաթիվ դիակներ։ Դրանցից շատերը դավադիրներ էին, մյուսները մելիք Բարխուդարի, Մխիթարի ծառաներն ու թիկնապահները։ Սպանվել էին նաև մելիքի եղբայրը, պատանի թոռներից մեկը։

— Էհե՜յ... Արթնացե՛ք։ Վեր կացե՛ք։ Մխիթարին սպանո՞ւմ են,— ժայռի գլխից ծղրտաց մելիք Բարխուդարի կինը։

Նրա ծղրտոցը հազարապատկվեց ժայռերի ու քարանձավների մեջ։ Խնձորեսկը դղրդաց միանգամից։ Երկրի ապավեն գնդի զինվորները խելակորույս դուրս թռան իրենց կացարաններից։ Կիսամերկ, բոբիկ, միայն սրերը ձեռքներին նրանք վազեցին դեպի վեր՝ մթնում հաղիվ նշմարվող ամրոցի կողմը։

— Էհե՜յ, վեր կացե՛ք, օգնեցե՛ք, Մխիթարին սպանո՞ւմ են,— ժայռերի վրայից շարունակում էր ծղրտալ մելիքի կինը։

Մատուռ հարյուրապետը մագլցում էր ժայռեղեն արահետով վեր։ Նրա ետևից շտապում էին Երկրի ապավեն գնդի զինվորները, աշխարհազորայինները, զինված ու անզեն գյուղացիները...

— Ամրոցը պաշարե՛ք, թույլ չտաք դավադիրները հեռանան,— հասնելով ամրոցի պարիսպներին՝ հրամայեց Մատուռն ու նետվեց առաջ։

Դիակների վրայով անցնելով՝ նա հասավ Մխիթարի սենյակը։ Արյունը լճացել էր սալահատակին։ Նրա մեջ ընկած էին Մխիթարը, Ահարոնը, մելիք Բարխուդարը։ Դավադիրները չքացել էին։

Մատուռը զարհուրեց։ Սուրն ընկավ նրա ձեռքից։ Մխիթարի գլուխը

չկար։ Նա չոքեց, ծնկներն արյունոտելով մոտեցավ, գրկեց դահիճը։ զորավարի դիակն ու ահավոր վշտից մռնչաց.

— Ինչո՞ւ մորթեցիր մեր հույսը, աստվա՜ծ...

Ու հեկեկաց աղիողորմ, անհույս, կործանված ձայնով...

Այդ պահին Խնձորեսկին էր մոտենում ձիավորների մի խումբ։

Լույսը բացվում էր։ Արևելքն արդեն արյունոտվել էր արևի ցնցուղից։ Շիկնել էին Կապույտջիղի, Իշխան Մեծ լեռների գագաթները։

Լսելով ամրոցի աղաղակները՝ ձիավորները շտապեցին։ Ամրոցի բաց դարպասների մոտ վխտում էր զորքն ու ժողովուրդը։ Նրանք ճանաչեցին ձիավոր փոքրիկ խմբի գլուխն անցած Գոհարին։

— Սպանե՞լ են, մորթե՞լ են, սև հողը մեզ վրա՜...— աղաղակեցին նրանք՝ ձիավորներին ճանապարհ տալով։

— Ո՞ւմ են սպանել,— գունատվեց Գոհարը։

— Մխիթարին...

Երկինքն ասես փուլ եկավ Գոհարի գլխին։

— Սպանել են հորդ, հորեղբայրներիդ։ Գնա տես, թե քո ուրացող Միհրան եղբայրն ինչ է արել։

Ժողովուրդը հառաչում էր, աղաղակում։ Կանայք երեսներն էին ծվատում։ Բայց Գոհարն այլևս ոչինչ չէր լսում։ Մի զարհուրելի ճիչ դուրս թռավ նրա կրծքից ու ձիուց ընկավ ուշաթափ՝ իրեն պարզված տասնյակ ձեռքերի վրա։

Փոքր Գորգին իջավ ձիուց, թավալվեց անտանելի ցավից։

— Մորթել են ու գլուխը տարել,— ողբում էր գուսան Հեթումը։— Չեն խնայել նույնիսկ պատանի Ահարոնին, հորդ՝ Բարխուդարին։ Տե՛ր ահեղ աստված։ Ինչո՞ւ մեզ բախտավորություն տվիր, որ առնես խլուն։

Գոհարին ուշքի բերին։ Նա խորտակված սրտով մտավ իր հոր տունը, բարձրացավ քարե աստիճաններով, զարկեց մի քանի դռներ, ճեղքեց միջանցքներում խռնված ամբոխը ու նետվեց այն սենյակը, որտեղից լսվում էր մոր, տատի ու Խնձորեսկցի կանանց կականը։

Պատուհանից աղոտ լույս էր կաթում սենյակի մեջ։ Այնտեղ գլխիկոր կանգնած էին գյուղացիներ, զինվորներ, քահանաներ։ Կանայք շրջապատել էին դիակները։ Թախտի վրա դրված էր Մխիթարի դին, նրա այծենակաճով ծածկված։ Թախտի մոտ գետնատարած գալարվում էր Տեր-Ավետիսը։

— Ա՜խ, եթե մի քիչ շո՜ւտ գայի,— խելագարի ձայնով ստեպ-ստեպ բառաչում էր նա ու ծեծում գլուխը։

Գոհարը մի երկվայրկյան կանգնած մնաց շեմքին, ապա ծղրտաց, նետվեց առաջ, բայց սիրելիի դիակին չհասած՝ ընկավ։ Զոքեշոք մոտեցավ թախտին ու տարածվեց Մխիթարի վրա։

Կանայք սաստկացրին ողբը։

Երկար հեծկլտալուց հետո Գոհարը ետ տարավ դիակի այծենակաճն ու զարհուրեց։

— Ո՞ւր է Մխիթարի գլուխը,— հարցրեց նա մեռելային լռության մեջ իրեն նայող մարդկանց։

— Տարել են,— պատասխանեց գուսանը,— թուրքացած եղբայրդ տարել է Աբդուլլահ փաշային նվեր։

— Վա՜յ մեզ,— մորմոքվեց Տեր-Ավետիսը։— Չհավատա՞ք թուրքին, չհավատա՞ք։

Գոհարը վեր կացավ։

— Շտապեցեք իմաց տալ Բայանդուր իշխանին ու մելիք Եգանին,— ասաց նա տիրական ձայնով։— Թող գան զորքով։ Լուր տվեք բոլորին։ Թող հայ ժողովուրդն իմանա, որ չկա այլևս իր փրկությունը, իր Մխիթարը։

Նա դուրս եկավ ապարանքի բակը։ Հեծավ ձին։ Նայեց պապանձված զինվորներին ու ասաց.

— Ով սիրում է իր Մխիթարին, թող հետևի ինձ։

Եվ առանց պատասխանի սպասելու՝ նժույգը թոցրեց ու սլացավ դեպի Արաքսի խուզափիրին կամուրջը։ Նրան հետևեցին բազմաթիվ ձիավորներ։

Ձին հևում էր կատաղի վազքից։ Բայց Գոհարը մտրակում էր նրան, շտապեցնում։ Պիտի հասնել դավաճաններին, գերությունից և անարգանքից ազատել Մխիթարի գլուխը...

***

Այդ օրերին Քյոփուրլու Աբդուլլահ փաշայի զորակայանում ոչ ոք հանգիստ չուներ։

Գիշեր-ցերեկ Թավրիզի սալահատակ փողոցները դղրդում էին ձիերի սմբակների հարվածներից, սայլերի անիվների աղմուկից. Աբդուլլահի զորակայանում բոլորը ոտքի վրա էին։ Մինչև լուսաբաց վառվում էին փաշայի հարկաբաժնի ճրագները։ Հեռավոր վայրերից սուրհանդակներ էին գալիս ու փոշոտ, ձիու քրտինքի հոտ արձակող զգեստներով մտնում փաշայի հարկաբաժին։ Ցերեկը պալատի սենյակներում, սրահներում ու միջանցքներում ասեղ գցելու տեղ չէր լինում։

Զորակայանի փաշաները, եվրոպացի խորհրդատուները, մոլլաները խորհրդի էին հավաքվում գրեթե ամեն օր։

Խորասանի կողմերում պարսիկների դեմ մղած անհաջող ճակատամարտերից հետո, թուրքերն այլևս հանգիստ չունեին Պարսկաստանում։ Թահմազ Ղուլի Նադիր խանը Բաղդադի մոտ գլխովին ջարդել էր օսմանյան մի խոշոր բանակ ու գրավել քաղաքը։ Այժմ Նադիրը պատրաստվում էր գալ Թավրիզի վրա։

Փաշաները հավաքվել էին խորհրդի։ Հուսալքված ու անհեռանկար էին։ Եվրոպացի խորհրդատուները փսփսում էին զգույշ, ահով։ Մոլլաները դժգոհում էին, իրենց անհաջողության պատճառները տեսնում «գյավուրների» ներկայության մեջ։

Գահավորակին նստած Աբդուլլահը սիրտ չէր անում բարձրացնել իր գլուխը ու նայել խորհրդի հավաքված մարդկանց։ Երբեք, ոչ մի պատերազմում այդպես չէր խայտառակվել, ինչպես հիմա։ Համոզված էր, որ հիմա Ստամբուլում հայհոյում են իրեն, թշնամիները լեզու են առել, բարեկամներն ամոթից կախել գլուխները։ «Հայերը ի՞նչ են, որ չկարողացան ծունկի բերել»,— անշուշտ, շարախոսում են սուլթանի առաջ։

Վեց տարի կռվեց հայերի դեմ։ Ահագին զորք կորցրեց, բայց արդյունքի չհասավ։ Հայերի լեռներում ոչ մի թուրք չկա հիմա։ Կորցրեց Նախիջևանը, վաղն էլ հայերը կգնան Երևանի ու Արցախի վրա։

Այս ամենի մասին ինքն իրեն հաշիվ տալով՝ Աբդուլլահը հասկանում էր, որ Բարձր Դուռը այսօր կամ վաղը երես կթեքի իրենից ու երբեմնի իր բարեկամ, թուլակամ ու կնամոլ սուլթանի բարկությունը հանկարծակի կպայթի իր գլխին։

Ի՞նչ անել։ Զենքի ուժով չկարողացավ նվաճել Սյունիքը։ Հիմա էլ հարկավոր քանակությամբ զորք չունի, որ մի նոր արշավանք սկսի դեպի Հայաստան։ Մնում էր լեզու գտնել Մխիթարի հետ. զիջումներ անել, ստիպել, համոզել, որ նա հաշտության ձեռք մեկնի, չխանգարի իրեն պարսիկների դեմ սկսած կռվում։

Իրավացի էր մեծ վեզիրը, որ ամիսներ առաջ, երբ ինքը Ստամբուլ էր գնացել՝ սուլթանի ծննդյան տոնակատարությանը մասնակցելու, ասաց, թե՝ հարկավոր է հաշտվել Սյունիքի հայերի հետ ու չեզոք պահել նրանց։

Բայց ինքը չհամաձայնեց։ «Ես արդեն ընկճել եմ Մուխիթարին, ու նրանց մայր քաղաքն իմ ձեռքին է,— ասաց վեզիրին։— Այլևս հայերն առաջվա վտանգավոր թշնամին չեն»։ Այժմ զղջում էր իր ասածների համար։ Առիթ էր, բաց թողեց։ Զիջեց զորավարի փառախոսությանը։ Անմար։ Առիթ էր, բաց թողեց։ Զիջեց զորավարի փառախոսությանը։

խոհեմություն արեց։ Իսկ հայերը ոչ միայն իրենից ետ խլեցին Հալիձորը, այլև առան Ագուլիսն ու Նախիջևանը։

Եվ ահա փաշան խորհրդի էր հրավիրել զորավարներին ու եվրոպացի սպաներին՝ Մխիթարի հետ հաշտության ուղիներ որոնելու համար։ Նադիրն սպառնում էր Թավրիզին։ Նադիրը կշտապի, դաշն կկոի Մխիթարի հետ, ինքը կմնա երկու կրակի արանքում։ Անհապաղ պետք է հաշտություն կնքել հայերի հետ։ Ահա այս էր մտահոգում փաշային։ Սակայն սիրտ չէր անում առաջինն ինքը խոսք բաց անել այդ առիթով։ Թող ուրիշներն ասեն, ասեն փաշաները, մեծ մոլլան, այդ կեղծ ծամեր դրած եվրոպացիները։

Բայց բոլորն սպասում էին նրա խոսքին։

Հանկարծ պալատի բակից փողերի ձայն լսվեց։ Փաշաները զարմացած նայեցին միմյանց։ Աբդուլլահի սիրտն ահ ընկավ։ Դրսից ազդանշան էին տալիս, որ սուլթանական բարձր սուրհանդակ է ժամանել Ստամբուլից։

Աբդուլլահը սարսռաց։ Աղե՞տ է բերում իր համար արքայական սուրհանդակը, թե՞ խայտառակությունից փրկվելու ելք։ Նա չիմացավ, թե ինչպես ոտքի ելավ։ Ղափուջի բաշին շրխկոցով բաց արեց սրահի դուռը։

— Ուշադրություն և հնազանդությո՛ւն։

Նրա ետևից ներս մտան սուլթանական սուրհանդակները։ Առջևից բերում էին արքայական դրոշը։ Մի պալատական փաշա երեք քայլ առաջ եկավ ու, ձեռքը կրծքին դնելով, սառը հանդիսավորությամբ ասաց.

— Տիեզերքի կենտրոն սուլթան Ահմեդ առաջինը, թող ալլահը նրան բաշխի ծովերի ու ցամաքների հարստությունները, իր ողջույնն է հղում Պարսից երկրում եղած զորքին։

— Թող արևի շափ ապրի մեր գլխների թագ ու պարծանք սուլթանը,— պատասխանեց Աբդուլլահ փաշան և, մոտենալով սուլթանի դրոշին՝ շոքեց ու երեք անգամ համբուրեց նրա մետաքսը։ Ապա ողջագուրվեց սուրհանդակ փաշայի հետ, որին ճանաչում էր պալատից։ Սուրհանդակ փաշան ձեռքը բարձրացրեց։ Նրան ուղեկցողները դուրս եկան։ Ղափուջի բաշին դուռն ամուր փակեց։ Տիրեց խոր և տևական լռություն։

Աբդուլլահը չորացել էր։ Մի վայրկյան հետո կամ ինքը պաշտոնազուրկ կլինի ու քարշ կտրվի դեպի կախաղան կամ կարժանանա սուլթանի բարի ողջույնին։ Եվ ինչո՞ւ է երկար լռում սուրհանդակ փաշան։ Օ՜... անիծված հայեր... Այս բոլոր ձախորդությունները ձեր ձեռքից են միայն... Սուրհանդակ փաշան ոսկեկար տոպրակից հանեց արքայական կնիքով ամրացված վստահաթուղթն ու, դնելով ճակատին, ասաց.

— Իր հետին ծառայի բերանով մեծ անունների բաշխող, զորության, մեծության ու փառքի աղբյուր, արեգակին համահավասար սուլթան Ահմեդը, թող ալլահը նրան հավիտենական գահ տա, հրամայել է ասել քեզ՝ հին քաջերի տոհմի փառավոր շառավիղ Աբդուլլահ փաշայիդ, որ ինքը զարմացած է այն անհաջողությունների համար, որ իր աշխարհասասան զորքը մեկը մյուսի ետևից կրում է էրմենիների լեռներում։

Աբդուլլահ փաշայի թուքը չորացավ, աչքերը մթնեցին, բայց սուրհանդակ փաշայի ձայնն սթափեցրեց նրան։

— Սակայն ո՞վ կարող է հակառակել վերին կարգադրիչին։ Ալլահի կամքն էր այդպես, թող փառավորվի նրա անունն այժմ և հավիտյան։ Ալլահի ստվերը ողջունում է քեզ, Աբդուլլահ փաշա։ Ապա հայտնում է, որ չընկճվես բնավ և չթուլացնես Ալի զուլֆըղար թրի ուժը՝ մեր հավատի ու թագավորության թշնամիների դեմ։

Խոր շունչ քաշեց, լռեց մի պահ ու շարունակեց՝ թռուցիկ նայելով եվրոպացի խորհրդատուներին։

— Հայտնի լինի քեզ, սերասկյար, որ պարսիկները, թող կտրվի նրանց անսուրբ ցեղը, մարդ են ուղարկել գյավուր Մուխիթարի մոտ՝ դաշն կռելու և քեզ վրա գալու համար։ Բայց, ալլահի խնամքով, պարսիկ սուրհանդակը բռնվել է ու բերվել Ստամբուլ։ Նադիր խանը, թող կայծակը մտնի նրա փորը, հոխորտում է մեր դեմ և շուտով կգա քեզ վրա։ Քանի որ դու մինչև այժմ չկարողացար վերջացնել Մուխիթար էրմենիին, ապա սուլթանը հրամայում է այսպես։

Նա հազաց, կոկորդը մաքրեց ու շարունակեց նորոգված ձայնով։

— Շտապիր մեծամեծ նվերներով դեսպան ուղարկել Մուխիթար փաշայի դուռը։ Խաղաղության և հաշտության դաշն կնքիր նրա հետ։ Ապա նրան հանձնիր Նախիջևանն ու այդ քաղաքի գավառները և հավիտենական բարեկամության անսուտ երդում տուր նրան, որովհետև ասված է. «Այն ձեռքը, որ չես կարողանում կտրել՝ համբուրիր»։ Ուրեմն՝ շտապ հաշտվիր Մուխիթար փաշայի հետ։ Ապահովիր թիկունքդ ու գնա Նադիր խանի վրա։ Այս է երկնապարգև սուլթանի անդառնալի կամքը, որի մի խոսքը հազարապատիկ թանկ է մեր գլուխներից։

Սուրհանդակ փաշան վերջացրեց ասելիքն ու թեթև գլուխ տվեց։ Աբդուլլահը ցնծության մեջ էր, փրկվեց խայտառակությունից։ Այժմ ո՞վ կարող է հանդիմանել իրեն, որ հաշտություն էր որոնում հայերի հետ։ Ելքը ալլահից էր ուղարկված։ Նա ուսերը շտկեց, արծվի հայացքով նայեց փաշաներին ու ասաց.

— Կկատարվի՞ սուլթանի հրամանը, որի գահը երկնքի ասպանդակն է։

— Կկատարվի՞,— իրար ընդհատելով կրկնեցին խորհրդին մասնակ-

ցող թուրք փաշաները։ Միայն եվրոպացի խորհրդատուները տարակուսանքով նայեցին միմյանց։

Նրանք անտեղյակ էին, որ Սյունիքին չեզոքություն տալու իրենց պահանջը, վերջապես, կարողացան գլուխ բերել Ստամբուլում եղած ռուս դեսպանները։

***

Աբդուլլահն շտապեց կատարել սուլթանի կամքը։

Դեսպանություն կազմեցին, նվերներ պատրաստեցին Մխիթարի, հայոց մելիքների ու իշխանների համար։ Թավրիզի հայերից երկու վաճառական ու մի քահանա ևս մտցրին դեսպանության մեջ։ Մխիթարի հետ հաշտվելու համար սերասկյարը վճռեց խնդրել նաև էջմիածնի կաթողիկոսին և վրաց մահմեդականացած, սուլթանին վասալ թագավորի միջնորդությունը ևս։

Աբդուլլահը սուլթանի անունից հաշտության նամակ գրեց Մխիթարին։ Դեսպանությունը ներկայացավ սերասկյարին՝ Սյունիք մեկնելուց առաջ վերջին հրահանգներն ստանալու։

Նրանք արդեն հրաժեշտ էին տալիս փաշաներին, երբ ներս ընկավ զափուշի բաշին և հայտնեց, որ մի խումբ հայեր են եկել Սյունիքից և խնդրում են, որ փաշան ընդունի իրենց։ Աբդուլլահը հրամայեց իսկույն ներս բերել հայերին։

— Երևի Մխիթարն ինքն է հաշտություն խնդրում,— կարծիք հայտնեց փաշաներից մեկը։

— Օ՜, դա արդեն աստվածային պարգև կլինի,— նախապես ուրախացավ Աբդուլլահը։— Այդ դեպքում հաշտության պայմաններ թելադրողը մենք կլինենք։ Նաև սուլթանի պատիվը կփրկվի, պարտվող կողմ չենք լինի։

Զափուշի բաշին ներս բերեց Միհրան հարյուրապետին ու տասներեք ուրիշ հայերի։ Սրանք կանգնեցին սրահի դռների մոտ, խոր գլուխ տվին փաշաներին։ Միհրանն ուսի խուրջինից հանեց Մխիթարի գլուխն ու նետեց Աբդուլլահ փաշայի ոտքերի տակ։ Փաշան զարմանքից նույնիսկ ետ ընկրկեց։

— Ո՞ւմ գլուխն է,— ակամա հարցրեց նա։

— Մխիթար դահիճի զորավարի,— պատասխանեց դավաճանը։

Մի վայրկյան բոլորն անշարժացան։ Փաշաները լայն բաց արած աչքերով նայեցին գորգի վրա ընկած գլխին ու սարսռացին նույնիսկ։ Աբդուլլահը նաև ցնցվեց, ապա հրճվանքի ժպիտ սփռվեց նրա երկարավուն դեմքին։ Նա կռացավ, նայեց Մխիթարի գլխին։

— Այո՜, բարեկամնե՜րս, սա՝ մեզ այնքան տառապանքներ պատճառող քաջի գլուխն է,— անզուսպ ուրախությամբ գոռաց նա։— Նա՜ է, ցնծացե՛ք։ Ահա, վերջապես Սյունիքն իմ ոտքերի տակ է։ Օ՜, բարեգութ ալլահ։

Փաշաները երկյուղով մոտեցան գորգի վրա հանգչող գլխին։ Բոլորն ուզում էին թեկուզ մեռած տեսնել այն մարդու դեմքը, որ այնպես խիզախորեն կռվում էր իր երկրի համար և այնքան անգամ խայտառակ պարտության մատնեց իրենց։ Սերասկյարը սևեռուն նայեց Միհրան հարյուրապետին։ Սա խոր գլուխ տվեց։

— Ես կատարեցի քո հրամանը, փաշա՜։ Մխիթարը չկա աշխարհում։ Զկան նրան հավատարիմ բազկակից մելիք Բարխուդարը, Մխիթարի որդի Ահարոնը, Բանդուր-Զաքարիան, շատերը։ Մխիթարի զորքը ցրվել է։ Սյունիքում ամեն մեկն իր գլուխը պրծացնելու հոգսի մեջ է։ Բաց են մեր աշխարհի դռները քո առջև։ Մտիր Նախիջևան, Ագուլիս, Մեղրի։ Այնտեղ եղած Մխիթարի կայազորներն շտապ հեռանում են, երկիրն անտեր է...

— Բարի՜...— անզուսպ հրճվանքով լափլափեց սերասկյարը։

Եվրոպացի խորհրդատուներից մեկն անհամարձակ ափսոսանքով ասաց.

— Էլ ինչո՞ւ են այդ հայերը ազատության ձգտում, երբ իրենց ազատությունն իրենք են սպանում։

Փաշան ծառս եղավ տեղը, ծանր քայլերով գնաց դեպի Միհրան հարյուրապետը, բայց ինչ-որ հիշելով՝ շրջվեց, դարձավ Սյունիք մեկնելու պատրաստ դեսպաններին։

— Գնացեք ձեր տները, ցրվեցե՛ք։ Ի՞նչ դեսպանություն։ Ո՞ւր ուղարկեմ, ո՞ւմ մոտ։ Մուխիթարը չկա, հո՛ւ, հո՛ւ, հո՜ւ... Հայոց աշխարհը գլխատվել է, հրես՝ ոտքերիս տակ, մեռած, անուժ։ Մեծ է ալլահի ողորմությունը։ Ոչ մի դեսպանություն։ Լուր տարեք Ստամբուլ։ Սյունիքը կործանված է։ Մուխիթարը չկա...

Նա ետ դարձավ, նայեց Միհրան հարյուրապետին։ Քրքջաց, թեև դեմքին բարության նշույլ չկար։ Ապա խոսեց խոժոռ։

— Դու անգնահատելի ծառայություն մատուցեցիր ինձ, Միհրա՜ն հարյուրաշի։ Դու կստանաս քո արժանի վարձատրությունը։ Երդվում եմ, որ այդ վարձը մե՜ծ կլինի։ Զտեսնված, չլսված մե՜ծ... է՜յ, զափուշի բաշի, այս երեսելի հայերին տար բաղնիք, լոգացրու անուշահոտ օճառով,

փաշայական զգեստներ տուր, կանայք տուր նրանց, կերակրիր պատվական խորտիկներով. թող հանգստանան իրենց արդար վաստակից հետո։

Հայ ուրացողները ղափուշի բաշու ուղեկցությամբ հեռացան։ Հենց որ ծանր դռները փակվեցին նրանց ետևից, փաշաները միահամուռ քրքջացին։ Ամենից ուրախ ու լիաթոք քրքջում էր Քյոփուրլու Աբդուլլահ փաշան։

* * *

Հենց այդ պահին Թավրիզի Երևանյան գարպասներին հասան Գոհարն ու նրա մի բուռ ուղեկիցները։ Նրանց ձիերը սևացել էին քրտինքի քափից, ցեխից։ Փոշին շղարշ էր դրել նրանց զգեստներին։ Ձիերից մեկը ճաքեց հենց դարպասների մոտ։ Մի թուրք սիփահի կտրեց նրանց ճանապարհը։

— Ես ուզում եմ տեսնել Աբդուլլահ փաշային,— նրան դիմեց Գոհարը։

Թուրքը զարմանքից բերանը բացուխուփ արեց։ Իր հետ խոսողը կին էր։

— Իսկ փաշան քո ինչի՞ն է պետք,— հարցրեց՝ նրա գեղեցկությունից հմայված։

— Ես Սյունիքի տերերից եմ,— պատասխանեց Գոհարը։— Եղիր մեծասիրտ ու կատարիր ինձ նման մի կնոջ խնդրանքը։

— Օ՜ գլխիս վրա, գեղեցիկ խանում։ Համեցի՛ր,— շողոքորթեց թուրքը և հայերին առաջնորդեց դեպի շահ Թահմազի պալատը։— Առավոտը ձեր աշխարհից ձիավորների մի ուրիշ խումբ էլ եկավ և դարձյալ շտապ սերասկյարին էին ուզում տեսնել,— ասաց նա։

— Փաշան ընդունե՞լ է նրանց,— հարցրեց Գոհարը։

— Նրանք հիմա պալատումն են։

Պալատի բակում կանգնած էին թամբած ձիեր։ Այդտեղ եղած զինվորները զարմանքով նայեցին ձիավոր տիկնոջը։ Մի երկուսը նույնիսկ զինվորական ողջույն տվին նրան։ Վեհ էր ու պատկառելի Գոհարը։

Հայերի գալու մասին հայտնեցին ղափուշի բաշուն։ Սա եկավ ուրախ, մեղմ մի ժպիտ յուղոտ շրթունքներին։ Նույնիսկ գլուխ տվեց Գոհարին և նրան առաջնորդեց դեպի սերասկյարի ընդունարանը։ Գոհարի հետ փաշային ներկայանալ թույլ տվին միայն Փոքր Գորգուն, նախօրոք նրա զենքերը վերցնելով։

Ղափուշի բաշու ետևից քայլելով, Գոհարը հազիվ էր զսպում ճիչը։ Մի ժամանակ նա քայլում էր հպարտ, ինքնագոհ, որ աշխարհում կա մի մեծ ու թանկագին սիրտ, որը միայն իրեն է պատկանում, ապրում է իր սիրով, բաբախում միայն իր համար։

Այժմ չկա այդ սիրտը։ Սրախողխող է արված դավաճանի ձեռքով, և այլևս երկնքի տակ ոչ մի ուրախության աղբյուր չկա նրա համար։

Նա ցնցվեց, սթափվեց ծանր մտքերից։ Այս ո՞ւր է ընկել ինքը։ Ո՞ւր է գնում։ Ինչո՞ւ է եկել թուրք փաշայի դուռը։ Ինչո՞ւ։ Նա զարհուրելով հիշեց թախտին դրած Մխիթարի դիակը, որի մեռած երեսն անգամ չկարողացավ տեսնել։

Նա չիմացավ, որ արդեն կանգնել է Աբդուլլահ փաշայի առաջ, և Փոքր Գորգին փվել է գետնին՝ ինչպես պատվիրել էր ղափուշի բաշին։

— Գլուխդ խոնարհիր, փաշայի դիմացն ես,— նրա ականջին փսփսաց ղափուշի բաշին։ Այդ ձայնը ցնցեց Գոհարին։ Նա գլուխը բարձրացրեց և իր խոշոր, կրակոտ աչքերով նայեց դիմացը։ Շահ Թահմազի գահին բազմած փաշայի դեմքին մեծ զարմանք էր դրոշմված։ Ղափուշի բաշին կրկնեց իր խոսքը, բայց փաշան ձեռքով նշան արեց նրան։

— Թող երևելի խանումը խոսի այնպես, ինչպես իր կամքն է։

Գոհարը ձեռքը դրեց կրծքին՝ փաշային գլուխ տալու համար, բայց այդ պահին նրա աչքն ընկավ փաշայի ոտքերի տակ ընկած գլխին։

— Մխիթա՜ր...— աղիողորմ ծկլթաց նա ու տապալվեց գետնին։

Փաշաները շփոթվեցին։ Ղափուշի բաշին գնաց ջուր բերելու։ Բայց Գոհարն շտապ հավաքեց իրեն, կանգնեց, երկու քայլ ետ գնաց և գլուխը բարձր բռնած ասաց.

— Փաշա՛, դու հաղթող զորավար ես, և ինչպես լսել եմ, Քյոփուրլուների մեծ տոհմից ես, որոնց քաջազարմ տղամարդիկ քիչ գործ չեն արել, որ Բոսֆորի ափերին փայլի օսմանյան կիսալուսինը։ Ես կին եմ, սիրող կին... Ես տասնմեկ օր ձիու թամբն եմ ծեծել, որ գամ քո դուռը... Համոզված եմ, որ դու այնքան մեծահոգի ու ազնիվ կլինես, որ կկատարես ինձ նման մի դժբախտ կնոջ խնդիրքը։

— Ես ուզում եմ իմանալ, թե դու ո՞վ ես, խանո՛ւմ,— հաշտ ձայնով հարցրեց փաշան։

— Ես Խնձորեսկի մելիք Բարխուդարի դուստրն եմ։ Ես այն հայ կանանցից եմ, որ ամեն օր աղոթել եմ քո ոտքերի տակ ընկած քաջի գլխի ողջության համար, նրա թրի զորության համար։ Բայց այժմ այդ գլուխը կտրված է դավաճան յուրայինների կողմից։

— Արդյոք դու չե՞ս ցանկանա տեսնել Մուխիթար փաշայի գլուխը կտրողներին, տնօրինել նրանց բախտը,— հոնքը վեր բարձրացնելով հարցրեց փաշան։

— Դրանով դու ինձ պատիվ արած կլինես, ողորմա՜ծ փաշա,— պատասխանեց Գոհարը։

Փաշայի ակնարկով դափուշի բաշին բերեց Միհրան հարյուրապետին նրա ընկերներին։ Դավաճանները ցանկացան խոնարհում անել փաշային, բայց, տեսնելով սրահի մեջ արձանացած Գոհարին, գունաթափվեցին և շփոթությունից ու ահից քարացան։

Փաշան մթնած հոնքերի տակից նայեց տիրասպաններին։

— Ճանաչո՞ւմ եք այս խանումին,— հարցրեց նա։

— Նա իմ քույրն է,— դողացող ձայնով պատասխանեց Միհրանը։

— Դավաճանը ոչ հարազատ ունի, ոչ հայրենիք,— շպրտեց Գոհարն ու հևաց։

Փաշան դարձավ դավադիրներին։

— Ես կռվում էի Մուխիթար փաշայի դեմ՝ իմ գլխի տեր սուլթանի հրամանով։ Եթե ինձ հաջողվեր ողջ բռնել քաջ ու երևելի Մուխիթար փաշային, ես նրա հետ կվարվեի՝ ինչպես քաջին է վայել։ Նա իմ թշնամին էր, ձեր՝ տերն ու պաշտպանը։ Ո՛չ։ Դուք հավատարիմ չեք կարող լինել ոչ մի թագավորի, որովհետև ձեր թագավորին մատնեցիք մահու։

Ապա քիչ լռելուց հետո շարունակեց սաստիկ խստությամբ։

— Քաջերի համար մահ չկա։ Ով քաջությամբ է պատում իր կյանքը, նա ապրում է լուսնի և արևի շափ։ Այժմ լսեցեք։ Ես խոստացել էի ձեզ վարձատրել։ Այդ վարձը կլիներ այն, որ ձեզ պիտի կախեի Թավրիզի պարիսպներից։ Սակայն այս երևելի խանումը կանխեց իմ վճիռը։ Այժմ ես ձեզ հանձնում եմ նրա գթությանը։

Փաշան ձեռքով արեց։ Լեզուները կապ ընկած, գրեթե ուշաթափված դավաճաններին դուրս տարան։

Փաշայի հրամանով Մխիթարի գլուխը փաթաթեցին մետաքսի մեջ ու հանձնեցին Գոհարին։

Մխիթարի գլուխը թաղեցին Թավրիզի հայոց եկեղեցու բակում։ Երբ արդեն գերեզմանը ծածկվել էր հողով, Գոհարը բազկատարած ընկավ նրա վրա ու հեկեկաց։ Լաց էին լինում ոչ միայն Գորգին ու զինվորները, այլև մոտակա տներից դուրս եկած պարսիկ կանայք։

— Գնաս բարո՜վ, Մխիթա՛ր...— կանգնելով ասաց Գոհարը։— Քեզանով խավարեց հայոց ճրագը, որ վառել էր Դավիթ-Բեկը։ Գնաս բարո՜վ...

Նույն օրը Աբդուլլահ փաշայի ուղարկած մի ջոկատ զինվորների ուղեկցությամբ, Գոհարն ու նրա մարդիկ դուրս եկան Թավրիզից։ Հայ զինվորներն իրենց օղակի մեջ տանում էին շղթայված դավաճաններին։

Երեք օր հետո հասան Արաքսի ափը։ Երևացին հայոց լեռների կատարները։

Կանգ առան Խուդափիրին կամուրջի մոտ։ Գոհարը, թուրք զինվորներին մի-մի արծաթ նվիրելով, ետ ուղարկեց։

Մնացին իրենք ու դավաճանները։

Գարնանային ջրերից ուռած Արաքսը խուլ հառաչում էր։

Գոհարի հրամանով զինվորները ծանր շեշաքարեր կապեցին դավաճանների շլինքներին և նրանց կանգնեցրին կամրջի եզերքին։ Գոհարն ասաց.

— Լսեցե՛ք, ազգուրաց թշվառականներ։ Ես ձեզ նետում եմ այս ամեհի գետը, որպեսզի ոչ մի երկրի հող չունենաք ձեզ վրա։ Ապա այս պատիժն եմ նշանակում ձեզ, որպեսզի ամեն հայ, որի մտքով անցնի դավաճանել հայրենիքին, հիշի այս կամուրջն ու ձեզ, ահ ունենա ու ետ կանգնի կործանիչ ճանապարհից։ Թող հայ ժողովրդի անեծքը ծանրանա ձեր ապականված հոգիների վրա։

Նա գլուխը շուռ տվեց։

Դավաճաններին հրեցին դեպի գետի ամեհի հորձանուտը։

Նրանց սուզված տեղը ջրի մի քանի պղպջակներ երևացին միայն...

Արաքսը խժռեց, կուլ տվեց դավաճաններին։

Ձիավորների փոքրիկ խումբն անցավ կամրջի աղեղը, ուռք դրեց հայրենի հողին ու սլացավ դեպի հեռվում կապտին տվող լեռները...

***

Մասրենու մի խոնարհ թուփ էր փարթամորեն պերճանում Մխիթարի թարմ շիրիմի մոտ։ Լուսաբացին լեռնալանջը հերկելու գնացող շինականը այդ շիրիմին թափած ծաղիկներ տեսավ։

Ապա նույնը տեսավ ուրիշ օրեր ևս...

Դրանք լեռնային ծաղիկներ էին, որ ամեն լուսաբացի Գոհարը աչքից ծածուկ բերում, իր արցունքների հետ շաղ էր տալիս Մխիթարի գերեզմանին և ապա իր հոր ամրոցի բարձր աշտարակից հսկում նրա անդորրը...

Լուսաբացին անուշ հորովել էր ծորում լեռնալանջի արտերից, ու ժայռի վրա բարձրացող շիրիմի մոտ ծեր դուսանը հյուսում էր իր գեղջկական երգը՝ անցած-գնացած քաջության գործերի մասին։

Լուսաբացին զինավառ շինականները, երդման խոսքեր շուրթերին, սրբացած շիրիմի մոտով գնում էին դեպի Արաքսի կիրճը՝ երկրի սահ-

մաններում երևացած թշնամիների հետ զարկվելու, նրանց իրենց հողից վանելու համար։

Վերադառնում էին նոսրացած շարքերով, բայց հաղթանակած։

Ապա գնում, անցնում էին հուշ դարձած, իրենցից առաջ եղած սերունդների նման...

Նոր կորիճներ էին աշխարհ գալիս Սյունիքում և նոր աղջիկներ։ Նրանք նոր ծաղիկներ էին ցանում լեգենդ դարձած ռամիկ զորավարի շիրիմին։

Նոր թշնամիներ էին գալիս Հայոց աշխարհի վրա, ու նոր քաջեր էին նրանց դուրս մղում իրենց հինավուրց հողից։

Մի սերնդին փոխարինում էր մյուսը...

Այսպես ապրեցին դարեր...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գիրք առաջին

Փշրված շղթաներ

Խորհրդավոր քարավանը . . . 3
Ամրոցի բնակիչները . . . 16
Հին վերքը . . . 42
Քավության նոխազը . . . 65
Դաժան անձնազոհը . . . 90
Անհանգիստ մարդը . . . 105
Բախտը նժարների վրա . . . 124
Բարի հյուրընկալները . . . 146
Հույսի ճառագայթը . . . 160
Լույսը մեր տան մեջ . . . 186
Գարունը Քուռ գետի ափին . . . 221
Խափանված հույսեր . . . 256
«Ես ապրել եմ ուզում» . . . 270
Մենավոր գերեզմանը . . . 301
Այսպես էր այրվում մեր տունը . . . 337
Վաճառված արյունը . . . 373

Գիրք երկրորդ

Ճանապարհ հայոց

Վտանգավոր խաղաղություն . . . 405
Վիրավորված հպարտություն . . . 428
Արևն Արաքսի կիրճում . . . 448
Մարաղայի պտուղները . . . 472
Վայր ընկնող աստղը . . . 495
Մեկը բարեկամի մոտ, մյուսը՝ թշնամու . . . 525
Գործում է պողպատե բռունցքը . . . 552
Ինչո՞ւ է գալիս գարունը . . . 578
Խորտակվում են առաջին դռները . . . 608
Հրդեհը տան մեջ . . . 628
Օրհնյա՛ անձն իմ, տե՛ր... . . . 665
«Գնացի խոտոր ճանապարհով...» . . . 687
Ամեն ինչ սկսվում է նորից . . . 709
Լուսաբացին մորթված արևը . . . 733

ISBN 5-550-00176-4

Литературно-художественное издание

Ханзадян Серо Николаевич

МХИТАР СПАРАПЕТ

Ереван, издательство «Советакан грох»,
На армянском языке

Գրական-գեղարվեստական հրատարակություն

Խանզադյան Սերո Նիկոլայի

ՄԽԻԹԱՐ ՍՊԱՐԱՊԵՏ

Պատմավեպ

Խմբ. վարիչ՝ Ա. Է. Թոփչյան
Հրատ. խմբագիր՝ Ս. Հ. Սահակյան
Նկարիչ՝ Վ. Ա. Հարությունյան
Գեղ. խմբագիր՝ Ջ. Ե. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Շահվերդյան
Վերստուգող սրբագրիչ՝ Է. Պ. Պողոսյան

ИБ № 6368

Հանձնված է շարվածքի՝ 25. 12. 1987։ Ստորագրված է տպագրության՝ 12. 02. 1988։ Ֆորմատ 60×84 1/16։ Թուղթ՝ տպագր. № 2։ Ֆառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 44,17 պայմ. տպ. մամ., 42,6 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 75000 (1 գործարկում 1—50.000)։ Պատվեր՝ 2940։ Գինը՝ 2 ռ. 90 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.